Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ ***http://www.armin.am***

էլ. փոստ՝ ***info@armin.am***

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ԳՐԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

ΗΡΟΔΟΤΟΥ

ΙΣΤΟΡΙΩΝ ΒΙΒΛΙΑ ΕΝΝΕΑ

ΜΕΤΑΦΡΑΣΙΣ
ΣΙΜΩΝΟΣ ΚΡΚΙΑΣΑΡΙΑΝ

ΕΚΔΟΣΙΣ ΑΚΑΔΗΜΙΑΣ
ΕΠΙΣΤΗΜΩΝ ΣΣΔ ΑΡΜΕΝΙΑΣ
ΕΡΕΒΑΝ 1986

ՀԵՐՈԴՈՏՈՍ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԻՆԸ ԳՐՔԻՑ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՍԻՄՈՆ ԿՐԿՅԱՇԱՐՅԱՆԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1986

ԳՄԴ 63.3(0)3
Հ 562

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈԼԵԳԻԱ
Ա. Ռ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ (նախագահ), Ս. Տ. ԵՐԵՄՅԱՆ, Ռ. Վ. ՁԱՐՅԱՆ,
Գ. Ն. ՀՈՎՆԱՆ, Գ. Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ (գիտ. քարտուղար)

Պատասխանատու խմբագիր
ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ
Գ. Խ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հերոդոտոս
Հ 562 *Պատմություն ինը գրքից/ Թարգմ. բնագր. և ծանոթագր.՝ Ս. Մ. Կրկյաշարյան., Պատ. խմբ.՝ Գ. Խ. Սարգսյան— Եր.։ ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1986.—651 էջ, 1 թերթ նկար. (Գրական հուշարձաններ/ ՀՍՍՀ ԳԱ).*

Մ. թ. ա. V դարի հեղինակ, պատմագրության հիմնադիր Հերոդոտոսի երկը բովանդակում է հին աշխարհի պատմությունը՝ մինչև մ. թ. ա. V դարը, ներառյալ հույն-պարսկական պատերազմների մանրամասն նկարագրությունը։ Միաժամանակ «Պատմությունը» դիցաբանական, աշխարհագրական և ազգագրական նյութերի հարուստ աղբյուր է՝ օժտված գեղարվեստական բարձր արժանիքներով։ Հատորն ունի մեկնություն և ծանոթագրություններ։

Հասցեագրվում է ընթերցող լայն շրջաններին։

Հ $\frac{0505010000}{703(02)-86}$ 92—85 ԳՄԴ 63.3(0)3

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1986
Թարգմանության, մեկնության և ծանոթագրությունների համար։

ГЕРОДОТ
История в девяти книгах
(на армянском языке)
Перевод с оригинала, исследование и примечания
С. М. КРКЯШАРЯНА
Издательство АН Армянской ССР
Ереван 1986

Հերոդոտոս
(484—425 մ. թ. ա.)

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

ԿԼԻՈ

1. Հերոդոտոս Հալիկառնասեցու (հավաքած) պատմությունն է այս, որպեսզի ժամանակի (ձեռքով) չջնջվեն մարդկանց գործերը և անհայտ չմնան այն խոշոր և հրաշակերտ կառույցները, որ կերտել են մասամբ հելլեններն, մասամբ բարբարոսները[1]. մանավանդ (չմոռացվի) և այն, թե ի՞նչ պատճառով նրանք պատերազմեցին միմյանց դեմ:

Պարսից գիտուններն պատմում են, թե թշնամության պատճառը եղել են փյունիկեցիները: Սրանք եկել են Կարմիր կոչված ծովից մեր ծովը[2] և բնակեցրել այն երկիրը, որտեղ մինչև այժմ էլ ապրում են[3]: Նրանք անմիջապես ձեռնարկել են հեռավոր ծովագնացություններ: Եգիպտական և ասորեստանյան ապրանքները փոխադրելիս, նրանք, այլ երկրների թվում, ժամանել են նաև Արգոս. Արգոսն այդ ժամանակ ամենահայտնի (քաղաքն) էր այժմ Հելլադա կոչվող երկրում: Փյունիկեցիներն, անա, ժամանելով Արգոս, ափ են դուրս բերում իրենց բեռը: Իրենց ժամանման հինգ թե վեցերորդ օրը, երբ արդեն համարյա իրենց ամբողջ ապրանքը վաճառվել էր, ծովափ է գալիս, բազում այլ կանանց հետ, նաև արքայի դուստրը. նրա անունն էր, ինչպես իրենք՝ հելլեններն ևս ասում են, Իո՝ դուստր Ինաքոսի: Կանայք, կանգնած նավախելի մոտ, գնում էին իրենց առավել հավանած իրերը, երբ փյունիկեցիները, տրված նրահանգի համաձայն, նետվում են նրանց վրա: Կանանց մեծ մասը, իհարկե, կարողանում է փախչել, բայց Իոն և մի քանի ուրիշներ առևանգվում են: Փյունիկեցիները նրանց տանելով նավ, շտապում են մեկնել Եգիպտոս:

2. Պարսիկները պատմում են, թե Իոն այսպես է բերվել Եգիպտոս, մինչդեռ հելլեններն այլ կերպ են պատմում և այդ էլ դառնում է անարդարությունների սկիզբը: Այնուհետև, ինչպես պատմում են նրանք, ինչ-որ հելլեններ,— նրանք չեն կարողանում անունները տալ,— ժամանում են փյունիկյան Տյուրոս (քաղաքը) և առևանգում արքայի Եվրոպե դստեր: Սրանք, հավանաբար, կրետացիներ էին: Սրանով նրանք հավասարը հատուցում են

փյունիկեցիներին: Բայց հետագայում հելլենները երկրորդ անգամ դարձյունն են պատճառում (բարբարոսներին): Իազմանավով նրանք նավում են դեպի Այա, Կոլխիսում, և Փասիս գետը[4]. այստեղ նրանք, վերջացնելուց հետո բոլոր այն գործերը, ինչի համար ժամանել էին, առևանգում են արքայի դուստր Մեդեային: Երբ կոլխերի արքան դեսպան է ուղարկում Հելլադա, հատուցում խնդրելով վիրավորանքի համար և ետ է պահանջում իր դստեր, հելլենները պատասխանում են, թե՝ քանի որ իրենք արդիվունի Իոյի համար հատուցում չեն ստացել, ուստի և իրենք (կոլխերին) ոչ մի հատուցում չեն տալու:

3. Նրանք պատմում են, թե՝ այնուհետև, հաջորդ սերնդի օրոք, Պրիամոսի որդի Ալեքսանդրը[5], լսած լինելով այս ամենը, ցանկանում է առևանգելով իր համար կին ձեռք բերել Հելլադայից: Նա հաստատ համոզված էր, որ անպատիժ կմնա, քանի որ հելլենները նույնպես անպատիժ էին մնացել: Եվ սա, երբ նա առևանգեց Հեղինեին, հելլենները նախ ուղարկում են դեսպաններ ուղարկել՝ Հեղինեին ետ վերցնելու և առևանգման համար հատուցում պահանջելու: Երբ այս առաջարկությունը եղավ, տրոյացիները նրանց հիշեցրին Մեդեայի առևանգումը, որի համար հելլենները ոչ մի հատուցում չէին ավել և չէին վերադարձրել (Մեդեային), մինչդեռ իրենք այժմ ուրիշներից հատուցում էին պահանջում:

4. Մինչ այս (դեպքը), առանձին առևանգումներ էին կատարում իրարից, այսուհետև, սակայն, հելլենները մեծապես պատասխանատու են: Քանզի նրանք առաջինն սկսեցին արշավել Ասիա, նախքան (պարսիկները) կարշավեին Եվրոպա: Կանանց առևանգումն, իրոք, անարդար գործ է, բայց առևանգման համար վրեժ լուծելը, նրանց կարծիքով, անմիտ մարդկանց գործ է, իսկ առևանգվածներին ոչ մի ուշադրություն չդարձնելը՝ իմաստունների գործ. քանզի պարզ է, որ եթե իրենք՝ կանայք չցանկանային, ապա չէին առևանգվի: Պարսիկներն ասում են, թե՝ ասիացիները կարևորություն չեն տալիս կանանց առևանգմանը. մինչդեռ հելլենները, լակեդեմոնացի մի կնոջ[6] պատճառով մեծ զորք գումարեցին և, գալով Ասիա, կործանեցին Պրիամոսի տերությունը[7]: Այս դեպքից հետո է, որ պարսիկները մշտապես հելլեններին իրենց թշնամիներն են համարում: Քանզի նրանք Ասիան և այնտեղ բնակվող բարբարոս ազգերին համարում են իրենցը, իսկ Եվրոպան և հելլենական (աշխարհը) նրանք համարում են օտար:

5. Ինչպես պատմում են պարսիկները, այսպիսին է եղել դեպքերի ընթացքը: Նրանց կարծիքով, Իլիոնի նվաճումը սկիզբ է ծառայել հելլեններին ճանդեպ իրենց թշնամության: Բայց փյունիկեցիները նույնը չեն պատմում Իոյի առևանգման մասին, ինչ պարսիկները: Նրանք ասում են, թե՝ Իոյին իրենք բռնի չեն առևանգել ու տարել Եգիպտոս, քանի որ նա դեռևս Արգոսում սեռական կապ էր ունեցել նավատիրոջ հետ: Երբ նա զգացել է, թե հղի է, ամաչելով իր ծնողներից, ինքը կամովին մեկնել է փյունիկեցիների հետ, որպեսզի իր արարքը չքացահայտվի:

Այսպես են պատմում պարսիկները և փյունիկեցիները. ինչ վերաբերում է ինձ, ապա ես հանձն չեմ առնում ասելու, թե այդ ամենը իրոք այդպե՞ս է կատարվել, թե՞ այլ կերպ: Սակայն ես կանվանեմ այն մարդուն, որը, ինչպես ինձ հայտնի է, սկիզբն է դրել հելլենների դեմ թշնամության: Շարունակելով իմ խոսքը, այնուհետև ես հավասարապես կպատմեմ մարդկանց մեծ և փոքր քաղաքների մասին. քանզի նախկինում մեծ եղած քաղաքներից շատերն այժմ փոքր են դարձել, իսկ այն քաղաքները, որոնք իմ ժամանակ արդեն մեծ էին, հնում փոքր են եղել: Իմանալով նաև, որ մարդկային բարեբախտությունը երբեք կայուն չէ, ես նույնպես կհիշատակեմ երկու կողմերի բախտի մասին:

6. Կրեսոսը[8] ծնունդով լյուդիացի էր, որդին Ալյուատտեսի, տիրակալը Հալյուս գետից այս կողմ բնակվող ազգերի: Այն հոսում է հարավից հյուսիս, սիրիացիների[9] և պափլագոնացիների (երկրի) միջով և դուրս գալիս Եվքսինոս կոչված Պոնտոսը: Որքան ինձ հայտնի է, այս Կրեսոսը առաջին բարբարոսն էր, որը հելլենների մի մասին նվաճեց և հարկատու դարձրեց իրեն, իսկ մյուս մասին՝ բարեկամ: Նա նվաճեց հոնիացիներին, էոլներին և Ասիայում բնակվող դորիացիներին, իսկ լակեդեմոնացիներին դարձրեց բարեկամ: Մինչև Կրեսոսի թագավորելը, բոլոր հելլեններն ազատ էին, քանզի կիմմերների արշավանքը[10], որոնք նախքան Կրեսոսը հասել էին Հոնիա, չկործանեց քաղաքները, այլ, պարզապես, ավարառության ենթարկեց:

7. Այսպես, իշխանությունը, որը Հերակլյաններին էր պատկանում, անցնում է Կրեսոսի՝ Մերմնադյաններ կոչված տոհմին: Կանդավլեսը[11], որին հելլեններն անվանում են Մյուրսիլոս, Սարդեսի տիրանն էր, Հերակլեսի որդի Ալկայոսի հետնորդը: Հերակլյաններից Սարդեսի առաջին թագավորը դարձել է Ագրոնը՝ որդին Նինոսի, (որը որդին էր) Բելոսի, (որը որդին էր) Ալկայոսի. իսկ Կանդավլեսը, Մյուրսոսի որդին՝ վերջինը: Ագրոնից առաջ այս երկրում իշխած թագավորները եղել են Ատյոսի որդի Լյուդոսի հետնորդները. սրանից էլ ամբողջ երկիրը կոչվել է Լյուդիական, մինչդեռ նախկինում կոչվում էր մեյոնների երկիր: Աստվածային պատգամի միջոցով իշխանությունը սրանցից վերցնում են Հերակլյանները. սրանք Հերակլեսի և սարկուհի Յարդանոսի սերունդն էին և իշխել են մարդկանց քսաներկու սերնդի վրա, հինգ հարյուր հիսուն տարի[12], մինչև Մյուրսոսի որդի Կանդավլեսը, իշխանությունը ժառանգելով՝ հորից որդի:

8. Անհ այս Կանդավլեսը սիրահարված է իր իսկ կնոջ և, սիրահարված լինելով, կարծում է, թե իր կինը ամենագեղեցիկն է կանանց մեջ: Նա

այդպես էր կարծում. իսկ նրա թիկնապահների մեջ էր նաև Գյուգեսը՝ Դասկիլոսի որդին, որին առավել էր հավանում և որին վստահում էր կարևորագույն գործերը: Սակայն էլ Կանդավլեսը զովերգում է իր կնոջ գեղեցկությունը: Շատ ժամանակ չէր անցել, քանզի Կանդավլեսին պետք է չարիք պատահեր, երբ սա Գյուգեսին հեռակայլն ասաց. «Գյուգես, թվում է, թե դու չես հավատում կնոջս գեղեցկության մասին իմ ասած խոսքերին. քանզի մարդիկ իրենց ականջներին պակաս են հավատում, քան իրենց աչքերին. ուստի դու այնպես արա, որ նրան մերկ տեսնես»: Գյուգեսը (զարմացած) ճչում է և ասում. «Տեր իմ, այդ ի՞նչ անմիտ խոսք ես ասում, պատվիրելով մերկ տեսնել իմ տիրուհուն: Չէ՞ որ կանայք, մերկանալով իրենց զգեստից, մերկանում են և ամոթից: Մարդիկ դեռ հնուց պատշաճ օրենքներ են սահմանել, որոնցով պետք է շարժվել: Դրանցից մեկն էլ այն է, որ ամեն մարդ պետք է դիտի այն, ինչ իրենն է: Ես հավատում եմ, որ նա բոլոր կանանցից գեղեցկագույնն է և խնդրում եմ քեզ ապօրինի արարքներ չպահանջես ինձանից»:

9. Այս խոսքերով Գյուգեսը դիմադրում էր, վախենալով, որ այդ պատճառով իրեն չարիք կհասնի. բայց Կանդավլեսը նրան այսպես է պատասխանում. «Դատեպնդվիր, Գյուգես, և մի վախեցիր, թե ես այս ամենն ասում եմ քեզ փորձելու համար, ոչ էլ իմ կինը քեզ որևէ վնաս կհասցնի: Ես այնպիսի հնարք կմտածեմ, որ նա նույնիսկ չի նկատի, թե դու իրեն տեսել ես: Ես քեզ կկանգնեցնեմ մեր ննջարանի վրա բացվող դռան ետև: Իմ այնտեղ մտնելուց հետո կգա պառկելու նաև իմ կինը: Մուտքի մոտ կա բազմոց. կինն զգեստները մեկ առ մեկ հանելիս, դնում է դրա վրա: Այդ ժամանակ էլ դու հանգիստ կարող ես նրան դիտել: Երբ արդեն նա, թիկունքը քեզ տրած, գնա դեպի մահիճը, դու աշխատիր դռնով դուրս գալ այնպես, որ նա քեզ չնկատի»:

10. Այսպես, Գյուգեսը չի կարողանում խուսափել և համաձայնվում է: Իսկ Կանդավլեսը, տեսնելով, որ քնելու ժամն է, Գյուգեսին առաջնորդում է ննջարան, որից հետո իսկույն գալիս է նաև նրա կինը: Ներս մտնելով, կինն սկսում է զգեստները հանել, իսկ Գյուգեսը դիտում է: Երբ կինը թիկունքը դարձնում է դեպի նա՝ մահիճ մտնելու համար, Գյուգեսը դուրս է սողոսկում. բայց կինը նկատում է նրա ելքը: Իմանալով, որ այդ ամենն իր ամուսնու սարքածն է, ո՛չ ճչում է ամոթից, ո՛չ էլ ցույց տալիս, թե կռահեց, այլ մտադրվում է վրեժ լուծել Կանդավլեսից, քանի որ լյուդիացիները, ինչպես և համարյա բոլոր բարբարոսները, մեծ ամոթ են համարում նույնիսկ աղամարդու համար, եթե սա երևում է իր մերկությամբ:

11. Այնժամ կինը ոչինչ չէր արտահայտել և հանգիստ էր մնում: Բայց առավոտյան նա պատվիրում է իր ամենամտավատարիմ ծառաներին պատ-

բաստ լինել ու կանչում է Գյուգեսին: Սա ենթադրելով, որ թագուհուն ոչինչ ճայտնի չէ կատարվածից, գալիս է այդ հրավերին. քանզի սովոր էր գալ ամեն անգամ, երբ թագուհին իրեն հրավիրում էր իր մոտ: Երբ Գյուգեսը եկավ, կինը նրան այսպես ասաց. «Այժմ, Գյուգես, քո առաջ երկու ճանապարհ կա և ես (ճնարավորություն) եմ տալիս քեզ ընտրելու դրանցից մեկը. կամ Կանդավլեսին կսպանես և ինձ ու լյուդիացվոց թագավորությունը կտիրանաս, և կամ այժմ կսպանվես, որպեսզի այսուհետև էլ, ճնազանդվելով Կանդավլեսին, չտեսնես այն ամենը, ինչ քեզ չի կարելի տեսնել: Այժմ կամ նա, ով այս ամենը նյութեց, պետք է կործանվի, կամ էլ դու, որ անօրենություն ես գործել, ինձ մերկ տեսնելով»: Գյուգեսը սկզբում ապշեց նրա խոսքերից, բայց հետո սկսեց աղաչել թագուհուն, իրեն շտապել նման ընտրություն անելու: Բայց քանի որ Գյուգեսը չկարողացավ նրան համոզել և հասկացավ, որ ինքը ստիպված էր իրոք ընտրություն անել՝ կամ սպանել իր տիրոջը, կամ սպանվել այլոց ձեռքով, ուստի և ընտրեց իր կյանքը: Այնժամ դիմելով (թագուհուն), այսպես խոսեց. «Քանի որ դու ստիպում ես ինձ, հակառակ իմ կամքին, սպանել իմ տիրոջը, ապա ասա, թե ինչպե՞ս կձեռնարկենք այդ արարքը»: Թագուհին նրան պատասխանեց. «Հարձակումը կլինի այնտեղից, որտեղ նա ինձ մերկ ցույց տվեց. արարքը կկատարվի այն ժամանակ, երբ նա քնած կլինի»:

12. Այս դավադրությունը նյութելուց հետո, երբ գիշերը վրա հասավ, Գյուգեսը կնոջ ետևից մտավ ննջարան. քանզի նա չէր կարողանում ոչ մի կերպ ազատվել այդ կնոջ ձեռքից և պետք է կորչեր կամ ինքը, կամ Կանդավլեսը: Այնժամ թագուհին դաշույն տվեց նրան և թաքցրեց նույն դռան ետև: Երբ Կանդավլեսը քնեց, Գյուգեսը դուրս գալով (թախտոցից), սպանեց նրան ու տիրացավ և՛ կնոջը, և՛ թագավորությանը: Նրան յամբական տարիքներով հիշատակում է նաև Արքիլոքոս Պարոսցին, որն ապրել է նույն տարիներին:

13. Այսպիսով, Գյուգեսը տիրացավ թագավորությանը, իսկ Դելփյան պատգամատունը[13] պաշտպանեց նրա գահակալումը: Քանզի լյուդիացիները, ոչնչանալով Կանդավլեսի սպանությունից, զենքի դիմեցին, բայց միաժամանակ Գյուգեսի կողմնակիցները և մնացյալ լյուդիացիները պայմանավորվեցին, որ եթե պատգամախոսը նրան հայտարարի լյուդիայի թագավոր, ապա նա կթագավորի, իսկ հակառակ դեպքում իշխանությունը նորից կտան Հերակլյաններին: Պատգամախոսը դրական պատասխանեց և այսպիսով թագավորեց Գյուգեսը: Այսուհանդերձ, Պյուրիան[13a] ավելացրեց, թե Հերակլյաններն իրենց վրեժը կլուծեն Գյուգեսի հինգերորդ սերնդից: Այս խոսքերին լյուդիացիներն ու իրենց թագավորները կարևորություն չտվին, մինչև որ այդ ամենը կատարվեց:

14. Այսպես. Մերմնադյանները իշխանությունը վերցրին Հերակլյանների ձեռից: Գյուգեսը, տիրանալով իշխանության, ոչ միշ ընծաներ ուղարկեց Դելփի: Դելփիում գտնվող արծաթե ընծաների մեծ մասը նա է նվիրել. արծաթից բացի, նա աննամար ոսկի ընծայեց. իմիջիայլոց, նաև հիշարժան են վեց ոսկի կրատերները՝ երեսուն տաղանդ կշռով[14]: Դրանք դրված են կորնթացիների գանձարանում[15]: Ճիշտն ասած, այդ գանձը ոչ թե կորնթացիների համայնքինն է, այլ Կյուպսելոսի՝ էետիոնի որդու: Որքան ինձ հայտնի է, այս Գյուգեսը առաջին բարբարոսն էր, Գորդիասի որդի Միդասից, Փյուգիայի թագավորից հետո, որը ընծաներ է ուղարկել Դելփի: Քանզի Միդասը ևս ընծայել է իր թագավորական գանը, որի վրա և դատաստան էր անում: Այն տեսարժան է և դրված է այնտեղ, որտեղ և Գյուգեսի կրատերները: Այդ ոսկն և արծաթն անօրենները, որ ընծայել է Գյուգեսը, դելփյանները անվանեցին «գյուգեսյան»:

15. Իշխանությունը վերցնելուց հետո Գյուգեսը արշավել է Միլետ և Սմյուռնե՝ նվաճելով Կոլոփոն քաղաքը: Բայց քանի որ իր երեսունութամյա թագավորության ընթացքում Գյուգեսը ոչ մի այլ մեծագործություն չի կատարել, այսքանը պատմելուց հետո, ես կանցնեմ առաջ և կխոսեմ նրանից հետո թագավորած Արդյուսի՝ Գյուգեսի որդու մասին: Սա նվաճել է Պրիենեն և արշավել Միլետի վրա: Երբ նա տիրում էր Սարդեսում, կիմմերները, իրենց բնակավայրերից սկյութների կողմից արտամղվելով, հասնում են Ասիա և գրավում Սարդեսը, բացի միջնաբերդից:

16. Արդյուսը թագավորել է քառասուն և ինը տարի, որից հետո իշխանությունը անցել է նրա որդուն՝ Սադյատտեսին, որը թագավորել է տասներկու տարի: Սադյատտեսին հաջորդել է Ալյատտեսը: Սա պատերազմել է Դելոկեսի հետնորդ Կյուաքսարեսի և մեդացիների դեմ, կիմմերներին դուրս է քշել Ասիայից, նվաճել Սմյուռնեն, որը Կոլոփոնի հիմնած գաղութն էր, և ներխուժել Կլազոմենե: Այստեղից նա վերադարձել է ոչ այնպես, ինչպես ինքը կցանկար, այլ մեծապես վնասված: Նրա կատարած մյուս գործերից ասվել են հետևյալները հետևյալներն են:

17. Նա շարունակել է իր հոր սկսած պատերազմը միլետացիների դեմ: [illegible] Միլետը պաշարելիս այսպես է վարվել: Իր զորքերը տարել է [illegible] այն ժամանակ, երբ արտերում ցորենը հասունացած էր: Նա [illegible] էր քշում երգիչների, տավիղների[16] և կանացի ու [illegible] ձայների ուղեկցությամբ: Հասնելով միլետացիների երկիր, նա չէր [illegible] բնակարանները, ոչ էլ հրկիզում էր դրանք, ոչ էլ [illegible] տարածքում, այլ թողնում էր կանգուն: Նա միայն ծառերը և երկրի բերքը [illegible], նա է վերադարձել: Իր զորքն ի վիճակի չէր քաղաքը պաշարել, [illegible] որ միլետացիները գերիշխում էին ծովում: Իսկ բնակարանները լուդիացին չէր հրկիզում, որպեսզի միլետացիներն այնտեղ ապրելով, հնարավորություն ունենային նորից աշխատելու և հողը մշակելու, իսկ ինքը կկարողանար դարձյալ արշավել և ամայացնել երկիրը:

18. Այս կերպ նա պատերազմել է տասնմեկ տարի: Այդ ընթացքում միլետացիները երկու անգամ խոշոր պարտություն են կրել. մեկը՝ իրենց երկրում, Լիմենեյոնի ճակատամարտում, մյուսը՝ Մեանդրոսի հովտում: Այս տասնմեկ տարիներից վեցում Լյուդիայում դեռևս իշխում էր Արդյուսի որդի Սադյատտեսը, որը և այդ ժամանակ արշավել էր միլետացիների երկրի վրա. հանգի այս Սադյատտեսն էր, որ սկսել էր պատերազմը: Հաջորդ հինգ տարիների ընթացքում պատերազմում էր Սադյատտեսի որդի Ալյատտեսը, որը, ինչպես ասել եմ, պատերազմը ժառանգելով իր հորից, այն շարունակեց ջանասիրաբար: Հոնիացիներից ոչ ոք օգնության չհասավ միլետացիներին, բացի քիոսցիներից, որոնք դրանով փոխհատուցում էին միլետացիներին. հանգի նախկինում միլետացիք օգնել էին քիոսցիներին՝ Երետրիայի դեմ պատերազմում:

19. Տասներկուերորդ տարում, երբ (լյուդիական) զորքը հրկիզում էր արտերը, այսպիսի դեպք կատարվեց: Երբ արտը իսկույն ևեթ հրկիզվեց, քամին բոցը տարածեց ու բոցավառվեց Ասսեսյան[18] կոչված Աթենասի տաճարը, որն ամբողջովին հրկիզվեց: Սկզբում այդ դեպքին ուշադրություն չդարձրին, բայց երբ զորքը վերադարձավ Սարդես, Ալյատտեսը հիվանդացավ: Ու քանի որ հիվանդությունը երկարում էր, (արքան) պատգամավորներ է ուղարկում Դելփի,— գուցե իրեն այդպիսի խորհուրդ էին տվել, գուցե և ինքն այդպես էր մտածել,— հարցնելու ասածուց իր հիվանդության մասին: Երբ (պատգամավորները) ժամանել են Դելփի, Պյութիան ասել է, թե՝ պատգամ չի լինի, մինչև չվերականգնեն Աթենասի այն տաճարը, որը հրկիզել են Ասսեսոսում, Միլետյան երկրում:

20. Այս ամենը ես լսել եմ Դելփիում: Միլետացիները դրան ավելացնում են նաև հետևյալը: Կյուպսելոսի որդի Պերիանդրոսը, որը այդ ժամանակ Միլետում իշխող Թրասիբուլոսի մտերիմ բարեկամն էր, իմանում է պատգամախոսի՝ Ալյատտեսին տված պատգամի մասին և սուրհանդակի միջոցով այն հայտնում Թրասիբուլոսին, որպեսզի սա նախօրոք միջոցներ ձեռք առնի: Միլետացիները պատմում են, թե այդպես են կատարվել դեպքերը:

21. Իսկ Ալյատտեսը, երբ նրան հաղորդել են պատգամախոսի պատասխանը, անմիջապես քարոզ[18a] է ուղարկել Միլետ՝ Թրասիբուլոսի և միլետացիների հետ հաշտություն կնքելու, մինչև որ ինքը կվերականգներ տաճարը: Քարոզն, ահա, գտնվում էր Միլետում. իսկ Թրասիբուլոսը, նախօրոք տեղյակ լինելով ամեն ինչին և իմանալով, թե ինչ է անելու Ալյատտեսը,

ճեռնչալ հնարքն է մտածել: Ինչքան որ ցորեն կար քաղաքում, և՛ իրեն պատկանող, և՛ հասարակ քաղաքացիներին, կուտակել է ագորայում[18], և պատվիրել միլետացիներին, որ երբ ինքն ազդանշան տա, բոլորն սկսեն խմել և զվարճանալ:

22. Թրասիբուլոսը կարգադրում է այս ամենն անել այն նպատակով, որ Սարդեսից ժամանած քարոզը, տեսնելով (ագորայում) բափած մեծ քանակությամբ ցորենը և խրախնող մարդկանց, այդ մասին հաղորդեր Ալյուատտեսին. այդպես էլ կատարվում է: Քարոզն այդ ամենը տեսնում է և Լյուդիայի թագավորի հանձնարարությունները Թրասիբուլոսին հաղորդելուց հետո, վերադառնում Սարդես: Ինչպես ես իմացել եմ, հաշտությունը կրնքվել է հենց այդ պատճառով: Քանզի Ալյուատտեսը ենթադրում էր, որ Միլետում սատիկ սով էր և ժողովուրդն այնտեղ ծայր աղետի մեջ էր, մինչդեռ Միլետից վերադարձած քարոզը նրան հաղորդել էր իր ակնկալություններին բոլորովին հակառակ տեղեկություններ: Այս ամենից հետո կնքվում է հաշտություն, որով նրանք բարեկամանում են ու դառնում դաշնակից: Իսկ Ալյուատտեսը Ասսեսոսում մեկի փոխարեն կանգնեցնում է երկու տաճար՝ Աթեանային և ինքը բուժվում հիվանդությունից: Այսպիսին է միլետացիների և Թրասիբուլոսի դեմ Ալյուատտեսի մղած պատերազմի պատմությունը:

23. Պերիանդրոսը, որը Թրասիբուլոսին հայտնել էր ստացված պատգամը, Կյուպսելոսի որդին էր և Կորնթոսի տիրանը: Ինչպես պատմում են կորնթացիները,— նույնը հաստատում են նաև լեսբոսցիները,— նրա կյանքում մեծ հրաշք է կատարվել: Մեթյումնացի Արիոնը դելփինի վրա հեծած, տարվել է Տենարոս: Արիոնն իր ժամանակի կիթարահարների մեջ իր հավասարը չուներ և, ինչպես ինձ հայտնի է, առաջին անգամ նա է հորինել դիթիրամբը[19], անվանել այն և ուսուցանել Կորնթոսում:

24. Պատմում են, թե այս Արիոնն իր կյանքի մեծ մասը Պերիանդրոսի մոտ ապրելուց հետո, որոշում է նավել Իտալիա և Սիկիլիա: Այնտեղ մեծ հարստություն դիզելուց հետո, նա ցանկանում է վերադառնալ Կորնթոս: Քանի որ նա ոչ ոքի չէր վստահում այնպես, ինչպես կորնթացիներին, ապա և կորնթացի (ծովագնացների) նավը վարձելով, մեկնում է Տարասից[20]: Նավագները ծովի վրա դավ են նյութում Արիոնի դեմ, որոշելով նրան ծովը նետել և տիրանալ հարստությանը: Արիոնը, կռահելով դավադրությունը, առաջարկում է նրանց վերցնել իր ունեցածը, բայց իր կյանքը խնայել: Սակայն չի կարողանում համոզել նրանց: Նավագներն առաջարկում են նրան կամ ինքնասպան լինել՝ երկրում թաղման արժանանալու համար, կամ էլ իսկույն ծովը նետվել: Այդ հուսահատ վիճակում Արիոնը խնդրում է նրանց, —քանի որ նրանք արդեն այդ ամենը որոշել էին,— որպեսզի թույլ տան իրեն, երաժիշտի իր ամբողջ հանդերձանքով կանգնել (նավի) տախտակամածին և երգել: Նա խոստանում է, որ երգելուց հետո ինքը կգրկի իրեն կյանքից: Նավագները հրճված այն բանից, որ իրենք պետք է այդ հանուրքն զգային՝ լսելու աշխարհի լավագույն երգչին, նավախելից շարժվում են դեպի նավի կենտրոնը: Արիոնը, զգեցնելով իր ամբողջ հանդերձանքը և վերցնելով կիթարը, կանգնում է (նավի) տախտակամածին և երգում հանդիսավոր հիմնը[21]: Երգն ավարտելուց հետո նա իրեն նետում է ծովը: Մինչև նավագնացները կժամանեին Կորնթոս, Արիոնին, ինչպես պատմում են, դելփինը վերցնում է իր մեջքին և հասցնում Տենարոս: Արիոնը, դուրս գալով ափ, իր հանդերձանքով ճանապարհվում է Կորնթոս և հասնելով այնտեղ, պատմում ամբողջ եղելությունը: Բայց Պերիանդրոսը, չհավատալով, (հրամայում է) բանտարկել Արիոնին, իսկ նավագներին ուշադիր հետևել: Երբ սրանք հասնում են Կորնթոս, (Պերիանդրոսը) նրանց կանչում է իր մոտ և հարցնում, թե՝ ի՞նչ կարող են պատմել Արիոնի մասին: Նրանք պատասխանում են, թե նա ողջ և առողջ է Իտալիայում և իրենք նրան բարվոք վիճակում թողել են Տարասում: Այնժամ նրանց առաջ հայտնվում է Արիոնն այն հանդերձանքով, ինչ ծով էր նետվել: Հանկարծակիի եկած (նավագները) չեն կարողանում ժխտել իրենց հանցանքը և մերկացվում են: Անա այսպես են պատմում կորնթացիները և լեսբոսցիները: Տենարոսում ևս կա ոչ մեծ բրոնզե արձան, նվիրված Արիոնին՝ մարդը նստած դելփինի մեջքին:

25. Ալյուատտես լյուդիացին միլետացիների դեմ վարած պատերազմն ավարտելուց հետո վախճանվում է, թագավորած լինելով հիսունյոթ տարի: Իր հիվանդությունից բուժվելուց հետո նա, երկրորդը այդ թագավորական տնից, Դելփիի տաճարին ընծաներ է նվիրել՝ արծաթե խոշոր կրատեր՝ երկաթե ընդելուզված պատվանդանով. սա Դելփիում գտնվող ընծաներից ամենատեսարժանն է, որը կերտել է Գլավկոս Քիոսցին: Գլավկոսը առաջին մարդն էր, որը հնարեց երկաթն ընդելուզելու արվեստը:

26. Ալյուատտեսի մահից հետո թագավորությունը ժառանգել է Կրեսոսը՝ Ալյուատտեսի որդին, երեսուն և հինգ տարեկան հասակում: Առաջին հելլենները, որոնց վրա նա արշավել է, եփեսացիներն են եղել: Երբ Կրեսոսը պաշարում է Եփեսոսը, բնակիչները քաղաքը ձոնում են Արտեմիսին, տաճարից մինչև քաղաքային պարիսպը պարան ձգելով: Տարածությունը հին քաղաքից, որն այդ ժամանակ պաշարված է եղել, մինչև տաճարը յոթը ասպարեզ էր[22]: Առաջինը, ահա, սրանց դեմ է Կրեսոսը արշավանք ձեռնարկել. իսկ այնուհետև հերթով հոնիական և էոլիական մյուս քաղաքների դեմ, յուրաքանչյուրի համար առանձին պատրվակ հորինելով. հնարավոր դեպքում նա ծանր մեղադրանքներ էր հարուցում, իսկ այդպիսիք չգտնելու դեպքում շնչին առիթներ հորինում:

27. Այսպիսով, Ասիայի հելլեններին նվաճելուց և նրանց հարկատու

դարձնելուց հետո, նա մտածում է նավեր շինել և հարձակվել կղզիաբնակների վրա: Երբ արդեն ամեն ինչ պատրաստ էր նավաշինության համար, ըստ ոմանց՝ Սարդես է գալիս պրիենացի Բիասը, ըստ այլոց՝ միտիլենացի Պիտտակոսը[23], որը Կրեսոսի այն հարցին, թե՝ ի՞նչ նոր բան կա Հելլադայում, տալիս է հետևյալ պատասխանը, որով և դադարեցնում է Կրեսոսի նավաշինությունը. «Ո՛վ արքա, կղզիաբնակները բյուրավոր ձիեր են գնում, քեզ վրա՝ Սարդես արշավելու մտադրությամբ»: Կրեսոսը կարծելով, որ նա ասում է ճշմարտությունը, պատասխանում է. «Օ, երանի թե աստվածները կղզիաբնակներին այդպիսի միտք ներշնչեին՝ ձիերով գալ լյուդիացիների որդիների վրա»: Մյուսը պատասխանելով ասում է. «Ով թագավոր, տեսնում եմ, դու շատ ես ցանկանում, որ կղզիաբնակները որպես հնձյալ ընկնեն քո ձեռքը մայր ցամաքում, որի համար հիրավի հույս ես տածում: Իսկ կղզիաբնակները, քո կարծիքով, ի՞նչ կցանկանան, իմանալով, որ դու մտադիր ես նավեր շինել՝ իրենց վրա արշավելու համար: Ինարկե այն, թե ինչպես լյուդիացիներին գերի վերցնեն ծովի վրա և դրանով իսկ վրեժ լուծեն քեզանից՝ մայր ցամաքի հելլեններին ստրկացրած լինելուդ համար»: Այս խոսքերը շատ ուրախացնում են Կրեսոսին: Նրան թվում էր, թե (այդ մարդը) իրավացի խոսեց. ուստի և համոզվում է դադարեցնել նավաշինությունը: Այսպիսով, Կրեսոսը բարեկամություն է հաստատել հոնիացիների հետ:

28. Ժամանակի ընթացքում Կրեսոսը նվաճեց Հալյուս գետից այս կողմ բնակվող համարյա բոլոր ժողովուրդներին, բացի կիլիկեցիներից և լյուկիացիներից բացի բոլորը հպատակեցված էին Կրեսոսին: Ահա նրանք. լյուդիացիներ, փռյուգներ, մյուսիացիներ, մարիանդյուններ, խալյոբներ, պափլագոններ, թրակացիներ, թյուններ և բիթյուններ, կարիացիներ, հոնիացիներ, դորիացիներ, էոլյաններ, պամփյուղներ:

29. Այս բոլոր ժողովուրդներին Կրեսոսը նվաճել էր և միացրել լյուդիական թագավորությանը: Արդեն մեծապես բարգավաճող հարուստ Սարդես ժամանում էին այդ ժամանակ Հելլադայում ապրող բոլոր իմաստունները, յուրաքանչյուրն այս կամ այն առիթով: Նրանց թվում էր նաև Սոլոն Աթենացին, որը աթենացիների համար, իրենց իսկ պատվերով, օրենքներ ստեղծելուց հետո, տասը տարով հեռացել էր երկրից: Նա թողել էր երկիրը՝ աշխարհներ տեսնելու պատճառաբանությամբ, բայց իրականում՝ որպեսզի ստիպված չլինի իր իսկ սահմանած օրենքներից որևէ մեկը լուծելու: Մինչդեռ իրենք՝ աթենացիները չէին կարող այդ անել, քանի որ հանդիսավոր երդումներով պարտավորվել էին պահպանել իրենց համար Սոլոնի սահմանած օրենքները:

30. Ահա այս պատճառով, ինչպես նաև աշխարհ տեսնելու մտադրությամբ, Սոլոնը հեռանում է (Աթենից) և գալիս Եգիպտոս, Ամասիսի մոտ,

իսկ այնուհետև Սարդես, Կրեսոսի մոտ[24]: Երբ նա ժամանում է (Սարդես), Կրեսոսը նրան հյուրընկալում է իր պալատում: Այնուհետև, երրորդ թե չորրորդ օրը, Կրեսոսի հրամանով ծառաները Սոլոնին տանում են (թագավորի) գանձարանը և ցույց տալիս նրան այնտեղ եղած մեծ հարստությունները: Երբ նա այդ ամենն արդեն տեսել էր, այնժամ Կրեսոսը, առիթը հարմար համարելով, այսպես է հարցնում. «Աթենացի հյուր. մենք շատ ենք լսել քո իմաստության և քո շրջագայությունների մասին, (լսել ենք), որ դու հանուն իմաստասիրության և աշխարհ տեսնելու նպատակով շրջել ես շատ երկրներ: Ուստի այժմ ես ուզում եմ հարցնել քեզ. արդյո՞ք դու հանդիպել ես ավելի երջանիկ մարդու»: Կրեսոսը այդպես հարցնում էր, ենթադրելով, թե ինքը կհամարվի երջանկագույնը մարդկանցից: Սակայն Սոլոնը, առանց շողոքորթելու, ասում է ճշմարտությունը: «Ով թագավոր. այդ մարդը Տելլոս Աթենացին է»: Կրեսոսը, զարմացած այս խոսքերի վրա, դարձյալ հարցնում է. «Այդ ինչո՞ւ Տելլոսին համարում ես երջանկագույնը»: Սոլոնը պատասխանում է. «Այս Տելլոսը ապրում էր այն ժամանակ, երբ նրա քաղաքը բարգավաճում էր և նա ունեցավ լավ և ազնիվ որդիներ ու տեսավ նաև սրանցից ծնված երեխաներին, բոլորին ողջ և առողջ: Բացի այդ, նա մեզ մոտ բարեկեցիկ լինելով, միաժամանակ կյանքի պայծառագույն վախճան ունեցավ: Հարևան քաղաքացիների դեմ Ելևսիսում աթենացիների մղած կռվի ժամանակ նա արշավանքին մասնակցեց և թշնամուն փախուստի մատնելով, ինքը քաջաբար ընկավ և աթենացիները նրան հանդիսավոր թաղում կազմակերպեցին իր ընկած վայրում և նրան մեծապես պատվեցին»:

31. Քանի որ Սոլոնը Կրեսոսի հետաքրքրասիրությունն էր արթնացրել, պատմելով Տելլոսի մեծ երջանկության մասին, ուստի և Կրեսոսը հարցնում է, թե՝ նրանից հետո ո՞ւմ է նա երկրորդ (երջանիկը) համարում. (թագավորը) հույս ուներ, որ (Սոլոնը) հաստատապես իրեն կհամարի երկրորդ երջանիկ մարդը: Բայց Սոլոնը պատասխանում է. «Կլեոբիսին և Բիտոնին: Սրանք Արգոսից էին և, բարեկեցիկ կյանք ունենալուց բացի, մարմնական մեծ ուժի տեր: Նրանք երկուսն էլ մրցումների հաղթողներ են եղել և նրանց մասին ահա թե ինչ զրույց են պատմում: Արգոսում Հերայի տոնն էր և նրանց մայրը պետք է անպայման բերվեր տաճար՝ մի զույգ եզ լծած կառքով[25], մինչդեռ իրենց եզները դաշտից ժամանակին չէին վերադարձել: Իսկ պատանիները, ժամանակի սղության պատճառով, իրենք են հագցնում լուծը և քաշում կառքը, որի վրա իրենց մայրն էր: Նրանք քառասուն և հինգ ասպարեզ քաշում են կառքը և այն հասցնում տաճար: Այս ամենը նրանք կատարել են տոնախմբությանը հավաքված ամբողջ բազմության աչքի առաջ, որից հետո նրանք ունենում են կյանքի գերազանց վախճան: Դրանով ասված ցույց է տալիս, թե ինչպե՞ս մարդու համար առավել լավ է մեռնելը,

ման ապրելը: Քանզի արգոսեցիները, շրջապատելով պատանիներին, փառաբանում էին նրանց ուժը, իսկ կանայք՝ նրանց մարը, այդպիսի որդիներ ունենալու համար: Իսկ մայրը, ուրախացած որդիների սխրանքի և համբավի համար, կանգնում է դիցուհու արձանի առաջ և աղոթում, որ իր որդիներ Կլեոբիսին և Բիտոնին, որոնք իրեն մեծապես պատվեցին, դիցուհին պարգևի բարձրագույն բարիքը, որին մարդ կարող է հասնել: Այդ աղոթքից հետո, երբ զոհաբերություն կատարեցին և խրախճանքն ավարտվեց, պատանիները քնեցին այդ տաճարում և այլևս երբեք չզարթնեցին, այլ այնտեղ գտան իրենց վախճանը: Իսկ արգոսցիները նրանց արձանները պատրաստելով, կանգնեցրին Դելֆիում, նրանց գերազանցության պատճառով»:

32. Այսպիսով, երբ Սոլոնը երանելիության երկրորդ տեղը հատկացնում է նրանց, Կրեսոսը զայրացած ասում է. «Ով աթենացի հյուր. ուրեմն մեր երջանկությունը դու այնքան ոչինչ ես գնահատում, որ մեզ նույնիսկ այդ հասարակ մարդկանց հավասար չես համարում»: Իսկ Սոլոնը պատասխանում է. «Ով Կրեսոս. մարդկանց նկատմամբ դու ի՞նչ ես հարցնում, որը գիտե, թե աստվածները ինչքան նախանձախնդիր են և ինչքան տագնապներ են հարուցում մարդկանց: Իր երկար կյանքի ընթացքում մարդ ակամայից շատ բան է տեսնում և շատ տառապում: Ես մարդկային կյանքի սահմանը համարում եմ յոթանասուն տարին: Յոթանասուն տարին ունի քսանհինգ հազար երկու հարյուր օր, չհաշված հավելյալ ամիսը: Եվ եթե յուրաքանչյուր երկրորդ տարին երկարացնենք մեկ ամսով, որպեսզի (տարվա) եղանակները համընթաց լինեն իրենց իսկական ժամանակին[26], ապա յոթանասուն տարվա ընթացքում կունենանք երեսուն հավելյալ ամիս և դրանց օրերը կլինեն հազար հինգ հարյուր: Այսպիսով, ամբողջ յոթանասուն տարիների օրերը կլինեն քսանվեց հազար երկու հարյուր հիսուն և այդ օրերից ոչ մեկը իր տվածով բոլորովին նման չէ մյուսին: Հետևաբար, Կրեսոս, մարդը առնասարակ, պատահականություն է: Արդ, ես տեսնում եմ, որ դու մեծ հարստություն ունես և շատ մարդկանց թագավորն ես: Բայց (երջանիկ լինելու մասին) քո տված հարցին ես դեռևս չեմ կարող պատասխանել, մինչև չլսեմ, թե կյանքդ բարի վախճան է ունեցել: Քանզի մեծ հարստություն ունեցողը ավելի երջանիկ չէ նրանից, ով միայն առօրյա ապրուստի տեր է, եթե երջանկությունը նրան չի ուղեկցում և նա չի հասնում իր կյանքի վախճանին ամբողջ ունեցածով: Այդ պատճառով նույնիսկ շատ մեծահարուստներ ապերջանիկ են, մինչդեռ միջակ կարողությամբ մարդիկ առավել երջանիկ են: Մեծահարուստ, բայց ապերջանիկ մարդը միայն երկու առավելություն ունի երջանիկ մարդու համեմատությամբ, իսկ վերջինս բազմաթիվ (առավելություններ ունի) հարուստ, բայց ապերջանիկ մարդու համեմատությամբ: Նա ավելի շատ կարող է իր ցանկությունը կատարել և

դիմանալ բախտի ծանր հարվածներին. իսկ մյուսը, թեև առաջինին հավասար չի կարող բախտի հարվածներին դիմանալ և իր ցանկությունները կատարել, սակայն բարեբախտությունը ուղեկցում է նրան, քանի որ նա ողջանդամ է, առողջ, շարիքից հեռու, երջանիկ իր որդիներով և բարեհաջող: Արդ, եթե այդ բոլորից հետո նա իր կյանքը բարենաջող ավարտի, ապա նա այն մարդն է, որի մասին դու հարցնում ես. նա արժանի է երջանիկ կոչվելու: Բայց քանի նա դեռ չի վախճանվել, ապա նրան կարելի է կոչել ոչ թե երջանիկ, այլ բարեբախտ: Այսուհանդերձ, ոչ ոք բոլոր (բարիքներին) չի կարող տիրանալ, ինչպես ոչ մի երկիր չի արտադրում այն ամենը, ինչ իրեն անհրաժեշտ է, այլ մի բան ունի, իսկ մեկ այլ բանից զրկված է. լավագույն է այն երկիրը, որը առավել բարիքներ ունի: Այդպես էլ մարդկային ոչ մի մարմին ինքնաբավ չէ. քանզի մի բանն ունի, իսկ մեկ այլ բանից զրկված է: Իսկ նա, ով մշտապես առավել շատ բարիքներ է վայելում և վերջում երջանիկ վախճան է ունենում, անա այն մարդը, ով թագավոր, հիրավի իմ կողմից այդպիսին կհամարվի: Եվ ամեն մի գործում պետք է նկատի ունենալ վախճանը, թե այն ինչպե՞ս կվերջանա: Քանզի շատ՞ որ շատերին է աստված մի պահ երջանկություն շնորհելուց հետո, հիմնովին կործանել»:

33. (Սոլոնի) այս խոսքերը Կրեսոսին հաճելի չեղան և նա, ուշադրություն չդարձնելով ասվածին, նրան անշուք ճանապարհում է, քանզի նա (Սոլոնին) համարել էր տգետ մարդ, որը ներկա բարիքները թողած, խորհուրդ էր տալիս սպասել ամեն ինչի վախճանին:

34. Սոլոնի մեկնելուց հետո աստվածային ծանր զայրույթն ընկնում է Կրեսոսի վրա, թվում է, այն պատճառով, որ նա իրեն համարում էր երջանկագույնը բոլորից: Քնելուց անմիջապես հետո Կրեսոսը երազ է տեսնում, որով նշանակությամբ կանխագուշակվում էր նրա որդուն հասանելիք աղետը: Կրեսոսն ուներ երկու որդի. նրանցից մեկը խեղված էր, խուլ ու համր, իսկ մյուսը, որի անունն էր Ատյուս, ամեն ինչում շատ էր գերազանցում իր հասակակիցներին: Երազը հայտնում էր Կրեսոսին, որ այս Ատյուսը պետք է մեռնի երկաթե նիզակի հարվածից: Երբ Կրեսոսն արթնացավ և սկսեց մտածել, որոշեց, երազից սարսափահար, ամուսնացնել տղային և այսուհետև երբեք ռազմական արշավանքի չուղարկել, թեպետև սա սովոր էր պատերազմի ժամանակ առաջնորդել լյուդիացիներին: (Կրեսոսը) տեգերն ու նիզակները և նման զենքերը, որ մարդիկ օգտագործում են պատերազմում, դուրս հանելով արանց սրահներից, դրանք կուտակեց կանանց սրահներում[27], որպեսզի կախված տեղից ոչ մի զենք (պատահաբար) չընկնի որդու վրա:

35. Մինչ Կրեսոսը զբաղված էր որդու հարսանիքով, Սարդես է ժամանում ոմն փոյուգացի, թագավորական առնչից, որին աղետն էր հալածում և որն ուներ պղծված ձեռքեր: Սա, գալով Կրեսոսի տունը, խնդրել էր մաք-

ռել իրեն պղծությունից, տեղական սովորությունների համաձայն. և Կրեսոսը մաքրել էր նրան: Լյուդիացիների և հելլենների մաքրման արարողությունը նույնանման է[28]: Մաքրման արարողությունից հետո Կրեսոսը հարցնում է օտարականին, թե՝ ո՞րտեղացի է, հեռակայել խոսքերով. «Օ մարդ, ո՞վ ես դու և Փռյուգիայի ո՞ր վայրից ես եկել ինձ մոտ ապաստան գտնելու: Ո՞ր ազամարդու կամ կնոջ ես սպանել»: Իսկ նա պատասխանում է. «Ով թագավոր. ես Միդասի որդու՝ Գորդիասի որդին եմ, անունս Ադրեստոս: Անկախ իմ կամքից, ես սպանել եմ իմ եղբորը, ուստի և հայրս ինձ արտաքսեց և ես ինձ մոտ եմ եկել ամեն ինչից զրկված»: Կրեսոսը նրան այսպես է պատասխանում. «Դու բարեկամ մարդկանց հետնորդ ես և ժամանել ես բարեկամների մոտ: Մնա մեզ մոտ և դու ոչնչի կարիք չես զգա: Քո այս ադեռը ինչքան թեթև տանես, այնքան առավել օգտավետ կլինի ինձ համար»:

36. Այսպիսով, նա մնում է ապրելու Կրեսոսի մոտ: Նույն այդ ժամանակ Մյուսիայի Օլիմպոսում հայտնվել էր մի խոշոր վարազ. նա, իջնելով այդ լեռից, ավերում էր մյուսիացիների արտերը: Մյուսիացիները բազմիցս դուրս էին եկել այդ գազանի դեմ, բայց չէին կարողացել ոչինչ անել և իրենք իսկ վնասներ էին կրել: Ի վերջո, մյուսիացիների պատգամավորները, գալով Կրեսոսի մոտ, ասում են. «Ով թագավոր. մեր երկրում հայտնվել է խոշոր մի վարազ, որը ոչնչացնում է մեր արտերը: Հակառակ մեր ջանքերին, անկարող եղանք նրան սպանել: Անա և մենք խնդրում ենք քեզ, որ մեզ ուղարկես քո որդուն, ընտրյալ երիտասարդների և շների, որպեսզի ազատենք երկիրը նրանից»: Նրանք այսպես էին խնդրում, բայց Կրեսոսը, հիշելով երազի պատգամը, նրանց այսպես է պատասխանում. «Իմ որդու մասին չմտածեք. ես նրան ձեզ հետ չեմ ուղարկի. քանզի նա նորապսակ է և այժմ դրանով է զբաղված: Այսուհանդերձ, ես կուղարկեմ ձեզ հետ ընտրյալ լյուդիացիների և որսորդների ամբողջ խումբը՝ շներով հանդերձ, և ես կհրամայեմ նրանց մեծ ջանասիրությամբ օգնել ձեզ, երկիրը այդ գազանից փրկելու համար»:

37. Այսպես է նա պատասխանում. իսկ մյուսիացիները գոհ մնացին նրա խոսքերից: Այնժամ ներս է մտնում Կրեսոսի որդին, որը լսել էր մյուսիացիների խնդրանքը: Երբ Կրեսոսը մերժեց իր որդուն ուղարկել նրանց հետ, պատանին ասաց նրան. «Ով հայր, գերագույնը և ազնվագույնը մեզ համար նախկինում այն էր, որ պատերազմներին և որսորդության մասնակցելով, աչքի ընկնեինք: Մինչդեռ այժմ դու զրկում ես ինձ այդ ամենից, թեև դու երբեք ինձ մոտ չես նկատել ո՛չ վախկոտություն, ո՛չ էլ փոքրոգություն: Այժմ մարդիկ ինչպե՞ս կնայեն ինձ ժողովրդական հավաքի[29] գնալիս կամ այնտեղից վերադառնալիս: Ինչպիսի՞ն կթվամ ես մեր քաղաքացիներին և ի՞նչ կմտածի իմ մասին իմ նորապսակ կինը, որի հետ ես

պետք է ապրեմ: Ուստի և դու այժմ կամ թույլ տուր ինձ գնալ որսի, կամ էլ խոսքով համոզիր ինձ, որ այս ամբողջ կատարվածը առավել լավ է ինձ համար»:

38. Կրեսոսը նրան այսպես պատասխանեց. «Որդիս. այս ամենը ես անում եմ ոչ այն պատճառով, որ քո մեջ երկչոտություն կամ որևէ ապաշնորհ բան եմ նկատել, այլ որովհետև երազում ինձ հայտնվեց, թե դու սակավակյաց պիտի լինես և պիտի կործանվես երկաթե տեգից: Այդ երազի պատճառով է, որ շտապեցրի քո ամուսնությունը և այժմ էլ թույլ չեմ տալիս քեզ մասնակցելու այս ձեռնարկմանը, որպեսզի, քանի դեռ կենդանի եմ, պահպանեմ քեզ այդ վտանգից: Չէ՞ որ դու իմ միակ որդին ես. քանզի մյուսին, որը զրկված է լսելիքից, ես չեմ հաշվում»:

39. Իսկ պատանին այսպես պատասխանեց. «Հայր իմ. չի կարելի քեզ մեղադրել, որ այսպիսի երազ տեսնելուց հետո դու ինձ պահպանում ես: Բայց դու ճիշտ չես հասկացել երազը և ես պարտավոր եմ այն բացատրել քեզ: Դու ասում ես, թե երազը քեզ պատգամել է, որ ես կմեռնեմ երկաթե տեգից: Իսկ այդ վարազը մի՞թե ձեռքեր ունի, մի՞թե երկաթե տեգ ունի, որ դու վախենում ես: Իրոք, եթե երազն այնպիսին լիներ, որ ես իբր մեռնելու եմ վարազի ժանիքներից կամ դրա նման մի բանից, այդ դեպքում դու իրավացի կլինեիր այսպես վարվելով: Բայց (երազի համաձայն), ես պետք է մեռնեմ երկաթե տեգից: Եվ քանի որ այժմ մենք չենք կռվելու մարդկանց դեմ, ապա թույլ տուր ինձ գնալ»:

40. Կրեսոսը պատասխանեց. «Որդիս. երազի մասին քո այդ բացատրությամբ հաղթեցիր դու ինձ. ուստի և, համոզվելով քո խոսքերից, ես թույլ եմ տալիս քեզ մասնակցելու որսին»:

41. Այս ասելուց հետո Կրեսոսը իր մոտ կանչեց փռյուգ Ադրեստոսին. երբ սա եկավ, թագավորն ասաց նրան. «Ադրեստոս. երբ ծանր աղետ էր քեզ հարվածել, որի համար ես քեզ չեմ հանդիմանում, ես մաքրագործեցի քեզ և, ընդունելով իմ տունը, ապահովեցի բոլոր միջոցներով: Անա այժմ, քանի որ իմ արած բարիքը դու պետք է նույնպես հատուցես բարությամբ, ես խնդրում եմ որսի գնացող իմ որդուն պահապան լինես, որպեսզի հանապարհին չարագործ ավազակներ չհարձակվեն ձեզ վրա և չվնասեն: Բացի այդ, ինքդ ևս պարտավոր ես գնալ որսի և այնտեղ գործով փառք նվաճել: Այդպես է վայել քո հոր որդուն, քանի որ դու հաև կորովի ես»:

42. Ադրեստոսը պատասխանեց. «Ով թագավոր. ես այլապես չէի մասնակցի այս դժվար գործին: Քանզի այսպիսի անբախտություն կրելուց հետո ինձ վայել չէ բարեբախտ հասակակիցներին հաղորդակցվել, ոչ էլ ես ինքս ձգտել եմ այդ բանին, այլ միշտ աշխատել եմ ինձ հեռու պահել նրանցից: Բայց այժմ, քանի որ դու խնդրում ես և ես պետք է քո ցանկությունը

կատարեմ, քանզի ես պարտավոր եմ քեզ բարությամբ հատուցել, պարտատ եմ կատարել այդ ամենը: Քո որդին, որին դու պատվիրում ես պահպանել, անվնաս կվերադառնա քեզ մոտ, քանի ես կլինեմ նրա պահապանը»:

43. Այսպես նա պատասխանեց Կրեսոսին, որից հետո նրանք մեկնեցին ընտրյալ երիտասարդների և շների ուղեկցությամբ: Հասնելով Օլիմպոս լեռը[30], նրանք սկսեցին փնտրել գազանին. հայտնաբերելով նրան, նրանք շրջապատեցին գազանին և սկսեցին նիզակահարել: Այստեղ էլ օտարականը, որը նոր էր մաքրվել ոճրից և որի անունը Ադրեստոս էր, իր նիզակով վարազին հարվածելիս, վրիպում է, և հարվածը դիպչում է Կրեսոսի որդուն: Պատանին խոցվում է նիզակից, որով և իրականանում է երազի պատգամը: Իսկույն մեկը վազում է հաղորդելու Կրեսոսին դիպվածը և, հասնելով Սարդես, պատմում նրան (վարազի դեմ) մղված կռվի և որդու վախճանի մասին:

44. Կրեսոսը մեծապես ցնցվում է որդու մահից և ողբում հատկապես այն պատճառով, որ նրան սպանել է այն մարդը, որին ինքն էր մաքրել (պղծությունից): Թեպետ ճնշված այդ ապեթից, նա դիմում է Քավարար Զևսին[31] իբրև վկա օտարականի՝ իրեն պատճառած տառապանքների: Նա դիմում է նաև օջախի հովանավոր Զևսին[32] և ընկերասիրության հովանավոր Զևսին[33], նույն ատածուն անվանելով մերթ օջախի հովանավոր, որովհետև ինքն իր տանը ընդունել էր օտարականին, չկասկածելով, որ նա կդառնա իր որդու սպանողը, մերթ էլ ընկերասիրության հովանավոր, որովհետև (իր որդուն) իբրև պանապան ուղարկվածը դարձավ իր մեծագույն թշնամին:

45. Այնուհետև եկան լյուդիացիները, բերելով սպանվածին, իսկ նրանց ետևից գալիս էր նրան սպանողը: Սա կանգնեց մեոյալի առաջ և անձնատուր եղավ Կրեսոսին: Նա ձեռքերն առաջ պարզած խնդրում էր սպանել իրեն և զոհաբերել դիակի առաջ, ասելով, որ իր առաջին պատուհասից հետո, երբ այժմ էլ կործանել է իրեն մաքրողին, այսուհետև կյանքն իրեն պետք չէ: Կրեսոսը, լսելով այս խոսքերը, խղճաց Ադրեստոսին, թեպետև իր անձնական վիշտը շատ մեծ էր, և ասաց նրան. «Ես, օտարական, լիովին վարձատրված եմ, քանի որ դու ինքդ քեզ մահվան ես դատապարտում: Դու չես մեղավոր իմ այս դժբախտության համար, քանի որ այդ կատարել ես ակամայից, այլ (պատճառը) աստվածներից մեկն է, որը դեռ շատ առաջ ինձ կանխանայտնել էր կատարվելիք դեպքերի մասին»: Այնուհետև, ընդունված սովորության համաձայն, Կրեսոսը թաղեց իր որդուն: Իսկ Ադրեստոսը՝ Միդասի որդի Գորդիասի որդին, իր եղբորն սպանողը, որը դարձել էր նաև իրեն մաքրողի (որդու) սպանողը, երբ շիրիմի մոտ մարդիկ հանդարտվեցին, իրեն համարելով ամենադժբախտն իր բոլոր ճանաչած մարդկանցից, ինքնասպան եղավ գերեզմանի վրա:

46. Իր որդուց զրկված Կրեսոսը երկու տարի խոր սուգի մեջ էր: Հետագայում, Կյուռոսի որդու՝ Ասայուագեսի իշխանության կործանումը Կյուռոսի՝ Կամբյուսեսի որդու կողմից և պարսից տերության հզորացումը վերջ դրեց Կրեսոսի սուգին և նրան անհանգստացնող հոգսեր ներշնչեց, թե՝ ինչպե՞ս կարողանա պարսիկների աճող հզորությունը ջախջախել, նախքան նրանց առավել հզորանալը: Այդ մտքով տարված, նա անհապաղ հարցում արեց հելլենական և Լիբիայում[35] գտնվող պատգամատներին, առանձին դեսպաններ ուղարկելով Դելֆի, նաև փոկայական Աբաս և Դոդոնե. ոմանց էլ ուղարկեց Ամֆիարաոսի և Տրոփոնիոսի մոտ[36], իսկ ուրիշներին՝ Միլետ, Բրանքիդների մոտ: Այս ամենը հելլենական պատգամատներ էին, որոնց Կրեսոսն ուղարկեց (իր մարդկանց)՝ պատգամ ստանալու համար: Նա դեսպաններ ուղարկեց հարցնելու նաև Ամմոնի պատգամախոսին՝ Լիբիայում: Նա հարցմունքի ուղարկեց՝ փորձելու պատգամատների ճշմարտախոսությունը: Եթե համոզվեր նրանց ճշմարտախոսությանը, ապա երկրորդ անգամ կուղարկեր հարցնելու, թե՝ արդյո՞ք արշավանք ձեռնարկի պարսիկների դեմ:

47. Պատգամատներին փորձելու համար լյուդիացիներին ուղարկելիս, Կրեսոսը հետևյալը պատվիրեց: Սարդեսից մեկնելու օրից հաշվել ժամանակը և հարյուրերորդ օրը հարցնել պատգամախոսին, թե՝ այդ պահին ի՞նչ է անում Լյուդիայի թագավոր Կրեսոսը՝ Ալյուատտեսի որդին: Այն, ինչ պատգամախոսներից յուրաքանչյուրը հայտնի, դեսպանները պետք է գրի առնեն և բերեն իրեն: Արդ, հայտնի չէ, թե մյուս պատգամախոսները ի՞նչ պատասխանեցին: Մինչդեռ Դելֆիում, անմիջապես, երբ լյուդիացիները մտան տաճարի պատգամատուն, հարցնելու ատածուց այն, ինչ պատվիրված էր, Պյութիան հեքսամետրով տվեց հետևյալ պատգամը.

Հաշվում եմ ես ծովի ավազն ու տարածքը,
Հասկանում եմ խլին և լսում եմ համրին.
Առնում եմ կրիայի պատյանի հոտն անս,
Դառների մսի հետ կաթսայի մեջ եփած.
Պղինձ է անդ տակին և պղինձ վրան ծածկած:

48. Լյուդիացիները Պյութիայի այս պատգամը գրելով, մեկնեցին և վերադարձան Սարդես: Երբ ժամանեցին նաև մյուս ուղարկվածները, գուշակությունները բերելով իրենց հետ, Կրեսոսը բաց արեց դրանք և կարդաց: Արդ, դրանցից ոչ մեկը չգոհացրեց նրան, այլ միայն Դելֆիի (պատասխանը) ընդունեց գոհունակությամբ: Նա համոզվեց, որ միակ (ճշմարտախոս) պատգամատունը Դելֆիինն է, քանի որ այն գուշակել էր, թե ինքն ի՞նչ էր

անում: Քանզի իր դեսպաններին պատգամատերն ուղարկելուց հետո, սպասելով որոշված (հայուրերորդ) օրը, հետևյալ միտքը հղացավ, որը երբեք չէր կարելի բացահայտել կամ կռահել. կրիա և գառ կտրատելով, դրանք եփեց պղնձե կաթսայի մեջ, որը ծածկել էր պղնձե խուփով:

49. Անա այսպիսին էր Դելփիի աված պատգամը Կրեսոսին: Ինչ վերաբերում է Ամփիարաոսի պատգամատան պատասխանին, չգիտես, թե ի՞նչ պատգամ տվեց լյուդիացիներին, երբ սրանք կատարեցին տաճարում ընդունված ծիսակատարությունները. քանզի այդ մասին ոչինչ չի հաղորդված. բայց գիտեմ, որ Կրեսոսն այս պատգամատան պատասխանը ևս ճամարել է ճշմարիտ:

50. Այս ամենից հետո Կրեսոսը հարուստ զոհաբերություններով փորձեց շահել Դելփյան աստծու կարեկցանքը: Նա ամեն տեսակ երեք հազար ընտիր անասուն զոհաբերեց, այնուհետև մեծ խարույկ վառելով, դրա վրա այրեց ոսկեզօծ և արծաթազօծ մահճակալներ, ոսկե թասեր ու ծիրանի զգեստներ: Նա այսպիսով ցանկանում էր առավել շափով սիրաշահել աստծուն: Միաժամանակ նա հրամայեց բոլոր լյուդիացիներին զոհաբերություն կատարել, յուրաքանչյուրն իր ունեցածից: Զոհաբերումն ավարտելուց հետո նա ձուլեց անհաշիվ ոսկի, դրանից պատրաստելով կիսաաղյուսներ, վեց ափ երկարությամբ, երեք ափ լայնությամբ, մեկ ափ բարձրությամբ: Դրանց թիվը հարյուր տասնյոթ էր. դրանցից չորսը մաքուր ոսկուց էր, յուրաքանչյուրը երկու և կես տաղանդ քաշով, իսկ մնացած կիսաաղյուսները՝ արծաթախառն ոսկուց[37], երկու տաղանդ քաշով: Պատրաստեց նաև առյուծի պատկեր՝ մաքուր ոսկուց, տասը տաղանդ քաշով: Հետագայում այս առյուծը Դելփիի տաճարի հրդեհի ժամանակ ընկել էր կիսաաղյուսներից (պատրաստած պատվանդանից), որի վրա այն դրված էր եղել, և այժմ գտնվում է կորնթացիների գանձարանում և կշռում է վեց ու կես տաղանդ, քանի որ երեք և կես տաղանդը հալվել էր հրդեհի ժամանակ:

51. Այս իրերը պատրաստելուց հետո Կրեսոսը դրանք ուղարկել է Դելփի այլ ընծաներով հանդերձ, ինչպիսիք՝ երկու խոշոր կրատեր՝ ոսկյա և արծաթյա, որոնցից ոսկյանը դրված էր տաճարի մուտքի աջ կողմում, իսկ արծաթյանը՝ ձախ կողմում: Տաճարի հրդեհվելուց հետո սրանք ևս փոխադրվել են, և ոսկյա կրատերը, որի քաշը ութ և կես տաղանդ ու տասներկու մինա է, գտնվում է կլազոմենացիների գանձարանում, իսկ արծաթյանը՝ տաճարի գավթի անկյունում. սրա տարողությունը վեց հարյուր ամֆորա է. Դելփիի բնակիչները այն լցնում են ջրախառն գինիով՝ Թեոֆանիայի տոներին[38]: Դելփիում պատմում են, թե այն Թեոդորոս Սամոսացու գործն է. ես ևս այդպես եմ կարծում, քանի որ այն ինձ մեծարվեստ աշխատանք է թվում: (Կրեսոսն) ուղարկել է նաև չորս արծաթե կարաս, որոնք (այժմ) կանգնած

են կորնթացիների գանձարանում. նա նվիրել է նաև երկու սրսկելու ջրաման, մեկը ոսկե, մյուսը՝ արծաթե. ոսկե ջրամանի վրա կա մակագրություն, թե՝ այն ընծայաբերել են լակեդեմոնացիք: Սակայն ճիշտ չեն ասում, քանի որ այն ևս Կրեսոսի ընծան է, իսկ մակագրությունն արել է Դելփիի ինչ-որ բնակիչ՝ լակեդեմոնացիներին հաճոյանալու համար: Նրա անունը ես գիտեմ, բայց չեմ ուզում հիշատակել: Իսկ տղայի արձանը, որի ձեռքից ջուրը հոսում է (ջրամանները), լակեդեմոնացիների ընծան է, բայց ոչ թե ջրամաններից որևէ մեկը: Ուրիշ շատ ընծաներ ևս Կրեսոսն ուղարկել է Դելփի, առանց մակագրությունների[39]. դրանց թվում՝ երկու հեղելու արծաթե կլոր թաս, ինչպես և կնոջ ոսկե արձան՝ երեք կանգուն բարձրությամբ, դելփյանների պատմելով այն պատկերում էր Կրեսոսի հացթուխին: Այդ բոլորից բացի Կրեսոսը նվիրաբերել է նաև իր կնոջ մանյակն ու գոտին:

52. Այս բոլորը նա ուղարկեց Դելփի: Իսկ Ամփիարաոսին, որի առաքինության և ճակատագրի մասին նա լսել էր, ընծայեց մաքուր ոսկուց վահան, ինչպես և նիզակ, որի բռնակը և ծայրապանակը ևս մաքուր ոսկուց էին: Այս երկու իրերն էլ այժմ գտնվում են Թեբեում, Իսմենյան Ապոլլոնի տաճարում:

53. Լյուդիացիներին, որոնք տանելու էին այս ընծաները տաճարներին, Կրեսոսը պատվիրեց հարցնել պատգամավորներին, թե արդյո՞ք ինքը պետք է արշավի պարսիկների դեմ և արդյո՞ք պետք է դիմի որևէ դաշնակից զորքի: Երբ լյուդիացի (դեսպանները) հասան որոշված (արքավայրերը) և հանձնեցին ընծաները, պատգամ հարցրին հետևյալ խոսքերով. «Կրեսոսը, լյուդիացոց և այլ ազգերի թագավորը, համարելով, որ աշխարհում այս պատգամատունն է միակ ճշմարիտը, այս ընծաները ուղարկեց իբրև պարգև ձեր հնարամտության և այժմ ձեզ հարցնում է՝ արդյո՞ք արշավել պարսիկների դեմ և արդյո՞ք ապավինել որևէ դաշնակից զորքի»: Այսպես հարցրին դեսպանները. իսկ երկու պատգամատներն էլ նույն պատասխանը տվեցին, կանխագուշակելով, որ եթե Կրեսոսն արշավի պարսիկների դեմ, ապա ինքը մի մեծ տերություն կկործանի: Նրանք միաժամանակ խորհուրդ տվեցին գտնել հելլենական հզորագույն քաղաքը և դաշնակցել նրա հետ:

54. Կրեսոսը, ծանոթանալով բերված գուշակություններին, մեծապես ուրախացավ այդ պատգամներով: Արդեն լիահույս լինելով, որ ինքը կկործանի Կյուրոսի թագավորությունը, նա դարձյալ Դելփի՝ Պյութոյի պատգամատուն ընծաներով դեսպաններ ուղարկեց, իմանալով Դելփիի բնակիչների թիվը, յուրաքանչյուր այրին երկու ոսկե ստատեր[40]: Դելփյանները դրա փոխարեն Կրեսոսին և լյուդիացիներին իրավունք շնորհեցին առաջինը հարցնել պատգամախոսին, ազատություն հարկերից և պատվո տեղերը (պյության խաղերի ժամանակ). բացի այդ, Դելփիի քաղաքացիություն էր շնորհ-

վում յուրամանչյուր ցանկացող լսուդիացուն, բոլոր ժամանակների համար:

55. Պելիյանների այս բնծաներն անելուց հետո, Կրեսոսը երրորդ անգամ դիմեց պատգամախոսին. քանի որ Կրեսոսը համոզված էր պատգամախոսի ճշմարտությանը, նորից դիմեց նրան: Այժմ նա հարցրեց իմանալու, թե արդյո՞ք իր միապետությունը երկար կտևի. իսկ Պյութիան այսպես պատգամեց.

«Երբ չորին մեդացոց թագավորը դառնա,
Դու այնժամ զգուշացիր, փեղոսն լսուդացի.
Նապ փախիր ափերը խնամպա Հերմոսի[41].
Մի վախիր, թե մարդիկ քեզ երկչոտ կանվանեն»:

56. Երբ այս խոսքերը հաղորդեցին Կրեսոսին, նա առավել ևս հրճվեց, համոզված, որ մարդու փոխարեն երբեք չորին չի թագավորի մեդացոց վրա, ուստի և ո՛չ ինքը, ո՛չ էլ իր հետնորդները երբեք չեն կորցնի իրենց տերությունը: Այնուհետև Կրեսոսը չանաց փնտրել ու գտնել հելլեններից հզորագույններին և նրանց դարձնել իր բարեկամները: Նա հետաքրքրվելով, գտավ, որ հելլեններից առավել աշխի ընկնողները լակեդեմոնացիներն են և աթենացիները: Առաջիններն՝ դորիական ցեղերի մեջ, իսկ մյուսներն՝ հոնիական: Սրանք առավել հայտնիներն էին այդ ժամանակ. դրանցից հոնիականը հնում եղել է պելասգյան ազգ, իսկ դորիականը՝ հելլենական: Հոնիացիները երբեք չեն հեռացել իրենց երկրից, մինչդեռ դորիացիները շատ են թափառել: Քանզի Դևկալիոն[42] թագավորի օրոք նրանք բնակեցնում են Փթիոտիսը, իսկ Հելլենի որդի Դորոսի օրոք՝ Հիստիայոտիս կոչված երկիրը, Օսսայի և Օլիմպոսի ստորոտում: Հետագայում, կադմոսյանների կողմից Հիստիայոտիսից դուրս քշվելուց հետո, նրանք բնակվում են Պինդոսում և կոչվում մակեդոններ: Այստեղից դարձյալ անցնում են Դրյուոպիս և այնտեղից էլ Պելեպոննեսոս, որտեղ և ստանում են դորիացիներ անունը:

57. Թե ի՞նչ լեզվով էին խոսում պելասգները, ես ստույգ ասել չեմ կարող: Բայց եթե դատենք այն պելասգներից, որոնք այժմ ապրում են այսուրաններից հյուսիս, Կրեստոն քաղաքում և այժմ դորիացիներ են կոչվում, իսկ այն ժամանակ բնակվում էին այն երկում, որն այժմ կոչվում է Թեսսալիոտիս, և այն պելասգներից, որոնք հիմնել են Պլակիան և Սկյուլակեսը Հելլեսպոնտոսում և համաբնակվել են աթենացիների հետ, ինչպես նաև այն պելասգիական քաղաքներից, որոնք հետագայում անվանափոխվել են. եթե, ասում եմ, դատենք այս ամենից, ապա պելասգները խոսել են բարբարոս լեզվով: Եթե, իսկապես, պելասգյան ամբողջ ցեղն այդպես էր խոսում, ապա ատտիկյան ազգը, որը ծագումով պելասգյան էր, հելլենների մաս դառնալուն զուգընթաց, պետք է փոխած լինի իր լեզուն: Քանի որ այժմ ևս Կրեստոնի և Պլակիայի բնակիչները, որոնք համալեզու են, խոսում

են իրենց հարևաններից տարբեր լեզվով: Այդ ցույց է տալիս, որ նրանք այժմ ևս պահպանում են իրենց լեզվի բնույթը, որ այս երկրներում վերաբնակվելիս բերել էին իրենց հետ:

58. Իսկ հելլենական ցեղը, իմ կարծիքով, սկզբից ևեթ միշտ ունեցել է նույն լեզուն: Պելասգներից անչափ ժամանակ (հելլենները) եղել են նվազ. սակայն նախապես փոքրաթիվ լինելով, նրանք աճեցին և ներգրավեցին բազում ազգերի, հատկապես այն բանից հետո, երբ պելասգները և շատ ուրիշ բարբարոս ազգեր միացան նրանց: Իսկ նախապես, ինչպես ինձ թվում է, պելասգյան ազգը, որը բարբարոս էր, երբեք էլ մեծաթիվ չի եղել:

59. Այս երկու ազգերից ատտիկյանը, ինչպես Կրեսոսն իմացավ, հպատակեցված էր և տրոհված Հիպպոկրատեսի որդի Պիսիստրատոսի կողմից, որն այդ ժամանակ Աթենքի տիրանն էր: Երբ այս Հիպպոկրատեսը դեռ հասարակ քաղաքացի էր և դիտում էր օլիմպիական խաղերը, մեծ հրաշք երևաց. երբ նա զոհաբերություն էր կատարում, այնտեղ դրված կաթսաները, որոնք լցված էին մսով և ջրով, սկսեցին եռալ առանց կրակի և ջուրն սկսեց դուրս հորդել: Քիլոն Լակեդեմոնացին, որը դիպվածով այնտեղ էր գրանցվում, տեսնում է այդ հրաշքը և խորհուրդ տալիս Հիպպոկրատեսին նախ իր տանը երեխա ծնելու ընդունակ կին չբերել, իսկ եթե արդեն որդի ունի, ապա հրաժարվել այդ որդուց: Բայց Հիպպոկրատեսը չցանկացավ կատարել Քիլոնի խորհուրդը: Այնուհետև նրան ծնվեց հիշյալ Պիսիստրատոսը: Այդ ժամանակ Աթենքում բշնամանք կար առափնյա շրջանների, որոնց առաջնորդն էր Ալկմեոնի որդի Մեգակլեսը, և դաշտավայրայինների միջև, որոնց առաջնորդն էր Արիստոլայիդեսի որդի Լիկուրգոսը: Պիսիստրատոսը, նպատակադրված լինելով դառնալ (Աթենքի) տիրան, հիմնեց երրորդ խմբակցությունը: Նա կողմնակիցներ հավաքեց և դառնալով հյուպերակրիաների[43] առաջնորդը, հետևյալ խորամանկությունը հղացավ: Նա, վիրավորելով իրեն և իր շորիներին, իր կառքը քշեց դեպի ագորա, իբրև թե փախչելով թշնամիներից, որոնք հոր ցանկացել էին սպանել իրեն, երբ իրեն անցնում էր դաշտով: Նա խնդրեց դեմոսին պահակներ հատկացնել իրեն. դեռևս նախքան այդ էլ նա մեգարացիների դեմ պատերազմի ժամանակ աչքի էր ընկել իբրև զորավար, գրավելով Նիսայան և այլ մեծագործություններ կատարելով: Աթենական դեմոսը, խաբվելով, նրան տրամադրեց ընտրյալ քաղաքացիներից թիկնապահներ, որոնք Պիսիստրատոսի համար դարձան ոչ թե նիզակակիցներ, այլ դաղանակիրներ, քանզի նրանք հետևում էին (Պիսիստրատոսին)՝ փայտե դաղանակներով զինված: Սրանք էլ Պիսիստրատոսի հետ սպանամբելով, վերցրին ակրոպոլիսը: Այնժամ Պիսիստրատոսը տիրեց Աթենքին: Նա գոյություն ունեցող կարգերը չխախտեց, ոչ էլ օրենքնե-

ը փոխեց, այլ կառավարեց պոլիսը՝ սահմանված կարգերով բարեհաջող և արդարորեն:

60. Բայց ոչ շատ ժամանակ անց, Մեգակլեսի[43] խմբակցությունը և Լիկուրգոսի խմբակցությունը միանալով, արտաքսեցին նրան: Այսպիսով, Պիսիստրատոսը առաջին անգամ տիրեց Աթենքում և կորցրեց իր տիրանիան, որը դեռևս խոր չէր արմատավորվել: Բայց նրա հակառակորդները, Պիսիստրատոսին արտաքսելուց հետո, դարձյալ թշնամացան: Խռովության ընթացքում Մեգակլեսը նեղն ընկնելով, պատգամավոր է ուղարկում Պիսիստրատոսի մոտ, առաջարկելով իր աղջկան կնության վերցնել, դրան գումարած տիրանիան: Քանի որ Պիսիստրատոսը ընդունեց նրա առաջարկը և համաձայնվեց այդ պայմաններին, Պիսիստրատոսի վերադարձի համար նրանք, իմ կարծիքով, նյութեցին շատ հիմար մի հնարք: Դեռևս շատ հնուց, երբ արդեն հելլեններն անջատվել էին բարբարոսներից, նրանք առավել ողջամիտ էին, քան բարբարոսները, և գերծ անմիտ հիմարությունից: Այսուհանդերձ (Պիսիստրատոսը և Մեգակլեսը) կարողացան հետևյալ հնարքով մոլորեցնել աթենացիներին, որոնք առավել հնարամիտներն էին հելլենների մեջ: Պեյոնիայի դեմում[44] կար մի կին, անունը Փյուա, որի հասակը չորս կանգունից երեք մատ պակաս էր և, ընդհանրապես, գեղատես: Նրանք այս կնոջը զենքեր կապեցին և դրեցին կառքի վրա, ցույց տալով, թե ինչպիսի՞ կեցվածք պետք է ընդունի, որպեսզի առավել վայելուչ տեսք ունենա և բերեցին քաղաք: Այնուհետև քարոզներ ուղարկեցին, որոնք հասնելով քաղաք, նրանց հանձնարարությամբ այսպես դիմեցին մարդկանց. «Ո՞վ աթենացիներ. սիրահոժար ընդունեցեք Պիսիստրատոսին, որին ինքը՝ Աթենասը բոլոր մարդկանցից առավել մեծարելով, վերադարձնում է իր իսկ ակրոպոլիսը»: Այսպես էին քարոզները շրջում և հայտարարում. իսկույն բոլոր դեմերում լուր տարածվեց, թե Աթենասը Պիսիստրատոսին վերադարձնում է: Քաղաքում բոլորը, հավատալով, որ այդ կինը իրոք աստվածուհին է, ազոթք էին հղում այդ (մահկանացու) կնոջը և ընդունեցին Պիսիստրատոսին:

61. Այս միջոցով Պիսիստրատոսը վերստացավ իշխանությունը և Մեգակլեսի հետ կնքած պայմանի համաձայն, ամուսնացավ նրա աղջկա հետ: Բայց քանի որ Պիսիստրատոսն արդեն ուներ երիտասարդ որդիներ, իսկ Ալկմեոնիդների տոհմը[46], ինչպես ասում էին, անիծված էր, ապա նա, չցանկանալով իր նոր կնոջից երեխաներ ունենալ, կենակցում էր նրա հետ ոչ բնական եղանակով: Սկզբում կինը թաքցնում էր այդ, բայց հետագայում նա այդ մասին պատմեց մորը՝ գուցե նրա հարցնելուց հետո, գուցե և այնպես, սա էլ՝ ամուսնուն: Մեգակլեսը զայրանալով, դարձյալ հաշտվեց իր նախկին կողմնակիցների հետ: Պիսիստրատոսը տեղեկանալով, թե ինչ է կատարվում իր դեմ, հեռացավ երկրից և գալով Երետրիա, խորհրդակցեց

իր որդիների հետ: Հաղթեց Հիպպիասի կարծիքը, թե պետք է վերցնել իշխանությունը: Այնժամ նրանք սկսեցին ընծաներ հավաքել այն քաղաքներից, որոնք ինչ-որ չափով պարտական էին իրենց: Շատ (քաղաքներ) խոշոր գումարներ տվեցին, բայց թեբեցիները գերազանցեցին բոլորին: Կարճ ասած, որոշ ժամանակ անց ամեն ինչ պատրաստ էր նրանց վերադարձի համար. քանզի Պելեպոնեսոսից ժամանել էին արգոսցի վարձկաններ, իսկ Նաքսոսից կամավոր եկել էր իրենց շերմ կողմնակիցը, Լյուգդամիս անունով, բերելով դրամ և մարդիկ:

62. Տասնմեկերորդ տարին նրանք Երետրիայից արշավելով վերադարձան և առաջին վայրը, որ գրավեցին Ատտիկայում՝ Մարաթոնն էր: Մինչ նրանք բանակել էին այնտեղ, քաղաքից նրանց մոտ ժամանեցին իրենց կուսակիցները, ինչպես նաև եկան մարդիկ (շրջակա) դեմերից, որոնք տիրանիան գերադասում էին ազատությունից: Նրանք այսպես հավաքվում էին. իսկ աթենացիները քաղաքում, քանի դեռ Պիսիստրատոսը միջոցներ էր հավաքում և հետո էլ, երբ գրավել էր Մարաթոնը, ուշադրություն չէին դարձնում նրա վրա: Բայց երբ տեղեկացան, թե նա Մարաթոնից շարժվում է դեպի քաղաք, այնժամ արդեն շարժվեցին նրա դեմ: Նրանք համագումար զորքով դուրս եկան վերադարձողների դեմ. իսկ Պիսիստրատոսի մարդիկ, շարժվելով Մարաթոնից, քայլեցին Աթենքի դեմ և հակառակորդին հանդիպեցին Պալլենյան Աթենասի տաճարի մոտ, որտեղ և (կողմերը) բանակեցին իրար դիմաց: Այստեղ էլ, աստվածային նախախնամությամբ, Պիսիստրատոսին հերկայանում է գուշակ Ամփիլյուտոս Ակառանանիացին և հեքսամետրով հետևյալ պատգամն անում.

«Եռված է ճակատը և ցանցը փռված է լուսընկա գիշերին.
Թյունոսները անտ վաղով ընկնում են այդ փռված ցանցի մեջ»:

63. Նշանակված գուշակն այսպես պատգամեց. իսկ Պիսիստրատոսը, ըմբռնելով պատգամի իմաստը և ասելով, որ ընդունում է գուշակությունը, իր զորքը տարավ (թշնամու դեմ): Քաղաքից եկած աթենացիներն այդ ժամին, առհասարակ, նախաճաշում էին և նախաճաշից հետո նրանցից ոմանք զառ էին խաղում, իսկ մյուսները՝ քնում: Այնժամ Պիսիստրատոսի զորքը հարձակվեց աթենացիների վրա և նրանց փախուստի մատնեց: Երբ նրանք փախուստի դիմեցին, Պիսիստրատոսը իմաստանազույն խորհուրդ հղացավ՝ խանգարելու ցրված աթենացիների վերամիավորվելը: Նա իր որդիներին ձի նստեցրեց և ուղարկեց առաջ: Սրանք, հասնելով փախչողներին, Պիսիստրատոսի անունից նրանց առաջարկեցին չվախենալ և վերադառնալ լուրաքանչյուրն իր տունը:

64. Աթենացիները համոզվեցին: Այսպիսով, Պիսիստրատոսը երրորդ

անգամ վերցրեց Աթենքը: Նա իր իշխանությունն ամրապնդեց մեծաթիվ վարձկաններով և դրամ հավաքելով ինչպես բուն Աթենքից, այնպես էլ Սարիմոն գետի[46] շրջակայքից: Այնուհետև նա պատանդ վերցրեց Աթենքում մնացածների և անմիջապես փախուստի չդիմածների որդիներին ու նրանց վերաբնակեցրեց Նաքսոսում: Մինչ այդ Պիսիստրատոսը գրավել էր Նաքսոսը և այն նանձնել Լյուգդամոսի կառավարմանը: Դրանից բացի, նա գուշակների խորհրդով արբեց Դելոս կղզին. իսկ արբելը կատարեց հետևյալ կերպ: Նա կարգադրեց հանել գերեզմաններից բոլոր մեռյալներին, որոնք թաղված էին տաճարից տեսանելի տարածության վրա և դրանք փոխադրեց Դելոսի մեկ այլ վայր: Այսպիսով, Պիսիստրատոսը դարձավ Աթենքի տիրանը. իսկ աթենացիները, որոնք նրա թշնամիներն էին, մասամբ սպանվեցին մարտում, մասամբ հեռացան հայրենի քաղաքից՝ Ալկմեոնիդյանների հետ:

65. Կրեսոսն իմացավ, որ այդ ժամանակ Աթենքում այդպիսի դրություն էր. իսկ լակեդեմոնացիները մեծ չարիքներից են խուսափել և այժմ էլ պատերազմում հաղթել են թեգեացիներին: Քանզի Սպարտայի Լեոն և Հեգեսիկլես բասիլևսների օրոք լակեդեմոնացիները բոլոր պատերազմներում հաղթել էին, բացի թեգեացիների դեմ մղած պատերազմից: Դեռևս հնում լակեդեմոնացիները համարյա բոլոր հելլեններից վառաբար օրենքներ ունեին, քանի որ չփում չունեին ո՛չ մյուս հելլեննների, ո՛չ էլ օտարների հետ: Սպարտացի ականավոր այր Լիկուրգոսը գալիս է Դելփի պատգամ հարցնելու: Երբ նա մտնում է տաճար, Պյութիան խոսքն պատասխանում է.

«Իմ շքեղ տաճարն ես ժամանել, Լիկուրգոս, դու Զևսի սիրելի
Եվ բոլոր դից անմահ, որոնց տունն Օլիմպոսն է պայծառ:
Տատանվում եմ, ինչպե՞ս քեզ համար պատգամեմ, մտե՞ր ես դու, թե՞ ասվածդ.
Պիտի քեզ, Լիկուրգոս, անպայման մեծարել իբր աստված մի անմահ»:

Ոմանք ասում են, թե Պյութիան նրան բերադրել է նաև սպարտացիների այժմյան իրավակարգը: Բայց իրենք՝ լակեդեմոնացիներն ասում են, որ Լիկուրգոսը, լինելով իր զարմիկի՝ Սպարտայի բասիլևս Լեոբոտեսի խնամակալը, այդ կարգերը բերել է Կրետեից: Հենց որ նա դարձավ խնամակալ, շատ փոխեց բոլոր օրենքները և խստիվ հետևեց, որ դրանք չխախտվեն: Այնուհետև ինքը՝ Լիկուրգոսն էր, որ կարգավորեց ռազմական գործերը, զորքը բաժանեց էնոմոտիաների[47] և հեռնյակների և հաստատեց ընդհանուր ճաշերը[48]: Լիկուրգոսը հաստատեց նաև էֆորոսներին[49] և ավագների խորհուրդը[50]:

66. Այսպես լակեդեմոնացիներն իրենց (վատ) օրենքները փոխարինեցին լավերով, իսկ Լիկուրգոսի վախճանվելուց հետո, նրա պատվին տաճար

կառուցեցին և այժմ մեծապես հարգում են նրան: Ու քանի որ նրանց երկիրը բարեբեր էր և ուներ ոչ փիչ բնակչություն, ուստի և նրանք շատով ծաղկեցին և բարգավաճեցին: Նրանք արդեն չէին բավարարվում խաղաղ մնալով ու համոզված, որ իրենք արդեն գերազանցում են արկադիացիներին, հարցրին Դելփյան պատգամախոսին, թե արդյո՞ք կնվաճեն ամբողջ Արկադիան[51]: Պյութիան նրանց այսպես պատգամեց.

«Արկադիան ես խնդրում իմանից. շատ ես խնդրում. այդ չեմ տա քեզ.
Արկադիայում բնակվում են կաղնով սնվող բազում այրեր.
Նրանք էլ քեզ կխանգարեն. սակայն ես քեզ չեմ արգելի.
Քեզ Տեգեան[52] կտամ. այնտեղ հողն է բնդում պարերի տակ.
Եվ բարեբեր դաշտեր կտամ, որ այն չափես դու պարանով»:

Այս պատասխանը լսելով, լակեդեմոնացիները թողեցին Արկադիայի մյուս վայրերը և, հակառակ երկիմաստ պատգամին, իրենց հետ կապանքներ վերցնելով, արշավեցին թեգեացիների վրա, համոզված, որ պետք է ստրկացնեն թեգեացիներին: Սակայն նրանք հակառամարտում պարտվեցին և գերի ընկնողները կալանվեցին այն կապանքներով, որ իրենք էին բերել իրենց հետ և նրանք, (որպես ստրուկներ), պարանով չափելու էին թեգեացիների դաշտերը և աշխատելու էին այնտեղ: Այդ կապանքները, որոնցով կալանված էին (լակեդեմոնացիները), դեռևս իմ օրոք էլ պահպանվում էին Տեգեայում և կախված էին Այեյան Աթենասի տաճարի մոտ:

67. Այսպես, թեգեացիների դեմ նախորդ պատերազմներում լակեդեմոնացիները մշտապես անհաջողություն են կրել. իսկ Կրեսոսի ժամանակ, երբ Լակեդեմոնիայում բասիլևսներ էին Անաքսանդրիդեսը և Արիստոնը[53], սպարտացիներն արդեն պատերազմում գերակշռեցին, անա թե ինչպես: Քանի որ թեգեացիների դեմ պատերազմում միշտ պարտվում էին, նրանք դեսպաններ ուղարկեցին Դելփի և հարցրին, թե աստվածներից ո՞ւմ խնդրեն, որ կարողանան պատերազմում հաղթել թեգեացիներին: Պյութիան նրանց պատգամեց, թե իրենք պետք է Ագամեմնոնի որդի Օրեստեսի ոսկորները ետ բերեն (Սպարտա): Բայց քանի որ նրանք չկարողացան գտնել Օրեստեսի գերեզմանը, ապա դարձյալ (դեսպան ուղարկելով), հարցրին աստծուն, թե որտե՞ղ է թաղված Օրեստեսը: Դեսպանների հարցին Պյութիան այսպես պատասխանեց.

«Արկադիայում, դաշտերի մեջ կա մի քաղաք՝ Տեգեա.
Անդ հողմեր են փչում երկու, ուժեղ տարերքը բնության.
Հարված է և հակառարված, ապետ է ապետի վրա:
Սարիդեսի որդուն այնտեղ հողն է ծածկում կենարար,
Երբ նրան բերես, այնժամ կնվաճես Տեգեան»:

Այս լսելուց հետո ևս լակեդեմոնացիները չէին կարողանում գտնել (գերեզմանը), թեև ամենուր փնտրում էին, մինչև որ Լիխեսը, Սպարտայում բարեգործներ[54] կոչվածներից մեկը, գտավ այն: Այս բարեգործները (Սպարտայի) այն քաղաքացիներն են, որոնք ավագության պատճառով դուրս են գալիս հեծյալների շարքից, տարեկան հինգ մարդ. սրանք այն տարվա ընթացքում, երբ դուրս են գալիս հեծյալների շարքից, պետք է պատրաստ լինեն Սպարտայի համայնքի կողմից ուղարկվելու իբրև դեսպան այլ երկրներ:

68. Անա այդ այրերից Լիխեսը գտավ Օրեստեսի գերեզմանը՝ մասամբ պատահմամբ, մասամբ էլ իր խելքով: Այդ ժամանակ հաղորդակցվում էին տեգեացիների հետ, և Լիխեսը, մտնելով մի դարբնոց, դիտում է երկաթի դարբնումը և հիանում իր տեսածով: Դարբինը, նկատելով նրա հիացմունքը, դադարեցնում է աշխատանքը և ասում. «Ով լակոնիացի բարեկամ. եթե դու այսպես հիանում ես երկաթի կոփման աշխատանքով, ապա ինչքան առավել կհիանայիր, եթե տեսնեիր այն, ինչ ես տեսել եմ: Ես ուզեցի այս բանում ինձ համար շրջոր բացել, երբ փորելիս պատահեցի յոթ կանգուն (երկարությամբ) գերեզմանի: Չհավատալով, որ մարդիկ երբևիցե ավելի բարձրահասակ են եղել, քան այժմ, ես բացեցի գերեզմանը ու տեսա, որ դիակի երկարությունը հավասար էր գերեզմանի (երկարությանը), այն, չափելուց հետո, նորից հողով ծածկեցի»: Այսպես էր (դարբինը) պատմում նրան իր տեսածը. իսկ Լիխեսը խորհրդածում էր նրա ասածների մասին: Նա ենթադրեց, որ դա կլիներ Օրեստեսի մնյուրը, որի մասին հայտնել էր գուշակը: Նա այսպես էր դատում. դարբնի երկու փուքսերը գուշակի ասած երկու հողմերն են, կռանը և մուրճը՝ նարվածը և նակտարվածը, իսկ դարբնվող երկաթը՝ ադեամ ադեամի վրա, կարծելով, թե երկաթը հայտնաբերվել է մարդկանց ադեամի համար: Այս ենթադրությունն անելով, նա վերադառնում է Սպարտա և պատմում այս ամենը լակեդեմոնացիներին: Սրանք կեղծ մեղադրանքով նրան արտաքսում են: Սա նորից գալիս է Տեգեա և, պատմելով դարբնին իր դժբախտությունը, խնդրում է նրան վարձով տալ իրեն այդ բանը. բայց դարբինը սկզբում չի համաձայնվում: Իվերջո Լիխեսը համոզում է դարբնին և բնակվում այնտեղ: Հետո փորում է գերեզմանը և, հավաքելով ոսկորները, դրանք բերում է Սպարտա: Այդ ժամանակից հետո, ամեն անգամ պատերազմում լակեդեմոնացիները հաղթում են տեգեացիներին, այսպիսով, նրանք արդեն նվաճում են Պելոպոնեսոսի մեծագույն մասը:

69. Անա այս ամենն իմանալով, Կրեսոսը Սպարտա հրեշտակներ է ուղարկում նվերներով և դաշնակցության առաջարկով, պատվիրելով այն, ինչ պարտավոր էին ասել. սրանք էլ գալով (Սպարտա), ասում են. «Մեզ ուղարկել է Կրեսոսը, լյուդիացոց և այլ ազգերի թագավորը, այսպես ասելով. «Ով լակեդեմոնացիներ. ասված ինձ պատգամից Հելլենին դարձնել իմ բարեկամը: Ես լսել եմ, որ դուք եք Հելլադայի առաջնորդները. ուստի և ես, տրված պատգամի համաձայն, դիմում եմ ձեզ և ցանկանում դառնալ ձեր դաշնակիցն առանց դավի և կեղծիքի»: Կրեսոսն այսպես հաղորդեց հրեշտակների միջոցով. իսկ լակեդեմոնացիները, որոնք ևս լսել էին գուշակի կողմից Կրեսոսին տրված պատգամի մասին, հանձնացան լյուդիացիների ժամանումով և երդումով բարեկամություն ու դաշինք հաստատեցին նրանց հետ, առավել ևս այն պատճառով, որ Կրեսոսը նրանց նախկինում նույնպես բարեգործություն էր արել: Այսպես, երբ լակեդեմոնացիները մարդ էին ուղարկել Սարդես՝ ոսկի գնելու, որպեսզի ձուլեն Ապոլլոնի արձանը, որն այժմ կանգնած է Լակոնիայի Թորնաքսում[55], Կրեսոսը նվիրել էր նրանց այդ (ոսկին):

70. Անա այս, ինչպես նաև այն պատճառով, որ Կրեսոսը համայն հելլենների թվում իրենց էր նախընտրել իբրև բարեկամների, լակեդեմոնացիներն ընդունում են նրա դաշնակցությունը: Նրանք ոչ միայն ընդունում են նրա առաջարկը, այլև պատրաստում պղնձե խառնարան, արտաքինից բերանի շուրջը հարուստ զարդերով, երեք հարյուր ամֆորա տարողությամբ, ցանկանալով այդ նվերով փոխհատուցել Կրեսոսին: Սակայն այդ խառնարանը այդպես էլ չհասավ Սարդես այնպիսի պատճառներով, որոնց մասին երկակի են պատմում: Լակեդեմոնացիները պատմում են, թե խառնարանը Սարդես տանելու ճանապարհին, երբ հասնում են Սամոս[56], տեղի բնակիչները, իմանալով այդ մասին, մարտանավերով հարձակվում են և հափշտակում այն. իսկ իրենք, սամոսցիները, ասում են, թե խառնարանը տանող լակեդեմոնացիները շատ էին ուշացել և տեղեկանալով, որ Սարդեսը և Կրեսոսը ընկել են (պարսիկների ձեռքը), խառնարանը վաճառում են Սամոսում և տեղացի մարդիկ այն գնելով, նվիրաբերում են Հերայի տաճարին: Հավանաբար իրենք, խառնարանը վաճառած մարդիկ, Սպարտա վերադառնալով, հայտարարել են, թե իրենց կողոպտել են սամոսցիները: Անա այն, ինչ պատմում են այդ խառնարանի մասին:

71. Կրեսոսը, սխալ հասկանալով պատգամը, արշավում է Կապադովկիա, Կյուրոսին և պարսից տերությունը կործանելու հույսով: Մինչ Կրեսոսը պատրաստվում էր պարսից վրա արշավելու, ինչ-որ լյուդիացի, որի անունն էր Սանդանիս և որն արդեն հայտնի էր իր իմաստությամբ, Կրեսոսին տվեց հետևյալ խորհուրդը, որի համար առավել հայտնի դարձավ Լյուդիայում. «Ով թագավոր. դու պատրաստվում ես արշավել մարդկանց վրա, որոնք հագնում են կաշվե անտախիրդ[57] և կաշվե այլ զգեստներ, ուտում ոչ թե ինչքան ցանկանում են, այլ ինչքան ունեն, քանի որ նրանց երկիրը լեռնային է: Բացի այդ, նրանք գինի չեն օգտագործում, այլ ջուր են խմում: Նրանք ո՛չ թուզ ունեն ուտելու, ո՛չ էլ այլ բնաիր (ուտեստ): Արդ, եթե դու նրանց

ճաղթես իսկ, ի՞նչ կարող ես նրանցից ստանալ, երբ իրենք ոչինչ չունեն: Իսկ եթե պարտվես, ապա մտածիր, ինչպիսի՞ բարիքներից դու կզրկվես: Քանզի եթե նրանք մեր բարիքների համն առնեն, ապա այնպես կկարծեն զրանց, որ արդեն հնարավոր չի լինի հեռացնել նրանց: Այժմ ես շնորհակալ եմ աստվածներին, որ նրանք չեն նեղշնչում պարսիկներին արշավել լյուդիացիների վրա»: Այսպես խոսելով, նա չկարողացավ համոզել Կրեսոսին: Քանզի պարսիկները, նախքան լյուդիացիներին նվաճելը, ո՛չ փայլ ունեին, ո՛չ էլ որևէ բարիք:

72. Կապադովկիացիներին հելլեններն անվանում են սիրիացիներ: Այս սիրիացիները, նախքան պարսկական տիրապետությունը, հպատակ էին մեդացիներին[58], իսկ այդ ժամանակ՝ Կյուրոսին: Քանզի մեդական տերության և լյուդիական տերության միջև սահմանը Հալյուս գետն էր, որը հոսում է Հայկական լեռներից Կիլիկիայի միջով, այնուհետև (հոսում է) աջից մատիենների և աջակից փռյուգիացիների ունենալով: Անցնելով այս երկրները և հոսելով վեր, դեպի հյուսիս, այն բաժանում է կապադովկյան սիրիացիներին՝ աջում, պափլագոնացիներից՝ ձախում: Այսպիսով, Հալյուս գետը կտրում է Ասիայի ամբողջ ստորին մասը՝ Կիպրոսին հանդիպակաց ծովից դեպի Եվքսինյան Պոնտոսը: Սա այդ ամբողջ երկրի (ամենահեղ) պարանցն է և լավ քայլող մարդուց այդ հանապարհը հինգ օր կխլի:

73. Կրեսոսը Կապադովկիա արշավեց հետևյալ պատճառով: Նա ցանկանում էր իր ունեցած տիրույթներին միացնել այդ երկիրը և մանավանդ, որ հավատում էր պատգամախոսին և ուզում վրեժ լուծել Ասյուագեսի համար: Քանզի Կյուրոսը՝ Կամբյուսեսի որդին, հաղթել էր Կյուաքսարեսի որդի Ասյուագեսին, որը Կրեսոսի փեսան էր, մեդացիների առաջնորդը. նա Կրեսոսի փեսան էր դարձել հետևյալ կերպ: Վաշկատուն սկյութական ցեղերից մեկը, անջատվելով մյուսներից, գալիս մտնում է մեդական երկիրը: Այդ ժամանակ մեդացիներին իշխում էր Կյուաքսարեսը, Դեյոկեսի որդի Փրատրտեսի որդին, որը սկզբում այս սկյութներին լավ ընդունեց, քանի որ նրանք եկել էին ապաստան խնդրելու: Նա այնքան մեծարեց նրանց, որ նույնիսկ իր տղաներին հանձնեց նրանց, որպեսզի սովորեն այդ լեզուն և նետաձգական արվեստը: Անցավ ժամանակ և պատահեց, որ սկյութները, որոնք սովոր էին որսի գնալ և միշտ իրենց հետ որս բերել, այս անգամ ոչինչ չկարողացան որսալ: Երբ նրանք դատարկաձեռն վերադարձան, Կյուաքսարեսը— նա, ինչպես պարզվեց, շատ զայրացկոտ էր— նրանց խիստ կոպիտ և վիրավորական վերաբերվեց: Այսպիսի անարդար վերաբերմունքի հանդիպելով Կյուաքսարեսի կողմից, սկյութները որոշեցին կտրատել իրենց մոտ դաստիարակվող տղաներից մեկին, նրա միսը պատրաստել, ինչպես սովոր էին պատրաստել որսը, և այն մատուցել Կյուաքսարեսին, որպես որսի միս, այդ անելուց հետո իսկույն փախչել Սարդես, Սադյուատտեսի որդի Ալյուատտեսի մոտ: Այսպես էլ կատարվում է: Կյուաքսարեսը և նրա հրավիրյալները հաշակում են այդ միսը և սկյութները, այդ ամենն անելուց հետո, ապաստան են գտնում Ալյուատտեսի մոտ:

74. Այնուհետև, քանի որ Ալյուատտեսը, հակառակ Կյուաքսարեսի պահանջին, չհանձնեց սկյութներին, հինգ տարի պատերազմ տեղի ունեցավ լյուդիացիների և մեդացիների միջև, որի ժամանակ շատ անգամ մեդացիներն են հաղթել լյուդիացիներին, շատ անգամ էլ լյուդիացիները՝ մեդացիներին և մինչև իսկ մի անգամ գիշերային մարտում: Այսպես, հավասար հաջողություններով պատերազմ մղելուց հետո, վեցերորդ տարում հակատամարտի ընթացքում պատահեց այնպես, որ ցերեկը հանկարծ վերածվեց գիշերվա: Օրվա այդ խավարումը հոնիացիներին կանխագուշակեց Թալես Միլետացին[59], որը և ճշգրիտ որոշեց օրը, երբ տեղի ունեցավ այդ խավարումը[60]: Այսպես, լյուդիացիները տեսնելով, որ օրը վերածվեց գիշերվա, դադարեցրին մարտը և իսկույն երկու կողմերն էլ շտապեցին խաղաղություն կնքել: Նրանց հաշտության միջնորդները եղան Սյուեննեսիս Կիլիկեցին և Լաբյուենետոս Բաբելոնացին: Նրանք հաշտեցրին, որ լյուդիացիներն ու մեդացիները հաշտության երդում տան և ամուսնությամբ այն ամրապնդեն. քանզի նրանք Ալյուատտեսին համոզեցին իր դուստր Արյուենիսին կնության տալ Կյուաքսարեսի որդի Ասյուագեսին. քանզի առանց ուժեղ կապերի կրնքված դաշինքները հաստատուն չեն մնում: Այս ազգերը ևս, հելլենների նրման, երդումներով են դաշինք կնքում և, բացի այդ, նրանք թեթևակի կտրում են իրենց արմունկը և լիզում միմյանց արյունը:

75. Կյուրոսը կործանեց անա այս Ասյուագեսին, որն իր մոր հայրն էր. այդ ամենի պատճառը ես հետագա խոսքում կհայտնեմ: Այս պատճառով էլ Կրեսոսը մեղադրում էր Կյուրոսին և մարդ ուղարկեց հարցնելու պատգամախոսին՝ արշավե՞լ արդյոք պարսից վրա. և նույնիսկ խաբուսիկ պատգամ ստանալուց հետո ևս նա ենթադրեց, որ պատգամն իր օգտին է ու արշավեց պարսից տիրույթների վրա: Երբ Կրեսոսը հասավ Հալյուս գետը, իր զորքերը, ինչպես ես ենթադրում եմ, մյուս ափն անցկացրեց այնտեղ գտնվող կամուրջներով, մինչդեռ հելլեններն, ընդհանրապես, պատմում են, թե (զորքը) անցկացրեց Թալես Միլետացին: Քանզի Կրեսոսը,— ինչպես պատմում են հելլեններն,— մտահոգված էր, թե ինչպե՞ս զորքերը դեռևս է անցկացնի գետից, քանի որ այդ ժամանակ դեռևս չկային այժմյան կամուրջները: Թալեսը, որն, ինչպես պատմում են, այդ ժամանակ գտնվելիս է եղել (Կրեսոսի) զորաբանակում, այնպես արեց, որ գետը, որը հոսում էր բանակի ձախով, հոսի նաև աջով: Նա այդ արեց հետևյալ կերպ: Նա կարգադրեց կիսալուսնաձև խոր խրամատ փորել բանակատեղից վերև այն-

պես, որ գետը բանակատեղը շրջանցեր թիկունքից: Այսպիսով, խրամատի միջով իր հին հունից թեքվելով, գետը շրջանցում է բանակատեղը և նորից դուրս գալիս իր հին հունը: Այսպես, քանի որ գետը բաժանվել էր (երկու բևի), ապա նրա երկու բևերն էլ դարձան դյուրանցանելի: Ոմանք նույնիսկ ասում են, թե հին հունը ամբողջովին ցամաքեց. բայց ես չեմ հավատում դրան, քանի որ ինչպե՞ս նրանք իրենց վերադարձին կրկին անցան գետը:

76. Ահա այսպես, Կրեսոսը զորքով անցնում է գետը և հասնում Կապադովկիայի Պտերիա կոչված վայրը. Պտերիան, այս երկրի ամենաամրացված մասը, գտնվում է Եվքսինյան Պոնտոսի Սինոպե քաղաքին շատ մոտ: Նա այստեղ բանակ է դնում և սկսում ամայացնել սիրիացիների դաշտերը: Նա գրավում է պտերիացիների քաղաքը և ստրկացնում նրանց, գրավում է նաև քաղաքամերձ բոլոր վայրերը, իսկ ոչ մի հանցանք չգործած սիրիացիներին տեղահան անում: Իսկ Կյուրոսը, գումարելով իր զորքը և իր հետ վերցնելով ճանապարհին ընկած երկրների բնակիչներին, ելնում է Կրեսոսի դեմ: Բայց նախքան զորաշավը սկսելը, Կյուրոսը դեսպաններ ուղարկելով հոնիացիների մոտ, փորձեց նրանց ապստամբության մղել Կրեսոսի դեմ, սակայն հոնիացիները չհամոզվեցին: Երբ Կյուրոսը եկավ ու բանակեց Կրեսոսի դեմ դիմաց, Պտերիա երկրում, կողմերն իրենց ուժերը փորձեցին: Ճակատամարտը համառ էր և երկու կողմից շատերն ընկան: Ի վերջո, ճակատակորուստներից ոչ մեկը չկարողացավ հաղթել և երբ գիշերն իջավ, կողմերը հեռացան: Այսպես կռվեցին զորքերն իրար դեմ:

77. Կրեսոսը դժգոհում էր իր զորքի քանակից, իրոք, կռվի բռնված իր զորքը շատ առավել փոքրաթիվ էր, քան Կյուրոսի զորքը և դժգոհ դրանից, ինչպես և տեսնելով, որ հաջորդ օրը Կյուրոսը չփորձեց վերսկսել (մարտը), ինքը հեռացավ Սարդես, մտադիր խնդրելու եգիպտացիների օգնությունը՝ համաձայն իրենց դաշինքի, քանզի նա Եգիպտոսի թագավոր Ամասիսի հետ ավելի վաղ դաշինք էր կնքել, քան լակեդեմոնացիների, մտադիր էր դեսպաններ ուղարկել նաև բաբելոնացիների մոտ, որոնց հետ ևս նա դաշինք էր կնքել, իսկ այդ ժամանակ բաբելոնացիների վրա իշխում էր Լաբյունետոսը, (մտադիր էր) նաև պատվիրել լակեդեմոնացիներին՝ ներկայանալ պայմանավորված ժամանակ: Նա մտածում էր գումարել այս բոլոր ուժերը և դրանց միացնելով իր զորքերին, ձմեռն անցնելուց հետո, գարնանը արշավել պարսիկների վրա: Ահա այսպիսի մտքերով նա վերադարձավ Սարդես և դեսպաններ ուղարկեց դաշնակիցներին, առաջարկելով նրանց հինգերորդ ամսին հավաքվել Սարդեսում: Նա իր հետ եղած զորքը, որը կռվել էր պարսիկների դեմ և որը բաղկացած էր օտար վարձկաններից, ամբողջապես ազատ արձակեց, երբեք չսպասելով, որ Կյուրոսը, (կողմերի համար) այդքան հավատար ճակատամարտից հետո, կգայլի դեպի Սարդես:

78. Մինչ Կրեսոսը մտածում էր այս ամենի մասին, քաղաքի ամբողջ արվարձանը լցվեց օձերով: Օձերի հայտնվելով, արածող ձիերը լքեցին արոտները և կերան օձերին: Այս դեպքը Կրեսոսը համարեց ասավածային նշանակ. և իրոք այդպես էր: Կրեսոսը անհապաղ հարցում ուղարկեց Տելմեսոսի տաճարի գուշակներին: Պատգամավորները գալով, տելմեսոսցիներից իմացան այդ հրաշքի իմաստը, բայց իրենց վիճակված չէր այն հաղորդել Կրեսոսին. քանզի նախքան նրանք կվերադառնային Սարդես, Կրեսոսն արդեն գերի էր ընկել: Տելմեսոսցիները հրաշքն այսպես մեկնեցին. Կրեսոսը պետք է օտար զորքի հարձակում սպասի իր երկրի վրա: Այդ զորքը կգա և կնվաճի տեղաբնիկներին, քանի որ օձը երկրի որդին է, իսկ ձին՝ թշնամի է ու եկվոր: Այսպիսի պատասխան ավեցին տելմեսոսցիները Կրեսոսին, դեռևս ոչինչ չիմանալով Սարդեսի գրավման և Կրեսոսի վիճակի մասին, որն (այդ ժամանակ) արդեն գերի էր:

79. Պտերիայում տեղի ունեցած ճակատամարտից հետո, երբ Կրեսոսը հանգրվեց, Կյուրոսը իմանալով, որ Կրեսոսը մտադիր է ցրել իր զորքը, իսկույն որոշեց հնարավորին չափ արագ շարժվել դեպի Սարդես, քանի դեռ լյուդիացիների զորքը երկրորդ անգամ չէր գումարվել: Այսպես որոշեց և արագորեն կատարեց իր որոշումը: Քանզի նա առաջնորդելով իր զորքը լյուդիական երկրի միջով, ինքը հայտնվեց Կրեսոսի առաջ որպես լրաբեր: Այնժամ Կրեսոսն ընկավ դժվար կացության մեջ, քանի որ դեպքերն այլ ընթացք ունեցան, քան ինքն ակնկալում էր: Այստմանդերն, նա լյուդիացիներին հանեց մարտի: Այդ ժամանակ Ասիայում չկար մեկ այլ ազգ առավել արի և առավել քաջ, քան լյուդիացիները: Նրանք կռվում էին ձի հեծած, զինված երկար նիզակներով. իսկ իրենք լավ ձիավորներ էին:

80. Այսպես, երկու բանակները հանդիպեցին ընդարձակ, բայց մերկ դաշտում, որը գտնվում էր Սարդեսի առաջ. այս դաշտով հոսում են Հյուլոսը և ուրիշ գետեր. սրանք թափվում են Հերմոս կոչվող առավել խոշոր գետը, որը բխելով Մայր Դինդյումենեի[61] սրբազան լեռից, ծովն է թափվում Փոկայա քաղաքի մոտ: Այստեղ Կյուրոսը, տեսնելով լյուդիացիների մարտական շարքերը և վախեցած նրանց հեծելազորից, մտածեց հետևյալ կերպ վարվել: Իր զորքերին ուղեկցող բոլոր բեռնակիր, մթերակիր ուղտերին հավաքելով և բեռնաթափելով, նրանց դասավորեց ամբողջ զորքի առաջամասում, Կրեսոսի հեծելազորի դիմաց, հետևակին պատվիրեց հետևել ուղտերին, իսկ հետևակից ետև դասավորեց ամբողջ հեծելազորը: Երբ բոլորը շարվել էին, նա կարգադրեց անխնա սպանել պատահած բոլոր լյուդիացիներին, իսկ իրեն՝ Կրեսոսին չսպանել, նույնիսկ եթե նա, գերի ընկնելիս, դիմադրի: Նա այսպես հրամայեց, իսկ ուղտերին թշնամու հեծյալների դեմ դասավորեց հետևյալ պատճառով. ձին վախենում է ուղտից և

չի ախորժում ո՛չ նրա տեսքից, ո՛չ նրա հոտից: Այս ենարքը նա մտածեց, որպեսզի ոչ պիտանի դառնա Կրեսոսի հեծելազորը, որով Կրեսոսը ենթադրում էր փայլել: Այսպես, հակառամարտ սկսվեց և երբ ձիերը ուղտերի հոտն առան և տեսան նրանց, նա դարձան և Կրեսոսի հույսը խորտակվեց: Այսուհանդերձ, լյուդիացիները երկչոտ չէին և, տեսնելով կատարվածը, ցած թռան ձիերից և պարսից դեմ սկսեցին հետիոտն կռվել: Իվերջո, երբ երկու կողմից էլ շատերն ընկան, լյուդիացիները մատնվեցին փախուստի և, բշվելով պարսից ներս, պաշարվեցին պարսիկների կողմից:

81. Այսպես նրանք պաշարվեցին: Կրեսոսը ենթադրելով, որ պաշարումը երկար կտևի, դարձյալ հրեշտակներ ուղարկեց իր դաշնակիցներին: Նամը երկար կտևի, դարձյալ հրեշտակներ ուղարկեց իր դաշնակիցներին: Նախորդ դեսպանները ուղարկվել էին, հրաման տանելով դաշնակիցներին՝ հինգերորդ ամսում գումարվել Սարդեսում. իսկ սրանք ուղարկվեցին անմիջական օգնություն խնդրելու, քանի որ Կրեսոսը պաշարված էր:

82. Մյուս դաշնակիցների թվում նա պատգամավորներ ուղարկեց նաև Լակեդեմոնիա: Այդ ժամանակ, սակայն, իրենք սպարտացիները ևս վեն ունեին արգոսցիների հետ Թյուրեա կոչված երկրի պատճառով. քանզի այս Թյուրեան, որը պատկանում էր Արգոլիսին, գրավել էին լակեդեմոնացիները: Արգոսցիներին էին պատկանում նաև մայր ցամաքում դեպի արևմուտք ընկած երկիրը, մինչև Մալեա, ինչպես և Կյութերա կղզին և մյուս կղզիները: Երբ արգոսցիները շտապեցին իրենցից խլված հողը պաշտպանելու, այնժամ պայմանավորվեցին սպարտացիների հետ, որ յուրաքանչյուր կողմից մարտին կմասնակցեն երեք հարյուր մարդ և (վիճելի) երկիրը կմնա հաղթողներին. իսկ երկու կողմերի ամբողջ մնացած զորքը կվերադառնա յուրաքանչյուրն իր երկիրը և կրացակայի մարտից, որպեսզի յուրայիններին պարտությունը տեսնելիս չգա նրանց օգնության: Այսպես պայմանավորվելուց հետո, նրանք հեռացան և երկուսեք ընտրվածները մնալով, կռվի բռնվեցին: Ճակատամարտում կողմերն իրար հավասարազոր էին և վեց հարյուր այրերից մնացին երեքը՝ արգոսցիներից Ալկենորը և Քրոմիոսը, լակեդեմոնացիներից՝ Օթրյուադեսը. սրանք էլ ողջ մնացին գիշերը իջած լինելու պատճառով: Այնժամ երկու արգոսցիները, իրենց հաղթող համարելով, շտապեցին Արգոս. իսկ լակեդեմոնացի Օթրյուադեսը, հանելով սպանված արգոսցիների ռազմական հանդերձանքը, դրանք փոխադրեց իր զորաբանակը և ինքը կանգնեց մարտական շարքում: Հաջորդ օրը կողմերը վերադարձան արդյունքն իմանալու: Նախ երկու կողմերն էլ իրենց համարում էին հաղթանակած: Մի կողմն ասում էր, որ իրենցից ավելի շատ են մնացել ողջ, իսկ մյուս կողմը հակառակորդին հայտարարում էր փախստական, քանի որ իրենց ռազմիկը մնացել էր և վերցրել նրանց սպանվածների հանդերձանքը: Ի վերջո, վեճը վերածվեց մարտի և երկու կողմից էլ շատերն

ընկան, բայց հաղթեցին լակեդեմոնացիները: Այդ օրից մինչև հիմա արգոսցիները, որոնք նախկինում, ըստ սովորության, երկար վարսեր էին պահում, սկսեցին սափրել իրենց գլուխը և նույնիսկ օրենք հաստատեցին և անեծք, որ ոչ մի արգոսցի երկար վարսեր չպահի և ոչ մի արգոսուհի ոսկե զարդեր չկրի, մինչև չվերահավաքեն Թյուրեան: Իսկ լակեդեմոնացիները հակառակ օրենք հաստատեցին. նրանք մինչ այդ վարսեր չէին պահում, իսկ այդուհետ սկսեցին պահել: Պատմում են, որ երեք հարյուրից միակ ողջ մնացած Օթրյուադեսը, ամաչելով վերադառնալ Սպարտա, քանի որ իր բոլոր զինակիցները ոչնչացել էին, Թյուրեայում իրեն զրկեց կյանքից:

83. Այսպիսին էր իրավիճակը Սպարտայում, երբ ժամանեց դեսպանը Սարդեսից, օգնություն խնդրելով պաշարված Կրեսոսին: Լսելով դեսպանին, նրանք, այնուամենայնիվ, որոշեցին օգնություն ուղարկել: Ու երբ նրանք արդեն պատրաստ էին և նավերը պետք է մեկնեին, նոր տեղեկություն ստացան, թե լյուդիացիների բերդն արդեն գրավվել է և Կրեսոսը գերի է տարվել: Այսպիսի մեծ աղետի ենթարկվելուց հետո նրանք որոշեցին հրաժարվել արշավանքից:

84. Սարդեսը պարսիկները գրավեցին հետևյալ կերպ: Կրեսոսին պաշարելու տասնչորսերորդ օրը Կյուրոսը հեծյալներ ուղարկեց իր զորքերի մատ և խոստացավ ընծաներ տալ պարիսպներն առաջին բարձրացողին: Այնուհետև զորքը փորձեց գրոհել, բայց անհաջող: Երբ ամբողջ զորքը նահանջել էր, այնժամ մարդ (կոչված) ցեղից մեկը՝ Հյուրոյադես անունով, փորձեց մագլցել բերդապարսպի այն մասով, որտեղ պահակ չէր կարգված: Քանզի այս տեղից երբեք հարձակման վախ չկար, քանի որ բերդն այս հատվածում զառիթափ էր և անմատչելի: Միայն այս մասով Մելեսը, Սարդեսի նախկին թագավորը, չէր տարել այն առյուծին, որին ծնել էր իր հարճը, թեև տելմեսյանները պատգամել էին, թե Սարդեսը երբեք չի նվաճվի, եթե առյուծը տարվի քաղաքը շրջապատող պարսպի ամբողջ երկայնքով, իսկ Մելեսը առյուծին տարավ պարսպի բոլոր այն մասերի առաջով, որտեղ բերդը խոցելի էր. իսկ այս հատվածը նա անպաշտպան թողեց, քանի որ այն անմատչելի էր և զահավեժ: Քաղաքի այս հատվածը հարած է դեպի Տմոլոս: Այս մարդցեղի Հյուրոյադեսը նախօրեին տեսնում է, որ լյուդիացիներից մեկը այս տեղով իջավ ցած գլորված սաղավարտի պատճառով և այն վերև տարավ. նա այդ նկատեց և պահեց մտքում: Այժմ ինքը մագլցեց այդտեղով, իսկ իրենից հետո նաև ուրիշ պարսիկներ: Երբ մագլցող պարսիկները շատացան, Սարդեսը գրավվեց և քաղաքն ավերվեց:

85. Իսկ Կրեսոսի հետ անա թե ինչ կատարվեց: Նա ուներ որդի, որի մասին ես արդեն խոսել եմ, որը բարեռնս էր, բայց համր: Իր անցյալ երջանիկ օրերին Կրեսոսը ամեն ինչ արել էր նրա համար. նա մինչև անգամ

այդ մասին դեսպան ուղարկեց Դելֆի, պատգամ հարցնելու: Պյութիան նրան այսպես պատասխանեց.

«Ով լյուդիացի, բազում մարդկանց դու բազավոր, անմիտ Կրեսոս,
Մի ցանկար քո տանը լսել ուզողդ հաղցր բառվանքը.
Չի քեզ համար շատ ավելի լավ կլիներ մնար այդպես.
Քո ազնտի օրն առաջին դու կլսես խոսքը նրա»:

Այսպես, ամրոցի գրավման ժամանակ, ոմն պարսիկ, չճանաչելով Կրեսոսին, փորձեց նրան սպանել: Կրեսոսը թեև տեսավ նրա հարձակվելը, բայց վերահաս ազետից ճնշված, նա անտարբեր մնաց և արդեն կարող էր խոցվել ու մեռնել: Այնժամ այս համր ուղին, տեսնելով վրա հասնող պարսկին, սարսափի և վշտի ազդեցության տակ, լեզու առավ և ասաց. «Ով մարդ, մի սպանիր Կրեսոսին»: Ահա այսպես նա բարբառեց առաջին անգամ և այնուհետև ամբողջ կյանքում նա խոսեց[62]:

86. Պարսիկները այսպես նվաճեցին Սարդեսը և գերի վերցրին իրեն՝ Կրեսոսին, որն իշխել էր տասնչորս տարի և պաշարվել տասնչորս օր և, ինչպես պատգամախոսն էր գուշակել, կործանեց իր մեծ տերությունը[63]: Գերված Կրեսոսին պարսիկները տարան Կյուրոսի մոտ: Սա մեծ խարույկ պատրաստելով, նրա վրա բարձրացրեց շղթայակապ Կրեսոսին և նրա հետ երկու անգամ յոթ լյուդիացի տղաների: Կյուրոսի նպատակն էր, երևի, նրանց որպես բնտիր ավար զոհաբերել աստվածներից մեկին, գուցե և կատարելու ինչ-որ խոստում և կամ, իմանալով Կրեսոսի բարեպաշտությունը, նա նրան բարձրացրեց խարույկի վրա, ցանկանալով տեսնել, թե արդյո՞ք աստվածներից որևէ մեկը կփրկեր նրան կենդանի այրվելիս: Կյուրոսն այսպես վարվեց: Իսկ Կրեսոսը, խարույկի վրա կանգնած, հակառակ իր այդքան ծանր դրության, աստվածային ներշնչմամբ հիշեց Սոլոնի առածը, թե՝ ոչ ոքի կենդանության օրոք չի կարելի երջանիկ համարել: Երբ Կրեսոսն այդ հիշեց, երկար լռելուց հետո հառաչեց, ոտքաց և երեք անգամ կոչեց «Սոլոն»: Կյուրոսը լսելով այդ, հրամայեց իր թարգմաններին հարցնել Կրեսոսին, թե ո՞ւմ է նա կանչում: Երբ նրանք մոտեցան և հարցրին, Կրեսոսը նախ լռեց, ապա ստիպված պատասխանեց. «Ես մեծ հարստություն կտայի, որպեսզի բոլոր տիրակալները կարողանային զրուցել նրա հետ, ում անունը ես կոչեցի»: Քանի որ նրա առածները անհասկանալի թվացին, դարձյալ հարցրին նրա խոսքերի իմաստը: Քանի որ նրանք չարունակում էին պնդել և անհանգստացնել Կրեսոսին, նա պատմեց, թե ինչպես իր բազավորությունը եկավ աթենացի Սոլոնը և, տեսնելով իր ամբողջ հարստությունը, արհամարհեց այն իր խոսքերով և թե ինչպես նրա բոլոր աստվածները հետագայում կատարվեցին: Սոլոնն այդ ամենն ասել էր ոչ այնքան Կրեսոսի, որքան բնդհան-

րապես մարդկության և հատկապես նրանց մասին, որոնք իրենց երջանիկ են համարում: Այսպես պատմեց Կրեսոսը, իսկ խարույկն արդեն բռնկվել էր և ծայրերից բոցավառվել: Իսկ Կյուրոսը, լսելով թարգմանիչներից Կրեսոսի պատմածը, փոխեց իր որոշումը: Նա մտածեց, որ ինքը նույնպես մարդ լինելով, խարույկի վրա այրում է կենդանի մի մարդու, որն իրենից պակաս բախտավոր չէր եղել: Բացի այդ, նա վախեցավ հատուցումից և մտածեց, որ ոչինչ մարդկային կյանքում մնայուն չէ: Ուստի և հրամայեց անհապաղ հանգցնել այրվող հուրը և խարույկից ցած բերել Կրեսոսին և նրա հետ (խարույկի վրա) եղողներին: Սակայն կրակը հանգցնել փորձողները հաջողություն չունեցան[64]:

87. Եվ ահա, ինչպես պատմում են լյուդիացիները, Կրեսոսը, նկատելով Կյուրոսի զղջումը և տեսնելով, որ մարդիկ փորձում են, բայց չեն կարողանում հանգցնել խարույկը, բարձրաձայն դիմեց Ապոլլոնին, ասելով, որ եթե իր ընծաները երբևէ հաճոյացրել են նրան, ապա թող օգնության հասնի և փրկի իրեն ներկա աղետից: Այսպես Կրեսոսը արտասվելով կանչեց ասածն և ահա, պարզ երկնքում, անհողմ պահին, հանկարծ ամպեր կուտակվեցին և փոթորիկ պայթեց, առատ անձրև տեղաց և հանգցրեց խարույկը: Այնժամ Կյուրոսը հասկացավ, թե Կրեսոսը աստվածներին սիրելի և բարի մարդ է. ուստի և նրան խարույկից վար առնելով այսպես հարցրեց. «Կրեսոս. մարդկանցից ո՞վ հրամայեց քեզ արշավել իմ երկրի վրա և բարեկամի փոխարեն ինձ թշնամի դարձար»: Նա պատասխանեց. «Ով արքա. ես այս ամենն արեցի ի բարություն քեզ և ի դժբախտություն ինձ. իսկ բոլորի պատճառը հելլեններն աստվածն էր, որն ինձ դրդեց արշավել քո դեմ: Քանզի ոչ ոք այնքան անմիտ չէ, որ պատերազմը գերադասի խաղաղությունից: Խաղաղ ժամանակ որդիներն են իրենց հորը թաղում, իսկ պատերազմի ժամանակ՝ հայրերն իրենց որդիներին: Բայց, հավանաբար, այսպիսին է եղել աստվածների կամքը»:

88. Կրեսոսն այսպես ասաց. իսկ Կյուրոսը, բանդելով նրա կապանքը, իր կողքին նստեցրեց և մեծ հարգանքի արժանացրեց. ինքը Կյուրոսը և իր հետ եղողները նայում էին Կրեսոսին և հիանում: Մինչդեռ Կրեսոսը, տարված խոհերով, լռում էր: Ի վերջո, նա շուռ եկավ և տեսնելով, թե ինչպես պարսիկները ավերում են լյուդիացվոց քաղաքը, ասաց. «Ով արքա, արդյոք պե՞տք է այժմ քեզ ասեմ, ինչ մտածում եմ, թե՞ պարտավոր եմ լռել»: Կյուրոսը կարգադրեց նրան համարձակ ասել ինչ մտածում է: Այնժամ Կրեսոսը հարցրեց. «Այս մեծ բազմությունն ի՞նչ է անում այստեղ այդպիսի անապարանոթով»: Կյուրոսը պատասխանեց. «Նրանք կողոպտում են քո քաղաքը և հափշտակում քո գանձերը»: Կրեսոսը նրան հակառուցեց, թե՝ «Ոչ նրանք ո՛չ իմ քաղաքը, ո՛չ էլ իմ գանձերն են հափշտակում. քանզի այդ բո-

լարը այժմ իմը չեն: Նրանք կողոպտում են և տանում քո հարստությունը»:

89. Կրեսոսի այս խոսքերը մտահոգեցին Կյուրոսին: Նա հրամայեց բոլորին հեռանալ և հարցրեց Կրեսոսին, թե ի՞նչ սխալ բան է տեսնում կատարվածի մեջ: Կրեսոսը պատասխանեց. «Քանի որ ասվածներն ինձ դարձրին քո սարուկը, արդար կլինի, որ ես ասեմ քեզ այն, ինչ առավել լավ եմ նկատում, քանի ուրիշներ: Պարսիկները բնավորությամբ հանդուգն լինելով հանդերձ, աղքատ են: Եթե դու թույլ տաս նրանց կողոպտել և տիրանալ մեծ ունեցվածքի, ապա իմացիր, դրա հետևանքը կլինի այն, որ նա, ով առավել մեծ կողոպուտի տիրանա, նա էլ, համոզված եղիր, քո դեմ կապստամբի: Եթե ճիշտ հանելի են իմ խոսքերը, ապա այսպես գործիր: Բոլոր դարբասների մոտ քո թիկնապահներից պահակներ կարգիր, որոնք վերցնեն տարվող գանձերը և տանողներին ասեն, թե այդ ամենը վերցնում են Զևսին տասանորդ տալու համար: Այդպես նրանց առելի չես դառնա, վերցնելով նրանցից ավարը, և նրանք ևս քո արարքը արդար համարելով, իրենք հոժարակամ կնվիրեն այն»:

90. Այս խոսքերը լսելով, Կյուրոսը շատ հանոյացավ, քանի որ տրված խորհուրդը իրեն լավ թվաց: Նա խիստ գովելով Կրեսոսին, հրամայեց իր թիկնապահներին կատարել Կրեսոսի խորհուրդները. ապա դառնալով Կրեսոսին, ասաց հետևյալը. «Կրեսոս. քանի որ դու ընդունակ ես գործել և խոսել արժանավայել, ուստի խնդրիր ինձնից ինչ ցանկանում ես և ես իսկույն կկատարեմ այն»: Կրեսոսը պատասխանեց. «Տեր. ինձ համար գերագույն չնորհ կլինի, եթե թույլ տաս, որ իմ այս կապանքը ուղարկեմ նելլենների այն աստծուն, որին ես բոլորից առավել մեծարել եմ և հարցնեմ նրան, թե արդյո՞ք նրա սովորությունն է խաբել իր բարեկամներին»: Կյուրոսը հարցրեց, թե իր այդ խնդրանքով ի՞նչ մեղադրանք կարող է տալ աստծուն: Այնժամ Կրեսոսը պատմեց իր բոլոր մտադրությունները և պատգամախոսի պատասխանները, հատկապես թվեց իր բոլոր ընծաները աստծուն և ավելացրեց, թե ինչպես պատգամատան դրդմամբ արշավեց պարսիկների դեմ: Այս ամենը պատմելուց հետո, նա նորից խնդրեց Կյուրոսին թույլ տալ իրեն մեղադրել աստծուն: Իսկ Կյուրոսը ծիծաղելով պատասխանեց. «Քո այս խնդրանքը ևս կկատարեմ, Կրեսոս, և այն ամենը, ինչ դու երբևիցե խնդրես»: Այս լսելով Կրեսոսը լյուդիացի դեսպաններ ուղարկեց Դելֆի, պատվիրելով կապանքը դնել արքայական սեմին և հարցնել, թե արդյոք ասված չի՞ ամաչում, որ իր պատգամներով Կրեսոսին դրդեց արշավելու պարսիկների դեմ, Կյուրոսի տերությունը կործանելու նպատակով, իսկ դրա առաջին պտուղները սրանք էին. այս ասելիս նրանք պետք է ցույց տային կապանքը: Դեսպանները պետք է այսպես հարցնեին և ավելացնեին, թե արդյո՞ք ասվածների համար ամոթություն է պերճախոսությունը:

91. Ժամանելով Դելֆի, լյուդիացիներն իրենց պատվիրվածը ասացին և Պյութիան, ինչպես պատմում են, այսպես է պատասխանել. «Կանխորոշված ճակատագրից չի կարող խուսափել նույնիսկ աստված[65]: Կրեսոսը հատուցեց իր հինգերորդ նախնու հանցանքի համար, որը լինելով Հերակլյանների թիկնապահը, ենթարկվել է կանացի դավերին և, սպանելով իր տիրոջ, վերցրել է նրա պատիվը[66], որին իրեն բոլորովին արժանի չէր: Լոխիասի[67] կամքն էր, որպեսզի Սարդեսի կործանումը տեղի ունենար Կրեսոսի որդիների և ոչ թե իր՝ Կրեսոսի օրոք. սակայն աստված ևս անկարող էր կանխել ճակատագիրը: Բայց ինչքան որ մոյրաները[68] զիջեցին, Ապոլլոնը օգնեց և չնորհ արեց Կրեսոսին: Նա երեք տարով հետաձգեց Սարդեսի անկումը. թող Կրեսոսը իմանա, որ ինքը ճակատագրի որոշած ժամանակից երեք տարի ուշ գերի վերցվեց: Այնուհետև աստված նրան օգնեց, երբ նա այրվում էր խարույկի վրա: Իսկ տրված պատգամի մասին Կրեսոսի գանգատն անտեղի է: Քանզի Լոխիասը նրան կանխագուշակել էր, որ եթե արշավի պարսից վրա, ապա մեծ տերություն կկործանի: Ուստի նա, եթե ցանկանում էր ճիշտ վճիռ ընդունել, ապա պարտավոր էր դարձյալ դեսպան ուղարկել հարցնելու, թե ասված ո՞ր տերությունը նկատի ունի, ի՞ր, թե՞ Կյուրոսի: Բայց քանի որ Կրեսոսը, շրմբռնելով ասվածի իմաստը, կրկին չհարցրեց պատգամախոսին, ապա թող նա մեղադրի իրեն: Լոխիասի վերջին պատգամի իմաստը ջորու մասին նա նույնպես չհասկացավ: Այդ ջորին Կյուրոսն էր, քանի որ նա սերել էր երկու ոչ համազգի ծնողներից՝ առավել ազնիվ մորից և առավել սառին ծագման հորից. նրա մայրը մեդացի էր, մեդացիների թագավոր Աստյուագեսի դուստրը, իսկ հայրը պարսիկ էր, մեդացիների հպատակ և բոլոր տեսակետներից նրանից սառ լինելով, ամուսնացել էր իր տիրուհու հետ»: Այսպես պատասխանեց Պյութիան լյուդիացիներին, որոնք և պատասխանը բերեցին Սարդես և այն հաղորդեցին Կրեսոսին: Սա, լսելով այն, համոզվեց, որ մեղավորն ինքն է և ոչ թե աստված: Ահա այսպիսին է Կրեսոսի տերության և Հոնիայի առաջին նվաճման պատմությունը:

92. Կրեսոսը բազում այլ ընծաներ ևս ուներ Հելլադայում, իմ արդեն նիշատակածներից բացի: Բեոտիայի Թեբեում կա ոսկե եռոտանի, ձոնված Խմենիոս Ապոլլոնին. Եփեսոսում են նրա ձոնած ոսկե եզները և այուների մեծ մասը. Դելֆիում գտնվող Պրոնեյայի տաճարում՝ ոսկե խոշոր վահան: Այս ընծաները դեռևս կային իմ ժամանակ, բայց մի քանի այլ ընծաներ արդեն կորել էին: Կրեսոսի ընծաները Միլետյան Բրանքիդայում, ինչքան գիտեմ, կշռով հավասար են և նման Դելֆիում եղածներին: Դելֆիի տաճարին և Ամֆիարաոսին Կրեսոսի կատարած ընծայաբերումները իր սեփական հարստությունն էին և նրա հայրական գանձերի լավագույն մասը: Մյուս ընծաները պատկանել էին իր թշնամիներից մեկին, որը դեռևս Կրեսոսի թա-

գավոր դառնալուց առաջ չանասիրաբար օգնում էր Պանտալեոնին՝ լյուդիա-
կան գահը գրավելու համար: Այս Պանտալեոնը Ալյուատտեսի որդին էր,
Կրեսոսի եղբայրը, բայց ոչ արգանդակից: Կրեսոսը ծնվել էր Ալյուատտեսի
կարիացի կնոջից, իսկ Պանտալեոնը՝ հոնիացի կնոջից: Երբ հոր կամքով
իշխանությունը վերցրեց Կրեսոսը, նա մանվան ենթարկեց իր հակառակոր-
դին, ծվատելով նրան սաների[69] վրա, իսկ նրա ունեցվածքը, նախապես իր
ասված խոստումի համաձայն, ընծայաբերեց այնպես, ինչպես արդեն պատ-
մել եմ: Անա այսքանը նրա նվիրատվությունների մասին:

93. Լյուդիական երկրում գրելու արժանի այնպիսի հրաշալիքներ չկան,
ինչպես մյուս երկրներում, բացի Տմոլոս գետի բերած ոսկու ավազից: Սա-
կայն կա մի շինություն, որը շատ է գերազանցում մյուսներին, բացի եգիպ-
տացիների և բաբելոնացիների շինություններից: Այդ Կրեսոսի հայր Ալյու-
ատտեսի դամբարանն է, որի հիմքը կառուցված է հսկա քարերից, իսկ մնա-
ցած մասը հողաթումբ է: Այն կառուցել են շուկայի մարդիկ[70] և արհեստա-
վորները և հասարակական աղջիկները[71]: Դեռ իմ ժամանակ մնում էին դամ-
բարանի վրա հինգ անկյունաքարերը, որոնց վրա արձանագրություններ էին
փորագրված այն մասին, թե այս խմբերից ամեն մեկն ի՞նչ գործ է կատա-
րել. հաշվելիս պարզվեց, որ աշխատանքի մեծագույն մասը կատարել են
այդ աղջիկները: Լյուդիացիների բոլոր աղջիկները պոռնկանում են, իրենց
համար օժիտ հավաքելով, մինչև ամուսնանալը. իսկ ամուսին իրենք են
ընտրում իրենց համար: Այդ դամբարանի շրջագիծը վեց ասպարեզ և երկու
պլեթրոն է[72], իսկ լայնքը՝ տասներեք պլեթրոն: Դամբարանի մոտ կա մեծ
լիճ, որը, ինչպես պատմում են լյուդիացիները, երբեք չի ցամաքում. այն
կոչվում է Գյուգեյան: Անա այդպիսին է այդ շինությունը:

94. Լյուդիացիները համանման սովորույթներ ունեն, ինչ հելլեները,
բացի այն, որ պոռնկացնում են իրենց դուստրերին: Մեզ հայտնի մարդ-
կանց մեջ նրանք առաջինն էին, որ հատեցին և օգտագործեցին ոսկե և ար-
ծաթե դրամ և առաջիններ դարձան մանրավաճառներ: Լյուդիացիներն ասում
են նաև, որ այժմ իրենց և հելլենների մոտ տարածված խաղերը հնարել են
իրենք: Նրանք պնդում են, թե այդ խաղերը հնարել են դեռ այն ժամանակ,
երբ իրենք բնակեցրած են եղել Տյուրսենիան: Իրենց մասին անա թե ինչ են
պատմում: Մանեսի որդի Ատյուսի թագավորության օրոք ամբողջ Լյուդիա-
յում մեծ սով էր: Սկզբում լյուդիացիները համբերատար էին, բայց քանի որ
սովը չէր դադարում, նրանք փրկության միջոցներ են փնտրում, տարբեր
հնարքներ մտածելով: Այդ ժամանակ էլ նրանք հնարեցին զառ և վեգ և
գնդակ խաղալը, ինչպես և մյուս խաղերը, բացի դամա խաղից[72]-. այս
վերջին խաղի հնարքը լյուդիացիները չեն սեփականացնում: Այսպես, նրանք
սովի դեմ հնարք գտան. մի ամբողջ օր խաղում էին, որպեսզի սնվելը մո-

ռանան, իսկ մյուս օրը, խաղը դադարեցնելով, սնվում էին: Այսպես նրանք
ապրել են տասնութ տարի: Ի վերջո թագավորը հայտնի լյուդիացիներին եր-
կու մասի բաժանելով, պատվիրեց վիճակ հանել, թե ո՞ր մասը պետք է մնա
երկրում և ո՞ր մասը պետք է հեռանա: Ինքը՝ թագավորը միացավ այն
մասին, ում վիճակվեց մնալ երկրում, իսկ հեռացողների առաջնորդ նա
կարգեց իր որդուն, որի անունը Տյուրսենոս էր: Այսպիսով, նրանք, ում վի-
ճակվել էր հեռանալ երկրից, իջան Սմյուռնե և նավեր շինելով, բեռնեցին
դրանք անհրաժեշտ ամեն ինչով ու մեկնեցին ապրուստի միջոցներ և նոր
երկիր գտնելու: Բազում ազգերի մոտով նավելուց հետո, նրանք վերջապես
հասան օմբրիկների երկիրը[73], որտեղ և հիմնեցին քաղաքներ ու բնակվում
են ցայսօր: Նրանք արդեն փոխեցին իրենց լյուդիացի անունը թագավորի
որդու անվամբ, որն իրենց առաջնորդն էր դարձել, և կոչվեցին տյուրսենն-
ներ: Իսկ բուն լյուդիացիները սարկացվեցին պարսիկների կողմից:

95. Այսուհետև մեր խոսքը կլինի Կյուրոսի մասին, թե ո՞վ էր Կրեսոսի
տերությունը կործանած այս մարդը և թե ինչպե՞ս պարսիկները տիրեցին
Ասիային: Ես Կյուրոսի պատմությունը կգրեմ այնպես, ինչպես այն հաղոր-
դել են պարսիկներից նրանք, ովքեր չեն ցանկացել նրան փառաբանել, այլ
պատմել են այն, ինչ իրականում կատարվել է, թեև Կյուրոսի մասին կա
ուրիշ երեք պատում ևս:

Ասորեստանցիները հինգ հարյուր քսան տարի իշխել են վերին Ասիա-
յում[74]: Առաջինը նրանց իշխանության դեմ ապստամբեցին մեդացիները,
որոնք կռվելով ասորեստանցիների դեմ՝ հանուն ազատության, արիություն
ցուցաբերեցին և սարկությունը թոթափելով, ազատագրվեցին: Այնուհետև
մեդացիների օրինակին հետևեցին նաև մյուս ազգերը:

96. Մայր ցամաքում այս բոլորը ազատություն էին ձեռք բերել, բայց
նրանք նորից ընկան բռնակալի իշխանության տակ՝ հետևյալ կերպ: Մեդա-
ցիների մեջ կար իմաստուն մի մարդ, անունը Դեյոկես, Փրաորտեսի որդին[75]:
Այս Դեյոկեսը խիստ ցանկանալով տիրակալ դառնալ, հետևյալն արեց: Մե-
դացիներն այդ ժամանակ ապրում էին գյուղերում. Դեյոկեսը իր գյուղում
դեռ նախապես էլ հայտնի մարդ լինելով, այժմ արդեն իրոք դատավոր, ա-
ռավել չանասիրությամբ արդարություն էր կիրառում: Եվ նա այդպես անում
էր այն ժամանակ, երբ ամբողջ Մեդիայում խիստ այլայրինություն էր տի-
րում և ինքը գիտեր, որ անարդարը արդարի բշնամին է: Նրա համագյու-
ղացիները, նկատելով նրա այս վարքագիծը, նրան ընտրում են իրենց դա-
տավոր: Եվ անա նա, ձգտելով իշխանության, ազնիվ էր և արդար: Իր գոր-
ծերով նա նվաճեց իր համագյուղացիների բարձր գովեստը և նույնիսկ այլ
գյուղերի բնակիչները, որոնք նախկինում անարդարության զոհ էին եղել,
լսելով, որ Դեյոկեսը միակ արդար դատող մարդն է, իրենք ևս ուրախու-

թյամբ գալիս էին Դեյոկեսի մոտ դատավելու, մինչև որ ի վերջո ոչ մեկին չէին վստահում, այլ միայն նրան:

97. Դեյոկեսի մոտ եկողների թիվը հետզհետե աճում էր, քանի որ մարդիկ լսում էին, թե նա ամեն անգամ արդար վճիռ է կայացնում: Այնժամ Դեյոկեսը տեսնելով, որ ամեն ինչ իրեն վստահված էր, հրաժարվեց այսուհետև նստել իր նախկին աթոռին և դատ անել, ասաց, թե այսուհետև չի դատելու, որովհետև իր համար անօգուտ է իր գործերը թողած, օր ու գիշեր ուրիշների վեճերը լուծել: Ու քանի որ գյուղերում հափշտակություններն ու ապօրինությունները ավելի ուժեղացան, քան առաջ, մեդացիներն ի մի հավաքվեցին և խորհրդակցեցին ստեղծված իրադրության մասին. ընդ որում, ես ենթադրում եմ, որ խոսողները եղել են Դեյոկեսի բարեկամները, որոնք ասում են. «Հետ այսու մենք այլևս չենք կարող այսպես ապրել: Եկեք մեզ համար թագավոր կարգենք: Այնժամ և՛ երկրում օրենք կլինի, և՛ մենք ինքներս կվերադառնանք մեր գործին ու չենք կործանվի անկարգությունից»: Նման խոսքերով նրանք իրենց համոզեցին թագավոր ունենալ:

98. Երբ արդեն հարց ծագեց, թե ո՞ւմ կարգեն թագավոր, բոլորը գովաբանում և առաջարկում էին Դեյոկեսին, մինչև որ նրան ընտրեցին իրենց թագավոր: Այնժամ Դեյոկեսը պատվիրեց նրանց իր համար արքայավայել պալատներ կառուցել և իրեն թիկնապահներ տրամադրել: Մեդացիները այդ կատարեցին: Մեծ և հզոր պալատներ կառուցեցին նրա համար իր իսկ ընտրած վայրերում և թույլատրեցին ամբողջ Մեդիայից իրեն թիկնապահներ ընտրելու: Վերցնելով իշխանությունը, նա ստիպեց մեդացիներին մի բերդաքաղաք կառուցել և այն առավել ամրացնելով, մյուսների մասին պակաս հոգ տանել: Մեդացիները այդ ևս կատարեցին: Այսպիսով, Դեյոկեսը կառուցեց մեծ և հզոր ամրություն, որն այժմ կոչվում է Ագբատանա[76], որի մի պարիսպը օղակաձև պատում է մյուսին: Այս պարիսպներն այնպես էին կառուցված, որ մեկն ավելի բարձր էր մյուսից՝ արտաքինից, միայն աշտարակների չափով: Բլուրը, որի վրա գտնվում էր քաղաքը, նպաստում էր այդպիսի կառույցի, այսուհանդերձ տեղանքը արհեստականորեն ավելի ևս ճարտարեցվեց: Ընդամենը կառուցվել էին յոթը օղակաձև պարիսպներ. վերջին օղակի ներսում գտնվում էին արքունի պալատը և գանձերը: Այդ պարիսպներից ամենամեծի երկարությունը գրեթե նույնքան էր, որքան Աթենքը շրջապատող պարսպի երկարությունը: Պարիսպների առաջին օղակի աշտարակները սպիտակ էին, երկրորդինը՝ սև, երրորդինը՝ վառ-կարմիր, չորրորդինը՝ կապույտ, հինգերորդինը՝ ճարճչակարմրագույն[77]: Այսպիսով, հինգ օղակաձև պարիսպների աշտարակները ներկված էին գույնզգույն: Իսկ վերջին երկու օղակաձև պարիսպներից մեկի աշտարակներն արծաթապատ էին, մյուսինը՝ ոսկեզօծ:

99. Դեյոկեսը այսպիսի պարիսպներով պատեց իր պալատները, իսկ մնացած ժողովրդին կարգադրեց բնակվել պարսպի շուրջը: Երբ ամեն ինչ կառուցված էր, առաջինը Դեյոկեսն էր, որ հետևյալ կարգերը հաստատեց. ոչ ոք չպետք է անձամբ ներկայանա արքային, այլ բոլոր գործերով պետք է դիմել լրաբերի միջոցով. ոչ ոք իրավունք չունի տեսնելու արքային: Բացի այդ, բոլորի համար ամոթ համարվեց ծիծաղել կամ թքել արքայի ներկայությամբ: Այսպիսի մեծարանքով նա շրջապատեց իրեն, որպեսզի իր տարեկիցները և ընկերները, որոնք ծագում էին հայտնի տոհմերից և արիությամբ իրեն չէին զիջում, չտեսնեն իր շքեղությունը և, նախանձելով, չդավեն իր դեմ, այլ կարծեն, որ ինքը առավել բարձր էակ է, քան իրենք:

100. Երբ արդեն նա այսպիսի կարգեր հաստատեց և ամրացրեց իր իշխանությունը, սկսեց խստորեն պահպանել արդարությունը: Խնդրանքները բազավորին ներկայացվում էին գրավոր, և ինքը, վճռելով դրանք, նա էր ուղարկում: Այսպես էր նա վճռում դատերը. իսկ այլ դեպքերի համար նա հետևյալ կարգը սահմանեց. եթե լսեր, թե որևէ մեկը հանցանք է գործել, նրան կանչում էր իր մոտ և պատժում ըստ արժանվույն. իր իշխած ամբողջ երկրում կային լրտեսներ և ականջ դնողներ:

101. Այսպիսով, Դեյոկեսը միավորեց մեդական ազգը և իշխեց. իսկ մեդական ցեղերը հետևյալներն են. բուսեր, պարետակենեներ, ստրուքատներ, արիզանտներ, բուդիներ, մոգեր:

102. Դեյոկեսի որդին էր Փրաորտեսը: Հիսուներեք տարի թագավորելուց հետո Դեյոկեսը վախճանվեց և իշխանությունը ժառանգեց Փրաորտեսը[78]: Ստանալով իշխանությունը, Փրաորտեսը չբավարարվեց միայն մեդացիներին տիրելով, այլև արշավեց պարսիկների վրա: Պարսիկներն առաջինը ենթարկվեցին նրա ճարտարությանը և առաջինը դարձան մեդացիներին հպատակ: Տիրելով այս երկու հզոր ազգերին, Փրաորտեսը մեկը մյուսի հետևից սկսեց նվաճել Ասիայի ազգերին, մինչև արշավեց ասորեստանցիների դեմ, այն ասորեստանցիների, որոնք տիրում էին Նինվեին[79] և նախկինում իշխում էին բոլորի վրա, իսկ այժմ, դաշնակիցների անջատվելուց հետո, մնացել էին մենակ, բայց դեռևս իրենք հզոր էին: Անա սրանց դեմ արշավելով, Փրաորտեսը, քսաներկու տարի թագավորելուց հետո, և՛ ինքը կործանվեց, և՛ իր զորքի մեծ մասը:

103. Վախճանված Փրաորտեսին հաջորդեց Կյուաքսարեսը, Դեյոկեսի որդի Փրաորտեսի որդին: Պատմում են, թե սա ավելի ռազմամոլ էր, քան իր նախորդները. սա էր, որ առաջինը Ասիայի զորքերը բաժանեց ջոկատների և առանձնացրեց նիզակակիրներին, աղեղնավորներին և հեծյալներին: Մինչ այդ ամբողջ զորքը խառն էր և անկարգ: Սա նա է, որը լյուդիացիների դեմ պատերազմեց և այդ պատերազմի ժամանակ ցերեկը վերածվեց գիշեր-

վա: Նա Հալյուս գետից այն կողմ գտնվող ամբողջ Ասիան միացրեց իր թագավորությանը: Գումարելով իր բոլոր հպատակներին, նա արշավեց Նինվե, իր ճար վրեժը լուծելու և այդ քաղաքը կործանելու նպատակով: Երբ նա արդեն հակառամարտում հաղթել էր ասորեստանցիներին և պաշարել Նինվեն, (երկրի վրա) ճարձակվեց սկյութների մեծ բանակ, սկյութների թագավոր Մադյուեսի՝ Փրատոբյուեսի[80] որդու առաջնորդությամբ: Նրանք ներխուժել էին Ասիա՝ կիմմերներին Եվրոպայից հալածելիս և, հետապնդելով փախչող կիմմերներին, հրանք հասել են մեդական երկիր:

104. Մեյոտիս լճից[81] մինչև Փասիս գետը և կոլխերի երկիրը երեսուն օրվա հանապարհ է անխոչ ուղևորի համար: Կոլխիսից Մեդիա ավելին չէ հանապարհը, բայց հրանց միջև բնակվում է մի ազգ, սասպեյրները. սրանց միջով անցնելուց հետո կարելի է հասնել Մեդիա: Այսուհանդերձ, սկյութները այս հանապարհով չներխուժեցին Մեդիա, այլ շեղվեցին դեպի վերին, շատ ավելի երկար, հանապարհը՝ Կովկաս լեռը ունենալով իրենց աջ կողմում: Այստեղ մեդացիները հակառեցին սկյութների դեմ և մարտում պարտվելով, կորցրին իրենց իշխանությունը և սկյութները տիրացան ամբողջ Ասիային:

105. Այնուհետև հրանք շարժվեցին Եգիպտոսի վրա. և երբ հրանք հասան պալեստինյան Սիրիա, Եգիպտոսի Պսամմետիքոս թագավորը դիմավորեց հրանց և բենանեով ու ազերսանքով համոզեց առաջ չընթանալ: Սկյութները վերադառնալիս հասան Սիրիայի Ասկալոն քաղաքը և հրանց մեծ մասը դրա կողքով անցնելով, ոչ մի վնաս չպատճառեց. իսկ հրանցից ոմանք, որոնք եղան էին մնացել, կողոպտեցին Աֆրոդիտեի տաճարը[82]: Ինչպես գիտեմ իմ լսածներից, դիցուհուն ձոնված տաճարներից այս մեկը հետզայնն է. քանզի Կիպրոսում գտնվող տաճարը, ինչպես վկայում են իրենք՝ կիպրացիները, կառուցվել է հետագայում. իսկ Կյութերայում գտնվող տաճարը կառուցել են նույն այս Սիրիայից եկած փյունիկեցիները: Ասկալոնի տաճարը կողոպտած սկյութներին և հրանց բոլոր հետնորդներին ասավածուհին հարվածեց «իգական» հիվանդությամբ: Ոչ միայն սկյութներն են դրանով բացատրում իրենց հիվանդությունը, այլև սկյութների երկիրը այցելող ամեն ոք կտեսնի, թե ի՞նչ տառապանքի մեջ են գտնվում հրանք, որոնց սկյութները կոչում են էնարիներ[83]:

106. Սկյութները քանիսը տարի տիրեցին Ասիայում և իրենց բռնությամբ ու անկարգությամբ ամեն ինչ կործանման հասցրին: Բացի յուրաքանչյուր ժողովրդից վերցրած որոշակի հարկից, հրանք անցնում էին երկրով մեկ և հափշտակում ամեն ինչ: Անա սրանց մեծ մասին Կյուաքսարեսը և մեդացիները հրավիրեցին խնջույքի և, հարբեցնելով հրանց, կոտորեցին. այսպիսով, մեդացիները նորից վերականգնեցին իրենց իշխանությունը, վերանվանեցին իրենց նախկին տիրույթները և գրավեցին նաև Նինվեն. թե ինչպես գրավեցին այն, ես կպատմեմ մեկ այլ հատվածում[84], և հպատակեցրին ասորեստանցիներին, բացի Բաբելոնիայի մարզից:

107. Այնուհետև Կյուաքսարեսը, որը թագավորել էր քառասուն տարի, ներառյալ նաև սկյութների տիրապետության ժամանակը, վախճանվում է և թագավորությունը ժառանգում է նրա որդին, Աստյուագեսը: Աստյուագեսն ունեցավ մի դուստր, որին կոչեցին Մանդանե: Աստյուագեսը երազում տեսավ, թե իր դուստրն այնքան շատ միզեց, որ ողողեց իր քաղաքը և հեղեղեց ամբողջ Ասիան: Թագավորը երազը հայտնեց երազահան մոգերին և լսելով նրանց բացատրությունը, սարսափեց: Հետագայում, երբ հասել էր Մանդանեի ամուսնանալու ժամանակը, երազից սիրաբեկված Աստյուագեսը չկամեցավ նրան կնության տալ իրեն արժանի որևէ մեդացու, այլ նրան ամուսնացրեց Կամբյուսես անունով մի պարսկի հետ, որը առնմիկ ծագում ուներ և հանգիստ բնավորություն, թեև նրան համարում էր շատ ավելի ցածր, քան միջին մեդացուն:

108. Կամբյուսեսի հետ Մանդանեի ամուսնության առաջին իսկ տարին Աստյուագեսը մեկ ուրիշ երազ տեսավ: Նրան թվաց, թե իր դստեր արգանդից բուսել է որթատունկ, որը ծածկել է ամբողջ Ասիան: Տեսնելով այս երազը, նա դիմեց երազահաններին և մարդ ուղարկեց պարսիկների մոտ՝ կանչելու իր դստեր, որը շուտով պետք է ծննդաբերեր: Երբ դուստրը ժամանեց, Աստյուագեսը նրան պահեց հսկողության տակ, ցանկանալով ոչնչացնել նրանից ծնվելիք երեխային: Քանզի երազահան մոգերը մեկնել էին նրա երազն այն իմաստով, որ իր դստերից ծնվածը պետք է թագավորի իր փոխարեն: Այս ամենից խուսափելու համար Աստյուագեսը, երբ ծնվեց Կյուրոսը, իր մոտ կանչեց իր ազգակից Հարպագոսին, որը մեդացիներից ամենահավատարիմն էր և իր բոլոր տիրույթների կառավարիչը, և նրան այսպես ասաց. «Հարպագոս. ես քեզ կհանձնարարեմ մի գործ, որը կատարելուց մի հրաժարվիր. մի խաբիր ինձ և մի գերադասիր այլոց շահերն իմ շահերից, որպեսզի հետագայում չկործանվես քո մեղքով: Վերցրու Մանդանեի ծնած երեխային, տար քո տունը և, սպանելով, թաղիր նրան ինչպես ինքդ կամենաս»: Իսկ սա պատասխանեց. «Ով արքա. ես անցյալում քեզ համար ոչ մի տհաճ գործ չեմ կատարել. այսուհետև նույնպես կխուսափեմ քո հանդեպ որևէ հանցանք գործելուց: Եթե քեզ հաճելի է, որ այդպես կատարվի, ապա իմ պարտքն է հնարամտությամբ ծառայել քեզ»:

109. Այսպես պատասխանեց Հարպագոսը. իսկ երբ նրան հանձնվեց մանվան զգեստներ հագցրած մանկիկը, նա ողբալով վերադարձավ տուն: Տանը նա պատմեց կնոջը այն ամենը, ինչ կարգադրել էր Աստյուագեսը: Կինը հարցրեց նրան. «Այժմ դու ի՞նչ ես մտադիր անելու»: Նա պատասխա-

ենց. «Ես, անշուշտ, չեմ կասարի Աստյուագեսի կարգադրությունը, եթե նույնիսկ նա ավելի չարանա ու մոլեգնի, քան այժմ. ես չեմ անսա նրա հրամանին և չեմ դառնա այդպիսի ոճրին մասնակից: Շատ պատճառներ կան, որ ես չեմ ուզում սպանել նրան: Նախ, որ երեխան ինձ ազգակից է. ապա, որ Աստյուագեսը ծերացել է և չունի արու զավակ: Եթե նրա մահից հետո իշխանությունն անցնի նրա դստեր, որի որդուն նա ուզում է սպանել իմ ձեռքով, ապա ի՞նչ է մնում ինձ, մեծագույն վտանգից բացի: Սակայն, որպեսզի ես ապահով լինեմ, մանկիկը պետք է սպանվի, բայց ոչ իմ, այլ Աստյուագեսի մարդկանցից որևէ մեկի ձեռքով»:

110. Այսպես ասաց և իսկույն հրեշտակ ուղարկեց Աստյուագեսի խաշնարածներից մեկի մոտ, որն, ինչպես իրեն հայտնի էր, կովեր էր արածացնում լավագույն արոտներում, որտեղ սարերը հարուստ էին գազաններով. նրա անունն էր Միթրադատես. նրա կինը նույնպես սարուկ էր. կնոջ անունը հունարեն կլիներ Կյունո[85], իսկ մեդացիների լեզվով՝ Սպակո, քանզի մեդացիք շանը անվանում են սպակա: Արոտավայրերը, որտեղ այս խաշնարածը արածացնում էր նախիրը, գտնվում էին Ագբատանայից հյուսիս՝ դեպի Եվքսինյան Պոնտոս ընկած լեռների սարոտներին: Քանզի մեդական երկիրը միայն դեպի սասպեյրներն ընկած մասում բարձրադիր է, լեռնային և անտառաշատ. իսկ մնացյալ երկիրն ամբողջապես դաշտային է: Երբ խաշնարածը շտապ եկավ նրա կանչին, Հարպագոսը ասաց. «Աստյուագեսը քեզ հրամայում է վերցնել այս մանկիկին և թողնել լեռների ամենախուլ վայրում, որպեսզի այնտեղ արագորեն կործանվի: Նա պատվիրեց ասել քեզ նաև, որ եթե դու չսպանես երեխային, այլ որևէ կերպ փրկես նրան, կպատժվես դաժանագույն մահով. իսկ ինձ հրամայել է հետևել երեխայի լքմանը»:

111. Այս լսելով, հովիվը վերցրեց մանկան և նույն ճանապարհով վերադարձավ իր փարախը: Պատմեց, որ նրա կինը ևս, որն օր օրի երեխա էր սպասում, ծննդաբերեց այն ժամանակ, երբ ամուսինը մեկնել էր քաղաք: Նրանք երկուսն էլ մտահոգվել էին մեկմեկու մասին. ամուսինը՝ կնոջ ծննդաբերության պատճառով, իսկ կինը անհանգստացած էր այն անսովոր բանից, որ Հարպագոսը կանչել էր իր ամուսնուն: Երբ ամուսինը վերադառնալով կանգնեց նրա առաջ, անսպասելի իր առաջ ամուսնուն տեսած կինը նրան նախ հարցրեց, թե Հարպագոսն ինչո՞ւ էր այդպես շտապ կանչել: Ամուսինը պատասխանեց. «Կին, քաղաք գնալով ես տեսա ու լսեցի այն, ինչ պետք չէր տեսնեի և ինչ պետք չէր պատահեր մեր տերերին: Հարպագոսի ամբողջ տունը համակված էր ողբով, և ես ապշահար մտա նրա: Այնտեղ տեսա մանկան, որը ճչում էր ու լալիս. նրան զարդարել էին ոսկիներով և խայտաճամուկ զգեստով: Հարպագոսը ինձ տեսնելով, հրամայեց, որ

իսկույն վերցնեմ երեխային ու տանեմ թողնեմ գազանաշատ լեռներում, ասելով, որ այդպես է ինձ կարգադրել Աստյուագեսը. միաժամանակ խիստ սպառնաց՝ եթե այդ պատվերը չկատարեմ: Ես վերցրի մանկիկին ու բերեցի, ենթադրելով, որ այն սարուկներից մեկի երեխան է. քանզի ես երբեք չէի կարող իմանալ, թե այն ո՞ւմ երեխան է: Ես զարմացել էի, տեսնելով նրա ոսկե զարդերը և շքեղ զգեստը, ինչպես նաև Հարպագոսի տան ողբն ու կականը: Շուտով հանապարհին ես ամբողջ նշմարտությունն իմացա այն ծառայից, որն ինձ ուղեկցեց քաղաքից դուրս և հանձնեց երեխային: Նա պատմեց, թե այն Աստյուագեսի դուստր Մանդանեի և նրա ամուսին Կամբյուսեսի՝ Կյուրոսի որդու երեխան է և որ Աստյուագեսը պատվիրել է սպանել երեխային: Ահա և այդ երեխան»:

112. Այս ասելով հովիվը արձակեց խանձարուրը և ցույց տվեց երեխային: Կինը, երբ տեսավ, թե երեխան ինչքան փարթամ ու գեղատես է, արտասվելով ընկավ ամուսնու ծնկներին և աղաչեց ոչ մի կերպ չլքել նրան: Ամուսինը պատասխանեց, թե չի կարող այլ կերպ վարվել. քանզի Հարպագոսի լրտեսները գալու են ստուգելու, և եթե ինքը անհնազանդ գտնվի, դաժանաբար կկործանվի: Չկարողանալով համոզել ամուսնուն, կինը դարձյալ դիմեց նրան այսպես. «Քանի որ ես անկարող եմ համոզել քեզ, որ չլքես երեխային, ապա, եթե անհրաժեշտ է, որ մարդիկ տեսնեն երեխային լքված, դու գործիր հետևյալ կերպ: Ահա ես նույնպես երեխա եմ ծնել, բայց մահացած: Սրան դու տար և լքիր լեռներում, իսկ Աստյուագեսի դստեր երեխային մենք կմեծացնենք իբրև մերը: Այսպիսով, ոչ դու կպատժվես իբրև քո տերերին անհնազանդ, ոչ էլ մենք չարիք կատարած կլինենք: Քանզի մահացած երեխան թագավորական թաղման կարժանանա, իսկ փրկվածը չի կորցնի իր կյանքը»:

113. Հովվին թվաց, թե տվյալ դեպքում կինը շատ ճիշտ է խոսում, և նա իսկույն այդպես էլ կատարեց: Նա կնոջը հանձնեց իր բերած երեխային, իսկ իր, արդեն մահացած երեխային վերցնելով, դրեց այն զամբյուղի մեջ, որով բերել էլ մյուսին: Այնուհետև, մահացածին հագցնելով մյուսի զգեստները, նրան տարավ ու թողեց ամենամայի լեռներում: Երեք օր անց այդ վայրում իր հոտաղներից մեկին պահապան թողնելով, հովիվը գալիս է քաղաք և գնալով Հարպագոսի մոտ, հայտնում, թե ինքը պատրաստ է ցույց տալու երեխայի դիակը: Այնժամ Հարպագոսը իր ամենահավատարիմ դիկնապանների միջոցով ստուգեց այդ և թաղեց հովվի երեխային. իսկ մյուսին, որը հետո Կյուրոս կոչվեց, հովվի կինն իր մոտ տարավ, մեծացրեց և տվեց ոչ թե Կյուրոս, այլ մեկ ուրիշ անուն:

114. Երբ արդեն երեխան դարձել էր տասը տարեկան, այնժամ նրա իսկական ծագումը հայտնի դարձավ հետևյալ կերպ: Խաղում էր նա հենց

այն գյուղում, որտեղ գտնվում էին եզների մսուրները: Նա խաղում էր ճանապարհին իր հասակակիցների հետ: Խաղի ընթացքում տղաներն իրենց թագավոր ընտրում են հենց նրան, ով համարվում էր հովվի որդին: Սա տղաներից ոմանց կարգեց տուն կառուցողներ, մյուսներին՝ իրեն թիկնապահներ. նրանցից մեկին սահմանեց արքայի աչքը լինել[36], մեկ ուրիշին նա տվեց նորություններ հաղորդելու իրավունքը. այսպիսով, նա ամեն մեկին հատուկ հանձնարարություն տվեց: Նրա հետ խաղացող տղաներից մեկը, որը հայտնի մեդացի Արտեմբարեսի որդին էր, չցանկացավ Կյուրոսի հրամանը կատարել. ուստի և Կյուրոսը հրամայեց մյուս տղաներին բռնել նրան: Երբ նրանք հնազանդվեցին, Կյուրոսը խստորեն պատժեց տղային մտրակի հարվածներով: Երբ տղային բաց թողեցին, նա, զայրացած իր հետ կատարված անարդարության համար, շտապեց քաղաք և գանգատվեց իր հորը, պատմելով այն վիրավորանքի մասին, որ կրել էր Կյուրոսից, նրան, հիարկե, չանվանելով Կյուրոս, քանի որ դեռ այդ անունը չէր կրում, այլ անվանելով Աստյուագեսի խաշնարածի որդի: Արտեմբարեսը զայրացած ներկայացավ Աստյուագեսին և գանգատվեց իր որդուն ցույց տրված դաժան վերաբերմունքի համար և ասաց. «Ով արքա. տես, թե ինչպես է մեզ անարգել քո ստրուկը, խաշնարածի որդին»: Այս ասելիս նա ցույց էր տալիս իր որդու ուսերը:

115. Աստյուագեսը երբ լսեց ու տեսավ այս, իր մոտ կանչեց խաշնարածին և տղային, կամենալով պատժել նրանց, ի հարգանս Արտեմբարեսի: Երբ խաշնարածն ու նրա որդին ներկայացան, Աստյուագեսը, նայելով Կյուրոսին, ասաց. «Այդ դո՞ւ ես այս մարդու որդին, որ հանդգնել ես այսպես անարգել ինձ մոտ առաջին մարդը համարվողի որդուն»: Տղան նրան այսպես պատասխանեց. «Ով տեր. ես այդ ամենը կատարել եմ իրավացի: Գյուղի տղաները, որոնց թվում էր նաև սա, խաղի ընթացքում ինձ կարգեցին իրենց վրա թագավոր, ինձ համարելով բոլորից արժանին: Ահա մյուս բոլոր տղաները կատարում էին հրամայվածը, մինչդեռ այս տղան չէր հնազանդվում և չէր լսում իմ խոսքը, մինչև որ դրա համար չպատժվեց: Եթե այս ամենի համար ես արժանի եմ պատժվելու, ապա ես պատրաստ եմ»:

116. Մինչ տղան այսպես խոսում էր, Աստյուագեսին թվաց, թե նանչեց նրան: Տղայի դիմագծերը նրան թվացին, թե նման են իր դիմագծերին և նրա պատասխանը առավել անկաշկանդ էր, իսկ երեխային նեռելու ժամանակը նրան թվաց, թե համընկնում էր այս տղայի տարիքին: Այս ամենից զարմացած, Աստյուագեսը որոշ ժամանակ լուռ մնաց: Երբ ուշքի եկավ, նա ցանկանալով հեռացնել Արտեմբարեսին, որպեսզի ինքն առանձին հարցափնի խաշնարածին, ասաց. «Արտեմբարես, ես այնպես կանեմ, որ և՛ դու, և՛ քո որդին ոչ մի գանգատ չունենաք»: Այսպիսով, նա հեռացրեց Արտեմբարեսին, իսկ սպասավորները, Աստյուագեսի հրամանով, Կյուրոսին տարան: Երբ խաշնարածը մենակ մնաց, Աստյուագեսը հարցրեց նրան, թե երեխային որտեղի՞ց է վերցրել և ո՞վ է նրան իրեն հանձնել: Նա պատասխանեց, թե այն իր որդին է և նրան ծնած կինը դեռևս իր մոտ է: Աստյուագեսը նրան ասաց, թե անմիտ բան է խիստ տանջանքների ենթարկվելու նրա ցանկությունը: Այդ ասելով, նա նշան արեց իր թիկնապահներին՝ բռնել խաշնարածին, որը տանջանքների ենթարկման տակ ստիպված եղավ ամեն ինչ հայտնել: Նա սկզբում եղելությունը ճշմարտորեն պատմեց և վերջացրեց իր խոսքը պաղատելով ու ներողամտություն հայցելով:

117. Խաշնարածից ճշմարտությունն իմանալուց հետո, Աստյուագեսը նվազ ուշադրություն դարձրեց նրան, բայց խիստ զայրացավ Հարպագոսի վրա և հրամայեց իր թիկնապահներին՝ կանչել նրան: Երբ Հարպագոսը ներկայացավ, Աստյուագեսը հարցրեց. «Հարպագոս. ի՞նչ կերպ դու սպանեցիր իմ աղջկա երեխային, որին այդ ժամանակ ես քեզ հանձնեցի»: Հարպագոսը այնտեղ նկատելով խաշնարածին, բացահայտվելու երկյուղից, որոշեց չբռնել ստի ճանապարհը, այլ ասաց հետևյալը. «Ով արքա. երբ ես վերցրի երեխային, սկսեցի մտածել, թե ինչպե՞ս կատարեմ քո կամքը և մեղավոր չլինեմ քո առաջ, միաժամանակ չդառնամ ոճրագործ և՛ քո դստեր, և՛ քո առաջ: Ուստի ես հետևյալ կերպ վարվեցի: Կանչեցի ինձ մոտ այս խաշնարածին, նրան հանձնեցի երեխային և ասացի, թե դու հրամայել ես նրան սպանել: Այս ասելիս ես չէի ստում, քանի որ դու էիր այդպես պատվիրել: Երեխային հանձնելիս ես պատվիրեցի լքել նրան ամայի լեռներում և սպասել, մինչև նա կմահանար. ես սպառնացի ամեն տեսակ պատիժներով, եթե նա չկատարեր հրամայվածը: Երբ խաշնարածը հրամանները կատարեց և երեխան մահացավ, ես իմ ամենահավատարիմ ներքինիներին ուղարկեցի ստուգելու կատարվածը, և նրանց միջոցով թաղեցի երեխային: Այս է, ով արքա, իրականությունը, և երեխան այսպես է մահացել»:

118. Հարպագոսն ահա պատմեց ամբողջ ճշմարտությունը: Իսկ Աստյուագեսը, թաքցնելով իր զայրույթը տեղի ունեցածի համար, նախ պատմեց այն ամենը, ինչ լսել էր խաշնարածից և վերջում ավելացրեց, որ երեխան կենդանի է և ամեն ինչ վերջացել է բարվոք: «Ես շատ տանջվեցի, ասաց արքան, այն չարիքի համար, որ պատահեցի այս երեխային, և ծանր էի տանում իմ դստեր օտարացումը ինձնից: Այժմ, քանի որ բախտը դեպի բարին փոխվեց, ուղարկիր քո որդուն այս նորեկ երեխայի մոտ. իսկ դու եկ ինձ հետ խնջույքի, որովհետև ես երեխայի փրկության առթիվ ցանկանում եմ շնորհակալության զոհեր մատուցել աստվածներին, որոնք արժանի են այդ պատվին»:

119. Հարպագոսը, լսելով այս խոսքերը, երկրպագեց (արքային) ու

մեկնեց տուն, մեծապես ուրախացած, որ իր կատարած հանցանքն այսպիսի բարեհաջող վախճան ունեցավ և այդ բարեբախտ օրվա առթիվ ինքը խնջույքի է հրավիրված: Գալով տուն, նա իսկույն իր միակ որդուն, որը տասներեք տարեկան էր, ուղարկեց Ասայուագեսի պալատը, պատվիրելով նրան կատարել այն ամենը, ինչ թագավորը կհրամայի. իսկ ինքը, մեծապես հրճված, ամբողջ եղելությունը պատմեց կնոջը: Մինչդեռ Ասայուագեսը, երբ Հարպագոսի որդին եկավ իր մոտ, նրան մորթելուց ու կտրատելուց հետո, մի մասը տապակեց, մյուս մասը եփեց, և այդ գործը ավարտելով, ամեն ինչ պատրաստ պահեց: Այնուհետև, երբ խնջույքի ժամը հասավ, բոլոր հրավիրյալների հետ ժամանեց նաև Հարպագոսը: Մյուսների, ինչպես և իր՝ Ասայուագեսի առաջ, սեղաններին դրված էր ոչխարի միս, իսկ Հարպագոսին մատուցեցին իր իսկ որդու ամբողջ միսը, բացի գլխից և վերջավորություններից՝ ձեռքերից ու ոտքերից, որոնք առանձին դրված էին ծածկած զամբյուղի մեջ: Երբ թվաց, թե Հարպագոսը հագեցել էր, Ասայուագեսը հարցրեց նրան, թե արդյո՞ք հավանեց ուտեստը: Երբ Հարպագոսը պատասխանեց, թե՝ շատ հավանեց, այնժամ ծառաները, որոնց հանձնարարված էր այդ անել, բերեցին ծածկած զամբյուղը, որի մեջ դրված էին երեխայի գլուխը, ձեռքերն ու ոտքերը, և խնդրեցին Հարպագոսին բացել այն և այնտեղից վերցնել ինչ որ ցանկանում է: Հարպագոսը, համոզվելով, բացեց զամբյուղը և տեսավ որդու կտորատածները, բայց չշփոթվեց ու զրպեց իրեն: Այնժամ Ասայուագեսը հարցրեց նրան, թե իմացա՞վ արդյոք, որ ի՞նչ որսի միս կերավ: Նա պատասխանեց, թե՝ իմացավ և թե այն ամենը, ինչ արքան կատարում է, հաճելի է իր համար: Այսպես պատասխանելով, նա վերցրեց մսի մնացած կտորները և մեկնեց իր տուն, որտեղ էլ, ինձ թվում է, ցանկանում էր թաղել դրանք:

120. Ասայուագեսը այս կերպ պատժեց Հարպագոսին: Այնուհետև, Կյուրոսի մասին վճիռ կայացնելու համար, իր մոտ հրավիրեց այն մոգերին, որոնք մեկնել էին իր երազը: Երբ նրանք ներկայացան, Ասայուագեսը հարցրեց նրանց, թե ինչպե՞ս մեկնեցին իր երազը: Նրանք կրկնեցին նույն խոսքը, ասելով, թե՝ տղան թագավոր կդառնա, եթե ապրի և ավելի շատ չմնա: Արքան նրանց այսպես պատասխանեց. «Տղան փրկվել է ու կենդանի է, և երբ նա ապրում էր գյուղում, գյուղի երեխաները նրան կարգել են թագավոր: Նա վարվել է այնպես, ինչպես վայել է իրական թագավորին, և իր համար թիկնապահներ, բարապահներ, լրաբերներ և այլ ապատավորներ կարգելով, կառավարել է: Այս ամենը, ձեր կարծիքով, ի՞նչ կարող է նշանակել»: Մոգերը պատասխանեցին. «Եթե տղան ողջ է մնացել և նույնիսկ թագավոր է դարձել առանց կանխամտածման, ապա մի վախենար և մի անհանգստանար. քանզի նա երկրորդ անգամ չի գրաստնալու թագավոր: Որովհետև նույնիսկ մեր գուշակությունների փոքր մասն է նախախ կատարվում և երազները շատ անգամ ոչ մի հետևանք չեն ունենում»: Իսկ Ասայուագեսը այսպես պատասխանեց. «Ինքս նույնպես, ով մոգեր, նույն կարծիքին եմ, թե՝ քանի որ տղան արդեն մեկ անգամ թագավոր է կոչվել, ապա երազն արդեն կատարվել է և ես այլևս ոչ մի երկյուղ պետք չէ ունենամ: Այսուհանդերձ, լավ մտածեք և ինձ խորհուրդ տվեք, թե ի՞նչ անեմ իմ տան և ձեր ապահովության համար»: Այնժամ մոգերն ասացին. «Մենք ևս մեծապես շահագրգռված ենք, որ քո իշխանությունը կանգուն մնա: Քանզի եթե այն անցնի տղայի ձեռքը, ապա իշխանությունը կտարվի և կանցնի պարսկին, իսկ մենք, մեդացիներս, կդառնանք սարուկներ և, իբրև օտարազգիներ, պարսիկներից արհամարհված: Մինչդեռ, քանի դու, մեր երկրացին, մնաս թագավոր, մենք ևս մասնակից ենք դառնում երկրի կառավարմանը և քեզանից մեծ պատիվներ ստանում: Այս պատճառով մենք ամեն կերպ մտահոգված ենք քո իշխանության և քո մասին: Եվ այս դեպքում եթե մենք որևէ վտանգավոր բան նկատենք, ամեն ինչ քեզ կհայտնենք: Այժմ, ահա, երբ երազը սին վախճան ունեցավ, մենք ինքներս հաջողվել ենք ու քեզ խորհուրդ ենք տալիս նույնպես վարվել: Իսկ այս տղային հեռացրու քո աչքից և ուղարկիր պարսիկների երկիր՝ իր ծնողների մոտ»:

121. Այս լսելով, Ասայուագեսը հրճվեց և իր մոտ կանչելով Կյուրոսին, ասաց հետևյալը. «Տղաս. ինչ-որ սին երազի պատճառով ես քեզ չարիք պատճառեցի, բայց դու, քո բախտից, ահա փրկվեցիր: Այժմ դու բարով գնա պարսիկների մոտ, իսկ ես քեզ ուղեկցողներ կարամադրեմ: Այնտեղ հասնելով, դու կգտնես և՛ հայր, և՛ մայր, բայց ոչ խաշնարած Միտրադատեսի և նրա կնոջ նման»:

122. Այս խոսքերով Ասայուագեսը հանապարհեց Կյուրոսին: Երբ սա վերադարձավ Կամբյուսեսի տունը, ծնողներն իրեն ընդունեցին և, նրա ով լինելն իմանալուց հետո, կաթոգին համբուրեցին նրան, քանի որ կարծում էին, թե նա այդ ժամանակ արդեն սպանված էր: Այնուհետև նրանք հարցափորձեցին Կյուրոսին, թե ինչպե՞ս է ինքը փրկվել: Նա պատմեց, թե մինչ այդ ինքը ոչինչ չի իմացել, այլ խիստ մոլորված է եղել, իսկ հանապարհին իմացել է իր ամբողջ դժբախտության մասին: Քանզի ինքը կարծում էր, թե Ասայուագեսի խաշնարածի որդին էր, բայց հանապարհին իր ուղեկիցներից տեղեկացել էր ամեն ինչ: Նա պատմեց, թե իրեն խնամել է խաշնարածի կինը. (պատմելիս) անվերջ գովում էր նրան և միշտ խոսում Կյուռնոյի մասին: Նրա ծնողները կանչեցին այդ անունից և, որպեսզի իրենց որդու փրկությունը պարսիկներին թվա առավել հրաշալի, լուր տարածեցին, թե ընկեցիկ Կյուրոսին սնել է շունը[87]: Անա այսպես էլ առաջացել է այդ զրույցը:

123. Մինչ այդ Կյուրոսն առնականանում էր, դառնալով արիագույնը

իր հասակակիցների մեջ և բոլորի սիրելին: Հարպագոսը ևս հարեց նրան, ընծաներ ուղարկելով: Քանզի ցանկանում էր վրեժ լուծել Աստյուագեսից: Հարպագոսը հասկանում էր, որ ինքը մենակ, իբրև հասարակ մարդ, անկարող էր հասուցելու Աստյուագեսին: Ուստի տեսնելով, որ Կյուրոսը հասունանում է, ցանկացավ նրան գինակից դարձնել իրեն, քանի որ Կյուրոսը նույն տառապանքներն էր կրել, ինչ ինքը: Հարպագոսը նախ այսպես արեց. քանի որ Աստյուագեսը դաժան էր մեդացիների հանդեպ, նա բանակցություններ վարեց առաջին մեդացիների[88] հետ, համոզելով նրանց, որ պետք է իշխանությունից հեռացնել Աստյուագեսին և առաջնորդ դարձնել Կյուրոսին: Երբ արդեն այդ նրան հաջողվեց և ամեն ինչ պատրաստ էր, Հարպագոսը որոշեց իր ծրագիրը հայտնել Կյուրոսին, որն այդ ժամանակ գտնվում էր պարսիկների մոտ: Բայց քանի որ ճանապարհները հսկվում էին և ոչ մի այլ միջոց չկար Կյուրոսին այդ ամենը հայտնելու, նա այսպիսի հնար մտածեց. նապաստակ մորթեց և աննկատելի բացելով նրա փորը, այնտեղ դրեց թուղթ[89], որում գրված էր այն ամենը, ինչ ինքը ծրագրել էր: Այնուհետև, կարեց նապաստակի փորը և այն ուղարկեց Պարսկաստան հավատարիմ ծառաներից մեկի միջոցով, տալով նրան որսորդական մի ցանց՝ իբր որսորդի: Նա պատվիրեց հաղորդել Կյուրոսին՝ բաց անել նապաստակի փորը իր իսկ ձեռքով, առանց որևէ մեկի ներկայության:

124. Այս պատվերը կատարվեց, և Կյուրոսը, սատանալով նապաստակը, բացեց նրա փորը. այնտեղ գտավ դրված թուղթը, որի վրա գրված էր. «Կամբյուսեսի որդի. աստվածները հսկում են քեզ. հակառակ դեպքում դու այսպիսի բախտի չէիր արժանանա: Այժմ դու կարող ես վրեժ լուծել քո սպանիչ Աստյուագեսից: Քանզի դու նրա մատղությամբ հանձնվեցիր մահվան, բայց փրկվեցիր աստվածների և իմ շնորհիվ: Կարծեմ դու վաղուց արդեն գիտես քեզ հասցված չարիքի մասին, ինչպես նաև այն մասին, թե Աստյուագեսն ինչպես պատժեց ինձ այն բանի համար, որ ես քեզ չեմ սպանել, այլ հանձնել եմ խաշնարածին: Արդ, եթե ինքդ կամենաս ինձ լսել, ապա դու կտիրես ամբողջ երկրին, որին այժմ տիրում է Աստյուագեսը: Դու համոզիր պարսիկներին ապստամբել և արշավիր մեդացիների վրա: Եթե քո դեմ Աստյուագեսը ինձ կարգի զորավար և կամ մեդացի մեծատոհմիկներից որևէ մեկին, ապա քո ցանկությունը կկատարվի: Քանզի առաջինը իրենք մեդացիները կապստամբեն Աստյուագեսի դեմ, կհարեն քեզ և կօգնեն տապալելու նրան: Քանի որ այստեղ ամեն ինչ պատրաստ է, ապա դու գործիր այսպես և գործիր արագ»:

125. Այս բոլորն իմանալով, Կյուրոսը մտածեց, թե ինչպե՞ս առավել խորամանկությամբ պարսիկներին ապստամբության մղի: Նա որոշեց իր անելիքը, և հետևյալ կերպ գործեց: Թղթի վրա գրեց այն, ինչ մտածում էր,

և պարսիկների համայնաժողով գումարեց: Այնուհետև, բացելով թուղթը, նա հայտարարեց և ասաց, թե Աստյուագեսն իրեն կարգել է պարսիկների զորավար և ավելացրեց. «Այժմ, ով պարսիկներ, հրամայում եմ ձեզ բոլորիդ ներկայանալ, յուրաքանչյուրդ մի մանգաղ վերցրած»: Կյուրոսն այսպես հրամայեց: Պարսկական ցեղերը շատ են, բայց Կյուրոսը հրաճցից միայն մի քանիսին գումարեց և հանձնեց ապստամբել մեդացիների դեմ: Այդ ցեղերը, որոնցից կախում ունեն մյուս բոլոր պարսիկները, հետևյալներն են. պասարգադները, մարափիները և մասպերը: Սրանց մեջ գերազանցում են պասարգադները, որոնց պատկանում է նաև Ահեմենյանների տունը, որից էլ ծագեցին պարսից թագավորները: Պարսկական մյուս ցեղերը հետևյալներն են. պանթիալայներ, գերուսիներ, գերմանիներ: Այս բոլորը հողագործներ են, իսկ մնացյալը՝ դայեր, մարդեր, դրոպիկներ և սագարտներ, վաշկատուն են:

126. Երբ բոլորը ներկայացան մանգաղներով, Կյուրոսը հրամայեց նրանց մի օրում մաքրել պարսկական հողի տասնապատիկ մի հատվածը, ասելով թե քան ասպարեզ տարածությամբ: Երբ պարսիկները կատարեցին այս հանձնարարված գործը, Կյուրոսը հրամայեց նրանց հաջորդ օրը լողանալ և ներկայանալ: Այդ ընթացքում Կյուրոսը ի մի հավաքեց իր նոր բոլոր այծերը, ոչխարներն ու եզները, մորթեց դրանք և պարսկական զորքի համար խնջույք կազմակերպեց. բացի այդ, նա պատրաստեց նաև անհրաժեշտ քանակությամբ գինի և հաց: Երբ հաջորդ օրը պարսիկները եկան, Կյուրոսը, տեղավորվելով մարգագետնին, պատվիրեց խրախճանալ: Ճաշելուց հետո Կյուրոսը նրանց հարցրեց, թե ո՞ր մեկ օրը նրանց հանելի եղավ, նախորդը, թե՞ այդ օրը: Նրանք պատասխանեցին, թե այդ երկու օրերի միջև մեծ տարբերություն կա. քանզի նախորդ օրը նրանք հաշակեցին միայն անհանություն, իսկ այսօր՝ բոլոր բարիքները: Կանչելով նրանց այս խոսքից, Կյուրոսը բացահայտեց իր ամբողջ միտքը և ասաց. «Պարսիկներ. անա թե ինչ կասեմ ձեզ: Եթե կամենամ ինձ ենթազանդվել, ապա այս և բյուր այլ բարիքներ դուք կվայելեք առանց սարկաբար աշխատելու. իսկ եթե ինձ հնազանդվել չցանկամ, ապա ձեզ սպասում են անհամար ծանր աշխատանքներ, ինչպես երեկվա աշխատանքն էր: Ուստի այժմ լսեք ինձ և դուք ազատ կլինեք: Ինքս հավատացած եմ, որ ես ծնվել եմ աստվածների նախորոշմամբ, այս գործն իմ ձեռքը վերցնելու համար: Համոզված եմ, որ դուք մեդացիներին չեք զիջում ոչ պատերազմական, ոչ էլ այլ գործերում: Քանի որ այդ այդպես է, ապա անհապաղ ապստամբեք Աստյուագեսի դեմ»:

127. Այժմ պարսիկներն արդեն առաջնորդ գտած լինելով, հրճվեցին, որ ազատություն ձեռք կբերեն, քանի որ նախկինում խիստ դժգոհ էին մեդացիների իշխանությունից: Իսկ Աստյուագեսը, լսելով, որ Կյուրոսը նման

պատերազմություններ է տեսնում, հրեշտակ ուղարկեց և նրան կանչեց իր մոտ: Կյուրոսը հրեշտակին պատվիրեց հաղորդել, թե ինքը կնայանվի Աստյուագեսի առաջ ավելի շուտ, քան նա այդ կցանկանար: Այս լսելով, Աստյուագեսը զինեց բոլոր մեդացիներին և, քանի որ ասված նրան մոլորեցրեց, նրանց վրա զորավար կարգեց Հարպագոսին, մոռանալով այն շարիքը, ինչ պատճառել էր նրան: Երբ մեդացիները ելան արշավանքի և սկսեցին ճակատամարտը պարսից դեմ, նրանց մի մասը միայն, որը դավադրության մասնակից չէր, սկսեց կռվել, մյուսներն սկսեցին անցնել պարսից կողմը, իսկ շատերն էլ դավաճանելով, փախուստի դիմեցին:

128. Այսպես մեդական զորքը խայտառակորեն ցրվեց: Աստյուագեսն այդ իմանալով, իսկույն սպառնագին գոչեց. «Մեկ է, Կյուրոսը ևս չի վայելի»: Այս ասելուց հետո, նախ նա ցցահան արեց երազահան մոգերին, որոնք խորհուրդ էին տվել խնայել Կյուրոսին. այնուհետև նա զինեց քաղաքում մնացած բոլոր մեդացիներին, երիտասարդ թե ծեր: Նրանց հանեց պարսիկների դեմ, բայց ճակատամարտում պարտվեց ինքը ևս՝ Աստյուագեսը, և գերի ընկավ. իսկ նրա առաջնորդած մեդական զորքը ոչնչացվեց:

129. Այնժամ Հարպագոսը, մոտենալով գերված Աստյուագեսին, սկսեց շարախնդալ և ծանակել նրան վիրավորական խոսքերով: Նա, իմիջիայլոց, հիշեցրեց նրան իր խնջույքը, որի ժամանակ ինքը նյուրասիրվել էր իր որդու մսով, որի համար էլ այժմ նա, թագավորությունը կորցնելով, դառնում է սարուկ: Աստյուագեսը նայելով նրան, հարցրեց, թե՝ արդյո՞ք նա իրեն չի վերագրում Կյուրոսի գործը: Հարպագոսը ասաց, թե ինքն է գրել նամակը, ուստի և գործի հաջողությունն իրավամբ իրեն է պատկանում: Աստյուագեսը առարկեց նրան, ասելով, որ նա ամենահիմար և ամենաանարդար մարդն է. ամենահիմարը, քանի որ, եթե այդ ամենն իր կատարած գործն էր, ինքը ենարավորություն ունենալով թագավոր դառնալու, ուրիշին հանձնեց թագավորությունը. ամենաանարդարը, քանի որ խնջույքի պատճառով մեդացիներին սարկության մատնեց: Եթե անպայման պետք էր թագավորությունը վերցնել իրենից և հանձնել ուրիշին, ապա առավել արդար կլիներ այդ բարիքը հանձնել ոչ թե պարսկի, այլ մեդացիներից մեկին: Այժմ, ահա, ոչ մի բանում մեղք չունենալով հանդերձ, մեդացիները իշխողների փոխարեն դառնում են սարուկներ, մինչդեռ պարսիկները, որոնք նախապես մեդացիների սարուկներն էին, դառնում են իշխողներ:

130. Եվ այսպես, Աստյուագեսը, երեսունհինգ տարի թագավորելուց հետո, զրկվեց թագավորությունից: Նրա դաժանության պատճառով մեդացիները հպատակվեցին պարսիկներին: Մեդացիների տիրապետությունը Հալյուս գետից այն կողմ գտնվող Ասիայում տևեց հարյուր քսան ութ տարի, որից պետք է հանել սկյութների տիրապետության տարիները: Հետագայում մեդացիները զղջացին իրենց այս արարքի համար և ապստամբեցին Դարեհի դեմ[91], բայց ճակատամարտում պարտվեցին և դարձյալ հպատակվեցին[92]. իսկ պարսիկները Աստյուագեսի օրոք Կյուրոսի առաջնորդությամբ ապստամբելով մեդացիների դեմ, այդ ժամանակից ի վեր տիրում են Ասիային: Բայց Կյուրոսը Աստյուագեսին ոչ մի այլ չարիք չպատճառեց և պահեց իր տանը, մինչև նրա վախճանվելը: Այսպիսին է Կյուրոսի ծննդյան, մանկության և թագավոր դառնալու պատմությունը. հետագայում էլ նա, ինչպես պատմել եմ, հաղթեց Կրեսոսին, որը առաջինն էր սկսել հարձակումը: Նրան հաղթելով, Կյուրոսը տիրեց համայն Ասիային:

131. Պարսից բարքերի մասին ևս հետևյալը գիտեմ: Նրանք սովորություն չունեն աստվածներին արձաններ, տաճարներ և զոհարաններ կառուցելու, իսկ այդպիսիք կառուցողներին համարում են հիմարներ, որովհետև, իմ կարծիքով, նրանք երբեք չեն հավատում, թե աստվածները մարդկային բնույթ են ունեցել, ինչպես հավատում են հելլեններ: Սովորաբար նրանք Զևսին[93] մատուցում են զոհեր, բարձրացնելով ամենաբարձր լեռները, և ամբողջ երկնակամարը Զևս անվանում: Նրանք զոհեր մատուցում են արևին և լուսնին, և հողին, և հրին, և ջրին, և հողմերին: Ի սկզբանե նրանք միայն սրանց էին զոհեր մատուցում, իսկ հետագայում նրանք ասորեստանցիներից և արաբներից սովորեցին զոհ մատուցել Ուրանիային[94]: Ասորեստանցիները Ափրոդիտեին անվանում են Մյուլիտտա, արաբները՝ Ալիտտա, իսկ պարսիկները՝ Միտրա[95]:

132. Վերոհիշյալ աստվածներին պարսիկները զոհեր մատուցում են հետևյալ կերպ: Նրանք երբ ուզում են զոհ մատուցել, ո՛չ զոհարան են պատրաստում, ո՛չ կրակ բորբոքում, ո՛չ հեղում կատարում, ո՛չ սրինգ օգտագործում, ո՛չ պսակ, ո՛չ էլ զոհաբերման գարի: Եթե նրանցից որևէ մեկը կամենա զոհ մատուցել այդ աստվածներից մեկին, ապա նա զոհաբերվելիք անասունին բերում է քաց տեղ և կոչում աստծուն, հանախ իր տիարան[96] մրտենու ճյուղերով զարդարած: Ընդունված չէ, որ զոհ մատուցողը միայն իր համար բարիքներ աղերսի. նա աղոթում է բոլոր պարսիկների և թագավորի բարօրության համար, քանի որ ինքը ևս պարսիկների թվին է պատկանում: Այնուհետև նա զոհը կտրատում է մասերի և եփում, հետո բարձ խոտ է փռում, առավելապես երեքնուկ, և ամբողջ միսը վրան դնում: Այնժամ մոտենում է մոգը «Թեոգոնիա»[97] երգելով. նրանք այդպես են անվանում այդ դյուրանքը. քանզի առանց մոգի նրանց մոտ ընդունված չէ զոհաբերություն կատարել: Մի փոքր սպասելուց հետո, զոհաբերողը միսը առնում է իր հետ և անօրինում այն իր հայեցողությամբ:

133. Նրանք բոլոր օրերից առավել պատվում են յուրաքանչյուրի ծննդյան օրը: Այդ օրը նրանք անհրաժեշտ են համարում առավել նոխ սե-

դան բացել, բան մյուս օրերին: Այդ օրը հարուստները մատուցում են փոքր մեջ խորոված ամբողջական եզ, ձի, ուղտ կամ էշ, իսկ աղքատները՝ մանր անասուններ: Նրանք նաև քիչ են օգտագործում, բայց առատորեն մատուցում են աղանդերներ ոչ միանգամից, այլ հաջորդաբար: Ուստի պարսիկները ասում են, թե հելլեններն ուտելուց վեր են կենում քաղցած, քանի որ նաշից հետո չեն մատուցում ոչ մի կարգին աղանդեր: Եթե այդպիսի մատուցվեին, ապա հելլեններն չէին դադարելու ուտելուց: Պարսիկները գինի շատ են սիրում: Այլոց ներկայությամբ նրանք չեն փսխում և չեն միզում: Այս բարքերը նրանք այժմ էլ պահպանում են: Նրանք սովորություն ունեն կարևորագույն գործերը քննարկել գինի խմելիս. իսկ այդ պայմաններում ընդունված որոշումը տանուտերը հաջորդ օրը առաջարկում է նրանց նորից նստած ուրշումը տանուտերը հաջորդ օրը առաջարկում է նրանց նորից նստած ատել, և եթե սրտի վինակում ևս նրանք հավանություն տան որոշման, այդ դեպքում կատարում են այն, եթե ոչ, ապա հրաժարվում են այդ որոշումից. և, ընդհակառակը, սրտի վինակում ընդունված որոշումը նրանք դարձյալ քննարկում են խմած վինակում:

134. Ճանապարհին իրար հանդիպած պարսիկներին հեշտ է որոշել, թե արդյո՞ք նրանք հավասարներ են. այս դեպքում նրանք ողջույնի փոխարեն իրար բերան են համբուրում. եթե նրանցից մեկը փոքր-ինչ ցածր դիրք ունի, ապա իրար այտերն են համբուրում. իսկ եթե մեկը մյուսից շատ է ցածր իր ծագումով, ապա ցածր եղողը վայր ընկնելով երկրպագում է մյուսին: Բոլորից առավել նրանք, անշուշտ իրենցից հետո, հարգում են իրենց մեծավարագույն հարևաններին, ապա պակաս մտիկ բնակվողներին, և այսպես, հարգում են նրանց բաս մտիկությամբ: Բոլորից պակաս նրանք հարգում են ամենահեռավոր բնակվողներին. քանզի կարծում են, թե իրենք ամենք ինչում գերազանցում են բոլորին. իսկ մնացյալները, իրենց կարծիքով, առաքինի են իրենց մեծավորության համեմատ. իրենցից հեռավոր վայրերում ապրողներին նրանք համարում են ստորագույնը բոլորից: Մեդական տիրապետության ժամանակ ևս մեկ ազգ իշխում էր մյուսին, իսկ մեդացիները՝ բոլորին, նաև իրենց մեծավոր հարևաններին. սրանք՝ իրենց հարևաններին, սրանք էլ իրենց հարևաններին և այլն: Նույն կարգով էլ այժմ պարսիկներն են հարգում. քանզի սրանք ևս նույն ձևով են իշխում և կառավարում:

135. Պարսիկները բոլոր մարդկանցից ավելի հակված են օտար սովորույթները փոխառնելու: Նրանք հագնում են մեդական զգեստ, այն համարելով առավել լավ, քան իրենցը. և պատերազմում կրում են եգիպտական զրահներ: Նրանք հելլեններից ավարառված հարստերվել ագահների հետ: Յուրաքանչյուր պարսիկ ունենում է օրինական շատ կանայք, ու առավել ևս վարձակներ:

136. Քաջ կռվելը մեծագույն առաքինություն է նրանց համար. այնուհետև նրանք մեծ քարիք են համարում ավելի շատ որդիներ ունենալը: Արքան ամեն տարի նվերներ է ուղարկում բոլորից շատ երեխաներ ունեցողին, քանզի մեծաթիվ լինելը նրանք հզորություն են համարում: Երեխաներին հինգ տարեկան հասակից սկսած մինչև քսանմյա հասակը սովորեցնում են միայն երեք բան՝ ձիավարել, նետաձգություն և ճշմարտախոսություն: Մինչև հինգ տարեկան հասակը երեխան չի հանդիպում հորը, այլ մնում է կանանց մոտ: Այսպես վարվում են, որպեսզի, եթե երեխան մահանա այդ ընթացքում, հորը ոչ մի վիշտ չպատճառի:

137. Ես գովում եմ այս սովորույթը. գովում եմ նաև այն, որ անգամ թագավորը իրավունք չունի որևէ մեկին մահվան ենթարկելու միայն մեկ հանցանքի համար, ոչ էլ պարսիկներից որևէ մեկը իրավունք ունի իր ծառաներից որևէ մեկին անբուժելի վնաս հասցնելու միայն մեկ հանցանքի համար. այլ կշռադատելուց հետո, եթե պարզվի, որ ծառայի հանցանքները ավելի շատ են, քան նրա ծառայությունները, այնժամ տերը կարող է իր զայրույթը թափել: Նրանք ասում են, թե ոչ ոք իրենցից չի սպանել ոչ իր հորը, ոչ իր մորը: Եթե իսկ այդպիսի դեպք կատարվել է, ապա ուշադիր քննարկումից պարզվել է, որ այդ անողը եղել է ընկեցիկ կամ ապօրինածին: Քանզի անհավանական է, որ հարազատ ծնողին սպանի իր իսկ որդին:

138. Այն մասին, ինչ արգելված է իրենց անել, նրանք նույնիսկ չեն խոսում: Նրանք առավել ամոթալի համարում են ստելը և, հետո, պարտք անելը. և դա ունի իր պատճառները, մանավանդ, որ պարտք վերցնողը, նրանց կարծիքով, ստիպված է լինում ստելու: Եթե քաղաքացիներից որևէ մեկը բորոտ է կամ հիվանդ սպիտակ ախտով[98], ապա նա չի մտնում քաղաք և չի շփվում մյուս պարսիկների հետ: Այս փորձանքը նրանք համարում են արևի հանդեպ մարդու կատարած որևէ հանցանքի հետևանք: Նման ախտերով տառապող որևէ օտարի նրանք արտաքսում են երկրից. այդ պատճառով նրանք քշում են նաև սպիտակ աղավնիներին[99]: Գետի մեջ նրանք չեն միզում, չեն թքում, չեն լվանում իրենց ձեռքերը, ոչ իսկ թույլ տալիս ուրիշներին այդ անել. նրանք շատ են հարգում գետերը:

139. Անա ևս մեկ այլ երևույթ, որին կարելի է հանդիպել պարսիկների մոտ, որը իրենք չեն նկատում, բայց մենք նկատում ենք: Նրանց անունները, համապատասխան լինելով իրենց մարմնական ուժին և վեհության, բոլոր դեպքերում վերջանում են միևնույն տառով, որը դորիացիները կոչում են «սան», իսկ ճոնիացիները՝ սիգմա[100]: Այս հարցով հետաքրքրվողը կնկատի, թե այդ տառով վերջանում են պարսիկների անուններից ոչ թե մի քանիսը, այլ բոլորը:

140. Այս ամենը, ինչ ես պատմեցի նրանց մասին, հավատի գիտեմ:

Մինչդեռ պարսից թաղման սովորույթները ծածուկ են և հստակ բան չեն պատմում այն մասին, թե իբր պարսկի դիակը չեն թաղում, մինչև շները կամ ճավքերը այն չեն քերել: Ես հաստատ գիտեմ, որ մոգերն այդպես են վարվում. քանզի նրանք բացահայտ են այդ անում: Այսուհանդերձ, պարսիկները դիակը նախապես մոմով պատելուց հետո են հողին հանձնում[101]: Մոգերը շատ են տարբերվում և՛ մյուս մարդկանցից, և՛ եգիպտոսի քրմերից: Այս վերջինները սուրբ են համարում չպատանել ոչ մի շնչավորի, այլ միայն այն, ինչ պետք է զոհաբերվի. մինչդեռ մոգերը իրենց ձեռքով սպանում են ամեն ինչ, բացի շնից ու մարդուց և մեծ ծառայություն են համարում այն, որ սպանում են մրջյուններ, օձեր և այլ սողուններ ու թռչուններ: Այս սովորույթը, ինչպես եղել է ի սկզբանե, թող այդպես էլ մնա, իսկ ես կվերադառնամ իմ նախորդ խոսքին:

141. Երբ լյուդիացիները նվաճվեցին պարսիկներից, հոնիացիները և էոլիացիներն անհապաղ հրեշտակներ ուղարկեցին Սարդես՝ Կյուրոսի մոտ, հայտնելով, որ կհպատակվեն նրան նույն պայմաններով, ինչ Կրեսոսին էին հպատակվում: Լսելով նրանց առաջարկը, Կյուրոսը պատմեց հետևյալ զրույցը. «Մի սրնգահար ծովում ձկներ տեսնելով, սկսում է սրինգ հնչեցնել այն հույսով, որ ձկները դուրս կգան ցամաք: Հուսախաբ եղած, նա վերցնում է ցանցը և այն նետելով, շատ ծուկ է դուրս հանում: Տեսնելով, որ ձկները խաղում են (գետնի վրա), ասում է նրանց. «Վերջ տվեք իմ առաջ պարելուն. չէ՞ որ երբ նվագում էի, դուք չուզեցիք դուրս գալ պարելու»: Կյուրոսն այս զրույցը պատմեց հոնիացիներին և էոլիացիներին այն պատճառով, որ հոնիացիները, որոնք այժմ, երբ Կյուրոսը հաղթել էր, պատրաստ էին հպատակվելու նրան, նախապես մերժել էին Կյուրոսին, որը դեսպանների միջոցով առաջարկել էր անջատվել Կրեսոսից: Այսպես պատասխանեց Կյուրոսն իր զայրույթի մեջ: Երբ այդ մասին լուրը հասավ հոնիական քաղաքների բնակիչներին, սրանք իրենց քաղաքները պարսպապատեցին և զորամարվեցին Պանիոնիոնում[102], բացի միլետացիներից. քանզի Կյուրոսը միայն Միլետի հետ դաշինք էր կնքել նույն պայմաններով, ինչ լյուդիացիների թագավորը: Մյուս հոնիացիներ համատեղ որոշեցին հրեշտակներ ուղարկել Սպարտա՝ օգնություն խնդրելու:

142. Այս հոնիացիները, որոնց պատկանում է նաև Պանիոնիոնը, իրենց քաղաքները հիմնել են լավագույն երկնքի տակ և լավագույն կլիմա ունեցող երկրում, քան իմ իմացած բոլոր մարդիկ: Քանզի ո՛չ նրանցից հյուսիս և հարավ[103], ո՛չ էլ արևելք և արևմուտք գտնվող երկրները չեն կարող հավասարվել Հոնիային. դրանց մի մասը ցուրտ ու խոնավ է, իսկ մյուսը՝ շոգ ու չորային: Հոնիացիները խոսում են ոչ թե մեկ լեզվով, այլ շատ տարբեր բարբառներով: Ամենից հարավ գտնվում է Միլետ քաղաքը, այնուհետև գտնվում են Միուսը և Գրիենեն. սրանք գտնվում են Կարիայում և բնակիչները խոսում են մեկ ընդհանուր լեզվով. իսկ Եփեսոսը, Կոլոփոնը, Լեբեդոսը, Տեոսը, Կլազոմենեն, Փոկայան գտնվում են Լյուդիայում: Սրանց բնակիչները ևս խոսում են մեկ ընդհանուր, բայց (վերոհիշյալ երեք) քաղաքների բնակիչներից տարբեր լեզվով: Կան հոնիական ևս երեք քաղաքներ, որոնցից երկուսը՝ Սամոսը և Քիոսը, գտնվում են կղզիների վրա, իսկ մեկը՝ Երյուրեն՝ մայր ցամաքի: Քիոսցիները և երյուրեցիները խոսում են նույն բարբառով, իսկ սամոսցիները՝ իրենց ուրույն: Սա՝ սրանք են հոնիական չորս բարբառները:

143. Սա՝ այս հոնիացիներից միլետացիք վախենալու ոչինչ չունեին, քանզի դաշնակցել էին Կյուրոսի հետ. կղզիների բնակիչներին ևս վտանգ չէր սպառնում, քանի որ դեռևս փյունիկեցիները չէին հպատակվել պարսիկներին, իսկ պարսիկները նավագնացներ չէին: Ասիայի հոնիացիները մնացած հոնիացիներից անջատվել էին սոսկ այն պատճառով, որ հելլեն ցեղն ընդհանրապես այդ ժամանակ դեռևս թույլ էր, իսկ հոնիացիները ամենաթույլն էին և աննշանը բոլորի մեջ: Բացի Աթենքից, ոչ մեկ այլ հոնիական հայտնի քաղաք չկար: Սա՝ և մյուս հոնիացիները և աթենացիները խուսափում էին այդ անունից և չէին ցանկանում կոչվել հոնիացիներ: Դեռ այժմ ևս հրանցից շատերը, ինձ թվում է, ամաչում են այդ անունից: Իսկ վերոհիշյալ տասներկու հոնիական քաղաքները պարծենում են այդ անունով, իրենց համար սրբավայր հիմնեցին և այն անվանեցին Պանիոնիոն[104] ու որոշեցին մյուս հոնիացիներից ոչ մեկին թույլ չտալ օգտվելու դրանից, թեև սմյուռնիացիներից բացի մյուսներն այդ չխնդրեցին իսկ:

144. Նույնպես և դորիացիները[105], այժմյան հինգքաղաքյա մարզից, որը նախկինում կոչվում էր վեցքաղաքյա, ոչ միայն արգելել էին իրենց հարևան դորիացիներին Տրիոպական սրբավայրը մտնել, այլև թույլ չէին տալիս ծեսերին մասնակցելու նույնիսկ իրենց համաքաղաքացիներին, որոնք խախտել էին սրբավայրի օրենքները: Քանզի Տրիոպական Ապոլլոնի պատվին կազմակերպված մրցումներում հրանք, հին սովորույթի համաձայն, հաղթողներին պարգևատրում էին պղնձե եռոտանիներով. բայց հաղթողները պարտավոր էին պարգևները չտանել սրբավայրից, այլ դրանք նվիրաբերել տաճարին: Եվ ահա մի մարդ Հալիկառնասոսից, անունը Ագասիկլես, հաղթելով (այդ մրցումներում), խախտեց կարգը և եռոտանին բերելով տուն, այն կախեց պատին գամված սեպից: Այդ պատճառով էլ հինգ քաղաքները՝ Էնիդոսը, Լյուսոսը, Կամեյրոսը, Կոսը և Կնիդոսը, վեցերորդ քաղաքը՝ Հալիկառնասոսը, զրկեցին կրոնական ծեսերին մասնակցելու իրավունքից: Այսպես հրանք պատժեցին այդ քաղաքը:

145. Հոնիացիները տասներկու քաղաք հիմնեցին և հետագայում այլոց

չընդունեցին իրենց շարքերը, իմ կարծիքով, նեռևյալ պատճառով: Երբ նը-
ռանք դեռևս Պելոպոնեսոսում էին բնակվում, զբաղեցնում էին տասներկու
մարզ, իրենց այնտեղից դուրս քշած և այժմ այնտեղ բնակվող ամայացի-
ների նման[106]: Պելոպոնեսոսում ամայացիների այդ մարզերը սրանք են.
առաջինը՝ Պալենեն Սիկիոնի մոտ, այնուհետև՝ Այգեյրան և Այգեն, որտեղ
մշտաբնակ Կրաթիս գետն է, որից էլ իր անունն է ստացել գետը Իտալիա-
յում. (այնուհետև) Բուրան և Հելիկեն, որտեղ ապաստանեցին հոնիացիներ-
ը, ամայացիներից կրած պարտությունից հետո. (հաջորդաբար) Այգիոնը
և՝ Հոյուսիեն և՝ Պատրասը և՝ Փառասը և՝ Օլենոսը, որտեղ Պեյրոս մեծ գետն
է և Դյումեն ու Տրիտեյները. այս վերջիններս գտնվում են միջերկրայքում:
Այս տասնհինգ մարզերն այժմ պատկանում են ամայացոց, մինչդեռ նախ-
կինում եղել են հոնիական:

146. Այս պատճառով էլ հոնիացիները տասներկու քաղաք հիմնեցին.
մեծ անմտություն կլիներ ասել, թե այս հոնիացիներն առավել զարյուն
և առավել լավ են, քան մյուս հոնիացիները: Նրանց մեջ փոքր մաս չեն
կազմում աբանդները Եվբեայից, որոնք նույնիսկ անունով հոնիացիներ չեն.
նրանց խառնվել են Օրոմենեի մինիացիները, կադմեացիները, դրիոպները
և իրենց ցեղից անջատված փոկայացիները, մելոսցիները, արկադյանները,
պելասգները և Եպիդավրոսի դորիացիները, ինչպես նաև շատ այլ ցեղեր.
իսկ այն հոնիացիները, որոնք եկել են աթենական պրիտանեյոնից[107] և
իրենց համարում են ազնվագույնները բոլորից, իրենց հետ կանանց չբերե-
ցին (նոր) բնակավայրը, այլ վերցրին կարունիների, սպանելով նրանց
ծնողներին: Այս ոճրի պատճառով այդ կարիացի կանայք երդվեցին և այդ
երդումը ավանդեցին իրենց դստերին՝ երբեք ճաշի չնստել իրենց ամուսին-
ների հետ և երբեք նրանց չկոչել իրենց անուններով, քանի որ սրանք,
սպանելով իրենց հայրերին և ամուսիններին ու որդիներին, իրենց վերցրել
էին կնության:

147. Այս ամենը տեղի ունեցավ Միլետում: Նրանց մի մասն իր համար
թագավորներ ընտրեց լյուկիացիներին, Հիպոլոքոսի որդի Գլավկոսի շա-
ռավիղներին, մյուս մասը՝ Պյուրոսի կավկոնների, Մելանթոսի որդի Կոդ-
ռոսի շառավիղներին, իսկ մի մասն էլ՝ այս երկուսի շառավիղներին միա-
սին: Նրանք, սակայն, մյուս հոնիացիներից առավել չափով կառչեցին իրենց
անունից, ուստի և նրանց կարելի է զարյուն հոնիացիներ համարել: Բո-
լոր հոնիացիները, որոնք ծագում են Աթենից, նշում են Ապատուրիա տո-
նը[108]: Այս տոնը նշում են բոլորը, բացի եփեսացիներից և կողոփոնացիներ-
ից. հոնիացիներից միայն սրանք են, որ չեն տոնում Ապատուրիան, իբր
թե ինչ-որ ոճրի պատճառով:

148. Պանիոնիոնը սրբավայր է Մյուկալեում, ուղղված դեպի հյուսիս:

Այն համայն հոնիացիների կողմից ծոնված է Հելիկոնյան Պոսեյդոնին:
Մյուկալեն հրվանդան է (ասիական) մայր ցամաքի արևմուտքում, Սամոսին
հանդիպակաց: Այստեղ էլ հավաքվում էին հոնիական քաղաքների բնակիչ-
ները տոնախմբության, որը կոչել էին Պանիոնիա: (Ոչ միայն հոնիական,
այլև հելլենական բոլոր տոների անվանումները, ինչպես և պարսկական
անունները, վերջանում են այս նույն տառով)[109]:

149. Սրանք են հոնիական քաղաքները: Իսկ էոլիականները հետևյալ-
ներն են՝ Կյումե, որը կոչվում էր Փոիկոնիական, Լարիսե, Նոր Բերդ[110],
Տեմնոս, Կիլլա, Նոտիոն, Այգիրոեսսա, Պիտանե, Այգայա, Մյուրինա, Գրյու-
նեյա[111]: Սրանք են էոլիական տասնմեկ ինքնուրույն քաղաքները, իսկ մեկը՝
Սմյուռնեն, նվաճեցին հոնիացիները. քանզի սրանք ևս տասներկու քաղաք
էին մայր ցամաքի վրա: Այս էոլիացիները զբաղեցրին առավել բարեբեր
հողեր, քան հոնիացիները, բայց ոչ այնքան բարենպաստ կլիմայով:

150. Էոլիացիները անա թե ինչպես կորցրին Սմյուռնեն: Նրանք իրենց
քաղաքն են ընդունում Կողոփոնից փախածներին, որոնք ապստամբության
ընթացքում պարտվել էին և արտաքսվել իրենց երկրից: Հետագայում կո-
ղոփոնացի այս գաղթականները, օգտվելով առիթից, երբ սմյուռնեցիները
պարհսպներից դուրս տոնախմբվել էին Դիոնիսոսի պատվին, փակեցին
դարպասները և տիրեցին քաղաքին: Երբ համայն էոլիացիները եկան քա-
ղաքին օգնության, համաձայնություն կայացավ, որով հոնիացիները վերա-
դարձրին էոլիացիներին տնային իրերը, իսկ վերջիններս լրեցին քաղաքը:
Այս դեպքից հետո (հոնիական) տասնմեկ քաղաքներն իրար միջև բաժա-
նեցին սմյուռնեցիներին և նրանց դարձրին իրենց քաղաքացիներ:

151. Անա սրանք են (ասիական) մայր ցամաքի էոլիական քաղաքնե-
ը, չհաշված Իդայի վրա գտնվող բնակավայրերը, որոնք առանձնացած են:
Կղզիների վրա հիմնված քաղաքներից հինգը գտնվում են Լեսբոսում: Լես-
բոսի վեցերորդ քաղաքը՝ Արիսբան, ստրկացրին մեթյումնացիները, թեև
նրանք արյունակիցներ էին: Տենեդոսում ևս կա մի քաղաք. մեկ ուրիշն էլ,
այսպես կոչված, Հարյուր կղզիների[112] վրա: Այսպիսով, Լեսբոսի և Տենեդո-
սի բնակիչները, ինչպես նաև կղզեբնակ հոնիացիները (պարսիկներից) վա-
խենալու ոչինչ չունեին: Մնացյալ քաղաքները ընդհանուր որոշում կայաց-
րին՝ ամեն ինչում հետևել հոնիացիներին:

152. Երբ Սպարտա հասան հոնիացիների և էոլիացիների հրեշտակնե-
ը, քանի որ այս ամենը շատ արագ էր կատարվում, Պյութերմոս անունով
փոկայացուն ընտրեցին, որպեսզի բոլորի կողմից խոսի: Նա ծիրանի զգեստ
հագավ, որպեսզի այդ իմանալով, ավելի մեծ թվով սպարտացիներ գումար-
վեն և վեր կենալով, երկար հառեց, իրենց համար օգնություն խնդրելով:
Իսկ լակեդեմոնացիները նույնիսկ չուզեցին լսել նրան, բայց որոշեցին շտ-

նել նոնիացիներին: Դեսպանները եւ վերադարձան. իսկ լակեդեմոնացիները, թեև մերժեցին նոնիացի հրեշտակներին, այնուամենայնիվ հիսուն թիանի նավով մարդկանց ուղարկեցին, ինչպես ինձ թվում է, արդեսգի հետեւեն Կյուրոսի և Հոնիայի գործերին: Ժամանելով Փոկայա, որտեղ Սարդես ուղարկեցին իրենց միջից ամենահարգարժանին, որի անունը Լակրինես էր, նաղարդելու Կյուրոսին լակեդեմոնացիների հայտարարությունը, թե՝ իրենք թույլ չեն տա նրան ավերելու որեւէ հելլենական քաղաք:

153. Երբ դեսպանն այսպես խոսեց, ասում են, թե Կյուրոսը հերկա եղող հելլեններին հարցրեց, թե ովքե՞ր և ինչքա՞ն են լակեդեմոնացիները, որ իրեն այսպիսի հայտարարություն են անում: Պատասխան ստանալով, նա ասում է սպարտացի դեսպանին. «Ես չեմ վախենա այն մարդկանցից, որոնց քաղաքի կենտրոնում առանձնացրած վայր կա, որտեղ նրանք գումարվում են և երդվելով խաբում իրար: Եթե ողջ մնացի, ապա նրանք կխոսեն ոչ թե հոնիացիների, այլ իրենց սեփական դժբախտության մասին»: Կյուրոսն այս խոսքերը շպրտեց համայն հելլեններին այն պատճառով, որ նրանք առուծախ են անում շուկայում. քանզի իրենք՝ պարսիկները, բոլորովին էլ առեւտուր անելու սովորություն չունեն և նրանց մոտ ոչ մի շուկա չկա: Այնուհետև Սարդեսը հանձնելով պարսիկ Տաբալոսին, իսկ Կրեսոսի և մյուս լյուդիացիների ոսկին՝ լյուդիացի Պակտյուսի պահպանմանը, Կյուրոսը մեկնեց Ագբատանա, իր հետ տանելով Կրեսոսին և առայժմ ոչ մի ուշադրություն չդարձնելով հոնիացիներին: Քանզի նրան դեռ խանգարում էին Բաբելոնը և բակտրիական ազգը և սակերը և եգիպտացիները: Սրանց դեմ էլ նա մտադիր էր անձամբ արշավելու[113], իսկ հոնիացիների դեմ ուղարկեց ուրիշ զորավարի:

154. Սարդեսից Կյուրոսի մեկնելուց հետո Պակտյուսը լյուդիացիներին ապստամբության դրդեց Տաբալոսի և Կյուրոսի դեմ: Այնուհետև նա դեպի ծով իջավ. իր հետ վերցնելով Սարդեսի ամբողջ ոսկին. նա վարձկաններ հավաքեց և առափնյա մարդկանց համոզեց իր հետ արշավել: Այնուհետև նա քայլեց դեպի Սարդես և պաշարեց Տաբալոսին, որը փակվեց միջնաբերդում:

155. Այս դեպքերի մասին իմանալով հանապարհին, Կյուրոսը այսպես ասաց Կրեսոսին. «Կրեսոս. ինձ համար այս ամենն ինչո՞վ կվերջանա: Թվում է, թե լյուդիացիները չեն դադարի անհանգստություն պատճառելուց ինձ և իրենց: Մտածում եմ՝ լավ չի՞ լինի նրանց ստրկացնել: Թվում է, թե ես այժմ վարվում եմ այն մարդու նման, որը սպանելով հորը, խնայում է նրա երեխաներին: Այդպես էլ ես, գերի վերցնելով քեզ, որ լյուդիացիների համար առավել էիր, քան հայր, քաղաքը հանձնեցի իրենց՝ լյուդիացիներին, իսկ հիմա զարմանում եմ, որ նրանք ապստամբել են իմ դեմ»: Կյուրոսը այսպես հայտնեց իր մտքերը. իսկ Կրեսոսը, վախենալով, որ սա կավերի ամբողջ Սարդեսը, այսպես պատասխանեց. «Ով արքա, այդ ամենը ճիշտ ասացիր. բայց ամենը ինչի համար մի զայրանար և մի կործանիր հնագույն քաղաքը, որը բոլորովին անմեղ է և՛ անցյալի, և՛ ներկայի դեպքերի համար: Անցյալի համար ես եմ մեղավոր և ես իմ գլխով կհատուցեմ. իսկ ներկա դեպքերի համար հանցավոր է Պակտյուսը, որին դու հանձնեցիր Սարդեսը. թող նա էլ դրա համար հատուցի: Լյուդիացիներին դու ներիր և, որպեսզի նրանք այսուհետև չապստամբեն ու քեզ վտանգ չսպառնան, արգելիր նրանց զենք կրելու և հրամայիր, որ թիկնոցների տակից խիտոններ հագնեն և ոտքերին՝ նիտավոր կոշիկներ. հրամայիր նաև, որ իրենց երեխաներին սովորեցնեն կիթառ նվագել և երգել ու փերեզակություն անել: Եվ դու, ով արքա, շուտով կտեսնես, թե նրանք այրերից կվերածվեն կանանց. այնպես, որ այնուհետև դու երբեք չես վախենալու, թե նրանք կապստամբեն»:

156. Կրեսոսը այս խորհուրդը տվեց Կյուրոսին, ենթադրելով, որ լյուդիացիների համար այս ամենը գերադասելի է, քան ստրկության վտանգելը: Նա լավ գիտեր, որ առանց ծանրակշիռ պատճառաբանության ինքը չի կարող համոզել Կրեսոսին՝ փոխելու իր մտադրությունը: Միաժամանակ նա վախենում էր, որ եթե նույնիսկ այժմ լյուդիացիները խուսափեն այդ աղետից, հետագայում դարձյալ կապստամբեն պարսիկների դեմ և կկործանվեն: Բայց Կյուրոսը, հավանելով նրա խորհուրդը, մեղմեց իր զայրույթը և ասաց, թե կհետեւի նրա խորհրդին: Իր մոտ կանչելով մեդացի Մազարեսին, պատվիրեց հաղորդել լյուդիացիներին Կրեսոսի խորհուրդը. միաժամանակ հրամայեց ստրկացնել բոլոր նրանց, ովքեր լյուդիացիների հետ արշավել էին Սարդեսի վրա, իսկ իրեն՝ Պակտյուսին բոլոր դեպքերում կենդանի բռնելով, բերել իր առաջ:

157. Այս հրամաններն արձակելով հանապարհին, Կյուրոսը մեկնեց Պարսկաստան: Իսկ Պակտյուսը տեղեկանալով, որ իր դեմ ուղարկված զորքը մոտենում է, փախավ Կյումե: Մեդացի Մազարեսը այդ ժամանակ իր ձեռքի տակ Կյուրոսի զորքի մի մասով հասավ Սարդես, բայց այնտեղ չգտնելով Պակտյուսին և նրա կողմնակիցներին, առաջին հերթին ստիպեց լյուդիացիներին կատարել Կյուրոսի հրամանները: Նրա այս կարգադրության պատճառով լյուդիացիները փոխեցին իրենց ամբողջ ապրելակերպը: Այնուհետև Մազարեսը հրեշտակներ ուղարկեց Կյումե, պահանջելով հանձնել Պակտյուսին, բայց կյումեցիները որոշեցին դիմել Բրանքիդեսում գտնվող աստծուն՝ խորհուրդ հարցնելու. քանզի այնտեղ կար հնուց հաստատված պատգամատուն, որտեղ պատգամ ստանալու համար դիմում էին բոլոր

ճոնիացիները և էոլիացիները: Այդ վայրը գտնվում է Միլետի հողում, Պանորմոս նավահանգստից վերև:

158. Այսպես, կյումեցիները դեսպաններ ուղարկեցին Բրանքիդես պատգամ հարցնելու (ասածուց), թե ինչպե՞ս վարվեն Պակտյուսի հետ, որպեսզի առավել հաճելի լինի աստվածներին: Նրանց հարցին պատասխան տրվեց, թե՝ պետք է Պակտյուսին հանձնել պարսիկների ձեռքը: Այս պատասխանը լսելով, կյումեցիները որոշեցին հանձնել նրան: Բայց մինչ բազմությունը վճռեց այդպես վարվել, Հերակլիդեսի որդի Արիստոդիկոսը, քաղաքի հայտնի մարդկանցից մեկը, համոզեց կյումեցիներին չանել այդ. քանզի նա չէր հավատում պատգամին և ենթադրում էր, թե ուղարկված դեսպանները ճշմարտությունը չեն ասում. ուստի և երկրորդ անգամ ուրիշ դեսպաններ ուղարկվեցին Պակտյուսի մասին հարցնելու. նրանց մեջ էր նաև Արիստոդիկոսը:

159. Երբ նոր դեսպանները ժամանեցին Բրանքիդես, Արիստոդիկոսը բոլորի կողմից դիմելով (ասածուն), այսպես հարցրեց. «Ով արքա. մեզ մոտ եկավ լյուդիացի Պակտյուսը՝ ապաստան խնդրելով, որպեսզի խուսափի պարսից ձեռքով բռնի սպանվելուց: Իսկ մենք, թեև վախենում էինք պարսից զորությունից, չհամարձակվեցինք հանձնել մեզ մոտ ապաստանածին, նախ քան դու մեզ կհայտնեիր, թե ի՞նչ անենք»: Նա այսպես հարցրեց. իսկ ասված դարձյալ նույն պատասխանը ավեց, պատվիրելով Պակտյուսին հանձնել պարսիկներին: Այնժամ Արիստոդիկոսը նախապես մտածած լինելով, հետևյալն արեց: Պտավելով տաճարի շուրջը, նա սկսեց ոչնչացնել արքավայրում բույն դրած ճնճղուկներին և բոլոր տեսակ մյուս թռչուններին: Մինչ նա այդպես էր անում, ասում են, թե արքավայրի ներսից ձայն լսվեց, որը դիմելով Արիստոդիկոսին, ասում է. «Ով ամենապիղծը մարդկանց մեջ: Ինչո՞ւ հանդգնում ես այդպես անել: Ինչո՞ւ իմներից ապաստան խնդրողներին դուրս ես վտարում տաճարից»: Բայց Արիստոդիկոսը չշփոթվեց դրանից և ասաց. «Ով արքա, դու ինքդ օգնում ես քեզ ապավինողներին, իսկ կյումեցիներին հրամայում ես հանձնե՞լ ապաստան խնդրողին»: Ասված նրան դարձյալ պատասխանեց այսպես. «Այո. այդպես եմ հրամայում. որպեսզի դուք ձեր արքայազնության պատճառով ավելի շուտ կործանվեք և հետո այսու պատգամատուն հարցումով չդիմեք ապաստան խնդրողին հանձնելու մասին»:

160. Երբ կյումեցիները լսեցին տրված այս պատասխանը, չկամենալով Պակտյուսին հանձնել և կործանվել, ոչ էլ նրան պահել իրենց մոտ և պաշտպանվելու ենթարկվել, նրան ուղարկեցին Միտիլենե: Իսկ միտիլենացիները, երբ Մազարեսը լուր ուղարկեց նրանց հանձնել Պակտյուսին, հոժարեցին հանձնել նրան ինչ-որ վարձատրության դիմաց. չեմ կարող ճիշտ ասել,

թե ինչպիսի՞, քանի որ (գործարքը) չկատարվեց: Քանզի երբ կյումեցիները տեղեկացան, թե ինչ են կատարելու միտիլենացիները, նավ ուղարկեցին Լեսբոս և Պակտյուսին բերեցին Քիոս: Այնտեղ քիոսցիները քաղաքի հովանավոր[115] Աթենասի տաճարից նրան բռնի դուրս բերելով, հանձնեցին (պարսիկներին), որպես վարձատրություն ստանալով Ատառնեոնը. այս Ատառնեոնը մի վայր է Մյուսիայում, Լեսբոսին հանդիպակաց: Ստանալով Պակտյուսին, պարսիկները նրան պահում էին բանտում, կամենալով նրան ցույց տալ Կյուրոսին: Սակայն երկար ժամանակ ոչ մի քիոսցի այս Ատառնեոնից ոչ մի հատիկ գարի չգնաբերեց ասածուն և գնաբերման ոչ մի բլիթ չթխեց անող բերքից. այդ երկրում անող ոչ մի բան չէր օգտագործվում արքայական նվիրատվությունների համար:

161. Այսպիսով քիոսցիները հանձնեցին Պակտյուսին: Այնուհետև Մազարեսը արշավեց նրանց դեմ, ովքեր մասնակցել էին Տաբալոսի պաշարմանը: Սկզբում նա գերեվարեց պրիենեցիներին, այնուհետև արշավեց Մեանդրոսի հովիտը, այն հանձնելով իր զորքերին՝ ավարառության: Նույնպես վարվեց Մագնեսիայի հետ: Այս ամենից անմիջապես հետո Մազարեսը հիվանդացավ ու մահացավ:

162. Նրա մահից հետո որպես զորավար նրան հաջորդեց Հարպագոսը, որը ևս ծագումով մեդացի էր. սրան էր, որ Ասայուագես արքան պիղծ սեղանով պատվեց, որը հետագայում օգնեց Կյուրոսին՝ թագավորությունը նվաճելու: Այնժամ այս մարդը Կյուրոսի կողմից զորապետ կարգվելով, երբ հասավ Հոնիա, գրավեց քաղաքները, հողաթմբեր կառուցելով: Նա (բնակիչներին) փակում էր պարիսպներից ներս, այնուհետև հողաթմբեր բարձրացնելով պարիսպների շուրջ, գրավում էր քաղաքը:

163. Առաջինը նա հարձակվեց Հոնիայի Փոկայա քաղաքի վրա: Այս Փոկայայի բնակիչները հելլեններից առաջիններն էին, որ ձեռնարկեցին հեռավոր նավագնացություններ. նրանք հայտնաբերեցին Ադրիական ծովը, Տյուրենիան[116], Իբերիան[117] և Տարտեսոսը[118]: Նրանք նավում էին ոչ թե կլոր (բեռնատար) նավերով, այլ հիսուն թիակի նավերով[119]: Հասնելով Տարտեսոս, նրանք բարեկամացան տարտեսոսցիների թագավորի հետ, որի անունն էր Արգանթոնիոս: Սա Տարտեսոսում տիրեց ութսուն տարի, իսկ ապրեց ընդամենը հարյուր քսան տարի[120]: Փոկայացիները այնքան սիրելի դարձան այս մարդուն, որ նա սկզբում առաջարկեց լքել Հոնիան և բնակվել իր երկրում, որտեղ իրենք կամենան: Իսկ հետո, երբ այդ բանում նա չկարողացավ համոզել փոկայացիներին, և լսելով նրանցից մեդացու ճզորացման մասին, նրանց փող տվեց՝ իրենց քաղաքը պարսպապատելու համար. և նա տվել է առանց խնայելու, քանի որ պարիսպների շրջագիծը քիչ

ասպարեզ (երկարություն) չուներ, իսկ այն ամբողջապես կառուցված է լավ հարմարեցված մեծ վեմերով:

164. Փոկայացիների պարիսպը այս եղանակով կառուցվեց: Իսկ Հարպագոսը իր զորքը շարժելով քաղաքի վրա, պաշարեց այն, բայց և պատվիրեց հաղորդել, որ ինքը կբավարարվի, եթե փոկայացիք քանդեն պարսպի միայն մեկ աշտարակը և նվիրագործեն միայն մեկ տուն: Իսկ փոկայացիները, տագնապելով սարկացվելու գաղափարից, ասացին, որ ուզում են մեկ օր ժամանակ՝ խորհրդակցելու համար, որից հետո կպատասխանեն. իսկ դառնց խորհրդակցելու ընթացքում Հարպագոսը պետք է պարիսպներից հեռացնի իր զորքերը: Իսկ Հարպագոսը պատասխանեց, որ թեև ինքը գիտե, թե նրանք ինչ են մտածում, այնուամենայնիվ հնարավորություն կտա նրանց խորհրդակցելու: Եվ մինչ Հարպագոսը իր զորքերը հեռացրեց պարիսպներից, փոկայացիներն այդ ընթացքում ծով իջեցրին իրենց հիսուն թիանի նավերը՝ դրանց վրա բառնալով իրենց որդիներին, կանանց և ամբողջ գույքը, ինչպես նաև տաճարների արձաններն ու այնտեղ եղած ընծաները, բացի պղնձե և քարե իրերից ու նկարներից: Իսկ մնացած ամեն ինչը բառնալուց հետո, իրենք ևս մտան նավերը և նավեցին դեպի Քիոս. և Փոկայան, որը լիված էր մարդկանցից, գրավեցին պարսիկները:

165. Քանի որ հիոսցիները չէին կամեցել Օյնուսսա կոչված կղզիները[121] վաճառել փոկայացիներին, վախենալով, որ այդ կղզիները կդառնան վաճառատեղի, իսկ իրենց կղզին այդ պատճառով կզրկվի շուկայից, ուստի և փոկայացիները մեկնեցին Կյուռնոս[122], որտեղ նրանք դեռևս դրանից քան տարի առաջ, աստվածային պատգամի համաձայն, կառուցել էին քաղաք՝ Ալալիա անունով: Իսկ այդ ժամանակ Արգանթոնիոսն արդեն մահացել էր: Կյուռնոս մեկնելիս նրանք նախ նավեցին Փոկայա և կոտորեցին այդ քաղաքում Հարպագոսի թողած պարսկական կայազորը: Այդ անելուց հետո նրանք մեծ անեծքներ տվեցին նրանց, ովքեր ետ կկանգնեին նավելուց. և բացի այդ, երկաթի մի կտոր սուզեցին ջուրը և երդվեցին, որ այլևս Փոկայա չեն վերադառնա, մինչև որ այդ երկաթի կտորը նորից մակերես չբարձրանա: Երբ նրանք մեկնում էին դեպի Կյուռնոս, քաղաքացիների կեսից ավելին համակվեց տանջալի կարոտով դեպի հայրենի քաղաքը և իրենց երկրի բարքերը. ուստի և նրանք երդմնազանց լինելով, վերադարձան Փոկայա: Իսկ նրանք, ովքեր հավատարիմ մնացին երդման, լքեցին Օյնուսսա կղզիները և հեռացան:

166. Կյուռնոս հասնելով, նրանք հինգ տարի համատեղ բնակվեցին տեղի նախկին բնակիչների հետ և սրբավայրեր հիմնեցին: Եվ քանի որ նրանք սկսեցին արշավել բոլոր հարևանների վրա և կողոպտել նրանց, ապա այուրրենները և կարթագենացիները դաշնակցելով, արշավեցին նրանց

դեմ, յուրաքանչյուրը վաթսուն նավով: Փոկայացիները ևս լցվելով իրենց նավերը, որոնք թվով նույնպես վաթսուն էին, հանդիպեցին թշնամուն՝ Սարդոնիոն կոչված ծովում: Նավամարտում փոկայացիները տարան ասես կադմեյան հաղթանակ[123], քանի որ կորցրին իրենց նավերից քառասունը. իսկ մնացած քսանը անպետքացան. քանզի շարդվել էին նրանց սրածայր քթերը[124]: Այդ բանից հետո նրանք վերադարձան Ալալիա, վերցրին իրենց որդիներին ու կանանց, և բառնալով իրենց նավերը ինչքան դրանք կարող էին տանել, մեկնեցին և նավեցին դեպի Հռեգիոն[125]:

167. Իսկ կործանված նավերի վրա եղած մարդկանց մեծ մասին կարթագենացիները և այուրրենները ձեռք գցեցին...[126] և նրանց դուրս բերելով, քարկոծեցին ու սպանեցին: Այնուհետև Ագիլլայի[127] բոլոր շնչավոր արարածները՝ ոչխար, թե լծկան, թե մարդ, այնտեղով անցնելիս, ուր ընկած էին քարերով սպանված փոկայացիների դիակները, դառնում էին խեղված, հաշմանդամ և անդամալույծ: Այնժամ ագիլլացիները դեսպաններ ուղարկեցին Դելփի՝ իրենց մեղքը քավելու համար: Իսկ Պյութիան նրանց պատվիրեց անել այն, ինչ ագիլլացիները մինչև այժմ էլ կատարում են: Նրանք մեծ ընծաներ են մատուցում (փոկայացիների) պատվին և մարզական խաղեր ու ձիարշավներ կազմակերպում: Ահա այսպիսի ճակատագիր ունեցան այդ փոկայացիները: Իսկ մյուսները, որոնք ապաստանել էին Հռեգիոնում, այնտեղից շարժվեցին և Օյնոարիա[128] երկրում տիրացան մի քաղաքի, որը այժմ կոչվում է Հյուելա: Նրանք այդ քաղաքը հիմնեցին այն պատճառով, որ Պոսիդոնիոնից մի մարդ բացատրեց իրենց, որ երբ Պյութիան պատգամ տվեց, նկատի ուներ Կյուռնոս հերոսին և ոչ թե կղզին:

168. Այսպիսին եղավ հոնիական փոկայացիների ճակատագիրը: Մոտավորապես այդպես արեցին նաև տեոսցիները: Այն բանից հետո, երբ Հարպագոսը հողաթմբեր (բարձրացնելով) գրավեց նրանց քաղաքի պարիսպները, նրանք բոլորը նավ մտնելով, հեռացան ու նավեցին դեպի Թրակիա և այնտեղ բնակեցրին Աբդերա քաղաքը, որը նրանցից առաջ հիմնել էր կլազոմենացի Տիմեսիոսը, բայց այդ բանից չէր օգտվել, քանի որ նրան վտարել էին թրակացիները, իսկ այժմ Աբդերոսում հաստատված տեոսցիները նրան որպես հերոս պատվում են:

169. Արդ, հոնիացիներից միայն սրանք էին, որ չհանդուրժելով սարկությունը, լքեցին իրենց հայրենիքը: Իսկ մյուս հոնիացիները, բացի միլետացիներից, կռվի ելան Հարպագոսի դեմ, ինչպես նաև հայրենիքից հեռացածները, և արիություն ցուցաբերելով, ամեն մեկը կռվեց իր երկրի համար, բայց պարտվելով և նվաճվելով, նրանք մնացին իրենց երկրներում և դարձան հարկատու: Իսկ միլետացիները, ինչպես արդեն ասել եմ, դաշինք կնքեցին իր իսկ կյուրոսի հետ և հանգիստ ապրեցին: Այսպիսով, Հո-

նիան երկրորդ անգամ հպատակ դարձավ: Երբ Հարպագոսը նվաճեց մայր ցամաքում բնակվող հոնիացիներին, կղզիաբնակ հոնիացիները վախեցած նույն բախտին ենթարկվելուց, ինքնակամ հանձնվեցին Կյուրոսին:

170. Հակառակ այս ծանր կացության, այսուհանդերձ հոնիացիները ի մի հավաքվեցին Պանիոնիոնում: Ինչպես լսել եմ, Բիասը, այր մի պրիենացի, հոնիացիներին հույժ օգտակար խորհուրդ է տվել, և եթե նրանք հետևեին այդ խորհրդին, ապա կլինեին երջանկագույնը հելլեններից: Նա խորհուրդ էր տվել հոնիացիներին համայն տարմիդով դուրս գալ և նավել դեպի Սարդո[129] և այնտեղ բոլոր հոնիացիների համար մեկ ընդհանուր քաղաք հիմնել, այդպիսով նրանք ազատ լինելով սարկուությունից, կբարգավաճեին և տեր դառնալով բոլոր կղզիներից խոշորագույնին, իրենք կիշխեին այլոց վրա: Իսկ եթե մնան Հոնիայում, նրանք, ասում է, ազատության հույս չեն ունենա: Այդպիսին էր եղել պրիենացի Բիասի խորհուրդը արդեն նվաճված հոնիացիներին: Նախքան Հոնիայի նվաճվելը, օգտակար խորհուրդ էր տվել նաև Թալեսը, այր մի միլետացի, որը ծագումով փյունիկեցի էր. նա առաջարկել էր հոնիացիներին ունենալ մեկ ընդհանուր խորհրդարան, որը պետք է գտնվեր Տեոսում, քանի որ Տեոսը Հոնիայի կենտրոնում է, իսկ այստեղ քաղաքները ոչ այլ ինչ են, քան քաղաքային համայնքներ: Ահա այսպիսի խորհուրդներ են տվել նրանք:

171. Հոնիան նվաճելուց հետո, Հարպագոսը արշավեց կարիացիների, կավնիացիների և լյուկիացիների վրա, իր հետ վերցնելով նաև հոնիացիներին և էոլիացիներին: Կարիացիները մայր ցամաք են եկել կղզիներից: Հնում նրանք հպատակ էին Մինոսին[130], կոչվում էին լելեգներ և բնակվում էին կղզիներում: Նրանք, ինչքան ես կարող էի իմանալ իմ լսածներից, ոչ մի հարկ չէին վճարում Մինոսին, այլ միայն պարտավոր էին (անձնակազմ) տրամադրել նրա նավերին: Քանի որ Մինոսը շատ երկրներ նվաճեց և հաջող պատերազմներ վարեց, ապա կարիական ազգը ևս այդ ժամանակ բոլոր ազգերից առավել նշանակալից դարձավ: Կարիացիները երեք գյուտ կատարեցին, որոնք (հետագայում) օգտագործեցին հելլենները: Կարիացիներն առաջինն էին, որ իրենց սպասավորների վրա ցցանք տարացրին և վախճանների վրա նշաններ պատկերեցին, և առաջինն էին, որ վախճաններին բռնակներ հարմարեցրին[131]: Մինչ այդ բոլորը սովոր էին վախճաններն օգտագործել առանց բռնակի, այլ կաշվե փոկերի օգնությամբ կախում և տարացնում էին պարանոցին և ձախ ուսին[132]: Այնուհետև, շատ ժամանակ անց, դորիացիները և հոնիացիները կարիացիներին տեղահանեցին կղզիներից և այդպիսով կարիացիները եկան մայր ցամաք: Այսպես են կրետացիները պատմում կարիացիների մասին: Սակայն կարիացիներն իրենք հավատացյալ չեն նրանց (պատմածին), այլ իրենց համարում են մայր ցամաքի

տեղաբնիկներ և պնդում, որ իրենք միշտ էլ նույն անունն են կրել, ինչ և այժմ: Նրանք մատնացույց են անում Մյուլասայում Կարյան Զևսի ենամենի սրբավայրը, որը պատկանում է մյուսիացիներին ու լյուդիացիներին, որոնք եղբայրակից են իրենց. քանզի, ասում են նրանք, Լյուդոսը և Մյուսոսը եղել են Կարոսի եղբայրները: Ահա լյուդիացիներին և մյուսիացիներին էլ պատկանում էր այդ (սրբավայրը), այլ ոչ թե որևէ մեկ այլ ազգի, բեկուզ և կարիացիներին համալեզու:

172. Կավնիացիները, իմ կարծիքով, տեղաբնիկներ են, թեև իրենք պնդում են, թե Կրետեից են եկել: Նրա՞նց լեզուն է կարիականին նման, թե՞ կարիականը նրանց լեզվին, ես չեմ կարող հաստատ որոշել. իսկ իրենց սովորություններով մեծապես տարբերվում են ոչ միայն կարիացիներից, այլև մյուս մարդկանցից: Նրանց համար մեծագույն հաճույք է, երբ հավաքվում են բազմախումբ խնջույքի, որպես հասակակիցներ և բարեկամներ, այրեր, կանայք և երեխաներ: Նրանք իրենց մոտ հաստատեցին նաև օտար սրբավայրեր, բայց հետագայում փոխեցին իրենց միտքը և որոշեցին պաշտել միայն իրենց հայրենի աստվածներին: Այնժամ բոլոր զենք կրելու ընդունակ կավնիացիները զենք կապեցին և նիզակներով օդը հարվածելով, գնացին մինչև Կալյունդայի սահմանները, միաժամանակ ասելով, որ վտարում են օտար աստվածներին:

173. Ահա այսպիսի բարքեր ունեն նրանք: Իսկ լյուկիացիները հնում եկել են Կրետեից. քանզի հնում ամբողջ Կրետեում ապրում էին բարբարոսներ: Քանի որ Կրետեում վեհ ծագեց Եվրոպեի որդիներ Սարպեդոնի և Մինոսի միջև իշխանության համար, ապա Մինոսը, կռվում հաղթելով, դուրս քշեց Սարպեդոնին և նրա կողմնակիցներին: Վտարվածները հասան Ասիա, Միլյուաս երկիր: Այն երկիրը, որն այժմ զբաղեցնում են լյուկիացիները, հնում կոչվել է Միլյուաս, իսկ միլյուացիներն այնժամ կոչվում էին սոլյումներ: Քանի դեռ նրանց տիրակալն էր Սարպեդոնը, ապա նրանք կոչվում էին այն անունով, ինչ այժմ հարևանները կոչում են լյուկիացիներին՝ տերմիլներ: Իսկ երբ տերմիլների երկիր, Սարպեդոնի մոտ, ժամանեց Աթենքից Պանդիոնի որդի Լյուկոսը, որին նույնպես վտարել էր նրա եղբայր էգևսը, անա և ժամանակի ընթացքում Լյուկոսի անունից նրանք կոչվեցին լյուկիացիներ: Նրանց սովորույթները մասամբ կրետական են, մասամբ՝ կարիական: Բայց ունեն մի հատուկ սովորույթ, որը ուրիշ մարդկանց մոտ որևէ տեղ չես հանդիպի: Նրանք իրենց կոչում են մոր անունով, և ոչ թե հոր: Իսկ եթե որևէ մեկը հարցնի (լյուկիացուն), թե ումի՞ց է սերում նա, ապա նա ասելիս է մոր անունը և թվում է իր մոր մայրերին: Եվ եթե (լիիրավ) քաղաքացի կինը կենակցի սարկի հետ, ապա նրա որդիները կհամարվեն ազատածիններ. իսկ եթե (լիիրավ) քաղաքացի այրը, բեկուզ և առաջին

(քաղաքացին), կին վերցնի օտարերկրացուն կամ հարենին, ապա նրա որդիները անպատիվ կհամարվեն:

174. Այսպես, կարիացիները առանց որևէ փայլուն գործ կատարելու, սարկացվեցին Հարպագոսի կողմից. ո՛չ կարիացիները, ո՛չ էլ այդ երկրում բնակվող հելլենները որևէ սխրանք չկատարեցին: Այլոց թվում այստեղ բնակվում են նաև Լակեդեմոնիայից գաղթած կնիդոսցիներ: Նրանց երկիրը, որը կոչվում է Տրիոպիոն, ձգվում է մինչև ծով, սկսած Բյուբասսա քաղաքի թերակղզուց: Ամբողջ Կնիդիան, բացի մի փոքր վայրից, շրջափակված է ծովով. հյուսիսից այն փակված է Կերամիկոս ծոցով, հարավից՝ Սյումեի և Հռոդոսի ծովով: Քանի որ այս տարածությունը փոքր էր, ընդամենը հինգ ասպարեզ[133], երբ Հարպագոսը նվաճում էր Հոնիան, կնիդոսցիները խրամատ փորեցին (այդ պարանոցում), իրենց երկիրը կղզու վերածելու մտադրությամբ: Իրենց ամբողջ երկիրը այդ էր. քանզի կնիդոսյան երկիրը վերջանում է այդ պարանոցով, որտեղ խրամատ էին փորում: Եվ անա մինչ մեծ թվով կնիդոսցիներ էին աշխատում այնտեղ, ժայռերը չարդելիս աշխատողներն սկսեցին բնականից ավելի վերբեր ստանալ մարմնի տարբեր մասերում, հատկապես աչքերի մոտ: Այդ նրանց թվաց առավելապես ատվածային միջամտություն: Ուստի և նրանք դեսպաններ ուղարկեցին Դելֆի հարցնելու, թե ի՞նչն է նրանց խանգարում: Իսկ Պյութիան, ինչպես իրենք կնիդոսցիներն են պատմում, երեք տաղի չափով այսպիսի պատգամ տվեց.

«Մի փոքր խրամատ, մի պատք պարանոց.
Չևոր տար կամեցավ, ասեղծեց կղզիներ»:

Կնիդոսցիները Պյութիայից այս պատգամը ստանալուց հետո, դադարեցին փորելուց և, երբ Հարպագոսը զորքով մոտեցավ, առանց մարտի հանձնվեցին:

175. Միջերկրյա՛ծում, Հալիկառնասոսից այն կողմ, ապրում էին նաև պեդասացիները: Երբ սրանց կամ սրանց հարևաններին որևէ ձախողություն էր պատահում, Աթենասի քրմուհու դեմքին երկար մորուք էր աճում: Այդ նրանց մոտ երեք անգամ պատահեց: Սրանք Կարիայում ապրող միակ այրերն էին, որոնք երկար դիմադրեցին Հարպագոսին և նրան շատ անհանգստություն պատճառեցին. նրանք պարսպով ամրացրին մի բլուր, որը կոչվում էր Լիգա:

176. Ի վերջո, սակայն, պեդասացիները նվաճվեցին. իսկ լյուկիացիները, երբ Հարպագոսն իր զորքով արշավեց Քսանթոսի դաշտ, դուրս եկան նրան դիմադրելու և, փոքրաթիվ լինելով հանդերձ, կռվեցին մեծաթիվ զորքի դեմ ու սխրանքներ գործեցին. բայց պարտվելով ու փախչելով քաղաք, նրանք միջնաբերդում հավաքեցին իրենց կանանց և երեխաներին և գույքը և ծառաներին, ու հրդեհելով, ամբողջ միջնաբերդն այրեցին: Այդ անելուց հետո նրանք սոսկալի երդումներ տվեցին իրար և, արտելք կատարելով, բոլոր քսանթոսցիները կռվելով մեռան: Այժմ Քսանթոսի բնակիչ համարվող լյուկիացիների մեծ մասը, բացի ութսուն ընտանիքից, եկվորներ են. իսկ այդ ութսուն ընտանիքը այն ժամանակ պատահմամբ երկրից դուրս էին գտնվում, ուստի և խուսափեցին նահատակվելուց: Հարպագոսն այսպես գրավեց Քսանթոսը. նույն եղանակով գրավեց նաև Կավնոսը, քանի որ կավնոսցիները մեծ մասամբ հետևեցին լյուկիացիների օրինակին:

177. Մինչ Հարպագոսը ավերում էր առափնյա Ասիան, ինքը՝ Կյուրոսը վերին (Ասիայում) բոլոր ազգերին հպատակեցրեց, չշրջանցելով որևէ մեկին: Նրա այս արշավանքներից շատերի մասին ես չեմ պատմի, բայց միայն նրանց մասին, որոնք նրան առավել մեծ հոգս պատճառեցին և հիշարժան են:

178. Ամբողջ (ասիական) մայր ցամաքը նվաճելուց հետո, Կյուրոսը հարձակվեց ասորեստանցիների վրա: Ասորեստանում կան բազում այլ քաղաքներ ևս, բայց ամենից անվանին և ամենից հզորը, որտեղ Նինոսի[134] ավերվելուց հետո արքունիքն էր հաստատվել, Բաբելոնն էր, որն այսպիսի քաղաք էր: Այն ընկած է ընդարձակ դաշտում, քառակուսի է և նրա յուրաքանչյուր կողմն ունի հարյուր քսան ասպարեզ երկարություն. այսպիսով, քաղաքի ամբողջ շրջագիծը կազմում է չորս հարյուր ութսուն ասպարեզ[135]: Այսպիսին է եղել Բաբելոն քաղաքի մեծությունը. այն զարդարված է եղել այնպես, ինչպես ոչ մեկ ուրիշ մեզ հայտնի քաղաք: Նախ այն շրջափակված է խորունկ, լայն ու ջրով լցված փոսով, որից հետո կա պարիսպ, որի լայնքը հիսուն թագավորական կանգուն է, իսկ բարձրությունը՝ երկու հարյուր կանգուն. թագավորական կանգունը երեք մատնաչափ ավելի երկար է սովորականից:

179. Այժմ ես դեռ կպատմեմ, թե փոսից հանված հողը որտե՞ղ օգտագործվեց և պարիսպը ինչպե՞ս կառուցվեց: Փոսը փորելու հետ միաժամանակ, փորվածքից դուրս հանված հողից աղյուս էին շինում: Երբ նրանք բավական աղյուս պատրաստեցին՝ դրանք թրծեցին հնոցների մեջ: Այնուհետև շաղախի փոխարեն տաք կուպր օգտագործելով և յուրաքանչյուր երեսուն շարք աղյուսի միջև հյուսված եղեգներ տեղավորելով, նախ փոսի եզրերը ամրացրին, այնուհետև նույն ձևով նաև բուն պարիսպը: Պարսպի վրա՝ եզրերին կառուցեցին հանդիպակաց միահարկ տներ, իսկ տների միջև քառածի անցնելու տարածություն թողեցին: Շրջապարիսպն ունի հարյուր դարբաս, բոլորը պղնձե, շրջանակը և բարավորը նմանապես: Կա ևս մեկ այլ քաղաք, Բաբելոնից ութ օրվա ճանապարհի հեռավորության վրա, որը կոչ-

վում է Իս: Այնտեղ հոսում է ոչ մեծ գետ, որը նույնպես կոչվում է Իս. այն թափվում է Եփրատ գետի հունը: Այս Իս գետը չրի հետ բերում է նաև մեծ քանակությամբ կուպրի կտորներ. այստեղից էլ կուպրը բերվեց Բաբելոնի պարսպի համար[136]:

180. Ահա այս եղանակով կառուցվեց Բաբելոնի պարիսպը. իսկ քաղաքը բաժանված է երկու մասի, քանզի նրա միջով հոսում է գետ, որի անունն է Եփրատ[137]: Այն հոսում է Արմենիայից, մեծ է, խոր և արագաթոս, և թափվում է Կարմիր ծով[138]: Պարսպի երկու ծայրերը հասնում են մինչև գետը. այստեղ գետափից բեխվելով, երկու կողմերից ձգվում է թրծած աղյուսներով կառուցված պարիսպը: Քաղաքը զարդարված է եռահարկ և քառահարկ տներով ու կտրված է ուղիղ փողոցներով, որոնք մասամբ ուղղահայաց են գետին, մասամբ նրան զուգահեռ: Գետին ուղղահայաց ամեն փողոցի վերջում, գետի մոտ, պարիսպն ուներ փոքր դարբասներ, թվով այնքան, ինչքան փողոցներ կային: Այդ դարբասները ևս պղնձից էին և տանում էին դեպի գետը:

181. Այս պարիսպը (արտաքին) զրահ է. մի երկրորդ պարիսպ ևս կա ներսից, մյուս պարսպից ոչ շատ թույլ, բայց առավել նեղ: Քաղաքի երկու մասերից մեկի մեջտեղում կանգնած է թագավորական պալատը՝ շրջապատված բարձր և հզոր պարսպով, իսկ մյուսի (մեջտեղում)՝ Զևս Բելի[139] պղնձադուռ սրբավայրը, որն իմ ժամանակ ևս կանգուն էր. այն քառակուսի է, յուրաքանչյուր կողմը երկու ասպարեզ երկարությամբ: Սրբավայրի մեջտեղում կառուցված է հզոր աշտարակ, մեկ ասպարեզ երկարությամբ ու լայնությամբ. այս աշտարակի վրա բարձրանում է մեկ ուրիշը, սրա վրա մեկ ուրիշը, մինչև ութ աշտարակ: Այնտեղ բարձրանալու համար դրսից բոլոր աշտարակների շուրջ ասպիճաններ են կառուցված: Ասպիճանների միջին մասում հանգստատեղ կա և հանգստանալու բազմոցներ, որտեղ նստելով, բարձրացողները հանգստանում են: Վերջին աշտարակի վրա կա մեծ տաճար, իսկ տաճարում՝ մեծ և լավ հարդարված մահիճ, որի մոտ գտնվում է նաև ոսկե սեղան: Այստեղ ոչ մի արձան չկա և ոչ մի մարդ այստեղ չի գիշերում, բացի տեղացի մի կնոջից, որին, ինչպես պատմում են քաղդեացիները[140], այդ աստծու քրմերը, ատված (իր համար) ընտրում է բոլոր կանանց միջից:

182. Այս նույն քրմերն ասում են, իսկ ես դրան չեմ հավատում, թե ատված ինքը նստախում է տաճար և հանգստանում մահճի վրա. ինչպես պատմում են եգիպտացիները, նույնը կատարվում է նաև Եգիպտոսի Թեբեում: Այնտեղ ևս Թեբեյան Զևսի տաճարում մի կին է քնում: Այս երկու կանայք էլ, ինչպես պատմում են, ոչ մի տղամարդու հետ հարաբերություն չեն ունենում: Նույնպես և Լյուկիայի Պատարա քաղաքում աստծու գուշակությունին (քնում է), ամեն անգամ, երբ (ատված) հայտնվում է. քանզի միշտ չէ, որ այնտեղ պատգամներ են տրվում, բայց երբ (ատված) հայտնվում է, (քրմուհին) գիշերները փակվում է տաճարում:

183. Բաբելոնի սրբավայրում կա նաև ներքևի մյուս տաճարը, որտեղ գտնվում է Զևսի ոսկե խոշոր արձանը, որի մոտ կա ոսկե մեծ սեղան, պատվանդանը և գահը նույնպես ոսկուց: Ինչպես պատմում են քաղդեացիները, այդ ամենը պատրաստված է ութ հարյուր տաղանդ ոսկուց: Տաճարից դուրս կա ոսկե զոհասեղան. կա նաև մեկ այլ մեծ զոհասեղան, որի վրա զոհում են խոշոր անասուններ. քանզի ոսկե զոհասեղանի վրա կարող են զոհաբերել միայն կաթնասունների. իսկ առավել մեծ զոհասեղանի վրա քաղդեացիները ամեն տարի այդ աստծու տոնին և նրա պատվին զոհ են մատուցում հազար տաղանդ խունկ: Այդ ժամանակ[141] այդ սրբավայրում եղել է նաև աստծու ոսկե արձանը, ամբողջապես ոսկուց, տասներկու կանգուն բարձրությամբ: Ես այն չեմ տեսել, բայց ասում եմ այն, ինչ պատմել են քաղդեացիները: Հյուստասպեսի որդի Դարեհը ցանկացավ տանել այդ արձանը, բայց չհամարձակվեց. իսկ Դարեհի որդի Քսերքսեսը տարավ այն, և քրմին, որն իրեն արգելում էր արձանը տեղից շարժել, սպանեց: Այսպես է զարդարված այդ տաճարը, որտեղ կան նաև առանձին մարդկանց կողմից նվիրաբերված բազում իրեր:

184. Այս Բաբելոնում եղել են նաև այլ թագավորներ, նրանց մասին ես կխոսեմ Ասորեստանի մասին իմ պատմության մեջ[142], որոնք ևս բարեկարգեցին պարիսպները և սրբավայրերը: Նրանց թվում եղել են նաև երկու կանայք: Նրանցից առաջինը, որի անունն էր Սեմիրամիս[143], իշխել է երկրորդից հինգ սերունդ առաջ: Նա հարթավայրում պատնեշներ կառուցեց, որոնք տեսարժան էին. իսկ նախկինում գետը ողողում էր հարթավայրը և ամբողջապես ճահճացնում:

185. Երկրորդ թագուհին, որի անունն էր Նիտոկրիս[144], առավել իմաստուն էր, քան առաջին թագուհին. նա թողել է այնպիսի հուշարձաններ, որոնց մասին ես կպատմեմ: Բացի այդ, տեսնելով, որ մեղացիների տերությունը հզորացել է և դեռ չի հանգստանում, այլ ուրիշ քաղաքների թվում նվաճել է նաև Նինոսը[145], նա ձեռք առավ բոլոր հնարավոր նախազգուշական միջոցները: Նախ փոխեց Եփրատ գետի (հունը), որը նախապես հոսում էր ուղիղ քաղաքի միջով: Նա ջրանցքներ փորեց քաղաքից վերև և գետը այնքան գաղարուն դարձրեց, որ այն արդեն երեք անգամ անցնում էր Ասորեստանի գյուղերից մեկի մոտով. այն գյուղը, որին Եփրատը մոտենում էր (երեք անգամ), կոչվում է Արդերիկկա: Այժմ երբ ծովից ուղևորվում են Բաբելոն, Եփրատ գետն ի վեր նավելով, ապա նրանք երեք անգամ անցնում են այդ նույն գյուղի մոտով, և այն էլ երեք օրում: Այդ գործը

այդպիսին էր: Այնուհետև, գետի երկու ափերին նա հողաբուրմ բարձրացրեց, իր մեծությամբ ու բարձրությամբ հիացնելի: Հետայնու, Բաբելոնից շատ վերև նա լճի համար ջրամբար փորեց, գետից փոքր-ինչ այն կողմ, այնպիսի խորությամբ, մինչև շուր դուրս եկավ. իսկ լճի շրջագծի լայնությունը հասնում էր չորս հարյուր ֆութ ասպարեզի: Այդ փորվածքից դուրս բերված հողը նա օգտագործեց գետափին պատնեշ բարձրացնելու համար: Երբ փորելը վերջացել էր, նա քարե բերեց և շուրջանակի պատեց ամբողջ լիճը: Այս երկու աշխատանքները կատարելով, նա գետը դարձրեց գալարուն և ամբողջ փորված վայրը՝ ճահիճ: Այս ամենով գետի հոսանքը կդանդաղեր բազում ոլորանների պատճառով, գետային ճանապարհը դեպի Բաբելոն կդառնար գալարապտույտ, իսկ ճանապարհորդները, նավարկումից հետո, ստիպված կլինեին ցամաքով լիճը երկար շրջանցել: Այս աշխատանքները կատարվեցին երկրի այն հատվածում, որտեղ անցումներ կային և ճանապարհը մեդացիների երկրից ամենակարճն էր: Դրանով թագուհին կամենում էր խոչընդոտել մեդացիների շփումը իր ժողովրդի հետ, որպեսզի չիմանան իր երկրի իրավիճակի մասին:

186. Այս ամենը (թագուհին) կատարեց, օգտվելով (գետի) խորությունից: Նա այդ ամենից օգտվեց նաև մեկ այլ կողմնակի գործ կատարելու համար: Քաղաքը բաժանված էր երկու մասի՝ նրա միջով հոսող գետի պատճառով: Նախկին թագավորների ժամանակ (քաղաքի) մի մասից մյուսը գնալու համար ստիպված էին նավակով անցնել մյուս կողմը. իսկ դա, ինձ թվում է, անախորժ էր: Թագուհին հոգաց նաև այդ մասին: Երբ արդեն լճի ջրամբարը փորված էր, նա դրանից բացի իր գործերի մեկ այլ հուշարձան ևս թողեց: Նա շատ երկար քարե հատեց. և երբ քարերը պատրաստ էին ու վայրը փորված էր, գետի ամբողջ հոսանքը դարձրեց այնտեղ: Մինչ այդ (ջրամբարը) լցվում էր, գետի նախկին հունը ցամաքում էր: Այնժամ նա քաղաքի մեջ գետի ափերը, ինչպես նաև դռնակներից դեպի գետը իջնելու տեղերը պատեց բրծած աղյուսներով, հույն ձևով, ինչ և պարիսպը: Այնուհետև քաղաքի գրեթե մեջտեղում այդ հատած քարերից կամուրջ կառուցեց, քարերն ամրացնելով երկաթով և կապարով: Ցերեկները դրա վրա քառակուսի տախտակներ էր գցում, որոնց վրայով անցնում էին բաբելոնացիները. իսկ գիշերները վերցնում էր այդ տախտակները, որպեսզի մարդիկ գիշերները չթափառեն և իրար չկողոպտեն: Երբ արդեն փորված լիճը լցվել էր և կամուրջը կառուցվել, (Նիտոկրիսը) Եփրատ գետը լճից դարձյալ փոխադրեց նախկին հունը: Այդպիսով, փորված տեղը ճահիճ դարձավ, ինչպես նա մտածել էր, իսկ քաղաքացիների համար կամուրջ էր կառուցվել:

187. Հենց այս թագուհին էլ մի խորամանկ խաբեություն կատարեց: Քաղաքի ամենաբանուկ դարբասից վերև նա իր համար պատրաստեց դամ-

բարան, որի վրա թողեց հետևյալ մակագրությունը. «Եթե ինձանից հետո Բաբելոնի թագավորներից որևէ մեկը դրամի կարիք ունենա այս դամբարանը և վերցնի ինչքան դրամ ցանկանա. բայց առանց կարիքի ոչ մի դեպքում չբացի. քանզի (նրա համար) հույժ վատ կլինի»: Այս դամբարանը անշարժ մնաց մինչև թագավորությունը Դարեհին անցնելը: Դարեհին տարօրինակ թվաց, թե ինչո՞ւ ինքը չի օգտվում այդ դարբասներից, երբ այնտեղ այդ դրամները կան և ինքը չի վերցնում դրանք, քանի որ առանձագրությունը ևս թելադրում է այդպես անել: (Դարեհը) չէր օգտվել այդ դարբասից այն պատճառով, որ դրանով անցնելիս իր գլխի վերև մեռյալ կլիներ: Բաց անելով դամբարանը, նա դրամ չգտավ, այլ միայն մեռյալին և այսպիսի արձանագրություն. «Եթե դու դրամի հանդեպ ագահ ու շահամոլ չլինեիր, չէիր բացի մեռյալների դամբարանները»: Պատմում են, թե այսպիսին է եղել այդ թագուհին:

188. Կյուրոսը արշավեց այս կնոջ որդու դեմ, որն իր հոր նման կոչվում էր Լաբյունետոս[146] և դարձել էր Ասորեստանի թագավոր: Մեծ արքան արշավանքի գնալիս իր հետ վերցնում է տանը լավ պատրաստված պարեն և անասուններ, ինչպես նաև ջուր՝ Սուսայի մոտով հոսող Քոասպես գետից. թագավորը միայն այս, և ոչ մեկ այլ գետի ջուրն է խմում: Քոասպեսի ջրից եռացնում են և արծաթե ամանների մեջ լցնելով, բառնում են ջորիներ լծած մեծ թվով քառանիվ սայլերի վրա, որոնք հետևում են արքային, որտեղ էլ որ նա արշավի:

189. Բաբելոն արշավելու ճանապարհին Կյուրոսը հասավ Գյունդես գետը[147], որը բխում է Մատիենական լեռներից, հոսում է Դարդանների երկրի միջով ու թափվում մեկ այլ՝ Տիգրիս գետը: Սա էլ, հոսելով Օպիս քաղաքի մոտով, թափվում է Կարմիր ծով: Երբ Կյուրոսը փորձեց անցնել այս Գյունդես գետը, որը նավարկելի էր, այնժամ իր սրբազան սպիտակ ձիերից մեկն աշխուժանալով մտավ ջուրը և փորձեց անցնել գետը, բայց գետը ջրասույզ արեց նրան և հշեց տարավ: Այնժամ Կյուրոսը խիստ զայրացավ գետի այդ հանդգնության վրա և սպառնաց այդ գետը դարձնել այնքան անզոր, որ այսուհետև նույնիսկ կանայք կարողանան հեշտությամբ այն անցնել, առանց ծնկները թրջելու: Այս սպառնալիքից հետո նա հետաձգեց իր արշավանքը Բաբելոնի վրա և իր զորքը երկու մասի բաժանելով, ուղիղ գծերով Գյունդես գետի յուրաքանչյուր ափին բոլոր ուղղություններով ջրանցքներ ճշեց ու զորքերը դրանց երկարությամբ դասավորելով, հրամայեց փորել: Քանի որ մեծ բազմություն էր աշխատում, ապա գործը արագ էր առաջ գնում: Այսուհանդերձ, ամբողջ ամառը նա այդ գործի վրա ծախսեց:

190. Այսպես Կյուրոսը պատժեց Գյունդես գետը, այն բաժանելով երեք հարյուր վաթսուն ջրանցքների. և երբ երկրորդ գարունը բացվեց, նա

շարժվեց Բաբելոնի վրա: Բաբելոնացիք դուրս եկան զորքով և սպասեցին նրան: Երբ նա մոտեցավ քաղաքին, բաբելոնացիք կռվի նետվեցին, բայց պարտվելով, փակվեցին քաղաքում: Նրանք կանխապես իմանալով, որ Կյուրոսը չի հանգստանալու և տեսնելով, որ նա բոլոր ազգերին նույն ձևով է նվաճում, նախապես երկար տարիների համար պարեն էին ամբարել: Ուստի և նրանք չէին անհանգստանում քաղաքի պաշարումից, իսկ Կյուրոսը զժվարանում էր, քանի որ երկար ժամանակ էր անցել, բայց (պաշարման) գործը առաջ չէր գնում:

191. Այդ դժվարության մեջ չգիտես մեկ ուրի՞շը իրեն խորհուրդ տվեց, թե՞ ինքը՝ Կյուրոսը իմացավ իր անելիքը, ի վերջո նա հետևյալն արեց: Իր զորքի մի մասը տեղադրելով այնտեղ, ուր գետը քաղաք է մտնում, իսկ մյուս մասն այնտեղ, ուր գետը քաղաքից դուրս է գալիս, բոլորին պատվիրեց, որ երբ տեսնեն, թե հոսքը դառնում է անցանելի, հունով մտնեն քաղաք: Այսպես նրանց դասավորելուց և այս հրամանը տալուց հետո, նա իր զորքի անմարտունակ մասի հետ հեռացավ: Հասնելով լճի մոտ, Կյուրոսը լճի և գետի հետ վարվեց այնպես, ինչպես Բաբելոնի բաղուքին: Ջրանցքի միջոցով գետը շրջեց դեպի հանհացած լիքը, որով գետը նահանջեց և նախկին հունը դարձավ անցանելի: Երբ այդ կատարվեց, գետի մոտ դասավորված պարսիկները Եփրատ գետի նահանջած հունով, քանի որ չուրը հասնում էր մարդկանց ծնկներին, մտան Բաբելոն: Արդ, եթե բաբելոնացիները նախօրոք իմանային Կյուրոսի մտադրությունը կամ նկատեին նրա արարքը, ապա նրանք չէին թողնի պարսիկներին ներխուժել քաղաք և մեծ վնաս կպատճառեին: Նրանք կարող էին փակել դեպի գետը տանող բոլոր դարբասները և իրենք բարձրանալով գետի երկու ափին ձգված պարիսպների վրա, պարսիկներին կփակեին ինչպես թակարդում: Բայց այժմ պարսիկները հարձակվել էին անակնկալ: Եվ քանի որ քաղաքը շատ խոշոր էր, ապա, ինչպես պատմում են նրա բնակիչները, մինչ քաղաքի ծայրը գրավված էր, Բաբելոնի կենտրոնում բնակիչները չէին իմանում այդ մասին: Այդ ժամանակ նրանք պատահաբար տոնախմբության առթիվ պարում էին ու զվարճանում, մինչև որ կատարվածի մասին հասատա իմացան:

192. Բաբելոնն այդ ժամանակ առաջին անգամ այսպես նվաճվեց: Իսկ թե ինչքան է Բաբելոնի հարստությունը, կարող եմ ցույց տալ բազում օրինակներով. բայց կպատմեմ միայն հետևյալը: Մեծ արքային հպատակ ամբողջ երկիրը, բացի հարկերից, պարտավոր է պահել նաև իրենց՝ արքային և նրա զորքերին: Տարվա տասներկու ամիսներից չորս ամիսը նրան ապահովում է Բաբելոնի երկիրը, իսկ մնացած ութ ամիսը՝ ամբողջ մնացած Ասիան: Այսպիսով, Ասորեստանի հարստությունը հավասար է ամբողջ մնացած Ասիայի հարստությանը մեկ երրորդին: Այս երկրի իշխանությունը, որը

պարսիկները անվանում են սատրապություն, բոլոր մյուս իշխանություններից առավել հզոր է: Այստեղից Տրիտանդեքմեսը, Արտաբազոսի որդին, որին արքան հանձնել էր այս երկրի կառավարումը, օրական ստանում էր մեկ լիտր արտաքին արծաթ: Արտաբեն պարսկական չափ է, որը հավասար է ատտիկյան մեկ մեդիմնոսի և երեք քոյնիկսի[148]: (Տրիտանդեքմեսը) բացի ռազմական ձիերից, ուներ էգերի վրա բարձրացող ութ հարյուր հովատակ, իսկ մատակները՝ տասնվեց հազար էին. քանզի յուրաքանչյուր հովատակ բարձրանում էր քսան մատակի: Նա պահում էր նաև այնքան շատ հնդկական շներ, որ դաշտավայրում գտնվող չորս խոշոր գյուղեր պարտավոր էին այդ շներին ուտելիք հայթայթել, որի համար էլ ազատված էին այլ հարկերից: Անա այսպես հարուստ էր Բաբելոնի կառավարիչը:

193. Ասորեստանցիների երկրում անձրև քիչ է տեղում, բայց այդ էլ բավական է սնելու հացահատիկի արմատը: Այստանդերձ ցանքերը ոռոգվում են գետից և հասունանում է հացահատիկը: Այստեղ գետը չի բարձրանում ու ողողում դաշտերը, ինչպես Եգիպտոսում, այլ ոռոգումը կատարվում է ձեռքով և ջրհան կռունկների միջոցով: Բաբելոնյան ամբողջ երկիրը, Եգիպտոսի նման, կտրված է ջրանցքներով: Ջրանցքներից ամենախոշորը նավարկելի է և ոտղված է դեպի ձմեռային արևը[149]. այն հոսում է Եփրատից դեպի մյուս՝ Տիգրիս գետը, որի վրա կառուցված էր Նինոս քաղաքը: Մեզ հայտնի բոլոր երկրներից այս մեկն ամենաբարեբերն է Դեմետրայի[150] պտղի համար: Իսկ ծառեր այստեղ չեն աճում, ո՛չ թզենին, ո՛չ որթատունկը, ո՛չ ձիթենին: Իսկ Դեմետրայի պտուղն այնքան առատ է աճում, որ բերքը լինում է երկու հարյուրապատիկ, նույնիսկ երեք հարյուրապատիկ: Ցորենի և գարու տերևները ունենում են լրիվ չորս մատ լայնություն: Իսկ կորեկի և քունջութի մասին թեև գիտեմ, որ ծառի բարձրության են հասնում, ես չեմ նիշատակի. քանզի ես գիտեմ, որ բաբելոնյան երկրի բերքավության մասին իմ այս պատմածներն անհավատալի կթվան նրանց, ովքեր չեն եղել այդ երկրում: Նրանք ձիթայուղ չեն օգտագործում, այլ միայն քունջութի յուղ: Հարթավայրում ամենուր արմավենի է աճում, մեծ մասամբ մրգատու: Արմավից նրանք հաց են պատրաստում, գինի և մեղր: Նրանք արմավենին մշակում են նույն եղանակով, ինչ հելլեները՝ թզենին: Հելլենների կողմից արական կոչված արմավենիների պտուղները բաբելոնացիները կապում են պտղատու արմավենիներին, որպեսզի արական պտուղը, թափանցելով արմավի մեջ, հասունացնի այն և թույլ չտա, որ այն (անժամանակ) ընկնի. քանզի արական արմավենիների, ինչպես և ձմեռային թզենիների վրա կան արական պտուղներ:

194. Այժմ ես կպատմեմ այն մասին, ինչը ինձ այդ քաղաքից հետո թվում է ամենազարմանալին: Նավերը, որոնցով (ասորեստանցիները) նա-

վում են գետն ի վար՝ դեպի Բաբելոն, կլոր են և ամբողջովին կաշեպատ: Արմենիայում, որը գտնվում է Ասորեստանից վերև, նրանք կառում են ուռիներ, (որոնցով) պատրաստում են նավի կողերը և դրանք պատում կաշվե ծածկով, նավի հատակի նման: Նրանք ոչ նավի եռանասան են լայնացնում, ոչ էլ նրա առաջամասը նեղացնում, այլ տալիս են դրան վահանի նման կլոր ձև: Ամբողջ նավը լցնում են ծղոտով, բեռնում այն և թողնում հոսանքն ի վար: Նրանք մեծ մասամբ փոխադրում են գինի կարմիր կարասներով[151]: Նավերը վարում են երկու լայնաբերան թիակներով երկու կանգնած մարդ. նրանցից մեկը թիակը քաշում է դեպի իրեն, մյուսը՝ հրում իրենից: Այդ նավերը պատրաստվում են և՛ շատ մեծ, և՛ առավել փոքր: Դրանցից ամենամեծերն ունեն հինգ հազար տաղանդ տարողություն: Յուրաքանչյուր նավի մեջ կա մեկ կենդանի գրաստ, իսկ խոշորների մեջ՝ մի քանիսը: Նավելով Բաբելոն հասնելուց և բեռը վաճառելուց հետո, նրանք վաճառքի են հանում նաև նավի կմախքը և ամբողջ ծղոտը, իսկ կաշիները բարձում են գրաստների վրա և վերադառնում արմենների մոտ: Քանզի գետն ի վեր ոչ մի կերպ հնարավոր չէ նավել՝ գետի արագության պատճառով: Այդ է պատճառը, որ նրանք նավերը պատրաստում են ոչ թե փայտից, այլ կաշվից: Նրանք գրաստները քշելով ետ են դառնում արմենների մոտ և նույն ձևով պատրաստում ուրիշ նավեր:

195. Նրանց նավերն այդպիսին են: Իսկ նրանց զգեստը ահա թե ինչպիսին է: Հագնում են նրանք մինչև ոտները հասնող վուշե խիտոն[152], իսկ վրայից բրդե մեկ ուրիշ խիտոն. դրա վրայից էլ հագնում են սպիտակ թիկնոց. նրանց կոշիկները տեղական են, նման բեռվտիական մաշիկների: Նրանք պահում են երկար մազեր, գլուխներին կապում շալմա և ամբողջ մարմինը օծում անուշահոտ յուղով: Ամեն մեկն ունի կնիք և գավազան: Ամեն մի գավազանի վրա փորագրված է խնձոր, կամ վարդ, կամ շուշան, կամ արծիվ և կամ մեկ այլ բան: Քանզի ընդունված չէ առանց նշանի գավազան ունենալը:

196. Նրանց արտաքին հանդերձանքը այսպիսին է. իսկ նրանց սովորույթներն ահա թե ինչպիսին են: Ամենախելամիտ սովորությունը, իմ կարծիքով, հետևյալն է, որը նկատելի է նաև Իլլիրիայի ենետների մոտ: Տարին մեկ անգամ յուրաքանչյուր գյուղում մի վայրում հավաքում են ամուսնանալու տարիքի հասած բոլոր կույսերին, նրանց շուրջ կանգնում են այրերի խմբեր, իսկ քարոզն ամեն մեկին առանձին կանգնեցնելով, վաճառում է, նախ ամենագեղեցիկին. իսկ երբ արդեն դրա դիմաց նա շատ ոսկի էր ստանում, կանչում էր մյուսին, որը հետևյալն էր իր գեղեցկությամբ: Նրանք վաճառվում էին ամուսնության համար: Բաբելոնացի փեսացուներից հարուստները, իրար ընդհատելով, գին էին բարձրացնում և գնում ամենագեղանիներին: Իսկ հասարակ ժողովրդի թվից եղող փեսացուները, որոնք չէին ընկնում գեղեցկության հետևից, առնում էին ոչ գեղեցիկներին և հավելյալ դրամ: Ամենագեղեցիկ աղջիկներին վաճառելուց հետո, քարոզը կանգնեցնում էր ամենագեղին կամ հաշմվածին և հայտարարում, թե ո՞վ սրան կվերցնի իրեն կին նվազագույն դրամով, և վերցնում էր նա, ով բոլորից քիչ էր համաձայնվում: Այդ դրամը գոյանում էր գեղեցիկ կույսերից. ուստի գեղեցիկներն ամուսնացնում էին տգեղներին և խեղանդամներին: Իր դստեր չէր կարելի իր ցանկացած մարդուն ամուսնության տալ, ինչպես և չէր կարելի ծախու առնված կույսին տանել առանց երաշխավորողի: Եվ միայն եթե երաշխավորողը հաստատի, որ (գնողը) ամուսնանում է նրա հետ, ապա նոր նրան տանում են (տուն): Իսկ եթե նրանք չէին համաձայնվում, ապա, օրենքի համաձայն, դրամը վերադարձվում էր: Այլ գյուղից եկած փեսացուն ևս, եթե ուզենար, կարող էր (իր համար հարսնացու) գնել: Սա է նրանց լավագույն սովորությունը, որը, սակայն, այժմ գոյություն չունի[153]: Բայց նորերս ուրիշ մեկ միջոց հնարեցին՝ կույսերին վիրավորանքից և ուրիշ քաղաք տարվելուց ապահովելու համար: Բայց երբ (պարսից կողմից) երկիրը նվաճվելուց և ավերվելուց հետո (բաբելոնացիները) անավեր դարձան, բոլոր հասարակ մարդիկ, չքավոր մնալով, իրենց աղջիկներին պոռնկության տվեցին:

197. Նրանք մեկ այլ իմաստուն սովորություն ևս ունեն: Հիվանդներին տանում են քաղաքային հրապարակ. քանզի նրանք բժիշկներ չունեն: Մոտենալով հիվանդին, նրանք խորհուրդներ են տալիս, եթե նրանցից որևէ մեկն անձամբ տառապել է նույն հիվանդությամբ կամ տեսել է այդպիսի հիվանդի: Նրանք ահա, մոտենալով, խորհուրդ են տալիս հիվանդին և բացատրում, թե ինչպես մեկ ուրիշն է բուժվել: Նրանք սովորություն չունեն լռությամբ անցնելու հիվանդի մոտով, այլ պետք է հարցնեն, թե նա ի՞նչ հիվանդություն ունի:

198. Հանգուցյալներին նրանք թաղում են մեղրի մեջ, իսկ նրանց ողբերը նման են եգիպտական (ողբերին): Ամեն անգամ իր կնոջ հետ կենակցելուց հետո, բաբելոնացին նստում է ծխացող խնկանոթի առաջ. նույնը նրա դիմաց (նստած) անում է նաև կինը: Այնուհետև, արշալույսին նրանք լվացվում են. քանզի առանց լվացվելու նրանք ոչ մի անոթի չեն հպվում: Այսպիսի սովորություն ունեն նաև արաբները:

199. Իսկ բաբելոնացիների ամենավատ սովորությունը հետևյալն է: Տեղաբնիկ ամեն մի կին իր կյանքում մեկ անգամ պետք է նստի Ափրոդիտեի սրբավայրում և խառնվի օտարերկրացի այրի հետ: Շատ կանայք, որոնք պարծենում էին իրենց հարստությամբ և անարժան էին համարում խառնվել մյուսների հետ, երկնի ծածկած սայլակներով գալիս և կանգնում

են սրբավայրի մոտ: Նրանց հետևում են մեծ թվով ապասավորներ: Կա-
նանց մեծ մասը վարվում է հետևյալ կերպ: Նստում են Ափրոդիտեի սըր-
բավայրում[154], գլուխներին պարանից (նյուսած) պսակ դրած: Նրանց մի
մասը գալիս է, մյուսը գնում: Բոլոր ուղղություններով ուղղագիծ անցում-
ներ կան (հավաքված) կանանց միջև, որոնց միջով անցնելով, օտարերկ-
րացիները ընտրություն են կատարում: Եթե կինն այստեղ նստեց, ապա նա
չի կարող իր տունը վերադառնալ, մինչև որ օտարերկրացիներից մեկը նրա
փեշի մեջ արծաթ հետելով, սրբավայրից դուրս չխառնվի նրա հետ: Արծա-
թը հետելիս նա պետք է այսքանն ասի. «Ես քեզ կանչում եմ հանուն Մյու-
լիտտա աստվածուհու»: Ասորեստանցիները Մյուլիտտա անվանում են Ափ-
րոդիտեին: Արծաթի քանակը նշանակություն չունի: Կինն իրավունք չունի
այն մերժելու, քանզի ընդունված է, որ այդ արծաթը սրբազան է դառնում:
(Կինը) հետևում է առաջին իսկ (արծաթ) հետողին, առանց որևէ մեկին
մերժելու: Խառնվելուց հետո, իր սրբազան պարտքը աստվածուհու առաջ
կատարած լինելով, նա վերադառնում է տուն, որից հետո նրան չես կարող
տիրանալ, ինչքան էլ մեծ գումար տաս: Արդ, գեղեցիկ և բարեկազմ եղող-
ները շուտով տուն են վերադառնում, իսկ տգեղները երկար սպասում են,
չկարողանալով (ընդունված) կարգը կատարել: Եվ իրոք, նրանցից ոմանք
այնտեղ մնում են նույնիսկ երեք կամ չորս տարի: Նման սովորություն կա
նաև Կիպրոսի մի քանի վայրերում:

200. Բաբելոնացիները անա այսպիսի սովորություններ էին հաստատել:
Նրանց մեջ կա երեք ցեղ, որոնք ոչինչ չեն ուտում, բացի ձկից, որը շո-
րացնում են արևի տակ, հետո այն դնում սանդի մեջ և սանդակոթով ման-
րացնելուց հետո, անցկացնում թանզիֆի միջով: Այնուհետև, ըստ ցանկու-
թյան, այդ մածուկը խառնում են խմորին և ուտում, կամ էլ ուտում են
իբրև հաց՝ եփելուց հետո:

201. Այս ազգին ևս նվաճելուց հետո Կյուրոսը ցանկացավ իրեն նպա-
տակեցնել նաև մասսագետներին: Այս ազգը, ասում են, և՛ մեծաթիվ է, և՛
քաջարի: Մասսագետները բնակվում են արևելքում, դեպի արևածագ,
Արաքս գետից այն կողմ, իսսեդոններին հանդիպակաց: Ուրիշներն ասում
են, որ նրանք սկյութական ազգ են:

202. Ոմանք ասում են, թե Արաքսը[155] Խառոսից[156] ավելի խոշոր է,
ուրիշները թե՝ ավելի փոքր: Պատմում են, որ Արաքսի վրա կան շատ կղզ-
ներ՝ Լեսբոսի մեծությամբ, որտեղ և ապրում են մարդիկ, որոնք ամառ-
ը սնվում են հողից հանած բազմապիսի արմատներով: Նրանք ծառերից
հավաքում են հատուկ մրգեր ու պահեստում և դրանցով էլ սնվում են ձմ-
ռանը: Այնտեղ, ասում են, կան նաև այլ ծառեր, որոնք հետևյալ հատկու-
թյունն ունեն: (Մարդիկ) խմբերով հավաքվում և, կրակ վառելով, նստում

են շրջանակ կազմած և այդ (ծառերի) մրգերից նետում են կրակի մեջ: Այդ
միրգն այրվելիս այնպիսի բուրմունք է արձակում, որից նրանք հարբում
են այնպես, ինչպես հելլեններն՝ գինուց. ինչքան շատ այդ մրգից նետեն
կրակի մեջ, այնքան շատ են հարբում, մինչև որ վեր կենալով պարում են
և երգում: Այսպես են պատմում նրանց կենցաղի մասին: Արաքս գետը
բխում է մատիենների երկրից, որտեղից և Գյունդես գետը, որը Կյուրոսը
բաժանեց երեք հարյուր վաթսուն ջրանցքների, բաժանվում է քառասուն
բերանների, որոնք բոլորը, մեկից բացի, դուրս են գալիս ճահիճների և
խրոտների մեջ: Պատմում են, որ այդ ճահճուտներում ապրում են հում
ձուկ ուտող մարդիկ, որոնք սովորաբար օգտագործում են փոկի կաշուց
պատրաստած հագուստ: Իսկ Արաքսի բերաններից մեկը բաց տեղանքով
հոսում է դեպի Կասպից ծով[157]:

203. Կասպից ծովն առանձին է և ոչ մի ծովի չի միանում: Քանզի այն
ծովը, որտեղ հելլեններն նավում են և այն ծովը, որը Ատլանտյան է կոչ-
վում ու գտնվում է (Հերակլյան) սյուներից դուրս, և Կարմիր (ծովը), բո-
լորը մի (ծով) է. մինչդեռ Կասպից (ծովը) առանձին է: Նրա երկարությունը
թիավարվող նավով տասնհինգ օրվա ճանապարհ է, իսկ լայնքը, ամենա-
լայն մասում՝ ութ օրվա: Այս ծովի արևմտյան մասով ձգվում է Կովկասը,
որը բազում խոշոր և բարձրագույն լեռներ ունի: Կովկասում բնակվում են
բազմաթիվ և բազմապիսի ազգեր, որոնց մեծ մասը ապրում է վայրի (ան-
ասունների) պտուղներով: Պատմում են, որ այստեղ կան այնպիսի ծառեր,
որոնց տերևները մանրացնելով, խառնում են ջրին և դրանով իրենց զգեստ-
ների վրա նկարներ գծում: Այդ նկարները չեն լվացվում, այլ մաշվում են
բոլորովին գործվածքի հետ, ասես դրանք սկզբից ևեթ գործված լինեին միասին:
Այս մարդիկ իրար հետ բացահայտ խառնվում են, ինչպես անասունները:

204. Անա Կասպից կոչված այս ծովն արևմուտքից սահմանափակվում
է Կովկասով, իսկ արևելքում դեպի արևածագ ձգվում է հայացքով անընդ-
հատելի մի հարթավայր: Այդ հարթավայրի մեծագույն մասը բնակեցնում
են մասսագետները, որոնց դեմ Կյուրոսը մտադրվեց արշավել: Այդ արշա-
վանքը ձեռնարկելու համար Կյուրոսին մղում և դրդում էին մի շարք պատ-
ճառներ. առաջինը՝ նրա ծննդյան, քանի որ իրեն թվում էր, թե ինքը գեր-
մարդ է. երկրորդ՝ պատերազմներում նրա ունեցած հաջողությունները.
քանզի այն ազգը, ում դեմ Կյուրոսը արշավում էր, անկարող էր լինում
խուսափել նրանից:

205. Այդ ժամանակ մասսագետների թագուհին էր մեռած (թագավորի)
կինը, անունը Տոմյուրիս: Կյուրոսը նրա մոտ դեսպաններ ուղարկեց, ամուս-
նանալու և նրան որպես կին ունենալու առաջարկությամբ: Բայց Տոմյուրի-
սը հասկանալով, որ (Կյուրոսը) ուզում է ամուսնանալ ոչ թե իր հետ, այլ

(ձեռք բերել) մասսագետների քաղաքությունը, մերժեց առաջարկը: Այնժամ Կյուրոսը, քանի որ խաբեությամբ հաջողության չհասավ, շարժվեց Արաքսի ուղղությամբ և բացահայտ արշավանք սկսեց մասսագետների դեմ: Նորը գետով անցկացնելու համար գետի վրա կամուրջներ կապեց, իսկ գետանցը կազմող նավերի վրա աշտարակներ շինեց:

208. Մինչ նա այս գործով էր զբաղված, Տոմյուրիսը նրա մոտ հարազ ուղարկեց այսպիսի պատգամով. «Ով մեղացող արքա, հրաժարվիր քո մտադրությունից, քանզի չգիտես, թե քո այս գործերը քեզ համար բարեհաջող կլինե՞ն, թե ոչ: Հրաժարվիր, ուրեմն, (արշավանքից) և թագավորիր քո երկրում և հանգարժիր տեսնելով, որ մենք ես տիրում ենք մեր երկրին: Բայց եթե դու չկամենաս այս խորհրդից օգտվել, այլ (գերադասես) ամենքիս, բացի խաղաղությունից, և եթե դու չատ ես ցանկանում նվաճել մասագետներին, ապա դադարեցրու գետը կամրջելու քո աշխատանքները, և մենք կենդանակոր գետից երեք օրվա ճանապարհ, որից հետո դու կմտնես մեր երկիրը: Իսկ եթե դու գերազանցում ես մեզ ընդունել քո երկիրը, ապա այդ հույնը դու կատարիր»: Այս լսելով, Կյուրոսը իր մոտ հրավիրեց պարսից առաջնորդներին և նրանց հաղորդելով, խորհուրդ հարցրեց ամենքիս մասին: Բոլորի կարծիքը համընկավ և խորհուրդ տվեցին՝ թույլ տալ Տոմյուրիսին և նրա զորքերին մտնել իրենց երկիրը:

209. Այնուհետև գտնվող Կրեսոսը պատասխանեց այդ կարծիքը և հակառակ կարծիք պնդելով, այսպես ասաց. «Ով արքա, դեռ հնարավոր է քեզ ասել էի, որ քանի Զեսը ինձ քո ձեռքն է հանձնել, ապա ես, քո ամենը ապահովող ուժ վառնալ նկատելիս, կաշխատեմ, քան իմ ուժերի, կանխել այդ: Քանի իմ տխուր փորձությունները ինձ զուր են եղել: Եթե դու հավատում ես, որ անմահ ես և իշխում ես նույնպիսի (անմահ) զորքերի վրա, ապա իմ կարծիքը քեզ համար անոգուտ կլինի: Իսկ եթե գիտես, որ քեզ (մահկանացու) մարդ ես և իշխում ես նույնպիսի (մահկանացու) զորքերի վրա, նախ իմանալիր այն, որ մարդկային գործերը նման են անիվի, որը շրջապտույտի մեջ լինելով չի տալիս, որ միևնույն մարդին միշտ բարեբախտ լինեն: Եվ ահա ավելի հարցում ես հակառակ կարծիքն ունեմ, քան առաջինը: Քանզի եթե հարձակվենք ընդունել բնակիչ երկրից հետո, այդ վիճակում մեզ համար ահա թե ինչպիսի վատագույն կլինի: Պատվելով, դու կկորցնես ավելի իշխանությունը: Քանզի բացահայտ է, որ մասսագետները, հաղթելու դեպքում, ոչ թե ետ կդառնան, այլ կարշավեն քո պետության վրա: Հաղթելու դեպքում ևս քո հաղթանակը այնպիսին չի լինի, ինչպիսին եթե դու, մտնելով նրանց երկիր, (հաղթես) մասսագետներին և հաղթես փոքրաքանակներին: Եթե հարձակվում քո և նրանց ենարարությունը հաղթանակ տարավ, ապա դու հաղթելով հակառակորդին, ապրիր կարծելիս Տոմյուրիսի հետ, ապա դու հաղթելով հակառակորդին, ապրիր կարծելիս Տոմյուրիսի

տիրույթների վրա: Բացի այս ասվածից, ամոթալի և անհանդուրժելի է, որ Կամբյուսեսի որդի Կյուրոսը նահանջի ու զիջի երկիրը: Արդ, իմ կարծիքով, պետք է անցնել գետը և առաջանալ այնման, ինչման նրանք կնահանջեն, իսկ այնուհետև հաղթել նրանց անա թե ինչպես: Ինչման ես գիտեմ, մասսագետները անգետ են պարսկական բարերին և անհաղորդ մեծ բավականություններին: Ուստի, առանց խնայելու, մեծ թվով ոչխար մորթիր և նրանց համար բանակատեղում խնջույք կազմակերպիր. բացի այդ, դիր այնտեղ մեծ քանակությամբ անոթներ՝ անարատ գինով լցված, ինչպես նաև բազմատեսակ ուտեստ: Այդ ամենը պատրաստելուց հետո, քո զորքի դույզն մասը այնտեղ թողնելով, մյուս ամբողջ զորքով ետ նահանջիր դեպի գետը: Քանզի, եթե ես չեմ սխալվում իմ ենթադրության մեջ, նրանք այսման շատ բարիք տեսնելով, կնետվեն դրանց վրա, իսկ մենք հնար կունենանք մեծ գործեր կատարելու»:

208. Կարծիքներն այսպես բախվեցին: Իսկ Կյուրոսը մերժեց առաջին կարծիքը և ընդունելով Կրեսոսի (խորհուրդը), լուր հղեց Տոմյուրիսին ետ տանել իր զորքերը, քանի որ ինքը մտադիր է անցնելու նրա երկիրը: Եվ Տոմյուրիսը ետ քաշվեց, ինչպես արդեն խոստացել էր: Իսկ Կյուրոսը Կրեսոսին հանձնելով իր որդի Կամբյուսեսի ձեռքը, որին հանձնում էր նաև թագավորությունը, նրան միաժամանակ հանձնարարեց պատվել Կրեսոսին և լավ վերաբերվել նրան, եթե մասսագետների դեմ գետանցումն անհաջող լինի: Այս հանձնարարելուց և նրանց պարսից երկիրը ուղարկելուց հետո, Կյուրոսը զորքով անցավ գետը:

209. Արաքսն գետն անցնելուց հետո, նա մասսագետների երկրում գիշերն այսպիսի երազ տեսավ: Կյուրոսին քնի մեջ թվաց, թե տեսնում է Հյուստասպեսի[159] ամենաավագ որդուն, որը ուսերին թևեր ուներ, որոնցից մեկով սավառնում էր Ասիան, մյուսով՝ Եվրոպան: Արտամեսի որդի Հյուստասպեսի, որը Ահեմենյան տոհմից էր, ամենաավագ որդին Դարեհն էր, որն այդ ժամանակ շուրջ քսան տարեկան էր և նրանց թողել էին Պարսկաստանում, քանի որ դեռևս ռազմական արշավանքի գնալու տարիք չուներ: Արդ, երբ Կյուրոսը զարթեց, սկսեց ինքն իրեն մտածել երազի մասին: Ու քանի որ նրան թվաց, թե տեսիլը մեծաճշան է, իր մոտ կանչեց Հյուստասպեսին և նրան առանձին ընդունելով, ասաց. «Հյուստասպես. քո որդին բռնվել է իմ (անձի) և իմ իշխանության դեմ դավելիս: Ես քեզ կասեմ, թե ինչպես այդ հաստատ իմացա: Աստվածները հոգում են իմ մասին և ինձ նախապես բացահայտում են այն ամենը, ինչ կատարվելու է: Եվ անա նախորդ գիշեր երազում տեսա, որ քո որդիներից ամենաավագը իր ուսերին թևեր ուներ, որոնցից մեկով սավառնում էր Ասիան, մյուսով՝ Եվրոպան: Այսպիսով, այդ տեսիլքից հետո ոչ մի կասկած չկա, որ նա իմ դեմ դավում է:

Այժմ դու շտապ վերադարձիր Պարսկաստան և այնպես գործիր, որ երբ այս երկիրը նվաճելուց հետո գամ այնտեղ, քո այդ որդուն իմ առաջ բերես քննության»:

210. Կյուրոսն այսպես ասում էր, կարծելով, որ Դարեհը դավում է իր դեմ: Մինչդեռ դրանով ասված հայտնում էր, որ ինքը կվախճանվի այդ երկրում, իսկ իր թագավորությունը կանցնի Դարեհին: Այնժամ Հյուստասպեսն այսպես պատասխանեց. «Ով արքա. թող չծնվի այն պարսիկ այրը, որը կդավի քո դեմ. իսկ եթե արդեն նա կա, ապա թող արագագույնս կործանվի: Քանզի դու պարսիկներին սարուկից դարձիր ազատ, այլոց հպատակ լինելուց դարձիր բոլորին իշխող[160]: Բայց եթե տեսիլը քեզ հայտնում է, որ իմ որդին քո դեմ խռովություն է բարձրացնում, ես նրան կհանձնեմ քեզ, իսկ դու վարվիր նրա հետ ինչպես ինքդ կկամենաս»:

211. Հյուստասպեսը այսպես պատասխանելուց հետո, անցավ Արաբիա և եկավ Պարսկաստան, որպեսզի իր որդի Դարեհին պահպանության տակ վերցնի Կյուրոսի համար: Իսկ Կյուրոսը, Արաբիից այն կողմ մեկ օրվա ճանապարհ առաջ գնալով, գործեց Կրեսոսի խորհուրդներին համաձայն: Այնուհետև Կյուրոսը պարսից զորքերի լավագույն մասով ետ նահանջեց դեպի Արաբիա, տեղում թողնելով ոչ պիտանի մասին: Այնժամ մասսագետների զորքի երրորդ մասը հարձակվեց Կյուրոսի լքած զորքի վրա և կոտորեց այն, հակառակ ցույց տրված դիմադրության, և տեսնելով այնտեղ դրված ուտեստը, թշնամուն հաղթելուց հետո, նրանք նստեցին ու խրախնեցին. և երբ ուտեստից ու գինուց հագեցան, քնեցին: Իսկ պարսիկները, վերադառնալով, նրանցից շատերին սպանեցին, առավել ևս շատերին գերի վերցրին, որոնց մեջ նաև թագուհի Տոմյուրիսի որդուն, մասսագետների զորապետին, որի անունն էր Սպարգապիսես:

212. Իսկ Տոմյուրիսը լսելով իր զորքի և որդու հետ կատարվածը, դեսպան ուղարկեց Կյուրոսի մոտ, հետևյալ խոսքերով. «Արյունռուչ Կյուրոս. մի պարծենար քո կատարած այս գործով. քանի որ դուք ևս որբատունկի պտղով հագենալիս, նույնպես մոլեգնում եք, և երբ գինին իջնում է ձեր մարմնի մեջ, արտաբերում եք շար խոսքեր: Այդ թույնով անա դու դավեցիր ու հաղթեցիր իմ որդուն, բայց ոչ թե զենքի կռվով: Իսկ այժմ լսիր իմ, բարի խորհուրդ տվողիս, խոսքը: Եթե տուր իմ որդուն և անվնաս մեկնիր երկրից, թեև դու ենթադրություն արեցիր մասսագետների զորքի երրորդ մասի ճանդեպ: Իսկ եթե դու այդ չանես, ապա երդվում եմ քեզ մասսագետների տիրակալ արևով, ես քեզ կհագեցնեմ արյամբ, ինչքան էլ դու անհագ լինես»:

213. Կյուրոսը (դեսպանի) հաղորդած այս խոսքերին ոչ մի ուշադրություն չդարձրեց: Իսկ թագուհի Տոմյուրիսի որդի Սպարգապիսեսը, երբ

նրան գինին թողեց և նա հասկացավ իր դժբախտ վիճակը, խնդրեց Կյուրոսին քանդել իր կապանքները: Երբ նա քանդվեց (կապանքներից) և ձեռքերը ազատվեցին, ինքնասպան եղավ:

214. Արդ, նա այս ձևով վախճանվեց: Իսկ Տոմյուրիսը, քանի որ Կյուրոսը չէր լսել նրա խոսքը, հավաքելով իր ամբողջ զորքը, հարձակվեց Կյուրոսի վրա: Այս ճակատամարտը ես համարում եմ ամենակատաղին, որը երբևէ մղել են բարբարոս[161] զորքերը: Այդ մասին ես իմացա անա թե ինչ: Պատմում են, որ նախ (թշնամիները) իրար դեմ կանգնելով, նետեր էին արձակում: Այնուհետև, երբ արդեն սպառվել էին նրանց նետերը, նրանք դաշույններով ու նիզակներով նետվեցին ձեռնամարտի: Նրանք երկար կռվեցին իրար դեմ և ոչ ոք չէր ուզում փախուստի դիմել: Ի վերջո մասսագետները գերազանցեցին: Պարսից զորքերի մեծագույն մասը այնտեղ բնաջնջվեց և ինքը Կյուրոսը ևս սպանվեց: Նա թագավորեց ընդամենը երեսունից մեկ տարի պակաս: Իսկ Տոմյուրիսը մարդկային արյամբ մի տիկ լցրած, սպանվածների մեջ փնտրում էր Կյուրոսի դին: Եվ երբ գտավ այն, դիակի գլուխը մացրեց տիկի մեջ և, ծանակելով սպանվածին, ասաց հետևյալը. «Դու կործանեցիր ինձ, թեև ես ապրում եմ և քեզ հաղթել եմ, քանի որ իմ որդուն խաբեությամբ կործանեցիր. իսկ ես, ինչպես սպառնացել էի, քեզ կհագեցնեմ արյամբ»: Կյուրոսի վախճանի մասին շատ զրույցներ են պատմում, բայց ամենահավանականը այս է թվում ինձ[162]:

215. Մասսագետները սկյութականի նման զգեստ են կրում և նրանց նման կենցաղ վարում: Նրանք և՛ հեծյալ են (կռվում), և՛ հետիոտն. քանզի երկու ձևին էլ տիրապետում են: Նրանք սովորաբար աղեղնավորներ են, տեգավորներ և տապարակիրներ: Նրանց գործածած ամեն ինչը պղնձից է և ոսկուց: Նետասլաքները, տեգերի ծայրերը և տապարները ամբողջությամբ պղնձից են, իսկ գլխի հարմարանքները, գոտիները և ուսապարկերը զարդարված են ոսկով: Ձիերի կրծքին նրանք նույնպես հագցնում են պղնձե լանջապանակ, իսկ սանձը, լեզմը և այտակալները (դրվագում են) ոսկով: Երկաթ և արծաթ բոլորովին չեն օգտագործում, քանի որ դրանք չկան այդ երկրում, իսկ ոսկին և պղինձն առատ են:

216. Նրանք անա թե ինչպիսի սովորություններ ունեն: Նրանցից յուրաքանչյուրն ամուսնանում է մեկ կնոջ հետ, բայց կանանցից օգտվում են բոլորը՝ ընդհանուր ձևով: Քանզի այն, ինչ հելլեններն վերագրում են սկյութներին, ոչ թե սկյութներն են անում, այլ մասսագետները: Արդ, եթե որևէ մասսագետ այր ցանկանա որևէ կնոջ, ապա նա իր կապարանը կախելով նրա սայլին, անխռով խառնվում է նրան: Նրանց մոտ տարիքի ոչ մի սահման չկա: Բայց եթե որևէ մեկը շատ է ծերանում, ապա նրա բոլոր ազգականները հավաքվում են և մորթում ծերունուն, նրա հետ նաև ոչխար-

ներ, և ամբողջ մսերը եփելով, խրախնում են: Սա նրանք համարում են ամենաբարձրի մաքը. իսկ հիվանդությունից մահացածին չեն ուտում, այլ հողով ծածկում են և ասում, որ նա չհասավ զոհվելու տարիքին: Նրանք ոչինչ չեն ցանում, այլ սնվում են անասուններով ու ձկներով. Արաբս գեռում առատ ձուկ է լինում: Նրանք նաև կաթնախում են: Աստվածներից պաշտում են միայն արևին, որին էլ ձիեր են զոհաբերում: Այդ զոհաբերման իմաստն այն է, որ ամենաարագընթաց աստծուն պետք է զոհաբերել արարածներից ամենաարագընթացին:

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

ԵՎՏԵՐՊԵ

1. Կյուրոսի վախճանվելուց հետո թագավորությունը ստացավ Կամբյուսեսը, Կյուրոսի և Փառնասպեսի դուստր Կասսանդանեի որդին: Կասսանդանեն մահացել էր ավելի վաղ և Կյուրոսը ոչ միայն մեծ սուգ արեց, այլև հրամայեց իր բոլոր հպատակներին սուգ անել: Ահա այս կնոջ և Կյուրոսի որդին լինելով, Կամբյուսեսը հոնիացիներին և էոլիացիներին համարում էր իր հարենական ստրուկներ. ուստի և Եգիպտոս արշավելիս, նա իր մյուս հպատակներից բացի, իր հետ վերցրեց նաև իր տիրության տակ գտնվող այս հելլեններին:

2. Իսկ եգիպտացիները, մինչև նրանց վրա Պսամմետիքոսի թագավորելը[1], իրենց համարում էին հնագույնները մարդկանց մեջ: Երբ Պսամմետիքոսը թագավոր դարձավ, ուզեց իմանալ, թե ովքե՞ր են առաջինները: Այդ ժամանակից հետո նրանք կարծում են, թե փռյուգիացիները առավել հին են, քան իրենք, իսկ իրենք առավել հին՝ քան բոլոր մնացածները: Քանի որ Պսամմետիքոսը հնար չգտավ լուծելու այն հարցը, թե՝ ովքե՞ր են եղել մարդկանց մեջ հնագույնը, այսպիսի հնարանք մտածեց: Հասարակ մարդկանցից ծնած երկու նորածինների հանձնեց մի հովվի, որպեսզի նրանց պահի հոտերի հետ միասին: Նա պատվիրեց, որ նրանց առաջ ոչ ոք ոչ մի խոսք չարտասանի: Նրանց տեղավորեցին ամայի հյուղակում, որտեղ որոշված ժամին (հովիվը) բերում էր իր այծերին, մանուկներին կաթով կերակրում և կատարում անհրաժեշտ ամեն ինչ: Պսամմետիքոսը այսպես պատվիրեց անել, ցանկանալով լսել, թե մանուկները անիմաստ հիշերից ձերբազատվելուց հետո, առաջինը ի՞նչ բառ պետք է արտասանեն: Այս հրամանները կատարեցին: Արդ, երկու տարին արդեն լրացել էր, որ

ճովիվը այս ամենը կատարում էր. և երբ նա բացեց (նյուղակի) դուռը և ճեռս մտավ, երկու մանուկները ընկան նրա ոտքերին և ձեռքները պարզելով, արտասանեցին «բեկոս»[2] բառը: Սկզբում ճովիվն այդ լսելիս հանգիստ էր: Բայց երբ այնուհետև նրանց խնամելու համար եկած պահին ամեն անգամ նույն բառն էր լսում, նա այդ մասին հաղորդեց տիրակալին, որը և հրամայեց մանուկներին բերել իր առաջ: Երբ ինքը՝ Պսամմետիքոսը ևս լսեց այդ բառը, պատվիրեց հարցնել և իմանալ, թե մարդկանցից ովքե՞ր ինչ-որ բան «բեկոս» են կոչում. և իմացավ, որ փռյուգիացիները այդպես են անվանում հացը: Այսպիսով, եգիպտացիները համոզվեցին, որ փռյուգիացիները առավել հին են, քան իրենք: Ես այսպես լսեցի Մեմփիսում Հեփեստոսի[3] քրմերից: Հելլեները շատ ուրիշ անմիտ բաներ ևս պատմում են, թե իբր Պսամմետիքոսը մի քանի կանանց լեզուն կտրելով, այդ մանուկների խնամքը հանձնարարել է նրանց:

3. Մանուկների խնամքի մասին այսպես էին պատմում: Այլ (պատմություններ) ևս լսեցի Մեմփիսում, երբ զրուցեցի Հեփեստոսի քրմերի հետ: Այդ առնչությամբ այցելեցի նաև Թեբե և Հելիուպոլիս[4], իմանալու համար, թե արդյո՞ք այնտեղի զրույցները համընկնում են Մեմփիսի (զրույցներին). քանզի ասում են, թե հելիուպոլսեցիները ամենախելամիտներն են եգիպտացիների մեջ: Այն, ինչ ես լսեցի աստվածների մասին, մտադիր չեմ պատմելու. այլ կասեմ միայն նրանց անունները, քանի որ կարծում եմ, թե բոլոր մարդիկ (Եգիպտոսում) հավասարապես (քիչ) գիտեն նրանց մասին: Իսկ երբ նրանց մասին ես ճիշտ պատմեմ, ապա այդ կանեմ, ելնելով պատմության պահանջներից:

4. Ինչ վերաբերում է մարդկանց գործունեության, ապա բոլորը միաձայն ասում էին, թե եգիպտացիները աշխարհում առաջինն են եղել, որ սահմանել են տարվա տևողությունը և այն բաժանել տասներկու ամիսների: (Քրմերը) ասում են, թե այդ որոշել են աստղերի միջոցով: Ես կարծում եմ, թե նրանք ավելի իմաստուն են հայվում, քան հելլենները. քանի հելլենները յուրաքանչյուր երեք տարին ավելացնում են մեկ հավելյալ ամիս՝ տարվա եղանակները պահպանելու համար: Մինչդեռ եգիպտացիները տասներկու ամիս երեսնական օր հաշվելուց հետո, ամեն տարի ավելացնում են հինգ օր. որով և տարվա եղանակների պտույտը միշտ նույն ժամանակ է տեղի ունենում: Նրանք ասում են նաև, որ առաջինը եգիպտացիներն են սահմանել տասներկու աստվածների անունները և հելլենները նրանցից են փոխառել դրանք: Նրանք են առաջին անգամ զոհարաններ, արձաններ և տաճարներ կանգնեցրել աստվածներին և կենդանիներ փորագրել քարերի վրա: Մեծ մասամբ ես գործով համոզվեցի, թե այդ բոլորը այդպես է կատարվել: Պատմում էին, որ եգիպտոսի առաջին թագավորը

եղել է Մինը: Նրա ժամանակ ամբողջ եգիպտոսը, բացի Թեբեի մարզից[5], ճահիճ է եղել և ամբողջ տեղանքը, որն այժմ գտնվում է Մոյրիս լճից ներքև, չրի տակ է եղել, իսկ այժմ ծովից գետի վրայով մինչև լիճը յոթ օրվա նավարկելու ճանապարհ է:

5. Կարծում եմ, որ այդ երկրի մասին ասվածները ճիշտ են: Քանզի նախապես անտեղյակ մարդու համար ևս, եթե նա խելամիտ է, այն տեսնելուց հետո պարզ է դառնում, որ եգիպտոսը, դեպի ուր հելլենները նավարկում են, եգիպտացիների համար ձեռքբերովի է և գետի պարգևը: Այդպիսին է նաև լճից վերև ընկած երկիրը երեք օրվա ճանապարհի հեռավորությամբ, որի մասին, սակայն, նման ոչինչ չեն պատմում: Քանզի եգիպտոսի բնությունը այսպիսին է: Եթե նավարկելով (եգիպտոսին) մոտենալիս խորաշափ հետո, նույնիսկ ցամաքից մեկ օրվա հեռավորության վրա տասնմեկ գրկաչափ խորությունից կավ դուրս կբերես: Սա ցույց է տալիս, թե ինչքան հեռու է գնում գետի լցրած (տիղմը):

6. Եգիպտոսի ծովափը վաթսուն պարան երկարություն ունի: Մենք Եգիպտոս անվանում ենք Պլինթինետես ծովախորշից մինչև Սերբոնիս լիճը[6], որի մոտ ձգվում է Կասիոն լեռը: Այստեղից էլ հաշված անա վաթսուն պարան է: Այն մարդիկ, որոնք սակավահող են, երկիրը չափում են գրկաչափով, պակաս սակավահող եղողները՝ ասպարեզով, շատ (հող) ունեցողները՝ փարսախով, իսկ առատ հող ունեցողները՝ պարանով: Փարսախը հավասար է երեսուն ասպարեզի, իսկ պարանը, որը եգիպտական չափ է, հավասար է վաթսուն ասպարեզի: Հետևաբար, եգիպտական ծովափի երկարությունը հավասար է երեք հազար վեց հարյուր ասպարեզի:

7. Այստեղից դեպի միջերկրյա, մինչև Հելիուպոլիս, եգիպտոսը լայն է, ամբողջապես ցածրավայր և չրառատ և տղմածածկ: Ծովից դեպի Հելիուպոլիս բարձրացող ճանապարհը մոտավորապես այնքան է, ինչքան Աթենքի տասներկու դից զոհարանից մինչև Պիսա, հատկապես մինչև Օլիմպոսյան Զևսի տաճարը: Եթե համեմատենք այս երկու ճանապարհների երկարությունը, ապա տարբերությունը տասնհինգ ասպարեզից ավելի չի լինի, քանզի Աթենքից մինչև Պիսա ճանապարհը հազար հինգ հարյուր ասպարեզից պակաս է տասնհինգ ասպարեզ. իսկ ծովից մինչև Հելիուպոլիս ճանապարհը լրացնում է ուղիղ այդ թիվը:

8. Հելիուպոլսից վերև եգիպտոսը նեղանում է: Մի կողմից այն փակված է Արաբական լեռներով, որոնք անընդմեջ ձգվում են հյուսիսից հարավ, մինչև Կարմիր կոչված ծովը: Այս լեռներում քարհանքեր կան, որտեղ էլ հատել են քարերը Մեմփիսի (բուրգերի) համար: Այստեղ լեռները վերջանում են, թեքվելով, ինչպես ասվեց, դեպի Կարմիր ծով: Այդ լեռների ամենալայն հատվածը, ինչպես իմացա, արևելքից արևմուտք երկու ամսվա

ճանապարհ է և արևելյան ծայրերը խնկաբեր են: Այդ լեռները այդպիսի են: Իսկ Եգիպտոսի մյուս՝ Լիբիայի կողմից ձգվում են ամբողջովին ավազով ծածկված լեռներ, որտեղ և բուրգերն են: Այս լեռները ևս, Արաբական նման, ձգվում են դեպի հարավ: Այսպիսով, սկսած Հելիոպոլսից, Եգիպտոսին պատկանող երկիրը այլևս լայն չէ, այլ տասնչորս[7] օրվա ճանապարհի չափ դեպի վեր նավելուց հետո, Եգիպտոսը նեղանում է: Հիշածս երկարի չափ դեպի վեր նավելուց հետո, Եգիպտոսը նեղանում է: Հիշածս երկու լեռների միջև երկիրը դաշտային է, իսկ ամենանեղ հատվածում, ինչպես ես հաշվել եմ, տարածությունը Արաբական և Լիբիական կոչված լեռների միջև երկու հարյուր ասպարեզից ավելի չէ: Այստեղից այն կողմ Եգիպտոսը դարձյալ լայն է:

9. Այսպիսին է անա այդ երկրի բնությունը: Իսկ Հելիոպոլսից մինչև Թեբե գնան ի վեր նավարկելով ինն օրվա ճանապարհ է, շուրջ հազար ութ հարյուր վաթսուն ասպարեզ կամ ութսունմեկ պարան: Անա Եգիպտոսի ասպարեզների ընդհանուր գումարը. առափնյա երկարությունը, ինչպես արդեն ասել եմ, երեք հազար վեց հարյուր ասպարեզ է. այժմ կնշեմ, թե ինչքան է ծովից դեպի միջերկրայքը, մինչև Թեբե. այն վեց հազար հարյուր քսան ասպարեզ է, իսկ Թեբեից մինչև Եղեփանտինե կոչված քաղաքը՝ հազար ութ հարյուր:

10. Արդ, խնդրում առարկա երկրի մեծ մասը, ինչպես քրմերն են պատմել և ինչպես ինքս ևս կարծում եմ, առաջացել է տիղմից: Իրոք, վերոնիշյալ լեռներից դեպի Մեմփիս քաղաքն ընկած տարածությունը ինձ թվաց, թե երբեմն եղել է ծովածոց, ճիշտ ինչպես Իլիոնի և Տեբրանիայի և Եփեսոսի և Մեանդրոսի դաշտավայրերը, թեև սրանք փոքր են մեծերի հետ համեմատելու համար: Քանզի այդ վայրերը (տիղմով) լցված գետերից և ոչ մեկը չի կարող իր լայնքով համեմատվել հինգ թև ունեցող Նեղոսի թեկուզ և մեկ թևի հետ: Կան (այլուր) այլ գետեր ևս, որոնք թեև Նեղոսի չափ մեծ չեն, բայց նույնպես մեծ գործ են կատարել: Ես չատերի թվում կարող եմ հիշատակել Ակելոոս գետը, որը հոսելով Ակառնանիայով և դուրս գալով ծով, Եքինադյան կղզիների կեսն արդեն միացրել է մայր ցամաքին:

11. Արաբական երկրում, Եգիպտոսից ոչ հեռու, կա ծովածոց, որը ձգվում է Կարմիր կոչված ծովից. այն շատ երկար է և նեղ, որի մասին ես կպատմեմ: Թիականավով ծովածոցն ամենահեռավոր ծայրից երկարությամբ մինչև բաց ծով կարելի է անցնել քառասուն օրում, մինչդեռ ծովածոցի ամենալայն հատվածը կարելի է անցնել կես օր նավելով: Ամեն օր այնտեղ մակընթացություն և տեղատվություն է լինում: Ինձ թվում է, որ այդպիսի մի ծովածոց է եղել նաև Եգիպտոսը. այն տարածված է եղել Հյուսիսի ծովից մինչև Երովպիա. մինչդեռ Արաբականը. որի մասին ես կպատմեմ, տարածվում էր Հարավային ծովից մինչև Սիրիա: Այս ծովածոցերը

սահմանակցում էին իրար, անջատված լինելով հողային փոքր տարածությամբ: Եվ եթե Նեղոսը կամենար իր հունը շրջել դեպի այս Արաբական ծոցը, ապա ի՞նչը կխանգարեր նրան այն տիղմով լցնելու քանի հազար տարում: Ես համոզված եմ, որ այն կլցվեր նույնիսկ տասը հազար տարում: Հետևաբար, ինչո՞ւ մինչև իմ ծնունդը անցած ամբողջ ժամանակի ընթացքում, նույնիսկ առավել խոշոր ծովածոցը չէր կարող լցվել այսքան մեծ և հզոր գետի բերած տիղմով:

12. Արդ, ես հավատում եմ Եգիպտոսի մասին (քրմերի) պատմածներին և ինքս նույնպես այդպես եմ մտածում. քանզի տեսնում եմ, որ Եգիպտոսը դուրս է գալիս ծով ավելի հեռու, քան հարևան երկրները, իսկ լեռների վրա (ոստրեների) խեցիներ են երևում և աղի շուր է դուրս գալիս, որը քայքայում է նույնիսկ բուրգերը, իսկ Մեմփիսից վերև գտնվող լեռը Եգիպտոսում միակն է, որ ծածկված է ավազով: Բացի այդ, ո՛չ սահմանակից Արաբիայի, ո՛չ Լիբիայի[9], ո՛չ էլ Սիրիայի (արաբական երկրի առափնյա հատվածը բնակեցնում են սիրիացիները) հողը նման չէ Եգիպտոսին, որի հողը սև է և փուխր, քանի որ այն կազմված է տիղմից, որը Նեղոսը բերում է Եթովպիայից. մինչդեռ գիտենք, որ Լիբիայի հողը առավել կարմիր է և ավազոտ, իսկ Արաբիայի և Սիրիայի հողը՝ առավել կավային և քարաշատ:

13. Այդ երկրի մասին քրմերն այսպիսի ուժեղ մի փաստարկ էին բերում: Մոյրիս թագավորի օրոք, երբ գետը բարձրանում էր առնվազն ութ կանգուն, այն ողողում էր Մեմփիսից ներքև գտնվող ամբողջ Եգիպտոսը: Քրմերից ես այս լսեցի, երբ Մոյրիսի մահից չէր անցել դեռ ինը հարյուր տարի: Իսկ այժմ, եթե գետը չբարձրանա առնվազն տասնվեց կամ տասնհինգ կանգուն, երկիրը չի ողողվի: Եթե այդ երկիրը նույն ձևով պետք է աճի և բարձրանա, ապա Նեղոսը այլևս այն չի ողողելու. ուստի և ինձ թվում է, որ այն եգիպտացիները, որոնք բնակվում են Մոյրիսի լճից ներքև և հատկապես Դելտա կոչված վայրում, այնուհետև ամբողջ ժամանակ պիտի լինեն նույն փորձության մեջ, ինչ, իրենց կարծիքով, գտնվում են հելլենները: Քանզի երբ նրանք լսեցին, որ հելլենների ամբողջ երկիրը ոռոգվում է անձրևներից, այլ ոչ թե իրենց երկրի նման ողողվում է գետերից, ասացին, թե հելլենները երբևէ պետք է մեծապես հուսախաբ լինեն և վատագույն սովի մատնվեն: Սրանով նրանք ուզում էին ասել, որ եթե ասված հելլեններին անձրև չառաքի, այլ տանջի երաշտով, ապա նրանք կսովահարվեն. քանզի նրանք Զևսից բացի շրի այլ աղբյուր չունեն:

14. Հելլենների մասին եգիպտացիների այս ասածը ևս ճշմարիտ է: Բայց այժմ թույլ տուր պատմել, թե բանն ինչպե՞ս է իրենց՝ եգիպտացիների մոտ: Եթե, ինչպես արդեն ասել եմ, Մեմփիսից ներքև գտնվող երկիրը,

քանի որ այդ է տիղմով անցը, անցնող ժամանակի ընթացքում այսուհետև ևս պետք է հետզհետե բարձրանա, մի՞թե այդ երկրում բնակվող եգիպտացիները սովի չեն մատնվելու, քանի որ նրանց երկրում ոչ անձրև կտեղա, ոչ էլ գետը կբարձրանա դաշտերի վրա: Այժմ, իրոք, նրանք բոլոր մյուս մարդկանցից, ինչպես և մյուս եգիպտացիներից, պակաս աշխատանքով բերք են ստանում հողից: Նրանք խոփով ակոսներ բացելու, հողը փխրելու և այլ գործեր անելու կարիքը չունեն, ինչպես ուրիշներն անում են ցանքի ժամանակ, այլ գետը ինքնաբերաբար վրա տալով, ողողում է դաշտերը և ողողելուց հետո հաշվում, այնժամ ամեն մեկը ցանելով իր արտը, խոզեր է քշում այնտեղ, և երբ արդեն սերմերը կոխրտվում են խոզերի կողմից, նա սպասում է հնձի ժամանակին, իսկ այնուհետև նույն այդ խոզերի միջոցով կալսում է ցորենը և ամբարում:

15. Արդ, եթե ընդունենք հոնիացիների կարծիքը եգիպտոսի մասին, որոնք եգիպտոս համարում են միայն Դելտան, իսկ եգիպտոսի ծովափը, համարում են Պերսևսի աշտարակ կոչված վայրից մինչև ձկներ աղելու արհեստանոցները Պելուսիայում՝ հառասուն պարան երկարությամբ, և ասում են, թե ծովից դեպի միջերկրայքը այն ձգվում է մինչև Կերկասորոս քաղաքը, որի մոտ Նեղոսը երկաժվելով, հոսում է (մի թևով) դեպի Պելուսիոն, (մյուս թևով) Կանոբոս: Եգիպտոսի մնացած մասերը նրանք համարում են մասամբ Լիբիա, մասամբ Արաբիա: Արդ, եթե ընդունենք այս, ապա պարզվում է, որ եգիպտացիները նախկինում երկիր չեն ունեցել: Քանզի Դելտան, ինչպես իրենք՝ եգիպտացիներն են ասում և ինձ ևս այդպես է թվում, ջրաբերվի (երկիր) է, և, այսպես ասած, նորերս է ի հայտ եկել: Արդ, եթե եգիպտացիները, իրոք, ոչ մի երկիր չունեին, ապա ինչո՞ւ իզուր կարծում էին, թե իրենք առաջին մարդիկն են եղել (աշխարհում): Ուստի և կարիք չկար երեխաներին փորձելու, թե նրանք ի՞նչ լեզվով կխոսեն: Այսուհանդերձ, ես կարծում եմ, որ եգիպտացիները չեն ծագել հոնիացիների կարգից Դելտա կոչված երկրի առաջացման հետ, այլ գոյություն են ունեցել այն ժամանակից, երբ առաջացել է մարդկային սերը, իսկ երբ (նրանց) երկիրն բնդարձակվել է, նրանցից շատերը մնացել են իրենց տեղում, իսկ շատերն էլ (ստիպմանաբար) իջել են ցած: Հետևաբար, հնում եգիպտոս կոչվել է միայն Թեբեն, որի պարագիծը վեց հազար հարյուր քառասունգ է:

16. Արդ, եթե նրանց մասին մեր խմացածը ճիշտ է, ապա հոնիացիների պատկերացումը եգիպտոսի մասին սխալ է: Իսկ եթե ճիշտ է հոնիացիների կարծիքը, ապա ես ցույց կտամ, որ և՛ հելլեններին, և՛ իրենք՝ հոնիացիներին, հաշվել չգիտեն: Նրանք ասում են, թե ամբողջ երկիրը բաժանված է երեք մասի՝ Եվրոպա, Ասիա և Լիբիա, որոնց պետք էր ավելացնել նաև եգիպտոսի Դելտան, եթե այն չի պատկանում ո՛չ Ասիային, ո՛չ էլ Լիբիային: Չէ՞ որ այդ տեսակետի համաձայն, Նեղոսը Ասիայի և Լիբիայի սահմանը չի կազմում, այլ Դելտայի սուր գագաթում այն բաժանվում է, ուստի և այդ երկիրը գտնվում է Ասիայի ու Լիբիայի միջև:

17. Հոնիացիների կարծիքը թողնենք, իսկ այդ մասին մեր կարծիքը այս է: Եգիպտոս ենք համարում այն ամբողջ երկիրը, որը բնակեցված է եգիպտացիներով, ինչպես և Կիլիկիա այն, որ (բնակեցված է) կիլիկեցիներով, և Ասորեստան այն, որը (բնակեցված է) ասորեստանցիներով: Եվ, ճիշտն ասած, Ասիայի և Լիբիայի միջև մենք ոչ մի սահման չգիտենք, բացի եգիպտոսի սահմաններից: Եվ եթե ընդունենք հելլենների կարծիքը, ապա ամբողջ եգիպտոսը, սկսած Ջրվեժներից[10] և Ելեփանտինե քաղաքից երեք պիտի համարել երկու մասի բաժանված, որոնք ունեն երկու անուն և դրա մի մասը պատկանում է Լիբիային, մյուսը՝ Ասիային: Քանզի Նեղոսը, սկսվելով Ջրվեժներից, եգիպտոսը հատում է մեջտեղից և հոսում դեպի ծով: Մինչև Կերկասորոս քաղաքը Նեղոսը հոսում է մեկ հուսով, իսկ այդ քաղաքից հետո բաժանվում է երեք թևի: Դրանցից մեկը, որը կոչվում է Պելուսյան (գետա)բերան, թեքվում է դեպի արևելք, մյուսը՝ դեպի արևմուտք, այն կոչվում է Կանոբոսյան (գետա)բերան, իսկ Նեղոսի մյուս թևը ուղիղ հոսում է այսպես, այն վերևից գալով, հասնում է Դելտայի սուր գագաթը, իսկ այնտեղից ճեղքելով Դելտան երկու մասի, դուրս է գալիս ծով, որտեղ բերում է ոչ քիչ քանակությամբ ջուր, և պակաս հայտնի չէ, այն կոչվում է Սեբեննյուտյան (գետա)բերան: Երկու այլ (գետա)բերաններ ևս կան, որոնք բաժանվել են Սեբեննյուտյանից, նրանցից մեկը կոչվում է Սաիսյան, մյուսը՝ Մենդեսյան, իսկ Բոլբիտինյան (գետա)բերանը և Բուկոլիկյանը բնական չեն, այլ փորված:

18. Իմ այն կարծիքը, թե եգիպտոսն այնքան մեծ է, ինչքան ցույց եմ տվել իմ խոսքում, վկայում է Ամմոնի տված պատգամը: Այդ պատգամը ես լսել եմ եգիպտոսի մասին իմ կարծիքն ունենալուց հետո: Լիբիայի սահմանին մոտ գտնվող եգիպտական Մարեա և Ապիս քաղաքների բնակիչները, որոնք իրենց համարում էին լիբիացիներ և ոչ թե եգիպտացիներ, ցանկանալով հրաժարվել կրոնական այն սովորույթից, որը արգելում էր կովի միս ուտել, մարդ ուղարկեցին Ամմոն, ասելով, թե իրենք ոչինչ ընդհանուր չունեն եգիպտացիների հետ: Քանզի, ասացին, իրենք ապրում են Դելտայից դուրս և նրանց հետ նույն լեզվով չեն խոսում. ուստի և ուզում են ամեն ինչ ուտելու թույլտվություն: Բայց ասված թույլ չտվեց այդ անել, ասելով, թե Նեղոսի ողողած ամբողջ երկիրը եգիպտոս է և՛ Ելեփանտինե քաղաքից ներքև բնակվողները, և՛ Նեղոսի ջուրը խմողները եգիպտացիներ են: Անա այսպիսի պատգամ եղավ նրանց:

19. Նեղոսը հորդելիս ողողում է ոչ միայն Դելտան, այլև լիբիական և արաբական կոչված երկիրը, երկու ափերից այն կողմ, երկու օրվա ճանապարհի չափ, մերթ ավելի, մերթ պակաս: Գետի բնույթի մասին ոչինչ չկարողացա իմանալ ո՛չ քուրմերից, ո՛չ էլ որևէ մեկ ուրիշից: Ես ուզեցի իմանալ նրանցից, թե ինչո՞ւ Նեղոսն ամառային արևադարձից սկսած հարյուր օր հոսում է ափերից դուրս եկած, իսկ այդ օրերի հաշիվը վերջանալուց հետո նա էլ է քաշվում իր հունը, այնպես որ գետի ջրերը ցածրանում են և ամբողջ ձմեռ այդպես մնում, մինչև հաջորդ ամառային արևադարձը: Եգիպտացիներից ոչ մեկից ոչինչ չկարողացա իմանալ, երբ նրանց հարցրի, թե Նեղոսն ի՞նչ ուժ ունի, որ նրա բնույթը հակառակն է մյուս գետերի (բնույթին): Այսպես հարցնելով, ես ուզեցի իմանալ այս ամենի մասին, ինչպես նաև այն մասին, թե ինչո՞ւ միայն այս գետից է, որ հողմեր են փչում:

20. Բայց հելլեններից ոմանք, իմաստությամբ հայտնի դառնալու ցանկությամբ, երեք կարծիք են հայտնել այս գետի (ողողումների) մասին: Այդ կարծիքներից երկուսի մասին թեև շարժե իսկ հիշատակել, բայց ես կուզենամ նշել: Գետի ողողման պատճառներից մեկը համարում են Եթեսյան[11] քամիները, որոնք իբր խոչընդոտում են Նեղոսի՝ դեպի ծով արտահոսելը: Բայց շատ անգամ Եթեսյան քամիներ չեն փչել, իսկ Նեղոսը վարվել է նույն ձևով: Բացի այդ, եթե այդ քամիներն են պատճառը, ապա մյուս գետերը ևս, որոնք հոսում են Եթեսյան քամիներին հակառակ, պիտի վարվեին Նեղոսի նման, մանավանդ, որ առավել թույլ հոսանք ունեն: Շատ գետեր կան թե՛ Սիրիայում և թե՛ Լիբիայում, որոնց հետ չի կատարվում այն, ինչ Նեղոսի հետ:

21. Երկրորդը առավել ոչ գիտական է վերը ասվածից, բայց, այսպես ասած, առավել զարմանալի է: Այն ասում է, թե Նեղոսի այդպես գործելու պատճառն այն է, որ գետը բխում է օվկիանոսից, իսկ օվկիանոսը հոսում է ամբողջ երկրի շուրջ[12]:

22. Կարծիքներից երրորդն առավել ճշմարտանման լինելով հանդերձ, ամենասխալն է: Այդ կարծիքը ևս ոչինչ չի ասում, պնդելով, որ Նեղոսը սկիզբ է առնում հալվող ձնից[13]: Սակայն Նեղոսը հոսում է Լիբիայից, Եթիոպիայի միջով և դուրս է գալիս Եգիպտոս: Արդ, ինչպե՞ս այն կարող է բխել ձնից, եթե առավել տաք երկրներից հոսում է դեպի առավել ցուրտ երկրները: Այդ մասին դատելու ընդունակ ամեն ոք անհավանական կհամարի, որ այդ գետը սկիզբ է առնում ձնից: Առաջին և մեծագույն փաստն այդ վայրերից փչող տաք հողմերն են: Երկրորդը այն է, որ այդ երկրում անձրև և ձյուն չի տեղում, իսկ ձյուն տեղալուց հետո հինգ օրվա ընթացքում անպայման պետք է անձրևի: Հետևաբար, եթե այդ երկրում ձյուն գար, ապա պետք է նաև անձրևեր: Երրորդն այն է, որ մարդիկ (այնտեղ) կիզվելուց սևացել են: Ուրուրները և ծիծեռնակները այդ երկիրը չեն լքում ամբողջ տարին, իսկ կռունկները, փախչելով Սկյութական երկրի ցրտից, այս վայրերն են շտապում ձմեռելու համար: Արդ, եթե այն երկրում, որի միջով հոսում և որտեղից բխում է Նեղոսը, թեկուզև դույզն ինչ ձյուն տեղար, այս բոլորից և ոչ մեկը, որպես բնական անհրաժեշտություն, չէր կատարվի:

23. Օվկիանոսի մասին զրույցը տանում է անհայտության և այն հերքելու կարիք չկա: Քանզի ես Օվկիանոս գետի գոյության մասին ոչինչ չգիտեմ. և ես կարծում եմ, որ Օվկիանոս անունը Հոմերոսը կամ մեկ ուրիշ հին պոետ հորինել է և մտցրել հերքության մեջ[14]:

24. Արդ, եթե ես, դատապարտելով վերոբերյալ կարծիքները, պարտավոր եմ այս անհայտ բանի մասին իմ կարծիքը հայտնել, ապա կասեմ, թե ինչո՞ւ, իմ կարծիքով, Նեղոսը բարձրանում է ամռանը: Ձմեռ ժամանակ արևը, հալածվելով ձմռան փոթորիկներից, հեռանում է իր նախկին ուղուց և հասնում վերին Լիբիա: Ահա այս կարճ խոսքով ամեն ինչ ասված է: Քանզի այն երկիրը, որին այդ ասվածը առավել մերձենում է, կամ որտեղ նա լինում է, բնականաբար առավել ծարավում է ջրից և այնտեղ գետերը չորանում են:

25. Իսկ եթե ավելի մանրամասն ասենք, բանն այսպես է: Վերին Լիբիայով անցնելիս, արևը, անա թե ինչ է անում: Քանի որ այստեղ օդը չինչ լինելու պատճառով երկիրը տաքանում է, իսկ քամին զով է, արևն այստեղ անում է այն, ինչ (մեզ մոտ) ամռանը, երբ գտնվում է երկնքի մեջտեղում: Այն իրեն քաշում է ջուրը, քաշելուց հետո քշում դեպի վերին երկրները, որտեղ այն վերցնում են քամիները, քշում այն և ցրում: Ուստի և բնական է, որ այս երկրից փչող քամիները՝ հարավայինը և հարավ-արևմտյանը, բոլորից առավել անձրևաբեր են: Իմ կարծիքով, արևը ամեն անգամ Նեղոսից իր վերցրած տարեկան ջուրն ամբողջությամբ չէ, որ ետ է վերադարձնում, այլ մի մասը պահում է իրեն: Երբ ձմեռը մեղմանում է, արևը նորից է վերադառնում երկնքի մեջտեղը, որից հետո արդեն հավասարապես ջուր է քաշում բոլոր գետերից: Մինչ այդ տեղացող առատ անձրևների պատճառով, գետերը հոսում են հորդառատ, քանի որ երկիրը անձրևային է և կտրված ձորերով. իսկ ամռանը, երբ անձրևները դադարում են և արևը քաշում է ջուրը, դրանք փոքրանում են: Մինչդեռ Նեղոսը, որը չի սնվում անձրևներից և միակ գետն է, որի ջրերը ձմռանը քաշվում են արևի միջոցով, բնական է, որ այդ ժամանակ առավել ցածր է հոսում, քան ամռանը. քանզի բոլոր մյուս գետերը ևս հավասարապես քաշվում են արևից, իսկ ձմռանը միայն Նեղոսն է այդ բանին ենթակա:

26. Արդ, այս ամենի պատճառը ես համարում եմ արևը: Իմ կարծի-

ֆով, դարձյալ արևն է պատճառը այդ երկրների օդի չորության, քանի որ նա կիզում է իր անցած ճանապարհը: Այդպիսով, Վերին Լիբիայում հավերժ ամառ է: Եթե տարվա եղանակների կարգը փոխվեր և այնտեղ, ուր այժմ փչում է հյուսիսային քամի և ձմեռ է, փչեր հարավային քամի և կեսօր լիներ, իսկ այնտեղից, որտեղից հարավային հողմն է փչում, փչեր հյուսիսայինը, ապա այդ ժամանակ արևը ձմռան հողմերից քշվելով երկրի մեջտեղից, կհասներ Վերին Եգիպտոս, ինչպես նիմա հասնում է Վերին Լիբիա, և ամբողջ Եվրոպայով անցնելիս, իմ կարծիքով, արևն այնպես կազդեր Իստրոս[15] գետի վրա, ինչպես այժմ՝ Նեղոսի վրա:

27. Իսկ թե ինչո՞ւ քամի չի փչում Նեղոսից, ես այն կարծիքն ունեմ, որ շատ քամ երկրներից, բնական է, ոչ մի քամի չի փչում. իսկ քամին փչում է ցուրտ երկրներից:

28. Արդ, թող այդ ամենը մնա այդպես, ինչպես եղել է սկզբնապես: Ոչ վերաբերում է Նեղոսի աղբյուրներին, ապա ոչ մեկը եգիպտացիներից, ո՛չ լիբիացիներից, ո՛չ հելլեններից, որոնց հետ ես զրուցել եմ, չկարողացավ այդ մասին որևէ տեղեկություն տալ, բացի եգիպտական Սաիս քաղաքում գտնվող Աթենասի տաճարի գանձերի դպիրից: Բայց, իմ կարծիքով, նա կատակում էր ինձ հետ, երբ ասում էր, թե այդ մասին հաստատ գիտե: Նա պատմեց հետևյալը: Երկու լեռներ կան սրածայր գագաթներով, որոնք գտնվում են Թեբաիս (երկրի) Սյունեն քաղաքի և Ելեփանտինեի միջև. այդ լեռներից մեկի անունն է Կրոֆի, մյուսի՝ Մոֆի: Այդ լեռների մեջտեղից էլ բխում են նեղոսի անհատակ աղբյուրները, իսկ ջրերի կեսը հոսում է դեպի հյուսիս, Եգիպտոս, մյուս կեսը՝ դեպի հարավ, Եթիոպիա: Այդ աղբյուրների անհատակ լինելը, ասաց նա, փորձով հաստատել է Եգիպտոսի թագավոր Պսամմետիքոսը: Նա թագմանազար գրկաչափ երկարությամբ պարան է հյուսել ասլիս և այն իջեցնում անդունդը, բայց չի հասնում (հատակին): Արդ, եթե դպիրն այդ ամենն, իրոք, ճիշտ է ասել, ինչպես ես հասկանում եմ, ցույց է տալիս, որ այնտեղ կան ուժեղ շրջանառներ և հետադարձ հոսանքներ, ուստի և ջրի հոսանքը, զարնվելով ժայռերին, թույլ չի տալիս, որ իջեցված խարտաչափը հասնի հատակին:

29. Ուրիշ ոչ ոքից (այդ մասին) ես ոչինչ չկարողացա իմանալ: Բայց իմ հետազոտություններս ես ավելի ծավալեցի, ինքս իրեն սկսանելս գնալով մինչև Ելեփանտինե քաղաքը, իսկ այնտեղից հետս տարին ճարտնելով ու լանջով: Ելեփանտինեից վերև տաքանալիս, երկիրը բարձրանում է: Ուստի և այստեղ նավը պետք է երկու կողմից պարանով կապեիր, քաշել ինչպես ցուլին: Իսկ եթե պարանը պոկվի, ապա նավը ուժեղ հոսանքից քշվում է (գած): Այս հոսանքը շատ օր նավարկելու հանապարհ է, որտեղ և նեղոսը պտտվում է, ինչպես Մեանդրոսը: Այս ձևով նավարկելու տարածությունը տասներկու պարան է: Այնուհետև հասնում են մի հարթ դաշտավայր, որտեղ Նեղոսը կազմում է մի կղզի, անունը Տաֆոսպսոս: Ելեփանտինեից վերև ապրում են եթիոպացիներ, նրանք բնակեցրել են նաև այս կղզու կեսը, մյուս կեսը եգիպտացիներ են: Կղզուն կից կա մի մեծ լիճ, որի շուրջ բնակվում են վաչկատուն եթիոպացիներ: Այդ լիճն անցնելով, (դարձյալ) կգաս Նեղոսի հունը, որը մտնում է այս լիճը: Այնուհետև դուրս գալով նավից, գետափով կգնաս քառասուն օրվա ճանապարհ: Քանզի այստեղ Նեղոսի մեջ մեծաքիվ խութեր և սրածայր ժայռեր կան, որոնց պատճառով էլ հնարավոր չէ նավարկել: Այս վայրը քառասուն օրում անցնելուց հետո, դարձյալ մեկ այլ նավ նստելով, նավարկում ես տասներկու օր ու հասնում մի մեծ քաղաք, անունը Մերոե[16]: Պատմում են, թե այս քաղաքը եթիոպացիների մայրաքաղաքն է: Այստեղի բնակիչները պաշտում են աստվածներից միայն Զևսին[17] և Դիոնիսոսին[18], որոնց հարգում են մեծապես: Այստեղ կա նաև Զևսի պատգամատուն: Նրանք արշավում են այն ժամանակ և այն երկրի դեմ, որ այդ աստվածն իր պատգամով պատվիրում է նրանց:

30. Այս քաղաքից դարձյալ նավարկելով այնքան ժամանակ, ինչքան պահանջվեց Ելեփանտինեից մինչև եթիոպացիների մայրաքաղաքը հասնելը, դու կգաս փախստականների երկիրը: Այս փախստականներին կոչում են Ասմախ, որը հունարեն նշանակում է «թագավորի ձախ ձեռքի կողմը կանգնած մարդիկ»: Սրանք եգիպտական ռազմիկներից այն քառասնորս գունդ փախստականներն են, որոնք եկան եթիոպացիների մոտ հետևյալ պատճառով: Պսամմետիքոս թագավորի օրոք կայազորներ հաստատվեցին եթիոպացիների դեմ Ելեփանտինե քաղաքում, արաբների և ասորեստանցիների դեմ՝ Դափնեում, որը Պելուսիայում է, և Լիբիայի դեմ՝ Մարեայում: Դեռ իմ ժամանակ ևս այս նույն վայրերում կանգնած են պարսկական կայազորներ, ինչպես եղել էին Պսամմետիքոսի օրոք. քանզի պարսկական կայազորներ կան Ելեփանտինեում և Դափնեում: Արդ, եգիպտացիները երեք տարի այստեղ որպես կայազոր մնալուց հետո, երբ ոչ ոք չեկավ նրանց արձակելու պահակությունից, բոլորը միաձայն որոշեցին ապստամբել Պսամմետիքոսից և անցան Եթիոպիա: Պսամմետիքոսը իմանալով այդ, հետապնդեց նրանց: Հասնելով նրանց հետևից, շատ խնդրեց նրանց չհեռանալ և չլքել հայրենի աստվածներին և երեխաներին ու կանանց: Պատմում են, որ այնժամ նրանցից մեկը, ցույց տալով իր սեռական զորությունը, ասում է. «Որտեղ սա կա, այնտեղ և՛ երեխաներ կլինեն, և՛ կանայք»: Հասնելով Եթիոպիա, նրանք հանձնվեցին եթիոպացիների թագավորին, որը նրանց այսպես փոխհատուցեց: Եթիոպացիներից ոմանք ապստամբել էին, ուստի թագավորը (փախստականներին) պատվիրեց քշել նրանց և բնակվել նրանց

երկրում: Այն բանից հետո, երբ այս եգիպտացիները բնակվեցին Եթովպացիների հետ, Եթովպացիներն ընդունեցին եգիպտական սովորույթները և դարձան առավել քաղաքակիրթ:

31. Արդ, Նեղոսի հոսանքը, շհաշված նրա հունը Եգիպտոսում, հայտնի է չորս ամսվա նավարկման և ցամաքային ճանապարհի տարածությամբ: Քանզի այդքան ամիս է ստացվում, եթե զումարենք Ելեփանտինեից մինչև այդ փախստականներն ընկած ամբողջ ճանապարհի ժամանակը: Գետը (այստեղ) հոսում է արևմուտքից: Այստեղից այն կողմ ոչ ոք ոչինչ չի կարող ասել, քանզի այդ երկիրը կիզված անապատ է:

32. Բայց հետեւյալը ես լսեցի կյուրենացի այրերից, որոնք պատմում էին, թե Ամմոնի պատգամատունն անցնելիս, նրանք զրուցել են ամմոնացվոց թագավոր Եռեարքոսի հետ: Եվ անա, զրույցի ընթացքում խմիչքայլոց խոսք է եղել նաև Նեղոսի մասին, թե՝ ոչ ոք չգիտի դրա ակունքների մասին: Այնժամ Եռեարքոսը պատմում է, թե՝ մի անգամ իր մոտ գալիս են նասամոնացի մարդիկ: Այս ազգը լիբիական է և ապրում է Սյուրտիսում և Սյուրտիսից փոքր-ինչ արևելք գտնվող երկրում: Երբ ժամանած նասամոնացիներին նա հարցնում է, թե՝ ուրիշ ի՞նչ կարող են հաղորդել Լիբիայի անապատների մասին, նրանք պատասխանում են, որ իրենց մոտ եղել են իշխանավորների պարծենկոտ որդիներ, որոնք առնականանալով, միամ են հղանում ավելորդ շատ բաներ անել. և, հատկապես, վինակ նետելով, իրենց միջից բնարում են հինգ հոգու, որպեսզի սրանք այցելեն Լիբիայի անապատը և տեսնեն ավելին, քան ամենահեռավոր վայրեր այցելած մարդիկ: Լիբիայի հյուսիսային ծովի[19] ափին, Եգիպտոսից մինչև Սոլոյիս ճրվանքը ամբողջապես բնակվում են լիբիացիներ, ավելի ճիշտ, լիբիական շատ ազգեր, բացի այն վայրերից, որ զբաղեցնում են հելլենները և փյունիկեցիները: Լիբիայի ծովափը և դրանից այն կողմ երկիրը գազանաշատ է: Այստեղից ավելի վերև ավազ է, հույժ ջրազուրկ և բոլորովին անբնակ: Իրենց հասակակիցների կողմից ուղարկված այդ երիտասարդները պատմել են, որ իրենք ջրով և պարենով լավ ապահովված, սկզբում առաջ գնացին բնակեցված վայրերով. այն անցնելուց հետո հասան գազանաշատ վայրերը. այստեղից էլ դուրս եկան անապատ վայր՝ ուղևորվելով դեպի արևմուտք: Շատ օրեր ավազուտ վայրով գնալուց հետո, նրանք դաշտում տեսան բուսած ծառեր: Եվ երբ նրանք սկսեցին քաղել այդ ծառերի մրգերը, նրանց վրա հարձակվեցին փոքր, սովորականից ցածրահասակ մարդիկ ու բռնելով նրանց, տարան: Նասամոնացիները ոչինչ չէին հասկանում նրանց լեզվից. ոչ էլ տանողներն էին հասկանում նասամոնացիների լեզուն: Նրանց տանում էին բնարձակ հանիների միջով. որոնք անցնելուց հետո հասան մի քաղաք, որտեղ բոլորը հասակով հավասար էին բերողներին, իսկ նրանց գույնը սև էր: Քաղաքի մոտով հոսում է խոշոր գետ, արևմուտքից արևելք, որի մեջ երևում են կոկորդիլոսներ:

33. Անա այս ինձ պատմեց ամմոնացի Եռեարքոսը. ասաց նաև, որ նասամոնացիները, ինչպես այդ պատմել են կյուրենացիները, վերադարձել են և այն մարդիկ, որոնց մոտ նրանք գնացել են, եղել են կախարդներ: Ինչ վերաբերում է (քաղաքի) մոտով հոսող գետին, Եռեարքոսը համարում էր, որ այն Նեղոսն է. ասվածն էլ, իրոք, այդ է ցույց տալիս: Եվ, ինչպես ես եզրակացնում եմ, անհայտի մասին հայտնիից դատելով, Նեղոսը, Իստրոսի նման, սկիզբ է առնում հույնպիսի հեռավոր երկրներում: Իստրոս գետը, սկսվելով կելտերի երկրից, Պյուրենե քաղաքի մոտից, հոսում է Եվրոպան մեջտեղից երկրելով: Իսկ կելտերը բնակվում են Հերակլյան այուներից[20] դուրս և հարևան են կյունեսներին, որոնք բնակվում են Եվրոպայի ծայր արևմուտքում: Իստրոսը, հոսելով ամբողջ Եվրոպայի միջով, վերջանում է Եվքսինյան Պոնտոսում, Իստրիայում, որտեղ բնակվում են միլեթյան գաղութարարները:

34. Այսպիսով, Իստրոսի հունը, որն անցնում է բնակեցված երկրների միջով, շատերին է հայտնի. մինչդեռ Նեղոսի ակունքների մասին ոչ ոք չի կարող պատմել, քանի որ Լիբիան, որի միջով նա հոսում է, անբնակ է և ամայի: Նրա հոսանքի մասին ես պատմեցի այն ամենը, ինչ հնարավոր էր իմանալ հարցնելով: Իսկ այն դուրս է գալիս Եգիպտոս: Եգիպտոսը գտնվում է Կիլիկյան լեռներին գրեթե հանդիպակաց: Այստեղից մինչև Սինոպե, որը գտնվում է Եվքսինյան Պոնտոսում, պինդ գոտեորված մարդու[21] հինգ օրվա ուղիղ հանապարհ է: Սինոպեն ընկած է Իստրոսի գետաբերանին հանդիպակաց[22]: Հետևաբար, իմ կարծիքով, Նեղոսի հունը, որն անցնում է ամբողջ Լիբիայով, նման է Իստրոսի հունին:

35. Արդ, Նեղոսի մասին ասվածը բավական է: Այժմ ես մանրամասն կխոսեմ Եգիպտոսի մասին, քանի որ այդ երկրում ավելի շատ հրաշալի և առավել հիշարժան գործեր կան, քան բոլոր մյուս երկրներում. ուստի և ես առավել կխոսեմ այդ երկրի մասին: Ինչպես Եգիպտացիների կլիման տարբեր է և նրանց գետն իր բնույթով տարբերվում է մյուս գետերից, այնպես էլ նրանց քարերը և սովորույթները գրեթե հակադիր են մյուս մարդկանց (քարերին և սովորույթներին): Այսպես, նրանց մոտ շուկայում կանայք են առևտուր անում, իսկ այրերը մնում են տանը և ոստայնանկում: Մինչ ուրիշները ոստայնանկում են թեզանը դեպի վեր հրելով, Եգիպտացիները՝ դեպի վար: Այրերը բեռը կրում են գլխի վրա, կանայք՝ ուսերին: Կանայք միզում են կանգնած, այրերը՝ նստած: Բնական կարիքներից նրանք թեթևանում են տանը, իսկ ուտում են դրսում, փողոցում, պատճառաբանելով, որ եթե որևէ կարիքի բավարարումը անվայել է, ապա այն

պետք է բավարարել ծածուկ. իսկ եթե ոչ անվայել է, ապա բացահայտ: Ոչ մի կին չի կարող նրանց մոտ քրմություն անել ոչ արական, ոչ իգական աստվածության (տաճարում). մինչդեռ այրերը՝ բոլոր աստվածների և աստվածուհիների (քրմեր կարող են լինել): Որդիներն իրենց կամքին հակառակ պարտավոր չեն խնամել ծնողներին, մինչդեռ դստերն այդ պետք է անեն, թեկուզ և հակառակ իրենց կամքին:

36. Մյուս երկրներում աստվածների քրմերը երկար ծամեր են պահում, մինչդեռ Եգիպտոսում խուզում են: Բոլոր մարդիկ, որպես սգո նշան մերձավորի համար, սովորություն ունեն խուզել իրենց մազերը. իսկ եգիպտացիները, եթե որևէ մեկը մահանում է, ապա երկարացնում են իրենց գլխի մազերն ու մորուքն այն դեպքում, երբ մինչ այդ ածիլում էին: Մյուս ժողովուրդներն ապրում են կենդանիներից առանձին, մինչդեռ եգիպտացիները՝ կենդանիների հետ միասին[23]: Մյուս ժողովուրդները սնվում են ցորենով ու գարիով, մինչդեռ եգիպտացիները դրանցով սնվելը համարում են մեծագույն ամոթ. նրանք հաց պատրաստում են անարից[24], որը ոմանք կոչում են զեյա[25]: Նրանք խմորը հունցում են ոտքերով, իսկ կավը՝ ձեռքերով. նրանք հավաքում են նաև գոմաղբը: Սեռական գործարանները մյուս ժողովուրդները թողնում են ինչպես կան. միայն եգիպտացիները և այն ժողովուրդները, որոնք նրանցից են սովորել, թլպատում են: Յուրաքանչյուր այր երկու զգեստ ունի, իսկ յուրաքանչյուր կին՝ մեկ: Առագաստների օղակները և պարանները մյուս ժողովուրդները կապում են դրսից, մինչդեռ եգիպտացիները՝ ներսից: Հելլեններն իրենց տառերը գրում և թվերը հաշվում են ձեռքը ձախից աջ բերելով, իսկ եգիպտացիները՝ աջից ձախ: Այդպես անելով հանդերձ, նրանք ասում են, թե իրենք գրում են դեպի աջ, իսկ հելլեները՝ դեպի ձախ: Նրանք օգտագործում են երկու տեսակ գիր. մեկը կոչվում է սրբազան[26], մյուսը՝ դեմոտիկ[27]:

37. Նրանք բոլոր մարդկանցից առավել աստվածավախ լինելով, այսպիսի սովորություններ ունեն: Նրանք խմում են պղնձե գավաթներից և դրանք լվանում ամեն օր. սա ոչ թե մեկը անում է, իսկ մյուսը՝ ոչ, այլ բոլորը: Նրանք հագնում են միշտ նոր լվացված վուշե զգեստ. այդ մասին նրանք հոգ են տանում առանձնապես: Սեռական գործարանները նրանք թլպատում են մաքրության համար, մաքուր լինելը գերադասելով վայելչությունից: Յուրաքանչյուր երրորդ օրը քրմերը սափրում են իրենց ամբողջ մարմինը, որպեսզի աստվածներին ծառայելիս նրանց վրա ոջիլներ կամ այլ պիղծ միջատներ չճայտնվեն: Քրմերը հագնում են միայն վուշե զգեստ և պապիրուսից (պատրաստած) կոշիկներ[28]: Նրանց չի թույլատրվում կրել այլ զգեստ և այլ կոշիկ: Նրանք երկու անգամ ցերեկը և երկու անգամ գիշերը սառը ջրով լողանում են. նրանք կրոնական այլ, կարելի է ասել, բյուրավոր սովորություններ ունեն: Նրանք օգտվում են նաև ոչ քիչ բարիքներից: Նրանք իրենց սեփական միջոցներից ոչինչ չեն օգտագործում կամ ծախսում, քանի որ նրանց համար սրբազան հաց են պատրաստում և ամեն օր նրանցից յուրաքանչյուրին բաժին է հասնում մեծ քանակությամբ եզան և սագի միս. նրանց տրվում է նաև խաղողի գինի: Նրանց թույլ չի տրվում ձուկ ուտել: Եգիպտացիներն իրենց երկրում բակլա բոլորովին չեն ցանում, իսկ (վայրի) ածածներն էլ չեն ուտում ո՛չ հում, ո՛չ էլ եփած: Քրմերը չեն հանդուրժում նույնիսկ տեսնել բակլան, այն համարելով պիղծ ընդեղեն: Յուրաքանչյուր աստված ոչ թե մեկ, այլ շատ քրմեր ունի, որոնցից մեկը քրմապետ է. սրանցից որևէ մեկի մահանալու դեպքում, նրան փոխարինում է նրա որդին:

38. Եզներին նրանք համարում են Եպափոսին[29] ձոնված. ուստի և դրանց ուշադիր զննում են. եթե եզան վրա գտնեն թեկուզ և մեկ հատիկ սև մազ, ապա նրան համարում են պիղծ: Դրանց զննում է այդ նպատակով հատուկ կարգված քրմերից մեկը. ընդ որում, եզանը նախ կանգնեցնում են, ապա պառկեցնում, ապա լեզուն դուրս քաշում, իմանալու համար, թե եզը մաքո՞ւր է արդյոք այն նշաններից, որոնց մասին ես կպատմեմ այլ տեղում[30]: Քուրմը զննում է նաև պոչի մազերը, (տեսնելու համար), թե արդյո՞ք դրանք աճել են բնականոն: Եթե (եզը) այս բոլոր տեսակետներից մաքուր է, ապա (քուրմը) նշում է այդ, նրա եղջյուրին պապիրուս փաթաթելով. ապա այն ծեփում է կնքելու կավով և կնքում իր մատանիով, որից հետո եզին տանում են: (Քրմի կողմից) չնշված (եզան) զոհաբերման հատուցումը մահապատիժն է: Անասունի զննման ձևն այսպիսին է: Իսկ զոհաբերումը կատարվում է հետևյալ կերպ:

39. Նշան արված անասունը բերում են զոհարանի մոտ, ուր այն պետք է զոհաբերվի, և կրակ վառում: Այնուհետև զոհարանի վրա, որտեղ պատկած է զոհաբերվելիք անասունը, գինի հեղելով, կոչում են աստծուն և մորթում (անասունին): Մորթելուց հետո կտրում են գլուխը: Անասունի մարմինը քերթում են, իսկ գլուխը, ծանր անեծքներ արտասանելով, տանում են: Եթե տեղում շուկա կա և հելլեն առևտրականներ են եկել, ապա գլուխը տանում են այնտեղ և վաճառում. իսկ եթե հելլեններ չկան, այդ դեպքում (գլուխը) նետում են գետը: Գլխի վրա նրանք այսպիսի անեծք են ասում. եթե զոհաբերողներին կամ համայն Եգիպտոսին որևէ չարիք է սպառնում, ապա այդ չարիքը թող թափվի այս գլխի վրա: Զոհված անասունների գլուխների, ինչպես նաև գինու հեղման վերաբերյալ բոլոր եգիպտացիները միատեսակ սովորություն ունեն և այն կիրառում են բոլոր զոհաբերությունների ժամանակ: Ուստի և այս սովորության պատճառով, ոչ մի եգիպտացի իրեն սնունդ չի օգտագործում և ոչ մի շնչավոր էակի գլուխ:

40. Բայց զոհերի փորոտիքի մաքրումը և կիզումը տարբեր անասունների դեպքում տարբեր ձևով էր կատարվում: Այժմ ես կպատմեմ (Իսիս)[31] աստվածուհու մասին, որին նրանք համարում են մեծագույն աստվածուհի և նրա պատվին կազմակերպում մեծագույն տոնախմբություններ: Նրան զոհաբերություն անելիս, եզին մաշկահան անելուց հետո, աղոթում են և փորը ամբողջությամբ հանում, մսեղիքի մեջ թողնելով փորոտիքն ու ճարպը: Այնուհետև կարում են գիսարը, ազդրի ծայրը, ուսերը և վիզը, որից հետո եզան մնացած մսեղիքը լցնում են մաքուր հացով, մեղրով, չամիչով, թուզով, խունկով, բուրավետ խեժով և այլ անուշահոտ նյութերով: Այդ ամենը լցնելուց հետո այն կիզում են, վրան առատ ձիթայուղ աելով: Զոհ մատուցելուց առաջ նրանք ծոմ են պահում, իսկ զոհի կիզման ժամանակ բոլորը կոծում են: Ողբը վերջացնելուց հետո, զոհի անկեզ մնացած մասերով խրախճանք են անում:

41. Արդ, բոլոր եգիպտացիները մաքուր եզներին և հորթերին զոհաբերում են, մինչդեռ կովերին թույլ չի տրվում զոհաբերել, դրանք ձոնված են Իսիսին: Իսիսը պատկերվում է կովի եղջյուրներ ունեցող կնոջ կերպարանքով, ինչպես Իոն պատկերվում է հելլենների մոտ. բոլոր կենդանիների մեջ եգիպտացիներն առավել հարգում են կովերին: Այդ պատճառով ոչ մի եգիպտացի կամ եգիպտուհի երբեք հելլեն մարդու բերանը չի համբուրի և չի օգտագործի նրա դանակը, շամփուրը կամ կաթսան, մինչև իսկ չի ուզի մաքուր եզան միսը, եթե այն մորթված է հելլենական դանակով: Սատկած արջառներին նրանք թաղում են հեռակայ կերպ: Կովերին նետում են գետը, իսկ եզներին ամեն մեկը թաղում է (քաղաքի) մերձակայքում, որտեղ որում եղջյուրներից մեկը կամ երկուսը միասին դուրս են ցցվում հողից, իբրև նշան: Երբ գիսակն արդեն փտի և սահմանված ժամանակը հասնի, ամեն քաղաք մի նավակ է գալիս Պրոսոպիտիս կոչված կղզուց, այդ կղզին գտնվում է Դելտայում և նրա պարագիծը ինը պարան է: Արդ, այս Պրոսոպիտիս կղզու վրա կան շատ ուրիշ քաղաքներ ևս, իսկ այն, որտեղից նավակները գալիս են՝ եզների ոսկորները տանելու, կոչվում է Ատարբեխիս, որտեղ և կառուցված է Աֆրոդիտի[32] սուրբ տաճարը: Շատերն այս քաղաքից շրջում են մյուս քաղաքները և հողից հանելով ոսկորները, բերում և թաղում են մեկ վայրում: Մյուս սատկած անասուններին ևս նրանք թաղում են նույն ձևով, ինչ եզներին: Նրանց վերաբերյալ նրանք այսպիսի սովորություն ունեն. քանզի այդ կենդանիներին ևս նրանք չեն սպանում:

42. Բոլոր նրանք, ովքեր սրբավայր են կառուցել Թեբեյան Զևսին կամ ապրում են Թեբեի մարզում, ոչխարներին ձեռք չեն տալիս, այլ զոհաբերում են այծեր: Քանզի նամայն եգիպտոսում բոլորը նույն աստվածներին չեն պաշտում: Միայն Իսիսին և Օսիրիսին, որի մասին նրանք ասում են, թե

Դիոնիսոսն է, բոլոր եգիպտացիները պաշտում են հավասարապես: Մինչդեռ նրանք, ովքեր տաճար են կառուցել Մենդեսին և ապրում են Մենդեսյան մարզում, ձեռք չեն տալիս այծերին և զոհաբերում են ոչխարներ: Արդ, թեբեցիները և բոլոր նրանք, ովքեր նրանց օրինակով ձեռք չեն տալիս ոչխարներին, ասում են, թե այդ սովորույթը իրենց մոտ հաստատվել է հետևյալ պատճառով: Հերակլեսը կամեցել է անպայման տեսնել Զևսին, իսկ սա չի ուզեցել երևալ նրան: Բայց վերջապես, երբ Հերակլեսը շատ է խնդրում, Զևսը այսպիսի բան է մտածում: Մաշկում է խոյի մորթին, կրում դրա գլուխը, այնուհետև հագնում է մորթին ու, խոյի գլուխը պահելով իր առաջ, երևում է Հերակլեսին: Այդ պատճառով անա եգիպտացիները Զևսին պատկերում են խոյի դեմքով. իսկ եգիպտացիներից այն (ընդօրինակեցին) ամմոնացիները, որոնք եգիպտացի ու եթովպացի գաղթականներ են և նրանց լեզուն երկուսի միջին խառնուրդն է: Իմ կարծիքով, ամմոնացի անունը ևս նրանք ստացել են Զևսից. քանզի եգիպտացիները Զևսին անվանում են Ամմոն: Արդ, թեբեցիները խոյեր չեն զոհաբերում, դրանք համարելով սրբազան վերոհիշյալ պատճառով: Բայց տարվա մեջ միայն մեկ օր, Զևսի տոնին, նրանք մեկ խոյ մորթելով և մաշկը քերթելով, նույն ձևով հագցնում են Զևսի արձանին, որից հետո մոտեցնում են Հերակլեսի արձանը: Այդ անելուց հետո, սրբավայրի բոլոր բնակիչները ողբում են խոյին և թաղում այն սրբազան դամբարանում[33]:

43. Հերակլեսի մասին ես այն լսեցի, որ նա տասներկու աստվածներից մեկն է: Բայց մյուս Հերակլեսի մասին, որը հայտնի է հելլեններին, ես Եգիպտոսում ոչ մի տեղ ոչինչ իմանալ չկարողացա: Ես շատ ապացույցներ ունեմ այն մասին, որ ոչ թե եգիպտացիներն են հելլեններից փոխառել Հերակլես անունը, այլ, ընդհակառակը, հելլեններն են փոխառել եգիպտացիներից. հատկապես այն հելլեները, որոնք Ամփիտրիոնի որդուն տվել են Հերակլես անունը: Իմիջիայլոց, այս Հերակլեսի երկու ծնողներն էլ՝ Ամփիտրիոնը և Ալկմենեն, եգիպտական ծագում ունեն[34]: Եգիպտացիները ասում են, որ ո՛չ Պոսեյդոնի, ո՛չ էլ Դիոսկուրոսների անունները իրենց հայտնի չեն եղել, և որ այդ աստվածները չեն պատկանում մյուս աստվածների խմբին: Եթե, իրոք, եգիպտացիները հելլեններից որևէ աստծու անուն փոխառած լինեին, ապա առաջին հերթին սրանց պիտի հիշեին, քանի որ, ինչպես գիտեմ, նրանք այդ ժամանակ զբաղվում էին նավագնացությամբ. իսկ հելլենների մեջ նույնպես կային նավագնացներ: Հետևաբար, եգիպտացիներն ավելի շատ այս աստվածների անունները պիտի իմանային, քան Հերակլեսի: Մինչդեռ Հերակլեսը եգիպտական հին աստված է: Ինչպես պատմում են իրենք, Ամասիսի[35] թագավորությունից դեռևս հազար յոթ հարյուր

տարի առաջ ուր աստվածները դարձել են տասներկու: Դրանցից մեկն էլ եղել է Հերակլեսը:

44. Այս ամենի մասին ինչքան հնարավոր է հստակ իմանալու ցանկությամբ նավեցի նաև Փյունիկիայի Տյուրոս (քաղաքը), լսած լինելով, որ այնտեղ կա Հերակլեսի սրբազան տաճար: Եվ ես տեսա այն, շքեղ զարդարված բազմաթիվ ընծայաբերումներով: Այնտեղ կար նաև երկու սյուն, մեկը մաքուր ոսկուց, մյուսը՝ զմրուխտ քարից, որը գիշեր ժամանակ պայծառ շողում էր: Զրուցելով աստծու քրմերի հետ, ես հարցրի նրանց, թե ինչքա՞ն ժամանակ է, որ կառուցված է եղել իրենց տաճարը: Ու ես իմացա, որ այդ հարցում համակարծիք չեն հելլեններին հետ: Քանզի նրանք ասացին, որ աստծու տաճարը կառուցվել է Տյուրոսը բնակեցնելիս. իսկ Տյուրոսը նրանք բնակեցրել են երկու հազար երեք հարյուր տարի առաջ: Տյուրոսում ես տեսա Հերակլեսի մեկ այլ սրբավայր, որը կրում է Թասոս-յան մականունը: Ես գնացի նաև Թասոս և այնտեղ տեսա փյունիկեցիների հիմնած տաճարը. նրանք Եվրոպային փնտրելու նպատակով հանապարհվելիս, կառուցել են Թասոսը: Այս ամենը կատարվել է Հելլադայում, Հերակլեսի որդի Ամփիտրիոնի ծնվելուց հինգ սերունդ առաջ: Այս ամբողջ պատմվածը պարզ ցույց է տալիս, որ Հերակլեսը եղել է հին աստված: Ուստի և իմ կարծիքով, առավել հիշա են վարվում այն հելլենները, որոնք հաստատել են հերակլեսյան երկու պաշտամունք. մեկին անվանելով օլիմպոսյան, զոհեր են մատուցում իբրև անմահի. մյուսին ընծայաբերումներ անում իբրև հերոսի:

45. Հելլենները պատմում են այլ անմիտ զրույցներ ևս. այդպիսին է նաև Հերակլեսի մասին նրանց պատմածը, թե ինչպես եգիպտացիները, երբ Հերակլեսը գալիս է Եգիպտոս, նրան պսակով զարդարում են և հանդիսավոր երթով տանում զոհաբերելու Զևսին: Նա սկզբում հանգիստ էր, բայց երբ նրանք զոհարանի մոտ սկսեցին արարողությունը, կռվեց նրանց հետ և բոլորին սպանեց: Իմ կարծիքով, նման պատմություններով հելլենները ցույց են տալիս, որ իրենք բոլորովին անտեղյակ են եգիպտացիների բնավորությանն և սովորույթներին: Քանզի այն մարդիկ, որոնք բացի խոզից, եզից ու նորթից, երբ արանք մաքուր են, և սագից, չեն զոհաբերում նույնիսկ անմեղ կենդանիների, ինչպե՞ս կարող էին մարդուն զոհաբերել: Եվ հետո, Հերակլեսը մենակ էր և, ինչպես իրենք են ասում, մանկանացու. ուստի ինչպե՞ս կարող էր բազմաթյուր մարդկանց սպանել: Թող աստվածները և հերոսները բարեշնորհ լինեն մեր նկատմամբ, որ իրենց գործերի մասին այսքան խոսեցինք:

46. Արդ, վերադիրձյալ եգիպտացիները այծեր և նոխազներ չեն զոհաբերում հետևյալ պատճառով: Մենդեսյանները Պանին դասում են ուր աստվածների շարքը և պնդում, որ այդ ութ աստվածները եղել են առավել հին, քան տասներկու աստվածները: Պանի պատկերը նկարիչները և քանդակագործները նկարում և քանդակում են այնպես, ինչպես և հելլենները, այծի գլխով ու նոխազի ոտքերով, թեև նրանք ենթադրում են, որ նա այդպիսին չի եղել, այլ նման է եղել մյուս աստվածներին: Բայց թե ինչո՞ւ նրանք Պանին այդպես են պատկերում, դժվարանում եմ ասել: Մենդեսյանները բոլոր այծերին մեծարում են, իսկ նոխազներին՝ առավել. այծարածները նրանց մոտ մեծ հարգանք են վայելում: Նոխազներից հատկապես մեկը մեծարվում է առավել. և եթե այն մահանում է, համայն Մենդեսյան մարզը մեծապես սգում է: Նոխազը և Պանը եգիպտերեն կոչվում են Մենդես: Երբ ես այդ երկրում էի, տեղի ունեցավ հետևյալ հրեշավոր դեպքը: Նոխազը բացահայտ խառնվեց կնոջ հետ: Այս դեպքը հայտնի դարձավ (բոլոր) մարդկանց:

47. Եգիպտացիները խոզը համարում են պիղծ կենդանի: Եթե որևէ մեկը, մոտով անցնելիս, նպվի խոզին, ապա իսկույն գնում է գետ և հագուստով սուզվում ջրի մեջ: Միայն խոզապահներին, հակառակ նրանց եգիպտական ծագմանը, արգելված է եգիպտական որևէ տաճար մտնելը: Ոչ ոք չի ուզում նրանց հետ իրենց դստերին ամուսնացնել, ոչ էլ նրանց դստերին կնություն վերցնել. ուստի խոզապահները կին են վերցնում իրարից: Բացի Լուսնից և Դիոնիսոսից, ուրիշ ոչ մի աստծու եգիպտացիները խոզ չեն զոհաբերում. իսկ այդ երկու աստվածներին էլ միայն որոշ ժամանակ՝ լիալուսնի օրը. խոզերը զոհաբերելուց հետո մսից ուտում են: Թե ինչո՞ւ այլ տոների ժամանակ նրանք արհամարհում են խոզերին, իսկ այս տոնին զոհում դրանք, եգիպտացիները մի զրույց են պատմում: Ես թեև գիտեմ այն, բայց պատշաճ չեմ համարում պատմել: Իսկ խոզերի զոհաբերումը Լուսնին կատարվում է այսպես: Զոհը մորթելուց հետո, (քուրմը) պոչի ծայրը, փայծաղը և ճարպոնը միասին դնելով, դրանք ծածկում է անասունի փորից հանած ամբողջ ճարպով, որից հետո դրանք կիզում է կրակի վրա: Մնացած միսը ուտում են լիալուսնի օրը, երբ կատարում են զոհաբերումը, բայց ուրիշ օր արդեն չեն ուտում: Իսկ չքավորները, կյանքի նեղ պայմաններ ունենալով, խմորից խոզեր են պատրաստում և, եփելով, դրանք զոհաբերում:

48. Նավակատիքի երեկոյան յուրաքանչյուր եգիպտացի իր դռան առաջ Դիոնիսոսի պատվին մի խոճկոր է մորթում, իսկ (մորթելուց) հետո այն տալիս վաճառող խոզապահին: Դիոնիսոսի մնացած ամբողջ տոնախմբությունը, բացի պարերից, եգիպտացիները կատարում են նույն ձևով, ինչ հելլենները: Միայն թե ֆալլոսների փոխարեն նրանք այլ բան են հորինել. (պատրաստում են) լարերի միջոցով շարժվող մեկ կանգուն մեծությամբ

տիկնիկներ, որոնք կանայք տանում են գլուխներով, շարժելով դրանց առանդամը, որը համարյա նույն մեծության է, ինչ տիկնիկի ամբողջ մարմինը: Առջևից գնում է սենգաճարը, իսկ կանայք հետևում են նրանց, գովերգելով Դիոնիսոսին: Այն մասին, թե ինչո՞ւ այդքան խոշոր է (տիկնիկի) առնանդամը, որը մարմնի միակ շարժվող մասն է, գոյություն ունի սրբազան զրույց:

49. Արդ, իմ կարծիքով, Ամյութեոնի որդի Մելամպուսը անտեղյակ չէր այս զոհաբերմանը, այլ հմուտ էր դրան[36]: Քանզի Մելամպուսն է եղել հելլեններին Դիոնիսոսի անվանը, նրա տոնախմբությանը և ֆալլոսական երգերին ծանոթացնողը: Անշուշտ, նա հելլեններին չի կարողացել հաղորդակից դարձնել ամբողջ պաշտամունքին, այլ հետագա իմաստուններն ավելի ևս բացատրել են ամեն ինչ: Բայց Դիոնիսոսի պատվին տոնական երգի ժամանակ ֆալլոս տանելը ցույց է տվել Մելամպուսը. դրանից էլ սովորելով, հելլենները անում են այդ ամենը: Ես այն կարծիքին եմ, որ Մելամպուսը եղել է իմաստուն մարդ և դրսևորել է մարգարեական ունակություններ: Նա Եգիպտոսում շատ բան սովորելով, իմիջիայլոց, Հելլադա մտցրեց նաև Դիոնիսոսի պաշտամունքը, թեթև փոփոխություններով: Ես չեմ ասի, թե այդ աստծու պատվին եգիպտացիների և հելլեններին տարվող պաշտամունքը պարզապես համընկել է: Եթե այդպես լիներ, ապա այդ պաշտամունքը կունենար հելլենական բնույթ և ոչ թե երևան կգար հետագայում: Չեմ կարող ասել նաև, թե եգիպտացիները այս կամ մեկ այլ սովորություն փոխ են առել հելլեններից: Ավելի շուտ ես համոզված եմ, որ Մելամպուսը Դիոնիսոսի պաշտամունքին ծանոթացել է Լյուդիայի Կադմոսի և նրա հետ Փյունիկիայից այժմ Բեոտիա կոչված երկիրը եկածների միջոցով:

50. Համարյա բոլոր աստվածների անունները Հելլադա եկել են Եգիպտոսից: Այն, որ դրանք մեզ բարբարոսներից են անցել և, իմ կարծիքով, հատկապես Եգիպտոսից, ես հայտնաբերել եմ հարցումներ անելով: Քանզի բացի Պոսեյդոնի և Դիոսկուրոսների, որի մասին ես արդեն ասել եմ, Հերայի, Հեստիայի, Թեմիսի, Քարիտների և Նեռեիսների, մյուս բոլոր աստվածների անունները միշտ էլ հայտնի են եղել Եգիպտոսում: Ես ասում եմ այն, ինչ ասում են իրենք՝ եգիպտացիները: Իսկ մյուս աստվածների անունները, որոնք հայտնի չեն եգիպտացիներին, իմ կարծիքով, իրենց անունները սացել են պելասգներից, բացառյալ Պոսեյդոնին: Այս աստծու մասին իմացել են լիբիացիներից: Քանզի սկզբնապես Պոսեյդոնի անունը իմացել են միայն լիբիացիները, որոնք մշտապես պաշտել են այդ աստծուն: Այսուհանդերձ, եգիպտացիները սովորություն չունեն հերոսներից որևէ մեկին մեծարելու:

51. Այս, ինչպես նաև ուրիշ շատ սովորույթներ, որոնց մասին ես կխոսեմ, հելլեները վերցրել են եգիպտացիներից: Սակայն Հերմեսին ձգված առնանդամով պատկերելը հելլեները փոխ են առել ոչ թե եգիպտացիներից, այլ պելասգներից: Առաջինը հելլենների մեջ աթենացիներն են այդ փոխառել, իսկ նրանցից էլ վերցրել են մյուսները: Քանզի այն ժամանակ, երբ արդեն աթենացիները համարվում էին հելլեններ, պելասգները եկան բնակվելու այդ երկրում, նրանց հետ համատեղ և այնուհետև սկսեցին համարվել հելլեններ: Նա, ով հաղորդակից է կաբեյրների ծեսերին, որոնք սամոթրակացիները, փոխառնելով պելասգներից, կատարում են այժմ, կհասկանա իմ խոսքը: Սամոթրակեն նախկինում բնակեցնում էին պելասգները, որոնք հետագայում բնակվեցին աթենացիների հետ. անա սրանցից են սամոթրակացիները փոխառել այդ ծեսերը: Արդ, աթենացիները հելլենների մեջ առաջիններն էին, որ պելասգներից սովորելով, սկսեցին Հերմեսին պատկերել ձգված առնանդամով. իսկ պելասգները այդ մասին մի սրբազան զրույց են պատմում, որը բացահայտվում է Սամոթրակեում (կատարվող) ծեսերում:

52. Նախկինում, ինչպես անձամբ լսել և իմացել եմ Դոդոնեում[37], պելասգները զոհ մատուցելիս ոչ մի աստծու անուն չէին կոչում, քանի որ նրանք դեռ նրանց անունները չէին լսել: Նրանց «աստվածներ» (θεός= աստված—Ս. Կ.) կոչեցին այն պատճառով, որ նրանք են եղել աշխարհի կարգ ու կանոնը և բոլոր սովորույթները հաստատողները (θέντες դնողներ, հաստատողներ—Ս. Կ.)[38]: Այնուհետև, շատ ժամանակ անց, նրանք առաջին անգամ սովորեցին աստվածների անունները, որոնք եկել էին Եգիպտոսից, բայց բոլորից ուշ՝ Դիոնիսոսի անունը: Հետագայում նրանք այդ անունների մասին պատգամ հարցրին Դոդոնեում. քանզի այդ պատգամատունը հնագույնն է համարվում Հելլադայում, իսկ այդ ժամանակ այն միակն էր: Արդ, երբ պելասգները Դոդոնեում պատգամ հարցրին, թե արդյո՞ք բարբարոսներից փոխ առնեն աստվածների անունները, պատգամատունը պատվիրեց՝ փոխ առնել: Այդ ժամանակից սկսած պելասգները զոհ մատուցելիս օգտագործում են այդ անունները. իսկ հետագայում պելասգներից դրանք վերցրին հելլենները:

53. Այն մասին, թե որտեղի՞ց է ծագել աստվածներից յուրաքանչյուրը և թե արդյո՞ք նրանք բոլորը մշտապես գոյություն ունեցել են և թե ինչպիսի՞ արտաքին տեսք են ունեցել նրանք, հելլենները ոչինչ չգիտեին, այսպես ասած, մինչև երեկ: Քանզի, իմ կարծիքով, Հեսիոդոսը և Հոմերոսը ինձանից ավագ կլինեն ոչ ավելի քան չորս հարյուր տարով[39]: Եվ նրանք են, որ հելլենների համար ստեղծել են աստվածների տոհմագրությունը, տվել նրանց անունները, սահմանել նրանց մատուցվելիք պատիվները,

նրանց գործունեությունը և նկարագրել նրանց արտաքին տեսքը: Մինչդեռ այն պոետները[40], որոնք, ինչպես ասում են, իբր առավել հին են Հեսիոդոսից և Հոմերոսից, իմ կարծիքով, արդեն ծնվել են նրանցից ուշ: Իմ այս պատմածների առաջին մասը լսել եմ Դոդոնեի քրմուհիներից, իսկ վերջին պատմածը՝ Հեսիոդոսի և Հոմերոսի մասին իմ խոսքերն են:

54. Հելլադայի և Լիբիայի պատգամատների մասին եգիպտացիներն այսպես են պատմում: Թեբեյան Զևսի քրմերն ինձ պատմեցին, թե երկու կանայք, Թեբեի քրմուհիներ, տարվել են փյունիկեցիների կողմից: Նրանցից մեկը, ինչպես իրենք իմացել են, վաճառվել է Լիբիայում, իսկ մյուսը՝ Հելլադայում: Այս կանայք էլ, ասացին նրանք, առաջին անգամ պատգամատուն են հաստատել հիշյալ երկրներում: Երբ ես նրանց հարցրի, թե որտեղի՞ց նրանք այդ ամենն այդպես ճշգրիտ գիտեն, նրանք պատասխանեցին, որ իրենք երկար փնտրել են այդ կանանց և, ճիշտ է, չեն կարողացել նրանց գտնել, բայց նրանց մասին լսել են այն, ինչ պատմեցին ինձ:

55. Արդ, այս ամենը ինձ պատմեցին Թեբեի քրմերը: Իսկ Դոդոնեի քրմուհիները ահա թե ինչ պատմեցին: (Մի անգամ) երկու սև աղավնիներ թռչում են եգիպտական Թեբեից և հասնում մեկը՝ Լիբիա, մյուսը՝ իրենց մոտ: Սա, թառելով կաղնու վրա, մարդկային լեզվով դիմում է նրանց և հայտարարում, որ պետք է այստեղ կառուցվի Զևսի պատգամատունը: Դոդոնեցիներն այդ ընդունում են իբրև աստվածային պատգամ և կատարում այն: Իսկ Լիբիա հասած աղավնին, ինչպես պատմում են, պատվիրել է լիբիացիներին կառուցել Ամմոնի պատգամատունը. սա ևս պատկանում է Զևսին: Այս ինձ պատմել են Դոդոնեի քրմուհիները, որոնցից ամենաավագի անունն էր՝ Պրոմենեյա. դրանից առավել երիտասարդի անունը՝ Տիմարետ, իսկ ամենակրտսերի անունը՝ Նիկանդրե: Նույնը պատմեցին նաև Դոդոնեի տաճարի մյուս սպասավորները:

56. Իսկ ես այդ մասին ունեմ հետևյալ կարծիքը: Եթե, իրոք, փյունիկեցիները տարել են քրմուհիներին և նրանցից մեկին վաճառել Լիբիայում, իսկ մյուսին՝ Հելլադայում, ապա, իմ կարծիքով, Թեսպրոտիայում[41]: Այդ ժամանակ Հելլադան դեռ կոչվում էր Պելասգիա: Այստեղ, սարկության մեջ, փարթամ կաղնու տակ, նա հիմնել է Զևսի տաճարը: Ինչպես վայել էր Թեբեում, Զևսի սրբավայրում ծառայություն անողին, նա այստեղ, օտարության մեջ ևս, պահում էր Զևսի հիշատակը: Երբ արդեն սովորել էր հելլեն լեզուն, նա այստեղ պատգամատուն է ստեղծել և պատմել, թե իր քրոջը Լիբիայում վաճառել են այն նույն փյունիկեցիները, որոնք վաճառել են և իրեն:

57. Իմ կարծիքով, դոդոնեցիները այդ կանանց կոչել են աղավնիներ այն պատճառով, որ (վերջիններս) բարբարոս[42] էին և (դոդոնեցիներին)

թվում էր, թե նրանք ծլվլում են հավքերի նման: Իսկ երբ ասում են, թե (որոշ) ժամանակ անց աղավնին խոսել է մարդկային ձայնով, ապա նշանակում է, որ կինն արդեն խոսում էր իրենց համար հասկանալի լեզվով: Քանի դեռ կինը խոսում էր բարբարոս լեզվով, նրանց թվում էր, թե ծլվլում է հավքի նման: Քանզի ինչպե՞ս կարող էր աղավնին խոսել մարդկային լեզվով: Իսկ երբ ասում են, թե աղավնին սև էր, ապա այդ նշանակում է, որ այդ կինը եգիպտուհի էր:

58. Գուշակության եղանակը և՛ եգիպտական Թեբեում, և՛ Դոդոնեում իրար նման էր: Զոհաբերման միջոցով գուշակություններ կատարելը նույնպես անցել է եգիպտոսից: Եգիպտացիները աշխարհում առաջինն են եղել, որ հաստատել են համաժողովրդական տոնախմբություններ և հանդիսավոր երթեր. իսկ նրանցից սովորել են հելլեները: Այս բանի ապացույցն այն է, որ եգիպտական տոնախմբությունները, ակներևաբար, հին ժամանակներում են հաստատվել, իսկ հելլեններինը՝ լոկ վերջերս:

59. Եգիպտացիները համաժողովրդական տոնախմբություններ կատարում են ոչ թե տարին մեկ անգամ, այլ հաճախ: Առավել հաճախ և մեծագույն սիրով՝ Բուբաստիս քաղաքում Արտեմիսի պատվին. երկրորդ՝ Բուսիրիս քաղաքում Իսիսի պատվին. քանզի այդ քաղաքում է գտնվում Իսիսի խոշորագույն սրբավայրը, իսկ եգիպտական այս քաղաքը կառուցված է Դելտայի մեջտեղում. Իսիսը Դեմետրայի եգիպտական անվանումն է: Երրորդ տոնախմբությունը կատարվում է Սաիս քաղաքում՝ Աթենասի պատվին. հինգերորդը՝ Բուտո քաղաքում՝ Լետոյի պատվին. վեցերորդը՝ Պապրեմիս քաղաքում՝ Արեսի պատվին:

60. Բուբաստիս քաղաք գնալիս, եգիպտացիները ահա թե ինչ են անում: Նրանք այնտեղ նավում են գետի վրայով, յուրաքանչյուր նավի մեջ մեծ թվով այրեր և կանայք միասին. կանանցից ոմանք, շխկշխկաններ բռնած, շխկշխկացնում են, այրերից ոմանք էլ նավարկման ամբողջ ընթացքում սրինգ են նվագում, իսկ մնացած կանայք և այրերը երգում են և ծափ տալիս: Երբ նրանք նավելով հասնում են որևէ մեկ այլ քաղաք, նավը մոտեցնելով ափին, ահա թե ինչ են անում: Կանանցից ոմանք շարունակում են անել այն, ինչ արդեն ասացի. ոմանք գոռալով, ծաղրում են այդ քաղաքի կանանց. ոմանք պարում են, իսկ մյուսները, ոտի կանգնելով, փեշերն են բարձրացնում: Այսպես անում են ամեն մի գետափնյա քաղաքի առաջ: Երբ արդեն հասնում են Բուբաստիս, նրանք տոնախմբություն են անում, հարատև զոհեր մատուցելով. այս տոնին ավելի շատ խաղողի գինի է խմվում, քան մնացած ամբողջ տարվա ընթացքում: Այստեղ, ինչպես տեղաբնիկներն են պատմում, շնչված երեխաներին, հավաքվում են յոթ հարյուր հազար այրեր և կանայք:

61. Անա այսպիսին է լինում տոնախմբությունը Բուբաստիսում: Իսկ թե ինչպե՞ս են Բուսիրիս քաղաքում կատարում Իսիսի տոնը, արդեն ասել եմ վերևում[44]: Զոհ մատուցելուց հետո այստեղ բոլոր այրերը և կանայք, բազմաբյուր մարդիկ, ողբում են ու կոծում իրենց: Բայց թե ո՞ւմ համար են ողբում, բույլատրելի չէ ինձ ասել: Իսկ Եգիպտոսում ապրող կարիացիներն ավելին են անում, քան եգիպտացիները: Նրանք դանակներով կտրատում են իրենց ճակատը. սրանով էլ նրանք ցույց են տալիս, որ ոչ թե եգիպտացիներ են, այլ օտարներ:

62. Երբ նրանք խմբվում են Սաիս քաղաքում, ապա զոհաբերության գիշերը մեծ թվով ջահեր են վառում բացօթյա, տների շուրջը: Այդ ջահերը հրազեր են ազով ու ձեթով լցված, որի մակերեսին լողում է պատրույգը. սա էլ վառվում է ամբողջ գիշեր, իսկ այդ տոնը կոչվում է հրազալույց[45]: Այն եգիպտացիները ևս, որոնք չեն եկել այս տոնախմբության, հսկում են և զոհաբերման գիշերը նրանք բոլորը նույնպես վառում են ջահերը. և այսպես, ջահերը վառվում են ոչ միայն Սաիսում, այլև ամբողջ Եգիպտոսում: Թե ինչո՞ւ այդ գիշեր լույս են վառում և այդքան պատիվ մատուցում, այդ մասին կա սրբազան զրույց:

63. Հելիոպոլիս և Բուտո գնացողները միայն զոհաբերություն են կատարում, իսկ Պապրեմիսում և՛ զոհեր են մատուցում, և՛ սրբազան արարողություններ կատարում, ինչպես մյուս վայրերում: Երբ արևը թեքվում է դեպի մայրամուտ, միայն փոքրաթիվ քուրմեր մնում են արձանի մոտ, դրա մասին հոգ տանելու, իսկ մեծ մասը փայտե դագանակներ բռնած, կանգնում են տաճարի դռան առաջ: Նրանց դեմ կանգնած են լինում ավելի քան հազար ուխտավորներ, որոնցից ամեն մեկը նույնպես դագանակ է բռնած: Առածու ոսկեզօծված արձանը՝ փայտե փոքր տաճարանն (տապանի) մեջ տանին նախորդող գիշերը փոխադրում են մեկ ուրիշ սրբազան սենյակ: Արձանի մոտ մնացած փոքրաթիվ քուրմերը քառանիվ կառքի վրա քաշում են տաճարանն (տապանը), դրա մեջ եղած արձանի հետ, իսկ մյուս քուրմերը, որոնք կանգնած են տաճարի մուտքի առաջ, չեն թողնում նրանց մտնել: Իսկ ուխտավորները, պաշտպանելով աստծուն, հարվածում են դիմադրող քուրմերին: Այստեղ սկսվում է դագանակներով բուռն կռիվ, որի ժամանակ իրար գլուխ են ջարդում, իսկ շատեր, ինչպես ես ենթադրում եմ, նույնիսկ մահանում են ստացած վերքերից, թեև եգիպտացիները ասում են, թե ոչ ոք չի մահանում: Տեղաբնիկները պատմում են, թե այդ տոնակատարությունը ծագել է հետևյալ ձևով: Այս սրբավայրում ապրում էր Արեսի մայրը: Արեսը դաստիարակվել էր մորից հեռու: Արդ, երբ նա, առնականանալով, վերադառնում է և ուզում մոտենալ իր մորը, մոր սպասավորները, որոնք նախկինում Արեսին երբեք չէին տեսել, չեն թույլ տալիս նրան հերս

մտնել և արգելում են: Այնժամ Արեսը ուրիշ քաղաքից մարդկանց բերելով, դաժանաբար է վարվում նրանց հետ և մտնում իր մոր մոտ: Սրանից էլ, ասում են, հաստատվել է ծծկոտոցի սովորությունը՝ Արեսի պատվին կատարվող տոնի ժամանակ:

64. Եգիպտացիներն առաջիններն էին, որ իբրև կրոնական սովորություն հաստատեցին սրբավայրում կանանց հետ չխառնվելը, ինչպես նաև կանանց հետ խառնվելուց հետո անլվա սրբավայր չմտնելը: Քանզի գրեթե մնացած բոլորը, բացի եգիպտացիներից և հելլեններից, սրբավայրում խառնվում են և կանանց մոտից վեր կենալով, անլվա մտնում տաճար, ենթադրելով, որ մարդիկ ևս նույնն են, ինչ անասուններ: Չէ՞ որ իրենք տեսնում են, թե ինչպես մյուս անասունները և հավքերը զուգավորվում են աստվածների տաճարներում և սրբավայրերում. եթե այդ հաճելի չլիներ աստծուն, ապա նույնիսկ անասունները այդ չէին անի: Նման պատճառաբանությամբ նրանք այդպես են անում. իսկ այդ բանը ինձ ևս հաճելի չէ: Մինչդեռ եգիպտացիները, ընդհանրապես, առավել խիստ են պահպանում կրոնական ծեսերը, առանձնապես հետևյալները:

65. Եգիպտոսը թեև սահմանակից է Լիբիային, սակայն առանձնապես գազանաշատ չէ. բայց բոլոր եղածները եգիպտացիները համարում են սրբազան: Դրանց մի մասը ընտանի է, մյուսը՝ ոչ: Եթե ես փորձեմ պատմել, թե ինչո՞ւ այդ գազանները համարվում են սրբազան, ապա ես պետք է անդրադառնամ եգիպտացիների կրոնական գործերին. մի բան, որը հենարկելուց ես խուսափում եմ, իսկ այն, ինչ ես հարկանցի պատմեցի այդ մասին, պատմեցի անհրաժեշտությունից մղված: Նրանք անասունների հետ վարվելու այսպիսի սովորություն ունեն: Կենդանիների յուրաքանչյուր տեսակը խնամելու համար եգիպտացիները կարգում են հատուկ մարդկանց, այրերի և կանանց. իսկ այս պաշտոնը ժառանգաբար անցնում է հորից որդուն: Քաղաքի յուրաքանչյուր բնակիչ հետևյալ կերպ է դրսևորում իր հարգանքը (կենդանու հանդեպ): Աղոթք անելուց հետո այն աստծուն, որին ձոնված է կենդանին, նրանք սափրում են իրենց որդիների ամբողջ գլուխը, կամ կեսը, կամ երրորդ մասը: Այնուհետև մազերը կշռում են արծաթի դիմաց: Ինչքան արծաթ որ կշռեցին մազերը, այնքան նա հանձնում է կենդանուն խնամողին, որը դրա դիմաց ձուկ է կտրատում և կերակրում կենդանուն: Այդ կենդանիներն, անա, այսպես են կերակրվում: Եթե որևէ մեկը դիտավորյալ սպանի այդ կենդանիներից որևէ մեկին, ենթարկվում է մահապատժի. իսկ եթե սպանի պատահաբար, ապա կվճարի այնքան տուգանք, ինչքան կսահմանեն քուրմերը: Իսկ նա, ով սպանի իբիս[46] կամ բազե, կամա թե ակամա, ենթարկվում է մահապատժի:

66. Եգիպտացիները ընտանի կենդանիներ թեև շատ ունեն, բայց դրանք

առավել շատ կլինեին, եթե կատուներին հետևյալը չպատահեր: Էգ կատուները, ձագեր ունենալուց հետո, չեն գնում արու կատուների մոտ. իսկ սրանք, ցանկանալով զուգավորվել նրանց հետ, չեն ունենում նրանց: Ուստի և արու կատուները այսպիսի հնար են գործադրում: Խլելով էգերի մոտից ձագերին, հեռու են տանում դրանց և սատկացնում, բայց չեն խժռում: Իսկ էգերը, զրկվելով իրենց ձագերից և ցանկանալով նորից ձագեր ունենալ, գալիս են արուների մոտ. քանզի այս կենդանին սիրում է իր ձագերին: Հրդեհի դեպքում զարմանալի բան է կատարվում կատուների հետ: Եգիպտացիները չեն փորձում հանգցնել կրակը, այլ կանգնում են շրջանակած ու պահպանում կատուներին. իսկ կատուները կարողանում են անհնարելի անցնել մարդկանց մոտով և ցատկել կրակի մեջ: Նման դեպք պատահելիս, եգիպտացիները մեծապես սգում են: Եթե տանը իսկապես բարար կատու սատկի, ապա այդ տան բնակիչները ածիլում են միայն իրենց հոնքերը. իսկ եթե շուն սատկի, ածիլում են ամբողջ մարմինը և գլուխը:

67. Կատուների դիակները տանում են Բուբաստիս քաղաք, որտեղ դրանք զմռսում են և թաղում սրբազան հարկի տակ. իսկ շներին ամեն մեկը թաղում է իր քաղաքում, սրբազան դամբարաններում: Ինչպես շներին, նույն ձևով թաղում են նաև իխնևմոնները[47]: Սրնչակներին և բազեներին տանում են Բուտո քաղաքը, իսկ իբիսներին՝ Հերմեսի քաղաքը: Արջերին, որոնք Եգիպտոսում հազվագյուտ են, և գայլերին, որոնք փիչ խոշոր են աղվեսներից, թաղում են այնտեղ, ուր դրանք գտնվել են:

68. Իսկ կոկորդիլոսի բնույթն այսպիսին է: Ձմռան չորս ամիսների ընթացքում նա ոչինչ չի ուտում: Թեև չորքոտանի, բայց և՛ ցամաքային է, և՛ լճային, որը ձու է դնում հողի վրա և թռչուն նստում: Օրվա մեծ մասը անց է կացնում ցամաքի վրա, իսկ ամբողջ գիշերը՝ գետում. քանզի շուրջ տասնվեց աստ է, քան օդը և ցողը: Մեզ հայտնի բոլոր կենդանիներից այս մեկը փոքրագույնից դառնում է մեծագույն: Նրա ձվերը փիչ են խոշոր սագի ձվերից. իսկ նորածին ձագը լինում է ձվի մեծությանը համապատասխան, բայց անելով, հասնում է տասնյոթ և ավելի կանգուն երկարության: Նա խոզի աչքեր ունի, խոշոր ատամներ և ժանիքներ, իր մարմնին համեմատ: Մրնակ կենդանին է, որ լեզու չունի: Նրա ստորին կզակը անշարժ է և միակ կենդանին է, որը իր վերին կզակը բերում է դեպի ստորին կզակը: Նա ունի ճանկեր ունի և կոնակին՝ կաշա բեղուկավոր մաշկ: Ջրի մեջ կույր է, բայց բաց օդում՝ շատ սրատես: Քանի որ ապրում է ջրում, ապա նրա բերանը ներսից լի է ոգրուկներով: Բոլոր հավերը և գազանները խուսափում են նրանից. բայց սրոֆիլոս (թռչունը) նրա հետ հաշտ ապրում է և ծառայություն մատուցում: Քանզի կոկորդիլոսը ջրից դուրս է գալիս ցամաք և բերանը բացում,— նա սովոր է այդպես անել, երբ փչում է արևմտյան քամին,—այնժամ սրոֆիլոսը մտնում է նրա բերանը և կուլ տալիս սրգրուկներին: Կոկորդիլոսին հաճելի է այս ծառայությունը և նա ոչ մի վնաս չի հասցնում սրոֆիլոսին:

69. Եգիպտացիների մի մասը կոկորդիլոսներին սրբազան է համարում, մյուս մասը՝ ոչ, և նույնիսկ թշնամաբար վերաբերվում: Թեբեի մարզում և Մոյրիս լճի մոտ ապրողները կոկորդիլոսներին համարում են հույժ սրբազան: Այդ վայրերից յուրաքանչյուրում խնամում են ընտելացրած մեկական կոկորդիլոս: Նրանց ականջներին ամրացնում են ապակուց և ոսկուց պատրաստած զարդեր, իսկ առջևի ոտներին՝ ապարանջաններ: Նրանց մատուցում են հատուկ պատրաստած ուտեստ և զոհեր, և քանի դեռ ողջ են, նրանց լավագույնս խնամում են, իսկ երբ մեռնում են, զմռսում են նրանց և թաղում սրբազան դամբարանում: Մինչդեռ Ելեփանտինե քաղաքի բնակիչները կոկորդիլոսներին չեն համարում սրբազան և նույնիսկ ուտում են: Եգիպտացիները դրանց անվանում են ոչ թե կոկորդիլոս, այլ խամպսա: Դրանց կոկորդիլոս անվանեցին հոնիացիները, քանի որ դրանք նման էին իրենց ցանկապատերի վրա եղած մողեսներին[48]:

70. Կոկորդիլոս որսալու տարբեր ձևեր կան: Ես կնկարագրեմ միայն մեկը, որն, ըստ իս, առավել արժանի է հիշատակման: Խոզի կոնակը իբրև խայծ կարթին հագցնելուց հետո, որսորդը այն նետում է գետը, իսկ իմը, կենդանի խոճկորը գրկին, գետափին կանգնած, ծեծում է այն: Կոկորդիլոսը, լսելով խոճկորի ճիչը, մոտենում է և կոնակը նկատելով, կուլ է տալիս այն. իսկ որսորդները քաշում են նրան: Երբ արդեն նրան հանում են ցամաք, առաջին հերթին նրա աչքերը ծեփում են ցեխով: Այդ անելուց հետո մնացածը արդեն հեշտ է. իսկ առանց դրան՝ դժվար:

71. Գետափերը Պապրեմիսի մարզում համարվում են սրբազան, մինչդեռ մնացած Եգիպտոսում՝ ոչ: Նրանց տրամաբանությունը այսպիսին է: Զորքոտանի են, երկամբակավոր՝ եզան նման, լայնաղունչ, ձիու քաշով, ցցված ժանիքներով, ձիու պոչով ու ձիու ձայնով, մեծությունը՝ հսկա եզան չափ: Կաշին այնքան հաստ է, որ չորացնելուց հետո դրանից պատրաստում են նիզակի կոթ:

72. Գետում կան նաև ջրասամույրներ, որոնց համարում են սրբազան: Նրանք սրբազան համարում են նաև լեպիդոտոս[49] կոչված ձուկը և օձաձուկը, դրանց համարելով Նեղոսին ձոնված: Հավքերից նրանք սրբազան են համարում աղվեսասագերին[50]:

73. Կա մեկ այլ սրբազան թռչուն ևս, անունը փյունիկ[51]: Ինքս այն երբեք չեմ տեսել (կենդանի), այլ միայն պատկերված, քանի որ այն հազվադեպ է գալիս Եգիպտոս, ինչպես պատմում են հելիոպոլսեցիք, հինգ

ճարյուր տարին մեկ: Պատմում են, թե փյունիկը գալիս է միայն այն ժամանակ, երբ մեռնում է նրա հայրը: Եթե նա նիշտ է պատկերված, ապա նրա արտաքինը և մեծությունը այսպիսին կլինի: Նրա փետուրները մասամբ ոսկեգույն են, իսկ մեծ մասամբ՝ կարմիր: Իր տեսքով և մեծությամբ առավել նման է արծվին: Եգիպտացիները ասում թե ինչ են պատմում նրա ճանապարհորդության մասին, բայց ես դրան չեմ հավատում: Նա, իբր, Արաբիայից թռչում, գալիս է Հելիոսի տաճարը, բերելով իր հետ զմուռսով պատված հորը և թաղում այդ տաճարում: Բերում է նրան այսպես: Նախ զմուռսից պատրաստում է ձու, այնքան ծանր, ինչքան ինքը կարող է տանել, օրից հետո փորձում է այն բարձրացնել: Այնուհետև, դատարկելով ձուն, իր հորը դնում է դրա մեջ, փակում անցքը զմուռսով, որ հանել էր ձվից ներդնելու համար: Զուն, այսպիսով, հոր մարմնի հետ միասին ունենում է նույն (սկզբնական) ծանրությունը: Այնժամ փյունիկը վերցնում է ձուն և այն բերում Եգիպտոս՝ Հելիոսի տաճար: Ահա այն, ինչ պատմում են այդ թռչունի արածների մասին:

74. Թեբեի մարզում կան արքայական օձեր, մարդկանց համար ոչ վտանգավոր, որոնք թեև փոքր են, բայց նրանց գլխի գագաթին երկու եղջյուր կա բուսած: Երբ նրանք սատկում են, նրանց թաղում են Զևսի տաճարում. քանզի նրանք, եգիպտացիների պատմելով, ձոնված են այդ աստծուն:

75. Բուտո քաղաքի մոտ, Արաբիայում կա մի վայր, ուր ես գնացի, իմանալու համար թևավոր օձերի մասին[52]: Տեղ հասնելով, ես տեսա անհաշիվ քանակությամբ օձի ոսկորներ և ողնաշարներ: Այնտեղ կային ոսկորների և ողնաշարների խոշոր, պակաս խոշոր և առավել փոքր կույտեր, դրանց թիվը մեծ էր: Այն վայրը, որտեղ թափած են այդ ոսկորները, մի նեղ մուտք է, որը լեռնային կիրճերից տանում է դեպի մի մեծ դաշտավայր: Այդ դաշտավայրը հարում է Եգիպտոսի դաշտավայրին: Զրույց կա, թե գարնանամուտին թևավոր օձերը Արաբիայից թռչում են դեպի Եգիպտոս. բայց իբիս թռչունները ելնում են նրանց դեմ այս մուտքի մոտ, խանգարում նրանց անցումը և կոտորում նրանց: Այդ պատճառով էլ, պատմում են արաբները, եգիպտացիները մեծապես հարգում են իբիսին: Եգիպտացիները ևս համաձայն են, որ այդ պատճառով են հարգում այդ թռչունին:

76. Իբիսի (արտաքին) տեսքը ահա այսպիսին է: Այն ամբողջապես թուխ սև է. ոտքերը՝ կռունկի ոտքերի նման, կտուցը՝ խիստ ծռված. նրա մեծությունը կրեկս թռչունի[53] չափ է: Այսպիսին է օձերի հետ կռվող այդ սև իբիսի տեսքը: Իսկ նրանց մյուս տեսակը,—քանի որ իբիսները երկու տեսակի են,— որը առավել մոտենում է մարդկանց, ամբողջովին մերկ գլուխ և վիզ ունի. ամբողջ մարմինը, բացի գլխից, պարանոցից և թևերի

ու պոչի ծայրերից, որոնք թուխ սև են, ծածկված է սպիտակ փետուրներով: Ոտքերը և կտուցը նույն ձևի են, ինչ մյուս տեսակինը: Իսկ (թևավոր) օձերի տեսքը նման է ջրային օձերին. նրանց թևերը փետրավոր չեն, այլ նման են չղջիկի թևերին: Արքայական կենդանիների մասին այսքանը բավական է:

77. Եգիպտացիներից նրանք, որոնք բնակվում են Եգիպտոսի մշակվող հատվածում, բոլոր մարդկանցից առավել պահպանում են իրենց անցյալի հիշատակը, ուստի և առավել շատ գիտեն անցյալի մասին, քան բոլոր մյուսները, ում ես դիմել եմ հարցերով: Իսկ նրանց կենցաղը այսպիսին է: Յուրաքանչյուր ամիս երեք օր շարունակ նրանք լուծողականով մաքրում են իրենց և հոգում իրենց առողջության մասին՝ փսխումներով և հոգնաներով. քանզի նրանք կարծում են, թե մարդկային բոլոր հիվանդությունները առաջանում են ուտեստից: Առանց այդ էլ եգիպտացիները ամենաառողջներն են մարդկանցից, լիբիացիներից հետո: Այդ, իմ կարծիքով, կլիմայից է, քանի որ այնտեղ տարվա եղանակները չեն փոփոխվում: Իրոք, փոփոխությունը մարդկանց հիվանդությունների մեծ մասի պատճառն է, մանավանդ եղանակների փոփոխությունը: Նրանք ուտում են անարից պատրաստած հաց, որը կոչում են կյուլլեստիս: Նրանք օգտագործում են գարուց պատրաստած գինի, քանի որ նրանց երկրում որթատունկ չի աճում[54]: Զուկը նրանք ուտում են հում, մասամբ արևի տակ չորացրած, մասամբ աղ դրած: Հավքերից նրանք ուտում են կաքավ, բադ և այլ մանր թռչուններ, դարձյալ հում, աղ դրած: Մնացած բոլոր հավքերը և ձկները, բացի սրբազան համարվածներից, նրանք ուտում են եփելուց կամ տապակելուց հետո:

78. Հարուստների խրախճանքի ժամանակ, ճաշելուց հետո մի մարդ պտտեցնում է դագաղում դրված մեռյալի փայտե պատկերը: Այն մեռյալի նմանությամբ է պատրաստած մեկ կամ երկու կանգուն մեծությամբ, որը յուրաքանչյուր սեղանակցին ցույց տալով, (այդ մարդն) ասում է. «Սրան նայելով, խմիր և զվարճացիր. քանզի մեռնելուց հետո դու ես այսպիսին կլինես»: Նրանք այսպիսի սովորություն ունեն խնջույքի ժամանակ:

79. Նրանք ունեն իրենց հայրենի սովորույթները և դրանց ոչինչ (օտար) չեն ավելացնում: Հիշարժան այլ սովորույթների թվում նրանք սովորություն ունեն կատարելու նաև Լինոս երգը[55], որը երգում են նաև Փյունիկիայում և Կիպրոսում և այլուր: Թեև այն տարբեր ազգերի մոտ տարբեր անուն ունի, բայց այդ նույն այն երգն է, որ հելլեները երգում են և անվանում Լինոս: Ուստի, թեև Եգիպտոսում շատ բան ինձ զարմանալի է թվում, բայց առավել զարմանալին այն է, թե նրանք որտեղի՞ց են վերցրել (այդ երգի) Լինոս անունը: Ակներև է, որ նրանք այն երգել են հնուց անտի: Լինոսը

եգիպտացիների լեզվով կոչվում է Մանեռոս: Քրմերն ինձ պատմեցին, որ Մանեռոսը եղել է եգիպտոսի առաջին թագավորի միածին որդին, որի անժամանակ մանը ողբալով, եգիպտացիները հարգանք են մատուցում նրան: Այս եղել է նրանց առաջին և միակ երգը:

80. Եգիպտացիները մեկ այլ սովորույթ ևս ունեն, որը նման է հելլեններից միայն լակեդեմոնացիների (սովորույթին): Կրտսերները ավագներին հանդիպելիս, մի կողմ են քաշվում և զիջում ճանապարհը, իսկ մոտենալիս, բարձրանում են նստած տեղից: Բայց անա նրանց այս սովորույթը նման չէ հելլենների ոչ մեկ սովորույթին. փողոցում իրար ողջունելու փոխարեն, բարևում են՝ ձեռքը իջեցնելով մինչև ծունկը:

81. Նրանք տակից հագնում են ծոպավոր հագնցքով վուշե խիտոններ, որ կոչում են «կալասիրիս»: Դրանց վրայից հագնում են բրդյա սպիտակ զգեստ, որպես թիկնոց: Այսուհանդերձ, նրանք երբեք բրդե զգեստով տաճար չեն մտնում, ոչ էլ դրանց մեջ ենչեցյալին թաղում. այդ համարում են պիղծ: Այս ամենը նման են Օրփեոյան և Բակքոսյան խորհուրդների ծեսերին, որոնք եգիպտական են և պյութագորյան: Այս խորհուրդների հետևորդներին չէր թույլատրվում թաղել բրդե հագուստների մեջ: Այս մասին կա արքազան գրույց:

82. Եգիպտացիները մտահղացել են մեկ այլ բան ևս: Նրանք յուրաքանչյուր ամիսը և ամսվա յուրաքանչյուր օրը ձոնել են որևէ աստծու: Ամեն մեկը կարող է կանխագուշակել, թե այս կամ այդ օրը ծնված մարդը ինչպիսի՞ն է լինելու և ի՞նչ նակատագիր ու վախճան է ունենալու: Այս ևս վերցնելով նրանցից, օգտագործել են հելլեն պոետները: Նրանք հրաշքներին առավել մեծ կարևորություն են տալիս, քան ուրիշ մարդիկ: Այսպես, որևէ հրաշք պատահելիս, եգիպտացիները հետևում են դրան և նշում պատահածի մասին. և եթե հետագայում նման բան կատարվի, նրանք ենթադրում են, որ հետևանքը նույնը պետք է լինի:

83. Գուշակությունը նրանց մոտ այսպիսին է: Գուշակության արվեստը մարդկանցից ոչ մեկին չէ շնորհված, այլ դրան տիրապետում են միայն աստվածներից ոմանք: Նրանց երկրում կան Հերակլեսի, Ապոլլոնի, Աթենասի, Արտեմիսի, Արեսի և Զևսի պատգամատները. բայց բոլորից առավել պատիվ նրանք մատուցում են Լետոյի պատգամատանը, որը գտնվում է Բուտո քաղաքում: Այսուհանդերձ, նրանց գուշակելու եղանակները տարբեր են:

84. Բժշկագիտությունը նրանց մոտ տարբերակված է: Յուրաքանչյուր բժիշկ բուժում է միայն մեկ հիվանդություն, ոչ թե մի քանի: Ամբողջ երկիրը լցված է բժիշկներով: Ոմանք ակնաբույժ են, մյուսները՝ ատամնաբույժ, ոմանք գլխացավի բժիշկ, մյուսները՝ որովայնի, ոմանք էլ ներքին հիվանդությունների:

85. Մեռյալի վրա ողբալը և նրա թաղումը կատարվում է հետևյալ կերպ: Եթե տանը մահանում է ինչ-որ չափով արժանի մարդ, ապա այդ տան բոլոր կանայք իրենց գլխին կամ դեմքին ցեխ են քսում: Այնուհետև, մեռյալին տանը թողնելով, կանայք թափառում են քաղաքով, զգեստները բարձր գոտևորած ու ստինքները բացած, ծեծում են իրենց կուրծքը. նրանց միանում են նաև ազգակից բոլոր կանայք: Այրերը նույնպես զգեստները բարձր գոտևորած, ծեծում են իրենց կուրծքը: Այս ամենն անելուց հետո, դիակը տանում են զմռսելու:

86. Կան մարդիկ, որոնք հատկապես կարգված են այդ գործը կատարելու և (զմռսելը) դարձրել են արհեստ: Երբ նրանց մոտ մեռյալ են բերում, նրանք բերողներին ցույց են տալիս տախտակի վրա նկարված դիակների պատկերներ, (զմռսման) լավագույն եղանակը, ասում են նրանք, այն է, որով զմռսում են նրան, ում անունը նման դեպքում տալը պղծություն է[56]: Այնուհետև ցույց են տալիս երկրորդ եղանակը, որն առավել հասարակ է և առավել էժան, իսկ վերջապես երրորդը՝ բոլորից էժան: Այս ցույց տալուց հետո, նրանք հարցնում են դիակը բերողներին, թե ի՞նչ եղանակով են ուզում, որ դիակը զմռսվի: Վարձի մասին համաձայնության գալուց հետո (դիակը բերողները) մեկնում են, իսկ զմռսողները մնում իրենց տեղում և շուտափույթ սկսում զմռսումը: Նախ երկաթե կեռիկով քթածակերից դուրս են հանում ուղեղը: Այս եղանակով նրանք հանում են ուղեղի միայն մի մասը, իսկ մնացածի վրա դեղեր են ներարկում: Այնուհետև եթովպական հատու քարով կարված է բացում անուկի մոտ, դուրս հանում ամբողջ փորը, մաքրում որովայնի խոռոչը և այն լվանում արմավի գինիով, որից հետո դարձյալ մաքրում են առորած անուշահոտ նյութերով. այնուհետև որովայնը լցնում են առորած անարատ զմուռս, կասիա[57] և այլ անուշահոտ նյութեր, բացի խնկից, և դարձյալ կարում: Այդ ամենը կատարելուց հետո, դիակը յոթանասուն օր պահում են պոտաշաչրի մեջ: Ավելի երկար ժամանակ չի կարելի այն թողնել (լուծույթի մեջ): Յոթանասուն օրն անցնելուց հետո, դիակը լվանում են, փաթաթում բեհեզյա կտավից կտրած ժապավեններով և պատում խեժով[58], որը եգիպտացիներն առավելապես օգտագործում են ոսոնձի փոխարեն: Այս արվելուց հետո, հարազատները ետ են վերցնում դիակը, պատրաստում մարդու կերպարանքով դագաղ, մեռյալին դնում դրա մեջ, փակում այն և պահում դամբարանում, որտեղ դագաղը զետեղում են պատին՝ կանգնած դիրքով:

87. Այսպիսին է դիակները թանկ զմռսելու եղանակը: Իսկ եթե թանկությունից խուսափելով կամենում են միջինը, ապա զմռսումը կատարում

են հետևյալ եղանակով: (Զմռսողները) գրեխներով մայրու յուղ են ներարկում մեռյալի որովայնի մեջ, առանց հեռացնելու և փորոտիքը հանելու: Յուղը ներարկում են հետանցքից, ապա խցանում այն, որպեսզի յուղը չթափվի: Այնուհետև դիակը զմռսում են, սահմանված օրեր թողնելով (պոտաշաջրի մեջ), իսկ վերջին օրը փորից բաց են թողնում ներարկած մայրու յուղը: Յուղն այնքան ուժեղ է, որ քայքայում և իր հետ դուրս է բերում ամբողջ որովայնն ու փորոտիքը: Իսկ պոտաշաջուրը քայքայում է մսերը, այնպես, որ դիակից մնում է միայն կաշին ու ոսկորը: Այս ամենն անելուց հետո դիակը վերադարձնում են հարազատներին:

88 .Առավել չքավորներին զմռսելու երրորդ եղանակը այսպիսին է. որովայնը մաքրում են բողկի հյութով, դիակը յոթանասուն օր թողնում պոտաշաջրի մեջ, որից հետո այն վերադարձնում են հարազատներին:

89. Երեքի մարդկանց կանանց, ինչպես նաև շատ գեղեցիկ և հարգարժան կանանց մարմինները զմռսման հանձնում են ոչ թե մեռնելուց անմիջապես հետո, այլ երեք կամ չորս օր անց: Այդպես անում են, որպեսզի զմռսողները չխառնվեն նրանց. քանզի պատմում են, որ մեկը բռնվել է նոր մահացած կնոջ դիակին խառնվելիս. նրան մատնել է իր ուհեստակիցը:

90. Եթե որևէ եգիպտացու և կամ, միևնույնն է, օտարերկրացու կոկորդիլոսը խլի և կամ նա խեղդվի գետում, ապա այն քաղաքի բնակիչները, որտեղ դիակը ափ է դուրս բերվում, պարտավոր են անպայման զմրսել նրան և լավագույնս հոգ տանելով, թաղել սրբազան դամբարանում: Ո՛չ հարազատներին, ո՛չ բարեկամներին թույլ չի տրվում ձեռք տալ նրան, այլ միայն Նեղոսի քրմերին, որոնք իրենց ձեռքով թաղում են նրան որպես մարդուց առավել վեհ մի էակի:

91. Եգիպտացիները խուսափում են հելլենական սովորույթներից օգտվելուց: Ընդհանրապես, նրանք խուսափում են բոլոր մյուս մարդկանց սովորույթներից: Արդ, մյուս բոլոր եգիպտացիները զգուշությամբ պահպանում են այս սկզբունքը: Բայց կա մի խոշոր քաղաք Թեբեական երկրում, Նեապոլսի մոտ, անունը Քեմմիս: Այս քաղաքում կա Դանայայի որդի Պերսևսի քառակուսի սրբավայրը, որի շուրջը աճում են արմավենիներ: Սրբավայրի հսկա նախամուտքը քարակերտ է, որտեղ և կանգնած են քառ երկու խոշոր արձաններ: Սրբավայրում կա տաճար, ուր կանգնած է Պերսևսի արձանը: Այս Քեմմիսի բնակիչները պատմում են, թե Պերսևսը բազմիցս հայտնվել է իրենց երկրում այս ու այնտեղ, հաճախ նաև սրբավայրում, թե զտել են նրա հագած մուկները, երկու կանգուն մեծության. ամեն անգամ, երբ այդ մուկները հայտնվում են, ամբողջ Եգիպտոսը բարգավաճում է: Նրանք այսպես են պատմում և, հելլենական սովորության նման, ամենատեսակ մարզական մրցումներ կազմակերպում Պերսևսի պատվին, հաղթողներին մրցանակ տալով անասուններ, թիկնոցներ և մորթիներ: Երբ ես հարցրի, թե ինչո՞ւ Պերսևսը միայն իրենց է հայտնվում և ինչո՞ւ իրենք, ի տարբերություն մյուս եգիպտացիների, մարզական մրցումներ են կազմակերպում, նրանք պատասխանեցին, թե Պերսևսը սերում է իրենց քաղաքից: Քանզի Դանաոսը և Լյունկևսը եղել են Քեմմիսի բնակիչներ և այստեղից նավել են Հելլադա: Նրանց առնմագրությունը իջեցնում և հասցնում են մինչև Պերսևսը: (Նրանք պատմում են, որ) Պերսևսը գալիս է Եգիպտոս, ինչպես հելլեններն են ասում, Լիբիայից Գորգոյի գլուխը բերելու համար: Ահա և նա, գալով Եգիպտոս, ճանաչում է իր բոլոր ազգականներին: Քեմմիս քաղաքի անունը նա Եգիպտոս գալուց առաջ լսել էր մորից: Արդ, նրա հրամանով էլ իրենք կազմակերպել են մարզական մրցումները:

92. Այս ամենը հանձնաուներից վերև բնակվող եգիպտացիների սովորույթներն են: Ի դեպ, նրանք ևս ունեն նույն սովորույթները, ինչ մյուս եգիպտացիները. նրանք ևս մեկ կին են ունենում, ինչպես նաև հելլենները: Սնունդը էժանացնելու համար նրանք հետևել են հետևյալը: Երբ գետը վարարելով ողողում է դաշտերը, ջրում աճում են մեծ քանակությամբ շուշաններ, որոնք եգիպտացիները անվանում են լոտոս: Նրանք քաղում են լոտոսը, արևի տակ չորացնում, նրա՝ կակաշի նմանվող միջուկը ծեծելով մանրացնում են և հաց պատրաստում՝ եփելով կրակի վրա: Այս լոտոսի արմատը ևս կարելի է ուտել և բավական հաճելի է. այն կլոր է՝ խնձորի մեծության: Կան այլ շուշաններ ևս, որոնք նման են վարդի և աճում են գետում: Նրանց պտուղը գտնվում է արմատից ծլած կողմնակի ցողունի ծաղկաբաժակի մեջ, որը շատ նման է պիծակի խորիսխի: Դրա մեջ կան մեծ թվով հունդեր՝ ձիթապտղի կորիզի մեծության, որոնք կարելի է ուտել և՛ թարմ, և՛ չորացրած վիճակում: Նրանք ճահիճներից քաղում են ամենամյա պապիրուսը և դրա վերին մասը կտրելով, օգտագործում այլ նպատակի համար, իսկ ներքևի մնացած մասը՝ մեկ կանգուն երկարությամբ, ուտում են կամ վաճառում: Շատերը, եթե ուզում են պապիրուսը առավել հաճելի օգտագործել, այն ուտում են շիկացած վառարանի մեջ շոգեխաշելուց հետո: Ուրիշներն էլ սնվում են միայն ձկներով: Որսալով ձուկը, նրանք այն մաքրում են, չորացնում արևի տակ և ուտում:

93. Վառոներով լողացող ձկները քիչ են հանդիպում գետի (բազուկներում): Դրանք լինում են լճացած ջրերում և ապրում հետևյալ կերպ: Երբ գալիս է ձվադրման ժամանակը, նրանք վառոներով դուրս են գալիս ծով: Առջևից գնում են արուները, արտաբերելով սերմնահեղուկ, որը կուլ են տալիս նրանց հետևից լողացող էգերը և դրանից բեղմնավորվում են: Ծովում բեղմնավորվելուց հետո, ետ են լողում գետով դեպի վեր, դեպի իրենց սովորական վայրերը: Բայց այս անգամ արդեն առաջից գնում են ոչ թե ա-

ռուները, այլ էգերը: Վառոով առջևից լողալիս, նրանք ևս անում են այն, ինչ նախապես արել էին առուները: Նրանք փիշ-փիշ բաց են թողնում կոբեկի նատիկի մեծությամբ ձկնկիթներ, իսկ հետևող առուները կուլ են տալիս գրանք: Այդ հատիկները ձկներ են: Կուլ չգնացած և անվնաս մնացած ձկնկիթներից առաջանում են ձկները և աճում: Եթե որսաք դեպի ծով լողացող ձկները, նրանց գլխի ձախ կողմում բերդված է լինում, իսկ եթե, դեպի վեր լողացող ձկների աջ կողմում է բերդված լինում: Այդպես է լինում այն պատճառով, որ ձկները դեպի ծով իջնելիս, լողում են ձախ ափի երկայնքով, նույնը նաև դեպի վեր վերադառնալիս. բնդ որում, որպեսզի հոսանքը նրանց չքշի և չշեղի իրենց ճանապարհից, լողում են ափին այնքան մոտիկ, որ քսվում են դրան: Երբ Նեղոսն սկսում է վարարել, ապա գետի ջուրը լցներծծվելով, նախ լցնում է գետամերձ փոսերն ու ճանճուտները: Ջուրը լցվելուց անմիջապես հետո այնտեղ վխտում են մանրիկ ձկներ: Թե որտեղի՞ց են հայտնվում այդ ձկնիկները, ինձ թվում է, հասկանալի է: Նախորդ տարին, Նեղոսը հաշվելիս, ձկները ձկնկիթ են թողնում տիղմի մեջ և հետանում վերջին ջրի հետ: Երբ որոշ ժամանակ անց ջուրը վերադառնում է, այդ ձկնկիթից իսկույն ձկներ են դուրս գալիս:

94. Ձկների մասին այսքան: Երկրի ճանճային շրջաններում բնակվող եգիպտացիները օգտագործում են սիլլիկիպրիոնի, որը եգիպտացիներն անվանում են «կիկի»[59], նունդերից ստացած յուղը: Իսկ այն պատրաստում են հետևյալ կերպ: Գետերի և լճերի ափին ցանում են այդ սիլլիկիպրիոնը, որը Հելլադայում աճում է ինքնաբույս, վայրի վիճակում: Եգիպտոսում ցանված առատ, բայց վատ հոտ արձակող բերք է տալիս: Հունդերը հավաքելուց հետո ամանք դրանք մանրացնում և եփում են, ուրիշներ՝ շորացնելուց հետո եփում են և հավաքում հոսած հեղուկը: Այն բաներ է և ոչ պակաս պիտանի՝ հրգի մեջ վառելու համար, բան մեր ձիթայուղը, սակայն այրվելիս ծանր հոտ է արձակում:

95. Անհամար մոծակների դեմ հրանք անս թե ինչպես են պաշտպանվում: Ճանճուտներից վերև բնակվողներին օգնում են աշտարակները, որտեղ բարձրանալով հրանք քնում են. բանզի քամու պատճառով մոծակները չեն կարողանում բարձր թռչել: Իսկ ճանճուտ վայրերի բնակիչներն աշտարակների փոխարեն ուրիշ միջոց են հնարել: Այնտեղ ամեն մարդ ցանց ունի, որով ցերեկը ձուկ է որսում, իսկ գիշերն այն օգտագործում է հետևյալ կերպ: Յանցն առագաստի նման ձգում է հենելու մանրի շուրջ, որից հետո մտնելով այնտեղ, քնում է: Թիկնոցի կամ սավանի տակ պառկելու գեպքում մոծակները կարողանում են դրանց միջով խայթել, մինչդեռ ցանց լինելու դեպքում նույնիսկ չեն փորձում այդ անել:

96. Նրանց բեռնատար նավերը պատրաստած են ականթից[60], որի տեսքը շատ նման է կյուրենյան լոտոսին, բայց որի ճյուղը սոսինձ է: Այս ականթից փայտեր են կտրում երկու կանգուն երկարությամբ և աղյուսի նման շարում իրար վրա, իսկ նավը պատրաստում են հետևյալ կերպ: Երկու կանգունաչափ փայտերը ամրացնում են երկար և ամուր փայտե սեպերով: Նավի կմախքն այսպես պատրաստելուց հետո, դրանց վրա վերևից լայնակի գերաններ են պառկեցնում: Կողեր հրանք չեն պատրաստում, այլ ներսից արանքները փակում են պապիրուսով: Նավը ունենում է մեկ դեկ, որն անցնում է ամբողջ ողնափայտի միջով: Կայմը պատրաստում են ականթից, իսկ առագաստները՝ պապիրուսից: Այս նավերը չեն կարող գետը ի վեր լողալ, եթե բարենպաստ քամի չլինի. ցամաքի վրայից դրանք քաշում են դեպի վեր, իսկ հոսանքով գետն ի վար տարվում են հետևյալ կերպ: Մոշափայտից դրան նման լաստ են պատրաստում՝ եղեգի խսիրով երեսպատած, և շուրջ երկու տաղանդ ծանրությամբ միջանցիկ ծակած մի քար: Լաստը առջևի մասից թողնում են կապած պարանով, որ լողա նավի առջևից. իսկ քարը պարանով կապում են նավի ետևից: Արդ, հոսանքի ուժից լաստը արագ լողում է, իր հետ քաշելով նաև «քարիսը», այդպես են անվանում այդ նավերը, իսկ քարը, որը գետի հատակով քաշվում է ետևից, պահում է ընթացքի ուղղությունը: Այդպիսի շատ նավեր կան Եգիպտոսում. հրանց մեջ նաև այնպիսիք, որոնք բազմահազար տաղանդ տարողություն ունեն:

97. Երբ Նեղոսը ողողում է երկիրը, միայն քաղաքներն են երևում ջրից վերև, գրեթե շատ նման էգեյան ծովի կղզիներին. բանզի մնացած ամբողջ եգիպտական երկիրը ծով է դառնում, իսկ երևում են միայն քաղաքները: Այնժամ արդեն նավարկում են ոչ թե գետի հունով, այլ դաշտավայրի միջով: Այսպես, Նավկրատիսից[61] Մեմփիս նավելիս, անցնում են ուղիղ բուրգերի մոտով: Թեև գետով նավելիս սովորական ուղին այդ չէ, այլ այն անցնում է Դելտայի գագաթով և Կերկասորոս քաղաքի մոտով: Մովափից, Կանոբոսից դեպի Նավկրատիս, դաշտի միջով նավելիս, կհասնես Անթյուլլա քաղաքը և, այսպես կոչված, Արքանդրոսի քաղաքը:

98. Սրանցից Անթյուլլա քաղաքը հայտնի է և սահմանված է, որ այն պետք է կոչիկ մատակարարի եգիպտոսի թագավորի կնոջը. այս կարգը սահմանված է եղել Եգիպտոսում՝ պարսից տիրապետության ժամանակ: Մյուս քաղաքը, իմ կարծիքով, իր անունը ստացել է Դանաոսի փեսա Արքանդրոսից. սա Աբայոսի որդի Փթիոսի որդին էր: Եվ, իրոք, կոչվում է Արքանդրոսի քաղաք: Գուցե և եղել է մեկ ուրիշ Արքանդրոս ևս, բայց, այնուամենայնիվ, այդ անունը եգիպտական չէ:

99. Մինչև այստեղ այն, ինչ պատմեցի, իմ սեփական եզրակացություններն են՝ հիմնված տեսածիս և հավաքած տեղեկությունների վրա: Այ-

նունեան կպատմեմ այն, ինչ լսել եմ Եգիպտոսի պատմության մասին, ավելացնելով նաև իմ տեսածները: Քրմերը պատմեցին, թե Եգիպտոսի առաջին թագավոր Մինը պատնեշել է Մեմփիսը (Նեղոսից): Քանզի գետը միշտ հոսելով է Լիբիայի կողմի ավազոտ լեռների մոտով, իսկ Մինը Մեմփիսից գրեթե հարյուր ասպարեզ վերև պատնեշով փակում է Նեղոսի հարավ նայող ոլորանը, որով շորացնում է նախկին հունը և գետի հոսանքը ուղղում լեռների միջով: Այժմ պարսիկները մեծ զգուշությամբ պահում են Նեղոսի այս ոլորանը, ամեն տարի ամրացնելով այդ պատնեշը: Քանզի եթե գետը բանի այդ պատնեշը և ափերից դուրս գա, ապա Մեմփիսն ամբողջապես ողողվելու վտանգի տակ կլինի: Մինը՝ առաջին թագավորը, պատնեշի միջոցով շորացված վայրում կառուցել է քաղաք, որն այժմ կոչվում է Մեմփիս: Մեմփիսը նույնպես գտնվում է Եգիպտոսի նեղ մասում: Մեմփիսից դուրս, քաղաքից հյուսիս-արևմուտք, նա լիճ է բացում և լցնում գետի ջրով, քանի որ արևելքից արդեն քաղաքի մոտով հոսում է ինքը՝ Նեղոսը: Բացի այդ, նա քաղաքում կառուցել է նաև Հեփեստոսի տաճարը, որը խոշոր է և շատ տեսարժան:

100. Մինից հետո քրմերն իրենց պապիրուսե գրքերից նշեցին երեք հարյուր երեսուն թագավորների անունները: Այսքան սերունդների ընթացքում այս թագավորներից տասնութը եղել են եթովպացիներ, մեկը՝ տեղական մի կին, իսկ մյուսները՝ եգիպտացի այրեր: Գահակալած այդ կնոջ անունը, Բաբելոնում գահակալածի նման, եղել է Նիտոկրիս: Պատմում էին, որ նա վրեժ է լուծել իր եղբոր համար, որը նախապես թագավորել է Եգիպտոսում և սպանվել եգիպտացիների կողմից: Սպանելով նրա եղբորը, եգիպտացիները նրան հանձնեցին թագավորական իշխանությունը, իսկ սա դրա համար պատժեց շատ եգիպտացիների և դավադրաբար սպանեց նրանց այսպես: Նա հրամայեց կառուցել ստորգետնյա ընդարձակ սենյակ: Դրա բացման հանդիսության պատրվակով, բայց բոլորովին այլ մտադրությամբ, նա խնջույքի հրավիրեց բոլոր նրանց, ում ինքը գիտեր որպես իր եղբոր սպանության գլխավոր մեղսակիցների, և մինչ նրանք խրախճանքի մեջ էին, հրամայեց մեծ, գաղտնի ջրանցքով ջուրը բաց թողնել դեպի սենյակը: Դրա մասին պատմեցին այսքանը: Ավելացրին նաև, որ նա, այս անելուց հետո, վրեժխնդրությունից խուսափելու համար, իրեն նետում է չհանգած մոխրով լցված սենյակ:

101. Նրանք պատմեցին, որ մյուս թագավորներից ոչ մեկը ոչ մի ակնառու և փայլուն գործ չի կատարել, բացի վերջին թագավոր Մոյրիսից: Սա իր մասին հիշատակ է թողել այն, որ կառուցել է Հեփեստոսի արևելյան դարպասի դիմաց գտնվող հյուսիսային նախամուտքը, ինչպես նաև՝ մի լիճ, որի պարագիծը հետո կասեմ, թե քանի ասպարեզ է, բացի այդ, նա լճի վրա կառուցել է

նաև բուրգեր, որոնց չափերի մասին կխոսեմ լիճը նկարագրելու ժամանակ: Մոյրիսն այսքան գործեր է կատարել, իսկ մյուսները՝ ոչինչ:

102. Ուստի և ես, շրջանցելով նրանց, կհիշատակեմ նրանց հաջորդած թագավորի մասին, որի անունն էր Սեսոստրիս[63]: Քրմերը պատմեցին, որ նա առաջինը երկար ռազմանավերով արշավել է Արաբական ծոցից և նվաճել Կարմիր ծովի[64] շուրջ ապրող բնակիչներին, մինչև որ նա առաջ գնալով հասնում է ծովի այն հատվածը, որն արդեն նավարկելի չէր խութերի պատճառով: Այնտեղից Եգիպտոս վերադառնալուց հետո նա, ինչպես պատմեցին քրմերը, մեծաթիվ զորք է հավաքել և շարժվել մայր ցամաքով, նվաճելով իր ճանապարհին ընկած բոլոր ազգերին: Եթե հանդիպած ազգը քաջարի էր և արիաբար կռվում էր ազատությունից, ապա նա այդ երկրում կոթող էր կանգնեցնում արձանագրությամբ, որով հայտնում էր իր և իր երկրի անունը, նաև այն, որ ինքը զենքի ուժով նվաճել է նրանց: Իսկ եթե որևէ ազգի քաղաք նա գրավում էր հեշտ և առանց դիմադրության հանդիպելու, ապա այնտեղ ևս նույնպիսի կոթող կանգնեցնելով, ինչպիսին արի մարդկանց երկրում, վրան ավելացնում էր կանացի սեռական գործարանի պատկերը, կամենալով հայտնել, որ նրանք անարի են:

103. Այս գործերն անելուց հետո նա հասնում է մայր ցամաք, դուրս գալիս Ասիա ու Եվրոպա և նվաճում սկյութներին ու թրակիացիներին[65]: Իմ կարծիքով, եգիպտական զորքը հասել է մինչև այստեղ. քանզի նրանց երկրում դեռ կանգուն երևում են այդպիսի կոթողներ, իսկ ավելի հեռվում այդպիսիք չկան արդեն: Այստեղից նա վերադառնում է և, հասնելով Փասիս գետը, զորքի մի մասը թողնում է այստեղ: Ես չեմ կարող հաստատ ասել, արդյո՞ք ինքը՝ Սեսոստրիս թագավորը, իր զորքի մի մասն անջատելով, բնակեցրեց այս երկրում, թե՞ զինվորներից ոմանք, հոգնած նրա թափառումներից, մնացին Փասիս գետի մոտ:

104. Թվում է, թե կոլխերը եգիպտացիներ են: Ես այդ հասկացել եմ առավել վաղ, քան այդ մասին լսել ուրիշներից: Այդ մասին մտածելիս, ես հարցերով դիմեցի և՛ կոլխերին, և՛ եգիպտացիներին: Կոլխերն ավելի լավ հիշում էին եգիպտացիներին, քան եգիպտացիները՝ կոլխերին: Եգիպտացիներն ասում են, որ, իրենց կարծիքով, կոլխերը ծագել են Սեսոստրիսի զորքերից: Ես ինքս նույնպես այդպես եզրակացրի, քանի որ նրանք թուխ են և գանգրահեր, թեև այդ դեռ միայն նրանց հատուկ չէ. քանզի այլ ժողովուրդներ ևս այդպիսին են: Սակայն առավել կարևոր է այն փաստարկը, որ մարդկանցից միայն կոլխերը, եգիպտացիները և եթովպացիները հնուց անտի թլպատվում են: Փյունիկեցիները և սիրիացիները, որոնք ապրում են Պաղեստինում, իրենք իսկ խոստովանում են, որ թլպատումը սովորել են եգիպտացիներից: Իսկ Թերմոդոնտ և Պարթենիոս գետերի մոտ ապրող սի-

ռիացիները և նրանց հարևան մակրոնները[66] ասում են, թե իրենք թլպատ-
ված միայն վերջերս են սովորել կոլխերից: Ահա սրանք են այն միակ ժողո-
վուրդները, որոնք թլպատվում են և թվում է, թե նրանք այդ անում են
եգիպտացիների օրինակով: Ինչ վերաբերում է իրենց՝ եգիպտացիներին ու
Եթիոպացիներին, ապա չեմ կարող ասել, թե նրանցից ո՞ր մեկը մյուսից
է սովորել. հանգի այդ սովորույթը շատ հին է թվում: Այն մասին, թե
մյուսներն այն սովորել են եգիպտացիների հետ հարաբերության մեջ մըտ-
նելուց հետո, ես ունեմ նաև այսպիսի մի ուժեղ փաստարկ: Այն փյունիկեցիներ-
ը, որոնք հարաբերության մեջ են մտնում հելլեններին հետ, այնուհետև
իրենց որդիներին չեն թլպատում:

103. Այժմ թույլ տուր պատմելու ես մի բանի մասին, որում կոլխերը
նման են եգիպտացիներին: Միայն նրանք և եգիպտացիները վուշե կտավ
պատրաստում են միևնույն ձևով. նրանց ամբողջ կենցաղը և լեզուն նման
են իրար: Կոլխական կտավը հելլեններն անվանում են սարդոնական, իսկ
Եգիպտոսից բերվածը՝ եգիպտական:

104. Ինչ վերաբերում է (նվաճված) երկրներում Եգիպտոսի թագավոր
Սեսոստրիսի կանգնեցրած կոթողներին, ապա դրանցից շատերն արդեն գո-
յություն չունեն: Բայց Պալեստինյան Սիրիայում ես ինքս տեսա դրանք՝
վերոհիշյալ գրություններով և կանացի սեռական գործարանների պատկեր-
ներով: Հոնիայում ևս կա այս մարդու երկու պատկերը՝ ժայռի վրա քան-
դակված. մեկը Եփեսոսից Փոկայա տանող ճանապարհին, մյուսը՝ Սարդե-
սից Մայոռան (տանող ճանապարհին)[67]: Թե՛ մեկը և թե՛ մյուսը պատկե-
ռում են չափազանց կանգուն բարձրությամբ տղամարդու. որի աջ ձեռքին նի-
զակ կա, իսկ ձախին՝ աղեղ. մնացած հանդերձանքը ևս համապատասխան
է Եգիպտացիներին ու Եթիոպացիներին: Կրծքի վրա, մեկ ուսից մինչև մյուսը,
փորագրված է արձանագրություն եգիպտական մենենագրերով, որում ա-
սված է. «Այս երկիրը ես նվաճեցի իմ ուսերով»: Թե ո՞վ է նա և ո՞րտեղա-
ցի, ասված չկա նույնում, բայց այլուր նա այդ հայտնել է: Ի դեպ,
այդ մանդակները տեսանելիներից ոմանք նկարագրում են, որ դրանք պատկե-
ռում են Մեմնոնին, բայց նրանք նշմարությունից շատ հեռու են:

105. Ուրեմն, ինչպես պատմում են քրմերը, երբ այս Սեսոստրիսը վերա-
դառնալիս, իր նվաճած երկրներից բերած բազմաթիվ գերիների հետ եկավ
Պելուսիոնի Դաֆնե վայրը, նրա նպատակը, որին Սեսոստրիսը հանձնել էր
Եգիպտոսի իշխանությունը, բազավորին և նրա որդիներին հրավիրում է
խնջույքի, իսկ տանը գրանց պատում փայտով, որից հետո հրդեհում է այն:
Սեսոստրիսը, նկատելով բոցը, իսկույն խորհուրդ է հարցնում իր կնոջից,
թե որ կին ապրելիս էր նրան: Նա խորհուրդ է տալիս իր վեց որդի-
ներից երկուսին նետելով կրակի վրա, վառվող տեղը կամրջել, որից հետո

իրենք կանցնեն նրանց վրայով ու կփրկվեն: Սեսոստրիսն այդպես էլ արեց,
որով և որդիներից երկուսը այրվեցին, իսկ մյուսները, իրենց հոր հետ՝
փրկվեցին:

108. Սեսոստրիսը Եգիպտոս վերադառնալով, վրեժ լուծեց եղբորից,
իսկ նվաճած երկրներից իր հետ բերած մեծաթիվ գերիներին նա օգտա-
գործեց այսպիսի աշխատանքներում: Սրանք էին, որ այդ թագավորի օրոք
քարշ տալով բերեցին Հեփեստոսի սրբավայրի հսկայական վեմերը. սրանք
էին, որ հարկադրաբար փորեցին Եգիպտոսում այժմ եղած բոլոր ջրանցք-
ները. դրանով իսկ Եգիպտոսը, որը նախապես հարմար էր ձիավարության
և կառք քշելու համար, նրանք, ակամայից, դարձրին այդ ամենի համար ոչ
պիտանի: Այդ ժամանակից էլ Եգիպտոսում, թեև ամբողջ երկիրը դաշտային
է, հնարավոր չէ ձի կամ սայլ օգտագործել: Դրա պատճառը այն բազմաթիվ
ջրանցքներն են, որոնք հատում են երկիրը տարբեր ուղղություններով: Իսկ
այդ թագավորը երկիրն այդպես կարատեց, նկատի ունենալով հետևյալը:
Այն եգիպտացիները, որոնց քաղաքները գտնվում էին ոչ թե գետի վրա,
այլ երկրի ներսում, գետը նահանջելուց հետո ջրի պակաս զգալով, խմում
էին ջրհորների աղահամ ջուրը:

109. Ահա այս պատճառով կարատվեց Եգիպտոսը: Այս թագավորը,
ինչպես պատմեցին քրմերը, երկիրը բաժանել է բոլոր եգիպտացիների մի-
ջև, յուրաքանչյուրին տալով հավասար չափի քառակուսի վիճակ և դրանից
նա սահմանում էր եկամուտ, ամենամյա հարկ սահմանելով: Եթե գետը որևէ
մեկի վիճակից ինչ-որ կտոր խլեր, ապա այդ մարդը, գալով Սեսոստրիսի
մոտ, հայտնում էր կատարվածի մասին: Եվ թագավորը մարդ էր ուղարկում
այն տեսնելու և չափելու, թե ինչքա՞ն է նվազել հողամասը, որպեսզի հետ
այսու հողատերը հարկ վճարեր մնացած հողակտորի մեծության համապա-
տասխան: Իմ կարծիքով, այս առիթով էլ առաջացել է երկրաչափությունը
և հետո փոխադրվել Հելլադա: Մինչդեռ «պոլոսը» և «գնոմոնը»[68], ինչպես
նաև օրը տասներկու մասի բաժանելը հելլենները սովորել են բաբելոնա-
ցիներից:

110. Սեսոստրիսը եղել է Եգիպտոսի միակ թագավորը, որն իշխել է
նաև Եվրոպայի վրա: Նա իր մասին հիշատակ է թողել՝ Հեփեստոսի տաճա-
րի առաջ կանգնեցնելով երեսուն կանգուն բարձրության երկու քարե ար-
ձան, մեկը՝ իր, մյուսը՝ կնոջ պատկերով, և իր չորս որդիների արձանները,
յուրաքանչյուրը քառասուն կանգուն բարձրությամբ: Արդեն շատ ժամանակ
անց, երբ պարսիկ Դարեհը կամեցավ իր արձանը կանգնեցնել սրանց ա-
ռաջ, Հեփեստոսի քուրմը թույլ չտվեց, ասելով, թե Դարեհը չի կատարել
այնպիսի (մեծ) գործեր, ինչպիսիք Սեսոստրիս Եգիպտացին: Քանզի Սեսոս-
տրիսը, ասում է նա, նվաճել է ոչ միայն այն ազգերին, որոնց և Դարեհը,

այլև սկյութներին, որոնց չի կարողացել նվաճել Դարեհը: Ուստի և արդար
չէ, որ նրա արձանը կանգնեցվի Սեսոստրիսի արձանների առաջ, որի գոր-
ծերը ոչ ինքը չի գերազանցել: Եվ Դարեհը, ինչպես պատմում են, համա-
ձայնվում է այդ խոսքերին:

111. Սեսոստրիսի վախճանվելուց հետո, պատմում են քրմերը, թագա-
վորությունը ժառանգում է նրա որդի Փեռոնը[69], որը ոչ մի պատերազմ չի
մղել, բայց զժբախտություն է ունեցել կուրանալու հետևյալ հանգամանք-
ների: Այն ժամանակ, երբ գետն աննախընթաց բարձրացել էր մինչև
ութսուն կանգուն և ողողել դաշտերը, ճամի է բարձրանում և գետն ալեկոծ-
վում է: Պատմում են, թե այս թագավորը, անօրենությամբ տարված, վերց-
նելով նիզակը, այն շպրտում է գետի հորձանքի մեջտեղը, որից հետո նրան
չուտով հարվածում է աչքի հիվանդությունը և նա կուրանում է: Նա արդեն
տասը տարի կույր էր, երբ տասնմեկերորդ տարում Բուտո քաղաքից նրան
հասնում է պատգամախոսի գուշակությունը, որ պատժի ժամանակը լրացել
է և նա հարից կտեսնի, եթե իր աչքը լվանա կնոջ մեզով, որը կենակցել է
միայն իր ամուսնու հետ և ուրիշ այրերի չի ճանաչել: Նախ նա փորձեց իր
սեփական կնոջ մեզը, բայց աչքերը չբացվեցին. այնուհետև հերթով փոր-
ձեց մյուսների մեզը: Երբ, վերջապես, սկսեց նորից տեսնել, իր փորձած
բոլոր կանանց, բացի այն մեկից, որի մեզով լվացվելուց հետո սկսել էր
տեսնել, հավաքեց մի քաղաքում, որը այժմ կոչվում է Կարմիր հող[70]:
Նրանց այստեղ հավաքելով, քաղաքով հանդերձ այրեց: Իսկ այն մեկին,
որի մեզով լվացվելուց հետո սկսել էր նորից տեսնել, դարձրեց իր կինը:
Կուրությունից փրկվելուց հետո նա բոլոր հայտնի տաճարներին բազմաթիվ
նվեր, որոնցից ամենագեղեցիկները հասել են Հելիոսի արքայարան: Նրա կանգ-
նեցրած մենակաբար քարից երկու կոթողներ, յուրաքանչյուրը հարյուր կանգուն
բարձրությամբ և ութը կանգուն լայնությամբ:

112. Քրմերը պատմում են, որ արանից հետո թագավորական իշխանու-
թյունն անցավ Մեմփիս քաղաքից մի մարդու, որի անունը հունարեն կլին-
նի Պրոտևս. Մինչև այժմ էլ Մեմփիսում կա նրա շատ գեղեցիկ ու բարե-
կարգ արքայարան, Հեփեստոսի տաճարից դեպի հարավ: Այս արքայարանի մոտ
բնակվում են փյունիկեցիներ Տյուրոսից, իսկ այդ ամբողջ վայրը կոչվում
է տյուրոսցիների բանակատեղի: Պրոտևսի արքայարանում կա տաճար, որը
կոչվում է «տաճար Աֆրոդիտեի տաճար»: Ենթադրում եմ, որ սա Տյուռոսի
Աֆրոդիտեի տաճարն է, քանի որ, համաձայն իմ լսածի, Հելենան
Հելենան ապրել է Պրոտևսի մոտ, իսկ մյուս կողմից, այդ տաճարը
կրում է «տաճար Աֆրոդիտեի անունը: Բացի Աֆրոդիտեի ոչ մեկ այլ տա-
ճար (Աֆրոդիտեում) այդպես չի կոչվում:

113. Երբ ես հարցրի Հելենի մասին, քրմերը պատմեցին հետևյալը:

Ալեքսանդրը[72] Սպարտայից Հելենին առևանգելով, նրա հետ նավում է իր
երկիրը: Երբ նա արդեն էգեյան ծովում էր, հակառակ հողմերը փշում են
նրան Եգիպտական ծով. իսկ այստեղից, քանի որ հողմերը չէին դադարում,
հասնում է Եգիպտոս, այն է՝ Նեղոսի գետաբերան, որն այժմ կոչվում է
Կանոբոսյան, և Տարիքեյա: Ափին կար, այժմ էլ կա, Հերակլեսի տաճարը,
որտեղ եթե որևէ մեկի ստրուկը ապաստան և իր վրա սրբազան նշան-
ներ դնելով, իրեն հանձնի աստծուն, ապա դառնում է անձեռնմխելի: Հնա-
մենի այս սովորույթը կա նաև իմ ժամանակ: Արդ, լսելով տաճարում գո-
յություն ունեցող այդ սովորույթի մասին, Ալեքսանդրի ծառաներից ոմանք
փախչում են այնտեղ և տաճարում նստած, աղերսում են աստծու պաշտ-
պանությունը, մեղադրելով Ալեքսանդրին: Նրան վնասելու նպատակով
պատմում են Հելենի առևանգման ամբողջ պատմությունը և Մենելաոսին
հասցված անարգանքը: Նրանք այս մեղադրանքի մասին պատմում են քրմ-
երին և գետաբերանի պահապանին, որի անունն էր Թոնիս:

114. Թոնիսը լսելով այդ, շտապփույթ այսպիսի հաղորդում հղեց Մեմ-
փիս՝ Պրոտևսին: «Ժամանել է օտարական, ծագումով տակրացի, որը Հել-
լադայում անօրինություն է կատարել: Նա խաբել է իրեն հյուրընկալողին
և, առևանգելով նրա կնոջը, հողմերից փշված, հարուստ գանձերով ժամա-
նել է մեր երկիրը: Արդյոք թույլ տա՞նք նրան անպատիժ մեկնել նավով,
թե՞ վերցնենք նրանից իր ամբողջ բերածը»: Պրոտևսը նրան այսպիսի պա-
տասխան հղեց. «Ով էլ լինի այդ մարդը, եթե իրեն հյուրընկալողի հանդեպ
անօրեն արարք է կատարել, ձերբակալեք և առաջնորդեք ինձ մոտ, որպես-
զի լսեմ, թե ի՞նչ կասի»:

115. Այս լսելով, Թոնիսը ձերբակալում է Ալեքսանդրին և գրավում
նրա նավերը. այնուհետև նրան, Հելենին ու նրա գանձերը, ինչպես նաև
աղերսարկու ծառաներին տանում է գետն ի վեր՝ Մեմփիս: Երբ բոլորն այն-
տեղ բերվեցին, Պրոտևսը հարցրեց Ալեքսանդրին, թե ո՞վ է և որտեղի՞ց է
նավարկել: Ալեքսանդրը թվեց իր նախնիներին, տվեց իր հայրենիքի անու-
նը և պատմեց, թե որտեղի՞ց է նավարկել: Այնժամ Պրոտևսը հարցրեց
նրան, թե որտեղի՞ց է նա վերցրել Հելենին: Քանի որ Ալեքսանդրը պատ-
մելիս խուսափում էր ճշմարիտը ասելուց, աղերսարկու ծառաները բռնում
էին նրա սուտը՝ պատմելով նրա կատարած անօրեն արարքները: Ի
վերջո, Պրոտևսը նրան այսպիսի խոսքեր ասաց. «Եթե ես մշտապես վրդ-
ոված չլինեի չսպանել որևէ օտարականի, որը հողմերից փշված կընկնի իմ
երկիրը, ապա ես կպատժեի քեզ այդ հելլեների օգտին, ո՞վ ստորագույն
մարդ. քեզ, որը հյուրասիրություն գտնելով, անօրեն արարք է կատարել:
Դու գողացար հասար քեզ հյուրընկալողի կնոջը, և այս ամենը քիչ համարե-
լով, գայթակղեցիր նրան փախչել քեզ հետ և առևանգեցիր: Այս ես բավա-

կան չէր, դու հեռանալիս կողոպտեցիր քեզ նյուրընկալողի տունը: Արդ, քանի որ ես չեմ կամենում օտարական սպանել, ապա այս կնոջը և գանձերը բույլ չեմ տա, որ դու տանես, այլ այդ ամենը կպահպանեմ քեզ նյուրընկալած հելլենի համար, եթե ինքը փափագի գալ և տանել. իսկ քեզ և քո ազնկիցներին հրամայում եմ երեք օրվա ընթացքում հեռանալ իմ երկրից մեկ ուրիշ երկիր. եթե ոչ, ես քեզ հետ կվարվեմ այնպես, ինչպես կվարվեի թշնամիների հետ»:

116. Քրմերը պատմեցին, որ իբր այսպես է Հելենեն ժամանել Պրոտեսի մոտ: Իմ կարծիքով, այս պատմությունը հայտնի է եղել նաև Հոմերոսին: Բայց քանի որ այս մեկը չէր հարմարվում իր էպիկական քերթվածին այնպես, ինչպես այն, որ օգտագործել է, ապա գիտակցաբար զանց է առել այդ պատմությունը: Այս բանն ակնհայտ է նրանից, որ «Իլիականը» բանաստեղծելիս Հոմերոսը խոսում է Ալեքսանդրի թափառումների մասին, իսկ ուրիշ ոչ մի տեղ չի հակասում վերոհիշյալ պատմությանը: (Նա պատմում է), թե ինչպես Ալեքսանդրը, Հելենեին փախցնելիս, հյվեց հողմերից և, չեղվելով, թափառեց տարբեր երկրներ, հասնելով նաև Փյունիկիայի Սիդոն քաղաքը: Այդ մասին Հոմերոսը հիշատակում է Դիոմեդեսի սխրանքները երգելիս. խոսքն այնտեղ այսպիսին է.

«Այնտեղ կային պերճ հագուստներ, գործը կանանց սիդոնացի,
Որոնց Պարիսն ասավածակերպ իր հետ բերել էր Սիդոնից
Լայնատարած ծովն անցնելով այն նույն հանփով, որով մի օր
Փախցրել էր ազնվազարմ Հելենեին....»[74]:

Այդ մասին նա հիշատակում է նաև «Ոդիսականում» այսպես.

«Այդպիսի լավ բաներ ուներ Զեսի դուստրը չքնաղ,
Որ ստացել էր Թոնոսի կին Գալիդամնից՝ Եգիպտոսում,
Որ այդպիսի բաներ շատ են տալիս հողամ պտուղ:
Դրանց մի մասն օգտավետ է, իսկ մի մասը՝ մահ պատճառող»[75]:

Մեկ այլ հատվածում Մենելաոսը այսպես է ասում Տելեմաքին.

«Երբ ցանկացա Եգիպտոսից վերադառնալ, ասավածները
Խոչընդոտեցին. չէի ճիշտ նրանց պատվին գան մատուցելու»[76]:

Այս խոսքերից ակնհայտ է, որ (Հոմերոսը) գիտեր Եգիպտոսում Ալեքսանդրի թափառումների մասին. քանզի Սիրիան սահմանակից է Եգիպտոսին, իսկ փյունիկեցիները, որոնց պատկանում է Սիդոնը, բնակվում են Սիրիայում:

117. Այս հատվածների խոսքերից միանգամայն ակնհայտ է, որ «Կիպրականի» պոեմները[77] պատկանում են ոչ թե Հոմերոսին, այլ մեկ ուրիշ

պոետի: Քանզի «Կիպրականի»-ում ասվում է, թե Ալեքսանդրը, օգտվելով հանգիստ քամուց և խաղաղ ծովից, երրորդ օրը Սպարտայից հասնում է Իլիոն, իր հետ բերելով Հելենեին: Մինչդեռ «Իլիական»-ում Հոմերոսը պատմում է, թե ինչպես նա թափառեց Հելենեին բերելիս:

118. Արդ, Հոմերոսին և «Կիպրականը» հանգիստ թողնենք: Բայց երբ ես հարցրի քրմերին, թե հելլեները արդյոք ճի՞շտ են պատմում, թե՞ սխալ Իլիոնի դեպքերի մասին, նրանք պատմեցին ինձ հետևյալը, որ իրենք լսել էին հենց Մենելաոսից: Հելենեի առևանգումից հետո հելլենական մեծաթիվ զորք եկավ տակրերի երկիրը, օգնելու Մենելաոսին: Հելլենները դուրս եկան ցամաք, բանակ դրեցին և Իլիոն ուղարկեցին հրեշտակներ, որոնց թվում էր նաև ինքը՝ Մենելաոսը: Հրեշտակները, մտնելով պարիսպներից ներս, պահանջեցին վերադարձնել Հելենեին և գանձերը, որ Ալեքսանդրը գողացել ու տարել էր, ինչպես նաև հատուցում՝ պատճառած անարգանքի համար: Սակայն տակրերն այդ ժամանակ և հետագայում, երդումներով և առանց երդման, հավաստիացնում էին, թե իրենց մոտ չեն ո՛չ Հելենեն, ո՛չ ևս պահանջված գանձերը, այլ այդ ամենը գտնվում են Եգիպտոսում. ուստի և արդար չէ, որ իրենք պատժվեն այն ամենի համար, ինչը Եգիպտոսի թագավոր Պրոտևսի մոտ է: Բայց հելլեները, ենթադրելով, որ դրանով ծանակում են իրենց, պաշարեցին քաղաքը և ի վերջո գրավեցին այն: Քաղաքը գրավելուց հետո, երբ այնտեղ իսկապես չգտան Հելենեին և երբ նրանց դարձյալ պատմեցին այն, ինչ և նախկինում, այնժամ հելլեները արդեն համոզվեցին, որ նրանք սկզբից ևեթ ճշմարտությունն են ասել. ուստի և Մենելաոսին ուղարկեցին Եգիպտոս՝ Պրոտևսի մոտ:

119. Հասնելով Եգիպտոս, Մենելաոսը նավարկելով բարձրանում է Մեմփիս: Այնտեղ նա պատմում է ճշմարտությունը պատահածի մասին և սիրալիր ընդունելություն գտնում. նա ստանում է ոչ միայն Հելենեին անվնաս, այլև իր ամբողջ գանձերը: Այսպիսի ընդունելությունից հետո Մենելաոսը, այնուամենայնիվ, անարդար է վարվում եգիպտացիների հետ: Երբ նա պետք է մեկներ, հակառակ հողմերը պահում են նրան. և քանի որ այդ երկար է տևում, նա անօրեն միտք է հղանում: Տեղաբնիկ մարդկանց երկու տղաների բռնելով, զոհաբերում է նրանց: Երբ նրա այս արարքը բացահայտվում է, նա, ատելի դարձած և հալածական, հավերով փախչում է Լիբիայից: Իսկ թե այնուհետև ո՞ւր է գնում, եգիպտացիները ոչինչ չգիտեն: Քրմերն ասացին, թե այս ամենը իրենց մասամբ հայտնի է լսելով, բայց իրենց երկրում կատարվածների մասին իրենք հստակ գիտեն:

120. Այսպես պատմեցին ինձ եգիպտացի քրմերը. ես ևս Հելենեի մասին նրանց պատմածը համարում եմ ճշմարտացի. քանի որ, իմ ենթադրությամբ, եթե Հելենեն Իլիոնում լիներ, ապա նրան կհանձնեին հելլեններին

Ալեքսանդրի կամքով, թեկուզ և նրա կամքին հակառակ: Քանզի ոչ Գրիամոսը, ո՛չ էլ նրա մյուս ազգականներն այնքան անմիտ չէին, որպեսզի վտանգեին իրենց կյանքը, իրենց որդիներին և իրենց քաղաքը այն բանի համար, որ Ալեքսանդրը կենակցեր Հեղինեի հետ: Եթե նրանք սկզբում այդպես մտածեին էլ, ապա այն բանից հետո, երբ հելլեններին դեմ կռվելու ընթացքում բազում տրոյացիներ սպանվեցին և, եթե հավատանք պոետների պատմածին, այն բանից հետո, երբ ամեն մի կռվում ընկնում էին իր իսկ Գրիամոսի երկու կամ երեք, կամ ավելի որդիները, ապա, ես վստահ եմ, որ եթե Հեղինեի հետ կենակցելիս լիներ նույնիսկ ինքը՝ Գրիամոսը, նրան կճանաչեր հելլեններին, որպեսզի փրկվեր այդ աղետներից: Ընդ որում, թագավորական իշխանությունը չէր անցնելու Ալեքսանդրին և ծերունի Գրիամոսի փոխարեն նա չէր իշխելու, այլ Հեկտորը, որը սվագն էր և նրանից առավել քաջարի, և պետք է Գրիամոսի մահանալուց հետո ստանձներ իշխանությունը: Սա չէր կարող խրախուսել եղբոր անօրինությունը, մանավանդ, որ Պարիսն այդքան աղետներ պատճառում էր և՛ իրեն, և՛ մյուս տրոյացիներին: Բայց տրոյացիները չէին կարող ետ տալ Հեղինեին, քանի որ նա իրենց մոտ չէր. իսկ հելլենները չճավատացին նրանց, թեև տրոյացիները ճշմարիտն էին ասում: Այս ամենը, իմ կարծիքով, ասված էր այդպես կանխորոշել, որպեսզի նրանց լիովին կործանումը մարդկանց բացատրեր այն, որ մեծ անօրինություններին կհետևեն ասվածային ծանր պատիժներ: Այս է իմ կարծիքը, որը և ես ասացի:

121. Ինչպես պատմեցին Բուսեսից հետո թագավորական իշխանությունը ժառանգում է Խամպսինիտոսը, որը թողնում է հուշարձան՝ Հեփեստոսի տաճարի արևմտյան նախադուռը, իսկ նախադռան առաջ կանգնեցնում երկու արձան՝ քսան և հինգ կանգուն բարձրությամբ: Եգիպտացիներն այդ արձաններից հյուսիսային կողմում կանգնածը անվանում են ամոն, իսկ հարավային կողմում կանգնածը՝ ձմեռ: Ամոն կոչված արձանին նրանք երկրպագում են և բարիք մատուցում, իսկ ձմեռ կոչվածին՝ այդ ամենի հակառակը: Այս թագավորն ունեցել է մեծ հարստություն: Նրան հետագայի թագավորներից և ոչ մեկը չի կարողացել գերազանցել, չի կարողացել նույնիսկ հավասարվել: Կամենալով իր գանձերն ապահով վայրում պահել, նա պատվիրում է կառուցել քարե սենյակ, որի պատերից մեկը հարեր պալատի արտաքին պատին: Կառուցողը, սակայն, խորամանկ մի հնար է մտածում: Քարերից մեկը նա շարում է այնպես, որ երկու, նույնիսկ մեկ մարդ կարող էր այն հեշտությամբ հանել պատից: Արդ, երբ արդեն սենյակը պատրաստ էր, թագավորն իր գանձերը փոխադրում է այնտեղ: Որոշ ժամանակ անց, երբ մոտեցել էր կառուցողի վախճանը, նա իր մոտ կանչում է իր որդիներին, որոնք երկուսն էին, և նրանց պատմում, թե ինչպե՞ս նրանց համար բարեկեցիկ կյանք ապահովելու մտահոգությամբ, վարպետորեն է կառուցել թագավորի գանձարանը: Նա իր որդիներին ամեն ինչ պարզ բացատրում է, թե ինչպե՞ս դուրս քաշեն քարը և ճշում է չափերը, որպեսզի հեշտ գտնեն տվյալ քարը: Ավելացնում է նաև, որ եթե այդ ամենը ճիշտ են, ապա կդառնան թագավորի գանձերի գանձապահները: Արդ, երբ նա վախճանվում է, որդիները չեն ուշանում գործի անցնելու: Գիշեր ժամանակ մոտենալով թագավորի պալատին, նրանք գտնում են սենյակի նշված քարը և հեշտությամբ դուրս քաշելով այն, դուրս են բերում մեծ թվով գանձ: Մի անգամ թագավորը, բաց անելով գանձարանը, զարմացած տեսնում է, որ անոթներից գանձերը պակասել են, բայց ոչ ոքի չէր կարող մեղադրել, քանի որ կնիքները անխաթար էին և սենյակը փակված: Երբ թագավորը երկրորդ և երրորդ անգամ բաց է անում գանձարանը, ամեն անգամ նրան թվում է, թե գանձերը պակասում են, քանի որ գողերը չէին դադարում գողանալուց: Ուստի և թագավորը հրամայում է թակարդներ պատրաստել և դրանք զետեղել գանձերով լցված անոթների շուրջը: Երբ գողերը սովորականի նման դարձյալ գալիս են, նրանցից մեկը մտնում է գանձարան և երբ մոտենում է անոթին, իսկույն ընկնում է թակարդը: Հասկանալով, որ ինքը ինչպիսի աղետի մեջ է ընկել, ձայնում է եղբորը, հայտնում կատարվածը և պատվիրում կարել իր գլուխը, հակառակ դեպքում իրեն տեսնելով կճանաչեն և դրանով իսկ կկործանվի նաև եղբայրը: Սա, համոզվելով, որ եղբայրն իրավացի է, այդպես էլ անում է: Այնուհետև քարը դնելով իր տեղը, եղբոր գլուխը վերցնում է ու տանում տուն: Առավոտյան թագավորը մտնելով գանձարան, զարմացած տեսնում է գողի մարմինը թակարդում, առանց գլխի, և սենյակը՝ անվթար, առանց որևէ ելքի ու մուտքի: Վարանած թագավորը այսպես է վարվում: Հրամայում է գողի դիակը կախել (քաղաքի) պարիսպներից. այնուհետև պահակներ է կարգում դիակի մոտ և պատվիրում նրանց, որ եթե որևէ մեկին տեսնեն լաց լինելիս կամ կարեկցելիս, ձերբակալեն և բերեն իր առաջ: Երբ դիակը կախում են, մայրը խիստ զայրանում է և, դիմելով իր ողջ մնացած որդուն, պատվիրում է նրան, ինչ գնով լինի, արձակել դիակը և բերել տուն: Այնուհետև ասում է, որ եթե անտարբեր մնա, ապա ինքը կգնա թագավորի մոտ և կհայտնի, թե որտե՞ղ են թագավորի գանձերը: Արդ, մայրը խիստ հանդիմանում էր ողջ մնացած որդուն, իսկ որդին, չկարողանալով նրան խոսքերով հանգրտացնել, այսպիսի հնար է մտածում: Նա թամբում է իր գրաստներին, բեռնում դրանց վրա գինի լցված տիկեր ու քշում առաջ: Հասնելով կախած դիակը պահպանողների մոտ, նա քաշելով քանդում է երկու-երեք տիկի կապերը: Երբ գինին արդեն հոսում էր, նա սկսում է բարձր աղաղակել և հարվածել իր գլխին, իբր չիմանալով, թե առաջին հերթին ո՞ր գրաստի մոտ

վազի: Իսկ պանակները, տեսնելով, որ գինին առատորեն թափվում է, կարծում են, թե իրենց բախտը բերել է. նրանք անոթներով փողոց են վազում՝ տիկերից թափվող գինին վերցնելու համար: Գողը ձևացնելով, որ իբր զայրացած է, սկսում է նախատել բոլորին: Պանակները փորձում են հանգստացնել նրան և մեղմացնել նրա զայրույթը: Ի վերջո, նա գրաստներին հեռացնում է փողոցից և սկսում դարձյալ բառնալ նրանց: Նա սկսում է պանակների հետ զրուցել. և երբ նրանցից մեկը կատակելով ծանակում է նրան, նա տիկերից մեկը տալիս է նրանց: Պանակները իսկույն տեղում նստելով, սկսում են խմել, նրան ևս հրավիրելով իրենց հետ նստել և խմել: Նա (իբր) համոզվում է և մնում նրանց հետ (խմելու): Երբ պանակները զվարթացած խմում էին նրա կենացը, նա մի տիկ ևս տալիս է նրանց: Երբ առատ խմիչքից պանակները խիստ հարբում են և քունը հաղթում է նրանց, նրանք իրենց խմած վայրում իսկ փռվում են ու քնում: Արդեն խոր գիշերին նա իր եղբոր դիակը առնում է, պանակներին ծանակելու համար նրանց բալարի աչ այտը սափրում է և դիակը գրաստներին բառնալով, վերադառնում տուն. այսպիսով նա կատարում է մոր պատվերը: Իսկ թագավորը, լսելով թե գողի դիակը գողացվել է, խիստ զայրանում է: Այստեղերն, որոշելով ամեն կերպ գտնել նրան, ով այդպիսի հնարներ է մտածել, իբր անում է հեռակայը, բայց ես այդ բանին չեմ հավատում: Նա իր աղջկան հանձնում է անառակաց տանը, պատվիրելով նրան ընդունել բոլորին անխտիր, բայց կենակցելուց առաջ ստիպել յուրաքանչյուրին պատմելու իրեն կյանքում կատարած ամենահնարամիտ և ամենաանօրեն արարքի մասին. իսկ նրան, ով կպատմի կատարված այս գողության մասին, բռնել և բաց չթողնել: Աղջիկը կատարում է նոր հրամանները: Իսկ գողը, հասկանալով, թե հանուն ինչի՞ թագավորն անում է այդ ամենը, որոշում է հնարամտությամբ գերազանցել թագավորին, ուստի և այսպես է անում: Նա մահացած մարդու բեր ուսից կարելով, այնբարձրացնում է իր թիկունքի տակ և մտնում թագավորի դստեր մոտ, որը նրան տալիս է նույն հարցը, ինչ բոլորին: Այնժամ նա պատմում է, թե իր կատարած ամենաանօրեն արարքն այն է, որ թագավորի զանձարանում թակարդով բռնված եղբոր գլուխն է կարել. իսկ ամենահնարամիտ գործն այն է, որ հարբեցնելով պանակներին, առնակել է իր եղբոր կախված դիակը: Այս լսելով, (արքայադուստրը) ձեռքերը պարզում է նրան: Իսկ գողը խավարի մեջ նրան մեկնում է դիակի ձեռքը: (Արքայադուստրը) բռնում է այն, կարծելով, թե բռնել է գողի ձեռքը: Մինչդեռ գողը, կարված թևը բռնելով նրա ձեռքում, դուրս է փախչում դռնից: Երբ այս մասին ևս թագավորին հաղորդում են, թագավորը հիանում է այդ մարդու խելամտությամբ և խիզախությամբ: Ի վերջո, թագավորը (մուհնափիներ) է ուղարկում բոլոր քաղաքները, հայտարարելով, թե իմը նրում է խոստանում գողին, ինչպես և հարուստ ընծաներ, եթե նա անձամբ գալով ներկայանա իրեն: Երբ գողը հավատալով ներկայանում է, Ռամպսինիտոսը մեծապես հիանում է և իր դստեր կնության տալիս նրան, իբրև ամենախելացի մարդու, քանի որ եգիպտացիները խելացի են բոլորից, իսկ սա եգիպտացիների մեջ ամենախելացին:

122. Քրմերը պատմում են, թե այնուհետև այս թագավորը, դեռևս կենդանի, իջել է սառգեռանյա աշխարհը, որը հելլեններն կոչում են Հադես, որտեղ և Դեմետրիայի հետ զար է խաղացել, մերթ տանելով նրան, մերթ տարվելով նրանից, ու վերադարձել է՝ նրանից նվեր ստանալով ոսկե անձեռոցիկ: Ռամպսինիտոսի Հադես իջնելու հիշատակին, նրա վերադառնալուց հետո եգիպտացիները, ինչպես ինձ պատմեցին քրմերը, տոն են հաստատում, որը, ինչքան ինձ հայտնի է, այժմ ևս կատարում են, բայց չգիտեմ, այդ, թե՞ մեկ այլ առիթով: Այդ տոնի օրը քրմերը գործում են (հատուկ) զգեստ, այնուհետև գոտիով կապում են իրենցից մեկի աչքերը, հագցնում նրան այդ զգեստը և տանում դեպի Դեմետրայի սրբավայրը գնացող նանապարհը, իսկ իրենք վերադառնում են ետ: Պատմում են, որ աչքերը կապած այս քրմին երկու գայլ առաջնորդում են Դեմետրիայի սրբավայրը, որը գտնվում է քաղաքից քսան ասպարեզ հեռու, որտեղից և գայլերը նրան ետ են բերում նույն վայրը:

123. Եգիպտացիների այս պատմություններն նրանց համար են, որոնք հավատում են նման բաների: Իսկ ես, իմ հետազա պատմության ընթացքում պարտավոր եմ գրել այն ամենը, ինչ լսել եմ: Եգիպտացիները սառգեռանյա աշխարհի տերեր համարում են Դեմետրային և Դիոնիսոսին[78]: Բացի այդ, առաջինը եգիպտացիները ասել են, թե մարդկային հոգին անմահ է, թե մարմինը մահանալիս, հոգին անցնում է մեկ այլ կենդանի էակի, որն այդ պահին ծնվում է: Արդ, անցնելով երկրային, ծովային և թռչող բոլոր տեսակի կենդանիների միջով, հոգին դարձյալ մուտք է գործում մարդկային նորածին մարմնի մեջ: Այս շրջապտույտը տևում է երեք հազար տարի: Այս ուսմունքը հելլեններից ոմանք և՛ հնում, և՛ ավելի ուշ համարել են իրենց սեփականը: Նրանց անունները ես գիտեմ, բայց չեմ գրի:

124. Արդ, ինչպես պատմեցին քրմերը, մինչև Ռամպսինիտոսի թագավորությունը, եգիպտոսը, լավ կարգեր ունենալու շնորհիվ, եղել է շատ բարեկեցիկ: Բայց սրան հաջորդած Քեոպս թագավորը[79] երկրին բերում է բոլոր դժբախտությունները: Նախ, նա փակում է բոլոր տաճարները և արգելում զոհաբերություններ[80]: Այնուհետև ստիպում է բոլոր եգիպտացիներին աշխատել իր համար: Մի մասին նա պարտադրում է Արաբիայի լեռների քարհանքերից քարեր քարշել մինչև Նեղոս: Քարերը նավերով Նեղոսի վրայով անցկացնելուց հետո, ուրիշներին հրամայում է դրանք այնտեղից քար-

շել մինչև Լիբիական կոչված լեռը: Յուրաքանչյուր երեք ամիս շարունակ աշխատում էին հարյուր հազար մարդ, որից հետո նրանց փոխարինում էին ուրիշներ: Ամբողջ տասը տարի ժողովուրդը տանջվելով, աշխատել է կառուցել այն հանապարհը, որով քարշում էին քարերը: Այդ աշխատանքը, իմ կարծիքով, գրեթե նույնքան հսկայական է, ինչքան բուրգերի կառուցումը: Քանզի հանապարհն ունի հինգ ասպարեզ երկարություն, տասը գրկաչափ լայնություն, իսկ ամենաբարձր մասում՝ ութ գրկաչափ բարձրություն. այն կառուցված է տաշած և պատկերներով քանդակազարդած քարերից: Այս տասը տարիների ընթացքում, կառուցվում են այս հանապարհը, սառգեռնյա սենյակներն այն բլրի, որի վրա գտնվում են բուրգերը: Այս սենյակում (Քեոպսը) իր համար պատրաստում է դամբարան և. Նեղոսից ջրանցք հանելով, այն դարձնում կղզի: Այդ բուրգի կառուցումը տևում է քսան տարի: Այն քառակող է և յուրաքանչյուր կողմն ունի ութ պլեթրոն[83] երկարություն և նույնքան բարձրություն. այն կառուցված է տաշած և իրար լավ ագուցած քարերով, որոնցից և ոչ մեկը երեսուն ոտնաչափից պակաս չէ:

125. Այս բուրգը կառուցվել է սանդղաձև հարթակներով. ոմանք դրանք անվանում են էլուստներ, ուրիշներ՝ ասպիսանններ: Առաջին հարթակի քարերը դնելուց հետո, մյուս քարերը բարձրացնում էին կարճ գերաններից պատրաստած հատուկ հարմարանքով: Այսպես, քարերը գետնից բարձրացնում էին սանդղի առաջին հարթակի վրա: Այնուհետև բարձրացված քարը առաջին հարթակին դրված նույնպիսի հարմարանքով բարձրացնում էին երկրորդ հարթակի վրա: Ինչքան որ հարթակներ կային, այնքան էլ բարձրացնող հարմարանքներ էին պատրաստել: Գուցե և եղել է բարձրացնող մեկ հարմարանք միայն, որը քարը բարձրացնելուց հետո հեշտությամբ հնարավոր էր փոխադրել հաջորդ հարթակի վրա: Այդ երկու եղանակի մասին էլ ինձ պատմել են, ուստի ես ևս դրանց մասին պատմում եմ: Արդ, սկզբում ավարտվել է բուրգի ամենավերին մասը, այնուհետև՝ միջնամասը, իսկ վերջում՝ հողի վրա գտնվող ամենացածր հարթակը: Բուրգի վրա եգիպտական գրերով նշված է, թե ինչքան բողկ, սոխ և սխտոր են օգտագործել (բուրգի վրա) աշխատած մարդիկ: Ես լավ հիշում եմ. որ թարգմանիչը կարդալով այդ գրերը, բացատրեց, որ այդ ամենի համար ծախսվել է հազար վեց հարյուր արծաթ տաղանդ[82]: Եթե այդ ճշմարիտ է, ապա ինչքա՞ն ծախսվել է երկաթե գործիքների, աշխատողների հացի և հագուստի համար, քանի որ շինարարությունը տևել է քսան տարի և, բացի այդ, քիչ ժամանակ չի պահանջվել նաև քարերը հատելու և տեղափոխելու, ինչպես նաև սառգեռնյա սենյակներ փորելու համար:

126. Քրմերը պատմեցին, որ Քեոպսն այնքան է սառանում, որ երբ

դրամի կարիք է ունենում, իր իսկ դստեր ստիպում է նստել անառակաց տանը և արծաթ ձեռք բերել. թե ինչքա՞ն, չգիտեմ, քանի որ (քրմերը) այդ չնայանեցին: Դուստրը կատարում է նոր հրամանը, բայց և մտածում է իր համար ևս հուշարձան թողնել: Իր մոտ հանախող ամեն մի մարդուց խնդրում է իրեն նվիրել մեկ քար, իր շինած կառույցի համար: Ահա այս քարերից, ինչպես պատմում են, կառուցել է երեք բուրգերից մեջտեղինը, որը կանգնած է մեծ բուրգի առաջ. նրա յուրաքանչյուր կողմը մեկ և կես պլեթրոն է:

127. Եգիպտացիների պատմելով, այս Քեոպսը թագավորել է հիսուն տարի[83]: Նրա վախճանվելուց հետո թագավորական իշխանությունը ժառանգել է նրա եղբայր Քեփրենը, որն ամեն ինչում վարվել է իր եղբոր նման: Նա ևս կառուցել է բուրգ, որը, սակայն, չունի Քեոպսի բուրգի չափերը: Ես այն չափել եմ: Նրա տակ չկան նաև սառգեռնյա սենյակներ, ոչ էլ Նեղոսից ջրանցք է բերված, ինչպես մյուս բուրգի շուրջ, որը արհեստական ջրանցքի միջոցով դարձել է կղզի, որտեղ, ինչպես պատմում են, թաղված է Քեոպսը: Բուրգի առաջին շարքը կառուցված է երանվագական գունավոր քարերով, իսկ բուրգի բարձրությունը քառասուն ոտնաչափ պակաս է առաջինից, թեև ունի միևնույն երկարությունը: Այս երկու բուրգերը կանգնած են նույն բլրի վրա, որի բարձրությունը համարյա հարյուր ոտնաչափ է: Պատմում են, թե Քեփրենը թագավորել է հիսուն և վեց տարի:

128. Այս հարյուր և վեց տարիները համարվում են եգիպտացիների համար մեծ չարիքների տարիներ, երբ ամբողջ ժամանակ փակված տաճարները երբեք չեն բացվել: Եգիպտացիներն այնքան են ատում այդ թագավորներին, որ չեն ուզում հիշել նույնիսկ նրանց անունները. մինչև իսկ բուրգերը անվանում են հովիվ Փիլիտիսի բուրգեր. սա այդ ժամանակ այդ վայրերում խաշն է արածել[84]:

129. Եգիպտոսի հաջորդ թագավորը, ինչպես պատմում են նրանք, եղել է Քեոպսի որդի Մյուկերինոսը: Նա, դժգոհ լինելով հոր գործերից, վերաբացում է տաճարները և ծայրագույն չարիքից տանջված ժողովրդին ազատ արձակում՝ աշխատելու և գոհեր մատուցելու: Նա ամենաարդարադատ է եղել բոլոր թագավորներից: Այդ պատճառով էլ նրան առավել են փառաբանում Եգիպտոսում երբևէ իշխած բոլոր թագավորներից: Նա ոչ միայն արդար էր դատում, այլև իր ունեցածից պարգև էր տալիս նրան, ում ինքը դժգոհ էր թողել իր դատով, որպեսզի բավարարեր նրա պահանջը: Մյուկերինոսին, թեև նա բարեհամբույր էր իր հպատակների հանդեպ և այդքան բարեգործ, ծանր դժբախտություններ հարվածեցին: Նախ վախճանվեց նրա դուստրը, որն իր միակ զավակն էր: Մեծապես սգալով այս դժբախտությունը, և փափագելով իր դստեր թաղել առավել շուքով, հրամա-

յեց փայտից պատրաստել կովի սնամեջ արձան, ոսկեպատել այն և դրա մեջ դնելով, թաղել իր մահացած դստեր:

130. Սակայն այդ կովը չեն թաղել հողում, այլ մինչև հիմա էլ այն կարելի է տեսնել Սաիս քաղաքում, որտեղ այն կանգնած է արքունի պալատի շքեղ սենյակում: Ամեն օր նրա շուրջ խունկ են ծխում, իսկ ամբողջ գիշերը նրա առաջ ջահ է վառվում: Այս կովի արձանի կողքին կա մեկ այլ սենյակ, որտեղ, ինչպես պատմեցին Սաիսի քրմերը, գտնվում են Մյուկերինոսի հարճերի արձանները: Դրանք մերկ կանանց հսկայական փայտե արձաններ են, թվով քսան հատ: Բայց թե ովքե՞ր են նրանք, այդ մասին ես կարող եմ կրկնել միայն քրմերի ասածները:

132. Ուրիշներ այդ կովի և հսկա արձանների մասին պատմում են հետևյալը: Մյուկերինոսը, իբր, սիրահարվել է իր հարազատ աղջկան և նրա կամքին հակառակ, կենակցել նրա հետ: Դրանից հետո աղջիկը, ինչպես պատմում են, վշտից իրեն կախել է, իսկ հայրը նրան թաղել է այս կովի մեջ: Աղջկա մայրը կտրել է ոպասուհիների ձեռքերը, որոնք աղջկան հանձնել էին հորը: Այժմ էլ, սա նրանց շարդված ձեռքերով արձաններն իբր վկայում են կյանքում նրանց կրած պատժի մասին: Այս ամենը և, հատկապես, արձանների ձեռքերի մասին ասվածը, իմ կարծիքով, շաղակրատանք է: Մենք ինքներս տեսնում ենք, որ ժամանակն է նրանց ձեռքերը պոկել և իմ օրոք դեռ դրանք ընկած էին արձանների ոտքերի առաջ:

132. Իսկ կովը ծածկված է ծիրանի զգեստով, բացի գլխից և պարանոցից, որոնք ոսկեպատած են ոսկու շատ հաստ շերտով: Եղջյուրների միջև պատկերված է արևի շրջանակը, նույնպես ոսկուց: Կովը կանգնած չէ, այլ պառկած է ծնկների վրա. նրա մեծությունը կենդանի խոշոր կովի չափ է: Ամեն տարի այս կովը սենյակից դուրս է բերվում այն օրը, երբ եգիպտացիները կոծում են իրենց ի պատիվ այն աստծու, որի անունը ես չեմ տալիս այդ մասին խոսելիս[85]: Անա այդ ժամանակ է, որ կովը դուրս է բերվում լույսին. քանզի պատմում են, թե աղջիկը մեռնելիս, խնդրել է Մյուկերինոսից, որպեսզի տարեկան մեկ անգամ թույլ տա իրեն արև տեսնելու:

133. Դստեր կործանումից հետո այդ թագավորին պատահում է հետևյալ երկրորդ դժբախտությունը: Բուտո քաղաքից պատգամախոսը նրան հայտնում է, որ վեց տարվա կյանք է նրան մնացել, իսկ յոթերորդում նա պետք է մեռնի: Թագավորը խիստ վշտացած, հանդիմանություն է հղում աստծու պատգամատուն, կշտամբելով, որ իր հայրը և պապը, որոնք փակել էին տաճարները, մոռացել էին աստվածներին և ոչնչացնում էին մարդկանց, երկար տարիներ ապրեցին, մինչդեռ ինքը, բարեպաշտ լինելով հանդերձ, պետք է շուտով վախճանվի: Պատգամատնից երկրորդ գուշակությունն է գալիս նրան, որը հայտնում է, թե այդ պատճառով էլ կրճատվում է նրա

կյանքը. քանզի նա չիրականացրեց այն, ինչը պետք է իրականանար: Եգիպտոսը պետք է հարյուր հիսուն տարի դժբախտության մեջ լիներ. նրան նախորդած երկու թագավորներն այդ հասկացել էին, իսկ ինքը՝ ոչ: Այս լսելով, Մյուկերինոսը հասկանում է, որ աստվածներն ամեն ինչ կանխորոշել են: Ուստի և նա հրամայում է մեծ թվով հրագներ պատրաստել. և երբ գիշեր էր լինում, թագավորը վառում էր դրանք, խմում և զվարճանում օր ու գիշեր: Նա թափառում էր մարգագետիններում ու դաշտերում և ամեն տեղ, որ նա հարմար էր համարում զվարճության համար: Նա այսպես էր անում՝ գիշերները վերածելով ցերեկների, որպեսզի վեց տարիները դարձնի տասներկու և դրանով իսկ հերքի պատգամատան գուշակությունը:

134. Այս թագավորը ևս բուրգ է թողել, որը, սակայն, իր հոր բրգից շատ փոքր է. դրա յուրաքանչյուր կողմը երեք պլեթրոնից քսան ոտնաչափ պակաս է: Այն քառակող է, կիսով չափ կառուցված եթովպական քարից[86]: Հելլեններից ոմանք ենթադրում են, որ բուրգը պատկանում է հետևյալ Ռոդոպիսին. բայց դա ճիշտ չէ: Նրանք այդպես ասում են, հավանաբար, չիմանալով, թե ո՞վ էր Ռոդոպիսը: Այլապես նրանք չէին կարող նրան վերագրել այդպիսի բուրգի կառուցումը, որի համար անհրաժեշտ է ծախսել, օրինակ, անթիվ հազարներով տաղանդ: Բացի այդ, Ռոդոպիսը ապրել է Ամասիս թագավորի ժամանակ և ոչ թե Մյուկերինոսի, այն է՝ շատ ավելի ուշ, քան այդ բուրգերը կառուցած թագավորները: Ռոդոպիսը ծնունդով թրակուհի էր, սամոսցի Յադմոնի, Հեփեստոպոլիսի որդու ստրկուհին: Նրա հետ ստրկություն է արել առակաստեղծ Եսոպոսը, որը նույնպես պատկանել է Յադմոնին: Այս պարզ երևում է հետևյալից: Երբ դելփիցիք ասածու թելադրանքով բազմիցս հարցում արեցին, թե ո՞վ է կամենում Եսոպոսի սպանության համար սահմանված փրկագինը, ոչ ոք չներկայացավ, բացի Յադմոնի թոռից, որի անունը նույնպես Յադմոն էր: Ուրեմն, Եսոպոսը պատկանում էր Յադմոնին:

135. Ռոդոպիսին Եգիպտոս է բերել Քսանթես Սամոսացին: Երբ Ռոդոպիսն իր արհեստով զբաղվելու համար Եգիպտոս եկավ, խոշոր գումարով նրան փրկագնեց միտիլենացի Քարակոսը, Սկամանդրոնյումոսի որդին, բանաստեղծուհի Սապֆոյի եղբայրը: Այսպիսով, Ռոդոպիսը ազատություն ստացավ և մնաց Եգիպտոսում, որտեղ և իր գեղեցկության շնորհիվ կուտակեց խոշոր հարստություն. խոշոր՝ Ռոդոպիսի նմանի համար, բայց ոչ այնքան խոշոր, որ կարողանար այսպիսի բուրգ կառուցել: Նրա ունեցվածքի տասներորդ մասն այսօր ևս ցանկացողը կարող է տեսնել. հետևաբար, կարելի է ենթադրել, որ այդ ունեցվածքն այնքան էլ մեծ չի եղել: Ռոդոպիսը փափագելով իր մասին հիշատակ թողնել Հելլադայում, մտածեց այնպիսի ընծա պատրաստել, որպիսին դեռևս ոչ ոք չէր պատրաստել և չէր ընծայել

որևէ մեկ տաճարի, և այն ընծայեց Դելփիի տաճարին՝ որպես հիշատակ: Նա իր ունեցվածքի տասներորդ մասով պատրաստել տվեց երկաթե այնպիսի խոշոր շամփուրներ, որոնցով հնարավոր է ամբողջական եզ խորովել, թվով այնքան, ինչքան հնարավոր էր իր ունեցվածքի տասներորդ մասով, և դրանք ուղարկեց Դելփի: Այդ շամփուրները ցարդ կույտով ընկած են քիոսցիների կառուցած զոհասեղանի եռև, բուն տաճարի առաջ: Ակներև է, որ Նավկրատիսի հետևորները առանձնապես հրապուրիչ են եղել: Այն կինը, որի մասին պատմում է այս զրույցը, այնքան հռչակվեց, որ Ռոդոպիս անունը հայտնի դարձավ բոլոր հելլեններին: Դրանից հետո ոմն Արիդիկե ևս երգվեց համայն Հելլադայում, թեև նա պակաս հռաչկված է եղել: Երբ Քարակսոսը, Ռոդոպիսին ազատություն շնորհելուց հետո, վերադառնում է Միտիլենե, Սապֆոն իր տաղերից մեկում խիստ հանդիմանում է նրան:

136. Ռոդոպիսի մասին վերջացրի: Պատմում են, թե Մյուկերինոսից հետո Եգիպտոսի թագավոր է դառնում Ասյուրիսը, նա կառուցել է Հեփեստոսի սրբավայրի արևելանայաց նախադուռը, որը գեղեցկությամբ և մեծությամբ գերազանցում է բոլոր մյուսներին: Թեև մյուս նախադռները նույնպես զարդարված են պատկերաքանդակներով և շինարարական բյուրավոր զարդաքանդակներով, բայց սա առավել ևս: Պատմում են, թե այս թագավորի օրոք, երբ դրամը գրեթե դադարեց ձեռքից ձեռք անցնելուց, Եգիպտոսում օրենք սահմանվեց, որի համաձայն կարելի էր պարտք վերցնել հոր (զմռսված) դիակը գրավ դնելով: Այս օրենքին ավելացրեց նաև այն, որ պարտատուն տեր էր դառնում նաև պարտապանի ամբողջ (ընտանեկան) գամբարանին և պարտքը չվճարելու դեպքում պարտապանը պատժվում էր նրանով, որ և՛ ինքը և՛ իր հետնորդները զրկվում էին հայրենական կամ մեկ այլ դամբարանում թաղվելու (հնարավորությունից): Կամենալով գերազանցել նախորդ եգիպտական թագավորներին, նա իր համար, իբրև հուշարձան, աղյուսներից բուրգ կառուցեց, որտեղ և թողեց քարի վրա փորագրված հետևյալ արձանագրությունը. «Ինձ մի՛ սառաղասիր քարե բուրգից. գերազանցում եմ նրանց այնպես, ինչպես Զևսը մյուս աստվածներին: Կեռաձողը խրել են լճի մեջ և դրա ծայրին կպած կավացեխը հավաքելով, աղյուսներ են պատրաստել և այդպիսով ինձ կառուցել»:

137. Այս է նրա կատարած ամբողջ գործը: Նրանից հետո թագավորել է կույր մեկը՝ Անյուսիս քաղաքից, որի անունը նույնպես եղել է Անյուսիս[38]: Նրա թագավորության օրոք եթովպացիները, իրենց թագավոր Սաբակոսի գլխավորությամբ, մեծաթիվ զորքով արշավեցին Եգիպտոս: Կույր Անյուսիսը փախավ հանդուներները, իսկ եթովպացին Եգիպտոսում թագավորեց հիսուն տարի[39]: Այդ տարիներին նա հետևյալ գործերը կատարեց: Եթե որևէ եգիպտացի հանցավոր էր դառնում, ապա նրան չէր կարելի սպանել: Նա իր

գործած հանցանքի ծանրության համապատասխան դատապարտվում էր հողային աշխատանքներ կատարելու այն քաղաքում, որտեղից ինքը սերում էր: Այսպիսով, քաղաքները առավել վեր խոյացան, քան առաջ: Քանզի նախկինում հողաթմբերը կառուցվել էին Սեսոստրիսի օրոք չրանցքները փորող աշխատողների ձեռքով, իսկ այժմ, եթովպացու օրոք, դրանք բարձրացվում էին առավել ևս: Եգիպտոսում թեև այլ քաղաքներ ևս կառուցվել են բարձր (հողաթմբի վրա), բայց, իմ կարծիքով, ամենանշանակալից հողաթումբը Բուբաստիս քաղաքում է: Այստեղ է գտնվում Բուբաստիս (դիցուհու) առավել հայտնի տաճարը: Թեև կան ուրիշ ավելի ընդարձակ և ավելի շքեղ տաճարներ, բայց ոչ մեկը դիտողի աչքին այնքան հաճելի չի թվում, ինչքան այս մեկը: Իսկ Բուբաստիսը հունարենում կլինի Արտեմիս:

138. Բուբաստիսի տաճարն այսպիսին է: Մուտքից բացի, մնացած սրբավայրն ամբողջությամբ կղզի է: Նեղոսից երկու չրանցք մտնելով են այնտեղ իրար, բայց չեն միանում, այլ ամեն մեկը հոսում է մինչև սրբավայրի մուտքը, մեկը հոսում է սրբավայրի այս կողմով, մյուսը՝ այն կողմով: Յուրաքանչյուր չրանցք հարյուր ոտնաչափ լայնություն ունի և ծառապատ է: Նախադուռը տասը գրկաչափ է՝ զարդարված վեց կանգուն չափ հիանալի պատկերներով: Սրբավայրը գտնվում է քաղաքի մեջտեղում և երևվում է բոլոր կողմերից: Քանի որ քաղաքը բարձրացել է հողաթմբի պատճառով, իսկ սրբավայրը մնացել է իր նախկին դիրքում, ապա այն տեսանելի է դրսից: Այն շրջափակված է քանդակազարդ պատերով, իսկ ներսում տնկած հսկա ծառերի պուրակ է: Մուտքից սալարկած ճանապարհ է սկսվում՝ գրեթե երեք ասպարեզ երկարությամբ, որը քաղաքային հրապարակի միջով տանում է դեպի արևելք: Ճանապարհի լայնքը չորս պլեթրոն է, որից այս ու այն կողմ բարձրանում են երկնահաս ծառեր: Այդ ճանապարհը տանում է դեպի Հերմեսի սրբավայրը: Այդպիսին է սա այդ սրբավայրը:

139. Եգիպտոսի ազատագրվելը եթովպացուց, ինչպես պատմեցին քրմերը, այսպես է կատարվել: Եթովպացին փախել է երկրից իր տեսած երազի պատճառով: Երազում նա տեսել է, թե մի մարդ կանգնած նրա առաջ խորհուրդ է տալիս նրան՝ հավաքել Եգիպտոսի բոլոր քրմերին և նրանց յուրաքանչյուրին մեջտեղից երկու կես անել: Այս երազը տեսնելով, նա ասում է, որ աստվածները, ըստ երևույթին, այդ ցուցումով նրան մղում են անարգելու սրբավայրերը և դրանով իսկ զրգռելու աստվածների և մարդկանց զայրույթն իր դեմ: Բայց ինքը, ասում է, այդպես չի վարվի, այլ, ընդհակառակը, կենդանի երկրից, քանի որ պատգամախոսի կողմից Եգիպտոսի վրա իր տիրապետության սահմանված ժամանակը լրացել է: Քանզի երբ դեռ ինքը Եթովպիայում էր, պատգամախոսը, որին հարգմունքով դիմում են եթովպացիները, զուշակել էր, թե ինքը Եգիպտոսում կիշխի հի-

սուն տարի: Եվ անա, քանի որ այդ ժամանակը լրացել էր և Սաբակոսը ինքը ևս տագնապել էր երազից, ճոժարակամ հեռանում է Եգիպտոսից:

140. Պատմում են, թե Եգիպտոսից երովպացու մեկնելուց անմիջապես հետո թագավորել է կույրը, վերադառնալով ճաճնուտներից, որտեղ նա մնացել էր հիսուն տարի և այդ ընթացքում նա, մոխիր ու հող թափելով, կղզի էր առաջացրել: Քանզի ուսեստից բացի, որը եգիպտացիները, երովպացուց ծածուկ, բերում էին նրան, նա պարտադրել էր նրանց իբրև ընծա բերել իրեն նաև մոխիր: Այս կղզին, մինչև Ամյուրտայոսի թագավորության տարիները, ոչ ոք չէր կարողացել հայտնաբերել: Ամյուրտայոսին նախորդած թագավորներն ավելի քան յոթը հարյուր տարի ապարդյուն փնտրեցին այդ: Իսկ այդ կղզու անունն է Ելբո և երկարությունն ու լայնքը՝ տասական ասպարեզ:

141. Սրանից հետո թագավորել է Հեփեստոսի քուրմը, որի անունը եղել է Սեթոս: Նա անմտորեն արհամարհել է եգիպտական ռազմիկներին, կարծելով, թե երբեք նրանց կարիքը չի ունենա: Նրանց այլ անարգանքներ հասցնելուց բացի, խլում է այն հողերը, որ նախկին թագավորները պարգևել էին՝ յուրաքանչյուրին տասներկու արուրա[90] ընտիր հողակտոր: Այս բանից հետո մեծ զորքով Եգիպտոս է արշավում արաբների և ասորեստանցիների թագավոր Սանահարիբը[91], և անա եգիպտական ռազմիկները հրաժարվում են Սեթոսին օգնելուց: Քուրմը հուսահատության մատնվելով, մտնում է տաճար և ասածու արձանի առաջ դառնորեն գանգատվում իրեն սպառնացող վտանգի համար: Մինչ նա ողբում էր, նրա քունը տանում է և նրան երազում թվում է, թե ասված ներկայանալով, քաջալերեց իրեն, ասելով, թե արաբների զորքին դիմադրելիս ինքը ոչ մի աղեթի չի ենթարկվելու. քանզի ասված ինքը օգնություն է ուղարկելու: Հավատալով այս երազին, նա իր հետ վերցնում է իրեն հետևել ցանկացող եգիպտացիներին և բանակ դնում Պելուսիոնում. քանզի այստեղ էր Եգիպտոսի մուտքը: Այսուհանդերձ, ռազմիկներից ոչ ոք չհետևեց նրան, այլ միայն խանութպանները և արհեստավորները և շուկայի մարդիկ: Նրանց այստեղ հասնելուց հետո, գիշերվա ընթացքում թշնամու զորքերի վրա դաշտային մկներ են հարձակվում, որոնք ուտում են նրանց կապարճները, աղեղները, ինչպես նաև վահանների բռնակները, այնպես, որ հաջորդ օրը թշնամու զորքը փախչում է անզեն և շատերը սպանվում են[92]: Եվ այժմ Հեփեստոսի տաճարում կանգնած է այդ թագավորի քարե արձանը, ձեռքին մուկ բռնած. արձանի վրա կա հետևյալ մակագրությունը. «Նայիր ինձ և բարեպաշտ եղիր»:

142. Անա այս ամբողջ ընթացքում եգիպտացիները և նրանց քուրմերը ինձ հաղորդեցին հնօրյա ժամանակների պատմությունը, նշելով, որ Եգիպտոսի առաջին թագավորից մինչև Հեփեստոսի այս քուրմը, որը վերջին

թագավորն է եղել, անցել է երեք հարյուր քառասուն և մեկ սերունդ. այդ ժամանակի ընթացքում եղել են նույն թվով քրմապետեր և թագավորներ: Արդ, մարդկանց երեք հարյուր սերունդը հավասարվում է տասը հազար տարվա. քանզի մարդկանց երեք սերունդը հարյուր տարի է: Երեք հարյուրից բացի մնացած քառասուն և մեկ սերունդը ևս հավասարվում է հազար երեք հարյուր քառասուն տարվա: Ուստի, ինչպես պատմեցին քրմերը, տասնմեկ հազար երեք հարյուր քառասուն տարվա ընթացքում Եգիպտոսում երբեք չեն թագավորել մարդկային կերպարանք ունեցող աստվածներ. այդպիսի բան չի եղել նաև ո՛չ դրանից առաջ, ո՛չ իսկ դրանից հետո: Այդ ժամանակի ընթացքում, ասացին նրանք, արևը շորս անգամ ծագել է ոչ իր սովորական տեղից. երկու անգամ ծագել է այնտեղից, ուր մայր է մտնում, և երկու անգամ մայր է մտել այնտեղ, որտեղից այժմ ծագում է: Եվ այդ ամենից Եգիպտոսում ոչինչ չի փոխվել, ոչ երկրի բերքատվությանը վերաբերող, ոչ գետի բնույթի մեջ, ոչ իսկ հիվանդությունների և մահացությունների առումով:

143. Մի անգամ պատմիչ[93] Հեկատեոսը[94] այցելելով Թեբե, իր տոնմագրությունն է անում (քրմերին) և իր ծագումը բխեցնում տասնվեցերորդ նախնուց, որը, ինչպես ինքն է ասում, ասված է եղել: Այնժամ Զեսի քրմերը նրա հետ վարվեցին այնպես, ինչպես և ինձ հետ, թեև ես նրանց իմ տոնմագրությունը չէի արել: Նրանք ինձ առաջնորդեցին (տաճարի) վիթխարի դռնիցից ներս և ցույց տվեցին փայտե հսկա արձաններ, որոնց թիվն այնքան էր, ինչքան արդեն ասել եմ: Յուրաքանչյուր քրմապետ, դեռևս կենդանության օրոք, այնտեղ կանգնեցրել է իր արձանը: Եվ անա, նրանք թվարկում և մեկը մյուսի ետևից ցույց էին տալիս արձանները, նշելով որ որդին (քրմությունը) ժառանգել է հորից: Այդպես նրանք հերթականությամբ անցնում էին բոլոր արձանների առջևից, սկսելով վերջին մահացածի արձանից, մինչև որ ցույց տվեցին բոլոր արձանները: Եվ անա, երբ Հեկատեոսը իր տոնմագրությունը տալով, իր ծագումը բխեցնում է տասնվեցերորդ նախնուց, որը, իբր, ասված էր եղել, նրանք հակադրում են դրան իրենց տոնմագրությունը, ժխտելով ասածուց մարդու սերած լինելու նրա տեսակետը: Նրանք հակադրում են իրենց տոնմագրությունը, նշելով, որ այդ հսկա արձաններից յուրաքանչյուրը պիրոմիս[95] է, պիրոմիսի որդի: Նրանք ցույց են տալիս երեք հարյուր քառասուն և հինգ արձան, ընդ որում միշտ պիրոմիսը սերում էր պիրոմիսից, բայց ոչ մի դեպքում նրանց սերումը չէին բխեցնում ո՛չ աստվածներից, ո՛չ հերոսներից: Պիրոմիս հունարենում նշանակում է զեղեցիկ, առաքինի մարդ:

144. Այսպես անա, քրմերը ցույց տվեցին նրանց պատկերները, որոնք բոլորն էլ այդպիսի մարդիկ են եղել, բայց ոչ երբեք աստվածներ: Այս

մարդկանցից առաջ Եգիպտոսում իշխել են աստվածներ, որոնք չեն ապրել մարդկանց հետ համատեղ: Նրանցից մեկը միշտ եղել է հզորագույնը բոլորից: Սրանց մեջ Եգիպտոսի վերջին թագավորը եղել է Հորոսը՝ Օսիրիսի որդին, որին հելլեններն անվանում են Ապոլլոն: Սա, տապալելով Տյուփոնին, դառնում է վերջին աստված-թագավորը: Իսկ Օսիրիսը հունարենում Դիոնիսոսն է:

145. Հելլենների մոտ ամենակրտսեր աստվածները համարվում են Հերակլեսը, Դիոնիսոսը և Պանը. մինչդեռ եգիպտացիների մոտ Պանը, ընդհակառակը, ճնագույնն է այս աստվածներից և առաջին համարված ութ աստվածներից մեկը. Հերակլեսը պատկանում է երկրորդ համարված տասներկու աստվածների թվին, իսկ Դիոնիսոսը՝ երրորդ սերնդին, որոնք սերվել են տասներկու աստվածներից: Թե քանի՞ տարի է եղել, եգիպտացիների պատմելով, Հերակլեսի և Ամասիս թագավորի միջև, արդեն ասել եմ[96]: Պանի մասին պատմում են, թե նա շատ ավելի վաղ է եղել, իսկ Դիոնիսոսից հետո անցել է պակաս ժամանակ: Նրանք հաշվում են, թե Դիոնիսոսից մինչև Ամասիս թագավորը անցել է մեկ բյուր և հինգ հազար տարի: Եգիպտացիները պնդում են, թե այդ ամենը հաստատ գիտեն, քանի որ իրենք միշտ հաշվում են և արձանագրում տարիները: Արդ, Դիոնիսոսը, որին համարում են Կադմոսի դուստր Սեմելեի որդին, եղել է ինձանից առավելագույնը հազար վեց հարյուր տարի առաջ. Հերակլեսը, Ալկմենեի որդին՝ ինը հարյուր տարի առաջ. իսկ Պանից՝ Պենելոպեի որդուց, (հելլեններն ասում են, թե Պանի ծնողները եղել են Հերմեսը և Պենելոպեն), անցել է ավելի պակաս, քան Տրոյական պատերազմի ժամանակից, շուրջ ութ հարյուր տարի:

146. Արդ, Պանի և Դիոնիսոսի վերաբերյալ կարելի է ընդունել այս երկու զրույցներից որևէ մեկը, իսկ ես արդեն իմ կարծիքը ասել եմ: Հիրավի, եթե Ամփիտրիոնի որդի Հերակլեսի նման Դիոնիսոսը, Սեմելեի որդին և Պանը, Պենելոպեի որդին, նույնպես հայտնի են դարձել և ապրել Հելլադայում, ապա կարելի է ասել, որ նրանք ևս (Հերակլեսի նման) եղել են մարդիկ և կրել են ավելի վաղ աստվածների անունները: Այսուհանդերձ, հելլենները պատմում են, թե Դիոնիսոսը ծնվելիս, Զևսը նրան իսկույն կարել է իր ազդրի մեջ և տարել Նյուսա, որը գտնվում է Եգիպտոսից վերև, Եթովպիայում. իսկ Պանի մասին ոչինչ չունեն պատմելու, թե նրա ծնունդից հետո ի՞նչ կատարվեց նրա հետ: Ուստի ես համոզված եմ, որ հելլենները այս երկու աստվածների անունները իմացել են ավելի ուշ, քան մյուս աստվածներինը, և նրանց ծնունդը վերագրել են այն ժամանակին, երբ իմացել են նրանց մասին:

147. Այս ամենը ինձ պատմել են եգիպտացիները: Այժմ կպատմեմ այն, ինչ ինձ հաղորդել են ուրիշները և դրանց համաձայնվել են նաև եգիպտացիները. այդ ամենին կավելացնեմ նաև իմ սեփական դիտումները: Երբ եգիպտացիները ազատություն են ձեռք բերում, Հեփեստոսի հրմի թագավորելուց հետո, քանի որ նրանք չէին կարող ապրել առանց թագավորի, ամբողջ Եգիպտոսը տասներկու մասի բաժանելով, կարգում են տասներկու թագավոր: Սրանք իրար միջև ամուսնությունների միջոցով բարեկամություն հաստատելով, այնպիսի կարգեր են սահմանում, որ հետայսու չապալեն իրար և իրարից հողեր չխլեն, այլ լինեն լավ բարեկամներ: Խստորեն պահպանվող այսպիսի կարգեր հաստատելու պատճառը եղել է հետևյալը: Երբ նրանք հաստատել էին իրենց իշխանությունը, նրանց պատգամ է տրվում, թե նրանցից նա, ով պղնձե գավաթով հեղում կկատարի Հեփեստոսի տաճարում, կթագավորի ամբողջ Եգիպտոսի վրա: Ուստի և բոլոր այս թագավորները միասին էին հավաքվում տաճարում (զոհաբերության համար):

148. Եվ անա նրանք որոշում են ընդհանուր հիշատակ թողնել. որոշելուց հետո, Մոյրիս լճից վերև, այսպես կոչված, Կոկորդիլոսների քաղաքի մոտ, կառուցում են լաբիրինթոս: Ես այն տեսել եմ. այն վեր է ամեն մի նկարագրությունից: Եթե ի մի հավաքենք հելլենների կառուցած բոլոր պարիսպները և կարևոր կառույցները, ապա դրանք պակաս աշխատանք և միջոցներ խլած կլինեն, քան այս լաբիրինթոսը, թեև Եփեսոսում և Սամոսում գտնվող տաճարները[97] նշանակալից են: Անշուշտ, բուրգերը ևս վեր են ամեն մի նկարագրությունից և դրանցից յուրաքանչյուրը նույնպես արժանի է հելլենական շատ և խոշոր կառույցներին, բայց այս լաբիրինթոսը գերազանցում է մինչև իսկ այդ բուրգերին: Այնտեղ կա տասներկու ծածկած բակ, դեմ դիմաց կառուցված դարպասներով, որոնցից վեցը ուղղված են դեպի հյուսիս, վեցը՝ դեպի հարավ. ընդ որում դարպասները հարում են իրար: Դրսից դրանց եզերում է մեկ միասնական պարիսպ: Պարսպից ներս կան երկու տիպի սենյակներ, մի մասը ստորգետնյա, մյուս մասը՝ վերգետնյա, թվով երեք հազար, այսինքն՝ յուրաքանչյուր տիպից՝ հազար հինգ հարյուրական: Վերգետնյա սենյակները ես տեսել եմ, շրջելով դրանց մեջ, և պատմում եմ իբրև ականատեսի. իսկ ստորգետնյա սենյակների մասին միայն լսածներս եմ պատմում: Քանզի եգիպտացի վերակացուները ոչ մի կերպ չուզեցին դրանք ցույց տալ, ասելով, թե այնտեղ գտնվում են այս լաբիրինթոսը կառուցած թագավորների, ինչպես և սրբազան կոկորդիլոսների դամբարանները: Ուստի և այդ ստորգետնյա սենյակների մասին պատմում եմ իմ լսածի հիման վրա. իսկ իմ տեսած վերգետնյա սենյակները համարում եմ մարդկային գործերը գերազանցող (կառույց): Սենյակ-

ները միացնող ուղիները և բակերի միջով գնացող ոլորապտույտ անցումները բազմազան լինելով, անհասանում հիացմունք են առաջացնում: Բակերից անցնում են սենյակները, սենյակներից՝ այլուհարահ, այստեղից՝ դարձյալ սենյակները և սենյակներից՝ դարձյալ մյուս բակերը: Ամենուրեք ծածկը քարակերտ է, պատերը ծածկված են բազմաթիվ քանդակներով: Բակերից յուրաքանչյուրը բոլորված է սյուներով, որոնք գեղեցկապես շարված են ապիտակ քարով: Լաբիրինթոսի ծայր անկյանը հետևում է բուրգ, որի բարձրությունը քառասուն գրկաչափ է: Բուրգի վրա քանդակված են կենդանիների խոշոր պատկերներ: Կառուցված է նաև դեպի բուրգը տանող ստորգետնյա ուղի:

149. Այսպիսին է այդ լաբիրինթոսը. բայց առավել մեծ հրաշք է թվում Մայրիս կոչված լիճը, որի ափին կառուցված է այս լաբիրինթոսը: Լճի շրջագիծը երեք հազար վեց հարյուր ասպարեզ է. այն է՝ վաթսուն պարան, այսինքն՝ հավասար է Եգիպտոսի ծովափի երկարությանը: Լիճը երկարությամբ ուղղված է հյուսիսից հարավ. ամենախորունկ կետը հիսուն գրկաչափ խորություն ունի: Այն, որ լիճը ձեռակերտ է և փորված՝ բացահայտ է: Լճի մեջտեղում կա երկու բուրգ, որոնցից յուրաքանչյուրը բարձրանում է ջրից հիսուն գրկաչափ վեր. նույնքան էլ կառուցված է ջրի տակ: Յուրաքանչյուրի կողքին կա գահին նստած քարե հսկա արձան: Այսպիսով, բուրգերը հարյուր գրկաչափ բարձրություն ունեն, իսկ հարյուր գրկաչափը ուղիղ հավասար է վեց պլեթրոնանոց մեկ ասպարեզի. քանզի մեկ գրկաչափը հավասար է վեց ոտքի կամ չորս կանգունի, իսկ ոտքը հավասար է չորս ափի[98], իսկ կանգունը՝ վեց ափի: Լճի ջուրը տեղի ակունքներից չէ, քանի որ երկիրը խիստ անջուր է, այլ ջրանցքի միջոցով բերված է Նեղոսից. վեց ամիս ջուրը հոսում է դեպի լիճը, իսկ վեց ամիս՝ ետ դեպի Նեղոս: Ջուրը արտահոսելիս կատարված ձկան որսը թագավորական գանձարանին տալիս է օրական մեկ արծաթ տաղանդ եկամուտ, իսկ ներհոսելիս՝ քառասուն մինա[99]:

150. Տեղաբնիկները պատմում են, թե այս լիճը ստորգետնյա ելք ունի լիբիական Սյուրտիսում. այն գետնի տակով հոսում է երկրի միջով, Մեմֆիսից վերև գտնվող լեռան մոտով: Ոչ մի տեղ փորվածքից դուրս բերված հող չտեսնելով, ես հետաքրքրվեցի և լճի մոտակայքում ապրողներին հարցրեցի, թե որտե՞ղ է դուրս բերված հողը: Նրանք պատասխանեցին, թե որտեղ տարված հողը և ինձ միանգամայն համոզեցին. քանզի ես լսել էի, որ Ասորեստանի Նինոս քաղաքում ևս այդպիսի բան կատարվել էր: Գողերը միտք են հղանում կողոպտել ստորգետնյա գանձատներում Նինոսի որդի Սարդանապալոսի պահած գանձերը: Արդ, նրանք սկսում են ստորգետնյա անցք փորել իրենց տնից դեպի թագավորական պալատը: Փորելու ընթացքում

դուրս եկած հողը նրանք գիշերները թափում են Նինոսի մոտով հոսող Տիգրիս գետը, մինչև որ իրագործում են իրենց մտադրությունը: Ինձ պատմեցին, թե այսպես է փորվել նաև Եգիպտոսի այս լիճը, այն տարբերությամբ, որ աշխատել են ոչ թե գիշերը, այլ ցերեկը: Դուրս բերված հողը եգիպտացիները տարել են Նեղոս, որը, բնականաբար, կընդուներ այն և կտաներ իր հոսանքով: Այս լիճն, ասա, փորվել է այս եղանակով:

151. Արդ, տասներկու թագավորները իշխում էին արդարացի: Մի անգամ, սակայն, երբ զոհաբերություն էին անում Հեփեստոսի տաճարում և տոնախմբության վերջին օրը պետք է հեղում կատարեին, ֆրմապետը բերում է նրանց ոսկե բաժակները, որոնցով սովորաբար նրանք հեղում էին կատարում, և սխալմամբ, տասներկուսի փոխարեն, բերում է տասնմեկ բաժակ: Այնժամ նրանցից վերջին կանգնածը, Պսամմետիխոսը, քանի որ նրան բաժակ չէր տրվել, իր գլխից վերցնում է պղնձե սաղավարտը և դրանով հեղում կատարում: Այդ ժամանակ բոլոր թագավորները նույնպես կրում էին սաղավարտ և այդ պահին դրանք դրել էին իրենց գլխին: Արդ, Պսամմետիխոսը, առանց որևէ նենգ մտադրության, մեկնում է իր սաղավարտը: Բայց մյուսները նկատում են Պսամմետիխոսի արարքը և, հիշելով պատգամախոսի գուշակությունը, թե՝ պղնձե բաժակով հեղում կատարողը պետք է դառնա համայն Եգիպտոսի թագավորը, այդուհանդերձ որոշում են շրջապանել Պսամմետիխոսին, քանի որ հարցնելով հասկացել էին, որ նա այդպես արել էր բոլորովին էլ ոչ կանխամտածված: Բայց և այնպես նրանք վճռում են գրկել նրան իր տիրույթների մեծագույն մասից և քշել երկրի ճահճային ցածրավայրերը, արգելելով շփվել մնացած Եգիպտոսի հետ:

152. Այս Պսամմետիխոսը դեռևս նախկինում փախել էր Սիրիա՝ Սարակոսի ձեռքից, որը սպանել էր իր հորը՝ Նեկոսին: Հետագայում, երբ եթովպացին, իր տեսած երազից մղված, հեռանում է (Եգիպտոսից), Սաիսյան մարզում բնակվող եգիպտացիները նրան վերադարձնում են: Այժմ, արդեն թագավոր դառնալուց հետո, երկրորդ անգամ նա ստիպված է լինում պղնձե սաղավարտի պատճառով տասնմեկ թագավորների ձեռքից փախչել ճահճային ցածրավայրերը: Նա նրանց կողմից անարգված զգալով, մտածում է վրեժ լուծել իրեն նալածողներից: Նա հարցում է ուղարկում Բուտո քաղաքում գտնվող Լետոյի պատգամախոսին, որտեղ գտնվում է եգիպտոսի ամենահաշմարտախոս պատգամատունը: Այնտեղից ստացվում է պատգամ, թե հատուցումը կգա ծովից, երբ կհայտնվեն պղնձե մարդիկ: Իսկ Պսամմետիխոսը երբեք չէր ուզում հավատալ, թե պղնձե մարդիկ կգան իրեն օգնության: Բայց չանցած շատ ժամանակ, հոնիացի և կարիացի մարդկանց, որոնք նավարկում էին կողոպուտի նպատակով, (հողմերը) քշեցին Եգիպտոս: Երբ նրանք, պղնձե զենքերով զինված, ափ են դուրս գալիս, ոմն

եգիպտացի, որը նախկինում երբեք չէր տեսել պղնձե հանդերձանքով զինված մարդկանց, գալիս է հանձնում ցածրավայրերը և հաղորդում Պսամմետիքոսին, թե պղնձե մարդիկ եկել են ծովից և ամայացնում են դաշտերը: Պսամմետիքոսը հասկանում է, որ կատարվում է պատգամախոսի գուշակությունը. ուստի և նա բարեկամություն է հաստատում հոնիացիների ու կարիացիների հետ, ու մեծ խոստումներով համոզում նրանց միանալ իր հետ: Նրանց համոզելուց հետո, իր եգիպտացի կողմնակիցների հետ և այս դաշնակիցների օգնությամբ տապալում է տասնմեկ թագավորներին:

153. Դառնալով համայն Եգիպտոսի տերը, Պսամմետիքոսը Մեմփիսում կառուցում է Հեփեստոսի սրբավայրի՝ դեպի հարավ նայող նախադուռը. բացի այդ, նախադռան դիմաց Ապիսի[100] համար կառուցում է բակ, որտեղ խնամում են Ապիսին, երբ այդ կենդանին հայտնվում է: Այդ բակը եզերված է քանդակազարդ սյունաշարով: Սյուների փոխարեն բակը պահում են տասներկու կանգուն բարձրություն ունեցող հսկա արձաններ: Ապիսը հունարեն կոչվում է Եպափոս:

154. Իսկ հոնիացիներին և կարիացիներին, որոնք գործակցել էին իրեն, Պսամմետիքոսը հողակտորներ է պարգևում՝ բնակվելու համար, իրար դիմաց, Նեղոսի այս և այն ափին: Այդ բնակավայրերը կոչվեցին Բանակատեղիք: Այդ հողերից բացի նա պարգևում է այն ամենը, ինչ խոստացել էր: Նրանց հանձնում է նաև եգիպտացի տղաների՝ հունարեն սովորեցնելու համար: Լեզուն սովորած այդ տղաներից էլ սերվել են այժմ Եգիպտոսում գտնվող թարգմանիչները: Հոնիացիները և կարիացիները երկար բնակվեցին այս վայրերում, որոնք գտնվում են ծովափին մոտ, Բուբաստիս քաղաքից փոքր ինչ ներս, Նեղոսի Պելուսյան կոչված գետաբերանի վրա: Հետագայում Ամասիս թագավորը նրանց տեղահանելով այնտեղից, բնակեցնում է Մեմփիսում, դարձնելով իր պահակազորը եգիպտացիների դեմ: Նրանց Եգիպտոսում հաստատվելուց հետո հելլենները, շփվելով եգիպտացիների հետ, ճշգրիտ տեղեկություններ ունեն Եգիպտոսում կատարված բոլոր դեպքերի մասին, սկսած Պսամմետիքոսից մինչև հետագա ժամանակները. քանզի նրանք Եգիպտոսում բնակեցված առաջին այլալեզուներն էին: Այն վայրերում, որտեղից նրանք տեղահանվեցին, դեռևս իմ ժամանակ էլ մնացել են նավակայանները և բնակարանների մնացորդները:

155. Այսպես, ահա, Պսամմետիքոսը դառնում է Եգիպտոսի տիրակալ: Ես արդեն բազմիցս հիշատակել եմ Եգիպտոսի պատգամատան մասին, իսկ այժմ ուզում եմ հանգամանորեն պատմել այդ հիշարժան վայրի մասին: Եգիպտական այդ պատգամատունը գտնվում է Լետոյի տաճարում, կառուցված ծովափից նավով գետն ի վեր բարձրանալիս Նեղոսի Սեբենյուտյան կոչված գետաբերանի վրա գտնվող խոշոր քաղաքում: Այդ քաղաքը, որտեղ գտնվում է պատգամատունը, կոչվում է Բուտո. այդ մասին արդեն ասել եմ: Այդ Բուտո քաղաքում կա Ապոլլոնի և Արտեմիսի սրբավայրը, ինչպես նաև Լետոյի այս տաճարը, որում էլ գտնվում է պատգամատունը: Այն շատ մեծ է, իսկ նրա նախադուռը տասը գրկաչափ բարձրություն ունի: Բայց ես կնշեմ այն, ինչի տեսքը ինձ բոլորից առավել հիացմունք պատճառեց: Այդ սրբավայրում գտնվում է Լետոյի տաճարը, որը կառուցված է միակտուր ժայռաբեկորից: Նրա յուրաքանչյուր պատի երկարությունը և բարձրությունը հավասարապես քառասուն կանգուն է: Տաճարի ծածկը կազմում է մեկ ուրիշ ժայռաբեկոր, չորս կանգուն ելուստ կազմող քիվով:

156. Այսպիսով, այդ սրբավայրում ամենաճարպալի բանը, որ կարելի է տեսնել, այս տաճարն է. երկրորդ (հրաշալիքը) Քեմմիս կոչվող կղզին է: Այն գտնվում է մեծ և խորունկ լճում, Բուտոյի սրբավայրի կողքին: Եգիպտացիները ասում են, թե այդ կղզին լողացող է: Ես, իհարկե, չեմ տեսել, որ այն լողար կամ շարժվեր. ուստի և զարմացա, լսելով, որ կղզին կարող է իսկապես լողալ: Նրա վրա գտնվում է Ապոլլոնի մեծ տաճարը. այնտեղ կա նաև երեք զոհասեղան. կղզու վրա աճում են նաև մեծ թվով արմավենիներ և շատ այլ մրգատու և անպտուղ ծառեր: Եգիպտացիները հետևյալ զրույցն են հաղորդում այս լողացող կղզու մասին, որը նախկինում լողացող չի եղել: Երբ Լետոն՝ որը ենթագույն աստվածներից մեկը, բնակվում էր Բուտո քաղաքում, որտեղ և այժմ գտնվում է նրա պատգամատունը, Իսիսը նրա խնամքին է հանձնում Ապոլլոնին: Լետոն, պատսպարելով նրան այս լողացող կոչված կղզում, նրան փրկում է այն ժամանակ, երբ ամենուրեք որոնող Տյուփոնը գալիս է այնտեղ, փնտրելով Օսիրիսի որդուն: Ինչպես պատմում են եգիպտացիները, Ապոլլոնը և Արտեմիսը Դիոնիսոսի և Իսիսի զավակներն են եղել, իսկ Լետոն՝ նրանց խնամողն ու փրկարարը: Եգիպտացիները Ապոլլոնին անվանում են Հորոս, Դեմետրային՝ Իսիս, Արտեմիսին՝ Բուբաստիս: Այս, և ոչ թե մեկ ուրիշ զրույցից էլ Եվփորիոնի որդի Էսքիլոսը[101] վերցրել է այն, ինչը ես պատմում եմ և ինչը չկա նախորդ պոետներից որևէ մեկի գործերում: Նա Արտեմիսին ներկայացնում է որպես Դեմետրայի դուստր: Վերոհիշյալ պատճառով էլ, պատմում են նրանք, կղզին դառնում է լողացող: Այս է այդ զրույցը:

157. Պսամմետիքոսը Եգիպտոսում թագավորում է հիսուն և չորս տարի, որից քսան և ինը նա նստած պաշարում է Սիրիայի խոշոր քաղաք Ազոտոսը, մինչև որ գրավում է այն: Ինձ հայտնի քաղաքներից և ոչ մեկը այնքան երկար չի դիմացել պաշարման, ինչքան Ազոտոսը:

158. Պսամմետիքոսի որդին էր Նեկոսը, որը թագավորել է Եգիպտոսում: Սա առաջինն էր, որը ձեռնարկել է Կարմիր ծով տանող ջրանցքը

փորել. հետագայում այն շարունակել է պարսիկ Դարեհը: Այդ ջրանցքի երկարությունը չորս օրվա նավարկման ուղի է. իսկ լայնքը փորված է այնքան, որ երկու տրիերա[102] կարող էին իրար կողքի նավարկել: Ջրանցքի ջուրը հանված է Նեղոսից, Բուբաստիս քաղաքից քիչ վերև: Այնուհետև ջրանցքը անցնում է Արաբիայի Պատումոս քաղաքի մոտով և թափվում Կարմիր ծով: Ջրանցքը նախ կառում է եգիպտական դաշտավայրի Արաբիային հարող մասը. այս ցածրավայրից վերև ձգվում է Մեմփիսի լեռը, որտեղ և գտնվում են քարհանքերը: Արդ, ջրանցքն այս լեռան ստորոտով երկար ձգվում է արևմուտքից արևելք, այնուհետև թեքվում և կիրճի միջով գնում դեպի հարավ ու դուրս գալիս Արաբական ծոց: Ամենակարճ և ամենաուղիղ հատվածը Հյուսիսային ծովից դեպի Հարավային ծով, որը կոչվում է նաև Կարմիր ծով, այսինքն, Եգիպտոսի և Սիրիայի սահմանին գտնվող Կասիոն լեռից մինչև Արաբական ծոցը, հավասար է ուղիղ հազար ասպարեզի: Սա ամենակարճ հատվածն է. մինչդեռ ջրանցքը շատ ավելի երկար է՝ ոլորապտույտ լինելու պատճառով: Նեկոս թագավորի օրոք այս ջրանցքը փորելիս մահացել է տասներկու բյուր մարդ: Նեկոսը ընդհատել է ջրանցքի կառուցումը, անսալով պատգամատուի զուշակությանը, թե նա այդ գործը կատարում է հօգուտ բարբարոսի: Եգիպտացիները բարբարոս կոչում են նրանց, ովքեր չեն խոսում իրենց լեզվով:

159. Այսպիսով, Նեկոսը ընդհատում է ջրանցքի կառուցումը և պատրաստվում արշավանքի: Նա կառուցում է տրիերաներ և՛ Հյուսիսային ծովում, և՛ Կարմիր ծովի Արաբական ծոցում, որտեղ դեռևս երևում են նավակայանները: Անհրաժեշտության դեպքում Նեկոսը միշտ օգտագործում էր դրանք և իր զորքով արշավելով, Մագդոլոսում հաղթում սիրիացիներին. իսկ հաղթանակից հետո գրավում է սիրիական խոշոր քաղաք Կադյուտիսը: Եվ այն զենքերը, որոնցով ինքը տարել էր այդ հաղթանակները, նա ձոնում է Ապոլոնին, ուղարկելով դրանք Միլետում գտնվող Բրանքիդների տաճարին: Այնուհետև, ընդամենը տասնվեց տարի թագավորելուց հետո, նա վախճանվեց, իշխանությունը հանձնելով իր որդի Պսամմիսին[103]:

160. Այս Պսամմիսի թագավորության ժամանակ Եգիպտոս են ժամանում էլեյացվոց[104] հրեշտակները, որոնք հայտարարում էին, որ իրենք հիմնադրել են օլիմպիական մրցումներն աշխարհում ամենաարդար և ամենագեղեցիկ օրենքների հիման վրա: Նրանք պնդում էին նաև, որ նույնիսկ եգիպտացիները, որոնք աշխարհում ամենաիմաստուններն են, չէին կարող դրանից լավը մտահղանալ: Արդ, երբ էլեյացիները, ժամանելով Եգիպտոս, հայտնում են իրենց գալու նպատակը, թագավորն իր մոտ է հրավիրում եգիպտացիների ամենաիմաստուններին: Եգիպտացիները, հավաքվելով, հարցնում են էլեյացիներին, թե ինչպիսի՞ կարգեր են սահմանված այդ մրցումների առթիվ: Էլեյացիները ամեն ինչ պատմելուց հետո ավելացնում են, թե եկել են իմանալու, արդյո՞ք եգիպտացիները կարող են մտածել ավելի արդարացի կարգ ու կանոնի մասին: Իմաստունները, խորհրդակցելուց հետո, հարցնում են էլեյացիներին, թե արդյո՞ք իրենց քաղաքացիները ևս մասնակցում են այդ մրցումներին: Նրանք պատասխանում են, թե էլեյացիները ևս կարող են դուրս գալ մրցման, ինչպես և բոլոր մյուս հելլենները: Եգիպտացիները առարկում են, թե այդպիսի կարգ սահմանելով, նրանք մեղանչում են արդարության դեմ: Քանզի աննեար է, որ չպաշտպանեն իրենց մրցող համաքաղաքացուն և դրանով իսկ անարդար լինեն օտարների հանդեպ: Եթե նրանք փափագում են մրցումներն արդար կազմակերպել և այդ նպատակով են ժամանել Եգիպտոս, ապա նրանք պետք է մրցություններին թույլատրեն միայն օտարերկրացիներին, իսկ էլեյացիներին արգելեն մասնակցելու: Եգիպտացիներն այսպիսի խորհուրդ տվեցին էլեյացիներին:

161. Պսամմիսը Եգիպտոսում թագավորում է ընդամենը վեց տարի: Նա արշավում է Եթովպիա, որից հետո շուտով մահանում է: Այնուհետև թագավորում է նրա որդի Ապրիեսը: Սա իրեն նախորդած բոլոր թագավորներից առավել բախտավորն է լինում, իր պապ Պսամմետիքոսից հետո: Սա թագավորում է քսաներեք տարի: Այդ ընթացքում զորքով արշավում է Սիդոն և ծովում պատերազմում Տյուրոսի տիրակալի դեմ: Ապրիեսին պատահում է դժբախտություն, որի պատճառի մասին այստեղ համառոտ կասեմ. այդ մասին առավել շատ կպատմեմ Լիբիան նկարագրելիս: Ապրիեսը զորք է ուղարկում Կյուրենեի դեմ, որը, սակայն, ծանր պարտություն է կրում: Եգիպտացիները, մեղադրելով նրան, ապստամբում են, ենթադրելով, որ Ապրիեսը կանխամտածված իրենց ուղարկել է ակնհայտ աղետի, որպեսզի իրենք կործանվեն, իսկ ինքն առավել ապահով իշխի մնացած եգիպտացիների վրա: Եվ սա (պատերազմից) վերադարձած եգիպտացիները և կործանվածների բարեկամներն այդ ամենից զայրացած, բացահայտ ապստամբում են:

162. Այդ մասին լսելով, Ապրիեսը նրանց դեմ է ուղարկում Ամասիսին, որպեսզի համոզի նրանց դադարեցնել ապստամբությունը: Երբ Ամասիսը գալիս է և սկսում համոզել եգիպտացիներին՝ հրաժարվելու իրենց արարքից, մինչ նա խոսում էր, ոմն եգիպտացի, ետևից մոտենալով, նրա գլխին սաղավարտ է դնում և հայտարարում, որ այդպիսով նրան թագադրում է: Ամասիսը ցույց է տալիս, թե այդ բանը հակառակ չէ իր կամքին: Երբ ապստամբները Ամասիսին հայտարարում են Եգիպտոսի թագավոր, նա սկսում է արշավանքի պատրաստվել Ապրիեսի դեմ: Ապրիեսը, լսելով այդ, Ամասիսի դեմ է ուղարկում իր մերձավորներից երևելի մի եգիպտացու, ա-

նունը Պատարբեմիս, հրամայելով նրան Ամասիսին կենդանի բերել իր մոտ: Երբ Պատարբեմիսը գալիս է և Ամասիսին հրավիրում (թագավորի մոտ), Ամասիսը, որն այդ պահին նստած էր ձիու վրա, բարձրանալով թամբին, օդ է բաց թողնում և պատվիրում Պատարբեմիսին այդ տանել իր հետ: Բայց երբ Պատարբեմիսը, այնուամենայնիվ, պահանջում է, որ նա գա իր հետ, քանի որ թագավորը իրեն ուղարկել էր այդ գործի համար, Ամասիսը պատասխանում է, թե ինքը վաղուց մտադիր էր անել այդ և թե Ապրիեսը պատճառ չի ունենա իր վրա զայրանալու: Քանզի ինքը շուտով կգա և իր հետ կբերի նաև ուրիշների: Պատարբեմիսը հասկանում է այս խոսքերի իմաստը. նա տեսնում է նաև պատերազմի նրա նախապատրաստությունը: Ուստի և շտապ հեռանում է, որպեսզի անհապաղ թագավորին հաղորդի կատարվածի մասին: Երբ նա հայտնվում է Ապրիեսի առաջ, առանց Ամասիսի, թագավորը զայրացած, նրան խոսելու ժամանակ չտալով, հրամայում է կտրել նրա ականջներն ու քիթը: Մնացած եգիպտացիները, որոնք մինչ այդ հավատարիմ էին նրան, տեսնելով իրենցից ամենաերեջելի մարդու այդքան ստոր կերպով անարգվելը, անհապաղ անցնում են ապստամբների կողմը և հանձնվում Ամասիսին:

163. Այս իմանալով, Ապրիեսը զինում է վարձկանների և շարժվում եգիպտացիների վրա: Նա վերցնում է երեք բյուր կարիացի և հոնիացի վարձկաններ: Նա Սաիս քաղաքում խոշոր և տեսարժան պալատներ ուներ: Արդ, Ապրիեսի զորքը քայլում է եգիպտացիների դեմ, իսկ Ամասիսի զորքը՝ օտարականների դեմ: Երկու զորքերը հանդիպում են Մոմեմփիս քաղաքում և փորձում իրենց ուժերը:

164. Եգիպտացիները բաժանված են յոթը դասի. դրանք են՝ քրմերը, ռազմիկները, եզնարածները, խոզարածները, խանութպանները, թարգմանիչները, ղեկավարները: Այսքան դասեր կան Եգիպտոսում, իսկ անվանումները տրված են նրանց զբաղմունքին համապատասխան: Ռազմիկները կոչվում են կալասիրիացիներ և հերմոտյուբիացիներ ու սերում են հետևյալ մարզերից. քանզի ամբողջ Եգիպտոսը բաժանված է մարզերի:

165. Հերմոտյուբիացիների մարզերը հետևյալներն են. Բուսիրիսյան, Սաիսյան, Քեմմիսյան, Պապրեմիսյան, Պրոսոպիտիս կոչված կղզին և Նաթոյի կեսը[105]: Այս մարզերից են սերել հերմոտյուբիացիները: Նրանց թիվը առավելագույնս հասել է տասնվեց բյուր մարդու: Նրանցից ոչ մեկը երբեք չի զբաղվել արհեստով, այլ միայն ռազմական գործով:

166. Կալասիրիացիների մարզերը հետևյալներն են. Թեբեյան, Բուբաստիսյան, Ափիսյան, Տանիսյան, Մենդեսյան, Սեբեննոսյան, Աքրիբիսյան, Փարբաիսյան, Թրուիսյան, Օնուփիսյան, Անյուսյան, Մյուէկփորիսյան. սա գտնվում է կղզու վրա, Բուբաստիս քաղաքի դիմաց[106]: Այս մարզերից են

սերել կալասիրիացիները: Նրանց թիվն առավելագույնս հասել է քսանհինգ բյուր մարդու: Սրանք ևս ոչ մի արհեստով չեն կարող զբաղվել, այլ միայն ռազմական գործով, որը որդին սովորում է հորից:

167. Չեմ կարող հաստատապես որոշել, թե հելլեները արդյո՞ք այս ևս սովորել են եգիպտացիներից. քանզի ես տեսնում եմ, որ և՛ թրակացիները, և՛ սկյութները, և՛ պարսիկները, և՛ լյուդիացիները, և՛ համարյա բոլոր բարբարոսները նվազ հարգում են արհեստագործներին և նրանց ժառանգներին, քան մյուս քաղաքացիներին. իսկ ձեռքի աշխատանքից ազատ եղողներին, հատկապես ռազմական գործին նվիրվածներին, համարում են ազնվազարմ: Այդպես արհամարհելը բոլոր հելլենները, հատկապես լակեդեմոնացիները, սովորել են ուրիշներից: Բոլորից սակավ արհեստագործներին արհամարհում են կորնթացիները:

168. Քրմերից բացի Եգիպտոսում առանձնաշնորհյալներ էին միայն ռազմիկները: Նրանցից յուրաքանչյուրն ստանում էր տասներկու արուրա ընտիր վարելահող ապահարկ: Արուրան քառակուսի հողակտոր է, որի յուրաքանչյուր կողմը հարյուր եգիպտական կանգուն է. եգիպտական կանգունը հավասար է սամոսյանին: Ահա այսքան հող առանձնացվում էր յուրաքանչյուր ռազմիկի համար. նրանք այդ հողերը օգտագործում էին հերթագայությամբ և ոչ թե նույն մարդը մշտապես նույն հողը[107]: Տարեկան հազար կալասիրիացիներ և (նույնքան) հերմոտյուբիացիներ կարգվում էին թագավորի թիկնապահներ: Սրանցից յուրաքանչյուրը, բացի հողերից ստացած եկամուտներից, ստանում էր նաև օրական հինգ մինա հաց, երկու մինա տավարի միս և չորս շերեփ գինի: Սա թիկնապահներին տրվում էր մշտապես:

169. Արդ, երբ Ապրիեսն իր վարձկաններով և Ամասիսը համայն եգիպտացիների հետ ժամանում են Մոմեմփիս քաղաքը, ճակատամարտն սկսվում է: Թեև օտարները լավ էին կռվում, բայց թվով հույժ փոքրաթիվ լինելով, պարտվում են: Ինչպես պատմում են, Ապրիեսը կարծում էր, թե նույնիսկ աստված չի կարող իրեն զրկել թագավորությունից. այդքան նա իրեն ապահով և հաստատ էր համարում: Բայց ահա նա մարտում պարտվում է, գերի բռնվում ու տարվում Սաիս, իր նախկին պալատը, որն արդեն պատկանում էր Ամասիսին: Սկզբում Ապրիեսին լավ էին խնամում պալատում և Ամասիսը նրան լավ էր վերաբերվում: Բայց երբ հետագայում եգիպտացիները տրտնջացին, թե արդար չի վարվում, խնամելով իր և իրենց ամենաոխերիմ թշնամուն, այնժամ նա Ապրիեսին հանձնեց եգիպտացիների ձեռքը, որոնք նրան խեղդամահ արեցին և թաղեցին հայրենական դամբարանում: Այն գտնվում է Աթենասի տաճարում, սրբավայրին շատ մոտիկ, մտնելիս ձախ կողմում: Սաիսի բնակիչներն այս տաճարում էին թաղում

իրենց մարզից սերող թագավորներին: Անա և Ամասիսի գերեզմանը գտնվում է նույնպես տաճարի բակում, թեև սրբավայրից ավելի հեռու, քան Ապրիեսի և նրա նախնիների գերեզմանները: Այն այուճազարդ, քարե խոշոր սրահ է, արմավենու նման այուճերով և այլ զարդերով: Այդ սրահում կա երկփեղկ երկու դուռ, որոնց եռանում գտնվում է դագաղը:

170. Սախսում, Աթենասի այս նույն սրբավայրում է գտնվում նաև դամբարանը նրա, ում անունը[108] անթույլատրելի եմ համարում այստեղ արտասանել: Այն գտնվում է Աթենասի տաճարի եռանում, տաճարի պատի երկարությամբ: Սրբավայրում կանգնեցված են քարե բարձր կոթողներ. այնտեղ կա նաև լիճ, որը գեղեցկապես շուրջանակի եզերված է քարե պատնեշով: Լիճը, իմ կարծիքով, նույն մեծությամբ է, ինչ Դելոսի Կոր կոչված լիճը:

171. Այս լճի վրա գիշերները ներկայացնում են ասածու շարշարանքները պատկերող տեսարաններ. այդ ներկայացումները եգիպտացիները կոչում են միստերիաներ: Թեև ես լավ գիտեմ, թե ի՞նչ են այդ միստերիաները, այնուհանդերձ այդ մասին ես (երկյուղած) լռություն կպահեմ: Ես ուզում եմ լռել նույնպես Դեմետրայի տոնակատարության ծեսերի մասին, որ հելլեները անվանում են Թեսմոֆորիա[109], բացի այն քչից, ինչ թույլատրելի է պատմել: Դեմետրայի այս տոնը և ծեսերը Եգիպտոսից մեզ մոտ են բերել Դանաոսի դստերը, որոնք այդ ամենը սովորեցրել են պելասգների կանանց: Հետագայում, երբ դորիացիները տեղահանեցին Պելոպոնեսոսի ամբողջ բնակիչներին, այդ ծիսակատարությունը վերացավ. այն միայն պահպանեցին արկադիացիները. տեղացիներից միայն սրանք էին մնացել Պելոպոնեսոսում և չէին տեղահանվել:

172. Այսպիսով, Ապրիեսի տապալվելուց հետո թագավորում է Ամասիսը. սրա հայրը մարզից էր, Սիուֆ կոչված քաղաքից: Սկզբում եգիպտացիները արհամարհում էին Ամասիսին և ոչ մի հարգանք չէին ածում նրա հանդեպ, քանի որ նա հասարակ մարդ էր և ոչ թե երևելի ազնից: Բայց հետագայում Ամասիսը նրանց նվաճել է իր խելամտությամբ և խոհեմությամբ: Իր բազմաթիվ գանձերի մեջ նա ունեցել է նաև ոսկի լվանալու մի ավազան, որի մեջ ինքը՝ Ամասիսը և իր սեղանակիցները ամեն անգամ իրենց ոտքերն են լվացել: Անա այս կոնքը չարդելով, դրանից ասածու արձան է պատրաստել և այն կանգնեցրել քաղաքի ամենահարմար վայրում: Եգիպտացիները այդ արձանի մոտով անցնելիս մեծ պատիվներ էին տալիս նրան: Ամասիսը լսելով քաղաքացիների այդպիսի վերաբերմունքի մասին, իր մոտ է հրավիրում եգիպտացիներին և ասում, թե այդ արձանը պատրաստվել է ոսկի լվանալու կոնքից, որի մեջ եգիպտացիները նախկինում թքել են, մեզել և ոտքեր լվացել. մինչդեռ հիմա մեծապես հարգում

են այն: Այդպես էլ, ասում է նա, իր հետ նույնն է կատարվել, ինչ այդ ոսկի լվանալու կոնքի հետ. քանզի նախկինում ինքը հասարակ մի մարդ էր, իսկ այժմ իրենց թագավորն է. հետևաբար, իրենք պետք է հարգեն ու պատվեն իրեն:

173. Այս կերպ է նա իր կողմը նվաճել եգիպտացիներին, որպեսզի նրանք հավատարմորեն ծառայեն իրեն: Ամասիսը այսպիսի կարգեր է հաստատել: Վաղ առավոտյան, մինչև հրապարակի բազմամարդ դառնալը, նա չանսիրաբար զբաղվում էր իրեն ներկայացված գործերով, որից հետո խրախճանում էր և անհոգ կատակում ու խաղ անում իր սերնդակիցների հետ: Բայց նրա ընկերները, նեղվելով այդ ամենից, նրան հորդորում էին այսպես. «Ով թագավոր. դու քեզ հիշտ չես ներկայացնում՝ այդ սին գործին անձնատուր լինելով: Քեզ անհրաժեշտ է փառավորապես նստել շքեղ գահին և օրն ի բուն զբաղվել քո գործերով: Այդ դեպքում եգիպտացիները կհամոզվեն, որ իրենց վրա իշխում է իրոք մեծ մարդ և դու մեծ համբավ կունենաս: Մինչդեռ այժմ դու թագավորավայել չես վարվում»: Իսկ նա նրանց պատասխանում է այսպես. «Ադեղնավորները իրենց ադեղները ձգում են այն դեպքում միայն, երբ պետք է գործածեն. քանզի եթե դրանք ամբողջ ժամանակ ձգված մնան, ապա կկոտրվեն և արդեն անհրաժեշտության դեպքում հնարավոր չի լինի գործածել: Այդպիսին է նաև մարդու վիճակը: Եթե մարդ մշտապես լուրջ գործով է զբաղված և երբեք իրեն թույլ չի տալիս երբեմն կատակել ու զվարճանալ, ապա նա կամ կցնորվի, և կամ կաթվածահար կլինի: Անա այդ ամենն իմանալով, ես այդ երկուսին ևս ժամանակ եմ հատկացնում»: Նա այսպես է պատասխանում ընկերներին:

174. Պատմում են, թե Ամասիսը, երբ դեռևս հասարակ քաղաքացի էր, սիրում էր խմել ու կատակել և բոլորովին էլ լուրջ չէր: Երբ նա իր ինչքը մսխել է խմելով ու զվարճանալով, ապա սկսել է սրանից, նրանից գողանալ: Մարդիկ մեղադրում էին նրան իրենցից գողանալու համար: Բայց քանի որ նա համառորեն ժխտում էր, ապա նրանք առաջնորդում են նրան պատգամատուն, հարցնելու համար, թե որտե՞ղ է իրենցից գողացվածը: Պատգամախոսը նրան երբեմն մեղադրում էր, բայց հաճախ արդարացնում: Իսկ նա թագավոր դառնալուց հետո հետևյալ կերպ է վարվում: Այն տաղավաձների տաճարների մասին, որոնք իրեն արդարացրել էին իբրև գողություն չկատարած մարդու, նա ոչ մի խնամք չտարավ և ոչ մի միջոց չտրամադրեց դրանք վերաշինելու համար. նա նույնիսկ չհանախեց այնտեղ և զոհեր չմատուցեց, քանի որ այդ աստվածները՝ իրենց սուտ պատգամներով, արժանի չէին այդ ամենին: Մինչդեռ այն աստվածներին, որոնք իրեն բացահայտել էին գողության մեջ, նա մեծապես հարգում է որպես ճշմարիտ աստվածների, որոնք ճշմարտացի պատգամներ էին հաղորդել:

175. Սակայն նա կառուցեց Աթենասի հիանալի նախադուռը, որն իր բարձրությամբ և մեծությամբ, ինչպես նաև քարերի խոշորությամբ ու գեղեցկությամբ մեծապես գերազանցում է մյուս բոլոր այդպիսի կառույցներին: Այնուհետև նա հսկա արձաններ և երկար տղամարդ-սֆինքսներ կանգնեցրեց, ինչպես նաև հսկայական քարեր տեղափոխեց այլ կառույցների համար: Այդ քարերի մի մասը բերվեց Մեմփիսի քարհանքերից, իսկ առավել խոշոր քարաբեկորները՝ Ելեփանտինե քաղաքից, որը գտնվում է Սաիսից գետն ի վեր ավելի քան քսան օրվա նավարկման հեռավորության վրա: Բայց այն, ինչ բոլորից առավել զարմացնում է ինձ, հետևյալն է: Նա հրամայել է Ելեփանտինե քաղաքից փոխադրել միակտուր քարից կառուցված շենք: Այն տեղափոխել են երեք օրվա ընթացքում, որի համար աշխատել է երկու հազար մարդ, բոլորը ղեկակալներ: Այդ շենքի արտաքին երկարությունը քսան և մեկ կանգուն է, լայնքը՝ տասնչորս, իսկ բարձրությունը՝ ութը: Սրանք այդ միակտուր քարե շենքի արտաքին չափերն են. իսկ ներսից՝ երկարությունը տասնութ կանգուն և մեկ պյուգոն[110], լայնքը տասներկու, բարձրությունը՝ հինգ կանգուն: Շենքը կանգնած է սրբավայրի մուտքի մոտ: Այն սրբավայրից ներս չեն քաշել, ինչպես պատմում են, հետևյալ պատճառով: Ճարտարապետն այդ շենքը քաշելիս բարձր հառաչել է, քանի որ այդ ծանր աշխատանքը երկար է տևել: Ամասիսը, անհանգստացած դրանից, թույլ չի տվել, որ այն ավելի առաջ քաշեն: Ուրիշներ, սակայն, պատմում են, որ շենքը լծակներով շարժող մարդկանցից մեկը ճզմվել է դրա տակ. այդ պատճառով էլ այն չեն քաշել սրբավայրից ներս:

176. Մյուս բոլոր կարևոր սրբավայրերում ևս Ամասիսը մեծության արժանի գործեր է կատարել. հատկապես Մեմփիսում, Հեփեստոսի տաճարի առաջ պառկած վիճակում գտնվում է հսկա արձան, որի երկարությունը յոթանասունհինգ ոտնաչափ է: Նույն պատվանդանի վրա, հսկա արձանի այս և այն կողմում կանգնած է նույն քարից պատրաստած մեկական արձան, յուրաքանչյուրը քսան ոտնաչափ բարձրությամբ: Սաիսում ևս կա նույն մեծության հսկա արձան, որը պառկած է գետնին, ինչպես և Մեմփիսում: Փսիսի տաճարը Մեմփիսում, որը խոշոր է և տեսարժան, կառուցել է դարձյալ Ամասիսը:

177. Պատմում են, որ Ամասիս թագավորի օրոք Եգիպտոսն առավելագույնս բարգավաճել է այն առումով, որ գետը երկրին բարիք է տվել, իսկ երկիրն էլ՝ մարդկանց: Այդ ժամանակ Եգիպտոսում եղել է ընդամենը երկու բյուր քաղաք: Ամասիսն է նաև սահմանել այն օրենքը, թե յուրաքանչյուր եգիպտացի պարտավոր է ամեն տարի իր մարզի կառավարչին հայտնել, թե ի՞նչ եկամուտ ունի: Նա, ով այդ մասին չհայտնի, կամ չկարողանա ցույց տալ, թե ապրում է ազնիվ կյանքով, ենթարկվում է մահապատժի: Սոլոն Աթենացին այդ օրենքը վերցնելով Եգիպտոսից, հաստատել է Աթենքում: Այն էլ նրանք ցարդ կիրառում են, քանի որ ամենատաքերի օրենքն է:

178. Ամասիսը, դառնալով հելլեների բարեկամ, ոչ միայն նրանցից ոմանց հանդեպ բարեհաճություն է ցուցաբերել, այլև Եգիպտոս ժամանած հելլեներին բնակեցնելու համար հատկացրել է Նավկրատիս քաղաքը[111]: Իսկ նրանց համար, ովքեր չէին ուզում այնտեղ բնակվել, այլ սոսկ գալիս էին նավերով (առևտրի համար), հատկացրել է վայրեր, որտեղ նրանք կարող էին աստվածների համար տաճարներ և սրբավայրեր կառուցել: Դրանցից ամենախոշորը, ամենահայտնին և ամենից շատ այցելուներ ունեցողը Հելլենիոն կոչվածն է: Այն համատեղ կառուցել են հետևյալ քաղաքները. հոնիականներից՝ Քիոսը, Տեոսը, Փոկայան և Կլազոմենեն. դորիականներից՝ Հռոդոսը, Ղնիդոսը, Հալիկառնասոսը և Փասելիսը, իսկ էոլիականներից՝ միայն Միտիլենեն: Ահա սրանց է պատկանում այդ սրբավայրը և այն քաղաքները են, որ կարգում են առևտրի վերակացուներին (այդ քաղաքում): Մյուս քաղաքները այնտեղ ոչ մի իրավունք չունեն, այլ միայն հյուր են լինում: Էգինացիները իրենց համար առանձին կառուցել են Զևսի սրբավայրը, սամոսցիները՝ Հերայի սրբավայրը, միտիլենացիները՝ Ապոլոնի:

179. Հնում Նավկրատիսն էր Եգիպտոսում առևտրական միակ նավահանգիստը և ուրիշը չկար: Եթե նավը հասնում էր Նեղոսի մեկ ուրիշ գետաբերանը, ապա անհրաժեշտ էր երդվել, թե այդ տեղի է ունեցել ակամայից: Երդվելուց հետո նավը պետք է վերադառնար Կանոբոսյան գետաբերան: Իսկ եթե հնարավոր չէր լինում հակառակ քամու պատճառով բարձրանալ Նեղոսն ի վեր, ապա բեռները բեռնատարների միջոցով փոխադրվում էին Դելտայի մոտ, մինչև հասնում էին Նավկրատիս: Ահա այսքան արժեքավոր էր Նավկրատիսը:

180. Երբ ամփիկտիոնները[112] երեք հարյուր տաղանդի դիմաց կապալով տվեցին Դելֆիում գտնվող այժմյան տաճարի կառուցումը, քանզի նախկին տաճարը պատահաբար հրդեհվել էր, դելֆիցիները պետք է այդ ծախսի չորրորդ մասը իրենք վճարեին: Արդ, նրանք, շրջելով քաղաքները, եվրոպացիներից էին հավաքում. նրանք ոչ քիչ միջոցներ ստացել են նաև Եգիպտոսում: Այսպես, Ամասիսը նրանց տվել է հազար տաղանդ պաղեղ, իսկ Եգիպտոսում բնակվող հելլենները՝ քսան մինա:

181. Ամասիսը կյուրենացիների հետ բարեկամություն է հաստատել և դաշինք կնքել: Նա նույնիսկ հարմար է համարել այնտեղից կին վերցնել գուցե այն պատճառով, որ ցանկացել էր հելլենուհի կին ունենալ, գուցե և կյուրենացիներին սիրաշահելու նպատակով: Արդ, նա ամուսնացել է Լադիկե անունով աղջկա հետ, որը, ըստ ոմանց, Բատտոսի դուստրն էր, ըստ

այլոց՝ Արկեսիլաոսի, իսկ քսան ուրիշների՝ երեելի քաղաքացի Կրիտոբուլոսի գուսարը: Բայց առագաստում պառկելիս, Ամասիսը չէր կարողանում կենակցել նրա հետ, թեպետ այլ կանանց հետ կարողանում էր: Ու քանի որ այդպես շարունակվում էր, Ամասիսը ասում է Լադիկեին. «Ով կին. դու ինձ լիովին կախարդել ես: Վստահ եղիր. անհնար է, որ դու խուսափես դաժանագույն պատժից, որի նմանը երբեք որևէ կին կրած լինի»: Լադիկեն թեև ժխտում էր, բայց Ամասիսի զայրույթը չէր մեղմանում: Ուստի և Լադիկեն իր մտքում ուխտ է անում՝ Ափրոդիտեին արձան կանգնեցնել Կյուրենեում, եթե Ամասիսն այդ գիշեր կենակցի իր հետ. քանզի միայն այդպես ինքը կարող էր փրկվել աղետից: Այսպես ուխտելուց հետո, հիրավի, Ամասիսը իսկույն կենակցել է նրա հետ և այնուհետև, ամեն անգամ, երբ Ամասիսը գալիս էր նրա մոտ, կենակցում էր նրա հետ: Իսկ Լադիկեն իր ուխտը ասավածուհու հանդեպ կատարում է: Այդ արձանը դեռ իմ ժամանակ ևս անխաթար կանգնած է Կյուրենե քաղաքից դուրս: Կամբյուսեսը երբ նվաճեց Եգիպտոսը, Լադիկեից իմանալով, թե նա ով է, նրան առանց վիրավորանքի ուղարկեց Կյուրենե:

182. Ամասիսը ընծաներ է պարգևել նաև Հելլադայում: Կյուրենեում նա նվիրաբերել է Աթենասի ոսկեզօծ արձանը, ինչպես նաև իրեն պատկերող գունավոր նկար. երկու քարե արձան և քաթանե գեղեցիկ լանջապանակ նա ընծայաբերել է Լինդոսի Աթենասին և, վերջապես, Սամոսում գտնվող Հերայի տաճարին՝ իրեն պատկերող երկու փայտե արձան, որոնք իմ ժամանակ ևս կանգնած են մեծ տաճարում, դռների եռև: Այս նվիրատվությունները Սամոսին Ամասիսը կատարել է հանուն այն ճյուրընկալության, որ իրեն ցույց էր տվել Պոլիկրատեսը՝ Էակոսի որդին: Ինչ վերաբերում է Լինդոսի Աթենասին՝ Ամասիսի արած պարգևներին, ապա այդ կատարել է ոչ թե որևէ ճյուրընկալության առիթով, այլ որովհետև Լինդոսում Աթենասի տաճարը, ինչպես պատմում են, կառուցել են Դանաոսի դստերը, երբ նրանք, Եգիպտոսի որդիներից փախչելիս, կանգ են առել այնտեղ: Այսպիսի էին Ամասիսի տված պարգևները: Բացի այդ, նա առաջինն է եղել, որ նվաճել է Կիպրոսը և այն դարձրել իրեն հարկատու:

ԳԻՐՔ ԵՐԵՔՈՐԴ

ԹԱԼԵՍԱ

1. Այս Ամասիսի վրա է արշավել Կամբյուսեսը՝ Կյուրոսի որդին, իր հետ տանելով ոչ միայն բոլոր հպատակներին, այլև հելլեններից՝ հոնիացիներին և էոլիացիներին՝ հետևյալ պատճառով: Կամբյուսեսը լրաբեր էր ուղարկել Եգիպտոս, խնդրելով Ամասիսից (կնության տալու) նրա դստերը: Կամբյուսեսը այդ խնդրանքն արել էր ոմն եգիպտացու խորհրդով, որը ատելություն ուներ Ամասիսի դեմ. քանզի Ամասիսը եգիպտացի բոլոր մյուս բժիշկներին թողած, սրան էր անջատել իր կնոջից ու որդիներից և հանձնել պարսիկներին, երբ Կյուրոսը բանբեր էր ուղարկել Ամասիսի մոտ, խնդրելով լավագույն եգիպտացի ակնաբույժին: Արդ, ատելով (Ամասիսին), եգիպտացին Կամբյուսեսին խորհուրդ է տալիս խնդրել Ամասիսի դստեր, որպեսզի կամ իր դստեր կնության տալով վշտանար[2], կամ էլ մերժելով, բշնամանար Կամբյուսեսին: Իսկ Ամասիսը, մի կողմից ատելով պարսիկներին, մյուս կողմից՝ վախենալով նրանց հզորությունից, չգիտեր ի՞նչ անել, տա՞լ (իր դստեր), թե՞ մերժել: Քանզի նա լավ գիտեր, որ Կամբյուսեսը նրան որպես կին չէր պահելու, այլ որպես հարճ: Այս ամենը կշռադատելով, նա այսպես արեց: Ապրիեսը, նախորդ թագավորը, ուներ շատ փարթամ և գեղատես մի դուստր, որն ամբողջ ընտանիքի միակ շառավիղն էր, տեսնելով՝ Նիտետիս: Անա այս աղջկան շքեղ ու ոսկեկար զգեստներ հագցնելով, ուղարկում է պարսիկների մոտ որպես իր դուստրը: Որոշ ժամանակ անց, երբ Կամբյուսեսը նրան ողջունում է հոր՝ Ամասիսի անունով, աղջիկը պատասխանում է. «Ով արքա. դու չգիտես, որ Ամասիսը խաբել է քեզ: Նա ինձ հագցրել է այս շքեղ զգեստները և ուղարկել քեզ մոտ իր դստեր փոխարեն. մինչդեռ ես իրականում դուստրն եմ Ապրիեսի, նրա նախկին տիրոջ, որի դեմ նա եգիպտացիների հետ ապստամբեց և հետո սպանեց նրան»: Այս

խոսքերն ու այս առիթը զայրացրին Կամբյուսեսին՝ Կյուրոսի որդուն, և նա արշավեց Եգիպտոս:

2. Պարսիկներն այսպես են պատմում: Մինչդեռ եգիպտացիները Կամբյուսեսին համարում են յուրային, ասելով, թե նա ծնվել է Ապրիեսի այս դստերից. քանզի, նրանց ասելով, ոչ թե Կամբյուսեսը, այլ Կյուրոսն է Ամասիսից կնության խնդրել նրա դստեր: Բայց այդ պատմությունը ճիշտ չէ: Նախ, եգիպտացիներին քաջ հայտնի էր, քանի որ ոչ ոք պարսկական բարքերն այնքան լավ չգիտի, ինչքան եգիպտացիները, որ պարսիկների մոտ ընդունված չէ անհարազատ որդուն թագավոր կարգել, եթե կա հարազատ որդին. այնուհետև, Կամբյուսեսը ոչ թե եգիպտուհու որդի էր, այլ Ափեմենյան Փառնասպեսի դուստր Կասսանդանեի: Եգիպտացիներն աղավաղում են պատմությունը, իրենց ներկայացնելով իբրև Կյուրոսի (արքայական) տոհմի ազգակից:

3. Այս ամենն այսպես է: Բայց կա մեկ այլ զրույց ևս, որը ինձ չի թվում հավանական: Իբր թե պարսկուհի մի կին, մտնելով Կյուրոսի կանանց մոտ, հիանում է, տեսնելով Կասսանդանեի կողին կանգնած նրա գեղատես ու փարթամ որդիներին, և բարձրաձայն գովում նրանց: Իսկ Կասսանդանեն՝ Կյուրոսի կինը, այսպես է ասում. «Թեև ես այսպիսի որդիների մայր եմ, բայց Կյուրոսն ինձ արհամարհում է և պատվում Եգիպտոսից ձեռք բերվածին: Նիտետիսի դեմ զայրացած, նա այսպես է ասում. իսկ նրա ավագ որդին՝ Կամբյուսեսը, ասում է. «Այդ պատճառով էլ, ով մայր, երբ ես այրանամ, ամբողջ Եգիպտոսը տակն ու վրա կանեմ»: Այս ասելիս Կամբյուսեսը հազիվ տաս տարեկան էր, ուստի և կանայք զարմացել էին նրա խոսքերից: Եվ ահա Կամբյուսեսը այդ հիշելով, երբ այրացավ և գահ բարձրացավ, արշավեց Եգիպտոս:

4. Այս արշավանքի ընթացքում տեղի է ունեցել մեկ ուրիշ դեպք ևս: Ամասիսի վարձկանների մեջ կար հալիկառնասցի մի մարդ, Փանեսն անունով, որը խելացի էր և քաջ ռազմիկ: Այս Փանեսը, դժգոհելով Ամասիսից, նավով փախչում է Եգիպտոսից, կամենալով հանձայնության գալ Կամբյուսեսի հետ: Բայց քանի որ Փանեսը ազդեցիկ էր վարձկանների մեջ և քաջատեղյակ եգիպտական գործերին, անհապաղ ուղարկում է հետապնդողների, որպեսզի բռնեն նրան: Հետապնդելու համար Ամասիսը արիերայով ուղարկում է իր հավատարիմ ներքինուն, որը Փանեսին բռնում է Լյուկիայում, բայց բռնելուց հետո չի կարողանում Եգիպտոս բերել, քանի որ Փանեսը նրան գերազանցում է հնարամտությամբ: Նա հարբեցնում է իր պահակներին և փախչում Պարսկաստան: Այդ ժամանակ Կամբյուսեսը պատրաստվում էր արշավելու Եգիպտոս, բայց չգիտեր ինչպե՞ս անցնել ջրազուրկ երկիրը: Փանեսը ներկայանալով, Կամբյուսեսին հայտնում է Ամասիսի գործերի մասին և ցույց տալիս (անապատով) անցնելու ճանապարհը: Նա խորհուրդ է տալիս մարդ ուղարկել արաբների թագավորի մոտ, խնդրելով ապահովել անվտանգ անցումն իր երկրի միջով:

5. Եգիպտոս մտնելու միակ հայտնի ճանապարհն այդ էր: Քանզի Փյունիկիայից մինչև Կադյուտիս քաղաքի սահմանները տարածվում է պաղեստինյան կոչված սիրիացիների[3] երկիրը: Կադյուտիս քաղաքից, որը, ինչքան ես գիտեմ, այնքան էլ փոքր չէ Սարդեսից, մինչև Յենյուսոս քաղաքը ծովափնյա նավահանգիստները պատկանում են արաբներին. այնուհետև, Յենյուսոսից սիրիական հողերը դարձյալ շարունակվում են մինչև Սերբոնիս լիճը, որի մոտով դեպի ծով ձգվում է Կասիոն լեռը: Իսկ Սերբոնիս լճից, որտեղ, ըստ զրույցի, թաքնվել է Տյուփոնը[4], արդեն սկսվում է Եգիպտոսը: Արդ, Յենյուսոս քաղաքի, Կասիոն լեռան և Սերբոնիս լճի միջև ընկած ամբողջ երկիրը, որը երեք օրվա ճանապարհի երկարություն ունի, բոլորովին ջրազուրկ է:

6. Այժմ ես կպատմեմ այն մասին, ինչը Եգիպտոս նավարկողներից քչերն են միայն նկատում: Ամբողջ Հելլադայից, ինչպես նաև Փյունիկիայից, տարեկան երկու անգամ կավե սափորների մեջ գինի է ներմուծվում Եգիպտոս. այսուհանդերձ, կարելի է ասել, թե այնտեղ չի կարելի տեսնել և ոչ մի դատարկ գինու սափոր: Հարց է ծագում. ի՞նչ են լինում դրանք: Ես այդ էլ կասեմ: Յուրաքանչյուր մարզի կառավարիչ պարտավոր է իր քաղաքում հավաքել բոլոր դատարկ կավե սափորները և ուղարկել Մեմփիս: Մեմփիսում դրանք ջրով լցնելով, ուղարկում են Սիրիայի ջրազուրկ երկիրը: Այսպիսով, Եգիպտոս բերվող բոլոր կավե սափորները (գինուց) դատարկվելուց հետո նորից լցվում են (ջրով) և ուղարկվում Սիրիա:

7. Այժմ պարսիկները ևս, Եգիպտոսը նվաճելուց հետո, այդ նույն եղանակով ջուր են մատակարարել իրենց՝ Եգիպտոս մտնելու համար: Իսկ այդ ժամանակ, քանի որ դեռևս այնտեղ ջրի պաշար չէին պատրաստել, Կամբյուսեսը, լսելով հալիկառնասցի վարձկանի խորհուրդը, արաբների թագավորի մոտ լրաբեր է ուղարկում, խնդրելով ապահովել անվտանգ անցումը: Արաբների թագավորը համաձայնվում է և հավատարմության դաշինք կնքում նրանց հետ:

8. Արաբները մեծապես հարգում են հավատարմության դաշինքը. նրանք այն կնքում են հետևյալ կերպ: Երբ երկու մարդ կամենում են դաշինք կնքել, երրորդը կանգնում է նրանց միջև և սուր քարով թեթևակի կտրվածք անում դաշինք կնքողների ափի մեջ, բուր մատի մոտ: Այնուհետև նրանց յուրաքանչյուրի թիկնոցից մի փոքր կտոր պոկելով, այն թրջում է արյամբ ու դրանով ներկում դաշինք կնքողների միջև եղած յոթ քար: Այդ անելիս նա վկայակոչում է Դիոնիսոսին և Ուրանիային[5]: Այս արարողությունից հե-

տան դաշինք կնքողը օտարերկրացուն և կամ համամաղամացուն, երբ դաշինքը կնքում է համամաղամացու հետ, ներկայացնում է իր ընկերներին, որոնք նույնպես պարտավորվում են հավատարիմ մնալ դաշինքին: Աստվածներից արաբները պաշտում են միայն Դիոնիսոսին և Ուրանիային և պնդում, որ իրենց գլխի մազերը կտրում են նույն ձևով, ինչպես Դիոնիսոսի մազերն են: Նրանք իրենց գլուխը սափրում են բոլորաձև, ածիլելով նաև քունքերը: Նրանք Դիոնիսոսին անվանում են Օրոտալտ, իսկ Ուրանիային՝ Ալիլատ:

9. Այսպես, Արաբը Կամբյուսեսի ուղարկած հրեշտակների հետ դաշինք կնքելուց հետո, այսպիսի հնար է մտածում: Ուղտերի մորթուց պատրաստած տիկերը լցնում է ջրով և իր բոլոր ուղտերը դրանցով բեռնած, առաջանում այդ ջրազուրկ վայրը և այնտեղ սպասում Կամբյուսեսի զորքին: Այս պատմությունն ամենահավանականն է. բայց քանի որ կա նաև պակաս հավանական պատմություն, այդ ևս պետք է ասվի: Արաբիայում կա մի խոշոր գետ, անունը Կորյուս, որը թափվում է Կարմիր կոչված ծովը: Պատմում են, թե այս գետից էլ արաբների թագավորը ջուր է տարել ջրազուրկ այդ վայրը՝ եզան անմշակ և այլ մորթիներից կարած ջրատարի միջոցով: Այդ ջրազուրկ վայրում նա խոշոր ջրավազաններ է փորել, ջուրն ընդունելու և այն պահելու համար: Գետից մինչև ջրազուրկ այդ վայրը տասներկու օրվա ճանապարհ է: Պատմում են, թե նա երեք տարբեր ջրատարների միջոցով երեք տարբեր տեղեր ջուր է տարել:

10. Նեղոսի Պելուսյան կոչված գետաբերանի մոտ Պսամմենիտոսը՝ Ամասիսի որդին, բանակ դրեց, սպասելով Կամբյուսեսին: Քանզի Կամբյուսեսը եգիպտոս արշավելիս Ամասիսին կենդանի չպատանեց: Ամասիսը քառասունչորս տարի թագավորելով, վախճանվել էր: Այդ ընթացքում նա ոչ մի խոշոր դժբախտության չէր ենթարկվել: Մահանալուց հետո նրան զմռսել են և թաղել սրբավայրի դամբարանում, որը ինքն էր կառուցել: Իսկ Ամասիսի որդի Պսամմենիտոսի՝ եգիպտոսում թագավորելու օրոք եգիպտացիներին մեծագույն նշան հայտնվեց: Եգիպտական Թեբեում անձրև տեղաց. մի բան, որ, ինչպես պատմում են իրենք՝ եգիպտացիները, երբեք չէր եղել նախկինում և չի եղել մինչև իմ ժամանակ: Քանզի վերին Եգիպտոսում երբեք անձրևներ չեն տեղում, և այդ ժամանակ էլ անձրևը հազիվ կարկաթել է:

11. Արդ, պարսիկները, անցնելով ջրազուրկ երկիրը, բանակում են եգիպտացիներին մոտիկ՝ հակատամարտելու մտադրությամբ: Այնժամ եգիպտական վարձկանները, որոնք հելլեններ և կարիացիներ էին, Փանեսի դեմ զայրացած այն պատճառով, որ սա օտար զորք էր առաջնորդել եգիպտոս, մտածում են նրան պատժել հետևյալ կերպ: Փանեսը որդիներ ուներ, որոնց թողել էր Եգիպտոսում: Վարձկանները սրանց բերում են բանակատեղի և երկու զորքի միջև գինի խառնելու անոթ դնելով, նոր աշխի առաջ անոթի վրա հաջորդաբար մորթում են նրա որդիներին: Այնուհետև վարձկաններն անոթի մեջ գինի և ջուր լցնելուց հետո, բոլորը կուշտ խմում են և նետվում մարտի: Երբ բոլոր մարտից հետո երկուստեք շատերն էին ընկել, եգիպտացիները դիմում են փախուստի:

12. Շատ զարմանալի բան տեսա այնտեղ, որի մասին ինձ պատմել էին տեղաբնիկները: Այս հակատամարտում երկուստեք ընկածների ոսկորները կիտված էին յուրաքանչյուր կողմինն առանձին: Սկզբից ևեթ մի կողմում ընկած էին պարսիկների ոսկորները, մյուս կողմում՝ եգիպտացիների: Պարսից կառափները այնքան փխրուն էին, որ հնարավոր էր դրանք ծակել նույնիսկ փոքր խճաքարով. մինչդեռ եգիպտացիների կառափները այնքան ամուր էին, որ դրանք հազիվ կարելի էր լինում շարդել քարի հարվածներով: Դրա պատճառը, ինչպես պատմեցին ինձ և ես դրանում համոզվեցի, այն է, որ եգիպտացիները մանուկ հասակից սկսում են ածիլել իրենց գլուխը, որով և կառափը արևի տակ կարծրանում է: Նույն պատճառով էլ եգիպտացիները չեն հաղատանում: Եվ իրոք, ոչ մի երկրում հաղատները այնքան քիչ չեն, ինչքան եգիպտոսում: Այս է պատճառը, որ նրանք ունեն ամուր կառափ. իսկ պարսիկների կառափը փխրուն է հետևյալ պատճառով: Նրանք սկզբից ևեթ կրում են թաղիքե տիարա[6], որով և ներքացնում են իրենց գլուխը: Այդ այդպես է: Այդպիսի ուրիշ կառափներ ևս ես տեսա Պապրեմիսում, ուր ընկած էին Դարեհի որդի Ամեմենեսի հետ լիբիացի Ինարոսի դեմ կռվում ընկածների կմախքները:

13. Եգիպտացիներն այդ հակատամարտում պարտվելով, դիմում են փախուստի: Երբ նրանք հշվել էին Մեմփիս, Կամբյուսեսը միտիլենական նավով գետն ի վեր ուղարկում է պարսիկ պատգամաբեր, առաջարկելով եգիպտացիներին հպատակվել: Բայց եգիպտացիները, տեսնելով Մեմփիս մտնող նավը, խմբովին դուրս գալով պարիսպներից, հարձակվում են նավի վրա, կործանում այն և նավում եղած մարդկանց կոտորելով, բերում են պարիսպներից ներս: Այնուհետև եգիպտացիները, երկար պաշարված մնալուց հետո, հանձնվում են. իսկ հարևան լիբիացիները, անաբեկված եգիպտոսի հետ կատարված դեպքերից, առանց կռվի հանձնվում են (պարսիկներին) և իրենք իրենց համար հաստատում տուրք և ընծաներ ուղարկում թագավորին: Վախեցած այս ամենից, կյուրենացիներն ու բարկայցիներն անում են այն, ինչ լիբիացիները: Կամբյուսեսը լիբիացիների ուղարկած ընծաները ընդունում է սիրահոժար, իսկ կյուրենացիների ընծաներից դժգոհում. պատճառը, իմ կարծիքով, այն էր, որ դրանք քիչ էին. քանզի կյուրենացիներն ուղարկել էին հինգ հարյուր արծաթ մինա: Այդ գումարը Կամբյուսեսը խլում է և իր իսկ ձեռքով բաժանում զինվորներին:

14. Մեմփիս պարսպած քաղաքը գրավելու տասներորդ օրը Կամբյուսեսը Եգիպտոսի թագավոր Պսամմենիտոսին, որը թագավորել էր ընդամենը վեց ամիս, անարգելու համար նստեցնում է քաղաքի արվարձանում. նրա հետ նստեցնում է նաև ուրիշ եգիպտացիների և փորձում նրա հոգու ամրությունը հետևյալ կերպ: Նա Պսամմենիտոսի աղջկանը հագցնում է ստրկուհու զգեստ և, ջրաման տալով, ուղարկում ջրի. նրա հետ ուղարկում է նաև նույնպիսի զգեստ հագած ուրիշ կույսերի ևս, որոնց ընտրել էր անվանի եգիպտացիների (դստերից): Երբ կույսերը իրենց հայրերի առաջով անցնելիս, լաց ու կոծ են բարձրացնում, բոլորը նույնպես լաց ու կոծով են պատասխանում ի տես իրենց դստերի խայտառակվելուն: Իսկ Պսամմենիտոսը, տեսնելով և հասկանալով այս ամենը, գլուխը խոնարհում է: Ջրկիր աղջիկների անցնելուց հետո Կամբյուսեսը ուղարկում է նրա որդուն, վերջինիս հասակակից երկու հազար այլ եգիպտացիների հետ, որոնց բոլորի վզին պարան էր կապած և բերանին սանձ անցկացրած[7]: Սրանց տանում էին պատժելու, որպեսզի վրեժ լուծեին Մեմփիսում նավի հետ կործանված միտիլենացիների համար: Արքայի դատավորներն այդպիսի վճիռ էին կայացրել՝ յուրաքանչյուր մարդու դիմաց մահապատժի ենթարկել տասը երևելի եգիպտացիների: Պսամմենիտոսը տեսնելով նրանց անցնելիս և հասկանալով, որ իր որդուն տանում են մահապատժի ենթարկելու, մինչ նրա կողքին նստած բոլոր եգիպտացիները ողբում էին ու աղաղակում, ինքը նույնն է անում, ինչ արել էր դստեր դեպքում: Երբ սրանք ևս անցան, այնպես պատահեց, որ Ամասիսի որդի Պսամմենիտոսի և արվարձանում նրա հետ նստած մյուս եգիպտացիների առջևով անցնում է նրա սեղանակիցներից մեկը, որը տարիքն առած էր և իր ամբողջ ունեցվածքը կորցրած լինելով, այժմ աղքատի նման զինվորներից ողորմություն էր խնդրում: Արդ, Պսամմենիտոսը նրան տեսնելով, բարձրաձայն լաց է լինում, անունով կոչում իր ընկերոջը և սկսում գլխին հարվածել: Պսամմենիտոսի մոտ պահակներ էին կանգնած, որոնք նրա ամեն մի արարքի մասին հաղորդում էին Կամբյուսեսին: Կամբյուսեսը զարմանալով նրա արարքի վրա, բանբեր է ուղարկում նրա մոտ հարցնելու և ասում. «Քո տեր Կամբյուսեսը, ով Պսամմենիտոս, հարցնում է, թե ինչո՞ւ քո անարգված աղջկա և մահապատժի տարվող որդուն տեսնելիս ոչ ողբացիր, ոչ լաց եղար: Մինչդեռ տեսնելով այս աղքատին, որը, ինչպես Կամբյուսեսը իմացել է ուրիշներից, նույնիսկ քո ազգականը չէ, դու այդպիսի պատիվ մատուցեցիր (ողբալով)»: Նրա հարցին Պսամմենիտոսը պատասխանում է. «Ով Կյուրոսի որդի. իմ տան դժբախտությունը շատ մեծ է, որպեսզի այդ ամենի մասին ողբամ: Իսկ դժբախտությունն իմ ընկերոջ, որը ծերության շեմին հարստությունից և քարեկեցությունից զրկված, ընկել է աղքատության մեջ, ողբարժան է»:

Կամբյուսեսը բանբերի հաղորդած այս խոսքերը համարում է արդարացի: Եգիպտացիները պատմեցին, թե Կրեսոսը ևս, որը Կամբյուսեսի հետ եկել էր Եգիպտոս, արտասվել է. արտասվել են նաև ներկա եղած պարսիկները: Կարեկցում է նույնիսկ ինքը՝ Կամբյուսեսը, և հրամայում կործանումից փրկել Պսամմենիտոսի որդուն, իսկ թագավորին վերցնելով արվարձանից, բերել իր մոտ:

15. Կամբյուսեսի ուղարկած մարդիկ Պսամմենիտոսի որդուն չեն գտնում կենդանի, քանի որ առաջինը սրան էին կարատել. իսկ Պսամմենիտոսին վերցնելով, բերում են Կամբյուսեսի առաջ: Այնուհետև նա ապրել է Կամբյուսեսի մոտ առանց որևէ բռնության ենթարկվելու: Եվ եթե նա իր դավերով չզրկվեր վստահությունից, կարող էր ստանալ Եգիպտոսի կառավարումը: Քանզի պարսիկները սովոր են հարգել արքայորդիներին: Եթե որևէ թագավոր նույնիսկ իրենց դեմ ապստամբի, պարսիկները իշխանությունը վերադարձնում են նրա որդուն: Շատ օրինակներ կան, որոնք ապացուցում են, որ նրանք սովորաբար այդպես են վարվում: Այսպես, նրանք Իներոսի որդի Թանեյուրասին վերադարձրել են նրա հոր իշխանությունը: Նույնպես վարվեցին նաև Ամյուրտայոսի որդի Պավսիրիսի հետ. սա ևս ստացավ հոր իշխանությունը, թեև ոչ ոք պարսիկներին այնքան շարիք չէր պատճառել, ինչքան Իներոսը և Ամյուրտայոսը: Իսկ այժմ Պսամմենիտոսը շարիք նյութելով, իր վարձն ստացավ: Նա մերկացվեց եգիպտացիներին ապստամբության դրդելու հանցանքի մեջ: Կամբյուսեսը այդ մասին լսելով, հրամայում է նրան ցլի արյուն խմել, որից էլ Պսամմենիտոսը իսկույն մահանում է: Այսպիսին է եղել նրա վախճանը:

16. Կամբյուսեսը Մեմփիսից ժամանում է Սաիս քաղաք, կատարելու այն, ինչ կատարեց: Մտնելով Ամասիսի տունը, նա հրամայում է դամբարանից անհապաղ դուրս բերել Ամասիսի դիակը: Այդ կատարելուց հետո, հրամայում է մտրակել այն, մազերը պոկել, ծակծկել և ենթարկել ամեն տեսակ անարգանքի: Երբ այս ամենն անելուց հոգնեցին, իսկ դիակը զրկված լինելով, դիմանում էր և չէր քայքայվում, Կամբյուսեսը հրամայում է անսուրբ գործ կատարել՝ կիզել այն: Քանզի պարսիկները կրակը համարում են աստված և մեռելներին երբեք սովորություն չունեն կիզելու: Նշված պատճառով էլ պարսիկները ասում են, թե հանցանք է մեռած մարմինը հանձնել աստծուն: Իսկ եգիպտացիները կրակը համարել են կենդանի արարած, որը խժռում է այն ամենը, ինչ նրան հանձնում են և, հագեցելուց հետո, մեռնում իր խժռած զոհով: Ուստի և նրանք մեռելները գազանների հանձնելու սովորություն չունեն. այդ պատճառով էլ զմռսում են դրանք, որպեսզի որդերի կեր չդառնան: Այսպիսով, Կամբյուսեսի այս հրամանը հակասում էր երկու ժողովուրդների օրենքներին: Ինչևէ, եգիպտացի-

ները պատմում են, որ այդ անարգանքին ենթարկվել է ոչ թե Ամասիսը, այլ նրա հասակն ունեցող մեկ այլ եգիպտացի, որին անարգանքի ենթարկելիս, պարսիկները կարծել են, թե Ամասիսն է: Քանզի պատմում են, թե Ամասիսը պատգամախոսից իմանալով, թե ինչ է կատարվելու իր մահից հետո իր դիակի հետ, խուսափելու համար այդ ամենից, պատվիրում է՝ մահանալուց հետո այս մարդու դիակը, որը ենթարկվել էր մտրակահարության, թաղել իր իսկ դամբարանի դռան առաջ. իսկ իր որդուն հրամայում է իրեն թաղել դամբարանի ամենահեռավոր անկյունում: Իմ կարծիքով, այս ամբողջ պատմությունը Ամասիսի թաղման և այդ մարդու վերաբերյալ նրա կատարած կարգադրության մասին ճշմարիտ չէ, այլ այն հնարել են եգիպտացիները, դեպքը գեղազարդելու նպատակով:

17. Այնուհետև Կամբյուսեսը մտածում է երեք արշավանք կատարել: Մեկը՝ կարթագենացիների, մյուսը՝ ամմոնացիների, երրորդը՝ երկարակյաց եթովպացիների դեմ, որոնք բնակվում են Լիբիայում, Հարավային ծովի մոտ: Այսպես մտածելուց հետո, որոշում է կարթագենացիների դեմ ուղարկել իր ծովային զորքերը, ամմոնացիների դեմ՝ ցամաքային զորքերը, իսկ եթովպացիների մոտ առայժմ ուղարկել լրտեսների, իմանալու համար, թե արդյո՞ք արեւ ճշմարտություն կա արեւի սեղան կոչվածի մասին եղած զրույցների մեջ և. բացի այդ, նրանց թագավորին ընծաներ տանելու պատրվակով երկիրը հետախուզելու համար:

18. Նրանց պատմելով. արեւի սեղանը այսպիսի մի բան է: Քաղաքից դուրս կա մի մարգագետին. որտեղ առատորեն ամեն տեսակ չորքոտանու եփած միս կա: Փիլիսերները քաղաքի իշխանավորներն այստեղ զգուշությամբ մի կարգեր են դնում. իսկ ցերեկները ցանկացողը գալիս և վերցնում է այս մսից: Ժողովրդին հավատացնում են, թե այդ միսը ծնվում է նույն այդ հողից:

19. Ահա այսպիսին է. այսպես կոչված, արեւի սեղանը: Իսկ Կամբյուսեսը. որոշած լինելով լրտեսներ ուղարկել. հրամայում է իսկույն Ելեփանտինե քաղաքից բերել ձկնակեր՝ մարդկանցից եթովպերեն լեզուն իմացողների: Երբ դեռ այդպիսիներին էին փնտրում. նա հրամայում է իր ծովային զորքերին հավաքել Կարթագենի դեմ: Փյունիկեցիները. սակայն, ասում են. թե իրենք այդ (հրամանը) չեն կատարի. քանզի ծանր երդումներով էր կապված էին և ապարդյուն բան կլինի. եթե իրենք արշավեն իրենց որդիների վրա: Փյունիկեցիների հրաժարվելուց հետո, մնացյալներն արդեն մտադրություն չէին: Այսպիսով. կարթագենացիները խուսափեցին պարսկական ստրկությունից. քանի որ Կամբյուսեսը չէր ուզում բռնանալ փյունիկեցիների վրա. որոնք հաժարակամ ենթարկվել էին պարսիկներին և (Կամբյուսեսի) ծովային զորքն ամբողջապես կազմված էր փյունիկեցիներից: Կիպրոսցիները նույնպես հոժարակամ ենթարկվել էին պարսիկներին և մասնակցել Եգիպտոսի դեմ արշավանքին:

20. Երբ ձկնակերները Ելեփանտինեից ժամանում են Կամբյուսեսի մոտ, սա նրանց ուղարկում է Եթովպիա, հանձնարարում այն, ինչ պետք է հաղորդին և որպես ընծաներ (եթովպացիներին տալու համար) հանձնում է ծիրանի զգեստ և ոսկեհյուս մանյակ, ապարանջաններ և անուշահոտ յուղով լեցուն ալաբաստրե անոթ և մեկ սափոր արմավի գինի: Պատմում են, թե այս եթովպացիները, որոնց մոտ Կամբյուսեսը ուղարկել էր (դեսպաններ), ամենաբարձրահասակ և ամենագեղեցիկն են մարդկանց մեջ: Նրանց օրենքները բոլորովին տարբեր են մյուս մարդկանց օրենքներից. Նրանց մոտ հատկապես (տարբեր է) թագավոր ընտրելու կարգը. նրանք թագավոր ընտրում են քաղաքացիներից ամենաբարձրահասակին և ամենաուժեղին:

21. Արդ, ձկնակերները ժամանելով այդ մարդկանց մոտ, ընծաները հանձնում են նրանց թագավորին և ասում. «Պարսից արքա Կամբյուսեսը, փափագելով դառնալ քո բարեկամը և հյուրը, մեզ ուղարկել է քեզ հետ բանակցելու և պատվիրել է հանձնել քեզ այս ընծաները, որպիսի ինքը ևս հանույթով օգտագործում է»: Բայց եթովպացին, հասկանալով, որ նրանք եկել են լրտեսելու, նրանց այսպես է պատասխանում. «Պարսից թագավորը ձեր միջոցով ուղարկել է նվերներ ոչ թե իմ հյուրը լինելու մեծ փափագով, և ոչ էլ դուք ճշմարիտն եք ասում. քանզի դուք եկել եք լրտեսելու իմ տերությունը, իսկ Կամբյուսեսը արդար չէ: Եթե նա արդար լիներ, ապա չէր ցանկանա իր երկրից բացի ուրիշ երկիր տիրել և չէր ստրկացնի իրեն ոչ մի վնաս չպատճառած մարդկանց: Ուստի և նրան հանձնեք այս աղեղը և ասացեք հետևյալ խոսքերը. «Եթովպացվոց թագավորը խորհուրդ է տալիս պարսից թագավորին, որ եթե պարսիկները կարողանան այսպիսի խոշոր աղեղներ ձգել այնպես, ինչպես ձգում եմ ես, ապա այդ դեպքում բազմությամբ գերազանցող զորքով թող արշավեն երկարակյաց եթովպացիների վրա. իսկ մինչ այդ շնորհակալ թող լինեն աստվածներից, որ եթովպացվոց որդիներին չեն ներշնչել իրենց երկրից բացի ուրիշ երկրներ նվաճել»:

22. Այս ասելուց հետո նա քանդեց աղեղը և այն հանձնեց եկածներին: Այնուհետև, վերցնելով ծիրանի զգեստը, հարցրեց, թե այդ ի՞նչ է և ինչպե՞ս է պատրաստված: Երբ ձկնակերները նրան ճշմարտությունն ասացին ծիրանի (զգեստի) և ներկի մասին, թագավորը պատասխանեց, թե մարդիկ խաբուսիկ են, խաբուսիկ են և նրանց զգեստները: Այնուհետև նա հարցրեց ոսկեհյուս մանյակի և ապարանջանների մասին: Երբ ձկնակերները բացատրեցին, թե ինչպե՞ս են կրում այդ զարդերը, թագավորը ծիծաղեց և կարծե-

լով, թե դրանք կապանքներ են, ասաց, թե իրենց մոտ կապանքները առավել ամուր են: Երրորդ հարցն անուշանոտ յուղի մասին էր: Երբ նրան բացատրեցին, թե ինչպե՞ս են այն պատրաստում և խում (իրենց մարմնին), ապա (թագավորը) ասաց նույնը, ինչ և զգեստի մասին: Երբ արդեն հասավ գինուն, հարցրեց դրա պատրաստման մասին և մեծապես հանոյացավ այդ խմիչքից: Այնուհետև հարցրեց, թե պարսից թագավորը ինչո՞վ է սրնվում և պարսիկները առավելագույնը ինչքա՞ն են ապրում: Նրանք պատասխանեցին, թե թագավորը սնվում է հացով և բացատրեցին, թե ցորենը ինչպե՞ս է աճում և ասացին, թե մարդն ամենաշատը ապրում է ութսուն տարի: Այս ամենին եթովպացին պատասխանեց, թե բոլորովին չի զարմանում, որ նրանք զոմաղբով սնվելով, կարճ են ապրում: Նրանք նույնիսկ այդքան չէին ապրի, եթե չզորանային այս խմիչքով, ասում է նա, ձկնակերներին ցույց տալով գինին. սրանով միայն, ասում է նա, պարսիկները գերազանցում են իրենց:

23. Երբ ձկնակերները, իրենց հերթին, հարցնում են թագավորին եթովպացիների կյանքի տևողության և նրանց սննդի մասին, նա պատասխանում է, թե եթովպացիների մեծ մասը ապրում է մինչև հարյուր քսան տարի, իսկ ոմանք նույնիսկ գերազանցում են այդ տարիքը. նրանց կերածը եփած միս է, իսկ խմածը՝ կաթ: Երբ լրտեսները զարմացան այդպիսի երկարակեցության վրա, նրանց տարան մի աղբյուրի մոտ, որի ջրով լվացվելուց հետո նրանք դարձան առավել պսպղուն, կարծես այն ձերի աղբյուր լիներ: Այդ աղբյուրից բուրմունք էր գալիս, ինչպես մանուշակներից: Լրտեսները պատմել են, թե այդ աղբյուրի ջուրն այնքան թերև է եղել, որ դրա մակերեսին ոչինչ չէր լողում, ո՛չ փայտ, ո՛չ իսկ փայտից առավել թեթև որևէ բան, այլ ամեն ինչ սուզվում էր հատակը: Եթե իրոք այդ ջուրն այնպիսին է, ինչպես պատմում են, ապա գուցե նրանց երկարակեցությունն այդ ջուրն օգտագործելուց է: Աղբյուրից հեռանալուց հետո թագավորը նրանց տանում է կալանատուն, որտեղ բոլորը կալանված էին ոսկե շղթաներով: Այս եթովպացիների մոտ պղինձը ամենահազվագյուտն է և ամենթանկը: Կալանատունը դիտելուց հետո, նրանք դիտում են նաև, այսպես կոչված, արևի սեղանը:

24. Վերջում նրանք դիտել են եթովպացիների դամբարանները, որոնք, ինչպես պատմում են, պատրաստում են թափանցիկ քարից՝ հեռակալ կերպ: Նախ, դիակը շորացնում են եգիպտացիների եղանակով, կամ մեկ այլ ձևով, որից հետո այն ամբողջապես պատում են կրով և զարդարում գույներով, հնարավորին չափ այն նմանեցնելով մահացածին: Այնուհետև այն գետնում են թափանցիկ քարից պատրաստած սնամեջ սյան մեջ: Այդ քարն այնտեղ առատ է և փորվում է հեշտությամբ: Սյան մեջ դրված դիակը

պարզ երևում է, առանց որևէ տհաճ հոտ տարածելու, և առանց որևէ անպատշաճության. ընդ որում այն ամեն ինչով նման է լինում իրեն՝ մահացածին: Ամբողջ մի տարի առավել մեծավորները այդ սյունը պահում են իրենց տանը՝ յուրաքանչյուր բերքից նրան բաժին հատկացնելով և զոհաբերություն անելով, այնուհետև այն դուրս են բերում և կանգնեցնում քաղաքից դուրս:

25. Այս ամենը դիտելուց հետո լրտեսները ետ են վերադառնում: Երբ նրանք այս ամենի մասին հաղորդում են, Կամբյուսեսը զայրանալով, անմիջապես արշավում է եթովպացիների դեմ, առանց նախապես որևէ պատրաստություն անելու և առանց մտածելու, թե ինքը արշավում է երկրի հեռավոր ծայրերը: Նա այնքան մոլեգնած և անմիտ էր, որ լսելով ձկնակերների պատմածները, արշավում է, հրամայելով իր բանակում գտնվող հելլեններին՝ մնալ Եգիպտոսում: Նա իր հետ տանում է ամբողջ իր հեծակազորը: Արշավելիս, հասնելով Թեբե, նա իր զորից հինգ բյուր առանձնացնում է, հանձնարարելով ստրկացնել ամմոնացիներին և հրկիզել Զևսի պատգամատունը. իսկ ինքը, մնացած զորը վերցնելով, արշավում է եթովպացիների վրա: Նախքան զորը կանցներ հանապարհի հինգերորդ մասը, նրանց վերցրած ամբողջ պարենը սպառվում է, որից հետո ուտում են նաև բոլոր լծկան անասուններին: Եթե Կամբյուսեսը, այս տեսնելուց հետո, փոխեր իր որոշումը և զորը ետ տաներ, ապա, հակառակ իր կատարած առաջին սխալին, իմաստուն մարդ կհամարվեր. մինչդեռ նա, ոչնչի մասին չմտածելով, միշտ գնում էր առաջ: Զինվորները, քանի դեռ հնարավորություն ունեին երկրից որևէ բան ստանալու, խոտաճարակությամբ ապրում էին: Բայց երբ հասան ավազուտ անապատը, նրանցից ոմանք տհավոր արարք կատարեցին: Իրենց միջից յուրաքանչյուր տասներորդին վիճակով մորթում և ուտում էին: Կամբյուսեսը իմանում է այդ մասին և, վախենալով, որ զինվորները իրար կուտեն, դադարեցնում է արշավանքը և վերադառնում Թեբե, կորցնելով իր զորքի մեծ մասը: Իսկ Թեբեից գետով իջնելով Մեմփիս, հելլեններին նավերով ուղարկում է (իրենց տները):

26. Արշավանքը եթովպացիների դեմ այսպիսի վախճան ունեցավ: Իսկ ամմոնացիների դեմ արշավանքի ուղարկվածները դուրս էին եկել Թեբեից, ուղեցույցների առաջնորդությամբ: Նրանք հայտնապես հասել են Սասիս քաղաքը, որը, ինչպես պատմեցին, բնակեցնում են Այսքրոնիա ցեղին պատկանող սամոսցիները: Այն գտնվում է Թեբեից անապատի միջով անցնող յոթ օրվա հանապարհի հեռավորության վրա: Այդ վայրը հունարեն կոչվում է Երանելյաց կղզի: Արդ, պատմում են, թե մինչև այստեղ է հասել (պարսկական) զորքը. իսկ թե այնուհետև նրանց ի՞նչ է պատահել, ոչ ոք ոչինչ չի կարող պատմել, բացի ամմոնացիներից և այդ մասին նրանցից

լսողներից. քանզի նրանք չեն հասել ամմոնացիների մոտ, ոչ իսկ այնտեղից վերադարձել: Ամմոնացիներն այդ մասին պատմում են հետևյալը: Օասիսից պարսիկներն ավազուտ անապատի միջով արշավում են ամմոնացիների վրա: Օասիսի և Ամմոնի միջև, համարյա հանապարհի կեսին, երբ նախահաշվում էին, փչում է ուժեղ և անավոր հարավային քամի, որը ավազի լեռներ բարձրացնելով, նրանց թաղում է ավազի տակ. այսպիսով նրանք անհետանում են: Ամմոնացիները այսպես են պատմում այդ բանակի մասին:

27. Երբ Կամբյուսեսը նորից ժամանել էր Մեմփիս, եգիպտացիներին հայտնվում է Ապիսը, որին հելլեները կոչում են Եպափոս: Նրա հայտնվելու առիթով եգիպտացիները շտապում են հագնել իրենց լավագույն զգեստները և ուրախ զվարճանում: Կամբյուսեսը, տեսնելով եգիպտացիների այս արարքը, կասկածում է, որ նրանք այդպես ոռնում և զվարճանում են հատկապես իր կրած դժբախտության առթիվ. ուստի և իր մոտ է հրավիրում Մեմփիսի իշխանավորներին: Երբ սրանք ներկայանում են, Կամբյուսեսը հարցնում է, թե ինչո՞ւ, երբ ինքն առաջին անգամ եկել էր Մեմփիս, եգիպտացիներն այդպես չէին ուրախանում, ինչպես հիմա, երբ ինքը եկել է իր զորքի մեծագույն մասը կորցրած: Նրանք պատասխանում են, թե իրենց հայտնվել է աստվածը, որը սովորաբար հայտնվում է երկար ժամանակ անցնելուց հետո, և նրա հայտնվելու առիթով համայն եգիպտացիներն ուրախ առնախմբություն են կատարում: Այս լսելով, Կամբյուսեսը ասում է, թե նրանք սուտ են և, իբրև սուտերի, մահապատժի ենթարկում:

28. Սրանց մահապատժի ենթարկելուց հետո Կամբյուսեսը հրամայում է իր առաջ բերել քրմերին: Երբ քրմերը ևս տալիս են նույն պատասխանը, նա ասում է, որ եթե որևէ ընտանի կենդանի որպես աստված երևացել է եգիպտացիներին, ապա ինքը կիմանա այդ: Այս ասելով, նա քրմերին հրամայում է այնտեղ բերել Ապիսին: Քրմերը գնում և բերում են Ապիսին: Այս Ապիսը, կամ Եպափոսը, մի հորթ է՝ ծնած այնպիսի կովից, որն այնուհետև երբեք չի կարող հորից հղիանալ: Եգիպտացիները պատմում են, թե այդ կովի վրա երկնքից լույս է իջնում և, իբր, դրանից ծնվում է Ապիսը: Ապիս կոչված այս հորթն ունի հետևյալ նշանները. նա սև է, նրա հակատին կա սպիտակ եռանկյունի. մեջքին՝ արծվի պատկեր, պոչին՝ կրկնակի մազեր, իսկ լեզվի տակ՝ բզեզի պատկեր:

29. Երբ քրմերը բերեցին Ապիսին, Կամբյուսեսը, մոլեգնած վիճակում, մերկացնելով իր դաշույնը, փորձում է հարվածել Ապիսի փորին, բայց խոցում է միայն ազդրը. ուստի և ծիծաղելով ասում է քրմերին. «Ով անպետք գլուխներ. մի՞թե այսպիսի աստվածներ կլինեն, արյունից և մսից կազմված, որոնք երկաթով խոցելի են: Եվ՝ աստվածը արժանի է եգիպտացի-

ներին. բայց դուք չեք ուրախանալու ինձ ծաղրի ենթարկած լինելու համար»: Այսպես ասելով, այդ գործով զբաղվողներին հրամայում է մտրակել այդ քրմերին, իսկ մյուս եգիպտացիներին, որոնք առնախմբություն էին կատարում՝ մահվան ենթարկել: Եգիպտացիների առնախմբությունն այդպես լուծվեց. քրմերը պատժվեցին, իսկ Ապիսը, ազդրից խոցված, սատկեց տաճարում: Սատկածին քրմերը, Կամբյուսեսից թաքուն, թաղեցին:

30. Եգիպտացիները պատմում են, թե Կամբյուսեսն այդ անօրինության պատճառով իսկույն խելագարվեց, թեև նախապես ևս այնքան էլ խելամիտ չէր: Առաջին չարիքը նա կատարում է իր եղբայր Սմերդիսի հանդեպ, որը ծնվել էր նույն հորից և (նույն) մորից, ինչ և ինքը: Նա Սմերդիսին Եգիպտոսից ետ Պարսկաստան է ուղարկում, նախանձելով այն բանի համար, որ սա միակն էր, որը կարողացել էր Եթիոպացի թագավորի մոտից ձկնաքերների բերած աղեղը ձգել համարյա երկու մատնաչափ, մինչդեռ մյուս պարսիկներից և ոչ մեկը չկարողացավ այն ձգել: Արդ, Սմերդիսի Պարսկաստան մեկնելուց հետո Կամբյուսեսը երազ է տեսնում, որ իբր Պարսկաստանից եկել էր բանբեր և հաղորդել իրեն, թե Սմերդիսը նստել է թագավորական գահին և նրա գլուխը դիպչում է երկնքին: Այնժամ Կամբյուսեսը, անաբեկված այն մտքից, որ եղբայրը կարող է սպանել իրեն և դառնալ թագավոր, Պարսկաստան է ուղարկում Պրեքասպեսին, որը պարսիկներից ամենամտերիմն էր իրեն, սպանելու Սմերդիսին: Սա, գալով Սարդես, սպանում է Սմերդիսին, ոմանք ասում են՝ որսի ժամանակ, ուրիշներ՝ թե տանում է կարմիր ծով և այնտեղ ջրախեղդ անում նրան[10]:

31. Պատմում են, թե այս եղել է Կամբյուսեսի առաջին չարագործությունը: Երկրորդն այն է, որ նա սպանել է իր քրոջը, որը նրան ուղեկցել էր Եգիպտոս և որի հետ էլ նա կենակցում էր, թեև իր քույրն էր հորից և մորից: Նրա հետ (Կամբյուսեսը) ամուսնացել է հետևյալ կերպ: Հնում պարսիկները երբեք սովորություն չեն ունեցել ամուսնանալ իրենց քրոջ հետ: Եվ անա Կամբյուսեսը սիրահարվում է իր քույրերից մեկին և ցանկանում ամուսնանալ նրա հետ, թեկուզ և հակառակ սովորության: Այդ նպատակով նա հրավիրում է թագավորական դատավորներին և հարցնում, թե կա՞ արդյոք որևէ օրենք, որը թույլատրեր կամեցողին ամուսնանալ քրոջ հետ: Թագավորական դատավորները ընտրվում են պարսիկ այրերի միջից ցմահ կամ, քանի դեռ չեն մեղադրվել ապօրինի արարքի համար: Սրանք են դատում պարսից միջև ծագած վեճերը և մեկնաբանում հայրենի օրենքները և վճիռ տալը հանձնարարվում է սրանց: Արդ, Կամբյուսեսի հարցին նրանք պատասխանում են և՛ ըստ օրենքի, և՛ ապահովելով իրենց անվտանգությունը, ասելով, թե եղբոր և քրոջ ամուսնությունը թույլատրող որևէ օրենք չկա, բայց կա մեկ այլ օրենք, որը թույլատրում է պարսից արքային անել

այն, ինչ կամենում է: Այսպիսով, նրանք չխախտեցին օրենքը՝ Կամբյուսեսից վախենալով, բայց որպեսզի չկործանվեն՝ օրենքը պաշտպանած լինելու համար, նրանք գտան մեկ այլ օրենք, որը արդարացնում էր քրոջ հետ ամուսնանալ ցանկացողին: Այսպիսով, Կամբյուսեսն ամուսնանում է նրա հետ, ում սիրահարված էր. այսուհանդերձ, շատ ժամանակ չանցած, նա ամուսնանում է նաև իր մյուս քրոջ հետ: Նրանցից կրտսերին, ահա, որը նրան ուղեկցել էր Եգիպտոս, նա սպանում է:

32. Նրա մահվան մասին ևս, ինչպես և Սմերդիսի մահվան մասին, կա երկու զրույց: Հելլեններն ասում են, թե Կամբյուսեսը առյուծի ձագը կռվեցրել է շան լակոտի հետ. այդ դիտելիս է եղել նաև այս կինը: Երբ շնիկն արդեն հաղթվում էր, մեկ այլ շնիկ, նրա եղբայրը, պոկելով իր շղթան, օգնության է գալիս ու երկուսով հաղթում են առյուծի ձագին: Կամբյուսեսը զվարճանում էր այդ դիտելով, իսկ կինը նստած՝ արտասվում էր: Կամբյուսեսը նկատելով այդ, հարցնում է, թե ինչո՞ւ է լալիս: Նա պատասխանում է՝ թե արտասվեց, տեսնելով, որ ինչպես շնիկը օգնության հասավ իր եղբորը: Ընդ որում նա հիշում էր Սմերդիսին և գիտեր, որ ոչ ոք նրա վրեժը չի լուծելու: Հելլեններն, ահա, ասում են, թե Կամբյուսեսը նրան սպանել է այս պատճառով: Իսկ եգիպտացիները պատմում են, թե իբր նրանք երկուսով սեղան են նստած լինում, երբ բազուկին վերցնում է հազարի փունջը և պոկոտելով այն, հարցնում ամուսնուն, թե հազարը ինչպե՞ս ավելի գեղեցիկ է, պոկոտա՞ծ, թե՝ փարթամ վիճակում: Երբ Կամբյուսեսը պատասխանում է թե՝ փարթամ վիճակում, այնժամ կինն ասում է. «Դու, ահա, Կյուրոսի տան հետ վարվեցիր այնպես, ինչպես ես այս հազարի փնջի հետ, պոկոտելով այն»: Կամբյուսեսը զայրացած նեռվում է նրա վրա, իսկ բազուկին հոլի լինելով, վիժում է և մահանում:

33. Այսպիսի խելահեղություններ կատարեց Կամբյուսեսն իր հարազատների հանդեպ՝ գուցե Ապիսի պատճառով, գուցե և մեկ այլ պատճառով. քանի որ, սովորաբար, մարդկանց հարվածում են բազում չարիքներ: Ի դեպ, ասում են, թե Կամբյուսեսը ի ծնե ախտահարված է եղել ծանր հիվանդությամբ, որը ոմանք անվանում են «սրբազան»[11]: Ուստի և անհավանական չէ, որ նա մարմնական ծանր ախտ ունենալով, հիվանդ էր նաև հոգեպես:

34. Իսկ մյուս պարսիկների հանդեպ ևս Կամբյուսեսը ահա թե ինչ խելահեղություններ կատարեց: Պատմում են, թե նա Պրեքսասպեսին, որին մեծապես պատվում էր և որը նրան հաղորդում էր կատարվածի մասին և որի որդին Կամբյուսեսի մատակարարն էր, իսկ սա նույնպես փոքր պատիվ չէ, ասում է հետևյալը. «Պրեքսասպես. պարսիկները ինձ ինչպիսի՞ մարդ են համարում և ի՞նչ են խոսում իմ մասին»: Պրեքսասպեսը պատասխանում է. «Ով տեր. նրանք ամեն ինչում քեզ մեծապես գովում են, բայց ասում են, թե դու շատ մեծ սեր ունես գինու հանդեպ»: Նա ասաց, որ պարսիկներն այդպես են խոսում. իսկ Կամբյուսեսը զայրանալով, այսպես է պատասխանում. «Եթե հիմա պարսիկները ասում է, թե ես գինու հանդեպ հակում ունեմ և խելամիտ չեմ, ապա նշանակում է, որ նրանց նախորդ խոսքերը ճշմարիտ չեն եղել»: Հիրավի, նախկինում մի անգամ Կամբյուսեսը հարցրել էր իր խորհրդակիցներին, որոնց թվում եղել էր նաև Կրեսոսը, թե ինքը ինչպիսի՞ն է, համեմատած իր հոր՝ Կյուրոսի հետ: Սրանք պատասխանել էին, թե ինքը գերազանցում է հորը. քանզի ինքը տերն է Կյուրոսի բոլոր տիրույթներին և, դրանցից բացի, տիրել է նաև Եգիպտոսին ու ծովին: Պարսիկներն այսպես ասում են, իսկ այնտեղ ներկա գտնվող Կրեսոսը, շնամածայնվելով նրանց հետ, ասում է Կամբյուսեսին. «Ով Կյուրոսի որդի. ես կարծում եմ, որ դու քո հորը հավասար չես լինի, քանի որ դու չունես այնպիսի որդի, ինչպիսին նա թողել է»: Կամբյուսեսը հաճոյանում է այս խոսքերից և գովում Կրեսոսի վճիռը:

35. Արդ, այս ամենը հիշելով, Կամբյուսեսը զայրույթով ասում է Պրեքսասպեսին. «Այժմ դու դատիր՝ արդյո՞ք պարսիկները հիշա են ասում, թե՞ իրենք խելագարվել են այդպես խոսելով: Եթե քո որդուն, որը հիմա կանգնած է նախադռանը, ես նետահարելով խոցեմ սրտի մեջտեղից, ապա պարզ կլինի, որ պարսիկների ասածները սուտ են, իսկ եթե վրիպեմ, ապա պարսիկները իրավացի են (ասելով), որ ես խելագուրկ եմ»: Այս ասելով նա ձգում է աղեղը և խոցում տղային: Երբ տղան ընկնում է, Կամբյուսեսը հրամայում է հերձել նրան և նայել վերքին: Նետը գտան սրտում: Այնժամ Կամբյուսեսը ծիծաղում է և ուրախ ասում տղայի հորը. «Պրեքսասպես. այժմ քեզ համար պարզ եղավ, որ ես խելացնոր չեմ, այլ պարսիկներն են խելագուրկ: Արդ, ասա ինձ. տեսե՞լ ես ինձնից ավելի դիպուկ աղեղնավորի»: Պրեքսասպեսը տեսնելով, որ իր առաջ խելացնոր մարդ է կանգնած, բայց և վախենալով իր անձի մասին, ասում է. «Տեր. կարծում եմ, որ նույնիսկ աստված իմքն այսքան դիպուկ չի կարող նետահարել»: Այդ ժամանակ նա կատարում է այս արարքները: Իսկ մեկ ուրիշ անգամ նա, առանց որևէ պատճառի, բռնում է տասներկու մեծատոհմիկ պարսիկների և կենդանի թաղում գլուխն ի վար:

36. Այս արարքների համար էլ Լյուդիացի Կրեսոսը հարմար է գտնում դիմել նրան խրատական այսպիսի խոսքերով. «Ով արքա. մի թույլատրիր ամեն ինչ քո երիտասարդությանը և զայրույթին, այլ զսպիր դրանք և իշխիր ինքդ քեզ. քանզի խելամտությունն առաքինություն է, իսկ շրջահայացությունը՝ իմաստություն: Մինչդեռ դու սպանում ես քո համախոհացիներին առանց որևէ լուրջ պատճառի, ընդ որում սպանում ես նույնիսկ երե-

խաների: Եթե դու այդպես շարունակես, ապա զգույշ եղիր, որ պարսիկները չապստամբեն քո դեմ: Կյուրոսը, քո հայրը, խստագույնս ինձ հանձնարարել է քեզ խրատել և տալ խորհուրդներ, որոնք ես հարմար կհամարեմ»: Կրեսոսը բարյացակամ այսպիսի խորհուրդ է տալիս. մինչդեռ Կամբյուսեսը նրան պատասխանում է այսպես. «Դու հանդգնում ես ի՞նձ ես խորհուրդներ տալ. դու, որ այնքան «պիտանի» կառավարեցիր քո երկիրը և այնքան «խելացի» խորհուրդ տվեցիր իմ հորը՝ անցնել Արաբս գետը և արշավել մասագետների վրա, այն դեպքում, երբ նրանք էին ուզում անցնել մեր երկիր: Դու կործանել ես և՛ քեզ, վատ կառավարելով քո երկիրը, և՛ Կյուրոսին, որը հավատացել է քեզ: Բայց մի՛ հրճվիր. քանզի վաղուց ես ուզում էի փնտրում քեզնով զբաղվելու»: Այս ասելով, նա վերցնում է աղեղը՝ նրան նետահարելու համար, բայց Կրեսոսը վազելով դուրս է փախչում: Չկարողանալով նետահարել Կրեսոսին, Կամբյուսեսը հրամայում է ծառաներին՝ բռնել նրան ու սպանել: Ծառաները, սակայն, իմանալով նրա վարքը, թաքցնում են Կրեսոսին այն հույսով, որ եթե Կամբյուսեսը զղջա և փնտրի Կրեսոսին, ապա իրենք կբերեն նրան և պարգևներ կստանան (արքայից), Կրեսոսին կենդանի պահած լինելու համար, իսկ եթե չզղջա և չփնտրի նրան, ապա կսպանեն Կրեսոսին: Հիրավի, հիշ անց, Կամբյուսեսը կամենում է տեսնել Կրեսոսին: Այնժամ ծառաները, լսելով այդ, հաղորդում են նրան, թե Կրեսոսը կենդանի է: Կամբյուսեսը ասում է, թե ինքը ուրախ է, որ Կրեսոսը կենդանի է, բայց նրանց, ովքեր նրան փրկել են, ինքը անպատիժ չի թողնի, այլ կսպանի: Եվ այդպես էլ անում է:

37. Կամբյուսեսը բազում այսպիսի խելացնոր արարքներ է գործում պարսիկների և դաշնակիցների հանդեպ: Նա, մնալով Մեմփիսում, բաց է անում հին դամբարանները և զննում դիակները: Նա նույն կերպ է վարվում նաև, երբ գալիս է Հեփեստոսի սրբավայրը, որտեղ խիստ ծանակում է նրա արձանը: Հեփեստոսի այս արձանը նման է փյունիկեցիների պատայոսներին[13], որ փյունիկեցիներն ամրացնում են իրենց տրիերաների նավաքիթին: Նրանց համար, ովքեր երբեք չեն տեսել այդ, ես կնշեմ, որ այն նման է թզուկ մարդու: Կամբյուսեսը մտել է նաև կաբեյրների սրբավայրը, որտեղ չի թույլատրվում մտնել ոչ ոքի, բացի քրմից: Այդ աստվածների արձանները ևս նա այրում է, դաժանորեն ծանակելուց հետո: Այդ արձանները նույնպես նման են Հեփեստոսի (արձաններին): Պատմում են, թե սրանք Հեփեստոսի որդիներն են:

38. Արդ, ինձ համար ակնհայտ է, որ Կամբյուսեսը, բնա ամենայնի, խելացնոր էր: Այլապես, նա չէր փորձի ծանակել սրբություններն և սովորույթները: Քանզի եթե աշխարհի բոլոր ժողովուրդներին հնարավորություն տվեր բոլոր սովորույթներից լավագույն սովորույթը ընտրելու, ապա յուրաքանչյուրը, լավ իմանալով դրանք, իր համար կընտրեր լավագույնը: Ուստի և ամեն մի ժողովուրդ կարծում է, թե իր օրենքները առավել գերազանց են: Հետևաբար, վայել չէ որևէ մեկին, եթե նա խելացնոր չէ, այդ ամենը ծանակել: Այն բանում, որ բոլոր մարդիկ իրենց օրենքները լավագույնն են համարում, հնարավոր է համոզվել բազմաթիվ փաստերի հիման վրա, որոնց թվում նաև հետևյալ փաստը: Դարեհն իր թագավորության ժամանակ իր մոտ գտնվող հելլեններին կանչելով, հարցնում է, թե ի սեր ինչքա՞ն դրամի նրանք կհամաձայնվեն ուտել իրենց մահացած հայրերին: Նրանք պատասխանում են, թե օչ մի գնով այդ չեն անի: Այնուհետև Դարեհը, հրավիրելով կալլատիներ[14] կոչված հնդիկներին, որոնք ուտում են իրենց ծնողների (դիակները), հելլենների ներկայությամբ թարգմանի միջոցով հարցնում է, թե ինչքա՞ն դրամի փոխարեն նրանք հանձն կառնեն իրենց մահացած հայրերին այրել խարույկի վրա: Այնժամ նրանք բարձրաձայն աղաղակելով խնդրում են նրան սրբապիղծ չլինել: Ահա այսպիսի կարգեր են հաստատված: Կարծում եմ, որ իրավացի է Պինդարոսը, երբ ասում է, թե սովորույթը թագավորն է ամեն ինչի:

39. Մինչ Կամբյուսեսը զբաղված էր եգիպտական արշավանքով, լակեդեմոնացիներն արշավում են Սամոս, Էակոսի որդի Պոլյուկրատեսի դեմ: Սա, ապստամբելով, տիրացել էր Սամոսին: Սկզբում քաղաքը բաժանելով երեք մասի, նա իշխում էր իր եղբայրների՝ Պանտագնոտոսի և Սյուլոսոնի հետ մեկտեղ: Հետագայում նա նրանցից մեկին սպանելով, իսկ կրտսերին՝ Սյուլոսոնին, արտաքսելով, դառնում է ամբողջ Սամոսի տիրակալը: Նա դաշինք է կնքում եգիպտոսի թագավոր Ամասիսի հետ, ուղարկելով նրան և փոխարենը նրանից ստանալով ընծաներ: Հետագայում Պոլյուկրատեսի հզորությունն արագ աճում է, նրա համբավը տարածվում է Հոնիայում և հայտնի Հելլադայում. քանզի նրա բոլոր արշավանքները վերջանում էին բարեհաջող: Նա ուներ հիսուն թիականի հարյուր նավ և հազար աղեղնավոր. ուստի և նա հաղթում էր բոլորին անխտիր: Նա ասում էր, թե ավելի հեշտ է շահել բարեկամի շնորհակալությունը, վերադարձնելով նրան նրանից խլվածը, քան թե նրանից ոչինչ չխլելով: Նա գրավում է կղզիներից, ինչպես նաև մայր ցամաքի քաղաքներից շատերը: Նավատորմում նա հաղթանակ է տանում նաև լեսբոսցիների դեմ, որոնք իրենց ամբողջ նավատորմով օգնում էին միլետցիներին, և ստիպում նրանց շղթայակապ խրամատ փորել Սամոսի պարիսպների շուրջ:

40. Պոլյուկրատեսի այս խոշոր հաջողությունները չվրիպեցին Ամասիսից, այլ անհանգստացրին նրան: Եվ երբ Պոլյուկրատեսի հաջողությունները առավել մեծ դարձան, Ամասիսն այսպիսի նամակ գրեց և այն ուղարկեց Սամոս: «Ամասիսը Պոլյուկրատեսին ասում է այսպես. «Ինձ հաճելի է

լսել, որ իմ բարեկամը և նյուրընկալը բարեհաջող է. բայց քո մեծ բարեբախտություններն ինձ չեն ուրախացնում, քանզի ես գիտեմ, թե ասվածները նախանձում են (մարդկային երջանկությանը): Ուստի և ես կկամենայի, որ իմ և իմ բարեկամների գործերը մասամբ լինեն բարեհաջող, մասամբ անհաջող, որպեսզի իմ ամբողջ կյանքում ունենայի փոփոխական հաջողություններ, քան լինեի միշտ բարեհաջող: Քանզի ցարդ դեռ չեմ լսել, որ որևէ մեկը, մշտապես հաջողություն ունենալուց հետո, վերջում վատ վախճան չունենա: Ուստի այժմ դու լսիր իմ խորհուրդը և հանուն քո բարեբախտության հետևյալը կատարիր: Մտածիր, թե ի՞նչը քեզ համար առավել բանկ է, որը կորցնելով, դու առավելագույնս կտխրես, և այն դեն շպրտիր այնպես, որ այսուհետև այն ոչ մի մարդու ձեռք չանցնի: Եթե այդ դեպքում ևս քո հաջողությունները չփոխարինվեն անհաջողություններով, ապա այնուհետև ևս շարունակիր վարվել իմ այս խորհրդին հակառակ»:

41. Այս կարդալով, Պոլյուկրատեսը հասկանում է, որ Ամասիսի խորհուրդը բարի է. ուստի և մտածում է, թե իր թանկարժեք գանձերից ո՞ր մեկի կորուստն իրեն առավել վիշտ կպատճառի: Մտածելուց հետո հանգում է հետևյալ եզրակացության: Նա կրում էր զմրուխտ քարե ոսկեզարդ մի կնքմատանի, որը սամոսցի Տելեկրեսի որդի Թեոդորոսի գործն էր: Արդ, որոշելով հետել այդ կնքմատանին, նա այսպես է վարվում: Հիսուն թիականի մի նավ համալրում է մարդկանցով, ինքը ևս մտնում է այդ նավը և հրամայում դուրս գալ բաց ծով: Երբ նավն արդեն հեռացել էր կղզուց, նա հանում է կնքմատանին և իր բոլոր ուղեկիցների աչքի առաջ այն նետում ծովը: Այդ անելուց հետո վերադառնում է և կորստի համար վշտացած մրտնում տուն:

42. Բայց դրա հինգերորդ թե վեցերորդ օրն ահա թե ինչ է պատահում: Մի ձկնորս խոշոր և գեղեցիկ մի ձուկ բռնած լինելով, որոշում է, որ այն արժանի է նվիրել Պոլյուկրատեսին: (Ձուկը) բերելով Պոլյուկրատեսի դռանը, ասում է, թե ուզում է նրա առաջ երևալ: Երբ նրան թույլատրում են, նա ձուկը տալով (թագավորին), ասում է: «Ով թագավոր. թեև ես իմ ձեռքի աշխատանքով եմ ապրում, բայց այս ձուկը բռնելով, հարմար չդատեցի այն շուկա տանել, այլ որոշեցի, որ այն արժանի է քեզ և քո իշխանությանը: Եվ ահա, այն բերել ու նվիրում եմ քեզ»: Թագավորը, հանձնյանալով այդ խոսքերից, այսպես է պատասխանում. «Դու շատ լավ արեցիր. քեզանից կրկնակի շնորհակալ եմ և՛ քո խոսքերի, և՛ քո նվերի համար. ուստի քեզ հրավիրում եմ ընթրիքի»: Ձկնորսը, մեծապես շոյված, վերադառնում է տուն. իսկ սպասավորները, ձկան փորը մաքրելիս, նրա որովայնում գտնում են Պոլյուկրատեսի կնքմատանին: Տեսնելով կնքմատանին, նրանք իսկույն վերցնում են այն և, ուրախացած, բերում Պոլյուկ-

ռատեսին: Մատանին տալով նրան, պատմում են, թե ինչպե՞ս այն գտնվեց: Պոլյուկրատեսը հասկանալով, որ սա աստվածային նշան է, գրում է գիր, որում պատմում է այն ամենը, ինչ իրեն կատարեց և ինչ կատարվեց իր հետ: Գրելուց հետո այն ուղարկեց Եգիպտոս:

43. Ամասիսը, կարդալով Պոլյուկրատեսի ուղարկած գիրը, հասկացավ, որ ոչ մի մարդ չի կարող գերծ պահել մեկ ուրիշին նրան սահմանված բախտից, և որ Պոլյուկրատեսը բարեբախտ վախճան չի ունենալու, քանի որ ամեն ինչում հաջողակ է և վերագտնում է նույնիսկ այն, ինչը իրեն շպրտել էր: Ուստի և Ամասիսը բանբեր ուղարկելով Սամոս, հայտնում է, թե լուծում է իր բարեկամական դաշինքը (Պոլյուկրատեսի հետ): Նա այսպես վարվեց այն պատճառով, որ եթե Պոլյուկրատեսին մեծ դժբախտություն պատահի, ինքը նոգեպես չտառապի որպես բարեկամի համար:

44. Ահա, ըստ ամենայնի, հաջողակ այս Պոլյուկրատեսի դեմ արշավում են լակեդեմոնացիները, որոնց օգնության էին կանչել սամոսցիները, որոնք հետագայում Կրետեում հիմնել են Կյուդոնիան: Պոլյուկրատեսը, սամոսցիներից թաքուն, բանբեր է ուղարկում Կյուրոսի որդի Կամբյուսեսի մոտ, որն այդ ժամանակ Եգիպտոս արշավելու նպատակով զորք էր գումարում, և խնդրում է նրան բանբեր ուղարկել իր մոտ՝ Սամոս, և իրենից ևս զորք պահանջել: Կամբյուսեսը, լսելով այդ, հոժարությամբ բանբեր ուղարկեց Սամոս՝ Պոլյուկրատեսի մոտ, խնդրելով նրանից իր համար նավատորմ ուղարկել Եգիպտոս: Այնժամ Պոլյուկրատեսը, հավաքելով այն քաղաքացիներին, որոնց ինքն առավել կասկածում էր ապստամբական տրամադրություններ ունենալու մեջ, քառասուն տրիերաներով[15] ուղարկում է Կամբյուսեսի մոտ, պատվիրելով այլևս սրանց ետ չուղարկել:

45. Ոմանք ասում են, թե Պոլյուկրատեսի կողմից ուղարկված այս սամոսցիները չեն ժամանել Եգիպտոս, այլ նավելով մինչև Կարպաթոս[16], խորհրդակցում և որոշում են այլևս ավելի առաջ չնավել: Ուրիշներն ասում են, թե սրանք ժամանել են Եգիպտոս ու, թեև բանտարկվել են, բայց կարողացել են այնտեղից փախչել: Ինչևէ, նրանք վերադառնում են Սամոս և Պոլյուկրատեսը նրանց դեմ դուրս է գալիս նավերով և մարտի բռնվում: Վերադարձողները, հաղթանակ տանելով, ափ են դուրս գալիս կղզու վրա: Այստեղ, սակայն, պարտություն են կրում, որից հետո նավելով մեկնում են Լակեդեմոն: Կան նաև ուրիշներ, որոնք պատմում են, թե Եգիպտոսից վերադարձածները հաղթել են Պոլյուկրատեսին: Իմ կարծիքով, սակայն, նրանք ճիշտ չեն: Քանզի եթե նրանք ի զորու լինեին հաղթելու Պոլյուկրատեսին, ապա լակեդեմոնացիների օգնությանը դիմելու կարիքը չէին ունենա: Բացի այդ, տրամաբանական չէ ենթադրել, որ Պոլյուկրատեսը, որը բազմաթիվ օտարազգի վարձկաններ և տեղաբնիկ աղեղնավորներ ուներ,

պարտվել է փոքրաթիվ սամոսցի վարձանդիների: Պոլյուկրատեսը իրեն հպատակ քաղաքացիների երեխաներին և կանանց հավաքելով նավակայաններում, նրանց փակում է այնտեղ, որպեսզի նրի մատնի նավակայաններով հանդերձ, եթե նրանց ամուսիններին անցնեին վարձանդիների կողմը:

46. Պոլյուկրատեսի կողմից արտաքսված սամոսցիները, հասնելով Սպարտա, ներկայանում են (քաղաքի) արքոնտներին և երկար հառում, համառորեն օգնություն խնդրելով: Բայց սպարտացիներն իրենց առաջին նիստում պատասխանում են, թե արդեն մոռացել են սկզբում ասվածները, ուստի և ի վիճակի չեն վերջին ասվածները հասկանալ: Այնուհետև երկրորդ անգամ ներկայանալով, սամոսցիները գալիս են տոպրակով և ուրիշ բան չեն ասում, այլ միայն այն, թե «տոպրակը ալյուր է ուզում»: Սպարտացիները դրան պատասխանում են, թե՝ «տոպրակը անպետքացել է». այսուհանդերձ որոշում են օգնել նրանց:

47. Այնուհետև լակեդեմոնացիները, զորք պատրաստելով, արշավում են Սամոս, ինչպես սամոսցիներն են ասում, ի երախտագիտություն այն բանի, որ իրենք նախկինում նավերով օգնել են նրանց մեսսենացիների դեմ: Մինչդեռ լակեդեմոնացիները պնդում են, թե իրենք արշավանքի են ելել ոչ թե սամոսցիների խնդրանքով, այլ որպեսզի վրեժ լուծեն գինու կրատերի հափշտակման համար, որը նրանք ուղարկել էին Կրեսոսին, ինչպես նաև եգիպտոսի թագավոր Ամասիսի նվիրած լանջապանակի համար, որը սամոսցիները հափշտակել էին գինու կրատերի հափշտակումից մեկ տարի առաջ: Լանջապանակը վուշյա էր, որի վրա կենդանիների բազմաթիվ պատկերներ կային գործած, որոնք զարդարված էին ոսկով և բամբակե[7] ծոպերիզներով: Բայց այն հիանալի էր հատկապես նրանով, որ կտավի յուրաքանչյուր երիզը, չատ բարակ լինելով հանդերձ, բաղկացած էր երեք հարյուր վաթսուն թելից, ընդ որում բոլորն էլ նկատելի: Նման մեկ այլ լանջապանակ ևս Ամասիսը նվիրաբերել էր Լինդոսում գտնվող Աթենասի սրբավայրին:

48. Սամոսի դեմ այդ արշավանքին կորնթացիները ևս հոժարակամ մասնակցեցին: Քանզի արանց հանդեպ ևս սամոսցիները հանցանք էին գործել դեռևս այդ արշավանքից մեկ սերունդ առաջ, երբ նույն այդ ժամանակ, երբ կատարվել էր գինու անոթի հափշտակումը: Պերիանդրոսը՝ Կյուպսելոսի որդին, Կերկյուրայի առաջին այրերի երեք հարյուր որդիների ուղարկել էր Սարդես, Ալյատտեսի մոտ, ներքինացնելու: Երբ կորնթացիները այդ տղաներին բերեցին Սամոս, սամոսցիները, իմանալով նրանց բերվելու պատճառը, նախ տղաներին պատվիրեցին ապաստանել Արտեմիսի սրբավայրում, արից հետո թույլ չտվեցին, որ ապաստան խնդրած այդ տղաներին (բանի) դուրս բերեն սրբավայրից: Իսկ երբ կորնթացիները չուզեցին կերակրել տղաներին, այնժամ սամոսցիները առնախմբություն կազմակերպեցին, որը նույն ձևով կատարում են մինչև օրս: Ամեն գիշեր, քանի դեռ տղաները ապաստանել էին, սամոսցիներն աղջիկների և տղաների պարեր էին կազմակերպում և որոշում պարերի ժամանակ մեղրով քլիթներ բերել, որպեսզի կերկյուրացիների տղաները վերցնեին դրանք և սնվեին: Այսպես շարունակվեց մինչև այն ժամանակ, երբ տղաների կորնթացի պահակներն արդեն լքելով տղաներին, հեռացան: Այնուհետև սամոսցիները տղաներին ետ տարան Կերկյուրա:

49. Արդ, եթե կորնթացիները Պերիանդրոսի մահից հետո բարեկամության մեջ լինեին կերկյուրացիների հետ, ապա նրանք վերոհիշյալ դեպքի պատճառով չէին մասնակցի արշավանքի՝ Սամոսի դեմ: Մինչդեռ, այն օրից, երբ կորնթացիները (Կերկյուրա) կղզում իրենց գաղութը հիմնեցին, նրանք, ցեղակից լինելով հանդերձ, կերկյուրացիների հետ մշտական թշնամանքի մեջ են: Իսկ կորնթացիները սամոսցիների դեմ թշնամանքի մեջ են հետևյալ պատճառով:

50. Պերիանդրոսը ներքինացնելու համար ընտրել և Սարդես էր ուղարկել առավել երևելի կերկյուրացիների որդիներին՝ (կղզու բնակիչներին) պատժելու համար. քանզի կերկյուրացիները չարագործություն էին կատարել նրա դեմ: Այն բանից հետո, երբ Պերիանդրոսը սպանել էր իր կնոջը՝ Մելիսսային, մեկ այլ ադետ ևս հարվածեց նրան: Նա Մելիսսայից ուներ երկու որդի՝ մեկը տասնյոթ, մյուսը՝ տասնութ տարեկան: Նրանց մոր գծով պապը՝ Պրոկլեսը, որը Եպիդավրոսի[18] տիրանն էր, իր մոտ է հրավիրում պատանիներին և խնամում նրանց, ինչպես վայել էր խնամել հարազատ դստեր որդիներին: Երբ նրանց ետ էր ուղարկում, բաժանվելիս ասում է. «Տղաներ. դուք գիտե՞ք, թե ո՞վ է սպանել ձեր մորը»: Ավագ որդին այս խոսքին ուշադրություն չդարձրեց, մինչդեռ կրտսերը, որի անունն էր Լյուկոփրոն, այդ լսելով այնքան տխրեց, որ Կորնթոս վերադառնալուց չողջունեց իր հորը, որը սպանել էր իր մորը. չխոսեց նրա հետ, ոչ էլ պատասխանեց նրա հարցերին: Ի վերջո Պերիանդրոսը զայրանալով, նրան արտաքսում է տնից:

51. Նրան արտաքսելուց հետո ավագին հարցնում է, թե նրանց ի՞նչ է ասել պապը: Տղան պատմում է հորը, թե ինչպե՞ս նա իրենց սիրալիր ընդունեց. բայց տղան չհիշատակեց այն խոսքերը, որ Պրոկլեսը ասել էր նրանց ետ ուղարկելիս, քանի որ դրանց վրա ուշադրություն չդարձնելով, մոռացել էր: Իսկ Պերիանդրոսը պնդում էր, թե հնարավոր չէ, որ նա որևէ բան խրատած չլինի նրանց: Հայրը այնքան է հարցնում, որ տղան վերջապես հիշում է և պատմում այդ մասին: Պերիանդրոսը հասկանալով դրա իմաստը և կամենալով բուլություն չցուցաբերել, քաղաք է ուղարկում այնտեղ, ուր ապրում էր նրա վտարված որդին, արգելելով նրանց՝ ընդունել

նրան իրենց տներում: Արդ, պատանին դուրս արվելով մի տնից, դիմում էր մեկ ուրիշ տուն, բայց այդտեղից ևս վտարվում էր, քանի որ Պերիանդրոսը սպառնում էր ընդունողներին և հրամայում դուրս անել նրան: Այսպես, նա նալածական գալիս է իր բարեկամների մոտ, որոնք, թեև անաբեկված, պատսպարում են նրան որպես Պերիանդրոսի որդու:

52. Ի վերջո Պերիանդրոսը կարգադրեց հայտարարել, որ նա, ով իր տանը կընդունի նրան, կամ կգրուցի նրա հետ, պարտավոր կլինի արբազան տուգանք վճարել Ապոլլոնին. և նա սահմանեց տուգանքի չափը: Այս հայտարարությունից հետո ոչ ոք չէր ուզում նրա հետ զրուցել կամ ընդունել նրան իր տանը: Բացի այդ, ինքը՝ տղան ևս չէր փորձում որևէ մեկին մղել այդ հրամանը խախտելու, այլ համբերությամբ տանում էր այդ և թափառում բակերում[19]: Չորրորդ օրը Պերիանդրոսը տեսնելով նրան բոլորովին անկվա և անվաղ, կարեկցում է և, խեղդելով իր զայրույթը, մոտենում է և ասում. «Որդիս. ի՞նչն է քեզ համար գերադաս. ո՞ր այժմյան վիճակը, թե՞ իմ ունեցած իշխանությունը և բարիքները, որոնք այժմ իմն են, բայց կլինեն քոնը, եթե դու հպատակվես հորդ կամքին: Դու, լինելով իմ որդին և բարգավաճ Կորնթոսի իշխանը, ընտրել ես շրջմոլիկի կյանք, ըմբոստացած ու զայրացած այն մարդու դեմ, որը բոլորից քիչ է արժանի ո՞ր այդպիսի վերաբերմունքին: Հիրավի, եթե որևէ ապետ է պատահել, որի համար դու կասկածում ես ինձ, ապա այն նաև իմ ապետն է և այն առավելապես ինձ է բաժին ընկել, քանի որ դու արդեն գիտես, թե ինչքան ավելի լավ է զայրույթ, քան կարեկցանք առաջացնելը, և թե ի՞նչ է նշանակում զայրույթով լցվել ծնողների և հզորների դեմ, ուստի վերադարձիր իմ տուն»: Այս խոսքերով Պերիանդրոսը ուզում էր սիրաշահել նրան. բայց որդին ոչինչ չէր պատասխանում, այլ միայն ասում էր, թե հայրը պետք է արբազան տուգանք վճարի աստծուն՝ իր հետ խոսած լինելու համար: Արդ, Պերիանդրոսը, համոզվելով, որ ինչքան անանց և անհաղթահարելի է շարիքը որդու մեջ, նրան նավով ուղարկեց Կերկյուրա, հեռու իր աչքից. քանզի նա իշխում էր նաև այդ կողմում: Նրան հեռացնելուց հետո Պերիանդրոսը արշավեց իր աներոջ՝ Պրոկլեսի դեմ, նրան համարելով իր դժբախտության գլխավոր պատճառը: Նա նվաճեց Եպիդավրոսը և Պրոկլեսին գերեվարեց:

53. Երբ արդեն ժամանակն անցնում էր և Պերիանդրոսը, տարիքն առաջացած լինելով, զգում էր, որ ինքն այլևս ի վիճակի չէր վերահսկելու և ղեկավարելու տերությունը, բանբեր է ուղարկում Կերկյուրա, Լյուկոփրոնի մոտ, հրավիրելով նրան վերցնել իշխանությունը. քանզի իր ավագ որդուն նա համարում էր իշխելու անկարող, նրա թուլամտության պատճառով: Բայց Լյուկոփրոնը նույնիսկ չպատասխանեց հոր բանբերին: Պերիանդրոսը հիրավի փափագելով երիտասարդի վերադարձը, ուղարկում է նրա մոտ

պատանու քրոջը, իր դուստրին, ենթադրելով, որ տղան կլսի նրան: Քույրը գալով նրա մոտ, ասում է. «Եղբայր. մի՞թե դու ուզում ես, որ իշխանությունն ընկնի այլոց ձեռքը և որ հայրենական տունը կործանվի, քան թե այդ ամենը դառնա քոնը: Վերադարձիր տուն և վերջ տուր քեզ վնասելուն: (Այդպիսի) հպարտությունը վատ հատկություն է: Չարիքը շարիքով մի ուղղիր: Շատերը բարությունը գերադասում են իրավացիությունից. ուրիշներն էլ, ձգտելով մայրական ժառանգության, կորցնում են հայրականը: Քոնապետի իշխանությունն անկայուն է. քանզի շատերը ցանկանում են այն. իսկ (քո հայրը) ծեր է և զառամյալ. քո բարիքները ուրիշներին մի տուր»: Հոր պատվերով քույրն այսպիսի խոսքերով փորձում էր համոզել նրան: Եղբայրը պատասխանում է, թե ինքը երբեք չի վերադառնա Կորնթոս, քանի դեռ գիտե, որ հայրը կենդանի է: Երբ աղջիկն այս ամենը հաղորդեց հորը, Պերիանդրոսը երրորդ անգամ բանբեր ուղարկեց (որդու մոտ), հայտնելով, թե ինքը պատրաստ է զալու Կերկյուրա, իսկ Լյուկոփրոնը, գալով Կորնթոս, կժառանգի իր թագավորական իշխանությունը: Որդին համաձայնվեց դրան. ուստի և Պերիանդրոսը պատրաստվում է մեկնել Կերկյուրա, իսկ որդին՝ Կորնթոս: Կերկյուրացիները, իմանալով այդ ամենի մասին, սպանում են պատանուն, որպեսզի Պերիանդրոսը չգար իրենց երկիրը: Այս էր պատճառը, որ Պերիանդրոսը ուզում էր պատժել կերկյուրացիներին:

54. Իսկ լակեդեմոնացիները մեծ տարմիդով գալիս ու պաշարում են Սամոսը: Նրանք, գրոհելով պարիսպը, արդեն բարձրացել էին քաղաքի ծովանայաց արվարձանի աշտարակը, երբ օգնության հասած Պոլյուկրատեսը մեծաթիվ զորքով եռ է մղում նրանց: Իսկ լեռան լանջին գտնվող մյուս աշտարակից արտելք են կատարում վարձկանները և մեծ թվով սամոսցիներ, որոնք, սակայն, փոքր ժամանակ լակեդեմոնացիներին դիմադրելուց հետո, եռ են նահանջում: Լակեդեմոնացիները հետապնդում են նրանց և սպանում:

55. Արդ, եթե բոլոր լակեդեմոնացիներն այդ օրը կռվեին Արքիասի և Լյուկոպեսի նման, ապա Սամոսը կգրավվեր: Քանզի միայն Արքիասը և Լյուկոպեսը միասին, փախչող սամոսցիներին հալածելիս, թափանցելով Սամոսի պարսպից ներս, սպանվում են Սամոս քաղաքում, երբ նրանց վերադարձի ճանապարհն արդեն փակվել էր: Ես հանդիպել եմ այս Արքիասի թոռ և Սամիոսի որդի Արքիասին (Սպարտայի) գավառներից մեկում, Պիտանեում, որտեղից նա սերում է: Սա բոլոր որդիներից առավել հարգում էր սամոսցիներին և ասում ,թե իր հորը կոչել են Սամիոս, քանի որ պապը մահացել է Սամոսում՝ քաջաբար կռվելիս: Նա ասում է, թե սամոսցիներին հարգում է, որովհետև նրանք իր պապին թաղել են, արժանացնելով հրապարակային մեծարման:

56. Արդ, լակեդեմոնացիները քառասուն օր Սամոսն ապարդյուն պա-

շարելուց հետո, վերադառնում են Պելոպոննեսոս: Անհավասար մի զրույցի համաձայն, Պոլյուկրատեսը մեծ քանակությամբ ոսկեզօծած կապարե տեղական դրամ հատելով, ավել է լակեդեմոնացիներին և կաշառել նրանց, որի պատճառով էլ նրանք հեռացել են Սամոսից: Սա լակեդեմոնական դորիացիների առաջին արշավանքն է եղել դեպի Ասիա:

57. Պոլյուկրատեսի դեմ արշաված սամոսցիները, քանի որ լակեդեմոնացիներն արդեն նրանց լքել էին, իրենք ևս նավերով մեկնեցին Սիփնոս[20], քանի որ նրանք դրամի կարիք ունեին, իսկ այդ ժամանակ Սիփնոսը բարգավաճ էր և ամենահարուստը կղզիներից, որովհետև այնտեղ կային ոսկու և արծաթի հանքեր այնքան, որ եկամուտների մեկ տասներորդ մասով նրանք Դելֆիում կառուցեցին ամենաշքեղ գանձարաններից մեկը: Ամեն տարի նրանք եկամուտները բաժանում էին իրար մեջ: Այդ գանձարանը կառուցելուց հետո նրանք պատգամախոսին հարցնում են, թե արդյո՞ք երկար ժամանակ կտևի իրենց բարօրությունը: Իսկ Պյութիան նրանց պատասխանում է այսպես.

«Երբոր Սիփնոսի պրիտանեոնը պսպղա նիրմակ,
Ու երբոր հերմակ հագնի ձեր շուկան, զգուշացեք այնժամ
Եղյացի մարդու փայտե դարանից, կարմիր բանբերից»:

Եվ, իրոք, այդ ժամանակ Սիփնոսի պրիտանեոնը և շուկայի հրապարակը զեղազարդված էր Պարոսի մարմարով:

58. Այս պատգամը նրանք չհասկացան ո՛չ անմիջապես, ո՛չ ևս այն ժամանակ, երբ սամոսցիները արշավեցին (իրենց վրա): Քանզի սամոսցիները Սիփնոսին մոտենալով, անհապաղ իրենց նավերից մեկը դեսպաններով ուղարկեցին քաղաք: Հնում բոլոր նավերը կարմրանկարկ էին. այդ էլ նկատի ունեցել էր Պյութիան, խորհուրդ տալով զգուշանալ փայտե դարանից և կարմիր բանբերից: Հրեշտակները ժամանելով, սիփնոսցիներից պահանջում են իրենց պարտք տալ տասը տաղանդ: Քանի որ նրանց մերժում են պարտք տալ, ապա սամոսցիները սկսում են ամայացնել երկիրը: Այս լսելով, սիփնոսցիները շտապում են օգնության, բայց պարտվում են և սամոսցիները նրանցից շատերին վտարում էն քաղաքից, որից հետո սիփնոսցիները վճարում են հարյուր տաղանդ (փրկագին):

59. Սամոսցիները (այս) դրամով հերմիոնացիներից գնում են Պելոպոննեսոսի մոտ գտնվող Հյուդրեա կղզին և այն հանձնում տրոյզենեցիների պահպանության. իսկ իրենք Կրետեում հիմնում են Կյուդոնիան, ոչ թե հատկապես այդ նպատակով այնտեղ նավելով, այլ զակյունթոսցիներին կղզուց դուրս քշելու համար: Նրանք մնում են այստեղ և հինգ տարի բարօրություն վայելում. այնպես, որ Կյուդոնիայում մինչև այժմ էլ կանգուն եղող սրբավայրը, ինչպես նաև Դիկայուոնոսի տաճարը սրանք են կառուցել. իսկ վեցերորդ տարում նրանք էգինացիների և կրետացիների դեմ մղած նավամարտում պարտվում են և ստրկության տարվում: Էգինացիները նրանց նավերի վարազանն քերը կտրելով, տանում և նվիրաբերում են էգինայում[21] գտնվող Աթենասի տաճարին: Նրանք այդ տրեցին զայրացած լինելով սամոսցիների դեմ, որոնք դեռ նախապես, երբ Սամոսում թագավորում էր Ամփիկրատեսը, արշավել էին էգինա, էգինացիներին մեծ չարիք պատճառելով, բայց իրենք ևս վնասվել էին նրանցից: Պատճառն, ահա, այս էր եղել:

60. Ես սամոսցիների մասին առավել երկար խոսեցի, քանի որ նրանց մոտ են գտնվում ճելլենների երկրի երեք խոշորագույն կառույցները: Նրանք հարյուր հիսուն գրկաչափ բարձրություն ունեցող լեռան տակով խրամուղի են փորել, որն սկսվում է լեռան ստորոտից և երկուսաբերան ելք ունի: Այդ ջրանցքի երկարությունը յոթը ասպարեզ է, իսկ բարձրությունը և լայնքը՝ ութական ոտնաչափ: Այս խրամուղու միջով, ամբողջ երկարությամբ, քսան կանգուն խորությամբ ջրանցք է փորված երեք ոտնաչափ լայնքով, որտեղով մեծ աղբյուրի ջուրը խողովակների միջոցով հասնում է քաղաք: Այդ խրամուղու ճարտարապետը եղել է մեգարացի Եվպալինոսը, Նավստրոփոսի որդին: Երեք կառույցներից մեկը այս է: Երկրորդը՝ ծովախորշի շուրջ ծովում կառուցված պատնեշն է՝ քսան գրկաչափ խորությամբ. պատնեշի երկարությունն ավելի քան երկու ասպարեզ է: Երրորդը՝ նրանց կառուցածտաճարն է, մեծագույնը իմ տեսած բոլոր տաճարներից: Այդ տաճարի առաջին ճարտարապետը եղել է տեղացի Հոյկոսը, Փիլեսի որդին: Այս պատճառով է, որ ես սամոսցիների մասին առավել երկար խոսեցի:

61. Մինչ Կամբյուսեսը, Կյուրոսի որդին, գտնվում էր Եգիպտոսում և խելահեղ գործեր անում, երկու մոգ եղբայրներ ապստամբում են[22]: Սրանցից մեկին Կամբյուսեսը թողել էր (Պարսկաստանում) որպես իր տան խնամակալ: Արդ, սա էլ ապստամբում է, գիտենալով, որ Սմերդիսի սպանությունը գաղտնի է մնացել և որ Պարսկաստանում քչերը գիտեն այդ մասին, իսկ շատերը գիտեն, թե Սմերդիսը կենդանի է: Այդպիսով նա մտադրվում է վերցնել թագավորական իշխանությունը: Նա ուներ եղբայր, որը, ինչպես արդեն ասել եմ, ապստամբել էր նրա հետ և իր տեսքով շատ նման էր Կյուրոսի որդի Սմերդիսին, որին սպանել էր Կամբյուսեսը, նրա եղբայրը: Սա ոչ միայն իր տեսքով նման էր Սմերդիսին, այլև նրա անունը նույնպես Սմերդիս էր: Անա սրան էլ մոգ Պատիզեյթեսը համոզում է, որ իրեն ամեն ինչ կանի նրա համար, և նրան բերում ու նստեցնում է թագավորական գահին: Այդ անելուց հետո նա դեսպաններ է ուղարկում (երկրի) բոլոր կողմերը, այդ թվում նաև Եգիպտոս, հայտարարելու զորքին, թե այսուհետև հնազանդվեն ոչ թե Կամբյուսեսին, այլ Կյուրոսի որդի Սմերդիսին[23]:

62. Արդ, այս ամենի մասին դեսպանները հայտարարում են ամենուրեք: Դեսպան ուղարկվել էր նաև Եգիպտոս, որը, սակայն, Կամբյուսեսին և նրա զորքին պատահում է Սիրիայի Ագբատանայում[24] և, կանգնելով զորքի մեջտեղում, հաղորդում է մոգի հրամանները: Լսելով դեսպանից այդ ամենը, Կամբյուսեսը ենթադրեց, որ նա ճշմարտությունն է ասում և որ իրեն դավանանել է Պրեքսասպեսը, որին ինքն ուղարկել էր Սմերդիսին սպանելու, բայց սա չէր կատարել այդ: Ուստի, նայելով Պրեքսասպեսի աչքերին, նա ասում է. «Պրեքսասպես. դու այդպե՞ս կատարեցիր իմ հրամանը»: Պրեքսասպեսը պատասխանում է. «Ով տեր. ճիշտ չէ, որ քո եղբայրը՝ Սմերդիսը, ապստամբել է քո դեմ, ոչ իսկ նա կարող է քեզ հետ որևէ վեճ ունենալ, մեծ կամ փոքր. քանզի ես ինքս, կատարելով քո հրամանը, նրան թաղեցի իմ ձեռքով: Արդ, եթե մեռածները հարություն առնեն, ապա կարելի է ապասել, որ Մեդացի Աստյուագեսը ևս կապստամբի քո դեմ: Իսկ եթե (քնությանն մեջ) ոչինչ չի փոխվել, ապա նրա կողմից քո դեմ ոչինչ չի կարող ծագել: Ուստի ես խորհուրդ եմ տալիս հետևել դեսպանին և հարցապնդել նրան, թե ո՞վ է նրան ուղարկել հաղորդելու, թե պետք է հնազանդվել Սմերդիսին»:

63. Կամբյուսեսը հանդիպեցավ Պրեքսասպեսի այս խոսքերից: Ուստի դեսպանին իսկույն ևեթ քաշելով բերում են (այնտեղ): Երբ նա հայտնվեց, Պրեքսասպեսը հարցրեց նրան. «Ով մարդ. դու ասում ես, թե եկել ես որպես բանբեր Կյուրոսի որդի Սմերդիսի կողմից: Այժմ ասա ճշմարտությունը և բարով գնա: Այս հրահանգը քեզ անձամբ ինքը Սմերդիսը տվե՞ց, թե՞ նրա ծառաներից որևէ մեկը»: Իսկ նա պատասխանեց. «Այն օրից, ինչ Կամբյուսեսը արքան մեկնել է Եգիպտոս, ես երբեք չեմ տեսել Կյուրոսի որդի Սմերդիսին: Բայց այն մոգը, որին Կամբյուսեսը կարգել էր իր տան կառավարիչ, այս ամենը հանձնարարեց ինձ և ասաց, որ Կյուրոսի որդի Սմերդիսն է հրամայել այդպես հաղորդել ձեզ»: Այսպես է պատասխանում բանբերն առանց դույզն իսկ ստելու: Իսկ Կամբյուսեսն ասում է. «Պրեքսասպես. դու որպես ազնիվ մարդ կատարել ես իմ հրամանը. դու չես պատժվի: Բայց Պարսկաստանում ո՞վ է իմ դեմ ապստամբածը, որը խաբեությամբ վերցրել է Սմերդիսի անունը»: Պրեքսասպեսը պատասխանում է. «Կարծում եմ, ով արքա, թե ես գիտեմ այդ: Քո դեմ ապստամբել են մոգերը. Պատիզեյթեսը, որին դու թողել էիր քո տան խնամակալ, և նրա եղբայր Սմերդիսը»:

64. Կամբյուսեսը, լսելով Սմերդիսի անունը, իսկույն հասկացավ այդ խոսքերի և իր տեսած երազի ամբողջ ճշմարտությունը. քանզի նա երազում տեսել էր, թե ինչ-որ մեկը իրեն հաղորդում է, որ Սմերդիսը նստել է թագավորական գահին և գլխով հպվել է երկնքին: Այնժամ նա համոզվելով, որ իր եղբորն իզուր է սպանել, սկսում է ողբալ Սմերդիսին: Նրան ողբալուց հետո, մեծապես վշտացած այդ աղետից, Կամբյուսեսը ցատկում է իր ձիու վրա, որոշած լինելով անհապաղ արշավել Սուսա՝ մոգի դեմ: Ձիու վրա ցատկելիս, նրա սրի պատյանի ծայրակալն ընկնում է և մերկացած սուրը խոցում նրա ազդրը, վիրավորելով նրան մարմնի այն մասում, որտեղ ինքը մի ժամանակ խոցել էր Եգիպտոսի աստված Ապիսին: Կամբյուսեսը համոզվելով, որ վերքը մահացու է, հարցնում է, թե ինչպե՞ս է կոչվում այդ քաղաքը: Նրան պատասխանում են, թե՝ Ագբատանա: Դեռ հնախապես, Բուտո քաղաքում, նրան պատգամել էին, որ ինքը պետք է վախճանվի Ագբատանայում: Կամբյուսեսը ենթադրում էր, թե ինքը խոր ծերության մեջ կվախճանվի իր գլխավոր քաղաքում, մեդական Ագբատանայում, մինչդեռ պատգամախոսը նկատի էր ունեցել Սիրիայի Ագբատանան: Հիրավի, երբ հարցնելով իմացել է քաղաքի անունը, իր ստացած վերքը և մոգի ապստամբության լուրը նրան այնպես են ցնցել, որ (բուժվել է) խելացնորությունից և, հասկանալով տրված պատգամի իմաստը, ասել է. «Կյուրոսի որդի Կամբյուսեսին վիճակված է այստեղ վախճանվել»:

65. Այդ ժամանակ այսքան ասաց. բայց շուրջ քսան օր հետո իր մոտ կանչելով իր հետ գանվող առավել առաջնակարգ պարսիկներին, ասում է հետևյալը. «Ով պարսիկներ. ինձ այնպիսի բան է պատահել, որ ցարդ պահում էի խիստ գաղտնի: Բայց այժմ այն պետք է հայտնեմ: Երբ ես Եգիպտոս էի խիստ զայրացած, երազ տեսա, որը երանի տեսած չլինեի: Երազում տեսա, որ տնից բանբեր էր եկել հայտնելու, թե Սմերդիսը նստել է թագավորական գահին, գլուխը հպած երկնքին: Անաբեկված, որ եղբայրս կարող է ինձ զրկել իշխանությունից, ես գործեցի շտապողաբար, քան խելամտությամբ: Հիրավի, մարդ անկարող է կանխել ապագայի դեպքերը: Իսկ ես, անմիտս, Պրեքսասպեսին ուղարկեցի Սուսա՝ Սմերդիսին սպանելու: Այդ մեծ չարագործությունը կատարելուց հետո ես ապրում էի անհոգյուղ, երբեք չմտածելով, որ Սմերդիսի վերացումից հետո որևէ մեկը կապստամբի իմ դեմ: Լիովին սխալվելով ապագայի մասին, ես անտեղի եղբայրասպան դարձա, այնուհանդերձ զրկվել եմ թագավորությունից. քանզի Սմերդիսն էր այն մոգը, որի ապստամբելու մասին ասված երազում զգուշացրել էր ինձ: Եվ անա, այդ չարագործությունը, հավատացեք ինձ, ես եմ կատարել և Սմերդիսը, Կյուրոսի որդին, արդեն չկա: Այժմ մոգերն են տիրել ձեր իշխանությանը. նա, ում ես թողել էի իմ տան խնամակալ, և նրա եղբայր Սմերդիսը: Իսկ նա, ով այժմ բոլորից առավել պիտի վրեժ լուծեր մոգերից իմ կրած անարգանքի համար, նենգ հիմարությամբ սպանված է իր ամենամերձավոր հարազատների կողմից: Արդ, քանի որ նա այլևս չկա, ապա ես իմ մահից առաջ, ով պարսիկներ, անհրաժեշտ եմ համարում ասել նաև իմ վերջին կամքը: Հանուն մեր թագավորական ասվածների, հանձնարարում եմ ձեզ

բոլորիդ, հատկապես ներկա գտնվող Աքեմենյաններին, թույլ չտալ, որ գերիշխանությունը դարձյալ անցնի մեդացիներին: Եթե նրանք ենթգությամբ վերցրել են իշխանությունը, ապա դուք ևս նույն եղանակով ետ վերցրեք այն նրանցից. և եթե նրանք իշխանությունը գրավել են ուժով, ապա դուք ևս ուժով ետ վերցրեք այն: Եթե դուք այսպես անեք, ապա ձեր երկիրը թող բերքառատ լինի, իսկ ձեր կանայք և հոտերը՝ բազմածին. իսկ դուք եղեք մշտապես ազատ: Բայց եթե դուք իշխանությունը չվերանվանեք կամ չփորձեք վերանվանել, այդ դեպքում այս ամենի հակառակը ես կմաղթեմ ու, բացի այդ, ամեն մի պարսիկ թող այնպիսի (թշվառ) վախճան ունենա, ինչպիսին ես (ունեցա)»: Այս խոսքերով Կամբյուսեսը ողբում էր իր բախտը:

66. Պարսիկները, տեսնելով իրենց արքայի լաց լինելը, սկսում են պատառոտել իրենց հագի զգեստները և բարձրաձայն հեկեկալ: Բայց հետո այնու, ոսկորը փտախտով վարակվելու և ազդրը արագորեն նեխվելու պատճառով, Կյուրոսի որդի Կամբյուսեսը մահանում է: Նա թագավորել է ընդամենը յոթ տարի և հինգ ամիս, և զավակներ բոլորովին չի ունեցել՝ ո՛չ աղջիկ, ո՛չ աղջիկ: Ներկա եղող պարսիկները բոլորովին չէին հավատում, թե մոգերը վերցրել են իշխանությունը: Նրանք կասկածում էին, թե Կամբյուսեսը պատմելով Սմերդիսի մահվան մասին, ուզում էր Սմերդիսի դեմ պատերազմի հանել ամբողջ Պարսկաստանը: Արդ, նրանք հավատում էին, որ Կյուրոսի որդի Սմերդիսն է դարձել թագավոր. քանզի Պրեքասպեսը վճռականապես մերժում էր, թե սպանել էր Սմերդիսին, որովհետև այժմ, երբ մահացել էր Կամբյուսեսը, իր համար անվտանգ չէր լինի ասել, թե իր ձեռքով է սպանվել Կյուրոսի որդին:

67. Կամբյուսեսի մեռնելուց հետո, մոգը, սեփականելով Կյուրոսի որդու, համանուն Սմերդիսի անունը, աներկյուղ թագավորում է յոթը ամիս, որով կամբողջանար Կամբյուսեսի թագավորության լրիվ ութ տարին: Այս ամիսների ընթացքում նա մեծ բարեգործություններ է կատարել իր բոլոր հպատակների համար. ուստի և երբ նա սպանվում է, բոլոր ասիացիները, բացի իրենցից՝ պարսիկներից, ողբում են նրան: Քանզի նա, դեսպաններ ուղարկելով իրեն հպատակ բոլոր ազգերի մոտ, նրանց հայտարարել էր երեք տարով ապահարկ և ազատ զինվորական ծառայությունից:

68. Նա այդ մասին հայտարարել էր իշխանությունը գրավելուց անմիջապես հետո, բայց ութերորդ ամսում նրա խաբեությունը բացահայտվեց հետևյալ կերպ: Օտանեսը, Փառնասպեսի որդին, իր ծնունդով և հարստությամբ հավասար էր առաջին պարսիկներին: Այս Օտանեսը առաջինն էր, որ կասկածեց, թե մոգը Կյուրոսի որդի Սմերդիսը չէ, այլ նա, ով կա: Նա այդպես եզրակացրեց, քանի որ մոգը երբեք դուրս չէր գալիս միջնաբերդից ու երբեք իր մոտ տեսության չէր հրավիրում ակնավոր պարսիկներից որևէ մեկին: Կասկածելով նրան, Օտանեսը կատարեց հետևյալը: Կամբյուսեսը ամուսնացել էր Օտանեսի դստեր հետ, անունը Փայդյումֆ. այժմ սրա, ինչպես նաև Կամբյուսեսի բոլոր մյուս կանանց հետ կենակցում էր մոգը: Արդ, Օտանեսը մարդ է ուղարկում իր դստեր մոտ հարցնելու, թե նա այժմ ո՞ւմ հետ է ննում, Կյուրոսի որդի Սմերդիսի՞, թե՞ մեկ ուրիշի: Աղջիկը պատասխան է ուղարկում հայտնելով, թե ինքը այդ չգիտի. քանզի ինքը նախկինում երբեք տեսած չի եղել Կյուրոսի որդի Սմերդիսին և չի իմանում, թե այժմ ո՞վ է իր հետ ննում: Օտանեսը երկրորդ անգամ նրան հարց է ուղարկում, ասելով. «Եթե դու ինքդ չես ճանաչում Կյուրոսի որդի Սմերդիսին, ապա հարցրու Ատոսսային, թե ո՞վ է նրա և քո ամուսինը. քանզի նա, հիրավի, պետք է ճանաչի իր իսկ եղբորը»:

69. Այս խոսքերին դստերն այսպիսի պատասխան է ուղարկում. «Ես ոչ Ատոսսայի հետ կարող եմ զրույցի նստել, ոչ էլ (պալատում) համատեղ բնակվող կանանցից որևէ մեկին տեսնել. քանզի այս մարդը, ով էլ որ է, թագավորական իշխանությունը վերցնելուց անմիջապես հետո, մեզ բոլորիս առանձնացրեց իրարից»: Այս խոսքերից Օտանեսի համար բանն առավել պարզ է դառնում և նա երրորդ անգամ հետևյալ հանձնարարությունն է ուղարկում իր դստեր. «Ով դստերիկ. քո ազնվական ծնունդին վայել է, որ դու հանձն առնես վտանգավոր մի գործ, որը քո հայրն է պատվիրում. քանզի եթե նա Կյուրոսի որդի Սմերդիսը չէ, այլ նա է, ում ես ենթադրում եմ, ապա նա պետք է ոչ թե վայելի, այլ պատժվի, որ բաժանում է քո անկողինը և տիրում Պարսկաստանին: Ուստի և դու այսպես արա: Երբ նա մրցանի քո մահիճը և դու համոզվես, թե նա ննած է, շոշափիր նրա ականջները. և եթե տեսնես, որ նա ականջներ ունի, ապա իմացիր, որ դու ննում ես Կյուրոսի որդի Սմերդիսի հետ. իսկ եթե չունի, ապա մոգ Սմերդիսի հետ»: Այս խոսքերին Փայդյումֆն պատասխան է ուղարկում, ասելով, թե ինքը մեծապես կվտանգվի այդ անելով. քանզի եթե նա իրոք ականջներ չունի, իսկ ինքը բռնվի նրա ականջները շոշափելիս, ապա հաստատապես մահապատժի կենթարկվի. այսուհանդերձ, ինքն այդ ամենը կկատարի: Այսպիսով, նա խոստանում է կատարել իր նոր պատվերը: Կյուրոսը, Կամբյուսեսի որդին, իր թագավորության օրոք այս մոգ Սմերդիսի ականջները կտրել էր ինչ-որ փոքր զանցանքի համար: Եվ ահա Փայդյումֆն, Օտանեսի դուստրը, կատարում է այն ամենը, ինչ խոստացել էր իր հորը: Երբ հասել էր իր հերթը մոգի մոտ գնալու, քանզի պարսից սովորության համաձայն, կանայք հերթականությամբ են այցելում իրենց ամուսիններին, նա գալիս է նրա մոտ պառկելու: Եվ երբ մոգը խոր քուն էր մտել, նա շոշափում է նրա ականջները: Այնժամ կինն առանց դժվարության համոզվում է, որ ամուսինն

ականջներ չունի. և երբ օրը բացվում է, նա իսկույն այդ մասին լուր է ճղում փիր հորը:

70. Իսկ Օտանեսը, հրավիրելով առաջին պարսիկներից Ասպաթինեսին և Գոբրյուեսին, որոնց ինքն առավելագույնս վստահում էր, նրանց պատմում է ամբողջ եղելությունը: Պարզվում է, որ սրանք ևս կասկածում էին, թե բանն այդպես է, իսկ Օտանեսի այս հայտնությունից հետո առավել ևս համոզվում են: Ուստի և որոշում են, որ իրենցից յուրաքանչյուրն իր կողմը գրավի պարսիկներից այն մեկին, ում ինքն առավել վստահում է: Արդ, Օտանեսը ներգրավում է Ինտափռեռնեսին, Գոբրյուեսը՝ Մեգաբյուզոսին, իսկ Ասպարինեսը՝ Հյուդառնեսին[25]: Երբ նրանք վեց էին դարձել, Պարսկաստանից հրաց մոտ, Սուսա, գալիս է Հյուստասպեսի որդի Դարեհը, որի հայրը Պարսկաստանի հյուպարխոսն էր: Եվ ահա, Դարեհի ժամանելուց հետո, այս վեցը որոշում են նրան ևս դարձնել իրենց գործին մասնակից:

71. Արդ, այս յոթ (պարսիկները) ի մի հավաքվելով, հավատարմության երդում են տալիս և խորհրդակցում: Երբ կարծիք հայտնելու հերթը հասնում է Դարեհին, նա այսպես է խոսում. «Ես կարծում էի, թե միայն ինձ է հայտնի, որ այժմ թագավորողը մոգն է և որ Կյուրոսի որդի Սմերդիսը մահացած է. այդ պատճառով իսկ ես շտապել եմ գալ (այստեղ), մոգի մահը նյութելու համար: Արդ, քանի որ դրությունն այնպիսին է, որ այդ մասին հայտնի է ոչ միայն ինձ, այլև ձեզ, ուստի ես կարծում եմ, որ պետք է գործել անհապաղ. քանզի հապաղելը շարիք կլինի»: Նրան Օտանեսը պատասխանում է. «Ով Հյուստասպեսի որդի. դու առաքինի հոր ծնունդ ես և, թվում է, ինքդ նույնպես ոչնչով պակաս չես քո հորից: Այդուհանդերձ, այս գործում այդպես անխոհեմաբար մի շտապիր, այլ գործիր առավել խելամիտ: Մենք այդ գործին կձեռնարկենք առավել մեծաթիվ դառնալուց հետո»: Նրան Դարեհը այսպես է պատասխանում. «Ով ներկաներ. եթե դուք գործեք Օտանեսի խորհրդի համաձայն, ապա իմացեք, որ կկորչեք վաղագույնս. քանզի որևէ մեկն այն կհաղորդի մոգին, ինքը օգուտ քաղելու նպատակով: Այժմ ձեզ համար առավել օգտավետ կլինի, եթե գործը ինքներդ կատարեք: Բայց քանի որ դուք որոշել եք ձեր մտադրությունը հայտնել շատերին և այդ վստահել եք նաև ինձ, ապա եկեք գործը կատարենք այսօր. հակառակ դեպքում, իմացած եղեք, եթե օրն անցնի, ես ինքս կշտապեմ ամեն ինչ հայտնել մոգին, որպեսզի որևէ մեկ ուրիշը չկանխի ինձ մեղադրելու»:

72. Օտանեսը տեսնելով, որ Դարեհը զայրանում է, նրան այսպես է պատասխանում. «Քանի որ դու ստիպում ես մեզ շտապել և թույլ չես տալիս հապաղելու, ապա ասա, թե ի՞նչ կերպ մենք կմտնենք արքունիք և կհարձակվենք նրանց վրա: Քանզի ինքդ ևս գիտես, թե այնտեղ պահակներ կան կարգված. եթե դու ինքդ այդ չես տեսել, ապա լսած կլինես այդ

մասին: Ուրեմն ինչպե՞ս կանցնենք դրանց միջով»: Նրան Դարեհը պատասխանում է այսպես. «Քաներ կան, որոնց կարելի է պատասխանել ոչ թե խոսքով, այլ գործով: Քաներ էլ կան, որոնց մասին կարելի է դատողություններ անել, բայց դրանից գործը բոլորովին հստակ չի դառնում: Դուք լավ գիտեք, որ բոլորովին դժվար չէ կարգված պահակների մոտով անցնելը: Քանզի անցնելիս մեզ, այսքան երեքիներիս, մասամբ ակնածանքից, մասամբ վախենալուց, ոչ ոք չի խանգարի: Բացի այդ, ես շատ պատշաճ պատրվակ ունեմ, որով կարող ենք անցնել. կասեմ, որ հոր եմ ժամանել Պարսկաստանից և ուզում եմ թագավորին իմ հորից պատգամ հաղորդել: Պետք է ասել այնտեղ, ուր ասելն անհրաժեշտ է. ասելիս թե ճշմարտություն ասելիս մենք հետապնդում ենք նույն նպատակը: Ստողները այդ տանում են, որպեսզի ստով հասնեն և դրանից օգուտ քաղեն. իսկ ճշմարիտները ձգտում են ճշմարտությամբ օգուտ քաղել և առավել վրա տանության արժանանալ: Այսպիսով, երկու դեպքում ևս մենք նույն նպատակն ենք հետապնդում: Ու եթե ոչ մի օգուտ չլիներ, ապա նույն ձևով ճշմարիտն ասողը կդառնար ստախոս, ինչպես և ստախոսը՝ ճշմարտացի: Արդ, եթե որևէ դռնապան կամովին մեզ թույլ տա անցնելու, ապա նրա համար հետագայում առավել լավ կլինի: Բայց եթե որևէ մեկը փորձի մեզ դիմադրել, ապա մենք նրան կդիտենք իբրև թշնամու: Այսպիսով մենք կմտնենք ներս և գործի կանցնենք»:

73. Այնժամ Գոբրյուեսը ասում է. «Բարեկամներ. այսուհետև ե՞րբ մենք ավելի լավ առիթ կունենանք իշխանությունը նվաճելու և կամ, անհաջողության դեպքում, մեռնելու (հանուն իշխանության): Այժմ մեզ՝ պարսիկներիս վրա իշխում է մեդացին, մոգը, և այն էլ ականջազուրկ: Զեզանից նրանք, ովքեր կանգնած են եղել Կամբյուսեսի մահվան մահճի մոտ, անշուշտ հիշում են, թե նա մահանալիս ինչպե՞ս սպառնաց պարսիկներին, եթե նրանք չփորձեն նվաճել իշխանությունը: Այնժամ մենք չհավատացինք նրան, մտածելով, որ Կամբյուսեսը այդ ամենն ասում է մեզ մոլորեցնելու նպատակով: Ուստի և ես համաձայն եմ Դարեհին և (առաջարկում եմ) շրջվել այլ ուղղակի այս հավաքից գնալ մոգի վրա»: Գոբրյուեսը այսպես ասաց և բոլորը հավանություն տվեցին:

74. Մինչ նրանք այսպես խորհուրդ էին անում, անա թե ինչ դեպք է պատահում: Մոգերը խորհրդակցելով, որոշում են Պրեքսասպեսին դարձնել իրենց բարեկամը, քանի որ նա տուժել էր Կամբյուսեսի դաժանությունից. թագավորը նեռով սպանել էր նրա որդուն. բացի այդ, միայն նա գիտեր Սմերդիսի մահվան մասին, որովհետև ինքն էր սպանել նրան իր իսկ ձեռքով. և, վերջապես, որովհետև Պրեքսասպեսը մեծապես հարգված էր պարսից մեջ: Ահա այս ամենի պատճառով նրանք հրավիրում են Պրեքսասպե-

սին, նրան անվանում են իրենց բարեկամը և հավատարմության երդում վերցնում, որ նա գաղտնի կպահի և ոչ ոքի չի հայտնի պարսից հանդեպ կատարված խաբեությունը, (փոխարենը) խոստանալով նրան ամեն տեսակ բազմաթիվ բնծաներ: Երբ Գրեֆսասպեսը համաձայնվում է, այնժամ մոգերը անում են երկրորդ առաջարկությունը, ասելով, թե իրենք համայն պարսիկներին կգումարեն պարիսպների տակ, իսկ նա կբարձրանա աշտարակի վրա և կհայտարարի, որ նրանց թագավորը իրոք Կյուրոսի որդի Սմերդիսն է և ոչ թե մեկ ուրիշը: Մոգերը այսպես պատվիրում են նրան, քանի որ պարսիկները բոլորից առավել վստահում էին նրան և քանի որ նա բազմիցս հայտարարելով, թե Կյուրոսի որդի Սմերդիսը կենդանի է, ժխտել էր նրա սպանված լինելը:

75. Երբ Գրեֆսասպեսը ասաց, թե համաձայն է այդ ամենը կատարելու, այնժամ մոգերը պարսիկներին կանչել-գումարելով, նրան բարձրացրին աշտարակի վրա և պատվիրեցին խոսել: Այնժամ Գրեֆսասպեսը դիտավորյալ մոռանալով այն ամենը, ինչ մոգերը պատվիրել էին, իր խոսքն սկսեց Աքեմենից և պատմեց Կյուրոսի ծննդաբանությունը: Երբ արդեն վերջում հասավ Կյուրոսին, թվարկեց այն բոլոր բարիքները, որ Կյուրոսը կատարել էր պարսիկների համար, ավարտելով (իր խոսքը), նա հայտնեց ճշմարտությունը: Նա ասաց, թե նախապես թաքցնում էր այդ, քանի որ հայտնելը վտանգավոր էր, մինչդեռ այժմ անհրաժեշտ է բացահայտել ճշմարտությունը: Եվ ահա պատմում է, թե ինչպես Կամբյուսեսը իրեն ստիպել է սպանել Կյուրոսի որդի Սմերդիսին, և թե այժմ թագավորում են մոգերը: Այնուհետև խիստ անիծեց պարսիկներին, եթե նրանք ետ չվերցնեն իշխանությունը և չպատժեն մոգերին, ու գլխիվայր ցած նետվեց աշտարակից: Ահա այսպես մահացավ Գրեֆսասպեսը, որը ամբողջ կյանքում եղել էր արժանավոր այր:

76. Յոթ պարսիկները, որոշած լինելով անհապաղ հարձակվել մոգերի վրա, ասվածներին աղոթելուց հետո, գնացին պալատ, դեռևս անտեղյակ Գրեֆսասպեսի հետ կատարվածից. բայց հանապարհի կեսին նրանք լսեցին Գրեֆսասպեսի հետ կատարվածի մասին: Այնժամ նրանք ետ դարձան և սկսեցին նորից խորհրդակցել: Օտանեսի կողմնակիցները համառորեն խորհուրդ էին տալիս սպասել և, քանի դեռ դրությունը լարված է, չհարձակվել, իսկ Դարեհի կողմնակիցները (խորհուրդ էին տալիս) անհապաղ գնալ և իրենց որոշածը ի կատար ածել առանց հետաձգելու: Մինչ նրանք վիճում էին, հայտնվեցին յոթ զույգ բազեներ, որոնք հետապնդելով մի զույգ ուրուրի, ծվատեցին ու խժռեցին: Տեսնելով այս նշանակը, բոլոր յոթ պարսիկները, քաջալերված հավքերի թռիչքից, ընդունեցին խորհուրդը և ուղղվեցին դեպի արքայական պալատ:

77. Երբ նրանք մոտեցան (պալատի) դարպասներին, կատարվեց այն,

ինչ ենթադրել էր Դարեհը: Պահակները, ակնածելով երեքի պարսիկներից և ոչինչ չկասկածելով նրանց մտադրության մասին, ներս թողեցին: Նրանց ասված էր առաջնորդում և ոչ ոք ոչինչ չհարցրեց: Երբ բակ մտան, նրանց դիմավորեցին թագավորի պատգամատար ներֆինիները, որոնք հարցրին, թե ինչո՞ւ են ժամանել և միաժամանակ հանդիմանեցին դռնապանները, թե ինչո՞ւ են թույլատրել նրանց մտնել: Ներֆինիները արգելեցին յոթին առաջ գնալ: (Դավադիրները) իրար նշան անելով, մերկացրին իրենց դաշույնները և միասին կոտորեցին իրենց արգելողներին, և վազելով դիմեցին դեպի այրերի կացարանը:

78. Իսկ այդ պահին երկու մոգերն էլ գտնվում էին ներսում և քննարկում Գրեֆսասպեսի արարքը: Եվ ահա, նկատելով ներֆինիների շփոթմունքը և (լսելով) նրանց աղաղակը, մոգերը ետ են քաշվում և, արդեն ըմբռնելով կատարվածը, դիմում են զենքի: Նրանցից մեկը շտապեց վերցնել աղեղը, իսկ մյուսը նետվեց դեպի նիզակը: Այստեղ էլ սկսվեց գոտեմարտը: Նա, ով աղեղ էր վերցրել, չէր կարողանում այն գործածել, քանի որ հակառակորդները ընդհուպ մոտեցել և նեղում էին նրանց: Իսկ մյուսը պաշտպանվում էր նիզակով, որով և վիրավորում է Ասպաթինեսին՝ ազդրից. իսկ Ինտափռենեսին՝ աչքից. Ինտափռենեսը, թեև այդ հարվածից չմահացավ, բայց զրկվեց աչքից: Այսպիսով, մոգերից մեկը վիրավորեց նրանց: Իսկ մյուսը, քանի որ նրա աղեղը դարձել էր անպետք, ապաստանում է դեպի այրերի կացարանը տանող սենյակում, և փորձում ետևից փակել դուռը. սակայն նրա հետ ներս են խուժում նաև յոթից երկուսը՝ Դարեհը և Գոբրյուեսը: Մինչ Գոբրյուեսը գոտեմարտում էր մոգի հետ, Դարեհը շվարած կանգնել էր մոտիկ, վախենալով, որ խավարի մեջ ինքը կարող էր հարվածել Գոբրյուեսին: Գոբրյուեսը, տեսնելով, որ Դարեհը կանգնած է անգործ, հարցնում է, թե ինչո՞ւ չի հարվածում: Իսկ սա պատասխանում է. «Վախենում եմ, որ կհարվածեմ քեզ»: Եվ Գոբրյուեսը ասում է նրան. «Խրիր սուրդ թեկուզ և մեր երկուսի մարմինները»: Դարեհը համոզվելով, խրում է դաշույնը և բախտի բերմամբ հարվածում մոգին:

79. Մոգերին սպանելուց հետո, կարում են նրանց գլուխները, մինչդեռ իրենց վիրավորներին թողնում են վայրում, նրանց թուլության, ինչպես նաև միջնաբերդի պահակների պատճառով: Իսկ մնացած ճինգը, վերցնելով իրենց հետ մոգերի գլուխները, դուրս են վազում աղմուկ-աղաղակով, կանչում են մյուս պարսիկներին և նրանց ցույց տալով գլուխները, բացատրում այն, ինչ կատարել են, միաժամանակ սպանելով իրենց առաջ հայտնվող մոգերին: Պարսիկները, լսելով յոթի կողմից կատարվածի և մոգերի խաբեության մասին, որոշում են իրենք ևս նույն կերպ վարվել և, մերկացնելով դաշույնները, սկսում են սպանել մոգերին ամենուր, որտեղ նրանց պա-

տանում էին. և եթե գիշերը վրա չհասներ, մոգերից ոչ մեկին (ողջ) չէին թողնելու: Այդ օրը համայն պարսիկները նշում են որպես մեծագույն տոն և մեծ տոնախմբություն կատարում. իսկ այդ տոնը պարսիկները կոչել են «մոգերի ջարդ»: Այդ տոնին ոչ մի մոգ չի կարող դրսում երևալ, այլ բոլորը մնում են տանը:

80. Երբ խռովությունը դադարեց և արդեն անցել էր հինգ օր, մոգերի դեմ ապստամբածները սկսեցին խորհրդակցել պետական գործերի մասին: Այնտեղ ասվել են հատեր, որոնք հելլեններից ոմանց թվում են անհավանական, բայց և այնպես ասվել են: Այսպես, Օտանեսը խորհուրդ է տվել իշխանությունը հանձնել համայն պարսիկներին: Նա ասել է. «Իմ կարծիքն այն է, որ այսուհետև արևէ մեկը միանձնյա իշխանավոր չլինի. քանզի այդ ոչ հաճելի է, ոչ էլ բարի: Դուք տեսաք, թե ինչին հանգեցրեց Կամբյուսեսի լկտիությունը և զզվելի մոգի լկտիությունը ձեր վրա: Հիրավի, ինչպե՞ս կարող է միապետությունը բարեկարգ լինել, եթե միապետը կարող է անել իր կամեցածը, առանց արևէ պատասխանատվության: Քանզի նման իշխանությունը հայտնիկ աշխարհի լավագույն մարդուն կշեղի նրա համոզմունքներից: Ահա բարիքները նրա մեջ ծնում են անպատկառություն, իսկ նախանձը ի սկզբանե հատուկ է մարդու բնությանը: Այս երկու արատն ունենալով՝ նա բոլոր արատները: Նա շատ չարիք կգործի, մասամբ հագեցած անպատկառությունից, մասամբ էլ նախանձից: Թվում է, թե բռնապետը, ունենալով ամեն բարիք, պետք է անհնախանձ լիներ. այսուհանդերձ, նրա բնույթն այնպիսին է, որ նա հակառակ մտայնությունն է ունենում իր հպատակների հանդեպ: Նա նախանձում է լավագույնների ապահով գոյությանը, սիրում է վատագույն էպոմացիներին և առավելապես ունկնդրում գրպարտություններին: Նրան շատ դժվար է հարմարվել: Եթե նրանով քան արժանվույն հիանաս, զայրանում է, թե բավականաչափ հարգանքի չի արժանանում. իսկ եթե նրան շատ ես հարգում, ապա զայրանում է, թե շողոքորթում ես: Բայց այժմ ես կիսանում առավել վատի մասին. նա խախտում է հայրենի օրենքները, բռնաբարում կանանց և առանց դատի սպանում մարդկանց: Մինչդեռ ժողովրդի[26] իշխանությունը բոլորից լավն է, նախ և առաջ իր իսկ անունով՝ հասարակապետություն[27]. երկրորդ՝ նրանով, որ նա չի կատարում միապետի արարքներից և ոչ մեկը: Պաշտոնները արվում են վիճակահանությամբ, իսկ պաշտոնատարները պատասխանատու են և բոլոր որոշումները հատատում է հանրային ժողովը[28]: Արդ, իմ կարծիքն այն է, որ վերացնենք միապետությունը և իշխանությունը հանձնենք ժողովրդին. քանզի ամեն լավ բան շատի մեջ է»[29]:

81. Օտանեսը, ասա, այսպիսի կարծիք հայտնեց. իսկ Մեգաբյուզոսը խորհուրդ տվեց իշխանությունը հանձնել սակավատիրության: Նա ասաց

այսպես. «Այն ինչ Օտանեսն ասաց բռնապետությանը վերջ տալու մասին, ես նույնպես կկրկնեմ: Բայց իշխանությունը ժողովրդին հանձնելու նրա առաջարկը հեռու է լավագույնը լինելուց. քանզի ոչինչ չկա առավել անմիտ և սանձարձակ, քան անպիտան ամբոխը: Ուստի և մեզ, բռնատիրոջ ամբարտավանությունից խուսափողներիս, անթույլատրելի է ենթարկվել անսանձ ամբոխի ամբարտավանությանը. քանզի բռնապետը գիտե, թե ինչ է անում, իսկ ամբոխը՝ ոչ մի դեպքում: Հիրավի, ամբոխը ի՞նչ գիտակցություն կարող է ունենալ, երբ նա անուս է և իր բարին իսկ չգիտե, այլ միշտ անմտորեն առաջ է նետվում կատաղած հեղեղի նման: Դեմոսի (իշխանությունը) թող կամենան նրանք, ովքեր պարսից համար վատն են ցանկանում: Իսկ մենք, լավագույն այրերի ընտրելով, նրանց կօժտենք իշխանությամբ. նրանց թվում, հարկավ, կլինենք նաև մենք. քանզի լավագույն այրերին հատուկ են լավագույն որոշումները»:

82. Մեգաբյուզոսը, ահա, այսպիսի կարծիք հայտնեց: Երրորդ կարծիքը հայտնեց Դարեհը, ասելով. «Իմ կարծիքով, Մեգաբյուզոսը իրավացի էր ամբոխի մասին խոսելիս, բայց սակավատիրության մասին խոսելիս՝ ոչ: Եթե մենք ընտրություն կատարենք առաջարկված այս երեքի՝ դեմոսի իշխանության, սակավատիրության և միապետության միջև, դրանց լավագույն ձևով, ապա միապետությունը, իմ կարծիքով, գերազանցում է բոլորին: Քանզի չկա առավել լավ բան, քան մեկ լավագույն մարդու իշխանությունը: Նա լավագույնս դատելով, բազմությունը կկառավարի անբասիր կերպով. (այդպիսի իշխանության դեպքում) թշնամու դեմ ընդունված որոշումները կմնան առավել գաղտնի: Մինչդեռ սակավատիրության ժամանակ, եթե նույնիսկ բոլոր սակավները ձգտում են օգուտ բերել պետության, նրանց միջև դարձյալ ծագում է բուռն թշնամանք, քանի որ ամեն մեկը ցանկանում է ինքը լինել գլխավորը և պարտադրել իր կարծիքը. այս էլ նրանց միջև առաջացնում է մեծ թշնամանք, որից և ծագում են խռովություններ, իսկ խռովություններն առաջացնում են սպանություններ, սպանություններն էլ հանգեցնում են մենիշխանության: Այս ամենից պարզ է, որ մենիշխանությունը (կառավարման) լավագույն ձևն է: Դեմոսի իշխանության դեպքում ևս անխուսափելի են արատավոր գործերը. իսկ երբ պետական գործերը դառնում են արատավոր, այդ դեպքում ստոր մարդկանց մեջ թշնամանք չի առաջանում. ընդհակառակը, նրանց մեջ առաջանում է ուժեղ բարեկամություն: Քանզի հասարակության հանդեպ չարագործություն անողները համատեղ են այդպես գործում: Այդպես շարունակվում է մինչև այն ժամանակ, երբ որևէ մեկը, դառնալով դեմոսի առաջնորդ, վերջ է տալիս նրանց: Այդ պատճառով էլ նման մարդն առաջացնում է դեմոսի հիացմունքը և շուտով դառնում միանձնյա տիրակալ: Այս դեպքում ևս պարզ է,

որ մենիշխանությունը (կառավարման) լավագույն ձևն է: Եվ վերջապես, միով բանիվ, որտեղի՞ց մեզ այս ազատությունը և ո՞վ է այն տվել մեզ. դեմո՞սը, սակավատիրությո՞ւնը, թե՞ մենիշխանությունը: Իմ կարծիքն այն է, որ եթե մեզ ազատություն պարգևել է մեկ անձի իշխանությունը, ապա այդ իշխանությունը պետք է պահպանենք և չխախտենք մեր հայրենի բարի սովորույթը. քանզի այդ լավ չի լինի»:

83. Արդ, այսպիսի երեք կարծիք եղավ. իսկ յոթ այրերից մյուս չորսը հարեցին վերջին կարծիքին: Օտանեսը, որը կամենում էր Պարսկաստանում հասարակապետություն հաստատել, տեսնելով, որ իր կարծիքը մերժվեց, այսպես ասաց նրանց. «Ձիճակիցներ. պարզ է, որ մեզանից մեկը կդառնա թագավոր. նա կընտրվի կամ վիճակ գցելով, կամ համայն պարսիկների կողմից ընտրվելով, կամ էլ որևէ մեկ այլ եղանակով: Ես ձեզ հետ չեմ մրցակցի. քանզի չեմ ուզում ո՛չ իշխել, ո՛չ էլ լինել ուրիշի իշխանության տակ. հետևաբար, ես հրաժարվում եմ իշխանությունից այն պայմանով, որ ո՛չ ես, ո՛չ էլ իմ հետնորդները, չենք ենթարկվելու որևէ մեկի իշխանությանը»: Նրա այս խոսքերից հետո բոլոր վեց պարսիկները համաձայնվեցին նրա պայմաններին: Այսպիսով, Օտանեսը չմրցակցեց, այլ մի կողմ քաշվեց. ուստի և նրա տունը այժմ միակ ազատ տունն է Պարսկաստանում և (արքային) ենթարկվում է այնքան, ինչքան ինքն է կամենում, սակայն առանց խախտելու պարսից օրենքները:

84. Իսկ յոթ պարսիկներից վեցը խորհրդակցեցին, թե ինչպե՞ս առավել արդարացի իրենց համար թագավոր կարգեն: Նրանք որոշեցին այսպես. եթե իրենցից որևէ մեկը դառնա թագավոր, ապա նա Օտանեսին և նրա հետնորդներին պարտավոր է ամեն տարի պարգևել մեդական լավագույն զգեստ և պարսից մոտ ընդունված ամենապատվական ընծաներ: Այս ընծաները որոշեցին նրան պարգևել այն պատճառով, որ Օտանեսն առաջինն էր մտածել ապստամբել և նրանց մասնակից դարձնել: Նրանք այսպիսի առանձնաշնորհումներ արեցին Օտանեսին. իսկ բոլոր յոթի համար որոշեցին, որ իրենցից յուրաքանչյուրը կարող է արքունիք մտնել, առանց սենեկապետին[30] հայտնելու, եթե արքան պառկած չէ կնոջ հետ. (որոշեցին նաև), որ թագավորը պետք է իր համար կին վերցնի միայն դավակիցներից որևէ մեկի ընտանիքից. իսկ թագավորական իշխանության մասին որոշեցին հետևյալը. թագավոր կդառնա նա, ում ձին առաջինը կխրխնջա, երբ մենք արևածագին հեծյալ գնալիս լինենք:

ուստի, եթե դու որևէ իմաստուն միջոց գիտես, ապա այնպես արա, որ այդ մրցանակին արժանանամ ես, և ոչ թե մեկ ուրիշը»: Օյքարեսը նրան պատասխանեց այսպես. «Ով տեր. եթե դրանով է որոշվելու քո թագավոր դառնալը կամ չդառնալը, ապա քաջ եղիր և մի անհանգստացիր այդ մասին. քանզի քեզանից առաջ ոչ ոք թագավոր չի դառնա: Ես այդպիսի հնար ունեմ»: Դարեհը նրան ասում է. «Եթե, իրոք, դու այդպիսի մի հնար գիտես, ապա անհապաղ գործադրիր այն, քանի որ մեր մրցությունը պետք է վճռվի վաղ առավոտյան»: Այս լսելով, Օյքարեսը այսպես արեց. գիշերը նա մատակ ձիերից մեկին, որը Դարեհի ձիու առավել սիրելին էր, դուրս բերեց քաղաքից և այնտեղ ամուր կապեց, որից հետո նրա մոտ տարավ Դարեհի ձիուն և սրան շատ անգամներ մատակի շուրջ պտտեցնելուց հետո, վերջապես թույլ տվեց զուգավորվել նրա հետ:

86. Երբ օրը լուսացավ, վեց պարսիկները, ըստ պայմանավորվածության, եկան ձի հեծած: Երբ նրանք դուրս եկան քաղաքից և հասան այն վայրը, որտեղ նախորդ գիշերը կապված էր եղել մատակ ձին, Դարեհի ձիուն գտնելով, խրխնջաց. այդ նույն պահին կայծակ փայլեց ու երկինքը որոտաց: Դարեհին տրված այս նշանները համարվեցին կանխորոշված և, համաձայն պայմանի, հաստատեցին Դարեհի ընտրությունը: Այնժամ մյուսները ցած ցատկեցին ձիերից ու երկրպագեցին Դարեհին:

87. Ոմանք, անա, պատմում են, թե այդ ամենը գաղտնաբար նյութել է Օյքարեսը: Ուրիշներ, դարձյալ, պատմում են նաև, քանզի Պարսկաստանում այդ մասին երկակի են պատմում, թե այս նույն Օյքարեսը մատակ ձիու սեռական գործարանները շոշափելուց հետո ձեռքը պահել է իր անդրավարտիքի մեջ. երբ արդեն արևը ծագել էր և նրանք պետք է հեծյալ ընթանային առաջ, Օյքարեսը դուրս է քաշել իր ձեռքը և այն մոտեցրել Դարեհի ձիու քթածակերին. ձին, զգալով (հոտը), փնչացել ու խրխնջացել է:

88. Այսպես, անա, Հյուստասպեսի որդի Դարեհը հռչակվել է թագավոր և նրան ենթարկվել են, բացի արաբներից[31], Ասիայի բոլոր բնակիչները, որոնց նվաճել էր Կյուրոսը, իսկ հետագայում դարձյալ կամքյուսեսը: Արաբները երբեք պարսից սարկական նպատակության տակ չեղան, այլ դարձան նրանց բարեկամները, կամքյուսեսին ճանապարհ տալով դեպի Եգիպտոս, որտեղ պարսիկները չէին կարող ներխուժել առանց արաբների համաձայնության: Դարեհը կին վերցրեց ամենանայտնի պարսկական տներից: Նա ամուսնացավ Կյուրոսի երկու դստերի՝ Ատոսսայի և Արտյուստոնեի հետ: Ատոսսան նախկինում ամուսնացած էր եղել իր եղբոր՝ Կամքյուսեսի, իսկ հետագայում՝ մոգի հետ, բայց Արտյուստոնեն դեռևս կույս էր: Այնուհետև Դարեհը ամուսնացավ նաև Կյուրոսի որդի Սմերդիսի դստեր հետ, անունը Պարմյուս. ամուսնացավ նաև Օտանեսի դստեր հետ, որը բա-

ցանայտել էր մոգի խաբեությունը: Դարեհն ուներ ամենազոր իշխանություն: Արդ, նախ նա պատրաստեց և կանգնեցրեց բանդակված մի վեմ, որի վրա պատկերված էր հեծյալ այր և փորագրված էր արձանագրություն, որը հնչակում էր հետևյալը. «Դարեհը, Հյուստասպեսի որդին, իր ձիու (հետևում էր անունը), և ձիապան Օյբարեսի առաքինության շնորհիվ տիրացավ պարսից թագավորությանը»:

89. Այդ անելուց հետո նա պարսից տերությունը բաժանեց հսան իշխանությունների, որոնց իրենք անվանում են սատրապություններ[32]: Իշխանությունները հաստատելուց և դրանց վրա իշխաններ կարգելուց հետո, նա ուրիշ հաստատեց, որ պետք է իրեն վճարեին ըստ ազգերի: Յուրաքանչյուր ազգի նա կցեց մերձակա հարևաններին և, բացի այդ, հեռավոր ազգություններին միացրեց այս կամ այն իշխանությանը: Իշխանությունները և ստացվելիք տարեկան եկամուտը նա բաշխեց հետևյալ կերպ. այն իշխանությունները, որոնք պետք է հարկ վճարեին արծաթով, (Դարեհը) հրամայեց հարկը մուծել բաբելոնյան տաղանդի կշռով. իսկ այն իշխանությունները, որոնք պետք է վճարեին ոսկով՝ եգիպտական տաղանդի կշռով: Բաբելոնյան տաղանդը կշռում է եգիպտական յոթանասուն և ութ մինա[33]: Կյուրոսի և, հետագայում, Կամբյուսեսի թագավորության ժամանակ ոչ մի որոշակի հարկ չէր սահմանված, այլ միայն ընծաներ էին մատուցում: Սահմանված այս հարկերի և համանման այլ գործերի համար պարսիկները Դարեհին անվանում են շարշի, Կամբյուսեսին՝ բռնակալ, իսկ Կյուրոսին՝ հայր. քանզի Դարեհը ամեն ինչ վերածեց շարշիության, Կամբյուսեսը դաժան էր և արհամարհող, իսկ Կյուրոսը մեղմ էր և նրանց հանդեպ միշտ բարեգործ:

90. Արդ, հոնիացիներից, Ասիայի մագնեսյաններից, էոլյաններից, կարիացիներից, լյուկիացիներից և միլյուացիներից և պամփյուլիացիներից, քանի որ նրանց բոլորի համար սահմանվել էր մեկ ընդհանուր հարկ, ստացվում էր չորս հարյուր տաղանդ արծաթ: Այս էլ Դարեհը հաստատեց որպես առաջին հանգ[34]: Մյուսիացիներից, լյուդիացիներից, լասոններից, կաբալներից և հյուսենններից (ստացվում էր) հինգ հարյուր տաղանդ. այս էլ երկրորդ հանգն էր: Դեպի հերս նավարկելիս աջակողմյան հելլեսպոնտացիներից, փրյուգիացիներից, Ասիայի թրակացիներից, պափլագոնացիներից, մարիանդիններից և սիրիացիներից (ստացվող) հարկը երեք հարյուր վաթսուն տաղանդ. այս հանգը երրորդն էր[35]: Կիլիկեցիները տալիս էին երեք հարյուր վաթսուն սպիտակ ձի, տարվա յուրաքանչյուր օրվա համար մեկ ձի, և հինգ հարյուր արծաթ տաղանդ, որից հարյուր քառասունը ծախսվում էր Կիլիկյան երկիրը պահպանող հեծելազորի վրա, իսկ երեք հարյուր վաթսունը հասնում էր Դարեհին: Սա չորրորդ հանգն էր:

91. Պոսիդեյոն քաղաքից, որը հիմնել է Ամփիարաոսի որդի Ամփիլոքոսը՝ Կիլիկիայի և Սիրիայի սահմանին, մինչև Եգիպտոս ընկած երկիրը, բացի արաբների երկրից, որը ապահարկ էր, ստացվում էր երեք հարյուր հիսուն տաղանդ հարկ: Այս հանգի մեջ էին ամբողջ Փյունիկիան և Պալեստինյան կոչված Սիրիան և Կիպրոսը: Սա հինգերորդ հանգն էր[36]: Եգիպտոսից և Լիբիայի, Կյուրենեի ու Բարկայի՝ Եգիպտոսին հարած մասերից, որոնք ընդգրկված էին Եգիպտական հանգի կազմում, ստացվում էր յոթ հարյուր տաղանդ, չհաշված Մոյրիս լճի ձկնորսությունից ստացվող արծաթը: Սա այդ արծաթից և իրև հարկ վերցվող ցորենից բացի (այդ երկրից) ստացվում էր յոթ հարյուր տաղանդ: Քանզի Մեմփիսի Սպիտակ բերդում հաստատված պարսիկների և նրանց վարձկանների[37] համար վերցվում էր տասներկու բյուր մեդիմնոս[38] ցորեն: Սա վեցերորդ հանգն էր: Սատրապությունները, գանձարանները, դաղիկները և պարարտությունները համատեղ վճարում էին (տարեկան) հարյուր յոթանասուն տաղանդ հարկ: Սա յոթերորդ հանգն էր[35]: Սուսայից և կիսսիեցիների երկրի մնացած մասից վերցվում էր երեք հարյուր տաղանդ: Սա ութերորդ հանգն էր[40]:

92. Բաբելոնից և մնացյալ Ասորեստանից[41] ստացվում էին հազար տաղանդ և հինգ հարյուր ներքինիացված տղաներ. սա իններորդ հանգն էր[42]: Ագբատանան, Մեդիայի մնացյալ մասը, պարկանները և օրթակորյուբանտիները[43] վճարում էին չորս հարյուր հիսուն տաղանդ. սա տասներորդ հանգն էր[44]: Կասպերը, պավսիկները, պանտիմաթները և դարեյտները մեկ հանգ կազմած, վճարում էին երկու հարյուր տաղանդ: Սա էլ տասնմեկերորդ հանգն էր[45]: Բակտրիացիներից մինչև Այգլերի (երկիրը բնակվողները) վճարում էին երեքհարյուր տաղանդ հարկ. սա տասներկուերորդ հանգն էր[46]:

93. Պակտյուիկեից[47], արմեններից[48] և հարևաններից մինչև Եվքսինյանը[49] ստացվում էր չորս հարյուր տաղանդ. սա տասներեքերորդ հանգն էր: Սագարտիները, սարանգները, թամանները, ուտիները, մյուկերը և Կարմիր ծովում գտնվող կղզիների բնակիչները, որտեղ արքան բնակեցնում է, այսպես կոչված, տեղահանվածներին, այս բոլորը վճարում էին վեց հարյուր տաղանդ հարկ. սա տասնչորսերորդ հանգն էր: Սակերը և կասպերը վճարում էին երկու հարյուր հիսուն տաղանդ. սա տասնհինգերորդ հանգն էր: Պարթևները, քորասմները, սոգդերը և արեյները վճարում էին երեք հարյուր տաղանդ. սա տասնվեցերորդ հանգն էր:

94. Պարիկանիները և Ասիայի եթովպացիները վճարում էին չորս հարյուր տաղանդ. սա տասնյոթերորդ հանգն էր: Մատիենների[50], սասպեյրների[51] և պարոդների[52] վրա սահմանված էր երկու հարյուր տաղանդ հարկ. սա տասնութերորդ հանգն էր: Մոսքերի[53], տիբարենների[54], մակրոնների[55],

մասինոյկների[56] և մարերի[57] վրա սահմանվեց երեք հարյուր տաղանդ (հարկ). սա տասնիններորդ նահանգն էր: Իսկ հնդիկները, լինելով մեզ հայտնի ազգերի մեջ բոլորից առավել մեծաթիվ, պարտավոր էին, մյուսների հետ համեմատած, բոլորից առավել հարկ վճարել՝ երեք հարյուր վաթսուն տաղանդ ոսկե ավազ. սա քառասներորդ նահանգն էր[58]:

95. Արդ, բաբելոնյան արծաթ (տաղանդները) եթե վերածենք եվրեական, ապա գումարը կլինի ինը հազար ութ հարյուր ութսուն տաղանդ, իսկ եթե ոսկին ևս հաշվենք տասներեք անգամ ավելի թանկ, ապա ոսկե ավազի արժեքը կլինի չորս հազար վեց հարյուր ութսուն եվրեական տաղանդ: Այսպիսով, Դարեհի ստացած ամենամյա հարկի ընդհանուր քանակը կազմում էր տասնչորս հազար հինգ հարյուր վաթսուն եվրեական տաղանդ. իսկ առավել փոքր եկամուտները ես չեմ նշում:

96. Սա այս հարկերն էին գալիս Դարեհին Ասիայից և Լիբիայի մի փոքր հատվածից: Ժամանակ անց հարկ է ստացվում նաև կղզիներից ու Եվրոպայում մինչև Թեսալիա ապրողներից: Այս հարկն արքան կուտակում է հետևյալ կերպ. մեռաղը ձուլելով, այն լցնում է կավե կարասների մեջ և լցնելուց հետո չարդում կավամանը: Դրամի կարիք ունենալու դեպքում հատում է դրանից այնքան, ինչքան ամեն անգամ իրեն անհրաժեշտ է:

97. Այսպիսի էին այդ իշխանությունները և դրանց վրա նշանակված հարկերը: Միայն Պերսիս երկիրը ևս չնիշատակեցի որպես հարկատու. քանզի պարսիկները բնակվում են ապահարկ երկրում: Իսկ այն երկրները, որոնք ոչ մի հարկ չէին վճարում, մատուցում էին ընծաներ: Սրանցից են՝ Եգիպտոսի սահմանակից եթովպացիները, որոնց նվաճել էր Կամբյուսեսը՝ երկարակյաց եթովպացիների դեմ արշավելիս, այնուհետև՝ Նյուսե արքազան երկրում բնակվողները, որոնք տոնում են Դիոնիսոսի տոները. այս եթովպացիները և նրանց հարևանները նույն ծագումն ունեն, ինչ հնդիկ կալլանդիները. նրանք ապրում են գետնափոր տներում: Այս երկուսը միասին յուրաքանչյուր երեք տարին (արքային) ընծա բերում էին, մինչև հիմա ևս բերում են, երկու քոյնիկս[59] բնական ոսկի, եբենույա երկու հարյուր գերան, եթովպացի հինգ տղա և փղի քառն խոշոր ժանիք: Նույնիսկ կոլխերը և նրանց հարևանները՝ մինչև Կովկաս լեռը, քանզի մինչև այդ լեռը տիրում են պարսիկները, իսկ Կովկասից հյուսիս (ընկած երկիրը) հաշվի չի առնում պարսիկներին, նույնպես հարկ տալիս են ընծաներ մատուցելու ձևով: Արդ, նրանք ցարդ ևս հինգ տարին մեկ արքային իբրև ընծա ուղարկում են հազար տղա և հարյուր աղջիկ: Արաբները ևս ամեն տարի ուղարկում են հազար տաղանդ խունկ: Այս ընծաները նրանք ուղարկում են հարկերից բացի:

98. Այս առատ ոսկին, որի մի մասը արքային հնդիկներն ուղարկում են

վերոհիշյալ ոսկե ավազի տեսքով, նրանք ստանում են հետևյալ կերպ: Հնդկական երկրի արևելյան մասը ավազային է: Ինչքան որ ես հասատաս գիտեմ իմ լսածներից, հնդիկները Ասիայի ժողովուրդների մեջ բոլորից արևելք ապրողներն են. քանզի Հնդկաստանից արևելք ավազուտ անապատ է: Հնդիկ ցեղերը բազմաթիվ են և այլալեզու: Նրանց մի մասը վաչկատուն է, մյուսը՝ ոչ: Նրանց մի մասը ապրում է գետի հոսանքներում ձկնորսելով, որ ուտում են եղեգնյա մակույկներով: Ամբողջ մակույկը պատրաստում են եղեգի մեկ ծնկից: Այս հնդիկները հագնում են եղեգնյա զգեստներ: Նրանք եղեգը գետից քաշելուց հետո, կտրատում են և խսիրի նման հյուսելով, հագնում լանջապանակի նման:

99. Մյուս հնդիկները, որոնք բնակվում են սրանցից արևելք, վաչկատուն են և սնվում են հում մսով: Սրանք կոչվում են պադայներ և, ինչպես պատմել են, այսպիսի սովորություններ ունեն: Եթե նրանցից որևէ մեկը, այր թե կին, հիվանդանում է, երբ այր է, ապա նրան սպանում են նրա մերձավորագույն այր ընկերները, ասելով, թե նրան տանջող հիվանդությունը նրա միսը ոչնչացնում է իրենց համար: Թեև նա ժխտում է իր հիվանդ լինելը, բայց նրանք, չանսալով նրա խոսքերին, սպանում են նրան և ուտում: Եթե հիվանդացողը կին է, ապա նրա մերձավորագույն բարեկամուհիները նրա հետ վարվում են նույնպես, ինչպես և այրերը: Ինչ վերաբերում է ծերության հասածին, ապա նրան զոհաբերելուց հետո, ուտում են. բայց ծերության տարիքին հչերն են հասնում, քանի որ հիվանդներին արդեն նախապես սպանում են:

100. Կան նաև ուրիշ հնդիկներ, որոնց ապրելակերպը այլ է. նրանք չեն սպանում ոչ մի շնչավորի, ո՛չ ցանում են, ո՛չ էլ սովոր են բնակարան կառուցելու և խոտաճարակ են: Նրանց մոտ ինքնաբերաբար աճում է (մի բույս), որի հատիկները պատիճի մեջ կորեկի մեծության են լինում: Նրանք հավաքում են այն պատիճի հետ, եփում և ուտում: Եթե նրանցից որևէ մեկը հիվանդանա, ապա նա գնում է անապատ և այնտեղ պառկում. ոչ ոք չի հոգում մահացածի կամ հիվանդի մասին:

101. Այս հնդիկները, որոնց մասին ես խոսեցի, բացահայտ խառնակվում են, անասունների նման: Նրանց բոլորի մաշկի գույնը միատեսակ է, նման եթովպացիների (մաշկին): Նրանց սերմը ևս, որով նրանք բեղմնավորում են կանանց, սպիտակ չէ, ինչպես մյուս մարդկանց մոտ, այլ սև՝ իրենց (մաշկի) գույնին: Այդպիսին է նաև եթովպացիների սերմը: Այս հնդիկները բնակվում են առավել հեռու պարսիկներից, դեպի հարավ, և երբեք չեն հպատակվել Դարեհ արքային:

102. Ուրիշ հնդիկներ էլ սահմանակից են Կասպատյուրոս քաղաքին ու Պակտյուիկե երկրին և բնակվում են մյուս հնդիկներից հյուսիս: Սրանց

ապրելակերպը նման է բակտրիացիների (ապրելակերպին): Սրանք բոլոր հնդիկներից առավել ռազմասեր են և սրանց է հանձնարարված ոսկու ձեռքբերումը: Քանզի նրանց երկիրը անապատ է ավազի պատճառով: Այդ անապատի ավազներում մրջյուններ են լինում, որոնք թեև շներից փոքր են, բայց աղվեսներից խոշոր: Նրանցից մի քանի հատ կան պարսից արքայի մոտ, որոնք բռնվել են որսի ժամանակ: Այդ մրջյուններն իրենց բույնը փորում են գետնի տակ, ավազը այնտեղից դուրս գցելով նիշա այնպես, ինչպես Հելլադայի մրջյունները, որոնց արտաքինով շատ են նման. իսկ դուրս բերված այդ ավազը ոսկեբեր է: Այդ ավազի համար էլ հնդիկները գնում են անապատ, յուրաքանչյուրը երեք ուղտ լծած. կողքերին՝ երկու որձ ուղտ, որոնք քաշում են երկու կողմից, իսկ մեջտեղում՝ էգ ուղտ. սրա վրա էլ հրդիկը նստում է, ընտրելով այնպիսին, որը հանգիստ է և նոր է անչատվել ձագից: Նրանց ուղտերը պակաս արագավազ չեն, քան ձիերը և, բացի այդ, կարող են ավելի շատ բեռ տանել:

103. Ես չեմ նկարագրի, թե ինչպիսի՞ն է ուղտի արտաքին տեսքը, քանի որ այն հայտնի է հելլեններին. իսկ այն, ինչ նրանք չգիտեն նրա մասին, ես կասեմ: Ուղտի եռին սրունքներն ունեն չորս ազդրոսկր և չորս ծնկաթոզ. իսկ սեռական գործիքը, որը գտնվում է եռին սրունքների միջև, ուղղված է դեպի պոչը:

104. Այս ձևով և այսպիսի լծասարքով հնդիկները արշավում են հանուն ոսկու, այն հաշվով, որ (ոսկու) ավարը ձեռք բերելու համար տեղ հասնեն ամենաշոգ ժամանակ. քանզի մրջյունները շոգ ժամանակ անհետանում են գետնի տակ: Այդ մարդկանց երկրում արևն առավել կիզիչ է առավոտյան, ոչ թե կեսօրին, ինչպես այլ երկրներում, այլ արևածագից մինչև շուկայի ցրվելը: Ճիշտ այդ ժամին էլ արևը շատ ավելի կիզիչ է, քան կեսօրին՝ Հելլադայում. պատմում են, թե այնժամ մարդիկ ջրով թրջում են իրենց: Օրվա կեսին Հնդկաստանում արևը այրում է այնպես, ինչպես նաև այլոց մոտ, իսկ կեսօրից հետո նրանց մոտ արևը լինում է այնպես, ինչպես այլոց մոտ առավոտյան, և հետանալիս՝ դառնում է առավել սառը, մինչև մայր մտնելը, երբ ամբողջովին ցրտում է:

105. Հնդիկները այդ վայրը գալիս են պարկերով և դրանք լցնելով այդ ավազով, իսկույն վերադառնում են: Քանզի, ինչպես պարսիկները պատմում են, մրջյունները հոտից զգալով, ընկնում են նրանց հետևից: Արագությամբ ոչ մի կենդանի չի կարող հասնել նրանց. այնպես, որ եթե հնդիկները չկանխեն այդ մինչև մրջյունների հավաքվելը, ապա նրանցից ոչ ոք չի փրկվի: Արդ, որձ ուղտերին, քանի որ դրանք էգերից ավելի դանդաղ են վազում և շուտ հոգնում, արձակում են մեկ առ մեկ (և թողնում մրջյունների առաջ): Մինչդեռ էգերը, մտաբերելով իրենց թողած ձագերին,

երբեք չեն հոգնում: Ըստ պարսիկների պատմածի, հնդիկները ոսկու մեծ մասը ձեռք են բերում այս եղանակով, իսկ առավել նվազ մեկ այլ մասը ստանում են ընդերքը փորելով:

106. Օյկումենեի ծայրագույն հատվածներին վիճակվել են լավագույն բարիքները, մինչդեռ Հելլադային վիճակվել է բոլորից լավ եղանակը: Ինչպես ինձ առաջ ասացի, դեպի արևելք ամենաճոխավոր երկիրը Հնդկաստանն է: Այնտեղ բոլոր շնչավորները, շարքոտանի թե թռչուն, շատ ավելի խոշոր են, քան մյուս երկրներում, բացի ձիերից, որոնք ավելի փոքր են Նեսեական կոչված մեդական ձիերից: Այնտեղ կա նաև անհաշիվ ոսկի, որը մասամբ ձեռք են բերում հողը փորելով, մասամբ այն բերում է գետը, մասամբ էլ կորզում են իմ նկարագրած եղանակով: Այնտեղ կան վայրի ծառեր, որոնք տալիս են բուրդ[60], ավելի գեղեցիկ և ամուր, քան ոչխարի բուրդը: Հնդիկներն իրենց զգեստները պատրաստում են այս ծառերի բրդից:

107. Իսկ հարավում մարդաբնակ բոլոր երկրներից առավել հեռավորը Արաբիան է: Այն միակ երկիրն է, որտեղ աճում են խունկ, զմուռս, կասիա[61], կինամոն և կենդրուկ: Այս ամենը, զմուռսից բացի, արաբները ստանում են դժվարությամբ: Նրանք խունկը հավաքում են ստյուրաքս[62] կիզելով, որը Հելլադա արտահանում են փյունիկեցիները: Կիզելով այն, նրանք ստանում են (խունկը). քանզի խնկաբեր ծառերը պահպանում են փոքր և խայտաճամուկ թևավոր օձեր, որոնք մեծ թվով (ծվարում են) ,ուրաքանչյուր ծառի վրա: Սրանք հարձակվում են նաև Եգիպտոսի վրա[63]: Այդ ծառերից դրանց ոչ մի կերպ չի կարելի հեռացնել, բայց միայն ստյուրաքսի ծխի միջոցով:

108. Արաբները ասում են նաև, թե ամբողջ երկիրը կլցվեր այս օձերով, եթե նրանց հետ չկատարվեր այն, ինչ, ինչպես հայտնի է, կատարվում է իժերի հետ: Աստվածային նախախնամությունն ի բնե իմաստուն լինելով, վախկոտ և ուտելի բոլոր կենդանիներին ստեղծել է բազմածին, որպեսզի ուտվելու պատճառով դրանք չպակասեն. մինչդեռ գիշատիչներին և վնասաբերներին՝ սակավածին: Այսպես, նապաստակին ուսում են բոլոր գազանները, և՛ հավքերը, և՛ մարդը, որի համար էլ նա բազմածին է: Այն բոլոր կենդանիների մեջ միակն է, որը կրկնակի հղիանում է. ուսի և նրա արգանդում մի ձագը մազակալած է, երկրորդը՝ մերկ, երրորդը սաղմից նոր է կազմավորվում, իսկ չորրորդը նոր է սաղմնավորվում: Այս կենդանին, աճա, այսպիսին է: Մինչդեռ էգ առյուծը, որն ամենաուժեղը և ամենակատաղին է, կյանքում մեկ անգամ մեկ ձագ է ծնում. քանզի ծնելիս նա, նորածնի հետ, արտանետում է նաև իր արգանդը, իսկ դրա պատճառը հետևյալն է: Երբ ձագը մոր արգանդում սկսում է խաղալ, պատառոտում է այն իր ճանկերով, որոնք շատ ավելի սուր են, քան մյուս բոլոր գազան-

ների (ճանկերը), և ինչքան աճում է, այնքան ավելի է պատառոտում արգանդը: Երբ արդեն մոտենում է ծնվելու պահը, արգանդում առողջ մաս չի լինում:

109. Ճիշտ այդպես էլ, եթե իժերը և Արաբիայի թևավոր օձերը ծնվելին իրենց բնույթին համապատասխան, ապա մարդկանց համար ապրելն անհնար կլիներ: Սակայն, երբ իժերը զուգավորվում են և արուն սկսում է իր սերմը բաց թողնել, այնժամ էգը կառչում է նրա վզից և կրծոտելով խեղդում իժին: Որը, անա, սատկում է այս կերպ, իսկ էգը պատժվում է՝ որձին սատկեցրած լինելու համար, քանի որ ձագերը դեռևս մոր փորում վրեժ են լուծում հոր համար: Նրանք կրծոտում են մոր արգանդը՝ դուրս գալու ճանապարհ բացելով: Մյուս օձերը, որոնք վնասակար չեն մարդկանց համար, ձու են ածում և շատ ձագեր հանում: Իժերը տարածված են ամբողջ երկրով մեկ, մինչդեռ թևավոր օձերը մեծ թվով լինում են Արաբիայում և ուրիշ ոչ մի երկրում. այդ պատճառով իսկ կարծում են, թե դրանք շատ են:

110. Արաբները խունկը ստանում են վերոհիշյալ եղանակով, իսկ կասիան՝ հետևյալ կերպ: Նրանք իրենց ամբողջ մարմինը և դեմքը, բացի աչքերից, կապում են եզան և այլ մորթիներով ու գնում կասիա ձեռք բերելու, որը աճում է ոչ խորը լճում: Այդ լճում և դրա շուրջ ապրում են թևավոր գազաններ, որոնք շատ նման են չղջիկների: Այդ գազանները բարձր ճչում են և անընդհատ հարձակվում: Նրանցից պետք է պաշտպանել աչքերը և այդպիսով քաշել կասիան:

111. Իսկ կինամոնը նրանք հավաքում են առավել զարմանալի եղանակով: Թե որտե՞ղ է այն բուսնում և ինչպիսի՞ հողով է այն սնվում, նրանք[64] ոչինչ չեն կարող պատմել: Ոմանք ասում են, գուցե և խելացի, թե կինամոնը աճում է այն վայրերում, որտեղ մեծացել է Դիոնիսոսը: Նրանք պատմում են, թե խոշոր թռչուններ կան, որոնք բերում են այդ շոր կեղևները, որ փյունիկեցիներից սովորելով, մենք կոչում ենք կինամոն: Թռչուններն այդ կեղևները բերում են իրենց կավանչուս բները, որոնք գտնվում են մարդկանց համար անմատչելի սարավանդներում: Արդ, արաբները այդ (կինամոնը) ձեռք բերելու համար հետևյալ հնարքն են մտածել: Սատկած եզների, էշերի և այլ լծկանների դիակները հնարավորին չափ խոշոր կտորների կտրատելով, բերում են այդ վայրերը և դրանք հետում բերի մոտ ու հեռանում: Այնժամ թռչունները ցած են թռչում և լծկանների կտորները տանում իրենց բները: Բայց բները, չդիմանալով այդքան ծանրության, քանդվում են և ընկնում ցած, իսկ արաբները վերադառնում են և հավաքում դրանք: Այսպես, անա, հավաքելով կինամոնը, նրանք այն արտահանում են ուրիշ երկրներ:

112. Իսկ կնդրուկը[65], որն արաբներն անվանում են լադանոն, ստացվում է առավել զարմանալի եղանակով: Թեև այն ամենագարշահոտ տեղերում է լինում, բայց ամենաբուրումնավետն է: Այն գտնվում է նոխազների մռուքի մեջ, որտեղ այն աճում է՝ ինչպես խեժը ծառի վրա: Այն օգտագործում են բազմապիսի բուրավետ քսուկներ պատրաստելու համար. իսկ արաբներն այն օգտագործում են առավելապես ծխարկման համար:

113. Բուրանյութերի մասին ասվածը բավական է: Արաբական երկրից ճիանալի բուրմունք է գալիս: Այդ երկրում կա նաև ոչխարների երկու զարմանալի տեսակ, որ ոչ մեկ այլ երկրում չի պատահում: Դրանցից մի տեսակն ունի երկար պոչ, երեք կանգունից ոչ պակաս: Եթե թողնեն այդ ոչխարներին քարշ տալ իրենց պոչերը, ապա հողին քսվելուց պոչերը խոցերով կծածկվեն: Բայց ամեն մի հովիվ ատաղձագործություն գիտե այնքան, որ փոքրիկ քարշակներ պատրաստելով, դրանք կապում է ոչխարների պոչի տակ: Այսպիսով, ամեն մի ոչխարի պոչի տակ կապված է այդպիսի մի քարշակ: Ոչխարների մյուս տեսակի պոչերն ունենում են նույնիսկ մեկ կանգուն լայնք:

114. Հարավ-արևմուտքում բնակեցված ամենաճեռավոր երկիրը Եթովպիան է: Այս երկրում առատ ոսկի կա. այստեղ կան նաև նշակ փղեր և բազմապիսի վայրի ծառեր և եղեգներ, իսկ մարդիկ այնտեղ ամենաբարձրահասակն են, ամենագեղեցիկը և ամենաերկարակյացը:

115. Արդ, Ասիայում և Լիբիայում ամենաճեռավոր երկրները սրանք են. իսկ Եվրոպայի արևմուտքում գտնվող ամենաճեռավոր երկրի մասին որոշակի ոչինչ չեմ կարող ասել: Ես չեմ ընդունում, որ կա բարբարոսների կողմից էրիդանոս կոչված մի գետ, որը (իբր) թափվում է Հյուսիսային ծով և որտեղից, ինչպես պատմում են, բերվում է սաթը: Ես չգիտեմ նաև Անգլիի կղզիների գոյության մասին, որտեղից մեզ մոտ անագ են բերում: Քանզի իմքը՝ էրիդանոս անվանումը նաստատում է, որ այն հելլենական է և ոչ թե բարբարոսական, և բանաստեղծներից մեկի հնարանքն է: Բացի այդ, հակառակ իմ բոլոր ջանքերին, ես չկարողացա ոչ մի ականատեսից պարզ իմանալ, թե Եվրոպայից այն կողմ ծով կա: Բայց գիտեմ, որ անագը և սաթը մեզ մոտ բերվում է շատ հեռավոր վայրից:

116. Ըստ երևույթին, Եվրոպայի հյուսիսում շատ առատ ոսկի կա: Բայց թե ինչպե՞ս են այն ձեռք բերում, ես դարձյալ որոշակի ոչինչ ասել չեմ կարող: Պատմում են, թե այն անգղարծիվներից խլում են միականի մարդիկ՝ արիմասպները: Բայց ես չեմ հավատում, թե կարող են լինել միականի մարդիկ, որոնք մնացած ամեն ինչում իրենց բնույթով նման են բոլոր մարդկանց: Այսուհանդերձ, թվում է, թե երկրի ամենաճեռավոր մասե-

ռում, որոնք եզերում են ամբողջ երկիրը, կան այնպիսի նյութեր, որոնք մեզ համարում են հույժ գեղեցիկ և հազվագյուտ:

117. Ասիայում կա մի դաշտավայր, բոլոր կողմերից լեռներով շրջափակված, իսկ այդ լեռներով անցնում են հինգ նեղ կիրճեր: Այս դաշտավայրը հնում պատկանել է հոռոմներին և գտնվում է նույն հոռոմների, հյուրկանների, պարթևների, սարանգների և թամանների սահմաններում: Պարսից իշխանության հաստատումից հետո այն արդեն պատկանում է (պարսից) արքային: Արդ, դաշտավայրը շրջափակող լեռից հոսում է մի մեծ գետ, որի անունն է Ակես: Այս գետը, բաժանված լինելով հինգ թևի, հնում յուրաքանչյուր թևով ոռոգում էր վերոհիշյալ ժողովուրդներից յուրաքանչյուրի երկիրը, քանի որ ամեն մի կիրճից մի թև էր հոսում: Բայց պարսից իշխանության տակ ընկնելուց հետո այդ երկրների վիճակը այսպիսին եղավ: Արքան լեռների այդ կիրճերը փակելով, յուրաքանչյուր կիրճում (ջրարգելակ) դռներ շինեց: Այս պատճառով էլ ջրի ելքը փակվեց և լեռներով շրջափակված դաշտավայրը դարձավ լիճ, քանի որ դաշտավայր մտնող գետը ոչ մի ելք չուներ: Արդ, նրանք, ովքեր հնում օգտագործում էին այդ ջուրը (ոռոգման համար), այժմ դրանից զրկված լինելով, մեծ աղետի մեջ ընկան: Քանզի ձմռանը ասված նրանց անձրև է պարգևում, ինչպես և մյուս մարդկանց, բայց նրանց ցանած կորեկը և ինջուրը ջրի կարիք ունեն ամառանը: Ու քանի որ նրանց ոչ մի ջուր չի տրվում, ապա նրանք իրենց կանանց հետ միասին գալիս են Պարսկաստան և, կանգնելով արքայի դռների առաջ, աղաղակում են ողբագին, մինչև որ արքան հրամայում է (ջրարգելակ) դռները բաց անել դեպի ջրի առավել կարիք ունեցողների կողմը: Երբ սրանց հողերը լիովին հագեցնում են, արքան հրամայում է բաց անել մյուս դռները նրանց համար, ովքեր արդեն այժմ մյուսներից ավելի (ջրի) կարիք ունեն: Ինչպես ես լսել և իմացել եմ, (ջրարգելակ) դռները բացելու համար (արքան), հարկերից բացի, մեծ գումարներ է վերցնում[67]:

118. Այս ամենն այսպես է: Իսկ մոգի դեմ ապստամբած յոթ այրերից մեկը՝ Ինտափռենեսը, ապստամբությունից անմիջապես հետո սպանվում է իր ցուցաբերած զոռոզության պատճառով: Նա կամենում է մտնել արքունիք, թագավորի հետ խորհրդակցելու համար: Հիրավի, կարգ էր սահմանված, որ մոգի դեմ ապստամբածները կարող էին ազատորեն մտնել թագավորի մոտ, առանց նախապես հայտնելու, եթե թագավորը կնոջ հետ պառկած չէր լինում: Այդ պատճառով էլ Ինտափռենեսը, քանի որ այդ յոթից մեկն էր, իրեն իրավունք էր վերապահում հերս մտնել առանց նախազգուշացման: Բայց պահակապետն ու լրաբերը[68] նրան չեն թույլատրում, ասելով, թե թագավորը պառկած է կնոջ հետ: Իսկ Ինտափռենեսը կարծելով,

թե նրանք ատում են, մերկացնում է (իր) ակինակեն[69] և կտրում նրանց քիթերն ու ականջները, և դրանք շարելով իր ձիու երասանին, այն կապում է (տուժածների) վզից և հեռանում:

119. Սրանք ներկայանում են արքային և հայտնում, թե ի՞նչ պատճառով են այսպես տուժել: Իսկ Դարեհը վախենալով, որ այդ ամենն ընդհանուր համաձայնությամբ կատարել են վեցը միասին, նրանցից յուրաքանչյուրին առանձին-առանձին հարցում է ուղարկում, թե արդյոք նրանք հավանություն տալի՞ս են կատարվածին: Համոզվելով, որ Ինտափռենեսն այդ կատարել է առանց նրանց (հավանության), Դարեհը խիստ կասկածելով, թե նա իր ազգականների հետ ապստամբություն է նյութում իր դեմ, ձերբակալում է նրան, նրա որդիներին և բոլոր ազգականներին ու բանտարկում որպես մահապարտների: Բայց Ինտափռենեսի կինը հանախակի գալիս է արքայի դուռը և լալիս ու ողբում: Ու քանի որ նա միշտ նույն բանն էր անում, ապա Դարեհը համաձայնվում է գթալ նրան և նրա մոտ է ուղարկում բանբեր՝ հետևյալն ասելու. «Ով կին. Դարեհն արքան քեզ շնորհում է քանտարկված քո հարազատներից մեկի փրկությունը, քո ընտրությամբ»: Կինը մտածելուց հետո, այսպես է պատասխանում. «Եթե արքան շնորհում է ինձ միայն մեկի կյանքը, ապա ես կընտրեմ իմ եղբորը»: Լսելով այս, Դարեհը զարմանում է և պատվիրում հարցնել նրան հետևյալը. «Ով կին. արքան հարցնում է քեզ, թե ի՞նչ նպատակով դու քո ամուսնուն և որդիներին թողած, նախընտրում ես փրկել քո եղբորը, որն առավել օտար է քեզ, քան քո որդիները և պակաս սիրելի, քան քո ամուսինը»: Իսկ կինը պատասխանում է այսպես. «Ով արքա. եթե ասված կամի, ես կարող եմ ունենալ ուրիշ ամուսին և ուրիշ որդիներ ևս, եթե սրանց կորցնեմ: Բայց քանի որ հայրս ու մայրս արդեն կենդանի չեն, ես ոչ մի կերպ այլևս ուրիշ եղբայր չեմ ունենա: Անա այս նկատառումով էր, որ ես այդպես խրախուսեցի քեզ»: Այս կնոջ խոսքը հաճո թվաց Դարեհին և նա ազատ արձակեց նրա եղբորը, որի մասին նա խնդրել էր, ինչպես նաև համակրելով այդ կնոջը՝ նաև նրա ավագ որդուն. իսկ մնացած բոլորին ենթարկեց մահվան: Այսպիսով, յոթ պարսիկներից մեկը շուտով կործանվեց վերոհիշյալ եղանակով:

120. Իսկ Կամբյուսեսի ախտահարման ժամանակ անա թե ինչ է պատահել: Կյուրոսը Սարդեսի հյուպարքոս կարգել էր պարսիկ Օռոյտեսին: Այս մարդը մտադրվում է կատարել զազրելի մի արարք՝ բռնել ու կորստի մատնել Պոլյուկրատես սամոսցուն, թեև ինքը նրանից ոչ մի վնաս չէր կրել, ոչ իսկ որևէ վատ խոսք լսել և նույնիսկ երբեք չէր տեսել նրան: Շատերը ասում են, թե նա այդ մտադրությունն ունեցել է հետևյալ պատճառով: Մի անգամ արքունի պալատի դռան առաջ նստած են լինում Օռոյտեսը և մեկ

ուրիշ պարսիկ, անունը՝ Միտրոբատես, որը Դասկիլեյա[70] նահանգի կառավարիչն էր: Երբ սրանց զրույցը փոխվում է վեճի այն մասին, թե իրենցից ո՞վ է առավել առաքինի, այնժամ Միտրոբատեսը մեղադրում է Օրոյտեսին, ասելով. «Դու էլ իբր մարդու հաշիվ ես, բայց չկարողացար արքայի համար նվաճել նահանգին մոտիկ գտնվող Սամոսը, մինչդեռ այդ կղզին հեշտ էր նվաճել, քանի որ ոմն տեղաբնիկ տասնհինգ հոպլիտներով[71] ապստամբել էր (Սամոսի իշխանության դեմ) և, գրավելով այն, մինչև հիմա էլ իշխում է այնտեղ»[72]: Արդ, ոմանք ասում են, թե Օրոյտեսը, լսելով այս մեղադրանքը և զայրանալով այդ կշտամբանքից, ցանկացել է ոչ այնքան վրեժ լուծել անարգողից, որքան ամեն կերպ կործանել Պոլյուկրատեսին, որի պատճառով ինքն այդպիսի մեղադրանք էր լսել:

121. Իսկ ոմանք էլ պատմում են, թե Օրոյտեսը բանբեր է ուղարկել Սամոս՝ ինչ-որ բան խնդրելու, բայց թե ի՞նչ, այդ մասին չեն պատմում: Այդ պահին Պոլյուկրատեսը ընկողմանած է լինում այրերի հարկաբաժնում, իսկ նրա մոտ եղել է Անակրեոն Տեոսցին[73]: Պոլյուկրատեսը արդյո՞ք կանխամտածված ուզեց ցուցադրել իր արհամարհանքը Օրոյտեսի հանդեպ, թե՞ այն պատահաբար եղավ, այնուամենայնիվ, երբ Օրոյտեսի բանբերը ներս մտնելով դիմում է նրանց, ապա Պոլյուկրատեսը, որը պառկած էր դեմքը դեպի պատը դարձրած, ո՛չ շրջվում է դեպի բանբերը, ո՛չ իսկ պատասխան տալիս նրան:

122. Անա այսպիսի երկու պատում հաղորդում են Պոլյուկրատեսի կործանման մասին. ամեն ոք իրավունք ունի հավատալու դրանցից իր ցանկացածին: Ինչևէ, Օրոյտեսը, որի նստավայրը Մեանդրոս գետի վրա գտնվող Մագնեսիան էր, լյուդիացի Մյուրսոսին, Գյուգեսի որդուն, որպես լրաբեր ուղարկում է Սամոս, Պոլյուկրատեսի մոտ, քանի որ արդեն տեղյակ էր նրա մտադրությանը: Քանզի Պոլյուկրատեսը, ինչքան մեզ հայտնի է, առաջինն էր հելլեններից, որը մտադրվեց ծովերի տերը դառնալ, եթե չհաշվենք Կնոսոսի (արքա) Մինոսին[74] և այլոց, որոնք նրանից էլ առաջ իշխել էին ծովում: Մարդկային սերունդ կոչվածներից Պոլյուկրատեսը առաջինն էր, որը մեծ հույսեր ուներ Հոնիայում և կղզիներին տիրելու: Արդ, իմանալով նրա այս մտադրության մասին, Օրոյտեսը նրա մոտ բանագնաց է ուղարկում՝ հետևյալն ասելու. «Օրոյտեսը Պոլյուկրատեսին այսպես է ասում. ես լսել եմ, որ դու մտածում ես մեծ գործեր կատարել, բայց դրա համար միջոցներ չունես: Արդ, եթե դու կատարես իմ խորհուրդը, և՛ ինքդ բարվոք կլինես, և՛ ինձ կփրկես: Քանզի Կամբյուսես արքան իմ մահն է ելնում և այդ ինձ պարզորոշ հայտնի է: Արդ, դուրս բեր ինձ և իմ գանձը, դրա մի մասը վերցրու քեզ, մյուս մասը թող ինձ: Այդ փողերով դու կարես համայն Հելլադային: Եթե դու չես հավատում իմ ունեցած հարստությանը, ապա ուղարկիր (ինձ մոտ) քո ամենահավատարիմ մարդուն և ես (այդ ամենը) ցույց կտամ նրան»:

123. Այս լսելով, Պոլյուկրատեսը հոժարեցավ և համաձայնվեց: Եվ քանի որ նա դրամի խիստ կարիք ուներ, նախապես ուղարկում է այդ գանձերը տեսնելու իր քաղաքացիներից մեկին՝ Մեանդրիոսի որդի Մեանդրիոսին, որն իր գրագիրն էր: Այս մարդն էլ ոչ շատ ժամանակ անց Հերայի տաճարին նվիրաբերեց Պոլյուկրատեսի այրանոցում եղած ամբողջ տեսարժան զարդերը: Իսկ Օրոյտեսը տեղեկանալով, որ լրտես է ժամանելու, արեց հետևյալը: Ուր սնդուկ, համարյա մինչև եզրերը, լցրեց քարերով, իսկ քարերը ծածկեց ոսկով ու, կապելով սնդուկները, պատրաստ սպասեց: Մեանդրիոսը գալով ու տեսնելով սնդուկները, այդ մասին հաղորդեց Պոլյուկրատեսին:

124. Իսկ Պոլյուկրատեսը, թեև գուշակները և նրա բարեկամները խրատիվ զգուշացնում էին, անձամբ մեկնում է այնտեղ: Այդ բոլորից բացի, նրա դուստրը ևս քնի մեջ այսպիսի երազ էր տեսել: Նրան երևացել էր, որ հայրը հախուռն է օդում և Զևսը նրան լվանում է, իսկ արևը օծում: Այս երազը տեսնելուց հետո (աղջիկը) ամեն կերպ փորձում է համոզել Պոլյուկրատեսին, որպեսզի չմեկնի Օրոյտեսի մոտ. մինչև իսկ երբ տեսնում է իր հորը հիսուն թիականի հավը բարձրանալիս, բարձրաձայն գուշակում է նրա ադեմը: Մինչդեռ հայրը սպառնում է նրան, որ եթե ինքը վերադառնա անվրնաս, ապա (աղջիկը) երկար ժամանակ կմնա կույս: Իսկ աղջիկը աղոթում էր (աստվածներին), որ նոր խոսքերը կատարվեն: Նա գերադասում էր երկար ժամանակ կույս մնալ, քան թե զրկվել հորից:

125. Բայց Պոլյուկրատեսը, անտեսելով բոլոր խորհուրդները, նավով մեկնեց Օրոյտեսի մոտ, մեծ թվով մերձավորների ուղեկցությամբ, որոնց թվում նաև Կալլիֆոնի որդի Դեմոկեդեսը Կրոտոն քաղաքից, որը բժիշկ էր և իր արվեստով գերազանցում էր իր բոլոր ժամանակակիցներին: Մագնեսիա ժամանելուց անմիջապես հետո Պոլյուկրատեսը սպանվեց խայտառակ կերպով, որպիսին վայել չէր ո՛չ իրեն, ո՛չ իր ծրագրերին: Քանզի եթե բացառենք Սիրակուսայի տիրակալներին, ապա հելլեն տիրակալներից և ոչ մեկը իր մեծավայելչությամբ արժանի չէ համեմատվելու Պոլյուկրատեսի հետ: Երբ Օրոյտեսը նրան սպանեց այնպիսի եղանակով, որը արժանի չեմ համարում պատմելու, ապա խաչին բարձրացրեց (դիակը): Պոլյուկրատեսի ուղեկիցներից նրանց, ովքեր սամոսցի էին, բաց թողեց մեկնելու, պատվիրելով նրանց շնորհակալություն հայտնել՝ ազատ արձակելու համար: Իսկ նրանց, ովքեր վարձկաններ էին, կամ ուղեկիցների սարուկներ, իր մոտ պահեց սարկական ծառայության: Արդ, Պոլյուկրատեսի խաչվելով, դուռեր տեսած

երազը լիովին կատարվեց. քանզի անձրևի ժամանակ Զևսը լվանում էր նրան, իսկ արևը օծում՝ շոգից խնայվացնելով նրա դիակը:

126. Պոլյուկրատեսի բազում հաջողություններն այսպիսի վախճան ունեցան, ինչպիսին նրան կանխագուշակել էր Եգիպտոսի թագավոր Ամասիսը: Բայց ոչ շատ ժամանակ անց Օրոյտեսը ևս պատժվեց Պոլյուկրատեսի պատճառով: Կամբյուսեսի մահից և թագավորությունը մոգերին անցնելուց հետո, Օրոյտեսը դարձյալ մնում էր Սարդեսում և ոչնչով չէր օգնում պարսիկներին՝ իշխանության ձգտող մեդացիների դեմ: Ընդհակառակը, այդ խռովության ընթացքում նա սպանեց Դասկիլեյոնի կառավարիչ[76] Միտրոբատեսին, որը նրան հանդիմանել էր Պոլյուկրատեսի պատճառով, ինչպես և Միտրոբատեսի որդի Կրանասպեսին. սրանք պարսից մեջ հայտնի այրեր էին: Նա բազում այլ չարագործություններ ևս կատարեց, ինչպես և այն, որ կարգադրեց սպանել Դարեհի կողմից իր մոտ ուղարկված բանբերին, քանի որ նրա հաղորդածը հաճելի չէր իրեն: Օրոյտեսը դավ նյութեց վերադարձող բանբերի դեմ, ուղարկելով իր մարդկանց, որոնք, սպանելով նրան, անհետացրին ձիով հանդերձ:

127. Իշխանությունը վերցնելուց հետո, Դարեհը մտադրվեց պատժել Օրոյտեսին՝ նրա բոլոր չարագործությունների և, հատկապես, Միտրոբատեսի և նրա որդու սպանության համար: Այնժամ Դարեհը մտածեց, որ նրա դեմ իսկույն զորք ուղարկելն անպատեհ է, քանի որ երկրում դեռևս շարունակվում էին խռովությունները, իսկ ինքը տակավին նոր էր վերցրել իշխանությունը: Բացի այդ, Դարեհը գիտեր, որ Օրոյտեսն ուներ ռազմական մեծ ուժ. նա ուներ «հազար» պարսիկ նիզակակիրներից բաղկացած թիկնազոր. նրա սատրապությունը կազմում էին Փռյուգիան, Լյուդիան և Հոնիան: Այս իրադրության մեջ Դարեհն անգամ բե ինչ մտածեց: Հրավիրեց պարսից ամենահարգելիներին և նրանց ասաց հետևյալը. «Ով պարսիկներ. ձեզանից ո՞վ կարող է այս գործը կատարել խորամանկությամբ և ոչ թե բռնությամբ ու խմբով. քանզի այնտեղ, ուր խորամանկություն է անհրաժեշտ, բռնությունն անտեղի է: Արդ, ո՞վ ձեզանից Օրոյտեսին կբերի այստեղ կենդանի և կամ կսպանի: Օրոյտեսը ոչ մի օգուտ չի բերել պարսիկներին, այլ պատճառել է մեծ չարիքներ: Նա սպանել է նաև իմ ուղարկած դեսպաններին, որոնք նրան հրավիրում էին ինձ մոտ: Դրանով նա դրսևորեց անտանելի անարգանք: Նախքան նա պարսիկներին առավել մեծ չարիք կպատճառի, մենք սպանելով կկանխենք նրան»:

128. Դարեհն այսպես ասացից, որից հետո երեսուն այրեր նայեցին, որ իրենք, յուրաքանչյուրն առանձին, պատրաստ են այդ ամենը կատարել: Քանի որ նրանք վիճում էին, Դարեհը կարգադրեց վիճակ հնարել: Բոլորը վիճակ հնարեցին և վիճակն ընկավ Բագայոսին[77], Հարպանոսի որդուն: Արդ,

վիճակով ընտրված Բագայոսն այսպես արեց. տարբեր հարցերի մասին բազմաթիվ նամակներ գրելով, դրանց վրա դրեց Դարեհի կնիքը և դրանք վերցնելով իր հետ, մեկնեց Սարդես: Այնտեղ հասնելով, նա ներկայացավ Օրոյտեսին և նամակները մեկ առ մեկ բացելով, դրանք հաջորդաբար հանձնում էր արքունի դպիրին՝ կարդալու. արքունի դպիրներ ունեն բոլոր սատրապները[78]: Բագայոսը տալիս էր նամակները, փորձելու համար, թե նիզակակիր թիկնապահներն արդյոք պատրաստ են ապստամբելու Օրոյտեսի դեմ: Տեսնելով, որ նրանք մեծ հարգանքով են վերաբերվում նամակներին, առավել ևս դրանցում ասվածներին, նա (դպիրին) տվեց մեկ այլ նամակ ևս, որում կային հետևյալ խոսքերը. «Ով պարսիկներ. Դարեհ արքան արգելում է ձեզ թիկնապահել Օրոյտեսին»: Լսելով այս խոսքերը, թիկնապահները իրենց նիզակները խոնարհեցին Բագայոսի առաջ: Բագայոսը տեսնելով, որ թիկնապահները հնազանդվում են նամակին, քաջալերվեց և դպիրին տվեց վերջին նամակը, որի մեջ գրված էր. «Դարեհ արքան Սարդեսում գտնվող պարսիկներին հրամայում է սպանել Օրոյտեսին»: Թիկնապահները այս լսելով, մերկացրին իրենց ակինակները և տեղնուտեղը սպանեցին Օրոյտեսին: Այսպիսով, պարսիկ Օրոյտեսը պատժվեց Պոլյուկրատես սամոսցու սպանության համար: Օրոյտեսի գանձերը բերվեցին Սուսա:

129. Եվ պատահեց, որ քիչ ժամանակ անց Դարեհը որսորդության ընթացքում ձիուց ցած իջնելիս ոլորեց իր ոտքը: Ոլորումն այնքան ուժեղ էր, որ կոնքը հողախախտվել էր: Արքայի մոտ նախկինում ևս կային եգիպտացի բժիշկներ, որոնք համարվում էին լավագույնները. սրանք էլ պետք է բուժեին իրեն: Բժիշկները փորձեցին ուժով ուղղել ոլորվածքը, բայց ավելի մեծ վնաս պատճառեցին: Յոթ օր և յոթ գիշեր Դարեհն անքուն մնաց ցավերի պատճառով: Ութերորդ օրը, երբ նա շատ վատ էր զգում, ոմն մարդ, որն անցյալում Սարդեսում լսել էր Դեմոկեդես կրոտոնցու արվեստի մասին, հայտնում է այն Դարեհին: Դարեհն իսկույն հրամայում է բերել նրան իր մոտ: Դեմոկեդեսին գտան Օրոյտեսի սարուկների մեջ, բոլորովին լքված, շղթայակապ, ցնցոտիավոր, ու բերեցին Դարեհի առաջ:

130. Երբ (Դեմոկեդեսը) ներկայացավ, Դարեհը հարցրեց նրան, թե նա գիտե՞ արդյոք (բժշկության) արվեստը: Սա չէր հաստատում իր իմանալը, քանզի վախենում էր, որ եթե բացահայտի իրեն, ապա վերջնականապես կզրկվի Հելլադայից: Իսկ Դարեհը կռահեց, որ նա հմուտ է այդ արվեստին, բայց թաքցնում է այն. ատի և հրամայեց ծառաներին՝ մտրակներ և խայթողներ բերել: Այնժամ Դեմոկեդեսը բացահայտեց իրեն, բայց ասաց, որ բժշկության իր իմացությունն անբերի չէ, այլ, ծանոթացած լինելով մի բժշկի հետ, փոքր-ինչ սովորել է նրանից այդ արվեստը: Երբ արդեն Դարեհը վատահեց նրան իր բուժումը, Դեմոկեդեսը օգտագործելով հելլենական

բուժիչ դեղորայք և (եգիպտացիների) օգտագործած նախկին ուժեղ միջոցների փոխարեն մեղմ միջոցների դիմելով, վերադարձրեց արքայի քունը և կարճ ժամանակում բուժեց նրան, թեև արքան երբեք հույս չուներ, որ ոտքը կապաքինվեր: Այս ամենից հետո Դարեհը նրան պարգևեց մի գույգ ոսկե կապան: Այնժամ Դեմոկեդեսը հարցրեց Դարեհին, թե արքան չի՞ ուզում արդյոք իրեն կրկնակի դժբախտ դարձնել, իրեն բուժած լինելու համար: Այս պատասխանը հաճելի եղավ Դարեհին, որը նրան ուղարկեց իր կանանց մոտ: Ներքինիները նրան բերեցին կանանց մոտ և ասացին, թե սա է այն մարդը, որը փրկել է արքայի կյանքը: Այնժամ կանանցից յուրաքանչյուրը սնդուկից բասով ոսկի վերցնելով, նվիրում է Դեմոկեդեսին: Նվերն այնքան առատ էր, որ նրան ուղեկցող ստրուկը, որի անունը Սկիտոն էր, թասից ընկած ոսկե ստատերները վերցնելով, իր համար մեծ քանակությամբ ոսկի հավաքեց:

131. Իսկ այս Դեմոկեդեսը ահա թե ինչպես է եկել Կրոտոնից Պոլյուկրատեսի մոտ: Նա Կրոտոնում ապրել է նոր հետ, որն ունեցել է դաժան բնավորություն: Չկարողանալով հանդուրժել, նա լքում է նրան ու մեկնում Էգինա: Հաստատվելով այնտեղ, նա առաջին իսկ տարում գերազանցում է բոլոր մյուս բժիշկներին, թեև չէր ունեցել բժշկության համար անհրաժեշտ գործիքներ: Երկրորդ տարին էգինացիների համայնքը նրան վարձում է մեկ տաղանդ[80] վճարով. երրորդ տարին աթենացիների համայնքը՝ հարյուր մինաղանդ վճարով. չորրորդ տարին Պոլյուկրատեսը՝ երկու տաղանդ վարձով: Ահա այսպես նա գալիս է Սամոս: Կրոտոնցի բժիշկները առավելապես այս մարդուն են պարտական իրենց հմտությունը: Քանզի այդ ժամանակ կրոտոնցի բժիշկները համայն Հելլադայում համարվում էին առաջինները: Այդ նույն ժամանակ արգոսցիները համարվում էին լավագույնները երաժշտության մեջ:

132. Արդ, Դարեհին բուժելուց հետո, Դեմոկեդեսը Սուսայում ստանում է հսկայական մի տուն և նույնիսկ դառնում արքայի սեղանակիցը[81]: Նրան ենդրելով արքային նա փրկում է նաև եգիպտացի բժիշկներին, որոնք նախապես բուժում էին արքային, իսկ այժմ, հելլեն բժշկից պարտված լինելու համար, դատապարտված էին ցցահան արվելու: Բացի այդ, նա փրկում է նաև էլեցի մի գուշակի, որը նախկինում եղել էր Պոլյուկրատեսի շքախմբում, իսկ այժմ մոռացված ու լքված էր գերիների մեջ: Դեմոկեդեսը մեծագույն հեղինակություն էր արքայի մոտ:

133. Այս ամենից քիչ ժամանակ անց պատահում է մեկ այլ դեպք ևս: Ատոսսայի, Կյուրոսի դստեր և Դարեհի կնոջ կրծքի վրա առաջացել էր պալար, որը պայթելով, սկսել էր ավելի տարածվել: Քանի դեռևս պալարը փոքր էր, Ատոսսան ամաչելուց այն թաքցնում էր և ոչ ոքի չէր հայտնում: Երբ

արդեն վատացել էր, իր մոտ է կանչում Դեմոկեդեսին և (պալարը) ցույց տալիս նրան: Դեմոկեդեսը խոստանում է բուժել նրան, բայց նրանից վերցնում է երդում, թե փոխարենը (Ատոսսան) պետք է իրեն ծառայություն մատուցի, երբ ինքն այդ խնդրելու լինի. իսկ ինքը նրանից ամոթաբեր ոչինչ չի խնդրի:

134. Այնուհետև, երբ նա Ատոսսային բուժելով առողջացրեց, ապա Ատոսսան, Դեմոկեդեսի թելադրանքով, Դարեհի հետ մահճում պառկած ժամանակ ասում է նրան. «Ով արքա. այսքան հզորություն ունենալով հանդերձ, դու (անգործ) նստում ես, ո՛չ որևէ ազգ ես նվաճում, ո՛չ էլ պարսից հզորությունն ավելացնում: Քանզի քեզ նման երիտասարդ և մեծ զանձերի տեր մարդուն վայել է դրսևորել իրեն երևելի գործերով, որպեսզի պարսիկները իմանան, որ իրենց վրա տղամարդ է իշխում: Դրանով դու կրկնակի կօգտվես: Նախ, որ պարսիկները կհամոզվեն, թե իրենց առաջնորդը տղամարդ է. երկրորդ, որ զբաղված լինելով պատերազմով, նրանք ժամանակ չեն ունենա քո դեմ դավելու: Քանզի այժմ, քանի դեռ երիտասարդ ես, դու կարող ես մեծ գործ կատարել: Չէ՞ որ մարմնի աճով միաժամանակ աճում է նաև միտքը, իսկ մարմնի ծերանալու հետ ծերանում է նաև միտքը և բոլոր գործերի համար բթանում»: Այս բոլորը նա ասում էր (Դեմոկեդեսի) թելադրանքով. իսկ Դարեհը այսպես պատասխանեց. «Ով կին. դու ասացիր այն ամենը, ինչ ես ցանկանում եմ կատարել: Ես որոշել եմ մեր աշխարհամասից մյուս աշխարհամասը կամուրջ կապել և արշավել սկյութների վրա: Եվ այս ամենը շուտով կկատարեմ»: Իսկ Ատոսսան ասաց. «Այժմ, տե՛ս, նրաժարվիր առաջինը սկյութների վրա գնալուց. քանզի քո ցանկության դեպքում նրանք կլինեն քոնը: Դու արշավիր Հելլադայի վրա: Ես այդ ցանկանում եմ, քանի որ լսել եմ Լակոնիայի, Արգոսի, Ատտիկայի և Կորնթոսի կանանց մասին և ուզում եմ, որ նրանք իմ սպասուհիները լինեն: Քեզ մոտ կա մի մարդ, որը բոլորից նմուտ է և կարող է Հելլադայի մասին ամեն տեսակ տեղեկություններ տալ և քեզ առաջնորդել. դա նա է, ով բուժել է քո ոտքը»: Նրան Դարեհը պատասխանեց. «Ով կին. եթե, քո կարծիքով, մենք նախ պետք է փորձենք նվաճել Հելլադան, ապա ես կարծում եմ, որ ավելի լավ է նախապես այնտեղ քո ասած մարդու հետ ուղարկենք պարսիկ լրտեսների, որոնք նրանց մասին ամեն ինչ իմանալով, կհաղորդեն մեզ. այնուհետև, ես ամեն ինչ լավ իմացած լինելով, կարշավեմ նրանց վրա»:

135. Այսպես ասաց Դարեհը և իր խոսքը վերածեց գործի: Երբ բացվեց հաջորդ օրը, Դարեհն իր մոտ կանչեց տասնհինգ երևելի պարսիկների և հրամայեց նրանց Դեմոկեդեսի հետ շրջել Հելլադայի ծովափը, բայց և զգույշ լինել, որ Դեմոկեդեսը չփախչի, այլ ամեն կերպ եռ բերվի: Այսպիսի հրամաններ նրանց տալուց հետո, Դարեհը դարձյալ իր մոտ կանչեց Դեմո-

կեդեսին և խնդրեց նրան պարսիկներին ցույց տալ ամբողջ Հելլադան և վերադառնալ: Ընդ որում, (արքան) պատվիրեց նրան իր նոր և եղբայրների համար որպես նվեր վերցնել իր ամբողջ ունեցվածքը, միաժամանակ խոստացավ, որ (վերադարձին) բազմապատիկ այլ ընծաներ ևս կստանա: Բացի այդ, արքան ասաց, որ մեկնելիս նրան կարամադրի նաև ամեն տեսակ բարիքներով բարձած մի բեռնանավ: Դարեհը, ինձ թվում է, այս բոլորը խոստանում էր առանց որևէ խարդախության: Բայց Դեմոկեդեսը վախենալով, որ Դարեհը ուզում է փորձել իրեն, չէր շտապում այդ բոլոր ընծաներն ընդունել, այլ ասաց, որ իր բոլոր բարիքները կրողնի այստեղ, որպեսզի վերադարձին վերցնի դրանք. իսկ բեռնանավը, որ Դարեհը խոստանում է նվիրել եղբայրներին, նա կընդունի: Այսպիսի նանձնարարությամբ, ահա, Դարեհը նրանց ուղարկեց նավարկելու ծովում:

136. Իջնելով փյունիկյան ծովափով, նրանք հասան Փյունիկեի Սիդոն քաղաքը, որտեղ անմիջապես պատրաստեցին երկու տրիերա[82], ինչպես նաև փյունիկյան մեծ բեռնանավ[83], լցրած ամեն տեսակ բարիքներով: Ամեն ինչ պատրաստելով, նրանք նավեցին դեպի Հելլադա և անցնելով ամբողջ ծովափը, այն դիտում էին և նկարագրում, մինչև որ նրա ամենահայտնի վայրերի մեծ մասը տեսնելուց հետո, հասան Իտալիայի Տարանտը: Այստեղ Արիստոֆիլիդեսը, տարանտացվոց թագավորը, Դեմոկեդեսին ծառայություն մատուցելու նպատակով, քանդում է մեդական նավերի ղեկը, իսկ պարսիկներին բանտարկում որպես լրտեսների: Մինչ պարսիկները այս գործանքի մեջ էին ընկել, Դեմոկեդեսը հասնում է Կրոտոն· երբ նա արդեն հասել էր իր երկիրը, Արիստոֆիլիդեսը ազատ է արձակում պարսիկներին և ետ տալիս նրանց այն, ինչ վերցրել էր նավերից:

137. Այստեղից պարսիկները նավարկելով՝ Դեմոկեդեսին հետապնդելիս հասնում են Կրոտոն և նրան գտնելով շուկայում, բռնում են: Կրոտոնցիներից ոմանք, վախենալով պարսից հզորությունից, պատրաստ էին հանձնել նրան. իսկ մյուսները ետ խլեցին նրան և սկսեցին մահակներով հարվածել պարսիկներին, որոնք այսպես էին ասում. «Կրոտոնցիներ. դուք այդ ի՞նչ եք անում: Դուք ուզում եք մեզանից վերցնել թագավորից փախած մարդուն: Մի՞թե Դարեհ արքան կհանդուրժի այս անարգանքը: Մի՞թե ձեր արարքը լավ վախճան կունենա, եթե նրան վերցնեք մեզանից: Այստեղ առաջինը ո՞ր քաղաքի վրա մենք կարշավենք և ո՞ր քաղաքը առաջինը կստրկացնենք»: Այս խոսքերով, սակայն, նրանք չկարողացան համոզել կրոտոնցիներին. ուստի թողնելով Դեմոկեդեսին, ինչպես նաև իրենց այնտեղ բերած բեռնանավը, ետ նավեցին Ասիա: Նրանք, զրկված լինելով իրենց ուղեցույցից, նետ այնու չփորձեցին իսկ շարունակել Հելլադայի ուսումնասիրումը: Երբ նրանք մեկնում էին, Դեմոկեդեսը պատվիրեց նրանց ասել Դարեհին,

թե Դեմոկեդեսը իրեն կին է վերցնում Միլոնի աղջկան. քանզի ըմբիշ Միլոնի անունը շատ բարձր էր արքայի մոտ: Իմ կարծիքով, այս էր պատճառը, որ Դեմոկեդեսը ձգտում էր այդ ամուսնության և դրա համար շատ դրամ ծախսեց, որպեսզի ցույց տա Դարեհին, որ ինքն իր երկրում ևս երևելի մարդ է:

138. Կրոտոնից մեկնելուց հետո պարսիկների նավերը (նոգմերից) հասնում են Յապյուգիա[84], որտեղ նրանք ատրկացվում են: Բայց Գիլլոսը, տարանտեցի մի վտարանդի, փրկագնում է նրանց և վերադարձնում Դարեհ արքային: Դարեհը փոխարենը պատրաստ էր նրան տալ ինչ որ նա ցանկանար: Գիլլոսը պատմելով իր դժբախտությունը, խնդրում է (արքայից) իրեն վերադարձնել Տարանտ: Բայց, որպեսզի Հելլադայում իրագործում չառաջանա, եթե իր պատճառով մեծ նավատորմիղ շարժվի Իտալիայի վրա, նա ասում է, թե մենակ կնիդոսցիների ուժը բավական է իր վերադարձի համար: Նա ենթադրում էր, որ կնիդոսցիները, որպես տարանտցիների բարեկամներ, առավել հեշտ կարող են իրեն վերադարձնել (հայրենի քաղաք): Դարեհը համաձայնվեց դրան և բանբեր ուղարկեց Կնիդոս, հրամայելով Գիլլոսին վերադարձնել Տարանտ: Կնիդոսցիները հնազանդվեցին արքային, բայց չկարողացան համոզել տարանտցիներին, իսկ բռնություն գործադրելու համար անզոր էին: Այս դեպքերն, ահա, այսպես կատարվեցին: Այս պարսիկներն առաջիններն էին, որ այս դեպքերի առիթով, որպես լրտեսներ, Ասիայից եկան Հելլադա:

139. Այնուհետև Դարեհը նվաճում է Սամոսը, առաջին քաղաքը ինչպես հելլենական, այնպես և բարբարոսների (քաղաքներից), հետևյալ պատճառով: Երբ Կամբյուսեսը, Կյուրոսի որդին, արշավում էր Եգիպտոս, շատ հելլեններ ևս գալիս են այնտեղ. ոմանք, բնականաբար, առևտրի նպատակով, ուրիշներ՝ պարզապես երկիրը տեսնելու: Սրանց թվում էր և Սյոլոսոնը՝ Այակեսի որդին, Պոլյուկրատեսի եղբայրը, արտաքսված Սամոսից: Այս Սյոլոսոնն այսպիսի լավ բախտ է ունեցել: Նա կարմիր թիկնոց հագած շրջելիս է եղել Մեմֆիսում, երբ նրան տեսնում է Դարեհը, որն այդ ժամանակ դեռևս Կամբյուսեսի թիկնապահն էր և տակավին մեծ համարում չուներ: Նա, հավանելով թիկնոցը, մոտենում է Սյոլոսոնին և կամենում գնել այն: Սյոլոսոնը, տեսնելով, որ Դարեհը շատ է փափագում ունենալ այդ թիկնոցը, ասես թե ասուածային ներշնչմամբ, այսպես է ասում. «Ես այն ոչ մի դրամով չեմ վաճառի, այլ քեզ կնվիրեմ, եթե դու շատ ցանկանում ես այդ ունենալ»: Դարեհը հանձնանալով, վերցնում է այն:

140. Այսպիսով, Սյոլոսոնը համոզված էր, որ իր թիկնոցը կորցրել էր իր բարեհոգության հետևանքով: Եվ ահա, որոշ ժամանակ անց Կամբյուսեսը մեռավ. իսկ յոթ պարսիկները ապստամբեցին մոգի դեմ և այդ յոթից մեկը՝

Դարեհը, վերցրեց թագավորությունը: Այնժամ Սյուլոսոնն իմացավ, որ թագավորական իշխանությունն անցել է այն մարդուն, ում երբեմն ինքը, նրա խնդրանքով, Եգիպտոսում նվիրել էր իր թիկնոցը: Արդ, Սյուլոսոնը մեկնելով Սուսա, նստում է արքայի պալատի դռների առաջ և ասում, թե ինքը Դարեհի բարեբարն է եղել: Լսելով այս խոսքերը, պահակապետը դրանք հաղորդում է արքային: Իսկ Դարեհը զարմացած ասում է նրան. «Ո՞վ է այդ նեղլեն բարեբարը, որին ես պետք է երախտապարտ լինեմ, երբ ես տակավին նոր եմ վերցրել իշխանությունը և հազիվ թե այս ընթացքում նրանցից որևէ մեկը այցելած լինի մեզ. այնպես, որ ես չեմ կարող ոչնչով պարտական լինել որևէ հելլենի: Այսուհանդերձ, առաջնորդեք նրան ներս, տեսնեմ, թե այդ ասելով ի՞նչ է կամենում»: Պահակապետը ներս առաջնորդեց Սյուլոսոնին: Երբ սա կանգնեց արքայի առաջ, թարգմանները հարցրին նրան, թե ո՞վ է ինքը և ի՞նչ է կատարել, որ իրեն համարում է արքայի բարեբարը: Այնժամ Սյուլոսոնը պատմեց այն ամենը, ինչ կատարվել էր թիկնոցի հետ և ավելացրեց, թե ինքն է այն նվիրել արքային: Նրան Դարեհը պատասխանեց այսպես. «Ով ազնվագույն մարդ. ուրեմն այդ դու ես ինձ պարգև տվել այն ժամանակ, երբ ես տակավին իշխանություն չունեի: Այդ պարգևը թեև փոքր է, բայց իմ շնորհակալությունը կլինի այնպիսին, ինչպիսին եթե ես այժմ ինչ-որ մեկից ստացած լինեի խոշոր պարգև: Դրա փոխարեն ես քեզ կպարգևեմ անհամար ոսկի և արծաթ, որպեսզի դու երբեք չզղջաս Հյուսասպեսի որդի Դարեհին բարի կատարած լինելուդ համար»: Նրան Սյուլոսոնը պատասխանեց. «Ով արքա: Մի պարգևիր ինձ ոչ մի ոսկի, ոչ իսկ արծաթ, այլ վերտին ազատիր և պարգևիր ինձ իմ հայրենի Սամոսը, որտեղ այժմ երբ Օրոյտեսը սպանել է իմ եղբորը, իշխում է մեր ստրուկը: Ահա այդ քաղաքը պարգևիր ինձ, բայց առանց արյունահեղության և սարկացման»:

141. Լսելով այս խոսքերը, Դարեհը զորք ուղարկեց Օտանեսի՝ յոթ պարսիկներից մեկի գլխավորությամբ, հրամայելով նրան կատարել այն ամենը, ինչ խնդրել էր Սյուլոսոնը: Օտանեսը եկավ ծովափ և զորք պատրաստեց:

142. Սամոսում այդ ժամանակ իշխում էր Մեանդրիոսի որդի Մեանդրիոսը, որին Պոլյուկրատեսը իշխանությունը հանձնել էր որպես ենթակառավարչի: Սա ցանկանում էր արդարագույն մարդը լինել, բայց այդ չհաջողվեց: Քանզի երբ նրան հայտնեցին Պոլյուկրատեսի մահը, նա հեռացավ արեց: Նախ, Ազատարար Զևսին ձոնված զոհարան կառուցեց և նրա շուրջ արքազան տեղամաս հատատեց, որը այժմ ևս կա քաղաքի արվարձանում: Այդ անելուց հետո նա բոլոր քաղաքացիների համաժողով գումարեց և այսպես խոսեց. «Դուք գիտեք, որ գայիսոնը և ամբողջ իշխանությունը ինձ

վստահված է Պոլյուկրատեսի կողմից և ես այժմ կարող էի ձեր արքան լինել: Բայց ես ոչ մի դեպքում չեմ անի այն, ինչը նշավակում եմ իմ մերձավորի մեջ. քանզի ես չէի հավանում ո՛չ Պոլյուկրատեսի իշխանությունը իր հավասարների վրա, ո՛չ էլ այդպես վարվող որևէ մեկին: Պոլյուկրատեսն այժմ ստացել է իր ճակատագրի հարվածը. իսկ ես իշխանությունը թողնում եմ ձեզ և հայտարարում իրավահավասարություն: Այսուհանդերձ, ես իրավունք ունեմ խնդրելու, իբրև հատուցում, Պոլյուկրատեսի գանձերից ստանալ վեց տաղանդ և, բացի այդ, ինձ և իմ հետնորդների համար Ազատարար Զևսի քրմությունը, քանի որ ես նրա համար հաստատել եմ արքավայր և ձեզ ազատություն պարգևել»: Այսպես նա հայտարարեց սամոսցիներին: Իսկ նրանցից մեկը վեր կենալով ասաց. «Բայց դու բոլորովին էլ արժանի չես մեզ վրա իշխելու, քանզի քո ծնունդը ստոր է և անպիտան: Ավելի լավ կլիներ, որ դու քո յուրացրած գանձերի հաշիվը տայիր»:

143. Այսպես ասաց քաղաքի երեքլիներից մեկը, որի անունն էր Տելեսարքոս: Բայց Մեանդրիոսը մտածեց, որ եթե ինքը թողնի իշխանությունը, ապա իր փոխարեն մեկ ուրիշը կդառնա տիրան, ուստի և նա այլևս մտադիր չէր թողնել իշխանությունը: Նա գնաց միջնաբերդ և առանձին-առանձին իր մոտ հրավիրելով քաղաքացիներին, իբր թե իր գանձերի համար հաշիվ տալու, հրամայեց նրանց ներբակալել ու կալանավորել: Մինչ նրանք բանտում էին, Մեանդրիոսը ինչ-որ ախտով հիվանդացավ: Իսկ նրա եղբայրը, որի անունն էր Լյուկարետոս, կարծելով, թե Մեանդրիոսը կմահանա, հրամայեց սպանել բոլոր կալանվածներին, որպեսզի ինքը թյամբ վերցնի իշխանությունը Սամոսում. քանզի չէ՞ որ սամոսցիները, ըստ երևույթին, չէին մտածում ազատ լինելու մասին:

144. Արդ, երբ պարսիկները ժամանեցին Սամոս ու վերադարձրին Սյուլոսոնին, ոչ ոք նրանց դեմ ձեռք չբարձրացրեց: Մեանդրիոսի կողմնակիցները և ինքը՝ Մեանդրիոսը, նույնիսկ հայտարարեցին, թե իրենք պատրաստ են համաձայնության գալ և հեռանալ կղզուց: Օտանեսը համաձայնվեց և դաշինք հաստատեց, որից հետո մեծապատիվ պարսիկները միջնաբերդի առաջ գահեր դրեցին և նստեցին:

145. Մեանդրիոս տիրանը մի խելագար եղբայր ուներ, անունը Քարիլաոս, որը հանցանք գործած լինելու համար բանտարկված էր ներքնատանը: Եվ ահա, լսելով տեղի ունեցածի մասին, սա ներքնատնից դուրս է նայում և, տեսնելով պարսիկներին հանգիստ նստած, բարձրաձայն զոռում է՝ ասելով, թե ուզում է խոսել Մեանդրիոսի հետ: Մեանդրիոսը լսելով այդ, հրամայում է արձակել նրա կապանքը և բերել իր մոտ: Երբ իսկույն նրան բերեցին, նա, անարգելով ու հայհոյելով, գրգռում էր եղբորը՝ հարձակվելու պարսիկների վրա: Նա ասում էր այսպես. «Ստորագույն մարդ. ինձ, քո եղբորը, որը

բանտարկվելու ոչ մի նանցանք չէր գործել, կալանավորեցիր ու նեռեցիր ներքնատուն. մինչդեռ պարսիկներին, որոնք քեզ դուրս են հանում անից և դարձնում անազուրկ, դու չես համարձակվում պատժել, թեև այնքան հեշտ էր նրանց ձեռք գցելը: Բայց եթե դու ինքդ վախենում ես նրանցից, ապա տուր ինձ վարձկաններին և ես կպատժեմ նրանց այստեղ ժամանած լինելու համար, իսկ քեզ ես պատրաստ եմ արտաքսել կղզուց»:

146. Այսպես ասաց Քարիլաոսը, և Մեանդրիոսն ընդունեց նրա առաջարկը: Ինձ թվում է, որ նա այնքան անմիտ չէր կարծելու համար, թե իր զորքը կարող է գերազանցել արքայի զորքերին. այլ նա այդպես արեց գերազանցապես նախանձելով Սյուլոսոնին, որը կարող էր այսքան հեշտ տիրանալ քաղաքին բոլորովին անվնաս: Արդ, նա ուզում էր գրգռել պարսիկներին, որպեսզի ճնարավորին չափ թուլացնի Սամոսը և այն այդպես հանձնի: Նա վստահ էր, որ եթե պարսիկները վնաս կրեն, ապա ավելի ևս կգայրանան սամոսցիների վրա. միաժամանակ նա գիտեր, որ ինքը ցանկացած ժամանակ կարող է ապահով հեռանալ կղզուց. քանզի նա միշնաբերդից մինչև ծով տանող գաղտնի ստորգետնյա անցք էր պատրաստել: Այսպես, ահա, Մեանդրիոսը նավարկելով հեռանում է Սամոսից. մինչդեռ Քարիլաոսը, զինելով բոլոր վարձկաններին և բաց անելով դարպասները, անսպասելի հարձակվում է նման բան չկասկածող պարսիկների վրա, որոնք կարծում էին, թե պայմանավորվել էին և ամեն ինչ հարթված էր: Այնժամ վարձկանները, հարձակվելով պարսից ազնվականների[85] և բարձր պատիվ վայելողների վրա, սկսում են սպանել: Վարձկաններն այսպես էին անում, իսկ պարսից մնացած զորքը շտապեց օգնության: Վարձկանները, ճնշվելով (պարսիկներից), ետ շրջվեցին միշնաբերդ:

147. Իսկ զորավար Օտանեսը, տեսնելով, որ պարսիկները մեծ վնաս կրեցին, մոռանում է Դարեհի տված հրահանգները՝ սամոսցիներից ոչ մեկին չսպանել և չտարկացնել, այլ կոչին անվնաս հանձնել Սյուլոսոնին, և հրամայում է իր զորքերին՝ սպանել բոլորին, ով ընկնի իրենց ձեռքը, այր լինի թե երեխա: (Պարսից) զորքերի մի մասը պաշարում է միշնաբերդը, իսկ մյուս մասը սպանում է ում պատահի, և՛ արբավայրում, և՛ արբավայրից դուրս:

148. Իսկ Մեանդրիոսը փախչելով Սամոսից, նավում է Լակինքմոն: Ժամանելով այնտեղ, նա բերեց իր հետ եղած բարիքը և այսպես արեց: Իր արծաթե և ոսկե գավաթները ցուցադրելու նպատակով, նա (պատվիրեց) իր ծառաներին մաքրել դրանք, իսկ ինքն այդ ընթացքում զրուցելով Անամսանդրիդեսի որդի Կլեոմենեսի՝ Սպարտայի թագավորի հետ, նրան ուղեկցում է տուն: Տեսնելով գավաթները, Կլեոմենեսը հիանում է ու զարմանում: Իսկ Մեանդրիոսը ասում է նրան, որ նա կարող է իր համար վերցնել այդ

գավաթներից ինչքան փափագի: Երբ Մեանդրիոսը երկու թե երեք անգամ այսպես ասաց, Կլեոմենեսը, լինելով արդարագույն մարդ, հրաժարվեց վերցնել այդ նվերները. բայց ենթադրելով, որ Մեանդրիոսը այդ ամենը ուրիշ քաղաքացիների նվիրելով, կարող է օժանդակություն ստանալ, գնում է էֆորոսների[87] մոտ և ասում, որ ավելի լավ կլիներ Սպարտայի համար, եթե այս սամոսցի օտարականը հեռացվի Պելոպոնեսոսից, որպեսզի չկարողանա համոզել իրեն կամ սպարտացիներից մեկ ուրիշին վատ գործեր կատարելու: Լսելով նրա խորհուրդը, էֆորոսները Մեանդրիոսին աքսորյալ հայտարարեցին:

149. Իսկ պարսիկները, Սամոսը ավերելուց հետո, անմարդաբնակ կղզին հանձնեցին Սյուլոսոնին: Հետագայում զորահրամանատար Օտանեսը վերաբնակեցրեց այն, մղված իր տեսած երազից և ինչ-որ հիվանդությունից, որը ախտահարել էր նրա առնանդամը:

150. Մինչ (պարսից) նավատորմն ուղղվում էր Սամոս, բաբելոնացիները, լավ նախապատրաստվելով, ապստամբեցին[88]: Քանզի մոգի իշխանության և յոթի ապստամբության ընթացքում, ամբողջ այս խռովությունների ժամանակ, նրանք պատրաստվում էին պաշարման: Այս ամենը նրանք, թվում է, կատարել են թաքուն: Երբ արդեն բացահայտ ապստամբեցին, նրանք վարվեցին այսպես: Բացառելով իրենց մայրերին, յուրաքանչյուրն իր համար ընտրեց իր ընտանիքից մի կին, ում ինքն էր ուզում, իսկ մնացած բոլորին ի մի հավաքեցին և խեղդեցին. այսպես, յուրաքանչյուրն ընտրեց մի կնոջ որպես հացարար. (մյուս) կանանց խեղդեցին, որպեսզի իրենց անունը չպահեն:

151. Լսելով այդ մասին, Դարեհը գումարեց իր ամբողջ զորքը և արշավեց նրանց դեմ: Հասնելով Բաբելոն, նա պաշարեց քաղաքը, իսկ (բաբելոնացիներին) բոլորովին չէր մտահոգում պաշարումը: Բարձրանալով պարսպի աշտարակների վրա, նրանք պարելով ու ծաղրելով ծանակում էին Դարեհին և նրա զորքը: Նրանցից մեկը նույնիսկ այսպես խոսեց. «Պարսիկներ. ինչո՞ւ նստել եք այստեղ ու չեք հեռանում: Եթե ջորին ծննդաբերի, դուք էլ մեզ կնվաճեք»: Այսպես ասաց բաբելոնացիներից մեկը, վստահ լինելով, որ ջորին երբեք չի ծննդաբերի:

152. Անցել էր արդեն մեկ տարի և յոթ ամիս, իսկ Դարեհն ու նրա հաամայն զորքերը սրտնեղում էին, որ չէին կարողանում գրավել Բաբելոնը, թեև Դարեհը դիմել էր բոլոր միջոցների ու խորամանկությունների: Նա կիրառեց նաև այն խորամանկությունը, որի միջոցով (անցյալում) Կյուրոսին հաջողվել էր նվաճել այդ քաղաքը, սակայն բաբելոնացիները անհուն հսկում էին և աննեար եղավ նրանց նվաճել:

153. Այնժամ, պաշարման քառասներորդ ամսին, Մեգաբյուզոսի որդի Զո-

պյուրոսին, որը մոգին կործանած յոթ այրերից մեկի՝ Մեգաբյուզոսի թոռն էր, նշանակ պատանեց[89]: Նրա բեռնատար ջորիներից մեկը ծննդաբերեց: Երբ Զոպյուրոսին հայտնում են այդ մասին, նա սկզբում չի հավատում, բայց երբ տեսնում է ձագին, արգելում է տեսնողներին այդ մասին որևէ մեկին պատմել և մտածում է կատարվածի մասին: Նա հիշեց բաբելոնացու խոսքը, որն ասել էր դեռևս պաշարման սկզբին, որ երբ ջորիները ծննդաբերեն, այնժամ քաղաքը կգրավվի: Ուստի և Զոպյուրոսին թվաց, թե Բաբելոնն այժմ կարելի է գրավել. քանզի բաբելոնացին այդ խոսքն ասել էր աստծու ներշնչմամբ, իսկ իր ջորին ծննդաբերել էր դարձյալ (աստվածային նախախնամությամբ):

154. Զոպյուրոսը համոզվելով, որ Բաբելոնն արդեն դատապարտված է անկման. գալիս է Դարեհի մոտ և հայտնում, թե նրա համար արդյո՞ք շատ կարևոր է Բաբելոնը նվաճելը: Երբ Դարեհը հաստատեց, թե դա շատ կարևոր է, Զոպյուրոսը արդեն սկսեց մտածել, որ ինքը լինի Բաբելոնը գրավողը և այդ գործը հանձնարարվի իրեն: Քանզի պարսիկներն առավելագույնս հարգում են սխրանքները: Զոպյուրոսը ոչ մի այլ միջոց չէր տեսնում քաղաքը նվաճելու համար, բացի իրեն հաշմելով բաբելոնացիների մոտ փախստականալուց: Ուստի և նա, թեթև բան համարելով, իրեն խոշտանգում է անբուժելի կերպով. կտրում իր քիթն ու ականջները, այլանդակ խուզում մազերը և իրեն մտադրելուց հետո ներկայանում Դարեհին:

155. Դարեհը մեծապես ցնցվեց, տեսնելով ականավորագույն այդ մարդուն այդպես խոշտանգված, և նշելով ցած թռավ գահից ու հարցրեց, թե ո՞վ և ինչո՞ւ նրան այդպես խոշտանգել է: Եվ նա պատասխանեց. «Չկա այնպիսի մարդ, բացի ինձանից, որը ինձ հետ այսպես վարվելու ուժն ունենա: Ով արքա. սա ուրիշի արարքը չէ, այլ ես ինքս եմ ինձ խոշտանգել, քանի որ չեմ կարող հանդուրժել, որ ասորեստանցիները[90] ծանակեն պարսիկներին»: Արքան նրան պատասխանեց. «Ով ամենաղժբախտ մարդ. դու հիմարագույն արարքին ուզում ես ամենաառատիկի անունը տալ, պնդելով, որ քեզ հետ դաժանաբար վարվել ես հանուն պաշարվածների: Մի՞թե, ով անմիտ, թշնամիները ավելի հեշտ կհանձնվեն քո ինքնախոշտանգման պատճառով: Դու չե՞ս խելագարվել, արդյոք, քեզ այսպես կործանելով»: Իսկ նա ասաց. «Եթե ես քեզ հայտնեի, թե ի՞նչ եմ մտադիր անելու, ապա դու այդ ինձ չէիր թույլ տալու: Ուստի և ես ինքս որոշեցի այդպես վարվել և որոշումս կատարեցի: Արդ, եթե դու չմերժես քո օգնությունը, ապա մենք կգրավենք Բաբելոնը: Քանզի ես այս վիճակում վազքով կփախչեմ դեպի պարսիպները և կասեմ նրանց, թե այս բոլորը դու ես պատճառել ինձ: Ես կարծում եմ, թե ինձ կհաջողվի նրանց համոզել դրանում և դառնալ զորքի առաջնորդը: Իսկ դու, պարսպից ներս իմ մտնելու տասներորդ օրը հազար մարդ քո զորքերի

այն մասից, որի կորուստը քեզ ոչ մի հոգս չի պատճառի, դասավորիր, այսպես կոչված Շամիրամի դարպասների դիմաց. այնուհետև, դրանից յոթ օր անց, ևս երկու հազար մարդ դիրքավորիր, այսպես կոչված, Նինոսյան դարպասների դիմաց. այնուհետև բաց թող ևս քսան օր, որից հետո ևս չորս հազար մարդ ուղարկիր Քաղդեական կոչված դարպասների դիմաց: Ո՛չ նախադները, ո՛չ ևս սրանք, պետք չէ ունենան ոչ մի պաշտպանական զենք, բացի դաշույններից: Դաշույն նրանք թող ունենան: Արդ, քսան օր անցնելուց հետո, հրամայիր, որ մնացած ամբողջ զորքը բոլոր կողմերից անհապաղ գրոհի պարիսպների վրա, բայց պարսիկներին դասավորիր Բելյան և Կիսսիյան դարպասների դեմ: Կարծում եմ, որ երբ ես այսպիսի մեծ գործեր կատարեմ, բաբելոնացիներն ամեն ինչ կվստահեն ինձ, մինչև անգամ դարպասների բանալիները: Այնժամ արդեն ես և պարսիկները պետք եղածը կանենք»:

156. Այս ասելուց հետո, նա վազում է դեպի դարպասները, (հանախակի) ետ-ետ նայելով, ասես իսկական փախստական լիներ: Աշտարակների վրայից պահակները, նկատելով նրան, իջնում են ցած և, դարպասներից մեկը փոքր ինչ բացելով, հարցնում նրան, թե ո՞վ է և ինչո՞ւ է եկել: Նա պատասխանում է, թե ինքը Զոպյուրոսն է և փախստական եկել է իրենց մոտ: Այս լսելով, դարպասի պահակները նրան տանում են բաբելոնացվոց իշխանության առաջ: Այնտեղ Զոպյուրոսն սկսում է գանգատվել, ասելով, թե այս խոշտանգումները, որ իրականում ինքն էր իրեն պատճառել, իբր Դարեհի արածներն են, և որ ինքը այդպես տուժել է, որովհետև խորհուրդ է տվել նրան վերցնել զորքը և մեկնել, քանի որ ոչ մի հնար չկար քաղաքը նվաճելու: «Այժմ», շարունակում է նա, «ով բաբելոնացիներ, ես ձեզ համար եկել եմ որպես մեծագույն բարիք, իսկ Դարեհի և նրա զորքերի համար՝ որպես մեծագույն չարիք: Ինձ այսպես խոշտանգելուց հետո Դարեհը անպատիժ չի գնալու: Ինձ հայտնի են նրա բոլոր ծրագրերն ու խորհուրդները»: Նա այսպես ասաց:

157. Բաբելոնացիները, տեսնելով բարձրապատիվ պարսկին՝ քիթը և ականջները կտրած և մտրակի հարվածներից արյունակալած, լիովին հավատում են, թե նա ճշմարտությունն է ասում և թե նա եկել է իրենց մոտ որպես գինակից: Ուստի և նրանք պատրաստ էին նրան վստահելու այն ամենը, ինչ նա խնդրեր: Եվ նա խնդրում է զորք: Նրանցից զորք ստանալուց հետո նա գործում է այնպես, ինչպես պայմանավորվել էր Դարեհի հետ: Տասներորդ օրը նա դուրս է բերում բաբելոնյան զորքը և, պաշարելով այն հազարին, որ պատվիրել էր Դարեհին դասավորել առաջին անգամ, ջարդում է: Տեսնելով, որ նրա գործերը նման են նրա խոսքերին, բաբելոնացիները շտապագնաց ուրախանում են և պատրաստ էին ամեն ինչում ծառայելու

նրան: Զոպյուրոսը, սպասելով այնքան օր, ինչքան պայմանավորվել էին, նրից դուրս է բերում բաբելոնացիների ընտիր մի զորաջոկատ և շարդում Դարեհի երկու հազար զինվորներին: Այս արարքը ևս տեսնելով, բաբելոնացիները գովում էին Զոպյուրոսին և բոլորի բերանում նրա անունն էր: Իսկ Զոպյուրոսը դարձյալ, սպասելով այնքան օր, ինչքան պայմանավորվել էին, դուրս է բերում (բաբելոնացիների զորաջոկատը)՝ նախապես նշանակված վայրը և, պաշարելով, շարդում չորս հազարին: Այս արարքը ևս գործելուց հետո, Զոպյուրոսը բաբելոնացիների համար դառնում է ամեն ինչ. նա հռչակվում է նրանց զորապետը և բերդապահը:

158. Արդ, երբ Դարեհը, ըստ պայմանավորվածության, բոլոր կողմերից գրոհում է պարիսպների վրա, այնժամ արդեն ամբողջովին բացահայտվում է Զոպյուրոսի դավը: Քանզի մինչ բաբելոնացիները պարիսպների վրա բարձրացած պաշտպանվում էին Դարեհի զորքերի գրոհներից, Զոպյուրոսը, բաց անելով Կիսսիյան և Բելյան կոչված դարպասները, պարսիկներին պարսպից ներս է թողնում: Բաբելոնացիների մի մասը, տեսնելով կատարվածը, ապաստանում է Բել Զևսի տաճարում. իսկ նրանք, ովքեր չէին նկատել (կատարվածը), մնացել էին իրենց դիրքերում, այնքան ժամանակ մինչև իմանում են, որ մատնված են:

159. Այս եղանակով Բաբելոնը գրավվեց երկրորդ անգամ: Տիրելով Բաբելոնին, Դարեհը քանդում է քաղաքի պարիսպները և կորզում դարպասները. մի բան, որ Բաբելոնն առաջին անգամ գրաված Կյուրոսը չէր արել: Այդուհետև Դարեհը նրանցից շուրջ երեք հազար գլխավորների ցցահան է անում, իսկ մնացած բաբելոնացիներին թույլատրում բնակվել քաղաքում: Իսկ որպեսզի բաբելոնացիներն իրենց համար կին ունենային սերունդ ապահովելու համար, քանի որ իրենց կանանց, ինչպես արդեն պատմել եմ, նրանք խեղդել էին, պարեն խնայելու նպատակով, Դարեհը հոգում է հետևյալ կերպ: Նա հրամայում է հարևան ցեղերին Բաբելոն ուղարկել կանանց, յուրաքանչյուր ցեղ որոշակի քանակությամբ, այնպես, որ բոլորի գումարը դառնում է հիսուն հազար կին: Անա այս կանանցից են սերել ներկայիս բաբելոնացիները:

160. Դարեհի կարծիքով, ոչ ոք պարսիկներից, ո՛չ նախկինում, ո՛չ էլ հետո, իր սխրանքներով չէր գերազանցել Զոպյուրոսին, սոսկ Կյուրոսից բացի, և պարսիկներից ոչ ոք չի հավակնի համեմատվել նրա հետ: Պատմում են, թե իբր Դարեհը բազմիցս ասել է, թե կուզենար Զոպյուրոսին տեսնել անվնաս, քան թե նվաճել ևս քսան Բաբելոն: (Դարեհը) մեծ պատիվներ է մատուցում նրան: Ամեն տարի արքան Զոպյուրոսին տալիս է այնպիսի բծծանքներ, որոնք առավել պատվաբեր են Պարսկաստանում: Բացի այդ, նա

Բաբելոնի կառավարումը ցմահ հանձնարարել էր Զոպյուրոսին, ընդ որում՝ ապահարկ, միաժամանակ շնորհելով նրան բազում այլ պատիվներ: Այս Զոպյուրոսի որդին էր Մեգաբյուզոսը, որը Եգիպտոսում գլխավորել էր պարսկական զորքերին աբեհացիների և սրանց դաշնակիցների դեմ[91]: Իսկ այս Մեգաբյուզոսի որդին էր այն Զոպյուրոսը, որը Պարսկաստանից փախստական եկավ Աթենք[92]:

ԳԻՐՔ ՉՈՐՐՈՐԴ

ՄԵԼՊՈՄԵՆԻ

1. Բարեբախտ նվաճիչը նեռն, Դարեհն անձամբ արշավում է սկյութների վրա: Քանի որ Ասիան բարգավաճում էր իր այրերով և այնտեղ կուտակվել էր մեծ հարստություն, Դարեհը ցանկանում է պատժել սկյութներին այն բանի համար, որ նրանք անցյալում ներխուժել էին Մեդիա և, պատերազմում հաղթելով իրենց գիտակցողներին, անարգարություն գործել: Ինչպես ասվեց հետագա ասել եմ, սկյութները քսանութ տարի տիրել են վերին Ասիային: Նրանք, հալածելով Զիմմերներին, ներխուժել էին Ասիա և վերացրել մեդացիների իշխանությունը, քանզի մինչև սկյութները գալը, Ասիային տիրում էին մեդացիները: Քսանութամյա բացակայությունից հետո սկյութները, այդքան ժամանակ անց, վերադառնում են իրենց երկիրը, որտեղ նրանց սպասում էր մեծագույն պատերազմից ոչ պակաս մի պատերազմ: Նրանք հանդիպում են ուժեղ զորքի գլխավորությամբ: Քանզի սկյութներն կանայք, քանի որ իրենց ամուսիններն երկար ժամանակ բացակայել էին և կենակցում էին ստրուկների հետ:

2. Իրենց բոլոր ստրուկներին սկյութները կուրացնում են հետևյալ կարգի պատճառով, որն ասվում է հետևյալ կերպ: Վերցնում են մի ճանապարհ ոսկորե փողակներ և դրանք մտցնելով զամբիկների հետույքը, բերանով օր են փչում դրանց մեջ, բերը դուրս, մինը փչում է, մյուսը դուրս: Գալիս են, որ իրենք կրում են այդպես հետևյալ պատճառով: Նրա զամբիկի երակը լցվում է օդով, երբ ասինքը կոխվում է գետ: Դրանց հետ կապը լցվում են փորած իսկ անասունների մեջ, այնհետև տալիս ստրուկներին կանգնեցնելով անասունների շարք, նրանց հետևում են քարշանարդելով խոտեղ կապը, որից հետո (սկյութները) հարմարում են երեսին կոխված կապը, որը հասարակ են առապել հարդի, իսկ ասկին մնացած կապը նրանք պատրաստում են դնեհատում: Սա այս պատճառով էլ սկյութները կուրացնում են

իրենց ձեռքն ընկած բոլոր գերիներին. քանզի նրանք հողագործներ չեն, այլ վաչկատուններ:

3. Սա այս ստրուկներից և (սկյութների) կանանցից առաջացել է երիտասարդ սերունդը: Իմանալով իրենց ծագման մասին, այդ երիտասարդները սկսում են դիմադրել Մեդիայից վերադարձող սկյութներին: Նախ նրանք պատնեշում են իրենց երկիրը, փորելով լայն խրամատ, որը ձգվում էր Տավրիկյան լեռներից մինչև Մայոտիս լճի ամենալայն հատվածը[6]: Այնուհետև, երբ սկյութները փորձել են անցնել այդ խրամատը, (երիտասարդները) կռվելով դիմադրել են նրանց: Երբ արդեն բազմիցս մարտեր են եղել և սկյութները չեն կարողացել որևէ առավելության հասնել, այնժամ նրանցից մեկն այսպես է ասել. «Այդ ի՞նչ ենք անում, սկյութ մարտիկներ: Մենք կռվում ենք մեր սեփական ստրուկների դեմ: Եթե նրանք մեզ սպանեն, մենք կնվազենք. իսկ երբ մենք նրանց սպանենք, հետագայում պակաս թվով ստրուկներ կունենանք: Ուստի այժմ, իմ կարծիքով, պետք է մի կողմ դնենք նիզակն ու աղեղը և ամեն մեկս, վերցնելով մեր ձիու մտրակը, շարժվենք նրանց վրա: Քանզի նրանք մեզ զինված տեսնելով, իրենց համարում էին մեզ հավասար և մեզ հավասարների ծնունդ: Բայց երբ արդեն մեզ տեսնեն զենքի փոխարեն մտրակ բռնած, ապա կհասկանան, որ իրենք մեր ստրուկներն են և այդ գիտակցելով, այլևս չեն դիմադրի»:

4. Լսելով այս խորհուրդը, սկյութները այդպես էլ վարվեցին: Մինչդեռ (ստրուկները) անաբեկվելով կատարվածից, մոռացան կռվելը և փախան: Այսպես, սա, սկյութները իշխեցին Ասիայում, բայց հետո, դուրս մղվելով մեդացիների կողմից, նրանք այս ձևով ճանաչեցին իրենց երկիրը: Այս էր պատճառը, որ Դարեհն ուզեց պատժել նրանց և զորք հավաքեց նրանց վրա արշավելու համար:

5. Սկյութների պատմածի համաձայն, բոլոր ժողովուրդներից առավել երիտասարդը իրենց ժողովուրդն է, որը առաջացել է հետևյալ կերպ: Նախապես ամայի այս երկրում առաջին բնակիչը եղել է Տարգիտաոս անունով մի մարդ: Նրանք պատմում են, թե այս Տարգիտաոսի ծնողները եղել են Զևսը և Բորյուսթենես գետի[7] դուստրը. ես, անշուշտ, դրան չեմ հավատում, բայց այդպես են պատմում: Այսպիսի ծագում ունեցել է Տարգիտաոսը, իսկ նա ունեցել է երեք որդի՝ Լիպոքսաիս, Արպոքսաիս և ամենակրտսերը՝ Կոլաքսաիս: Սրանց իշխանության ժամանակ, (իբր) երկնքից սկյութական երկրի վրա ընկել են ոսկե շինվածքներ՝ արոր, լուծ, սակուր և գավաթ[8]: Այս իրերն առաջինը տեսնում է ավագ եղբայրը, որը մոտենում է դրանք վերցնելու, բայց մոտենալիս ոսկին սկսում է այրվել: Այնժամ նա հեռանում է և մոտենում է երկրորդ եղբայրը, բայց ոսկին դարձյալ սկսում է այրվել: Այսպես, (երկու եղբայրները) սարսափած հեռանում են այրվող

ոսկուց. իսկ երբ (ոսկուն) մոտենում է երորդ՝ կրտսեր եղբայրը, այն ճանգում է և նա վերցնում ու տանում է ոսկին: Այդ պատճառով էլ ավագ եղբայրները համաձայնվում են թագավորական ամբողջ իշխանությունը ճանաչել ամենակրտսերին:

6. Արդ, պատմում են, թե այս Լիպոքսաիսից սերել է ավքատներ կոչված սկյութական ցեղը. միջնեկ եղբորից՝ Արպոքսաիսից, առաջացել են կատիարոսների և տրասպյանների ցեղերը. թագավոր (նշանակված) ամենակրտսերից՝ պարալատներ կոչվածները: Այս բոլորը միասին կոչվում են սկոլոտներ՝ թագավորի անունով. հելլեններն նրանց կոչեցին սկյութներ:

7. Այսպես են պատմում սկյութներն իրենց ծագման մասին: Նրանք հաշվում են, թե իրենց առաջին թագավոր Տարգիտաոսից մինչև Դարեհի արշավանքն իրենց երկրի վրա, անցել է հազար տարի, ոչ ավելի, ոչ պակաս: Այդ ոսկե սրբազան առարկաները թագավորները պահում են մեծ նարգանքով և ամեն տարի առատ զոհեր մատուցելով, երկյուղածաբար մեծարում դրանք: Նա, ով տոնախմբության ժամանակ բացօթյա հեի՝ այդ սրբազան ոսկին իր հետ ունենալով, ապա, ինչպես պատմում են սկյութները, նա տարին չի բոլորելու: Այդ իսկ պատճառով նրան պարգևում են այնքան երկիր, ինչքան կարող է շրջել ձին մեկ օրում: Քանի որ նրանց երկիրը մեծ էր, Կոլաքսաիսը այն բաժանել էր երեք թագավորության, իր երեք որդիների միջև. այդ երկրներից մեկը նա դարձրել էր առավել խոշոր, որտեղ և պահվում էր ոսկին: Սկյութների երկրից վերև, դեպի հյուսիս ընկած երկրում, ինչպես պատմում են, հնարավոր չէ ոչինչ տեսնել և անկարելի է այնտեղով անցնել՝ թռչող փետուրների պատճառով: Քանզի երկիրը և օդը այնտեղ լի են փետուրներով, որոնք և ծածկում են տեսողությունը:

8. Սկյութներն այսպես են պատմում իրենց և իրենցից հյուսիս գտնվող երկրի մասին: Իսկ Պոնտոսում բնակվող հելլեններն պատմում են հետևյալը: Հերակլեսը Գերյոնեսի եզներին քշելիս, հասնում է այդ ժամանակ դեռևս անբնակ այս երկիրը, որն այժմ բնակեցնում են սկյութները: Գերյոնեսը բնակվելիս է եղել Պոնտոսից դուրս, Թաղեյրայի մոտ, Հերակլյան Սյուներից[10] այն կողմ, օվկիանոսում գտնվող կղզում, որը հելլեններն կոչում են Էրյութեյա: Հելլեններն ասում են, թե օվկիանոսը, սկիզբ առնելով արևելքից, հոսում է երկրի շուրջը, բայց այն փաստով ապացուցել չեն կարողանում: Այստեղից, ասա, Հերակլեսը հասել է այժմ Սկյութիա կոչված երկիրը: Այնտեղ նա պատահել է սառնամանիքի: Իր վրա քաշելով առյուծենին, նա քնել է, իսկ նրա կառքին լծած ձիերը, որոնք արածելիս են եղել, այդ ընթացքում զարմանահրաշ կերպով անհետացել են:

9. Հերակլեսը, զարթնելով, փնտրել է դրանք, շրջելով ամբողջ երկիրը և, վերջապես, հասել է մինչև Հյուլայա[11] կոչված երկիրը: Այնտեղ նա հա-

տայրում պատահում է ինչ-որ խառնաբնույթ մի արարածի, որը ազգերից վերև կին էր, իսկ ներքև՝ օձ: Տեսնելով նրան, Հերակլեսը զարմանում է և հարցնում, թե տեսե՞լ է արդյոք որևէ տեղ իր մոլորված ձիերին: Նա պատասխանում է, թե ձիերն իր մոտ են, բայց ինքը չի վերադարձնի դրանց, մինչև Հերակլեսը չկենակցի իր հետ: Հերակլեսը, հանուն նման հատուցման, կենակցում է նրա հետ: Սակայն (օձ-կինը) ձգձգում էր ձիերին վերադարձնելը, կամենալով Հերակլեսին իր մոտ պահել ինչքան հնարավոր է ավելի երկար ժամանակ, մինչդեռ Հերակլեսը ցանկանում էր հեռանալ իր ձիերով: Ի վերջո, (օձ-կինը) վերադարձնում է ձիերին, ասելով. «Ինձ մոտ եկած այս ձիերին ես փրկեցի քեզ համար, և դու փոխարենը փրկագին ավեցիր. քանզի ես քեզանից երեք տղա ունեմ: Այժմ հայտնիր դու ինձ. ի՞նչ անեմ, երբ նրանք մեծանան: Նրանց թողնե՞մ այստեղ, քանզի ես այս երկրի տերն եմ, թե՞ ուղարկեմ քեզ մոտ»: Նա այսպես է հարցրել, իսկ Հերակլեսը, ինչպես պատմում են, պատասխանել է. «Երբ նկատես, թե տղաներն առնականացել են, վարվիր ինչպես ես քեզ կասեմ, ու չես սխալվի: Տե՛ս, թե ո՞ր մեկը նրանցից կկարողանա իմ աղեղը ձգել և գոտին կապել այնպես, ինչպես ես հիմա ցույց եմ տալիս քեզ, ապա նրան էլ կդարձնես այս երկրի բնակիչ: Իսկ նրան, ով իմ այս հրահանգները չկարողանա կատարել, երկրից դուրս արա: Այդպես անելով և՛ դու զոհ կլինես, և՛ կատարած կլինես իմ ցանկությունը»:

10. Այս ասելով, Հերակլեսը ձգում է իր երկու աղեղներից մեկը, քանզի մինչ այդ Հերակլեսը կրում էր երկու աղեղ, և ցույց տալով, թե ինչպես պետք է գոտևորվել, աղեղն ու գոտին, որի հարմանդի ծայրին ոսկե գավաթ կար կախած, հանձնում է նրան ու հեռանում: Երբ տղաները առնանում են, մայրը նրանց տալիս է անուններ. մեկին անվանում է Ագաթյուրսոս, մյուսին՝ Գելոնոս, իսկ ամենակրտսերին՝ Սկյութես: Այնուհետև, հիշելով Հերակլեսի պատվերը, նա կատարում է նրա հանձնարարությունը: Որդիներից երկուսը, Ագաթյուրսոսը և Գելոնոսը, չեն կարողանում հանձնարարվածը կատարել, ուստի և (մայրը) նրանց վտարում է երկրից: Մինչդեռ ամենակրտսերին, Սկյութեսին, հաջողվում է այն կատարել և նա մնում է այդ երկրում: Ահա այս Սկյութեսից, որը Հերակլեսի որդին է եղել, սերել են սկյութների բոլոր թագավորները. և այդ (ոսկե) գավաթի պատճառով է, որ մինչև հիմա սկյութներն իրենց գոտիների վրա կրում են գավաթներ: Սկյութեսի համար մայրը այս է միայն կատարել: Այսպես են պատմում Պոնտոսում բնակվող հելլենները:

11. Այդ մասին կա մեկ այլ զրույց ևս, որին ես առավել հակված եմ: Այն այսպիսին է: Ասիայում բնակվող վաչկատուն սկյութները, պատերազմում նեղվելով մասսագետներից, անցել են Արաքս գետը և եկել կիմմեր-

ների երկիրը. քանզի, ինչպես պատմում են, այժմ սկյութների զբաղեցրած երկիրը անցյալում պատկանելիս է եղել կիմմերներին[12]: Սկյութների այս առաջընթացը տեսնելով, կիմմերները գումարում են խորհուրդ, թե՝ ի՞նչ անել այդպիսի մեծաթիվ զորքի արշավանքի դիմաց: Նրանց կարծիքները բաժանվում են: Թեև երկու կողմերն էլ համառ էին, բայց առավել ազնիվ էր թագավորների կարծիքը: Այսպես, ժողովուրդը կողմնակից էր նահանջելու և պնդում էր, որ պետք չէ կռվել այդքան մեծաքանակ թշնամու դեմ և վտանգի ենթարկվել: Իսկ թագավորների կարծիքն էր՝ արշավողների դեմ կռվել հանուն իրենց երկրի: Այսպես, ո՛չ ժողովուրդն էր ուզում լսել թագավորներին, ո՛չ էլ թագավորները՝ ժողովրդին: Ուստի և մի մասը որոշում է հեռանալ և առանց մարտի երկիրը հանձնել արշավողներին: Իսկ թագավորները որոշում են իրենց հողի վրա կռվով մեռնել, քան թե փախուստի դիմել ժողովրդի հետ: Նրանք մտածում էին, թե ինչքան քարիք վայելել են (իրենց հայրենի երկրում) և ինչքան աղետներ կարող են կրել, եթե հեռանան իրենց հայրենիքից: Այսպես մտածելով, կիմմերները պատկվում են երկու հավասար մասի և կռվում իրար դեմ: Իրար ձեռքով բոլոր սպանվածներին կիմմերների համայնքը թաղել է Տյուրաս գետի մոտ, որտեղ նրանց գերեզմանը մինչև այժմ էլ տեսանելի է: Արդ, նրանց թաղելուց հետո, նրանք հեռանում են իրենց երկրից, իսկ սկյութները գալիս են և տիրում ամայի երկրին:

12. Տակավին այժմ ևս սկյութական երկրում կան Կիմմերյան պարիսպը, Կիմմերյան անցարանը, կա նաև Կիմմերյան կոչվող[13] երկիրը և, այսպես կոչված, Կիմմերյան Բոսպորոսը[14]: Փախչելով սկյութներից Ասիա, ինչպես հայտնի է, կիմմերները հաստատվել են այն թերակղզում, որտեղ այժմ գտնվում է հելլենների հիմնած Սինոպե քաղաքը: Հայտնի է նաև, որ սկյութները, կիմմերներին հետապնդելիս, շեղվել են ճանապարհից և ներխուժել Մեդական երկիր: Քանզի կիմմերները մշտապես շարժվում էին ծովափով, իսկ սկյութները նրանց հետապնդում էին Կովկասն աջ կողմում ունենալով, մինչև որ մտնում են Մեդական երկիր և շեղվում իրենց ուղղությունից դեպի միջերկրայքը: Այս զրույցը նույն ձևով պատմում են և՛ հելլենները, և՛ բարբարոսները:

13. Արիստեասը, Կաուստրոբիոսի որդին՝ Պրոկոնեսոսից[15], որը էպիկական պոեմի հեղինակ է եղել, ասում է, որ ինքը, հերշնչված Ֆոյբոսից[16], եկել է իսեդոնների մոտ: Իսեդոններից վերև ապրելիս են եղել արիմասպոսները՝ միականի մարդիկ. սրանցից վերև՝ ոսկու պահապան գրիֆոնները, իսկ սրանցից էլ վերև՝ հյուպերբորեյացիները[17], որոնք հասնում են մինչև ծով: Բացի հյուպերբորեյացիներից, այս բոլոր ցեղերը, առաջին հերթին արիմասպոսները, մշտապես հարձակվում են իրենց հարևանների վրա:

Իսեդոնները դուրս են քշվել իրենց երկրից արիմասպոսների կողմից, սկյութները՝ իսեդոնների կողմից. իսկ հարավային ծովի[18] ափերի մոտ բնակվող կիմմերները, հալածվելով սկյութներից, լքել են իրենց երկիրը: Այսպիսով, այս զրույցը ևս չի համընկնում այս երկրի մասին սկյութների հաղորդած զրույցին:

14. Թե ո՞րտեղացի էր այս բոլորը պատմող Արիստեասը, ես արդեն ասել եմ. այժմ կասեմ նաև այն, ինչ նրա մասին լսել եմ Պրոկոնեսոսում և Կյուզիկոսում: Պատմում են, թե Արիստեասը, որը ծագումով իր համաքաղաքացիներից և ոչ մեկից ցածր չէր, (մի անգամ) Պրոկոնեսոսում մտնում է թաղեգործատուն և այնտեղ մահանում: Թաղեգործը փակում է իր աշխատանոցը և գնում հայտնելու մահացածի հարազատներին: Ամբողջ քաղաքում արդեն տարածվել էր Արիստեասի մահվան լուրը, բայց Արտակե[19] քաղաքից ժամանած մի մարդ վիճարկում էր այն: Նա ասում էր, թե ինքը հանդիպել է նրան Կյուզիկոս գնալիս և զրուցել նրա հետ: Այս մարդը համառորեն պնդում էր իր ասածը, մինչդեռ մահացածի հարազատները գնում էին թաղեգործատուն, տանելով թաղման համար անհրաժեշտ պարագաները: Բայց բնակարանում Արիստեասը չի երևում ա՛չ մահացած, ո՛չ էլ կենդանի: Սակայն յոթ տարի անց Արիստեասը (իբր) հայտնվել է Պրոկոնեսոսում և ստեղծել է այն էպիկական պոեմը, որը այժմ հելլենները կոչում են «Արիմասպեականք»: Ստեղծելով այդ պոեմը, նա երկրորդ անգամ է անհայտացել:

15. Այսպես են պատմում այդ քաղաքներում: Բայց ես իմացել եմ, որ Իտալիայի Մետապոնտիոնում, Արիստեասի երկրորդ անհայտանալուց երկու հարյուր քառասուն տարի անց, տեղի է ունեցել հետևյալը, որը ես պարզել եմ, համեմատելով Պրոկոնեսոսի և Մետապոնտիոնի դեպքերը: Մետապոնտացիները պատմում են, թե Արիստեասը հայտնվել է իրենց երկրում և պատվիրել զոհասեղան կառուցել Ապոլլոնին և նրա մոտ կանգնեցնել պրոկոնեսոսցի Արիստեասի անունը կրող արձան: Քանզի նա ասել է, թե Ապոլլոնը բոլոր իտալիոտներից[20] միայն իրենց երկիրն է եկել, իսկ ինքը, որ հիմա Արիստեասն է, ուղեկցել է նրան: Ասածն ուղեկցելիս ինքը եղել է ագռավ[21]: Այս ասելով, նա անհայտացել է: Եվ մետապոնտացիները (դեսպան) են ուղարկում Դելֆի՝ ասածն հարցնելու, թե ի՞նչ էր նշանակում այդ մարդու ուրվականի հայտնվելը: Պյութիան պատվիրել է նրանց հնազանդվել ուրվականին, քանի որ հնազանդվելը նրանց համար ավելի լավ կլինի: Այսպիսի պատասխան ստանալով, նրանք հետևում են դրան: Այժմ այնտեղ կանգնած է Արիստեասի անունը կրող արձան, հիշտ Ապոլլոնի կուռքի կողքին, իսկ դրա շուրջը բարձրանում են դափնիներ: Այս կուռքը դրված է ագորայում: Արիստեասի մասին այսքանը բավական է:

16. Իսկ բե ի՞նչ կա առավել վերև այս երկրից, որի մասին ես պատմել սկսեցի, ոչ ոք ոչինչ որոշակի չգիտի: Քանզի ես դեռևս չեմ տեսել որևէ մեկին, որն ասի, թե ինքն ականատես է, որից էլ ես կարողանայի ճարցնել: Նույնիսկ քիչ առաջ նիշատակածս Արիստեասը ևս իր էպիկական պոեմում ասում է, որ իսսեդոնների երկրից այն կողմ չի գնացել, այլ դրանցից վերև գտնվողների մասին ինքը պատմել է ըստ իր լսածների, հայտնելով, թե դրանք պատմել են իսսեդոնները: Բայց ես կպատմեմ ճշտորեն և առավել հանգամանալից այն ամենը, ինչ կարողացել եմ լսել այդ երկրների մասին:

17. Բորյուսթենցիների նավահանգստին[22], որը գտնվում է ամբողջ սկյութական ծովափի համարյա մեջտեղում, առավել մոտիկ բնակվում են կալլիպիդները[23], որոնք հելլենական սկյութներ են. նրանցից վերև բնակվում է մեկ այլ ազգ, ալազոնները[24] կոչվող: Սրանք և կալլիպիդներն ընդհանրապես ապրում են մյուս սկյութների կենցաղով, բայց ցանում են և ուտում հաց, սոխ, սխտոր, ոսպ և կորեկ: Ալազոններից վերև բնակվում են երկրագործ սկյութները[25], որոնք ցորենը ցանում են ոչ թե ուտելու, այլ վաճառելու համար: Սրանցից վերև բնակվում են ճարերը, իսկ ճարերից հյուսիս, ինչքան գիտեմ, արդեն անբնակ է:

18. Սրանք են Հյուպանիս[26] գետի մոտ Բորյուսթենեսից արևմուտք (բնակվող) ցեղերը: Բորյուսթենեսից այն կողմ, ծովն անցնելուց հետո, գտնվում է Հյուպյա[27] երկիրը, իսկ դրանից վերև բնակվում են երկրագործ սկյութները. Հյուպանիս գետի վրա բնակվող հելլեններն սրանց անվանում են բորյուսթենցիներ. իսկ իրենք իրենց՝ օլբիոպոլսեցիներ[28]: Այս երկրագործ սկյութները գրաղեցնում են մի երկիր, որը տարածվում է դեպի արևելք, երեք օրվա նանապարհի չափ, մինչև Պանթիկապես կոչվող գետը, իսկ դեպի հյուսիս՝ մինչև տասնմեկ օր Բորյուսթենեսով դեպի վեր նավարկելու նանապարհ է: Նրանցից վերև մեծ տարածությամբ ամայի երկիր է: Այս ամայի երկրից այն կողմ բնակվում են մարդակերներ. սա առանձին ցեղ է, բոլորովին ոչ սկյութական: Իսկ սրանցից վերև ընկած է իսկական անապատը և, ինչքան մեզ հայտնի է, այնտեղ մարդիկ բոլորովին չկան:

19. Այս երկրագործ սկյութներից արևելք, Պանթիկապես գետից այն կողմը գրաղեցնում են արդեն վաչկատուն սկյութները, որոնք հրբեք ո՛չ ցանում են, ո՛չ հերկում: Այս ամբողջ երկիրը, բացի Հյուպյայից, անտառազուրկ է: Այս վաչկատուն ցեղերը գրաղեցնում են դեպի արևելք տասնչորս օրվա նանապարհի չափ տարածություն, մինչև Գերրոս գետը:

20. Գերրոս գետից այն կողմ գտնվում են թագավորական կոչված վայրերը: Այնտեղ ապրում են ամենամաք և բոլորից մեծամանակ սկյութները, որոնք մնացյալ սկյութներին նամարում են իրենց տարակները: Նրանց երկիրը նարավում տարածվում է մինչև Տավրիկե, արևելքում՝ մինչև խրամատը, որ փորել էին կույրերի նետանորդները, և մինչև Մայոտիս լճի վաճառատեղին, որը կոչվում է Կրեմնոյ[29]: Նրանց երկիրը մասամբ տարածվում է նաև մինչև Տանաիս[30]: Այս թագավորական սկյութներից վերև դեպի հյուսիս բնակվում են մելանխլենները[31]. այս ցեղը ուրիշ է, ոչ սկյութական: Մելանխլեններից վերև, ինչքան ինձ հայտնի է, ճանիներ են և անբնակ վայրեր:

21. Տանաիս գետն անցնելուց հետո, (երկիրն) այլևս սկյութական չէ, այլ առաջին իսկ երկիրը պատկանում է սավրոմատներին, որոնք բնակվում են, սկսած Մայոտիս լճի խորշից դեպի հյուսիս տասնհինգ օրվա հեռավորությամբ. այդ երկիրը զուրկ է վայրի և ընտանի ծառերից: Նրանցից վերև, հաջորդ տիրույթում, բնակվում են բուդիները, որոնց ամբողջ երկիրը խտությամբ ծածկված է բազմազան ծառերով:

22. Բուդիներից վերև, դեպի հյուսիս, ընկած է նախ ամայի մի երկիր, յոթ օրվա նանապարհի չափ, իսկ այնուհետև, անապատը վերջանալիս, դեպի արևելք, բնակվում են թյուսսագետները, մեծամանակ և ինքնուրույն մի ցեղ: Նրանք ապրում են որսորդությամբ: Նույն վայրերում նրանց հարևանությամբ բնակվում են իյուրկաներ կոչվածները. սրանք ևս ապրում են որսորդությամբ և որս են անում հետևյալ կերպ: Բարձրանալով ծառը, իսկ ամբողջ երկիրը ծառախիտ է, որսորդը դարանակալում է: Ամեն որսորդի հետ կա ձի, որը վարժեցրած է փորի վրա պառկելու, ցածրանալու և չերևալու համար, և մի շուն: Ծառի վրայից նկատելով գազանին, որսորդը արձակում է նետը և հեծնելով ձին, հետապնդում գազանին. իսկ շունը հետևում է նրան: Սրանցից վերև, դեպի արևելք բնակվում են մյուս սկյութները, որոնք, ըմբոստանալով թագավորական սկյութների դեմ, եկել են այս երկիրը:

23. Մինչև այս սկյութների երկիրը, ամբողջ երկրամասը, որի մասին ասվեց, դաշտային է և ծածկված է հողի թանձր շերտով. իսկ դրանից այն կողմ քարքարոտ է[32]: Այս դաժան երկիրը երկար անցնելուց հետո կհասնես մի վայր, որտեղ բարձր լեռների ստորոտում բնակվում են մարդիկ, որոնց մասին պատմում են, թե բոլորը՝ այրեր և կանայք, ի ծնե նաղատ են, կնատ քթով և երկար մորուքով[33]: Նրանք խոսում են իրենց ուրույն լեզվով, կրում են սկյութական տարազ և սնվում են ծառերի պտուղներով: Ծառը, որի պտուղներով սնվում են, կոչվում է պոնտիկոն. այն լինում է գրեթե թզենու մեծության, իսկ պտուղը՝ բակլայի չափ և մեջը կորիզով: Երբ այն հասունանում է, ճմլում են լաթի մեջ և դրանից ծորում է թանձր ու սև հյութ, որը կոչում են ասխյու. նրանք այն լիզում են կամ, խառնելով կաթի հետ, խմում, իսկ դրա խյուսից նրանք պատրաստում են բլիթներ և ուտում: Նրանց հոտերը շատ չեն, քանի որ այնտեղ լավ արոտավայրեր չկան: Ամեն

մեկն ապրում է ծառի տակ, որը ձմռանը ծածկում է սպիտակ բանձր բաղիքով, իսկ ամռանը բողնում է անծածկ: Նրանց ոչ ոք չի վնասում, քանզի նրանք համարվում են արքազան. նրանք նույնիսկ ռազմի զենք չունեն: Նրանք հարթում են հարևանների միջև ծագած վեճերը և եթե որևէ մեկը փախչելով ապաստանի նրանց մոտ, ոչ ոք նրան չի վնասի: Նրանց անունն է արգիպպայներ:

24. Մինչև այս հաղատ մարդիկն ընկած երկրները և նրանցից այս կողմ բնակվող ժողովուրդները լավ հայտնի են, քանի որ սկյութների մի մասը լինում է նրանց մոտ: Նրանց մասին դժվար չէ տեղեկություններ ստանալ ոչ միայն սկյութներից, այլև Բորյուսթենեսի և պոնտական այլ վաճառատեղիների հելլեններից: Իսկ սկյութները, երբ գալիս են արգիպպայների մոտ, նրանց հետ բանակցում են յոթ թարգմանների միջոցով, յոթ լեզվով:

25. Այսպիսով, մինչև այս հաղատ մարդիկն ընկած երկրները մեզ հայտնի են. բայց նրանցից վերև եղածի մասին ոչ ոք չի կարող հաստատապես պատմել: Քանզի այդ երկրներն անչափած են բարձր և անանցանելի լեռներով, որոնցով դեռ ոչ ոք չի անցել: Այդ հաղատները ասում են, իսկ ես նրանց ասածին չեմ հավատում, թե այդ լեռներում բնակվում են այծոտն մարդիկ, իսկ այդ լեռներից այն կողմ՝ այլ մարդիկ, որոնք տարվա վեց ամիսը քնում են: Անհա այս բանին ես բոլորովին չեմ հավատում: Իսկ հաղատներից արևելք գտնվող երկիրը հաստատապես հայտնի է, որ բնակեցված է իսսեդոններով: Սակայն իսսեդոններից և հաղատներից հյուսիս գտնվող երկրի մասին մենք ոչինչ չգիտենք, բայց միայն այն, ինչ նրանք պատմում են:

26. Պատմում են, թե իսսեդոններն այսպիսի սովորություններ ունեն: Երբ որևէ մեկի հայրը մահանում է, բոլոր հարազատները անասուններ են բերում, մորթում և միսը կտրատում: Այնուհետև կտրատում են նաև այդ մարդու մահացած հորը, որից հետո բոլոր կտորները խառնելով իրար, մատուցում են խնջույրին[34]: Իսկ (հանգուցյալի) գլուխը մաշկելուց հետո մաքրում են և, ոսկեզօծելով, պահում որպես կուռք և նրան մատուցում են ամենամյա զոհեր: Այդ զոհերը մատուցում է որդին իր հոր պատվին, ինչպես հելլենները հոգեհացին: Պատմում են, որ այս մարդիկ նաև արդարասեր են, իսկ կանայք այրերի հետ հավասար իրավունքներ ունեն:

27. Նրանց մասին մի բան ևս գիտենք: Իսսեդոններից վերև, ինչպես իրենք պատմում են, ապրում են միականի մարդիկ և ոսկու պահապան գրիփոններ: Նրանցից լսած լինելով, այդպես պատմում են սկյութները, իսկ մենք և ուրիշներ այդ մասին իմացել ենք սկյութներից, և նրանց սկյութերեն անվանում ենք արիմասպոսներ. քանզի արիմա նշանակում է՝ մեկ, իսկ սպու՝ աչք:

28. Հիշատակված այս ամբողջ երկրում ձմեռն այնքան դաժան է, որ (տարվա) ութ ամիսն այնտեղ անտանելի սառնամանիք է լինում և եթե ջուրը գետնին թափես, ապա այն ցեխ չի դառնա, իսկ կրակ վառելու դեպքում (ցեխ) կլինի: Այստեղ ծովը և ամբողջ Կիմմերյան Բոսպորոսը սառչում է այնպես, որ խրամատից ներս բնակվող սկյութներն արշավանքի են դուրս գալիս և իրենց սայլերով, ատրայցի վրայով, անցնում են մյուս կողմը, մինչև սինդերի երկիրը: Ութ ամիս, անա, այսպիսի ձմեռ է լինում այդ երկրում, իսկ մնացած չորս ամիսն էլ՝ սառնություն: Այստեղ ձմեռը բոլորովին տարբեր է մյուս բոլոր երկրների ձմեռներից: Քանզի երբ այլ երկրներում անձրևների շրջան է, այնտեղ համարյա անձրև չի թափվում, իսկ ամռանն անձրևն անդադար է: Երբ այլ երկրներում ամպրոպներ են լինում, այնտեղ այդպիսիք չեն լինում, իսկ ամռանը այնտեղ (ամպրոպները) հաճախակի են: Եթե ձմռանն ամպրոպ պատահի, ապա այն հրաշքի նման թվում է զարմանալի: Նույնպես և ամռանը թե ձմռանը սկյութական երկրում երկրաշարժ լինելու դեպքում այն համարվում է զարմանահրաշ բան: Ձիերը կարողանում են դիմանալ ու տանել այդպիսի ձմեռը, մինչդեռ ջորիներն ու էշերը բոլորովին չեն դիմանում: Ուրիշ երկրներում, ընդհակառակը, սառնամանիքին ձիերի հոդերը ցրտահարվում են, մինչդեռ էշերը և ջորիները դիմանում են:

29. Իմ կարծիքով, այնտեղի անեղջյուր կովերի տեսակի (գլխին) եղջյուրներ չեն բուսնում նույն այդ պատճառով: Իմ այս կարծիքը հաստատում է նաև Հոմերոսի հետևյալ խոսքը «Ոդիսական»-ում.

Լիբիան, որտեղ գառնուկները ծնվում են միշտ եղջյուրներով[35]

որը, ճիշտ է, քանի որ տաք երկրներում եղջյուրներն աճում են արագ, մինչդեռ ցուրտ երկրներում անասունները եղջյուրներ չունեն, իսկ եթե ունեն, ապա շատ մանր:

30. Այստեղ ցրտերի պատճառով այսպես է պատահում: Ես զարմանում եմ, իսկ իմ պատմածը սկզբից ևեթ հավելումների կարիք ունի, որ ամբողջ Էլիսում[36] ջորիներ չեն ծնվում, թեև այդ երկիրը ոչ ցուրտ է, ոչ ևս մեկ այլ ակնհայտ պատճառ կա: Իրենք՝ էլիսացիք ասում են, թե իրենց մոտ ջորիներ չեն ծնվում ինչ-որ անեծքի պատճառով: Ուստի և երբ գալիս է մատակ ձիերի բեղմնավորման ժամանակը, այնժամ դրանց քշում են հարևան երկրները, որտեղ և այդ ձիերը մերձենում են էշերի հետ, մինչև հղիանում են: Այնուհետև նրանց ետ են բերում:

31. Իսկ հիշատակված փետուրների մասին, որոնցով, ինչպես սկյութներն են պատմում, լցված է օդը և որոնց պատճառով, իբր, հնարավոր չի

լինում ո՛չ տեսնել երկրի հեռուն, ո՛չ էլ գնալ այնտեղ, ես այսպիսի կարծիք ունեմ: Այս երկրից հյուսիս մշտապես ձյուն է տեղում. ամռանը, անշուշտ, ավելի պակաս, քան ձմռանը: Արդ, ամեն ոք, ով մոտիկից տեսել է այդքան առատ ձյան տեղումը, կհասկանա իմ ասածը. քանզի ձյունը նման է փետուրների: Այսպիսի խիստ ձմռան պատճառով այս երկրամասի հյուսիսային հատվածներն անմարդաբնակ են: Իմ կարծիքով, անա, սկյութները և նրանց հարևանները ձյունը փետուրների նմանեցնելով, պատմում են այդպես: Ահա այն, ինչ պատմում են այդ առավել հեռավոր երկրի մասին:

32. Հյուպերբորեյացիների մասին ոչինչ չեն պատմում ո՛չ սկյութները, ո՛չ էլ այդ վայրերում բնակվող մյուս ցեղերը, բացի իսսեդոններից: Բայց ինձ թվում է, թե սրանք ևս ոչինչ չեն պատմում: Այլապես, սկյութները ևս կարող էին պատմել այնպես, ինչպես պատմում են նրանք միականիների մասին: Բայց Հեսիոդոսի մոտ խոսվում է հյուպերբորեյացիների մասին. Հոմերոսը ևս խոսում է նրանց մասին՝ էպիգոններ պոեմում[37], եթե, իրոք, այդ պոեմը հեղինակել է Հոմերոսը:

33. Նրանց մասին առավել շատ պատմում են դելոսցիները, ասելով, թե սկյութների երկիրը հյուպերբորեյացիների մոտից զոհաբերման ընծաներ են բերվում՝ ցորենի հարդի մեջ փաթաթած: Այդ (ընծաները) սկյութներից ընդունում են հարևան ցեղերը, որոնցից ամեն մեկն անընդմեջ դրանք հանձնում է ավելի ու ավելի հեռու (բնակվողներին), մինչև Ադրիական ծովը ծայր արևմուտքում[38]: Այստեղից (ընծաները) ուղարկվում են հարավ. նախ դրանք բերվում են Դոդոնեի հելլեններին, այնուհետև տարվում են Մալեայի ծովախորշը, որտեղից փոխադրվում են Եվբեա: Այստեղից դրանք ուղարկվում են քաղաքից քաղաք, մինչև Կարյուստոս: Այնուհետև, շրջանցելով Անդրոսը, կարյուստոսցիները դրանք բերում են Տենոս, իսկ տենոսցիները՝ Դելոս[39]: Պատմում են, թե այդ արբազան ընծաներն այսպես են բերվում Դելոս: Դելոսցիները պատմում են, թե հյուպերբորեյացիները այդ ընծաները առաջին անգամ ուղարկել են երկու աղջիկների միջոցով, որոնց դելոսցիներն անվանում են Հյուպերոքե և Լաոդիկե: Սրանց հետ, ապահովության համար, որպես ուղեկցող նրանք ուղարկել են հինգ հյուպերբորեյացի քաղաքացիների, որոնց էլ այժմ կոչում են Պերփերեաններ[40] և մեծ պատիվներ մատուցում Դելոսում: Բայց երբ ուղարկվածները չվերադարձան իրենց երկիրը, հյուպերբորեյացիները տագնապեցին, մտածելով, որ ուղարկվածներն ամեն անգամ կենդիպեն աղետի և չեն կարողանա հայրենիք վերադառնալ: Ուստի և (հետ այնու) նրանք սրբազան ընծաները, ցորենի հարդի մեջ փաթաթած, բերում էին իրենց երկրի սահմանները և դրանք հանձնում հարևաններին, խնդրելով ուղարկել մյուս ցեղերին: Ահա այս կերպ, ինչպես պատմում են, ընծաներն ուղարկվում էին և հասնում մինչև Դելոս:

Ես ինքս գիտեմ, որ նման բան կատարվում է սրբազան ընծաների հետ: Այսպես, թրակուհի և պայոնուհի կանայք թագուհի Արտեմիսին զոհեր մատուցելիս, ամեն անգամ սրբազան ընծաները բերում են ցորենի հարդի մեջ փաթաթած:

34. Եվ ես հաստատ գիտեմ, որ նրանք անում են այդպես: Ի պատիվ այս հյուպերբորեյացի կույսերի, որոնք վախճանվել են Դելոսում, դելոսցի աղջիկները և տղաները խուզում են իրենց մազերը: Աղջիկները ամուսնությունից առաջ իրենց մազերից կտրում են մի փունջ և այն իլիկի վրա փաթաթելով, դնում են (հյուպերբորեյացի կույսերի) գերեզմանի վրա: Այդ գերեզմանը գտնվում է Արտեմիսի սրբավայրում, ներս մտնողի ձախ կողմում, իսկ գերեզմանի վրա ձիթենի է բուսած: Իսկ դելոսցի տղաներն իրենց (կրտրած) մազերը կանաչ ոստի փաթաթելով, դարձյալ դնում են այդ գերեզմանի վրա:

35. Այսպիսի պատիվ են մատուցում Դելոսի բնակիչներն այդ աղջիկներին: Նույն դելոսցիները պատմում են, որ դեռևս Հյուպերոքեից և Լաոդիկեից էլ առաջ հյուպերբորեյացի երկու կին ևս՝ Արգեն և Օպիսը, նույն ցեղերի միջով անցնելով, հասել են Դելոս, բերելով իրենց հետ ընծաներ, որ խոստացել էին Իլիթիային[41], հեշտ ծննդաբերելու դիմաց: Ինչպես պատմում են, Արգեն և Օպիսը ժամանել են բուն իսկ աստվածների[42] հետ և դելոսցիները նրանց ևս մատուցում են մեծ պատիվներ: Քանզի Դելոսի կանայք նրանց համար հավաքում են (ընծաներ) և լիկիացի Օլենի հեղինակած օրհներգում անուններով հիշատակում նրանց[43]: Իսկ դելոսցիներից մյուս կղզիաբնակները և հոնիացիները սովորել են օրհներգել Օպիսին և Արգեին, հիշատակելով նրանց անունները և ընծաներ հավաքելով: Այս Օլենը եկել է Լյուկիայից և հեղինակել այլ հին օրհներգեր ևս, որոնք երգվում են Դելոսում: Զոհասեղանին ողջակիզված անասունների ազդրից մնացած մոխիրն այդ կանայք տանում և ցանում են Օպիսի և Արգեի գերեզմանի վրա, որը գտնվում է Արտեմիսի սրբավայրի ետևում, դեպի արևելք, կից կեռասցիների սեղանատանը:

36. Արդ, հյուպերբորեյացիների մասին ասվածը բավական է: Ես չեմ հաղորդի պատմությունն այն Աբարիսի[44], որի մասին ասում են, թե նույնպես հյուպերբորեյացի է եղել և որն իր հետ ու աղեղով շրջել է ամբողջ երկիրը, առանց որևէ բան ուտելու: Բայց եթե կան ծայրագույն հյուսիսում մարդիկ, ապա ուրիշներ ևս պետք է լինեն ծայրագույն հարավում: Ես ծիծաղում եմ, տեսնելով, որ շատերն արդեն գծել են երկրի քարտեզը, բայց և նրանցից ոչ մեկը չի կարողացել խելամտորեն բացատրել: Նրանք պատկերել են օվկիանոսը հոսելիս երկրի շուրջը, իսկ երկիրը կլոր, ասես կարկինով գծված, և Ասիան ու Եվրոպան իրար հավասար: Ուստի ես կարճառոտ

ցույց կտամ դրանցից յուրաքանչյուրի մեծությունը և այն, թե ինչպիսի գծագիր ունեն դրանք:

37. Պարսիկները բնակվում են մինչև Հարավային ծովը, որը կոչվում է Կարմիր: Նրանցից վերև դեպի հյուսիս բնակվում են մեդացիները, մեդացիներից (վերև)՝ սասպեյրները, սասպեյրներից (վերև)՝ կոլխերը, տարածվելով մինչև Հյուսիսային ծովը[45], որտեղ թափվում է Փասիս գետը: Անա այս չորս ազգերն են բնակվում մեկ ծովից մյուսն (ընկած երկրում):

38. Այստեղից դեպի արևմուտք, այս երկրամասից երկու թերակղզի ձգվում են ծովից ներս, որոնք ես կնկարագրեմ: Այստեղ թերակղզիներից մեկը հյուսիսում սկսվելով Փասիսից, ձգվում է ծովում, Պոնտոսի և Հելլեսպոնտոսի (ափերով) մինչև արոյական Սիգեյան: Հարավում այս նույն թերակղզին ձգվում է ծովում՝ Մյուրիանդինյան ծոցից դեպի Փյունիկիայի ափերը, մինչև Տրիոպե հրվանդանը: Այս թերակղզում ապրում են երեսուն ազգեր:

39. Սա թերակղզիներից մեկն է: Մյուս թերակղզին սկսվում է Պարսկաստանից և տարածվում մինչև Կարմիր ծով[46]: Այն ընդգրկում է պարսից երկիրը, նրան հարող Ասորեստանը և այնուհետև Արաբիան. այս թերակղզին վերջանում է, ոչ իրականում, այլ ընդհանուր կարծիքով, Արաբական ծոցում, որտեղ Դարեհը շրանցք հանեց Նեղոսից: Արդ, պարսից երկրից մինչև Փյունիկիա բնկած է ընդարձակ մի հարթավայր: Փյունիկիայից այս թերակղզին ձգվում է մեր ծովից Պաղեստինյան Սիրիայով ու Եգիպտոսով, որտեղ և այն վերջանում է: Այդ թերակղզում ապրում են միայն երեք ազգ:

40. Ասիայի այս երկրները գտնվում են Պարսկաստանից արևմուտք: Պարսիկներից, մեդացիներից, սասպեյրներից և կոլխերից վերև, դեպի արևելք, գտնվում է Կարմիր ծովը[47]: Դեպի հյուսիս՝ Կասպից ծովը և Արաքս գետը, որը հոսում է դեպի արևելք: Ասիան բնակեցված է մինչև Հնդկաստան, որից այն կողմ, դեպի արևելք, արդեն անապատ է և ոչ ոք չի կարող ասել, թե այն ինչպիսին է:

41. Անա այսպիսին է Ասիան և այս չափի: Իսկ Լիբիան գտնվում է այս երկրորդ թերակղզու վրա, քանզի Լիբիան անմիջականորեն հարում է Եգիպտոսին: Եգիպտոսի մոտ այս թերակղզին խիստ նեղ է, քանի որ մեր ծովից մինչև Կարմիր ծովը տաս բյուր գրկաչափ է, այսինքն՝ շուրջ հազար ասպարեզ: Այս նեղ վայրից հետո Լիբիա կոչված թերակղզին դառնում է խիստ լայն:

42. Ուստի ես զարմանում եմ նրանց վրա, ովքեր սահմանազատում են Լիբիան, Ասիան և Եվրոպան, թեև նրանց միջև տարբերությունը փոքր չէ: Երկարությամբ Եվրոպան ձգվում է մյուս երկու (երկրամասերի) կողքին, իսկ լայնությամբ, ինձ թվում է, այն հույնիսկ համեմատելի չէ նրանց հետ:

Լիբիան բացահայտորեն շրջապատված է ծովով, բացի Ասիային հարող հատվածից: Ինչքան մեզ հայտնի է, այս բանն առաջին անգամ ցույց է տվել Եգիպտոսի Նեկոս թագավորը: Նա, Նեղոսից մինչև Արաբական ծոցը տանող շրանցքի շինությունը դադարեցնելուց հետո, փյունիկեցիներին ուղարկել է նավերով, պատվիրելով վերադառնալիս անցնել Հերակլյան Սյուներով, մինչև Հյուսիսային ծովը[48] և այդպիսով հասնել Եգիպտոս: Արդ, փյունիկեցիները, սկսելով Կարմիր ծովից, նավել են հարավային ծովով: Աշնանը նրանք ափ էին դուրս գալիս և Լիբիայի որ մասում էլ լինեին, ամենուր նրանք ցանում էին և սպասում մինչև հունձը: Բերքը քաղելուց հետո նրանք (դարձյալ) նավարկում էին. ուստի և երկու տարի անցնելուց հետո, երրորդ տարում, շրջանցելով Հերակլյան Սյուները, հասնում են Եգիպտոս: Նրանք պատմել են, ես դրան չեմ հավատում, բայց ով ուզում է՝ թող հավատա, թե Լիբիայի շուրջը նավարկելիս, արևը գտնվում էր նրանց աջակողմում[49]:

43. Անա այսպես առաջին անգամ հանաչվել է Լիբիան. իսկ հետագայում, ինչպես իրենք են պատմում, այն հանաչել են կարթագենացիները[50]: Մինչդեռ Ամեմենյաններից Սատասպեսը, Տեասպեսի որդին, չի կարողացել նավարկել Լիբիայի շուրջ, թեև ուղարկված է եղել այդ նպատակով: Նա, վախեցած նավարկման երկարությունից և անհայտությունից, վերադարձել է, չկատարելով իր մոր հանձնարարած այդ ծանր գործը: Քանզի նա բռնաբարել էր Մեգաբյուզոսի որդի Զոպյուրոսի կույս դստեր: Քսերքսես արքան օրոշել էր նրան այդ հանցանքի համար ցցահան անել: Սակայն Սատասպեսի մայրը, որը Դարեհի քույրն էր[51], խնդրում է արքային, խնայել նրան, ասելով, որ ինքն առավել ծանր պատիժ կտանվանի, քան արքան. (հանցապարտը) պետք է նավարկեր Լիբիայի շուրջը, մինչև նորից կհասներ Արաբական ծոց: Քանի որ Քսերքսեսը համաձայնվեց, ապա Սատասպեսը, գալով Եգիպտոս և Եգիպտացիներից վերցնելով նավեր ու նավազներ, նավարկում է դեպի Հերակլյան Սյուները: Անցնելով դրանք, նա շրջանցում է Սոլոիս կոչված լիբիական հրվանդանը և նավարկում դեպի հարավ: Շատ ամիսներ նա նավարկում է ընդարձակ ծովում և պետք է դեռ ավելի նավարկեր, բայց ետ է շրջվում ու վերադառնում Եգիպտոս: Այնտեղից նա գալիս է Քսերքսես արքայի մոտ և պատմում, որ շատ հեռուներում նավելիս, նա անցել է կարճահասակ մարդկանց երկրի մոտով, որոնք կրում էին արմավենուց (պատրաստած) հագուստներ: Ամեն անգամ, երբ իրենք դուրս էին գալիս ափ, այդ մարդիկ, լքելով իրենց բնակավայրերը, փախչում էին դեպի լեռները: Իսկ իրենք, մտնելով նրանց բնակավայրերը, ոչ ոքի չէին վնասում, այլ միայն պարեն էին վերցնում նրանցից: Իսկ Լիբիայի շուրջը լրիվ շնավարկելու պատճառը նա համարում էր այն, որ (իրենց) նավը, իբր, չէր կարող առաջ շարժվել ու խրվել էր: Բայց Քսերքսեսը, չհավատալով, թե

նա նշմարիան է ասում, որպես իրեն տրված հանձնարարություն չկատարողի, ինչպես նաև հատուցելով հին հանցանքը, նրան ցցանան է անում: Այս Սատոսպեսի ներքինին, լսելով իր տիրոջ վախճանը, խսկույն փախչում է Սամոս, իր հետ տանելով մեծ հարստություն: Նրա հարստությանը տիրում է մի սամոսցի, որի անունը թեև գիտեմ, բայց ուզում եմ մոռանալ:

44. Ասիայի մեծագույն մասը բացահայտվել է Դարեհի կողմից, որը, կամենալով իմանալ, թե ո՞ր ծովն է թափվում Ինդոս գետը, որը իր պատկանող կոկորդիլոսներով երկրորդ գետն է, նավերով օտարկել է մարդիկ, որոնց հմտարտախոսությանը նա հավատում էր. նրանց մեջ եղել է նաև կարիանդացի Սկիլակոսը: Նրանք, մեկնելով կասպատյուրոս քաղաքից և Պակատիկի երկրից, նավարկել են գետն ի վար դեպի արևելք, մինչև ծով: Այնուհետև, ծովով դեպի արևմուտք նավարկելով, երեսուներորդ ամսին հասել են այն վայրը, որտեղից եգիպտոսի թագավորը, ինչպես արդեն ասել եմ, ուղարկել էր փյունիկեցիներին՝ Լիբիայի շուրջը նավարկելու համար: Այնուհետև, նավարկումից հետո, Դարեհը նվաճում է Հեղկասատանը և պատվում այդ ծովից: Այսպիսով, բացահայտվել է, թե Ասիան, բացի արևելյան մասից, նման է Լիբիային:

45. Իսկ թե ինչպես հայտնաբերվեց և արևելքում արդյո՞ք ազատվում է ծովից, հստակորեն հայտնի չէ ոչ ոքի: Սակայն հայտնի է, որ երկարությամբ այն հասնում է երկուսին՝ (Ասիային ու Լիբիային): Եվ ինձ համար անհասկանալի է, թե ինչո՞ն երկիրը մեկը լինելով հանդերձ, կրում է երկու անուն, երկրորդ կանանցի: (Դարեհը անհասկանալի է), թե ինչո՞ւ նրանց միջև սահմաններ հանդիսանում են Եգիպտոսի նեղոս գետը, Կոլխիսի Փասիս (գետը), Թրակիայի Հանուբիս գետը և Սիթիայի անցարանը: Ես չգիտեմ, Մատրոսի Հանուբիս գետը և Սիթիայի անցարանը ինչու՞ նման անուններ նրանց, որոնք սահմանել են այդ բաժանարարները և որտեղից ծագել են այդ (երկրամասերի) անունները: Քանի Լիբիան և որտեղից ծագել են այդ (երկրամասերի) անունները: Քանի Լիբիան, ինչպես Եվրոպան, ջրամերձ են ասում, կրում է մի անձնական կնոջ անունը, իսկ Ասիան՝ Պրոմեթևսի կնոջ անունը[52]: Լիդացիները նույնպես ասում են նույնպիսի լինել այդ անվան պատճառով, որ (այդ երկրամասը) կոչվել է Ասիա ոչ թե Պրոմեթևսի կնոջ՝ Ասիա անունից, այլ Թրակիայի Տրոս և Սարդեսի տղի Ասիայի անունից: Այս պատճառով էլ Իարդեսի ժառանգներից մեկը կոչվում է Ասիադա: Իսկ ինչ վերաբերում է Եվրոպային, ապա ոչ ոք չգիտե, թե (բոլոր կողմերից) այն արդյո՞ք ոլորված է ծովով և թե որտեղի՞ց ստացել է այս անունը և ո՞վ է այդպես անվանել: Մեծամտությամբ, որ այս երկիրն իր անունն ստացել է Տյուրոսցի Եվրոպայից, որ այս երկիրն իր անունն ստացել է Տյուրոսցի Եվրոպայից: Ինչպես նախկինում այս երկիրը ևս, մյուսների նման, ունի է անանուն: Այնուամենայնիվ, այս կինը ևս, հավանաբար, երևի չի եղել ճիշտների հիրավի ասելիքներ, այս կինը ևս, հավանաբար, երևի չի եղել ճիշտների հիրավի ասելիքներ: Նա Փյունիկիայից անցել է Արաբիա, իսկ Արաբիայից՝ կրկին

Այս ամենի մասին այսքան: Ես կօգտագործեմ արդեն նրանց համար բնորոշված (անունները):

46. Եվքսինյան Պոնտոսում, որտեղ արշավել է Դարեհը, բացառելով սկյութներին, բնակվում են բոլորից առավել ագետ մարդիկ: Մեծ չեմ կարող անվանել Պոնտոսի այս կողմում բնակվող որևէ ցեղ, որը հայտնի է եղել իր իմաստությամբ, չեմ լսել նաև որևէ իմաստուն մարդու մասին, բացի սկյութներից և (սկյութ) Անաքարսիսից: Սկյութական ցեղը բոլորի մեջ միակն է, որ տիրապետում է մարդկային գործերի մեջ իմաստնագույն մի բանի, բայց ուրիշ ոչնչի համար չեմ հիանում: Սկյութների մեծագույն ճնարն է այն, որ իրենց երկրի վրա հարձակվող ոչ մի թշնամի չի կարող փրկվել և ոչ ոք չի կարող նրանց ետևից հասնել, եթե իրենք չկամենան այդ: Քանի որ սկյութները ո՛չ քաղաքներ են կառուցում, ո՛չ էլ պարիսպներ, այլ իրենց բնակարանները տանում են իրենց հետ և բոլորը հեծյալ աղեղնավորներ են և ապրում են ոչ թե հերկելով, այլ անասնապահությամբ և նրանց տները սայլերի վրա են. ապա ինչպե՞ս նրանք չլինեն անհաղթելի և անմատչելի:

47. Սկյութների այս հնարանին նպաստում է նրանց երկիրը և օգնում են գետերը, որոնք նրանց դաշնակիցներն են: Որովհետև նրանց երկիրը հարթավայր է, խոտառատ և ջրառատ: Նրա միջով հոսում են թվով ոչ պակաս գետեր, քան Եգիպտոսի ոռոգման ջրանցքները: Ես կասեմ դրանցից առավել հայտնիների և ծովից սկսած հավարկելի եղողների անունները: Նախ՝ հինգ գետաբերան ունեցող Իստրոսը[53], այնուհետև՝ Տյուրեսը[54], և՛ Հյուպանիսը[55], և՛ Բորյուսթենեսը[56], և՛ Պանտիկապեսը[57], և՛ Հյուպակյուրիսը[58], և՛ Գերեոսը[59], և՛ Տանաիսը[60]: Այդ գետերի հոսանքն այսպիսին է:

48. Իստրոսը մեզ հայտնի բոլոր գետերից խոշորագույնն է, որը ամառ թե ձմեռ մշտապես հոսում է նույն արագությամբ: Այն, արևմուտքից սկսած, առաջին գետն է, որ հոսում է սկյութական երկրով: Նրա մեծության պատճառը հետևյալն է. նրա մեջ թափվում են ուրիշ գետեր ևս, որոնք մեծացնում են նրան: Դրանցից հինգը հոսում են սկյութական երկրի միջով: Մեկն այն է, որ սկյութները կոչում են Գորատա, հինգերորդը՝ Պյուրետոս[61], այնուհետև՝ Տիարանտոսը, Արարոսը, Նապարիսը և Օրդեսսոսը: Հիշյալ գետերից առաջինը խոշոր է և, հոսելով դեպի արևելք, իր ջրերը խառնում է Իստրոսին. երկրորդը, որը կոչվում է Տիարանտոս, առավելապես հոսում է դեպի արևմուտք և (առաջինից) փոքր է. իսկ Արարոսը, Նապարիսը և Օրդեսսոսը այս երկուսի մեջտեղով հոսելով, թափվում են Իստրոսի մեջ:

49. Այս գետերը բխում են բուն սկյութական երկրից և ջրառատ դարձնում Իստրոսը. իսկ Մարիս գետը, հոսելով ագաթյուրսոսների երկրից, միանում է Իստրոսին, մինչդեռ Հեմոսի[62] գագաթներից երեք այլ գետեր՝ Ա-

լասը, Աուրասը և Տիբիսիսը, հոսելով դեպի հյուսիս, թափվում են նրա մեջ: Այնուհետև Խարոս են թափվում Թրակիայի և թրակական կրոբիզների երկրի միջով հոսող Աբրյուսը, Նեսոը և Արտաճեսը. իսկ պայոնների երկրից և Հեռոդոտի լեռից հոսող Կիոս գետը, մեջտեղից հատելով Հեմոսը, թափվում է Խարոս: Իլլյուրիայից հոսում է դեպի հյուսիս Անգրոս գետը, որը մտնում է Տրիբալյան դաշտ ու թափվում Բրոնգոս գետը, իսկ Բրոնգոսը՝ Խարոս: Այսպիսով, Խարոսն ընդունում է այդ երկու խոշոր գետերը: Օմբրիացիների հյուսիսային երկրից դեպի հյուսիս հոսում են Կարպիս գետը և մեկ այլ՝ Ալպիս գետը և թափվում նրա մեջ. բանգի Խարոսը, հիրավի, հոսում է ամբողջ Եվրոպայի միջով, սկիզբ առնելով կելտերի երկրից, որոնք կյուսեռներից հետո Եվրոպայի ամենաարևմտյան բնակիչներն են: Ամբողջ Եվրոպայի միջով հոսելուց հետո, Խարոսը ծով է թափվում Սկյութիայի ծայրամասերում:

50. Այսպիսով, վերոհիշյալ գետերի, ինչպես և այլ գետերի Խարոսին խառնվելու հետևանքով այն դառնում է խոշորագույն գետերից մեկը: Այնուհանդերձ, եթե առանձին առանձին վերցնենք, Նեղոսն ինքնին ավելի ջրառատ է: Բանգի Նեղոսի մեջ չի թափվում և ոչ մի գետ կամ աղբյուր, որն այն կդարձներ առավել ջրառատ: Իսկ այն, որ Խարոսի ջրերը ամառ թե ձմեռ միանավասար են, իմ կարծիքով, բացատրվում է հետևյալով: Ձմռանը այդ գետի ջրերը իրենց սովորական մակարդակին են կամ փոքր-ինչ ավելի, քանի որ այդ երկրներում ձմռանը թեև քիչ անձրև է տեղում, բայց ձյունն ամենուրեք առատ է: Իսկ ամառ ժամանակ ձմռանը տեղացած այդ առատ ձյունը հալվելով, բոլոր կողմերից լցվում է Խարոս: Անհա այս հալվող ձյունը, ինչպես նաև հանախակի և առատ անձրևները, քանի որ ամռանը այնտեղ անձրևներ են լինում, լցնում են գետը: Եվ քանի որ ամռանն արևն ավելի շատ ջուր է կլանում, քան ձմռանը, ապա ամռանը Խարոսին խառնվող ջրերն ավելի շատ են, քան ձմռանը: Այս երկուսը, հակադրվելով իրար, հավասարակշռություն են ստեղծում և, թվում է, թե գետը միշտ միանավասար է:

51. Արդ, Խարոսը սկյութների գետերից մեկն է: Հաջորդն է Տյուրասը, որը հոսում է հյուսիսից և սկսվում սկյութական ու ճերերի երկիրը սահմանազատող մեծ լճից: Տյուրասի գետաբերանում բնակվում են ոյուրյանններ կոչված հելլենները:

52. Երրորդը Հյուպանիս գետն է, որը հոսում է սկյութական երկրով և սկսվում մի մեծ լճից, որի շուրջը արածում են վայրի, սպիտակ ձիեր: Այդ լիճը հիրավի կոչվում է Հյուպանիսի մայր: Սկիզբ առնելով նրանից, Հյուպանիս գետը հինգ օրվա նավարկման երկարությամբ խորունկ չէ և քաղցրահամ ջուր ունի. բայց այնուհետև մինչև ծով, չորս օրվա նավարկման

երկարությամբ, (նրա ջուրը) խիստ դառնաղի է. քանզի նրա մեջ է թափվում դառնաղի (ջրով) մի աղբյուր, այնքան դառնաղի, որ թեև փոքր է, բայց դառնացնում է Հյուպանիսը, որը փոքրաթիվ խոշոր գետերից է: Այդ աղբյուրը գտնվում է երկրագործ սկյութների և ալազոնների սահմանի վրա: Նրա անունը, ինչպես նաև այն երկրի անունը, որտեղից բխում է այդ աղբյուրը, սկյութերեն (կոչվում է) Տեսամպայոս, իսկ հելլեններեն լեզվով՝ Սրբազան ուղիներ: Տյուրեսը և Հյուպանիսը ալազոնների երկրում իրար շատ են մոտենում, այնուհետև նրանք թեքվում են տարբեր կողմեր և նրանց միջև տարածությունը լայնանում է:

53. Չորրորդը Բորյուսթենես գետն է, այս գետերից ամենախոշորը՝ Խարոսից հետո: Այս գետը, մեր կարծիքով, ամենաարգասաբերն է ոչ միայն սկյութական, այլև բոլոր մյուս գետերից, բացի եգիպտական Նեղոսից. քանզի սրա հետ ոչ մեկ այլ գետ չի կարող համեմատվել: Իսկ մյուս բոլոր գետերից ամենաարգասաբերն է Բորյուսթենեսը. այն պարգևում է անասուններին հիանալի և հյութալի արոտներ, նրա ջրերում բազմանում են գերազանց և մեծամանակ ձկներ, նրա ջուրը հաճելի խմվում է, այն հոսում է չինչ, մինչդեռ մյուսները պղտոր են: Նրա ափերին գերազանց ցանքեր են լինում, իսկ այն վայրերում, որտեղ ցանք չկա, բավ խոտ է աճում: Նրա գետաբերանին ինքնաբերաբար բյուրեղանում է անհաշիվ քանակությամբ աղ: Այն մատակարարում է աղելու համար խոշոր և անփույշ ձկներ[63], որոնց անվանում են անտակայներ, ինչպես նաև հիացման արժանի ուրիշ շատ բաներ: Հյուսիսում նրա հոսանքը հայտնի է քառասուն օրվա նավարկման հեռավորության վրա, մինչև Գերրա երկիրը: Իսկ թե առավել վերևում այն ի՞նչ մարդկանց երկրով է հոսում, ոչ ոք չի կարող ասել: Մինչև Լերկրագործ սկյութների երկիրը այն, ըստ երևույթին, հոսում է ամայի վայրերի միջով. քանզի այս սկյութները բնակվում են այդ գետի ափերին՝ տասս օրվա նավարկման տարածությամբ: Միայն այս գետի և Նեղոսի ակունքները ես չեմ կարող նշել. կարծում եմ, որ ոչ մի հելլեն նույնպես: Երբ Բորյուսթենեսը ծովին մոտիկ հոսելով (լայնանում է), նրան միախառնվում է Հյուպանիսը, արտահոսելով նույն ճահճուտը: Նրանց միջև եղած հողի սեպաձև շերտը կոչվում է Հիպպոլասի հրվանդան, որտեղ կառուցված է Դեմետրայի սրբավայրը: Սրբավայրի դիմաց, Հյուպանիսի ափին, բնակվում են բորյուսթենցիները:

54. Այսպիսիք են մեր գիտելիքներն այդ գետերի մասին: Սրանցից հետո ինգեբորդ գետը կոչվում է Պանտիկապես, որը նույնպես հոսում է հյուսիսից, սկիզբ առնելով լճից. սրա և Բորյուսթենեսի միջև բնակվում են երկրագործ սկյութները: Այս գետը, դուրս գալով Հյուլայա երկիրը, այնտեղից թեքվում է և խառնվում Բորյուսթենեսին:

55. Վեցերորդը Հյուպակյուրիս գետն է, որն սկսվելով լճից, կտրում-

անցնում է վաշկատուն սկյութների երկիրը և դուրս գալիս Կարկինիտիս քաղաքի մոտ, աջ կողմում թողնելով Հյուպայան և, այսպես կոչված, Ափիլեայան մրցարանը:

56. Յոթերորդ գետը՝ Գերրոսը, անջատվում է Բորյուսթենեսից, այն վայրում, որտեղ մեզ հայտնի է Բորյուսթենեսը: Նրա անջատման վայրը նույնպես կոչվում է Գերրոս: Այս գետը դեպի ծով հոսելիս, սահման է կազմում վաշկատուն սկյութների և երկրագործ սկյութների միջև, որից հետո միանում է Հյուպակյուրիսին:

57. Ութերորդը Տանաիս գետն է. այն վերևներում բխում է մի մեծ լճից և թափվում մեկ այլ առավել մեծ լիճ, որը կոչվում է Մայոտիս: Այս լիճը կազմում է սահման թագավորական սկյութների և սավրոմատների միջև: Տանաիսի մեջ թափվում է մեկ այլ գետ՝ Հյուրգիս[64] անունով:

58. Ահա սրանք են սկյութների երկիրը ողողող հայտնի գետերը: Այդ երկրում անող խոտը մեզ հայտնի բոլոր խոտերից առավել մաղձաբեր է անասունների համար: Անասունների հերձումը հատոգում է, որ այդ ճիշտ է:

59. Այսպիսով, կարևորագույն կենսամիջոցները դյուրամատչելի են սկյութներին. իսկ նրանց սովորություններն ահա թե ինչպիսի են: Նրանք պաշտում են միայն հետևյալ աստվածներին. առավելապես Հեստիային[65], այնուհետև Զևսին և Գեային[66]. նրանք Գեային համարում են Զևսի կինը. սրանցից հետո (պաշտում են) Ապոլլոնին, Ուրանիա[67] Ափրոդիտեին, Հերակլեսին և Արեսին: Համայն սկյութներն այս աստվածներին պաշտում են. իսկ թագավորական կոչված սկյութները զոհեր են մատուցում նաև Պոսեյդոնին: Հեստիան սկյութերեն կոչվում է Տաբիտի, Զևսը, իմ կարծիքով, միանգամայն արդարացի, կոչվում է Պապայոս[68], Գեան՝ Ապի, Ապոլլոնը՝ Գոյտոսյուրոս, Ուրանիա Ափրոդիտեն՝ Արգիմպասա, Պոսեյդոնը՝ Թարգիմասադոս. նրանք սովորություն չունեն արձաններ և զոհասեղաններ ու տաճարներ կանգնեցնել աստվածներին, բացի Արեսից. Արեսի համար նրանք այսպիսի սովորություն ունեն:

60. Բոլոր աստվածներին և բոլոր տոնակատարությունների ժամանակ նրանց զոհաբերման արարողությունները միատեսակ են և կատարվում են հետևյալ կերպ: Զոհաբերվելիք կենդանին կանգնեցվում է առջևի զույգ ոտքերն իրար կապած. մինչդեռ զոհաբերողը, կենդանու եռևը կանգնած, քաշում է պարանի ծայրը և կենդանուն գետին գլորում: Կենդանու վայր ընկնելու պահին նա կոչում է այն աստծուն, որին մատուցվում է զոհը: Այնուհետև նա (պարանի) օղակ է գցում կենդանու վզին և օղակին անցկացրած գավազանը պտտեցնելով, խեղդում նրան, առանց կրակ վառելու, առանց արբագործման և առանց հեղում կատարելու: Կենդանուն խեղդելուց հետո այն քերքում են և եփում:

61. Քանի որ սկյութական երկիրը շատ անտառազուրկ է, ապա սկյութները միսը եփելու համար հետևյալ հնարն են գտել: Զոհաբերված անասունը քերթելուց հետո, ոսկորները մաքրում են մսերից և հետո մսերը լցնում տեղական կաթսաների մեջ[69], եթե այդպիսիք պատահաբար այնտեղ գտնվեն: Այդ կաթսաները շատ նման են լեսբոսյան կրատերներին[70], սակայն շատ ավելի խոշոր են: Մսերը դնելով այդ կաթսաների մեջ, եփում են, դրանց տակը այրելով զոհաբերված անասունի ոսկորները: Իսկ եթե նրանց մոտ կաթսա չգտնվի, ապա ամբողջ միսը դնում են զոհաբերվածի փորի մեջ և, հետը շուր լցնելով, դրա տակը այրում են ոսկորները: Ոսկորները գերազանց այրվում են, իսկ փորի մեջ լիովին տեղավորվում են ոսկորներից մաքրված մսերը: Այսպիսով, եզը եփում է ինքն իրեն. այդպես նաև մյուս զոհերը: Միսը եփվելուց հետո, զոհաբերողը մսի մի մասը և փորոտիքը տանում է աստծուն և դրանք գցում նրա առաջ: Նրանք զոհաբերում են նաև այլ կենդանիներ, առավելապես ձիեր:

62. Այս եղանակով նրանք այսպիսի կենդանիներ զոհ են մատուցում բոլոր մյուս աստվածներին. իսկ Արեսին նրանց զոհաբերությունները կատարվում են հետևյալ կերպ: Սկյութների իշխանության յուրաքանչյուր նահանգում հիմնված է Արեսին նվիրված այսպիսի սրբավայր: Դարսում են իրար վրա խոտվի կապոցներ երեք ասպարեզ երկարության և նույնքան լայնության վրա, բայց ավելի փոքր բարձրությամբ: Դրա գագաթին պատրաստում են քառակուսի հարթակ, երեք կողմից ուղղաձիգ, իսկ մի կողմից՝ մատչելի: Ամեն տարի դրա վրա կիտում են հարյուր հիսուն սայլ խոտվի, քանի որ ձմռան բուքից այն միշտ ցածրանում է: Այս սրբազան դեզի վրա յուրաքանչյուր ցեղ ցցում է մի հին երկաթյա ակինակ, որը և Արեսի (պաշտվող) կուռքն է: Այս ակինակներն նրանք ամեն տարի զոհաբերում են ընտանի կենդանիներ և ձիեր, նույնիսկ ավելի շատ, քան մյուս աստվածներին: Գերի վերցված հարյուր թշնամուց մեկին նրանք զոհաբերում են, բայց ոչ այն եղանակով, ինչ անասուններին, այլ մեկ ուրիշ: Զոհվելիք մարդկանց գլուխները գինիով ցողելուց հետո, նրանց մորթում են մի անոթի վրա: Այնուհետև, բարձրանալով խոտվիների դեզի վրա, արյունով ցողում են ակինակեն: Արյունը նրանք տանում են վերև, իսկ ներքևում, սրբավայրում, կատարում են հետևյալը: Կարում են զոհաբերված մարդկանց աջ ուսերը ձեռքերի հետ, և դրանք նետում օդ: Այնուհետև, մյուս կենդանիների զոհաբերումն ավարտելուց հետո, նրանք հեռանում են: Զեռքը մնում է իր ընկած տեղում, իսկ դիակը՝ առանձին:

63. Նրանց մոտ, ահա, հաստատված են զոհաբերության այսպիսի սովորություններ: Նրանք խոզեր չեն զոհաբերում և ոչ էլ, ընդհանրապես, ուզում են իրենց երկրում անեցնել այդ կենդանիներին:

64. Իսկ նրանց ռազմական սովորություններն այսպիսի են: Սկյութը խմում է իր սպանած առաջին թշնամու արյունից: Պատերազմում իր սպանած բոլոր թշնամիների գլուխները նա բերում է թագավորին. քանզի թշնամու գլուխը բերելու դեպքում նա ստանում է վերցված ավարից մի մաս, իսկ եթե չբերի՝ ոչ: Գլուխը մաշկազերծում է հետևյալ կերպ. գլխին, ականջների մոտ, կլոր կտրվածք է անում, որից հետո գլուխը բռնելով վերևից, այն թափ է տալիս: Եզան կողոսկրով գլխի կաշին մսից մաքրելուց հետո, այն տարորում է ձեռքերով և այդ եղանակով մշակված կաշին օգտագործում է որպես թաշկինակ և այն կապելով իր հեծած ձիու սանձից, դրանով պարծենում է և հրճվում: Ով առավել շատ այդպիսի կաշվե թաշկինակներ ունենա, նա էլ կնամարվի բոլորից քաջարի: Նրանցից շատերը այդպիսի մաշված կաշիներից նույնիսկ բիկնոցներ են պատրաստում, դրանք ոչխարի մորթու նման իրար կարելով: Շատերը նույնիսկ սպանված թշնամու մաշկը աջ ձեռքի եղունգների հետ մաշկելով, իրենց կապարճի համար պատյան են պատրաստում: Հիրավի, մարդու մաշկը և՛ հաստ է, և՛ պպզուն, այն գրեթե բոլոր մաշկերից առավել սպիտակ է իր փայլով: Կան նաև այնպիսիները, որոնք թշնամու ամբողջ դիակը մաշկազերծելով, մաշկը ձգում են տախտակի վրա և այն իրենց հետ կրում ձիերի վրա:

65. Այսպիսի են նրանց սովորույթները: Իսկ թշնամիների,— ոչ բոլորի, այլ ամենակատաղիների,— կառափների հետ վարվում են այսպես: Նախ, հոնքերից ներքև սղոցում են կառափը և մաքրում: Եթե սկյութը աղքատ է, ապա կառափը դրսից պատում է միայն եզան անմշակ կաշվով, և այդպես է օգտագործում այն. իսկ եթե նա հարուստ է, ապա կառափը նա ևս պատում է եզան անմշակ կաշվով, բայց ներսից այն ոսկեզոծում է և այդպես օգտագործում իբրև գավաթ: Սկյութները այսպես են վարվում նաև իրենց ազգականների հետ, եթե նրանց հետ վեճի մեջ են եղել և թագավորի առաջ հաղթանակ տարել նրա հանդեպ: Երբ սկյութը հարգարժան հյուրեր է ունենում, ապա նրան ցույց է տալիս այդ կառափները և պատմում, թե այդ ազգականները եղել են իր թշնամիները և ինքը հաղթել է նրանց: Այս արարքը նրանք համարում են քաջագործություն:

66. Տարին մեկ անգամ յուրաքանչյուր շրջանի կառավարիչ[7] իր շրջանում մի կրատերով գինի է լցնում, որից խմում են սկյութներից նրանք, որոնք թշնամի են սպանել. իսկ նրանք, որոնք չեն կարողացել այդ անել, չեն կարող խմել այդ գինուց, այլ ամոթանար նստում են մի կողմ քաշված: Նրանց համար սա մեծագույն ամոթանք է: Մինչդեռ նրանք, որոնք սպանել են մեծ թվով թշնամիների, յուրաքանչյուրն ունենում է երկու գավաթ (գինի) և դրանք խմում է միանգամից:

67. Սկյութների մեջ շատ գուշակներ կան. նրանք գուշակում են մեծ

թվով ուռենու ճիպոտների միջոցով, հետևյալ կերպ: Նրանք բերում են ճիպոտների խոշոր կապոցներ և դրանք դնում գետնին. այնուհետև քանդում են կապոցները և ամեն մի ճիպոտն առանձին իրար կողքի շարելով, գուշակություններ անում. գուշակություններն արտասանելիս դարձյալ ի մի են հավաքում ճիպոտները: Գուշակելու այս եղանակը նրանց հայրենի ժառանգությունն է: Իսկ կին-աղամարդ ենարեյները ասում են, թե գուշակելու արվեստն իրենց պարգևել է Ափրոդիտեն: Նրանք գուշակում են լոռենու կեղևով, որը երեք մասի բաժանելուց հետո, երիզները փաթաթում են իրենց մատներին և գուշակություններ արտասանելով, նորից արձակում:

68. Սկյութների թագավորը, հիվանդանալիս, պատվիրում է իր մոտ հրավիրել առավել հայտնի երեք գուշակների, որոնք գուշակությունը կատարում են վերոհիշյալ եղանակով: Եվ նրանք, մեծավ մասամբ, այսպիսի գուշակություն են անում, որ իբր այս կամ այն մարդը, և տալիս են բնակիչներից մեկի անունը, երդմնազանց է եղել թագավորական օջախի (աստվածների) հանդեպ. եթե սկյութները կամենան ամենամեծ երդումն անել, ապա, սովորաբար, երդվում են թագավորական օջախի (աստվածների) անունով: Երդմնազանցության մեջ մեղադրվածին անհապաղ բռնում և բերում են թագավորի առաջ: Նրան բերելուց հետո գուշակները մեղադրում են, ասելով, թե ինչպես երևում է գուշակումից, նա երդմնազանց է եղել թագավորական օջախի (աստվածների) հանդեպ, որի հետևանքով էլ թագավորը հիվանդացել է: Մեղադրյալը վրդովվում է և ժխտում, ասելով, թե ինքը երդմնազանց չի եղել: Այսպես, եթե նա ժխտում է, թագավորն այնժամ հրավիրում է կրկնակի թվով ուրիշ գուշակների: Եթե սրանք ևս, գուշակություն անելով, այդ նույն մարդուն մեղավոր են ճանաչում երդմնազանցության մեջ, ապա իսկույն նրան գլխատում են, իսկ նրա ունեցվածքը վիճակով բաշխում են առաջին գուշակներին: Բայց եթե նոր բերված գուշակները արդարացնում են նրան, ապա բերում են ուրիշ գուշակների ևս, հետո ուրիշների ևս: Եվ եթե գուշակների մեծամասնությունը արդարացնում է այդ մարդուն, ապա մահվան են դատապարտում առաջին գուշակներին:

69. Նրանց մահապատժի եղանակը հետևյալն է: Եզներով լծված սայլը ամբողջապես բարձում են խոտով. իսկ այդ գուշակներին, շղթայված ոտքերն ու ձեռքերը հետին կապած, խցկում են այդ խոտերի մեջ: Այնուհետև կրակ տալով խոտերին, վախեցնում են եզներին ու բաց թողնում: Հանախ եզները այրվում են գուշակների հետ միասին: Բայց երբեմն, առեղը վառվելուց հետո, այրուցքներ ստացած եզները փրկվում են: Այս եղանակով նրանք այրում են գուշակներին նաև այլ զանցանքների համար, նրանց անվանելով կեղծ գուշակներ: Թագավորը որևէ մեկին մահապատժի ենթարկե-

լիս, չի խնայում անգամ նրա որդիներին. բոլոր տղաներին սպանում է, բայց աղջիկներին վնաս չի պատճառում:

70. Դաշինք հաստատելիս սկյութները երդվում են հետևյալ կերպ: Կավե մեծ բաժակի մեջ լցնում են գինի և դրան խառնում դաշինքի մասնակիցների արյունը, որը վերցնում են մարմինը հերյունով ծակելով կամ դանակով բերելով: Այնուհետև այդ բաժակի մեջ թաթախում են ակինակե, նետատապարմներ, տապար և նիզակ: Այս ծեսը կատարելուց հետո շատ մաղթանքներ են ասում, որից հետո բաժակից խմում են և՛ իրենք, դաշինք հաստատողները, և՛ ներկաներից արժանիները:

71. Թագավորների դամբարանները գտնվում են Գերրայում[72]: Մինչև այստեղ Բորյուսթենեսը նավարկելի է: Երբ մահանում է նրանց թագավորը, փորում են քառակուսի մեծ փոս. այն պատրաստելուց հետո, դիակը, որը ծեփած է մոմով, փորը հերձված ու մաքրված, լցված մանրացրած կյուպեռով[73], բուրավետ նյութերով, կարոսի սերմերով, անիսոնով ու վերստին կարած, դնում են սայլի վրա և տանում մեկ այլ ցեղի մոտ: Սրանք ևս, սատանալով բերված դիակը, անում են այն ամենը, ինչ և թագավորական սկյութները. կտրում են իրենց ականջից մի կտոր, մազերը կլոր խուզում են, բազուկի շուրջ կտրվածք անում, ճանկռոտում իրենց ճակատն ու քիթը, և ձախ ձեռքը խոցում սլաքներով: Այստեղից թագավորի դիակը սայլի վրա տանում են իրենց տիրության մեկ այլ ցեղի մոտ. դիակին ուղեկցում են նրանք, որոնց մոտ այն նախապես բերվել էր: Երբ դիակը տանողներն արդեն շրջագայած են լինում բոլորի մոտ, նրանք գալիս են Գերրայ, (թագավորների) դամբարանները, այն ցեղերի մոտ, որոնք իրենց տիրության ամենահեռավոր մասերում են բնակվում: Այստեղ դիակը դնում են գերեզման, հարդե փռոցի վրա, դիակի այս և այն կողմից ճողին երկու նիզակ ամրացնելով, վրան քաշում են տախտակ և ծածկում եղեգնյա խսիրով: Գերեզմանի մնացած տարածության մեջ, նախապես խեղդելուց հետո, թաղում են (թագավորի) նարներից մեկին, ինչպես նաև մատռակին, խոհարարին, ձիապանին, սպասավորին, բանբերին, ձիերին, ամեն ինչի երախայրիքը, ինչպես նաև ոսկե գավաթներ. արծաթ և պղինձ նրանք չեն օգտագործում: Այս ամենն անելուց հետո, նրանք բոլորի գերեզմանի վրա բարձրացնում են մեծ ճողաթումբ, և մրցում իրար հետ այն առավել բարձր պատրաստելու համար[74]:

72. Տարին լրանալիս, նրանք դարձյալ անում են հետևյալը: Վերցնում են թագավորի մնացած սպասավորներից առավել նվիրվածներին,— իսկ նրանք բոլորը բնածին սկյութներ են, քանզի ամեն ոք, ում թագավորը նրամայի, պարտավոր է ծառայել նրան. իսկ թագավորը արծաթագին սպասավորներ չի ունենում,— և այդ սպասավորներից հիսունին խեղդամահ են

անում. խեղդամահ անում են նաև հիսուն լավագույն ձիերի. հետո, թափելով նրանց փորերը և մաքրելով, հարդ են լցնում և դարձյալ կարում: Այնուհետև երկու ցցի վրա դնում են անիվի շրջանակի կեսը, կորությունը դեպի ներքև, իսկ մյուս կեսը՝ երկու այլ ցցի վրա: Այս ձևով նրանք հողին խրում են մեծ թվով ցցեր, որից հետո, ձիերի մարմնով մեկ մինչև վիզը հաստ ցցեր վարսելով, բարձրացնում են անիվների շրջանակների վրա: Առջևի շրջանակը պահում է ձիու ուսը. իսկ հետևի շրջանակը՝ փորն ու ազդրերը, մինչդեռ առջևի ու հետևի ոտքերը ազատորեն կախվում են ցած: Այնուհետև, ձիերին սանձ ու լկամ հագցնելով, ձգում են սանձը և այն կապում ցցերից: Իսկ խեղդամահ արված հիսուն պատանիներից յուրաքանչյուրին ձի են նստեցնում հետևյալ կերպ: Յուրաքանչյուր դիակի մարմնի միջով, ողնաշարի կողքով, անցկացնում են ուղիղ մի ցից, մինչև պարանոցը: Ներքևի կողմից մարմնից դուրս մնացած ցցի ծայրը ազատում են ձիու մարմնով անցկացրած ցցի վրա արված անցքին: Այսպիսով, դամբարանի շուրջ նման հեծյալներ դնելով, նրանք հեռանում են:

73. Այսպես թաղում են նրանք թագավորներին: Իսկ մնացյալ սկյութներին, երբ նրանք մահանում են, մեծավորագույն ազգականները, դիակը սայլի վրա դրած, տանում են բարեկամների մոտ: Բարեկամներից յուրաքանչյուրը դիմավորում է դիակը և հյուրասիրում ուղեկցողներին: Ընդ որում, մեռյալին ևս մատուցում են նույնպիսի ուտեստ, ինչ բոլոր մնացածներին: Հասարակ մարդկանց դիակները քառասուն օր այսպես ման են ածում, որից հետո՝ թաղում: Թաղումը կատարելուց հետո սկյութները մաքրվում են հետևյալ կերպ: Նախ օծում են իրենց գլուխը և այն լվանալուց հետո, մարմինը (մաքրում են) այսպես. տնկում են փայտե երեք ձող, վերևի ծայրերն իրար միացրած. այնուհետև շրջանակի դրանց վրա քաշում են բրդե թաղիք. թաղիքն ամուր ձգելուց հետո, թաղիքե վրանում դրված տաշտի մեջ լցնում են կրակից շիկացած քարեր:

74. Նրանց երկրում աճում է կանեփ, որը շատ նման է վուշին, բայց շատ ավելի հաստ է և խոշոր: Սրանով է կանեփը գերազանցում վուշին: Այն բուսնում է և՛ ինքնաբերաբար, և՛ ցանովի: Դրանից թրակացիները պատրաստում են զգեստներ, շատ նման վուշե զգեստներին, այնպես, որ ոչ շատ նմուտ մարդը չի կարող իմանալ այն վուշի՞ց է, թե՞ կանեփից. իսկ նա, ով երբեք չի տեսել կանեփե զգեստ, ապա նրան կթվա, թե այն վուշյա է:

75. Սկյութները, ահա, վերցնելով այս կանեփի սերմերը, մտնում են այդ թաղիքների տակ և սերմերը նետում կրակից շիկացած քարերի վրա: Դրանից սերմը այնքան ծուխ և գոլորշի է արձակում, որ հելլենական ոչ մի շոգեբաղնիք չի կարող այն գերազանցել: Այդ շոգեբաղնիքում սկյութ-

ներբ ոռնում են բավականությունից: Սա իրենց համար փոխարինում է բաղնիքի. քանզի նրանք իրենց մարմինը չրով երբեք չեն լվանում: Իսկ նրանց կանայք անողորկ քարի վրա առորում են նոնու, մայրու և խնկենու կառուանքներ՝ վրան չուր լցնելով: Այնուհետև, այդ առորումից ստացված քանձր մածուկը քսում են ամբողջ մարմնին և դեմքին: Դրանից նրանց մարմինը ստանում է հաճելի բուրմունք. իսկ հաջորդ օրը այդ քսուկը սրբելուց հետո, մարմինը դառնում է մաքուր և պսպղուն:

76. Օտար սովորույթներից սրանք ևս խստորեն խուսափում են. ընդ որում ոչ միայն մյուս ցեղերի, այլ առավելապես հելլեններին սովորույթներից: Այդ բացահայտվեց Անաքարսիսի և կրկին անգամ Սկյոլեսի միջոցով: Անաքարսիսը, որը տեսել էր շատ երկրներ և այնտեղ դրսևորել իր մեծ իմաստությունը, վերադառնում էր սկյութական երկիր և Հելլեսպոնտոսով նավելիս, կանգ է առնում Կյուզիկոսում: Այդ ժամանակ կյուզիկոսցիները նանդիսավորությամբ կատարելիս են լինում աստվածների մոր տոնը, ուստի Անաքարսիսը խոստանում է (աստվածների) մորը, որ եթե ողջ և անվնաս վերադառնա իր տուն, ապա նրա պատվին ինքը զոհեր կմատուցի այնպես, ինչպես այդ տեսավ կյուզիկոսում, և կնաստատի ամբողջ գիշեր տևող տոնախմբություն[75]: Հասնելով սկյութական երկիր, նա քաղուն մեկնում է Հյուլայա կոչված վայրը, որը Ափիլլեսյան մրցարանի մոտ է և ամբողջապես ծածկված է խիտ ու բազմապիսի ծառերով: Անաքարսիսը, սա, այստեղ գալով, լրիվ կատարում է աստվածուհու տոնը՝ թմբուկ զարնելով և իր վրա (աստվածուհու) պատկերներ կախելով: Ոմն սկյութ նկատում է նրան այդպես անելիս և հայտնում թագավոր Սաուլիոսին, որը և անձամբ գալով այնտեղ ու տեսնելով, որ Անաքարսիսը կատարում է այդ ծեսերը, աղեղից նետ արձակելով սպանում է նրան: Եվ այժմ, եթե որևէ մեկը հարցնի Անաքարսիսի մասին, սկյութները կպատասխանեն, թե նրան չեն ճանաչում, և այս այն պատճառով, որ նա, մեկնելով Հելլադա, հետևել է օտար սովորույթների: Ինչպես ես իմացել եմ Տյումնեսից՝ Արիապիթեսի խնամակալից, Անաքարսիսը սկյութների թագավոր Իդանթյուրսոսի ներեղբայրն էր և որդին Գնուրոսի, (որը որդին էր) Լյուկոսի, (որը որդին էր) Սպարգապիթեսի: Եթե իսկապես Անաքարսիսն այդ ընտանիքից էր, ապա թող հայտնի լինի, որ նա սպանվել է իր եղբոր կողմից. քանզի Իդանթյուրսոսը Սաուլիոսի որդին էր. իսկ Սաուլիոսը սպանել է Անաքարսիսին:

77. Բայց նիշտ է, որ ես մեկ ուրիշ զրույց եմ լսել պելոպոննեսցիներից, թե՝ Անաքարսիսը ուղարկված է եղել սկյութների թագավորի կողմից՝ հելլեններին աշակերտելու: Վերադառնալով հայրենիք, նա իրեն ուղարկած թագավորին ասել է, թե բոլոր հելլենները, բացի լակեդեմոնացիներից, զբաղում են ամեն տեսակ իմաստության. բայց միայն լակեդեմոնացիներն

են, որ խելամտորեն լսում ու խոսում են: Բայց այս զրույցը ստեղծել են իրենք՝ հելլենները: Անաքարսիսը սպանվել է այնպես, ինչպես ասվեց վերևում:

78. Սա այսպիսի վախճան է ունեցել այդ մարդն այն բանի համար, որ հետևել է օտար սովորույթների և հաղորդակից դարձել հելլեններին: Շատ տարիներ անց նույնանման վախճան է ունեցել նաև Սկյուլեսը՝ Արիապիթեսի որդին: Սկյութների թագավոր Արիապիթեսի որդիներից է եղել նաև Սկյուլեսը, որը ծնվել էր ոչ թե տեղաբնիկ կնոջից, այլ իստրուսի մորից, որը Սկյուլեսին սովորեցրել էր գրել և կարդալ հունարեն: Որոշ ժամանակ անց Արիապիթեսը նենգաբար սպանվում է ագաթյուրսոսների թագավոր Սպարգապիթեսի կողմից, և թագավորական իշխանությունը, ինչպես նաև իր հոր կնոջը, որի անունն էր Օպոյա, ժառանգում է Սկյուլեսը: Այս Օպոյան (սկյութ) կին էր, որից Արիապիթեսն ունեցել էր Օրիկոս անունով մի տղա: Արդ, Սկյուլեսը թեև դարձել էր սկյութների թագավոր, բայց բոլորովին չէր հավանում սկյութական կենցաղը, այլ, իր ստացած դաստիարակության հետևանքով, շատ ավելի հակված էր դեպի հելլենական բարքերը, ուստի և նա այսպիսի բան է անում: Երբ նա սկյութների զորքը առաջնորդում էր դեպի բորյուսթենցիների քաղաքը, իսկ այդ բորյուսթենցիներն իրենք իրենց անվանում են միլետացիներ, այնտեղ հասնելով, Սկյուլեսն իր զորքը թողնում էր քաղաքի (դարպասների) առաջ, իսկ ինքը մենակ մտնում էր պարսպից ներս և պատվիրում փակել դարպասները: Այնուհետև նա հանում էր իր վրայից սկյութական հագուստը և հագնում հելլենական զգեստ: Այդպես հագնված նա շրջում էր շուկայում՝ առանց թիկնապահների և այլոց ուղեկցության. իսկ դարպասները պահպանվում էին, որպեսզի ոչ ոք չտեսներ նրան այդպիսի զգեստով: Նա ամեն ինչում հետևում էր հելլենական բարքերին և նույնիսկ աստվածներին զոհեր մատուցում հելլենական սովորություններին համապատասխան: Մեկ ամիս և ավելի այնտեղ մնալուց հետո, նա վերստին հագնում էր սկյութական զգեստը և հեռանում (քաղաքից): Նա այսպես արել է բազմիցս և տուն կառուցել իր համար Բորյուսթենեսում և տեղաբնիկ կնոջ հետ ամուսնացել այնտեղ:

79. Բայց եկավ ժամանակը, երբ նրան պետք է շարիք պատահեր. և այն եղել է հետևյալ առիթով: Սկյուլեսը փափագել է հաղորդվել Բաքոսյան Դիոնիսոսի պաշտամունքին: Եվ ահա, երբ նա պատրաստվում էր մասնակցել խորհրդին, երևացել է խոշորագույն մի նշանակ: Սկյուլեսը Բորյուսթենես քաղաքում ունեցել է մեծ և շքեղ մի տուն, որի մասին ես քիչ առաջ հիշատակել եմ: Այդ տան շուրջը կանգնեցված են եղել սպիտակավեմ սֆինքսներ և գրիֆոններ: Այդ տունն ասված իր կայծակով զարկել է և այրել ամբողջությամբ. այսուհանդերձ, Սկյուլեսը ծիսակատարությունը

լիովին կատարել է: Սկյութները դատապարտում են հելլենների բռնության մոլագարությունը, ասելով, թե վայել չէ իբրև ասված պաշտել նրան, ով մարդկանց տանում է մոլագարության: Երբ, ահա, Սկյուլեսը մասնակցում է բակխոսյան պաշտամունքին, ոմն բոյուսթենցի հեգնում է սկյութներին, ասելով. «Դուք, սկյութներ, ծաղրում եք մեզ, որ մենք պաշտում ենք Բաքոսին և մեզ համակում է աստվածային մոլեգնությունը: Այժմ ձեր թագավորը ևս համակվել է նույն աստվածությամբ: Նա ևս պաշտում է Բաքոսին և բռնվում աստվածային մոլեգնությամբ: Եթե իմ խոսքերին չեք հավատում, ապա հետևեցեք ինձ և ես այդ ցույց կտամ ձեզ»: Սկյութների առաջնորդները հետևում են նրան և բոյուսթենցին նրանց տանելով, գողության բարձրացնում է աշտարակի վրա: Երբ Սկյուլեսը գալիս է իր բաքոսյան խմբով և սկյութները տեսնում են նրան բաքոսյան մոլեգնության մեջ, խիստ զայրանում են և, դուրս գալով (քաղաքից), համայն զորքին պատմում են իրենց տեսածը:

80. Այդ ամենից հետո, երբ Սկյուլեսը վերադառնում է իր երկիրը, սկյութները նրա դեմ ապստամբում են, թագավոր հռչակելով նրա եղբայր Օկտամասադեսին՝ Տերեսի աղջկա որդուն: Սկյուլեսը, լսելով ապստամբության և դրա պատճառների մասին, փախչում է Թրակիա: Այդ իմանալով՝ Օկտամասադեսը արշավում է Թրակիա: Խստոսի մոտ նրա դեմ դուրս են գալիս թրակացիները, և երբ արդեն նրանք պետք է կռիվն սկսեին, Սիտալկեսը Օկտամասադեսի մոտ քանքեր է ուղարկում ասելու հետևյալը. «Ինչո՞ մենք փորձենք իրար: Չէ՞ որ դու իմ քեռորդին ես, իսկ քեզ մոտ է իմ եղբայրը: Հանձնիր նրան ինձ և ես քեզ կհանձնեմ քո Սկյուլեսին, որով ո՛չ դու, ո՛չ ես չենք վտանգի մեր զորքերը»: Այս ամենը Սիտալկեսը հաղորդել էր քարոզի միջոցով: Քանի որ, ճիրավի, Օկտամասադեսի մոտ ապաստանել էր Սիտալկեսի եղբայրը, Օկտամասադեսը համաձայնվում է առաջարկին և իր մորեղբորը հանձնելով Սիտալկեսի ձեռքը, նրանից ստանում է իր եղբայր Սկյուլեսին: Սիտալկեսը, վերցնելով իր եղբորը, հեռանում է. իսկ Օկտամասադեսը իսկույն ևեթ գլխատում է Սկյուլեսին: Այսպիսի խստությամբ սկյութները պահպանում են իրենց սովորույթները և դաժանորեն պատժում օտար սովորույթներ որդեգրողներին:

81. Թե ինչքա՞ն է սկյութների թիվը, ես չկարողացա ճշտորեն իմանալ, քանի որ նրանց թվի մասին տարբեր բաներ եմ լսել: Ոմանք ասում են, թե նրանք հույժ մեծաթիվ են. իսկ ուրիշներ՝ թե բուն սկյութները փոքրաթիվ են: Բայց ես ահա թե ինչ եմ տեսել: Բոյուսթենես և Հյուպանիս գետերի միջև կա մի վայր, անունը Եքսամպայոս: Այս վայրի մասին ես հիշ առաջ պատմել եմ, ասելով, թե այնտեղ կա դառն ջրի աղբյուր, որից բխող ջուրը Հյուպանիս գետը դարձնում է ոչ պիտանի խմելու համար: Այս վայրում կա

պղնձե մի անոթ՝ վեցապատիկ, քան այն կրատերը, որը Պանտանիասը[78], Կղեոմբրոտոսի որդին, ձոնել է աստվածներին և որը գտնվում է Պոնտոսի մուտքի վրա: Ով դեռևս չի տեսել այդ անոթը, ես նրա համար կնկարագրեմ այն: Սկյութական այդ անոթը կարող է ազատորեն տանել վեց հարյուր ամֆորա[77], իսկ դրա հաստությունը վեց մատնաչափ[78] է: Տեղաբնիկները պատմում են, թե այն պատրաստել են նետալարքներից: Սկյութների թագավորը, անունը Արիանասս, կամեցել է իմանալ սկյութների թիվը, ուստի և նա հրամայել է բոլոր սկյութներին մեկական նետալարք բերել, իսկ շքեղին սպառնացել է մահապատժով: Այնժամ սկյութներն այնքան շատ նետալարքներ են բերել, որ թագավորը որոշել է դրանցից պատրաստել ու թողնել հուշարձան: Այսպիսով, նա պատրաստել է այդ պղնձե անոթը և դրել այս Եքսամպայոս վայրում: Ահա այն, ինչ ես իմացել եմ սկյութների թվաքանակի մասին:

82. Այս երկրում հիացման արժանի բաներ չկան, բացի մեծ թվով խոշոր գետերից: Այսուհանդերձ, այդ գետերից և ընդարձակ դաշտավայրից բացի կա մի զարմանալի բան ևս, որի մասին ես կպատմեմ: Տյուրես գետի մոտ տեղաբնիկները ցույց են տալիս ժայռի վրա Հերակլեսի ոտնահետքը, որն, իրոք, նման է մարդու ոտնատեղի՝ երկու կանգուն երկարությամբ: Այդ հետքն այդպիսին է: Իսկ այժմ ես կվերադառնամ այն պատմությանը, որ նախապես սկսել էի[79]:

83. Մինչ Դարեհը նախապատրաստվում էր արշավելու սկյութների վրա և հրեշտակներ էր ուղարկում (իր հպատակներին), հրամայելով ոմանց հետևակ զորք տրամադրել, մյուսներին՝ նավատորմ պատրաստել, այլոց՝ կամրջել թրակյան Բոսպորոսը, Հյուստասպեսի որդի Արտաբանոսը՝ Դարեհի եղբայրը, պահանջում է նրանից ոչ մի կերպ չարշավել սկյութների վրա և նշում սկյութական երկրի անմատչելիությունը: Բայց Արտաբանոսը, չկարողանալով իր օգտակար խորհուրդներով համոզել նրան, տեղի է տալիս. իսկ Դարեհը, ամեն ինչ նախապատրաստելուց հետո, զորքերը դուրս է բերում Սուսայից:

84. Այնժամ պարսիկ Օյոբազոսը, որն ուներ երեք որդի, և նրանք բոլորը մասնակցելու էին արշավանքին, խնդրում է Դարեհին՝ նրանցից մեկին թողնել (տանը): Արքան պատասխանում է, թե քանի նա իր բարեկամն է և խոնարհաբար խնդրում է, ապա նրա մոտ կթողնի նրա բոլոր որդիներին: Ուստի և Օյոբազոսը մեծապես հրճվում է, հուսալով, որ իր որդիներին ազատել է արշավանքից. մինչդեռ Դարեհը հրամայում է իր սպասավորներին՝ սպանել Օյոբազոսի բոլոր որդիներին:

85. Նրանք, ահա, մահվան ենթարկվելով, իրոք, մնացին այնտեղ: Մինչ այդ Դարեհը Սուսայից դուրս գալով, հասնում է Քաղկեդոնյան երկրի Բոս-

պորոսը, որտեղ կամուրջ էր կապած: Այստեղ նավ նստելով, նա նավարկում է դեպի Կապույտ կոչված ժայռերը: Այս ժայռերը, ինչպես պատմում են հելլեները, անցյալում եղել են շարժուն: Այստեղ հրվանդանի (բարձունքին) նստած, Դարեհը դիտում էր տեսարժան Պոնտոսը, քանզի այն բոլոր ծովերից ամենասքանչելին է: Դրա երկարությունը մեկ բյուր և հազար և հարյուր ասպարեզ է, իսկ լայնքը, ամենալայն մասում, երեք հազար երեք հարյուր ասպարեզ[80]: Այս ծովի մուտքն ունի չորս ասպարեզ լայնություն. իսկ այդ նեղուցի երկարությունը, որի վրա կամուրջ էր կապած, հարյուր քսան ասպարեզ է. այդ նեղուցը կոչվում է Բոսպորոս և ձգվում է մինչև Պրոպոնտիս[81]: Իսկ Պրոպոնտիսն ունի հինգ հարյուր ասպարեզ լայնություն և հազար չորս հարյուր ասպարեզ երկարություն և մտնում է Հելլեսպոնտոս, որի լայնքն ամենանեղ մասում յոթ ասպարեզ է, իսկ երկարությունը՝ չորս հարյուր: Հելլեսպոնտոսը դուրս է գալիս բաց ծով, որը կոչվում է Էգեյան:

86. Այդ չափումները կատարվել են այսպես: Երկար օրում նավը, ընդհանրապես, անցնում է յոթ բյուր գրկաչափ տարածություն, իսկ գիշերը՝ վեց բյուր: Պոնտոսի մուտքից մինչև Փասիս, սա Պոնտոսի առավելագույն երկարությունն է, հավասար է ինն օրվա և ութ գիշերվա նավարկման տարածության, այսինքն՝ հարյուր տաս բյուր գրկաչափ, որը հավասար է մեկ բյուր և հազար հարյուր ասպարեզի: Իսկ սինոպեի երկրից մինչև Թերմոդոնտ գետը, սա Պոնտոսի առավելագույն լայնքն է, հավասար է երեք օրվա և երկու գիշերվա նավարկության, այսինքն՝ երեսուն և երեք բյուր գրկաչափ, որը հավասար է երեք հազար երեք հարյուր ասպարեզի: Անա այսպես ես չափել եմ այս Պոնտոսը և Բոսպորոսը և Հելլեսպոնտոսը, որոնք այսպես ես չափել եմ: Բացի այդ, Պոնտոսին հարում և նրա մեջ է թափվում հսկա մի լիճ, որը նրանից այնքան էլ փոքր չէ: Այն կոչվում է Մայոտիս և Պոնտոսի մայր:

87. Դարեհը, Պոնտոսը դիտելուց հետո, եկ է նավում դեպի կամուրջը, որի հարտարապետն էր Մանդրոկլես Սամոսցին: Այնուհետև, Բոսպորոսը նա դիտելուց հետո. Դարեհը այնտեղ, (ափին) սպիտակ մարմարից երկու սյուն է կանգնեցնում, որոնցից մեկի վրա արձանագրում է ասսուրերեն[82], մյուսի վրա՝ հունարեն, այն բոլոր ազգերի անունները, որոնց տանում էր արշավանքի. իսկ արշավանքի տանում էր իր իշխանության տակ գտնվող բոլոր ազգերին: Զորքի թիվը, հեծյալների հետ, բացի նավազներից, կազմում էր յոթանասուն բյուր, իսկ նավերի թիվը՝ վեց հարյուր: Հետագայում Բյուզանդիոնի քաղաքացիներն այս սյուները քաղաք բերելով, դրանք օգտագործել են Օրթոսիա Արտեմիսին զոհասեղան կառուցելիս, բացի մեկ վեմից, որը մնացել է Բյուզանդիոնում՝ Դիոնիսոսի տաճարի մոտ, և որի վրա եղել են

ասսուրերեն գրերը: Բոսպորոսի այն վայրը, որը կամրջել էր Դարեհն արքան, ինչպես ես կարծում եմ, ընկած է Բյուզանդիոնի և Բոսպորոսի մուտքի մոտ գտնվող տաճարի միջև եղած տարածության մեջտեղում:

88. Այս բոլորից հետո Դարեհը, հավանելով (պատրաստված) կամրջանավը, նրա հարտարապետ Մանդրոկլես Սամոսցուն առատ նվերներ ընծայեց: Այդ նվերների հիմնական մասով Մանդրոկլեսը պատրաստեց մի նկար, որը պատկերում էր Բոսպորոսի ամբողջ կամրջումը և Դարեհն արքային՝ նստած բարձր գահին և նրա զորքը՝ կամուրջն անցնելիս: Այս նկարը նա նվիրաբերել է Հերայի տաճարին, հետևյալ մակագրությամբ.

Մանդրոկլեսը այս ձկնատաք Բոսպորոսը կամրջելով,
Այս նկարը ի հիշատակ նվիրում է մեծ Հերային:
Փրկաչաճեց նա Դարեհին, կատարելով կամքը նրա.
Նա փառք ճյուսեց սամոսացվոց և իրեն էլ փառապսակ:

89. Այսպիսի հուշարձան թողեց կամուրջ կառուցողը: Իսկ Դարեհը, Մանդրոկլեսին ընծաներ պարգևելուց հետո, անցնում է Եվրոպա: Նա պատվիրել էր հոնիացիներին՝ նավարկել Պոնտոս, մինչև Իստրոս գետը, իսկ Իստրոս հասնելուց հետո, կամրջել գետը և այնտեղ սպասել իրեն. քանզի նավատորմն առաջնորդում էին հոնիացիները, էոլյանները և հելլեսպոնտացիները: Այսպիսով, նավատորմը, անցնելով Կապույտ (ժայռերը), ուղիղ նավում է դեպի Իստրոս: Այնուհետև ծովափից երկու օր գետն ի վեր նավարկելուց հետո, նավազները սկսում են կամրջել գետի պարանոցը, որտեղ այն բաժանվում է գետաբազուկների: Իսկ Դարեհը, կամրջանավով Բոսպորոսն անցնելուց հետո, շարժվում է Թրակիայի միջով և, հասնելով Տիարոս գետի ակունքների մոտ, այնտեղ բանակում երեք օր:

90. Շրջակա բնակիչների ասելով, Տիարոսը բոլոր գետերից գեղազանց է: Բուժիչ այլ հատկություններ ունենալուց բացի, նրա ջրերը բուժում են մարդկանց և ձիերի քոսը: Այս գետն ունի նույն ժայռից բխող երեսունութ աղբյուր, որոնց մի մասը սառն է, մյուս մասը՝ տաք: Այնտեղ տանող երկու ճանապարհ կա, որոնց երկարությունը իրար հավասար է. մեկը՝ Պերինթոսին մերձակա Հերայոն քաղաքից, մյուսը՝ Եվքսինյան Պոնտոսի Ապոլոնիա (քաղաքից): Դրանց յուրաքանչյուրը կարելի է անցնել երկու օրում: Այս Տիարոսը թափվում է Կոնտադեսպոս գետը, իսկ Կոնտադեսպոսը՝ Ագրիանես գետը, իսկ Ագրիանեսը՝ Երրոս գետը, իսկ սա էլ թափվում է ծով, Այնոս քաղաքի մոտ:

91. Արդ, հասնելով այս գետի մոտ, Դարեհը բանակում է և, հավանելով գետը, այստեղ էլ կանգնեցնում է կոթող՝ հետևյալ մակագրությամբ. «Տիարոս գետի աղբյուրներից բխում է բոլոր գետերից ազնվագույն և լավագույն ջուրը, և այս աղբյուրների մոտ եկել է, իր զորքը սկյութների երկ-

ri վրա առաջնորդելիս, բոլոր մարդկանցից ազնվագույն և լավագույն այրը, Հյուստասպեսի որդի Դարեհը, պարսից և համայն աշխարհամասի արքան»: Այսպես էր գրված այնտեղ:

92. Դարեհն այստեղից առաջ շարժվելով, հասնում է մեկ այլ գետի մոտ, որի անունն է Արտեսկոս և որը հոսում է օդրյուսկների երկրով: Հասնելով այս գետի մոտ, նա այսպես է անում: Իր զորքերին ցույց տալով մի վայր, հրամայում է, որ յուրաքանչյուր ռազմիկ այնտեղով անցնելիս, մի քար դնի: Երբ զորքերն այդ հրամանը կատարեցին, Դարեհը նորից շարժվեց առաջ, այնտեղ թողնելով հսկա քարաբլուրներ[83]:

93. Դեռ Իստրոս չհասած, (Դարեհը) նվաճում է գետեսներին, որոնք իրենց համարում են անմահներ: Իսկ Սալմյուդեսսոսի թրակացիները և Ապոլլոնիայից ու Մեսամբրիա քաղաքից հյուսիս բնակվողները, որոնք կոչվում են սկյուրմիասներ և նիպսեյաններ, առանց պատերազմի հանձնվում են Դարեհին. միևնույն գետեսները, որոնք բոլոր թրակացիների մեջ արիագույններն էին և արդարագույնները, համառորեն դիմադրում են (Դարեհին), բայց անմիջապես ստրկացվում:

94. Իրենց անմահ լինելը նրանք պատկերացնում են այսպես: Նրանք կարծում են, թե չեն մահանում, այլ կորստի մատնվածը գնում է Սալմոքսիս աստծու մոտ. ոմանք նրան անվանում են Գեբելեյզիս: Յուրաքանչյուր հինգ տարին մեկ գետեսները Սալմոքսիսի մոտ վիճակով ընտրված քանքեր են ուղարկում, պատվիրելով հաղորդել աստծուն այդ ժամանակ իրենց ունեցած կարիքների մասին: Իսկ նրան ուղարկում են հետևյալ կերպ: Շարքի կանգնելուց հետո, նրանց միջից հատուկ կարգված մարդիկ պատրաստի պահում են երեք նիզակ. իսկ մյուսները բռնում են Սալմոքսիսի մոտ ուղարկվելիք քանքերի ձեռքերից ու ոտքերից և թափ տալով, նետում օդի մեջ, որպեսզի քնկնի նիզակների ծայրերի վրա: Եթե նա մահանա (նիզակներից) խոցված, ապա այն համարում են աստծու ողորմածության նշան. իսկ եթե չմահանա, ապա մեղադրում են իրեն՝ քանքերին, նրան հայտարարելով անարժան մարդ, որից հետո աստծու մոտ ուղարկում են մեկ ուրիշի: Նրանք իրենց պատվերները քանքերին տալիս են, երբ նա դեռևս կենդանի է: Այս նույն թրակացիները որոտի և կայծակի ժամանակ նետահարում են երկինքը, սպառնալով աստծուն. քանզի նրանք այլ աստված չեն ճանաչում իրենց աստծուց բացի:

95. Ինչպես լսել եմ ես Հելլեսպոնտոսում և Պոնտոսում բնակվող հելլեններից, այս Սալմոքսիսը եղել է մի մարդ, որը ժամանակին Սամոսում ստրուկ է եղել. նրա տերը եղել է Մնեսարքոսի որդի Պյութագորասը: Հետագայում, ազատ դառնալուց հետո, նա մեծ հարստության է տիրանում և այդ հարստությամբ մեկնում իր երկիրը: Թրակացիները բշվառ կյանք

ունեին և հիմարավուն էին, մինչդեռ Սալմոքսիսը ծանոթացել էր հոնիական կենցաղավարության և սովորույթներին. սրանք առավել երբագեղ կյանք էին վարում, քան թրակացիները, մանավանդ, որ ինքը շփվել էր հզորագույն հելլեն իմաստունի՝ Պյութագորասի հետ: Նա պատվիրում է կառուցել ոգամարդկանց կացարան, որտեղ հրավիրում էր կոչունքի առաջին քաղաքացիներին և, հաշկերույթի ընթացքում, բացատրում էր նրանց, թե ո՛չ ինքը, ո՛չ իր սեղանակիցները և ո՛չ իսկ նրանց հետագա բոլոր հետնորդները չեն մահանա, այլ կփոխադրվեն մի այնպիսի վայր, որտեղ նրանք հավերժ կապրեն, վայելելով բոլոր բարիքները: Մինչ այդ, այս ամենն անելու և ասելու ընթացքում, նա իր համար պատրաստել է տալիս ստորգետնյա մի կացարան: Երբ այդ կացարանն արդեն ամբողջապես պատրաստ էր, Սալմոքսիսը անհետանում է թրակացիների մոտից և, իջնելով այդ ստորգետնյա կացարանը, այնտեղ ապրում է երեք տարի: Թրակացիները մեծապես տրխրել էին նրա համար և ազում էին նրան որպես մահացածի: Բայց չորրորդ տարում նա հայտնվում է թրակացիներին. ուստի և նրանք սկսում են հավատալ Սալմոքսիսի խոսքերին: Ահա այսպես են պատմում նրա մասին:

96. Իսկ ես այս գրույցը Սալմոքսիսի և (նրա) ստորգետնյա կացարանի մասին ո՛չ կարող եմ ժխտել, ո՛չ ևս լիովին հավատալ դրան. բայց կարծում եմ, որ այս Սալմոքսիսը ապրել է Պյութագորասից շատ տարիներ առաջ: Արդյոք այս Սալմոքսիսը եղել է մարդ, թե՞ գետեսների տեղական ինչ-որ աստված, այդ էլ աստված գիտե:

97. Այսպիսի էին գետեսների հավատալիքները, երբ նրանց նվաճեցին պարսիկները, և նրանք պարտավորվեցին մյուս զորքերի հետ մասնակցել արշավանքին: Մինչ այդ Դարեհը հետևակի հետ մոտեցել էր Իստրոսին: Երբ ամբողջ զորքն անցել էր մյուս ափ, նա հրամայեց հոնիացիներին և նավազներին՝ ոչնչացնել կամուրջը և ցամաքով հետևել իրեն: Հոնիացիները, ճնազանդվելով հրամանին, ուզում էին քանդել կամուրջը: Այնժամ միտիլենացիների զորավար Կոյոսը՝ Երմանդրոսի որդին, խնդրելով արքային լսել իրեն խորհուրդ տվող մարդուն, ասաց հետևյալը: «Ով արքա. դու արշավում ես մի երկիր, որտեղ չկան ո՛չ հերկած դաշտեր, ո՛չ բնակեցված քաղաքներ: Ուստի հրամայիր թողնել այս կամուրջն իր տեղում և նրա պահպանումը հանձնիր իրենց՝ կառուցողներին: Եթե ամեն ինչ հաջող լինի և մենք հանդիպենք սկյութներին, ապա մենք հաճանչելու հնարավորություն կունենանք. իսկ եթե նրանց չպատահենք, ապա, ծայրահեղ դեպքում, մեր վերադարձի հանապարհը ապահովված կլինի: Ինձ բոլորովին չի սարսափեցնում այն, որ սկյութները կարող են մեզ հաղթել մարտում. ես վախենում եմ սոսկ այն բանից, որ մենք նրանց չենք պատահի և կկործանվենք թափառումների ընթացքում: Գուցե թվա, որ ես այսպես ասում եմ, կամե-

նալով մնալ այստեղ: Ընդհակառակը, ես ինքս, անշուշտ, կգնամ քեզ հետ և չեմ կամենա այստեղ մնալ»: Դարեհը հանությամբ ընդունեց այս խորհուրդը և Կոյոսին պատասխանեց այսպես. «Վեսբոսցի բարեկամ. երբ ես բարեհաջող վերադառնամ հայրենիք, ապա դու ներկայացիր ինձ, որպեսզի ես կարողանամ քո այս խորհրդի համար պարգևատրել քեզ բարիքներով»:

98. Այս ասելով, Դարեհը իր գոտու վրա կապում է վաթսուն հանգույց և, իր մատ հրավիրելով հոնիացիների տիրաններին, այսպես է ասում. «Հոնիացիներ. ես եմ վերցնում կամուրջին վերաբերող իմ նախկին հրամանը: Վերցրեք այս գոտին և այսպես գործեք: Երբ տեսնեք, որ ես արագորեն շարժվում եմ սկյութների վրա, այդ պահից սկսած օրական մեկ հանգույց քանդեք: Եթե այդ ժամանակամիջոցում ես չվերադառնամ և հանգույցներով նշված օրերն սպառվեն, դուք այնժամ էլ դարձեք ձեր երկիրը: Բայց մինչ այդ, քանի որ ես իմ որոշումը փոխել եմ, պահպանեցեք այս կամուրջը և այն ապահով պահելու համար ոչ մի չանք մի խնայեք: Այդպես գործելով դուք ինձ մեծ ծառայություն մատուցած կլինեք»: Դարեհն այսպես պատվիրելուց հետո, զորքով շարժվում է առաջ:

99. Թրակիան առավել է ձգվում դեպի ծով, քան Սկյութիան, որն սկսում է Թրակիայից հետո այն վայրից, որտեղ Իստրոսը թափվում է ծով. Իստրոսի գետաբերանը թեքված է դեպի հարավ-արևելք: Ես այժմ կնկարագրեմ բուն սկյութական երկրի ծովափը, սկսած Իստրոսից, և կասեմ նրա չափերը: Իստրոսից արդեն սկսում է բուն Սկյութիան, որն ուղղված է դեպի հարավ, մինչև Կարկինիտիս կոչված քաղաքը: Այնտեղից նույն ծովափի երկայնքով սկսվում է մի լեռնոտ երկիր, որը դուրս է գալիս Պոնտոս և բնակեցված է տավրյան ցեղով, մինչև քարքարոտ կոչված թերակղզին[84], որը վերջանում է Արևելյան ծովում[85]: Ատտիկյան երկրի նման, Սկյութական երկրի շորս սահմաններից երկուսը՝ հարավայինը և արևելյանը, նույնպես շրջագծում է ծովը: Տավրերը բնակվում են սկյութական երկրի այն մասում, որը համապատասխանում է Ատտիկյան երկրին այնպես, ինչպես եթե ոչ թե աթենացիները, այլ մեկ ուրիշ ցեղ բնակեցրած լիներ Սունիոն հրվանդանը, որը դուրս է գալիս ծովի հետուն, այն է՝ Թորիկոսից մինչև Անափրլյուստոս ավանն ընկած տարածությունը: Ես այս համեմատում եմ այնքանով, որքանով կարելի է համեմատել փոքր մեծի հետ: Այսպես է Տավրյան երկիրը: Նրա համար, ով չի նավարկել Ատտիկայի այդ մասով, ես ուրիշ կերպ կբացատրեմ: Տավրյանները բնակվում են Սկյութական երկրի այս մասում այնպես, ինչպես եթե Յապյուգիայում բնակվեին ոչ թե յապյուգներ, այլ ուրիշներ, իրենց համար առանձնացնելով մի տարածություն, սկսած Բրենդեսիոն ծովախորշից մինչև Տարանտ և զբաղեցնեին այդ թերակղզին: Այս երկու երկրներից բացի, ես կարող էի բազում երկրներ ևս թվել, որոնք նման են Տավրյան երկրին[86]:

100. Տավրյան երկրից այն կողմ, տավրյաններից վերև արդեն բնակվում են սկյութները, մասամբ դեպի արևելք, մինչև ծովափ, և մասամբ Կիմմերյան Բոսպորոսից և Մայոտիս լճից արևմուտք, մինչև Տանաիս գետը, որը թափվում է այդ լճի հեռավոր խորշը[87]: Սկյութական երկիրը վերևում, միջերկրայքում, Իստրոսի հոսանքն ի վեր, սահմանակցում է նախ ագաթյուրսեսներին, ապա նևրերին, ապա մարդակերներին[88] և, վերջապես, սևաթիկնոցներին[89]:

101. Արդ, Սկյութական երկիրը նման է քառակուսու, որի երկու կողմերը հասնում են մինչև ծով. միջերկրայքով գնացող նրա սահմանը ամեն ինչով հավասար է նրա ափերին: Քանզի Իստրոսից մինչև Բորյուսթենես տաս օրվա ճանապարհ է, իսկ Բորյուսթենեսից մինչև Մայոտիս լիճը՝ ևս տասը, իսկ ծովափից միջնաշխարհով մինչև սկյութներից վերև ապրող սևաթիկնոցների երկիրը՝ քսան օրվա: Մեկ օրվա ճանապարհը ես հաշվում եմ երկու հարյուր ասպարեզ: Այսպիսով, Սկյութական երկրի լայնքը շորս հարյուր ասպարեզ է, դեպի միջնաշխարհը տանող երկարությունը ևս նույնքան ասպարեզ: Այսպիսին է այդ երկրի մեծությունը:

102. Սկյութները, համոզվելով, որ իրենք մենակ ի վիճակի չեն բաց մարտում դիմադրելու Դարեհի զորքերին, դեսպաններ են ուղարկում հարևանների մոտ: Սրանց թագավորները արդեն հավաքվել էին խորհրդի, որոշելու համար, թե ինչպե՞ս վարվեն այդպիսի մեծաքանակ զորքի ներխուժման դեպքում: Խորհրդակցում էին տավրերի, ագաթյուրսեսների, նևրերի, մարդակերների, սևաթիկնոցների, գելոնների, բուդինների և սավրոմատների թագավորները:

103. Սրանցից տավրյաններն ունեն այսպիսի սովորություններ: Նրանք կույս (դիցուհու)[90] պատվին զոհաբերում են բոլոր նավաբեկյալներին և իրենց ծովային արշավների ընթացքում գերի վերցրած հելլեններին հետևյալ կերպ: Նախ նրանք լախտով հարվածում են (զոհի) գլխին: Ոմանք ասում են, թե այնուհետև նրա մարմինը նետում են անդունդից ցած, քանի որ սրբավայրը գտնվում է անդունդի վրա, իսկ գլուխը գամում են ցցին: Ուրիշներ ևս գլխի մասին նույնն ասելով, պնդում են, թե մարմինը չեն նետում անդունդից ցած, այլ թաղում են հողում: Այն ասույթին, որին այդ զոհերը մատուցում են, տավրյանների ասելով, Ագամեմնոնի դուստր Իֆիգենիան է[91]: Իսկ իրենց գերի վերցրած թշնամիների հետ նրանք վարվում են հետևյալ կերպ: Յուրաքանչյուրը (գերի ընկածի) գլուխը կտրելով, այն բերում է տուն և, երկար ցցի վրա անցկացնելով, շատ բարձր տնկում տան, հատկապես ծխնելույզի վրա: Այս գլուխները, նրանց ասելով, այնտեղ

ցվում են որպես ասա պանակներ: Տավրյանները ապրում են կողոպուտով և պատերազմով:

104. Ագաթյուրսեսները բոլոր մարդկանցից առավել փափկակենցաղ են և, ընդհանրապես, ոսկեղեն են կրում: Նրանք կանանց հետ խառնակվում են առանց խորության, որպեսզի բոլորը իրար եղբայր համարվեն և, որպես հարազատներ, իրար հանդեպ նախանձ ու թշնամանք չունենան: Մնացած սովորություններով նրանք նման են թրակացիներին:

105. Նևրերը սկյութական սովորություններ ունեն: Իրենց երկրի վրա Դարեհի զորքերի կատարած արշավանքից մեկ սերունդ առաջ նրանք օձերի պատճառով ստիպված են եղել լքելու իրենց երկիրը: Քանզի ոչ միայն իրենց երկիրը մեծ քանակությամբ օձեր էր ծնում, այլ անապատներից ևս մեծ քանակությամբ օձեր են թափվել այնտեղ: Այդ իսկ պատճառով նևրերը, լքելով իրենց երկիրը, բնակվել են բուդիններին հետ[92]: Այս մարդիկ գուցե և եղել են կախարդներ: Քանզի սկյութները և Սկյութական երկրում բնակվող հելլենները պատմում են, թե տարին մեկ անգամ յուրաքանչյուր նևր մի քանի օր փոխակերպվում է գայլի, իսկ հետո դարձյալ ստանում իր նախկին կերպարանքը[93]: Ես, իհարկե, այս զրույցին չեմ հավատում, սակայն նրանք այս ամենը հաղորդում են երդվելով:

106. Մարդակերները բոլոր մարդկանցից առավել վայրենի բարքեր ունեն: Նրանք ո՛չ դատ գիտեն, ո՛չ ևս օրենքներ ունեն, և վաշկատուններ են: Նրանք կրում են սկյութականին նմանվող զգեստ, բայց նրանց լեզուն առանձին է: Այս ցեղերի մեջ միայն նրանք են մարդակեր:

107. Սևաթիկնոցները բոլորն էլ հագնում են սև զգեստներ, որի պատճառով էլ սացել են իրենց այդ անունը: Նրանց սովորությունները սկյութական են:

108. Բուդինները մեծ և բազմամանակ ազգ են՝ երկնագույն աչքերով և կարմրաշեկ մազերով: Նրանց երկրում կա փայտաշեն մի քաղաք, անունը Գելոնոս: Քաղաքային պարսպի յուրաքանչյուր կողմն ունի երեսուն ասպարեզ երկարություն. այն բարձր է և ամբողջովին փայտաշեն. տներն ու սրբատեղին նույնպես փայտաշեն: Քանզի այնտեղ կա հելլեն աստվածների սրբատեղի, զարդարված փայտե արձաններով, զոհարաններով և տաճարներով, որոնք կառուցված են հելլենական եղանակով: Յուրաքանչյուր երեք տարին մեկ նրանք Դիոնիսոսի պատվին տոնախմբություն են կատարում և ընկնում բաքոսական մոլեգնության մեջ: Քանզի գելոնները հնում եղել են հելլեններ, որոնք առևտրական բնակավայրերից դուրս մղվելուց հետո, բնակվել են բուդինների միջավայրում: Նրանք խոսում են մասամբ սկյութերեն, մասամբ հունարեն: Բայց բուդինների լեզուն տարբեր է գելոնների լեզվից. տարբեր է նաև նրանց ապրելակերպը:

109. Բուդինները տեղաբնիկ են և վաշկատուն: Նրանք այս երկրում միակ ցեղերն են, որոնք սնվում են պիստակով. մինչդեռ գելոնները երկրագործ են և հացակեր, ունեն այգիներ: Սրանք արտաքին տեսքով և գույնով բոլորովին նման չեն բուդիններին. բայց հելլենները, ոչ իրավացի, բուդիններին անվանում են գելոնեներ: Նրանց երկիրն ամբողջապես ծածկված է խիտ և բազմապիսի անտառներով: Անտառների խորքում կա խոշոր մի լիճ, որի շուրջը ճահիճներ են և եղեգնուտներ: Այդ լճում ուրուրում են ջրասամույրներ, կուղբեր և քառակուսի մուրթով այլ գազաններ, որոնց մորթիներով բուդինները եզրազարդում են իրենց մուշտակները. իսկ նրանց ամորձիները օգտագործում են արգանդային հիվանդություններ բուժելու համար:

110. Իսկ սավրոմատների մասին պատմում են հետևյալը: Հելլենները պատերազմ են մղել ամազոնուհիների դեմ: Ամազոնուհիներին սկյութները անվանում են «օյորպատա», որը հունարեն նշանակում է այրասպաններ. քանզի նրանց լեզվով «օյոր» նշանակում է՝ այր[94], իսկ «պատա»՝ սպանել: Զրույցն ասում է, թե այդ ժամանակ հելլենները, նաղթելով Թերմոդոնտի մոտ մղած մարտում, երեք նավով հեռանում են, տանելով իրենց հետ այն ամազոնուհիներին, որոնց կարողացել էին կենդանի վերցնել: Բայց բաց ծովում այդ ամազոնուհիները հարձակվում են այրերի վրա և սպանում նրանց: Սակայն ամազոնուհիներն անգետ էին նավարկման (արվեստին) ու չգիտեին օգտագործել ո՛չ դեկը, ո՛չ առագաստները, ո՛չ իսկ իմանում էին թիավարել: Այրերին սպանելուց հետո, նրանք տարուբերվում են ալիքների վրա և հողմերը նրանց հետևում են Կրեմնոյ[95], Մայոտիս լճի ափերը: Կրեմնոյը գտնվում է ազատ սկյութների երկրում: Այստեղ ափ դուրս գալով նավերից, ամազոնուհիները գնում են դեպի բնակավայրերը: Պատահելով ձիերի երամակի, հափշտակում են ձիերին և ձիավարելով, սկսում են կողոպուտի ենթարկել Սկյութական երկիրը:

111. Իսկ սկյութները չէին կարողանում հասկանալ կատարվածը. քանի որ նրանց հայտնի չէր ո՛չ ամազոնուհիների լեզուն, ո՛չ զգեստը, ո՛չ իսկ ցեղը, այլ զարմանում էին, թե որտեղի՞ց նրանք հայտնվեցին. ուստի և նրանց ընդունելով որպես իրենց տարեկից այրերի, մարտի են ելնում նրանց դեմ: Մարտից հետո իրենց ձեռքն ընկած դիակներից սկյութներն իմանում են, որ նրանք կանայք են եղել: Ուստի խորհուրդ գումարելով, նրանք որոշում են այսուհետև ոչ մի կերպ նրանց չսպանել, այլ նրանց մոտ ուղարկել նույնքան թվով պատանիներ, որքան իրենց թվում էր, թե կլինեն ամազոնուհիները: Իրենց պատանիները պետք է բանակեին նրանց մերձավորությամբ և վարվեին այնպես, ինչպես կվարվեին ամազոնուհիները: Եթե իրենց հետապնդեին, ապա իրենք չպետք է մարտի բռնվեին, այլ փախչեին: Երբ ամազոնուհիները դադարեին իրենց հետապնդել, իրենք նորից մոտե-

ճալով, դարձյալ պետք է բանակեին նրանց մերձավորությամբ: Այսպես են որոշում սկյութները, փափագելով նրանցից որդիներ ունենալ: Սկյութների ուղարկած պատանիներն սկսեցին կատարել հանձնարարվածը:

112. Ամազոնուհիները, հասկանալով, որ պատանիները ժամանել են առանց որևէ չար խորհրդի, նրանց թողնում են հանգիստ: Օրըստօրե մի բանակատեղին ավելի ևս մոտենում էր մյուսին: Պատանիները, ինչպես և ամազոնուհիները, բացի զենքից ու ձիերից, ոչինչ չունեին իրենց հետ, այլ ապրում էին նույն կենցաղով՝ որսորդությամբ ու կողոպուտով:

113. Օրվա կեսին ամազոնուհիներն աչա թե ինչ էին անում: Նրանք առանձնանում էին մեկական կամ երկուական ու գնում մի կողմ, իրենց բնական կարիքը հոգալու: Սկյութներն այդ նկատելով, իրենք ևս անում էին նույնը: Ու երբ մի անգամ պատանիներից մեկը առանձին պատահել էր մի ամազոնուհու, կինը նրան իրենից չէր վանել, այլ թույլ էր տվել կենակցելու: Նրա հետ չէր խոսել, քանի որ իրար չէին հասկանում, այլ ձեռքերով հասկացրել էր, որ հաջորդ օրը ինքը թող գա նույն վայրը, իր հետ բերելով մեկ ուրիշ պատանու ևս, նշանով հասկացնելով, որ լինեն երկուսով, իսկ ինքը իր հետ կբերի մի կնոջ ևս: Պատանին, վերադառնալով, այդ ամենը պատմել է մյուսներին: Երկրորդ օրը նա գալիս է այդ նույն վայրը, իր հետ բերելով մի պատանու ևս, և այնտեղ պատահում է այդ ամազոնուհուն մի երկրորդ (ամազոնուհու) հետ սպասելիս: Մյուս պատանիները ևս այդ մասին իմանալով, հնազանդեցնում են մնացած ամազոնուհիներին:

114. Այնուհետև նրանք բանակատեղիները միացնելով, ապրում էին միասին: Յուրաքանչյուրն իր համար կին էր վերցրել նրան, ում հետ ինքն առաջին անգամ կենակցել էր: Բայց այրերը չկարողացան սովորել իրենց կանանց լեզուն, մինչդեռ կանայք ըմբռնեցին իրենց ամուսինների լեզուն: Երբ արդեն նրանք սկսել էին հասկանալ իրար, ամուսիններն ասում են կանանց. «Մենք ծնողներ ունենք, նաև ունեցվածք. ուստի և մենք հետայսու չենք կարող այսպիսի կյանք վարել, այլ ուզում ենք վերադառնալ յուրայիններին մոտ և ապրել նրանց հետ: Միայն դուք կլինեք մեզ համար կին, և ուրիշ ոչ ոք»: Իսկ կանայք նրանց պատասխանում են այսպես. «Մենք չենք կարող ապրել ձեր (ցեղի) կանանց հետ, քանի որ մեր սովորությունները նման չեն նրանց սովորություններին: Մենք հեծանարշավում ենք, նիզակ նետում և ձիավարում, իսկ կանացի գործերին սովոր չենք, մինչդեռ ձեր կայք մեր այս նշած գործերից և ոչ մեկով չեն զբաղվում, այլ մնում են իրենց սայլերի մեջ և զբաղվում կանացի գործերով. նրանք ո՛չ որսորդություն են գնում, ո՛չ իսկ մեկ ուրիշ տեղ: Այս պատճառով էլ մենք չենք կարող նրանց հետ հարմարվել: Արդ, եթե ուզում եք մեզ կին ունենալ ձեզ համար և ձեզ դրսևորել իբրև արդար մարդկանց, ապա գնացեք ձեր ծնող-

ների մոտ, ստացեք ձեզ բաժին ընկնող ունեցվածքը և վերադարձեք. այնուհետև մենք կապրենք մեր կյանքով»: Պատանիները համոզվելով, այդպես էլ վարվեցին:

115. Երբ նրանք իրենց բաժին ունեցվածքը ստանալով վերադառնում են ամազոնուհիների մոտ, կանայք նրանց ասում են հետևյալը. «Մենք անհարմարության մեջ ենք, մտածելով, թե ինչպե՞ս ենք ապրելու այս երկրում. քանի որ մենք ձեզ զրկել ենք ձեր ծնողներից և այս երկրին մեծ չարիք պատճառել: Բայց քանի որ փափագում եք մեզ կին ունենալ ձեզ համար, ապա եկեք այսպես անենք. հեռանանք այս երկրից և, անցնելով Տանաիս գետը, այնտեղ բնակվենք»:

116. Պատանիները դրան ևս համաձայնվում են և, անցնելով Տանաիսը, երեք օր ուղևորվում են Տանաիսից դեպի արևելք՝ երեք օր Մայոտիս լճից դեպի հյուսիս հեռավորությամբ: Հասնելով այն վայրը, որտեղ այժմ ապրում են, նրանք բնակություն են հաստատում: Մինչև այժմ սավրոմատների կանայք պահպանում են իրենց հնամենի սովորությունները. նրանք իրենց ամուսինների հետ, և նույնիսկ առանց նրանց, հեծյալ որս են անում, պատերազմի են գնում և կրում տղամարդկանց հետ նույնանման զգեստ:

117. Սավրոմատները խոսում են սկյութերեն, բայց հին լեզուն աղավաղած, քանի որ ամազոնուհիներն այն ճիշտ չէին սովորել: Իսկ նրանց ամուսնանալու պայմանը հետևյալն է. աղջիկը չի ամուսնանում, մինչև չսպանի որևէ թշնամու: Նրանցից ոմանք մինչև իսկ մեռնում են պառաված, առանց ամուսնանալու, քանի որ ի վիճակի չեն լինում կատարելու ընդունված այդ կարգը:

118. Արդ, սկյութների բանբերները ժամանում են վերոհիշյալ ցեղերի բազավորների գումարած խորհրդին և, ամեն ինչ բացատրելով, ասում, թե պարսից արքան, մյուս աշխարհամասի բոլոր երկրները նվաճելուց հետո, կամուրջ է կառուցել Բոսպորոսի պարանոցի վրա և անցել այս աշխարհամասը. անցնելուց հետո նա նվաճել է թրակացիներին և կամրջում է Խարոս գետը, մտադրված լինելով իրեն հպատակեցնել նաև այս ամբողջ երկիրը: «Դուք, ասում էին բանբերները, ոչ մի կերպ պետք չէ մի կողմ կանգնած նայեք, թե մենք ինչպե՞ս ենք կործանվում: Միացեք մեզ հետ և միասին դիմադրենք արշավողին: Եթե դուք այսպես չանեք, ապա մենք կամ ոչնչացված կլինենք լքել մեր երկիրը, կամ էլ այստեղ մնալով, կհպատակվենք: Իսկ ի՞նչ է մնում մեզ անելու, եթե դուք չկամիք օգնել մեզ: Դուք դրանից ոչ մի օգուտ չեք ունենա. քանզի պարսիկը արշավում է ինչքան մեզ, այնքան էլ ձեզ վրա: Մեզ նվաճելով նա չի հանգստանա ու հետևանք, մինչև ձեզ ևս չնվաճի: Մենք մեր ասածի համար ձեզ ապացույց կտանք: Եթե պարսիկը արշավանքի եկած լիներ միայն մեր դեմ՝ իր նախկին հպա-

տակության համար վրեժ լուծելու նպատակով, ապա նա, հանգիստ թողնելով բոլոր մյուսներին, ուղիղ կգար մեր երկրի վրա. դրանով նա բոլորին ցույց կտար, որ արշավում է սկյութների, և ոչ թե այլոց վրա: Մինչդեռ այժմ, անցնելով այս աշխարհամասը, նա հպատակեցնում է իր ճանապարհին պատահած բոլոր ցեղերին: Նա իրեն ենթարկել է մյուս թրակացիներին, ինչպես նաև մեր հարևանությամբ ապրող գեսեսներին»:

119. Սկյութների այս հաղորդումից հետո, ցեղերի թագավորները, որոնք եկել էին այնտեղ, խորհուրդ գումարեցին. նրանց կարծիքները երկատվեցին: Գելոնների, բուդինների և սավրոմատների թագավորները համակարծիք եղան և որոշեցին օժանդակել սկյութներին: Մինչդեռ ագաթյուրսացիների, նևրների և մարդակերների, ինչպես նաև սկաթիկնոցների ու տավրերի թագավորներն այսպես պատասխանեցին. «Եթե դուք նախապես չարիք պատճառած չլինեիք պարսիկներին և նրանց դեմ պատերազմ սկսած չլինեիք, ապա մենք ճիշտ կհամարեինք ձեր այս խնդրանքը և համակարծիք լինելով, սիրով կօգնեինք ձեզ: Մինչդեռ դուք, առանց մեր օգնության, ներխուժելով պարսից երկիրը, իշխել եք նրանց վրա այնքան ժամանակ, ինչքան ասված այդ բույլ էր տվել: Այժմ, անա, նույն ասվածն է նրանց օգնում և նրանք նույնը հատուցում են ձեզ: Բայց մենք ոչ անցյալում ենք չարիք պատճառել այդ մարդկանց, ոչ էլ այժմ կփորձենք առաջինը թշնամանալ նրանց: Իսկ եթե (Դարեհը) մտնի մեր երկիրը և սկսի չարիք պատճառել, մենք ևս այդ չենք հանդուրժի: Բայց քանի մենք նման բան չենք տեսել, ապա կմնանք մեր երկրում: Քանզի մենք կարծում ենք, որ պարսիկները եկել են ոչ թե մեզ վրա, այլ նրանց վրա, ովքեր չարիք են պատճառել իրենց»:

120. Այսպիսի պատասխան ստանալով, սկյութները որոշում են բացահայտ մարտի չբռնվել, քանի որ չէին կարողացել (այդ հարևաններին) իրենց զինակից դարձնել, այլ դանդաղորեն նահանջել, իրենց հետ տանելով նախիրը, քանդելով ջրհորները ու աղբյուրները, ոչնչացնելով երկրի խոտը: Զորքը նրանք բաժանում են երկու ջոկատի: Ջոկատներից մեկին, որը գլխավորում էր Սկոպասիս թագավորը, պետք է միանային սավրոմատները: Այս ջոկատը, եթե պարսիկները հարձակվեին այդ երկրամասի վրա, պետք է նահանջեր ուղիղ դեպի Տանաիս գետը՝ Մայոտիս լճի մոտ: Իսկ եթե պարսիկները ետ շրջվեին, ապա այդ ջոկատը պետք է հետապնդեր նրանց: Սա թագավորական զորքի ջոկատներից մեկն էր, որին հրամայված էր գնալ վերոհիշյալ ճանապարհով: Իսկ (թագավորական) մյուս երկու ջոկատները, մեծը՝ Իդանթյուրսոսի, իսկ երրորդը՝ Տաքսակիսի գլխավորությամբ, որոնց պետք է միանային նաև գելոններն ու բուդինները, նույնպես պետք է դանդաղորեն նահանջեին, մնալով պարսիկներից մեկ օրվա հեռավորության

վրա, խուսափելով մարտից և կիրառելով որոշված (ծրագիրը): Նախ նրանք պետք է պարսիկներին ուղղեին այն մյուս երկրների վրա, որոնք մերժել էին իրենց դաշնակցությունը, սրանց ևս պատերազմի մեջ ներգրավելու նպատակով: Եթե նրանք չէին ցանկացել կամովին պատերազմել պարսից դեմ, ապա պետք էր նրանց ստիպել կռվել ակամայից: Այսպես անելուց հետո, նրանք պետք է վերադառնային իրենց երկիրը և հարձակվեին թշնամու վրա, եթե այն համարեին նպատակահարմար:

121. Այսպես որոշելուց հետո սկյութները, իրենց լավագույն հեծյալներից մի առաջամարտիկ[96] ջոկատ ուղարկելով, դուրս են գալիս Դարեհի զորքերի դեմ: Բոլոր սայլերը, որոնց մեջ ապրում էին նրանց կանայք ու երեխաները, և ամբողջ նախիրը, բացի իրենց սնունդի համար անհրաժեշտ եղածներից, նրանք ուղարկում են առաջ, պատվիրելով մշտապես շարժվել դեպի հյուսիս:

122. Գումակն այսպես ուղարկվում է առաջ: Իսկ սկյութների առաջամարտիկները պարսիկներին պատահում են Խտրոսից երեք օրվա ճանապարհի հեռավորության վրա: Պատահելով թշնամուն, նրանք առաջ են անցնում և բանակում մեկ օրվա հեռավորությամբ, ոչնչացնելով երկրում բուսած ամեն ինչ: Պարսիկները, տեսնելով սկյութ հեծյալներին, սկսում են առաջ շարժվել, հետապնդելով թշնամուն, որը մշտապես նահանջում էր: Այնուհետև, պարսիկները, հարձակվելով սկյութական զորքերի մի ջոկատի վրա, հետապնդում են նրան դեպի արևելք, Տանաիս գետի ուղղությամբ: Երբ սկյութներն անցել էին Տանաիս գետը, պարսիկները ևս այն անցնելով, հետապնդում են նրանց, մինչև որ սարմատների երկրի միջով անցնելուց հետո, հասնում են բուդինների երկիրը:

123. Քանի դեռ պարսիկները անցնում էին սկյութական և սավրոմատական երկրի միջով, ոչինչ չկար ոչնչացնելու, որովհետև երկիրը խոպան էր: Բայց մտնելով բուդինների երկիրը, նրանք պատահում են փայտե պարիսպներով ֆաղաքի, որը դատարկել ու լքել էին բուդինները. պարսիկները հրկիզում են այն: Այդ անելուց հետո, պարսիկները, շարունակելով հետապնդել նահանջող թշնամուն, միշտ շարժվում են առաջ, մինչև որ անցնելով այդ երկրի միջով, հասնում են անապատ մի վայր: Այդ անապատը բոլորովին անբնակ է և գտնվում է բուդինների երկրից վերև ու ձգվում է յոթ օրվա ճանապարհի երկարությամբ: Անապատից վերև բնակվում են թյուսագետները: Նրանց երկրից հոսում են չորս խոշոր գետեր և, անցնելով մայոտների երկրով, թափվում են Մայոտիս կոչված լիճը, այդ գետերի անուններն են՝ Լյուկոս, Օարոս, Տանաիս, Սյուրգիս:

124. Հասնելով այդ անապատը, Դարեհը կանգ է առնում և բանակում Օարոս գետի ափին: Այնուհետև կառուցում է գրեթե վաթսուն ասպարեզ

իրարից հավասար հեռավորության վրա գտնվող ութ խոշոր ամրություն, որոնց ավերակները այսօր էլ կան: Մինչ նա այս գործով էր զբաղված, հեռապնդող սկյութները, նրան շրջանցելով վերից, վերադառնում են սկյութական երկիր: Սկյութների հանկարծակի անհետացումից հետո, քանի որ նրանք այլևս բոլորովին չէին երևում, Դարեհն այդ ամրությունների կառուցումը թողնելով կիսավարտ, թեքվում է դեպի արևմուտք: Դարեհը ենթադրում էր, որ սա է սկյութների ամբողջ զորքը, որը փախչում է դեպի արևմուտք:

125. Դարեհն արագորեն իր զորքով ընթանում է սկյութական երկրով, որտեղ էլ պատահում է սկյութների երկու ջոկատներին և հետապնդում նրանց: Սկյութները միշտ ետ էին քաշվում մեկ օրվա հանապարհ հեռավորությամբ: Ու քանի որ Դարեհը չէր դադարում հետապնդելուց, սկյութները, իրենց որոշման համաձայն, նահանջում են դեպի այն ցեղերի երկրները, որոնք մերժել էին իրենց զինակցությունը, և առաջին հերթին սևաթիկնոցների երկիրը: Սկյութների և պարսիկների ներխուժումը անաբեկում է նրանց: Այնուհետև սկյութները պարսիկներին քաշում են դեպի մարդակերների երկիրը: Սրանց ևս անաբեկելուց հետո, սկյութները մտնում են ներների երկիրը: Սրանց ևս անաբեկելուց հետո, սկյութները նահանջում են դեպի ագաթյուրսոսների երկիրը: Ագաթյուրսոսները, տեսնելով, թե իրենց հարևանները ինչպես են անաբեկված սկյութներից, փախչում են և դեսպաններ ուղարկում սկյութների մոտ, նախքան սրանք կմտնեին իրենց երկիրը, արգելելով նրանց մտնել իրենց սահմանները: Նրանք զգուշացնում են, որ եթե սկյութները փորձեն ներխուժել իրենց երկիրը, ապա նրանք նախ պետք է կռվեն իրենց հետ: Այսպես հայտարարելուց հետո, ագաթյուրսոսները հավաքվում են իրենց սահմանների վրա՝ ներխուժողներին դիմադրելու մտադրությամբ: Իսկ սևաթիկնոցները, մարդակերները և ներները, երբ պարսիկները ու սկյութները ներխուժել են իրենց երկիրը, չեն դիմադրել, այլ մոռացած իրենց սպառնալիքը, բոլորը անաբեկված, փախել են դեպի հյուսիս, անապատները: Իսկ սկյութները չեն մտնում ագաթյուրսոսների երկիրը, այլ պարսիկներին ներների երկրից ներքաշում են իրենց երկիրը:

126. Քանի որ այս երկար էր շարունակվում և չէր դադարում, Դարեհը մի հեծյալ է ուղարկում սկյութների թագավոր Իդանթյուրսոսի մոտ, ասելով այսպես. «Զարմանալի մարդ. ինչո՞ւ դու անվերջ փախչում ես, երբ կարող ես ընտրություն կատարել մեկի կամ մյուսի միջև. եթե դու քեզ համարում ես ի վիճակի իմ հզորության դիմադրելու, ապա կանգ առ և, վերջ տալով քո թափառումներին, կռվիր. իսկ եթե դու ընդունում ես, որ շատ թույլ ես, ապա դարձյալ դադարիր փախչելուց և քո տիրոջ հող ու ջուր մատուցելով, հաշտվիր նրա հետ»:

127. Այս խոսքերին սկյութների թագավոր Իդանթյուրսոսն այսպես է պատասխանում. «Իմ գործն այդպես է, ով պարսիկ: Ես անցյալում ևս չեմ վախեցել որևէ մեկից ու չեմ փախել. այժմ նույնպես ես չեմ փախչում քեզանից: Այժմ էլ ես նոր ոչինչ չեմ անում, այլ միայն այն, ինչ սովոր եմ անել նաև խաղաղ ժամանակ: Իսկ թե ինչո՞ւ քեզ հետ իսկույն մարտի չեմ բռնվում, այդ ևս քեզ կբացատրեմ: Մենք ո՛չ քաղաքներ ունենք, ո՛չ էլ մշակված հողեր, որպեսզի վախենալով դրանց ավերումից և ամայացումից, քեզ հետ իսկույն բռնվենք մարտի: Եթե ձեզ անհրաժեշտ է մեզ հետ անհապաղ մարտի բռնվել, մենք հայրենի գերեզմաններ ունենք: Գտեք դրանք և փորձեք ավերել. այնժամ դուք կիմանաք, թե մենք կկռվե՞նք հանուն այդ գերեզմանների, թե՝ ոչ: Բայց այնքան ժամանակ, քանի դեռ մեզ հարմար չէ, մենք քեզ հետ մարտի չենք բռնվի: Այսքանը ես կասեմ մարտի մասին. իսկ իմ տերերն են իմ մեծ նախնի Զևսը և սկյութների թագուհի Հեստիան: Մինչդեռ իրոք նվեր հողի և ջրի փոխարեն ես քեզ այնպիսի ընծաներ կուղարկեմ, որոնք վայել են քեզ: Իսկ այն բանի համար, որ դու քեզ համարեցիր իմ տերը, դու դեռ լաց կլինես»: Այսպիսին է եղել սկյութների պատասխանը:

128. Այսպիսի պատասխանով բանբերը ժամանում է Դարեհի մոտ: Մինչդեռ սկյութների թագավորները լսելով տարհության անունը, լցվում են զայրույթով: Իրենց զորքի այն մասը, որին միացել էին սավրոմատները և որին գլխավորում էր Սկոպասիսը, նրանք ուղարկում են բանակցություններ վարելու այն հնդիացիների հետ, որոնք պահպանում էին Իստրոսի վրա կառուցված կամուրջը: Իսկ մնացած սկյութները որոշում են այլևս շնորհ պարսիկներին, այլ հարձակվել նրանց վրա ամեն անգամ, երբ նրանք պարեն փնտրելիս լինեն: Այսպես, իրենց որոշման համաձայն, նրանք հետամտում էին Դարեհի զորքերին ամեն անգամ, երբ նրանք դուրս էին գալիս պարեն փնտրելու: Սկյութական հեծելազորը ամեն անգամ փախուստի էր մատնում թշնամու հեծելազորին, իսկ պարսից հեծյալներն ընկնում էին իրենց օգնության եկած հետևակի վրա: Այնժամ սկյութները, ետ մղած լինելով թշնամու հեծյալներին և վախենալով հետևակից, ետ էին դառնում: Սկյութները այսպիսի հարձակումներ էին կատարում նաև գիշերը:

129. Ես կպատմեմ շատ զարմանալի մի հրաշքի՝ էշերի զոռցի և ջորիների տեսքի մասին, որը օգնել է պարսիկներին և խանգարել սկյութներին՝ Դարեհի բանակատեղի վրա հարձակվելիս: Քանզի սկյութական երկրում, ինչպես արդեն պատմել եմ, ո՛չ էշեր են ապրում, ո՛չ էլ ջորիներ, ամբողջ սկյութական երկրում, ցրտերի պատճառով, ոչ մի տեղ էշ կամ ջորի չկա: Անա և էշերի բարձր զոռոցը շփոթեցնում է սկյութների հեծելազորին: Հետևապես, պարսից վրա հարձակվելու ժամանակ, սկյութների ձիերը. էշերի զոռ-

ոգը լսելիս, վախեցած եռ էին շրջվում և, շփոթված, տնկում բրենց ականջ-
ները, քանի որ նախկինում նրանք այդպիսի ձայն չէին լսել և այդպիսի կեն-
դանիներ չէին տեսել:

130. Սակայն այս բանը պատերազմում կարճ ժամանակ օգնեց պարս-
իկներին: Իսկ սկյութները, նկատելով պարսիկների շփոթմունքը, որպեսզի
կարողանային ստիպել նրանց առավել երկար ժամանակ մնալ իրենց երկ-
ում և այստեղ ուժասպառ անել նրանց, զրկելով ամեն տեսակ անհրա-
ժեշտ պարագաներից, հետևյալն են անում: Իրենց ձուտերի մի մասը, հովիվ-
ներով ճանդերձ, թողնելով այնտեղ, իրենք մեկնում են մեկ այլ վայր: Իսկ
պարսիկները, մոտենալով, վերցնում էին այդ ամենը և ամեն անգամ հրճ-
վում իրենց հաջողությամբ:

131. Այս բանը բազմիցս կրկնվում էր, մինչև որ Դարեհը մատնվում է
դժվար կացության: Սկյութների թագավորները, իմանալով այդ մասին, Դա-
րեհի մոտ առաքում են բաներ, նրա հետ (արքային) նվեր ուղարկելով
թռչուն, մուկ, գորտ և հինգ նետասլաք: Պարսիկներն այդ նվերները բերե-
ցին հարցնում են դրանց իմաստը: Նա պատասխանում է, թե իրեն հանձ-
նարարված է միայն հանձնել նվերները և շտապ վերադառնալ: Նա ասում է,
որ եթե պարսիկները իմաստուն են, ապա իրենք կարող են կռահել այդ
նվերների իմաստը:

132. Արդ, պարսիկներն այս լսելով, խորհուրդ գումարեցին: Դարեհը
ենթադրում էր, որ սկյութներն իրենց անձը, հողը և ջուրը հանձնում են
իրեն: Դարեհը դատում էր այսպես. մուկը ապրում է հողում և սնվում է,
ինչպես մարդը, հողի բերքով. գորտը ապրում է ջրում, թռչունը առավել
նման է ձիուն, իսկ նետասլաքները նշանակում էին, թե սկյութներն իրենց
ճգորությունը հանձնում են իրեն: Այսպիսի կարծիք է հայտնում Դարեհը:
Այս կարծիքին դեմ խոսում է Գոբրյուեսը, մոգին տապալած յոթ այրերից
մեկը, որն այդ նվերների իմաստը բացատրում է այսպես. «Եթե դուք,
պարսիկներ, թռչուն դառնալով երկինք չթռչեք, կամ մուկ դառնալով հողի
տակ չանցնեք, կամ գորտ դառնալով չցատկեք լճերի մեջ, ապա կընկնեք
այս նետասլաքներից և չեք վերադառնա ձեր տները»:

133. Այսպես, պարսիկները փորձում էին կռահել նվերների իմաստը:
Իսկ սկյութների այս ջոկատը, որը նախապես մնացել էր Մայոտիս լճի մոտ՝
երկիրը պաշտպանելու, գնում է Խատրոս, հոնիացիների հետ բանակցելու:
Հասնելով կամրջի մոտ, նրանք ասում են այսպես. «Հոնիացիներ. մենք եկել
ենք ձեզ ազատություն բերելու, եթե, իհարկե, դուք կամենաք մեզ լսել:
Մենք իմացել ենք, որ Դարեհը ձեզ պատվիրել է վաթսուն օր պահպանել
կամուրջը. իսկ եթե նա մինչ այդ չհայտնվի, ապա դուք պետք է մեկնեք ձեր
երկիրը: Արդ, եթե դուք այժմ այդպես վարվեք, ապա ոչ նրա առաջ մեղա-

վոր կլինեք, ոչ էլ մեր առաջ: Ուստի սպասեք այնքան օր, ինչքան ձեզ պատ-
վիրված է, և այնուհետև մեկնեք»: Հոնիացիները խոստանում են այդպես
անել, որից հետո սկյութները շտապփույթ վերադառնում են:

134. Այդ նվերները Դարեհին ուղարկելուց հետո, իրենց երկրում մնա-
ցած սկյութները՝ հետևակ և հեծյալ, ճակատ են կազմում թշնամուն մարտ
տալու համար: Երբ սկյութները մարտական շարքերով կանգնել էին, նրանց
միջով վազում է մի նապաստակ: Տեսնելով այդ, սկյութները վազում են
նրա հետևից: Երբ սկյութների շարքերում անկարգություն էր սկսվել և աղ-
մուկ բարձրացել, Դարեհը հարցնում է, թե այդ ի՞նչ աղմուկ է թշնամու
շարքերում: Տեղեկանալով, թե նրանք նապաստակ են հետապնդում, Դարե-
հը դիմում է իր մեծավորներին, որոնց հետ ընդհանրապես զրուցում էր,
հետևյալ խոսքերով. «Այս մարդիկ մեզ խիստ արհամարհում են. ինձ հա-
մար արդեն պարզ է, որ Գոբրյուեսը ճիշտ էր կռահել սկյութների ուղարկած
նվերների իմաստը: Այժմ քանի որ ես ևս արդեն նույն կարծիքն ունեմ, ապա
անհրաժեշտ է լավ մտածել, թե ինչպե՞ս անվտանգ վերադառնանք»: Նրան
Գոբրյուեսը պատասխանում է. «Ով արքա. ես դեռ նախապես իմ յուածներից
գիտեի այս մարդկանց անմատչելիության մասին. իսկ այժմ, գալով այս-
տեղ, ես առավել համոզվեցի դրանում, տեսնելով, թե ինչպես նրանք ծա-
նակում են մեզ: Ուստի իմ կարծիքն այն է, որ երբ գիշերն իջնի, վառենք
խարույկները, ինչպես սովորաբար ուրիշ անգամ արել ենք, և լքելով մեր
առավել տկարացած ռազմիկներին և կապելով բոլոր էշերին, հեռանանք,
քանի դեռ սկյութները ուղիղ չեն գնացել Խատրոս և չեն քանդել կամուրջը
և կամ հոնիացիները մեզ համար կործանարար մի որոշում չեն ընդունել»:

135. Այսպիսին էր Գոբրյուեսի խորհուրդը. գիշերն իջնելիս Դարեհն
սկսում է այն իրագործել: Արդեն թուլացած մարտիկներին և նրանց, ում
կորուստը իր համար քիչ արժեք ուներ, ինչպես նաև բոլոր էշերին կապե-
լով, լքեց այնտեղ, ռազմական համբարում: Էշերին նա լքում էր այն պատ-
ճառով, որ չզրայինն, իսկ տկարներին՝ նրանց թույլ լինելու պատճառով.
բայց նրանց հայտնում էր, որ ինքը, իբր, մտադիր է զորքի ընտիր մասով
հարձակվել սկյութների վրա, իսկ տկարները, իբր, պետք է մնային բա-
նակատեղը պահպանելու համար: Այնտեղ լքվածներին այսպիսի հանձնա-
րարություն տալուց և խարույկներ վառելուց հետո, Դարեհը փութով ուղղ-
վում է դեպի Խատրոս: Լքված էշերը, բոլորովին մենակ մնալով, սկսում են
առավել ուժգին զռալ. իսկ սկյութները, լսելով էշերի զոռոցը, հաստատ
համոզվում են, որ պարսիկները տակավին գտնվում են այնտեղ:

136. Երբ օրը բացվեց, լքվածները հասկանալով, որ Դարեհը դավա-
ճանել է իրենց, նրանք ձեռքները մեկնելով սկյութներին, պատմում են ամեն
ինչ: Լսելով այդ ամենը, սկյութները իսկույն միավորում են իրենց ուժերը՝

սկյութական երկու ջոկատները, սավրոմատներին, բուդիններին և գելոնները միացած մյուս ջոկատը, և հետապնդում պարսիկներին, ուղիղ դեպի Իստրոս: Քանի որ պարսից զորքը մեծավ մասամբ հետևակ էր և անգիտակ հանապարհներին, որովհետև հանապարհները նշագծված չէին, իսկ սկյութական զորքը հեծյալ էր և ծանոթ Իստրոս տանող կարճ հանապարհին, ուստի և երկու զորքերը բաժանվում են իրարից և սկյութները շատ ավելի արագ են հասնում կամրջին, քան պարսիկները: Սկյութները, տեսնելով, որ պարսիկները դեռևս տեղ չեն հասել, դիմում են հոնիացիներին, որոնք գտնվում էին նավերի մեջ, հետևյալ խոսքերով. «Հոնիացիներ. (ապասելու համար) ձեզ սահմանված օրերն անցել են, իսկ դուք հիշտ չեք անում տակավին այստեղ մնալով: Եթե դուք նախկինում այստեղ մնում էիք վախից, ապա այժմ քանդեցեք կամուրջը և շուտափույթ հեռացեք ազատ և ուրախ, և շնորհակալ եղեք աստվածներից ու սկյութներից. իսկ ձեր նախկին տիրոջը մենք այնպես կանենք, որ նա այսուհետև չկարողանա որևէ ժողովրդի վրա արշավել»:

137. Այնժամ հոնիացիները խորհուրդ են գումարում: Աթենացի Միլտիադեսը, Հելլեսպոնտոսյան ֆիրոնեսոսցիների զորապետը և տիրանը, առաջարկում է լսել սկյութներին և ազատագրել Հոնիան: Նրան առարկում է Հիստիայոս Միլետացին, ասելով, որ իրենցից յուրաքանչյուրն այժմ քաղաքի տիրան է Դարեհի շնորհիվ: Եթե Դարեհի հզորությունը ոչնչանա, ապա ո՛չ ինքը միլետացիների վրա տիրան կլինի, ո՛չ էլ որևէ մեկ ուրիշը այլոց վրա: Քանզի ամեն քաղաք կամենում է ունենալ հանրապետական կարգեր, քան թե ենթարկվել տիրանի: Բոլորը իսկույն հարեցին Հիստիայոսի կարծիքին, թեև նախապես համաձայնվել էին Միլտիադեսի (կարծիքին):

138. Անա քվեարկության մասնակիցները, որոնք իրենց ձայնը տվել են հօգուտ արքային. Հելլեսպոնտական երկրի տիրաններ Դատիսիս Աբյդոսցին և Հիպոկլոս Լամպսակոսցին և Հերոփանտոս Պարիոնցին և Մետրոդորոս Պրոկոնեսոսցին և Արիստագորաս Կյուզիկոսցին և Արիստոն Բյուզանդիոնցին: Այս բոլորը հելլեսպոնտոսյան քաղաքների տիրաններն էին. իսկ Հոնիայից՝ Սամոսի Քիոսցին, Այակես Սամոսցին, Լադամաս Փոկայացին և Հիստիայոս Միլետացին, որի կարծիքը հակառակ էր Միլտիադեսի կարծիքին, իսկ ներկա եղող էոլյանների հիշատակության արժանի է Արիստագորաս Կյումեցին:

139. Արդ, ընդունելով Հիստիայոսի առաջարկը, նրանք, բացի այդ, որոշում են նաև այդ բոլորը լրացնել հետևյալ գործերով ու խոսքերով. քանդել կամուրջը սկյութների կողմից մինչև մեկ հետքնկեց, որպեսզի և՛ ոչինչ չանելով հանդերձ, թվա թե ինչ որ բան անում են, և՛ սկյութները չփորձեն բռնությամբ կամրջով անցնել Իստրոս գետը: Կամուրջը քանդելով սկյութական կողմից, նրանք միաժամանակ ուզում էին հասկացնել, թե իրենք ամեն ինչ կկատարեն այնպես, ինչպես հանելի է սկյութներին: Անա այսպիսի լրացում կատարեցին նրանք Հիստիայոսի առաջարկին: Այնուհետև բոլորի անունից Հիստիայոսը սկյութներին պատասխանում է հետևյալ խոսքերով. «Դուք, սկյութներ, եկել եք բարի խորհրդով և ժամանակին: Դուք, անա, մեզ հիշտ ուղու վրա դրեցիք, իսկ մենք մեր հերթին ձեզ սիրահոժար կծառայեմք: Քանզի, ինչպես տեսնում եք, մենք արդեն քանդում ենք կամուրջը և ամեն կերպ կաշխատենք ազատություն ձեռք բերել: Բայց մինչ մենք կամուրջը կքանդենք, դուք ժամանակ կունենաք պարսիկներին փնտրելու և, նրանց գտնելիս, քան արժանվույն նրանցից վրեժ լուծելու և՛ մեզ, և՛ ձեզ համար»:

140. Սկյութները, երկրորդ անգամ հավատալով հոնիացիների խոսքերին, ետ են դառնում պարսիկներին փնտրելու, բայց ոչ մի կերպ չեն գտնում նրանց: Դրանում մեղավոր էին իրենք՝ սկյութները, որոնք այդ վայրի արտաները ոչնչացրել էին և աղբյուրները փակել: Եթե նրանք այդպես արած չլինեին, ապա, ցանկության դեպքում, կկարողանային հեշտությամբ գտնել պարսիկներին: Իսկ այժմ նրանց չհաջողվեց կատարել այն որոշումը, որը համարում էին առավել հիշտը: Սկյութները, անա, թշնամուն փնտրելիս գնում էին իրենց երկրի այն վայրերով, որտեղ ձիերի համար կեր կար և ջուր, ենթադրելով, որ թշնամին նույնպես կնահանջեր այդ վայրերով: Մինչդեռ պարսիկները գնում էին իրենց եկած նախկին հետքերով և միայն այդպես, այն էլ դժվարությամբ, հազիվ կարողանում են գտնել գետանցը: Նրանք այնտեղ հասնում են գիշերը և, կամուրջը քանդված տեսնելով, խիստ անբախտվում են, մտածելով, որ հոնիացիները լքել են իրենց:

141. Դարեհի մոտ կար մի եգիպտացի, որը բոլորից առավել բարձր ձայն ուներ: Սրան կանգնեցնելով Իստրոսի ափին, Դարեհը պատվիրում է ձայնել Հիստիայոս Միլետացուն: Եգիպտացին այդպես էլ անում է: Հիստիայոսը առաջին իսկ պատվերին հնազանդվելով, բոլոր նավերը արագարում է զորքերի գետանցի համար և դարձյալ կապում կամուրջը:

142. Այսպիսով պարսիկները փրկվում են: Իսկ սկյութները պարսիկներին հետամտելիս, երկրորդ անգամ ձախողվում են: Այս ամենից հետո սկյութները համարում են, թե հոնիացիները որպես ազատներ, վաղարդյուն երկչոտներն են բոլոր մարդկանցից, իսկ որպես սարուկներ, տիրաբեր ծառաներ են և հակված չեն փախչելու: Այսպես սկյութները ծանակում են հոնիացիներին:

143. Դարեհը, ուղևորվելով Թրակիայի միջով, հասնում է Քերսոնեսոսի Սեստոս (քաղաքը): Այստեղից նավերով անցնում է Ասիա, Եվրոպայում զորապետ թողնելով պարսիկ Մեգաբազոսին, որին Դարեհը պարսից մեջ

մեծ պատվի էր արժանացրել իր մի զրույցի ընթացքում: Դարեհը փափագել էր նաև ուսել. առաջին իսկ նուրբ բացելիս, նրա եղբայր Արտաբանոսը հարցնում է նրան, թե ի՞նչ կուզենար ունենալ այնքան թվով, ինչքան նռան հատիկներն են: Դարեհը պատասխանում է, թե կուզենար այդքան թվով Մեգաբազոսներ ունենալ, քան թե դառնալ ամբողջ Հելլադայի տիրակալը: Այս խոսքերով էր նա պարսից մեջ մեծարել նրան. իսկ այժմ էլ նրան կարգել էր ութ բյուր զորքի զորապետ:

144. Այս Մեգաբազոսը հելլեսպոնտացիների մոտ իր համար անմահ հիշատակ է թողել իր ասացվածքով: Բյուզանդիոնում եղած ժամանակ Մեգաբազոսը իմանում է, որ քաղկեդոնցիները բյուզանդիոնցիների գալուց տասնյոթ տարի առաջ հիմնել են այդ քաղաքը: Այդ լսելով, նա ասել է, որ քաղկեդոնցիները այդ ժամանակ կույր են եղել: Եթե նրանք կույր չլինեին, ապա լավագույն վայրերը թողած, իրենց քաղաքը հիմնելու համար առավել վատ վայրը չէին ընտրի: Անա այս Մեգաբազոսին Դարեհը թողեց զորապետ Հելլեսպոնտոսյան երկրում, և նա հպատակեցրեց բոլոր նրանց, որքեր դեռևս պարսից կողմը չէին (անցել):

145. Այսպիսի գործեր է կատարել Մեգաբազոսը: Այդ նույն ժամանակ մեկ այլ մեծաքիվ զորք արշավում է Լիբիա[97]: Դրա պատճառը ես կասեմ ավելի ուշ, նախապես հետևյալը պատմելուց հետո: Արգոնավարդների հետնորդները դուրս էին քշվել պելասգների կողմից, որոնք Բրավրոնից[98] առևանգել էին աթենացի կանանց և տարել Լեմնոս[99]: Այնտեղից նրանք նավերով գալիս են Լակեդեմոն և, հաստատվելով Տայգետոս լեռան վրա, խարույկ են վառում: Այդ տեսնելով, լակեդեմոնացիները հրեշտակ են ուղարկում հարցնելու, թե ովքե՞ր են և որտեղի՞ց: Հրեշտակի հարցին նրանք պատասխանում են, թե իրենք մինյուացիներ են[100], հետնորդներն արգոնավորդ հերոսների, որոնք ափ դուրս գալով Լեմնոս, դարձել են իրենց նախնիները: Լսելով մինյուացիների ծագման մասին այս պատմությունը, լակեդեմոնացիները դարձյալ հրեշտակ են ուղարկում հարցնելու, թե ինչո՞ւ են եկել իրենց երկիրը և խարույկ վառել: Նրանք պատասխանում են, թե իրենց դուրս են քշել պելասգները և իրենք եկել են իրենց հայրերի երկիրը. քանզի այսպես առավել արդար է: Ուստի իրենք խնդրում են, որ իրենց թույլատրվի ապրել լակեդեմոնացիների հետ, ունենալ նրանց հետ նույն իրավունքները և ստանալ հողային վիճակներ: Լակեդեմոնացիներին հաճելի թվաց ընդունել մինյուացիներին՝ նրանց առաջարկած պայմաններով: Այդ բանին նրանց մղում է հատկապես այն, որ Տինդարիդեսները[101] մասնակցել էին արգոնավարդների արշավանքին: Այսպիսով, լակեդեմոնացիներն իրենց մոտ ընդունում են մինյուացիներին. նրանց տալիս են հող և բաժանում ֆիլաների: Հետ այնու մինյուացիները անհապաղ ամուսնանում են լակեդեմոնուհիների

հետ, իսկ Լեմնոսից իրենց բերած աղջիկներին կնության տալիս լակեդեմոնացիներին:

146. Ոչ շատ ժամանակ անց մինյուացիներն սկսում են ամբարտավանանալ և պահանջում են մասնակցել թագավորական իշխանությանը և կատարում մի շարք անվայել արարքներ: Այնժամ լակեդեմոնացիները որոշում են սպանել նրանց. ուստի և ձերբակալում են նրանց և նետում բանտ: Լակեդեմոնացիները եթե սպանում են, ապա միայն գիշերը. իսկ ցերեկը՝ երբեք: Երբ արդեն պետք է սպանեին նրանց, մինյուացիների կանայք, որոնք քաղաքացուհի էին և ազնվական սպարտացիների դստեր, խնդրում են թույլատրել իրենց մտնել բանտ, որպեսզի յուրաքանչյուրը խոսի իր ամուսնու հետ: Լակեդեմոնացիները, ոչ մի դավադրություն չկասկածելով, թույլ են տալիս նրանց: Իսկ նրանք, ներս մտնելուց հետո, իրենց կանացի ամբողջ զգեստը տալիս են իրենց ամուսիններին, իսկ իրենք վերցնում են իրենց ամուսինների զգեստը: Այսպիսով, մինյուացիները, կանացի զգեստներ հագած, իբրև կանայք դուրս են գալիս և այդ կերպ խուսափելով, դարձյալ հաստատվում Տայգետոս լեռան վրա:

147. Այդ նույն ժամանակ Պոլինիկեսի ծոռնորդի և Թերանդրոսի թոռնորդի և Տիսամենեսի թոռ և Ավտեսիոնի որդի Թերասը պատրաստվում էր զաղութարարների խումբ դուրս տանել Լակեդեմոնից: Այս Թերասը, լինելով Կադմոսի սերնդից, Արիստոդեմոսի որդիներ Եվրիսթենեսի և Պրոկլեսի մոր եղբայրն էր: Քանի դեռ այս տղաները մանկահասակ էին, Թերասը, որպես նրանց խնամակալը, վերցրել էր թագավորական իշխանությունը Սպարտայում: Բայց երբ նրա հրոչ որդիները մեծացան և իշխանությունը վերցրին, Թերասը արդեն չէր հանդուրժում ուրիշներին ենթակա լինել, քանի որ հաշակել էր իշխանության (քաղցրությունը), ուստի և հայտնում է, թե ինքը չի մնա Լակեդեմոնում, այլ նավով կմեկնի իր ազգակիցների մոտ: Այժմյան Թերա կղզում, որը անցյալում կոչվում էր Կալլիստե, բնակվելիս են եղել Պոլիդիկեսի որդի Մեմբլիարոսի հետնորդները: Քանզի Կադմոսը, Ագենորի որդին, Եվրոպային փնտրելիս, ափ է ելնում այժմ Թերա կոչվող կղզում: Ափ դուրս գալուց հետո, գուցե այդ երկիրը հավանած լինելու, գուցե և մեկ այլ պատճառով, նա որոշում է այդպես անել. նա այդ կղզում այլ փյունիկեցիների հետ թողնում է նաև իր ազգական Մեմբլիարոսին: Սրանք ութ սերնդի ընթացքում ապրել են Կալլիստե կոչված (կղզում), մինչև Լակեդեմոնից Թերասի գալը:

148. Թերասը իր հետ սպարտական ֆիլաներից վերցրած մարդկանցով անա գալիս է սրանց մոտ: Նրա նպատակն էր համատեղ բնակվել այդ փյունիկեցիների հետ և բոլորովին էլ մտադիր չէր նրանց դուրս քշել այնտեղից: Այդ ժամանակ էր, որ մինյուացիները, փախչելով բանտից, բանտարկել էին

Տայգետոսի վրա և լակեդեմոնացիները սպառնում էին մահապարտի են-թարկել, բայց Թերասը դիմում է (սպարտացիներին), որպեսզի սպանություն չգործեն ու խոստանում է երկրից դուրս բերել մինյուացիներին: Լակեդեմոնացիները համաձայնվում են նրա առաջարկին: Այնժամ Թերասը նրանց թիանի երեք նավով մեկնում է Մեմբլիարոսի հետևորդների մոտ: Սակայն նա իր հետ տանում է ոչ թե բոլոր մինյուացիներին, այլ մի մասին. քանզի նրանց մեծ մասը ուղղվում է պարորեատների և կավկոնների[102] գեմ և դուրս քշելով նրանց երկրից, իրենք բաժանվում են վեց մասի. այնուհետև նրանք հիմնում են հետևյալ քաղաքները՝ Լեպրեոն, Մակիստոս, Փրիքսայ, Պյուրգոս, Եպիոն և Նուդիոն[103]: Սրանց մեծ մասը իմ ժամանակ արդեն նվաճել ու կործանել էին էլեացիները: Իսկ կղզին, գաղութացնողի անունով, կոչվել է Թերա:

149. Թերասի որդին, սակայն, չուզեց մեկնել նրա հետ. ուստի և հայրը ասում է, թե մեկնելիս նրան թողնում է ինչպես ոչխար գայլերի մեջ: Հոր այս խոսքից էլ ծնվել է պատանու անունը՝ Օյոլյուկոս[104], որը և մնացել է նրա վրա: Օյոլյուկոսի որդին էր Էգեոսը, որի անունով էլ Սպարտայի մեծազույն ֆիլաներից մեկը կոչվել է Էգեյան: Քանի որ այս ֆիլայի տղամարդկանց երեխաները չէին ապրում, ապա նրանք, աստվածային պատգամի համաձայն, Լայոսի և Էդիպի երինյուաներին արքայայր են հիմնում, որից հետո նրանց երեխաներն արդեն կենդանի են մնում (և՛ Սպարտայում), և՛ Թերայում:

150. Մինչև այստեղ լակեդեմոնացիների և թերացիների պատմածները համապատասխան են իրար. իսկ շարունակությունը պատմում են միայն թերացիները՝ հետևյալ կերպ: Այս Թերասի հետնորդ Գրիննոսը, Այսանիոսի որդին, որը թագավորում էր Թերա կղզում, ժամանել է Դելֆի, իր քաղաքի կողմից հեկատոմբա[105] տանելով: Նրան ուղեկցում էին նաև իր համաքաղաքացիներից ոմանք, հատկապես Պոլյումնեստոսի որդի Բատտոսը, որը մինյուացի Եվֆեմոսի սերնդից էր: Երբ Գրիննոսը, Թերայի թագավորը, տարբեր հարցերի մասին դիմել է պատգամախոսին, սա նրան պատասխանել է, թե պարտավոր է Լիբիայում քաղաք կառուցել: Իսկ Գրիննոսը պատասխանում է, ասելով. «Ով տեր. ես արդեն ծերացել եմ և ինձ համար ծանր է տեղափոխվելը: Դու պատվիրիր առավել երիտասարդներից որևէ մեկին այդ անել»: Այս ասելիս նա մատնացույց է արել Բատտոսին: Այդ ժամանակ ուրիշ ոչինչ չի ասվել: Բայց վերադառնալուց հետո նրանք անուշադրության են մատնում այդ պատգամը, քանի որ չգիտեին, թե որտե՞ղ է գտնվում Լիբիան, և չէին համարձակվում գաղութարարներ ուղարկել անորոշ գործի:

151. Այս դեպքերից հետո Թերայում յոթ տարի չի անձրևում, որի հետևանքով կղզու բոլոր ծառերը չորանում են, բացի մեկից: Այնժամ թերացիները դիմում են պատգամախոսին, և Պյութիան դարձյալ հիշեցնում է Լիբիայի գաղութի մասին: Տեսնելով, որ չարիքից խուսափելու այլ միջոց չկա, նրանք հրեշտակներ են ուղարկում Կրետե[106], հարցնելու և իմանալու, թե որևէ կրետացի կամ վերաբնակիչ եղե՞լ էր արդյոք Լիբիայում: Կղզում թափառելիս, նրանք հասնում են նաև Խանոն քաղաքը. այնտեղ նրանց պատահում է ծիրանաբեր խխունջ[107] ուսացող մի մարդ, Կորոբիոս անունով, որն ասում է, թե իրեք, հողմերից քշված, հասել է Լիբիա, հատկապես լիբիական Պլատեա կղզին: Թերացիները վարձով նրան համոզում և բերում են Թերա: Այնուհետև, նախ մի քանի մարդ նավով մեկնում է Թերայից, հետախուզելու նպատակով: Երբ Կորոբիոսը նրանց առաջնորդում է Պլատեա կղզին, թերացիները նրան թողնում են այնտեղ մի քանի ամսվա պարենով, իսկ իրենք շուտափույթ վերադառնում Թերա, որպեսզի այդ կղզու մասին պատմեն իրենց համաքաղաքացիներին:

152. Սրանց մեկնելուց հետո անցնում է պայմանավորվածից ավելի ժամանակ, և Կորոբիոսի մոտ եղած ամբողջ պարենը սպառվում է: Հետայսու, սամոսյան մի նավ, որի նավատերն էր Կոլայոսը, դեպի Եգիպտոս նավելիս, քշվում է այս Պլատեա կղզին: Լսելով Կորոբիոսից այս ամբողջ պատմությունը, նրա մոտ մեկ տարվա պարեն է թողնում: Իսկ իրենք հեռանալով կղզուց, շտապում են դեպի Եգիպտոս, բայց արևելյան քամին նրանց մղում է դեպի հետ. ու քանի որ հողմերը չէին դադարում, նրանք, անցնելով Հերակլյան Սյուները, աստվածների օգնությամբ հասնում են Տարտեսսոս[108]: Այդ վաճառատեղին այդ ժամանակ դեռևս անհայտ էր (հելլեններին). ուստի և հելլեններից ոչ ոք, ինչքան ինձ հաստատապես հայտնի է, տուն վերադառնալիս այնքան շահավետ բեռներ չի բերել, ինչքան այս սամոսցիները, եթե չհաշվենք էգինացի Լաոդամասի որդի Սոստրատոսին. քանզի սրա հետ (այս հարցում) ոչ ոք չի կարող մրցել: Սամոսցիներն իրենց շահույթի տասանորդը, այսինքն՝ վեց տաղանդ, առանձնացնելով, պատրաստում են արգոլիսյան կրատերի նման խոշոր պղնձե անոթ, որի շուրջը շուրջանակի, պսակի նման, զարդարված էր գրիփոններով. այդ անոթը նվիրաբերում են Հերայի տաճարին: Անոթի տակ, որպես պատվանդան, պղնձե երեք հսկա ծնկաչոք արձաններ են դնում, յոթ կանգուն բարձրությամբ: Այս բոլորից հետո կյուրենացիները և թերացիները սերտ բարեկամություն են հաստատում սամոսցիների հետ:

153. Կորոբիոսին (Պլատեա) կղզում թողնելուց հետո, թերացիները, վերադառնալով Թերա, հաղորդում են, որ իրենք, իբր, բնակավայր են հաստատել Լիբիայի մի կղզում: Թերացիները որոշում են իրենց բոլոր յոթ համայնքներից վիճակով ընտրել յուրաքանչյուր երկու եղբայրներից մեկին,

և նրանց առաջնորդ ու թագավոր կարգելով Բատտոսին, ուղարկել այնտեղ: Այսպիսով, նրանք հիսուն թիանի մի նավ ուղարկում են Պլատեա:

154. Այսպես են պատմում թեբացիները: Հետագա դեպքերի մասին կյուրենացիները ևս համաձայն են թեբացիներին: Սակայն Բատտոսի մասին կյուրենացիները բոլորովին համաձայն չեն թեբացիների հետ: Նրանք պատմում են այսպես: Կրետեում քաղաք կա՝ Օաքսոս անունով, որտեղ թագավորել է Եսեարքոսը: Սա ունենում է անմայր մի դուստր՝ Փրոնիմե անունով. ի սեր այս դստեր, նա ամուսնանում է մեկ այլ կնոջ հետ: Երբ այս կինը մտադ է գործում նրա տունը, կամենում է գործով ևս Փրոնիմեի համար խորթ մայր դառնալ: Նա վատ է վերաբերվում աղջկան և ամեն կերպ դավ նյութում նրա դեմ, մինչև որ վերջապես նրան մեղադրում է անառակության մեջ և համոզում ամուսնուն, որ այդ այդպես է: Սա, հավատալով իր կնոջ խոսքերին, անազնիվ դավ է նյութում իր աղջկա դեմ: (Այդ ժամանակ) Օաքսոսում կար Թեմիսոն անունով մի թեբացի վաճառական: Եսեարքոսը սրան նյութ է հրավիրում և ստիպում երդվել, որ կկատարի այն ամենը, ինչ խնդրի նրանից: Երդումը վերցնելուց հետո, բերում է իր աղջկան, և նրան հանձնելով Թեմիսոնին, հրամայում տանել ու գցել ծովը: Թեմիսոնը, խիստ զայրացած, որ խաբեությամբ իրենից երդում վերցրին, խզում է թագավորի հետ իր բարեկամությունը և, աղջկան վերցնելով իր հետ, մեկնում (Կրետեից): Դուրս գալով ծով, նա, հավատարիմ տված երդումին, պարտնով կապում է աղջկան և նետում ծով, բայց նրան դարձյալ դուրս բերելով ծովից, իր հետ տանում է Թերա:

155. Այնտեղ Պոլյումնեստոսը, ազնվատոհմ մի թեբացի, Փրոնիմեին վերցնում է իբրև հարճ: Որոշ ժամանակ անց նա ունենում է մի աղա, թլիկ ու կակազ, որի անունը դնում են Բատտոս[109]: Այսպես պատմում են թեբացիները և կյուրենացիները: Իմ կարծիքով, նրա անունը այլ է եղել. իսկ Բատտոս անունը նա ստացել է հետագայում, Լիբիա գալուց հետո, Դելփիում նրան տրված մի պատգամի, ինչպես նաև այդ անվանումից իր ստացած պատվի պատճառով. քանզի լիբիացիները թագավորին անվանում են «բատտոս»: Ես կարծում եմ, որ Պյութիան պատգամը հայտնելիս նրան դիմել է լիբիերեն, իմանալով, որ նա դառնալու է Լիբիայի թագավոր: Բատտոսը դառնալով այր, գալիս է Դելփի իր (թլիկ) խոսքի համար: Նրա հարցին Պյութիան պատասխանում է այսպես.

«Բատտոս, եկար խոսքիդ համար, Ապոլոնը, Ձայրոս տրքան,
Ուղարկում է քեզ բնակվելու Լիբիայում ոչխարաշատ»:

Երբ հուսահատ խոսած լիներ, (Պյութիան) պիտի ասեր. «Ով թագավոր, եկար խոսքիդ համար»: Իսկ Բատտոսը պատասխանում է հետևյալ խոսքերով.

«Ով տեր. ես եկել եմ հարցնելու քեզանից իմ խոսքի մասին, իսկ դու անկարելի բաներ ես գուշակում, պատվիրելով զաղութ հիմնել Լիբիայում. բայց ի՞նչ ուժերով և ո՞ւմ ձեռքերով»: Այս խոսքով, ասկայն, նա չկարողացավ համոզել պատգամախոսին՝ տարբեր պատգամ տալու: Պյութիան կրկնում է իր նախորդ գուշակությունը. ուստի և Բատտոսը, երբ դեռ պատգամախոսը պատասխանում էր, մեկնում է և վերադառնում Թերա:

156. Հետ այնու Բատտոսին և մյուս թեբացիներին պատահում են ձախորդություններ: Անգիտանալով իրենց ձախորդության պատճառները, թեբացիները հարցնում են դելփյան պատգամախոսին: Պյութիան նրանց պատասխանում է, թե լավ կլինի, եթե սատարեն Բատտոսին՝ Լիբիայի Կյուրենեն հիմնելու: Այնժամ թեբացիները ուղարկում են Բատտոսին հիսուն թիանի երկու նավով: Նրանք նավերով հասնում են Լիբիա, բայց չիմանալով ի՞նչ անել, ետ դառնում են Թերա: Բայց թեբացիները սկսում են նեղանարել նրանց, թույլ չտալով ափին մոտենալ և ստիպելով նավերով ետ դառնալ: Այնժամ նրանք, ստիպված ետ են նավում և բնակեցնում են լիբիական ափի կղզին, որի անունը, ինչպես արդեն ասել եմ, Պլատեա էր: Ասում են, թե այդ կղզին մեծությամբ հավասար է այժմյան Կյուրենե քաղաքին:

157. Այստեղ երկու տարի ապրելուց հետո, քանի որ ոչ մի լավ բան իրենց չպատահեց, նրանք իրենցից մեկին տեղում թողնելով, մնացած բոլորը նավով մեկնում են Դելփի: Հասնելով պատգամատուն, հարցնում են, թե ինչո՞ւ, թեև իրենք բնակվեցին Լիբիայում, բայց դրանից իրենց համար բոլորովին էլ լավ չի եղել: Պյութիան նրանց այսպես է պատգամում.

«Ես տեսել եմ, դու չես տեսել: Թե ինձնից լավ գիտես Լիբիան
Ոչխարաշատ, զարմանում եմ ես քո անչափ իմաստությամբ»:

Այս պատասխանը լսելով, Բատտոսը և նրա ուղեկիցները ետ մեկնեցին նավերով. քանզի ատված չէր ազատել նրանց զաղութ հիմնելու պարտավորությունից, նախքան իրենք կնասնեին Լիբիա: Ուստի վերադառնալով կղզի, նրանք վերցնում են իրենց հետ այնտեղ թողնված մարդուն, և բուն Լիբիայում, կղզու դիմաց, հիմնում բնակավայր՝ Ազիրիս կոչվող: Այն երկու կողմից եզերված էր գեղեցիկ պուրակներով, իսկ երրորդ կողմի երկարությամբ գետ էր հոսում:

158. Այս վայրում նրանք ապրում են վեց տարի: Յոթերորդ տարին լիբիացիները նրանց առաջարկում են տանել ավելի լավ մի տեղ և համոզում են թողնել այդ վայրը: Ուստի և լիբիացիները նրանց տանում են այնտեղից և առաջնորդում դեպի արևմուտք. բայց որպեսզի հելլենները չտեսնեին լավագույն վայրը, լիբիացիները օրվա ժամանակը համապատասխանաբար

ճիշտ որոշելով, այդ վայրի մոտով նրանց տանում էին զիշեր ժամանակ: Այդ վայրը կոչվում է Իրասա: Ի վերջո, լիբիացիները նրանց բերում են աղբյուրի մոտ, որը, իբր, ձոնված է Ապոլլոնին, և ասում. «Ով հելլեններ. լավ կլինի, եթե դուք բնակվեք այստեղ. քանզի այստեղ երկինքը ծակծակ է»[110]:

159. Արդ, բնակավայրի հիմնադիր Բատտոսի, որը իշխել է հարատև տարի, ինչպես և նրա որդի Արկեսիլաոսի օրոք, որը իշխել է տասնվեց տարի, կյուրենացիները մնացել էին այնքան, ինչքան սկզբնապես ուղարկվել էին գաղութ հաստատելու: Բայց երրորդ թագավորի՝ Բատտոս Երջանիկ կոչվածի օրոք Պյութիան իր պատգամով համայն հելլեններին հորդորում է նավերով մեկնել Լիբիա և այնտեղ համաբնակվել կյուրենացիների հետ. քանզի կյուրենացիները հրավիրում էին նրանց, խոստանալով հողի վերաբաժանում: Իսկ պատգամն այսպիսին էր.

«Եթե, ով ոչ գնա Լիբիա բաղձալի և արդեն հողը
Բաժանված լինի, ապա կզղջա նա հետագայում»:

Այսպիսով, մեծ բազմություն է հավաքվում Կյուրենեում և (հելլենները) շատ հողեր են գրավում հարևան լիբիացիներից: Այնժամ այս լիբիացիները և նրանց թագավորը, որի անունն էր Ադիկրան, հողազրկվելով և խիստ անարգվելով կյուրենացիներից, դեսպաններ են ուղարկում Եգիպտոսի Ապրիես թագավորի մոտ, ապավինելով նրա պաշտպանությանը: Ապրիեսը Եգիպտական մեծաթիվ զորք գումարելով, ուղարկում է Կյուրենեի դեմ. իսկ կյուրենացիները, արշավելով, հասնում են Իրասա վայրը, Թեսաես աղբյուրի մոտ, և հարձակվելով եգիպտացիների վրա, մարտում հաղթում են: Քանզի եգիպտացիներն անցյալում հելլենների դեմ (պատերազմելու) փորձ չունեին, և արհամարհելով նրանց, այնպես են պարտվում, որ նրանցից միայն քչերը կարողանում են վերադառնալ Եգիպտոս: Այս պարտության համար եգիպտացիները մեղադրում են Ապրիեսին և ապստամբում նրա դեմ:

160. Այս Բատտոսի որդին էր Արկեսիլաոսը: Իր թագավորության սկզբին սա վիճում է իր եղբայրների հետ. ուստի և նրանք թողնում ու հեռանում են Լիբիայի մեկ այլ երկիր, որտեղ իրենց համար կառուցում են քաղաք, որը և՛ այդ ժամանակ, և՛ այժմ, կոչվում է Բարկա: Այս քաղաքը կառուցելիս նրանք լիբիացիներին մղում են ապստամբության կյուրենացիների դեմ: Այնուհետև Արկեսիլաոսը զորքով արշավում է իր եղբայրներին ընդառաջ լիբիացիների և ապստամբների վրա: Լիբիացիները, անաբեկված նրանից, փախչում են արևելյան լիբիացիների մոտ. իսկ Արկեսիլաոսը հետապնդում է նրանց մինչև Լիբիայի Լեկոն վայրը, որտեղ լիբիացիները որոշում են հարձակվել նրա վրա: Ճակատամարտում լիբիացիներն այնպես են

հաղթում կյուրենացիներին, որ դաշտում ընկնում են յոթ հազար կյուրենացի հոպլիտներ: Այս անհաջողությունից հետո Արկեսիլաոսը հիվանդանում է և դեղ խմում, բայց նրա եղբայր Հալիարքոսը խեղդամահ է անում նրան. իսկ Հալիարքոսին ենթգաբար սպանում է Արկեսիլաոսի կինը, անունը Երյուքսո:

161. Արկեսիլաոսի թագավորությունը ժառանգում է նրա որդի Բատտոսը, որը կաղ էր և ոտքերից թույլ: Կյուրենացիները իրենց պատահած դժբախտության առիթով մարդ են ուղարկում Դելֆի հարցնելու, թե ինչպիսի՞ կարգ հաստատելով իրենք կարող են առավել լավ ապրել: Իսկ Պյութիան նրանց պատվիրում է միջնորդ հաշտարար հրավիրել Արկադիայի[112] Մանտինեայից: Կյուրենացիների խնդրանքով մանտինեացիները նրանց տալիս են իրենց ամենահարգված քաղաքացիներից մեկին՝ Դեմոնաքս անունով: Ժամանելով Կյուրենե, այս մարդը ուսումնասիրում է իրավիճակը և կյուրենացիներին բաժանում երեք ֆիլաների, հետևյալ կերպ: Առաջին մասը կազմում էին թերացիները և նրանց հարևանները. մյուս մասը՝ պելոպոնեսցիները և կրետացիները. իսկ երրորդ մասը՝ բոլոր կղզեցիները: Այնուհետև նա թագավոր Բատտոսի համար առանձնացնում է հողային տիրույթներ և հոգևոր եկամուտներ[113], իսկ մնացած այն ամենը, ինչ նախկինում պատկանում էր թագավորներին, դարձնում է հանրության սեփականություն:

162. Անա այս Բատտոսի օրոք դրությունն այսպես շարունակվում է. բայց նրա որդի Արկեսիլաոսի օրոք մեծ խռովություն եղավ՝ (թագավորական) իրավասություններին շուրջ: Քանզի Արկեսիլաոսը, կաղ Բատտոսի և Փերեթիմեի որդին, հայտարարում է, թե չի հանդուրժելու Դեմոնաքս Մանտինեացու (սահմանած) կարգերը: Նա պահանջում է վերադարձնել իր նախնիների արտոնությունները: Հետագայում խռովություն բարձրացնելով, նա պարտվում է և փախչում Սամոս, իսկ նրա մայրը փախչում է Կիպրոսի Սալամիս (քաղաք): Այդ ժամանակ Սալամիսում իշխում էր Եվելթոնը. նա Դելֆիի տաճարին նվիրաբերել է տեսարժան խնկամանը, որը գտնվում է կորնթացիների գանձարանում[114]: Գալով Եվելթոնի մոտ, Փերեթիմեն խնդրում է նրանից զորք, որպեսզի իրեն և իր որդուն վերադարձնի Կյուրենե: Բայց Եվելթոնը տալիս է նրան ամենն ինչ, բացի զորքից, իսկ Փերեթիմեն, ընդունելով տրված նվերները, ասում է, որ դրանք լավ են, բայց ավելի լավ կլիներ, եթե թագավորը տրամադրեր իր խնդրած զորքը: Քանի որ այս նույն խոսքերը նա կրկնում էր ամեն անգամ նոր նվերներ ստանալիս, ապա Եվելթոնը ի վերջո ուղարկում է նրան նվեր ոսկե նախարակ և իլիկ, ինչպես նաև բուրդ: Երբ Փերեթիմեն իր նույն խոսքերը կրկնում է նաև այս

անգամ, ապա Եվելթոնը պատասխանում է, թե այսպիսի նվերներ պետք է ուղարկել կանանց, և ոչ թե զորք:

163. Մինչ այդ Արկեսիլաոսը, որն այդ ժամանակ գտնվում էր Սամոսում, ամեն տեսակ մարդկանց հավաքագրում էր, խոստանալով հոգերի վերաբաժանում: Մեծաթիվ զորք հավաքելուց հետո, նա մեկնում է Դելֆի, պատգամ հարցնելու իր վերադարձի մասին: Իսկ Պյութիան նրան այսպես է պատգամում. «Զորս Բատտոսների և չորս Արկեսիլաոսների, այսինքն՝ ութ սերնդի համար Լոքսիասը ձեզ տալիս է Կյուրենեի թագավորությունը. իսկ ավելին փորձել նա խորհուրդ չի տալիս ձեզ: Դու հանգիստ կարող ես գնալ քո երկիրը: Եթե քեզ պատահի սափորներով լցված վառարան, ապա չթրծես սափորները. այլ առաջիր դրանք ինչպես կան. իսկ եթե վառարանը վառես, ապա մի գնա ջրերով շրջապատված երկիրը. հակառակ դեպքում և՛ դու կմեռնես, և՛ քո նախրի ամենալավ ցուլը կատակի»: Այսպես է Պյութիան պատգամում Արկեսիլաոսին:

164. Իսկ նա զորք վերցնելով, Սամոսից վերադառնում է Կյուրենե և, տիրելով իշխանությանը, չի հիշում պատգամախոսին, այլ դատական հալածանք է սկսում իր փախուստի համար մեղավորների դեմ: Նրանցից ոմանք ստիպված են լինում մշտապես հեռանալ երկրից. մյուսներին Արկեսիլաոսը ձերբակալում է և ուղարկում Կիպրոս՝ ոչնչացնելու համար: Սակայն հողմերը սրանց հետում են Կնիդոս. կնիդոսցիները նրանց փրկում են և ուղարկում Թերա: Կյուրենացիներից ոմանց էլ հաջողվել էր ապաստանել Ազոմանոսին պատկանող մեծ աշտարակում: Արկեսիլաոսը դրա շուրջը փայտ դիզելով, հրամայում է հրկիզել: Այնժամ, մտաբերելով պատգամի խոսքերը, նա ենթադրում է, որ դրանք վերաբերում են կատարված այս դեպքին. քանզի պատգամախոսը արգելել էր նրան թրծել վառարանի մեջ գտնվող սափորները: Արդ, անաբեկված կանխագուշակված մահից, Արկեսիլաոսը որոշում է հեռանալ Կյուրենեից, որը նա համարում էր «ջրերով շրջապատված երկիր»: Նա ամուսնացել էր իր ազգականներից մեկի հետ, որը բարկացիների թագավոր Ալազեյրի դուստրն էր: Արկեսիլաոսը գալիս է Ալազեյրի մոտ. բայց բարկացի մարդիկ և կյուրենացի փախստականներից ոմանք, տեսնելով նրան քաղաքի շուկայում, սպանում են. նրա հետ նաև նրա անձեր Ալազեյրին: Արկեսիլաոսն, անա, կամա թե ակամա, անտեսած լինելով (տրված) պատգամը, շխուսափեց իր նակատագրից:

165. Քանի դեռ Արկեսիլաոսը Բարկայում էր և ճոթում էր իր իսկ կործանումը, նրա մայր Փերեսիմեն Կյուրենեում վայելում էր իր որդու ունեցած արտոնությունները, վարելով նրա գործերը, և հայնինակ մասնակցում էր քաղաքային խորհրդի նիստերին: Լսելով իր որդու մահվան մասին Բարկայում, նա փախչելով, ապաստանում է Եգիպտոսում: Արկեսիլաոսը

(անցյալում) ծառայություն էր մատուցել Կամբյուսեսին՝ Կյուրոսի որդուն: Այս Արկեսիլաոսն էր, որ Կյուրենեն հանձնել էր Կամբյուսեսին և նրան հարկատու դարձրել: Ժամանելով Եգիպտոս, Փերեսիմեն աղերսագին խնդրում է Արյուանդեսին՝ օգնել իրեն և վրեժ լուծել, պատճառաբանելով, որ իր որդին սպանվել է իր պարսկասիրության համար:

166. Այս Արյուանդեսին Կամբյուսեսը կարգել էր Եգիպտոսի նյութարքոս: Հետագայում այս Արյուանդեսը սպանվում է, քանի որ իրեն համարել էր Դարեհին հավասար: Քանզի լսելով ու տեսնելով, որ Դարեհը կամենում է իր համար թողնել այնպիսի հուշարձան, որպիսին երբեք ոչ մի թագավոր չէր թողել, Արյուանդեսը ուզում է նրա օրինակին հետևել, որի համար էլ նա ստանում է իր վարձը: Դարեհը, ենարավորին չափ մաքուր ոսկի ձուլելով, դրամ է հատում[115]: Իսկ Արյուանդեսը, որը Եգիպտոսի կառավարիչն էր, նույնը անում է արծաթ դրամներով. ուստի հիմա ևս արյուանդեական արծաթը ամենամաքուր է: Դարեհը, լսելով նրա այս արարքի մասին, նրան մեղադրում է մեկ այլ, այն է՝ ապստամբություն նյութելու մեղադրանքով, և սպանում:

167. Բայց այդ ժամանակ այս Արյուանդեսը, կարեկցելով Փերեսիմեին, տրամադրում է նրան եգիպտական ամբողջ զորքը՝ ցամաքային և ծովային: Ցամաքային զորքերի հրամանատար կարգում է Ամասիս մարափիացուն, իսկ ծովայինի՝ ծագումով պարսարգադացի Բադրեսին: Բայց նախքան զորքն ուղարկելը, Արյուանդեսը քանքեր է առաքում Բարկա՝ իմանալու համար, թե ո՞վ է եղել Արկեսիլաոսին սպանողը: Բարկացիները պատասխանում են, թե այդ արարքը կատարել են իրենք, բոլորը միասին, քանզի նրանից շատ շարիքներ են կրել: Այս լսելով, Արյուանդեսը նրանց դեմ է ուղարկում իր զորքը՝ Փերեսիմեի հետ: Այս առիթը, սակայն, պատրվակ էր. իմ կարծիքով, այդ արշավանքը կատարվել է Լիբիան նվաճելու նպատակով: Քանզի Լիբիայում բազմաթիվ և բազմազան ցեղեր են ապրում, որոնցից միայն քչերն էին հպատակվել Դարեհին, մինչդեռ մեծ մասը Դարեհի մասին նույնիսկ չէր մտածում:

168. Լիբիացիները (իրենց երկրում) բնակվում են հետևյալ կարգով: Եգիպտոսից սկսած առաջինը լիբիական ցեղերից բնակվում են ադիրմաքիդները, որոնց սովորությունները, մեծ մասամբ, եգիպտական են, իսկ զգեստը նույնն է, ինչ մյուս լիբիացիներինը: Նրանց կանայք իրենց յուրաքանչյուր արուն մի բրոնզե ապարանջան են կրում և գլուխներին երկար մազեր պահում: Նրանցից ամեն մեկը ոջիլ բռնելիս, կծում է այն և դեն նետում: Լիբիացիներից միայն սրանք են այդպես անում և միայն սրանք են, որ ամուսնության համար պատրաստ իրենց կույսերին բերում են թագավորին տեսության: Եվ եթե թագավորն այդ կույսին հավանի, ապա նրան զրկում է

կուսությունից: Այս ադյուրմաֆիդները բնակվում են Եգիպտոսից մինչև Պլյուսոս կոչված նավահանգիստը:

169. Նրանց հաջորդում են գիլիգամները, որոնք բնակեցնում են երկիրը դեպի արևմուտք, մինչև Ափրոդիսիաս կոչվի: Սրանց միջև գտնվում է Պլատեա կոչվի, որը բնակեցրել են կյուրենացիները. իսկ մայր ցամաքի վրա գտնվում են Մենելաոսի նավահանգիստը և Ազիրիսը, որը կառուցել են կյուրենացիները: Այստեղից էլ սկսվում է այն վայրը (որտեղ աճում է) սիլֆիոնը[116]: Սիլֆիոնը աճում է սկսած Պլատեա կոզուց մինչև Սյուրտիսի բերանը: Գիլիգամների սովորությունները նման են մյուս ցեղերի սովորություններին:

170. Գիլիգամներին արևմուտքում հաջորդում են ասբյուտները, որոնք բնակվում են Կյուրենից այն կողմ. նրանք չեն հասնում մինչև ծովափ, քանի որ ծովափին տիրում են կյուրենացիները: Լիբիացիների թվում սրանք քառաձիգ առավել շատ են սիրում և իրենց սովորություններով ձգտում են նմանվել կյուրենացիներին:

171. Ասբյուտներին դեպի արևմուտք հաջորդում են աուսֆիսները: Սրանք բնակվում են Բարկայից այն կողմ և հասնում մինչև ծովափ, եվեսպերիսների մոտ: Աուսֆիսների երկրի մեջտեղում բնակվում են բակալները, որոնք փոքրաթիվ են և հասնում են մինչև ծովափ, Բարկայում գտնվող Տաուքեյրա քաղաքի մոտ: Նրանց սովորությունները նույնն են, ինչ Կյուրենից այն կողմ բնակվող լիբիացիների սովորությունները:

172. Այս աուսֆիսներից արևմուտք հաջորդում են նասամոնները, որոնք մեծաթիվ ցեղեր են: Ամռանը սրանք թողնում են իրենց հոտերը ծովափին և բարձրանում (երկրի խորքը), Աուգիլես կոչված վայրը, արմավ քաղելու. քանզի այստեղ աճում են մեծ քանակությամբ հսկայական արմավենիներ, բոլորը բերքատու: Նրանք հավաքում են մորեխ և, դրանք արևի տակ չորացնելուց և աղալուց հետո, խառնում են կաթին ու խմում: Նրանցից ամեն մեկը, սովորաբար, ունի շատ կանայք, որոնք ընդհանուր են. նրանք կենակցում են կանանց հետ գրեթե այնպես, ինչպես մասագետները. դրան առաջ դնում են մի գավազան և հետո մերձենում կնոջ: Երբ նասամոնը ամուսնանում է առաջին անգամ, ապա, ըստ սովորության, հարսը առաջին գիշերը պարտավոր է հերթով բոլոր հյուրերի հետ կենակցել: Ամեն մեկը, նրա հետ կենակցելուց հետո, (հարսին) տալիս է նվեր, որը բերում է տանից: Նրանց երդման և գուշակության սովորություններն այսպիսի են: Երդում արտասանելիս, նրանք հիշատակում են իրենց ամենաարդար և ամենաարատիկի մարդկանց, իրենց ձեռքերը դնելով նրանց գերեզմանի վրա: Գուշակության համար նրանք դարձյալ գալիս են իրենց նախնիների գերեզմանը և, աղոթելուց հետո, այնտեղ քնում. քնելուց հետո նրանց տեսած երազն էլ ընդունվում է որպես գուշակի պատգամ: Նրանք հավատարմություն են հաստատում՝ խմելով մեկը մյուսի ձեռքից: Եվ եթե իրենց մոտ որևէ հեղուկ չի գտնվում, ապա նրանք գետնից վերցնում են հող և այն լիզում:

173. Նասամոնների սահմանակից են եղել փսյուլլոսները: Սրանք կործանվել են հետևյալ կերպ: Հարավային ուժեղ քամին ցամաքեցրել է նրանց ջրամբարները, և Սյուրտեսից այն կողմ ընկած նրանց ամբողջ երկիրը դարձել է ջրազուրկ: Նրանք խորհուրդ գումարելով, միաձայն որոշել են արշավել հարավ; ես պատմում եմ այն, ինչ ինձ պատմել են լիբիացիները: Երբ նրանք հասնում են ավազուտ անապատին, այնտեղ հարավային քամին նրանց թաղում է: Սրանց կործանումից հետո երկիրը անցնում է նասամոնների:

174. Սրանցից այն կողմ, դեպի հարավ, գազաների երկրում բնակվում են գարամանտները: Նրանք խուսափում են մարդկանցից և ամեն տեսակ հաղորդակցումից: Նրանք ոչ մի տեսակ զենք չեն կրում, ո՛չ հարձակողական, ո՛չ էլ պաշտպանական:

175. Անա սրանք բնակվում են նասամոններից այն կողմ: Արևմուտքում, ծովափի երկարությամբ, բնակվում են մակերը: Նրանք սափրում են իրենց գլխի մազերը, գագաթին մազափունջ թողնելով, իսկ կողերից սափրում են մինչև մաշկը: Ռազմի ժամանակ նրանք կրում են ջայլամի կաշուց պատրաստված վահաններ. նրանց երկրի միջով հոսում է Կինյոպս գետը, որը բխելով Քարիտոն[117] կոչված բլրից, թափվում է ծով: Այս Քարիտոն բլուրը անտառախիտ է, մինչդեռ Լիբիայի վերոհիշյալ մասերը անտառազուրկ են: Բլրի հեռավորությունը ծովից երկու հարյուր ասպարեզ է:

176. Մակերից այն կողմ բնակվում են գիզանները, որոնց կանայք իրենց ոտքի կոճերին կրում են մեծ թվով կաշվե օղակներ, ինչպես պատմում են, հետևյալ պատճառով: Նրանցից յուրաքանչյուրը, ամեն անգամ տղամարդու հետ խառնվելուց հետո, իր ոտքի կոճին կապում է այդպիսի օղակ: Այն կինը, որի ոտքին առավել շատ օղակներ կան, համարվում է լավագույնը բոլորից, քանի որ նա սիրված է եղել առավել մեծ թվով տղամարդկանց կողմից:

177. Այս գիզանաներից առաջ, դեպի ծովը դուրս եկող ցամաքի հատվածում, ապրում են լոտոսակերները[118]: Սրանք սնվում են բացառապես լոտոսի պտուղով: Լոտոսի պտուղը խոշոր է, ինչպես մաստիկենու պտուղը, իսկ քաղցրությամբ նման է արմավին: Լոտոսակերները դրանից պատրաստում են նաև գինի:

178. Լոտոսակերներից հետո, ծովափի երկարությամբ, բնակվում են մախլյուները, որոնք նույնպես օգտագործում են լոտոսը, բայց ավելի պակաս, քան հիշատակված լոտոսակերները: Նրանց երկիրը տարածվում է

մինչև Տրիտոն անունը կրող մեծ գետը. այդ գետը թափվում է Տրիտոնիս մեծ լիճը: Այդ լճում կա կղզի, Փլա կոչվող: Պատմում են, թե պատգամախոսը պատվիրել է լակեդեմոնացիներին այս կղզու վրա հիմնել գաղութ:

179. Կա նաև մեկ այլ զուլց: Պատմում են, թե Յասոնը, Պելիոնի ստորոտում Արգո նավի կառուցումն ավարտելուց հետո, դրա վրա բարձում է բացի հեկատոմբեից, նաև պղնձե եռոտանի և նավարկում Պելոպոնեսոսի շուրջ՝ Դելփի հասնելու նպատակով: Եվ անա, երբ նավը մոտենում է Մալեա (Երվանդանին), հյուսիսային քամին այն քշում ու նետում է դեպի Լիբիա. բայց նախքան Յասոնը կտեսներ երկիրը, ընկնում է Տրիտոնիս լճի ծանծաղուտները: Եվ մինչ նա չէր կարողանում այնտեղից դուրս գալու հնար գտնել, շարունակում է զուլցը, նրան հայտնվում է Տրիտոնը[119] և պահանջում իրեն տալ եռոտանին, փոխարենը խոստանալով ցույց տալ ելքը և նրանց անվտանգ դուրս բերել: Յասոնը հնազանդվել է, որից հետո Տրիտոնը նրան ցույց է տվել ծանծաղուտից դուրս գալու անցումը, իսկ եռոտանին գրել է իր սրբավայրում: Բազմելով այդ եռոտանու վրա, Տրիտոնը գուշակություն է արել Յասոնի և նրա ուղեկիցների ապագայի մասին այսպես. «Եթե Յասոնի հետ Արգո նավով արշավողների հետնորդներից որևէ մեկը իր հետ տանի այս եռոտանին, այնժամ Տրիտոնիս լճի շուրջ անպայման կհիմնվեն հարյուր հելլենական քաղաքներ»: Լսելով այս պատգամը, տեղաբնիկ լիբիացիները թաքցրել են եռոտանին:

180. Այս մարդկանցերին հաջորդում են ասուսները. սրանք և մարդկանցերը բնակվում են Տրիտոնիս լճի շուրջ. նրանց միջև սահմանը Տրիտոն գետն է: Մարդկանցերը երկար են թողնում գլխի ետևի մազերը, իսկ ասուսները՝ գլխի առջևի: Աթենասի ամենամյա տոնակատարության ժամանակ նրանց կույսերը երկու խմբի բաժանվելով, կռվում են իրար դեմ՝ քարերով ու մանգաղներով: Նրանք ասում են, թե այդպիսով կատարում են իրենց հայրենի սովորույթը՝ ի պատիվ տեղաբնիկ աստվածության, որին մենք անվանում ենք Աթենաս: (Կռվում ստացած) վնասվածքներից մեռնող կույսերին նրանք անվանում են կեղծ կույսեր: Նախքան կռվի վերջանալը, բոլորը միասին այսպես են անում: Առավել քաջություն ցուցաբերած կույսին զարդարում են կորնթական սաղավարտով և հելլենական զենք ու զրահով և, ռազմակառքի վրա նստեցնելով, պտտեցնում են լճի շուրջը: Թե ինչպե՞ս էին նրանք զարդարում ազգիկներին ենում, նախքան այնտեղ հելլենական գաղութների հաստատումը, ես չեմ կարող ասել. բայց ինձ թվում է՝ թե զարդարում էին եգիպտական զենքերով: Քանզի, իմ կարծիքով, վահանն ու սաղավարտը հելլեններս վերցրել ենք եգիպտացիներից: Իսկ Աթենասին նրանք համարում են Պոսեյդոնի և Տրիտոնիս լճի դուստր, որը ինչ-որ վեճ ունենալով իր հոր հետ, իրեն նանձնում է Զևսին, որը և նրան դարձնում է իր դուստրը: Այսպես են նրանք

պատմում: Նրանք կանանց հետ խառնվում են համատեղ, առանց ամուսնության, անասնաբարո: Եթե կինը ծնում է առողջ երեխա, ապա երեք ամիս անց տղամարդիկ հավաքվում են և նա, ով առավել նման է այդ երեխային, համարվում է նրա հայրը:

181. Անա սրանք, որոնց մասին ես պատմեցի, Լիբիայի առափնյա վայրերն են: Սրանցից այն կողմ, երկրի ներքնամասում գազանաշատ Լիբիան է. իսկ գազանաշատ այս երկրից այն կողմ տարածվում է ավազե բլրաշար, որը ձգվում է Եգիպտոսի Թեբեից մինչև Հերակլյան Սյուները: Այդ բլրաշարում, իրարից գրեթե տաս օրվա ճանապարհի հեռավորությամբ, պատահում են աղի խոշոր բեկորների բլուրներ: Այդ բլուրներից յուրաքանչյուրի գագաթին, աղի զանգվածի միջից, ցայտում է սառն ու քաղցրահամ ջուր[120]: Այս աղաբլրի շուրջը, անապատի ուղղությամբ, գազանաշատ երկրից այն կողմ, ապրում են լիբիական ամենահեռավոր ցեղերը: Նախ, Թեբեից տաս օրվա ճանապարհի հեռավորությամբ ամմոնացիներն են, թեբեական Զևսի տաճարով: Քանզի, ինչպես արդեն ասել եմ[121], Թեբեում գտնվող Զևսի արձանը նույնպես խոյի դեմքով է: Ամմոնացիներն ունեն ջրի մեկ այլ աղբյուր ևս. այդ ջուրը առավոտյան գաղջ է լինում, շուկայի մարդաշատ դառնալու ժամին՝ առավել սառն, իսկ կեսօրին՝ շատ սառն: Այդ ժամանակ էլ նրանք ոռոգում են իրենց պարտեզները: Օրվա թեքվելուն զուգընթաց սառնությունը մեղմանում է, իսկ արևամուտին ջուրը (դարձյալ) գաղջանում է: Մինչև գիշերվա կեսը ջուրը հետզհետե տաքանում է և այդ ժամանակ խլխլալով եռում է: Գիշերվա կեսից հետո, մինչև առավոտ, ջուրը (աստիճանաբար) սառչում է: Այդ աղբյուրը կրում է Արևի աղբյուր անունը:

182. Ամմոնացիներից հետո ավազե բլրաշարի երկարությամբ ևս տաս օրվա ճանապարհի հեռավորության վրա դարձյալ կա աղաբլուր, ինչպես ամմոնացիների մոտ, և ջուր, որի շուրջը դարձյալ բնակվում են մարդիկ: Այդ վայրի անունն է Աուգիլիա: Նասամոնները այստեղ են գալիս՝ արմավ քաղելու համար:

183. Աուգիլիայից ևս տաս օրվա ճանապարհի հեռավորությամբ կա մեկ այլ աղբյուր և ջուր. կան նաև շատ մրգաբեր արմավենիներ, ինչպես և նման մյուս վայրերում: Այնտեղ բնակվող մարդիկ կոչվում են գարամանտներ: Այս ցեղը հույժ մեծաքիվ է: Նրանք աղի վրա փռում են հող և այդպես ցանում: Այստեղով դեպի լոտոսակերները անցնում է ամենակարճ ճանապարհը՝ երեսուն օրվա ուղևորության երկարությամբ: Սրանց մոտ են լինում այն եզները, որոնք արածում են հետընթաց: Նրանք հետընթաց են հետևյալ պատճառով: Նրանց եղջյուրները ծռված են դեպի առաջ և նրանք արածում են ետ-ետ գնալով, քանի որ (արածելիս) չեն կարող առաջ շարժվել. քանզի եղջյուրները խրվում են գետնի մեջ: Մնացած ամեն ինչում նրանք ոչնչով

չեն տարբերվում մյուս եգիպտացիներից, միայն թե նրանց կաշին ավելի նատ է և շոշափելիս՝ կոշտ: Այս գարամանտները իրենց քառածի կառքերով որսում են քարայրաբնակ եթովպացիներին, քանի որ քարայրաբնակ եթովպացիներն ամենաարագոտն մարդիկն են բոլոր նրանցից, որոնց մասին մենք երբևիցե լսել ենք: Քարայրաբնակները սնվում են օձերով, մողեսներով և նման սողուններով: Նրանց լեզուն նման չէ ոչ մեկ այլ լեզվի. նրանք ծվծվում են չղջիկների նման:

184. Գարամանտներից ևս տաս օրվա ճանապարհի հեռավորությամբ կա մեկ ուրիշ աղաբլուր և ջուր. դրա շուրջը նույնպես ապրում են մարդիկ, որոնց անվանում են ատարանտներ: Սրանք միակն են ինձ հայտնի բոլոր մարդկանց մեջ, որ անանուն են: Նրանց, ընդհանրապես, կոչում են ատարանտներ, բայց առանձին մարդիկ իրենց անունները չունեն: Նրանք անիծում են բարձրացող արևը և ամենաբեսակ վատ հայհոյանք ուղղում նրան այն պատճառով, որ արևի տապը կիզում է մարդկանց և նրանց երկիրը: Այնուհետև, դարձյալ տաս օրվա ճանապարհի հեռավորությամբ, կա ևս մի աղաբլուր և ջուր. դրա շուրջը նույնպես բնակվում են մարդիկ: Այս աղաբլուրին հարում է մի լեռ, որի անունն է Ատլաս: Այս լեռը նեղ է և լրիվ շրջանաձև: Ինչպես պատմում են, լեռն այնքան բարձր է, որ նրա գագաթները չեն երևում. քանզի երբեք, ո՛չ ամռանը, ո՛չ ձմռանը, ամպերը չեն լքում գագաթները: Տեղաբնիկներն այն համարում են երկնքի սյունը. այդ լեռան անունից էլ ստացել են իրենց անունը. քանզի իրենք կոչվում են ատլանտներ: Պատմում են, թե նրանք ոչ մի կենդանի չեն ուտում և երազներ չեն տեսնում:

185. Այս ավազե բլրաշղթայում մինչև ատլանտները բնակվող բոլոր ցեղերի անունները կարող եմ թվարկել. իսկ նրանցից այն կողմ բնակվողները՝ ոչ: Հայտնի է, որ այս ավազե բլրաշղթան ձգվում է մինչև Հերակլյան Սյուները, նույնիսկ դրանցից այն կողմ: Այնտեղ յուրաքանչյուր տաս օրվա ճանապարհի հեռավորությամբ կա աղահանք և բնակվող մարդիկ: Նրանց բոլորի տները կառուցված են աղե գուղձերից: Լիբիայի այս մասերն անձրևազուրկ են. իսկ եթե անձրևներ, ապա այդ տների պատերը, որոնք աղից են, չէին դիմանա: Այստեղից ստացվող աղը լինում է և՛ սպիտակ, և՛ ծիրանագույն: Բլրաշարից այն կողմ, դեպի հարավ, լիբիական միջնաշխարհը անապատային, ջրազուրկ, գազանազուրկ, անանձրև և անտառազուրկ երկիր է, որտեղ բոլորովին խոնավություն չկա:

186. Այսպիսով, Եգիպտոսից մինչև Տրիտոնիս լիճը բնակվում են վաշկատուն լիբիացիներ, որոնք մսակեր են և կաթնախում, բայց կովի միս չեն ուտում նույն այն պատճառով, ինչ և եգիպտացիները. նրանք խոզեր չեն պահում: Նույնիսկ կյուրենացի կանայք հանցանք են համարում կովի միս

ուտելը, եգիպտական Իսիսի երկյուղի պատճառով: Իսիսի պատվին նրանք հաստատել են պահք և տոներ: Իսկ բարկացի կանայք կովի միս չուտելուց բացի, չեն ուտում նաև խոզի միս:

187. Այս երկրում բանն այսպես է: Իսկ Տրիտոնիս լճից դեպի արևմուտք բնակվող լիբիացիները վաշկատուն չեն: Նրանց սովորությունները տարբեր են և նրանք երեխաների հետ վարվում են ոչ այնպես, ինչպես վաշկատունները: Քանզի վաշկատուն լիբիացիները, չեմ կարող հաստատապես ասել, թե բոլորը, մեծ մասամբ այսպես են անում: Երբ իրենց երեխաները դառնում են չորս տարեկան, ոչխարի անկվա բրգով այրում են նրանց գլխի գագաթի երակները. ոմանք այրում են նույնիսկ քունքերի երակները, որպեսզի գլխից հոսող լորձը հետագայում երբեք չանհանգստացնի ամբողջ կյանքի ընթացքում: Այդ պատճառով էլ, ինչպես իրենք են պնդում, բացառիկ առողջություն ունեն: Հիրավի, լիբիացիները, ինձ հայտնի բոլոր մարդկանցից ամենաառողջներն են, թեև չեմ կարող ասել, արդյո՞ք այդ պատճառով, բայց ամենաառողջներն են: Այրման ժամանակ եթե երեխան չդադարեցնում է ուռնեցնում, ապա նրանք դրա դեմ գտել են բուժիչ միջոց. երեխային ցողում են նոխազի մեզով և չդադարեցնից փրկում: Ես պատմում եմ այն, ինչ պատմում են իրենք՝ լիբիացիները:

188. Վաշկատունները զոհաբերության այսպիսի սովորություններ ունեն: Նախ զոհի ականջից կտրում են մի կտոր և, որպես երախայրիք, այն նետում տնից վերև, իսկ այնուհետև ոլորում զոհի վիզը: Նրանք զոհեր մատուցում են միայն արևին և լուսնին: Այս աստվածներին զոհեր մատուցում են բոլոր լիբիացիները, իսկ Տրիտոնիս լճի մոտ բնակվողները՝ նաև Աթենասին, հետո և Տրիտոնին ու Պոսեյդոնին:

189. Աթենասի պատկերներում նկատվող զգեստավորումը և այծենի[122] հելլենները փոխառել են լիբիացի կանանցից. քանզի միայն լիբիացի կանայք են կրում կաշվե զգեստներ, իսկ այծենուց կախված ժապավենները ոչ թե օձեր են, այլ կաշեփոկեր. մնացած ամեն ինչում զգեստը նույն ձևի է: Նույնիսկ անվանումը հավաստում է, որ Պալլասի պատկերներում նկատվող զգեստը եկել է Լիբիայից. քանզի լիբիացի կանայք իրենց զգեստի վրայից կրում են մագաղաթածած այծենիներ, ծոպերիզներով զարդարված և տորոնով ներկված. հելլեններն այս «այգես» բառից անվանեցին իրենց էգիսը[123]: Իմ կարծիքով, կրոնական ծիսակատարությունների ժամանակ ձայնարկելն առաջին անգամ այստեղ է ծագել. քանզի լիբիացի կանայք շատ վարժ են ձայնարկելու մեջ: Քառածի կառք քշելը ևս հելլենները սովորել են լիբիացիներից:

190. Վաշկատունները, բացի նասամոններից, մեռյալներին թաղում են այնպես, ինչպես հելլենները: Նասամոնները (մեռյալներին) թաղում են նրս-

ված վինակում: Նրանք հետևում են, որ հոգին ավանդելիս (մահամերձը) լինի նստած և ոչ թե մեջքի վրա պառկած: Նրանք բնակարաններ պատրաստում են ասփոդելոսի[124] ցողուններից և եղեգնյա խսիրներից. դրանք կարելի է տեղափոխել: Անա այսպիսիք են նրանց սովորույթները:

191. Տրիտոն գետից դեպի արևմուտք, առուներին հարող երկրում բնակվում են երկրագործ լիբիացիներ, որոնք արդեն բնակարաններ ունեն: Նրանց կոչում են մաքսյուներ: Նրանք իրենց գլխի աջ կողմի մազերը պահում են և ձախ կողմը խուզում. իսկ մարմինը ներկում են սուրով: Պատմում են, թե սրանք Տրոյայից գաղթած մարդկանց սերունդներն են: Այս երկիրը, ինչպես նաև դեպի արևմուտք ընկած Լիբիայի մնացած մասը, շատ ավելի գազանաշատ է և անտառախիտ, քան վաչկատունների երկիրը: Քանզի Լիբիայի արևելյան մասը, որը բնակեցնում են վաչկատուն ցեղերը, ցածրավայր է և ավազուտ, մինչև Տրիտոն գետը. իսկ այդ գետից դեպի արևմուտք ընկած երկիրը, որը զբաղեցնում են հողագործները, հույժ լեռնային է, անտառախիտ և գազանաշատ[125]: Այստեղ լինում են հսկայական օձեր, առյուծներ, փղեր, արջեր, եղջյուրավոր էշեր[126], շնագլուխ և անգլուխ մարդիկ, որոնց աչքերը կրծքի վրա են,—այսպես են պատմում լիբիացիները,— վայրի մարդիկ և վայրի կանայք[127] և բազում այլ ոչ մտացածին գազաններ:

192. Վաչկատունների երկրում այսպիսիք չկան, բայց կան ուրիշ գազաններ՝ ներմակաճեռույք անտիլոպներ[128], վիթեր, բուբալիսներ[129] և էշեր, բայց ոչ եղջյուրավոր, այլ շմոռ կոչվածներ,—քանզի նրանք իսկապես շուր չեն խմում,— օրիքսներ[130], որոնց եղջյուրներից պատրաստում են փյունիկյան քնարի կորացրած կոթը. այս կենդանին լինում է եզի մեծության. (այնտեղ կան նաև) աղվեսներ[131], բորենիներ, խոզուկներ, վայրի ոչխարներ, դիկտյուսներ[132], շնագայլեր, հովազներ, բոբյուսներ[133], երեք կանգուն երկարությամբ ցամաքային կոկորդիլոսներ, որոնք շատ նման են մողեսների, ջայլամներ և միեղջյուրանի փոքր օձեր: Այնտեղ, անա, այս բոլոր գազաններից բացի, կան նաև այլ վայրերում հանդիպող բոլոր գազանները. բացի եղջերուից և վայրի վարազից: Եղջերուներ ու վայրի վարազներ Լիբիայում բոլորովին չկան: Այնտեղ կա մկների երեք տարատեսակ. մի տեսակը կոչվում է երկոտանի, մյուսը՝ զեգերիներ, սա լիբիերեն բառ է, որը հունարեն թարգմանվում է՝ բլուր, իսկ երրորդ տեսակը՝ ոզնի[134]: Սիլֆիոնի թփուտներում կան նաև աֆիսներ, որոնք շատ նման են Տարտեսսոսում եղածներին: Ինչքան որ ես իմացա մանրամասն պատմածներից, այսպիսի վայրի գազաններ կան լիբիացի վաչկատունների երկրում:

193. Լիբիացի մաքսյուներին հաջորդում են զաուեկները, որոնց կանայք պատերազմի ժամանակ վարում են ռազմակառքերը:

194. Սրանց հաջորդում են գյուզանները, որոնց երկրում մեղուները

պատրաստում են առատ մեղր: Բայց պատմում են, թե արհեստագործ մարդիկ ավելի շատ են պատրաստում: Նրանք բոլորը ներկվում են սուրով և կապիկ են ուտում: Այնտեղ լեռներում մեծ թվով կապիկներ կան:

195. Նրանց երկրի դիմաց, ինչպես պատմում են կարթագենացիները, գտնվում է Կյուրավնիս կոչված կղզին, որի երկարությունը հարյուր քառասարեզ է, բայց լայնքը նեղ է: Մայր ցամաքից այն մատչելի չէ: Այնտեղ ձիթենին և որթատունկը լիառատ են: Պատմում են, թե կղզու վրա կա լիճ, ուր տեղաբնիկ աղջիկները կույրով քսուքած ճավքի փետուրներով (լճի) տիղմից ոսկու ավազ են դուրս հանում: Չգիտեմ, թե այդ ինչքան ճիշտ է. բայց ես գրում եմ այն, ինչ պատմել են: Ի դեպ, ամեն ինչ հնարավոր է. քանզի ինքս տեսել եմ Զակյունթոսում, թե ինչպես լճի ջրից կուպր էին հանում: Զակյունթոսում կան շատ լճեր. դրանցից ամենախոշորն ունի յոթանասուն ոտնաչափ երկարություն և լայնք, իսկ խորությունը երկու գրկաչափ է: Այդ լճի ջրերի մեջ իջեցնում են ծող, ծայրին մրտենու ճյուղ կապած, և հետո մրտենու ծայրին դուրս են բերում կուպր, որը ասֆալտի հոտ ունի, իսկ մնացած ամեն ինչում Պիերիայի կուպրից ավելի լավ է: Այնուհետև կուպրը լցնում են լճի մոտ փորած փոսի մեջ: Երբ արդեն հավաքված է լինում բավական կուպր, փոսից այն լցնում են սափորների մեջ: Լինն ընկած իրերը գետնի տակից անցնելով, հայտնվում են ծովում: Իսկ ծովը լճից շուրջ ասպարեզ հեռու է: Այսպիսով, լիբիական այդ կղզու մասին եղած պատմությունը ես թվում է, թե ճիշտ է:

196. Կարթագենացիները պատմում են նաև հետևյալը: Լիբիայում կա մարդկանցով բնակեցված մի վայր, որը գտնվում է Հերակլյան Սյուներից դուրս: Ամեն անգամ այնտեղ ժամանելիս, կարթագենացիներն իրենց ապրանքը բեռնաթափում են և շարում ծովափին: Այնուհետև նորից բարձրանում են նավերը և ծխով ազդանշան անում: Տեղաբնիկները, տեսնելով ծուխը, գալիս են ծովափ և ապրանքի փոխարեն ոսկի դնելով, հեռանում են բեռներից: Այնժամ կարթագենացիները նորից դուրս են գալիս նավերից և սուզում: Եթե նրանք որոշեն, թե ոսկին համարժեք է ապրանքին, վերցնում են ոսկին և մեկնում: Իսկ եթե համարժեք չեն համարում, ապա նորից բարձրանում են նավերը և սպասում: Տեղաբնիկները դարձյալ մոտենում են և ավելացնում ոսկին, մինչև որ (կարթագենացիները) համաձայնվում են: Ընդորում, նրանք իրար չեն խաբում: Քանզի կարթագենացիները ոսկուն ձեռք չեն տալիս, քանի դեռ այն չեն համարում ապրանքին համարժեք. իսկ տեղաբնիկները ապրանքին ձեռք չեն տալիս, քանի դեռ (կարթագենացիները) չեն ընդունել ոսկին:

197. Սրանք են լիբիական այն ցեղերը, որոնց անունները մենք գիտենք: Սրանցից շատերը ո՛չ այդ ժամանակ, ո՛չ էլ հիմա չեն հանձնել պարսից

արքայի իշխանությունը: Այս երկրի մասին ես ուզում եմ ասել նաև, որ այնտեղ, ինչքան մեզ հայտնի է, բնակվում են չորս ցեղեր, ոչ ավելի: Դրանցից երկուսը տեղաբնիկ են, երկուսը՝ ոչ: Լիբիացիները և եթովպացիները տեղաբնիկ են. առաջինները ապրում են հյուսիսում. վերջինները՝ հարավում. մինչդեռ փյունիկեցիները և հելլենները եկվոր են:

198. Իմ կարծիքով, Լիբիան բարեբեր չէ, որպեսզի համեմատվի Ասիայի կամ Եվրոպայի հետ, բացի Կինյուպս վայրից, որը կրում է նույն անունը, ինչ և գետը: Այս վայրն իր բերքատվությամբ կարող է համեմատվել լավագույն վայրերի հետ. այն բոլորովին նման չէ Լիբիայի մնացած մասերին: Այդ վայրը սևահող է և ոռոգվում է աղբյուրներով. ո՛չ երաշտից է տուժում, ո՛չ էլ ավերվում է առատ անձրևներից. քանզի Լիբիայի այս մասում անձրևվում է: Ցորենի բերքն այստեղ նույնպիսին է, ինչ բաբելոնյան երկրում: Բարեբեր է նաև եվհեսպերիտների զբաղեցրած երկիրը: Քանզի լավ բերքի դեպքում այն տալիս է հարյուրապատիկ, իսկ Կինյուպս վայրը՝ երեք հարյուրապատիկ:

199. Կյուրենական երկրում, որը Լիբիայի ամենաբարձրադիր մասն է և որտեղ բնակվում են վաչկատուն ցեղեր, զարմանալիորեն տարեկան երեք անգամ բերք են հավաքում: Քանզի նախ բերքը հասունանում է ծովափնյա վայրերում: Այստեղ այն քաղելուց հետո, բերքը հասունանում է երկրի միջնաշխարհում, ծովափից այն կողմ, որը կոչվում է «բլուրներ»: Այստեղ ևս բերքը հավաքելուց հետո, հասունանում է երկրի բարձրադիր և հեռավորագույն վայրերի բերքը: Այսպիսով, երբ առաջին բերքն արդեն խմված ու կերված է լինում, վերջինը նոր հասունանում է: Հետևաբար, կյուրենացիների երկրում ամբողջ ութ ամիս բերքառատ է: Բայց այս մասին այսքանը բավական է:

200. Արդ, Փերեսիմեին օգնելու համար Արյուանդեսի՝ Եգիպտոսից ուղարկած պարսկական զորքերը, հասնելով Բարկա, պաշարում են քաղաքը և պահանջում հանձնել Արկեսիլաոսի սպանության մեղավորներին: Բայց քանի որ (քաղաքի) ամբողջ բնակչությունը մեղսակից էր, ուստի և առաջարկը մերժվում է: Այնժամ պարսիկները պաշարում են քաղաքն ամբողջ ինն ամիս և ընդգետնյա ականներ են փորում պարիսպների տակ և ուժգին հարձակումներ գործում: Սակայն այդ ականները ինչ-որ պղնձագործ հայտնաբերում է պղնձապատ վահանի միջոցով՝ հետևյալ կերպ: Վահանը ձեռքին շրջելով պարիսպների երկարությամբ՝ ներսի կողմից, նա վահանը դնում է գետնին: Եթե գետնի տակ ականափորված չէր, ապա վահանն այնտեղ դնելիս զրինգ չէր տալիս. իսկ եթե ականափորված էր, ապա վահանը զրնգում էր: Այնժամ բարկացիները հանդիպակաց ականներ փորելով, սպանում են

ականափորող պարսիկներին: Ականափորումը այսպիսով բացահայտվում է. իսկ հարձակումները բարկացիները հետ են մղում:

201. Այսպես երկար շարունակվում էր և երկու կողմից էլ շատերն էին ընկնում, իսկ պարսիկների կողմից՝ ավելի շատ: Այնժամ պարսից հետևակի զորապետ Ամասիսը համոզվելով, որ հնարավոր չէ ուժով նվաճել բարկացիներին, այլ միայն խորամանկությամբ, այսպիսի հնար է մտածում: Գիշերվա ընթացքում լայն խրամատ փորելով, այն ծածկում է բարակ տախտակներով, որոնց վրա փռում է հողի բարակ շերտ և հավասարեցնում գետնին: Առավոտյան Ամասիսը առաջարկում է բարկացիներին բանակցություններ սկսել: Բարկացիները հոժարությամբ են ընդունում, քանի որ երանք հաշտություն էին ցանկանում: Եվ, մոտավորապես այսպիսի մի համաձայնություն են գոյացնում: Պարսիկները, հողարկված խրամատի վրա կանգնած, երդվում են, որ քանի այս հողը այսպես հաստատ է, իրենց երդումը ես հաստատ կլինի: Բարկացիները համաձայնվում են արքային հարկ վճարել, իսկ պարսիկները խոստանում են այսուհետև բարկացիներին չվնասել: Այս երդումից հետո բարկացիները, հավատալով պայմաններին, ոչ միայն իրենք են դուրս գալիս քաղաքից, այլև բաց անելով բոլոր դարպասները, թույլատրում են, որ պարսիկներից ամեն ոք, ով ցանկանա, մտնի պարսպից ներս: Իսկ պարսիկները քանդում են խրամատը ծածկող գաղտնի տախտամածը և խուժում պարսպից ներս: Իրենց պատրաստած այդ տախտամածը նրանք քանդում են, որպեսզի խախտած չլինեն խոստումը, թե՝ իրենք կմնան հաստատ իրենց երդման մեջ, քանի այդ հողը ևս հաստատ կմնա: Իսկ (հողածածկ տախտամածը) քանդելուց հետո, երդումը կորցնում էր իր ուժը:

202. Փերեսիմեն, երբ պարսիկները իր ձեռքն են հանձնում սպանության գլխավոր մեղսակիցներին, նրանց բոլորին ցցահան է անում պարսպի շուրջը, իսկ նրանց կանանց ստիպելով, դրանք նույնպես գամում պատին: Մնացյալ բարկացիներին նա որպես գերի հանձնում է պարսիկներին, բացի Բատտոսի տոնմակիցներից և (Արկեսիլաոսի) սպանության մեջ մեղավոր չեղողներից: Փերեսիմեն սրանց էլ հանձնում է քաղաքը:

203. Այսպիսով, պարսիկները սարկացնում են մնացած բարկացիներին և նա դառնում: Երբ պարսիկները հասել էին կյուրենացիների քաղաքը, կյուրենացիները, անսալով ինչ-որ գուշակի պատգամին, թույլ են տալիս նրանց զորքին անցնելու քաղաքի միջով: Մինչ զորքն անցում էր քաղաքի միջով, Բագրեսը՝ նավատորմի հրամանատարը, հրամայում է գրավել քաղաքը, բայց հետևակի զորապետ Ամասիսը թույլ չի տալիս, ասելով, թե ինքն ուղարկված է եղել միայն հելլենական Բարկա քաղաքի դեմ: Այնուհետև, քաղաքից դուրս գալուց և Լյուկյան Զևսի բլուրում բանակելուց հետո, նրանք զգում են, որ չէին գրավել Կյուրենեն: Ուստի և նրանք փորձում են երկրորդ անգամ մտնել

քաղաք, բայց կյուրենացիները թույլ չեն տալիս: Այնժամ, թեև ոչ ոք չէր հարձակվում նրանց վրա, պարսիկներին սարսափն է պատում և նրանք վազելով փախչում են մինչև վաթսուն ասպարեզ հեռու և բանակում այնտեղ: Այնժամ նրանց համբարն է գալիս Արյուանդեսի ուղարկած բանբերը, հրամայելով նրանց (Եգիպտոս) վերադառնալ: Պարսիկները կյուրենացիներից հանապարհի պարեն են խնդրում և, այն ստանալուց հետո, մեկնում Եգիպտոս: Հանապարհին լիբիացիները հետապնդում են նրանց և բեռների և զգեստի պատճառով էտ մնացողներին ու դանդաղաշարժներին սպանում, մինչև, ի վերջո, զորքը հասնում է Եգիպտոս:

204. Պարսկական այս զորքը կարողացել էր առաջ շարժվել մինչև Եվհեսպերիտների երկիրը[137]: Գերեվարված բարկացիներին նրանք Եգիպտոսից դուրս հշելով, տանում են արքայի մոտ. իսկ Դարեհ արքան բնակության համար նրանց հատկացնում է Բակտրիայի գյուղերից մեկը. այդ գյուղը նրանք անվանում են Բարկա, որը իմ ժամանակ ևս բնակավայր էր Բակտրիայում:

205. Բայց Փերեսիմեի կյանքի վախճանը ևս բարեբախտ չի եղել: Բարկացիներին պատժելուց և Եգիպտոս վերադառնալուց հետո նա մի չար անց մահացել է դաժան մահով: Դեռևս կենդանության օրոք նրա մարմինն սկսել է փտել վխտացող որդերից: Հիրավի, դաժան վրեժը մարդկանց ատելի է դարձնում աստվածներին: Այդպիսի դաժան վրեժ է լուծում Բատտոսի դուստր Փերեսիմեն Բարկա քաղաքի բնակիչներից:

ԳԻՐՔ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՏԵՐՊՍԻՔՈՐԱ

1. Եվրոպայում Մեգաբազոսի գլխավորությամբ Դարեհի բռնած պարսկական զորքերը Հելլեսպոնտոսի քաղաքներից առաջինը նվաճեցին Պերինթոսը[1], որի բնակիչները չէին կամեցել հպատակվել Դարեհին: Պերինթոսը դեռ նախկինում ծանր պարտություն էր կրել պայոններից[2]: Այս պայոնները, որոնք բնակվում էին Ստրյումոնի[3] վրա, գուշակից պատգամ են ստանում՝ արշավել Պերինթոսի վրա: (Գուշակը հայտնել էր, որ) եթե իրենց դիմաց բանակած պերինթոսցիներն անունով բարձրաձայն կոչեն իրենց, ապա պայոնները պետք է հարձակվեն. իսկ եթե այդպես չկոչեն, չպետք է հարձակվեն: Պայոններն այդպես էլ անում են: Պերինթոսցիները բանակել էին իրենց քաղաքից դուրս և այնտեղ, նրանց մարտահրավերով, տեղի է ունենում երեք մենամարտ՝ ռազմիկը ռազմիկի, ձին ձիու և շունը շան դեմ: Հաղթելով երկու մենամարտում, պերինթոսցիները ուրախությունից պեան[4] են երգում, իսկ պայոնները պեանի խոսքերն ընկալում են իբրև կատարումն իրենց տրված պատգամի, և ասում իրար. «Գուշակի պատգամը կատարվեց. այժմ մենք պետք է գործի անցնենք»: Այսպիսով, մինչ պերինթոսցիները կոչում էին պեան, պայոնները հարձակվում են, մեծ հաղթանակ տանում և բշնամուց քշերին (կենդանի) բռնում:

2. Անցյալում, անա, պերինթոսցիներն այսպիսի աղետի էին ենթարկվել պայոններից. այժմ էլ, թեև Պերինթոսի քաջարի ռազմիկներն արիաբար կռվել էին հանուն ազատության, այնուհանդերձ պարսիկները և Մեգաբազոսը նրանց հաղթում են իրենց բազմությամբ: Պերինթոսը նվաճելուց հետո, Մեգաբազոսը իր զորքը տանում է Թրակիայի միջով և այնտեղի բոլոր քաղաքներն ու ցեղերին հնազանդեցնում արքային: Այդպիսին է եղել Դարեհի հրամանը՝ նվաճել Թրակիան:

3. Ամենաբազմամարդ ազգը, հնդիկներից հետո, թրակացիներն են[5]:

եթե թրակական ազգն ունենար մեկ տիրակալ և լիներ միաբան, ապա, իմ կարծիքով, կդառնար անպարտելի և նզորագույնը բոլոր ազգերի մեջ: Բայց քանի որ նրանք երբեք միաբան չեն եղել, ուստի և մնացել են թույլ: Յուրաքանչյուր վայրում թրակական ցեղերն ունեն տարբեր անուններ, բայց բոլորի բարքերն էլ նմանման են, բացի գետեսներից, տրաուսներից, ինչպես նաև կրեստոնայներից վերև բնակվողներից:

4. Ես արդեն պատմել եմ, թե ի՞նչ են անում գետեսները, որոնք իրենց համարում են անմահ[6]: Տրաուսների կենցաղը, ընդհանրապես, նույնն է, ինչ և մյուս թրակացիներինը, միայն ծննդի և մահվան ժամանակ նրանց սովորույթները տարբեր են: Երեխա ծնվելիս, հարազատները նստում են նրա շուրջը և ողբում, թե ինչքան տառապանքներ նա պետք է կրի կյանքում, ընդ որում, թվարկելով մարդկային բոլոր չարիքները. մինչդեռ մահացածին նրանք թաղում են զվարճությամբ և ուրախանալով, որ նա փրկվեց բոլոր չարիքներից և այժմ գտնվում է երանության մեջ:

5. Իսկ կրեստոնայներից վերև բնակվողներն այսպիսի սովորույթ ունեն: Նրանցից յուրաքանչյուրն ունենում է մեծ թվով կանայք: Տղամարդկանցից որևէ մեկը մահանալիս, նրա կանայք, հարազատների մասնակցությամբ, բուռն վիճում են, թե կանանցից ո՞ր մեկն է առավել սիրելի եղել իր ամուսնուն: Նա, ով համարվի ամենասիրելին, նրան էլ տղամարդիկ և կանայք գովաբանում են, և նրա մերձավորագույն հարազատը նրան մորթում է ամուսնու գերեզմանի վրա և թաղում նրա հետ: Իսկ մնացյալ կանայք մեծապես վշտանում են այդ ընտրությունից, իրենց համարելով անարգված:

6. Մյուս թրակացիների մոտ բարքերն այսպես են. իրենց երեխաներին նրանք ծախում են երկրից դուրս: Նրանք չեն պահում իրենց աղջիկներին, այլ թույլ են տալիս խառնվելու ցանկացած տղամարդու հետ. մինչդեռ իրենց կանանց նրանք պահում են խստությամբ, իսկ իրենց կանանց նրանք գնում են ծնողներից՝ մեծ հարստություն տալով: Մարմինը դաջելը նրանք համարում են ազնվական լինելու նշան, իսկ չդաջելը՝ ազնվական չլինելու: Անբան մարդը նրանց համար համարվում է լավագույնը, իսկ երկրագործը՝ ամենանարժանը: Նրանք առավել պատվարժան են համարում պատերազմով և կողոպուտով ապրելը:

7. Սրանք են նրանց ամենահայտնի սովորությունները: Աստվածներից նրանք պաշտում են միայն Արեսին, Դիոնիսոսին և Արտեմիսին[7]: Մինչդեռ նրանց թագավորները, ի տարբերություն մյուս քաղաքացիների, աստվածներից առավելապես պաշտում են Հերմեսին և երդվում միայն նրա անունով: Պատմում են, թե իրենք սերել են Հերմեսից:

8. Ունեցար թրակացիների թաղման սովորույթները այսպիսի են. դիակը երբ օր թաղելով, ամեն տեսակ զուներ մորթելուց հետո, նախ ողբում են և

հետո հյուրասիրություն կազմակերպում: Այնուհետև դիակը կիզում են կամ մեկ այլ ձևով թաղում և, հողաթումբ բարձրացնելուց հետո, բազմազան մրցումներ կազմակերպում: Ամենամեծ մրցանակները տրամադրվում են մենամարտին, ըստ մրցման կարևորության: Այսպիսի են թրակացիների թաղման սովորությունները:

9. Թե ինչպիսի՞ մարդիկ են ապրում այս երկրից հյուսիս, ոչ ոք չի կարող հաստատապես պատմել: Ինձ թվում է, թե Իստրոսից այն կողմ ընկած երկիրը անբնակ է և անսահման: Ի դեպ, ես կարող եմ տեղեկություններ ունենալ Իստրոսից այն կողմ բնակվող միայն մեկ ազգության մասին. նրանք կոչվում են սիգյուններ և կրում են մեդական հագուստ: Նրանց ձիերը, ինչպես պատմում են, ամբողջ մարմնով մեկ թավամազ են, իսկ մազերի երկարությունը հինգ մատնաչափ է[8]: Այդ ձիերը փոքրամարմին են, կճատ և անկարող իրենց վրա մարդ տանելու, բայց կառքին լծելիս՝ արագընթաց են, ուստի և բնակիչները կառքերով են տեղաշարժվում: Սիգյունների երկիրը տարածվում է գրեթե մինչև Ադրիատիկի ափին բնակվող ենետների երկիրը: Նրանք իրենց համարում են մեդական վերաբնակիչներ: Իսկ թե ինչպե՞ս են նրանք Մեդիայից վերաբնակվել այնտեղ, ես չեմ կարող ասել. բայց այդքան երկար ժամանակի ընթացքում ամեն ինչ կարող էր պատահել: Ի դեպ, լիգյուները, որոնք բնակվում են Մասսալիայից վերև, սիգյուններ անվանում են շարշիներին, իսկ կիպրացիները՝ նիզակները:

10. Թրակացիները պատմում են, թե Իստրոսից այն կողմ զբաղեցնում են մեղուները[9], որոնց պատճառով էլ հնարավոր չէ դեպի այն կողմն առաջանալ: Բայց ինձ այդպիսի զրույցները թվում են անիրական. քանզի այդ կենդանիները, ըստ երևույթին, չեն դիմանում ցրտին. իմ կարծիքով, այդ հյուսիսային երկրները անբնակ են ցրտերի պատճառով: Այսպիսի զրույցներ են պատմում այդ երկրի մասին, որի առափնյա հատվածները Մեզաբազոսը հպատակեցրեց պարսիկներին:

11. Դարեհը, անցնելով Հելլեսպոնտոսը, շտապում է Սարդես[10]: Այստեղ նա հիշում է Հիստիայոս Միլետացու կատարած բարեգործությունն իր հանդեպ և Կոես Միտիլենացու տված խորհուրդը: Նրանց հավիրելով Սարդես, Դարեհը նրանց առաջարկում է ընտրություն կատարել և խնդրել որևէ բան: Հիստիայոսը, որն արդեն Միլետի տիրանն էր, ոչ մեկ ուրիշ իշխանություն չի ուզում, այլ միայն խնդրում է իրեն տալ էդոնների երկրում գտնվող Մյուրկինա վայրը[11]՝ այնտեղ քաղաք հիմնելու նպատակով: Հիստիայոսը այդ ընտրեց. իսկ Կոեսը, որը տիրան չէր, այլ հասարակ քաղաքացի, խնդրում է դառնալ Միտիլենեի տիրանը:

12. Նրանց երկուսի պահանջներն էլ կատարվում են և նրանք մեկնում են իրենց ընտրած վայրերը: Բայց պատահեց այնպես, որ Դարեհը, մի դեպ-

ֆի պատճառով, որին ականատես էր եղել ինքը, Մեգաբազոսին հրամայում է նվաճել պայոնիերին և նրանց Եվրոպայից դուրս քշել Ասիա: Երկու պայոն՝ Պիգրեսը և Մանդրոնը, որոնք ցանկանում էին դառնալ տիրան՝ պայոնների մոտ, երբ Դարեհը անցել էր Ասիա, գալիս են Սարդես, իրենց հետ բերելով նաև իրենց փարթամ ու գեղատես հոջը: Սպասելով մինչև այն պահը, երբ Դարեհը լյուդիացիների քաղաքի առաջ նստած (լսում էր քաղաքացիներին), նրանք հետևյալն են անում: Իրենց հոջը հագցնում են լավագույն զգեստները և, գլխին ջրաման դրած, ուղարկում ջրի. աղջիկն իր հետևից քարշ էր տալիս մի ձի՝ երասանը թևին կապած, և միաժամանակ վուշ մանում: Կինն անցնելիս, Դարեհը նկատում է նրան, քանի որ կնոջ արարքն անսովոր էր և՛ պարսիկների, և՛ լյուդիացիների, և՛ Ասիայի որևէ մեկ այլ ազգության համար: Նրան նկատելով, արքան իր նիզակակիրներից ոմանց ուղարկում է նրա հետևից, պատվիրելով հետևել, թե կինն ի՞նչ է անելու այդ ձին: Սրանք էլ հետևում են աղջկան: Աղջիկը, հասնելով գետափ, ջրում է ձին, այնուհետև ջրամանը լցնում ջրով ու նորից նույն հանապարհով վերադառնում՝ գլխին (ջրամանով) ջուրը, քարշ տալով (երասանը) թևին կապած ձին և միաժամանակ պտտեցնելով իլիկը:

13. Դարեհը, զարմացած իր լրտեսների պատմածից և իր իսկ աչքով տեսածից, հրամայում է այդ աղջկան բերել իր առաջ: Երբ նա բերվեց, ներկայացան նաև նրա եղբայրները, որոնք այնտեղ մոտիկից հետևում էին կատարվածին: Դարեհի հարցին, թե՝ որտեղացի է նա, երիտասարդները պատասխանում են, թե՝ պայոններ են, իսկ աղջիկը իրենց քույրն է: Արքան դարձյալ հարցնում է, թե՝ ի՞նչ մարդիկ են պայոնները, որտե՞ղ են ապրում և իրենք ինչո՞ւ են եկել Սարդես: Նրանք պատասխանում են, թե՝ եկել են իրենց անձը վստահելու արքայի ձեռքը, թե՝ Պայոնիան քաղաքներ ունի և գտնվում է Սարյուսոն գետի վրա, իսկ Սարյուսոնը գտնվում է Հելլեսպոնտոսից ոչ հեռու, և թե՝ իրենք Տրոյայից գաղթած տեկրոսյաններ են: Երբ նրանք այս ամենը պատմում էին, արքան հարցնում է նրանց, թե՝ արդյո՞ք այնտեղի բոլոր կանայք են այսպես աշխատասեր: Նրանք այդ հարցին ևս հոժարությամբ պատասխանում են դրական, քանի որ այդ ամենը կատարել էին (հատուկ) այդ նպատակով:

14. Այնժամ Դարեհը թուղթ է գրում Մեգաբազոսին, որին թողել էր Թրակիայում իբրև զորապետ, հրամայելով նրան քշել պայոնիերին իրենց երկրից և նրանց բերել իր մոտ, կանանց ու երեխաների հետ միասին: Իսկույն մի ձիավոր, այդ հաղորդումը վերցնելով, շտապում է Հելլեսպոնտոս և, անցնելով մյուս ափը, զրույցը հանձնում Մեգաբազոսին: Մեգաբազոսը, կարդալով այն, իր հետ վերցնում է թրակացի ուղեցույցների, և արշավում Պայոնիա:

15. Պայոնները, լսելով, որ պարսիկները արշավում են իրենց վրա, զորք են գումարում և շարժվում դեպի ծովափ. քանզի կարծում էին, թե պարսիկները կփորձեն այնտեղից հարձակվել: Պայոնները, ահա, պատրաստ էին դիմադրելու Մեգաբազոսի արշավող զորքին: Իսկ պարսիկները, իմանալով, որ պայոնները գումարվել են և պանպանում են իրենց երկրի մուտքը ծովափից, շեղում են իրենց հանապարհը և, ուղեցույցների օգնությամբ, շարժվում վերին հանապարհով և, պայոններին շրջանցելով, հարձակվում նրանց քաղաքների վրա, որոնք մնացել էին առանց զորքի. ուստի և դրանք անպաշտպան գտնելով, հեշտությամբ նվաճում են: Պայոնները, լսելով, որ իրենց քաղաքները նվաճվել են, իսկույն ցրվում են և յուրաքանչյուրը մեկնում է իր տուն և հանձնվում պարսիկներին: Այսպիսով, ահա, պայոններից սիրիոպայոնները, պայոպլենները և մինչև Պրասիաս[12] լիճն ընկած երկրում ապրողները, իրենց երկրից դուրս քշվելով, բերվում են Ասիա:

16. Իսկ Պանգայոս լեռան[13] մերձակայքում բնակվողներն՝ դոբերները, ագրաններն, օդոմանտոսները[14] և Պրասիաս լճի վրա բնակվող ցեղերը երբեք չնվաճվեցին Մեգաբազոսի կողմից, թեև սա փորձել էր նվաճել նաև լճի վրա բնակվողներին: Դրանց կենցաղն այսպիսին է: Լճի մեջտեղ, բարձր հենացքերի վրա, կանգնեցված է տախտակած, ուր ցամաքից կարելի է գնալ մեկ նեղ կամրջի վրայով: Իսկ տախտակածների տակ կանգնեցված հենացքերը հնում կանգնեցրել են բոլոր համայնականներն ընդհանուր ուժերով: Հետագայում սահմանվել է հետևյալ կարգը: Ամուսնության պատրաստվող ամեն մի այր պարտավոր է Օրբելոս[15] կոչված լեռից երեք հենացից բերել և կանգնեցնել, իսկ նրանցից յուրաքանչյուրն ունի շատ կանայք: Այնտեղ նրանք ապրում են հետևյալ կերպ: Տախտակածի վրա նրանցից յուրաքանչյուրն ունի իր խրճիթը, որտեղ ապրում է. խրճիթը տախտակածի վրա ունի իջանցք, որը տանում է ցած՝ լիճ: Փոքր երեխաների ոտքերը կապում են շվանով, որպեսզի լիճը չընկնեն: Իրենց ձիերին ու բեռնատար անասուններին նրանք կերակրում են ձկներով: Զուկն այնքան առատ է (լճում), որ եթե իջանցքի դուռը բացվի և պարանով դատարկ կողով իջեցվի լիճը, ապա քիչ անց կողովը կարելի է բարձրացնել ձկներով լցված: Լճի ձկները երկու տեսակ են, որոնց կոչում են պապրակ և տիլոն:

17. Այսպիսով, պայոններից գերի ընկածները տարվում են Ասիա: Իսկ Մեգաբազոսը, պայոններին նվաճելուց հետո, Մակեդոնիա որպես դեսպան ուղարկում է յոթ պարսիկների, որոնք իրենից հետո ամենահայտնի մարդիկն էին զորաբանակում: Նրանք գնում են Ամյունտասի մոտ, Դարեհ արքայի համար հող և ջուր պահանջելու: Պրասիաս լճից Մակեդոնիա տանող շատ կարճ հանապարհ կա: Նախ լճին հարում է հանքարան, որտեղից հետագայում Ալեքսանդրը[16] ստանում էր օրական մեկ արծաթ տաղանդ եկա-

մուտ: Հանմարանից վերև բարձրանում է Դյուսորոն կոչվող լեռը, որն անցնելուց հետո արդեն Մակեդոնիան է:

18. Անա այս ուղարկված պարսիկները, հասնելով Ամյունտասի մոտ և ներկայանալով նրան, Դարեհ արքայի համար պահանջում են հող և ջուր: Ամյունտասը խոստանում է տալ հող և ջուր, և նրանց հրավիրում կոչունքի: Մեծաշուք ընթրիք պատրաստելուց հետո, նա պարսիկներին ընդունում է սիրալիր: Ընթրիքից հետո պարսիկները, շարունակելով գինարբուքը, ասում են հետևյալը. «Մակեդոնացի բարեկամ. մեզ, պարսիկներիս մոտ կարգն այն է, որ խնջույք տալուց հետո սեղանի մոտ բերենք նաև մեր հարճերին և օրինական կանանց: Այժմ դու ևս, երբ մեզ այսքան սիրալիր ընդունեցիր և շքեղ հյուրասիրեցիր, և միաժամանակ արքային խոստացար տալ հող և ջուր, հետևիր մեր այդ սովորությանը»: Ամյունտասը նրանց պատասխանում է այսպես. «Ով պարսիկներ. մեր կարգն այդպես չէ, այլ տղամարդիկ (խնջույքի) նստում են կանանցից առանձին: Բայց քանի որ դուք մեր տեղերն եք և այդպիսին է ձեր կամքը, ապա այդ ամենը ձեզ կտրամադրվի»: Այս ասելով, Ամյունտասը պատվիրում է հրավիրել կանանց: Կանչված կանայք գալիս ու շարքով նստում են պարսիկների դիմաց: Տեսնելով գեղեցիկ կանանց, պարսիկները ասում են Ամյունտասին, որ նրա արարքը գեղեցիկ չէ. քանզի ավելի լավ էր, որ կանայք ընդհանրապես չգային, քան թե գալուց հետո նստեին ոչ թե իրենց կողքին, այլ իրենց դիմաց, մթագնելու համար իրենց աչքերը: Ամյունտասը ստիպված է լինում հրամայելու կանանց նստել (պարսիկների) կողքին: Երբ կանայք, հնազանդվելով, հազիվ նստել էին, պարսիկները, քանի որ խիստ գինովացել էին, իսկույն սկսում են բռնել նրանց ստինքները, իսկ ոմանք նույնիսկ փորձում են համբուրել նրանց:

19. Այս բոլորը տեսնելով, Ամյունտասը, թեև զայրանում էր, բայց աշխատում էր անխռով մնալ, քանի որ խիստ վախենում էր պարսիկներից: Իսկ Ամյունտասի որդի Ալեքսանդրը, որը նույնպես ներկա էր և տեսնում էր այդ ամենը, լինելով երիտասարդ ու դեռևս շարին անտեղյակ, չկարողանալով այլևս համբերել, խիստ դժգոհությամբ այսպես է դիմում Ամյունտասին. «Հայր. դու հարմարվիր քո տարիքին, գնա հանգստացիր և մի շարունակիր խմելը: Ես կմնամ այստեղ և հյուրերին կտրամադրեմ անհրաժեշտ ամեն ինչ»: Այնժամ Ամյունտասը, կռահելով, որ Ալեքսանդրը ինչ-որ նոր բան է նյութում, ասում է. «Որդի. քո զայրացկոտ խոսքից կռսհում եմ, որ դու ինձ հեռացնելով, ուզում ես ինչ-որ նոր բան նյութել: Իմ կողմից ես խնդրում եմ քեզ, այս մարդկանց հետ խելամիտ վարվիր, որպեսզի մեզ չկործանես: Զսպիր քեզ նրանց արարքը տեսնելիս. իսկ իմ հեռանալու մասին քո խնդրանքը ես կկատարեմ»:

20. Ամյունտասը այսպես պատվիրելով, հեռանում է. այնժամ Ալեքսանդրն այս խոսքերով դիմում է պարսիկներին. «Ով հյուրեր. այս կանայք լիովին մատչելի են ձեզ համար, և դուք, ձեր ցանկությամբ, կարող եք խառնվել նրանցից մի քանիսի, նույնիսկ բոլորի հետ: Այդ մասին որոշեք դուք ինքներդ: Իսկ այժմ, քանի որ արդեն պառկելու ժամն է, իսկ դուք, ինչպես տեսնում եմ, լավ հարբած եք. ուստի, եթե ձեզ համար հաճելի է, թույլ տվեք այս կանանց գնալ լվացվելու. իսկ լվացվելուց հետո նրանց ետ կընդունեք»: Պարսիկները համաձայնվում են նրա ասածին. իսկ Ալեքսանդրը դուրս եկած կանանց ուղարկում է կանանց կացարան: Մինչդեռ ինքը՝ Ալեքսանդրը նույնքան թվով անմորուք այրերի կանացի զգեստ հագցնելով և դաշույններ տալով, բերում է հերս և ասում պարսիկներին հետևյալը. «Ով պարսիկներ. թվում է, թե դուք շքեղ խրախճանք վայելեցիք: Այն ամենը, ինչ մենք ունեինք և ինչ կարող էինք հարել, անա ձեր առջև է: Մենք, առանց խնայելու, ձեզ տրամադրել ենք նաև մեզ համար ամենաթանկը՝ մեր մայրերին ու քույրերին, որպեսզի դուք հաստատ համոզվեք, թե մենք ինչպիսի՞ պատիվներ, որոնց դուք արժանի էիք, մատուցեցինք ձեզ, և որպեսզի հաղորդեք ձեզ ուղարկած արքային, թե՝ Մակեդոնիայի հելլեն կառավարիչը ինչպիսի՞ սիրալիրությամբ ձեզ հյուրընկալեց խնջույքով և անկողնով»: Այս ասելով, Ալեքսանդրը յուրաքանչյուր պարսկի կողքին նստեցնում է կանացի զգեստով մի մակեդոնացի տղամարդու: Եվ երբ պարսիկները փորձում են ձեռք տալ նրանց, նրանք սպանում են պարսիկներին:

21. Անա այսպես կործանվեցին իրենք՝ դեսպանները, ինչպես նաև նրանց ուղեկիցները. քանզի նրանց ուղեկցում էին նրանց կառքերն ու սպասավորները և անհրաժեշտ կահ-կարասին: Այս ամենը նրանց հետ աննետ կորստի մատնվեց: Քիչ անց պարսիկներն սկսում են ջանադիր փնտրել այդ մարդկանց. բայց Ալեքսանդրը կարողանում է խորամանկորեն խափանել այդ: Անհայտացածներին փնտրելու համար ուղարկվածների զորապետ, պարսիկ Բուբարեսին նա տալիս է մեծ գումար և Գյուգայա անունով իր քրոջը, որով և կաշառում է նրան: Այսպիսով, այդ պարսիկների սպանությունը լռության է մատնվում:

22. Այն, որ Պերդիկկասի այս հետնորդները[17] հելլեններ են, հաստատում են ոչ միայն իրենք, այլև ինքս նույնպես համոզված եմ այդ բանում, և իմ հետագա շարադրանքի մեջ կապացուցեմ այդ. բացի այդ, օլիմպիական խաղերի (դատավորներ) հելլենոդիկեսները[18] ևս հաստատել են, որ այդ այդպես է: Քանզի, երբ այս Ալեքսանդրը ցանկացել էր մասնակցել այդ մրցումներին և այդ նպատակով եկել էր (Օլիմպիա), այնժամ մրցակից հելլեները արգելում էին նրան, ասելով, թե՝ այդ մրցումները հելլենների համար են և ոչ թե բարբարոսների: Բայց Ալեքսանդրը ապացուցել է, որ ինքը արգոսցի է, որից հետո որոշվել է, որ նա հելլեն է. ուստի և նա, մասնակ-

ցելով մեկ ասպարեզ վազքի մրցումներին, հավասարվում է առաջինին: Այս ամենն այսպես է կատարվել:

23. Իսկ Մեգաբազոսը, իր հետ բերելով պայոններին, հասնում է Հելլեսպոնտոս, այստեղից էլ անցնելով մյուս ափը, հասնում է Սարդես: Այդ ժամանակ Հիստիայոս Միլետացին արդեն քաղաք էր կառուցում այն վայրում, որը խնդրել և ստացել էր Դարեհից որպես վարձ կամրջանավի պահպանության դիմաց. այդ վայրը գտնվում է Սարյու

լուց հետո պարոսցիները, ժողովրդական հավամ հրավիրելով, քաղաքի ղեկավարությունը հանձնում են նրանց, ում դաշտերը տեսել էին լավ մշակված: Նրանք այդպես են որոշում, քանզի, իրենց ասելով, այդ մարդիկ հաճույքին գործերի մասին ևս կնոգան այնպես, ինչպես իրենց սեփական գործերի: Մյուս միլետացիներին, որոնք խռովություն էին բարձրացրել, կարգադրում են հնազանդվել իրենց նշանակած մարդկանց:

30. Այսպիսով, պարոսցիները Միլետում խաղաղություն են հաստատում: Այժմ նույնպես Հոնիայի չարիքները սկսում են այս երկու քաղաքների պատճառով: Նամսոսի համայնքը քաղաքից վտարել էր մի քանի հարուստ քաղաքացիների, որոնք փախչելով գալիս են Միլետ: Այդ ժամանակ Միլետի ենթակառավարիչը[24] Մելպագորասի որդի Արիստագորասն էր, Լյուսագորասի որդի Հիստիայոսի փեսան ու զարմիկը, այն Հիստիայոսի, որին Դարեհը պահում էր իր մոտ՝ Սուսայում: Քանզի Հիստիայոսը Միլետի տիրանն էր և գտնվում էր Սուսայում այն ժամանակ, երբ եկել էին նամսոսցիները, որոնք անցյալում եղել էին Հիստիայոսի հյուրընկալները[25]: Անա ժամանելով Միլետ, նամսոսցիները խնդրում են Արիստագորասից տրամադրել զորական ինչ որ ուժ, որը օգներ վերադառնալու իրենց երկիրը: Արիստագորասը մտածելով, որ եթե իր օգնությամբ (վտարանդիները) վերադառնան քաղաք, ինքը կիշխի Նամսոսում, և նկատի առնելով Հիստիայոսի հյուրընկալությունը, նրանց դիմում է այսպիսի խոսքերով. «Ես ինքս ի վիճակի չեմ ձեզ տալու այնքան զորք, որը կարողանար հակառակ ձեր քաղաքում իշխող նամսոսցիների կամքին, ձեզ վերադարձնել վտարանդիությունից: Քանզի, ինչպես լսել եմ, նամսոսցիները ուժ հազար վահանակիր ունեն և բազմաթիվ ռազմանավեր: Բայց ես ամեն չանք կգործադրեմ: Ես մտածում եմ այսպես. Արտափրենեսը իմ բարեկամն է. այդ Արտափրենեսը Հյուստասպեսի որդին է, Դարեհ արքայի եղբայրը: Նա տիրում է Ասիայի առափնյա բոլոր ժողովուրդներին և ունի մեծ զորք և շատ նավեր: Ես կարծում եմ, որ այս մարդը կանի այն ամենը, ինչ մենք խնդրենք»: Այս լսելով, նամսոսցիները հանձնարարում են Արիստագորասին գործը կարգավորել, ինչքան կարող է ավելի լավ և պատվիրում են խոստանալ նրան բնծաներ և զորքի ամբողջ ծախսը: Նրանք մեծ հույս ունեին, որ եթե պարսիկները հայտնվեին Նամսոսում, ապա նամսոսցիները, ինչպես և մյուս կղզեբնակները, կկատարեին այն ամենը, ինչ նրանք կհրամայեին. քանզի Կյուկլադյան այդ կղզիներից և ոչ մեկը դեռևս չէր հպատակվել Դարեհին:

31. Ժամանելով Սարդես, Արիստագորասը պատմում է Արտափրենեսին, որ Նամսոսը, թեև ոչ խոշոր կղզի է, բայց գեղեցիկ է ու բարեբեր և գտնվում է Հոնիային մոտիկ. այնտեղ շատ հարստություն կա և մեծ թվով ստրուկներ: «Ուստի և դու, ասում է նա, արշավիր այդ երկրի վրա և այնտեղ

վերադարձրու վտարանդիներին: Եվ եթե դու այդպես անես, ապա ես (քեզ համար) պատրաստել եմ մեծ հարստություն և, բացի այդ, կնոգամ արշավանքի բոլոր ծախսերը. քանզի արդարացի է, որ այդ ծախսերը տրամադրենք մենք, արշավանքի հանողներս: Այնուհետև, դու կարող ես արքայի համար նվաճել ոչ միայն Նամսոսը, այլև նրանից կախում ունեցող Պարոս, Անդրոս և Կյուկլադյան կոչվող մյուս կղզիները: Այնտեղից դու կարող ես հեշտությամբ հարձակվել Եվբեայի վրա, որը խոշոր և հարուստ կղզի է, ոչ պակաս Կիպրոսից, և առանց դժվարության գրավել այն: Հարյուր նավ բավական է այդ բոլորը նվաճելու համար»: Իսկ Արտափրենեսը նրան պատասխանում է այսպես. «Դու բարի գործերի համար եկել ես արքայի տուն, և այդ բոլորը ճիշտ խորհուրդներ են, բացի նավերի թվից: Հարյուրի փոխարեն քառանը դու պետք է ունենաս երկու հարյուր նավ: Բայց ինքը արքան ևս այս ամենին պետք է համամիտ լինի»:

32. Այս լսելով, Արիստագորասը մեծ ուրախությամբ վերադառնում է Միլետ: Իսկ Արտափրենեսը բանբեր է ուղարկում Սուսա՝ Արիստագորասի առաջարկը հաղորդելու Դարեհին: Դարեհը ևս համաձայնվում է. ուստի Արտափրենեսը պատրաստում է երկու հարյուր տրիերա և մեծաքանակ զորք պարսիկներից ու այլ դաշնակիցներից. զորագլուխ կարգում է պարսիկ Մեգաբատեսին՝ Աքեմենյան տոհմից, որը իր և Դարեհի զարմիկն էր: Հետագայում, եթե ճիշտ է այդ պատմությունը, այս Մեգաբատեսի աղջկա հետ ամուսնացել է լակեդեմոնացի Պավսանիասը, Կլեոմբրոտոսի որդին, քանի որ սա խիստ ցանկանում էր դառնալ Հելլադայի տիրանը: Արդ, Մեգաբատեսին զորապետ կարգելով, Արտափրենեսը զորքն ուղարկում է Արիստագորասի մոտ:

33. Մեգաբատեսը, իր հետ վերցնելով Արիստագորասին, հոնիական նավատորմը և նամսոսցի վտարանդիներին[26], նավարկում է իբր դեպի Հելլեսպոնտոս: Հասնելով Քիոս, նա խարիսխ է նետում Կավկասներ վայրում[27], որպեսզի այստեղից, հյուսիսային քամու օգնությամբ, անցնի Նամսոս: Բայց Նամսոսին վիճակված չէր կործանվել այդ արշավանքից, քանի որ այսպիսի մի պատահար օգնեց նրանց: Մի անգամ, նավերի պահակակետերը ստուգելիս, Մեգաբատեսը մյունդական նավերից մեկի վրա ոչ մի պահակ չի նկատում: Խիստ զայրացած, նա հրամայում է իր թիկնապահներին գտնել այդ նավի նավապետին, որի անունն էր Սկյուլակս, կապկպել նրան՝ նավի թիակնցքի մեջ մտցնել այնպես, որ գլուխը լինի դրսում, իսկ մարմինը ներսում: Երբ արդեն Սկյուլակսը կապված էր, ինչ որ մեկը հաղորդում է Արիստագորասին, թե նրա մյունդացի հյուրընկալին Մեգաբատեսը կապկպել ու դաժանորեն պատժել է: Արիստագորասը, գալով պարսկի մոտ, խնդրում է ներել (Սկյուլակսին), բայց ոչ մի հաջողություն չի ունենում. ուստի և ինքը

անձամբ գալով, ազատ է արձակում նրան: Այս լսելով, Մեգաբատեսը խիստ վրդովվում է և իր զայրույթը թափում Արիստագորասի վրա: Սա պատասխանում է. «Դու այս գործերին ինչո՞ւ ես խառնվում: Չէ՞ որ Արտափրենեսը քեզ ուղարկել է ինձ ճնազանդվելու և նավելու այնտեղ, ուր ես հրամայեմ: Ինչո՞ւ ես ամեն գործի խառնվում»: Այսպես է ասում Արիստագորասը: Իսկ Մեգաբատեսն այս ամենից բարկացած, գիշեր ժամանակ նավով մարդկանց ուղարկում է Նաքսոս՝ հայտնելու նաքսոսցիներին նրանց դեմ ձեռնարկված արշավանքի մասին:

34. Նաքսոսցիները բոլորովին չէին կասկածել, թե այդ նավատորմը արշավում է իրենց դեմ: Բայց այժմ, արդեն իմանալով այդ մասին, նրանք անհապաղ դաշտերում եղած ամեն ինչը կուտակում են պարսպից ներս և պաշարման համար պահեստում մթերք և ջուր, ինչպես նաև ամրացնում են պարիսպները: Այսպիսով, նրանք պատրաստվում են առաջիկա պատերազմին: Երբ թշնամին նավերով Քիոսից անցել էր Նաքսոս, այնտեղ արդեն ամեն ինչ պատրաստ էր պաշտպանվելու համար, և Նաքսոսը չորս ամիս պաշարվում է: Երբ արդեն պարսիկները ծախսել էին իրենց բերած դրամները, ինքը՝ Արիստագորասը ևս ծախսել էր շատ միջոցներ, իսկ պաշարումը միշտ ավելի ու ավելի միջոցներ էր խլում, (պարսիկներն) այնտեղ նաքսոսցի վտարանդիների համար ամրություն կառուցելով, իրենք մեծ կորուստներ տալուց հետո վերադառնում են մայր ցամաք:

35. Այսպիսով, Արիստագորասը չի կարողանում կատարել Արտափրենեսին տված իր խոստումը: Բացի այն, որ նրան մեծապես հնչում էին զորքի համար անհրաժեշտ ծախսերը, նա մտահոգված էր նաև զորքի վատ վիճակից, ինչպես նաև այն բանից, որ Մեգաբատեսի հետ ունեցած իր վեճի համար ինքը կարող էր զրկվել Միլետի իշխանությունից: Անհա այս երկյուղների պատճառով նա մտածում է ապստամբել: Այս ամենին համընկնում է նաև այն, որ Սուսայից ժամանում է Հիստիայոսի ուղարկած բանբերը, որի գլխին նշաններ էին արված, և հայտնում, որ Արիստագորասը որոշել է ապըստամբել արքայի դեմ: Քանզի Հիստիայոսը ցանկացել էր Արիստագորասին հայտնել ապստամբելու իր մտադրության մասին. բայց քանի որ նապարհները խիստ հսկողության տակ էին, նա ոչ մի կերպ հնարավորություն չուներ ապահով այդ մասին հայտնելու: Ուստի և նա, ածիլելով իր հավատարմագույն ստրուկի գլուխը, նրա գլխին դաջում է նշաններ և սպասում, մինչև մազերը աճեն: Երբ արդեն մազերն աճել էին, նա անհապաղ նրան ուղարկում է Միլետ, մի եզակի պատվերով. այն է՝ ասել Արիստագորասին, որ ածիլի մազերը և նայի գլխին: Գլխին արած նշանները, ինչպես արդեն ասել եմ, պատվիրում էին ապստամբել: Հիստիայոսը այդպես էր գործում, քանի որ իր բռնի բերվելը Սուսա նամարում էր մեծ դժբախտություն. մինչդեռ ապստամբություն ծագելու դեպքում նա մեծ հույսեր ուներ, որ իրեն կուղարկեն ծովափ. իսկ եթե Միլետը չապստամբեր, ինքը երբեքիցե նորից այնտեղ գնալու ոչ մի հույս չուներ:

36. Անհա այսպիսի մտադրությամբ Հիստիայոսը առաքում է բանբերին. նիշա այդ ժամանակ էլ պատահում է այնպես, որ Արիստագորասը ևս որոշել էր ապստամբել: Արդ, Արիստագորասը խորհրդակցում է իր համախոհների հետ, հայտնում նրանց իր մտադրությունը, ինչպես նաև Հիստիայոսից իր ստացած առաջարկը: Բոլոր ներկաները համակարծիք են լինում և խորհուրդ տալիս ապստամբելու. միայն լոգոգրաֆ Հեկատեոսը[28], թվարկելով Դարեհին ենթակա բոլոր երկրները և նրա ունեցած ռազմական ուժերը, սկզբում խորհուրդ է տալիս չպատերազմել պարսից արքայի դեմ[29]: Բայց, չկարողանալով համոզել նրանց, նա խորհուրդ է տալիս անպայման գերիշխանություն հաստատել ծովում: Նա իր խոսքում նշում է, որ այժմ ինքը ոչ մեկ ուրիշ միջոց չգիտի դրան հասնելու համար, բացի մեկից, այն է՝ ձեռք բերել Բրանքիդասի տաճարում գտնվող Կրեսոսի կատարած նվիրաբերությունները[30]: Քանզի այնժամ ինքը վստահ է, որ կարող են տիրապետություն հաստատել ծովում և այդ հարստությունը կանցնի իրենց ձեռքը, իսկ թշնամին չի կարողանա կողոպտել այն. այդ հարստությունը, ինչպես ասել եմ իմ պատմության առաջին մասում, մեծ էր: Բայց այս խորհուրդը ևս չի ընդունվում. այսուհանդերձ, որոշվեց ապստամբել: Նրանցից մեկը պետք է նավով մեկներ Միլետ, Նաքսոսից վերադարձած զորքի համբարը, և փորձեր գերի վերցնել նավերի վրա գտնվող զորավարներին:

37. Այս հանձնարարությամբ ուղարկված Յատրագորասին հաջողվում է խորամանկությամբ գերի վերցնել մյուպասացի Իբանոլիոսի որդի Կոեսին, որին Դարեհը պարգևել էր Միտիլենեն, և կյումեցի Հերակլիդեսի որդի Արիստագորասին և շատ ուրիշների: Այսպիսով, Արիստագորասը բացահայտ ապստամբում է, ամեն գործողություն ուղղելով Դարեհի դեմ: Նախ, նա ձևականորեն վերացնում է տիրանիան Միլետում և հայտարարում իրավահավասարություն, որպեսզի միլետացիները կամովին հարեին ապստամբության. այնուհետև՝ նա նույնն է անում նաև մնացած ամբողջ Հոնիայում: Տիրաններից ոմանց նա արտաքսեց, մյուսներին, որոնց նա վերցրել էր իր հետ Նաքսոսի դեմ արշաված նավերից, քաղաքների համակրանքը շահելու համար, հանձնեց այն քաղաքներին, որտեղից սերում էր նրանցից յուրաքանչյուրը:

38. Այստեղ միտիլենացիները Կոեսին իրենց ձեռքը գցելով, անհապաղ դուրս բերեցին քաղաքից և քարկոծման ենթարկեցին, բայց կյումեցիները իրենց տիրանին բաց թողեցին. այդպես վարվեցին նաև քաղաքներից շատերը: Արիստագորաս Միլետացին տիրաններին հեռացնելուց հետո պատ-

վիրում է յուրամանչյուր քաղաքին իր համար զորապետ կարգել, որից հետո ինքը արիությամբ մեկնում է Լակեդեմոն. քանզի նա իր համար փնտրում էր մի հզոր դաշնակից:

39. Սպարտայում այդ ժամանակ Լեոնի որդի Անամսանդրիդեսն արդեն թագավոր չէր, այլ վախճանվել էր: Թագավոր էր դարձել Անամսանդրիդեսի որդի Կլեոմենեսը, ոչ թե արիության, այլ իր ծագման պատճառով: Անամսանդրիդեսը ամուսնացել էր իր քրոջ դստեր հետ, որին թեև սիրում էր, բայց նրանցից որդիներ չէր ունեցել: Քանի որ այդ այդպես էր, էֆորոսները[31] նրան հրավիրելով իրենց մոտ, ասում են. «Եթե դու ինքդ չես մտածում քո սերնդի մասին, ապա մենք չենք կարող թույլ տալ, որ Եվրիսթենեսի տունը չնչվի: Ուստի, քանի որ քո կինը չի ծննդաբերում, ապա լքիր նրան և ամուսնացիր մեկ ուրիշի հետ: Այսպես անելով դու կուրախացնես սպարտացիներին»: Անամսանդրիդեսը նրանց պատասխանում է՝ ասելով, թե ինքը ո՛չ մեկը կանի, ո՛չ էլ մյուսը, և թե նրանք իրեն վատ խորհուրդ են տալիս, համոզելով լքել անմեղ կնոջ և բերել մեկ ուրիշի: Ինքը երբեք չի համաձայնվի այդ բանին:

40. Այնժամ էֆորոսները և ծերերը խորհուրդ գումարելով, Անամսանդրիդեսին առաջարկում են հետևյալը. «Մենք տեսնում ենք, որ դու հավատարիմ ես քո կնոջ. բայց դու կատարիր այն, ինչ ասում ենք և մի հակառակիր մեզ, որպեսզի սպարտացիները քո դեմ ուրիշ միջոցներ չմտածեն: Մենք չենք պահանջում, որ դու լքես քո այս կնոջ: Դու կարող ես, ինչպես այժմ, նրան տրամադրել ամեն ինչ, բայց քեզ համար վերցրու նաև երկրորդ կին, որը քեզ երեխաներ ծնի»: Անամսանդրիդեսը համաձայնվում է և այնուհետև ունենում երկու կին և երկու տնտեսություն. իսկ այդ լիովին հակառակ էր սպարտական օրենքներին:

41. Ոչ շատ ժամանակ անց, երկրորդ կինը ծնում է սեռ այս Կլեոմենեսին, ժառանգ շնորհելով Սպարտայի գահին: Ու պատահեց, որ մինչ այդ չբեր թվացող կինը ևս այդ նույն ժամանակ հղիանում է: Երբ նա արդեն երեխա էր սպասում, երկրորդ կնոջ ազգականները, այդ մասին իմանալով, աղմուկ են բարձրացնում, ասելով, թե նա սուտ պարծենում է և մտադիր է զաղտնաբար ուրիշի երեխան մատուցել: Քանի որ նրանք խիստ զայրացած էին, ապա երբ հասնում է նրա (ծննդաբերելու) ժամանակը, էֆորոսները, չհավատալով նրան, նստում են ծննդկանի մոտ և հետևում նրան: Իսկ նա ծնում է Դորիևսին, որից անմիջապես հետո հղիանում է Լեոնիդասով և, որանից անմիջապես հետո, Կլեոմբրոտոսով. ոմանք նույնիսկ ասում են, թե Կլեոմբրոտոսը և Լեոնիդասը եղել են երկվորյակներ: Մինչդեռ Կլեոմենեսին ծնողը, թագավորի երկրորդ կինը, որը Դեմարմենոսի որդի Պրինետադեսի դուստրն էր, այլևս ոչ մի երեխա չի ծնել:

42. Արդ, Կլեոմենեսը, ինչպես պատմում են, խելագարակաս էր և ապուշ: Իսկ Դորիևսը իր բոլոր տարեկիցների մեջ առաջինն էր և լիովին հասունացած, որ իր արիության համար ինքը կստանա թագավորական իշխանությունը: Այսպես էր նա մտածում. ուստի և երբ Անամսանդրիդեսի մեռնելուց հետո լակեդեմոնացիները, հետևելով իրենց օրենքին, իբրև ավագի թագավոր են կարգում Կլեոմենեսին, Դորիևսը խիստ զայրանալով, չի հանդուրժում ենթարկվել Կլեոմենեսի թագավորական իշխանությանը. նա սպարտացիներից խնդրում է իրեն տրամադրել մարդկանց, որոնց և վերցնելով իր հետ, մեկնում է երկրից, առանց հարցնելու դելփյան պատգամախոսին, թե ո՞ր երկրում զաղութ հաստատի, և առանց կատարելու ընդունված սովորություններից ոչ մեկը: Զայրացած, նա նավերով մեկնում է Լիբիա: Նրա ուղեցույցներն էին թեբացի մարդիկ: Հասնելով Լիբիա, նա բնակություն է հաստատում Կինյուպս[32] գետի մոտ, Լիբիայի լավագույն վայրում: Սակայն երրորդ տարում նրան այստեղից քշում են մակերը, լիբիացիները ու կարթագենացիները, որից հետո նա վերադառնում է Պելոպոնեսոս:

43. Այստեղ ոմն Անտիքարես՝ էլեոն քաղաքից[33], Լայիոսի պատգամներից մեկի համաձայն, խորհուրդ է տալիս նրան քաղաք կառուցել Սիկիլիայում, ասելով, թե Էրյուքս երկիրն ամբողջապես պատկանում է Հերակլյաններին, քանի որ այն նվաճած է եղել Հերակլեսը: Այս լսելով, Դորիևսը մեկնում է Դելփի, պատգամախոսին հարցնելու, թե ինքը կտիրանա՞ արդյոք այն երկրին, ուր իրեն ուղարկում են. Պյութիան պատգամում է, թե՝ կտիրանա: Այնժամ Դորիևսը իր հետ վերցնելով այն մարդկանց, որոնց տարել էր Լիբիա, մեկնում է Իտալիա:

44. Նույն այդ ժամանակ[34], ինչպես պատմում են Սյուբարիսի[35] բնակիչները, իրենք և իրենց թագավոր Տելյուսը պատրաստվում էին արշավելու Կրոտոն[36] քաղաքի վրա: Կրոտոնցիները, անաբեկված, խնդրում են Դորեհի օգնությունը և ստանում այն: Դորեհը նրանց հետ արշավում է Սյուբարիսի վրա և նվաճում քաղաքը: Սյուբարիսի մարդիկ այսպես են պատմում Դորեհի և նրա ուղեկիցների գործերի մասին. մինչդեռ կրոտոնցիները պատմում են, թե ոչ մի օտարական չի մասնակցել Սյուբարիսի բնակիչների հետ իրենց ունեցած պատերազմին, բացի Ցամիդների տոհմից էլեացի գուշակ Կալլիասից, որի մասնակցելը եղել է այսպես: Կալլիասը փախել է Սյուբարիսի տիրան Տելյուսից և եկել իրենց մոտ, քանի որ Կրոտոնի դեմ պատերազմի առթիվ զոհեր մատուցելիս, բարենպաստ նշաններ չէր նկատել:

45. Սրանք այսպես են պատմում: Բայց երկու կողմերն էլ իրենց ասածների մասին հետևյալ ապացույցներն են բերում: Սյուբարիսցիները՝ Կրաթիս գետի ցամաքած հունի մոտ գտնվող սրբավայրը և տաճարը, որը, ինչպես իրենք պնդում են, կառուցել է Դորիևսը, Կրաթիսյան կոչված Աթենասին,

որովհետև դիցուհին օգնել էր իրեն գրավելու քաղաքը: Բացի այդ, նրանք օրպես ապացույց նշում են իր իսկ Դորիևսի մանը, թե իբր Դորիևսը կործանվել է պատգամախոսի պատվերին հակառակ գործած լինելու պատճառով: Քանզի եթե Դորիևսը չշեղվեր այն նպատակից, որի համար ուղարկվել էր (պատգամատան հրամանով), ապա նա չէր կործանվի իր զորախմբի հետ, այլ կկարողանար նվաճել էրյուկինե երկիրն ու տիրել այնտեղ: Դրան հակառակ, կրոտոնցիները մատնացույց են անում կրոտոնյան երկրում էլեացի Կալլիասին որպես պարգև տրված լավագույն և ընդարձակ հողերը, որտեղ իմ ժամանակ ևս տիրում էին նրա հետնորդները. մինչդեռ Դորիևսին և նրա հետնորդներին ոչ մի երկիր չեն պարգևել: Եթե Դորիևսն իսկապես իրենց հետ մասնակցած լիներ սյուրաքուսցիների դեմ պատերազմին, ապա իրենք նրան բազմապատիկ երկիր կպարգևեին, քան (պարգևել են) Կալլիասին: Կողմերից յուրաքանչյուրը, անա, այսպիսի ապացույցներ է բերում, և ամեն մեկը կարող է ընդունել այն, ինչին առավել հակված է:

46. Դորիևսի հետ հավարկել էին սպարտացի ուրիշ արտագաղթողներ ևս՝ Թեսսալոսը, Պարայբատեսը, Կելեեսը և Եվրյուլեոնը: Իրենց ամբողջ կազմով Սիկիլիա հասնելուց հետո, սակայն, նրանք պարտվում և սպանվում են փյունիկեցիների և էգեստայների դեմ պատերազմում: Գաղութը հիմնողներից միայն Եվրյուլեոնը փրկվում է կորստից: Սա, հավաքելով զորքի մնացորդները, գրավում է սելինուսցիների գաղութ Մինոան և օգնում սելինուսցիներին՝ ազատվելու իրենց միապետ Պյութագորասից: Նրան հեռացնելուց հետո նա կարճ ժամանակով դառնում է Սելինուս քաղաքի տիրանը, բայց սելինուսցիները ապստամբում են և սպանում նրան Ագորեոս Զևսի զոհասեղանի մոտ, որտեղ նա ապաստանել էր:

47. Դորիևսին հետևել էր և նրա հետ էլ սպանվել նաև Բուտակիդեսի որդի կրոտոնցի Փիլիպպոսը, որը վտարվել էր Կրոտոնից, քանի որ նշանվել էր Սյուբարիսի (տիրան) Տելյուսի դստեր հետ: Այդ ամուսնությունից հույսը կորցնելով, նավով նա մեկնում է Կյուրենե: Այստեղից իր սեփական արիությամբ և իր անձնական միջոցներով վարձած մարդկանցով նա հեռանում է և միանում Դորիևսին: Նա օլիմպիական (խաղերի) հաղթող էր և իր ժամանակ ամենագեղեցիկը հելլենների մեջ: Իր գեղեցկության պատճառով նա էգեստայների մոտ արժանացել էր այնպիսի պատիվների, ինչպես ոչ ոք: Նրա գերեզմանի վրա կառուցել են տաճար, որտեղ նրա պատվին մատուցում են զոհեր:

48. Անա այսպիսի վախճան ունեցավ Դորիևսը: Եթե նա հանդուրժեր Կլեոմենեսի թագավորական իշխանությունը և մնար Սպարտայում, ապա ինքը կարող էր դառնալ լակեդեմոնացիների թագավոր: Քանզի Կլեոմենեսը

երկար չիշխեց, այլ մահացավ, առանց արու զավակ ունենալու: Նա ունեցավ մի աղջիկ՝ անունը Գորգո:

49. Արդ, Արիստագորասը, Միլետի տիրանը, ժամանում է Սպարտա, երբ դեռ իշխանությունը Կլեոմենեսի ձեռքին էր: Կլեոմենեսի մոտ գրույցի գնալիս Արիստագորասը, ինչպես պատմում են լակեդեմոնացիները, իր հետ ունեցել է պղնձե մի տախտակ, որի վրա փորագրված էր երկրի ուրվագիծը, ամբողջ ծովն ու բոլոր գետերը: Անա ներկայանալով Կլեոմենեսին, Արիստագորասը այսպես է ասում նրան. «Ով Կլեոմենես. մի զարմանար, որ ես շտապել եմ գալ այստեղ. քանզի մեր դրությունն այդպիսին է: Այն, որ հոնիացիների ազատ որդիներս այսօր ստրուկներ ենք դարձել, մեծագույն ամոթ ու վիշտ է մեզ համար. բայց առավել ևս ձեզ, մնացյալ հելլեններիդ համար, քանի որ դուք եք գլխավորում Հելլադան: Այժմ աղերսում ենք հանուն հելլեն աստվածների, փրկեցեք ձեր արյունակից հոնիացիներին ստրկությունից: Դուք այդ բանը կարող եք հեշտությամբ կատարել: Քանզի բարբարոսները քաջություն չունեն, մինչդեռ դուք հասել եք մարտական մեծագույն արիության: Նրանք կռվում են աղեղով ու կարճ նիզակով, մարտի են գնում կարճ անդրավարտիք[37] հագած, գլուխներին սրածայր գլխարկ[38] դրած. ուստի և նրանց հեշտ է հաղթել: Ընդսմին, այդ աշխարհամասում բնակվող ժողովուրդներն այնքան շատ հարստություն ունեն, ինչքան չունեն մյուս բոլորը միասին. նախ՝ ոսկի, ապա արծաթ, պղինձ, բազմերանգ զգեստներ, լծկան անասուններ և ստրուկներ: Բավական է, որ դուք կամենաք, և այդ ամենը կլինեն ձերը: Այդ ժողովուրդները բնակվում են իրար հարևանությամբ այնպես, ինչպես ես ցույց կտամ: Այստեղ հոնիացիների հարևաններն են լյուդիացիները, որոնց երկիրը բարեբեր է և խիստ արծաթաշատ»: Այս ասելիս նա ցույց էր տալիս իր բերած (պղնձե) տախտակի վրա փորագրված երկրի ուրվագիծը: «Լյուդիացիներից հետո դեպի արևելք,—շարունակում է Արիստագորասը իր պատմելը,—բնակվում են փյուգները, որոնք ինձ հայտնի բոլոր մարդկանցից առավել հարուստ են իրենց հոտերով և բարեբեր հողերով: Նրանց հաջորդում են կապադովկիացիները, որոնց մենք անվանում ենք սյուրիացիներ: Սրանց սահմանակից են կիլիկեցիները, որոնք տարածվում են մինչև այն ծովը, որտեղ գտնվում է Կիպրոս կղզին: Սրանք արքային տալիս են տարեկան հինգ հարյուր տաղանդ հարկ: Այստեղ կիլիկեցիներին հաջորդում են արմենները, որոնք նույնպես առատ հոտեր[39] ունեն. արմենների հետո, անա այստեղ, բնակվում են մատիենները: Հաջորդը, անա, Կիսպիա երկիրն է, որտեղ Քոասպես գետի վրա գտնվում է անա Սուսա (քաղաքը), որտեղ ապրում է մեծ արքան և որտեղ գտնվում են նրա գանձերը: Եթե նվաճեք այդ քաղաքը, ապա դուք հարստությամբ կարող եք համարձակորեն մրցել Զևսի հետ: Եվ ինչո՞ւ դուք պետք է հանուն փոքր և

անպետք հողերի կովեք ձեզ հավասարազոր մեսսենացիների, կամ արկադիացիների ու արգոսցիների հետ, որոնք ո՛չ ոսկի ունեն և ո՛չ արծաթ, հանուն որի դուք պատրաստ եք կռվելու մինչև մահ: Իսկ քանի որ դուք հնարավորություն ունեք հեշտությամբ տիրելու ամբողջ Ասիային, ուրիշ ի՞նչ եք ցանկանում»: Այսպես ասաց Արիստագորասը. իսկ Կլեոմենեսը նրան պատասխանեց այսպես. «Ով միլետացի բարեկամ: Ես քեզ կպատասխանեմ երրորդ օրը»:

50. Այդ ժամանակ զրույցն այսքանով վերջացավ: Բայց երբ պատասխանի համար նշանակված օրն արդեն հասել էր և նրանք նորից հանդիպեցին, Կլեոմենեսը հարցրեց Արիստագորասին, թե Հոնիական ծովից մինչև արքայի (նստավայրը) քանի՞ օրվա հանապարհ կլինի: Արիստագորասը, որն ընդհանրապես խելք էր և կարող էր Կլեոմենեսին հեշտությամբ խաբել, այստեղ սխալ թույլ տվեց: Քանզի, եթե նա ցանկանում էր սպարտացիներին հանել Ասիայի դեմ, պետք չէր ճշմարտությունն ասեր. բայց նա ասում է ճշմարտությունը, հայտնելով, որ մինչև այնտեղ երեք ամսվա հանապարհ է[40]: Այնժամ Կլեոմենեսը, թույլ չտալով Արիստագորասին շարունակելու իր խոսքն այդ հանապարհի մասին, ընդհատեց նրան հետևյալ խոսքերով. «Ով միլետացի բարեկամ. մեկնիր Սպարտայից նախքան արևամուտը. քանզի դու լակեդեմոնացիներին ոչ մի խելք խոսք չես ասում, առաջարկելով տանել նրանց ծովից երեք ամսվա հանապարհ հեռու»:

51. Այս ասելով, Կլեոմենեսը մեկնում է իր տունը: Իսկ Արիստագորասը ձիթենու ճյուղ[41] վերցնելով, հետևում է Կլեոմենեսին և, մտնելով նրա տունը, խնդրում լսել իրեն իբրև օգնություն աղերսողի, նախապես, սակայն, սենյակից հեռացնելով նրա աղջկան. քանզի այդ պահին Կլեոմենեսի մոտ էր գտնվում նրա դուստրը՝ Գորգո անունով, որը և նրա միակ երեխան էր և այդ ժամանակ կլիներ ութ կամ ինը տարեկան: Կլեոմենեսն առաջարկում է Արիստագորասին արտահայտել իր ցանկությունը, առանց վախենալու երեխայի ներկայությունից: Այնժամ Արիստագորասը նախ խոստանում է տալ տաս տաղանդ, եթե նա կատարի իր խնդրանքը: Բայց քանի որ Կլեոմենեսը հրաժարվում էր, ապա Արիստագորասը հետզհետե բարձրացնում էր գումարը, մինչև որ խոստանում է հիսուն տաղանդ: Այնժամ աղջիկը բացականչում է. «Հայր. այս ճյուրը քեզ կկաշառի, եթե չթողնես ու չգնաս»: Կլեոմենեսը, ուրախացած աղջկա խորհրդից, վեր է կենում և գնում մեկ ուրիշ սենյակ: Իսկ Արիստագորասը ձեռնունայն հեռանում է Սպարտայից, չկարողանալով նույնիսկ շարունակել իր բացատրությունը՝ մինչև արքայի նստավայրը տանող հանապարհի մասին:

52. Այդ հանապարհի մասին կարելի է ասել հետևյալը: Նրա ամբողջ երկարությամբ կան արքունական կայաններ, գեղազարդ իշխանատներ, և

ամբողջ հանապարհն անցնում է բնակեցված ու ապահով երկրի միջով: Լյուդիայի և Փրյուգիայի միջով անցնող հատվածում կա քսան կայան[42], իսկ (հանապարհի այդ հատվածի) երկարությունը իննսուն չորս և կես փարսախ է[43]: Փրյուգիայից հետո (հանապարհը) տանում է դեպի Հալյուս գետը, որտեղ (լեռնային) դարպասներն են, որոնցով անցնելուց հետո կտրում-անցնում ես գետը: Անցարանում կա ուժեղ ամրացված պահակակետ: Նյանհետև Կապադովկիա մտնելով, հանապարհը ձգվում է մինչև Կիլիկիայի սահմանը քսանութ կայան՝ հարյուր չորս փարսախ: Այս սահմանում անհրաժեշտ է անցնել երկու դրոհք և կողանցել երկու պահակակետ: Դրանք անցնելուց հետո Կիլիկիայի միջով հանապարհը ձգվում է երեք կայան՝ տասնհինգ և կես փարսախ: Կիլիկիայի և Արմենիայի սահմանը հավարկելի գետն է, անունը Եփրատ: Արմենիայում հիսունվեց և կես փարսախ տարածության վրա կա տասնհինգ կայան իշխանատներով. այնտեղ կա նաև պահակակետ: Այս Արմենիայից հանապարհը մտնում է Մատիենե, որտեղ կա երեսուն չորս կայան, հարյուր երեսուն յոթ փարսախի վրա: Այս երկրի միջով հոսում են չորս հավարկելի գետեր, որոնք անհրաժեշտ է հավով անցնել: Այդ գետերից առաջինը Տիգրիսն է. երկրորդը և երրորդը համանուն են, բայց նույն գետերը չեն և նույն վայրից չեն բխում. քանզի հիշյալ գետերից առաջինը բխում է Արմենիայից, իսկ երկրորդը՝ Մատիենեից: Չորրորդ գետը կոչվում է Գյունդես, որը Կյուրոսը բաժանել էր երեք հարյուր վաթսուն ջրանցքների[44]: Այս երկիրն անցնելուց հետո հանապարհը մտնում է Կիսսիյան երկիրը, որտեղ քառասուներկու և կես փարսախի վրա կա տասնմեկ կայան, մինչև Քասպես գետը, որը նույնպես հավարկելի է: Այս գետի վրա է գտնվում Սուսա քաղաքը:

53. Սարդեսից մինչև Սուսա գնալիս, այս բոլոր կայանների թիվը հարյուր տասնմեկ է. նույնքան են նաև իշխանատները: Եթե արքունի այս հանապարհը հիշտ է չափված փարսախներով և եթե փարսախը հավասար է երեսուն ասպարեզի, իսկ այդ իրականում այդպես է, ապա Սարդեսից մինչև արքայի Մեմնոնյան[45] կոչված պալատը մեկ քյուռ երեք հազար հինգ հարյուր ասպարեզ է, այսինքն՝ չորս հարյուր հիսուն փարսախ: Ուստի, եթե յուրաքանչյուր օր անցնեն հարյուր հիսուն ասպարեզ, ապա (ամբողջ հանապարհը) կտևի ուղիղ իննսուն օր:

54. Այսպիսով, Արիստագորաս Միլետացին հիշտ է ասել Կլեոմենես լակեդեմոնացուն, հայտնելով, թե մինչև արքայի մոտ հանապարհը տևում է երեք ամիս: Եթե որևէ մեկը ցանկանում է ավելի ճշգրիտ իմանալ հանապարհի երկարությունը, ապա ես կնշեմ նաև հետևյալը. այդ հեռավորությունը պետք է ավելացնել նաև Եփեսոսից մինչև Սարդես ընկած հանապարհը: Այսպիսով, Հելլենական ծովից մինչև Սուսա, որը կոչվում է նաև Մեմնոնի

քաղաք, իրականում մեկ բյուր չորս հազար և քառասուն ասպարեզ է, քանի որ Եփեսոսից Սարդես հինգ հարյուր քառասուն ասպարեզ է. հետևաբար, երեք ամսվա հանապարհը երկարում է ևս երեք օրով:

55. Արիստագորասը, ստիպված լինելով լքելու Սպարտան, ժամանում է Աթենք, որը ազատվել էր տիրանների իշխանությունից հետևյալ կերպ: Հիպպարքոսին, Պիսիստրատոսի որդուն և տիրան Հիպպիասի եղբորը, որը երազում արդեն տեսել էր իր շարաչար սպանվելը, սպանել էին Արիստոգիտոնը և Հարմոդիոսը, որոնք ծագումով Գեփյուրյաններ էին: Դրանից հետո Աթենքում ևս չորս տարի հաստատվում է տիրանիա, որը ոչ միայն պակաս չէր նախկինից, այլ նույնիսկ ավելի դաժան էր:

56. Իսկ Հիպպարքոսի երազը այսպիսին է եղել: Պանաթենական տոնախմբության նախորդ գիշերը Հիպպարքոսը երազում տեսնում է գեղանազարդ և գեղատես մի մարդու, որը դիմում է իրեն հետևյալ առեղծվածային խոսքերով.

«Համբերատար հոգով, դայլ, սար ապետ այս անտանելի.
Քանզի ոչ մի անարդար մարդ չի խուսափել արդար պատժից»:

Առավոտյան Հիպպարքոսն իր երազը հայտնում է երազահաններին. այնուհետև, սակայն, մոռանալով երազի մասին, մասնակցում է տոնական շքերթին, որտեղ և սպանվում է[46]:

57. Գեփյուրյանները, որոնց տոհմից էին Հիպպարքոսին սպանողները, իրենց պատմելով, անցյալում եկել են Երետրիայից[47]. բայց ես հարց ու փորձով իմացել եմ, որ նրանք (ծագումով) փյունիկեցիներ են, որոնք Կադմոսի[48] հետ հասել են այժմ Բեոտիա կոչվող երկիրը, որտեղ և բնակություն են հաստատել, իբրև վիճակ ստանալով Տանագրա երկրամասը: Կադմոսյաններին այստեղից սկզբում տեղահանել են արգոսցիները[49], իսկ այս Գեփյուրյանները երկրորդ անգամ տեղահանվելով բեոտիացիների կողմից, եկել են Աթենք: Աթենացիները նրանց ընդունել են որպես Աթենքի քաղաքացիների, բայց նրանց իրավունքները սահմանափակող որոշ պայմաններով, որոնց մասին չարժե այստեղ խոսել:

58. Կադմոսի հետ (Հելլադա) եկած այս փյունիկեցիները, որոնց մեջ եղել են նաև այս Գեփյուրյանները, շատ այլ գիտություններից բացի, բերում են հելլեններին նաև գրերը, որոնք, իմ կարծիքով, մինչ այդ հելլեններին հայտնի չեն եղել[50]: Նախապես Կադմոսյանները օգտագործել են նույն գրերը, ինչ և բոլոր մնացած փյունիկեցիները: Հետագայում, լեզվի փոփոխության հետ փոփոխվել են նաև տառաձևերը: Այդ ժամանակ նրանց հարևանությամբ ապրող հելլեններին մեծ մասը հոնիացիներ էին, որոնք գրերը վերցնելով ու սովորելով փյունիկեցիներից, փոքր-ինչ դրանց ձևը վերափոխում

են և անվանում փյունիկյան. և դա լիովին արդարացի էր. քանի որ դրանք Հելլադա բերել էին փյունիկեցիները: Բիբլոսները (պապիրուսը)[51] հոնիացիները հնուց անտի կոչում են կաշիներ. քանի որ բիբլոսի չգոյության պայմաններում նրանք գրում էին կաշիների վրա: Այժմ ևս շատ բարբարոսներ նման կաշիների վրա են գրում:

59. Ես ինքս կադմոսյան գրերը տեսել եմ բեոտիական Թեբեում գտնվող Իսմենյան Ապոլլոնի տաճարում. դրանք փորագրված էին մի քանի եռոտանիների վրա և մեծ մասամբ նման էին հոնիական գրերին: Եռոտանիներից մեկի վրա կար այսպիսի մակագրություն. «Ինձ նվիրել է Ամփիտրիոնը, տելեբոյների երկրից բերելով»: Այս մակագրությունը, հավանաբար, ժամանակակից է Լաբդակոսի որդի Լայիոսի, որը Կադմոսի որդի Պոլիդորոսի թոռն էր:

60. Մեկ այլ եռոտանի կրում է վեցտանյա (չափով) հետևյալ մակագրությունը.

«Հաղթանակած կոփամարտիկ Սկայոսը ինձ նվիրել է
Հեռանարող Ապոլլոնին որպես ընծա գեղեցկագույն»:

Այս Սկայոսը, հավանաբար, Հիպպոկոոնի որդին էր: Եթե այդ նա է, և ոչ թե Հիպպոկոոնի որդու նույն անունն ունեցող մեկ այլ մարդ, ապա այդ եռոտանին պատկանում է Լայիոսի որդի Էդիպի ժամանակին:

61. Երրորդ եռոտանին կրում է այսպիսի մակագրություն, դարձյալ վեցտանյա (չափով).

«Լաոդամաս միապետը, Ապոլլոնին պայծառատես,
Եռոտանին այս նվիրեց որպես ընծա գեղեցկագույն»:

Այս Լաոդամասի, Եռեոկլեսի որդու, իշխանության ժամանակ էր, որ Կադմոսյաններն արգոսցիների կողմից տեղահանվում են և ապաստան գտնում եմֆելների երկրում: Մինչդեռ Գեփյուրյանները մնացել էին տեղում, բայց հետագայում բեոտիացիները ստիպում են նրանց հեռանալ Աթենք: Նրանք Աթենքում հաստատում են սրբավայրեր, որոնք ոչինչ ընդհանուր չունեն աթենական մյուս սրբավայրերի հետ, այլ տարբերվում են դրանցից. առանձնապես տարբերվում են ահայական Դեմետրայի սրբավայրը և նրա պաշտամունքը:

62. Այսպիսով, ահա, ես պատմեցի Հիպպարքոսի երազի, ինչպես նաև Գեփյուրյանների ծագման մասին, որոնց պատկանում էին Հիպպարքոսին սպանողները: Այժմ ես պետք է անդրադառնամ իմ սկսած պատմության այն մասին, թե ինչպե՞ս աթենացիները ազատվեցին տիրաններից: Այսպես, Հիպպիասը, դառնալով Աթենքի տիրան, հետզհետե ավելի դաժանանում էր աթենացիների հանդեպ, Հիպպարքոսի սպանության պատճառով: Այդ ժամանակ Ալկմեոնյանները[52], որոնց տոհմը ծագում էր Աթենքից և որոնց արտաքսել

էին Պիսիստրատյանները, փորձում են այլ վտարանդիների հետ զենքի ուժով վերադառնալ Աթենք և ազատագրել քաղաքը, բայց շարաշար պարտվում են: Նրանք ամրացել էին Պայոնիայից հյուսիս գտնվող Լիպսիդրիոն վայրում, որտեղից Ալկմեոնյանները ամեն տեսակ դավեր էին նյութում Պիսիստրատյանների դեմ: Այսպես, նրանք վարձվում են Ամփիկտիոններից[53], Դելֆիի այժմյան տաճարը կառուցելու համար, որն այդ ժամանակ դեռևս գոյություն չուներ: Եվ քանի որ նրանք հարուստ էին և հնուց անտի հարգարժան, ուստի տաճարը կառուցեցին ավելի գեղեցիկ, քան նախանմուշն էր. քանզի նախապես թեև պայմանավորվել էին տաճարը կառուցել կրաքարից, բայց նրանք տաճարի հակառակը կառուցեցին Պարոսի մարմարից:

63. Ինչպես պատմում են աթենացիները, այս մարդիկ Դելֆիում փողով համոզում են Պյութիային, որպեսզի ամեն անգամ, երբ սպարտացիները գան պատգամ հարցնելու իրենից, լինի անձնական թե հանրային գործերի համար, ինքը նրանց խորհուրդ տա ազատագրել Աթենքը: Անա և լակեդեմոնացիները, քանի որ միշտ միևնույն պատգամն էին ստանում գուշակից, իրենց ամենահեղինակավոր քաղաքացիներից մեկին, Ատերի որդի Անֆիմոլիոսին զորքով ուղարկում են, պատվիրելով Աթենքից վտարել Պիսիստրատյաններին, թեև սրանք իրենց լավագույն բարեկամներն էին. քանզի նրանք ատծու կամքը համարում էին ավելի կարևոր, քան պարտքը մարդկանց հանդեպ: Սպարտացիներն այս զորքը ուղարկում են ծովային հանապարհով, նավերի վրա: Հասնելով Փալերոն[54], Անֆիմոլիոսը իր զորքը հանում է ափ: Իսկ Պիսիստրատյանները, նախօրոք տեղյակ լինելով այդ մասին, Թեսալիայից օգնություն էին հրավիրել. քանզի թեսալացիների հետ զինակցություն ունեին: Թեսալացիները Պիսիստրատյանների խնդրանքից հետո, ընդհանուր համաձայնությամբ ուղարկում են հազար ձիավոր, իրենց թագավոր Կինեաս Կոնիայցու գլխավորությամբ: Այսպիսի դաշնակիցներ ունենալով, Պիսիստրատյանները հետևյալ հնարն են կիրառում: Հատում են Փալերոնի դաշտավայրի ծառերը, տեղանքը դարձնելով մատչելի (թեսալական) հեծելազորի գործողությունների համար: Այնուհետև հրանք այդ հեծելազորը շարժում են (թշնամու) զորաբանակի վրա: (Թեսալական) հեծելազորը հարձակվելով, կոտորում է լակեդեմոնացիներից շատերին. սպանվում է նաև Անֆիմոլիոսը: Ողջ մնացածները ստիպված ապաստանում են նավերի վրա: Այսպիսի անհաջողություն է կրում լակեդեմոնացիների առաջին արշավանքը. իսկ Ատտիկայի Ալոպեկայ[55] վայրում, Կյունոսարգեսում գտնվող Հերակլեսի տաճարի մոտ գտնվում է Անֆիմոլիոսի գերեզմանը:

64. Հետ այնու լակեդեմոնացիներն ավելի մեծաթիվ զորք են հավաքում՝ Աթենքի վրա արշավելու համար, Անամանդրիդեսի որդի, թագավոր Կլեոմենեսի գլխավորությամբ, և այն ուղարկում ոչ թե ծովով, այլ ցամաքով:

Երբ սպարտացիները ներխուժեցին Ատտիկյան երկիր, նախ հրանց դեմ դուրս եկավ թեսալական հեծելազորը, որը, սակայն, կարճատև մարտից հետո դիմեց փախուստի, կորցնելով քառասուն մարդ: Ողջ մնացածները անհապաղ, կարճ ճանապարհով վերադառնում են Թեսալիա: Իսկ Կլեոմենեսը, ազատության ձգտող աթենացիների հետ, գալիս է Աթենք քաղաքի առաջ և պաշարում Պելասգյան պարիսպների[56] հերսում փակված տիրաններին:

65. Լակեդեմոնացիներն, անշուշտ, երբեք չէին կարողանա նվաճել (այդ ամրությունը և) Պիսիստրատյաններին. քանզի հրանք մատակիր չէին պաշարելու (ամրությունը), իսկ Պիսիստրատյաններն ամբարել էին պարենի և շրի մեծ պաշար. ուստի և (լակեդեմոնացիները) մի քանի օր պաշարելուց հետո կվերադառնային Սպարտա, եթե չկատարվեր մի պատահար, որը պարտվածների համար աղետաբեր եղավ, բայց սպարտացիների համար՝ բարենպաստ: Պիսիստրատյանների որդիները, երբ (պաշարվածները) փորձեցին հրանց թաքուն դուրս բերել Ատտիկայից ու տանել ապահով մի վայր, գերի բռնվեցին: Այս պատահարը խառնեց հրանց բոլոր ծրագրերը և հրանք ստիպված եղան իրենց որդիներին ետ ստանալու նպատակով, ընդունել աթենացիների պայմանները և հինգ օրվա ընթացքում հեռանալ Ատտիկայից: Հրանք հեռացան Սկամանդրոսի[57] վրա գտնվող Սիգեոն[58] (քաղաքը), Աթենքում երեսունվեց տարի[59] իշխելուց հետո: Պիսիստրատյանները ևս, Կողրոսի և Մելանթոսի տոհմից սերած Աթենքի նախկին թագավորների նման, հնում եկած են եղել Պյուլոսից[60] և հետհորդներն են Նելևսի[61]: Այդ իսկ պատճառով Հիպոկրատեսը, Նեստորի որդի Պիսիստրատոսի հիշատակին, իր որդուն անվանեց Պիսիստրատոս: Այսպես, անա, աթենացիները ձերբազատվում են տիրաններից: Այժմ ամենից առաջ ես կպատմեմ հիշարժան այն ամենը, ինչ աթենացիները կատարել են և այն անհաջողությունները, որ կրել են այդ (տիրաններից) ազատվելուց հետո, մինչև հոնիացիների ապստամբությունը Դարեհի դեմ և օգնություն խնդրելու նպատակով միլետացի Արիստագորասի Աթենք ժամանելը:

66. Աթենքը, որը նախկինում ևս եղել էր խոշոր (քաղաք), այժմ, տիրանիայից ազատագրվելուց հետո, դառնում է առավել խոշոր: Այդ ժամանակ քաղաքի հզորներն էին Ալկմեոնյան Կլիսթենեսը, որի մասին պատմում են, թե կաշառել էր Պյութիային, և Տյուսանդրոսի որդի Իսագորասը, որը թեև անվանի տնից էր, բայց նրա տոհմի մասին ես մանրամասն չգիտեմ. (բայց գիտեմ, որ) նրա ազգակիցները զոհ են մատուցում Կարիական Զևսին: Անա այս այրերը պայքարում էին հանուն իշխանության: Կլիսթենեսը, պարտություն կրելուց հետո, սկսում է սիրաշանել դեմոսին: Այնուհետև նա աթենացիների նախկին չորս ֆիլաների փոխարեն հաստատում է տաս ֆիլա: Ֆիլաները նախկինում կրում էին Իոնի որդիներ Գելեոնի, էգիկորեսի, Արգա-

դեսի և Հոպլեսի անունները. այժմ նա փոխեց դրանց անունները տեղաբնիկ այլ հերոսների անուններով, բացի Այասից, որը թեև աթենացի չէր, բայց հարևան էր և դաշնակից:

67. Ինձ թվում է, թե այդ անելով, այս Կլիսթենեսն ընդօրինակում էր մոր կողմից իր պապ Կլիսթենեսին, Սիկիոնի տիրանին[62]: Այս Կլիսթենեսը Արգոսի դեմ պատերազմ մղելիս, արգելել էր հոապսոդներին[63] Սիկիոնում հոմերոսյան երգերի մրցություններ կազմակերպել, քանի որ դրանցում գրեթե բոլոր դեպքերում, մեծապես փառաբանվում են արգոսցիները և Արգոսը: Բացի այդ, Կլիսթենեսը ցանկացել էր վտարել երկրից Տալաոսի որդի հերոս Ադրաստոսին, որին ձոնված տաճարն այդ ժամանակ գտնվում էր և այժմ էլ գտնվում է Սիկիոնի հենց շուկայում, այն պատճառով, որ վերջինս արգոսցի էր: Գալով Դելփի, Կլիսթենեսը հարցնում է պատգամատանը, թե պե՞տք է արդյոք վտարի Ադրաստոսին: Պյութիան նրան պատգամ է տալիս, թե՝ «Ադրաստոսը Սիկիոնի թագավորն է, իսկ դու՝ չարագործ»: Քանի որ տստված թույլ չէր տվել նրան այդ ցանկությունը գործադրելու, ապա Կլիսթենեսը, վերադառնալուց հետո, սկսում է այնպիսի հնար մտածել, որ ինքը Ադրաստոսը (հոժարակամ) հեռանա երկրից: Երբ Կլիսթենեսին թվաց, թե ինքը արդեն գտել է հնարը, դեսպան է ուղարկում Թեովտիայի Թեբե քաղաքի բնակիչների մոտ և հայտնում, որ ինքը կամենում է իր մոտ հրավիրել Աստակոսի որդի Մելանիպպոսին: Թեբեցիները համաձայնվում են: Եվ Կլիսթենեսը Մելանիպպոսին բերելով (Սիկիոն), նրա համար արքավայր է հաստատում բուն իսկ Պոյուտանեոնում[64] և տաճար կառուցում քաղաքի ամենահամրացված վայրում: Կլիսթենեսը հրավիրել էր Մելանիպպոսին,— այդ ևս անհրաժեշտ է պատմել,— որովհետև սա Ադրաստոսի ամենամեծ թշնամին էր. քանզի Ադրաստոսը սպանել էր նրա եղբորը՝ Միկիստեսին, և փեսային՝ Տյոդեսին: Մելանիպպոսի համար արքավայր հաստատելուց հետո, Կլիսթենեսը զրկում է Ադրաստոսին զոհաբերություններից և տոներից, և այդ բոլորը հատկացնում է Մելանիպպոսին: Իսկ սիկիոնցիները սովոր էին միշտ մեծ պատիվներ մատուցել Ադրաստոսին. քանզի այդ երկիրը պատկանում էր Պոլյուբոսին, իսկ Ադրաստոսը Պոլյուբոսի դստեր որդին էր. և քանի որ Պոլյուբոսը վախենալով է անզավակ, իշխանությունը հանձնում է Ադրաստոսին: Այլ պատիվներից բացի, որ սիկիոնցիները մատուցում էին Ադրաստոսին, նրանք մեծարում էին նաև նրա տառապանքները, ողբերգության պարախմբերով: Նրանք մեծարում էին ոչ թե Դիոնիսոսին, այլ Ադրաստոսին: Իսկ Կլիսթենեսը պարախմբերը հատկացնում է Դիոնիսոսին, իսկ մնացյալ պաշտամունքը՝ Մելանիպպոսին:

68. Կլիսթենեսն այսպես վերաբերվեց Ադրաստոսին. իսկ դորիական ֆիլաների անվանումները նա փոխեց, որպեսզի դրանք նույնը չլինեն սի-

կիոնցիների և արգոսյանների հետ: Ըստ որում նա մեծապես ծաղակել է սիկիոնցիներին. քանզի նոր ֆիլաների անունները հաստատելիս, նա վերցրել է վարազ և էշ բառերը և դրանց ավելացրել սոսկ վերջավորություն. բացառություն է իր ֆիլայի անվանումը, որը վերցրել է «իշխանություն»[65] բառից: Այսպես, իրենք կոչվում էին Արքելայներ[66], մինչդեռ մյուսները՝ Հյուսաներ, Օնեատներ և Խոյրատներ[67]: Այսպիսի անուններ կրում էին սիկիոնցիները և՛ Կլիսթենեսի իշխանության ժամանակ, և՛ նրա մեռնելուց վաթսուն տարի հետո: Հետագայում նրանք փոխադարձ համաձայնության գալով, իրենց ֆիլաների անունները փոխում են ու դարձնում Հյուլլեյաններ, Պամֆիլյաններ և Դյումանատներ: Սրանց ավելացնում են նաև չորրորդ ֆիլան, որի անդամներին անվանում են էգիալյաններ՝ Ադրաստոսի որդի էգիալոսի անունով:

69. Սիկիոնցի Կլիսթենեսը այս գործերն է կատարել: Իսկ աթենացի Կլիսթենեսը, որն այս սիկիոնցու քրոջ որդին էր և որին կոչել են հեռու անունով, քանի որ արհամարհում էր հոնիացիներին, իմ կարծիքով, նույնպես հետևելով իրեն համանուն Կլիսթենեսին, չէր ցանկացել, որ աթենական ֆիլաների անունները նման լինեն հոնիացիների ֆիլաների անուններին: Եվ երբ արդեն նա իր կողմը գրավեց նախկինում բոլոր իրավունքներից զրկված աթենական դեմոսին, ապա ֆիլաները նա անվանափոխեց և մեծացրեց նրանց թիվը, ընդ որում ֆիլաների առաջնորդների թիվը չորսից դարձնելով տասը, իսկ ամեն մի ֆիլայի կազմում ընդգրկեց տաս համայնք[68]: Այսպիսով, դեմոսն իր կողմը գրավելուց հետո, նա դառնում է շատ ավելի հզոր, քան իր հակառակորդները:

70. Իսագորասը այս անգամ պարտված լինելով, մտածում է հետևյալ հակահնարը: Նա օգնություն է կոչում լակեդեմոնացի Կլեոմենեսին, որը նրա հետ բարեկամացել էր Պիսիստրատյանների պաշարման ժամանակից: Ասում էին, թե Կլեոմենեսը հանախում էր Իսագորասի կնոջ մոտ: Այնժամ Կլեոմենեսը նախ բանբեր է ուղարկում Աթենք, պահանջելով Կլիսթենեսին և նրա հետ շատ ուրիշ աթենացիների արտաքսել, նրանց համարելով այլանդակներ: Այս ամենը նա անում էր Իսագորասի դրդումով: Քանզի Ալկմեոնյանները և նրանց կուսակիցները մեղադրվում էին սպանության մեջ, մինչդեռ ո՛չ ինքը, ո՛չ ևս իր ընկերները մասնակից չէին եղել դրան:

71. Աթենացիներին այլանդակներ անվանեցին հետևյալ պատճառով: Աթենքում եղել է մի այր, Կյոլոն անունով, օլիմպիական խաղերի հաղթող: Նա, գտնվելով, ձգտել է տիրանիայի: Կազմակերպելով իր հասակակիցներից մի խումբ, նա փորձել է գրավել ակրոպոլիսը[69], բայց չկարողանալով այն գրավել, Կյոլոնը որպես խնդրակու նստել է (դիցանու) արձանի մոտ: Նավկրարների[70] ավագները, որոնք այդ ժամանակ կառավարում

էին Աթենքը, համոզում են (Կյոլոնին և) նրա ընկերներին հեռանալ այնտեղից, խոստանալով չսպանել. նրանց սպանության մեղքն ընկնում է Ակիմեոնյանների վրա: Այս դեպքերը կատարվել էին դեռևս Պիսիստրատոսի ժամանակներից առաջ:

72. Երբ Կլեոմենեսը, բանբեր ուղարկելով, պահանջել էր Կլիսթենեսի և արյունապարտների արտաքսումը, ինքը՝ Կլիսթենեսը թաքուն փախել էր (քաղաքից): Այսուհանդերձ, Կլեոմենեսը հայտնվում է Աթենքում ոչ մեծաթիվ զորքով և, գալուց հետո, Իսագորասի ցուցումով, քաղաքից արտաքսում աթենական յոթ հարյուր ընտանիք: Այնուհետև նա փորձում է ցրել խորհուրդը[71] և իշխանությունը հանձնել Իսագորասի երեք հարյուր կուսակիցներին: Բայց քանի որ խորհուրդը հակառակվել էր և չէր կամեցել հնազանդվել, ապա Կլեոմենեսը և Իսագորասն ու նրա կուսակիցները գրավում են ակրոպոլիսը: Մնացյալ աթենացիները միանալով, երկու օր պաշարում են նրանց. իսկ երրորդ օրը նրանք համաձայնության են գալիս և բոլոր լակեդեմոնացիները հեռանում են երկրից: Դրանով կատարվում է Կլեոմենեսին տրված պատգամը: Քանզի ակրոպոլիսը գրավելու համար այնտեղ բարձրանալիս, նա մտնում է նաև դիցուհու անձեռնմխելի սենյակը[72], իբր նրան ազոթելու համար: Բայց նախքան նա կմտներ, քրմուհին վեր կենալով իր գահից, ասում է նրան. «Ով օտարական լակեդեմոնացի: Ես դարձիր և մի մտիր սրբավայր. քանզի օրենքով չէ, որ դորիացիները մտնեն այստեղ»: Իսկ նա պատասխանում է. «Ով կին. բայց ես դորիացի չեմ, այլ ափայացի»: Այսպիսով, առանց անսալու պատգամին, նա փորձում է գործադրել իր կամքը և մտնում է (սրբավայր). այդ իսկ պատճառով նա ստիպված է լինում լակեդեմոնացիների հետ թողնել երկիրը և հեռանալ: (Իսագորասի) մյուս կուսակիցներին աթենացիները շղթայում են ու մահապատժի ենթարկում: Մահապատժվածների մեջ էր նաև Տիմեսիթեոսը Դելփիից, որի գործերի և քաջության մասին կարող էի շատ պատմել:

73. Արդ, սրանք շղթայակապ արվեցին և սպանվեցին: Իսկ աթենացիներն այս դեպքից հետո վերադարձնում են Կլիսթենեսին և Կլեոմենեսի կողմից արտաքսված յոթ հարյուր ընտանիքներին, և հրեշտակներ ուղարկում Սարդես, որոշած լինելով պարսից հետ զինակցություն կնքել. քանզի նրանք համոզված էին, որ իրենց պատերազմ է սպասում լակեդեմոնացիների և Կլեոմենեսի դեմ: Երբ հրեշտակները, հասնելով Սարդես, հայտնում են իրենց պատվիրվածը, Հյուստասպեսի որդի Արտափրենեսը, Սարդեսի հյուպարքոսը, հարցնում է նրանց, թե ի՞նչ մարդիկ են, որտե՞ղ են բնակվում և ինչո՞ւ են փափագում զինակցել պարսիկներին: Հրեշտակների բացատրությունն ստանալուց հետո, նա այսպիսի պատասխան է տալիս. «Եթե աթենացիները Դարեհ արքային կտան հող և ջուր, ապա ինքը նրանց հետ զինակցություն

կնքաստատի. եթե չտան, ապա կարող են հեռանալ»: Հրեշտակները, իրենց պատասխանատվությամբ, համաձայնվում են տալ (հող և ջուր), և որոշում են զինակցություն հաստատել: Հայրենիք վերադառնալուց հետո, սակայն, նրանք խիստ պատժվում են ինքնագլուխ արարքի համար:

74. Բայց Կլեոմենեսն իրեն համարում էր աթենացիների կողմից խիստ անարգված թե՛ խոսքով, թե՛ գործով. ուստի և զորք է գումարում ամբողջ Պելոպոնեսոսից, սակայն առանց հայտնելու, թե ի՞նչ նպատակով է այն գումարում: Նա կամենում էր վրեժ լուծել աթենացիներից և Իսագորասին տիրան կարգել. քանզի Իսագորասը ևս իր հետ հեռացել էր ակրոպոլիսից: Այսպես, Կլեոմենեսը թվաշատ զորքով ներխուժում է Ելևսիս[73]: Բեոտիացիները, ըստ պայմանավորվածության, գրավում են Ատտիկայի սահմանամերձ Օյնոե և Հյուսիսա բնակավայրերը. իսկ իրենց հերթին քաղկիսցիները ևս հարձակվելով, սկսում են ավայրացնել Ատտիկայի դաշտերը: Աթենացիները, թեև ընկել էին երկուսաթեք հարվածի տակ, որոշում են հետագայում այս ամենը հիշեցնել բեոտիացիներին և քաղկիսցիներին, իսկ այժմ իրենց զենքն ուղղում են Ելևսիսում գտնվող պելոպոնեսցիների դեմ:

75. Երբ զորքերն արդեն պետք է հակատամարտն սկսեին, նախ կորնթացիներն իրար համոզում են, թե անարդար են վարվում և, իրենց միտքը փոխելով, վերադառնում են: Այդպես վարվեց նաև Արիստոնի որդի Դեմարատոսը, որը նույնպես սպարտացիների թագավորն էր[74], և գլխավորում էր լակեդեմոնական զորքը Կլեոմենոսի հետ համատեղ. նա մինչ այդ տարակարծիք չէր եղել Կլեոմենեսի հետ: Այս տարակարծությունից հետո Սպարտայում հաստատվեց օրենք, որն արգելում էր երկու թագավորներին համատեղ դուրս գալ արշավանքի. մինչդեռ նախկինում երկու թագավորները միասին էին մասնակցում արշավանքներին: Այսպիսով, քանի որ թագավորներից մեկը զրկվել էր այդ իշխանությունից, ապա Տյունդարիդներից մեկը պարտավոր էր տանը մնալ: Մինչդեռ հնում երկուսը միասին պարտավոր էին իրար օգնել և մեկնել արշավանքի:

76. Այնժամ Ելևսիսում մնացած դաշնակիցները, տեսնելով, որ լակեդեմոնացիների թագավորներն իրար տարակարծիք են, իսկ կորնթացիները լքել են իրենց մարտաշարքերը, իրենք ևս հեռանում են: Սա էլ չորրորդ անգամն էր, որ դորիացիները եկել էին Ատտիկա. երկու անգամ նրանք ներխուժել էին Ատտիկա որպես թշնամիներ, իսկ երկու անգամ եկել էին օգնելու աթենական ժողովրդին. առաջին անգամ՝ երբ նրանք հիմնեցին Մեգարան: Այս արշավանքը իրավ որ հիշյա կլիներ վերագրել Աթենքում Կոդրոսի թագավորության տարիներին: Երկրորդ և երրորդ անգամ՝ երբ սպարտացիներն արշավում են Պիսիստրատյաններին վտարելու համար: Իսկ չորրորդ արշա-

վանքն այս էր, երբ Կլեոմենեսը, պելոպոնեսցիների գլուխն անցած, ներխուժել էր Ելևսիս: Այսպիսով, դորիացիներն այս էլ չորրորդ անգամն էր, որ ներխուժում էին Աթենք:

77. Երբ արդեն այս գործն այսպես անփառունակ ցրվել էր, աթենացիները, որոշելով վրեժ լուծել, նախ արշավում են Քաղկիսի վրա: Բեովտիացիները օգնում են քաղկիսցիներին Եվրիպոսում[75]: Տեսնելով (օգնության եկող) բեովտիացիներին, աթենացիները որոշում են նախ հարձակվել ոչ թե քաղկիսցիների, այլ բեովտիացիների վրա: Կռվի բռնվելով բեովտիացիների հետ, աթենացիները տանում են մեծ հաղթանակ. շատերին սպանելուց բացի, նրանցից գերի են վերցնում յոթ հարյուր հոգու: Նույն օրն իսկ աթենացիները, անցնելով Եվբեա, քաղկիսցիների հետ ևս մարտի են բռնվում և նրանց նույնպես հաղթելով, չորս հազար վիճակառու[76] (հողագործների) բաղնում են հիպոբոտեսների[77] հողերի վրա: Հիպոբոտեսներ կոչվում էին քաղկիսցի հարուստները: Գերի վերցված քաղկիսցիներին ևս, բեովտիացիների հետ, աթենացիները շղթայում են ու բանտարկում. հետագայում նրանց կապանքները փոխեցին երկու մինա փրկագնի դիմաց, իսկ նրանց կապանքները կախեցին ակրոպոլիսում: Այդ կապանքները դեռևս իմ ժամանակ էլ կային. դրանք կախված էին մեդական պատերազմի ժամանակ հրդեհից խանձված պատից, սրբավայրի դիմաց, դեպի արևմուտք: Փրկագնի տասանորդով նրանք պղնձե քառաձի կառ նվիրաբերեցին (դիցուհուն): Այդ կառը կանգնած է ակրոպոլիսում, պրոպիլեյ մտնողից ձախ. դրա վրա կա այս մակագրությունը.

«Բեովտիական և քաղկիսյան մարդկանց անտ մենք սանձեցինք,
Քաջ որդիներս աթենացվոց, սխրանքներով մեր ռազմական.
Կապանքներով երկաթ նրանց քափը բանտում մենք հանգցրինք
Եվ տասանորդն այս ձիերի ընծա բերինք Աթենասին»:

78. Այսպիսով, Աթենքի հզորությունն աճում էր: Հայտնի է, որ ոչ թե մեկ տեսակետից, այլ ընդհանրապես, իրավահավասարությունը շատ կարևոր բան է: Որովհետև, քանի դեռ աթենացիները տիրանի տիրապետության տակ էին գտնվում, իրենց ոչ մի հարևանից ավելի լավ չէին պատերազմում. բայց հիմա, տիրանիայից ազատագրվելուց հետո, նրանք շատ են առաջ անցել բոլորից: Այս ամենից ակներև է, որ նրանք վատ էին կռվում որպես տիրակալի համար աշխատողներ. բայց ազատ դառնալուց հետո ամեն մեկն արդեն ջանադիր է իր սեփական բարօրության համար:

79. Այնժամ աթենացիներն այսպես գործեցին: Իսկ թեբեցիները այս բոլորից հետո դեսպան են ուղարկում (Դելֆի), ասածուն հարցնելու աթենացիներից վրեժ լուծելու մասին. բայց Պյութիան պատասխանում է, թե թեբեցիներն իրենք (մենակ) անզոր են վրեժ լուծելու. պատվիրում է նրանց

հրավիրել աղմկաշատ հավաքույթ[78] և խնդրել ամենամերձավորների օգնությունը: Վերադառնալով, դեսպանները հավաքում են ժողովրդին և հայտնում պատգամատան պատասխանը: Լսելով դեսպաններից, թե իրենք պետք է օգնություն խնդրեն ամենամերձավորներից, թեբեցիներն ասում են. «Մի՞թե մեր ամենամերձավոր հարևանները տանագրացիները չեն և՛ կորնայցիները, և՛ թեսպիացիները: Բայց չէ՞ որ նրանք միշտ էլ կռվում են մեր կողքին, օգնելով մեզ: Ուստի, ինչո՞ւ մենք այդ մասին պետք է խնդրենք նրանց: Ոչ. հավանաբար պատգամի իմաստն այլ է»:

80. Մինչ այսպես խորհրդակցում էին, ներկաներից մեկն այսպես ասաց. «Ինձ թվում է, որ ես հասկացել եմ պատգամատան խոսքերի իմաստը: Զրույցն ասում է, թե Ասոպոսը[79] ուներ երկու դուստր՝ Թեբե և Էգինա. նրանք քույրեր էին. հետևաբար, ինձ թվում է, թե ասված պատվիրում է մեզ վրեժ լուծելու համար օգնություն խնդրել էգինացիներից»: Արդ, քանի որ ոչ ոք ավելի լավ կարծիք չհայտնեց, ապա իսկույն բանագնաց ուղարկեցին էգինացիների մոտ, պատգամի համաձայն նրանց օգնության կանչելով որպես մերձավորագույն ազգակիցների: Էգինացիները նրանց խնդրանքին պատասխանեցին, թե որպես օգնականների կուղարկեն Այակոսի որդիներին:

81. Երբ թեբեցիները, Այակոսի որդիների դաշնակցությամբ, փորձեցին աթենացիների վրա հարձակվել, բայց պարտություն կրեցին, դարձյալ դեսպաններ ուղարկեցին էգինա, խնդրելով զորական օգնություն, իսկ Այակոսի որդիներին ետ ուղարկեցին: Այնժամ էգինացիները, մեծամտացած իրենց մեծ հարստությամբ և հիշելով աթենացիների հետ իրենց ունեցած հին մի թշնամանքը, թեբեցիների խնդրանքով, առանց հայտարարելու, պատերազմ են սկսում աթենացիների դեմ: Եվ մինչ աթենացիները ետ էին մղում բեովտիացիներին, էգինացիները ռազմանավեր պատրաստելով, ափ են իջնում Առտիկայում և ամայացնում Փալերոնը և առափնյա մի քանի այլ արվարձաններ, դրանով իսկ մեծապես վնասելով աթենացիներին:

82. Էգինացիների հետագա թշնամանքն աթենացիների հանդեպ սկսվել է հետևյալ կերպ: Եպիդավրոսի երկիրը բոլորովին բերք չէր տալիս: Այս ադետի առնչությամբ եպիդավրոսցիները պատգամ են հարցնում Դելֆիում: Պյութիան նրանց հրամայում է պատրաստել Դամիայի և Ավքսեսիայի[80] կուռքերը և դրանք կանգնեցնել, որից հետո իրենց դրությունը կլավանա: Այնժամ եպիդավրոսցիները հարցնում են, թե կուռքերը պատրաստեն պղնձի՞ց, թե՞ քարից: Պյութիան նրանց արգելում է թե՛ մեկը, թե՛ մյուսը և պատվիրում (դրանք պատրաստել) ընտանի ձիթենու փայտից: Այնժամ եպիդավրոսցիները խնդրում են աթենացիներին թույլ տալ իրենց ձիթենի կրտրատել, քանի որ Աթենքի ձիթենիները հրաշք համարում էին արքայական: Ասում են նաև, թե այդ ժամանակ Աթենքից բացի ոչ մեկ այլ վայրում ձի-

թենի չկար: Աբենացիները համաձայնվում են այն պայմանով, որ եպիդավրոսցիներն ամենամյա զոհաբերության ընծաներ բերեն Հաղաքի պահապան Աբենասին ու Երեքթևին: Եպիդավրոսցիները ընդունում են այդ պայմանը և, ստանալով իրենց խնդրածը, այդ ծիրենիներից պատրաստած կուռքեր են կանգնեցնում: Դրանից հետո նրանց երկիրը արդեն բերք է տալիս և իրենք կատարում են աբենացիներին տված իրենց խոստումը:

83. Այդ ժամանակ և դրանից էլ առաջ էգինացիները հպատակ էին եպիդավրոսցիներին. իմիջիայլոց, իրար միջև ունեցած գաղտնի և այլ վիճելի հարցերով էգինացիները պարտավոր էին մեկնել Եպիդավրոս: Բայց այս ժամանակից հետո էգինացիները սկսում են ռազմանավեր պատրաստել և անխոնջաբար անչափվում են եպիդավրոսցիներից: Ընդհարումների ժամանակ էգինացիները, ծովում գերիշխանություն ունենալով, մեծ վնաս են հասցնում եպիդավրոսցիներին և, նույնիսկ, հափշտակում Դամիայի և Ավքսեսիայի կուռքերը և դրանք բերում ու կանգնեցնում իրենց երկրի միջնաշխարհում, Օյա կոչված վայրում, որը Հաղաքից մոտավորապես հսան ասպարեզ հեռավորության վրա է գտնվում: Կուռքերն այնտեղ կանգնեցնելով, էգինացիները զոհ էին մատուցում նրանց և ծաղրածու կանանց պարախմբի երգ ու պարով խնդրում նրանց կարեկցությունը: Յուրաքանչյուր կուռքի համար նրանք կարգում են տաս խորեգոսի[81]: Այդ պարախմբերը երբեք չէին ծանակում տղամարդկանց, այլ միայն այդ երկրի կանանց: Նույնպիսի սրբազան ծիսակատարություններ ունեին նաև եպիդավրոսցիները. բացի այդ, նրանք կատարում են նաև գաղտնի խորհուրդներ:

84. Այս կուռքերի հափշտակումից հետո եպիդավրոսցիները դադարում են կատարել աբենացիների հանդեպ իրենց ունեցած պարտավորությունները: Ուստի և աբենացիները դեսպան ուղարկելով եպիդավրոսցիների մոտ, հայտնում են իրենց բողոքը: Բայց եպիդավրոսցիները պատասխանում են, թե անարդար ոչինչ չեն անում: Նրանք պնդում են, թե քանի դեռ այդ կուռքերը գտնվում էին իրենց երկրում, ապա իրենք կատարում էին իրենց պարտավորությունները. բայց հիմա, երբ կուռքերը գտնվում են էգինացիների մոտ, ապա աբենացիները պետք է նրանցից էլ պահանջեն զոհաբերության ընծաներ: Այնժամ աբենացիները դեսպան են ուղարկում Էգինա, պահանջելով վերադարձնել կուռքերը. իսկ էգինացիները պատասխանում են, թե իրենք աբենացիների հետ ոչ մի գործ չունեն:

85. Արդ, էգինացիների այդ մերժումից հետո, աբենացիները, ինչպես իրենք պատմում են, ամբողջ համայնքի անունից ուղարկում են մի տրիերա, աբենացի հաղաքացիներով: Ժամանելով էգինա, նրանք փորձում են աբենական ծառերից պատրաստած այդ կուռքերը պոկել պատվանդաններից և տանել իրենց հետ: Բայց քանի որ այդ կերպ նրանք չէին կարողանում դրանք

շարժել տեղից, աբենացիները պարաններ կապելով կուռքերին, փորձում են քաշել դրանք: Մինչ նրանք պարաններով քաշում էին (կուռքերը), երկինքը որոտում է և որոտի հետ տեղի է ունենում երկրաշարժ: Տրիերայով ժամանած մարդիկ, որոնք պարանն էին ձգում, խելագարվում են որոտից ու երկրաշարժից և իրենց խելագարության մեջ սպանում իրար, ինչպես թշնամիներ, մինչև որ նրանցից մնում է միայն մեկ մարդ, որին հաջողվում է վերադառնալ Փալերոն:

86. Աբենացիները պատմում են, թե բանն այդպես է եղել. իսկ էգինացիները պատմում են, թե աբենացիները ժամանել են ոչ թե մեկ նավով. քանզի եթե աբենացիները եկած լինեին մեկ կամ մի քանի նավով, իրենք հեշտությամբ ետ կմղեին նրանց, եթե նույնիսկ իրենք բոլորովին նավեր չունենային: Աբենացիներն իրենց երկրի վրա եկել են մեծաթիվ նավերով և իրենք են խուսափել նավամարտից: Բայց նրանք չեն կարող հաստատապես պնդել, թե իրո՞ք իրենց թույլ զգալու պատճառով խուսափել են նավամարտից, թե՞ ծրագրել էին կատարել այն, ինչ կատարեցին: Ինչպես, քանի որ էգինացիներից ոչ մեկը մարտի դուրս չէր եկել, ապա աբենացիները, նավերից ափ իջնելով, գնացել են դեպի կուռքերը, բայց չկարողանալով դրանք պոկել պատվանդաններից, պարաններ կապելով, փորձել են քաշել դրանք, մինչև որ երկու կուռքերն էլ նույնն են անում, այսինքն՝ երկուսն էլ ծնրադրում են աբենացիների առաջ: Ես, անշուշտ, չեմ հավատում այս զրույցին, բայց ուրիշները կարող են հավատալ: Այդ օրվանից մինչև օրս դրանք մնում են այդ նույն դիրքով: Աբենացիներն այս են կատարել: Իսկ էգինացիներն իրենց մասին պատմում են, որ երբ լսել են, թե աբենացիները պատրաստվում են արշավել իրենց վրա, վստահել են արգոսցիների օգնությանը: Այսպիսով, երբ աբենացիները ափ են իջել էգինա, արգոսցիներն շտապել են օգնության, Եպիդավրոսից թափուն անցնելով էգինա կղզի: Արգոսցիները, հարձակվելով ոչինչ չկասկածող աբենացիների վրա, նավերից կտրել են նրանց: Այդ պահին էլ երկինքը որոտացել է և սկսվել երկրաշարժը:

87. Այսպիսին է արգոսցիների և էգինացիների զրույցը. այն համաձայնվում է աբենացիների պատումի հետ լոկ այն բանում, որ իրենցից միայն մեկ մարդ է փրկվել և հասել Ատտիկա: Արգոսցիները պնդում են, թե այդ միակ մարդը փրկվել է այն բանից հետո, երբ իրենք ոչնչացրել են աբենացիների զորքը, մինչդեռ աբենացիները (իրենց զորքի կործանումը) վերագրում են աստվածության: Աբենացիների պատմածի համաձայն, նույնիսկ այդ միակ մարդը չի փրկվել, այլ կործանվել է հետևյալ պայմաններում: Նա, վերադառնալով Աբենք, գուժում է աղետը: Էգինա արշաված ռազմիկների կանայք, լսելով այդ, մեծապես զայրանում են, որ բոլորից միայն նա է փրկվել, խմբվում են նրա շուրջը և իրենց զարդաքորոցներով ծակծկելով

նրան, ամեն մեկը հարցնում էր՝ որտե՞ղ է իր ամուսինը: Այդ մարդն այդպես կործանվել է:

88. Այս կանանց արարքը ավելի ողբալի թվաց աթենացիներին, քան պարտության աղետը: Նրանց պատժելու այլ միջոց չգտնելով, աթենացիները ստիպում են նրանց կրելու նոնիական զգեստ. իսկ մինչ այդ աթենացի կանայք կրում էին դորիական զգեստ, որը շատ նման էր կորնթականին: Այժմ նրանք պետք է հագնեին վուշե խիտոններ, որպեսզի զարդամորոցներ չօգտագործեն: Եթե ճիշտը ասենք, այդ զգեստը սկզբնապես եղել է ոչ թե նոնիական, այլ կարիական. քանզի բոլոր հույն կանայք կրում էին այնպիսի հագուստ, որն այժմ անվանում են դորիական: Այդ պատճառով արգոսցիները և էգինացիները որոշում են, ընդհակառակը, այսուհետև (կանացի) զարդամորոցները պատրաստել նախկինից մեկ և կես անգամ ավելի երկար, և կարգ են սահմանում, որ կանայք աստվածների սրբավայրին ընծայաբերեն առավելապես զարդամորոցներ: Արգելվեց սրբավայրերին ընծայաբերել ատտիկյան որևէ իր և ատտիկյան խեցեղեն, և որոշում են այդուհետև խմել միայն տեղական արտադրության գավերով:

89. Այսպիսով, աթենացիների դեմ եղած այդ թշնամանքի պատճառով, արգոսցի և էգինացի կանայք դեռ իմ ժամանակ էլ կրում էին ավելի երկար զարդամորոցներ, քան առաջներում. իսկ էգինացիների թշնամանքը աթենացիների դեմ սկսել է այնպես, ինչպես ես արդեն պատմեցի: Այժմ, երբ թեբեցիները օգնության համար կանչեցին էգինացիներին, սրանք սիրահոժար օգնեցին թեբեցիներին, հիշելով այդ կռուերի հետ պատահած դեպքերը: Արդ, էգինացիներն սկսում են ամայացնել Ատտիկայի ափերը, և երբ աթենացիները պատրաստվում էին արշավել էգինա, Դելֆիից պատգամ է հասնում, որով խորհուրդ տրվում էր աթենացիներին, ձեռնպահ մնալ էգինացիների հանդեպ, նրանց արշավանքից հետո երեսուն տարի, իսկ երեսունմեկերորդ տարում, Այակոսին սրբարան հաստատելուց հետո, սկսել պատերազմը էգինացիների դեմ, այնժամ նրանց նպատակը կկատարվի. բայց եթե նրանք այժմ դուրս գան արշավանքի, ապա, թեև ի վերջո կհաղթեն, բայց այդ ընթացքում նրանք կունենան շատ անհաջողություններ և հաջողություններ: Այս կանխագուշակումը լսելով, աթենացիները, թեև Այակոսին սրբարան հաստատեցին, որը այժմ էլ կանգնած է շուկայի հրապարակում, բայց չուզեցին անսալ պատգամախոսի պատվերին՝ երեսուն տարի հանդուրժել էգինացիների դաժան թշնամանքը:

90. Երբ աթենացիները պատրաստվում էին արշավելու էգինացիներին պատժելու համար, լակեդեմոնացիները արգելք են հարուցում: Քանզի լակեդեմոնացիները տեղեկանալով, որ Ալկմեոնիդները գաղտնաբար ի՞նչ են ճյուռել Պյութիայի հետ և Պյութիան ի՞նչ է արել իրենց և Պիսիստրատյանների դեմ, ափսոսում են, որ ստիպված են եղել իրենց բարեկամ մարդկանց վտարել երկրից, և զայրույթով են լցվում, որ աթենացիները հետագայում անշնորհակալ գտնվեցին: Բացի այդ, (աթենացիների դեմ) նրանց գրգռում էին նաև (Դելֆյան) պատգամները, որոնք գուշակում էին, թե իրենք աթենացիների ձեռքից մեծ աղետներ պետք է կրեն: Պատգամախոսի այս գուշակություններն նախապես նրանց հայտնի չեն եղել. այդ ամենը նրանք իմացան այն ժամանակ, երբ Կլեոմենեսը դրանք բերեց Սպարտա: Իսկ Կլեոմենեսն այդ գուշակությունները հայտնաբերել էր Աթենքի ակրոպոլիսում: Դրանք նախկինում եղել էին Պիսիստրատյանների ձեռքին, իսկ հետագայում, ակրոպոլիսից վտարվելուց հետո, այդ բոլորը նրանք թողել էին տաճարում, որտեղ էլ դրանք գտել էր Կլեոմենեսը:

91. Երբ լակեդեմոնացիները ստանում են այդ պատգամները և նկատում, որ աթենացիների հզորությունն աճում է և նրանք արդեն չեն ուզում հնազանդվել իրենց. այնժամ հասկանում են, որ ատտիկյան ժողովուրդը ազատ դառնալով, իր հզորությամբ արդեն հավասարվում է իրենց. մինչդեռ տիրանների սիրապետության տակ գտնվելով, նրանք առավել թույլ կլինեն և հնազանդվելու պատրաստակամ: Համոզված լինելով դրանում, սպարտացիները ետ են կանչում Պիսիստրատոսի որդի Հիպպիասին Սիգեյոնից, որտեղ ապաստանում էին Պիսիստրատյանները: Երբ Հիպպիասը ներկայանում է նրանց հրավերին, այնժամ սպարտացիները դեսպաններ են ուղարկում իրենց մյուս դաշնակիցների մոտ, ասելու հետևյալը. «Մեր դաշնակիցներ. ընդունում ենք, որ մենք ճիշտ չվարվեցինք ձեզ հետ: Պատիր պատգամներից դրդված, մենք վտարեցինք իրենց հայրենի քաղաքից մեր լավագույն բարեկամներին, որոնք խոստացել էին Աթենքը պահել հնազանդության մեջ. այնուհետև քաղաքը հանձնեցինք ապերախտ դեմոսին, որը, մեր միջոցով ազատություն ձեռք բերելուց հետո, գլուխ բարձրացրեց, մեզ և մեր թագավորին անարգելով դուրս արեց (քաղաքից), և հիմա ամբարտավանանալով, գոռոզանում է. մի բան, որ լավ են զգում (Աթենքի) հարևանները՝ բեոտիացիները և քաղկիսցիները. իսկ ուրիշներ ևս շուտով կրզգան, որ սխալվել են: Բայց քանի որ մենք սխալ արարքներ ենք կատարել, այժմ պետք է ցանանք ձեր օգնությամբ պատժել նրանց: Այդ պատճառով էլ մենք կանչել ենք այս Հիպպիասին և քաղաքներից (հրավիրել) ձեզ, որպեսզի ընդհանուր որոշմամբ և միացյալ ուժերով նրան ետ տանենք Աթենք և տանք նրան այն, ինչից նրան զրկել ենք»:

92. Լակեդեմոնացիներն այսպես էին ասում, բայց դաշնակիցների մեծ մասը չընդունեց նրանց խոսքերը. մնացածները թեև լռում էին, բայց կորնթացի Սոկլեսը այսպես ասաց. «Ավելի շատ երկինքը կանցնի երկրի տակ, իսկ երկիրը կկախվի երկնի վրա, (ավելի շատ) մարդիկ կբնակվեն ծովում,

իսկ ձկներն այնտեղ, ուր նախկինում՝ մարդիկ, քանզի թե դուք, լակեդեմոնացիներ, քաղաքներում իրավանավասարությունը վերացնելով, կկարողանաք այնտեղ վերականգնել տիրանիան. քանզի աշխարհում չկա դրանից առավել անարդար և առավել արյունապարտ իշխանություն: Եթե դուք իրոք համարում եք, որ օգտակար է, երբ քաղաքներում իշխում են տիրանները, ապա նախ դուք ձեր քաղաքում այդպիսի իշխանություն հաստատեք, որից հետո նոր այն պարտադրեք ուրիշներին: Մինչդեռ այժմ, թեև դուք երբեք չեք կրել տիրանների իշխանությունը և ամեն կերպ աշխատում եք, որ Սպարտայում այդպիսին երբեք չհաստատվի, անարդար եք վերաբերվում ձեր դաշնակիցների հետ: Եթե դուք տիրանիայի հարցում այնպիսի փորձ ունենայիք, ինչպիսին մենք, ապա դուք ավելի լավ խորհուրդ կտայիք, քան այժմ: Իսկ Կորնթոս քաղաքում պետական կառուցվածքը հետևյալն էր: Այնտեղ իշխում էին քշերը[82] և այդ քշերը, որոնք կոչվում էին Բակքիադներ և տնօրինում էին քաղաքում, իրար մեջ էին (աղջիկ) տալիս և առնում: Առ, նրանցից մեկին, Ամփիոնին, ծնվում է կաղ աղջիկ, անունը Լաբդա: Քանի որ Բակքիադներից ոչ մեկը չէր կամեցել ամուսնանալ նրա հետ, ապա նրան կնության է առնում Եթեկրատեսի որդի Էետիոնը Պետրա դեմոսից, որը իր ծագումով լապիթ[83] էր և Կայնեոսի հետնորդը: Նա ոչ այս, ոչ էլ մեկ այլ կնոջից երեխա չէր ունենում. ուստի և մեկնում է Դելֆի, ժառանգի մասին զուշակին հարցնելու: Սրբավայրից ներս մտնելիս, Պյութիան նրան դիմում է հետևյալ խոսքերով.

«Էետիոն. հարգարժան ես թեև, սակայն քեզ չեն հարգում.
Առ Լաբդան կնդիանա ու կծնի կլոր մի ժայռ.
Այն կեզմի իշխաններին և կործի Կորնթոսում»:

Էետիոնին տրված այս պատգամը ինչ-որ ձևով հայտնի դարձավ Բակքիադներին, որոնք դեռ նախապես Կորնթոսում ստացել էին անհասկանալի մի պատգամ, որը հիշեցնում էր Էետիոնին տրված այս պատգամը. այն այսպիսին էր.

«Ժայռերի մեջ արծիվը կնդիանա ու կծնի
Հզոր առյուծ մի հոմակեր, որ բոլորին կչոքացնի:
Այս ամենը լավ իմացիք, Կորնթացիք, որ ապրում եք
Փիրենայում և վեհաշուք Կորնթոսի բարձունքներում»:

Այս պատգամը, որ նախապես տրվել էր Բակքիադներին, մնացել էր անբացատրելի: Այժմ արդեն, Էետիոնին տրված պատգամը լսելուց հետո, հասկացան, թե իրենց տրված նախկին պատգամը համապատասխան է Էետիոնին տրված պատգամին: Այդ հասկանալուց հետո ևս Բակքիադները չեն ուզենում հասկանալ, քանի որ ենթադրում էին, թե կսպանեն Էետիոնի ապագա

երեխային: Եվ ահա, երբ (Էետիոնի) կինը ծննդաբերեց, նրանք անհապաղ յուրայիններից տասը մարդ ուղարկում են այն բնակավայրը, որտեղ ապրում էր Էետիոնը, երեխային սպանելու համար: Նրանք, ժամանելով Պետրա, ներխուժում են Էետիոնի բակը և պահանջում երեխային: Լաբդան անգետ նրանց գալու նպատակին և կարծելով, որ նրանք երեխային պահանջում են նրա նոր հանդեպ տածած բարեկամության սիրուց, բերում է (նորածնին) և հանձնում նրանցից մեկին: Եկողները հանապարհին պայմանավորվել էին, որ իրենցից նա, ով մանկանը առաջինը վերցնի իր ձեռքը, նրան գցի գետին: Բայց երբ Լաբդան երեխային բերում ու հանձնում է, երեխան, կամքն ասածու, ժպտում է: Այնժամ այս առաջինը, նկատելով (երեխայի ժպիտը), խղճահարվում է և հրաժարվում սպանել նրան, և երեխային հանձնում երկրորդին, իսկ սա՝ երրորդին: Այսպիսով, երեխան անցնում է բոլոր այս տասն մարդկանց ձեռքով, բայց ոչ մեկը չի ցանկանում կործանել նրան: Ուստի և երեխային մորը վերադարձնելով, նրանք տնից դուրս են գալիս, բայց կանգ առնելով դռների առաջ, սկսում են իրար մեղադրել: Նրանք հատկապես մեղադրում էին նրան, ով առաջինը վերցրել էր երեխային, այն բանի համար, որ նա չէր կատարել որոշվածը: Ի վերջո, քիչ անց նրանք որոշում են ետ դառնալ և բոլորը հավատեղ մասնակցել սպանության: Սակայն վիճակված էր, որ Կորնթոսը Էետիոնի ընձյուղի պատճառով դժբախտությունների ենթարկվի: Մինչդեռ Լաբդան, դռների ետև կանգնած, այդ ամենը լսել էր: Ուստի և անարթկված, որ այդ մարդիկ կարող են սպանել երեխային, վերցնում է նրան և պահում, իր հագուստի ներքևի մասում՝ մի սնդուկի մեջ: Նա համոզված էր, որ եթե այդ մարդիկ վերադառնան և սկսեն փնտրել, ապա ամեն ինչ կխուզարկեն: Այդպես էլ կատարվեց: Նրանք վերադառնալով, փնտրում են երեխային, բայց չեն գտնում. ուստի և նրանք որոշում են մեկնել և իրենց ուղարկած մարդկանց հայտնել, թե իրենց հանձնարարվածը լիովին կատարել են: Ահա և նրանք վերադառնալով տուն, այդպես էլ պատմում են: Մինչ այդ Էետիոնի որդին մեծանում էր. և քանի որ նա ադեղից փրկվել էր սնդուկի[84] շնորհիվ, ապա նրան կոչեցին Կյուպսելոս: Այր դառնալով, նա գնում է պատգամ հարցնելու, և Դելֆիում ստանում է երկիմաստ պատասխան: Վստահելով այդ պատգամին, Կյուպսելոսը փորձում է վերցնել իշխանությունը՝ Կորնթոսում և նրան այդ բանը հաջողվում է: Իսկ պատգամն այսպիսին էր.

«Երանելի կլինի նա, ով ինքս իմ տունն է մտնում,
Կյուպսելոսը Էետիոնս, արքան չքեզ Կորնթոսի.
Նա և նրա որդիները, բայց ոչ որդվոց որդիները»:

Պատգամն, անա, այսպիսին էր. իսկ Կյուպսելոսը, դառնալով Կորնթոսի տիրանը, կորնթացիներից շատերին արտաքսեց, շատերին ունեզրկեց, առավել շատերին էլ կյանքից զրկեց: Նա երեսուն հինգ տարի իշխելուց հետո, երջանիկ վախճան ունեցավ: Նրա իշխանությունը ժառանգեց որդին, Պերիանդրոսը: Արդ, Պերիանդրոսը սկզբում առավել մեղմ էր հորից. բայց հետագայում, դեսպանների միջոցով Միլետի տիրան Թրասիբուլոսի հետ բանակցելուց հետո, դառնում է առավել արյունարբու, քան Կյուպսելոսը: Այսպես, նա բանբեր ուղարկելով Թրասիբուլոսի մոտ, հարցրել էր, թե ի՞նչ կերպ ինքը կկարողանա առավել ապահով կարգեր հաստատել և քաղաքը լավագույնս կառավարել: Թրասիբուլոսը Պերիանդրոսի կողմից առաքված մարդուն քաղաքից դուրս բերելով, նրա հետ մտնում է ցանած արտ: Արտի միջով քայլելիս, նա անընդհատ հարցնում էր բանբերին՝ Կորնթոսից նրա գալու պատճառների մասին. ընդ որում, մյուսներից ավելի բարձրացած հասկ նկատելիս, նա ամեն անգամ պոկում էր այն և պոկածը դեն նետում, մինչև որ այդպիսով նա ոչնչացնում է արտի ամենալավ և ամենախիտ մասը: Եվ անա, բանբերին ամբողջ դաշտի միջով անցկացնելուց հետո, առանց որևէ պատասխան տալու, նրան ետ է ուղարկում: Երբ բանբերը վերադառնում է Կորնթոս, Պերիանդրոսը ուզում է իմանալ նրանից (Թրասիբուլոսի) խորհուրդը: Բանբերը ասում է, որ ոչ մի ցուցում չի բերել և զարմանում է, որ ինչպե՞ս Պերիանդրոսը կարող էր իրեն ուղարկել խորհուրդ հարցնելու մի մարդուց, որն անմիտ է և ոչնչացնում է իր իսկ ունեցվածքը, և պատմում է այն, ինչ տեսել էր Թրասիբուլոսի մոտ: Բայց Պերիանդրոսը, կռահելով կատարվածի իմաստը, և ենթադրելով, որ Թրասիբուլոսը իրեն խորհուրդ էր տալիս սպանել երևելի քաղաքացիներին, իսկույն ևեթ ամեն տեսակի դաժանություն գործադրում է իր քաղաքացիների հանդեպ: Արդ, բոլոր նրանց, ովքեր խուսափել էին Կյուպսելոսի հալածանքներից և կատարած սպանություններից, այժմ սպանում է Պերիանդրոսը: Այնուհետև հրամայում է իր կնոջ՝ Մելիսսայի պատճառով, մեկ օրում հագուստից մերկացնել Կորնթոսի բոլոր կանանց[85]: Նա ուղարկել էր հրեշտակներ Ակերոն գետի[86] վրա գտնվող Թեսպրոտիա, մեռյալների պատգամատնից հարցնելու ինչ-որ բարեկամի՝ այնտեղ պահ տված հարստության մասին: Բայց Մելիսսայի (ուրվականը) երևալով ասում է, թե ո՛չ խոսքերով, ո՛չ էլ նշաններով ինքը չի կարող հայտնել, թե այդ հարստությունը որտե՞ղ է դրված, քանզի ինքն ամբողջապես մերկ է և սառչում է, քանի որ իր թաղման զգեստներն իր հետ այրած չլինելով, ինքը դրանցից չի կարող օգտվել: Իր խոսքերի ճշմարտության իբրև ապացույց, նա նշեցնում է, որ Պերիանդրոսը հացերը դրել է սառը վառարանում: Երբ բանբերները վերադարձան, այդ մասին հաղորդեցին Պերիանդրոսին,—իսկ նրա համար պատասխանը արժանահավատ էր, քանի որ ինքը կենակցել էր Մելիսսայի հետ, նրա մեռնելուց հետո: Պերիանդրոսը այդ իմանալով, իսկույն մուճեփիկի միջոցով հրամայում է կորնթացի բոլոր կանանց հավաքվել Հերայի տաճարում: Կանայք գալիս են զարդարված իրենց լավագույն զգեստներով, ինչպես տոնի ժամանակ, իսկ Պերիանդրոսը այնտեղ կանգնեցնելով իր նիզակակիրներին, հրամայում է մերկացնել հավասարապես բոլոր կանանց, ազատ թե սպասուհի, իսկ նրանց հագուստները նետելով փոսը, այրում է դրանք, մաղթանք ուղղելով Մելիսսային: Այս անելուց հետո Պերիանդրոսը դարձյալ բանբերներ է ուղարկում պատգամ հարցնելու, և այնժամ Մելիսսայի ուրվականը հայտնում է այն վայրը, որտեղ պահված էր բարեկամի հարստությունը: Այսպիսին է, անա, ով լակեդեմոնացիներ, տիրանիան և այսպիսիք են նրա արարքները: Մենք, կորնթացիներս, այդ ժամանակ էլ զարմացել էինք, իմանալով, թե դուք հրավիրել եք Հիպպիասին, իսկ առավել զարմանում ենք ձեր այս խոսքերի համար: Ուստի և աղաչում ենք ձեզ, հանուն հելլեն աստվածների, քաղաքներում տիրանիայի իշխանություն չհաստատեք: Բայց եթե, այսուհանդերձ, դուք չհրաժարվեք ձեր մտադրությունից և, հակառակ արդարության, վերադարձնեք Հիպպիասին, ապա իմացեք, որ կորնթացիները հավանություն չեն տալիս ձեր արարքին»:

93. Այսպես խոսեց Սոկլեսը, Կորնթոսի դեսպանը: Իսկ Հիպպիասը նույն աստվածներին կոչելով, պատասխանում է նրան, թե կորնթացիները բոլորից առավել փափագելու են Պիսիստրատյանների վերադարձը. քանզի կգա ժամանակ, երբ նրանք դեռ կտուժեն աթենացիներից: Հիպպիասը այդպես պատասխանել կարող էր, քանի որ ոչ ոք այնքան հիշտ տեղյակ չէր տրված պատգամներին, ինչքան նա: Իսկ մյուս դաշնակիցները սկզբում լուռ էին մնում. բայց Սոկլեսի այդպես ազատ խոսելը լսելուց հետո, մեկը մյուսի ետևից խոսք վերցնելով, միանում են կորնթացու կարծիքին և խնդրում լակեդեմոնացիներին չարիք չպատճառել հելլենական քաղաքին:

94. Այս մտադրությունն, անա, այս եղանակով կանխվեց: Երբ Հիպպիասը ստիպված այնտեղից հեռացավ, Ամյունտասը, մակեդոնացիների թագավորը, առաջարկում էր պարգևել նրան Անթեմոսը, իսկ թեսսալացիները՝ Իոլկոսը: Բայց նա, մերժելով այդ ամենը, վերադառնում է Սիգեյոն, որը մի ժամանակ Պիսիստրատոսը իր նիզակով նվաճել էր միտիլենացիներից: Այն նվաճելուց հետո այնտեղ տիրան էր կարգել արգոսուհուց ծնված իր ապօրինի որդի Հեգեսիստրատոսին. բայց սա չկարողացավ առանց կռվի պահել Պիսիստրատոսից ստացածը: Քանզի միտիլենացիները Ակիլլեյոն քաղաքից և աթենացիները Սիգեյոն քաղաքից երկար ժամանակ կռվում էին միմյանց հետ: Միտիլենացիներն այդ երկիրը ետ էին պահանջում, իսկ աթենացիները չէին համաձայնվում, պնդելով, որ էոլիացիներն իլիական երկրի

վրա առավել իրավունքներ չունեն, քան իրենք, աթենացիները կամ մնացյալ հելլեները, որոնք օգնել էին Մենելաոսին վրեժ լուծելու Հեղինեի առեվանգման համար:

95. Պատերազմի ընթացքում իրար հետ կռվելիս, տեղի են ունեցել բազմաթիվ դեպքեր. հիշարժան է, որ բանաստեղծ Ալկայոսը մի հակատամարտից հետո, որում հաղթել էին աթենացիները, փախչելով փրկվում է. իսկ նրա զենքն ընկնում է աթենացիների ձեռքը, որոնք էլ այն կախում են Աթենասի տաճարում՝ Սիգեյոնում: Այս դեպքի մասին Ալկայոսը բանաստեղծություն է գրել և ուղարկել Միտիլենե, իրեն պատահած դժբախտության մասին հաղորդելով իր բարեկամ Մելանիպպոսին: Միտիլենացիներին և աթենացիներին հաշտեցնում է Պերիանդրոսը, Կյուպսելոսի որդին, որին նրանք ընտրել էին հաշտարար: Հաշտության համաձայն, յուրաքանչյուր կողմ պահպանում էր այն, ինչ ունեցել էր:

96. Այսպիսով, Սիգեյոնը մնաց աթենացիներին: Իսկ Հիպպիասը Լակեդեմոնից գալով Ասիա, ամեն միջոց գործադրում է. աթենացիներին ամբաստանում է Արտափրենեսի առաջ և ամեն ինչ անում, որպեսզի Աթենքը ենթարկի իրեն և Դարեհին: Մինչ Հիպպիասն այսպես էր գործում, աթենացիները, լսելով այդ ամենի մասին, հրեշտակներ են ուղարկում Սարդես, համոզելու պարսիկներին՝ չճավատալ աթենացի վտարանդիներին: Իսկ Արտափրենեսը նրանց պատվիրում է, որ եթե իրենք ուզում են ապահով լինել, ապա թող ետ ընդունեն Հիպպիասին: Աթենացիները մերժում են (հրեշտակների) բերած այդ հրամանը. ու քանի որ նրանք չընդունեցին այդ, ապա որոշեցին բացահայտ պատերազմել պարսից հետ:

97. Ճիշտ այդ ժամանակ, երբ թշնամաբար էին տրամադրված պարսից դեմ, Աթենք է գալիս միլետացի Արիստագորասը, որը Սպարտայից վտարվել էր Կլեոմենես Լակեդեմոնացու կողմից: Քանզի Աթենքը, Սպարտայից հետո, մյուս բոլոր քաղաքներից առավել հզորն էր: Հանդես գալով ժողովրդի առաջ, Արիստագորասը ասում է նույն բաները, ինչ (ասել էր) Սպարտայում Ասիայի հզորության և պարսից պատերազմելու եղանակի մասին, թե կռվում նրանք վանան և նիզակ չեն օգտագործում, ուստի և հեշտ է նրանց հաղթելը: Այս ասելուց հետո նա ավելացնում է նաև, թե Միլետն աթենացվոց գաղութն է և թե աթենացիք, որպես առավել հզորներ, պարտավոր են փրկել իրենց: Արիստագորասն ամեն ինչ խոստանալով, այնքան թախանձագին է խնդրում, որ վերջապես նրան հաջողվում է համոզել աթենացիներին: Թվում է, թե ավելի հեշտ է մոլորեցնել շատերին, քան թե մեկին: Նա չէր կարողացել մոլորեցնել լակեդեմոնացի Կլեոմենեսին, բայց երեք բյուր աթենացիների[87] կարողացավ խաբել: Արդ, աթենացիները համոզվում են և որոշում հոնիացիներին օգնելու համար ուղարկել քսան ռազմանավ, հրամանատար կարգելով Մելանթիոսին, որն Աթենքի ամենահարգված քաղաքացիներից էր: Այս ռազմանավերն, անա, դարձան չարիքի սկիզբը թե՛ հելլենների, թե՛ բարբարոսների համար:

98. Արիստագորասը նավով մեկնել էր դեռ նախապես: Ժամանելով Միլետ, նա ընդունում է մի որոշում, որից հոնիացիները ոչ մի օգուտ չէին ունենալու: Ասենք, Արիստագորասը նման նպատակ չուներ, այլ դրանով ուզում էր սոսկ զրգռել Դարեհն արքային: Նա մարդ է ուղարկում Փռյուգիա, պայոնների մոտ, որոնց Մեգաբազոսը, Ստրյումոն գետի մոտ գերեվարելուց հետո, բնակեցրել էր Փռյուգիայում, նրանց համար առանձնացրած մի բնակավայրում: Այդ մարդը, ժամանելով պայոնների մոտ, ասում է նրանց. «Պայոններ. ինձ ուղարկել է Արիստագորասը, Միլետի տիրանը, ձեզ փրկություն առաջարկելու, եթե, անշուշտ, դուք կամենաք հետևել նրա խորհրդին: Ամբողջ Հոնիան այժմ ապստամբել է արքայի դեմ և դուք հնարավորություն ունեք բարեհաջող վերադառնալու ձեր երկիրը: Մինչև ծովափ դուք պետք է հասնեք ինքներդ, իսկ այնուհետև արդեն մենք կհոգանք»: Լսելով այս խոսքերը, պայոնները սիրով համաձայնվում են, և վերցնելով իրենց երեխաներին ու կանանց, փախչում են դեպի ծով: Նրանցից ոմանք, սակայն, վախենում են և մնում այնտեղ: Մովսափ հասնելուց հետո, պայոններն անցնում են Քիոս: Երբ նրանք արդեն Քիոսում էին, նրանց ետեից հասնում է պարսկական մեծաթիվ հեծելազոր, որը կրնկակոխ հալածում էր պայոններին: Բայց նրանց այնտեղ չպատահելով, պարսիկները հրաման են ուղարկում Քիոս, պայոններին, ետ դառնալ. բայց պայոնները հրաժարվում են կատարելու հրամանը: Այնժամ քիոսցիները նրանց տանում են Լեսբոս, իսկ լեսբոսցիները նրանց փոխադրում են Դորիսկոս. այստեղից էլ ցամաքային ճանապարհով նրանք հասնում են Պայոնիա:

99. Արդ, Արիստագորասը, երբ աթենացիները ժամանեցին քսան ռազմանավով, իսկ երեարիացիներն էլ հինգ տրիերայով (սկսեց իր արշավանքը): Երեարիացիներն արշավանքին մասնակցում էին ոչ թե ի հանուս աթենացիների, այլ իրենց իսկ միլետացիների, որոնց ուզում էին վարձահատույց լինել: Քանզի միլետացիները օգնել էին երեարիացիներին՝ քաղկիդացիների դեմ պատերազմելիս, երբ սամոսցիները օգնում էին քաղկիդացիներին՝ երեարիացիների և միլետացիների դեմ: Այժմ, անա, երբ սրանք և մյուս դաշնակիցները ժամանել էին, Արիստագորասը սկսում է իր արշավանքը Սարդես: Իրեք, սակայն, անձամբ չմասնակցեց արշավանքին, այլ մնաց Միլետում, զորքերի հրամանատարությունը հանձնելով ուրիշ միլետացիների՝ իր եղբայր Քարոպինոսին և մեկ այլ քաղաքացու՝ Երմոփանտոսին:

100. Այս նավատորմով հոնիացիները, հասնելով Եփեսոս, նավերը թողնում են եփեսոսյան երկրի Կորեսոսում[88], իսկ իրենք, մեծ զորքով, արշա-

վում են երկրի խորը, ուղեցույց ունենալով եփեսացիներին: Նրանք գնում էին Կաուստրիոս գետի երկայնքով. այնուհետև անցնելով Տմոլոսը, հասնում են Սարդես և այն գրավում անարգել. նրանք վերցնում են ամբողջ քաղաքը, բացի միջնաբերդից. իսկ միջնաբերդը ոչ փիչ զորքով պաշտպանում էր Արտափրենեսը:

101. Վերցնելով քաղաքը, (ճելլենները) այն ավարի չտվեցին հետևյալ պատճառով: Տները Սարդեսում մեծավ մասամբ եղեգնյա էին, իսկ աղյուսաշեն տների կտուրները նույնպես եղեգնյա էին: Ուստի և երբ ինչ-որ մի զինվոր հրդեհում է տներից մեկը, կրակն իսկույն տարածվում է տնից տուն և ընդգրկում ամբողջ քաղաքը: Լյուդիացիները և քաղաքում մնացած բոլոր պարսիկները, ամենուրեք տարածված հրդեհի պատճառով շրջափակված լինելով և քաղաքից դուրս գալու հնարավորություն չունենալով, վազում են շուկա և Պակտոլոս գետը: Պակտոլոսն իր հետ ոսկու ավազ է բերում և, բխելով Տմոլոսից, անցնում է շուկայի միջով և թափվում Հերմոս գետը, իսկ Հերմոսը թափվում է ծով: Անհա այս Պակտոլոսի ափին և՛ շուկայում հավաքված լյուդիացիները, և՛ պարսիկները ստիպված են լինում պաշտպանվել: Այնժամ հոնիացիները, տեսնելով, որ թշնամին մասամբ պաշտպանվում, մասամբ էլ մեծ խմբով հարձակվում է իրենց վրա, անաբեկված նահանջում են դեպի Տմոլոս կոչված լեռը, իսկ այնտեղից, գիշերվա պաշտպանության տակ, գնում են դեպի իրենց նավերը:

102. Այսպիսով, Սարդեսը հրկիզվեց[89]: Քաղաքում հրդեհվեց նաև Կյուբեբե[90] աստվածուհու տաճարը: Այս տաճարի հրկիզման պատրվակով, պարսիկները հետագայում, վրեժ լուծելով, Հելլադայում սրբավայրեր հրդեհեցին: Բայց այդ ժամանակ Հալյուսից այն կողմի նահանգների տերերը, լսելով այդ ամենի մասին, հավաքում են իրենց ուժերը և օգնում լյուդիացիներին: Բայց պարսիկներն արդեն հոնիացիներին չեն հանդիպում Սարդեսում. ուստի և ընկնելով նրանց հետևից, Եփեսոսում հասնում են նրանց: Հոնիացիները դիմադրում են նրանց և ճակատամարտում շարաչար պարտվում: Պարսիկները սպանում են անվանի հոնիացիներից շատերին, որոնց թվում նաև Եվալկիդեսին, երեարիացիների զորահրամանատարին, որը դարձել էր մրցությունների պսակավոր և մեծապես գովերգվել Սիմոնիդես Կեոսցու կողմից: Իսկ ճակատամարտում փրկված հոնիացիները ցրվեցին իրենց քաղաքները:

103. Այդ ժամանակ նրանք այդպես էին կռվել: Հետագայում աթենացիներն ամբողջովին լքում են հոնիացիներին. և երբ Արիստագորասը դեսպանների միջոցով թախանձագին խնդրում էր աթենացիներից՝ օգնել իրեն, նրանք պատասխանում են, որ չեն օգնելու: Այսպիսով, հոնիացիները զրկվում են աթենացիների զինակցությունից, բայց շարունակում են պատերազ-

մը արքայի դեմ, քանի որ նրանց հանցանքը Դարեհի հանդեպ մեծ էր եղել: Նավելով դեպի Հելլեսպոնտոս, նրանք իրենց են ենթարկում Բյուզանդիոնը և այդ երկրի մյուս քաղաքները: Այնուհետև, Հելլեսպոնտոսից դուրս գալով, նրանք իրենց կողմն են գրավում Կարիայի մեծ մասը: Կավնոսը ևս, որը մինչ այդ չէր կամեցել դաշնակցել իրենց հետ, Սարդեսի հրկիզումից հետո հարում է նրանց:

104. Բոլոր կիպրոսցիները հոժարակամ միացան հոնիացիներին, բացի ամաթուսիացիներից: Կիպրոսցիները ևս ապստամբեցին մեդացվոց դեմ հետևյալ կերպ: Կիպրոսում կար ոմն Օնեսիլոս, Սալամիսի[91] Գորգոս թագավորի կրտսեր եղբայրը, Սիրոմոսի որդի Քերսիոսի որդին, Եվելթոնի թոռնորդին: Այս մարդը նախկինում ևս հաճախ համոզում էր Գորգոսին՝ ապստամբել արքայի դեմ: Իսկ այժմ, արդեն լսելով հոնիացիների ապստամբության մասին, առավել ուժգին էր պնդում: Բայց քանի որ չէր կարողացել համոզել Գորգոսին, Օնեսիլոսը դարանակալում է և, երբ Գորգոսը դուրս է գալիս Սալամիս քաղաքից, իր կողմնակիցների հետ նրա ետևից փակում է քաղաքի դարպասները: Այնժամ Գորգոսը, իր քաղաքից զրկված, փախչում է մեդացիների մոտ: Իսկ Օնեսիլոսը, դառնալով Սալամիսի թագավոր, փորձում է բոլոր կիպրոսցիներին ապստամբության մղել: Նրան հաջողվում է համոզել բոլորին, բացի ամաթուսիացիներից, որոնք չէին կամենում լսել նրան. ուստի և նա պաշարում է նրանց քաղաքը:

105. Այժմ, անա, Օնեսիլոսը պաշարում է Ամաթուսը: Իսկ Դարեհ արքային այնժամ հաղորդում են, որ Սարդեսը գրավել են աթենացիները և հոնիացիները և այն հրդեհել, և որ այդ ամենը կատարվել է Արիստագորաս Միլետացու գլխավորությամբ: Պատմում են, թե նա առաջին անգամ այդ մասին լսելով, ոչ մի ուշադրություն չի դարձրել հոնիացիների վրա, լավ իմանալով, որ նրանք իրենց ապստամբության համար անպատիժ չեն մնալու, այլ հարցրել է, թե ովքե՞ր են աթենացիք: Պատասխան ստանալուց հետո նա պահանջել է իր աղեղը, վերցրել այն և, նետը հագցնելով, այն արձակել է վեր, դեպի երկինք: Երբ նետը թռել է օդում, նա ասել է. «Ով Զևս. շնորհիր, որ ես վրեժ լուծեմ աթենացիներից»: Այս ասելուց հետո, նա կարգադրել է իր սպասավորներից մեկին ամեն օր քնքրիքից առաջ երեք անգամ ասել իրեն. «Ով տեր. հիշիր աթենացիներին»:

106. Այս կարգադրությունն անելուց հետո, Դարեհն իր մոտ տեսակցության է հրավիրում Հիստիայոս Միլետացուն, որին արդեն երկար ժամանակ է, ինչ պահում էր իր մոտ, և ասում. «Լսել եմ, Հիստիայոս, որ քո փոխանորդը, որին դու հանձնել էիր Միլետը, ապստամբել է իմ դեմ: Նա զորք է բերել մեկ այլ մայր ցամաքից, նրանց հետ նաև հոնիացիների, որոնք դեռ ինձ պատասխան կտան իրենց արարքների համար, և նրանց համոզելով հետևել

իրեն, արշավել է և ինձ զրկել Սարդեսից: Այժմ ի՞նչ. այս ամենը ինչ լա՞վ է թվում: Այս ամենը ինչպե՞ս կարող էին կատարվել առանց քո խորհուրդների: Տես, որ հետագայում ինքդ քեզ չմեղադրես»: Նրան Հիստիայոսը այսպես է պատասխանում. «Ով արքա. այդ ի՞նչ խոսք ասացիր. մի՞թե ես կարող եմ քո դեմ դավ նյութել, որից քեզ համար կծագեն մեծ կամ փոքր դժբախտություններ: Ես ի՞նչ նպատակով պետք է այդպես վարվեի. ինչի՞ կարիք ունեմ: Քո ամբողջ ունեցածը իմն է և ես արժանացել եմ լսելու քո խորհուրդները: Բայց եթե իմ փոխանորդն իսկապես նման արարք է կատարել, ինչպես դու ասացիր, ապա իմացիր, որ նա այդ ամենը կատարում է իր նախաձեռնությամբ: Ես, իհարկե, չեմ կարող հավատալ, որ միլետացիները և իմ փոխանորդն ապստամբել են քո տերության դեմ: Բայց եթե նրանք իրականում այդպիսի արարք են կատարել և քո լսածը, ով արքա, ճշմարիտ է, ապա հասկացիր, թե ինչպիսի սխալ ես գործել՝ ինձ հեռացնելով ծովից: Թվում է, թե հոնիացիները, օգտվելով այն բանից, որ ես նրանց աչքից հեռացվեցի, կատարել են այն, ինչին նրանք վաղուց ձգտում էին: Եթե ես Հոնիայում մնայի, ապա ոչ մի քաղաք չէր ապստամբի: Ուստի այժմ թույլ տուր ինձ շտապ մեկնել Հոնիա, որպեսզի վերահաստատեմ նախկին վիճակը և Միլետի այդ փոխանորդին, որը նյութել է այդ ամենը, հանձնեմ քո ձեռքը: Եվ եթե ես այս ամենը կատարեմ քո կամքի համաձայն, ապա երդվում եմ քո թագավորական ասողածներով, որ ես իմ վրայից չեմ հանի այն խիտոնը, որով կմեկնեմ Հոնիա, մինչև քեզ հարկատու չդարձնեմ Սարդո[92] խոշոր կղզին»:

107. Հիստիայոսն այս խոսքերով ուզում էր խաբել. իսկ Դարեհը, վստահելով, թույլ է տալիս նրան մեկնել, միաժամանակ պատվիրում, որ իր տված խոստումները կատարելուց հետո, վերադառնա Սուսա:

108. Մինչդեռ Սարդեսի (գրավման) մասին լուրը հասել էր արքային և Դարեհը ազեղի հետ այդպես վարվելուց հետո զրույց էր ունեցել և Հիստիայոսի հետ, իսկ Հիստիայոսը Դարեհի թույլտվությամբ մեկնել էր ծովափ, այդ ժամանակամիջոցում անա թե ինչ կատարվեց: Մինչ սալամիսցի Օնեսիլոսը պաշարում էր ամաթուսցիներին, նրան հայտնում են, թե պարսիկ Արտայուքիոսի գլխավորությամբ մի մեծ զորաբանակ նավերով մոտենում է Կիպրոսին: Լսելով այդ մասին, Օնեսիլոսը դեսպաններ է ուղարկում Հոնիա, խնդրելով նրանց օգնությունը, իսկ հոնիացիները, առանց երկար մտածելու, ժամանում են մեծ զորքով: Այսպիսով, հոնիացիները գալիս են Կիպրոս, իսկ պարսիկները, նավերով Կիլիկիայից (Կիպրոս) անցնելուց հետո, հետոն գալիս են Սալամիս: (Նույն այդ ժամանակ) փյունիկեցիների նավերը շրջանցում են «Կիպրոսի բանալիներ» կոչված հրվանդանը:

109. Դեպքերի նման ընթացքի պատճառով, Կիպրոսի տիրակալները, հրա-

վիրելով հոնիացիների զորահրամանատարներին, ասում են նրանց. «Հոնիացի այրեր. մենք, կիպրոսցիներս, տալիս ենք ձեզ ընտրության իրավունք՝ հարձակվելու ում վրա կուզենաք՝ պարսիկների՞, թե՞ փյունիկեցիների: Քանզի եթե դուք որոշեք հարձակվել հետևակ պարսիկների վրա, ապա դուք այժմ պետք է դուրս գաք նավերից և պատրաստվեք հետիոտն մարտի, իսկ մենք կբարձրանանք ձեր նավերը՝ փյունիկեցիների դեմ կռվելու համար: Իսկ եթե դուք նախընտրում եք չափվել փյունիկեցիների հետ, թող այդպես լինի: Բայց ինչ էլ որոշեք, ամեն դեպքում դուք պետք է հնարավոր ամեն ինչ անեք, որպեսզի Հոնիան և Կիպրոսը լինեն ազատ»: Հոնիացիները նրանց պատասխանում են այսպես. «Հոնիական միությունը մեզ ուղարկել է ծովը պահպանելու համար, և ոչ թե մեր նավերը կիպրոսցիներին հանձնելով, (ցամաքի վրա) պարսիկների հետ հետիոտն կռվելու: Ուստի և մենք կաշխատենք օգտակար լինել այն գործում, որի համար մեզ ուղարկել են: Իսկ ձեզ մնում է, հիշելով ձեր կրած տառապանքները մեդացվոց տիրապետության տակ, արիաբար կռվել»:

110. Հոնիացիներն այս խոսքերով են պատասխանել: Այնուհետև, երբ արդեն պարսիկները հասել էին Սալամիսի դաշտը, կիպրոսցիների թագավորները բոլոր կիպրոսցիներին դասավորում են մյուս զորքերի դեմ, մինչդեռ սալամիսցիների և սոլեցիների ընտրանին դասավորվեց պարսից դեմ: Իսկ պարսից զորապետ Արտայուքիոսի դեմ կամովին հանդես է գալիս Օնեսիլոսը:

111. Արտայուքիոսը նեծել էր այնպիսի ձի, որը սովոր էր ծառս լինել հոպլիտի առաջ: Օնեսիլոսը գիտեր այդ. ուստի և զինակրին, որը ծնունդով կարիացի էր և պատերազմական գործին հմուտ ու քաջ ռազմիկ, ասում է. «Ես իմացել եմ, որ Արտայուքիոսի ձին ծառս է լինում, կծում է և ոտքով հարվածում մոտեցողին: Այժմ դու մտածիր և շուտ ասա ինձ. ո՞ւմ կուզենայիր դարանակալել և հարվածել. ձիո՞ւն, թե՞ իրեն՝ Արտայուքիոսին»: Սպասավորը պատասխանում է նրան. «Ով թագավոր. ես պատրաստ եմ կատարելու և՛ մեկը, և՛ մյուսը, ինչպես նաև այն ամենը, ինչ դու հրամայես: Բայց ես կասեմ քեզ այն, ինչը, իմ կարծիքով, առավել պատշաճ է քո դիրքին: Թագավորը և զորապետը, ասում եմ, վայել է, որ դիմագրավի թագավորին և զորապետին: Քանզի եթե դու զգետնես զորապետի, մեծ համբավ կունենաս. իսկ եթե, քավ լիցի, նա քեզ զգետնի, ապա դու խոցված կլինես քեզ արժանի մարդու կողմից և այդ կիսով չափ ապետ է: Մինչդեռ մեզ, ծառաներիս, վայել է կռվել մյուս ծառաների և այդ ձիու դեմ: Ձիու արարքից դու մի վախեցիր. ես խոստանում եմ, որ այդ ձին այսուհետև երբեք ծառս չի լինի որևէ մեկի դեմ»:

112. Այսպես ասաց, որից հետո կողմերի միջև սկսվեց նավերի և ցա-

մաքային կռիվը: Այդ օրը նավերի վրա մեծ արիություն ցուցաբերելով, ճոնիացիները հաղթում են փյունիկեցիներին. նրանց մեջ առանձնապես գերազանց էին սամոսցիները: Իսկ ցամաքում, երկու բանակները հանդիպելով, նեռվում են իրար վրա. իսկ ինչ վերաբերում է երկու զորապետներին, ապա նրանց հետ հետևյալը կատարվեց: Երբ Արտյուբիոսը իր ձին հեծած, փշեց Օնեսիլոսի վրա, Օնեսիլոսը, ինչպես պայմանավորվել էր զինակրի հետ, հարվածեց իրեն՝ Արտյուբիոսին: Իսկ երբ ձին իր սմբակներով հարվածեց Օնեսիլոսի վահանին, այնժամ կարիացին իր մանգաղի հարվածով կտրեց ձիու ոտքերը:

113. Այսպիսով, պարսից զորապետ Արտյուբիոսն այստեղ ընկավ իր ձիու հետ: Մինչդեռ երբ մյուսները դեռևս կռվում էին, Կուրիոնի տիրան Ստեսենորն իր ոչ փոքրաթիվ մարդկանց հետ դավաճանում է: Ինչպես պատմում են, այս կուրիոնցիները եղել են արգոսյան գաղութաբնակներ: Կուրիոնցիների դավաճանությունից հետո նույն ձևով են վարվում նաև սալամիսցիների ռազմակառքերը: Այնժամ պարսիկները հաղթում են կիպրոսցիներին: Փախուստի մատնված (կիպրոսցի) այրերից շատերն ընկան, որոնց թվում նաև Քերսիոսի որդի Օնեսիլոսը, որը կազմակերպել էր կիպրոսցիների ապստամբությունը: Ընկավ նաև Սոլիի թագավոր Արիստոկիպրոսը, Փիլոկիպրոսի որդին, որին Սոլոն Աթենացին, երբ այցելել էր Կիպրոս, իր բանաստեղծության մեջ ներբողել էր բոլոր տիրակալներից առավել:

114. Իսկ ամաթուսցիները, կտրելով Օնեսիլոսի գլուխը, քանի որ նա պաշարել էր իրենց քաղաքը, այն բերում են Ամաթուս և կախում քաղաքի դարպասների վրա: Կախված կտրուփի խոռոչի մեջ բույն է դնում մեղուների պարս և այն լցնում մեղրախորիսխով: Այս դեպքից հետո ամաթուսցիները այդ մասին դիմում են պատգամախոսին. պատասխան պատգամը պատվիրում էր նրանց՝ գլուխը ցած առնել և թաղել, իսկ Օնեսիլոսի պատվին մատուցել ամենամյա զոհեր, որպես հերոսի. այդ անելով նրանք բարություն կհասնեն:

115. Ամաթուսցիներն այդպես արեցին. նրանք այդ անում էին նաև իմ ժամանակ: Իսկ ճոնիացիները, որոնք իրենց նավերով պատերազմում էին Կիպրոսում, տեղեկանալով, որ Օնեսիլոսը պարտվել է և Կիպրոսի բոլոր քաղաքները պաշարված են, բացի Սալամիսից, որը սալամիսցիները հանձնել են իրենց նախկին թագավոր Գորգոսին, անա այս ամենի մասին տեղեկանալով, ճոնիացիներն իսկույն նավերով մեկնում են Հոնիա: Իսկ Կիպրոսի բոլոր քաղաքներից առավել երկար դիմացավ պաշարված Սոլի քաղաքը, որը պարսիկները կարողացան նվաճել միայն ճիճգերորդ ամսում, պարիսպների շուրջ ականներ փորելուց հետո:

116. Այսպիսով, կիպրոսցիները մեկ տարի ազատ մնալուց հետո, դարձյալ ստրկացվեցին: Դավրիսեսը, որն ամուսնացած էր Դարեհի դստեր հետ, և Հյումայեսը և Օտանեսը, որոնք պարսից մյուս զորապետներն էին և նույնպես ամուսնացած էին Դարեհի դստերերի հետ, հետապնդում են Սարդես արքայի ճոնիացիներին և կռվում հաղթելով նրանց, ստիպում բարձրանալ նավերը. դրանից հետո նրանք բաժանվելով, սկսում են նվաճել քաղաքները:

117. Դավրիսեսը, ուղղվելով դեպի Հելլեսպոնտոսի քաղաքները, գրավում է Դարդանոսը. այնուհետև գրավում է Աբյդոսը և Պերկոտեն և Լամպսակոսը և Պայսոսը. այս քաղաքներից յուրաքանչյուրը նա գրավում է մեկական օրում: Պայսոսից Պարիոն քաղաք ուղևորվելու ճանապարհին նա լուր է ստանում, որ կարիացիները հարել են ճոնիացիներին և նույնպես ապրստամբել պարսիկների դեմ: Ուստի և նա դառնալով Հելլեսպոնտոսից, նա իր զորքը շարժում է Կարիայի վրա:

118. Թվում է, թե կարիացիներն այդ մասին իմացել էին ավելի շուտ, քան այնտեղ կժամաներ Դավրիսեսը: Լսելով այդ մասին, կարիացիներն սկսում են հավաքվել Սպիտակ սյուներ կոչված վայրում, Մարսիաս գետի մոտ, որը հոսելով Իդրիաս երկրի միջով, թափվում է Մեանդրոս գետը: Հավաքվելով այնտեղ, կարիացիները խորհրդակցում են. հայտնվում են բազում այլ կարծիքներ. ինձ թվում է, թե ամենալավ խորհուրդը տվել է Մավսոլոսի որդի Պիկսոդարոսը Կինդիայից, որն ամուսնացել էր կիլիկեցիների Սյուենեսիս թագավորի դստեր հետ: Նա առաջարկել է, որ կարիացիներն անցնեն Մեանդրոսը և կռվեն, գետը ունենալով իրենց թիկունքին: Այս դեպքում կարիացիները ետ փախչելու հնարավորություն չունենալով, ստիպված կլինեին մնալ այնտեղ և բնականից ավելի մեծ քաջություն կցուցաբերեին: Սակայն այս առաջարկը չի ընդունվել, այլ այն, որ Մեանդրոսը մնա ոչ թե կարիացիների, այլ պարսիկների թիկունքում: Դրա նպատակն այն էր, որ եթե պարսիկները պարտվեն և փախուստի դիմեն, ապա նրանք չեն կարող փրկվել, այլ կլցվեն գետը:

119. Քիչ հետո, երբ պարսիկները մոտենալով Մեանդրոս գետին, անցան այն, Մարսիաս գետի մոտ տեղի ունեցավ ուժեղ հակառամարտ պարսիկների և կարիացիների միջև, որը երկար տևեց: Ի վերջո կարիացիները պարտվեցին մեծաթիվ թշնամուց: Պարսիկներից ընկավ երկու հազար մարդ, իսկ կարիացիներից՝ մեկ բյուր: Այստեղից փրկվածները ապաստանում են Լաբրաունդայում, Զևս Ստրատիոսի[93] սրբավայրում, որը սոսիների մեծ և սրբազան պուրակ էր: Ինչքան մեզ հայտնի է, միայն կարիացիներն են զոհ մատուցում Զևս Ստրատիոսին: Ապաստանելով այստեղ, նրանք խորհրդակցում են, թե ինչպե՞ս կարող են փրկվել. հանձնվելով պարսիկների՞ն, թե՞ ամբողջապես հեռանալով Ասիայից:

120. Մինչ նրանք խորհրդակցում էին, օգնության են հասնում միլետա-

ցիները և նրանց մյուս դաշնակիցները: Այնժամ կարիացիները հրաժարվում են իրենց նախկին որոշումից և դարձյալ սկսում պատրաստվել պատերազմելու: Եվ երբ պարսիկները հարձակվեցին նրանց վրա, կարիացիներն ավելի կատաղի կռվեցին, բայց դարձյալ պարտվեցին: Ամբողջ զորից շատերն ընկան, բայց առանձնապես տուժեցին միլետացիները:

121. Այս հարվածից հետո կարիացիները նորից ոտքի կանգնեցին և նույնիսկ մեղմեցին իրենց պարտությունը: Տեղեկանալով, որ պարսիկներն արշավել են կարիական քաղաքների վրա, նրանք դարանակալում են Պեդասա տանող ճանապարհին. պարսիկները գիշեր ժամանակ ընկնելով այդ դարանը, ոչնչացվում են և՛ իրենք, և՛ իրենց զորագլուխներ Դավրիսեսը, Ամորգեսը ու Սիսիմակեսը. սրանց հետ սպանվում է նաև Գյուգեսի որդի Մյուրսոսը: Դարանակալածների հրամանատարն էր Իքանոլլիոսի որդի Հերակլեյդեսը Մյուլասսա քաղաքից:

122. Պարսից զորքի այս մասն այդպես կործանվեց: Իսկ Հյումայեսը, որը Սարդեսի վրա արշաված հոնիացիներին հետապնդողներից մեկն էր, քայլում է դեպի Պրոպոնտիս և գրավում մյուսիական Կիոս քաղաքը: Այն գրավելուց հետո, երբ տեղեկանում է, թե Դավրիսեսը լքել է Հելլեսպոնտոսը և արշավել Կարիա, Հյումայեսը, լքելով Պրոպոնտիսը, իր զորքը առաջնորդում է Հելլեսպոնտոսի դեմ և նվաճում Իլիոնի երկրում բնակվող բոլոր էոլիացիներին. նվաճում է նաև գերգիթներին, որոնք ճին տակրերի մնացորդներն էին: Սակայն ինքը, Հյումայեսը, այս նվաճումների ընթացքում ճիվաղանում է և մեռնում Տրովադայում:

123. Նա այսպիսի վախճան ունեցավ: Իսկ Արտափրեներսը, Սարդեսի հյուպարքոսը, և Օտանեսը, երրորդ զորապետը, հրամաց են ստանում արշավել Հոնիայի և հարևան էոլիսի վրա: Այսպիսով, նրանք Հոնիայում գրավում են Կլազոմենեն, իսկ էոլիսում՝ Կյումեն:

124. Մինչ այս քաղաքները նվաճվում էին, Արիստագորաս Միլետացին իրեն բացանայտում է որպես ոչ քաջարի մարդու: Նա, ով խռովել էր Հոնիան և մեծ ապստամբության մղել, այժմ տեսնելով կատարվածը, որոշում է փախչել: Բացի այդ, նրա համար պարզ էր դարձել, որ անկարելի է հաղթել Դարեհին: Այդ պատճառով էլ նա խորհրդի է հրավիրում իր կողմնակից ապստամբներին և ասում, որ լավ կլիներ, եթե իրենք որևէ ապաստարան ունենային այն դեպքի համար, եթե իրենց դուրս անեն Միլետից: Ուստի և նա հարցնում է, թե չե՞ն փափագում արդյոք, որ իրենց դուրս բերի Սարդո կղզու որևէ գաղութ, կամ առաջնորդի էոլոնների երկրի Մյուրկինոս (քաղաքը), որը պարսպել է Հիստիայոսը, այն ստանալով Դարեհից որպես պարգև: Անա նրանց այսպիսի հարց ավեց Արիստագորասը:

125. Մինչդեռ Հեգեսանդրոսի որդի Հեկատեոսը, լոգոգրաֆը, խորհուրդ

էր տալիս (գաղութարարներ) չուղարկել այդ երկու վայրերից և ոչ մեկը, այլ բերդ կառուցել Լերոս կղզում և, Միլետից դուրս քշվելու պարագայում, այնտեղ ճանգիստ ապրել. իսկ հետագայում հնարավոր կլիներ դարձյալ վերադառնալ Միլետ:

126. Այսպիսին էր Հեկատեոսի խորհուրդը. իսկ ինքը՝ Արիստագորասը գերադաս է համարում Մյուրկինոս մեկնելու տեսակետը: Ուստի և Միլետը նա հանձնում է հեղինակավոր քաղաքացի Պյուրագորասին, իսկ ինքը, իր հետ վերցնելով բոլոր ցանկացողներին, նավում է Թրակիա և գրավում այն երկիրը, որտեղ ուղևորվել էր: Այստեղից թրակացիների վրա կատարած իր արշավանքներից մեկի ժամանակ ինքը՝ Արիստագորասը, իր զորքի հետ, դավադրաբար կործանվում է, երբ թրակական մի քաղաք պաշարելիս, նա թույլ է տալիս, որ թրակացիներն ազատորեն դուրս գան քաղաքից:

ԳԻՐՔ ՎԵՑԵՐՈՐԴ

ԷՐԱՏՈ

1. Այսպիսին էր Հոնիայում ապստամբություն բարձրացրած Արիստագորասի վախճանը: Իսկ Հիստիայոսը, Միլետի տիրանը, ազատ արձակվելով Դարեհի կողմից, գալիս է Սարդես: Սուսայից նրա գալուց հետո, Արտափրենեսը՝ Սարդեսի հյուպարքոսը, հարցնում է նրան, թե ինչո՞ւ, նրա կարծիքով, հոնիացիները ապստամբեցին: Հիստիայոսը պատասխանում է, թե այդ մասին ոչինչ չգիտի և զարմանում է, թե, իբր, ինչպե՞ս է պատահել, որ ինքն անտեղյակ է մնացել կատարված դեպքերին: Իսկ Արտափրենեսը տեսնելով, որ նա խորամանկում է, քանզի լավ գիտեր ապստամբության իրական պատճառը, ասում է. «Բանը, Հիստիայոս, այսպես է եղել. այս կոշիկը կարեցիր դու, բայց այն հագավ Արիստագորասը»:

2. Այսպես ասաց Արտափրենեսը ապստամբության մասին: Իսկ Հիստիայոսը անաբեկված, որ Արտափրենեսին արդեն ամեն ինչ հայտնի է դարձել, առաջին իսկ գիշերը փախչում է ծով, խաբելով Դարեհ արքային: Հիստիայոսը խոստացել էր Սարդո խոշորագույն կղզին ենթարկել (արքային), մինչդեռ այժմ ձգտում էր դառնալ Դարեհի դեմ ապստամբած հոնիացիների առաջնորդը: Երբ նա անցավ Քիոս, քիոսցիները նրան կալանեցին, կասկածելով, որ Դարեհի հանձնարարությամբ նա եկել էր իրենց վնասելու: Հետագայում քիոսցիները հասկանալով, որ նա արքայի բշնամին է, ազատ արձակեցին նրան:

3. Այնժամ հոնիացիները հարցրին Հիստիայոսին, թե ինչո՞ւ նա այդպես համառորեն համոզում էր Արիստագորասին՝ ապստամբել արքայի դեմ և դրանով այդքան մեծ չարիք հարուցեց հոնիացիների համար: Բայց նա չհայտնեց նրանց դրա իսկական պատճառը, այլ ասաց, թե Դարեհ արքան որոշել է փյունիկեցիներին դուրս բերել (իրենց երկրից) և բնակեցնել Հոնիայում, իսկ հոնիացիներին՝ Փյունիկիայում[1]: Անա այս պատճառով, իբր, ինքը հոնիացիներին մղել է ապստամբության: Թեև արքան այդպիսի բան չէր որոշել, բայց Հիստիայոսը այդպիսով ուզում էր անաբեկել հոնիացիներին:

4. Այնուհետև Հիստիայոսը, որպես բանբեր օգտագործելով Հերմիպպոսին Առատոնեսից, Սարդեսում գտնվող պարսիկներին ուղղված թղթեր է ուղարկում, որոնց հետ նախապես պայմանավորվել էր ապստամբության մասին[2]: Սակայն Հերմիպպոսը թղթերը հանձնում է ոչ նրանց, ում դրանք ուղղված էին, այլ տանում և հանձնում է Արտափրենեսին: Եվ Արտափրենեսը, տեղեկանալով այդ ամենի մասին, պատվիրում է Հերմիպպոսին՝ իր բերած թղթերը տալ նրանց, ում դրանք ուղղված էին, իսկ պարսից ուղարկելիք պատասխանները բերել և հանձնել իրեն՝ Հիստիայոսին: Այս ամենը բացահայտելուց հետո Արտափրենեսը մեծ թվով պարսիկների մահվան ենթարկեց:

5. Այսպիսով, Սարդեսում խռովություն սկսվեց: Քանի որ Հիստիայոսի հույսերը ապստամբության մասին չարդարացան, նրա խնդրանքով քիոսցիները նրան նա բերեցին Միլետ: Սակայն միլետացիները, ուրախացած այն բանի համար, որ ձերբազատվել էին Արիստագորասից, բոլորովին էլ չէին ցանկանում իրենց երկրում ընդունել մեկ այլ տիրանի, քանի որ արդեն հաշակել էին ազատության (բարիքը)[3]: Երբ, անա, Հիստիայոսը փորձեց գիշեր ժամանակ բռնությամբ մտնել Միլետ, ոմն միլետացի նրան խոցեց ազդրից: Այսպիսով, իր երկրից վտարվելուց հետո նա վերադառնում է Քիոս: Քանի որ նրան չհաջողվեց համոզել քիոսցիներին՝ իրեն ռազմանավեր տրամադրել, նա անցավ Միտիլենե և համոզեց լեսբոսցիներին՝ իրեն ռազմանավեր տրամադրել: Նրանք ութ տրիերա հանդերձելով, Հիստիայոսի հետ նավում են Բյուզանդիոն: Այստեղ ամրանալով, նրանք բռնագրավում էին Պոնտոսից եկող բոլոր նավերը, բացի նրանցից, ովքեր հայտարարում էին, թե պատրաստ են հնազանդվելու Հիստիայոսին:

6. Այսպես էին գործում Հիստիայոսը և միլետացիները: Իսկ Միլետի դեմ պատրաստվում էր (պարսկական) մեծ զորք և նավատորմ: Պարսից զորահրամանատարներն իրենց զորքերը միացնելով, արշավում էին Միլետի վրա, քանի որ մնացած քաղաքների մասին պակաս էին մտահոգված: (Պարսից) նավատորմում լավագույններ փյունիկեցիներն էին. արշավանքին մասնակցում էին նաև նոր նվաճված կիպրոսցիները, ինչպես նաև կիլիկեցիները և եգիպտացիները:

7. Պարսիկներն, անա, արշավում էին Միլետի և մնացած Հոնիայի վրա: Այդ լսելով, հոնիացիներն իրենց պատգամավորներին են ուղարկում Պանիոնիոն[4]: Այնտեղ ժամանելով, խորհրդակցողները որոշում են ոչ մի ընդհանուր հետևակ զորք չգումարել՝ պարսիկներին դիմադրելու համար. միլետացիները պետք է իրենք պաշտպանեին իրենց պարիսպները: Միաժամանակ, սակայն, (որոշում են) հանդերձել նավատորմ, ի մի հավաքել բոլոր ռազմանավերը, առանց բացառության, և ամենաշտապ կերպով դրանք գու-

մարել էադայում՝ Միլետի պաշտպանության համար: Լադան փոքր կղզի է, որը գտնվում է Միլետի մոտ:

8. Այնուհետև իրենց հանդերձած նավերով ժամանեցին հոնիացիները, նրանց հետ նաև Լեսբոսում բնակվող էոլիացիները: Նրանք դասավորվեցին հետևյալ կերպ: Առաջյան թևը զբաղեցրին իրենք՝ միլետացիները, որոնք տրամադրել էին ութսուն նավ: Նրանց կողքին կանգնած էին պրիենացիները՝ տասներկու նավով և Միուսի բնակիչները՝ երեք նավով: Միուսցիներին հաջորդում էին տեոսցիները՝ տասնյոթ նավով. տեոսցիներից հետո դասվել էին ֆիոսցիները՝ հարյուր նավով: Նրանցից հետո դասվել էին էրիթրեյցիները և փոկայացիները: Էրիթրեյցիները ավել էին ութ նավ, իսկ փոկայացիները՝ երեք: Փոկայացիներից հետո դասվել էին սամոսցիները՝ յոթանասուն նավով: Ամենից վերջում արևմտյան թևում դասվել էին լեսբոսցիները՝ վաթսուն նավով: Այս բոլորի ընդհանուր թիվը կազմեց երեք հարյուր հիսուն երեք տրիերա:

9. Սրանք հոնիացիների նավերն էին. իսկ բարբարոսների նավերի թիվը վեց հարյուր էր: Երբ այս նավերը, ինչպես և ամբողջ հետևակը, հասան Միլետյան երկիր, այնժամ պարսիկ զորավարները, տեսնելով հոնիացիների նավերի քանակը, վախեցան, թե չեն կարողանա հաղթահարել նրանց. ուստի որոշեցին, որ եթե ծովի վրա գերակշռություն չունենան, չեն կարողանա գրավել Միլետը, ընդ որում նրանք կարող էին իրենց վրա հրավիրել Դարեհի զայրույթը: Այսպես մտածելով, նրանք խորհրդի հրավիրեցին հոնիական տիրակալներին. վերջիններս, Արիստագորասի կողմից իշխանությունից վտարված լինելով, փախել էին պարսից մոտ և այժմ մասնակցում էին Միլետի դեմ արշավանքին[5]: Սակայն նրանցից այնտեղ ներկա գտնվողներին կանչելով, այսպես ասացին. «Հոնիացիներ. այժմ բոլոր ձեզանից յուրաքանչյուրն իր բարյացակամությունը ցուցաբերի արքայական տան հանդեպ. ձեզանից ամեն մեկը թող փորձի իր համախոհացիներին անջատել մնացյալ դաշնակիցներից: Այս հաղորդեք նրանց և խոստացեք, որ նրանք ոչ մի պատիժ չեն կրի իրենց ապստամբության համար. մենք չենք հրկիզի ո՛չ նրանց տաճարները, ո՛չ նրանց անձնական ունեցվածքը, և նրանց հանդեպ (պարսիկները) ավելի բարեհաճ կլինենք, քան առաջ: Բայց եթե նրանք այդպես չվարվեն, այլ, այնուամենայնիվ, շարունակեն պատերազմել, ապա ապառնացեք նրանց, ասելով, թե ինչ է նրանց սպասում. քանզի պարտության դեպքում նրանք սարսափության կմատնվեն, նրանց որդիներին մենք կամորձատենք, դուստրերին կտանենք Բակտրիա, իսկ նրանց երկիրը կհանձնենք ուրիշներին»:

10. Այսպես ասացին (պարսից զորավարները). իսկ Հոնիայի տիրակալները գիշերով իրենց լրտեսներին ուղարկեցին յուրայիններին մոտ այդ ամենը հաղորդելու: Բայց այն հոնիացիները, որոնց ուղղված էին այդ պայմանները, անմտորեն համառեցին և հրաժարվեցին դավանանել, կարծելով, թե պարսիկներն այդ առաջարկությունները անում էին միայն իրենց:

11. Այս կատարվեց պարսիկների Միլետ ժամանելուց անմիջապես հետո: Այնուհետև հոնիացիները ժողով գումարեցին էադայում, որի ընթացքում, ուրիշների թվում, ելույթ ունեցավ նաև փոկայացի զորավար Դիոնիսիոսը և այսպես ասաց. «Մեր գործերը, ով հոնիացիներ, գտնվում են դալկի սուր ծայրին. մենք կլինենք կամ ազատ, կամ ստրուկ և դրան ավելացրած, նաև փախստականներ: Հետևաբար, եթե դուք որոշեք զրկանքների ենթարկվել, ապա այժմ ձեզ համար, անշուշտ, ծանր կլինի: Բայց դուք կնաղթեք թշնամուն ու կլինեք ազատ: Իսկ եթե դուք դրսևորեք թուլություն և անկարգություն, ապա ես ոչ մի հույս չունեմ, որ դուք կկարողանաք խուսափել (պարսից) արքայի դատաստանից, ձեր ապստամբած լինելու պատճառով: Արդ, լսեք իմ խորհուրդը և վստահեք ինձ: Եթե աստվածները արդար գտնվեն, ես խոստանում եմ ձեզ, որ թշնամին չի համարձակվելու պատերազմել մեր դեմ. իսկ եթե հարձակվի, ապա ծանր պարտություն կկրի»:

12. Այս լսելով, հոնիացիները իրենց վստահեցին Դիոնիսիոսին: Իսկ սա ամեն անգամ իր նավերը ծով դուրս բերելով, դասավորում էր մի գծի վրա և նավերից մեկին ստիպում թիավարելով անցնել մյուս նավերի միջով[6]: Ընդ որում, նա ռազմիկներին նավերի վրա կանգնեցնում էր լիազեն: Օրվա մնացած մասը նավերը նա կանգնեցնում էր խարսխի վրա, իսկ հոնիացիներին ստիպում օրն ի բուն տխել: Յոթ օր շարունակ հոնիացիները ենթազանդվում էին և կատարում հրամայվածը. բայց հետևյալ օրը հոնիացիները, ուժասպառ տանջալից աշխատանքից և արևի տապից, իրար մեջ այսպես ասացին. «Աստվածներից ո՞ր մեկին ենք մեք անարգել, որ այսպիսի տանջանքներ ենք կրում: Մենք լիովին հիմարացել ենք ու խելագարկվել, մեզ հանձնելով այս մեծախոս փոկայացուն, որն ընդամենը երեք նավ է տրամադրել: Նա, ստանձնելով մեր (հրամանատարությունը), մեզ ենթարկում է անլուր տանջանքների. և ահա, մեզանից շատերն արդեն հիվանդացել են, իսկ շատերին նույն վիճակն է սպասում: Այսքան տանջանքների փոխարեն, գերադասելի է ամեն մի փորձություն. ավելի լավ է նույնիսկ ապագա ստրկությունը, ինչքան էլ այն ծանր լինի, քան այս տանջանքների շարունակվելը: Եկեք, հետ այսու չենթարկվենք նրան»: Այսպես ասացին նրանք և այնուհետև ոչ ոք չէր ցանկանում հնազանդվել (Դիոնիսիոսին), այլ վրանները խփելով կղզում, նրանք ստվեր էին վայելում և այլևս չէին կամենում վերադառնալ իրենց նավերը և զորավարժություն անել:

13. Սամոսցի զորավարները, լսելով հոնիացիների այս արարքի մասին, Սիլոսոնի որդի Այակեսի խորհրդով, որը նախկինում ես, պարսիկների պատվերով առաջարկում էր իրենց հրաժարվել հոնիացիների դաշնակցությունից,

ընդունեցին այդ առաջարկը, քանի որ իմացել էին հոնիացիների մոտ տիրող անկարգության մասին, ինչպես նաև այժմ իրենց համար պարզ էր դարձել, որ իրենք չեն կարող հաղթել արքային: Նրանք համոզված էին, որ եթե նույնիսկ հաղթեն Դարեհի այս հավատարմին, (արքայի) մեկ այլ հավատարմ կհայտնվի, հնգապատիկ հզոր: Արդ, սամոսցիները տեսնելով, որ հոնիացիները արիություն չեն ցուցաբերում, իսկույն այդ բանը առիթ դարձրին (դավանանելու), որպեսզի կործանումից փրկեն իրենց տաճարները և ունեցվածքը: Այս Այակեսը, որի խոսքերն ընդունեցին սամոսցիները, որդին էր Այակեսի որդի Սիլոսոնի: Նա Սամոսի տիրանն էր, որին, ինչպես և հոնիական մյուս տիրաններին, իշխանությունից զրկել էր միլետացի Արիստագորասը:

14. Արդ, երբ փյունիկյան նավերը հարձակվեցին, հոնիացիները դիմադրեցին և իրենք ևս իրենց նավերը դուրս բերեցին նրանց թևի վրա: Կողմերը մոտեցան իրար և մարտի բռնվեցին: Ես չեմ կարող այժմ ճշտորեն ասել, թե հոնիացիներից ո՞վ այդ մարտում երկչոտ դուրս եկավ և ո՞վ արիություն դրսևորեց. քանզի ամեն մեկը մեղադրում է մյուսին: Պատմում են, որ այնժամ, Այակեսի հետ իրենց պայմանավորվածության համաձայն, սամոսցիների նավերն առագաստները պարզեցին և, թողնելով մարտակարգը, հեռացան դեպի Սամոս, բացի տասնմեկ նավից. սրանց նավապետերը մնացին և, հակառակ իրենց զորավարների հրամաններին, նավամարտեցին: Այս պատճառով Սամոսի համայնքը որոշեց նրանց անունները և հայրանունները փորագրել սյան վրա, որպես արիություն ցուցաբերած մարտիկների. այդ սյունը կանգնած է նրանց շուկայի հրապարակում: Նկատելով իրենց հարևանների փախուստը, լեսբոսցիները ևս հետևեցին սամոսցիներին: Այսպես վարվեց նաև հոնիացիների մեծ մասը[7]:

15. Նավամարտում կայուն մնացածների մեջ ֆիոսցիները բոլորից ծանր կորուստներ կրեցին. նրանք չկամեցան վախկոտություն դրսևորել և փառավոր գործեր կատարեցին: Քանզի նրանք, ինչպես ասվեց վերևում, տրամադրել էին հարյուր նավ, իսկ ամեն մի նավի վրա կար իրենց քաղաքացիներից քառասուն քաջարի մարտիկ: Թեև նրանք տեսան իրենց դաշնակիցների մեծ մասի դավանանությունը, բայց ամոթալի համարեցին այդ վախկոտներին նմանվելը. ուստի և մնացած փոքրաթիվ դաշնակիցների հետ միասին կռվելով, նրանք ճեղքեցին թշնամու ռազմական շարքը և գերի վերցրին մեծ թվով թշնամու նավեր. ընդ որում իրենք ևս կորցրին իրենց նավերի մեծ մասը:

16. Իրենց մնացած նավերով ֆիոսցիները քաշվում են իրենց կղզին: Իսկ այն ֆիոսցիները, որոնց նավերը վնասվածքի պատճառով դժվար էին առաջ շարժվում, թշնամու հետապնդումից խուսափելու համար փախչում և ապաստանում են Միկալեում: Այստեղ նրանք նավերը քաշեցին ցամաք ու

լքեցին, իսկ իրենք ցամաքով հետիոտն ճամփա ընկան: Իրենց այս երթի ընթացքում ֆիոսցիները մոտ եփեսոսի երկիրը: Նրանք այնտեղ հասան գիշեր ժամանակ, երբ եփեսոսի կանայք նշում էին Թեսմոփորիա տոնը[8]: Բայց եփեսոսցիները, որոնք դեռևս ոչինչ չէին լսել ֆիոսցիների հետ պատահածի մասին, տեսնելով զինված մարդկանց ներխուժումն իրենց երկիրը, հաստատ ենթադրեցին, որ սրանք ավազակներ են և եկել են հափշտակելու իրենց կանանց: Այդ պատճառով եփեսոսցիները ամբողջ համայնքով ոտքի ելան և կոտորեցին ֆիոսցիներին[9]:

17. Այս ֆիոսցիներն անա այսպիսի բախտ ունեցան: Իսկ փոկայացի Դիոնիսիոսը լսելով, որ հոնիացիների գործն անհաջողություն կրեց, թշնամուց երեք նավ գրավելով, հեռացավ, բայց այլևս Փոկայա չվերադարձավ. քանզի լավ գիտեր, որ այդ երկրին ևս նույն սարկությունն է սպասում, ինչ մնացյալ Հոնիային: Արդ, նա ուղիղ նավեց դեպի Փյունիկիա, որտեղ մի քանի փյունիկյան բեռնատար նավ[10] ջրասույզ անելուց և հարուստ ավար վերցնելուց հետո, նավեց դեպի Սիկիլիա: Այստեղից արշավելով, նա ծովահենություն էր անում, բայց երբեք չէր հարձակվում հունական նավերի վրա, այլ միայն փյունիկյան և տյուրենյան նավերի վրա[11]:

18. Հոնիացիներին նավամարտում հաղթելուց հետո, պարսիկները ծովից ու ցամաքից պաշարեցին Միլետը: Նրանք փորեցին ականներ պարիսպների տակ և բերեցին ամեն տեսակ (պաշարողական) մեքենաներ: Արիստագորասի ապստամբության վեցերորդ տարում նրանք գրավեցին քաղաքն ու միջնաբերդը և բնակչությունը տարան սարկության[12]: Այսպիսով, կատարվեց Միլետի մասին եղած գուշակությունը:

19. Երբ արգոսցիները Դելֆիում հարցրել էին աստծուն իրենց քաղաքի փրկության մասին, նրանց և միլետացիներին տրվել էր ընդհանուր պատգամ, որի մի մասը վերաբերում էր իրենց՝ արգոսցիներին, իսկ մնացածը (պատգամախոսը) ուղղել էր միլետացիներին: Արգոսցիներին տրված պատասխանին ես կանդրադառնամ այդ մասին պատմելիս. իսկ միլետացիների մասին նրանց բացակայությամբ տրված պատգամը այսպիսին է եղել.

«Այդ ժամանակ և դու, Միլետ, շատ գործերի սկզբնավորող,
Նաև շատերին կեր կլինես և կդառնաս շքեղ ընծա.
Եվ քո կանայք երկարամազ մարդկանց ոտքերն են լվալու,
Ու Դիդիմյան[13] մեր մենյանի խնամքն այլոց է տրվելու»:

Այդ ժամանակ այս բոլորը կատարվեցին միլետացիների համար: Քանզի նրանց այրերի մեծագույն մասը սպանվեց պարսիկների կողմից, որոնք երկար մազեր ունեին, նրանց կանայք և որդիները ստրկության տրվեցին, իսկ Դիդիմեում գտնվող սրբավայրը, նրա տաճարը և պատգամատունը կողո-

պուտի ենթարկվեցին և հրկիզվեցին: Այս տաճարում եղած գանձերի մասին ես հաճախ հիշատակել եմ իմ պատմության այլ մասում[14]:

20. Այնուհետև գերի ընկած միլետացիները տարվեցին Սուսա: Դարեհ արքան այնուհետև ոչ մի չարիք չպատճառեց նրանց, այլ բնակեցրեց Կարմիր կոչված ծովի մոտ, Ամպե քաղաքում, որի մոտով ծով թափվելիս հոսում է Տիգրիս գետը: Միլեոյան երկրում պարսիկներն իրենց համար պահեցին քաղաքն իր շրջակայքով և դաշտավայրը, իսկ լեռնային մասերը հանձնեցին Պեդասայի կարիացիների տիրության:

21. Երբ միլետացիներն այս ադետը կրեցին պարսիկներից, Սիբարիսի բնակիչները, որոնք իրենց քաղաքից զրկվելուց հետո բնակեցրել էին Լասոսը և Սկիդրոսը, նույնով չփոխհատուցեցին (միլետացիներին նրանց արածի համար): Քանզի երբ կրոտոնցիները գրավեցին Սիբարիսը, Միլետի բոլոր չափահաս մարդիկ խուզեցին իրենց գլխի մազերը և մեծ սուգ արեցին, որովհետև մեզ հայտնի բոլոր քաղաքներից այս քաղաքներն իրար հետ առավել չափով էին կապված բարեկամությամբ, քան մյուսները: Մինչդեռ աթենացիները ոչ մի նման բան չարեցին: Աթենացիները խորապես սգալով Միլետի գրավման համար, իրենց վիշտը արտահայտեցին այլ կերպ: Այսպես, Փրինիքոսը հեղինակեց «Միլետի անկումը» դրամա[15] և երբ այն բեմադրեց, ամբողջ թատրոնը խեղդվեց արցունքներից: Իսկ Փրինիքոսին տուգանեցին հազար դրամմ այն բանի համար, որ նա հիշեցրել էր հարազատների կրած դժբախտությունը: Բացի այդ, (աթենացիները) որոշեցին, որ այսուհետև ոչ ոք չներկայացնի այդ ողբերգությունը:

22. Այսպիսով, Միլետը դատարկվեց միլետացիներից: Իսկ Սամոսում ունևորներին բոլորովին հաճելի չէին նրանց զորավարների արարքները պարսիկների հանդեպ: Նավամարտից հետո նրանք անմիջապես խորհուրդ գումարեցին և որոշեցին, որ քանի դեռ իրենց տիրան Այակեսը չի ժամանել Սամոս, գաղթեն ինչ-որ տեղ, որպեսզի չմնան Սամոսում ու ստրուկ չդառնան պարսիկներին և Այակեսին: Այդ նույն ժամանակ էր, որ Սիկիլիայում գտնվող Զանկլեի[16] բնակիչները դեսպաններ ուղարկեցին հոնիացիների մոտ, նրանց հրավիրելով Գեղեցիկ ափ, այնտեղ հոնիական քաղաք հիմնելու համար: Այս գեղեցիկ կոչված ափը գտնվում է սիկիլիացիների երկրում, Սիկիլիայի դեպի Տյուրրենիա նայող ափին: Արդ, սրանց հրավերով հոնիացիներից մեկնեցին միայն սամոսցիները, նրանց հետ նաև միլետացի փախստականները: Իսկ նրանց ուղևորության ժամանակ այսպիսի մի բան կատարվեց:

23. Սիկիլիա հավելու հանապարհին սամոսցիները հասնում են եպիզեֆյուսյան լոկրացիների երկիրը. այդ ժամանակ զանկլեցիները և նրանց թագավորը, որի անունն էր Սկյութես, պաշարել էին սիկիլիական մի քաղաք, կամենալով գրավել այն: Այդ մասին տեղեկանալով, Հռեգիոնի տիրան

Անաքսիլաոսը, որն այդ ժամանակ բշնամանքի մեջ էր զանկլեցիների հետ, ընդառաջ է գալիս սամոսցիներին և համոզում նրանց, որ գերադասելի է հրաժարվել Գեղեցիկ ափից, որտեղ նրանք ուղևորվում էին, և գրավել տղամարդկանց կողմից լքված Զանկլեն: Սամոսցիները համոզվեցին և գրավեցին Զանկլեն: Զանկլեցիները տեղեկանալով իրենց քաղաքի գրավման մասին, շտապեցին օգնության, միաժամանակ օգնության հրավիրելով Գելե քաղաքի տիրան Հիպպոկրատեսին, որն իրենց դաշնակիցն էր: Երբ Հիպպոկրատեսը իր զորքով օգնության եկավ, զանկլեցիների միապետ Սկյութեսին շրջապատեցին արեց այն բանի համար, որ նա, իբր, լքել էր քաղաքը, իսկ նրա եղբայր Պիքոգենեսին ուղարկեց Ինիքս քաղաքը, իսկ մնացյալ զանկլեցիներին հանձնեց սամոսցիների ձեռքը, վերջիններիս հետ երդումներով հաստատած համաձայնություն կնքելով: Փոխարենը որպես վարձ սամոսցիները խոստացան Հիպպոկրատեսին՝ տալ նրան քաղաքում գտնվող շարժական ինչքի և ստրուկների կեսը և, բացի այդ, այն ամենը, ինչ գտնվում է դաշտերում: Զանկլեցիների մեծ մասին նա շղթայակապ պահում էր ստրկության մեջ, իսկ նրանցից երեք հարյուր առավել անվանիներին հանձնեց սամոսցիների ձեռքը, (պատվիրելով) մահապատժի ենթարկել նրանց: Սամոսցիները, սակայն, այդ չարեցին:

24. Սկյութեսը, զանկլեցիների միապետը, Ինիքսից փախչում է Հիմերա, այստեղից էլ մեկնում Ասիա և ուղևորվում Դարեհ արքայի մոտ: Դարեհին նա թվաց ամենաարդար մարդը բոլորից, որոնք երբևէ Հելլադայից եկել էին իր մոտ: Արքայի թույլտվությամբ նա դարձյալ մեկնեց Սիկիլիա, իսկ հետո վերադարձավ արքայի մոտ. ի վերջո, նա պարսից մոտ ավարտեց իր կյանքը խոր ծերության և մեծ հարստության մեջ: Իսկ սամոսցիները, խուսափելով պարսկական լծից, առանց դժվարության հաստատվեցին գեղեցկագույն Զանկլե քաղաքում:

25. Միլետի համար մղված նավամարտից հետո փյունիկեցիները, պարսիկների հրամանով, Սիլոսոնի որդի Այակեսին վերադարձրին Սամոս, նրա արժանիքների, ինչպես նաև պարսիկներին նրա մատուցած մեծ ծառայությունների համար: Նավամարտի ժամանակ սամոսյան նավերի հեռացած լինելու պատճառով, սամոսցիները միակն էին Դարեհի դեմ ապստամբություն բարձրացրածներից, որոնց ո՛չ քաղաքը և ո՛չ էլ տաճարները չհրկիզվեցին: Միլետը գրավելուց անմիջապես հետո պարսիկները վերցրին Կարիան, ընդ որում քաղաքների մի մասը կամավոր ենթարկվեց, մյուսը՝ հարկադրաբար:

26. Այդ ամենն այսպես կատարվեց: Մինչդեռ Հիստիայոսը Միլետի այդ դեպքերի մասին իմացավ այն ժամանակ, երբ նա կանգնած էր Բյուզանդիոնում և բռնագրավում էր Պոնտոսից[17] դուրս եկող հոնիական բեռնատար

նավերը: Արդ, Հելլեսպոնտոսում գործերը ճանձնելով Ապոլլոփանեսի որդի, աբիդոսցի Բիսալտեսին, ինքը՝ Հիստիայոսը լեսբոսյան նավերով մեկնեց Քիոս. բայց քանի որ քիոսցիների պահակազորը չընդունեց նրան, նա Քիոսյան երկրի Խոռոշներ կոչված վայրում ճարձակվեց նրանց վրա: Մարտում քիոսցիներից շատերին նա սպանեց, իսկ մնացյալներին, որոնք փրկվել էին նավատորմում կրած պարտության ժամանակ, Հիստիայոսը իր լեսբոսցիների հետ, Քիոսի Պոլիքնեից հարձակվելով, ենթարկեց իրեն:

27. Սովորաբար, եթե որևէ քաղաք կամ ժողովուրդ պետք է ծանր աղետի ենթարկվի, (ասված) նախապես ուղարկում է նշաններ: Անա այս դեպքերից առաջ էլ քիոսցիներին մեծ նշաններ երևացին: Այսպես, հարյուր պատանիներից Դելփի ուղարկված երգչախմբից միայն երկու պատանի վերադարձան. մնացած իննսունութին հանկարծակի խլեց մահտարաժամը: Այնուհետև, այդ նույն ժամանակ, նավամարտից փոքր-ինչ առաջ, փայլ եկավ դպրոցի կտուրը, որտեղ (երեխաները) գիր էին սովորում, և հարյուր քսան երեխաներից միայն մեկը փրկվեց: Այսպիսի նախանշաններ ասված առաքեց (քիոսցիներին): Այնուհետև նավատորմը ծուռկի բերեց քաղաքը, իսկ նավամարտից հետո վրա հասավ Հիստիայոսն իր լեսբոսցիների հետ: Արդ, աղետահար քիոսցիներին (Հիստիայոսը) կարողացավ հեշտությամբ նպատակեցնել իրեն:

28. Այստեղից Հիստիայոսը հոնիացիների և էոլիացիների մեծաթիվ ջոկատով արշավում է Թասոսի վրա: Մինչ նա պաշարել էր Թասոսը, լուր հասավ, թե փյունիկեցիները Միլետից նավարկում են մնացյալ Հոնիայի դեմ: Լսելով այդ, նա վերացնում է Թասոսի պաշարումը և իր ամբողջ զորքով շտապում Լեսբոս: Զորքի համար պարենի պակասության պատճառով, նա Լեսբոսից անցնում է հանդիպակաց ափը, որպեսզի ձեռք բերի Ատառնեոսի, ինչպես նաև Մյուսիայի Կայկոս դաշտի ցորենը: Ճիշտ այդ ժամանակ նույն վայրերում ոչ քիչ զորքով գտնվում էր պարսիկ զորավար Հարպագոսը: Սա հարձակվում է ափ դուրս եկած Հիստիայոսի վրա, նրան գերի է վերցնում և նրա զորքի մեծ մասին ոչնչացնում:

29. Հիստիայոսը գերի վերցվեց հետևյալ կերպ: Հելլենների հակատամարտը պարսիկների դեմ տեղի ունեցավ Մալենեի մոտ, Ատառնեական երկրում: Հելլենները երկար ժամանակ դիմանում էին, բայց ի վերջո, երբ պարսկական հեծելազորը հարձակվեց, նրանք պարտվեցին: Հելլենները դիմեցին փախուստի. իսկ Հիստիայոսը, հուսալով, որ արքան իրեն չի սպանի այս հանցանքի համար, և փափագելով փրկել իր կյանքը, այն խորտակեց հետևյալ կերպ: Փախչելիս նա ընկավ ինչ-որ պարսկի ձեռքը, որն ուզում էր նրան սպանել. բայց Հիստիայոսը նրան պարսկերեն հայտնեց, թե ինքը Հիստիայոսն է Միլետից:

30. Արդ, գերի ընկնելուց հետո եթե նա տարվեր Դարեհ արքայի մոտ, ապա, ինձ թվում է, որ նա ոչ մի պատժի չէր ենթարկվի և արքան կներեր նրա հանցանքը: Այդ պատճառով, ինչպես նաև վախենալով, որ պատժից խուսափելուց հետո, նա կարող է դարձյալ մեծարվել արքայի կողմից, Սարդեսի կառավարիչ[18] Արտափրեհեսը և Հիստիայոսին գերի վերցրած Հարպագոսը, երբ Հիստիայոսը բերվեց Սարդես, նրա մարմինը խաչին հանեցին, իսկ գլուխը զմռսելով, առաքեցին Սուսա, Դարեհ արքային: Այս բոլորը լսելով, Դարեհը հանդիմանեց այդ արարքը անողներին, ասելով, թե նրանք Հիստիայոսին կենդանի չբերեցին իր առաջ: Արքան հրամայեց նրա գլուխը լվանալ, հարդարել և ըստ արժանվույն թաղել, որպես պարսիկներին և անձամբ իրեն մեծ ծառայություններ մատուցած մարդու:

31. Այսպիսին եղավ Հիստիայոսի վախճանը: Իսկ պարսկական նավատորմը, Միլետում ձմեռելուց հետո, հաջորդ տարին ծով դուրս գալով, հեշտությամբ գրավեց մայր ցամաքի դիմաց գտնվող Քիոս, Լեսբոս և Տենեդոս կղզիները: Ամեն անգամ կղզիներից մեկն ու մեկը գրավելիս, բարբարոսները մարդկանց գցում էին ցանցի մեջ. նրանք այդ անում են հետևյալ կերպ: Իրար ձեռք բռնած, զինվորները ծովափի հյուսիսից հարավ ձգվում են և այդպես անցնում ամբողջ կղզով, որսալով մարդկանց: Նրանք եվաճեցին նաև մայր ցամաքի հոնիական քաղաքները, բայց մարդկանց շուրջկալ չարեցին, քանի որ այդ անկարելի էր:

32. Այնժամ երևաց, որ պարսից զորավարների սպառնալիքները իրենց հանդիման բանակած հոնիացիների դեմ ճշմարիտ էին: Քանզի իրենց գրաված քաղաքներում ամենագեղաղեմ տղաներին վերցնելով, ամորձատում էին և ներքինացնում, իսկ առավել գեղանի կույսերին քշում, տանում էին թագավորի մոտ: Այդ անելուց բացի, նրանք քաղաքները և դրանցում գտնվող տաճարները հրդեհեցին: Այսպիսով, հոնիացիները երրորդ անգամ ստրկացվեցին, առաջին անգամ լյուդիացիների, այնուհետև՝ երկու անգամ պարսիկների կողմից[19]:

33. Հոնիայից պարսկական նավատորմն ուղղվեց դեպի Հելլեսպոնտոս և գրավեց նեղուցի մուտքի ձախափնյակում գտնվող ամեն ինչ. իսկ աջափնյա վայրերն արդեն պարսիկները գրավել էին ցամաքից: Հելլեսպոնտոսի եվրոպական մասում գտնվում են հետևյալ վայրերը. Քերսոնեսոսը՝ իր թվաշատ քաղաքներով, Պերինթոսը, Թրակիայի բերդերը, Սելյումբրիան և Բյուզանդիոնը: Բյուզանդիոնի քաղաքացիները չսպասեցին փյունիկեցիների հարձակման, այլ լքելով իրենց դիրքը: Բյուզանդիոնի քաղաքացիները և հանդիպակաց ափին բնակվող քաղքերիները, հեռացան Եվքսինյան Պոնտոս, որտեղ և հիմնեցին Մեսամբրիա քաղաքը: Իսկ փյունիկեցիները, երբ մատնելով նշված երկրները, շրջվեցին Պրոկոնեսոսի և Արտակեի դեմ. սրանք ևս կրակի մատնելով, նորից վերա-

դարձան Քերսոնեսոս՝ նվաճելու համար մնացած քաղաքները, որոնք չէին կարողացել առաջին ափնամման ժամանակ ավերել: Բայց Կյուզիկոսի դեմ նրանք չգնացին, քանի որ կյուզիկոսցիները դեռ փյունիկյան նավերի գալուց առաջ համաձայնություն էին կնքել Դասկիլեայի սատրապ[20] Օյբարեսի, Մեգաբազոսի որդու հետ և հպատակվել արքային:

34. Փյունիկեցիները գրավեցին Քերսոնեսոսի բոլոր քաղաքները, բացի Կարդիայից: Այդ ժամանակ դրանք կառավարում էր Միլտիադեսը, Կիմոնի որդին, Ստեսագորասի թոռը: Այդ իշխանությունը նախկինում նվաճել էր Կյուպսելոսի որդի Միլտիադեսը հետևյալ կերպ: Քերսոնեսոսին տիրում էին թրակացի դոլոնկները: Անա այս դոլոնկները պատերազմում խիստ նեղվելով ապսինթյաններից, իրենց թագավորներին ուղարկում են Դելֆի, պատերազմի ելքի մասին պատգամ ճարցնելու: Պյութիան իր պատասխանով պատվիրեց՝ իրենց քաղաքի առաջին հիմնադիր հրավիրել նրան, ով առաջինը կհյուրընկալի իրենց, սրբավայրից մեկնելուց հետո: Այնժամ դոլոնկները սրբազան ճանապարհով[21] վերադառնալիս, անցնում են փոկայացիների և բեոտիացիների երկրի միջով: Բայց քանի որ ոչ ոք նրանց չհրավիրեց, նրանք ուղղվեցին դեպի Աթենք:

35. Այդ ժամանակ Աթենքում ամբողջ իշխանությունը գտնվում էր Պիսիստրատոսի ձեռքին, բայց մեծ հեղինակություն էր վայելում նաև Կյուպսելոսի որդի Միլտիադեսը, որը սերում էր քառաձի պահող ընտանիքից: Նա իր ծագումը բխեցնում էր էգինացի Այակեսից, իսկ աթենացի դարձել էր միայն նորեցս: Այդ տոհմից առաջինը աթենացի դարձել է Այասի որդի Փիլայոսը[22]: Անա այս Միլտիադեսը, իր տան դռան առաջ նստած, տեսնելով մոտիկից անցնող դոլոնկներին ոչ տեղական հագուստով և նիզակներով, ձայն է տալիս նրանց. երբ նրանք մոտենում են, (Միլտիադեսը) նրանց առաջարկում է ապաստան և հյուրընկալություն: Նրանք ընդունում են առաջարկությունը և, հյուրընկալվելուց հետո, հայտնում են նրան պատգամատան խոսքը և խնդրում (Միլտիադեսին) կատարել աստծու հրամանը: Լսելով այդ, Միլտիադեսը իսկույն համոզվում է, քանի որ ինքը ենչվում էր Պիսիստրատոսի իշխանությունից և ուզում էր հեռանալ: Նա անհապաղ մեկնում է Դելֆի, հարցնելու պատգամատնից, թե՝ կատարի՞ արդյոք դոլոնկների խնդրանքը:

36. Քանի որ Պյութիան նա պատվիրեց (համաձայնվել), ուստի Կյուպսելոսի որդի Միլտիադեսը, որը հիշ առաջ Օլիմպիայում իր քառաձիով հաղթանակ էր տարել, վերցնելով իր հետ արշավանքին մասնակցել ցանկացող բոլոր աթենացիներին և դոլոնկներին, մեկնում է և տիրում երկրին: Միլտիադեսին հրավիրած մարդիկ նրան հոչակեցին տիրան: Նախ նա Քերսոնեսոսի պարանոցն անջատեց պարսպով Պակտիայից մինչև Կարդիա քաղաքը[23], որ-

պեսզի ապսինթյանները չկարողանային ներխուժել և ավերել երկիրը: Պարանոցի լայնքը երեսունվեց ասպարեզ է, իսկ այս պարանոցից ներս Քերսոնեսոսի ամբողջ երկարությունը չորս հարյուր քսան ասպարեզ է:

37. Արդ, Քերսոնեսոսի պարանոցը պարսպով անջատելով, նա պատճեշեց ապսինթյանների ճանապարհը: Այնուհետև Միլտիադեսը պատերազմի ելավ մյուս թշնամիների և, առաջին հերթին, լամպսակոսցիների դեմ. իսկ լամպսակոսցիները, դարանակալելով, նրան գերի վերցրին: Բայց Միլտիադեսը քաջ ծանոթ էր լյուդիացի Կրեսոսին. ուստի և Կրեսոսը, այդ լսելով, լամպսակոսցիներին լուր ճղեց, պահանջելով ազատ արձակել Միլտիադեսին, հակառակ դեպքում սպառնաց նրանց ոչնչացնել սոնու նման: Լամպսակոսցիները չէին կարողանում բացատրել, թե ի՞նչ էր նշանակում Կրեսոսի սպառնալիքը, որ իբր իրենց կոչնչացնի սոնու նման: Ի վերջո, ինչ-որ ծերունի բացատրում է նրանց (այդ խոսքերի) իմաստը, թե՝ սոնին ծառերից միակն է, որը կտրվելուց հետո շիվեր չի արձակում և վերջնականապես ոչնչանում է: Այնժամ, Կրեսոսից վախեցած, լամպսակոսցիները ազատ արձակեցին Միլտիադեսին:

38. Այսպիսով, նա փրկվում է Կրեսոսի միջոցով, բայց հետո մահանում է անզավակ, իր իշխանությունը և ունեցվածքը հանձնելով Ստասանորին, իր արգանդակից եղբայր Կիմոնի որդուն: Միլտիադեսի մահից հետո քերսոնեսցիները, ըստ սովորության, նրան զոհեր են մատուցում որպես (գաղութի) հիմնադրի, և կազմակերպում ձիավարության և մարզական մրցումներ, որոնց թույլ չի տրվում մասնակցելու և ոչ մի լամպսակոսցու: Լամպսակոսցիների դեմ պատերազմում Ստասանորը գտնում է իր մահը, նույնպես անզավակ: Նրան կացինով գլխին հարվածում է պրիտանեյոնում[24] ոմն լամպսակոսցի, որ ասում էր, իբր թե փախստական էր, բայց իրականում նրա ամենատխրիմ թշնամին էր:

39. Ստասագորասի այսպիսի վախճանից հետո, մահացած Ստասագորասի եղբայր Կիմոնի որդի Միլտիադեսին արիերայով ուղարկում են Քերսոնեսոս, իշխանությունը գրավելու համար: Պիսիստրատյանները Աթենքում լավ էին վերաբերվում Միլտիադեսին, ցույց տալով, որ իբր իրենք բոլորովին մասնակից չեն եղել նրա հոր՝ Կիմոնի սպանությանը. այն մասին, թե այդ ինչպե՞ս եղավ, ես կխոսեմ ուրիշ անգամ[25]: Միլտիադեսը ժամանելով Քերսոնեսոս, հարգելու համար իր եղբոր՝ Ստասագորասի հիշատակը, իջևանում է նրա տանը: Այդ լսելով, Քերսոնեսոսի բոլոր քաղաքների տիրակալները բոլոր կողմերից գալիս են նրան ցավակցելու, բայց կալանավորվում են նրա կողմից: Միլտիադեսը, անա, այսպես տիրացավ Քերսոնեսոսին, որտեղ պահում էր հինգ հարյուր վարձկան: Նա ամուսնանում է թրակացիների Օլորոս թագավորի դուստր Հեգեսիպյուլեի հետ:

40. Այս Միլտիադեսը, Կիմոնի որդին, նոր էր վերադարձել Քերսոնեսոս, երբ նրա վրա ընկավ առավել մեծ աղետ, քան եղել էր նախկինում: Դեռևս երեք տարի առաջ նրան վտարել էին սկյութները: Քանզի վաշկատուն սկյութները, արքա Դարեհի դրդումով, միավորվեցին և առաջացան մինչև Քերսոնեսոս: Արշավող սկյութներին չսպասելով, Միլտիադեսը փախչում է Քերսոնեսոսից, մինչև որ սկյութները հեռացան և դոլոնկները նրան ետ վերադարձրին: Այս դեպքերը տեղի ունեցան նրան հետազայում հասած դժբախտություններից երեք տարի առաջ[26]:

41. Իսկ այժմ լսելով, որ փյունիկեցիները (արդեն) Տենեդոսում են, Միլտիադեսն իր բոլոր գանձերը հինգ տրիերաների բարձելով, մեկնեց Աթենք: Կարդիա քաղաքից ծով դուրս գալով, նա նավարկում է Սև ծովախորշի միջով: Բայց այստեղ, Քերսոնեսոսը շրջանցելիս, փյունիկյան նավերը պատահում են նրան: Միլտիադեսն ինքը շտապ նավով կարողացավ փախչել Իմբրոս[27], իսկ հինգերորդ նավը փյունիկեցիները հետապնդեցին և գերի վերցրին: Պատահեց, որ այդ նավի հրամանատարն էր Մետիոքոսը, Միլտիադեսի ավագ որդին, ոչ թե Թրակիայի (թագավոր) Օլորոսի դստրից, այլ մեկ ուրիշ կնոջից: Անա սրան, իր նավի հետ, գերի վերցրին փյունիկեցիները: Լսելով, որ նա Միլտիադեսի որդին է, տարան արքայի մոտ, մտածելով, որ դրանով մեծ շնորհի կարժանանան. քանզի Միլտիադեսն էր, որ հոնիացիների ժողովում խորհուրդ էր տվել կատարել սկյութների պահանջը՝ քանդել կամրջանավը և հեռանալ իրենց երկիրը: Երբ փյունիկեցիները Միլտիադեսի որդի Մետիոքոսին բերեցին (արքայի մոտ), Դարեհը ոչ մի չարիք չպատճառեց նրան, այլ շատ բարիք շնորհեց. նրան տուն պարգևեց, կալվածք և պարսկուհի կին: Այդ կնոջից նա ունեցավ որդիներ, որոնք պարսիկ էին համարվում: Իսկ Միլտիադեսը Իմբրոսից վերադառնում է Աթենք:

42. Այդ տարի պարսիկները այլևս ոչ մի թշնամանք չգործեցին հոնիացիների դեմ: Դեռ ավելին. այդ տարի անա թե ինչպիսի օգտավետ դեպքեր տեղի ունեցան հոնիացիների համար: Սարդեսի հյուպարքոս Արտափրեհեսը պահանջեց իր մոտ դեսպաններ ուղարկել քաղաքներից և ստիպեց հոնիացիներին իրար միջև դաշինք կնքել, որ նրանց միջև վեճերը պետք է խաղաղ վճռվեին և ոչ թե իրար քաղաքները ավերելով ու կողոպտելով: Նա ստիպեց նրանց այս կատարել. այնուհետև նա հոնիական քաղաքների հողերը չափեց փարսախներով. այդպես են պարսիկները անվանում երեսուն ասպարեզը: Ըստ այս չափումների էլ նա որոշեց յուրաքանչյուր քաղաքի հարկի չափը, որը այդ ժամանակից ի վեր մշտապես վճարում են ցայսօր այնպես, ինչպես հաստատել էր Արտափրեհեսը: Այդ հարկերը գրեթե նույն չափի էին, ինչ եղել էին նախկինում: Այս պայմանները խաղաղություն հաստատեցին:

43. Դարհանամուտին[28], քանի որ մյուս զորավարները հեռացվել էին

արքայի կողմից, Մարդոնիոսը, Գոբրիասի որդին, իշավ ծովափ, խիստ մեծաքիվ ցամաքային զորքով և թվաշատ նավատորմով: Մարդոնիոսը դեռևս երիտասարդ էր և նորերս ամուսնացել էր Դարեհի դուստր Արտոզոստրեի հետ: Այս զորքով Մարդոնիոսը ժամանելով Կիլիկիա, ինքը նստում է նավ և շարունակում իր ճանապարհը մյուս նավերի հետ. իսկ ցամաքային զորքերը մյուս զորավարներն առաջնորդում են դեպի Հելլեսպոնտոս: Ասիայի ափի երկայնքով նավելիս, Մարդոնիոսը հասնում է Հոնիա. այստեղ այնպիսի բան կատարվեց, որը ես համարում եմ ամենազարմանալի դեպքն այն հելլենների համար, որոնք չէին ուզում հավատալ, որ իբր Օտանեսը առաջարկել է յոթ պարսիկներին՝ Պարսկաստանում դեմոկրատիա հաստատել[29]: Այս անելուց հետո նա շտապեց Հելլեսպոնտոս: Երբ արդեն Հելլեսպոնտոսում գտնվեց թվաշատ նավատորմ և մեծաքիվ ցամաքային զորք, պարսիկները նավերով անցան Հելլեսպոնտոսը ու Եվրոպայի վրայով շարժվեցին առաջ, Բեսարիայի և Աթենքի դեմ:

44. Բայց այս քաղաքները սոսկ պատրվակ էին այդ արշավանքի համար: Իրականում նրանց նպատակն էր նվաճել ճնարավորին չափ ավելի շատ հելլենական քաղաքներ: Նախ, նրանց նավատորմը նվաճեց թասոսցիներին[30], որոնք նույնիսկ չդիմադրեցին նրանց. այնուհետև նրանց ցամաքային զորքը (պարսիկներին) ստրկացվածների թվին ավելացրեց նաև մակեդոնացիներին. քանզի մակեդոնացիներից այս կողմ (բնակվող) բոլոր ազգերը արդեն նրանց նպատակվել էին: Թասոսն անցնելով, նրանք հանդիպակաց ափի երկայնքով նավեցին մինչև Ականթոս, իսկ Ականթոսից դուրս գալով, սկսեցին շրջանցել Աթոսը: Մինչ նրանք շրջանցում էին, խիստ ուժեղ և անկասելի հյուսիսային հողմ բարձրացավ նրանց դեմ և նրանց նավերից շատերը շպրտեց Աթոսի (ժայռերի) վրա: Պատմում են, թե խորտակվել է երեք հարյուր նավ և ավելի քան երկու բյուր մարդ: Քանի որ Աթոսի այս ծովափը լի է գիշատիչներով, ապա խորտակվածներից ոմանց հոշոտեցին այդ գիշատիչները, ոմանք չախչախվեցին՝ ժայռերին զարնվելով, ոմանք լողալ չիմանալով, խեղդվեցին, ոմանք էլ կոտրվեցին ցրտից:

45. Նավատորմն, անա, այսպիսի վախճան ունեցավ, իսկ Մարդոնիոսի ցամաքային զորքը, որը բանակել էր Մակեդոնիայում, ենթարկվեց թրակական բյուգերների գիշերային հարձակմանը: Բյուգերը նրանցից շատերին սպանեցին և իրեն Մարդոնիոսին վիրավորեցին: Այսուհանդերձ, բյուգերը չխուսափեցին պարսկական գերությունից, քանզի Մարդոնիոսը չհեռացավ նրանց երկրից, մինչև նրանց չնպատակեցրեց: Նրանց նպատակեցնելուց հետո նա իր զորքը ետ տարավ, քանի որ իր ցամաքային ուժերին բյուգերը ծանր վնաս էին տվել, իսկ նավատորմը մեծապես տուժել էր Աթոսի մոտ:

Այսպիսով, այս զորքն անփառունակ պարտություն կրեց ու վերադարձավ Ասիա:

46. Այս դեպքերի հաջորդ տարին Դարեհը նախ բանբեր ուղարկեց թասոսցիների մոտ, որոնց գրպարտել էին իրենց նարևանները, թե պատրաստվում են ապստամբել (արքայի դեմ), հրամայելով քանդել իրենց (քաղաքի) պարիսպները և իրենց նավերը բերել Աբդերա: Քանզի թասոսցիները, երբ Հիստիայոս Միլետացին պաշարել էր նրանց քաղաքը, քանի որ մեծ եկամուտներ ունեին, իրենց դրամը ծախսեցին ռազմանավեր կառուցելու և ճզոր պարիսպներ բարձրացնելու վրա: Նրանց եկամուտները գալիս էին մայր ցամաքից և մետաղահանքերից: Այսպես, Սկապտեսյուլեի[31] ոսկե հանքերը սովորաբար տալիս էին (տարեկան) ութսուն տաղանդ եկամուտ. բուն Թասոս կղզու հանքերը պակաս եկամուտ էին տալիս, բայց և այնքան, որ թասոսցիները նաև ազատ լինելով հացի հարկից, մայր ցամաքի իրենց կալվածներից և հանքերից ստանում էին, ընդհանուր առմամբ, տարեկան երկու հարյուր, իսկ հաջող տարում, նաև երեք հարյուր տաղանդ եկամուտ:

47. Ես ինքս տեսել եմ այդ հանքարանները. դրանցից ամենասքանչելիները այն հանքարաններն են, որոնք գտել են Թասոսի հետ այստեղ եկած և կղզին բնակեցրած փյունիկեցիները. կղզին այժմ կոչվում է այդ փյունիկեցի Թասոսի անունով: Թասոսում այս փյունիկյան հանքարանները գտնվում են Այնիրա և Կոյնիրա կոչված վայրերի միջև, Սամոթրակեի դիմաց. այնտեղ մի մեծ սար հիմնովին փորված է՝ հանքեր փնտրելիս: Այդպիսին են անա դրանք: Իսկ թասոսցիները, արքայի հրամանով, քանդեցին իրենց պարիսպները և իրենց բոլոր նավերը տարան Աբդերա:

48. Այնուհետև Դարեհը փորձեց իմանալ հելլեններին մատդրությունը. արդյո՞ք նրանք կպատերազմեն իր դեմ, թե՞ կհանձնվեն: Այդ նպատակով նա ամբողջ Հելլադայով մեկ այս ու այն կողմ բանբերներ ուղարկեց, պատվիրելով արքայի համար պահանջել հող և ջուր: Այս բանբերներին նա ուղարկեց Հելլադա. իսկ ուրիշ բանբերների էլ ուղարկեց իրեն հարկատու առափնյա քաղաքներ, հրամայելով նրանց կառուցել ռազմանավեր և ձիեր փոխադրելու նավեր:

49. Արդ, այս (հպատակ) քաղաքներն սկսեցին այդ ամենը պատրաստել. իսկ Հելլադա ժամանած բանբերներին մայր ցամաքի բնակիչներից շատերը տրամադրեցին այն, ինչ իր հրամանով պահանջում էր Պարսիկը. (նույնպես նաև) բոլոր կղզեբնակները, որոնց մոտ եկել էին (բանբերները) այդ պահանջելով: Դարեհին հող և ջուր տրամադրած կղզեբնակների թվում էին նաև էգինացիները[32]: Երբ սրանք այդպես վարվեցին, աթենացիներն իսկույն մեղադրեցին նրանց, կարծելով, որ էգինացիները (արքային հող և ջուր) տրամադրեցին իրենց հանդեպ թշնամանք ունենալուց, որպեսզի պար-

սիկների հետ միացած արշավեն իրենց վրա: Այսպիսի պատրվակից ուրախացած, աթենացիները մեկնեցին Սպարտա, որպեսզի էգինացիներին մեղադրեն իբրև Հելլադայի դավաճանների:

50. Այս մեղադրանքի պատճառով Անքմանդրիդեսի որդի Կլեոմենեսը, Սպարտայի թագավորը, մեկնեց էգինա, գլխավոր մեղավորներին ձերբակալելու համար: Բայց երբ նա փորձեց նրանց ձերբակալել, էգինացիները, որոնց թվում հատկապես Պոլիկրիտոսի որդի Կրիոսը, դիմադրեցին: Կրիոսն ասաց, որ Կլեոմենեսը էգինացիներից ոչ մեկին չի կարող անպատիժ տանել, քանի որ գործում է առանց Սպարտայի հրամայնքի որոշման, այլ կաշառված է աթենացիների կողմից: Երբ այդպես չլիներ, ապա իրենց ձերբակալելու համար նրա հետ կգար նաև մյուս թագավորը[33]: Այս բոլորը նա ասում էր Դեմարատոսի ուղարկած նամակի համաձայն: Էգինայից ստիպողաբար մեկնելիս, Կլեոմենեսը հարցրեց Կրիոսին, թե ինչպե՞ս է նրա անունը: Երբ սա հայտնեց իր անունը, Կլեոմենեսը ասաց նրան. «կոտոշներդ պղնձագործիր, ոչխար[34]: Քեզ մեծ աղետ է սպասում»:

51. Մինչ այդ Սպարտայում մնացած Դեմարատոսը, Արիստոնի որդին, որը նույնպես սպարտացիների թագավորն էր, սկսեց գրպարտել Կլեոմենեսին: Դեմարատոսը առավել ցածր ծագում ուներ. ընդ որում՝ այդպես միայն համարվում էր, քանի որ երկուսն էլ սերում էին միևնույն տոհմից, բայց Եվրիսթենեսի տունը, անդրանկության պատճառով, հավանաբար, առավել պատիվ էր վայելում:

52. Քանզի լակեդեմոնացիները, թեև ոչ մեկ բանաստեղծ դրան համաձայն չէ, պատմում են, թե այն երկիրը, որին այժմ իրենք տիրում են, իրենց բերել են ոչ թե Արիստոդեմոսի որդիները, այլ ինքը՝ թագավոր Արիստոդեմոսը, Արիստոմաքոսի որդին, Կլեոդեսի թոռը, Հյուլլոսի թոռնորդին: Քիչ ժամանակ անց, Արիստոդեմոսի կինը, անունը Արգեյա, ծննդաբերում է: Պատմում են, թե նա Պոլինիկեսի թոռնորդի Թերսանդրոսի թոռ Թիսամենեսի որդի Ավտեսիոնի դուստրն էր: Անա սա ծնում է երկվորյակների. և Արիստոդեմոսը իր որդիներին տեսնելուց հետո հիվանդանում ու մահանում է: Այնժամ լակեդեմոնացիները, համաձայն օրենքի, որոշում են թագավոր կարգել ավագ որդուն: Բայց նրանք չէին իմանում, թե (եղբայրներից) ո՞ր մեկին ընտրեն, քանի որ երկու տղաներն իրար նման էին տեսքով և հասակով: Ուստի, չկարողանալով այդ որոշել, այնժամ, գուցե և դրանից առաջ, հարցնում են տղաների մորը: Մայրը նույնպես պատասխանում է, թե ինքը ևս չի կարողանում այդ որոշել: Բայց նա, իհարկե, քաջ գիտեր (դրանց տարբերությունը), բայց այդպես պատասխանում է, հուսալով, որ իր երկու որդիներն էլ թագավոր կդառնան: Արդ, լակեդեմոնացիները, վարանման մեջ ընկնելով, (դեսպան) են ուղարկում Դելֆի՝ պատգամ հարցնելու, թե ինչ-

պե՞ս վարվեն: Պյութիան պատվիրում է երկու տղաներին էլ բազավոր կարգել, բայց ավագին պատվել առավել: Պյութիան թեև այսպես պատգամեց, բայց լակեդեմոնացիները նույնքան դժվարանում էին ավագին որոշելիս: Այնժամ մի մեսսենացի, Պանիտես անունով, նրանց տվեց այսպիսի մի խորհուրդ. հետևել, թե երեխաների մայրը առաջինը ո՞ր մեկին է լողացնում ու կերակրում, և եթե տեսնեն, որ մայրը միշտ միատեսակ է վերաբերվում, ապա իրենք կիմանան այն ամենը, ինչ իրենց պետք է: Իսկ եթե նույնիսկ մայրը չփոթվի և վերաբերվի մեկ այսպես, մեկ այնպես, ապա պարզ կլինի, որ նա ես ոչինչ ավելի չգիտի: Ուստի և հարկ կլինի մեկ այլ միջոցի դիմել: Այնժամ սպարտացիները, մեսսենացու թելադրանքով, սկսում են հետևել Արիստոդեմոսի որդիների մորը, և տեսնում են, որ նա, անտեղյակ լինելով, թե ինչո՞ւ են իրեն հսկում, միշտ երեխաներին լողացնելիս և կերակրելիս, նախապատվությունը տալիս է առաջնածնին: Այնժամ (լակեդեմոնացիները) վերցնում են մորից տղային, որին մայրը նախապատվություն էր տալիս իբրև ավագի, համայնքի հաշվին դաստիարակելու համար: Նրան անվանում են Եվրիսթենես, իսկ մյուսին՝ Պրոկլես: Երեխաները մեծանալուց հետո, ինչպես պատմում են, թեև եղբայրներ էին, բայց ամբողջ կյանքում եղել են իրար թշնամի. նրանց հետնորդները նույնպես իրար թշնամի են:

53. Այսպես են պատմում հելլեններից միայն լակեդեմոնացիները: Իսկ ես աճա գրում եմ այն, ինչ հաղորդում են հելլենները: Դորիացիների այս բազավորներին, ընդհուպ մինչև Պերսևսը, Դանայայի որդին, բացառելով աստծուն[35], հելլենները հիրավի համարում և պատկերացնում են հելլեններ. քանզի Պերսևսի ժամանակ նրանց տոհմը համարվում էր հունական: Ես ասացի ընդհուպ մինչև Պերսևսը, և ոչ թե սկզբնապես, քանի որ հայտնի չէ Պերսևսի մանկանացու հոր անունը, ինչպես օրինակ, Հերակլեսինը՝ Ամփիտրիոն: Ուստի և ես միանգամայն ճիշտ արտահայտվեցի՝ ընդհուպ մինչև Պերսևսը: Իսկ եթե (հերթականությամբ) թվարկենք Ակրիսիոսի դուստր Դանայայի ամեն մի նախնուն, ապա պարզ կդառնա, որ դորիացիների նախնիները եղել են բնիկ եգիպտացիներ:

54. Այսպես են պատմում հելլենները նրանց տոհմաբանության մասին, իսկ պարսկական զրույցի համաձայն, ինքը՝ Պերսևսը եղել է ասորեստանցի, բայց դարձել է հելլեն, մինչդեռ Պերսևսի նախնիները՝ ոչ: Իսկ Ակրիսիոսի նախնիները ոչ մի ազգակցություն չեն ունեցել Պերսևսի հետ[36], այլ, ինչպես այդ հաստատում են նաև հելլենները, եղել են եգիպտացիներ:

55. Այդ մասին այսքանը բավական է: Իսկ թե ինչպե՞ս այս մարդիկ լինելով եգիպտացիներ, ի՞նչ սխրանքների համար ստացել են դորիացիների վրա թագավորական իշխանություն, ես չեմ պատմի, քանի որ այդ մասին

ուրիշներն արդեն պատմել են[37]: Ես կպատմեմ այն, ինչը ուրիշները չեն նիշատակել:

56. Սպարտացիներն իրենց թագավորներին տվեցին հետևյալ առանձնաշնորհումները. քրմական զույգ պաշտոնները՝ Լակեդեմոնյան Զևսի և Երկնային Զևսի[38], ինչպես նաև որևէ երկրի դեմ պատերազմ վարելու իրավունք. ոչ մի սպարտացի իրավունք չուներ նրանց ընդդիմանալու. հակառակ դեպքում կարժանանար արհամարհանքի: Արշավելիս թագավորները գնում էին առջևից, իսկ նահանջելիս՝ վերջինը հեռանում: Արշավանքի ժամանակ նրանց պահպանում էր թիկնապահների հարյուրյակը: Արշավանքների ընթացքում (թագավորները) կարող էին իրենց հետ վերցնել ցանկացած քանակությամբ զոհաբերման անասուններ. նրանք ստանում էին զոհաբերված յուրաքանչյուր անասունի մորքին և ուսամասը:

57. Այսպիսի էին նրանց իրավունքները պատերազմի ժամանակ. իսկ խաղաղ ժամանակ (նրանց տրված) իրավունքները հետևյալներն են: Համայնքի կատարած զոհաբերության ժամանակ թագավորներն առաջինն են նստում զոհաբերման ընթրիքին, բոլոր մասնակիցներից առաջինը նրանց են սպասարկում, ընդ որում տալով կրկնակի բաժին ամեն ինչից: Հեղման ժամանակ առաջին (բաժակը) նրանց է տրվում, ինչպես նաև զոհված անասունների մորքիները: (Յուրաքանչյուր) ամսի առաջին և յոթերորդ օրը թագավորներից ամեն մեկին համայնքը տրամադրում է մեկ մեդիմնոս[39] ալյուր և լակոնիական մեկ քառորդ չափի[40] գինի: Բոլոր մրցությունների ժամանակ նրանց նատկացվում է ամենապատվավոր նախազտությունը: Նրանց վրա տածված է քաղաքացիների միջից իրենց ցանկացած մարդուն կարգել պրոքսենոս[41]. (թագավորներից ամեն մեկն) ընտրում է երկուական պյութիոս: Պյութիոսներ կոչվում են պատգամ ստանալու համար Դելֆի ուղարկվող դեսպանները, որոնք սնվում են համայնքի հաշվին՝ թագավորների հետ: Եթե թագավորները չեն գալիս խնջույքին, ապա նրանց տունն են ուղարկում ամեն մեկին երկու քսենիկս[42] ալյուր և մեկ կոտյուլի[43] գինի. իսկ եթե նրանք ներկա են խնջույքին, ամեն ինչ տրվում է կրկնակի չափով: Նույնպիսի պատիվ է մատուցում նրանց նաև մասնավոր քաղաքացին՝ նրանց իր մոտ հաշի հրավիրելիս: Պատգամատան գուշակությունները նրանք պարտավոր են իրենց մոտ պահել[44]. դրանք պետք է հայտնի լինեն նաև պյութիոսներին: Միայն թագավորներն իրավասու են վճիռ կայացնելու հետևյալ դեպքերում. աղջիկ ժառանգորդի համար ամուսին ընտրելու վերաբերյալ[45], եթե հայրը նրան ոչ ոքի չի խոստացել. հանրային նանապարհների վերաբերյալ. եթե որևէ մեկը կամենում է երեխա որդեգրել, այն պետք է կատարի թագավորների ներկայությամբ. նրանք մասնակցում են քաղաքի ծերերի խորհրդին[46]. եթե (թագավորները) չեն գալիս խորհուրդ, ապա այդ ծերերի միջից ազգակցությամբ

նրանց առավել մոտիկ եղողները ստանում են թագավորների իրավունքները և (յուրաքանչյուրի համար) դնում երկու քվե, իսկ երրորդը՝ իրենց քվեն:

58. Ապրելիս թագավորներին այսպիսի պատիվներ են տրվում սպարտացիների համայնքի կողմից. իսկ մահանալուց հետո՝ անա թե ինչպիսի: Հեծյալները նրանց մանը հաղորդում են ամբողջ Լակոնիայով մեկ, իսկ կանայք շրջում են քաղաքում, հարվածելով պղնձե կաթսային: Այս անելուց հետո ամեն մի տնից երկու ազատ մարդ՝ մի այր և մի կին, պետք է կրեն սգի նշաններ. հակառակ դեպքում կենթարկվեն մեծ պատժի: Լակեդեմոնացիների սովորույթները թագավորների մահվան դեպքում նույնն են, ինչ Ասիայի բարբարոսների սովորույթները: Քանզի բարբարոսների մեծ մասը նույն սովորույթներն ունեն թագավորների մահվան դեպքում: Ամեն անգամ, երբ մեռնում է լակեդեմոնացիների թագավորը, հուղարկավորությանը պարտավոր են, բացի լակեդեմոնացիներից, ամբողջ Լակեդեմոնից ներկա լինել որոշ թվով պերիոյկներ[47]: Բազմահազար պերիոյկներ, իլոտներ[48] և սպարտացիներ իրենց կանանց հետ հավաքվում են նույն վայրում և սկսում ուժգին ծեծել իրենց հակատը և բարձրաձայն ողբալ, ասելով, թե այս վերջին մեռած թագավորը բոլոր թագավորներից լավագույնն է եղել: Իսկ եթե թագավորը մեռել է պատերազմում, այնժամ պատրաստում են նրա պատկերը և այն զարդարված մահճի մեջ դնելով, դուրս հանում (թաղելու): Թագավորին թաղելուց հետո, տաս օր շուկան չի բացվում և ընտրություններ չեն կատարվում, այդ օրերին բոլորը սգում են:

59. (Սպարտացիները) պարսկականին նմանվող մեկ այլ սովորույթ ևս ունեն: Երբ թագավորը մեռնում է և նրա փոխարեն թագավոր է կարգվում մեկ ուրիշը, նա, իշխանությունը վերցնելով, ազատում է Սպարտայի ամեն մի քաղաքացու թագավորին կամ համայնքին ունեցած պարտքերից: Այսպես է նաև պարսիկների մոտ, թագավորը գահ բարձրանալիս զիջում է բոլոր քաղաքների պարտքերը:

60. Լակեդեմոնացիները հետևյալ սովորույթով նման են նաև եգիպտացիներին: Նրանց մոտ մուճետիկները, սենգահարները ու խոհարարները ժառանգում են հայրական արվեստը. սենգահարի որդին դառնում է սենգահար, խոհարարի որդին՝ խոհարար և մուճետիկի որդին՝ մուճետիկ. նրանց փոխարեն իրենց հուժկու ձայնի համար ուրիշները (մուճետիկ) չեն կարգվում, այլ պաշտոնը վարում են հորից (ժառանգելով):

61. Այս ամենն, անա, այսպես է: Արդ, մինչ Կլեոմենեսը գտնվում էր էգինայում և գործում էր ճոգուտ համայն Հելլադայի, Դեմարատոսը զբաղվում է նրան, ոչ այնքան էգինացիների մասին հոգալուց, որքան նախանձից դրդված: Կլեոմենեսը, վերադառնալով էգինայից, որոշում է Դեմարատոսին զրկել թագավորությունից, այդ նպատակի համար օգտագործելով հետևյալ հանգամանքը: Սպարտայի թագավոր Արիստոնը, թեև ամուսնացել էր երկու կնոջ հետ, երեխաներ չէր ունեցել: Այս հարցում իրեն մեղավոր չհամարելով, ամուսնանում է երրորդ կնոջ հետ. նա ամուսնանում է անա թե ինչպես: Կար մի սպարտացի, որը քաղաքացիներից Արիստոնի ամենամերձավոր ընկերն էր: Այս մարդն ուներ մի կին, որն իր գեղեցկությամբ մեծապես գերազանցում էր Սպարտայի բոլոր կանանց. ընդ որում նա նախապես եղել էր այլանդակ, իսկ հետո դարձել գեղեցկուհի: Նա հարուստ ծնողների երեխա էր, բայց անավոր տգեղ: Նրա դայակը տեսնելով, որ աղջկա ծնողները մեծապես դժբախտ են իրենց դստեր տգեղության պատճառով, նրանց օգնելու նպատակով անա թե ինչ է անում: Երեխային ամեն օր տանում է Հեղինեի սրբավայրը, որը կոչվում է Թերապնե[49] և գտնվում է Փոյբոսի սրբավայրից[60] վերև: Երեխային տանար բերելով, դայակը ամեն անգամ կանգնում էր աստվածուհու կուռքի առաջ և պաղատում ազատել մանկանը տգեղությունից: Եվ անա, ինչպես պատմում են, մի անգամ, երբ դայակը հեռանում էր սրբավայրից, մի կին է երևում նրան և հարցնում, թե ի՞նչ է տանում իր գրկում. դայակը պատասխանում է, որ մանուկ է տանում: Կինը խնդրում է ցույց տալ իրեն երեխային, իսկ դայակը ցույց չի տալիս, քանզի երեխայի ծնողներն արգելել էին ցույց տալ նրան որևէ մեկին: Բայց կինը շատ է խնդրում, որ երեխային ցույց տա: (Դայակը) նկատելով, որ կինը շատ է ուզում տեսնել երեխային, ցույց է տալիս նրան: Այնժամ կինը շոյում է մանկան գլուխը և ասում, որ նա կդառնա Սպարտայի ամենագեղեցիկ կինը: Այդ օրից (ինչպես պատմում են), փոխվում է երեխայի տեսքը: Երբ հասնում է ամուսնության ժամանակը, նրա հետ ամուսնանում է Ալկիդասի որդի Ագետոսը, հենց նա, ով վերոհիշյալ Արիստոնի ընկերն էր:

62. Պարզ դարձավ, որ Արիստոնին համակել էր կրքոտ սերն այդ կնոջ հանդեպ. ուստի և նա այսպիսի հնար է մտածում: Խոստանում է իր ընկերոջը, այդ կնոջ ամուսնուն, իր ամբողջ ունեցածից նվիրել այն, ինչ որ ընկերն ընտրի, իսկ փոխարենն ինքը ևս կստանա նույն ձևով: Ընկերը, առանց վախենալու իր կնոջ համար, քանի որ Արիստոնը նույնպես ամուսնացած էր, համաձայնվում է: Նրանք այս պայմանը հաստատում են երդումով: Եվ անա Արիստոնը Ագետոսին նվիրում է իր գանձերից այն, ինչ վերջինս ընտրել էր: Իսկ հետո, փոխարենն իր համար նվեր ընտրելիս, պահանջում է ստանալ իր ընկերոջ կնոջը: Ագետոսն ասում է, թե ինքը համաձայն է ամեն ինչ տալ, բացի կնոջից: Սակայն, իր տված երդման և (ընկերոջ) խաբեության պատճառով, նա ստիպված իր կնոջը զիջում է Արիստոնին:

63. Այսպիսով, Արիստոնն իր երկրորդ կնոջն արձակելով, երրորդ կնոջն է բերում (տուն): Քիչ անց, դեռ տաս ամիսը չլրացած, այս կինը ծնում է Դեմարատոսին: Երբ Արիստոնը էֆորոսների հետ նստած էր խորհրդի, իր

ընդոծիններից մեկը նրան ավետում է, որ նրան տղա ծնվեց: Արիստոնը զիտեր, թե կնոջը երբ էր տուն բերել, և մատների վրա հաշվելով ամիսները, երդվում է և ասում. «Տղան իմը չի լինի»: Էֆորոսները լսեցին այդ, բայց այնժամ ուշադրություն չդարձրին: Երբ տղան սկսեց մեծանալ, Արիստոնը զղջաց իր ասածի համար, քանի որ արդեն լիովին համոզվել էր, որ տղան իր որդին է: Երեխային նա անվանեց Դեմարատոս[51], որովհետև Սպարտայի ամբողջ ժողովուրդը, Արիստոնին առավել հարգելով, քան մինչ այդ եղած թագավորներից որևէ մեկին, մաղթել էր նրան որդի ունենալ:

64. Այս էր պատճառը, որ նրա անունը դրվեց Դեմարատոս: Ժամանակ անց Արիստոնը մահացավ և Դեմարատոսը ստացավ թագավորությունը: Բայց, ըստ երևույթին, ճակատագրի կամքն է եղել, որ այդ ամենը հայտնի դառնար Դեմարատոսին, և նա, այդ պատճառով, զրկվեր թագավորությունից: Դեմարատոսը Կլեոմենեսի դեմ թշնամանք ուներ: Սկզբում Դեմարատոսն իր զորքը դուրս բերեց Ելևսիից, և հետո զրպարտեց Կլեոմենեսին, երբ սա, պարսից կողմնակիցներին պատժելու համար, արշավել էր Էգինա:

65. Պատժիչ արշավանքին մեկնելուց առաջ, Կլեոմենեսը պայմանավորվում է Ագիսի որդի Մենարեսի որդի Լևոտիխիդեսի հետ, որը Դեմարատոսի առճակիցն էր, որ նրան Դեմարատոսի փոխարեն կկարգի թագավոր, եթե իր հետ արշավի Էգինացիների դեմ: Իսկ Լևոտիխիդեսը Դեմարատոսի մեծագույն թշնամին էր դարձել հետևյալ պատճառով: Լևոտիխիդեսը նշանադրված էր եղել Դեմարմենոսի որդի Քիլոնի դուստր Պերկալոսի հետ, բայց Դեմարատոսը հենգաբար ձախողում է Լևոտիխիդեսի ամուսնությունը, և կանխելով նրան, առևանգում Պերկալոսին ու դարձնում իր կինը: Այսպես է սկսվել Լևոտիխիդեսի և Դեմարատոսի թշնամանքը: Այնժամ, Կլեոմենեսի խորհրդով, Լևոտիխիդեսը երդվում ու մեղադրում է Դեմարատոսին, պնդելով, որ նա Արիստոնի որդին չէ և, հետևաբար, իրավասու չէ թագավորելու սպարտացիների վրա: Երդում անելով, Լևոտիխիդեսը հիշեցրեց Արիստոնի ասած այն խոսքը, երբ ընդոծինը նրան հաղորդել էր երեխայի ծննդյան լուրը, իսկ թագավորը, հաշվելով ամիսները, երդվելով ասել էր, թե այն իր որդին չէ: Որպես ապացույց այն բանի, որ Դեմարատոսը Արիստոնի որդին չէր և, հետևաբար, ոչ էլ Սպարտայի օրինավոր թագավորը, Լևոտիխիդեսը վկայակոչում էր Արիստոնի այդ խոսքերը: Որպես վկա նա մատնացույց էր անում այն էֆորոսներին, որոնք այդ ժամանակ նստել էին Արիստոնի հետ խորհրդի և լսել էին նրա այդ խոսքերը:

66. Այդ առթիվ սպարտացիների միջև վեճ առաջացավ և, վերջապես, որոշվեց Դելփյան պատգամատանը հարցնել, թե արդյո՞ք Դեմարատոսը Արիստոնի որդին է: Երբ Կլեոմենեսի դրդումով որոշվեց հարցի լուծումը վստահել Պյութիային, այնժամ Կլեոմենեսն իր կողմը գրավեց Արիստոփանեսի որդի Կոբոնին, որը մեծ իշխանություն ուներ Դելփիում: Այս Կոբոնը համոզում է գուշակուհի Պերիալլային ասել այն, ինչ Կլեոմենեսը պահանջել էր ասելու: Այսպիսով, պատգամավորների հարցին Պյութիան պատասխանեց, որ Դեմարատոսն Արիստոնի որդին չէ: Բայց հետագայում այս խաբեությունը բացվեց. Կոբոնը վտարվեց Դելփիից, իսկ գուշակուհի Պերիալլան զրկվեց իր պատվից[52]:

67. Սակայն այսպես հեռացվեց թագավորությունից Դեմարատոսը: Իսկ Սպարտայից Դեմարատոսը փախավ պարսից մոտ այսպիսի մի վիրավորանքի համար: Թագավորությունից հեռացվելուց հետո Դեմարատոսը ընտրվել էր մեկ այլ պաշտոնում: Գյումնոպեդիա[53] տոնի ժամանակ հանդիսատես էր նաև Դեմարատոսը. իսկ Լևոտիխիդեսը, որն արդեն նրա փոխարեն դարձել էր թագավոր, իր ծառային ուղարկում է Դեմարատոսի մոտ ծաղր ու ծանակով հարցնելու, թե թագավորությունից հետո ինչպե՞ս է զգում իր նոր պաշտոնում: Դեմարատոսը, խիստ վիրավորված այդ հարցից, պատասխանում է ասելով, թե ինքը երկու (պաշտոններն) էլ արդեն փորձել է, մինչդեռ Լևոտիխիդեսը՝ ոչ. բայց այս հարցումը լակեդեմոնացիների համար կլինի կամ բյուր դժբախտությունների, կամ բյուր բարիքների սկիզբ: Այս ասելով, նա գլուխը ծածկեց, հեռացավ հանդիսությունից ու գնաց տուն, որտեղ պատրաստվեց և մի եզ զոհաբերեց Զևսին, իսկ զոհաբերությունից հետո մորը կանչեց իր մոտ:

68. Երբ մայրը եկավ, Դեմարատոսը մոր ափի մեջ դրեց (զոհաբերված անասունի) փորոտիքի կտորներ և սկսեց նրան աղաչել հետևյալ խոսքերով. «Ով մայր. հանուն բոլոր աստվածների և, հատկապես, ընտանեկան Զևսի, աղերսում եմ քեզ. ասա ինձ ճշմարիտը. ո՞վ է իմ իսկական հայրը: Քանզի վեճերի ընթացքում Լևոտիխիդեսը պնդելով ասել է, թե դու Արիստոնի մոտ եկել ես արդեն քո առաջին ամուսնուց հղիացած: Ուրիշներն ավելի անհեթեթ բան են պատմում, թե՝ դու, իբր, ընդոծիններից իշապանի մոտից ես եկել (Արիստոնի մոտ) և ես, իբր, նրա որդին եմ: Աղերսում եմ քեզ, հանուն աստվածների, ասա ինձ ճշմարտությունը: Քանզի, եթե դու իրոք կատարել ես ասվածի նման մի արարք, ապա դու միակը չես, քանի որ շատ կանայք այդպես են անում: Սպարտայում շատ են խոսում այն մասին, թե Արիստոնը երեխա ունենալու անկարող էր. հակառակ դեպքում նա երեխա կունենար նաև իր նախորդ կանանցից»:

69. Դեմարատոսն այսպես ասաց, իսկ մայրը նրան հետևյալը պատասխանեց. «Որդիս. քանի որ դու աղերսում ես ինձ ասելու ճշմարտությունը, ապա ես ամեն ինչ կասեմ, ինչպես եղել է: Երբ Արիստոնն ինձ իր տուն տարավ, երրորդ գիշերն ինձ հայտնվեց մի ուրվական՝ Արիստոնի տեսքով, և, ինձ հետ պառկելուց հետո, ինձ պսակեց իր բերած պսակներով: Նա արդեն

մեկնել էր, երբ եկավ Արիստոնը: Տեսնելով ինձ պսակներով, հարցրեց, թե ո՞վ ինձ տվեց այդ պսակները: Ես ասացի, թե այդ ինքն է եղել տվողը, բայց նա ժխտեց այն: Այնժամ ես երդվեցի և ասացի, թե լավ չի անում իր արարքը ժխտելով. քանզի իշ առաջ այդ ինքն էր, որ գալով ինձ մոտ, ինձ հետ պառկեց և տվեց այս պսակները: Լսելով իմ երդումը, Արիստոնը հասկացավ, որ այդ աստծու կատարածն էր: Արդ, ոչ միայն պսակները բերված էին հերոսի սրբավայրից, որը գտնվում է մեր բակի դռան մոտ և կոչվում է Աստրոբակոսի անունով, այլև գուշակները հայտնեցին, թե ինձ այցելողը եղել է այդ նույն հերոսը: Այժմ, որդիս, դու գիտես այն ամենը, ինչ ուզում էիր իմանալ: Դու կամ այդ հերոսի որդին ես և քո հայրը Աստրոբակոսն է, կամ էլ Արիստոնը. քանզի ես քեզնով հղիացա ճիշտ այդ գիշեր: Իսկ այն, ինչն առավելապես վկայակոչում են թշնամիները, պնդելով, թե իբր ինքը՝ Արիստոնը, երբ նրան հաղորդել են, թե դու ծնվեցիր, բազում լսողների ներկայությամբ ասել է, որ դու իր որդին չես, քանի որ չէր լրացել տաս ամսվա ժամանակը, ապա նա, անտեղյակ լինելով այդ գործերից, աննիմն խոսք է ասել. քանզի կան կանայք, որոնք ինը, նույնիսկ յոթ ամիս անցնելուց հետո են ծննդաբերում, և բոլորը չէ, որ ծննդաբերում են տաս ամիսը լրանալուց հետո: Իսկ ես քեզ, որդիս, ծնել եմ յոթ ամսական: Ինքը Արիստոնը ևս շատ շուտով գիտակցեց, թե այդ խոսքերն ինքն արտասանել է թյուրիմացաբար: Քո ծննդյան մասին դու մի հավատա ուրիշի խոսքերին. քանզի դու լսեցիր լրիվ ճշմարտությունն ամեն ինչի մասին. իսկ (իրենց) իշապաններից երեխաներ բոլոր ունենան Լատիֆիդեսի և նրանց կանայք, որոնք այդպիսի լուրեր են տարածում»:

70. Այսպես ասաց մայրը. իսկ Դեմարատոսը, իմանալով այն, ինչ կամենում էր, հանապարհի ուտեստ վերցրեց ու մեկնեց Էլիս, ձևացնելով, թե իբր մեկնում է Դելփի՝ պատգամատանը հարցում անելու: Բայց լակեդեմոնացիները կասկածելով, թե Դեմարատոսը կփորձի փախչել, հետապնդեցին նրան: Դեմարատոսը, սակայն, կարողացավ Էլիսից անցնել Զակյունթոս: Լակեդեմոնացիները նրան հետապնդեցին և, հասնելով նրա ետևից, բռնեցին նրա սպասավորներին: Զակյունթոսցիները Դեմարատոսին չհանձնեցին լակեդեմոնացիների ձեռքը. ուստի և նա անցավ Ասիա և գնաց Դարեհ արքայի մոտ: Արքան նրան ընդունեց մեծ պատվով և պարգևեց երկիր ու քաղաքներ: Այսպես և այս հանգամանքներում Դեմարատոսը գալիս է Ասիա: Նա Լակեդեմոնում մեծապես հայտնի էր դարձել իր բազում սխրանքներով և իր խելամտությամբ: Նա Սպարտայի միակ թագավորն էր եղել, որն իր քաղաքին հաղթանակ է բերել քառաձի կառքով մրցելիս:

71. Դեմարատոսի գահընկեց արվելուց հետո գահին հաջորդեց Լատիֆիդեսը, Մենադեսի որդին, որն ունեցավ որդի՝ Զևքսիդամոսին. սրան սպարտացիներից ոմանք կոչում էին Կյունիսկոս[54]: Այս Զևքսիդամոսը չթագավորեց Սպարտայում, քանի որ մահացավ դեռևս Լատիֆիդեսի կենդանության օրոք, թողնելով Արքիդամոս որդուն: Զևքսիդամոսին կորցնելուց հետո Լատիֆիդեսը երկրորդ կին է առնում Եվրիդամեին, որը Մենիասի քույրն էր, Դիակտորիդեսի դուստրը: Այս կնոջից ոչ մի արու զավակ նա չունեցավ, այլ մի դուստր, Լամպիտո (անունով), որին Լատիֆիդեսը կնության տվեց Զևքսիդամոսի որդի Արքիդամոսին:

72. Բայց ինքը՝ Լատիֆիդեսը ևս Սպարտայում չհասավ ծերության, քանի որ պատժվեց Դեմարատոսի հանդեպ իր ունեցած վերաբերմունքի համար հետևյալ պայմաններում: Երբ նա լակեդեմոնացիներին առաջնորդեց Թեսալիայի դեմ արշավանքի, թեև կարող էր ամբողջ երկիրը նվաճել, բայց մեծամանակ արծաթ կաշառք վերցրեց: Լատիֆիդեսին բռնեցին հանցանքի մեջ. իր զորակայանում նա նստել էր արծաթով լցված պարկի վրա: Դատարանի առաջ կանգնելուց հետո, նա փախավ Սպարտայից, իսկ նրա տունը ավերվեց: Նա փախավ Տեգեա և այնտեղ էլ մեռավ:

73. Բայց այս տեղի է ունեցել ավելի ուշ: Իսկ այդ ժամանակ Կլեոմենեսը, Դեմարատոսի տապալումից հետո, իր հետ վերցնելով Լատիֆիդեսին, արշավեց էգինացիների վրա, խիստ զայրացած իրեն հասցված վիրավորանքի համար: Այժմ, երբ երկու թագավորներն էլ արշավել էին իրենց վրա, էգինացիները չհամարձակվեցին դիմադրելու, իսկ թագավորներն ընտրեցին տասն առավել հարուստ և արժանավոր էգինացիների և նրանց գերի տարան. նրանց թվում էին նաև Պոլիկրատեսի որդի Կրիսը և Արիստոկրատեսի որդի Կասամբոսը, որոնք առավել հզորներն էին (էգինայում): Այնուհետև գերի տարվածներին փոխադրեցին Ատտիկա և նրանց հանձնեցին էգինացիներին առավել թշնամի աթենացիների պահպանության:

74. Հետագայում, երբ բացահայտվեցին Դեմարատոսի դեմ Կլեոմենեսի դավերը, վերջինս, վախենալով սպարտացիներից, փախավ Թեսալիա: Այստեղից գալով Արկադիա, նա խռովություն բարձրացրեց, արկադիացիներին գրգռելով Սպարտայի դեմ: Նա, ի միջի այլոց, արկադիացիներին ստիպում էր երդվել, որ նրանք կհետևեն իրեն, ուր որ իրենց առաջնորդի: Նա մտադիր էր արկադիացիների առաջնորդներին գումարել Նոնակրիս քաղաքում և այնտեղ ստիպել նրանց երդվելու Ստիգսի ջրով[55]: Արկադիացիները պատմում են, թե այս Նոնակրիս քաղաքի մոտ գտնվում է Ստիգսի ջրի աղբյուրը, որը, իրականում, անա թե ինչպիսին է. ժայռից փոքր քանակությամբ ջուր է հոսում ձորափոսը, որը պատած է քարե շրջանակով: Իսկ Նոնակրիսը, որի մոտ գտնվում է այս աղբյուրը, արկադյան քաղաք է, Փենեոսի մոտ:

75. Կլեոմենեսի այս գործերի մասին լսելով, լակեդեմոնացիները վախեցան և նրան վերադարձրին Սպարտա, որպեսզի թագավորի, ինչպես

անցյալում: Վերադառնալուց հետո նա ախտահարվեց մոլագարությամբ, թեև նախկինում ևս նա խելապակաս էր եղել: Իրեն պատահած որևէ սպարտացուն իր մականվ հարվածում էր դեմքին: Այսպիսի արարքների պատճառով նրա մերձավորները նրան կապեցին կալանակոնդերով: Այսպես կապված Կլեոմենեսը, տեսնելով, որ ինքը մենակ է մնացել պահակի հետ, նրանից դանակ է խնդրում: Պահակը սկզբում չէր ուզում տալ, բայց երբ Կլեոմենեսը սպառնաց, որ հետագայում կպատժի պահակին, որը իլոտներից[56] էր, սա, սպառնալիքներից վախեցած, տալիս է նրան դանակը: Վերցնելով երկաթե զենքը, Կլեոմենեսը խոցում է ինքն իրեն, սկսած սրունքներից: Նա իր մսերը կտրատում էր երկարությամբ, սրունքներից մինչև ազդրերը, ազդրերից մինչև գլուխ ու անուկը. հասնելով փորին, Կլեոմենեսը այն ևս երկարությամբ կտրատում է. նա այդպիսով մահանում է: Հելլեններից շատերը պնդում են, թե նա այդպիսի մահ ունեցավ այն պատճառով, որ կաշառել էր Պյութիային, որպեսզի Դեմարատոսի մասին այդպիսի պատգամ տա[57]: Միայն աթենացիները պնդում են, թե (նա այդպես մահացավ), որովհետև Ելևսիս ներխուժելով[68], ավերել էր աստվածների սրբավայրը. մինչդեռ արգոսցիները պատմում են, թե Կլեոմենեսի մահվան պատճառը եղել է այն, որ ճակատամարտից հետո Արգոսի սրբավայրում ապաստանած արգոսցիներին դուրս է բերել այնտեղից խաբեությամբ և կոտորել, ինչպես նաև անմբտորեն երկիզել է անգամ սրբազան պուրակը[59]:

76. Երբ Կլեոմենեսը Դելփյան պատգամատանը հարցրեց, պատասխան ստացավ, թե կնվաճի Արգոսը: Այնժամ նա սպարտացիներին առաջնորդելով, հասնում է Երասինոս գետը, որն, ինչպես ասում են, բխում է Ստյումփալյան լճից: Այս լիճը թափվում է անտեսանելի մի կիրճի մեջ և դարձյալ հայտնվում է Արգոսի մոտ, որտեղ նրա ջրերը արգոսցիները անվանում են Երասինոս: Արդ, գալով այս գետի մոտ, Կլեոմենեսը զոհեր է մատուցում նրան. բայց քանի որ գետանցի համար կանխանշանները բարենպաստ չեղան, նա հայտարարեց, որ մեծարում է Երասինոս գետը, որը չի դավաճանում քաղաքացիներին, բայց, այսուհանդերձ, արգոսցիները դրանից չեն ուրախանալու: Այնուհետև նա իր զորքը ետ տարավ Թյուրեա, մի ցուլ զոհաբերեց ծովին, և նավերով անցավ Տիրինթյան երկիրը և Նավպլիոն:

77. Արգոսցիները լսելով այդ, (զորքով) շտապեցին ծովափ: Հասնելով Տիրինթոսի մոտ, այն վայրը, որտեղ գտնվում է Հեսիպեյա կոչվող բնակավայրը, նրանք բանակեցին լակեդեմոնացիներից ոչ մեծ հեռավորության վրա: Այստեղ արգոսցիները չէին վախենում բաց ճակատամարտից, այլ միայն խաբեությամբ նվաճվելուց: Քանզի, իրոք, նման բան էր պատգամատունը նշել, երբ Պյութիան նրանց և միլետացիների համար ընդհանուր զուշակություն կատարեց հետևյալ խոսքերով.

«Երբ պատերազմում էգն արվի հանդիպ հազթանակ առնի,
Վարի նրան և փառք վաստակի Արգոս քաղաքում,
Այնժամ բազմաթիվ արգոսցիներ պիտի սուգ կապեն,
Մինչև ապագա մարդկանցից մեկը այսպես բարբառի.
«Արդ բազմազարմ օձը անարկու սպանվեց տիգանաբ»:

Այս բոլորը միասին արգոսցիներին խիստ անաբեկեցին. ուստի և նրանք որոշեցին օգտագործել թշնամու քարոզին: Այդ որոշելուց հետո նրանք վարվեցին հետևյալ կերպ: Երբ սպարտացի քարոզը որևէ բան էր հայտարարում լակեդեմոնացիներին, արգոսցիները ևս նույնը կատարում էին:

78. Կլեոմենեսը նկատելով, որ արգոսցիները կատարում են այն ամենը, ինչ հայտարարում էր իր քարոզը, հրամայեց իր զինվորներին, որ երբ քարոզը ազդարարի՝ նախանաշել, իրենք վերցնեն զենքերը և հարձակվեն արգոսցիների վրա: Լակեդեմոնացիներն այդպես էլ վարվեցին: Երբ արգոսցիները, քարոզի ազդարարումով, սկսեցին նախանաշել, լակեդեմոնացիները հարձակվեցին նրանց վրա և շատերին կոտորեցին, իսկ առավել շատերին, որոնք ապաստանել էին Արգոսի սրբազան պուրակում, պաշարեցին և պահեցին այնտեղ փակված:

79. Այնժամ Կլեոմենեսը անա թե ինչ արեց: Իր մոտ կային փախստականներ. նրանց հարցափորձելով, նա տեղեկացավ, թե արգոսցիներից ովքե՞ր են փակվել սրբավայրում. ուստի քարոզին ուղարկելով, հրամայեց նրանց դուրս կանչել հականե-հանվանե, ընդ որում հայտարարելով, թե նրանց համար արդեն ստացել է փրկագին: Պելոպոնեսյանների մոտ յուրաքանչյուր գերեվարվածի համար հաստատված է եղել երկու մինա փրկագին: Այս եղանակով Կլեոմենեսը մեկ առ մեկ դուրս կանչեց շուրջ հիսուն արգոսցիների և նրանց բոլորին սպանեց: Սրբավայրում մնացածներն անտեղյակ էին կատարվածից, քանի որ պուրակը շատ խիտ էր և այնտեղ գտնվողները չէին կարողանում տեսնել, թե դրսում ի՞նչ էր կատարվում, մինչև որ նրանցից ինչ-որ մեկը չբարձրացավ ծառը և չտեսավ այնտեղ կատարվածը: Այնուհետև նրանցից ոչ մեկը, երբ իրեն կանչում էին, դուրս չեկավ:

80. Այնժամ Կլեոմենեսը հրամայեց բոլոր իլոտներին՝ պուրակը պատել վառելափայտով. նրանք այդ արեցին, և նա կրակի մատնեց պուրակը: Երբ արդեն պուրակը այրվում էր, նա փախստականներից մեկին հարցրեց, թե պուրակը աստվածներից ո՞ր մեկին է պատկանում: Սա պատասխանեց՝ Արգոսին: Այս լսելով, Կլեոմենեսը խոր հառաչեց և ասաց. «Ով պատգամատու Ապոլլոն. ինչպե՞ս դաժանորեն ինձ խաբեցիր ասելով, թե կգրավեմ Արգոսը: Արդեն ենթադրում եմ, որ քո պատգամը կատարվեց»:

81. Այնուհետև Կլեոմենեսն իր զորքի մեծ մասը ետ է ուղարկում Սպարտա, իսկ ինքը նրանցից հազար լավագույններին իր հետ վերցնելով, գնում է

Հերայի տաճարը, զոհ մատուցելու: Բայց երբ նա ուզում էր սկսել զոհաբերությունը զոհասեղանի վրա, քուրմը արգելեց նրան, ասելով, թե օտարներին չի թույլատրվում այնտեղ զոհ մատուցել: Այնժամ Կլեոմենեսը իլոտներին հրամայեց հեռացնել քրմին զոհասեղանից և ինքը զոհաբերություն կատարեց: Այդ անելուց հետո նա վերադարձավ Սպարտա:

82. Կլեոմենեսի վերադառնալուց հետո հակառակորդները նրան ներկայացրին էֆորոսների դատին, ասելով, որ նա կաշառվել է և չի նվաճել Արգոսը, մինչդեռ կարելի էր այն հեշտությամբ նվաճել: Բայց Կլեոմենեսը նրանց պատասխանեց,—ես չեմ կարող հաստատել, թե նա ստո՞ւմ էր արդյոք, թե՞ ճշմարիտն ասում,—թե երբ ինքը գրավեց Արգոսի սրբավայրը, մտածեց, որ արդեն կատարվել էր աստծու պատգամը. ուստի և նա արդարացի համարեց չհարձակվել քաղաքի վրա, քանի դեռ զոհ չի մատուցել աստծուն և չի իմացել, թե արդյո՞ք աստված իր ձեռքը կհանձնի քաղաքը, թե՞ կխոչընդոտի իրեն: Արդ, Հերայի տաճարում զոհաբերություն կատարելիս, կուռքի կրծքից կրակի բոց ժայթքեց. այնժամ ինքը հաստատ իմացավ, որ չի կարողանալու նվաճել Արգոսը: Եթե բոցը դուրս գար կուռքի գլխից, ապա ինքը կկարողանար քաղաքն ամբողջությամբ նվաճել. բայց քանի որ բոցը ժայթքում էր կրծքից, ապա իրեն թվաց, թե ինքը արդեն ամեն ինչ կատարել է այնպես, ինչպես ասված կամեցել էր, որ կատարվի: Սպարտացիները որոշեցին, որ նրա խոսքերը ճամոզիչ են և ճշմարիտ. ուստի և նա հեշտությամբ խուսափեց իր հակառակորդների (մեղադրանքներից):

83. Բայց Արգոսն այնպես ամայացավ մարդկանցից, որ սարուկները այնտեղ վերցրին իշխանությունը և վարում էին ամբողջ գործերը, մինչև որ սպանվածների որդիները մեծացան: Այնժամ սրանք վերագրավեցին Արգոսը և դուրս քշեցին սարուկներին: Դուրս քշված սարուկները զենքով նվաճեցին Տիրինթոսը: Որոշ ժամանակ նրանք իրար հետ հաշտ էին: Բայց հետագայում սարուկների մոտ եկավ գուշակ Կլեանդրոսը, ծագումով Արկադիայի Փիգալիայից, և համոզեց սարուկներին՝ հարձակվել իրենց տերերի վրա: Այդ ժամանակից նրանց միջև սկսվեց երկարատև պատերազմ, մինչև որ, ի վերջո, արգոսցիները դժվարությամբ հաղթեցին թշնամուն:

84. Արգոսցիների պատմելով, այս է, իբր, եղել Կլեոմենեսի մոլագարության և անավոր վախճանի պատճառը. մինչդեռ սպարտացիներն ասում են, թե աստվածներից ոչ մեկը պատճառ չի եղել Կլեոմենեսի մոլագարությանը. սկյութների ընկերակցության մեջ նա սովորել է անխառն գինի խմել[60], և դրանից մոլեգնել է: Վաչկատուն սկյութները, այն բանից հետո, երբ Դարեհը ներխուժեց իրենց երկիրը, որոշել էին վրեժ լուծել արքայից. ուստի և դեսպաններ ուղարկելով Սպարտա, դաշինք կնքեցին (լակեդեմոնացիների հետ): Պայմանավորվեցին, որ իրենք՝ սկյութները կփորձեն ներխուժել Մեդիա, Փասիս գետի[61] հոսանքով, մինչդեռ սպարտացիները, նրանց խորհրդով, պետք է Եփեսոսից արշավեին դեպի (պարսկական) երկրի խորքը և միանային իրենց հետ: Իսկ Կլեոմենեսը, ինչպես պատմում են, երբ սկյութները ժամանել էին այս բանակցությունների համար, նրանց հետ հաղորդակցվում էր շատ հաճախ, նույնիսկ պետք եղածից ավելի, և այդպիսով սովորեց գինին անխառն խմել: Սպարտացիները կարծում են, թե նա այդ պատճառով ընկավ մոլագարության մեջ: Այդ օրվանից, ինչպես իրենք են պատմում, եթե ուզում են հարբեցնող (գինի) խմել, ասում են. «լցրու սկյութավարի»: Այսպես են պատմում սպարտացիները Կլեոմենեսի մասին. իսկ իմ կարծիքով, Կլեոմենեսը այդպես պատժվեց Դեմարատոսի հանդեպ կատարած արարքի համար:

85. Կլեոմենեսի մահից հետո, երբ այդ մասին իմացան էգինացիները, բանագնացներ ուղարկեցին Սպարտա, մեղադրելով Լևտիքիդեսին՝ Աթենքում պահվող պատանդների գործով: Լակեդեմոնացիները դատարան գումարելով, վճռեցին, որ Լևտիքիդեսը մեծ անարդարություն է գործել էգինացիների հանդեպ, և որոշեցին Աթենքում պահվող պատանդների փոխարեն նրան հանձնել էգինա տարվելու: Երբ էգինացիները պատրաստվում էին Լևտիքիդեսին տանելու, Լեոպրեպեսի որդի Թեասիդեսը, Սպարտայում հարգված մի այր, ասաց նրանց. «Այդ ի՞նչ եք ուզում անել, էգինացի այրեր: Ուզում եք իր համամաղամացիների կողմից ձեզ հանձնված սպարտացի թագավորին տանե՞ք: Եթե այժմ սպարտացիներն իրենց զայրույթի պահին այդպես որոշեցին, ապա զգուշացեք, որ ձեր այս արարքի համար նրանք հետագայում ձեր երկրին չարիք չպատճառեն»: Էգինացիներն այս խոսքերը լսելով, հրաժարվեցին (թագավորին) տանելու իրենց մտադրությունից, բայց պայմանավորվեցին, որ Լևտիքիդեսը կմեկնի Աթենք և կվերադարձնի իրենց պատանդներին:

86. Լևտիքիդեսը ժամանեց Աթենք և պահանջեց հանձնել պատանդներին. բայց աթենացիները, չկամենալով հանձնել նրանց, (զանազան) պատճառներ էին առաջադրում: Նրանք ասում էին, թե պատանդներին իրենց հանձնել են երկու թագավորները միասին. ուստի այժմ իրենք չեն կարող նրանց հանձնել (թագավորներից) մեկին, առանց մյուսի (համաձայնության): Երբ աթենացիները մերժեցին պատանդներին հանձնել, Լևտիքիդեսը այսպես ասաց. «Ով աթենացիներ. վարվեք ինչպես ինքներդ կամենում եք: Բայց պատանդներին եթե հանձնեք, դուք արդարացի վարված կլինեք, իսկ եթե չհանձնեք՝ անարդարացի: Ուզում եմ ձեզ պատմել այն, ինչ մի անգամ պատահեց Սպարտայում պահ տրվածի հետ: Մեզ մոտ, Սպարտայում, պատմում են, թե Լակեդեմոնում մեզանից երեք սերունդ առաջ ապրելիս է եղել Եպիկիդեսի որդի Գլավկոսը: Այս մարդը, ինչպես պատմում են, ամեն

տեսակետից ականավոր է եղել և համարվել է արդարագույնն այդ ժամանակ Լակեդեմոնում ապրող մարդկանց մեջ: Բայց նրա հետ, ինչպես պատմում են, այսպիսի մի բան է պատահել: Ոմն միլետացի եկել է Սպարտա և, այցելելով Գլավկոսին, այսպես է առաջարկել. «Ես միլետացի եմ և եկել եմ, Գլավկոս, քեզ մոտ, քո արդարամտությունը վայելելու ցանկությամբ: Քանի որ ամբողջ Հելլադայում, ինչպես նաև Հոնիայում, մեծապես տարածված է քո արդարամտության համբավը, ապա ես մտածեցի, թե Հոնիայում մշտապես կյանքը ինչքան վտանգալից է, մինչդեռ Պելոպոնեսոսը հաստատապես ապահով է. քանզի Հոնիայում երբեք նույն մարդիկ շարունակ չեն տիրում իրենց ունեցվածքին: Անա այս մտածելով, ես որոշեցի իմ ամբողջ հարստության կեսը արծաթ դրամի վերածել և քեզ հանձնել պահելու, համոզված, որ քեզ մոտ իմ ունեցածը ապահով կլինի: Արդ, ընդունիր այս փողերը և վերցրու ու պահիր այս նշանները: Ով կներկայացնի սրանց նմանները և կպահանջի փողերը, դրանք վերադարձրու նրան»: Այսպես ասաց Միլետից ժամանած օտարականը, իսկ Գլավկոսը վերցնում է իրեն հանձնվածը նշված պայմանով: Շատ ժամանակ անց Սպարտա են գալիս այդ փողերը պահ տված մարդու որդիները: Նրանք, գալով Գլավկոսի մոտ, ցույց են տալիս նրան նշանները և պահանջում են փողերը: Բայց Գլավկոսը մերժում է նրանց, պատասխանելով. «Ես այդպիսի բան չեմ հիշում և ձեր ասած ոչ մի բանին տեղյակ չեմ: Իսկ եթե որևէ բան հիշեմ, ապա ես կկամենամ ամեն ինչ արդարությամբ կատարել: Քանզի եթե ես ստացել եմ, ապա պարտավոր եմ ազնվորեն դրանք վերադարձնել. իսկ եթե բոլորովին չեմ ստացել, ապա ես ձեզ կվտարեմ հելլենների օրենքների համաձայն: Այս օրվանից սկսած, ես ձեզ տալիս եմ չորս ամիս ժամանակ, ձեր պահանջները ապացուցելու համար»: Այնժամ միլետացիները վշտացած մեկնեցին (իրենց երկիրը), մտածելով, թե զրկվեցին իրենց հարստությունից, իսկ Գլավկոսը մեկնեց Դելֆի, պատգամատնից պատասխան ստանալու համար: Երբ նա հարցրեց պատգամախոսին, թե արդյո՞ք ինքը կեղծ երդումով պետք է յուրացնի այդ փողերը, Պյութիան նրան պատասխանեց այսպիսի խոսքերով.

«Եպիկիդեսի որդի Գլավկոս. այժմ կարող ես
Կեղծ երդումներով հաղթանակ ստանալ, գանձեր յուրացնել.
Դե, երդվիր. ազնիվ երդվողին նույնպես մահն է սպասում.
Բայց երդումն ունի որդի անանուն, անձեռ ու անոտ.
Նա քո տեսից կհասնի արագ, ուր էլ որ փախչես,
Ու կկործանի քո տունը ամբողջ և տոհմը համայն.
Իսկ իր երդմանը չգամանանող մարդու սերունդը բարվոք կլինի»:

Այս խոսքերը լսելով, Գլավկոսը ներումն խնդրեց աստծուց իր ասածների համար: Իսկ Պյութիան պատասխանեց, թե աստծուն փորձելը հավասար է

արարք կատարելուն: Այնժամ Գլավկոսը ետ կանչեց միլետացի օտարականներին և նրանց վերադարձրեց փողերը: Այժմ ես, աթենացիներ, ձեզ կբացատրեմ, թե ինչո՞ւ պատմեցի ձեզ այս զրույցը: Այժմ Գլավկոսից ո՛չ հետնորդ մնաց, ո՛չ իսկ տուն, որը կրեր նրա անունը և նա ու նրա տունը արմատախիլ արվեցին Սպարտայից: Այս պատճառով էլ պահ տրված մասին չի կարելի ուրիշ բան մտածել, այլ միայն այն վերադարձնել պահանջողներին»:

87. Լեոտիխիդեսն այսպես խոսեց. բայց աթենացիները դարձյալ նրա խոսքերին ուշ չդարձրին. ուստի նա մեկնեց տուն: Իսկ էգինացիները, դեռևս չհատուցած իրենց նախկին վիրավորանքների համար, որ պատճառել էին աթենացիներին, ի հանույս թեբեցիների, այսպիսի մի բան արեցին· Զայրացած լինելով աթենացիներից, թե անարգել են իրենց, պատրաստվում են վրեժ լուծել նրանցից: Հինգ տարին մեկ աթենացիները Սունիոն հրվանդանի մոտ տոնախմբություն են կատարում[62]: Անա այդ տոնախմբության ժամանակ էգինացիները դարանակալում են, գերի վերցնում ականավոր աթենացիներին տոնախմբության տանող արբազան նավը և գերեվարվածներին տանում շղթայակապ:

88. Այս աղետին ենթարկվելուց հետո, աթենացիները որոշեցին հնարավոր բոլոր միջոցներով անհապաղ պատժել էգինացիներին: Արդ, էգինայում բնակվում էր կնոյթոսի որդի Նիկոդրոմոս անունով ականավոր մի մարդ, որը շարացած էր էգինացիների դեմ, քանի որ նրանք անցյալում իրեն արտաքսել էին կղզուց: Լսելով, որ աթենացիները պատրաստվում են չարիք պատճառել էգինացիներին, Նիկոդրոմոսը պայմանավորվեց աթենացիների հետ նրանց ձեռքը մատնել էգինան, նշելով այդ անելու ժամանակը և այն օրը, երբ աթենացիները պետք է օգնության հասնեին:

89. Այնուհետև, ինչպես պայմանավորված էր աթենացիների հետ, Նիկոդրոմոսը գրավում է, այսպես կոչված, հին քաղաքը. բայց աթենացիները չկարողացան հասնել հիշյալ ժամանակին, քանի որ նրանք բավականաչափ նավեր չունեին՝ էգինացիների դեմ կռվելու համար: Մինչ աթենացիները խնդրում էին կորնթացիներին իրենց նավեր տրամադրել, ամեն ինչ ձախողվեց: Կորնթացիները, որոնք այդ ժամանակ մեծ բարեկամություն ունեին աթենացիների հետ, տվեցին նրանց պահանջած քսան նավը, յուրաքանչյուրը վճարելով հինգ դրամայով, քանի որ նվիրելը օրենքով արգելված էր: Աթենացիներն այդ նավերը ստանալով և դրանց ավելացնելով իրենց յոթանասուն նավերը, դրանք համալրեցին անձնակազմով և նավեցին էգինա, բայց արդեն պայմանավորվածից մեկ օր ուշացել էին:

90. Իսկ Նիկոդրոմոսը, քանի որ աթենացիները նշանակված ժամանակին չհայտնվեցին, նավ նստելով փախավ էգինայից: Նրան հետևեցին նաև այլ

էգինացիներ, որոնց աթենացիները բնակեցրին Սունիոնում: Այստեղից նրանք ավարառու արշավանքներ էին կատարում կղզու էգինացիների դեմ: Բայց այս տեղի է ունեցել ավելի ուշ:

91. Իսկ էգինայի հարուստները հաղթահարեցին Նիկոդրոմոսի հետ ապստամբած ժողովրդին, և այնուհետև նրանցից գերի վերցվածներին տարան ոչնչացնելու: Այս պատճառով էլ նրանք իրենց վրա հարուցեցին անեծք, որը, հակառակ իրենց թափած նիգերի, չկարողացան խավել զոհաբերություններով, մինչև որ նրանք վտարվեցին կղզուց. դրանից հետո աստվածուհին նորից նրանց նկատմամբ դարձավ ողորմած: Քանզի նրանք այդ ժամանակ ժողովրդից գերի էին վերցրել յոթ հարյուր մարդ և տարել մահապատժի: Բայց գերեվարվածներից մեկը, ազատվելով կապանքներից, փախչում է և գնում Դեմետրա Թեսմոփորայի սրբավայրի նախադուռը: Նա, դռան օղակից բռնած, ուժեղ պահում էր այն: Նրան հետապնդողները, թեև շատ փորձեցին, բայց չկարողացան նրան հեռացնել, ուստի և նրանք կտրեցին նրա ձեռքերը և այդպես տարան. իսկ այդ ձեռքերը մնացին դռան օղակին պինդ կպած:

92. Այսպես (դաժան) վարվեցին էգինացիներն իրենց յոթանասուն նավերով: Երբ աթենացիները ժամանեցին իրենց յոթանասուն նավերով, նավամարտ տեղի ունեցավ, որի ժամանակ էգինացիները չախչախվեցին և, ինչպես անցյալում, դարձյալ դիմեցին արգոսցիների օգնությանը: Բայց այս անգամ արգոսցիները չօգնեցին նրանց, մեղադրելով այն բանում, որ էգինական նավերը, Կլեոմենեսի հարկադրանքով, ուղղվեցին Արգոլիս, ուր ափ ելան լակեդեմոնացիների հետ. այդ ներխուժման ժամանակ ափ ելան նաև զորքեր սիկիոնյան նավերից: Այս պատճառով արգոսցիները հազար տաղանդ տուգանք նշանակեցին նրանց վրա, յուրաքանչյուր քաղաքի վրա հինգ հարյուրական: Այնժամ սիկիոնցիներն ընդունեցին իրենց հանցանքը և համաձայնվեցին, այն քավելու համար վճարել հարյուր տաղանդ. բայց էգինացիները ոչ միայն մերժեցին ներել, այլև դարձան ավելի ամբարտավան: Անա այս պատճառով էլ արդեն պետության կողմից ոչ մի արգոսցի չեկավ էգինացիներին օգնելու, բայց եկան շուրջ հազար կամավորներ, որոնց առաջնորդում էր Եվրիբատեսը, նմուտ մի հնգամարտիկ[64]: Սրանց մեծագույն մասը ետ չվերադարձավ, այլ էգինայում սպանվեց աթենացիների կողմից: Իսկ նրանց զորավար Եվրիբատեսը մենամարտում հաղթեց երեք այրի, բայց սպանվեց չորրորդի՝ Դեկելեսի որդի Սոփանեսի կողմից:

93. Էգինացիներն իրենց նավերով հարձակվեցին անկարգ խարսխած աթենական նավերի վրա, հաղթեցին, և նրանց նավերից չորսը, անձնակազմով հանդերձ, գերի վերցրին:

94. Այսպիսով, աթենացիները պատերազմ սկսեցին էգինացիների դեմ: Մինչդեռ Պարսիկը[65] սկսեց իրագործել իր ծրագիրը. քանի որ նրա ծառան մշտապես հիշեցնում էր նրան՝ չմոռանալ աթենացիներին, իսկ նրա մոտ գտնվող Պիսիստրատյանները շարախոսում էին աթենացիներին և նրանց դեմ գրգռում Դարեհին: Միաժամանակ Դարեհը արշավանքի պատրվակով մտադիր էր նվաճել նաև մյուս հելլեններին, որոնք իրեն հող և ջուր չէին տվել: Մարդոնիոսին, նրա կատարած անհաջող արշավանքի համար, հեռացրեց զորահրամանատարությունից: Նրա փոխարեն զորավարներ կարգեց մեդացի Դատիսին, ինչպես նաև իր զարմիկ Արտափրենեսին, Արտափրենեսի որդուն, և ուղարկեց Երետրիայի ու Աթենքի դեմ, հրամայելով ստրկացնել Երետրիան ու Աթենքը, և ստրկացվածներին բերել իր առաջ:

95. Երբ արքայի կարգած այս զորավարները, մեծաթիվ և լավ զինված հետեակով մեկնեցին ու ժամանեցին Կիլիկիայի Ալեյան դաշտը և բանակեցին, այնտեղ հասավ նաև ամբողջ նավատորմը. առափնյա քաղաքներից յուրաքանչյուրը պարտավոր էր տրամադրել նավեր: Ժամանեցին նաև ձիատար նավերը, որոնք Դարեհը հրամայել էր պատրաստել իր հարկատուներին: Սրանց վրա բարձելով ձիերը, իսկ հետևակ զորին նավերը նստեցնելով, նրանք վեց հարյուր տրիերաներով ուղղվեցին դեպի Հոնիա: Այստեղից նրանք ուղևորվեցին ոչ թե ուղիղ Հելլեսպոնտոսի և Թրակիայի ծովափի երկայնքով, այլ Սամոսից դուրս եկան ու նավարկեցին Իկարյան ծովով, կղզուց կողմ: Իմ կարծիքով, նրանք այդպես վարվեցին առավելապես վախենալով Աթոսի շուրջ նավարկելուց, քանի որ նախորդ տարում այդտեղով նավարկելիս մեծ աղետի ենթարկվեցին: Բացի այդ, դեռևս չնվաճված Նաքսոս կղզին ևս նրանց ստիպում էր այդպես նավել:

96. Երբ Իկարյան ծովով նրանք հասան Նաքսոս, քանի որ պարսիկները մտադիր չէին սկզբում հարձակվել այդ կղզու վրա, նաքսոսցիները, հիշելով նախկինում կատարված դեպքերը, առանց սպասելու պարսիկների հարձակվելուն, փախան լեռները: Պարսիկները, գերի վերցնելով իրենց ձեռքն ընկածներին, կրակի մատնեցին նրանց արբավայրերը և քաղաքը: Այս անելուց հետո նրանք ուղղվեցին մյուս կղզիների դեմ:

97. Մինչ նրանք գործում էին այսպես, դելոսցիները ևս, լքելով Դելոսը, փախան և ապաստանեցին Տենոսում: Երբ նավատորմը մոտեցավ (Դելոսին), առաջից նավարկող Դատիսը հրամայեց նավերին խարիսխ նետել ոչ թե Դելոսի առաջ, այլ հանդիպակաց Հռենեյում: Իսկ ինքը, տեղեկանալով, թե որտեղ են գտնվում դելոսցիները, քարոզ ուղարկեց՝ հայտարարելու նրանց հետևյալը. «Սրբազան (երկրի) մարդիկ. ինչո՞ւ հեռու փախաք, կասկածելով, թե ձեր հանդեպ ես չար մտադրություն ունեմ: Քանզի ես ինքս այնքան խելամիտ եմ. իսկ արքան ևս ինձ հրամայել է, որ չվերեմ երկու աստվածների ծննդավայրը[66] և չվնասեմ այնտեղ բնակվողներին: Ուստի այժմ վերադարձեք ձեր տները և ապրեք ձեր կղզում»: Քարոզի միջոցով նա այս-

պես հայտարարեց դելոսցիներին. այնուհետև զոհասեղանի վրա այրեց երեք հարյուր տաղանդ խունկ:

98. Այս անելուց հետո, Դատիսը իր նավատորմով ուղղվեց նախ Երետրիայի դեմ, իր հետ վերցնելով նաև հոնիացիներին և էոլյաններին: Նրա այնտեղից մեկնելուց հետո Դելոսում, ինչպես պատմում են դելոսցիները, եղել է երկրաշարժ, առաջինը և վերջինը մինչև իմ օրերը: Այս նշանակով, հավանաբար, աստված զգուշացնում էր մարդկանց ապագա աղետներից: Քանզի Հյուստասպեսի որդի Դարեհի, Դարեհի որդի Քսերքսեսի և Քսերքսեսի որդի Արտաքսերքսեսի թագավորության տարիներին, ընդամենը երեք սերնդի ընթացքում, Հելլադան ավելի շատ աղետների ենթարկվեց, քան Դարեհից առաջ քսան սերունդների ընթացքում: Այդ աղետները մասամբ հետևանք էին պարսից (արշավանքների), մասամբ գերիշխանության համար պայքարող գլխավոր (քաղաքների) մրցակցության[67]: Ուստի և ոչինչ անհավանական չկա, որ Դելոսում երկրաշարժ է եղել. մի բան, որ անցյալում երբեք չէր եղել: Այդ մասին դեռևս պատգամատան գուշակության մեջ ասված էր.

«Ես կշարժեմ Դելոսը, որն անշարժ է եղել ցարդ»:

Պարսից այդ անունները հունարեն կարելի է թարգմանել այսպես. Դարեհ՝ գործունյա, Քսերքսես՝ ռազմիկ, Արտաքսերքսես՝ մեծ ռազմիկ. հելլեններ նշանակեն կարող էին նրանց իրենց լեզվով այդպես կոչել[68]:

99. Մեկնելով Դելոսից, բարբարոսները մոտենում էին կղզիներին, զորք հավաքում և կղզեբնակների երեխաներին պատանդ վերցնում: Այսպես, կրոզուց կղզի անցնելով, նրանք հասան Կարիստոս. կարիստոսցիները նրանց պատանդներ չտվեցին, և հրաժարվեցին արշավել իրենց հարևանների, հատկապես Երետրիայի և Աթենքի դեմ: Ուստի և (պարսիկները) հրանց պաշարեցին և երկիրը ավերեցին, մինչև որ կարիստոսցիները հարեցին պարսիկներին:

100. Երետրիացիներն իմանալով, որ պարսկական նավատորմն արշավում է իրենց վրա, օգնություն խնդրեցին աթենացիներից: Աթենացիները չմերժեցին իրենց օգնությունը, և ուղարկեցին իրենց չորս հազար վիճակառուներին, որոնք տիրում էին Քաղկիսի հիպոբոտեսների հողերին[69]: Երետրիացիների այս որոշումը, ըստ երևույթին, ոչ լիովին ճիշտ էր. նրանք աթենացիներին օգնության հրավիրեցին, բայց նրանց մեջ երկպառակություն կար: Ոմանք ուզում էին լքել քաղաքը և փախչել Եվբեայի լեռները. մյուսներն էլ, պարսիկներից անձնական օգուտ քաղելու ակնկալությամբ, դավաճանություն էին պատրաստում: Այնժամ Նոքոնի որդի Այսքինեսը, որը Երետրիայի ազդեցիկ մարդկանցից էր, տեղյակ լինելով այս բոլորին, ամեն ինչ հաղորդեց ժամանած աթենացիներին, և խնդրեց նրանց վերադառնալ իրենց երկիրը,

որպեսզի չկործանվեն մյուսների հետ: Իսկ աթենացիներն ընդունեցին Այսքինեսի խորհուրդը:

101. Եվ սրանք, անցնելով Օրոպոս[70], փրկվեցին: Իսկ պարսիկները մոտեցան Տեմենոսին, Քոյրեային և Այգիլեային Երետրիա երկրում: Այս վայրերը գրավելուց հետո, պարսիկներն իսկույն ափ հանեցին իրենց հեծելազորը և պատրաստվեցին հարձակվելու իրենց թշնամու վրա: Իսկ երետրիացիները որոշեցին դուրս չգալ քաղաքից և մարտի չբռնվել: Նրանք մտահոգված էին սոսկ իրենց պարիսպների պաշտպանությամբ, քանի որ որոշել էին չլքել քաղաքը: Պարիսպների շուրջ վեց օր տեղի ունեցան դաժան մարտեր և երկու կողմից էլ մեծ թվով մարդիկ ընկան: Իսկ յոթերորդ օրը երետրիացի երկու ականավոր քաղաքացիներ, Ալկիմաքոսի որդի Եվփորբոսը և Կյունեոսի որդի Փիլագրոսը, քաղաքը մատնեցին պարսիկներին: Պարսիկները, մտնելով քաղաք, կողոպտեցին ու հրկիզեցին սրբավայրը, վրեժ լուծելով Սարդեսում եղած սրբավայրի հրկիզման համար, իսկ բնակիչներին, Դարեհի հրամանի համաձայն, ստրկացրին:

102. Երետրիան նվաճելով, նրանք մի քանի օր մնացին այնտեղ և այնուհետև նավեցին դեպի Ատտիկյան երկիր: Նրանք աթենացիներին ճշում էին ետ, ենթադրելով, որ սրանք ևս կանեն այն, ինչ արել էին երետրիացիները: Հեծելազորի գործողությունների համար Մարաթոնը Ատտիկայի ամենահարմար վայրն էր և, բացի այդ, այն գտնվում էր Երետրիային առավել մոտ: Այստեղ էլ նրանց առաջնորդեց Հիպպիասը, Պիսիստրատոսի որդին:

103. Այդ մասին տեղեկանալով, աթենացիները ևս շարժվեցին դեպի Մարաթոն: Նրանց գլխավորում էին տասը ստրատեգոսներ[71], որոնցից տասներորդը Միլտիադեսն էր: Վերջինիս հորը, Ստեսանորի որդի Կիմոնին, Աթենքից արտաքսել էր Հիպպոկրատեսի որդի Պիսիստրատոսը: Վտարանդության ժամանակ պատահեց, որ նա Օլիմպիայում հաղթանակ տարավ քառաձի կառքի մրցույթներում: Այս հաղթանակով նա ստացավ նույնպիսի մրցանակ, ինչպիսին և իր համամայր եղբայր Միլտիադեսը: Հաջորդ օլիմպիադայում նույն այդ ձիերով Կիմոնը դարձյալ հաղթեց, բայց թույլ տվեց, որ հաղթող հայտարարվի Պիսիստրատոսը: Հաղթանակը զիջելով Պիսիստրատոսին, Կիմոնը, ըստ պայմանի, վերադառնում է Աթենք: Նույն այդ ձիերով նա երրորդ անգամ հաղթանակ է տանում Օլիմպիայում: Այնուհետև, երբ արդեն Պիսիստրատոսը կենդանի չէր, Կիմոնը սպանվում է Պիսիստրատոսի որդիների կողմից[72]: Սրանք սպանեցին Կիմոնին վարձված մարդկանց միջոցով, զիջեր ժամանակ պրիտանեյոնում[73]: Կիմոնը թաղվել է քաղաքից դուրս, Հովտամեջ կոչված հանապարհից այն կողմ: Իսկ նրա դիմաց թաղել են ձիերին, որոնք երեք անգամ օլիմպիական մրցանակ են ստացել: Նման սխրանք անցյալում կատարել են միայն լակոնիացի Եվագորասի ձիերը. իսկ նրան-

ցից բացի՝ ոչ մեկի: Կիմոնի ավագ որդին, Ստեսագորասը, այդ ժամանակ ապրում էր Քերսոնեսոսում, իր նորեղբայր Միլտիադեսի մոտ, իսկ կրտսերը մնացել էր Աթենքում՝ Կիմոնի մոտ. սրան կոչել էին Միլտիադես, Քերսոնեսոսում գաղութ հիմնադրած Միլտիադեսի անունով:

104. Արդ, այս Միլտիադեսը, Քերսոնեսոսից վերադառնալով, դարձավ աթենացիների ստրատեգոսը: Երկու անգամ նա խուսափել էր մահից: Առաջին անգամ՝ երբ փյունիկեցիները նրան հետապնդել էին մինչև Իմբրոս, ամեն գնով նրան բռնելու և արքայի առաջ տանելու համար: Խուսափելով փյունիկեցիների հետապնդումից և հասնելով իր երկիրը, նա իրեն ապահով էր զգում: Բայց այնժամ նրա հակառակորդները բռնեցին նրան և դատարան առաջնորդեցին, մեղադրելով, որ Քերսոնեսոսում հաստատել է բռնատիրություն: Սակայն Միլտիադեսն այդ մեղադրանքից ևս ազատվելով, հանրության ընտրությամբ կարգվեց աթենական ստրատեգոս:

105. Նախ, դեռևս քաղաքում գտնված ժամանակ, ստրատեգոսները Սպարտա, որպես բանբեր, ուղարկում են աթենացի Փիդիպպիդեսին, որը վազորդ էր և գրաղվում էր դրանով: Անա այս Փիդիպպիդեսը հետագայում պատմում էր և հավատացնում աթենացիներին, թե Տեգեայից վերև գտնվող Պարթենիոն լեռան վրա իրեն պատահել է Պան աստվածը, որը կոչելով իր անունը, պատվիրում է հարցնել աթենացիներին, թե ինչո՞ւ նրանք արհամարհում են իրեն. մինչդեռ ինքը բարյացակամ է աթենացիների հանդեպ, անցյալում հաճախ օգնել է նրանց, և այսուհետև նույնպես օգտակար կլինի: Աթենացիներն այս պատմությունը ճշմարիտ համարելով, հավատացին նրա խոսքերին և, երբ նրանց դրությունը դարձյալ բարվոք դարձավ, նրանք ակրոպոլիսի ստորոտում սրբավայր հաստատեցին՝ ի պատիվ Պանի, և այդ պատգամից հետո նրանք ամենամյա զոհաբերություններով և ջահերթերով սիրաշահում են նրան:

106. Արդ, այս Փիդիպպիդեսը, որին ստրատեգոսներն ուղարկել էին Աթենքից և որին, ինչպես ինքն էր պատմել, հայտնվել էր Պանը, երկրորդ օրը հասնում է Սպարտա և, ներկայանալով իշխաններին, ասում է. «Ով լակեդեմոնացիներ. աթենացիները խնդրում են ձեզ օգնել իրենց և թույլ չտալ, որ Հելլադայի հնագույն քաղաքը ստրկացվի բարբարոսների կողմից: Քանզի այժմ արդեն Երետրիան ստրկացվել է և Հելլադան դարձել է մեկ հայտնի քաղաքով առավել թույլ»: Փիդիպպիդեսը այսպես հաղորդեց իրեն հանձնարարվածը, իսկ լակեդեմոնացիները որոշեցին օգնել աթենացիներին: Բայց նրանք չէին կարող այդ իսկույն կատարել, չկամենալով խախտել օրենքը. քանզի ամսվա առաջին կեսի իններորդ օրն էր, իսկ այդ իններորդ օրը, իրենց ասելով, չի կարելի արշավանքի դուրս գալ, եթե լուսինը չի բոլորել:

107. Եվ այսպես, լակեդեմոնացիները սպասում էին լիալուսնին. իսկ

Հիպպիասը, Պիսիստրատոսի որդին, այդ ընթացքում բարբարոսներին առաջնորդում էր դեպի Մարաթոն: Նախորդ գիշերը նա այսպիսի երազ էր տեսել: Նա տեսել էր, որ ինքն իբր քնել էր իր հարազատ մոր հետ: Այս երազը նա մեկնում էր այն իմաստով, թե ինքը կվերադառնա Աթենք և, վերագրավելով իշխանությունը, կվախճանվի իր երկրում, խոր ծերության մեջ: Այսպես էր նա մեկնաբանում իր երազը: Այնժամ Հիպպիասը (առաջնորդելով պարսիկներին), Երետրիայում գերեվարվածներին նավերով փոխադրեց ստյուրոսցիների Այգիլեա կոչված կղզին, իսկ նավերին պատվիրեց խարսխել Մարաթոնում, և ափ դուրս գալուց հետո, բարբարոսների զորքը տեղադրեց ռազմական կարգերով: Այս ընթացքում նա սկսեց փղշտալ և հազալ սովորականից ուժեղ: Քանի որ նա շատ ծեր էր, նրա ատամների մեծ մասը շարժվում էին. և անա, ուժեղ հազալիս, նրա ատամներից մեկը նույնիսկ դուրս թռավ և ընկավ ավազին: Հիպպիասը շատ ջանք գործադրեց այն գտնելու, բայց ատամը չգտնվեց: Այնժամ նա հառաչեց ու ներկաներին այսպես ասաց. «Այս երկիրը մերը չէ, և մենք չենք կարողանա այն նվաճել. այս երկրից ինձ օրենքով հասանելիքը արդեն իմ ատամը վերցրեց»:

108. Արդ, Հիպպիասը ենթադրեց, որ այսպիսով իր երազը կատարվեց: Հերակլեսի սրբավայրում բանակած աթենացիներին օգնության եկան պլատեացիներն իրենց ամբողջ համայնքով. քանզի պլատեացիներն իրենց վրա առնել էին աթենացիների պաշտպանությանը, որի համար էլ աթենացիներն արդեն մեծ հոգսերի տակ էին ընկել: Պլատեացիները դիմել էին աթենացիների պաշտպանությանը հետևյալ կերպ: Ճնշվելով թեբեցիներից, նրանք խնդրել էին Անամանդրիդեսի որդի Կլեոմենեսի օգնությունը, որը լակեդեմոնացիների հետ գտնվում էր այնտեղ, մոտերքում. բայց նա մերժեց (օգնել) հետևյալ խոսքերով. «Մենք ապրում ենք ձեզանից հեռու և մեր օգնությունը ձեզ կլինի անօգուտ. քանզի դուք կարող եք բազմիցս գերեվարվել, մինչև մենք այդ մասին կլսենք: Մենք ձեզ խորհուրդ կտանք ապավինել աթենացիների օգնությանը, քանզի նրանք ձեր հարևաններն են և կարող են ձեզ լավ պաշտպանել»: Այս խորհուրդը լակեդեմոնացիները տալիս էին ոչ այնքան պլատեացիների հանդեպ ունեցած բարյացակամությունից, որքան աթենացիներին բեոտիացիների հետ առավել թշնամացնելու ցանկությունից մղված: Պլատեացիները անսացին լակեդեմոնացիների այս խորհրդին. և երբ աթենացիները զոհեր էին մատուցում տասներկու աստվածներին[74], պլատեացիները որպես աղերսարկուներ նստեցին զոհասեղանին և իրենց հանձնեցին աթենացիների հովանավորությանը: Այս լսելով, թեբեցիներն արշավեցին պլատեացիների վրա, իսկ աթենացիները եկան վերջիններիս օգնության: Երկու կողմերն արդեն պատրաստ էին պատերազմելու, բայց կորնթացիները, որոնք այդ ժամանակ գտնվում էին այնտեղ, մոտերքում, թույլ

չավեցին այդ. երկու կողմերի համաձայնությամբ, նրանք սահմանագիծ որոշեցին այն պայմանով, որ թեբեցիները չպետք է անհանգստացնեն բեովտիական միության հարել չցանկացող բեովտիացիներին: Այս վճիռը կայացնելուց հետո կորնթացիները մեկնեցին: Իսկ բեովտիացիները, երբ աթենացիները վերադառնում էին իրենց տուն, հարձակվեցին նրանց վրա, բայց պարտվեցին: Այնժամ աթենացիները անցան սահմանը, որ պլատեացիների համար նշել էին կորնթացիները, և Ասոպոս գետն ու Հյուսիսան հայտարարեցին սահման Պլատեայի և Թեբեի միջև: Այս հանգամանքներում, անա, պլատեացիներն իրենց հանձնեցին աթենացիների պաշտպանությանը, և այժմ եկան Մարաթոն նրանց օգնելու:

109. Աթենացի ստրատեգոսների կարծիքները բաժանվեցին երկու մասի. ոմանք դեմ էին պարսից դեմ հակատամարտելուն, քանի որ իրենց զորքը փոքրաթիվ էր. իսկ մյուսները, որոնց թվում նաև Միլտիադեսը, կողմնակից էին (հակատամարտելուն): Քանի որ կարծիքներն այդպես բաժանվեցին և արդեն գերակշռում էր դրանցից վատագույնը, այնժամ Միլտիադեսը դիմեց տասնմեկերորդ քվեարկողին, որին աթենացիները վինակով ընտրել էին պոլեմարքոս[75]. աթենացիները նոյն անտի պոլեմարքոսներին տվել էին ստրատեգոսներին հավասար ձայնի իրավունք: Այդ ժամանակ պոլեմարքոս էր ափիդնացի Կալլիմաքոսը: Անա սրա մոտ է գալիս Միլտիադեսը և խոսում այսպես. «Այժմ, Կալլիմաքոս, քո ձեռքին է Աթենքը դարձնել ստրուկ, և կամ այն ազատագրելով, թեզ համար հավերժական այնպիսի հուշարձան կանգնեցնել, որպիսին չկանգնեցրին մինչև իսկ Հարմոդիոսը և Արիստոգիտոնը[76]: Քանզի իր ամբողջ գոյության ընթացքում Աթենքը երբեք այնպիսի ծանր վտանգի առաջ կանգնած չի եղել, ինչպես հիմա: Եթե աթենացիները նպատակվեն մեդացիներին, ապա նրանց բախտը որոշակի է. նրանք նորից կընկնեն Հիպպիասի գերիշխանության տակ: Իսկ եթե մեր քաղաքը հաղթի, ապա այն կդառնա հելլենական քաղաքների մեջ առաջինը: Այժմ ես թեզ կբացատրեմ, թե ինչպե՞ս կարելի է այդ կատարել և թե ինչո՞ւ հատկապես այդ հարցը վճռելու իրավունքը պատկանում է թեզ: Մենք, տասը ստրատեգոսներս, տարակարծիք ենք իրար: Մի մասը որոշել է հակատամարտել, մյուսը՝ ոչ: Եթե այժմ որոշենք չկռվել, ապա, իմ կարծիքով, մեծ երկպառակություն կծագի և այնպես կցնցի աթենացիներին, որ նրանք կնահանջեն մեդացիներին: Իսկ եթե մենք մարտն սկսենք նախքան աթենացիներից որևէ մեկի մոտ դավանանության միտք ծագելը, ապա մենք, քանի որ ստրատեգոսները հավասարապես արդար կլինեն, հաղթանակ կտանենք: Այժմ այս ամենը քո իշխանությանն է հանձնված և (վճռելը) թեզանից է կախված: Եթե դու միանաս մեր կարծիքին, ապա քո հայրենիքը կլինի ազատ ու կդառնա առաջին քաղաքը

Հելլադայում: Իսկ եթե դու անցնես հակատամարտելուն դեմ եղողների կողմը, ապա կկատարվի այս բոլորի հակառակը»:

110. Այս խոսքերով Միլտիադեսը իր կողմը գրավեց Կալլիմաքոսին: Երբ պոլեմարքոսի կարծիքը ևս հարեց Միլտիադեսի կարծիքին, որոշվեց հակատամարտել: Այնուհետև այն զորավարները, որոնք հակատամարտի կողմնակից էին, երբ հասավ նրանց յուրաքանչյուրի հերթը զորքը գլխավորելու, նրա զորահրամանատարությունը հանձնում էին Միլտիադեսին: Բայց սա, թեև ընդունեց զորահրամանատարությունը, սակայն հակատամարտը չսկսեց մինչև իր զորահրամանատարության բուն օրը:

111. Եվ այսպես, երբ հասավ Միլտիադեսի հերթը, այնժամ աթենացիները հակատամարտելու համար այսպես դասավորվեցին: Աջ թևն առաջնորդում էր պոլեմարքոս Կալլիմաքոսը. այդ ժամանակ աթենացիների մոտ կարգն այնպիսին էր, որ պոլեմարքոսը պետք է առաջնորդեր աջ թևը: Կալլիմաքոսի առաջնորդած աջ թևին հետևում էին (ատտիկյան) ֆիլաները, հաջորդաբար ըստ իրենց համարների: Վերջում կանգնել էին պլատեացիները, զբաղեցնելով ձախ թևը: Այս հակատամարտից սկսած, Աթենքում յուրաքանչյուր հինգ տարին մեկ նշվող (Պանաթենական) տոնախմբության ժամանակ զոհաբերություններ կատարելիս, աթենացի քարոզը աղոթք էր արտասանում աթենացիների և պլատեացիների բարօրության համար: Իսկ այդ ժամանակ, երբ աթենացիները դասավորվեցին Մարաթոնում (հակատամարտելու), ստացվեց այսպես. հելլենների շարքերի երկարությունը թեև հավասարվեց մեդացիների շարքերին, բայց կենտրոնը ընդամենը մի քանի շարք էր, ուստի և ավելի թույլ. մինչդեռ երկու թևերն ավելի խիտ էին:

112. Շարքերի դասավորումը վերջացնելուց հետո, երբ զոհաբերման նշանակները նպաստավոր երևացին, աթենացիները, տրված ազդանշանի համաձայն, վազքով նետվեցին բարբարոսների վրա[77]: Հակառակորդների միջև տարածությունը ութ ասպարեզից պակաս չէր: Տեսնելով սրընթաց մոտեցող (թշնամուն), պարսիկները պատրաստվեցին դիմադրել: Աթենացիների գործելակերպը պարսիկներին թվում էր անմիտ և նույնիսկ կործանարար, քանի որ թշնամին փոքրաթիվ էր, և ընդ որում, արագ ընթանում էր պարսիկների վրա, առանց հեծելազորի և աղեղնավորների (պաշտպանության): Այսպես դատում էին բարբարոսները: Բայց աթենացիները խիտ շարքերով նետվեցին բարբարոսների վրա և կռվեցին հիշարժան կերպով: Քանզի, ինչքան ինձ հայտնի է, սրանք առաջին հելլեններն էին, որոնք վազքով նետվել են թշնամու վրա և չեն սարսափել մեդական զգեստի և այդ զգեստը հագած զինվորների տեսքից: Որովհետև մինչև այդ նույնիսկ սոսկ «մեդացի» անունը սարսափեցնում էր հելլեններին:

113. Մարաթոնում հակատամարտը երկար տևեց: Թազմաչարքերի միջ-

նամասում հաղթում էին բարբարոսները. այստեղ կանգնած էին իրենք պարսիկները և սակերը: Անա այստեղ բարբարոսները հաղթելով, ճեղքեցին (աքենացիների) շարքերը և սկսեցին նրանց քշել դեպի միջերկրայքը: Սակայն երկու թևերում հաղթեցին աքենացիները և պլատեացիները: Այստեղ հաղթելով, աքենացիները թույլ տվեցին, որ պարտված բարբարոսները փախչեն, իսկ իրենք, երկու թևերը միացնելով իրար, սկսեցին կռվել միջնամասը ճեղքած թշնամու դեմ: Այստեղ ևս հաղթեցին աքենացիները, որից հետո նրանք սկսեցին հալածել փախչող պարսիկներին, կոտորելով նրանց, մինչև որ հասան ծով: Այստեղ նրանք փորձեցին հարձակվել նավերի վրա և այրել դրանք:

114. Այս պատերազմում բաշաբար կռվելով ընկավ պոլեմարքոս Կալիմաքոսը, իսկ ստրատեգոսներից՝ Թրասիլաոսի որդի Ստասիլաոսը, ինչպես նաև Եվփորիոնի որդի Կյունեգիրոսը[78]. նրա թևը կտրել էին սակրով, երբ նա փորձել էր կառչել նավախելի վերնամասից: Ընկան նաև անվանի շատ աքենացիներ:

115. Այսպիսով, աքենացիները գրավեցին յոթ նավ: Մնացած նավերով բարբարոսները դարձյալ ճեռացան ափից. հետո, իրենց հետ վերցնելով կրզում թողած երետրիացի գերիներին, պարսիկները, նավարկելով շրջանցեցին Սունիոնը, հույս ունենալով, որ ավելի շուտ կհասնեն Աթենք, քան աքենացի ռազմիկները: Աքենացիները կասկածում էին, որ պարսիկներն այդ խորամանկությանը դիմել են Ալկմեոնյանների ենթգամիս խորհրդով. ասում էին, թե Ալկմեոնյանները, պայմանավորվելով պարսիկների հետ, երբ վերջիններս նավերի վրա էին, վանանով ազդանշան էին տվել:

116. Մինչ պարսիկները նավերով շրջանցում էին Սունիոնը, աքենացիները, հետիոտն, ամբողջ արագությամբ վերադառնում են պաշտպանելու իրենց քաղաքը. նրանք այնտեղ հասան ավելի շուտ, քան բարբարոսները: Նրանք եկել էին Մարաթոնում գտնվող Հերակլեսի սրբավայրից և բանակեցին Հերակլեսի մեկ այլ սրբավայրում, որը գտնվում է Կյունոսարգեսում: Բարբարոսների նավերը հասնելով Փալերոն, որն այդ ժամանակ Աթենքի նավակայանն էր, կանգնեցին այնտեղ: Պարսիկները որոշ ժամանակ այնտեղ մնալուց հետո, նավեցին դեպի Ասիա:

117. Մարաթոնի այս ճակատամարտում բարբարոսներից սպանվեց վեց հազար չորս հարյուր մարդ, իսկ աքենացիներից՝ հարյուր իննսուն երկու: Այսքան էին երկու կողմերից ընկածները: Այնտեղ պատահել է նաև զարմանալի մի դեպք: Եպիգելոս անունով մի աքենացի, Կուփագորասի որդին, որը ճակատամարտում կռվել է արիաբար, զրկվել է տեսողությունից, թեև ոչ մի հարված չէր ստացել ոչ նիզակով և ոչ նետով: Այդ օրվանից նա կուրացել է և ամբողջ կյանքում մնացել կույր: Ես լսել եմ, որ նա այդ մասին այսպիսի բան է պատմել: Նրան, իբր, երևացել է ծանրազեն հսկա մի մարդ, որի

մորուքն ամբողջապես ծածկում էր նրա վահանը: Այս տեսիլն անցել է իր կողքով, բայց սպանել է իր մոտ կանգնածին: Ինձ ասել են, թե այսպես է պատմել Եպիգելոսը:

118. Դատիսն իր զորքով Ասիա ուղևորվելիս, հասնում է Մյուկոնոս, որտեղ և ճնելիս երազ է տեսնում: Ոչ ոք չգիտի, թե այդ ի՞նչ երազ էր: Իսկ նա, առավոտյան, հրամայեց խուզարկել բոլոր նավերը: Փյունիկյան նավերից մեկի վրա հայտնաբերվեց Ապոլլոնի ոսկեզօծ արձանը: Դատիսը հարցուփորձեց, թե՝ որտեղի՞ց է այն հափշտակված: Իմանալով, թե այն ո՞ր սրբավայրից է վերցված եղել, Դատիսն իր նավով ուղևորվեց Դելոս. իսկ դելոսցիներն արդեն վերադարձել էին իրենց կղզին. ուստի նա, արձանը դնելով սրբավայրում, հանձնարարեց դելոսցիներին, այն տանել թեբեական Դելֆոն (քաղաքը), որը գտնվում էր Քաղկիսի հանդիպակաց ծովափին: Այսպես կարգադրելուց հետո, Դատիսը ետ մեկնեց. իսկ դելոսցիներն այդ արձանը չտարան. միայն քսան տարի անց իրենք թեբեցիները, պատգամատան հրամանով, այն տարան Դելֆոն:

119. Երբ նավարկելով Ասիա հասան, Դատիսը և Արտափրենեսը գերեվարված երետրիացիներին տարան Սուսա: Դարեհ արքան խիստ զայրացել էր երետրիացիների վրա՝ դեռևս նախքան վերջիններիս գերեվարվելը, այն բանի համար, որ նրանք առաջինն էին իր դեմ բռնություն սկսել: Բայց այժմ, տեսնելով նրանց իր առաջ, իր իշխանությանը հանձնված, արքան նրանց ոչ մի ուրիշ չարիք չպատճառեց, այլ նրանց բնակեցրեց Կիսսիա երկրի Արդերիկա կոչված իր կայանում, որը գտնվում է Սուսայից երկու հարյուր տաս ասպարեզ և քառասուն ասպարեզ հեռու այն հայտնի հորից, որտեղից ստանում են երեք տարաբնույթ նյութ. քանզի այդ հորից հանում են ասֆալտ և աղ և յուղ՝ հետևյալ կերպ: (Հեղուկը) հանում են շրջոքից կրունկով. որին դույլի փոխարեն ամրացված է կիսած տիկ, որը սուզելով դուրս են հանում (հեղուկը) և այն լցնում ջրավազանը. այնուհետև այն վերալցնում են մեկ այլ ավազան, որտեղ այն տարբերվում է երեք մասի: Ասֆալտը և աղը իսկույն նստվածք են տալիս. իսկ յուղը, որը պարսիկներն անվանում են հռադինակե, սև է և ունի տհաճ հոտ: Անա այստեղ Դարեհ արքան բնակեցրեց երետրիացիներին, որոնք մեր օրերում ևս բնակվում են այդ վայրում, պահպանելով իրենց հին լեզուն: Այդպիսին էր երետրիացիների ճակատագիրը:

120. Փալուսից հետո Աթենք ժամանեցին երկու հազար լակեդեմոնացիներ, որոնք այնքան շտապել էին տեղ հասնելու, որ Սպարտայից դուրս գալուց հետո, երրորդ օրը մտնում են Ատտիկա: Նրանք թեև ուշացան ճակատամարտից, սակայն ուզում էին տեսնել (կռվում սպանված) մեդացիներ-

ին: Նրանք եկան Մարաթոն և տեսան նրանց. այնուհետև, զովելով աթենացիներին և նրանց արարքը, վերադարձան (Սպարտա):

121. Ինձ զարմանալի և անհավատալի է թվում, որ Ալկմեոնյաններն այդ ժամանակ, իրոք, պայմանավորվել էին պարսիկների հետ և նրանց ազդանշան տվել վահանով, աթենացիներին բարբարոսների և Հիպպիասի լծի տակ դնելու ցանկությամբ: Քանզի նրանք նույնքան և ավելի տիրանատյաց էին, ինչքան Փենիպպոսի որդի Կալլիասը, Հիպպոնիկոսի հայրը: Այս Կալլիասը աթենացիներից միակն էր, որը, Պիսիստրատոսի վտարումից հետո, համարձակվեց գնել պետության կողմից աճուրդի հանված նրա կալվածքը: Բացի այդ, նա միշտ էլ խիստ թշնամաբար է վերաբերվել Պիսիստրատոսին:

122. Այս Կալլիասի մասին արժե խոսել բազում պատճառներով: Նախ, ինչպես արդեն ասել եմ, նա մեծ արիությամբ փրկեց իր հայրենիքը. այնուհետև, Օլիմպիայում իր կատարածի համար. նա ձիարշավում հաղթեց և քառաձիով եղավ երկրորդը: Դրանից առաջ ևս Պյութիական խաղերում շահել էր մրցանակ և իր շքեղ ծախսերով հայտնի դարձել համայն Հելլադայում: Վերջապես, նա իր երեք դուստրերի համար ինչպիսի (հոգատար) հայր եղավ: Երբ նրանք ամուսնության տարիքի հասան, նա մեծաշքեղ ընծաներ պարգևեց նրանց և թույլ տվեց նրանցից յուրաքանչյուրին իր համար աթենացիների միջից որպես ամուսին ընտրելու իր ցանկացածին, և նրան կնության տվեց այդ մարդուն:

123. Ալկմեոնյանները նույնքան տիրանատյաց էին, ինչքան այս Կալլիասը: Ուստի և զարմանում եմ ու չեմ կարող հավատալ այն զրպարտանքին, թե իբր նրանք վահան են բարձրացրել, քանի որ նրանք տիրանների իշխանության ամբողջ ընթացքում վտարանդի են եղել և նրանց շանքերով է, որ Պիսիստրատյանները զրկվել են իրենց բռնակալ իշխանությունից: Ուստի և, իմ կարծիքով, առավելապես սրանք են Աթենքի ազատարարները, քան Հարմոդիոսը և Արիստոգիտոնը: Քանզի վերջիններս, սպանելով Հիպարքոսին, առավել ևս կատաղեցրին կենդանի մնացած Պիսիստրատյաններին, առանց վերջ տալու բռնատիրությանը: Իսկ Ալկմեոնյանները իրականում ազատագրել են Աթենքը, եթե, ճարկավ, ճիշտ է, որ սրանք են Պյութիային համոզել կարգադրելու լակեդեմոնացիներին, ինչպես ես արդեն պատմել եմ, ազատագրել Աթենքը:

124. Դուցե, սակայն, Ալկմեոնյաններն իրենց հայրենիքը մատնեցին աթենական համայնքի դեմ զայրացած լինելո՞ւ պատճառով: Բայց այդ ժամանակ Աթենքում չկային առավել ազնվական և առավել հարգված մարդիկ, քան նրանք: Հետևաբար, բոլորովին անհավանական է, որ նրանք այդ հնպատակով ազդանշանել են վահանով: Այսուհանդերձ, վահանը բարձրացվել է և այդ չի կարելի ժխտել, քանի որ իրողություն է: Բայց թե ո՞վ է եղել այն բարձրացնողը, ես ոչինչ ասել չեմ կարող:

125. Ալկմեոնյանները դեռ հնուց հայտնի են եղել Աթենքում: Բայց Ալկմեոնի և Մեգակլեսի ժամանակից նրանք առավել հայտնի դարձան: Ալկմեոնը. Մեգակլեսի որդին, երբ լյուդիացիները, որոնց Սարդեսից ուղարկել էր Կրեսոսը, ժամանեցին Դելփյան պատգամատուն, օգնել էր նրանց և հոգատար եղել նրանց հանդեպ[79]: Դելփյան պատգամատուն եկած լյուդիացիներից նրանց հանդեպ Ալկմեոնի ցույց տված օժանդակության մասին լսելով, Կրեսոսը նրան հրավիրեց Սարդես: Երբ Ալկմեոնը եկավ Սարդես[80], (Կրեսոսը) նրան պարգևեց այնքան ոսկի, ինչքան նա կարող էր մեկ անգամից կրել իր վրա: Նման պարգևի դեպքում Ալկմեոնը այսպիսի մի հնարամտություն արեց: Նա հագավ լայն մի խիտոն, որի վրա թողել էր խորը մի ծոց. ոտներին հագավ այնպիսի խոշոր երկարաճիտ կոշիկներ, ինչպիսիք կարողացավ գտնել, և այդպես մտավ գանձարան, որտեղ նրան առաջնորդեցին: Ընկնելով ոսկե ավազի կույտի վրա, Ալկմեոնը նախ իր սրունքների մոտով կոշիկների մեջ ոսկի լցրեց, ինչքան դրանցում կարելի էր տեղավորել, այնուհետև ոսկով լցրեց ամբողջ ծոցը, ոսկու ավազ ցանեց իր գլխի մազերին, ինչպես նաև լցրեց իր բերանը: Այսպես դուրս գալով գանձատնից, նա հազիվ քարշ էր տալիս իր կոշիկները և նման էր ամեն ինչի, բացի մարդուց: Նրա բերանը խցանված էր, իսկ մարմինն ամեն կողմից փքված: Նրան (այսպես) տեսնելով, Կրեսոսն սկսեց ծիծաղել, և նրան շնորհեց ոչ միայն նրա վերցրած ամբողջ ոսկին, այլ պարգևեց այդ ամենից ոչ պակաս ուրիշ ոսկի ևս: Այսպես, ահա, այդ տունը մեծապես հարստացավ: Այս Ալկմեոնը պահում էր քառաձի կառք և օլիմպիական մրցումներում հաղթանակ տարավ:

126. Մեկ սերունդ հետո Կլիսթենեսը, Սիկիոնի տիրանը, այդ տունն այնքան բարձրացրեց, որ այն Հելլադայում դարձավ շատ ավելի անվանի, քան էր առաջներում: Անդրեասի որդի Արիստոնիմոսի որդի Մյուրոնի որդի Կլիսթենեսը ուներ մի դուստր՝ Ագարիստե անունով: Սրան նա կամեցավ կնության տալ հելլեններից նրան, ում նա կհամարեր լավագույնը: Տեղի ունեցած օլիմպիական մրցումներում Կլիսթենեսը քառաձի կառքով հաղթանակ տարավ և քարոզի միջոցով այսպես հայտարարեց. «Հելլեններից նա, ով իրեն արժանի է համարում Կլիսթենեսի փեսան դառնալու, վաթսուներորդ օրը, կամ ավելի շուտ, թող գա Սիկիոն. քանզի Կլիսթենեսը որոշել է իր աղջկա հարսանիքն անել տարվա ընթացքում, սկսած վաթսուներորդ օրից»: Այնժամ բոլոր այն հելլենները, որոնք հպարտանում էին իրենց նախնիներով և հայրենի քաղաքով, ժամանեցին (Սիկիոն) որպես փեսացուներ:

Նրանց համար Կլիսթենեսը կազմակերպեց վազքի և ըմբշամարտի մրցումներ:

127. Իտալիայից եկավ սիբարիսցի Սմինդիրիդեսը, Հիպպոկրատեսի որդին, իր ժամանակ բոլորից շքեղ ապրող մի մարդ. քանզի Սիբարիսը այդ ժամանակ առավել բարգավաճ էր. (եկավ) նաև Դամասոսը Սիրիսից, իմաստուն կոչված Ամյուրիսոսի որդին: Սրանք եկել էին Իտալիայից: Հոնիական ծոցից եկավ եպիդամնոսցի Ամփիմնեստոսը, Եպիստրոփոսի որդին. սա եկել էր Հոնիական ծոցից: Էտոլիայից եկավ Տիտորմոսի եղբայր Մալեսը. այն Տիտորմոսի, որը բոլոր հելլեններին գերազանցում էր իր ուժով, բայց մարդկանցից փախել էր Էտոլիայի հեռավոր ծայրամասը: Իսկ Պելոպոնեսոսից (եկավ) Լեոկեդեսը, Արգոսի տիրան Փեյդոնի որդին. այն Փեյդոնի, որը Պելոպոնեսոսում հաստատել է չափ ու կշիռը և եղել է ամենահանդուգնը հելլեններից. նա էլեացի դատավորներին դուրս անելով օլիմպիական մրցումներից, ինքը դարձավ մրցումների ղեկավար: Անա այս մարդու որդին էր եկել, ինչպես նաև արկադիացի Ամփանտոսը, Լիկուրգոսի որդին, Տրապեզունից, և Պայոսից ազնվացի Լափանեսը, Եվփորիոնի որդին. այն Եվփորիոնի, որը, ըստ արկադիական զրույցի, իր տանը հյուրընկալել է Դիոսկուրոսներին[8], և այդ օրվանից ի վեր հյուրընկալում է բոլոր մարդկանց. (եկավ) նաև Էլիսից Օնոմաստոսը, Ագեոսի որդին: Սրանք եկել էին բուն Պելոպոնեսոսից. իսկ Աթենքից ժամանեցին Մեգակլեսը, Ալկմեոնի որդին. այն Ալկմեոնի, որն այցելել էր Կրեսոսին, և մեկ ուրիշը՝ Տիսանդրոսի որդի Հիպպոկլիդեսը, որն Աթենքի ամենահարուստ և ամենազգեցիկ մարդն էր: Իսկ Երետրիայից, որն այդ ժամանակ բարգավաճ էր, եկավ Լյուսանիասը. Եվբեայից միայն սա էր եկել: Թեսալիայից եկավ մի սկոպադեցի, Դիակտորիդեսը՝ Կրանոնից, իսկ Մոլոսսոսից՝ Ալկոնը:

128. Անա սրանք էին փեսացուները: Երբ փեսացուները ժամանեցին նշված օրը, Կլիսթենեսը նախ հարցափորձեց նրանցից ամեն մեկի հայրենի քաղաքի և տոհմի մասին: Այնուհետև, փեսացուներին իր մոտ մեկ տարի պահելով, (Կլիսթենեսը) փորձում էր նրանց արիությունը, մտածելակերպը, դաստիարակությունը և բնավորությունը: Ընդ որում, նա այդ մասին նրանց հետ զրուցում էր առանձին և բոլորի հետ համատեղ: Նրանցից առավել երիտասարդների համար նա կազմակերպում էր մարզական մրցումներ, իսկ ավելի շատ նրանց փորձում էր ընդհանուր խնջույքներում: Փեսացուներին իր մոտ պահելիս, ամբողջ ժամանակ նա այսպես էր վարվում նրանց հետ և հյուրասիրում մեծ շքեղությամբ: Բոլորից առավել նա հավանեց Աթենքից եկած փեսացուներին, հատկապես Տիսանդրոսի որդի Հիպպոկլիդեսին, ոչ միայն նրա արիության, այլև Կորնթոսի Կյուպսելոսյանների հետ նրա ունեցած վաղնջական տոհմակցության համար:

129. Երբ, վերջապես, հասավ հարսանեկան խնջույքի օրը և Կլիսթենեսը պետք է հայտարարեր, թե փեսացուներից ո՞ւմ է նա ընտրել, հարյուր եզ զոհ մատուցելով, նա խնջույքի հրավիրեց փեսացուներին և համայն սիկիոնցիներին: Ընթրիքից հետո փեսացուները սկսեցին մրցել երաժշտությամբ և հրապարակային զրույցով: Երբ կերուխումը թեժացել էր, Հիպպոկլիդեսը, որը շատ էր գերազանցում մյուսներին, սրճգաթարին պատվիրեց պարային մեղեդի նվագել. սրճգաթարը հնազանդվեց ու նվագեց: Այնժամ Հիպպոկլիդեսը սկսեց մեծ հաճույքով պարել. մինչդեռ Կլիսթենեսն այս ամենը դիտում էր դժգոհությամբ: Փոքր-ինչ հանգստանալուց հետո, Հիպպոկլիդեսը պատվիրեց սեղան բերել: Երբ սեղանը բերեցին, Հիպպոկլիդեսը դրա վրա նախ սկսեց պարել լակոնիական ձևեր անելով, հետո՝ ատտիկյան, իսկ վերջում, գլուխը սեղանին հենած, ոտքերով սկսեց օդում պարաձևեր անել: Կլիսթենեսը նրա առաջին և երկրորդ պարը տեսնելիս, սարսափով մտածեց, թե այդ անամոթ պարողը կարող է իր փեսան դառնալ, բայց այդուհանդերձ, զսպեց իրեն և չուզեց իր դժգոհությունը հայտնել: Սակայն երբ նրան տեսավ ոտքերով պարաձևեր անելիս, այլևս չկարողացավ իրեն զսպել և բացականչեց. «Ով Տիսանդրոսի որդի. դու, իսկապես, քո հարսանեկան պարն արդեն պարեցիր»: Իսկ Հիպպոկլիդեսը նրան պատասխանելով ասաց. «Դա Հիպպոկլիդեսի հոգսը չէ»: Այս խոսքն այնուհետև դարձել է առած:

130. Այնժամ Կլիսթենեսը լռություն հաստատեց և բոլորին դիմեց այս խոսքերով. «Իմ աղջկա փեսացուներ: Ես ձեզ բոլորիդ հավանում եմ և, եթե հնարավոր լիներ, բոլորիդ կգոհացնեի, առանց ընտրելու որևէ մեկին և առանց մերժելու մյուսներին: Բայց, քանի որ ես ունեմ միայն մեկ աղջիկ, ապա չեմ կարող բոլորիդ գոհացնել: Ուստի նրանց, ովքեր ամուսնության համար մերժվեն, յուրաքանչյուրին ես կտամ մեկ արծաթ տաղանդ այն բանի համար, որ նրանք պատիվ են համարել իմ տնից հարս տանելը և այսքան երկար ժամանակ մնացել են հայրենիքից հեռու: Իսկ իմ աղջկան, Ագարիստեին, ես կնության կտամ Ալկմեոնի որդի Մեգակլեսին, աթենացիների օրենքների համաձայն»: Մեգակլեսն ընդունեց նրա առաջարկը, որից հետո Կլիսթենեսը նշանակեց հարսանիքի ժամկետը:

131. Այսպիսին է պատմությունը փեսացուների մրցության մասին: Դրանով Ալկմեոնյանների համբավը տարածվեց համայն Հելլադայում: Սրանց կենակցությունից ծնվեց Կլիսթենեսը, որն Աթենքը բաժանեց ֆիլաների և (քաղաքում) դեմոկրատիա հաստատեց: Նա իր անունն ստացել էր իր մոր հորից, Սիկիոնի տիրակալից: Անա այս Կլիսթենեսը և Հիպպոկրատեսը եղել են Մեգակլեսի որդիները: Հիպպոկրատեսի որդին էր մյուս Մեգակլեսը, իսկ դուստրը՝ մյուս Ագարիստեն, որն այդպես կոչվել էր Կլիսթենեսի դուստր Ագարիստեի անունով: Ագարիստեն ամուսնացել էր Արիփրոնի

որդի Քսանթիպպոսի հետ, և երբ հղի էր, հնելիս երազ է տեսնում, թե ինքն առյուծ է ծնում: Մի քանի օր անց նա Քսանթիպպոսից ծնում է Պերիկլեսին[82]:

132. Մարաթոնում պարսիկների պարտությունից հետո, Միլտիադեսի հեղինակությունը, որը նախկինում ևս բարձր էր եղել, ավելի բարձրացավ: Նա աթենացիներից պահանջեց յոթանասուն նավ, զորք և դրամ, առանց հայտնելու, ասկայն, թե ո՞ր երկրի դեմ է արշավելու: Նա միայն ասաց, թե նրանց կհարստացնի, եթե հետևեն իրեն. իսկ ինքը, ինչպես ասաց, նրանց կառաջնորդի այնպիսի մի երկիր, որտեղից նրանք կբերեն առատ ոսկի: Այսպես ասաց նա և նավեր պահանջեց: Այս խոստումներից շլացած, աթենացիները նրան նավեր տվեցին:

133. Վերցնելով նավատորմը, Միլտիադեսը նավեց Պարոսի դեմ, պատճառաբանելով, թե պարոսցիներն առաջինը սկսել էին պատերազմը, իրենց տրիերաները պարսիկների հետ ուղարկելով Մարաթոն: Այս, անշուշտ, միայն պատրվակ էր. (իրականում), նա ոխ ուներ պարոսցիների հանդեպ այն բանի համար, որ Տիսիասի որդի Լյուտագորասը Պարոսից նրան զրպարտել էր պարսիկ Հյուդառնեսի առաջ: Իր նավատորմով հասնելով Պարոս, Միլտիադեսը պաշարեց պարոսցիներին, որոնք ստիպված եղան փակվել պարիսպներից ներս: Այնուհետև (պարիսպներից) ներս ուղարկելով բանբերին, Միլտիադեսը պահանջեց հարյուր տաղանդ և ասաց, որ եթե այդ չտան իրեն, ապա իր նավատորմը չի հեռանա, մինչև չնվաճի նրանց: Բայց պարոսցիները բոլորովին էլ չէին մտածում արծաթ տալու Միլտիադեսին, այլ մտածում էին միայն իրենց քաղաքը պաշտպանելու մասին: Այդ նպատակով նրանք, բացի այլ միջոցների դիմելուց, գիշերները պարիսպների առավել խոցելի հատվածները բարձրացնում էին նախկինի համեմատությամբ կրկնակի չափով:

134. Այսքանի մասին բոլոր հելլեհները նույնն են պատմում. իսկ հետագա դեպքերի մասին իրենք՝ պարոսցիները անա թե ինչ են պատմում: Երբ Միլտիադեսը, շվարած, չէր իմանում ինչ անել, նրան այցելում է գերի վերցված պարոսցի մի կին, անունը Տիմո, որը սառերեկրյա ասուլածների[83] տաճարի ենթաքրմուհիներից էր: Գալով Միլտիադեսի մոտ, նա խորհուրդ տվեց, որ եթե Միլտիադեսը ուզում է նվաճել քաղաքը, ապա թող վարվի այնպես, ինչպես ինքը կասի: Նրա խորհրդով (Միլտիադեսը) բարձրանում է քաղաքի առաջ գտնվող բլրի վրա, ցատկում, անցնում է Դեմետրա Թեսմոփորայի[84] սրբավայրի ցանկապատի վրայով, քանի որ նա չէր կարողացել դռները բացել: Ներս ցատկելով, նա մտնում է սրբավայր, այնտեղ ինչ-որ բան անելու, գուցե տանելու ինչ-որ բան, որը չէր կարելի տանել, գուցե կատարելու մեկ այլ բան: Բայց երբ արդեն նա դռների առաջ էր, հանկարծ նրան համակում է երկյուղը և նա վերադառնում է նույն, իր եկած հանապարհով, և ցանկապատից ցած թռչելիս հոդախախտում է ազդրը. ուրիշներն ասում են, թե վնասվել է միայն նրա ծունկը:

135. Այսպիսով, Միլտիադեսը վատ տրամադրությամբ եկ նավեց, առանց գանձ բերելու աթենացիներին և առանց նվաճած լինելու Պարոսը: Քսանվեց օր այն պաշարելուց հետո, նա կարողացավ միայն ամայացնել կղզին: Իսկ պարոսցիները, տեղեկանալով, որ դիցուհիների ենթաքրմուհի Տիմոն առաջնորդել է Միլտիադեսին, որոշեցին պատժել նրան: Պաշարումը վերացվելուց հետո, նրանք բանբերներ ուղարկեցին Դելֆի, պատգամ հարցնելու, թե իրենք պե՞տք է արդյոք դիցուհիների ենթաքրմուհուն, որը թշնամիներին առաջնորդել էր իր հայրենիքը նվաճելու համար և ցույց էր տվել Միլտիադեսին այն սրբությունները, որոնք ոչ մի աղամարդ չպետք է տեսներ: Բայց Պյութիան այդ արգելեց նրանց, հայտարարելով, թե Տիմոն մեղավոր չէ. Միլտիադեսը, որին ուրվական է երևացել և մղել այդ չարագործությունն անելու, դատապարտված է ողբալի վախճան ունենալու:

136. Այսպիսին էր Պյութիայի պատասխանը պարոսցիներին: Իսկ երբ Միլտիադեսը վերադարձավ Պարոսից, աթենացիներն սկսեցին մեղադրել նրան, հատկապես Արիփրոնի որդի Քսանթիպպոսը, որը հանրության առաջ մահապատիժ էր առաջարկում Միլտիադեսին, մեղադրելով նրան, թե նա խաբել է աթենացիներին: Ինքը՝ Միլտիադեսը թեև ներկա էր, բայց չէր կարողանում պաշտպանվել, քանզի ազդրը բորբոքվել էր: Նա (ժողովրդական հավաքի առաջ) պառկել էր մահճակալին, իսկ նրան պաշտպանում էին նրա քնկերները, հիշեցնելով գլխավորապես Մարաթոնի հակատամարտը և Լեմնոսի նվաճումը, թե ինչպես Միլտիադեսը զրավեց Լեմնոսը, պատժեց պելասգներին և կղզին հանձնեց աթենացիներին: Ժողովուրդը պաշտպանեց Միլտիադեսին, մերժելով մահապատիժը, սակայն նրա կատարած հանցանքի համար նրան տուգանեցին հիսուն տաղանդ: Հետայնու Միլտիադեսը մահացավ ազդրի թարախակալումից ու փտախտից. իսկ հիսուն տաղանդը վճարեց նրա որդի Կիմոնը:

137. Կիմոնի որդի Միլտիադեսը անա թե ինչպես է նվաճել Լեմնոսը: Աթենացիները պելասգներին Ատտիկայից դուրս արեցին, իսկ արդա՞ր էր դա, թե՞ անարդար, ես այդ մասին ոչինչ չեմ կարող ասել, այլ կհաղորդեմ այն, ինչ պատմել են ուրիշները: Հեգեսանդրոսի որդի Հեկատեոսը իր պատմության մեջ պնդում է, թե՝ անարդար: (Նա գրում է, թե) աթենացիները Հյումետտոսի ստորոտին եղած իրենց պատկանող հողերը բնակեցման համար տվեցին պելասգներին իբրև վարձ այն բանի համար, որ նրանք մի ժամանակ ակրոպոլիսի շուրջ կառուցել էին պարիսպներ: Աթենացիները, տեսնելով, որ նախկինում վատ համարվող և ոչ մի արժեք չունեցող այդ հողերն այժմ լավ են մշակված, նրանց համակեց նախանձը և այդ երկիրն

ունենալու ցանկությունը. ուստի և առանց որևէ պատճառի, աթենացիները դուրս փշեցին նրանց: Իսկ իրենք աթենացիներն ասում են, թե նրանց փշել են իրավացի կերպով: Նրանք պնդում են, թե Հյումետտոսի ստորոտին բնակեցված պելասգները այնտեղից անարգում էին աթենացիներին հետևյալ կերպ: Քանի որ այդ ժամանակ աթենացիներն ու մյուս հելլենները ստրուկներ չունեին, ուստի և նրանց աղջիկներն ու տղաները ջուր վերցնելու համար մշտապես գնում էին էննեակրունոս աղբյուրը: Ամեն անգամ, երբ աղջիկները գալիս էին աղբյուր, պելասգներն ամբարտավանությամբ և անամոթաբար անարգում էին նրանց: Բայց պելասգները սրանով չէին բավարարվում: Ի վերջո նրանք բռնվեցին հանցագործության մեջ, (Աթենքի վրա) հարձակվելու մտադրությամբ: Իսկ աթենացիները ցույց տվեցին, որ իրենք ավելի առատինի են նրանցից, քանի որ կարող էին, պելասգներին հանցանքի մեջ բռնելով, լիովին կոտորել, բայց այդ չարեցին, այլ հրամայեցին նրանց հեռանալ երկրից: Այսպիսով, վտարված պելասգները վերաբնակվեցին այլ երկրներում, ինչպես նաև Լեմնոսում: Այդպես է պատմել Հեկատեոսը, իսկ աթենացիների ավանդությունն այսպիսին է:

138. Այս պելասգները, որոնք այդ ժամանակ բնակեցրել էին Լեմնոսը, ուզում էին վրեժ լուծել աթենացիներից: Նրանք լավ գիտեին աթենացիների տոնախմբությունների ժամանակը և, հիսուն թիանի նավեր պատրաստելով, դարանակալեցին Բրաբռնյան Արտեմիսի տոնախմբությանը գնացած աթենացի կանանց, և նրանցից շատերին առևանգելով, բերեցին Լեմնոս և նրանց դարձրին իրենց հարճերը: Երբ այս կանայք ավելի ու ավելի երեխաներ ունեցան, սկսեցին նրանց սովորեցնել ատտիկյան լեզուն և աթենացիների սովորությունները: Այս երեխաները նույնիսկ չէին ուզում հարաբերվել պելասգյան կանանց որդիների հետ. և եթե նրանցից որևէ մեկին ծեծում էր պելասգների որդիներից որևէ մեկը, ապա բոլորը շտապում էին օգնության և պաշտպանում իրար: Նրանք նույնիսկ համարում էին, թե իշխանության իրավունք ունեն պելասգների որդիների վրա և նրանց շատ գերազանցում էին իրենց զորությամբ: Այդ մասին տեղեկանալով, պելասգները խորհուրդ գումարեցին: Իրենց խորհրդում նրանք անհանգստանում էին, թե ի՞նչ էին անելու այս տղաները, երբ առնականանային, եթե նրանք արդեն այժմվանից վճռականապես պաշտպանում են իրար օրինական կանանց որդիների դեմ և ձգտում են սրանց վրա իշխել: Ուստի և նրանք որոշեցին սպանել ատտիկյան կանանց որդիներին: Այդպես էլ նրանք արեցին. որդիների հետ սպանեցին նաև նրանց մայրերին: Այս ոճրի, ինչպես նաև նախկինում կանանց կատարածի համար, երբ վերջիններս սպանեցին իրենց ամուսիններին՝ Թռասի ուղեկիցներին, Հելլադայում կատարվող նման բոլոր ոճիրները անվանում են լեմնոսյան:

139. Երբ պելասգները սպանեցին իրենց որդիներին և կանանց, նրանց երկիրը դադարեց բերք տալուց. իսկ նրանց կանայք և անասունները չէին ծննդաբերում ինչպես առաջ: Սովից ու անզավակությունից ճնշված, նրանք դեսպաններ առաքեցին Դելփի, այդ աղետից ազատվելու եղանակի մասին հարցնելու: Պյութիան նրանց պատվիրեց հատուցել աթենացիներին այն ամենը, ինչ իրենք աթենացիները կպահանջեն: Այնժամ պելասգները եկան Աթենք և հայտարարեցին, որ ուզում են հատուցել իրենց պատճառած բոլոր անարդարությունների համար: Իսկ աթենացիները պրիտանեյոնում պատրաստեցին իրենց ունեցած ամենագեղեցիկ մահիճը, կողքին դրեցին սեղան, ամեն տեսակ բարիքներով, և պահանջեցին պելասգներից, որ իրենց երկիրը հանձնեն աթենացիներին այսպիսի հիանալի վիճակում: Բայց պելասգները նրանց պատասխանեցին և ասացին. «Երբ հյուսիսային քամի փչելիս նավը մեկ օրում ձեր երկրից հասնի մեր երկիրը, այնժամ էլ մենք կհանձնենք մեր երկիրը»: Նրանք գիտեին, որ այդ անկարելի է, քանի որ Ատտիկան գրտնվում է Լեմնոսից շատ հարավ:

140. Այնժամ այսպիսի դեպքեր կատարվեցին: Իսկ դրանից շատ տարիներ անց, երբ Հելլեսպոնտոսի Քերսոնեսոսը ենթարկվել էր աթենացիներին, Կիմոնի որդի Միլտիադեսը Ետեսյան[85] հոդմերի ժամանակ, երբ դրանք փչում են անդադար, նավով Քերսոնեսոսի Ելեուսից ժամանեց Լեմնոս և հրամայեց պելասգներին՝ լքել իրենց կղզին, հիշեցնելով նրանց պատգամախոսի գուշակությունը, որը, ինչպես իրենք պելասգները կարծում էին, երբեք չէր կատարվելու: Հեփեստիացիները հնազանդվեցին, իսկ մյուրինացիները չէին ընդունում, որ Քերսոնեսոսը պատկանում է Ատտիկային: (Աթենացիները) պաշարեցին Մյուրինան, մինչև որ մյուրինացիները ևս հանձնվեցին: Այսպես, ահա, աթենացիները և Միլտիադեսը տիրացան Լեմնոսին:

ԳԻՐՔ ՅՈԹԵՐՈՐԴ

ԳՈԼԻՀԻՄՆԻԱ

1. Երբ Մարաթոնի ճակատամարտի լուրը հասավ Հյուստասպեսի որդի Դարեհ արքային, նա, թեև անցյալում ևս խիստ շարացել էր աթենացիների վրա, Սարդես կատարած նրանց արշավանքի պատճառով, այժմ առավել ևս լցվեց զայրույթով, և որոշեց արագացնել արշավանքը Հելլադայի դեմ: Նույնհետայն նա հրեշտակներ ուղարկեց քաղաքները, հրամայելով զորք պատրաստել. ընդ որում, հրամայում էր, որ յուրաքանչյուր քաղաք տրամադրեր նախկինից ավելի շատ զորք, ռազմանավեր, ձիեր, պարեն և բեռնանավեր: Այս հրամանների պատճառով Ասիան երեք տարի շարժման մեջ էր. Հելլադա արշավելու համար հավաքում և գինում էին լավագույններին: Չորրորդ տարում եգիպտացիները, որոնց նվաճել էր Կամբյուսեսը, ապստամբեցին պարսից դեմ: Այնժամ Դարեհն սկսեց ավելի թափով պատրաստվել՝ երկու երկրների վրա արշավելու համար:

2. Մինչ Դարեհը պատրաստվում էր Եգիպտոսի և Աթենքի վրա արշավելու, նրա որդիների միջև երկպառակություն ծագեց իշխանության շուրջ, քանի որ, պարսից օրենքի համաձայն, արշավանքից առաջ Դարեհը պարտավոր էր մեկ ուրիշին թագավոր կարգել: Քանզի Դարեհը, նախքան գահակալելը, ունեցել էր երեք տղա իր առաջին կնոջից, Գոբրիասի դստերից, իսկ գահակալելուց հետո՝ ևս չորս տղա Առտոսայից՝ Կյուրոսի դստերից: Առաջին որդիներից ավագն էր Արտոբազանեսը, իսկ հետագայում ծնվածներից՝ Քսերքսեսը: Ծնված լինելով տարբեր մայրերից, նրանք հանդես են գալիս իրար դեմ: Արտոբազանեսը պնդում էր, որ ինքն է ամենից ավագը և, ինչպես ընդունված է բոլոր ժողովուրդների մոտ, իշխանությունը պատկանում է ամենից ավագին. իսկ Քսերքսեսը պնդում էր, որ ինքը Կյուրոսի դուստր Առտոսայի որդին է, իսկ Կյուրոսը՝ պարսիկների ազատարարը:

3. Այս հարցում Դարեհը դեռևս չէր հայտնել իր որոշումը, երբ այդ նույն ժամանակ Սուսա է ժամանում Արիստոնի որդի Դեմարատոսը, որը զրկված լինելով Սպարտայում թագավորական իշխանությունից, իրեն լակեդեմոնից

ենթարկել էր վտարանդիության: Անա այս մարդը, լսելով Դարեհի որդիների վեճի մասին, գալիս է, ինչպես պատմում են, Քսերքսեսի մոտ և խորհուրդ տալիս, (մինչ այդ) իր ասածներից բացի ասել նաև, թե ինքը ծնվել է Դարեհի գահակալելուց հետո, երբ նա արդեն պարսից տերն էր. մինչդեռ Արտոբազանեսը (ծնվել է), երբ Դարեհը դեռևս մասնավոր անձ էր: Ուստի անվայել է և անարդար, որ իրենից բացի մեկ ուրիշը ստանա արքայական իշխանությունը: Քանզի Սպարտայում ևս, ասում է Դեմարատոսը, կարգ կա, որ եթե թագավորը իշխանություն ստանալուց առաջ ունեցել է որդիներ, իսկ թագավոր դառնալուց հետո ունենում է նոր զավակ, ապա այս նոր ծնվածը ժառանգում է թագավորական իշխանությունը: Քսերքսեսը հետևեց Դեմարատոսի խորհրդին, և Դարեհը, այդ խոսքերը ճիշտ համարելով, նրան թագավոր կարգեց: Սակայն ինձ թվում է, որ առանց այդ խորհրդի էլ պետք է թագավորեր Քսերքսեսը, քանի որ Առտոսան ամենազոր էր[1]:

4. Արդ, Քսերքսեսին պարսից թագավոր կարգելով, Դարեհը պատրաստվեց արշավելու: Բայց անա, Եգիպտոսի ապստամբությունից հետո մեկ տարի անց, Դարեհը պատրաստություններ տեսնելիս, մահանում է, ընդամենը երեսուն վեց տարի թագավորելուց հետո[2], և նա այդպես էլ չկարողացավ պատժել ոչ ապստամբած եգիպտացիներին, ոչ էլ աթենացիներին:

5. Այսպես, անա, Դարեհի մեռնելուց հետո թագավորությունն անցավ նրա որդի Քսերքսեսին: Արդ, Քսերքսեսը սկզբում բոլորովին էլ հոժար չէր Հելլադա արշավելու. նա զորքերը հավաքում էր միայն Եգիպտոս արշավելու նպատակով: Նրա արքունիքում կար մի մարդ, որը ամենահեղինակավոր անձն էր պարսից մեջ, Գոբրյուասի որդի Մարդոնիոսը: Նա Քսերքսեսի զարմիկն էր, Դարեհի քույր որդին: Սա դիմեց Քսերքսեսին հետևյալ խոսքերով. «Տեր. վայել չէ թողնել, որ աթենացիները անպատիժ մնան, պարսիկներին այսքան շատ չարիք պատճառելուց հետո: Բայց այժմ դու իրագործիր այն, ինչ ձեռնարկել ես: Ամբարտավանացած Եգիպտոսը հնազանդեցնելուց հետո, արշավիր Աթենք. որպեսզի մարդկանց մեջ բարի համբավ վաստակես և հետագայում (թշնամին) զգուշանա քո երկրի վրա հարձակվելուց»: Այս խոսքով նա վրեժի էր կոչում: Այնուհետև նա ավելացրեց, թե Եվրոպան շատ գեղեցիկ երկիր է, հարուստ ամեն տեսակ մրգատու ծառերով, արտակարգ արգասաբեր, և մահկանացուներից միայն արքան է արժանի տիրելու այդ երկրին:

6. Այս ամենը նա ասում էր, որովհետև, իբրև արկածախնդիր մարդ, ինքը ցանկանում էր դառնալ Հելլադայի փոխարքան: Ի վերջո, նրան հետագայում հաջողվեց հասնել դրան, և նա համոզեց Քսերքսեսին այդպես վարվելու: Այլ հանգամանքներ ևս օգնեցին նրան Քսերքսեսին համոզելու: Նախ, Թեսալիայից եկան Ալեադների դեսպանները, որոնք հրավիրում էին ար-

քային արշավելու Հունաստան, խոստանալով նրան լիակատար հավատարմություն: Այս Ալեադները Թեսալիայի տերերն էին: Երկրորդ, Պիսիստրատյանների տոհմից Սուսա եկած մարդիկ ևս կրկնեցին նույն բարեհաճությունը, ինչ Ալեադները, միաժամանակ խոստանալով ավելին: Սրանք իրենց հետ բերել էին նաև աթենացի Օնոմակրիտոսին, որը պատգամների մեկնիչ էր և կազմել էր Մուսայոսի պատգամների ժողովածուն: Մինչ այդ նրանք լուծել էին իրենց թշնամանքը Օնոմակրիտոսի հետ: Քանզի անցյալում Հիպպիասը, Պիսիստրատոսի որդին, Օնոմակրիտոսին քշել էր Աթենից, երբ Լասոսը Հերմիոնեսից նրան բռնեց Մուսայոսի գուշակությունը կեղծելիս, որ իբր գուշակության մեջ ասված էր, թե Լեմնոսի մոտ գտնվող կղզիները պետք է անհետանան ծովի անդունդում: Անա այս պատճառով էր, որ Հիպպիասը վտարեց Օնոմակրիտոսին, թեև անցյալում նրա մտերիմ բարեկամն էր: Այս Օնոմակրիտոսն այնժամ Պիսիստրատյանների հետ եկավ Սուսա, և ամեն անգամ արքային ներկայանալիս, Պիսիստրատյանները գովաբանում էին նրան, իսկ նա կարդում էր իր գուշակությունները: Ընդ որում, նա բաց էր թողնում բարբարոսների պարտվելու մասին ակնարկող գուշակությունները և ընտրում միայն նպաստավոր պատգամները: Նա հայտարարեց, թե՝ Հելլեսպոնտոսը պետք է կամրջվի պարսիկ մարդու կողմից, և բացատրեց, թե արշավանքն ինչպես պետք է կատարվի: Սա Քսերքսեսին ծառայություն էր մատուցում իր գուշակություններով, իսկ Պիսիստրատյաններն ու Ալեադները՝ իրենց խորհուրդներով:

7. Քսերքսեսը համոզվեց՝ արշավելու Հելլադա. ուստի Դարեհի մահվան երկրորդ տարին նախ նա արշավեց (Եգիպտոս), ապստամբների դեմ: Սրանց ճնշելանելով, ամբողջ Եգիպտոսը ենթարկեց առավել ծանր սարկության, քան այն եղել էր Դարեհի ժամանակ: Քսերքսեսը Եգիպտոսի կառավարիչ կարգեց իր եղբայր Աքեմենեսին, Դարեհի որդուն: Այս Աքեմենեսին, Եգիպտոսի փոխարքային, հետագայում սպանեց Պսամմետիքոսի որդի, լիբիացի Ինարոսը[3]:

8. Եգիպտոսը նվաճելուց հետո, Քսերքսեսը որոշել էր արշավել Աթենք. ուստի նա պարսիկների ամենից ազնվականներին խորհրդի հրավիրեց[4], լսելու նրանց կարծիքը և հայտնելու նրանց բոլորին իր կամքը: Երբ նրանք հավաքվեցին, Քսերքսեսը այսպես խոսեց. «Պարսիկներ. ես ձեզ համար չեմ սահմանում նոր կարգ, այլ ինքս ընդունում եմ եղածը. քանզի, ինչպես լսել եմ ձեր ավագներից, մենք դեռևս երբեք խաղաղ չենք ապրել այն օրից, երբ իշխանությունը վերցրել ենք մեդացիներից, և Կյուրոսը կործանել է Աստյուագեսին: Բայց դա աստծու կամքն է, և մենք ինքներս մեծապես օգտվում ենք մեր բազմաթիվ ձեռնարկումներից: Կյուրոսի, Կամբյուսեսի և իմ հոր՝ Դարեհի գործերի, ինչպես նաև նրանց նվաճած ազգերի մասին դուք լավ

գիտեք, և այդ մասին պատմելու կարիք չկա: Իսկ ես, ստանալով այս գահը, մտահոգված եմ եղել շնվազեցնելու իմ նախնիների պատիվը և ապահովելու նրանցից ոչ պակաս հզորություն պարսից համար: Այդ մասին մտածելով, կարծում եմ, որ մենք փառք ձեռք կբերենք և երկիր, այն էլ ոչ փոքր ու վատ, քան մեր երկիրը, այլ առավել բարեբեր, և միաժամանակ կպատժենք մեր թշնամիներին: Այժմ ես ձեզ գումարել եմ հայտնելու այն, ինչ ծրագրել եմ: Ես մտադիր եմ Հելլեսպոնտոսը կամրջել և իմ զորքերը Եվրոպայով տանել Հելլադայի վրա, որպեսզի պատժեմ աթենացիներին այն ամեն (չարիքի) համար, ինչ նրանք պատճառել են պարսիկներին և իմ հորը: Դուք գիտեք, որ իմ հայր Դարեհը նույնպես պատրաստվել էր արշավելու այդ մարդկանց դեմ: Բայց նա վախճանվել է և արդեն չի կարող նրանց պատժել: Ուստի ես, հանուն նրա և բոլոր պարսիկների, չեմ հանգստանա, մինչև չնվաճեմ ու չհրկիզեմ Աթենքը, որը ինձ և իմ հորը չարիք է պատճառել: Նախ, նրանք, մեր ստրուկ Արիստագորաս Միլետացու հետ Սարդես գալով, հրի մատնեցին արքազան պուրակն ու տաճարը[5]: Երկրորդ, դուք բոլորդ, հավանաբար, գիտեք, թե նրանք ինչեր արեցին, երբ մենք, Դատիսի և Արտափրենեսի գլխավորությամբ, ափ ելանք նրանց հողի վրա[6]: Այս պատճառով էլ այժմ ես պատրաստ եմ արշավելու նրանց դեմ, և կարծում եմ, որ դրանով մենք մեծ բարիքներ ձեռք կբերենք: Եթե մենք հպատակեցնենք աթենացիներին և նրանց հարևաններին, որոնք բնակեցնում են փոյուգ Պելոպսի երկիրը, ապա պարսից երկիրը կդարձնենք Զևսի երկնքին սահմանակից: Արևը չի ծագելու մեզ սահմանակից եղող որևէ երկրի վրա, քանի որ բոլոր այդ երկրները, ամբողջ Եվրոպայով անցնելուց հետո, ես ձեզ համար կդարձնեմ մեկ երկիր: Քանզի, ինչպես տեղեկացել եմ, դրությունն այսպիսին է: Եթե մենք հաղթահարենք հիշատակածս մարդկանց, ապա աշխարհում չի մնա մարդկանց ոչ մի քաղաք և ոչ մի ժողովուրդ, որը համարձակվեր ձեր դեմ պատերազմել: Այդպիսով, մենք սարկության լուծը կդնենք և՛ մեր առաջ մեղավոր եղողների, և՛ մեղավոր չեղողների վրա: Իսկ դուք ինձ շնորհ արած կլինեք, եթե վարվեք հետևյալ կերպ. ձեզանից յուրաքանչյուրն իմ նշանակած օրը սիրահոժար ներկայանա նշված վայրը: Իսկ ում, ով կներկայանա լավագույնս պատրաստված զորքով, ինձանից կստանա այնպիսի ընծաներ, որոնք մեր երկրում համարվում են առավել պատվավոր: Այս ամենը պետք է այսպես կատարվի: Բայց որպեսզի դուք չմտածեք, թե ես գործում եմ անձնական հայեցողությամբ, ես հարցը դնում եմ ձեր բոլորի առաջ և հրամայում ցանկացողին արտահայտել իր կարծիքը»: Այս ասելով նա վերջացրեց:

9. Նրանից հետո Մարդոնիոսը ասաց. «Ով տեր. դու գերազանցում ես ոչ միայն ցարդ եղած, այլև ապագայի բոլոր պարսիկներին: Դու ոչ միայն հիանալի և ճշմարտագույն խոսեցիր, այլև ասացիր, թե թույլ չես տալու, որ

Եվրոպայում բնակվող անարգ ճոնիացիները[7] ծանակեն մեզ: Հիրավի զարմանալի կլիներ, եթե մենք, որ նվաճել և ստրկացրել ենք մեզ ոչ մի վնաս չպատճառած սակերին, ենդիկներին, եթովպացիներին, ասորեստանցիներին և ուրիշ մեծաթիվ ու հզոր ժողովուրդների, միայն մեր հզորությունն ավելացնելու համար, այժմ չնվաճենք հելլեններին, որոնք մեծապես վնասել են մեզ: Ինչի՞ց պիտի վախենանք. արդյոք մարդկանց մեծ բազմությունի՞ց, թե՞ նրանց մեծ հարստությունից: Մենք գիտենք, թե նրանք ինչպես են կռվում. մենք գիտենք նաև նրանց ուժը, որը թույլ է: Մենք արդեն նվաճել ենք նրանց որդիներին. նրանց, որոնք ապրում են մեր երկրում և կոչվում են հոնիացիներ և էոլիացիներ և դորիացիներ: Ես ինքս արդեն ճանաչել եմ այդ մարդկանց, երբ քո հոր հրամանով արշավեցի նրանց վրա: Ես հասա Մակեդոնիա և համարյա մինչև Աթենք. բայց ոչ մեկը իմ դեմ պատերազմի չելավ: Թեև հելլենները սովոր են պատերազմելու, բայց, ինչպես իմացել եմ, իրենց տգիտության և ապուշության պատճառով նրանք պատերազմում են ամենաանմիտ եղանակով: Քանզի իրար դեմ պատերազմ հայտարարելիս, նրանք ամենալավ և ամենահարթ վայրն են ընտրում և այնտեղ իջնելով, ճակատամարտ մղում. ուստի և (նույնիսկ) հաղթողները մեծ կորուստներ են ունենում, իսկ պարտվածների մասին արդեն չեմ խոսում. քանզի նրանք լիովին ոչնչանում են: Քանի որ նրանք համալեզու են, ապա պարտավոր էին իրենց վեճերը լուծել քարոզների և հրեշտակների միջնորդությամբ և այլ լավագույն միջոցներով, քան պատերազմներով: Իսկ եթե պատերազմն արդեն անխուսափելի է, ապա ամեն մեկը պարտավոր է իր համար ապահովել առավել դժվար խոցելի դրություն, և այդպես սկսել պատերազմը: Հելլեններն այսպիսի ոչ պիտանի սովորույթ ունեն. ուստի և երբ ես հասա Մակեդոնիա երկիրը, նրանք չմտածեցին անգամ դիմադրել: Իսկ քո դեմ, արքա, ո՞վ կհամարձակվի պատերազմել, եթե դու քեզ հետ տանես ամբողջ Ասիայի բազմությունը և բոլոր նավերը: Ես կարծում եմ, որ հելլենները այդպիսի համարձակություն չեն ունենա: Իսկ եթե իմ կարծիքի մեջ ես սխալված լինեմ, և նրանք անխոհեմաբար մեր դեմ դուրս գան պատերազմի, ապա կհամոզվեն, որ մենք լավագույններն ենք պատերազմում: Այսուհանդերձ, բոլոր միջոցները կփորձենք, քանզի ոչինչ ինքնաբերաբար չի լինում. ամեն ինչ ձեռք է բերվում շանք գործադրելով»:

10. Քսերքսեսի ծրագիրը գովելուց հետո, Մարդոնիոսն այս խոսքերով վերջացրեց: Մյուս պարսիկները լռում էին, չհամարձակվելով ասված կարծիքին հակառակ արտահայտվել: Միայն Հյուտասպեսի որդի Արտաբանոսը, որը Քսերքսեսի հորեղբայրն էր և խորհրդատուն, այսպես խոսեց. «Ով արքա. եթե իրար հակառակ կարծիքներ չարտահայտվեն, ապա հնարավոր չի

լինի դրանցից լավագույնն ընտրել, այլ կընդունվի արտահայտված միակ կարծիքը. մինչդեռ եթե (կարծիքներ) արտահայտվեն, ապա կարելի է ընտրել (լավագույնը): Նույնիսկ մաքուր ոսկին իսկությունը չենք կարող ճանաչել. միայն այն շփելուց և ուրիշ ոսկու հետ համեմատելուց հետո մենք կարող ենք լավագույն ոսկին ճանաչել: Ես քո հորը և իմ եղբորը՝ Դարեհին նույնպես խորհուրդ չէի տալիս արշավել սկյութների վրա, որոնք բոլորովին բնակեցված քաղաքներ չունեն: Բայց նա, վաշկատուն սկյութներին նվաճելու հույսով, ինձ չլսեց և արշավեց, սակայն հետո ետ դարձավ, իր զորքից մեծ թվով ամենալավ զինվորներին կորցնելով: Մինչդեռ դու, ով արքա, մտադիր ես արշավել մարդկանց վրա, որոնք ավելի քաջարի են, քան սկյութները և, ինչպես պատմում են, գերազանց են (կռվում) և՛ ծովում, և՛ ցամաքի վրա: Հիրավի ես պարտավոր եմ քեզ ասելու, թե ի՞նչ վտանգ կա այստեղ: Դու ասում ես, որ մտադիր ես կամրջել Հելլեսպոնտոսը ու Եվրոպայի վրայով զորքդ տանել Հելլադա: Բայց կարող է պատահել, որ դու պարտություն կրես ցամաքում կամ ծովում և կամ երկու պարագայում էլ: Ասում են, թե նրանք կարիք այրեր են. այդ կարելի է հետևցնել այն բանից, որ Դատիսի և Արտափրենեսի գլխավորությամբ Ատտիկա ներխուժած այդքան մեծաթիվ զորքը ոչնչացրին միայն աթենացիները: Իհարկե, նրանք չեն կարող միաժամանակ հաջողություն ունենալ և՛ ծովում, և՛ ցամաքի վրա: Բայց եթե նրանք նավերով հարձակվեն և, նավամարտում հաղթելով, նավեն մինչև Հելլեսպոնտոս և քանդեն կամուրջը, այնժամ արդեն, ով արքա, անվտանգ բան կլինի: Ես այսպես ենթադրում եմ ոչ թե իմ իմաստությամբ, այլ գիտեմ, թե ինչպիսի՞ դժբախտություն էր, երբ քո հայրը, նավակամուրջ պատրաստելով թրակական Բոսպորոսում[8] և կամրջելով Իստրոս գետը, անցավ սկյութների երկիրը: Այնժամ սկյութներն ամեն կերպ փորձեցին համոզել հոնիացիներին, որոնց վստահված էր Իստրոսի կամրջի պահպանումը, քանդելու անցումը: Եվ եթե այդ ժամանակ Հիստիայոսը, Միլետի տիրանը, հետևեր մյուս տիրանների խորհրդին և շնչակտակվեր, ապա պարսից զորքը կոչնչանար: Նույնիսկ մտածելը սարսափելի է, թե այդ ժամանակ արքայի ամբողջ բախտը գտնվում էր մեկ մարդու ձեռքում: Արդ, քեզ անհարկի որևէ նման վտանգի մի ենթարկիր, այլ լսիր իմ խորհուրդը: Այժմ դու արձակիր այս ժողովը. այնուհետև, երբ դու ինքդ առանձնության մեջ մտածես, կանչիր մեզ և հայտնիր քեզ լավագույն թվացող որոշումը: Քանզի ճիշտ որոշումը, իմ կարծիքով, ամենաշահավետ արարքն է: Եթե նույնիսկ հետագայում ինչ-որ բան դրան խանգարի, որոշումը, այնուամենայնիվ, վատ եղած չի լինի. միայն պատահարը կարող է այն ձախողել: Մինչդեռ նա, ով վատ որոշում է կայացրել, եթե բախտը նրան օգնի, կարող է պատահական հաջողություն ունենալ բայց, հակառակ դրան, նրա որոշումը մնում է վատ: Տեսնում ես, թե

ինչպես ասված շանթահարում է առավել բարձրության ձգտող կենդանի արարածներին, թույլ չտալով նրանց պարծենալու. մինչդեռ փոքրերը նրան չեն զայրացնում: Տեսնում ես, թե ինչպես ասածու ճետերը մշտապես ընկնում են առավել բարձր տների և ծառերի վրա. քանզի ասված սիրում է ստորացնել բոլոր մեծությունները: Այդպես էլ մեծաթիվ զորքը կարող է ոչնչացվել փոքրաթիվ զորքի կողմից հետևյալ կերպ. ասված նախանձելով, կարող է անաբեկել զինվորներին կամ շանթահարել նրանց այնպես, որ զորքն անփառունակ ոչնչանա. քանզի ասված չի հանդուրժում, որ որևէ մեկը, իրենից բացի, իր անձի մասին բարձր համարում ունենա: Արդ, շտապողականությունը ձախորդություններ է ծնում, որոնցից մեծ վնասներ են առաջանում մեզ համար. մինչդեռ դանդաղելը բարի է, թեև սկզբում այդ բարին չի երևում, բայց ժամանակի ընթացքում մարդ դրանում համոզվում է: Այսպիսին է, ով արքա, իմ խորհուրդը քեզ: Իսկ դու, Գոբրյուասի որդի Մարդոնիոս. վերջ տուր այդպես արհամարհական խոսելուն հելլեններին մասին, որոնք դրան երբեք արժանի չեն: Դու հելլեններին այդպես զրպարտելով, արքային հրահրում ես արշավանքի: Ինձ թվում է, թե քո շանթերն ուղղված են դրան. մաղթենք, որ այդպես չկատարվի: Զրպարտությունն ամենածանր բանն է. այն երկու մարդու դարձնում է հանցագործ, երրորդին՝ զոհ: Զրպարտողը հանցանք է գործում՝ մեղադրելով բացակային. մյուսը նույնպես հանցանք է գործում, երբ առանց մահրակրկիռ քննելու, հավատում է դրան. իսկ բացական տուժում է այն պատճառով, որ մեկը զրպարտում է նրան, իսկ մյուսը նրան համարում է վատ մարդ: Արդ, եթե անպայման պետք է արշավել նրանց վրա, ապա արքան թող մնա պարսից երկրում, իսկ մենք երկուսս մեր որդիներին պատանդ թողնենք նրա մոտ: Այնուհետև, Մարդոնիոս, դու ինքդ առաջնորդիր զորքը, ինքդ ընտրելով քո զինվորներին, ում և ինչքան կամենաս: Եթե արքայի արշավանքը վերջանա այնպես, ինչպես դու ես ասում, ապա թող մահապատժվեն իմ որդիները, նրանց հետ նաև ես. իսկ եթե լինի այնպես, ինչպես ես կանխասացի, ապա նույն պատիժը թող կրեն քո որդիները, նրանց հետ նաև դու, եթե վերադառնաս: Բայց եթե դու իմ ասածին համաձայն չես և, այնուամենայնիվ, զորքը կառաջնորդես Հելլադա, ապա, ես համոզված եմ, որ այստեղ, պարսից երկրում մնացած մարդիկ հետագայում դեռ կլսեն, թե Մարդոնիոսը, որը մեծ չարիք պատճառեց պարսիկներին, կործանվեց, ճոշոտված շներից և ճավքերից աբենական կամ լակեդեմոնական ինչ-որ վայրում, եթե, իհարկե, մինչ այդ կործանված չի եղել ճանապարհին: Այնժամ դու կիմանաս, թե ինչպիսի՞ մարդկանց վրա արշավել ստիպեցիր արքային»:

11. Արտաբանոսն այսպես խոսեց, իսկ Քսերքսեսը զայրացավ և պատասխանեց նրան հետևյալ խոսքերով. «Արտաբանոս. դու իմ ճորեղբայրն ես: Այդ քեզ կփրկի քո սին խոսքերի համար արժանի պատիժ կրելուց: Այսուհանդերձ, ես քեզ ամոթով կթողնեմ, քանի որ քոքրոջի ես ու վախկոտ. դու չես արշավի ինձ հետ Հելլադա, այլ կմնաս այստեղ, կանանց հետ: Ես առանց քեզ ևս կարող եմ կատարել այն ամենը, ինչ ասացի: Թող ես չլինեմ որդին Դարեհի, որը սերում էր Աքեմենեսի որդի Տեիսպեսի որդի Կամբյուսեսի որդի Կյուրոսի որդի Տեիսպեսի որդի Արիարամնեսի որդի Արսամեսի որդի Հյուստասպեսից[9], եթե չնվաճեմ աթենացիներին: Քանզի ես հաստատ համոզված եմ, որ եթե մենք խաղաղություն պահպանենք, ապա նրանք, եթե դատենք նրանց արարքներից, հանգիստ չեն մնա, այլ իրենք կհարձակվեն մեր երկրի վրա, քանի որ արդեն երկիզել են Սարդեսը և ներխուժել Ասիա: Այժմ արդեն ոչ ոք չի կարող ճանաչել. այլ հարցն այն է, որ արդյո՞ք մենք կհարձակվենք, թե՞ ինքներս կենթարկվենք հարձակման. այնժամ կամ մեր ամբողջ երկիրը կհպատակվի հելլեններին, կամ նրանց ամբողջ երկիրը՝ պարսիկներին. քանզի այս թշնամության մեջ միջին ճանապարհ չկա: Արդ, լավն այն է, որ մենք վրեժ լուծենք հելլեններից, անցյալում մեզ պատճառած չարիքների փոխարեն: Այդ արշավանքը կատարելով, ես միաժամանակ կհամոզվեմ նաև, թե այդ մարդիկ ի՞նչ փորձանք կարող են ինձ պատճառել. չէ՞ որ փոյուգիացի Պելոպսը, իմ հայրերի սարուկը, այնպես հաստատ նվաճել է այդ երկիրը, որ մինչև օրս էլ երկիրը և դրա բնակիչները կոչվում են իրենց նվաճողի անունով»:

12. Այդ մասին այսքան երկար խոսվեց. իսկ երբ գիշեր եղավ, Քսերքսեսին սկսեց տանջել Արտաբանոսի խորհուրդը: Ամբողջ գիշեր մտածելով, նա համոզվեց, որ Հելլադա արշավելը բոլորովին իր գործը չէր: Այս նոր որոշումն ընդունելով, նա քնեց: Եվ անա գիշերը, ինչպես պատմում են պարսիկները, նա այսպիսի երազ է տեսնում: Քսերքսեսին թվացել է, թե իր առաջ հայտնվել է բարձրահասակ, գեղադեմ մի մարդ և ասել. «Ով պարսիկ. դու փոխեցի՞ր քո որոշումը և չե՞ս կամենում զորքն առաջնորդել Հելլադա, թեև հրամայել ես պարսիկներին զորք գումարել: Դու ճիշտ չես վարվում քո որոշումը փոխելով, և ես չեմ կարող քեզ ներել: Արդ, դու գնա այն ճանապարհով, որն ընտրել էիր ցերեկը»:

13. Այս խոսքերն ասելուց հետո, Քսերքսեսին թվաց, թե տեսիլն անհետացավ: Հաջորդ օրը նա, առանց ուշադրություն դարձնելու այդ երազին, դարձյալ խորհրդի հրավիրեց այդ նույն պարսիկներին և ասաց. «Պարսիկներ. ներեցեք ինձ, որ հակառակ որոշումն եմ կայացրել: Քանզի դեռևս ես չեմ թեկոխել հասուն իմաստության տարիքը[10] և ինձ այդպիսի խորհուրդներ ավողները ոչ մի ժամանակ ինձանից չեն հեռանում: Ուստի և, երբ ես լսեցի Արտաբանոսի կարծիքը, իմ մեջ իսկույն եռաց երիտասարդությունը, և ես անպատշաճ և անվայել խոսքեր ուղղեցի ինձանից ավագ մարդուն: Այ-

ժրմ ես զգացել եմ իմ սխալը և որոշել եմ հետևել նրա խորհրդին: Արդ, ես փոխել եմ Հելլադա արշավելու իմ որոշումը. ուստի դուք հանգիստ մնացեք»:

14. Այս լսելով, պարսիկները ուրախացան և երկրպագեցին (արքային): Գիշերը, սակայն, Քսերքսեսի երազում դարձյալ հայտնվեց նույն մարդը և ասաց. «Ով Դարեհի որդի. ուրեմն դու հրաժարվո՞ւմ ես պարսից առաջ քո խոստացած արշավանքից և իմ խոսքերին ոչ մի կարևորություն չես տալիս, կարծես թե այդպիսի խոսքեր չես էլ լսել: Բայց լավ իմացիր. եթե դու իսկույն հեթ չարշավես, ապա հետևանքը կլինի այն, որ ինչքան արագ դու հասել ես մեծության և հզորության, նույնքան արագ էլ նորից կստորանաս»:

15. Երազից սարսափելի Քսերքսեսը մահճից ընդոստ ելավ և հրեշտակ ուղարկեց կանչելու Արտաբանոսին: Երբ նա ներկայացավ, Քսերքսեսը նրան այսպես խոսեց. «Արտաբանոս. ես իսկույն քեզ հետ խելամիտ չվարվեցի և իզուր հանդիմանեցի քեզ քո պիտանի խորհրդի համար: Քիչ ժամանակ անց, սակայն, ես զղջացի և հասկացա, որ ես պետք է կատարեմ քո խորհուրդը: Սակայն ես, թեև ուզում եմ այն կատարել, բայց չեմ կարող: Քանզի երբ ես սթափվեցի ու փոխեցի իմ որոշումը, ինձ երազում սկսեց մի տեսիլ հայտնվել, որը բոլորովին խորհուրդ չէր տալիս այդպես վարվել, իսկ այժմ նա հեռացավ նույնիսկ սպառնալով: Եթե աստված է այդ տեսիլը ինձ ուղարկել և անպայման կամենում է, որ այդ արշավանքը Հելլադայի վրա կատարվի, ապա այդ տեսիլը կհայտնվի նաև քեզ, նույնպիսի հրամանով: Ես կարծում եմ, թե այդ այդպես կկատարվի, եթե դու վերցնես իմ ամբողջ զգեստը և հագնես այն, այդպես հագած նստես իմ գահին և հետո քնես իմ մահճում»:

16. Այսպես ասաց Քսերքսեսը. իսկ Արտաբանոսը չհնազանդվեց նրա առաջին հրահանգին, քանի որ իրեն արժանի չէր համարում արքայի գահին նստելու: Ի վերջո, քանի որ արքան շարունակում էր պնդել, նա համաձայնվեց կատարել կարգադրությունը, և ասաց. «Իմ կարծիքով, ով արքա, հավասարապես կարևոր է, որ մարդ թե՛ ինքը խելոք դատի, և թե՛ լսի այլոց խելոք խորհուրդը: Դու այս երկու հնարավորությունն էլ ունես, բայց քեզ շեղում է վատ մարդկանց հետ շփվելը: Ճիշտ նույնպես, ասում են, ուժեղ քամիները մոլեգնում են մարդկանց համար ամենից օգտակար եղող ծովի վրա, թույլ չտալով դրսևորելու իր իրական բնությունը: Ինձ խոցեց ոչ այնքան քո անհպաստ կարծիքն իմ մասին, որքան այն, որ ատյանում արված երկու առաջարկներից, որոնցից մեկը հրահրում էր մեծամտությունը, իսկ մյուսը ձգտում էր այն խափանել և պնդում էր, որ վատ է մարդկային հոգին դաստիարակել մշտապես առավել հզորություն ձեռք բերելու անհագ ծարավով, դու ընտրեցիր քեզ ու պարսից համար առավել կործանարարը: Իսկ այժմ, երբ դու հակվել ես դեպի առավել լավ կարծիքը և հրաժարվել ես Հելլադա արշավելուց, ասում ես, թե քեզ երազում հայտնվել է աստծու ուղարկած տեսիլը, որն արգելում է քեզ հրաժարվել արշավանքից: Բայց դու, արքա, սխալվում ես. այդ երազները աստվածառաք չեն: Ես քեզանից ավագ եմ շատ և կարող եմ բացատրել, թե ի՞նչ բան են այդ մոլորեցնող երազները: Սովորաբար մարդիկ երազում տեսնում են այն, ինչի մասին մտածել են օրվա ընթացքում: Իսկ մենք այս վերջին օրերին ամբողջովին կլանված էինք այդ արշավանքով: Բայց եթե բանն այնպես չէ, ինչպես ես ենթադրում եմ, այլ այդ երազն աստծու առաքած է, ապա դու լիովին իրավացի ես. թող այդ տեսիլը երևա նաև ինձ և հրամայի նույնը, ինչ (հրամայել է) քեզ: Եթե, իհարկե, այն երևալու է, ապա նրա համար նշանակություն չունի, թե ես հագած կլինեմ քո զգեստները կամ իմ զգեստները և քնած կլինեմ քո մահճում, թե իմ: Ինչպիսին էլ որ լինի քո երազում հայտնվող այդ տեսիլը, նա չի կարող այնքան միամիտ լինել, որ ինձ տեսնելով կարծի, թե այդ դու ես, թեկուզ քո զգեստները հագած լինեմ: Բայց մենք կփորձենք. գուցե և տեսիլը արժանի չհամարի երևալ ինձ, միևնույն է՝ իմ զգեստները հագած կլինեմ, թե՞ քո զգեստները: Արդ, եթե տեսիլը շարունակի հայտնվել նաև ինձ, ապա ես ևս կհամոզվեմ, որ այն աստվածառաք է: Եթե դու այսպես որոշել ես և հնարավոր չէ դրանից հրաժարվել, ապա ես պետք է քնեմ քո մահճի մեջ. երբ ես կատարեմ քո կամքը, թող տեսիլը հայտնվի նաև ինձ: Բայց մինչ այդ ես մնում եմ իմ կարծիքին»:

17. Արտաբանոսն այսպես ասաց և, հուսալով, որ Քսերքսեսը սին խոսքեր է ասում, կատարեց հրամայվածը: Նա հագավ Քսերքսեսի զգեստը, նստեց գահին, և երբ դրանից հետո գնաց ընկողմանելու, քնի մեջ նրան երազում հայտնվեց նույն տեսիլը, ինչ և Քսերքսեսին: Կանգնելով Արտաբանոսի գլխավերևում, տեսիլն ասաց. «Այդ դո՞ւ ես համոզում Քսերքսեսին հրաժարվելու Հելլադա արշավելուց, իբր մտահոգվելով նրա մասին: Բայց ոչ հետագայում, ոչ ևս այժմ դու անպատիժ չես մնալու այն բանի համար, որ ջանում ես խափանել այն, ինչ պետք է կատարվի: Իսկ թե ի՞նչ է սպասում Քսերքսեսին նրա անհնազանդության համար, հայտնված է իրեն»:

18. Արտաբանոսին թվաց, թե տեսիլն այս խոսքերով իրեն սպառնալուց հետո, ուզում էր իր աչքերը դաղել շիկացած երկաթով: Նա բարձրաձայն ճչաց և ընդոստ վեր թռավ ու, նստելով Քսերքսեսի կողքին, պատմեց նրան իր տեսած երազը և շարունակեց այսպես. «Ես, ով արքա, արդեն շատ անգամ տեսել եմ, թե ինչպես մեծերը տապալվել են փոքրերի կողմից. ուստի չեմ ուզում, որ քեզ կառավարեն տարիքի կրքերը. քանզի լավ գիտեմ, թե ինչքան վատ է մեծ իշխանության ձգտելը: Ես հիշում եմ, թե ինչպե՞ս վերջացավ Կյուրոսի արշավանքը մասսագետների դեմ, հիշում եմ և Կամբյուսեսի արշավանքը եթովպացիների դեմ, իսկ ինքս Դարեհի հետ արշավել եմ

սկյութների դեմ: Այս ամենն իմանալով, ես այն կարծիքն ունեի, թե դու, խաղաղություն պահպանելով, երանելի կհամարվես բոլոր մարդկանց համար: Բայց քանի որ կա ինչ-որ աստվածային մղում և հելլեններին, ըստ երևույթին, սպառում է աստվածառամ կործանում, ապա ես ևս այժմ փոխում եմ իմ կարծիքը և կողմնակից եմ արշավելուն: Իսկ դու պարսիկներին հայտնիր աստծուց ուղարկված պատգամը և հրամայիր նրանց հնազանդվելու քո առաջին հրամանին՝ պատրաստվել արշավանքի: Գործիր, քանի որ աստված այդպես է կամենում, և այնպես, որ նրա քեզ տված պատվիրանից ոչինչ անկատար չմնա»: Այս խոսքերից հետո, տեսիլից քաջալերված, երբ առավոտը բացվեց, Քսերքսեսն այդ ամենը պատմեց պարսիկներին. իսկ Արտաբանոսը, որը նախապես մեն-մենակ բացահայտորեն փորձում էր նա պահել արքային, այժմ բացահայտորեն շտապեցնում էր:

19. Այս դեպքից հետո, երբ Քսերքսեսը պատրաստվում էր արշավանքի, հենելիս երրորդ տեսիլը հայտնվեց. այն լսելիս, մոգերը մեկնաբանեցին, թե՝ ամբողջ երկիրը և բոլոր մարդիկ պետք է հպատակվեն Քսերքսեսին: Իսկ տեսիլն այսպիսին էր. Քսերքսեսին թվաց, թե ինքը պսակված է ձիթենու ճյուղով, որի շիվերը տարածվել էին ամբողջ երկրի վրա. այնուհետև, սակայն, գլխին դրված այդ պսակն անհետացել էր: Մոգերն այսպես վճռեցին, որից հետո, խորհուրդ գումարած պարսիկ այրերը մեկնեցին, ամեն մեկը նորից իր իշխանությունը. ընդ որում, նրանցից յուրաքանչյուրը, ցանկանալով ստանալ խոստացված պարգևները, մեծ հոժարությամբ կատարում էր արքայի հրամանը: Քսերքսեսն, այսպիսով, զորք էր հավաքում, մայր ցամաքի ամեն մի մասը զննելով ուշադիր:

20. Եգիպտոսը նվաճելուց հետո Քսերքսեսն ամբողջ չորս տարի հավաքում էր զորք և այն պատրաստում արշավանքի: Հինգերորդ տարվա[11] ավարտին նա արշավանքի ելավ հսկայական բազմությամբ: Մեզ հայտնի բոլոր զորքերից սա մեծագույնն էր. այնպես, որ սրա հետ չէր կարող համեմատվել ո՛չ սկյութների դեմ արշաված Դարեհի զորքը, ո՛չ սկյութական զորքը, երբ սկյութները, կիմմերներին հետապնդելիս, ներխուժեցին մեդացիների երկիր և, նվաճելով համարյա ամբողջ Վերին Ասիան, բնակվեցին այնտեղ[12], որի պատճառով էլ հետագայում Դարեհը ուզեց պատժել նրանց, ո՛չ էլ, համանման զրույցներին, Իլիոն արշաված Ատրիդների զորքը, ո՛չ էլ մյուսիացիների և տևկրացիների[13] զորքերը, որոնք դեռևս Տրոյական պատերազմից առաջ Բոսպորոսով անցել էին Եվրոպա, նվաճել բոլոր թրակացիներին, իջել մինչև Հոնիական ծով և հարավում հասել մինչև Պենեոս գետը:

21. Այդ և այլ արշավանքները միասին չեն կարող հավասարվել այս միակ արշավանքին. քանզի Քսերքսեսը ի՞նչ ժողովուրդ ասես Ասիայից չտարավ Հելլադայի դեմ: Ինչպիսի՞ խմելու ջրեր անբավարար եղան (նրա զորքի

համար), բացի մեծ գետերից: Քանզի ազգերի մի մասը պարտավոր էր ռազմանավեր տրամադրել, ուրիշներ՝ հետևակ զորք, մյուսները՝ հեծելազոր, ուրիշներ՝ զորքերից բացի նաև ձիեր փոխադրող բեռնանավեր, ուրիշներ՝ երկար մարտանավեր կամուրջների համար և, վերջապես, ուրիշներ՝ պարեն և բեռնանավեր:

22. Քանի որ պարսից նավատորմն առաջին անգամ մեծ վնաս էր կրել Աթոս (հրվանդանը) շրջանցելիս, ապա Քսերքսեսը երեք տարի շարունակ պատրաստվում էր Աթոսի (պարանոցը) փորելու համար: Քերսոնեսոսի Ելյուսում խարսխել էին տրիերաներ: Այստեղից դուրս գալով, ամեն ազգի զինվորներ, իրար փոխարինելով, մտրակների հարվածների տակ, ստիպված էին փորել պարանոցը: (Հարկադրաբար) փորում էին նաև Աթոսի բնակիչները: Աշխատանքը գլխավորում էին պարսիկներ Բուբարեսը, Մեգաբազոսի որդին, և Արտաքայեսը, Արտայոսի որդին: Աթոսը մեծ և հայտնի լեռ է, որը ձգվում է մինչև ծով. այն մարդաբնակ է և վերջանում է մայր ցամաքի վրա, կազմելով թերակղզիանման մի պարանոց, տասներկու ասպարեզ լայնությամբ: Այդ պարանոցը դաշտային է, ոչ մեծ բլուրներով, որոնք ձգվում են Ականթոսի ծովից մինչև հանդիպակաց Տորոնե ծովը: Այս պարանոցի վրա, որտեղ վերջանում է Աթոսը, գտնվում է հելլենական Սանե քաղաքը: Սանեից այն կողմ, Աթոսի վրա կան քաղաքներ, որոնք պարսիկները փորձեցին ցամաքայինից վերածել կղզայինի: Այդ քաղաքները հետևյալներն են. Դիոն, Օլոփյուքսոս, Ակրոթոոն, Թյուսսոս, Կլեոնայ:

23. Սենա այս քաղաքներն են գտնվում Աթոսի վրա: Իսկ բարբարոսները, բաժանելով տեղամասը ըստ ազգերի, սկսեցին փորել: Սանե քաղաքի մոտ նրանք ուղիղ գիծ բացեցին. երբ փորվածքը խորացել էր, ներքևում գտնվողները փորում էին, մյուսները փորված հողը հանձնում էին վերևում աստիճանների վրա կանգնածներին, սրանք էլ այն վերցնելով հանձնում էին ուրիշների, մինչև որ հողը հասցվում էր ամենավերևում կանգնածներին. սրանք էլ հողը դուրս էին տանում ու թափում: Փորվող ջրանցքի զառիթափի կողերը փլվելիս կրկնակի աշխատանք էին պատճառում մյուս բոլորին, բացի փյունիկեցիներից: Եվ դա անխուսափելի էր, քանի որ նրանք փորվածքի և՛ վերևի, և՛ ներքևի հատվածները փորում էին հավասար լայնքի: Փյունիկեցիները, ինչպես այլ գործերում, այս դեպքում ևս իմաստություն դրսևորեցին: Վերցնելով իրենց բաժին ընկած հատվածը, նրանք սկսեցին ջրանցքի վերին մասը փորել կրկնակի լայն, քան պետք է լիներ ինքը՝ ջրանցքը, բայց աշխատանքն առաջանալիս այն հետզհետե նեղացվում էր. երբ հասան հատակին, փորվածքի լայնքը հավասարվեց մյուսների փորածին: Այստեղ կա մարգագետին, որը հավաքավայր էր դարձել և վաճառատեղի. այստեղ նրանց համար Ասիայից բերվում էր մեծաքանակ աղացած ցորեն:

24. Եթե իմ ենթադրությունը ճիշտ է, ապա Քսերքսեսը հրամայեց այդ (ջրանցքը) փորել փառասիրությունից մղված, ցանկանալով ցուցադրել իր հզորությունը և իր համար հուշարձան թողնել: Թեև նավերը նրանք կարող էին հեշտությամբ քարշել պարանոցի վրայով, բայց արքան հրամայեց ծովից ծով այնպիսի լայն ջրանցք փորել, որով երկու տրիերա միաժամանակ կարող էին թիակներով նավարկել: Այս նույն մարդկանց, որոնք փորում էին ջրանցքը, հրամայված էր նաև կամուրջ կառուցել Սարյուսոն գետի վրա:

25. Այս ամենն արքան այսպես կառուցեց: Բացի այդ, նա փյունիկեցիներին ու եգիպտացիներին հրամայեց բիբլոսի և սպիտակ վուշի թելերից կամուրջների համար նոպաններ պատրաստել, ինչպես նաև մթերք ամբարել զորքի համար, որպեսզի Հելլադա արշավելիս զորքը և բեռնատար կենդանիները սովի չմատնվեին: Առավել հարմար վայրեր փնտրելով, նա հրամայեց Ասիայի բոլոր մասերից բեռնանավերով ու լաստանավերով այդ վայրերում (պարենն) ամբարել: Դրա մեծագույն մասը նրանք բերում էին Սպիտակ ափ կոչված վայրը, որը գտնվում է Թրակիայում, ուրիշներ՝ Տյուրոդիզա, որը գտնվում է Պերինթյան երկրում, ուրիշներ՝ Դորիսկոս, ուրիշներ՝ Էիոն, որը գտնվում է Սարյուսոն գետի վրա, ուրիշներ՝ Մակեդոնիա:

26. Մինչ արանք կատարում էին այս սահմանված աշխատանքը, ամբողջ հետևակ զորքը գումարվեց և Քսերքսեսի գլխավորությամբ Կապադովկիայի Կրիտալլայից շարժվեց դեպի Սարդես: Քանզի Կրիտալլան նշված էր որպես հավաքատեղին այն զորքի, որը Քսերքսեսի հետ պետք է արշավեր ցամաքով: Հյուպարքոսներից ո՞ր մեկն այդ ժամանակ բերեց լավագույնս սպառազինված զորքը և արքայից ստացա՞վ արդյոք ընծաներ, ես այդ չեմ կարող ասել. քանզի ես նույնիսկ չգիտեմ, թե այդպիսի վճիռ եղե՞լ էր ընդհանրապես: Արդ, պարսիկները, անցնելով Հալյուս գետը, մտան Փռյուգիա, և այդ երկրի միջով ընթանալով, հասան Կելայնեն, որտեղ գտնվում են Մեանդրոս գետի և Մեանդրոսից ոչ պակաս խոշոր Կատարրակտես[14] կոչված գետի ակունքները: Կատարրակտեսը բխում է Կելայնեի վանքատեղից և թափվում Մեանդրոս գետը: Այս քաղաքում կախված է Սիլենոս Մարսյուասի մորքին, որը, ըստ փռյուգական զրույցի, մաշկանանել է Ապոլլոնը և կախել այնտեղ:

27. Այս քաղաքում (Քսերքսեսին) արդեն սպասում էր լյուդիացի Պյութիոսը, Ատյուսի որդին, որը մեծագույն հյուրասիրությամբ պատվեց արքայի ամբողջ զորքը և իրեն՝ Քսերքսեսին: Նա հայտարարեց, որ հոժարությամբ դրամ կնատկացնի պատերազմի համար: Երբ Պյութիոսը դրամ խոստացավ, Քսերքսեսը հարցրեց ներկա պարսիկներին, թե ո՞վ է այս Պյութիոսը և ինչո՞ւ դրամ ունի այդպես խոստանալու համար: Նվ նրանք պատասխանեցին. «Ով արքա. սա նա է, ով քո հայր Դարեհին նվիրել է ոսկուց պատրաստած սոսին և որթատունկը: Նա մեզ հայտնի մարդկանցից, թեզանից հետո ամենահարուստն է»:

28. Զարմացած այս վերջին խոսքերի վրա, ինքը՝ Քսերքսեսը հաջորդաբար հարցրեց Պյութիոսին, թե նա ինչո՞ւ փող կունենա: Եվ նա պատասխանեց. «Ով արքա. ես չեմ ուզում թեզանից թաքցնել այդ, պատճառաբանելով, թե չգիտեմ իմ հարստության չափը, այլ գիտեմ այդ և ամեն ինչ թեզ կպատմեմ ճշմարտապես[15]: Երբ իմացա, թե դու գալու ես դեպի Հելլենական ծով, կամենալով պատերազմի համար թեզ դրամ տրամադրել, հաշվեցի (իմ հարստությունը, և) հաշվելուց հետո գտա, որ իմ ունեցած արծաթը կազմում է երկու հազար տաղանդ, իսկ ոսկին՝ չորս հարյուր քյուր դարեհական ստատերից յոթ հազար պակաս[16]: Այս փողերը ես նվիրում եմ թեզ. իսկ ինձ ապրելու համար բավական են իմ սարուկները և հողամասերը»:

29. Նա այսպես խոսեց, իսկ Քսերքսեսը հանդիպեցավ նրա խոսքերից ու ասաց. «Իմ լյուդիացի բարեկամ: Պարսկաստանից դուրս գալուց հետո, ցարդ ես չէի հանդիպել ոչ մի մարդու, որը կամենար հյուրընկալություն մատուցել զորքին. և ոչ մեկը, ինձ ներկայանալով, չի կամեցել հոժարակամ դրամ հատկացնել ինձ պատերազմի համար, բացի թեզանից: Մինչդեռ դու առատորեն հյուրասիրեցիր իմ զորքերին և խոստանում ես մեծամեծակ դրամ: Դրա փոխարեն ես ուզում եմ թեզ շնորհել այսպիսի ընծաներ. ես թեզ հայտարարում եմ իմ հյուրընկալը և իմ հարստությունից կլրացնեմ այն յոթ հազար ստատերը, որը պակասում է քո չորս հարյուր քյուրից, որպեսզի քո չորս հարյուր քյուրից չպակասի յոթ հազար, այլ իմ լրացնելով գումարն ամբողջական լինի: Դու ինքդ տիրիր այն ամենին, ինչ ինքդ ունեցել ես և մնա միշտ այնպես, ինչպես կաս: Եթե այդպես վարվես, դու ոչ այժմ, ոչ իսկ հետագայում չես զղջալու»:

30. Այս ասելուց և իր խոստումը կատարելուց հետո, նա շարունակեց իր առաջընթացը: Անցնելով Անավա կոչված փռյուգական քաղաքը և լինը, որտեղից աղ էին ստանում, հասնում է Փռյուգիայի Կոլոսսայ կոչված խոշոր քաղաքը: Այստեղ Լյուկոս գետը[17] թափվում է երկրի բացվածքի մեջ և անհետանում. բայց մոտավորապես հինգ ասպարեզ անցնելուց հետո, նորից հայտնվելով, թափվում է Մեանդրոսի մեջ: Կոլոսսայից զորքը շարժվեց դեպի Փռյուգիայի և Լյուդիայի սահմանը և հասավ Դյուպրարա քաղաքը, որտեղ կա նոսի մեջ խրված կոթող. այն կանգնեցրել է Կրեսոսը. դրա վրա կա արձանագրություն, որը նշագծում է այդ սահմանը:

31. Փռյուգիայից նա մտավ Լյուդիա, որտեղ ճանապարհը բաժանվում է: Դեպի ձախ այն տանում է Կարիա, իսկ դեպի աջ՝ Սարդես: Այս ճանապարհով գնալիս պետք է անցնել Մեանդրոս գետը և գնալ Կալլատեբոս քաղաքի մոտով, որտեղ արհեստագործ մարդիկ մոշենուց և ալյուրից մեղր են

պատրաստում[18]: Այս նանապարհով գնալիս Քսերքսեսը պատահեց սոսու, որին, նրա գեղեցկության պատճառով, նա ընծայեց ոսկե զարդ, և նրա պահպանումը հանձնարարեց անմահներից մեկին: Հաջորդ օրը նա հասավ Լյուդիայի մայրաքաղաք:

32. Ժամանելով Սարդես, Քսերքսեսը նախ դեսպաններ ուղարկեց Հելլադա, որպեսզի հող ու ջուր պահանջեն և արքայի համար ընդունելություններ կազմակերպեն: Նա բոլոր վայրերն ուղարկեց հող պահանջելու, բացի Աթենքից ու Լակեդեմոնից: Նա երկրորդ անգամ դեսպաններ ուղարկեց հող ու ջուր պահանջելու հետևյալ պատճառով: Նա լիահույս էր, որ այն քաղաքները, որոնք նախկինում մերժել էին հող ու ջուր տալ Դարեհի ուղարկած դեսպաններին, այժմ կվախենային ու կտային: Եվ անա, կամենալով լրիվ համոզվել այդ բանում, Քսերքսեսը ուղարկեց (իր դեսպաններին):

33. Այնուհետև նա պատրաստվում էր արշավելու Աբյուդոս: Մինչ այդ (փյունիկեցիներն ու եգիպտացիները) Ասիայից Եվրոպա Հելլեսպոնտոսը կամրջեցին: Հելլեսպոնտոսի Քերսոնեսում, Սեստոս և Մադյուտոս քաղաքների միջև, Աբյուդոսի դիմաց կա դեպի ծովը ձգվող մի ելուստ: Սա այն վայրն է, որտեղ հիշ անց աթենացիները, Արիփոնի որդի զորավար Քսանթիպպոսի գլխավորությամբ, բռնելով պարսիկ Արտայուկտեսին, Սեստոսի նյուպարքոսին, նրան կենդանի խաչեցին. սա հրամայել էր կանանց բերել Ելայուտում գտնվող Պրոտեսիլաոսի տաճարը և այնտեղ պոծել նրանց:

34. Անա Աբյուդոսից սկսելով, նրանք, ում հանձնարարված էր այդ գործը, կամրջեցին այդ ելուստը: Կամուրջներից մեկը փյունիկեցիները ձգեցին սպիտակ վուշից, մյուսը՝ եգիպտացիները՝ բիբլոսից (պատրաստած նոպաններով): Աբյուդոսից մինչև հանդիպակաց ափը յոթ ասպարեզ է: Բայց երբ նեղուցն արդեն կամրջված էր, ուժեղ փոթորիկը քանդեց այդ կառույցը և ոչնչացրեց:

35. Լսելով այդ մասին, Քսերքսեսը խիստ զայրացավ և հրամայեց պատժել Հելլեսպոնտոսը մտրակի երեք հարյուր հարվածով, և ծով նետել մի զույգ կապանք: Ես նույնիսկ լսել եմ, որ նա ուղարկել է խարանողների՝ Հելլեսպոնտոսը խարանելու համար: Իրոք, նա հրամայել է, որ (Հելլեսպոնտոսը) մտրակելու ժամանակ նրանք արտասանեն այսպիսի բարբարոսական և անօրեն խոսքեր. «Ով դառն ջուր. մեր տերը քեզ պատժում է այսպես, որովհետև դու տհարգեցիր նրան, թեև նա քեզ երբեք չի անարգել: Այնուամենայնիվ, Քսերքսես արքան կանցնի քո վրայով, ցանկանաս դու այդ, թե ոչ: Եվ արդարացի կերպով ոչ մի մարդ քեզ զոհեր չի մատուցի, որպես պղտոր և աղի գետի»: Քսերքսեսը հրամայեց այսպես պատժել այդ ծովը, իսկ Հելլեսպոնտոսի կամրջման վերակացուներին՝ գլխատել:

36. Այս հրամանը կատարեցին նրանք, ովքեր ունեին այն կատարելու

անշնորհակալ պաշտոնը[19], իսկ կամուրջները կառուցեցին ուրիշ հարտարապետներ: Նրանք կամուրջները կառուցեցին հետևյալ կերպ. իրար կողքի դրեցին հիսուն թիականի նավեր և տրիերաներ, դեպի Եվքսինյան Պոնտոս գցված կամուրջի համար՝ երեք հարյուր վաթսուն, իսկ դեպի Հելլեսպոնտոս գցվածի համար՝ երեք հարյուր տասնչորս նավ: Պոնտոսի կամրջի համար նավերը դասավորեցին լայնակի, իսկ մյուսի համար՝ Հելլեսպոնտոսի հոսանքի ուղղությամբ[20], որպեսզի նոպանները ձգված պահեն: Այնուհետև նրանք շատ խոշոր խարիսխներ նետեցին, Պոնտոսի կողմի կամրջի վրա՝ Պոնտոսից փչող հողմերի համար, իսկ մյուսի՝ դեպի արևմուտք և էգեյան ծով ձգված կամրջի վրա՝ արևմտյան և հարավային հողմերի համար: Հիսուն թիականի նավերի և տրիերաների միջև նրանք թողեցին տարածություն, որպեսզի կամեցողը կարողանա փոքր նավերով անցնել դեպի Պոնտոս կամ նավել Պոնտոսից այս կողմ: Այդ անելուց հետո նրանք նոպանները ցամաքից ձգում էին՝ փայտե ճախարակների վրա փաթաթելու միջոցով. ընդ որում, օգտագործում էին ոչ թե առաջվա նման մի տեսակի նոպան, այլ յուրաքանչյուր կամուրջ կապում էին սպիտակ վուշյա երկու և բիբլոսյա չորս նոպանով: Դրանք բոլորը հավասար հաստություն և նույնպիսի գեղեցիկ տեսք ունեին, բայց վուշյա նոպաններն առավել ծանր էին. այդ նոպանի մի կանգունը կշռում էր մեկ տաղանդ: Երբ նեղուցն արդեն կամրջվել էր, փայտե գերաններ սղոցեցին, տախտակների երկարությունը հավասարեցնելով կամրջանավի լայնքին: Այնուհետև ձգված նոպանների վրա տախտակները դասավորեցին իրար կողքի և դարձյալ կապերով դրանք ամրացրին լայնակի դրված գերաններին: Այնուհետև, ճյուղեր բերելով, դասավորեցին այնտեղ ու վրան հող փռեցին: Հողը տափանեցին և կամրջի երկու կողմում բազրիք պատրաստեցին, որպեսզի լծկան անասունները և ձիերը վերևից ծովը տեսնելով, չվախենային:

37. Երբ կամուրջների կառուցումը և Աբոսում կատարվող գործերը ավարտվել էին, ջրանցքի բերանների մոտ հողաթմբեր էին բարձրացրել, որպեսզի մակընթացության ժամանակ ջուրը փորվածքի բերաններից ներս չլցվեր, լուր հասավ, թե ջրանցքը լիովին պատրաստ է: Այնժամ, արդեն պատրաստված զորքը ձմեռելուց հետո, գարնանը Սարդեսից արշավեց դեպի Աբյուդոս: Մինչ զորքն արշավում էր, արևը, լքելով իր կացարանը երկնքում, դարձավ անտեսանելի, թեև ամպամած չէր և (երկինքն) առավել քան պարզ էր, և ցերեկը դարձավ գիշեր[21]: Քսերքսեսն այս տեսնելով, մտահոգվեց և հարցրեց մոգերին, թե ի՞նչ կարող է նշանակել այս երևույթը: Նրանք պատասխանեցին, թե ասված ազդարարում է հելլեններին նրանց քաղաքների ամայացումը, քանի որ, նրանց ասելով, արևը հելլենների նախագուշակն է, իսկ լուսինը՝ իրենցը: Այդ լսելով, Քսերքսեսը հրճվեց և շարունակեց իր արշավանքը:

38. Արշավանքի ընթացքում Քսերքսեսին ներկայացավ Լյուդիացի Պյութիոսը, անաբեկված երկնային նշանակից, բայց և քաջալերված իր ստացած ընծաներից, ասաց այսպես. «Ով տեր, ես քեզանից մի շնորհ պիտի խնդրեմ, որը կատարելը քեզ համար շատ հեշտ է, իսկ ինձ համար շատ բանկ»: Քսերքսեսը, ենթադրելով, որ Պյութիոսը կխնդրի որևէ մեկ այլ բան, քան այն, ինչ իրականում խնդրեց, խոստացավ կատարել, և հրամայեց ասել, թե ի՞նչ է իրեն պետք: Լսելով այդ պատասխանը, Պյութիոսը քաջալերվեց և ասաց. «Ով տեր, ես հինգ որդի ունեմ, որոնց բոլորին էլ վիճակվեց քեզ հետ արշավել Հելլադա: Ով արքա, գթա իմ առաջացած տարիքին և ազատիր արշավանքից միայն իմ ավագ որդուն, որպեսզի խնամի և հոգա իմ ունեցվածքը, իսկ մյուս չորսին տար քեզ հետ, և քո բոլոր մտադրություններն իրագործելուց հետո, վերադարձիր»:

39. Քսերքսեսը խիստ զայրացավ ու պատասխանեց հետևյալ խոսքերով. «Անպետք մարդ, դու համարձակվեցիր հիշեցնել քո որդու մասին, երբ ես, Հելլադա արշավելիս, ինձ հետ տանում եմ իմ որդիներին և եղբայրներին և հարազատներին և բարեկամներին. մինչդեռ դու, որպես իմ ստրուկը, պարտավոր էիր քո ամբողջ ընտանիքով և քո կնոջ հետ հետևել ինձ: Այժմ լավ իմացիր, որ հոգու կացարանը ականջներն են: Երբ հոգին լսում է հաճելի խոսքեր, ապա նա մարմինը լցնում է ուրախությամբ. իսկ հակառակը լսելիս, նա մարմինը լցնում է զայրույթով: Այն ժամանակ, երբ դու ինձ համար բարի ծառայություններ մատուցեցիր և խոստացար այդպիսի դարձյալ մատուցել, չէիր կարող պարծենալ, թե դու գերազանցել ես արքային քո բարեգործություններով: Իսկ այժմ, թեև դու քեզ վատթարագույնս դրսևորեցիր, այսուհանդերձ քո պատիժը կլինի պակաս այն պատժից, որին դու արժանի էիր: Քեզ և քո չորս որդիներին փրկում է քո հյուրընկալությունը: Բայց այն մեկը, որին դու առավել կուզենայիր պահպանել, պետք է հատուցի իր կյանքով»: Այս պատասխանից հետո նա իսկույն հրամայեց նրանց, ովքեր այդ անելու պաշտոնն ունեին[22], գտնել Պյութիոսի ավագ որդուն և նրան երկու կես անելով, մի կեսը դնել աջ, մյուս կեսը՝ ձախ կողմն այն ճանապարհի, որտեղով անցնելու էր իր զորքը:

40. Նրանք այս հրամանը կատարեցին, որից հետո զորքն անցավ (մարմնի մասերի) արանքով: Առջևից գնում էին բեռնատար անասունները և գումակը. այնուհետև հետևում էին տարբեր ազգերի զորքերը, ոչ թե իրարից անջատ, այլ խառնիճաղանջ: Երբ արդեն զորքի կեսից ավելին անցել էր, այնժամ մի տարածություն ստեղծվեց, և սրանք անջատվեցին արքայից: Առջևից գնում էին հազար հեծյալներ[23], ընտրված համայն Պարսկաստանից. այնուհետև՝ հազար նիզակակիր, նույնպես (համայն Պարսկաստանից) ընտրված, նիզակները դեպի գետին հարած. այնուհետև՝ նիսեական կոչված

տասը սրբազան ձիեր՝ շքեղազարդ զարդարանքով: Այդ ձիերը կոչվում են նիսեական հետևյալ պատճառով: Մարաստանում կա ընդարձակ մի դաշտավայր՝ Նիսայոն: Այստեղ այդպիսի խոշոր ձիեր են բուծում: Այս տասը ձիերին հետևում էր Զևսի[24] սրբազան ձիակառքը, որը քաշում էին ութ սպիտակաթույր ձիեր: Այս ձիերի ետևից քայլում էր ձիապանը՝ սանձերը ձեռքին, քանի որ որևէ մահկանացու իրավունք չուներ այդ կառքի բազմոցին նստելու: Սրա ետևից գալիս էր ինքը՝ Քսերքսեսը, նիսեական ձիեր լծած ձիակառքի վրա: Նրա կողքին կանգնած էր պարսիկ Օտանեսի Պատիրամփեսանունով որդին:

41. Քսերքսեսն այսպես մեկնեց Սարդեսից. բայց նա, ըստ իր հարմարության, կարող էր ձիակառքից անցնել ծածկած սայլակառքը: Նրա ետևից գալիս էին հազար նիզակակիրներ, ամենաքաջ և ազնվագույն պարսիկներից՝ նիզակները սովորական ձևով պահած. այնուհետև՝ ևս հազար պարսիկ ընտիր հեծյալներ. իսկ հեծյալներից հետո՝ մեկ բյուր ընտրյալ ուրիշ պարսիկներ, հետիոտն: Սրանցից հազարի նիզակների վրա ծայրապանակի փոխարեն կար ոսկե նուռ[25]. նրանք օղակում էին մնացյալներին. իսկ այդ օղակի մեջ եղած ինքը հազարի նիզակների վրա կար արծաթե նուռ: Ոսկե նռեր ունեին նաև այն նիզակակիրները, որոնց նիզակների ծայրերը ցած էին հարած. իսկ Քսերքսեսին անմիջապես մոտ կանգնածներն ունեին ոսկե խնձոր: Այս բյուրին հետևում էր բյուր (մարդուց բաղկացած) պարսից հեծելազորը: Այս հեծելազորից հետո մնում էր երկու ասպարեզ տարածություն, որից հետո գնում էր մնացած ամբողջ ամբոխը:

42. Լյուդիայից զորքն ուղղվեց դեպի Կաիկոս գետը և Մյուսիա երկիրը, իսկ Կաիկոսից դուրս գալով, ձախ կողմում ունենալով Կանե[26] լեռը, Ատառնևս (բնակավայրի) միջով անցավ ու հասավ Կարենե քաղաքը: Այս քաղաքից զորքը Թերբ դաշտի միջով գնաց Ադրամյուտտեոն քաղաքը և անցավ պելասգյան Անեանդրոս քաղաքի մոտով: Երբ զորքը գիշերելու համար կանգ առավ Իդայի ստորոտին, սկզբում ամպրոպ պայթեց ու փոթորիկ, և կայծակից շատերը շանթահարվեցին ու կործանվեցին:

43. Երբ զորքը հասավ Սկամանդրոս[27] գետը, որը Սարդեսից դուրս գալուց հետո նրանց հանդիպած առաջին գետն էր և որի հունը ցամաքում էր ու չէր բավարարում, որպեսզի զորքն ու անասունները խմեն: Հասնելով այս գետը, Քսերքսեսը բարձրացավ Պրիամոսի[28] բերդը՝ այն տեսնելու փափագով: Բերդը դիտելուց և նրա մասին եղած զրույցները լսելուց հետո, նա Ռլիոնյան Աթենասի պատվին զոհաբերեց հազար եզ. իսկ մոգերը հեղում կատարեցին հերոսների պատվին: Այս անելուց հետո, գիշերվա ընթացքում զորքը համակվեց սարսափով: Առավոտյան նա շարունակեց հանապարհը, ձախում թողնելով Հոյոտիոն, Օփրյունեյոն և Դարդանոս քաղաքները. վեր-

չինս սահմանակից է Աբյուդոսին. իսկ աջում մնաց տակրական Գերգիթայ (քաղաքը):

44. Հասնելով Աբյուդոս, Քսերքսեսը կամեցավ դիտարկել իր ամբողջ զորքը: (Այդ նպատակով) բլրի վրա նախապես բարձրացվել էր սպիտակ քարից մի բարձր գահ. այն պատրաստել էին Աբյուդոսի բնակիչները, արքայի կանխավ տված հրամանի համաձայն: Քսերքսեսն այստեղ նստեց և վերևից նայելով ծովափին, սկսեց դիտել հետևակն ու նավերը. դիտելիս նա կամեցավ նավերի մրցություն տեսնել: Այն կատարվեց. հաղթեցին Սիդոնի փյունիկեցիները: Քսերքսեսը հաճոյացավ այդ մրցությամբ և իր զորքով:

45. Տեսնելով ամբողջ Հելլեսպոնտոսը նավերով ծածկված և ամբողջ ծովափն ու Աբյուդոսի դաշտը մարդկանցով լցված, Քսերքսեսը երանի տվեց իրեն և հետո արտասվեց:

46. Այս նկատելով, նրա հորեղբայր Արտաբանոսը, որն սկզբում ազատորեն արտահայտել էր իր կարծիքը, խորհուրդ տալով Քսերքսեսին շարժվել Հելլադա, այս մարդն, անա, նկատելով Քսերքսեսի արտասվելը, այսպես դիմեց նրան: «Ով արքա. դու ինչո՞ւ այդքան տարբեր վերաբերվեցիր հիմա և քիչ առաջ. քանզի նախ դու երանի տվեցիր քեզ, իսկ այժմ արտասվում ես»: Քսերքսեսը նրան պատասխանեց. «Ես հիրավի կարեկցանքով համակվեցի, մտածելով, թե ինչքա՞ն կարճ է մարդկային կյանքը, և թե այստեղ գտնվողներից և ոչ մեկը հարյուր տարի անց կենդանի չի լինելու»: Արտաբանոսը նրան այսպես պատասխանեց. «Մեր կյանքում կարեկցանքի առավել արժանի դեպքեր են լինում, քան այս: Թեև մեր կյանքն այսքան կարճ է, ոչ ոք, մարդկային բնույթի պատճառով, այստեղ կամ այլուր չի կարող երջանիկ լինել: Չկա մի մարդ, որը բազմիցս ցանկացած չլինի մեռնել, քան ապրել. քանզի ձախորդությունները և հիվանդությունները մեզ այնքան խռովում ու տանջում են, որ մեր այս կարճ կյանքն իսկ թվում է երկար: Կյանքն այնքան տանջալից է, որ մահը մարդու համար դարձել է առավել ցանկալի: Իսկ աստված, թույլ տալով մարդուն կյանքում փոքր-ինչ քաղցրություն ճաշակել, միաժամանակ դառնում է նախանձոտ»:

47. Քսերքսեսը պատասխանեց նրան և ասաց. «Արտաբանոս. բեև մարդկային կյանքը, իրոք, այնպիսին է, ինչպիսին դու ասացիր, բայց այդ մասին խոսքը վերջացնենք և չհիշենք ձախորդությունները. քանի որ հաջողությունն այժմ մեր ձեռքում է: Դու ինձ հետևյալն ասա. եթե երազում պարզորեն քեզ այդ տեսիլը չհայտնվեր, արդյոք դու կմնայի՞ր քո նախկին կարծիքին և խորհուրդ կտայի՞ր հրաժարվել Հելլադա արշավելուց: Անկեղծորեն պատասխանիր ինձ»: Արտաբանոսն այսպես պատասխանեց. «Ով արքա. երազում հայտնված տեսիլը թող այնպես հաջող կատարվի, ինչպես այդ ցանկանում

ենք մենք երկուսս: Բայց ես այժմ ևս մշտապես համակված եմ երկյուղով: Ես լցված եմ բազում մտքերով, բայց առանձնապես նկատում եմ, որ դու երկու մեծագույն թշնամի ունես»:

48. Այնժամ Քսերքսեսն այսպես պատասխանեց. «Ով տարօրինակ մարդ: Որո՞նք են քո ասած այդ իմ երկու մեծագույն թշնամիները: Մի՞թե դու կարծում ես, որ իմ հետևակը փոքրաթիվ է, իսկ հելլենական զորքը մերից բազմապատիկ: Գուցե քեզ թվում է, որ մեր նավատորմը զիջո՞ւմ է նրանց նավատորմին: Գուցե և՛ այս, և՛ այն: Բայց եթե այս առումով մեր զորքերը քեզ թվում են ոչ բավարար, ապա անհրաժեշտ է շուտափույթ ուրիշ զորքեր գումարել»:

49. Արտաբանոսը պատասխանեց և ասաց. «Ով արքա. ոչ մի խելամիտ մարդ չի կարող անբավարար համարել ոչ քո այս զորքը, ոչ քո նավերի թիվը: Եվ եթե դու ավելի խոշոր բանակ գումարես, ապա այդ երկու թշնամիները, որոնց մասին ես ասում եմ, ավելի կխոշորանան: Այդ երկու թշնամիներն են երկիրը և ծովը: Քանզի ծովում, ինչքան ես գիտեմ, ոչ մի տեղ չկա այնքան մեծ նավահանգիստ, որը, փոթորիկ ծագելու դեպքում, կարողանար ընդունել այդ նավատորմը և փրկել քո նավերը: Մինչդեռ (քո նավատորմը) պետք է ունենա ոչ թե մեկ նավահանգիստ, այլ քեզ անհրաժեշտ են նավահանգիստներ քո նավարկած ծովափի ամբողջ երկարության վրա: Բայց քանի որ քեզ համար նավահանգիստներ չկան, ապա իմացիր, որ պատահականությունները են իշխում մարդկանց վրա, և ոչ թե մարդիկ՝ պատահականությունների վրա: Երկու թշնամիներից մեկի մասին արդեն ասացի. այժմ կասեմ մյուսի մասին: Երկիրը ևս քո թշնամին է, անա թե ինչու: Եթե նույնիսկ քո հանապարհին ոչ մի թշնամի քեզ չդիմադրի, ապա երկիրը, քո առաջընթացին համեմատ, կդառնա առավել թշնամի, քեզ հետզհետե ավելի առաջ հրապուրելով: Մարդիկ երբեք լիակատար հաջողության չեն հասնում: Արդ, ես ասում եմ, որ եթե նույնիսկ ոչ ոք քեզ չդիմադրի, ապա քո երկրի ընդարձակվելը, և այն անցնելու համար պահանջվող ժամանակի մեծանալը սով կհարուցեն: Լավագույն մարդը նա է, ով երկչոտ է խորհուրդ տալու ժամանակ, քանի որ կանխատեսում է ամեն մի հավանականություն, բայց գործելիս համարձակ է»:

50. Քսերքսեսն այսպես պատասխանեց. «Արտաբանոս. քո այս բոլոր ասածներն արդարև նպատակահարմար են. բայց չի կարելի ամեն ինչից վախենալ և ամեն ինչին միատեսակ կարևորություն տալ: Եթե դու մտածեիր ամեն մի պատահարին միատեսակ ուշադրություն դարձնել, ապա դու երբեք ոչինչ չէիր կարող կատարել: Առավել լավ է խիզախել ամեն ինչում և կրել վտանգների կեսը, քան նախօրոք վախենալ ամեն ինչից և հետազայում երբեք չտուժել: Բացի այդ, եթե դու առարկում ես ամեն մի առաջարկի դեմ,

բայց և ճշմարիտը չես առաջարկում, ապա դու ևս կարող ես սխալվել, ինչպես և մեզ հակառակողը: Այս հարցում երկուսն իրար հավասար են: Բայց ինչպե՞ս կարող է մարդն իմանալ ճշմարտությունը: Ինձ թվում է, թե ոչ մի կերպ: Արդարև, ով վճռում է գործել, նա էլ հասնում է հաջողության: Մինչդեռ նա, ով ամեն ինչի մասին խորհրդածում է և դանդաղում, չի կարող հաջողության հասնել: Դու տեսնում ես, թե ինչքան հզորացել է պարսից տերությունը: Արդ, եթե ինձ նախորդած թագավորները մտածեին մեզ նման, և կամ այդպես չմտածելով հանդերձ, լսեին մեզ նմանների խորհուրդները, ապա դու երբեմ այսպիսի հզորություն չէիր տեսնի: Բայց այժմ, վտանգները հաղթահարելով, նրանք այսքան բարձրացրին իրենց տերությունը: Քանզի մեծ գործերը միշտ նոի են մեծ վտանգներով: Այժմ մենք նրանց նմանվելով, արշավանքի համար ընտրել ենք տարվա ամենալավ եղանակը, և ամբողջ Եվրոպան նվաճելուց հետո մենք կվերադառնանք տուն, առանց որևէ տեղ սովի մատնվելու և առանց որևէ այլ չարիք կրելու: Քանզի մենք, նախ, իմքներս արշավում ենք պարենի մեծ պաշարով, իսկ երկրորդ, մենք կվերցնենք այն ժողովուրդների հողը, որոնց երկրով մենք անցնում ենք. մենք արշավում ենք հողագործ, այլ ոչ թե վաչկատուն մարդկանց դեմ:

51. Այնժամ Արտաբանոսն այսպես խոսեց. «Ով արքա. թեև դու արգելում ես որևէ բանից վախենալ, այսուհանդերձ ընդունիր իմ հետևյալ խորհուրդը. քանզի եթե գործերը շատ են, ապա պետք է նաև երկար խոսել: Կյուրոսը, Կամբյուսեսի որդին, նվաճեց ամբողջ Հոնիան, բացի Աթենքից, և դարձրեց Պարսկաստանին հարկատու: Սա ես քեզ խորհուրդ եմ տալիս այս մարդկանց[29] ոչ մի կերպ շառաջնորդել իրենց հայրերի դեմ: Իրականում առանց նրանց օգնության էլ մենք կարող ենք հաղթել մեր թշնամիներին: Քանզի եթե նրանք մեզ հետևեն, ապա կամ պետք է մեծագույն անարդարություն գործեն, իրենց հայրենիքը սարկության մատնելով, կամ էլ մեծագույն արդարությամբ օգնեն նրանց ազատագրվելու: Արդ, եթե նրանք առավել անարդար լինեն, ապա դրանով մեզ մեծ օգուտ չեն տա. իսկ եթե նրանք արդարությամբ գործեն, ապա քո գործին կարող են մեծ վնաս հասցնել: Հիշիր նաև, թե ինչքան նիշտ է հին ասույթը՝ սկզբում հայտնի չէ այն ամենը, ինչ կատարվելու է վերջում»:

52. Քսերքսեսն այսպես պատասխանեց. «Արտաբանոս. քո հայտնած բոլոր կարծիքներից առավել սխալը այն է, որ վախենում ես, թե հոնիացիները կապստամբեն: Մենք նրանց (հավատարմության) մասին մեծագույն ապացույց ունենք, որի վկաներն եք անձամբ դու և սկյութների դեմ Դարեհի հետ արշավանքին մասնակցածները: Իրոք, երբ նրանցից էր կախված ամբողջ պարսկական զորքի կործանումը կամ փրկությունը, նրանք ազնվություն և հավատարմություն դրսևորեցին և ոչ մի չարիք չպատճառեցին: Բացի այդ, քանի որ նրանք մեր երկրում թողել են իրենց երեխաներին, կանանց և ունեցվածքը, ապա թվում է, թե ոչ մի ապստամբություն չեն բարձրացնի: Ուստի և այդ մասին մի վախեցիր, այլ լցվիր քաջությամբ և պանպանիր իմ տունն ու իմ իշխանությունը. քանզի բոլորից միայն քեզ եմ վստահում իմ թագավորության խորհրդանշանները»:

53. Այսպես ասելուց հետո, Քսերքսեսը Արտաբանոսին ետ ուղարկեց Սուսա, այնուհետև իր մոտ հրավիրեց պարսից առավել անվանիներին: Երբ նրանք ներկայացան, նա այսպես դիմեց նրանց. «Ով պարսիկներ. ես ձեզ հրավիրեցի, ձեր մեջ արիություն ներշնչելու համար, որպեսզի դուք շարունակեք այն մեծ և շատ արժանի գործերը, որ նախկինում կատարել են պարսիկները, այլ մեզանից յուրաքանչյուրը և բոլորս միասին սիրահոժար կովենք: Քանզի այդ բարիքին ձգտելը մեր ընդհանուր գործն է: Ուստի ես պահանջում եմ ձեզանից լարել ձեր ուժերը այս պատերազմի ընթացքում, քանի որ, ինչպես լսել եմ, մենք արշավում ենք քաջարի մարդկանց դեմ: Եթե մենք հաղթենք նրանց, ապա ոչ ոք երբեք չի կարող դիմադրել մեզ: Իսկ այժմ, աղոթենք պարսից պանպան աստվածներին և սկսենք անցումը»:

54. Այդ օրը նրանք պատրաստվեցին անցում կատարելու: Հաջորդ օրը նրանք, ցանկանալով տեսնել արևածագը, իրենց սպասման ընթացքում կամուրջների վրա ամեն տեսակ անուշահոտ նյութեր այրեցին և հանապարհը ծածկեցին մրտենու ճյուղերով: Երբ արևը ծագեց, Քսերքսեսը ոսկե բաժակից հեղում կատարեց ծովում, աղոթելով արևին, որպեսզի չպատահի այնպիսի բան, որը խանգարեր Եվրոպան նվաճելուն, մինչև իմքը չհասնի (Եվրոպայի) վերջին սահմանը: Աղոթելուց հետո նա բաժակը, ինչպես նաև ոսկե սկիհ և ակինակե կոչված մի թուր նետեց Հելլեսպոնտոս: Ես չեմ կարող վստահ ասել, թե նա այդ իրերը արևին նվիրաբերելու համա՞ր ընկղմեց ծով, թե՞ զղջալով այն բանի համար, որ իմքը հրամայել էր մտրակել Հելլեսպոնտոսը,(այժմ) այդպիսի քավիչ ընծաներ էր պարգևում ծովին:

55. Այս կատարելուց հետո, Պոնտոսի կողմը գտնվող կամրջով սկսեցին անցնել հետևակը և ամբողջ հեծելազորը. իսկ Էգեյան ծովի կողմը գտնվող կամրջով անցնում էին գումակը և բեռնատարները: Առջևից գնում էին տասը հազար պարսիկները, բոլորը պսակազարդ, իսկ նրանց հետևում էր տարբեր ազգերից բաղկացած խառնիճաղանջ զորքը: Այդ ամբողջ օրը նրանք անցան: Հաջորդ օրը նախ անցան հեծյալները և նիզակները դեպի ցած պտտած նիզակակիրները. սրանք ևս պսակազարդ էին. սրանցից հետո անցան արքազան ձիերը և արքազան ձիակառքը. այնուհետև իմքը՝ Քսերքսեսը և նիզակակիրները և հազար հեծյալները, իսկ սրանցից հետո մնացած զորքը: Նույն այդ ընթացքում նավերը նավում էին դեպի հանդիպակաց ափը: Բայց ես լսել եմ նաև, որ արքան անցել է բոլորից հետո:

56. Եվրոպա անցնելուց հետո Քսերքսեսն սկսեց դիտել իր զորքի անցումը, (որը շարժվում էր) մտակների հարվածների տակ: Արքայի զորքի անցումը տևեց յոթ օր ու գիշեր, առանց դադարի: Այդ առթիվ պատմում են, թե երբ Քսերքսեսը անցել էր Հելլեսպոնտոսը, ոմն հելլեսպոնտոսցի այսպես է ասել. «Ով Զևս. ինչո՞ւ դու պարսկի կերպարանք ընդունելով և Զևսի փոխարեն Քսերքսես անունը ստանալով, ամբողջ աշխարհը բերել ես քեզ հետ և ուզում ես ամայացնել Հելլադան: Չէ՞ որ դու կարող էիր այդ ամենը կատարել առանց դրան»[30]:

57. Երբ բոլորն արդեն անցել էին և պատրաստվում էին առաջ ընթանալ, նրանց երևաց մեծ նշանակ, որին Քսերքսեսը ուշադրություն չդարձրեց, թեև այն հեշտ մեկնաբանելի էր. մատակ ձին նապաստակ էր ծնել: Տվյալ դեպքում այն կարելի էր հեշտ մեկնաբանել, թե՝ Քսերքսեսը մեծ շուքով ու փայլով իր զորքը կառաջնորդի Հելլադա, բայց այնտեղից (նապաստակի նըման) փախչելով կփրկվի և կվերադառնա իր երկիրը: Մեկ ուրիշ հրաշք ևս երևացել էր, երբ նա դեռևս Սարդեսում էր. ջորին ծնել էր ջորի, որն ուներ կրկնակի սեռական օրգան՝ արական և իգական. արականը իգականից վերև: Բայց այս երկու նշանակներին կարևորություն չտալով, նա իր ցամաքային զորքի հետ գնաց առաջ:

58. Իսկ նավատորմը դուրս գալով Հելլեսպոնտոսից, նավում էր ծովափին մոտիկ, զորքի (ընթացքին) հակառակ ուղղությամբ. քանզի այն նավում էր դեպի արևմուտք, Սարպեդոն հրվանդանի ուղղությամբ, որտեղ հրաման էր տրված նավատորմին սպասել (Քսերքսեսին): Իսկ զորքը Քերսոնեսոսի միջով շարժվում էր դեպի արևելք: Աջ կողմում ունենալով Աբամասի դուստր Հելլայի դամբարանը, ձախում՝ Կարդիա քաղաքը, զորքը քայլեց Ագորա կոչված քաղաքի միջով: Այնուհետև (զորքը) շրջանցեց Մելաս գետը, որի ջուրը չբավարարեց զորքին և հուրը ցամաքեց: Անցնելով այս գետը, որից ստացել է իր անունը ծովախորշը, զորքը շրջվեց դեպի արևմուտք, և անցնելով էոլիական Այնոս քաղաքը և Ստենդորյան լիճը, հասավ Դորիսկոս:

59. Դորիսկոսն ընդարձակ դաշտ է թրակական ծովափին: Այդ դաշտի միջով հոսում է Եբրոս գետը: Այստեղ կառուցված է եղել Դորիսկոս կոչված արքունի ամրությունը, որտեղ Դարեհը սկյութների դեմ արշավելիս, թողել էր պարսկական խոշոր կայազոր: Այս վայրը Քսերքսեսին հարմար թվաց իր զորքը կարգավորելու և հաշվելու համար, և նա այդ կատարեց: Քսերքսեսի հրամանով Դորիսկոս ժամանած բոլոր նավերի նավապետերը դրանք խարսխեցին Դորիսկոսին հարող ծովափին, որտեղ գտնվում են սամոթրակյան Սալե գաղութը և Զոնե քաղաքը. այն վերջանում է Սերրեոն կոչված հայտնի հրվանդանով: Այս վայրը հնում պատկանել է կիկոններին: Անա այս ափին նավապետերը խարսխեցին իրենց նավերը և հետո դրանք քաշեցին ցամաք, հանգստանալու: Այդ ընթացքում Քսերքսեսը Դորիսկոսում հաշվառեց իր զորքը:

60. Թե ինչքա՞ն էր յուրաքանչյուր ազգի տրամադրած զորքի քանակը, ես չեմ կարող ճշտապես ասել. քանզի ոչ ոք այդ մասին մեզ չի հաղորդել: Իսկ նրա հետևակ զորքի ընդհանուր թիվը կազմում էր հարյուր յոթանասուն բյուր[32]: Հաշվումը կատարեցին հետևյալ կերպ: Մեկ բյուր մարդու հավաքեցին մեկ տեղ և նրանց ճնարավորին չափ խիտ կանգնեցնելով, նրանց շուրջը շրջանակ գծեցին: Շրջանակը գծելուց հետո բաց թողեցին այս բյուրին և այդ շրջանակով պատնեշ կառուցեցին մինչև պորտը մարդկային հասակի բարձրությամբ. այդ անելուց հետո, պատնեշված վայրից ներս քշում էին ուրիշների, մինչև որ բոլորին այդ ձևով հաշվեցին: Հաշվելուց հետո նրանց բաժանեցին ըստ ազգերի:

61. Իսկ արշավանքին մասնակցող (ազգերը) հետևյալներն էին: Նախ՝ պարսիկները, որոնք զինված էին հետևյալ կերպ. իրենց գլխին կրում էին տիարա կոչված թեթև գլխարկ, մարմնի վրա հագնում խայտաբղետ խիտոն, որի թևերը ծածկված էին ձկան թեփուկների նման երկաթե թեփուկներով, իսկ (հունական) վահանի փոխարեն ունեին նյուսկեն վահան, որի տակից կախված էր կապարները: Նրանց նիզակները կարճ էին, իսկ աղեղները՝ խոշոր, եղեգնյա սլաքներով. բացի այս, նրանց ձախ ազդրի վրա մեջքից կախված էր դաշույնը: Նրանց առաջնորդն էր Օտանեսը, Քսերքսեսի Ամեստրիս կնոջ հայրը: Հելլեները հնում սրանց կոչում էին կեփանաներ, իսկ իրենք իրենց, ինչպես և հարևանները, անվանում էին արտայներ: Երբ Պերսևսը, Դանայայի և Զևսի որդին, եկավ Թելոսի որդի Կեփևսի մոտ և ամուսնացավ նրա դուստր Անդրոմեդայի հետ, ունեցավ որդի, որին անվանեց Պերսես, ու թողեց այնտեղ, քանի որ Կեփևսը արու ժառանգ չէր ունեցել: Անա նրանից էլ պարսիկները ստացել են իրենց անունը:

62. Արշավանքի ժամանակ մեդացիները ևս նույն ձևով էին զինված, իսկ նման զինվածությունը ոչ թե պարսկական է, այլ մեդական: Մեդացիների առաջնորդն էր Տիգրանեսը, Աքեմենյանների սերնդից: Հնում բոլորը նրանց կոչել են արիներ, իսկ Աքեմենից կոլխուհի Մեդեայի՝ արիների մոտ ժամանելուց հետո, նրանք ևս փոխել են իրենց անունը: Այսպես պատմում են մեդացիներն իրենց մասին: Կիսսիացիները ևս արշավանքի ժամանակ զինված էին պարսիկների նման, բայց նրանք գլխարկի փոխարեն կրում էին ապարոշ[34]: Կիսսիացիներին առաջնորդում էր Օտանեսի որդի Անափեսը: Հյուրկանները ևս զինված էին պարսիկների նման. նրանց առաջնորդն էր Մեգապանոսը, որը հետագայում դարձավ Բաբելոնի կառավարիչ:

63. Արշավին մասնակցող ասորեստանցիները իրենց գլխին կրում էին պղնձե սաղավարտներ, անհասկանալի և անբացատրելի կերպով հյուսված: Նրանց վահանները, նիզակները և դաշույնները նման էին եգիպտականնե-

ին: Բացի այդ, նրանք ունեին երկաթե եղունգներով փայտե դագանակներ: Սրանց հելլեններն կոչում են ասորիներ[35], իսկ բարբարոսները՝ ասորեստանցիներ[36]: Սրանց մեջ էին նաև խալդայները[37]: Սրանց առաջնորդում էր Օտանեսը, Արտաքայեսի[38] որդին:

64. Բակտրիացիները արշավում էին, գլուխներին մեղական գլխարկների նման գլխարկներով և եղեգնյա տեղական աղեղներով ու կարճ նիզակներով: Իսկ սակերը, որոնք սկյութներ են, գլուխներին կրում էին սրածայր բարձր գդակ, հագնում անդրավարտիք և զինված էին իրենց տեղական աղեղներով, դաշույններով, ինչպես նաև սագարիս (կոչված) սակրերով: Սրանց, որոնք սկյութներ էին, կոչում էին ամյուրգյան սակեր: Բակտրիացիներին ու սակերին առաջնորդում էր Հյուստասպեսը, Դարեհի և Ատոսսայի, Կյուրոսի դստեր, որդին:

65. Հնդիկները հագել էին բույսից պատրաստած զգեստներ. նրանց աղեղները եղեգնյա էին, նետերը նույնպես եղեգնյա, բայց երկաթե ծայրերով: Այսպիսին էր հնդիկների զենքը. նրանց առաջնորդում էր Արտաբատեսի որդի Փառնազաբրեսը:

66. Արիները զինված էին մեդական աղեղներով. նրանց մնացած հանդերձանքը բակտրիացիների նման էր: Արիներին առաջնորդում էր Հյուդառնեսի որդի Սիսամնեսը: Պարթևները, քորասմները, սոգդերը, գանդարները և դադիկները արշավել էին բակտրիացիների նման հանդերձանք ունենալով: Նրանց առաջնորդում էին հետևյալները: Պարթևներին և քորասմներին՝ Փառնակեսի որդի Արտաբազոսը. սոգդերին՝ Արտայոսի որդի Սզանեսը. գանդարներին և դադիկներին՝ Արտաբանոսի որդի Արտյուփիոսը:

67. Կասպերը արշավել էին այծենի հագած, և իրենց տեղական եղեգնյա աղեղներով ու ակինակներով զինված: Նրանց հանդերձանքը այսպիսին էր. իսկ նրանց առաջնորդն էր Արտյուփիոսի եղբայր Արիոմարդոսը: Սարանգները պճնվել էին բազմերանգ հագուստներով և հագել էին մինչև ծնկները հասնող կոշիկներ. նրանց աղեղներն ու նիզակները մեդական էին: Սարանգների առաջնորդն էր Մեգաբազոսի որդի Փերենդատեսը: Պակտյուացիները հագել էին այծենի և ունեին տեղական աղեղներ ու դաշույններ: Նրանց առաջնորդն էր Իթամիտրեսի որդի Արտայունտեսը:

68. Ուտիները և մյուկերը և պարիկանիները զինված էին պակտյուացիների նման: Սրանց առաջնորդում էին հետևյալները. ուտիներին և մյուկերին՝ Դարեհի որդի Արսամենեսը, իսկ պարիկանիներին՝ Օյոբազոսի որդի Սիրոմիտրեսը:

69. Արաբները հագել էին երկար բիկնոցներ, աջ կողմում ունեին երկար, դեպի ետ գոգավորված աղեղներ: Եթովպացիները հագել էին հովազենի և առյուծենի. նրանք կրում էին արմավենու ցողունից պատրաստած, չորս կանգունից ոչ պակաս երկարությամբ աղեղներ. նրանց հետերը կարճ էին,

եղեգնյա, որոնց ծայրին երկաթի փոխարեն սրածայր քար էր, որով նրանք փորագրում են կնիքներ: Բացի այդ, նրանք ունեին տեգեր, որոնց վրա ամրացված էր նիզակի ծայրի նման սրած վիթի եղջյուր. նրանք կրում էին նաև երկաթե զամբեր խփած դագանակներ: Մարտի գնալիս, նրանք իրենց մարմնի կեսը պատում էին կավիճով, մյուս կեսը՝ սուրքով: Արաբներին և Եգիպտոսից վերև բնակվող եթովպացիներին առաջնորդում էր Արսամեսը, Դարեհի և Արիստոնեի, Կյուրոսի դստեր, որդին. սրան Դարեհը սիրել է իր բոլոր կանանցից առավել և պատրաստել է տվել նրա ոսկեդրվագ արձանը:

70. Արդ, Եգիպտոսից վերև բնակվող եթովպացիներին առաջնորդում էր Արսամեսը. իսկ արևելքի եթովպացիները[40], բանգի արշավանքին մասնակցում էին երկու ազգի եթովպացիներ, միացվել էին ինդիկներին: Արտաքինապես նրանք իրարից բոլորովին չէին տարբերվում, այլ միայն իրենց լեզվով և մազերով: Արևելյան եթովպացիների մազերը հարթ են, իսկ Լիբիայի եթովպացիների մազերն ամենազանգուռն են աշխարհում: Ասիական այս եթովպացիները մեծ մասամբ զինված էին ինդիկների նման, միայն թե իրենց գլուխներին նրանք դնում էին ձիու գլխամաշկ, ականջներով և բաշով: Բաշը ծառայում էր որպես ցցուք, իսկ ձիու ականջները ցցված էին ուղիղ: Ասպարի փոխարեն նրանք (պաշտպանվելու համար) իրենց առաջ բռնում էին կռունկների կաշիներ:

71. Լիբիացիները եկել էին կաշվե հագուստներով. նրանք օգտագործում էին տեգեր, որոնց ծայրերը խանձված էին: Նրանց առաջնորդն էր Օարիզոսի որդի Մասսագեսը:

72. Պափլագոնացիներն արշավում էին գլուխներին հյուսկեն սաղավարտ դրած, փոքր վահաններով և ոչ մեծ նիզակներով, ինչպես նաև տեգերով ու դաշույններով: Ոտներին նրանք հագած էին տեղական կոշիկներ, որոնք հասնում էին մինչև սրունքի կեսը: Լիգիացիների, մատիենների, մարիանդինների և սիրիացիների հանդերձանքը նույնական էր պափլագոնականի հետ: Այս սիրիացիներին պարսիկներն անվանում են կապադովկիացիներ: Պափլագոնացիներին և մատիեններին առաջնորդում էր Դոտոսը, Մեգասիդրոսի որդին, իսկ մարիանդիններին, լիգիացիներին և սիրիացիներին առաջնորդում էր Դարեհի և Արտայուստոնեի որդի Դոթրյուեսը:

73. Փռյուգիացիներն ունեին պափլագոնականին շատ նման հանդերձանք, միայն տարբեր դրանից: Մակեդոնացիներն ասում են, թե փռյուգները, քանի դեռ բնակվում էին Եվրոպայում մակեդոնացիների հարևանությամբ, կոչվում էին բրիգներ. բայց Ասիա տեղափոխվելուց հետո, իրենց երկրի հետ փոխեցին նաև իրենց անունը, (կոչվելով) փռյուգներ: Արմենները ևս, լինելով փռյուգիական վերաբնակիչներ, զինված էին փռյուգների նման: Այս երկուսին առաջնորդում էր Արտոքմեսը[41], որն ամուսնացել էր Դարեհի դստեր հետ:

74. Լյուդիացիների զենքերը շատ նման էին հելլենականներին: Լյուդիացիները հնում կոչվել են մեյոններ, իսկ Ատյուսի որդի Լյուդոսից հետո փոխեցին իրենց անունը և կոչվեցին նրա անունով: Մյուսիացիներն իրենց գլխին դնում էին տեղական սաղավարտներ. նրանք կրում էին փոքր սպարներ և ծայրերը խանձած տեգեր: Սրանք լյուդիական վերաբնակիչներ են և Օլիմպոս[42] լեռան անունից կոչվում են օլիմպոսյաններ: Լյուդիացիների և մյուսիացիների առաջնորդն էր Արտափրենեսի որդի Արտափրենեսը, որը Դատիսի հետ ներխուժել էր Մարաթոն:

75. Թրակացիներն արշավում էին՝ գլուխներին աղվեսի մորթուց գլխարկով. մարմնի վրա նրանք հագել էին խիտոններ, իսկ դրա վրայից՝ խայտաբղետ թիկնոցներ. ոտներին ու ծնկներին նրանք կապել էին եղնիկի մորթուց պատրաստած մուչկեր: Բացի այդ, նրանք կրում էին տեգեր, թեթև վահաններ և փոքր դաշույններ: Ասիա անցնելուց հետո նրանք կոչվել են բիթյուններ, մինչդեռ հնում, ինչպես իրենք են պատմում, կոչվել են ստրիմոնյաններ, որպես Ստրիմոն գետի մոտ բնակվողներ: Ինչպես պատմում են, իրենք իրենց երկրից քշվել են տևկրերի և մյուսիացիների կողմից: Ասիական թրակացիներին առաջնորդում էր Արտաբանոսի որդի Բասսակեսը:

76. (Պիսիդիացիները)[43] կրում էին եզան անմշակ կաշուց պատրաստած փոքր վահաններ. նրանցից յուրաքանչյուրն ուներ Լյուկիայում պատրաստված որսորդական երկու նիզակ, իսկ գլխին՝ պղնձե սաղավարտ, որի վրա կային եզան ականջներ և եղջյուրներ՝ պղնձից պատրաստած, իսկ գագաթին՝ ցքացուցք: Նրանց սրունքները փաթաթված էին կարմիր փալասներով: Նրանց երկրում կա Արեսի պատգամատուն:

77. Կաբալները, (որոնք) մեյոններ են և կոչվում են լասոնիներ, ունեին նույն հանդերձանքը, ինչ կիլիկեցիները. այդ ես կնկարագրեմ կիլիկյան զորամասերի մասին խոսելիս: Իսկ միլիացիները կրում էին կարճ նիզակներ և ճարմանդով ամրացրած հագուստ: Նրանցից ոմանք ունեին լյուկիական աղեղներ, իսկ գլուխներին՝ կավե սաղավարտներ: Այս բոլորին առաջնորդում էր Հյուստանեսի որդի Բադրեսը:

78. Մոսքերն իրենց գլխին ունեին փայտե սաղավարտներ. նրանք կրում էին վահաններ և երկար ծայրերով փոքր նիզակներ: Տիբարենները և մակրոնները և մոսսինոյկները արշավում էին զինված մոսքերի նման: Նրանց առաջնորդներն էին հետևյալները. մոսքերի և տիբարենների՝ Արիոմարդոսը, Դարեհի և Գարմյուսի, Կյուրոսի Սմերդիս որդու դստեր, որդին, մակրոնների և մոսսինոյկների՝ Քերասմիսի որդի Արտայուկտեսը, որը հելլեսպոնտոսյան Սեստոսի կառավարիչն էր:

79. Մարերը իրենց գլխին կրում էին տեղական նյութից սաղավարտներ, կաշվե փոքր վահաններ և տեգեր: Կոլխերը իրենց գլխին կրում էին փայտե սաղավարտներ, անմշակ կաշուց պատրաստած փոքր վահաններ,

կարճ տեգեր, ինչպես նաև դաշույններ: Մարերին և կոլխերին առաջնորդում էր Տեասպիսի որդի Փարանդատեսը: Ալարոդները և սասպեյրները արշավում էին կոլխերի նման զինված: Սրանց առաջնորդում էր Սիրոմիտրեսի որդի Մասիստիոսը:

80. Կարմիր ծովի[44] կղզիների ցեղերը, այն կղզիների, որտեղ արքան բնակեցնում էր ամսորյալ կոչվածներին, հագնված և զինված էին մեդացիներին շատ նման: Այս կղզեբնակներին առաջնորդում էր Բագայոսի որդի Մարդոնտեսը, որն այս դեպքերի հաջորդ տարին, պարսից զորքն առաջնորդելիս, Միկալեի մոտ սպանվեց մարտում[45]:

81. Արդ, այս ազգություններն էին ցամաքով արշավում, կազմելով հետևակը: Զորավարները նրանք էին, որոնց մասին արդեն ես խոսեցի: Նրանք իրենց զորքերը դասավորելով, հաշվեցին և կարգեցին հազարապետներ և բյուրապետներ. իսկ բյուրապետները կարգեցին հարյուրապետներ և տասնապետներ. ջոկատներն ու ազգերն ունեին ուրիշ հրամանատարներ ևս:

82. Սա իմ անվանած այս մարդիկ էին նրանց առաջնորդները. իսկ սրանց և համընդհանուր հետևակ զորքի զորավարներն էին՝ Մարդոնիոսը, Գոբրյասի որդին, և Տրիտանտայքմեսը, որդին այն Արտաբանոսի, որը խորհուրդ էր տվել շարշավել Հելլադա, և Օտանեսի որդի Սմերդոմենեսը: Երկու վերջիններն Դարեհի եղբորորդիներն էին, Քսերքսեսի հորեղբորորդիները. (զորավարներ էին) նաև Դարեհի և Ատոսսայի որդի Մասիստեսը, Արիազոսի որդի Գերգիսը և Զոպյուրոսի որդի Մեգաբյուզոսը:

83. Սրանք էին համընդհանուր հետևակ զորքի զորավարները, բացի (պարսկական) բյուրից: Այս բյուր ընտրանի պարսիկների զորավար էր Հյուդառնեսի որդի Հյուդառնեսը: Այս պարսիկները կոչվում էին անմահ հետևյալ պատճառով: Եթե նրանցից որևէ մեկը մահվան կամ հիվանդության պատճառով շարքից դուրս էր գալիս, ապա նրա փոխարեն ընտրվում էր մեկ ուրիշը: Այսպիսով, նրանք երբեք չէին լինում բյուրից ոչ ավելի, ոչ պակաս: Պարսիկների մարտաշարքը լավագույնն էր և նրանք առավել հաշարի էին: Նրանց հանդերձանքն այնպիսին էր, ինչպիսին արդեն ասել եմ. բացի այդ, նրանք շողշողում էին իրենց վրա կրած ոսկու առատությունից. նրանց հետևում էին սայլակարքեր, հարներ և մեծաթիվ ու լավ հանդերձավորված ծառաներ: Նրանց պարենը, մյուս զինվորներից առանձին, բերում էին ուղտերով և գրաստով:

84. Այս ազգերն ունեին նաև հեծյալներ. բայց ոչ բոլորն էին տալիս հեծելազոր, այլ միայն հետևյալները: Նախ, պարսիկները. նրանց հանդերձանքը նույնն էր, ինչ պարսից հետևակի (հանդերձանքը), այն տարբերությամբ, որ նրանցից ոմանք իրենց գլուխներին կրում էին պղնձե և երկաթե դրվագված սաղավարտներ:

85. Կային նաև ինչ-որ վաչկատուն մարդիկ, որոնք կոչվում են սագարտիներ: Նրանց ազգությունը և լեզուն պարսկական է, բայց նրանց հանդերձանքը պարսկականի և պակտյուականի միջև մի բան է: Նրանք հանում էին ուր հազար հեծյալ: Նրանք, սովորաբար, չունեն ոչ պղնձե, ոչ երկաթե զենքեր, բացի դաշույններից, և օգտագործում են կաշվե երիզներից հյուսած օղապարաններ, որոնց էլ ապավինած, նրանք գնում են պատերազմի: Նրանց պատերազմելու եղանակն այսպիսին է. նույլ մոտենալով թշնամուն, նրանք ծայրը օղակած պարանը նետում են թշնամու վրա և քաշում այն, ինչ ընկնում է (օղակի մեջ), ձի լինի, թե մարդ: Օղապարանի մեջ բռնված մարդիկ սպանվում են:

86. Այսպիսին էր նրանց ռազմարվեստը. նրանք կանգնած էին պարսիկների կողքին: Մեդացի (հեծյալները) նույն հանդերձանքն ունեին, ինչ նրանց հետևակը. նույնը նաև կիսսիները: Հնդիկ (հեծյալները) նույնպիսի հանդերձանք էին կրում, ինչ նրանց հետևակը. նրանք գնում էին արագոտ ձիերով և ռազմակառքերով. ռազմակառքերին լծած էին ձիեր և վայրի էշեր: Բակտրիացի (հեծյալները) նույն հանդերձանքն ունեին, ինչ նրանց հետևակը. նույնպես նաև կասպերը: Լիբիացի (հեծյալները) ևս հետևակի հանդերձանք ունեին: Սրանք ևս գնում էին ռազմակառքերով: Կասպերը և պարեկանիները նույնպես զինված էին իրենց հետևակի նման: Արաբները ևս նույն հանդերձանքն ունեին, ինչ հետևակը, բայց նրանք բոլորը գնում էին ուղտեր նստած, որոնք արագությամբ չէին զիջում ձիերին:

87. Միայն այս ազգերը հեծյալներ ունեին: Հեծելազորի թիվը հասել էր ութ բյուրի, չհաշված ուղտերը և ռազմակառքերը: Այս բոլոր հեծյալները կանգնած էին վաշտերով, իսկ արաբները կանգնած էին բոլորից հետո: Քանի որ ձիերը չէին կարողանում հանդուրժել ուղտերին և որպեսզի ձիերը չվախենան դրանցից, ուղտերին կանգնեցրել էին բոլորից հետո:

88. Հեծելազորի պետերն էին Դատիսի որդիներ Հարմամիթրաը և Տիթայոսը. նրանց հետ երրորդ հրամանատար Փառնուքեսը ճիվանդացել և մնացել է Սարդեսում: Քանզի երբ նրանք Սարդեսից դուրս էին գալիս, նրան մի տհաճ աղետ պատահեց: Զիավարելիս նրա ձիու ոտքերի տակ մի շուն վազեց և ձին, շնկատելով նրան, վախեցավ և, ծռոս լինելով, Փառնուքեսին ցած նետեց: Ընկնելուց հետո Փառնուքեսն արյուն փսխեց և հիվանդությունը վերածվեց թոքախտի: Զիու հետ վարվեցին ճիշտ այնպես, ինչպես հրամայել էր Փառնուքեսը. ծառաները նրան տարան այն վայրը, որտեղ նա ցած էր գցել իր տիրոջը, և այնտեղ նրա սրունքները կտրեցին ծնկներից: Այսպիսով Փառնուքեսը զրկվեց հրամանատարությունից:

89. Տրիերաների թիվը դարձել էր հազար երկու հարյուր յոթ. դրանք հատկացրել էին հետևյալ (ազգերը). փյունիկեցիները Պաղեստինի սիրիացիների հետ՝ երեք հարյուր: Նրանք զինված էին հետևյալ կերպ. իրենց գլխին դրել էին սաղավարտ, պատրաստված գրեթե ըստ հելլենական ձևի. նրանք կրում էին վուշյա լանջապանակներ, առանց շրջանակի վահաններ և տեգեր: Այս փյունիկեցիները, ինչպես իրենք պատմում են, հնում բնակվել են Կարմիր ծովի[46] մոտ, իսկ հետագայում այնտեղից գաղթելով, բնակվել են Սիրիայի ծովափին: Սիրիայի այդ մասը և մինչև Եգիպտոս ձգվող ամբողջ երկիրը կոչվում է Պաղեստին: Իսկ եգիպտացիները տրամադրել էին երկու հարյուր նավ: Նրանք իրենց գլխին դրել էին հյուսկեն սաղավարտ, կրում էին լայն շրջանակ ունեցող կորացրած վահաններ, ծովամարտի համար նիզակներ և խոշոր սակրեր: Նրանց մեծ մասը կրում էր լանջապանակ և երկար դանակ:

90. Նրանց հանդերձանքն այդպիսին էր: Կիպրոսցիները տրամադրեցին հարյուր հիսուն նավ. նրանց հանդերձանքը հետևյալն էր. թագավորները գլուխներին կրում էին փաթթոց, մյուսները հագել էին խիտոններ. մնացած հանդերձանքը հելլենականի նման էր: Նրանց ցեղերը հետևյալներն էին. ոմանք՝ Սալամիսից և Աթենից, ոմանք՝ Արկադիայից, ուրիշներ՝ Կյուրենոսից, մյուսները՝ Փյունիկիայից, ոմանք էլ՝ Եթովպիայից. այսպես են պատմում իրենք՝ կիպրոսցիները:

91. Կիլիկեցիները տրամադրել էին հարյուր նավ. սրանք իրենց գլխին դրել էին տեղական սաղավարտ. վահանի փոխարեն նրանք կրում էին եզան հում կաշուց պատրաստած ասպար և հագել էին բրդե խիտոն: Յուրաքանչյուրն ուներ երկու նիզակ և թուր, եգիպտական դաշույններին շատ նման: Սրանք հնում կոչվել են հյուպաքայացիներ, իսկ իրենց այժմյան անունը ստացել են փյունիկեցի Կիլիկսից, Ագենորի որդուց: Պամփյուլիացիները տրամադրել էին երեսուն նավ և զինված էին հելլենական զենքերով: Այս պամփյուլիացիները Ամֆիլոքոսի և Կալխասի հետ Տրոյայից ցրվածների հետնորդներն են:

92. Լյուկիացիները տրամադրել էին հիսուն նավ: Նրանք կրում էին լանջապաններ և սոնապաններ, ունեին հոնի փայտից պատրաստած աղեղներ, եղեգյա անփետուր նետեր և նիզակներ. նրանց ուսերին գցած էր այծենի, իսկ գլխին՝ փետրավոր շրջանակով գլխարկ. նրանք ունեին նաև դաշույններ և մանգաղներ: Լյուկիացիներն ունեին կրետական ծագում և կոչվել են տերմիլներ[74], իսկ իրենց այժմյան անունը ստացել են աթենացի Պանդիոնի որդի Լյուկոսից:

93. Ասիայի դորիացիները տրամադրել էին երեսուն նավ. սրանք ծագումով Պելոպոնեսոսից լինելով, ունեին հելլենական զենքեր: Իսկ կարիացիները տրամադրել էին յոթանասուն նավ. սրանք ևս ամեն ինչով հելլենների նման էին զինված, բայց ունեին նաև մանգաղներ և դաշույններ: Թե նրանք հնում ինչպե՞ս են կոչվել, ես ասել եմ իմ պատմության առաջին գրքում[48]:

94. Հոնիացիները տրամադրել էին հարյուր նավ և զինված էին ինչպես հելլեններ: Քանի դեռ հոնիացիները բնակվում էին Պելոպոնեսոսում, այժմյան Ախայայում, մինչև Դանաոսի և Քսութոսի Պելոպոնեսոս գալը, նրանք անվանվում էին, ըստ հունական ավանդության, էգիալյան պելասգներ[49], իսկ Քսութոսի որդի Իոնից հետո՝ հոնիացիներ:

95. Կղզեբնակները տրամադրել էին տասնյոթ նավ և զինված էին ինչպես հելլեններ: Սրանք ևս պելասգյան ազգ էին, իսկ հետագայում կոչվեցին հոնիացիներ նույն պատճառով, ինչ և հոնիական տասներկու քաղաքները[50] բնակեցրածները, որոնք եկել էին Աթենից: Էոլիացիները տրամադրեցին տասնվեց նավ. նրանք ևս զինված էին ինչպես հելլեններ, և անցյալում, ըստ հունական ավանդության, կոչվել են պելասգներ: Հելլեսպոնտոսցիները, բացի աբյոդոսցիներից, որոնց արքան հրամայել էր մնալ իրենց երկրում և պահպանել կամուրջները, և արշավանքին մասնակցող մյուս ժողովուրդները տրամադրեցին հարյուր նավ. սրանք ևս զինված էին ինչպես հելլեններ: Սրանք հոնիական և դորիական գաղութարարներ էին:

96. Բոլոր նավերի վրա կային պարսիկներ, մեդացիներ և սակեր: Ամենալավ նավարկող նավերը տրամադրել էին փյունիկեցիները, իսկ փյունիկեցիներից՝ սիդոնցիները: Այս բոլորը, ինչպես նաև հետևակ զորքում եղողները, յուրաքանչյուրն ուներ իր տեղական առաջնորդներին, որոնց անունները, սակայն, ես չեմ հիշատակի, քանի որ իմ պատմության համար այդ անհրաժեշտ չէ: Քանզի ամեն մի ազգության առաջնորդ ևս հիշատակության արժանի չէ: Ինչքան որ քաղաքներ ուներ ցեղը, նույնքան և առաջնորդներ կային. և սրանք մասնակցում էին ոչ որպես զորավարներ, այլ զինվորներ, ինչպես արշավանքի մյուս մասնակիցները: Մինչդեռ բուն զորավարներին, որոնք լիակատար իշխանություն ունեին յուրաքանչյուր ազգության վրա և որոնք պարսիկներ էին, ես հիշատակել եմ:

97. Նավատորմի առաջնորդներն էին Դարեհի որդի Արիաբիգնեսը, Ասպաթինեսի որդի Պրեքսասպեսը, Մեգաբատեսի որդի Մեգաբազոսը, Դարեհի որդի Աֆեմենեսը: Հոնիական և կարիական նավատորմի հրամանատարն էր Արիաբիգնեսը, Դարեհի որդին Գոբրյուասի դստրից. եգիպտականի հրամանատարն էր Աֆեմենեսը, Քսերքսեսի հարազատ եղբայրը. մնացած նավատորմի հրամանատարներն էին մյուս երկուսը: Երեսուն և հիսուն թիականիների, թեթև նավերի և ձիեր փոխադրող երկար նավերի ընդհանուր թիվը դարձել էր երեք հազար:

98. Նավատորմում այս զորավարներից հետո առավել անվանի էին սիդոնցի Տետրամնեստոսը, Անդրուսոսի որդին, տյուրոսցի Մատտենը, Սիրոմոսի որդին, արադոսցի Մերբալոսը, Ագբալոսի որդին, կիլիկեցի Սյուենեսիսը, Օրոմեդոնի որդին, լյուկիացի Կյուբերնիսկոսը, Սիկասի որդին, կիպրացիներ Գորգոսը, Քերսիսի որդին և Տիմոնաքսը, Տիմագորասի որդին, կարիացիներ Հիստիայոսը, Տյումնեսի որդին, և Պիգեսը, Հյուսելդոմոսի որդին, և Դամասիթիմոսը, Կանդավլեսի որդին:

99. Մյուս զորավարների մասին ես անհրաժեշտ չեմ համարում հիշատակել, բայց միայն Արտեմիսիային. քանզի ինձ մեծապես զարմացնում է, որ մի կին մասնակցել է Հելլադայի դեմ արշավանքին: Իր ամուսնու մահից հետո նա վերցրել է իշխանությունն իր ձեռքը. թեև փոքրաքանակ տղա ուներ և ոչ ոք հրան չէր ստիպում, նա մասնակցեց արշավանքին: Նրա անունն էր Արտեմիսիա և դուստրն էր Լյուգդամիսի: Հոր կողմից նա Հալիկառնասոսից էր, իսկ մոր կողմից՝ Կրետեից: Նա առաջնորդում էր հալիկառնասցիներին, կոսցիներին, նիսյուրացիներին և կալյուդնոսցիներին, և հատկացրել էր հինգ նավ: Նրա նավերը, սիդոնյան նավերից հետո, լավագույններն էին ամբողջ նավատորմում, և արքային նրա տված խորհուրդները լավագույններն էին արշավանքի բոլոր մասնակիցների տված խորհուրդներից: Արտեմիսիային հպատակ թվարկածս քաղաքների բնակչությունն ամբողջապես դորիական էր. հալիկառնասեցիները Տրոյզենից էին, իսկ մյուսները՝ Եպիդավրոսից: Նավատորմի մասին ես այսքանը պատմեցի:

100. Երբ զորքը արդեն հաշվել էին և դասդասել, Քսերքսեսը կամեցավ անձամբ ստուգատես կատարել, անցնելով շարքերի միջով: Նա այդպես արեց, և ռազմակառք նստած, անցնելով յուրաքանչյուր ազգության բոլոր ջոկատների առաջով, հարցնում էր նրանց անունները, իսկ գրագիրները գրում էին, մինչև որ նա ծայրից ծայր անցավ ամբողջ հետևակի և հեծելազորի առջևով: Այս անելուց հետո, երբ նավերը ծով իջեցրին, Քսերքսեսը ռազմակառքից փոխադրվեց սիդոնյան նավի վրա, նստեց ոսկեզօծ ամպհովանոցի տակ և նավեց նավերի ցուցկների առջևով և, ինչպես հետևակը դիտելիս, նա հարցնում էր ամեն մեկի անունը և գրի առնում: Նավապետները նավերը ծով իջեցնելով, կանգնեցրել էին ափից չորս պլեթրոն հեռու, ցուցկները դեպի ցամաք դարձրած, և դասավորել մեկ գծի վրա, իսկ անձնակազմը զինավարված էր, պատրաստ պատերազմելու: Արքան նավարկելով նրանց և ցամաքի մեջտեղով, դիտում էր բանակը:

101. Նավերի միջով անցնելուց հետո, նա դուրս եկավ նավից և պատվիրեց կանչել Արիստոնի որդի Դեմարատոսին[51], որը արքայի հետ մասնակցում էր Հելլադայի դեմ արշավանքին: Կանչելով նրան իր մոտ, ասաց. «Դեմարատոս. այժմ ինձ համար հաճելի է հարցնել քեզ այն, ինչ ուզում եմ: Դու հելլեն ես, և, ինչպես իմացել եմ քեզանից և ինձ հետ զրուցած մյուս հելլեններից, ոչ ամենափոքր և ամենաթույլ քաղաքից: Այժմ դու ինձ ասա հետևյալը: Հելլեները կհամարձակվե՞ն արդյոք իմ դեմ զենք բարձրացնել: Քանզի, ինձ թվում է, եթե նույնիսկ համաչն հելլեները և արևմուտքի բոլոր բնակիչները գումարվեին, դարձյալ չէին կարող դիմանալ իմ հարձակմանը, քանի որ իրար հետ համերաշխ չեն: Այսուհանդերձ, ես ուզում եմ լսել քո

կարծիքը ևս. դու ի՞նչ կասես նրանց մասին»: Արքան այսպես հարցրեց. իսկ Դեմարատոսը պատասխանելով ասաց. «Ով արքա. ես քեզ ասեմ ճշմարտությո՞ւնը, թե՞ քեզ հաճելին»: Քսերքսեսը պատվիրեց նրան ասել ճշմարտությունը, և ավելացրեց, թե ինքը, առաջվա նման, նրան ոչ մի շնորհից չի զրկի:

102. Դեմարատոսն այս լսելով, պատասխանեց այսպես. «Ով արքա. քանի որ դու ինձ հրամայում ես անպայման ասել ճշմարտությունն այնպես, որ հետագայում ես ստի մեջ չբռնվեմ, կասեմ քեզ, որ Հելլադան մշտապես եղել է աղքատ երկիր, մինչդեռ արիությունը նվաճված է իմաստությամբ և խիստ օրենքներով: Այդ արիությամբ էլ Հելլադան պաշտպանվում է աղքատությունից և բռնատիրությունից: Ես, անշուշտ, գովաբանում եմ դորիական երկրներում բնակվող բոլոր հելլեններին. բայց ես բոլորի մասին չեմ ասի, այլ միայն լակեդեմոնացիների: Նախ, նրանք երբեք չեն ընդունի քո պայմանները, որոնք Հելլադային բերում են ստրկություն: Երկրորդ, նրանք կպատերազմեն քո դեմ, եթե նույնիսկ մնացած բոլոր հելլենները քո կողմն անցնեն: Նրանց թվի մասին մի հարցրու, թե քանի մարդ այդպես կվարվի. քանզի եթե նույնիսկ հազար մարդ դուրս գա, կամ դրանից ավել թե պակաս, նրանք կկռվեն քո դեմ»:

103. Այս լսելով, Քսերքսեսը ծիծաղեց և ասաց. «Դեմարատոս. այդ ի՞նչ խոսքեր են բարբառում, թե հազար այրեր կկռվեն այսպիսի խոշոր բանակի դեմ: Դու, ինչպես պատմել ես, եղել ես այդ մարդկանց թագավորը: Ասա ինձ. կհամարձակվեի՞ր այժմ կռվել տաս մարդու դեմ: Եթե ձեր ամբողջ իրավակարգն այնպիսին է, ինչպիսին դու պատմում ես, ապա դու, նրանց թագավորը, ձեր օրենքների համաձայն, պետք է դիմագրավես կրկնակի թվով թշնամիների: Քանզի եթե նրանցից յուրաքանչյուրը հավասարազոր է իմ զորքից տասը մարդու, ապա պիտի կարծել, որ դու հավասարազոր ես քանի: Դրանով կարելի է փորձել քո խոսքերի ճշմարտությունը: Բայց եթե նրանք կորովով և բարեսեությամբ այնպիսիք են, ինչպիսիք դու և ինձ մոտ այցելող հելլենները, պատկերացնում եմ, ապա տես, որ այդ ամենը սին ասված խոսքեր չլինեն: Եկ ամենայն պատշաճությամբ դատենք: Ինչպե՞ս կարող են հազար կամ բյուր և կամ հինգ բյուր այրեր, ընդ որում բոլորը հավասարապես ազատ և առանց միասնական առաջնորդի, դիմադրել այսքան մեծ զորքի: Եթե նրանք նույնիսկ հինգ հազար լինեն, ապա մենք կլինենք յուրաքանչյուրի դեմ հազար մարդ: Եթե նրանք, ասենք, լինեին մեկ մարդու առաջնորդության տակ, ինչպես մեզ մոտ է, ապա նրանից վախենալով, կկարողանային գերբնական քաջություն ցուցաբերել և մարդի հարվածների տակ, փոքրաթիվ լինելով, հարձակվել մեծաթիվ թշնամու վրա: Բայց ազատ մնալով, նրանք ոչինչ այս ամենից չեն կարող կատարել: Իմ կարծիքով, հելլենները եթե նույնիսկ թվով հավասար լինեն, դժվար թե

իրենք մենակ կարողանան դիմադրել պարսիկներին: Իրականում, միայն մեզ մոտ կա այն, ինչի մասին դու խոսեցիր, թեև մեզ մոտ ևս այն հազվադեպ է: Իմ պարսիկ նիզակակիրների մեջ կան այնպիսիք, որոնք սիրով կկռվեն միանգամից հելլեններից երեքի դեմ. այդ մասին դու անտեղյակ լինելով, շատ ես շաղակրատում»:

104. Այդ խոսքերին Դեմարատոսն այսպես պատասխանեց. «Ով արքա. ես նախապես գիտեի, թե ճշմարիտը խոսելով, ես քեզ հաճելի բաներ չեմ ասի: Բայց քանի որ դու ստիպեցիր ինձ ամենաճշմարիտն ասել, ապա ես քեզ ամեն ինչ ասացի սպարտացիների մասին: Դու ինքդ, անշուշտ, շատ լավ գիտես, թե ես այժմ ինչքան եմ սիրում նրանց, որոնք զրկեցին ինձ (թագավորական) պատվից և ժառանգական իրավունքներից, ու դարձրին հայրենազուրկ վտարանդի, իսկ քո հայրն ընդունեց ինձ և տուն ու տեղ տվեց: Արդ, անպատշաճ կլինի, եթե խելամիտ մարդն իրենից վանի իրեն ցույց տրված բարեգործությունը: Ընդհակառակը, պետք է մեծապես գնահատել այն: Ես չեմ պնդի, թե կարող եմ կռվել տաս մարդու, նույնիսկ երկու մարդու դեմ. իսկ եթե իմ կամքը լինի, ապա ես նույնիսկ չեմ մենամարտի: Եթե անհրաժեշտություն ծագեր, և կամ եթե հաղթելու դեպքում ինձ սպասեր որևէ մեծ պարգև, ես մեծ բավականությամբ կմենամարտեի այն մարդիկներից մեկի հետ, որոնցից յուրաքանչյուրը, քո ասելով, հավասար է երեք հելլենի: Այդպես է նաև լակեդեմոնացիների պարագային: Մեկ մարդու դեմ մենամարտելիս նրանք բոլորովին էլ, վատ չեն մյուս ժողովուրդներից. իսկ բոլորը միասին մարտում ամենաարիներն են բոլորից: Նրանք թեև ազատ են, բայց ոչ ամեն ինչում: Նրանց տերը օրենքն է, որից նրանք առավել երկյուղում են, քան քո ժողովուրդը քեզանից: Նրանք կատարում են այն, ինչ օրենքը հրամայում է. իսկ օրենքի հրամանը միշտ մեկն է. այն արգելում է մարտում փախչել թշնամու որևէ բազմության առաջ, այն պատվիրում է մնալ շարքում և հաղթել կամ սպանվել: Եթե իմ այս խոսքերը քեզ շաղակրատանք են թվում, ապա այսուհետև մնացածի մասին ես կլռեմ: Այժմ ես հարկադրված խոսեցի: Բայց ամեն ինչ, արքա, թող լինի քո կամքով»:

105. Նա այսպես պատասխանեց. իսկ Քսերքսեսը կատակի վերածեց և բոլորովին չզայրացավ, այլ նրան բարեհամբույր ճանապարհեց: Այս զրույցից հետո Քսերքսեսը Մասկամեսին, Մեգադոստեսի որդուն, Դարիոսի հյուպարքոս կարգեց, այդ պաշտոնից հեռացնելով Դարեհի կարգածին, և իր զորքը Թրակիայի միջով տարավ Հելլադա:

106. Այս Մասկամեսը, որին նա թողեց հյուպարքոս, լավագույնն էր բոլոր հյուպարքոսներից, որոնց կարգել էին ինքը կամ Դարեհը. ուստի և Քսերքսեսը միայն սրան ամեն տարի ընծաներ էր ուղարկում: (Հետագայում) Մասկամեսի հետնորդներին նույնպիսի ընծաներ էր ուղարկում Քսերքսեսի որդի Արտաքսերքսեսը. քանզի դեռևս դրանից առաջ ամբողջ Թրակիայում

և Հելլեսպոնտոսում կարգվել էին ճյուպարհոսներ: Թրակիայի և Հելլեսպոնտոսի այս բոլոր ճյուպարհոսներին այս պատերազմից հետո հելլենները հեռացրին, բացի Դորիսկոսի ճյուպարհոսից. իսկ Դորիսկոսի ճյուպարհոս Մասկամեսին մինչև օրս էլ չկարողացան հեռացնել, հակառակ բազմիցս կատարված փորձերին: Այդ պատճառով էլ պարսից թագավորը միշտ նրան նվերներ է ուղարկում:

107. Հելլենների կողմից վտարված մյուս ճյուպարհոսներից և ոչ մեկին Քսերքսես թագավորը հաշվի չհամարեց, այլ միայն Բոգեսին՝ էյոնից: Արքան չէր դադարում սրան գովելուց, իսկ Պարսկաստանում ապրող նրա որդիներին մեծ պատիվներ էր տալիս: Ինքը՝ Բոգեսը, իրոք, արժանի էր այդ գովեստներին: Քանզի, երբ աթենացիները, Միլտիադեսի որդի Կիմոնի գլխավորությամբ, պաշարել էին նրան, նա, ըստ համաձայնության, հնարավորություն էր ստացել դուրս գալու (քաղաքից) և վերադառնալու Ասիա, բայց հրաժարվեց, որպեսզի արքան չմտածեր, որ ինքն անաբեկված փրկում է իր կյանքը, այլ մինչև վերջ դիմադրեց: Երբ արդեն ամրոցում ոչ մի պարեն չէր մնացել, Բոգեսը նախ խարույկ պատրաստեց և իր որդիներին, կնոջը և հարներին ու ստրուկներին մորթելով, նրանց նետեց խարույկի վրա. այնուհետև քաղաքում եղած ամբողջ ոսկին և արծաթը թափեց պարսպից դուրս, Ստրյումոն գետը. այս անելուց հետո, ինքը ևս նետվեց խարույկի մեջ: Այդ պատճառով էլ պարսիկները մինչև այժմ հիրավի գովաբանում են նրան:

108. Քսերքսեսը իր արշավանքը Դորիսկոսից շարունակեց Հելլադա, ճանապարհին բոլորին ստիպելով միանալ իր արշավանքին: Ինչպես արդեն ասել եմ, մինչև Թեսալիա ամբողջ երկիրը, որը նվաճել էր Մեգաբազոսը, իսկ նրանից հետո՝ Մարդոնիոսը, հարկատու էր արքային: Դորիսկոսից մեկնելով, Քսերքսեսը նախ շրջանցեց սամոթրակյան ամրությունները, որոնցից ամենածայր արևմուտքում կառուցված էր Մեսամբրիա կոչված քաղաքը: Դրան հարում է թասոսցիների Ստրյումե քաղաքը: Սրանց միջով հոսում է Լիսոս գետը, որի շուրջ այդ ժամանակ չբավարարեց Քսերքսեսի զորին: Այդ երկիրը հետո կոչվել է Գալլանիկե, իսկ այժմ՝ Բրիանիկե. այն հիրավի այժմ էլ պատկանում է կիկոններին:

109. Անցնելով Լիսոս գետի ցամաքած հունով, նա հասավ Մարոնեյա, Դիկայա և Աբդերա հելլենական քաղաքները. այնուհետև նա անցավ այդ քաղաքների մերձակայքում գտնվող հետևյալ հայտնի լճերի մոտով. Իսմարիսի, որը գտնվում է Մարոնեյայի և Ստրյումեի միջև. Բիստոնի, որը գտնվում է Դիկայայի մոտ և որի մեջ իրենց ջրերն են թափում Տրավոսը և Կոմպսատոսը: Աբդերայի մոտ Քսերքսեսին ոչ մի հայտնի լիճ չպատահեց, բայց անցավ ծովը թափվող Նեստոս գետը: Այստեղից նա անցավ երկրի ներսում եղած քաղաքների մոտով, որոնցից մեկը գտնվում է շուրջ երեսուն ասպարեզ չրչագիծ ունեցող լճի մոտ. այս լիճը ձկնառատ է և խիստ աղի.

լիճը ցամաքեց սոսկ գրաստներին չրելուց: Այդ քաղաքը կոչվում է Գիստայուրոս:

110. Առաջ ընթանալիս, Քսերքսեսը հելլենական ծովափնյա այս քաղաքները թողեց իր ձախ կողմում: Թրակական ցեղերը, որոնց երկրի միջով նա անցավ, հետևյալներն էին. պայտեր, կիկոններ, բիստոններ, սապայներ, դարսայներ, էդոններ, սատրեր: Սրանցից ծովափին բնակվողները նրա զորքերին հետևում էին նավերով, իսկ միջնաշխարհում բնակվողները, որոնց ես թվեցի, բացի սատրայներից, բոլորը ստիպված էին հետիոտն հետևել:

111. Այս սատրայները, ինչքան մեզ հայտնի է, երբեք ոչ ոքի հպատակ չեն եղել. թրակացիներից միայն սրանք են ցարդ մնում ազատ: Քանզի ապրում են բազմազան անտառներով ու ձյունով ծածկված բարձր լեռներում և խիստ ռազմատենչ են: Նրանց տիրության տակ է Դիոնիսոսի պատգամատունը[52]: Այս պատգամատունը գտնվում է ամենաբարձր լեռների վրա, իսկ արքավայրում գուշակություններ անողները բեսոսներն են (որոնք պատկանում են) սատրայների ցեղերից մեկին: Պատգամները, ինչպես Դելֆիում, հայտնում է գլխավոր քրմուհին, և ամեն ինչ կատարվում է այնպես, ինչպես այնտեղ, առանց տարբերության:

112. Ասված երկրի միջով անցնելուց հետո, Քսերքսեսն այնուհետև անցնում է պիերիացիների ամրությունները, որոնցից մեկի անունն է Փագրես, մյուսինը՝ Պերգամոս: Այսպես ընթանալով, նա անցավ այդ ամրությունների մոտով, աջ կողմում ունենալով Պանգայոն մեծ և բարձր լեռը, որտեղ կան ոսկու և արծաթի հանքեր. այնտեղ բնակվում են պիերիացիներ, օդոմանտներ[53] և առավելապես սատրեր:

113. Պանգայոնից հյուսիս բնակվող պայոնների, դոբերների և պայոպլեների երկրի միջով անցնելով, Քսերքսեսը շարժվեց դեպի արևմուտք, մինչև որ հասավ Ստրյումոն գետը և էյոն քաղաքը, որտեղ իշխում էր Բոգեսը, որն այդ ժամանակ դեռևս կենդանի էր և որի մասին ես նոր հիշատակեցի: Պանգայոն լեռան շուրջը գտնվող երկիրը կոչվում է Փյուլիս: Դեպի արևմուտք այն ձգվում է մինչև Անտիգես գետը, որը թափվում է Ստրյումոնի մեջ, իսկ դեպի հարավ հասնում է մինչև Ստրյումոն գետը. այստեղ մոգերը զոհեր մատուցեցին, սպիտակ ձիեր մորթելով[54]:

114. Այդ գետի պատվին այսպիսի և ուրիշ կախարդանքներ անելով, պարսիկները կամուրջների վրայով գետն անցան էդոնների երկրում գտնվող Ինը ճամփաներ կոչված վայրում, որտեղ նրանք Ստրյումոնը կամրջված գտան: Իմանալով, որ այդ վայրը կոչվում է Ինը ճամփաներ, նրանք տեղի բնակիչներից հավասար թվով տղաներ և աղջիկներ զոհաբերեցին, նրանց կենդանի թաղելով հողում: Զոհերին կենդանի թաղելը պարսկական սովորույթ է: Ես լսել եմ, թե Քսերքսեսի կին Ամեստրիսը, հասած լինելով ծերության տարիքի, հրամայել է կենդանի թաղել անվանի պարսիկների տասնը-

չորս տղաների, ի շնորհակալություն ասածու, որը, ինչպես պատմում են, բնակվում է գետնի տակ:

115. Շարունակելով ճանապարհը Սարյուսոնից, զորքը ուղղվեց դեպի արևմուտք և անցավ ծովափնյա Արգիլոս հելլենական քաղաքը: Այս և նրանից վերև գտնվող երկիրը կոչվում է Բիսալտիա: Այստեղից, ձախ կողմում թողնելով Պոսիդեյոնի ծովախորշը, (Քսերքսեսը) առաջացավ Սյուլեոս կոչված գաշտի միջով, հելլենական Ստագիրա[55] քաղաքի մոտով և հասավ Ականթոս: Նա իր հետ տարավ Պանգայոն լեռան շուրջը բնակվող բոլոր ցեղերին, ինչպես նաև արդեն թվարկածս ցեղերին. ծովափնյա բնակիչները պետք է ծառայեին նավատորմում, իսկ ծովից հեռու բնակվողները՝ հետևակ զորքերում: Այս ճանապարհը, որով Քսերքսեսը տարավ իր զորքը, թրակացիները չեն քանդում և չեն հերկում, այլ ցարդ այն մեծապես հարգում են:

116. Ժամանելով Ականթոս, Քսերքսեսը ականթոսցիներին հայտարարեց իր հյուրընկալները, նրանց պարգևեց մեդական զգեստ և, տեսնելով նրանց հոժարակամ մասնակցությունը պատերազմին և լսելով շրանցքը փորելու ժամանակ ցուցաբերած ջանասիրության մասին, գովեց նրանց:

117. Մինչ Քսերքսեսը Ականթոսում էր, շրանցքի փորման (աշխատանքների) վերակացու Արտաքայեսը հիվանդացավ ու մեռավ: Սա ծագումով Աքեմենյան էր և մեծապես հարգված Քսերքսեսից: Արտաքայեսն իր հասակի բարձրությամբ, որը հինգ թագավորական կանգունից պակաս էր երկու մատնաչափով,[56] գերազանցում էր բոլոր պարսիկներին և մյուս մարդկանցից տարբերվում էր իր բարձր ձայնով: Այդ պատճառով Քսերքսեսը մեծապես սգաց նրան, շուքով հուղարկավորեց և թաղեց. իսկ ամբողջ զորքը նրա գերեզմանին հող լցրեց: Պատգամատան հրամանով այս Արտաքայեսի պատվին ականթոսցիները զոհ են մատուցում որպես հերոսի, արտասանելով նրա անունը:

118. Այսպես, Քսերքսես արքան ողբաց Արտաքայեսի կորուստը: Իսկ պարսկական զորքին ընդունած հելլենները, որոնք պետք է նաև հյուրընկալեին Քսերքսեսին, այնպիսի թշվառության հասան, որ ստիպված հեռացան իրենց քաղաքներից: Այսպես, թասոսցիներին, որոնք հանուն մայր ցամաքում գտնվող իրենց քաղաքների, ստիպված էին ընդունել և կերակրել Քսերքսեսի զորքերին, այդ հյուրընկալումը, ինչպես ցույց է տվել նրանց կողմից բնարված ամենահարգված քաղաքացիներից մեկը, Օրգևսի որդի Անտիպատրոսը, արժել է չորս հարյուր արծաթ տաղանդ:

119. Ինչպես ցույց տվեցին վերակացուները, մոտավորապես նույնքան խոշոր էին մյուս քաղաքների ծախսերը: Հյուրընկալությունը կատարվում էր հերթով: Զորքի ժամանման մասին տեղեկացնում էին նախօրոք, և յուրաքանչյուրն անում էր ինչ կարող էր: Երբ քարոզները հաղորդում էին զորքի գալու մասին, հացահատիկը բաժանում էին բոլոր քաղաքների միջև, որոնք երկար ամիսներ շարունակ պատրաստում էին ցորենի և գարու ալյուր:

Բացի այդ, խնամում էին իրենց ամենաթանկ անասուններին, ցամաքային և լեռային հավքեր անեցնում տներում և լճակներում՝ զորքերին հյուրասիրելու համար: Միաժամանակ պատրաստում էին ոսկե և արծաթե գավաթներ ու կրատերներ[57] և այն ամենը, ինչ դրվում էր սեղանին: Այս իրերը, անշուշտ, պատրաստում էին արքայի և նրա սեղանակիցների համար. մնացած զորքի համար նրանք տրամադրում էին միայն ուտելիք: Երբ զորքը ժամանում էր, իսկույն վրան էին խփում, որտեղ իջևանում էր ինքը՝ Քսերքսեսը. իսկ մնացած ամբողջ զորքը մնում էր բացօթյա: Ճաշի ժամին հյուրընկալողները մեծ հոգսեր էին ունենում, մինչդեռ պարսիկները, հագենալուց հետո, մնում էին այնտեղ գիշերելու, իսկ հաջորդ օրը, քանդելով վրանը, ամեն ինչ վերցնում էին ու մեկնում, ոչինչ չթողնելով տեղում:

120. Այդ ժամանակ էր, որ ոմն Մեգակրեոն, Աբդերա քաղաքից, շատ հիշտ խոսք է ասել: Նա խորհուրդ է տվել աբդերացիներին ամբողջ համայնքով, իրենք և կանայք, գնան իրենց սրբավայրը և աղաչեն աստվածներին՝ պաշտպանել իրենց և այսուհետև փրկել իրենց գալիք դժբախտություններից: Անցյալ շարիքների համար պետք է աստվածներին մեծ շնորհակալություն հայտնել, քանի որ Քսերքսես թագավորը սովորություն չունի օրական երկու անգամ ճաշելու: Եթե աբդերացիներին հրամայվեր այդքան հոխ ճաշից բացի նույնքան հոխ նախաճաշ պատրաստել, ապա իրենց մնում էր՝ կամ բոլորովին չսպասել Քսերքսեսի ժամանելուն, կամ նրան սպասելով, դատապարտվել ամենաթշվառ վիճակի:

121. Այսուհանդերձ, հարկադրաբար նրանք կատարում էին հրամայվածը: Իսկ Քսերքսեսը հրամայեց իր նավատորմի զորավարներին նավերով մեկնել Ականթոսից և սպասել իրեն Թերմեում: Թերմեն գտնվում է Թերմայոն ծոցում, որն իր անունն ստացել է այդ քաղաքից: Քսերքսեսը իմացել էր, որ այդ ամենակարճ ուղին էր: Քանզի զորքը Դորիսկոսից մինչև Ականթոս ընթացավ հետևյալ կարգով: Ամբողջ հետևակը Քսերքսեսը բաժանելով երեք մասի, մի մասին հրամայեց ծովափով գնալ նավատորմին ճամբնթաց. այս զորամասը առաջնորդում էին Մարդոնիոսը և Մասիստեսը: Զորքի մյուս՝ երրորդ մասը, որն առաջնորդում էին Տրիտանտայխմեսը և Գերգիսը, գնում էր միջերկրայքով. իսկ զորամասերից երրորդը, որի հետ գնում էր նաև ինքը՝ Քսերքսեսը, Սմերդոմենեսի և Մեգաբյուզոսի առաջնորդությամբ ընթանում էր նրանց մեջտեղով:

122. Այսպիսով, Քսերքսեսի ուղարկած նավատորմը Աթոսի շրանցքով անցնելով, հասավ ծովախորշ, որտեղ գտնվում են Ասսա, Պիլորոս, Սինգոս և Սարտե քաղաքները: Այս քաղաքներից ևս զորք վերցնելով, նավատորմն ընթացավ դեպի Թերմայոն ծովախորշը: Այնուհետև, շրջանցելով Ամպելոս հրվանդանը Տորոնում, նավատորմը անցավ Տորոնե, Գալեպսոս, Սերմյուլե,

Մեկյուբեռնա և Օլինթոս քաղաքների մոտով: Այս քաղաքներից նա վերցնում էր նավեր և զորք:

123. Այս երկիրը կոչվում է Սիթոնիա: Քսերքսեսի նավատորմը Ամպելոս հրվանդանից ընթացավ ուղիղ դեպի Կանաստրեա հրվանդանը, որը Պալլենե երկրի՝ դեպի ծով ձգված ծայրագույն կետն է: Այստեղ դարձյալ նավեր ու զորք վերցրեց Պոտիդեա, Ասիյուտիոս, Նեապոլիս, Այգե, Թերամբռ, Սկիոնե, Մենդե և Սանե քաղաքներից, որոնք գտնվում են անցյալում Փլեգրե կոչված Պալլենե երկրում: Շրջանցելով այս երկիրը ևս, նավատորմն ընթացավ դեպի նշանակված վայրը, նանապարհին զորք վերցնելով Պալլենեին սահմանակից և Թերմայոն ծովախորշի մերձակայքում գտնվող Լիպարոս, Կոմբրեյա, Լիսա, Գիգոնոս, Կամպսա, Սմիլա, Այնեյա քաղաքներից: Այս երկիրը ցարդ կոչվում է Կրոսսայա: Այնեյայից, որը թվածս քաղաքներից ամենավերջինն էր, նավատորմն արդեն ուղղվեց դեպի բուն իսկ Թերմայոն ծովախորշը և Մյուգդոնիա երկիրը, որով և հասավ նախանշված վայրը՝ Թերմե և Սինդոս ու Քալեստրե քաղաքները, որոնք գտնվում են Աքսիոս գետի վրա: Այս գետը սահման է Մյուգդոնիայի և Բոտտիական երկրի միջև: Այս երկրի առափնյա նեղ շերտի վրա գտնվում են Իքնայ և Պելլա քաղաքները:

124. Արդ, Քսերքսեսի նավատորմը խարսխեց ծովափին, Աքսիոսի գետաբերանից մինչև Թերմե և սրանց միջև ընկած քաղաքները, սպասելով արքայի ժամանելուն: Իսկ Քսերքսեսը ցամաքային զորքերի հետ, ընտրելով միջնաշխարհով Թերմե տանող ամենակարճ նանապարհը, մտավ Ականթոս: Հանապարհն անցնում էր Պայոնիայի և Կրեստոնիայի միջով դեպի Էիդորոս գետը: Այս գետը սկիզբ է առնում Կրեստոնիայից, հոսում է Մյուգդոնիայի միջով և թափվում Աքսիոսի մեջ:

125. Երբ զորքն ընթանում էր այս երկրով, պարենատար ուղտերի վրա առյուծներ հարձակվեցին: Գիշերը առյուծները իջնում էին իրենց որջերից, բայց չէին հարձակվում ո՛չ մարդկանց, ո՛չ իսկ գրաստների, այլ միայն ուղտերի վրա: Ես զարմանում եմ, թե ինչն էր ստիպում առյուծներին հանգիստ թողնելու մյուս անասուններին և հարձակվելու միայն ուղտերի վրա, որոնց նախապես ո՛չ տեսել էին, ո՛չ էլ հաշակել (նրանց միսը):

126. Այս վայրերում կան մեծ թվով առյուծներ և վայրի ցուլեր, որոնց եղջյուրները շատ խոշոր են և բերվում են Հելլադա: Առյուծների (կենավայրի) սահմաններն են՝ Աբդերա մարզով հոսող Նեստոս և Ակառնանիայով հոսող Աքելոոս գետերը: Քանզի Նեստոսից դեպի արևելք, Եվրոպայի ամբողջ առաջավոր մասում, ինչպես նաև Աքելոոսից արևմուտք ընկած մնացած մայր ցամաքում չեն հանդիպի առյուծների, այլ միայն այս գետերի միջև ընկած տարածքում:

127. Թերմե ժամանելով, Քսերքսեսն իր զորքով այնտեղ բանակեց: Նրա բանակատեղը բռնել էր ամբողջ ծովափը, Թերմե քաղաքից ու Մյուգդոնիայից մինչև Լյուդիաս և Հալիակմոն գետերը, որոնք Բոտտիական երկիրը բաժանում են Մակեդոնիայից, իրենց շրերը միախառնելով մեկ հունի մեջ: Անա այս վայրերում բարբարոսները բանակեցին: Վերևում թվարկածս գետերից միայն Կրեստոնների երկրից հոսող Քեյդորոս գետի ջուրը չբավարարեց բանակին խմելու և գետը ցամաքեց:

128. Երբ Քսերքսեսը Թերմեից տեսավ շատ բարձր Օլիմպոս և Օսսա լեռները և տեղեկացավ, թե նրանց միջև կա նեղ կիրճ, որով հոսում է Պենեոսը և որը Թեսալիա տանող միակ հանապարհն է, փափագեց նավարկելով դիտել Պենեոսի գետաբերանը. քանի որ նա մտադիր էր ընթանալ վերին հանապարհով, վերևում բնակվող մակեդոնացիների երկրով դեպի պերեբների երկիրը և Գոնոս քաղաքը. քանզի նրան հայտնել էին, թե ամենապահով հանապարհն է դա. ինչպես որ նա փափագել էր, այդպես էլ կատարվեց: Բարձրանալով սիդոնյան նավ, որի վրա նա սովորաբար բարձրանում էր նման դեպքերում, Քսերքսեսը մյուս նավերին ևս ազդանշան տվեց դուրս գալու, իսկ հետևակին հրամայեց մնալ տեղում: Հասնելով այդ վայրը և տեսնելով Պենեոսի գետաբերանը, նա մեծապես զարմացավ: Այնուհետև իր մոտ հրավիրելով ուղեցույցներին, հարցրեց նրանց, թե հնարավոր չէ՞ արդյոք գետը շրջել և ստիպել, որ այն ծով դուրս գա մեկ այլ վայրում:

129. Հնում Թեսալիան, ինչպես ավանդությունն է ասում, եղել է լիճ. այն, իրոք, բոլոր կողմերից փակված է շատ բարձր լեռներով: Արևելյան կողմից այն փակված է Պելիոն և Օսսա լեռներով, որոնց նախալեռները հանդիպում են իրար. հյուսիսից Օլիմպոսն է, արևմուտքից՝ Պինդոսը, իսկ հարավից՝ Օթրյուսը: Նշված այս լեռների միջև գտնվում է Թեսալիայի գոգավորությունը: Բազմաթիվ այլ գետեր ևս հոսում են դեպի այդ գոգավորությունը, բայց դրանցից առավել հայտնի են հինգը՝ Պենեոս, Ապիդանոս, Օնոքոնոս, Թենիպեոս և Պամիսոս: Այս գետերը, այսպիսի անվանումներով, հոսում են Թեսալիան շրջապակող լեռներից և մի հունի մեջ միանալով, նեղ կիրճով հոսելուց հետո, թափվում են ծով: Միախառնվելուց անմիջապես հետո, գերիշխում է Պենեոսի անունը, իսկ մյուսները դառնում են անանուն: Պատմում են, թե հնում, քանի դեռ գոյություն չէր ունեցել այդ կիրճը և հունը, իսկ այդ գետերը, նրանց հետ նաև Բոյբեիս լիճը, հոսում էին դեպի հարթավայրը, թեև չունեին իրենց այժմյան անունները, և ծովացնում ամբողջ Թեսալիան: Թեսալացիները պատմում են, թե այն կիրճը, որով հոսում է Պենեոսը, բացել է Պոսեյդոնը. նրանք, հավանաբար, ճիշտ են ասում: Քանզի նա, ով հավատում է, թե Պոսեյդոնն է երկիրը սասանում և այդ աստծու երկրաշարժին է վերագրում կիրճերը, ապա, տեսնելով այդ կիրճը, նա կասի, թե այն Պոսեյդոնի գործն է: Ինձ թվում է, թե լեռների միջև այդ կիրճը երկրաշարժի արդյունք է:

130. Իսկ ուղեցույցները Քսերքսեսի այն հարցին, թե՝ Պենեոսն ունի՞

արդյոք ուրիշ երկիր դեպի ծով, բաշատեղյակ լինելով (տեղանքին), պատասխանեցին. «Ով արքա. այս գետը ուրիշ երկիր չունի դեպի ծով, բացի այս մեկից. բանգի ամբողջ Թեսալիան շուրջանակի օղակված է լեռներով»: Ասում են, թե Քսերքսեսը նրանց պատասխանել է այսպես. «Թեսալացիները իմաստուն մարդիկ են: Նրանք վաղուց անարգեկված են ճզորությունից, իրենց միտքը փոխել են, հասկանալով, թե իրենց երկիրն ինչքան հեշտ և արագ նվաճելի է: Բանգի բավական է միայն կիրճը հողով պատնեշելով գետի հոսանքը շրջել, և ամբողջ Թեսալիան, լեռներից բացի, կմնա չրի տակ»: Այս ասելով, նա նկատի ուներ Ալեասի որդիներին, որոնք թեսալացի լինելով, արքային հպատակություն հայտնած առաջին հելլեններն էին: Քսերքսեսը համոզված էր, որ նրանք հպատակություն էին հայտնել իրենց ամբողջ ազգի անունից: Այնուհետև, գետաբերանը դիտելուց հետո, նա ետ նավեց Թերմե:

131. Քսերքսեսը շատ օրեր մնաց Պիերիա երկրում. բանգի նրա զորքի երրորդ մասն անտառահատում էր Մակեդոնիայի լեռը, որպեսզի այդ ճանապարհով ամբողջ զորքը կարողանար անցնել պերրեբների երկիրը: Այդ ընթացքում վերադարձան բարոզները, որոնք ուղարկված էին Հելլադա, հող պահանջելու. ոմանք դատարկաձեռն, ուրիշներ՝ հող և չուր բերելով:

132. Հող և չուր տվել էին թեսալացիները, դոլոպները, ենիենները, պերրեբները, լոկրացիները, մագնեսիացիները, մալեացիները, Փթիայի ահայացիները, թեբեցիները և մնացյալ բեոտիացիները, բացի թեսպիացիներից և պլատեացիներից[60]: Այս բոլորի դեմ հելլենները, որոնք պատերազմ էին հայտարարել բարբարոսների դեմ, զոհաբերություններով ու երդմամբ դաշինք կնքեցին: Իսկ դաշինքն ազդարարում էր, որ եթե իրենք հաղթեն, ապա այն հելլենները, որոնք առանց հարկադրված լինելու, հանձնվեցին պարսից արքային, պետք է տասանորդ վճարեն դելփյան աստծուն: Այսպիսին էր հելլենների կնքած դաշինքը:

133. Իսկ Քսերքսեսը Աթենք և Սպարտա բարոզներ չուղարկեց հող պահանջելու հետևյալ պատճառով: Երբ անցյալում Դարեհը նույն այս նպատակով ուղարկել էր դեսպաններ, աթենացիները պահանջողներին վիհը նետեցին, իսկ սպարտացիները՝ ջրհորի մեջ, պատվիրելով այդտեղից հող և չուր տանել արքային: Անա այս պատճառով է, որ Քսերքսեսը (դեսպաններ) չուղարկեց (հող և չուր) պահանջելու: Թե ինչպիսի՞ աղետ կրեցին աթենացիներն իրենց այդ վարմունքի համար, ես չեմ կարող ասել. այլ միայն այն, որ նրանց երկիրն ու քաղաքը ավերվեցին: Բայց, ինձ թվում է, ավերման պատճառը այդ չի եղել:

134. Ինչ վերաբերում է լակեդեմոնացիներին, ապա նրանց հարվածեց Ագամեմնոնի բարոզ Տալթիբիոսի ցասումը: Բանգի Սպարտայում կա Տալթիբիոսին նվիրված արքավայր. գոյություն ունեն նաև Տալթիբյաններ կոչ-

ված նրա հետնորդները, որոնց վստահված է Սպարտայում բարոզի պաշտոնը: Այս դեպքերից հետո[61] սպարտացիները զոհաբերությունների ժամանակ չէին կարողանում բարեգուշակ նշաններ ստանալ. և այդպես շարունակվեց երկար ժամանակ: Լակեդեմոնացիները խիստ անհանգստացած էին այդ անհաջողությունից: Նրանք բազմիցս հավաքների ժողով գումարելով, բարոզների միջոցով հայտարարեցին, թե՝ լակեդեմոնացիներից որևէ մեկը չի՞ ուզում արդյոք իր կյանքը զոհել հանուն Սպարտայի: Այնժամ Անեբիսաոսի որդի Սպերթիասը և Նիկոլաոսի որդի Բուլիսը, ազնվազարմ և հարուստ սպարտացիներ, սիրահոժար հանձն առան պատիժ կրել Քսերքսեսից, Սպարտայում Դարեհի ուղարկած բարոզների սպանության փոխարեն: Այսպիսով, սպարտացիները սրանց մանված ուղարկեցին մեդացիների երկիրը:

135. Այս այրերի այսպիսի խիզախությունը արժանի է հիացմունքի, առավել ևս նրանց ասած խոսքերը: Սուսա գնալու հանապարհին նրանք գալիս են Հյուդառնեսի մոտ. Հյուդառնեսը պարսիկ էր, Ասիայի առափնյա զորքերի զորավարը: Սա հյուրընկալեց նրանց և ընթրիքի ժամանակ հարցրեց. «Լակեդեմոնացի այրեր. ինչո՞ւ դուք խուսափում եք արքայի բարեկամությունից: Տեսնելով իմ (բարձր) դրությունը, դուք իմ օրինակով կարող եք դատել, թե արքան ինչպես հարգել գիտե քաջարի մարդկանց: Դուք ևս, եթե ձեզ վստահեք արքային, ապա ձեզանից յուրաքանչյուրին կհանձնարարի Հելլադայի որևէ մարզի իշխանությունը. բանգի նա ձեզ քաջարի է համարում»: Այս առաջարկին նրանք պատասխանում են այսպես. «Մեզ տված քո խորհուրդը, Հյուդառնես, բազմակողմանի մտածված չէ: Բանգի քեզ քաջ հայտնի է, թե ի՞նչ բան է ստրուկ լինելը. իսկ թե ի՞նչ բան է ազատությունը, դու չես փորձել, այն քա՞ղցր է արդյոք, թե՞ դառն: Եթե դու ազատության փորձ ունենայիր, ապա մեզ խորհուրդ կտայիր հանուն նրա կռվել ոչ միայն նիզակներով, այլև կացիններով»:

136. Նրանք այսպես պատասխանեցին Հյուդառնեսին: Այնուհետև նրանք գնացին Սուսա և ներկայացան արքային: Երբ թիկնապահները հրամայեցին խոնարհվել արքայի առաջ ու երկրպագել, փորձելով ստիպել նրանց այդ անելու, նրանք ասացին, թե այդ բանը երբեք չեն կատարի, եթե նույնիսկ գլխիվայր կանգնեցվեն: Բանգի իրենց մոտ մարդուն երկրպագելու կարգ չկա, և այդ բանի համար չէ, որ իրենք եկել են: Այսպես մերժելուց հետո, նրանք երկրորդ անգամ խոսեցին և ասացին հետևյալը. «Ով մեդացոց արքա. մեզ ուղարկել են լակեդեմոնացիները, Սպարտայում սպանված բարոզների դիմաց, նրանց մահապատիժը բավելու համար»: Նրանց այս խոսքին ի պատասխան, Քսերքսեսն ասում է, թե՝ ինքը, մեծահոգությունից մղված, չի նմանվի լակեդեմոնացիներին, որոնք արհամարհելով բոլոր մարդկանց կողմից հարգված օրենքները, սպանեցին բարոզներին. ինքը չի կամենում կատարել այն, ինչի համար մեղադրում է նրանց, և փոխադարձաբար չի

սպանում (դեսպաններին), այլ ազատում է լակեդեմոնացիներին իրենց հանձնարարությունից:

137. Այսպիսով, հակառակ սպարտացիների այդ արարքին, Տալթիբիոսի ցասումը վերացավ, թեև Սպերթիասը և Բուլիսը վերադարձան Սպարտա: Բայց այս դեպքից շատ անց, հենց աթենացիների դեմ պելոպոննեսցիների պատերազմի ժամանակ, այդ ցասումը դարձյալ բորբոքվեց. և սա ինձ թվում է աստվածային մեծ նշան: Քանզի այն, որ այս ցասման պատճառով Տալթիբիոսի ցասումը հետագայում ընկավ թագավորի մոտ որպես դեսպան գնացած այդ երկու մարդկանց որդիների՝ Բուլիսի որդի Նիկոլասոսի և Սպերթիասի որդի Անաքսիստոսի վրա, այն Անաքսիստոսի, որը բեռնատար նավի վրա գտնվող իր ռազմիկների հետ գրավեց պերինթոսցիների Հալիա քաղաքը, պարզապես բացահայտում է այդ ցասման պատճառով տեղի ունեցած աստվածային միջամտությունը: Սրանք, որպես դեսպան, լակեդեմոնացիների կողմից ուղարկվել էին Ասիա, բայց նրանց մատնեցին Թրակիայի թագավոր Տերեսը, Սիտալկեսի որդին, և աբդերացի Նիմֆոդորոսը, Պյութեասի որդին: Սրանք բռնվեցին Հելլեսպոնտոսի Բիսանթե քաղաքում, տարվեցին Աթենք և սպանվեցին աթենացիների կողմից. նրանց հետ սպանվեց նաև կորնթացի Արիստեոսը, Ադեյմանտոսի որդին[62]: Բայց այս դեպքերը կատարվել են Քսերքսեսի արշավանքից շատ տարիներ անց. այժմ կվերադառնամ իմ նախկին պատմությանը:

138. Արքայի այս ռազմարշավն անվանապես իբր Աթենքի դեմ էր, բայց իրականում ուղղված էր համայն Հելլադայի դեմ: Այդ մասին հելլեները վաղուց գիտեին, բայց բոլորը միատեսակ չգործեցին: Նրանցից ոմանք հող ու ջուր տալով պարսկին, հանդգնել էին կարծելու, թե բարբարոսը ոչ մի վնաս չի պատճառի իրենց. իսկ նրանք, ովքեր (հող ու ջուր) չէին տվել, մեծ տագնապի մեջ էին, քանի որ Հելլադայում չկային բավական թվով ռազմանավեր՝ թշնամուն դիմադրելու համար. իսկ (քաղաքների) մեծ մասը չէր ուզում կռվել, այլ բացահայտորեն համակրում էր պարսիկներին:

139. Այժմ ես ստիպված եմ բացահայտ ասել իմ կարծիքը, որը շատերին տհաճ կարող է լինել. իսկ ես չեմ ուզում թաքցնել այն, ինչ ինձ թվում է ճշմարիտ: Եթե աթենացիները, սարսափելով վերահաս վտանգից, լքեին իրենց քաղաքը կամ, այն չլքելով հանդերձ, հանձնվեին Քսերքսեսին, ապա (հելլեններից) ոչ մեկը չէր համարձակվի ծովում դիմադրել արքային: Արդ, եթե ոչ մեկը Քսերքսեսին չդիմադրեր ծովում, ապա ցամաքում դեպքերը կընթանային այսպես: Թեև պելոպոննեսցիները մեծ թվով ամրություններ կառուցել էին Իսթմոսի[63] վրա, այսուհանդերձ լակեդեմոնացիները կմնային մենակ, լքված իրենց դաշնակիցներից. քանի որ այդ քաղաքները թեկուզ և ոչ կամավոր, այլ ստիպողաբար, իրար հետևից կհանձնվեին արքայի նավատորմին: Մնալով մենակ, լակեդեմոնացիները մեծ սխրանքներ կատարելով

հանդերձ, արիաբար կմեռնեին: Նրանք այսպիսի վախճան կունենային, և կամ, տեսնելով, որ բոլոր հելլեններն անցել են պարսից կողմը, իրենք ևս կհաշտվեին Քսերքսեսի հետ: Այսպիսով, և՛ մեկ, և՛ մյուս դեպքում Հելլադան կհպատակվեր պարսիկներին: Ես չեմ հասկանում, թե ի՞նչ օգուտ կարող էին տալ Իսթմոսի ամրությունները, եթե արքան գերիշխեր ծովում: Ուստի և եթե մարդ ասի, թե աթենացիները եղան Հելլադայի փրկիչները, ճշմարտության դեմ մեղանչած չի լինի: Քանզի դեպքերի ընթացքը կախված էր այն բանից, թե ո՞ւմ կնարեն աթենացիները: Երբ նրանք նախընտրեցին Հելլադայի ազատությունը, ապա դեռևս պարսիկների կողմը չանցած բոլոր հելլենների մեջ նրանք դիմադրելու արիություն արթնացրին, և աստվածների օգնությամբ ետ քշեցին արքային: Դելփյան պատգամատան սարսափելի պատգամները ևս չկարողացան նրանց անաբեկել և ստիպել լքելու Հելլադան. նրանք հաստատ մնացին և արիաբար կանգնեցին իրենց երկրի վրա արշավող թշնամու առաջ:

140. Քանզի աթենացիները դեսպաններ առաքել էին Դելփի՝ պատգամ ճարցնելու. սրբավայրում սովորական ծեսերը կատարելուց հետո, դեսպանները մտան տաճար ու նստեցին: Պյութիան, որի անունն էր Արիստոնիկե, հետևյալ գուշակությունն արեց.

Հիմարներ, ինչո՞ւ նստել եք. փախեք ծագերն աշխարհի.
Փախեք ձեր տնից և շրջանաձև բերդաքաղաքից.
Չի ոչ գլուխը, ոչ իսկ մարմինն են մնում անստատ:
Ոչ ձեռք և ոչ ոտք, կամ նրանց միջև եղած ոչ մի բան
Չի փրկվելու, այլ կործանվելու է: Իսկ այս քաղաքը
Հուրը կավերի, Արեսը դաժան, ասորեստանյան կառքով ուրալիս:
Եվ ոչ միայն քո, այլ նաև բազում բերդեր կավերի,
Բազում տաճարներ նրի կմատնի: Եվ այդ պատճառով
Կուռքերն անմահ գից քրտինք են ծորում: Տես, սարսափահար
Դողում են նրանք, իսկ տաճարների առաստաղներից,
Մեծ շարիքների նախատեսումից արյուն են լալիս.
Ելեք տաճարից ու ողբով լցրեք հոգիները ձեր:

141. Այս լսելով, աթենացի պատգամաբերները մեծապես վշտացան: Երբ նրանք արդեն հուսալքվել էին իրենց համար կանխագուշակված աղետների պատճառով, Անդրոբուլոսի որդի Տիմոնը, Դելփիում ամենահարգված մարդկանցից մեկը, խորհուրդ տվեց նրանց, ձիթենու ճյուղեր վերցնելով, վերադառնալ սրբատեղի և երկրորդ անգամ պատգամ հարցնել որպես աղերսաղներ: Աթենացիները համոզվեցին և ասացին (ասածուն): «Ով տեր. հանուն ձիթենու այս ճյուղերի, որոնցով եկել ենք քեզ մոտ, մեր հայրենիքի համար ավելի բարենպաստ կանխագուշակություն տուր. հակառակ դեպքում մենք տաճարից դուրս չենք գա և այստեղ կմնանք մինչև մեր կյանքի վեր-

չք»: Նրանք այսպես ասացին, իսկ գուշակը երկրորդ անգամ այսպես գուշակեց.

Գալլասն անգար է Օլիմպյան Զևսի զայրույթը մեղմել
Իր պատասագին խոսքերով և իր խելոք խորհրդով:
Իմ նոր պատգամը կլինի ամուր, ինչպես ադամանդ:
Արդ երբ անգամ Կեկրոպսի ժայռի[64] և Կիթերոնի
Միջև գտնվող ճոզը թշնամին ամբողջ ճվանի,
Տրիտոգենեի[65] փայտե պարիսպը Զևսն ամենատես
Կանգուն կպահի նանուն քո որդվոց և քո փրկության:
Մի սպասիր հանգիստ ցամաքից եկող հեծյալ զեզերին,
Ոչ էլ հետևակ զորին անհամար. թիկունք դարձրու և նա հանձնիր:
Կգա ժամանակ, գու կզորանաս և կդիմադրես:
Ով աստվածային Սալամիս, քո որդիներին պիտի կորցնես
Ցանի ժամանակ կամ թե օրերին ամառվա հունձի:

142. Այս պատգամը նախորդից առավել մեղմ համարելով, դեսպանները գրանցեցին այն և վերադարձան Աթենք: Ժամանելուց հետո, երբ նրանք համայնքի առաջ հայտնեցին պատգամը, բազում կարծիքներ արտահայտվեցին պատգամի նշանակության մասին և առաջացան երկու հակադիր տեսակետներ: Ավագներից ոմանք պնդում էին, թե աստծու ասածը նշանակում է, որ ակրոպոլիսը կմնա անառիկ, քանի որ Աթենքի ակրոպոլիսը հնում պատնեշված էր եղել փշաթփերով. ուստի և նրանք կարծում էին, թե «փայտե պարիսպը» այդ պատնեշն է: Ուրիշներն ասում էին, թե աստված նկատի է ունեցել նավերը. ուստի և առաջարկում էին ամեն ինչ թողնել և նավեր պատրաստել: Այսուհանդերձ նրանց, ովքեր «փայտե պարիսպը» նավերն էին համարում, շփոթեցնում էին Պյութիայի պատգամի վերջին երկու տողերը՝

Ով աստվածային Սալամիս, քո որդիներին պիտի կորցնես
Ցանի ժամանակ կամ թե օրերին ամառվա հունձի:

Այս խոսքերը շփոթեցնում էին նրանց, ովքեր պնդում էին, թե «փայտե պարիսպը» նավերն են: Քանզի պատգամը մեկնողներն այդ խոսքերը բացատրում էին այնպես, որ աթենացիները պարտություն կկրեն Սալամիսի մոտ նավամարտելիս:

143. Այդ ժամանակ Աթենքում կար մի մարդ, որը վերջերս դարձել էր առաջիններից մեկը: Նրա անունն էր Թեմիստոկլես և նա որդին էր Նեոկլեսի: Նա պնդում էր, թե պատգամը մեկնողները ամեն ինչ չէ, որ ճիշտ էին բացատրում. նա ասում էր. «Եթե ասված այս խոսքը իրոք վերաբերվեր աթենացիներին, ապա ես կարծում եմ, որ պատգամի խոսքերը այդպես մեղմ չէին լինի, այլ «աստվածային Սալամիս» խոսքի փոխարեն կլիներ՝ «դժբախտ Սալամիս», երբ, իհարկե, նրա բնակիչներին վիճակված էր կործանվել կրզ-

զու համար կռվելիս: Ընդհակառակը, աստծու պատգամը ճիշտ հասկանալու դեպքում, այն պետք է վերագրել թշնամուն և ոչ թե աթենացիներին»: Ուստի և Թեմիստոկլեսը նրանց խորհուրդ է տալիս պատրաստվել նավամարտի, քանի որ «փայտե պարիսպը» նավերն են: Թեմիստոկլեսի այս բացատրությունը գերադասելի թվաց աթենացիներին, քան պատգամի այն մեկնիչների բացատրությունը, որոնք դեմ էին նավամարտին և խորհուրդ էին տալիս լքել Ատտիկան ու հաստատվել մեկ այլ վայրում:

144. Այս դեպքից առաջ աթենացիներն ընդունել էին Թեմիստոկլեսի մեկ այլ առաջարկը: Այդ ժամանակ աթենացիների գանձարանում խոշոր դրամական գումար էր կուտակվել, որը ստացվել էր Լավրիոնի[66] մետաղահանքերից: Այդ դրամը պետք է բաժանեին քաղաքացիների միջև, այնպես, որ յուրաքանչյուրին հասնում էր տաս դրաքմե: Այնժամ Թեմիստոկլեսը համոզում է աթենացիներին՝ հրաժարվել այդ դրամը բաժանելուց և այդ գումարով կառուցել երկու հարյուր նավ պատերազմի համար, նկատի ունենալով պատերազմը էգինայի դեմ: Անա էգինայի դեմ սկսած այդ պատերազմն էլ փրկեց Հելլադան, ստիպելով աթենացիներին ծովայիններ դառնալու: Թեև այդ նավերը չօգտագործվեցին այդ առիթով, բայց հետագայում պիտանի եղան Հելլադային: Արդ, աթենացիներն արդեն ունեին այս շինված նավերը, բայց այժմ անհրաժեշտ էր նորերը ևս շինել: Եվ անա աթենացիները, քննելով պատգամատան պատասխանը, աստծու խորհրդով որոշեցին իրենց ծովային ամբողջ ուժով և (իրենց միանալ) ցանկացող մյուս հելլեններին հետ թշնամուն դիմադրել ծովում:

145. Անա այսպիսի պատգամ են ստացել աթենացիները: Իսկ այժմ այն բոլոր հելլենները, որոնք լավագույն ձգտումներ ունեին Հելլադայի հանդեպ, ի մի հավաքվեցին և խորհուրդ գումարելով, երդումով հավատարմության գաշինք կնքեցին ու որոշեցին առաջին հերթին վերջ տալ իրար դեմ ունեցած թշնամանքին և պատերազմներին: Այլ քաղաքներ ևս պատերազմում էին իրար միջև, բայց մեծագույնը եղել է (պատերազմը) աթենացիների և էգինացիների միջև[67]: Այնուհետև լսելով, որ Քսերքսեսն իր զորքով գտնվում է Սարդեսում, նրանք որոշեցին լրտեսներ ուղարկել Ասիա, իմանալու համար արքայի գործերի վիճակը, ինչպես նաև հրեշտակներ ուղարկել Արգոս, պարսկի դեմ դաշինք կնքելու համար: Միաժամանակ (որոշեցին) դեսպաններ ուղարկել Սիկիլիա, Դինոմենեսի որդի Գելոնի մոտ, նաև ուրիշների՝ Կերկիրա և Կրետե, Հելլադային օգնելու խնդրանքով: Մտածելով, որ եթե վտանգը վերաբերում է ամբողջ Հելլադային, ապա հնարավոր կլինի միավորել բոլոր հելլեններին՝ միասնաբար գործելու համար: Համարում էին, թե Գելոնի տերությունը շատ հզոր էր և գերազանցում էր բոլոր մյուս հելլենական պետություններին:

146. Այսպես որոշելուց հետո, հելլեները վերջ տվեցին իրար միջև եղած

թշնամանքին և, առաջին հերթին, լրտեսելու համար Ասիա ուղարկեցին երեք մարդու: Սրանք, գալով Սարդես, տեղեկություններ էին հավաքում արքայի զորքի մասին, բայց բացահայտվեցին: Հետևակի զորավարները նրանց տանջելով հարցաքննելուց հետո հրամայեցին տանել սպանելու: Նրանց արդեն մահ էր վիճակված: Քսերքսեսը, լսելով այդ մասին, հանդիմանեց զորավարներին այդ որոշման համար և, ուղարկելով իր թիկնապահներին, պատվիրեց դատապարտյալներին, եթե նրանք դեռ ողջ են, բերել իր առաջ: Թիկնապահները վրա հասան, երբ նրանք դեռ կենդանի էին, ուստի և նրանց բերեցին արքայի առաջ: Նրանց գալու նպատակը հարցնելուց հետո, արքան հրամայեց իր թիկնապահներին՝ տանել հելլեններին ամենուր և ցույց տալ նրանց պարսկական ամբողջ զորքը, հետևակ և հեծյալ, և երբ նրանք արդեն տեսնեն այն ամենը, ինչ կամենում են, այնժամ նրանց թույլ տալ անվնաս մեկնելու ուր որ ցանկանան:

147. Իր այս հրամանը նա բացատրում էր այսպես. եթե լրտեսները ապանվեին, ապա հելլենները նախապես չէին իմանալու, թե ինչքան մեծ է իր զորքը, իսկ երեք մարդու սպանությունը մեծ կորուստ չէր լինի թշնամու համար: Մինչդեռ, եթե նրանք վերադառնան Հելլադա, ապա հելլենները, իր կարծիքով, լսելով իր հզորության մասին, դեռևս զորքի արշավելուց առաջ, կհրաժարվեն իրենց բնորոշ այդ ազատությունից, որով և անհրաժեշտ չի լինի նրանց վրա արշավելը: Այս կարծիքը նման էր նրա մեկ այլ կարծիքին: Աբյդոսում եղած ժամանակ, Քսերքսեսը տեսնում է, թե հացահատիկ տանող նավերը անցնում են Հելլեսպոնտոսը, Պոնտոսից Էգիպտ և Պելոպոնեսոս հաց տանելով: Արքայի մերձավորները նկատելով, որ դրանք թշնամու նավերն են, պատրաստ էին գրավելու դրանք, և հայում էին արքային, սպասելով նրա հրամանին: Քսերքսեսը հարցնում է, թե այդ նավերը դեպի ո՞ւր են նավում. նրանք պատասխանում են. «Դեպի թշնամիները, ով տեր, և հաց են տանում»: Արքան պատասխանելով ասում է. «Չէ՞ որ մենք ևս նավում ենք դեպի այնտեղ, որտեղ և նրանք, և մեզ հետ, այլ հանդերձանքից բացի, տանում ենք նաև հաց: Արդ, նրանք ի՞նչ վնաս են տալիս մեզ համար հաց տանելով»:

148. Այսպիսով, լրտեսները, ամեն ինչ դիտելուց հետո, ազատ արձակվեցին և վերադարձան Եվրոպա: Իսկ Պարսկի դեմ միություն կնքած հելլեները, լրտեսներին ուղարկելուց հետո, դարձյալ հրեշտակներ ուղարկեցին Արգոս: Իսկ Արգոսում, ինչպես իրենք պատմում են, դրությունն այսպիսին էր: Նրանց սկզբից էլ հայտնի էր, թե բարբարոսը պատրաստվում է արշավելու Հելլադա: Այս մասին լսելով, ինչպես նաև իմանալով, որ հելլենները կփորձեն իրենց ևս պատերազմի հանել Պարսկի դեմ, դեսպաններ են ուղարկել Դելֆի, ասածուց հարցնելու, թե ինչպե՞ս վարվեն, որպեսզի ավելի լավ լինի: Քանզի բոլորովին վերջերս վեց հազար արգոսցիներ ապանվել էին լա-

կեդեմոնացիների և Անթեսանդրիդեսի որդի Կլեոմենեսի կողմից: Սակայն այս պատճառով արգոսցիները դեսպան են ուղարկել Դելֆի: Նրանց հարցումին Պյութիան այսպիսի պատասխան է տվել.

Դրկիցներին սիրելի, անմահներին սիրելի.
Ամուր պահիր նիզակը, և կմնես ապահով.
Գլուխդ աշխատիր պահպանել. մարմնին գլուխ է պահպանում:

Այսպիսին էր Պյութիայի պատասխանը: Այնուհետև հրեշտակները, գալով Արգոս, ներկայացան խորհրդարան և հայտնեցին իրենց հանձնարարվածը: Արգոսցիները պատասխանեցին, թե պատրաստ են կատարելու իրենցից պահանջվածը, պայմանով, որ լակեդեմոնացիների հետ կնքեն երեսնամյա հաշտություն և իրենք առաջնորդեն դաշնակից ամբողջ զորքերի կեսը, թեև արդարացիորեն ամբողջ ղեկավարությունը պետք է պատկանի իրենց, բայց իրենք բավարարվում են կիսով չափ մասնակցելով ղեկավարմանը:

149. Արգոսցիները պատմում են, թե իրենց խորհուրդն այսպես է պատասխանել, թեև պատգամախոսը նրանց արգելել էր դաշինք կնքել հելլենների հետ: Վախենալով հանդերձ պատգամախոսից, նրանք չանում էին երեսնամյա հաշտություն կնքել, որպեսզի իրենց որդիները կարողանային առնանալ այդ տարիների ընթացքում: Նրանք մտածում էին, որ առանց այդպիսի հաշտության, եթե իրենց պատահած աղետից հետո նաև պարտվեն պարսիկներից, ապա հետագայում կդառնան լակեդեմոնացիներին հպատակ: Այնժամ Սպարտայից ժամանած հրեշտակները խորհրդի այս որոշմանը պատասխանեցին, թե՝ հաշտության մասին իրենք կհաղորդեն լակեդեմոնացիների համայնքին. ինչ վերաբերում է ղեկավարության, ապա իրենց հանձնարարված է հայտարարել, որ իրենք երկու թագավոր ունեն, մինչդեռ արգոսցիները՝ միայն մեկ. հետևաբար, անկարելի է նրանցից մեկին զրկել ղեկավարությունից. սակայն ոչինչ չի խանգարի, եթե Արգոսի թագավորը հավասար ձայն ունենա իրենց երկու թագավորների հետ: Այս պատճառով էլ, ինչպես պատմում են արգոսցիները, իրենք չեն հանդուրժել սպարտացիների զորակցությունը և գերադասել են հպատակվել բարբարոսներին, քան հանձնվել լակեդեմոնացիներին. իսկ սպարտացի հրեշտակներին հրամայել են մինչև արևամուտը հեռանալ Արգոսյան երկրից. հակառակ դեպքում նրանց հետ կվարվեն որպես թշնամիների:

150. Այս մասին արգոսցիներն իրենք այսպես են պատմում: Բայց կա Հելլադայում տարածված մեկ այլ պատում ևս, թե՝ Քսերքսեսը դեռևս նախքան Հելլադայի վրա արշավանքն սկսելը, քարոզ է ուղարկել Արգոս: Գալով այստեղ, քարոզն ասել է. «Արգոսցիներ. Քսերքսես արքան այսպես է ասում ձեզ: Մենք, պարսիկներս, մեզ համարում ենք հետնորդները Պերսեսի[68], որի հայրը եղել է Դանայայի որդի Պերսեսը, իսկ մայրը՝ Կեփևսի դուստր Անդրո-

մեղան: Մենք, այսպիսով, զուցե և ձեր տոհմակիցներն ենք: Հետևաբար, վայել չէ, որ մենք արշավենք մեր նախնիների վրա, ոչ էլ դուք, ուրիշների հետ միանալով, հակառակվեք մեզ. ուստի և մնացեք տանը և հանգիստ նստեք: Եթե իմ մտադրությունը իրականանա, ապա ես ոչ ոքի այնպես չեմ պատժելու, ինչպես ձեզ»: Պատմում են, թե՝ լսելով այս, արգոսցիները մեծ կարևորություն տվեցին դրան և որոշեցին առայժմ ոչ մի խոստում չտալ (հելլեններին) և ոչինչ չպահանջել նրանցից: Միայն այն բանից հետո, երբ հելլենները նրանց առաջարկեցին դաշնակցության մասնակցել, այնժամ արգոսցիները պահանջեցին մասնակցել ղեկավարությանը, համոզված, որ լակեդեմոնացիները չեն գիջի: Այս պահանջը նրանց համար պատրվակ էր հանգիստ մնալու և չպատերազմելու համար:

151. Այս պատգամի հետ, ինչպես ասում են հելլեններից ոմանք, առնչվում է նաև հետևյալը, որը տեղի է ունեցել շատ տարիներ հետո: Պատահեց, որ երբ աթենական դեսպանները, Հիպպոնիկոսի որդի Կալլիասը և նրան ուղեկցողները, գնացել էին Մեմնոնյան կոչված Սուսա[69], մեկ այլ գործով նույն այդ ժամանակ արգոսցիները ևս դեսպաններ էին ուղարկել Սուսա, հարցնելու Արտաքսերքսեսին, Քսերքսեսի որդուն, թե՝ Քսերքսեսի հետ բարեկամությունը և կնքված դաշինքը կարո՞ղ է շարունակվել, ինչպես իրենք ևս ուզում են, թե՞ արքան իրենց թշնամի է համարում: Արտաքսերքսես արքան նրանց պատասխանել է, թե (բարեկամությունը) անպայման մնում է և թե ինքը ոչ մի քաղաք ավելի բարեկամական չի համարում, քան Արգոսը:

152. Արդյոք իրականում Քսերքսեսը քարոզ ուղարկե՞ց Արգոս այդ ամենն ասելու, և արգոսցիների հրեշտակները գնացի՞ն Սուսա Արտաքսերքսեսի բարեկամությունը հայցելու, ես չեմ կարող հաստատապես ասել, ոչ էլ ուզում եմ ժխտել այդ մասին արգոսցիների պատմածի ճշմարտությունը: Բայց այս մեկը ես լավ գիտեմ: Եթե բոլոր մարդիկ իրենց սեփական արատները տանեին շուկա, հարևանների (արատների) հետ փոխանակելու, ապա տեսնելով այլոց արատները, հանույթով նա տուն կտանեին իրենց սեփականը: Այդ իսկ պատճառով, արգոսցիների արարքը տակավին առավել ամոթալի չէ. իսկ ես պարտավոր եմ հաղորդելու այն ամենը, ինչ պատմում են, բայց այդ ամենին հավատալու, իհարկե, ես պարտավոր չեմ: Այս սկզբունքին ես կհետևեմ իմ ամբողջ պատմության մեջ: Պատմում են նույնիսկ, որ արգոսցիներն են Պարսկին հրավիրել Հելլադա, քանի որ պարտություն էին կրել լակեդեմոնացիների դեմ պատերազմում, և ամեն կերպ ուզում էին ազատվել իրենց ներկա դժբախտությունից:

153. Այս է իմ պատմությունը արգոսցիների մասին: Իսկ դաշնակիցների ուղարկած ուրիշ հրեշտակներ, որոնց թվում նաև լակեդեմոնացի Սյուագրոսը, ժամանեցին Սիկիլիա, Գելոնի հետ բանակցելու համար: Այս Գելոնի նախնին, որը բնակություն է հաստատել Գելեում, ծագում էր Տելոս կղզուց,

որը գտնվում է Տրիոպիոն հրվանդանի դիմաց: Երբ լինդիացիները՝ Հռոդոսից և Անտիֆեմոսը կառուցում էին Գելեն, նա շանտեսվեց: Հետագայում նրա հետնորդները դարձան ստորերկրյա դիցուհիների հիերոֆանտեսներ[70]: Նրանք այս պաշտոնն ստացան իրենց նախնիներից մեկի՝ Տելինեսի միջոցով, հետևյալ կերպ: Գելեի մի խումբ բնակիչներ, ապստամբության ընթացքում պարտություն կրելով, փախչում են և ապաստանում Գելեից վերև գտնվող Մակտորիոն քաղաքում: Այս փախստականներին Տելինեսը կարողացավ վերադարձնել Գելե, առանց ռազմական ուժի, իր հետ ունենալով միայն դիցուհիների սրբությունները: Թե նա ինչպե՞ս ձեռք էր բերել այդ սրբությունները, կամ արդյո՞ք ինքն էր դրանց պաշտամունքն առաջինը հաստատել, ես չեմ կարող ասել: Ինչևէ, այդ սրբությունների միջոցով նրան հաջողվեց վերադարձնել փախստականներին, պայմանով, որ իր հետնորդները պետք է դառնան այդ դիցուհիների հիերոֆանտեսները: Սակայն Տելինեսի մասին պատմածները լսելուց հետո, ինձ զարմանալի է թվում, թե ինչպե՞ս նա կարողացել է նման գործ կատարել: Քանզի նման գործեր, ես կարծում եմ, չի կարող ամեն մարդ կատարել, այլ միայն համարձակություն և վճռականություն ունեցողը: Մինչդեռ Տելինեսը, ինչպես պատմում են սիկիլիացիները, ունեցել է կանացի բնավորություն և եղել է շատ փափկակենցաղ:

154. Նա, այսպիսով, ստացել էր այդ պատիվը: Պանտարեսի որդի Կլեանդրոսի մահից հետո (նա յոթ տարի եղել էր Գելեի տիրանը և ապանվեր Գելեի բնակիչ Սաբյուլլոսի կողմից) միապետությունը ստանձնեց Հիպպոկրատեսը, Կլեանդրոսի եղբայրը: Երբ Հիպպոկրատեսը տիրան էր, Գելոնը, հիերոֆանտես Տելինեսի հետնորդը, շատերի, այդ թվում նաև Պատայկոսի որդի Այնեսիդեմոսի հետ, Հիպպոկրատեսի թիկնապահն էր: Նատ չանցած, իր արիության շնորհիվ նա դառնում է ամբողջ հեծելազորի պետ: Երբ Հիպպոկրատեսը պաշարել էր Կալլիպոլիսը, Նաքսոսը, Զանկլեն և Լեոնտինեն, բացի այդ նաև Սիրակուսան և բազմաթիվ այլ բարբարոսական քաղաքներ, այդ բոլոր պատերազմներում Գելոնն իրեն դրսևորեց իբրև փայլուն ռազմիկ: Նշված քաղաքներից միայն Սիրակուսան խուսափեց Հիպպոկրատեսին ստրկանալուց: Ելոռոս գետի մոտ հակատամարտում սիրակուսացիները թեև պարտվեցին, բայց նրանց փրկեցին կորնթացիները և կերկիրացիները. իսկ սիրակուսացիները փրկվեցին հաշտություն կնքելով, պայմանով, որ Կամարինան, որը հնուց պատկանում էր Սիրակուսային, տվեր Հիպպոկրատեսին:

155. Հիպպոկրատեսը ևս իր եղբայր Կլեանդրոսի իշխած տարիների չափ իշխելուց հետո, մահացավ Հյուբլե քաղաքի մոտ, սիկիլիացիների դեմ արշավելիս: Այնժամ այս Գելոնը հանդես եկավ Հիպպոկրատեսի որդիներ Եվկլիդեսին ու Կլեանդրոսին օգնելու պատրվակով, քանի որ Գելեի բնակիչները չէին կամենում հպատակվել նրանց. բայց իրականում, Գելեի բնակիչներին հակատամարտում հաղթելուց հետո, ինքը Գելոնը, հեռացնելով Հիպպոկրա-

տեսի որդիներին, վերցրեց իշխանությունը: Այս հաջողությունից հետո նա Կամմենե քաղաքից Սիրակուսա վերադարձրեց, այսպես կոչված, գամորոսներին[71], որոնց ժողովուրդը և կիլլիրյանները կոչված նրանց ստրուկները արտաքսել էին քաղաքից, և տիրացավ Սիրակուսային. քանզի Սիրակուսայի ժողովուրդը, երբ Գելոնը հայտնվեց քաղաքի առաջ, քաղաքի հետ հանձնվեց Գելոնին:

156. Սիրակուսային տիրանալուց հետո, Գելոնը արդեն մեծ նշանակություն չէր տալիս Գելեի վրա ունեցած իր իշխանությանը: Նա այդ քաղաքը հանձնեց իր եղբայր Հիերոնին, իսկ ինքը ամրացրեց Սիրակուսան և այդ քաղաքը իր համար դարձավ ամեն ինչ: Այն արագորեն սկսեց հզորանալ և աճել: Նախ նա Սիրակուսա փոխադրեց Կամարինայի բոլոր բնակիչներին, տալով նրանց քաղաքացու իրավունքներ, և այդ քաղաքը հիմնահատակ արեց: Այնուհետև Գելեի քաղաքացիների կեսից ավելիի հետ վարվեց նույնպես, ինչպես կամարինացիների հետ: Դրանից հետո, պաշարելով Սիկիլիայի մեգարացիներին, ստիպեց նրանց հանձնվել և Մեգարայի հարուստներին բնակեցրեց Սիրակուսայում, նրանց տալով քաղաքացիական իրավունքներ, թեև նրանք էին իր դեմ պատերազմ սկսել և նրանց մահապատիժ էր սպասում: Իսկ Մեգարայի ժողովրդին, որը բոլորովին չէր մասնակցել պատերազմին և ոչ մի չարիք չէր սպասում, նույնպես քշեց Սիրակուսա և հանձնեց (ստրկավաճառներին), Սիկիլիայից դուրս տանելու (և վաճառելու) համար: Նույն կերպ նա վարվեց նաև Սիկիլիայի եվբեյացիների հետ, նույնպիսի խորություն կատարելով: Այս երկու քաղաքների հետ նա այդպես վարվեց, քանի որ (հասարակ) ժողովրդին նա համարում էր առավել անցանկալի:

157. Այս կերպ Գելոնը դարձավ հզոր տիրան: Երբ հելլենների հրեշտակները ժամանեցին Սիրակուսա, ներկայացան նրան և այսպես ասացին. «Մեզ ուղարկել են լակեդեմոնացիները և նրանց դաշնակիցները, բարբարոսի դեմ քո օգնությունն ստանալու համար: Դու, անշուշտ, լսել ես արդեն, որ Պարսիկը մտադիր է Հելլեսպոնտոսը կամրջել և արևելքի ամբողջ զորքն Ասիայից արշավանքի առաջնորդել Հելլադայի վրա: Նա, Աթենքը գրավելու պատրվակի տակ, մտադիր է նվաճել ամբողջ Հելլադան: Իսկ դու մեծապես հզորացել ես և որպես Սիկիլիայի տերը, իշխում ես Հելլադայի ոչ փոքր մասի վրա: Արդ, օգնիր Հելլադայի ազատարարներին և ինքդ ևս դարձիր նրա ազատարարը: Ամբողջ Հելլադան միանալով, կարող է մեծ զորք հանել և հաջողությամբ կռվել թշնամու դեմ: Բայց եթե մեզանից ոմանք դավանանեն, իսկ ուրիշներ չկամենան մեզ օգնել, ապա Հելլադայի առողջ մասը փոքր կլինի, և արդեն կարելի է վախենալ ամբողջ Հելլադայի կործանման համար: Չկարծես, որ եթե Պարսիկը մեզ հաղթի, չի արշավելու քո դեմ. աշխատիր այդ վտանգից քեզ ազատվել: Քանզի մեզ օգնելով դու պաշտպանած կլի-

նես ինքդ քեզ: Լավ որոշում ընդունողին, սովորաբար, հաջողություն է սպասում»:

158. Նրանք այսպես խոսեցին. իսկ Գելոնը, խիստ զայրացած, այսպես ասաց. «Հելլադայի մարդիկ. դուք հանդգնել եք գալ այստեղ և լկտի խոսքերով առաջարկում եք զինակցել ձեզ հետ բարբարոսների դեմ: Անցյալում ես ևս խնդրել էի ձեզ համատեղ հարձակվել բարբարոս զորքերի վրա, երբ պատերազմ սկսել էի կարթագենացիների դեմ, և խնդրել էի ձեզ վրեժ լուծել եգեստայցիներից, Անմահանդրիդեսի որդի Դորիևսի սպանության համար[73]: Ես նույնիսկ խոստացա ձեզ օգնել ազատագրելու ձեզ մեծ շահույթներ բերող առևտրական նավահանգիստները: Իսկ դուք չկամեցաք ինձ օգնել և չուզեցիք վրեժ լուծել Դորիևսի սպանության համար: Եվ եթե ձեզ մնար, ապա այս ամբողջ երկիրը կլիներ բարբարոսների ձեռքում: Բայց մեր վիճակը լավ է և դառնում է առավել լավ: Այժմ, ահա, երբ պատերազմը եկել ու հասել է ձեզ, դուք հիշել եք Գելոնին: Թեև դուք ինձ անարգել եք, բայց ես չեմ նմանվի ձեզ, այլ պատրաստ եմ օգնելու: Ես կտրամադրեմ երկու հարյուր տրիերա, երկու բյուր հոպլիտ, երկու հազար հեծյալ, երկու հազար աղեղնավոր, երկու հազար պարսատիկավոր և երկու հազար թեթևազեն հեծյալ: Ես հանձն եմ առնում պարեն տրամադրել ամբողջ հելլենական զորքին մինչև պատերազմի ավարտը: Բայց այդ խոստանում եմ միայն այն պայմանով, որ ես ինքս պետք է լինեմ հելլենների զորավարը և առաջնորդը բարբարոսի դեմ պատերազմում: Այլապես ո՛չ ես կգամ, ո՛չ էլ ուրիշներին կուղարկեմ»:

159. Լսելով այս խոսքերը, Սյուագրոսը չդիմացավ և այսպես պատասխանեց. «Հիրավի դառնագին կոդբար Պելոպսյան Ագամեմնոնը, իմանալով, որ Գելոնը և սիրակուսցիները խլել են սպարտացիներից առաջնորդությունը: Մոռացիր այն, որ առաջնորդությունը քեզ կհանձնենք: Եթե ուզում ես Հելլադային օգնել, ապա իմացիր, որ պետք է լինես լակեդեմոնացիների ղեկավարության տակ. իսկ եթե չես համաձայնվում ենթարկվելու, ապա մի օգնիր մեզ»:

160. Գելոնը Սյուագրոսի թշնամական այս խոսքը լսելով, վերջին անգամ այսպես առաջարկեց. «Սպարտացի բարեկամ. մարդու լսած անարգական խոսքերը նրան զայրացնում են: Հակառակ քո լկտի խոսքերին, դու չես կարող ստիպել ինձ անվայել խոսքերով պատասխանել: Եթե դուք այդպես բարձր եք գնահատում գերագույն ղեկավարությունը, ապա ես պետք է առավել ևս պնդեմ իմ պայմանի վրա, քանի որ ես առաջնորդում եմ շատ ավելի մեծաքանակ զորք և նավատորմ, քան ձեզ: Բայց եթե իմ առաջարկը ձեզ համար այդքան անընդունելի է, ապա ես իմ նախկին պայմանից ինչ-որ չափով կզիջեմ: Եթե դուք կամենաք հետևակն առաջնորդել, ապա ես կմնամ նավատորմի առաջնորդը. իսկ եթե ձեզ հաճելի է առաջնորդել նավատորմը,

ապա ես կմնամ հետևակի առաջնորդ: Դուք կամ պետք է գոնեանք այս առաջարկից, կամ վերադառնաք (ձեր տուն), զրկված ինձ նման զինակցից»:

161. Գելոնն այսպես առաջարկեց. իսկ աթենացիների հրեշտակը, կանխելով լակեդեմոնացուն, այսպես պատասխանեց. «Ով արքա Սիրակուսայի. Հելլադան մեզ ուղարկել է քեզ մոտ ոչ թե առաջնորդ խնդրելու, այլ զորք: Իսկ դու չես ուզում զորք ուղարկել, եթե ինքդ չդառնաս Հելլադայի առաջնորդ և նամարտրեն կառչել ես զորքերի առաջնորդ դառնալու մտքից: Քանի դու դեռ ձգտում էիր հելլենական բոլոր զորքերի առաջնորդ դառնալ, մենք, աթենացիներս, հանգիստ էինք. քանզի գիտեինք, որ սպարտացին կարող է մեր երկուսի կողմից քեզ պատասխանել: Բայց այժմ, երբ զեղագույն ղեկավարության մասին քո հավակնությունները մերժվեցին և դու ձգտում ես դառնալ նավատորմի առաջնորդ, մենք չենք կարող չանհանգստանալ: Չէ՞ որ նավատորմի հրամանատարությունը մեզ է պատկանում, եթե լակեդեմոնացիները հրաժարվեն դրանից[74]: Եթե լակեդեմոնացիները կամենան մնալ նավատորմի առաջնորդ, մենք դրան հակառակ չենք, բայց ուրիշ ոչ ոքի թույլ չենք տա դառնալու նավատորմի առաջնորդ: Քանզի իզուր ենք հելլենական ամենահզոր ծովային պետություն դարձել, եթե մենք, աթենացիներս, լինելով հնագույն ժողովուրդ և միակը հելլեններից, որոնք եկվոր չեն, սիրակուսցիներին զիջենք ղեկավարությունը: Դեռ դյուցազնագիր Հոմերոսը պատմում է, թե (Աթենքից) Իլիոն է եկել քաջարի այրը[75], որպեսզի «զորքը պատրաստի մարտի համար» և բանակն առաջնորդի: Այս պատճառով էլ մեզ համար ամոթ չէ այդ մասին խոսելը»:

162. Իսկ Գելոնը պատասխանեց հետևյալ խոսքերով. «Աթենացի բարեկամ. ձեզ մոտ, երևի, իշխողներ շատ կան, բայց հնազանդվողներ՝ ոչ: Արդ, քանի որ դուք ոչ մի զիջում չեք անում, այլ պահանջում եք ունենալ ամեն ինչ, ապա շուտափույթ վերադարձեք տուն և հաղորդեցեք Հելլադային, որ նրա տարին զրկվել է գարունից»: Այս խոսքով նա ուզում էր ասել, թե ինչպես գարունն ակնհայտորեն տարվա ամենազեղեցիկ եղանակն է, այնպես էլ իր զորքը հելլենների զորքերի լավագույն մասն է: Հետևաբար, իր զինակցությունից զրկված Հելլադան նա նմանեցնում էր գարունից զրկված տարվա:

163. Գելոնի հետ այսպիսի բանակցություններ վարելուց հետո, հելլենների հրեշտակները նավերով ետ մեկնեցին: Իսկ Գելոնը թեև վախենում էր, որ հելլենները չեն կարողանա հաղթահարել բարբարոսին, բայց և ծանր ու անհանդուրժելի էր համարում, որ ինքը, լինելով Սիկիլիայի տերը, պետք է գնար Պելոպոնեսոս և ենթարկվեր լակեդեմոնացիներին: Ուստի և նա հրաժարվեց նախկին գործելակերպից և մեկ այլ ուղի ընտրեց: Երբ տեղեկացավ, որ Պարսիկը անցել է Հելլեսպոնտոսը, նա իսկույն ևեթ հիսուն թիականի երեք նավերով մեծ հարստությամբ և բարեկամական խոսքերով Դելֆի ուղարկեց Սկյութեսի որդի Կադմոսին, որը Կոս կղզուց էր: Կադմոսը

պետք է սպասեր պատերազմի վախճանին. եթե բարբարոսը հաղթեր, ապա հարստությունը պետք է հանձներ նրան, ինչպես նաև Գելոնին ենթակա քաղաքներից հող և ջուր տար (արքային). իսկ եթե հաղթեին հելլենները, ապա այդ ամենը պետք է ետ բերեր:

164. Այս Կադմոսը դեռևս այս դեպքերից առաջ իր հորից ժառանգել էր Կոս կղզու տիրությունը: Նրա իշխանությունը հզոր էր և կայուն: Թեև նրան ոչ մի վտանգ չէր սպառնում, արդարությունից մղված, նա իշխանությունը հանձնեց Կոս կղզու համայնքին և մեկնեց Սիկիլիա: Այստեղ նա սամոսցիներից վերցրեց Զանկլե քաղաքը, որը վերանվանեց Մեսսենայի, և բնակվեց այնտեղ: Անա այս Կադմոսին, որն այս կերպ հաստատվել էր Սիկիլիայում, Գելոնը ուղարկեց Դելֆի, նկատի ունենալով նրա արդարամտությունը, որի մասին համոզվել էր նաև ինքը՝ Գելոնը: Նրա արդար գործերից պակաս կարևոր չէ նաև այս մեկը: Հիրավի, իր տրամադրության տակ ունենալով մեծ զումար, որն իրեն վստահել էր Գելոնը, նա չցանկացավ այն յուրացնել, թեև այդ կարող էր, այլ երբ հելլենները հաղթեցին նավամարտում և Քսերքսեսը նահանջելով հեռացավ, նա վերադարձավ Սիկիլիա, իր հետ բերելով բոլոր գանձերը:

165. Սիկիլիայի բնակիչները պատմում են մեկ այլ բան ևս· իբր Գելոնը կամաձայնվեր օգնել հելլեններին, նույնիսկ լակեդեմոնացիների առաջնորդության տակ, եթե նույն այդ ժամանակ նրա դեմ հանդես չգար Հիմերայի տիրան Տերիլլոսը, Կրենիպպոսի որդին, որին Հիմերայից հալածել էր Ակրագաս քաղաքի թագավոր Թերոնը, Այնեսիդեմոսի որդին: Այդ ժամանակ Տերիլլոսը հավաքել էր երեսուն բյուր զորք փյունիկեցիներից, լիբիացիներից, իբերներից[76], լիգիյներից, ելիսկներից, սարդոներից և կյուռնոսներից[77]: Այս զորքերին առաջնորդում էր Անոնի որդի Ամիլկասը, կարթագենացիների թագավորը, որը, լինելով Տերիլլոսի բարեկամը, համաձայնվել էր մասնակցելու արշավանքին մասամբ այս պատճառով, բայց առավելապես Կրեսֆոնտեսի որդի Անտիոքոսի ջանքերի շնորհիվ, որը Հոնգիոնի տիրանն էր: Սա իր որդիներին պատանդ թողեց Ամիլկասի մոտ և նրան առաջնորդեց Սիկիլիա, օգնելու իր աներոջ: Քանզի Անտիոքոսը ամուսնացել էր Տերիլլոսի դուստր Կյուդիպպեի հետ: Այս պատճառով, իբր, Գելոնը չի կարողացել օգնել հելլեններին և իր գանձերը ուղարկել է Դելֆի:

166. Բացի այդ, պատմում են, թե Սիկիլիայում Գելոնը և Թերոնը հաղթել են կարթագենացի Ամիլկասին նույն այն օրը, երբ Սալամիսում հելլենները հաղթեցին Պարսկին: Այս Ամիլկասը, որը հոր կողմից կարթագենացի էր, իսկ մոր կողմից՝ սիրակուսացի, և իր արիության շնորհիվ դարձել էր կարթագենացիների թագավոր, հակառամարտում պարտվում է և, ինչպես ինքն հայտնի է, անհետանում: Քանզի չկարողացան նրան գտնել ո՛չ կենդանի, ո՛չ մեռյալ, թեև Գելոնը նրան ամենուր փնտրեց:

167. Իրենք, կարթագենացիները, պատմում են, և դա ճշմարիտ է թվում, թե բարբարոսները հելլեններին հետ Սիկիլիայում կռվել են արշալույսից մինչև ուշ երեկո. այսքան երկար է տևել հակատամարտը: Այդ ընթացքում Ամիլկասը մնացել էր զորակայանում և զոհաբերություն էր կատարում, մեծ խարույկի վրա կիզում ամբողջական մարմիններ՝ հակատամարտի բարենաչող ելքի համար: Բայց տեսնելով իր զորքերի փախուստը, քանի որ այդ պահին նա հեղում էր կատարում զոհերի վրա, նետվեց խարույկի մեջ: Այսպիսով, նա ամբողջապես կիզվել է և անհետացել: Ամիլկասին, որն անհետացել է այս կերպ, ինչպես պատմում են փյունիկեցիները, կամ էլ մեկ այլ կերպ, ինչպես պատմում են կարթագենացիները և սիրակուսացիները, զոհեր են մատուցում և նրա պատվին հուշարձաններ են կառուցել նրա գաղթավայրի բոլոր քաղաքներում, իսկ ամենախոշորը՝ Կարթագենում:

168. Սիկիլիայի մասին այսքան: Իսկ կերկիրացիները հրեշտակներին տվեցին մի պատասխան, բայց գործեցին հետևյալ կերպ: Նույն հրեշտակները, որոնք գնացել էին Սիկիլիա, ժամանեցին այստեղ և փորձեցին ստանալ նրանց օգնությունը, կրկնելով նույն խոսքերը, ինչ ասել էին Դելոնին: Կերկիրացիներն իսկույն խոստացան օգնություն ուղարկել նրանց, բացատրելով, թե իրենք չեն թողնի, որ Հելլադան կործանվի. քանզի եթե Հելլադան պարտվի, ապա հաջորդ օրն իսկ իրենց սպառնում է սարկություն: Հետևաբար, իրենց պարտքն է ամեն կերպ օգնել Հելլադային: Նրանք առերես այսպես գեղեցիկ պատասխանեցին: Բայց երբ օգնելու ժամանակը հասավ, նրանք փոխեցին իրենց մտադրությունը: Նրանք վաթսուն նավ պատրաստեցին և, հազիվ ծով դուրս եկած, մոտեցան Պելոպոնեսոսին և խարսխեցին Պյուլոսի և Տենարոսի առջև, լակեդեմոնական երկրում, սպասելով, թե ինչպես կվերջանա պատերազմը: Նրանք հույս չունեին, թե հելլենները կհաղթեն, այլ նամոզված էին, թե Պարսիկը մեծապես կգերազանցի և կտիրի ամբողջ Հելլադային: Նրանք այդպես վարվեցին կանխամտածված, որպեսզի հետագայում կարողանան Պարսկին ասել. «Ով արքա. թեև հելլենները փորձեցին մեզ մղել այս պատերազմին մասնակցելու, քանի որ մեր զորական ուժը և նավատորմը բավական մեծ է և մենք, աթենացիներից հետո, կարող ենք բոլորից շատ նավեր դուրս բերել, բայց մենք չուզեցինք քո դեմ կռվել և քեզ տհաճություն պատճառել»: Այս խոսքերով նրանք հույս ունեին մյուսներից առավել շահել: Իմ կարծիքով, այդ այդպես էլ եղել է: Հելլենների հանդեպ ևս նրանք գտել էին արդարացում, որից էլ օգտվեցին: Հիրավի, երբ հելլենները նրանց մեղադրեցին օգնություն չուղարկելու համար, նրանք պատասխանեցին, թե պատրաստել էին վաթսուն նավ, բայց հոսյան հողմերի պատճառով նավերը չկարողացան շրջանցել Մալեաս (հրվանդանը), ուստի և իրենք չեն կարողացել նավել Սալամիս, և թե վախենալուց չէ, որ իրենք չեն մասնակցել հավամարտին:

169. Այսպես նրանք մոլորեցրին աթենացիներին: Իսկ կրետացիները, երբ այդ առթիվ ուղարկված հելլեններն առաջարկեցին նրանց զինակցել, այսպես վարվեցին: Նրանք համատեղ դեսպաններ ուղարկեցին Դելֆի աստծուն հարցնելու՝ իրենց համար ավելի լավ կլինի՞ Հելլադային օգնել, թե՞ ոչ: Եվ Պյութիան պատասխանեց. «Հիմարներ. դուք դժգոհում եք այն պատճառով, որ Մենելաոսին ցույց տված ձեր օգնության համար Մինոսը ձեզ այնքան արցունք պատճառեց: Քանզի հելլենները չօգնեցին ձեզ Կամիկոսում նրա մահվան վրեժը լուծելու, թեև դուք օգնեցիք նրանց վրեժ լուծելու բարբարոսի կողմից Սպարտայից հափշտակված կնոջ համար»[78]: Լսելով (պատգամատուն) այս խոսքերը, կրետացիները հրաժարվեցին հելլեններին օգնելուց:

170. Քանզի, ըստ ավանդության, Մինոսը, Դեդալոսին փնտրելիս, ժամանել է Սիկանիա, որն այժմ կոչվում է Սիկիլիա, և սպանվել է բռնի ձևով: Ժամանակ անց, աստծու դրդմամբ, բոլոր կրետացիները, բացի Պոլիքնեի և Պրեսոսի բնակիչներից, մեծ զորքով արշավեցին Սիկանիա և հինգ տարի պաշարեցին Կամիկոս քաղաքը, որն իմ ժամանակ բնակեցնում էին ակրագանտցիները: Բայց, չկարողանալով այն գրավել, բայց և սովի պատճառով չկարողանալով այնտեղ մնալ, նրանք, ի վերջո, թողեցին ու վերադարձան: Երբ նավելիս նրանք հասան Յապյուգիայի ափերը, ուժեղ փոթորիկ բարձրացավ և նրանց նետեց ցամաքի վրա: Նրանց նավերը խորտակված լինելով, նրանք արդեն ոչ մի միջոց չունեին Կրետե վերադառնալու, ուստի և նրանք այնտեղ հիմնեցին Հյուրիա քաղաքը և բնակվեցին: Այսպիսով, նրանք անվանափոխվեցին և կրետացու փոխարեն դարձան Յապյուգիայի մեսապիաներ, և կղզեբնակից վերածվեցին մայր ցամաքի բնակչի. Հյուրիա քաղաքից հետո նրանք հիմնեցին նաև այլ բնակավայրեր, որոնք հետագայում տարանտինցիները, մեծ վնասներ կրելով, փորձեցին ավերել. դա եղել է հելլենների միջև ծագած ինձ հայտնի բոլոր բախումներից ամենաարյունալին[79], որի ժամանակ խիստ տուժել են ինչպես իրենք՝ տարանտինցիները, այնպես և հոեգիոնցիները. Հոեգիոնի քաղաքացիներից, որոնց Քոյրոսի որդի Միկիթոսը ստիպել էր գալ տարանտինցիների օգնության, սպանվեցին երեք հազար մարդ. իսկ իրենց՝ տարանտինցիների զոհերի թիվը հայտնի չէ: Այս Միկիթոսը եղել էր Անամսիլաոսի ծառան և կարգվել Հոեգիոնի կառավարիչ: Հետագայում, Հոեգիոնից վտարվելուց հետո, նա բնակվեց Արկադիայի Տեգեայում և բազմաթիվ արձաններ կանգնեցրեց Օլիմպիայում:

171. Հոեգիոնցիների և տարանտինցիների մասին իմ խոսքը սոսկ ընդմիջարկություն է այս պատմության մեջ: Իսկ ամայացած Կրետեում, ինչպես պատմում են պրեսյանները, հաստատվել են ուրիշ մարդիկ, առավելապես հելլեններ: Մինոսի մահից երեք սերունդ հետո ծագել է Տրոյական պատերազմը, որի ընթացքում կրետացիներն իրենց դրսևորեցին որպես Մենե-

լասոի ոչ հետին զինակիցներ: Իսկ Տրոյայից վերադառնալուց հետո կղզում ծագած սովը և մարդկանց ու անասունների համաճարակը երկրորդ անգամ ամայացրեց Կրետեն: Այժմ կղզում բնակվում է արդեն կրետական երկրորդ սերունդը, հին բնակիչների մնացորդների հետ: Անա այս մասին է, որ Պյութիան հիշեցրեց կրետացիներին և նրանց ետ պահեց հելլեններին օգնելուց, թեև կրետացիները ուզում էին օգնել[80]:

172. Առաջինը թեսալացիները հարեցին պարսիկներին, ոչ կամավոր, այլ, ինչպես նրանց գործերը ցույց են տալիս, հարկադրաբար. քանզի նրանց բոլորովին հաճելի չէին Ալեադյանների արարքները[81]: Նրանք, լսելով Եվրոպա արշավելու Պարսկի մտադրության մասին, անհապաղ սուրհանդակներ ուղարկեցին Իսթմոս, որտեղ հավաքվել էին Հելլադային հավատարիմ մնացած բոլոր քաղաքացիներից ընտրված հելլեն դեսպանները: Ժամանելով այնտեղ, թեսալացի սուրհանդակները նրանց առաջ այսպես խոսեցին. «Հելլեն մարդիկ. պետք է պահել Օլիմպոսյան կիրճը, որպեսզի Թեսալիան և համայն Հելլադան ապահով լինեն պատերազմից: Այժմ մենք պատրաստ ենք ձեզ հետ պաշտպանելու այդ կիրճը, բայց դուք ևս պետք է մեծ թվով զորք ուղարկեք. եթե չուղարկեք, ապա մենք կհանձնվենք Պարսկին: Քանզի հիշտ չի լինի, որ կործանվենք միայն մենք, մնացյալ Հելլադայից այսքան հեռու կռվելիս: Եթե չկամենաք մեզ օգնել, ապա դուք ոչ մի կերպ չեք կարող ստիպել մեզ միանալու ձեր դաշինքին: Քանզի անօգնականությունից հզոր բան չկա: Հակառակ դեպքում մենք ինքներս կփորձենք մեզ համար փրկության միջոց գտնել»:

173. Թեսալացիներն այսպես էին ասում: Իսկ հելլենները, դրան ի պատասխան, որոշեցին ծովի վրայով հետևակ զորք ուղարկել Թեսալիա՝ անցումը պահպանելու համար: Զորքը գումարվեց և նավարկեց Եվրիպոսի հեղուցով: Հասնելով Աֆայայի Ակռա (բնակավայրը), զորքը ափ ելավ և, լքելով նավերը, ուղղվեց դեպի Թեսալիա: Այնուհետև զորքը եկավ Թեմպե կիրճը, որը ձգվում է Պենեոս գետի հոսանքով, Օլիմպոս և Օսսա լեռների միջև, և ստորին Մակեդոնիայից տանում է Թեսալիա: Այստեղ բանակեցին հելլենները, որոնց ընդհանուր թիվը կազմում էր մեկ բյուր հոպլիտ: Նրանց միացավ նաև թեսալական հեծելազորը: Լակեդեմոնացիներին առաջնորդում էր Կարենոսի որդի Եվայնետոսը, ընտրված պոլեմարքոսներից մեկը, որը չէր պատկանում թագավորական տոհմին: Աթենացիների առաջնորդն էր Թեմիստոկլեսը, Նեոկլեսի որդին: Նրանք այնտեղ մնացին մի քանի օր: Քանզի մակեդոնացի Ալեքսանդրոսից, Ամյունտասի որդուց, հրեշտակներ եկան և խորհուրդ տվեցին հետանալ և չմնալ կիրճում, որպեսզի արշավող բանակի առաջ այնտեղ ոտնատակ չգնան. նրանք միաժամանակ նշում էին, թե թշնամու զորքը և նավատորմը մեծաթիվ է: Հելլենները համարելով, որ նրանց այս խորհուրդը օգտակար էր, ու համոզված, որ Մակեդոնացին ևս

իրենց հանդեպ բարեհաճ է, կատարեցին այդ խորհուրդը: Իմ կարծիքով, նրանց համոզողը եղել է վախը, քանի որ նրանք իմացել էին, թե Վերին Մակեդոնիայում կա ևս մեկ ուրիշ անցում դեպի Թեսալիա, պերրեբների երկրի միջով, Գոնենոս քաղաքի մոտ: Այստեղից էլ, իրոք, անցել է Քսերքսեսի զորքը[82]: Ուստի և հելլենները, դարձյալ նավ նստելով, վերադարձան Իսթմոս:

174. Թեսալիա կատարված այս արշավանքի ժամանակ արքան արդեն գտնվում էր Աբյուդոսում և պատրաստվում էր Ասիայից անցնել Եվրոպա: Իսկ դաշնակիցներից զրկված թեսալացիները կամովին և բացահայտ հարեցին պարսիկներին, և մեծապես օգտակար դարձան արքային:

175. Հելլենները, վերադառնալով Իսթմոս, խորհուրդ գումարեցին, թե՝ Ալեքսանդրոսի հաղորդածից հետո որտե՞ղ և ինչպե՞ս պատերազմ մղեն: Գերիշխեց այն կարծիքը, թե պետք է պահել Թերմոպիլեի կիրճը: Այս կիրճը, հիրավի, ավելի նեղ էր Թեսալիա տանող կիրճից և ավելի մոտ իրենց երկրին: Այն արահետը, որի պատճառով սպանվեցին Թերմոպիլեում կռված հելլենները, այդ ժամանակ նրանց անհայտ էր. նրա մասին հելլեններն իմացան միայն Թերմոպիլեում, տրաքինայցիներից: Հելլենները, անա, որոշեցին պահպանել այդ անցումը, բարբարոսի հանապարհը Հելլադա փակելու համար. իսկ նավատորմը պետք է ուղղվեր դեպի Արտեմիսիոն, Հիստիոտիս երկիրը: Այս երկու վայրերը մոտիկ էին, ուստի և հեշտ էր այս մի վայրում իմանալ, թե ի՞նչ է կատարվում մյուսում: Այդ երկրները տեղադրված են այսպես:

176. Նախ Արտեմիսիոնի մասին: Այստեղ Թրակական ընդարձակ ծովը վերածվում է նեղուցի, որը Սկիաթոս կղզին բաժանում է Մագնեսիայի ցամաքից: Իսկ Եվբեայի նեղուցին հաջորդում է Արտեմիսիոն ծովափը, որտեղ գտնվում է Արտեմիսի սրբավայրը: Այնուհետև՝ Տրաքինից Հելլադա տանող մուտքն է, որի ամենանեղ հատվածն ունի կես պլեթրոն լայնք[83]: Սակայն ամենանեղ վայրը գտնվում է ոչ թե այստեղ, այլ Թերմոպիլեի առջևում և հետևում: Այսպես, (Թերմոպիլեի) հետևում գտնվող Ալպենոյում հանապարհը միայն մեկ սայլի համար է. (Թերմոպիլեից) արևմուտք բարձրանում է անանցանելի և զառիթափ բարձր մի սար, որը ձգվում է մինչև Օյտե: Արևելքում հանապարհը հարում է անմիջապես ծովին և հանիններին: Այդ կիրճում կան ջերմուկներ[84], զոր տեղացիները կոչում են Քիտրոյ[85]. այնտեղ մոտիկ կառուցված է Հերակլեսի զոհասեղանը: Կիրճում կառուցված է պարիսպ, որը հնում ունեցել է դարպասներ: Այդ պարիսպը կառուցել են փոկայացիները, վախենալով թեսալացիներից, երբ վերջիններս, գալով Թեսպրոտիայից, հաստատվեցին Էոլիսում, որտեղ էլ նրանք բնակվում են ցայսօր: Թեսալացիները փորձեցին նվաճել նրանց, իսկ փոկայացիները պարիսպներով պաշտպանվեցին, միաժամանակ ջուրը շրջեցին դեպի կիրճը, որպեսզի այդ վայրում առաջացած ջրափոսերի պատճառով դառնա անանցանելի: Փոկայացի-

ներն այս բոլոր միջոցներին դիմեցին, որպեսզի թեսալացիները չկարողանան ներխուժել իրենց երկիրը: Հին պարսպը կառուցված է եղել շատ վաղուց և ժամանակի ընթացքում մեծ մասամբ քանդվել է: Հելլեններն այժմ որոշեցին վերականգնել պարիսպը և այդպիսով փակել բարբարոսի ճանապարհը դեպի Հելլադա : Այնտեղ, ճանապարհին մոտիկ, կա գյուղ, Ալպենոյ անունով: Հելլենները մտադիր էին այս գյուղից պարենավորվել:

177. Հելլեններն անա այս վայրերը ճարմար համարեցին իրենց մտադրության համար: Ամեն ինչ նախապես մտածելով, և նկատի ունենալով, որ բարբարոսները չեն կարողանա այստեղ գործի դնել իրենց բազմությունը, ոչ ևս հեծելազորը, հելլենները որոշեցին այս վայրում սպասել թշնամու հարձակմանը: Երբ հայտնի դարձավ, որ Պարսիկն արդեն Պիերիայում է, հելլենները ցրվեցին Իսթմոսից և նրանց մի մասը ցամաքով մեկնեց Թերմոպիլե, մյուս մասը՝ ծովով Արտեմիսիոն:

178. Այսպիսով, հելլենները շտապեցին թշնամու դեմ, յուրաքանչյուրն իր համար որոշված վայրը: Այդ նույն ժամանակ դելփյանները պատգամ էին հարցնում աստծուց, անաբեկված իրենց սեփական և Հելլադայի բախտի համար: Ասված պատասխանեց, թե՝ պետք է աղոթել հողմերին. քանզի հողմերը կլինեն Հելլադայի հզոր դաշնակիցները: Դելփյաններն իրենց ստացած այդ պատգամը նախ հաղորդեցին ազատ մնալ ցանկացող հելլեններին և նրանց, ովքեր սարսափում էին բարբարոսից: Այս պատգամը հաղորդելով, դելփյանները հավերժ երախտագիտություն վաստակեցին: Այնուհետև դելփյանները հողմերին ձոնված զոհասեղան կանգնեցրին Թյուրում, որտեղ գրանցվում է Կեփիսոսի դուստր Թյուրի սրբավայրը. տեղանքը կոչվել է նրա անունով: Դելփյաններն այնտեղ զոհաբերություն կատարեցին:

179. Այդ պատգամի պատճառով մինչև օրս էլ դելփյանները հողմերին սիրաշանելու զոհեր են մատուցում: Մինչ այդ Քսերքսեսի նավատորմը մեկնել էր Թերմեից և առավել արագընթաց տաս նավեր գնում էին առջևից ուղիղ դեպի Սկիաթոս: Այստեղ կանգնած էին հելլենական երեք պատերազմական նավեր, տրեզենյան, էգինյան և ատտիկյան: Նկատելով բարբարոսների նավերը, հելլեններն փախուստի դիմեցին:

180. Բարբարոսները, հետապնդելով տրեզենյան նավը, որը վարում էր Պրեքսինոսը, շտապով գերի վերցրին այն: Այնուհետև այդ նավի ամենագեղեցիկ ռազմիկին բերեցին նավի ցուցի մոտ և մորթեցին. նրանք ընդհանուրի կողմից զոհաբերեցին իրենց ձեռքն ընկած առաջին և ամենագեղեցիկ հելլենին: Այս մորթվածի անունն էր Լեոն. հավանաբար իր այդ անվան պատճառով էլ նա այդպես տուժեց[86]:

181. Իսկ էգինյան նավը, որի հավատեան էր Ասոնիդեսը, բարբարոսներին ինչ-որ հոգսեր պատճառեց: Նավի վրա գտնվողներից մեկը, Իսքենոսի որդի Գյուրիասը, այդ օրը մեծ քաջագործություն կատարեց: Թեև նավն

արդեն գրավված էր, բայց նա շարունակում էր կռվել, մինչև որ ամբողջովին չկարատվեց: Երբ նա արդեն տապալված էր, բայց չէր մեռած ու շնչում էր, նավերի վրա գտնվող պարսիկ զինվորները, հանուն նրա (ցուցաբերած) արիության, ամեն ինչ արեցին նրան փրկելու համար. նրանք զմուռս էին դնում նրա վերքերին և կապում դրանք վուշե նուրբ գործվածքից երիզներով: Եվ երբ նրանք վերադարձան իրենց զորատեղին, սկսեցին ամբողջ զորքին ցույց տալ նրան և նրա հետ լավագույնս վերաբերվել: Իսկ բոլոր մյուսներին, որոնք գերվել էին այդ նավի վրա, ստրկացրին:

182. Այսպիսով, անա, թշնամին գրավեց այս երկու նավերը: Իսկ երրորդ նավը, որի հավատեան էր աթենացի Փորմոսը, փախչելիս հասավ դեպի Պենեոսի գետաբերանը, և բարբարոսները գրավեցին այդ նավը, բայց մարդկանց՝ ոչ. քանզի երբ նավը խրվեց, աթենացիներն իսկույն ափ ելան և Թեսալիայի միջով վերադարձան Աթենք:

183. Նավերով Արտեմիսիոնում կանգնած հելլեններն այս ամենի մասին իմացան Սկիաթոսից տրված ջահային ազդանշանների միջոցով: Այդ իմանալով, նրանք անաբեկվեցին ու Եվբեայի բարձունքներում ցերեկային դիտորդներ թողնելով, Արտեմիսիոնից ետ նավեցին Քաղկիս՝ Եվրիպոսը պահպանելու համար: Իսկ բարբարոսների տասը նավերից երեքը հասան Մյուրմեքս[87] կոչված ստորջրյա խութին, որը գտնվում է Սկիաթոսի և Մագնեսիայի միջև: Բարբարոսներն այստեղ բերեցին քարե սյուն և այն կանգնեցրին խութի վրա[88]: Այնուհետև, երբ արդեն ընթացքը մաքրվել էր, ամբողջ նավատորմը նույնպես, արքայի մեկնելուց տասնմեկ օր հետո, հեռացավ Թերմեից: Սկյուրոսցի Պամմոնը պարսիկներին ցույց էր տվել, թե այդ հեղուցի ո՞ր մասում է գտնվում ստորջրյա խութը: Ամբողջ օրը նավելով, բարբարոսները հասան Մագնեսիա երկրի Սեպիաս վայրը, Կասթանեա քաղաքի և Սեպիաս հրվանդանի միջև:

184. Մինչև այս վայրը և Թերմոպիլե հասնելը, պարսկական զորքը ոչ մի վնաս չէր կրել. նրա ընդհանուր թիվը դեռևս այնքան էր, ինչքան այժմ ես ցույց կտամ: Ասիական հազար երկու հարյուր յոթ նավի վրա տարբեր ազգությունների պատկանող մարդկանց թիվը սկզբնապես կազմում էր քսանչորս բյուր և հազար, յուրաքանչյուր նավի համար երկու հարյուր մարդ հաշված: Այս նավերից յուրաքանչյուրի վրա, տեղաբնիկ ռազմիկներից բացի, կար նաև երեսուն մարդ՝ պարսիկ, մեդացի և սակ, որոնց ընդհանուր թիվը կազմում էր երեք բյուր վեց հազար երկու հարյուր տաս մարդ: Այս և այն առաջին թվին ես ավելացնում եմ նաև հիսուն թիանի նավերի անձնակազմերը՝ միջին հաշվով ութսուն մարդ յուրաքանչյուրի վրա: Իսկ այդ նավերի թիվն էր, ինչպես արդեն ասվել է, երեք հազար. հետևաբար, դրանց վրա կար քսանչորս բյուր մարդ: Այսպիսով, ասիական նավատորմի վրա գտնվող ռազմիկների ընդհանուր թիվն էր՝ հիսուն մեկ բյուր յոթ հազար վեց հարյուր տաս: Հետևակի

թիվն էր՝ հարյուր յոթանասուն բյուր, իսկ հեծյալների թիվը՝ ութսուն բյուր: Սրանց վրա ես կգումարեմ նաև ուղտերով արշավող արաբներին և ռազմակոչ նստած լիբիացիներին, որոնց ընդհանուր թիվն էր երկու բյուր: Արդ, եթե ի մի հաշվենք ծովային և ցամաքային ուժերին, ապա ընդհանուր գումարը կազմում է երկու հարյուր երեսուն մեկ բյուր յոթ հազար վեց հարյուր տաս մարդ[89]: Այստեղ ես թվարկեցի միայն Ասիայից դուրս բերված զորքերին, առանց նրանց հետևող բեռնատարներին և պարենատար նավերին ու սրանց վրա գտնվող մարդկանց:

185. Այս ընդհանուր թվին պետք է ավելացնել նաև այն զորքը, որ (արքան) Եվրոպայից տանում էր իր հետ. նրա քանակը ես կարող եմ ասել մոտավորապես: Թրակիայի և թրակական ծովափին մոտիկ գտնվող կղզիների հելլեները տրամադրել էին հարյուր քսան նավ, որոնց վրա պետք է լիներ երկու բյուր չորս հազար մարդ: Իսկ հետևակը, որը տրամադրել էին թրակացիները, պայոնները, էորտները, բոտտիները, Քաղկիդիկեի ցեղերը, բրյուգները, պիերյանները, մակեդոնները, պերրեբոյները, էնիանները, դոլոպները, մագնեսյանները, աքայացիները և թրակական ծովափի բոլոր բնակիչները, իմ ենթադրությամբ, կլինեին չորս երեսուն բյուր մարդ: Արդ, եթե այս բյուրերին գումարենք Ասիայից բերված բյուրերին, ապա կստացվի երկու հարյուր վաթսուն չորս բյուր հազար վեց հարյուր տաս ռազմունակ մարդ:

186. Այսքան մեծ էր (Քսերքսեսի) կռվող զորքի թիվը. իսկ զորքին ուղեկցող բեռնատարները, պարենատար թեթև նավերի և այլ փոխադրանավերի վրա գտնվողները, իմ կարծիքով, ոչ պակաս թիվ էին կազմում, գուցե և ավելի, քան բուն ռազմիկները: Այսուհանդերձ, ես սրանց ևս հաշվում եմ նույնքան, ինչքան և ռազմիկներին, ոչ ավելի, ոչ պակաս: Եթե այդպես է, ապա բեռնատարների թիվը կազմում է նույնքան բյուր, ինչքան և ռազմիկներինը: Այսպիսով, Դարեհի որդի Քսերքսեսը մինչև Սեպիաս և Թերմոպիլե բերել էր հինգ հարյուր քսան ութ բյուր երեք հազար երկու հարյուր քսան մարդ:

187. Այսպիսին է եղել Քսերքսեսի ամբողջ բանակի թիվը. բայց խոնարար կանանց, հարճերի ու ներքինիների թիվը ոչ ոք չի կարող ճշտապես ասել: Լծկանների և մյուս բեռնատար անասունների, ինչպես նաև հնդկական շների թիվը ևս ոչ ոք չի կարող ասել: Ուստի և ինձ բոլորովին զարմանալի չի թվում, որ առանձին գետերի հուները ցամաքել են. առավել զարմանալին այն է, որ այդքան բյուրերի համար բավարար պարեն հարվեց: Քանզի իմ հաշվումները ցույց են տալիս, որ եթե յուրաքանչյուր մարդ օրական ստանար մեկ քոյնիկս ցորեն և ուրիշ ոչինչ, ապա ամեն օր կծախսվեր տասնմեկ բյուր երեք հարյուր քառասուն մեդիմնոս ցորեն[90]. ես դեռ չեմ հաշվում կանանց, ներքինիներին բեռնատար անասուններին և շներին արվող պարենը: Այսքան բյուրավոր մարդկանց մեջ չկար առավել գեղադեմ և առավել փարքամ որևէ մեկը,

որն արժանի լիներ նման բանակի առաջնորդ դառնալու, քան ինքը՝ Քսերքսեսը:

188. (Պարսից) նավատորմը դուրս գալով ծով, նավարկեց ու հասավ Մագնեսիայի ծովափը, Կասպանեա քաղաքի և Սեպիաս հրվանդանի միջև: Տեղ հասած առաջին նավերը կանգնեցին հույզ ցամաքին մոտիկ, իսկ մյուսները խարսխեցին դրանցից հետ՝ ծովում: Քանի որ ծովափը նեղ էր, ուստի նավերը կանգնեցին ութ շարքի վրա, ցուցիները դեպի ծով: Գիշերը նրանք այդպես մնացին: Բայց առավոտյան, մինչ երկինքը պայծառ էր և ծովը խաղաղ, հանկարծ ծովն ալեկոծվեց և մեծ փոթորիկ ծագեց արևելյան անեղ քամուց, որն այդ վայրի բնակիչները կոչում են հելլեսպոնտոսյան: Բոլոր նրանք, ովքեր նկատեցին ուժեղացող քամին և որոնց կանգնած դիրքը հարմար էր այդ անելու, դեռ փոթորիկը չպայթած, կարողացան իրենց նավերը ցամաք քաշել և, այսպիսով, փրկվեցին իրենք և իրենց նավերը: Իսկ այն նավերը, որոնք փոթորկի ժամանակ ծովում էին, քամին մասամբ հետեց Պելիոնի Իպնոյ[91] կոչված ժայռերի վրա, մասամբ էլ դուրս բերեց ծովափ: Նավերի մի մասը խորտակվեց հենց այդ Սեպիասի մոտ, մյուս մասը դուրս հետվեց Մելիբոյա քաղաքի կամ Կասպանեայի մոտ: Հիրավի փոթորիկն անդիմադրելի էր:

189. Ջրույց կա, թե աքենացիներն աստծու պատգամով օգնության են կոչել Բորեասին[92]. բայց նրանք պատգամատուից մեկ ուրիշ խորհուրդ են ստացել՝ օգնության կոչել իրենց փեսային: Ըստ հունական ավանդության, Բորեասն ամուսնացել է ատտիկացի կնոջ՝ Օրիթիայի հետ, որը Երեքթեսի դուստրն էր: Այս ազգակցության պատճառով, ինչպես զրույցն է հաստատում, հելլենները Բորեասին համարում էին իրենց փեսան: Երբ (աքենացիները) արդեն խարսխել էին Եվբեայի Քաղկիսում, և երբ նկատեցին, թե փոթորիկ է բարձրանում, գուցե և դրանից էլ առաջ, սկսեցին զոհ մատուցել Բորեասին և Օրիթիային, խնդրելով նրանց խորտակել բարբարոսների նավերը, ինչպես և նախկինում՝ Աթոսի մոտ: Ի դեպ, արդյո՞ք այդ պատճառով Բորեասը հետվեց բարբարոսների խարսխած նավերի վրա, ես հաստատ ասել չեմ կարող: Ինչևէ, աքենացիները պատմում են, թե Բորեասը նախկինում նույնպես օգնել է իրենց, իսկ այժմ ևս փոթորիկ է հարուցել: Պատերազմից հետո տուն վերադառնալով, նրանք Իլիսոս գետի մոտ տաճար կառուցեցին Բորեասին:

190. Այդ փոթորկի ընթացքում խորտակվել են, ամենահամեստ հաշվումներով, ոչ պակաս քան չորս հարյուր նավ, անհամար մարդիկ և անհաշիվ հարստություն: Այսուհանդերձ, մագնեսիացի Ամֆինոկլեսին, Կրետինեսի որդուն, որը Սեպիասի մոտ հողակտոր ուներ, այս հավաքելությունը մեծ օգուտ տվեց: Նա մեծ քանակությամբ ոսկի և արծաթ գավաթներ ժողովեց, որ ծովը դուրս էր հետել ափ. նա գտավ նաև պարսից գանձերը և յուրացրեց բազում այլ հարստություն: Թեև այդ գտածոներով նա մեծապես հարստացավ,

բայց ճարտարությունը նրան երջանկություն չբերեց: Քանզի նրան տանջում էր այն աղետը, որ նա դարձել էր որդեսպան:

191. Խորտակված պարենատար և այլ նավերին թիվ չկար: Նավատորմի հրամանատարները անաբեկված, որ այդպիսի աղետից հետո թեսալացիները կնարձակվեն իրենց վրա, խորտակված նավերի բեկորներից բարձր պատնեշով շրջապատեցին իրենց. քանզի երեք օր փոքրիկ էր: Ի վերջո, մոգերը զոհեր մատուցեցին և կախարդական աղոթքներով աղերսեցին հողմերին: Նրանք զոհեր մատուցեցին նաև Թեթիսին[93] և նեռեուսիներին[94], որից հետո, չորրորդ օրը փոքրիկը խաղաղվեց. գուցե և փոքրիկը հանդարտվեց ինքնաբերաբար: Պարսիկները Թեթիսին զոհեր մատուցեցին, քանի որ նոնիացիներից լսել էին զրույց, թե Պելևսը[95] այստեղից է առևանգել Թեթիսին, և այդ պատճառով Սեպիասի ամբողջ ծովափը պատկանում է նրան և մյուս նեռեուսիներին:

192. Արդ, չորրորդ օրը փոքրիկը հանդարտվեց: Մինչ այդ փոքրկի սկսվելու երկրորդ օրն իսկ ցերեկային դիտորդները Եվրեայի բարձունքներից ցած վազելով, հելլեններին հաղորդեցին նավաբեկման բոլոր մանրամասները: Հելլենները, լսելով այդ, Պոսեյդոն փրկարարին աղոթք հղեցին և հեղում կատարեցին, և վերադարձան Արտեմիսիոն, հույս ունենալով, որ այնտեղ իրենց դիմադրող փոքրաթիվ նավեր կլինեն մնացած:

193. Այսպիսով, հելլենները երկրորդ անգամ եկան Արտեմիսիոն և խարիսխ նետեցին: Այդ օրվանից ցայսօր նրանք Պոսեյդոնին տվել են Փրկարար մականունը: Իսկ բարբարոսները, երբ քամին դադարեց և ալիքները խաղաղվեցին, իրենց նավերը իջեցրին ծով և նավեցին ծովափի ուղղությամբ: Շրջանցելով Մագնեսիայի հրվանդանը, նրանք ուղիղ դիմեցին դեպի ծովախորշը, որը տանում էր պագասների մոտ: Մագնեսիայի այս ծոցում կա մի վայր, որտեղ, ինչպես պատմում են, Յասոնը և նրա ուղեկիցները «Արգո» նավից, ոսկեգեղմի համար Կողխիսի էա վայրը ուղևորվելիս, Հերակլեսին ջրի ուղարկեցին և չտեսին. քանզի այստեղից ջուր վերցնելով, նրանք որոշել էին բաց ծով դուրս գալ: Այդ պատճառով էլ այդ վայրը կոչվում է Ափետե[96]: Անա այստեղ խարսխեցին Քսերքսեսի նավերը:

194. Պատահեց, որ այդ նավերից տասնմեկը մյուսներից ուշ մեկնեցին: Եվ անա, պատահաբար, նրանք Արտեմիսիոնում նկատեցին հելլենական նավերը: Բարբարոսները կարծելով, որ դրանք իրենց նավերն են, շարունակեցին նավարկումը և ընկան իրենց թշնամու նավերի միջև: Բարբարոսների այս նավերն առաջնորդում էր էոլիական Կյումեի հյուպարքոս Սանդոկեսը, Թամասիոսի որդին: Սրան անցյալում Դարեհը հրամայել էր խաչել այն պատճառով, որ իբրև դատավոր, հանուն փողի, անարդար վճիռ էր կայացրել: Երբ արդեն Սանդոկեսին խաչից կախել էին, Դարեհը միտք արեց և որոշեց, որ արքունի տան նրա մատուցած ծառայությունները գերակշռում են նրա մեղանչումից: Այսպես որոշելով, արքան մտածեց, որ ինքը շտապել է և խելամիտ չի գործել,

ուստի և հրամայեց ազատ արձակել նրան: Այսպիսով, Սանդոկեսը Դարեհի օրոք խուսափեց կործանումից, բայց երկրորդ անգամ, երբ ինքը նավարկելով մոտեցել էր հելլեններին, նրան չհաջողվեց խուսափել (կործանումից): Քանզի հելլենները, տեսնելով իրենց մոտեցող նավերը, հասկացան նրանց մոլորությունը և, հարձակվելով նրանց վրա, հեշտությամբ գերի վերցրին:

195. Այդ նավերից մեկի վրա գերի վերցվեց Արիդոլիսը, Կարիայի Ալաբանդա քաղաքի տիրանը, մեկ այլ նավի վրա՝ Դեմոնոսի որդի Պենթյուլոսը, պաֆոսցիների զորապետը, որը Պաֆոսից բերել էր տասներկու ռազմանավ: Այդ նավերից տասնմեկը նա կորցրեց Սեպիասի մոտ բարձրացած փոքրիկի ընթացքում. անվնաս մնացած միակ նավով նա դիմեց Արտեմիսիոն, որտեղ և հելլենները նրան գերի վերցրին: Նրանցից իմանալով այն ամենը, ինչ ուզում էին գիտենալ Քսերքսեսի բանակի մասին, հելլենները նրանց շղթայակապ ուղարկեցին Կորնթոսի պարանոց:

196. Արդ, բարբարոսների նավատորմը, բացի վերոհիշյալ տասնմեկ նավից, որոնց զորավարն էր Սանդոկեսը, հասավ Ափետայ: Իսկ Քսերքսեսը հետևակ զորքով անցավ Թեսալիայով ու Աքայայով, և երրորդ օրը հասավ մալիների երկիրը: Թեսալիայում Քսերքսեսը կազմակերպեց իր և թեսալական ձիերի մրցություն: Նա լսել էր, որ թեսալական հեծելազորը լավագույնն է Հելլադայում: Այստեղ հելլենական ձիերը, անշուշտ, շատ ետ մնացին: Թեսալիայի գետերից միայն Օնոքոնոս գետում ջուրը չբավարարեց զորքին խմելու համար. մինչդեռ Աքայայի գետերից նույնիսկ ամենախոշորի՝ Ապիդանոսի ջուրը հազիվ բավականացրեց:

197. Երբ Քսերքսեսը ժամանեց Աքայայի Ալոս վայրը, նրա ուղեցույցները, ցանկանալով ամեն ինչ հաղորդել նրան, պատմեցին տեղական զրույցը Լափյուստյան Զևսի մասին, թե ինչպես Էոլոսի որդի Աթամասը, Ինոյի հետ, մտածում են սպանել Փրիքսոսին, և թե ինչպես հետագայում աքայացիները, ատածու հրամանով, նրա հետնորդներին այսպիսի պատիժներ սահմանեցին. այդ տոնմի ավագին արգելեցին մտնել ժողովրդի տուն, որի մուտքը պահպանում էին իրենք: Գրիտանեյոնն աքայացիները կոչում են ժողովրդի տուն: Եթե նա մտնի այնտեղ՝ ապա չի կարող այնտեղից դուրս գալ, մինչև չզոհաբերվի: Այնուհետև (պատմեցին), թե զոհաբերվելու դատապարտվածներից շատերն անաբեկված փախել են ուրիշ երկիր. բայց երբ ժամանակ անց նրանք վերադառնային ու բռնվեին, ապա նրանց կառաջնորդեին գրիտանեյոն: (Ուղեցույցները) պատմեցին, թե ինչպես նրան զարդարում էին պսակներով, և հանդիսավորությամբ տանում զոհաբերելու: Այսպիսին էր Փրիքսոսի որդի Կյուտիսսորոսի հետնորդների ճակատագիրը հետևյալ պատճառով: Այս Կյուտիսսորոսը Կողխիսի էայից եկել էր ճիշտ այն ժամանակ, երբ աքայացիները, պատգամատան հրամանով, մաքրում էին իրենց երկիրը և պատրաստվում զոհաբերելու Աթամասին, էոլոսի որդուն, իբրև քավության զոհ: Կյուտիսսո-

ռասը եկավ ու փրկեց Աբամասին, դրանով իսկ իր հետնորդների վրա հարուցեց ատծու զայրույթը: Երբ Քսերքսեսը ժամանեց այդ սրբազան պուրակը և լսեց այդ զրույցը, և՛ ինքը չմտավ այնտեղ, և՛ զորին արգելեց մտնել: Նա միաժամանակ հարգանք մատուցեց Աբամասի հետնորդներին և սրբավայրին:

198. Այսպես վարվեց Քսերքսեսը Թեսալիայում և Ամայայում: Այստեղից նա առաջ շարժվեց դեպի Մալիս երկիրը ծովախորշի ափով, որտեղ ամբողջ օրը տեղի է ունենում մակընթացություն և տեղատվություն: Այս ծովախորշի շուրջ տարածվում է մի դաշտավայր, մերթ լայն, մերթ շատ նեղ: Այդ վայրը շրջափակված է բարձր և անանցանելի լեռներով, որոնք կոչվում են Տրաքինյան ժայռեր և ներփակում են ամբողջ Մալիս երկիրը: Ամայայից եկողի համար ծովախորշի առաջին քաղաքը կլինի Անտիկյուրան, որի մոտ ծով է թափվում Ենիյանների երկրից հոսող Սպերքիոս գետը: Այս գետից քսան ասպարեզ հեռավորությամբ հոսում է մեկ ուրիշ գետ, Դյուրաս կոչված, որը, համանայն զրույցի, իբր առաջացել է այրվող Հերակլեսին օգնելու համար: Իսկ այս մեկից դարձյալ քսան ասպարեզ հեռավորությամբ հոսում է մի երրորդ գետ, անունը Մելաս:

199. Տրաքիս քաղաքը գտնվում է այս Մելաս գետից հինգ ասպարեզ հեռու: Այս վայրը, ուր կառուցված է Տրաքիս քաղաքը, ամենալայն տարածությունն է այդ երկրում լեռներից մինչև ծովը: Այստեղ դաշտավայրի լայնքը երկու բյուր և երկու հազար պլեթրոն է: Տրաքինյան երկիրը շրջափակող լեռներում, Տրաքիս քաղաքից դեպի հարավ, կա կիրճ, որով, լեռան ստորոտի երկարությամբ, հոսում է Ասոպոս գետը:

200. Ասոպոսից հարավ կա նաև ոչ խոշոր մեկ այլ գետ՝ Փոյնիկսը, որը բխելով այս լեռներից, թափվում է Ասոպոս գետի մեջ: Այստեղ, Փոյնիկս գետի մոտ, ամենանեղ հատվածն է: Այստեղ հանապարհով միայն մեկ ձիակառք կարող է անցնել: Փոյնիկս գետից մինչև Թերմոպիլե տասնհինգ ասպարեզ է: Փոյնիկս գետի և Թերմոպիլեի միջև գտնվում է Անթելա կոչված գյուղը, որի մոտով հոսելուց հետո, Ասոպոսը թափվում է ծով: Այս գյուղի շուրջ կա ընդարձակ տարածություն, որտեղ Ամփիկտիոնյան Դեմետրայի պատվին հիմնված է սրբավայր, ուր ամփիկտիոնների նստատեղեր կան և կառուցված է տաճար ի պատիվ իր իսկ Ամփիկտիոնի[97]:

201. Արդ, Քսերքսես արքան բանակեց Մալիս երկրի Տրաքիս քաղաքի մոտ, իսկ հելլենները՝ անցավայրում: Հելլենների մեծ մասն այդ վայրը անվանում է Թերմոպիլե, իսկ տեղի բնակիչները և հարևանները՝ Պիլե: Անա այս վայրերում կողմերը բանակեցին: Քսերքսեսի ձեռքի տակ էր հյուսիսում գտնվող ամբողջ երկիրը, մինչև Տրաքիս, իսկ հելլենները զբաղեցնում էին անցումից հարավ գտնվող հունական մայր ցամաքի հատվածները:

202. Այս վայրում Պարսկին սպասող հելլենները հետևյալներն էին. երբ

հարյուր սպարտացի հոպլիտներ, հազար տեգեացիներ ու մանտինեացիներ՝ յուրաքանչյուր քաղաքից հինգ հարյուրական, հարյուրական մարդ Արկադիայի Օրքոմենեից և հազար մարդ մնացյալ Արկադիայից. այս արկադիացիներից բացի կային չորս հարյուր կորնթացիներ, երկու հարյուր մարդ Փլիուսից և ութսուն՝ Միկենեից: Այս մարդիկ եկել էին Պելոպոնեսոսից: Իսկ Բեոտիայից եկել էին յոթ հարյուր թեսպիացիներ և չորս հարյուր թեբեցիներ:

203. Բացի այդ, օգնության հրավիրվել էին օպունտյան լոկրացիների ամբողջ ուժերը և հազար փոկայացիներ: Քանզի հելլեններն իրենք էին հրավիրել նրանց (օգնության), բանբերների միջոցով հայտնելով, թե ժամանածները մնացյալների նախակարապետներն են, իսկ մյուս դաշնակիցները սպասվում են օր օրի, և թե ծովը ապահով է, քանի որ այն պահպանում են աթենացիները, էգինացիները և բոլոր նրանք, ովքեր կարգված են նավատորմում: Քանզի Հելլադա արշավողը ոչ թե ասված է, այլ մարդ, և չի եղել ու չի լինելու ոչ մի մահկանացու, որին կյանքում որևէ դժբախտություն չպատահի. առավել մեծերին առավել մեծ դժբախտություններ են պատահում: Այդպես կլինի նաև (այժմ) իրենց դեմ արշավողի հետ, որը մահկանացու է և հուսախաբ է լինելու: Այս լսելով, լոկրացիները և փոկայացիները շտապեցին Տրաքիս, հելլեններին օգնության:

204. Սրանք բոլորն ունեին իրենց զորավարները, յուրաքանչյուր քաղաքն առանձին. բայց բոլորից առավել հիանալի էր ամբողջ զորքի հրամանատար, լակեդեմոնացի Լեոնիդասը, Անաքսանդրիդեսի որդին, հետնորդը Լեոնի, Եվրիկրատիդեսի, Անաքսանդրոսի, Եվրիկրատեսի, Պոլիդորոսի, Ալկամենեսի, Տելեկլոսի, Արքելաոսի, Հեգեսիլաոսի, Դորյուսսոսի, Լեոբատեսի, Եքեստրատոսի, Ագիսի, Եվրիսթենեսի, Արիստոդեմոսի, Արիստոմաքոսի, Կլեոդայոսի, Հյուլլոսի, Հերակլեսի: Սպարտայում նա թագավորական իշխանությունն ստացել էր անսպասելի կերպով:

205. Լեոնիդասն ուներ երկու ավագ եղբայր՝ Կլեոմենես և Դորիևս. ուստի երբեք չէր մտածում թագավորական իշխանության մասին: Բայց Կլեոմենեսը մահացավ առանց արու ժառանգ թողնելու, իսկ Դորիևսը նույնպես կենդանի չէր, այլ նախապես մահացել էր Սիկիլիայում. ուստի և Լեոնիդասը դարձավ թագավոր, քանի որ տարիքով ավելի մեծ էր Անաքսանդրիդեսի որդի Կլեոմբրոտոսից, մանավանդ, որ ամուսնացել էր Կլեոմենեսի աղջկա հետ: Այս Լեոնիդասն էր եկել Թերմոպիլե, ընտրելով, ըստ սովորության, երեք հարյուր մարդ, որոնք արդեն որդիներ ունեին: Նա իր հետ վերցրեց նաև իմ արդեն թվարկածս թեբեցիներին, որոնց զորավարն էր Եվրիմաքոսի որդի Լեոնտիադեսը: Լեոնիդասը շտապել էր բոլոր հելլեններից հատկապես թեբեցիներին իր հետ վերցնել, քանի որ նրանց վրա մեծապես կասկածում էին, թե՝ համակրում են պարսիկներին: Լեոնիդասը նրանց հրավիրեց պատերազմի, կամենալով իմանալ, թե նրանք կուղարկե՞ն արդյոք իրենց մարդկանց, թե՞ բացահայտորեն

կմերժեն հելլեններին զինակցությունը: Թերեցիները, թեև այլ մտադրություն ունեին, բայց ուղարկեցին (իրենց մարդկանց):

206. Լեոնիդասի գլխավորած այս չոկատը սպարտացիները ուղարկեցին մյուսներից առաջ, որպեսզի մյուս դաշնակիցներն այդ տեսնելով, նույնպես դուրս գային կռվի և չհարեին պարսիկներին, նկատելով, որ սպարտացիները դանդաղում են: Այս դեպքերը կատարվում էին Կառնեյա տոների[98] նախօրյակին: Սպարտացիները որոշել էին տոնախմբության ավարտից հետո, Սպարտայում միայն պահակազոր թողնելով, ամբողջ զորքով շտապել Լեոնիդասին օգնության: Այսպես մտադիր էին անել նաև մյուս դաշնակիցները, քանի որ այս դեպքերին համընկնում էր օլիմպիադան: Հիրավի, ոչ ոք չէր ենթադրում, որ մարտը Թերմոպիլեում այդքան արագ կավարտվեր, ուստի և նրանք ուղարկել էին միայն առաջապահ չոկատներին:

207. Նրանք որոշել էին այսպես անել: Բայց երբ արքան մոտեցավ կիրճին, հելլեններին ասը պատեց և նրանք խորհուրդ գումարեցին նահանջելու մասին: Բոլոր պելոպոնեսցիներն առաջարկում էին վերադառնալ Պելոպոնեսոս և պաշտպանել Իսթմոսը: Փոկայացիները և լոկրացիներն այդ առաջարկի պատճառով ընկան հուսահատության մեջ. ուստի և Լեոնիդասը որոշեց մնալ այնտեղ և սուրհանդակ ուղարկել քաղաքները, օգնության խնդրանքով, քանի որ իրենց զորքերը չափազանց քիչ էին մեդական ամբոխին դիմադրելու համար:

208. Այս խորհրդակցության ընթացքում Քսերքսեսը հեծյալ լրտես ուղարկեց, իմանալու համար թշնամու քանակը և մտադրությունը: Քանզի դեռևս Թեսալիայում գտնված ժամանակ (արքան) տեղեկացել էր, թե այստեղ գումարվել է փոքրաթիվ զորք, որին գլխավորում են լակեդեմոնացիները և Հերակլյաններից սերող Լեոնիդասը: Երբ այս հեծյալը մոտեցավ բանակատեղի, նա չկարողացավ դիտել ամբողջ բանակատեղին, քանզի ճնարավոր չէր տեսնել նրանց, ովքեր գտնվում էին նոր վերակառուցված պարսպից ներս: Նա կարողացավ նկատել միայն պարսպի առաջ գենքով պահակ կանգնածներին: Պատահեց, որ այդ պահին պարսպից դուրս (պահակ) կարգված էին լակեդեմոնացիները: Այստեղ նա տեսավ ոմանց մարզվելիս, մյուսներին՝ մազերը հարդարելիս: Նա զարմանքով դիտեց այդ և փորձեց որոշել նրանց թիվը: Ամեն ինչ մանրամասն տեղեկանալուց հետո, նա հանգիստ վերադարձավ, քանի որ նրան ոչ ոք ուշադրություն չդարձրեց: Այսպիսով, նա վերադարձավ և իր բոլոր տեսածները պատմեց Քսերքսեսին:

209. Նրա պատմածը լսելով, Քսերքսեսը չէր կարողանում հասկանալ կատարվածը. այն, թե սպարտացիները իրոք այդպես էին պատրաստվում ամբողջ եռանդով մահու և կենաց կռիվ մղելու: Սպարտացիների վարվելակերպը նրան ծիծաղելի էր թվում. ուստի նա իր մոտ կանչեց Արիստոնի որդի Դեմարատոսին, որը գտնվում էր իր զորաբանակում: Երբ Դեմարատոսը

հայտնվեց, Քսերքսեսը նրան ամեն ինչ մի քան միջոցն ճարցրեց, հասկանալու համար լակեդեմոնացիների վարքագծի էությունը: Դեմարատոսը այսպես պատասխանեց. «Ես այս մարդկանց մասին քեզ պատմել եմ դեռևս այն ժամանակ, երբ դու պատրաստվում էիր արշավել Հելլադա. բայց դու ծիծաղեցիր ինձ վրա, երբ ես նախազգուշացրի քեզ, թե ինչպիսի ելք կարող է ունենալ քո արշավանքը: Ինձ համար, ով արքա, շատ ծանր է քեզ հակառակ ճշմարտություն ասելը: Բայց այժմ լսիր դու ինձ: Այդ մարդիկ եկել են այստեղ մեր դեմ կռվելու այս անցավայրի համար, և նրանք պատրաստվում են կռվի: Նրանց բարքերն այսպիսի են. մահու և կենաց կռվի պատրաստվելիս, նրանք հարդարում են իրենց գլուխները: Այժմ իմացիր, ով արքա. եթե դու հաղթես այս մարդկանց և նրանց, ովքեր մնացել են Սպարտայում, ապա աշխարհում ոչ մի ժողովուրդ արդեն չի համարձակվի քեզ դիմադրել: Այժմ դու դեմ հանդիման կանգնած ես Հելլադայի ամենաարքայական տոհմի և ամենաքաջ մարդկանց առաջ»: Այս խոսքերը Քսերքսեսին խիստ անհավատալի թվացին, և նա դարձյալ հարցրեց, թե այդքան փոքրաթիվ մարդիկ ինչպե՞ս կարող են դիմադրել իր զորքերին: Դեմարատոսը պատասխանեց. «Ով արքա. ինձ հետ վարվիր որպես խաբեբայի, եթե այս ամենի ելքը չլինի այնպես, ինչպես ես ասացի»:

210. Բայց այս խոսքերը չհամոզեցին Քսերքսեսին: Նա չորս օր սպասեց, հուսալով, որ սպարտացիները, այնուամենայնիվ, փախուստի կդիմեն: Բայց հինգերորդ օրը, քանի որ հելլեններն չէին փախչում, այլ, ինչպես իրեն թվում էր, անամոթ հիմարությամբ շարունակում էին մնալ, զայրացած արքան նրանց դեմ ուղարկեց մեդացիներին և կիսսիացիներին, նրանց հրամայելով կենդանի գերի վերցնել հելլեններին և առաջնորդել իր առաջ: Մեդացիները թափով հետվեցին հելլեններին վրա. հարձակվելիս նրանցից շատերն ընկնում էին, ընկնողներին փոխարինում էին նորերը, բայց չէին նահանջում, թեև ծանր կորուստներ էին կրում: Այնժամ բոլորին, հատկապես իրենց արքային, պարզ դարձավ, որ թեև իրենք մեծաթիվ մարդիկ ունեն, բայց նրանց մոտ քիչ են այրերը: Իսկ այդ հակամարտությունը տևեց ամբողջ օրը:

211. Ուժեղ հակահարված ստանալով, մեդացիները ստիպված նահանջեցին: Նրանց հաջորդեցին Հյուդառնեսի գլխավորած պարսիկները, որոնց արքան անվանում էր անմահներ: Կարծում էին, թե սրանք կկարողանային հեշտությամբ հաղթել: Բայց երբ սրանք ևս հելլենների հետ մարտի բռնվեցին, ոչինչ առավել, քան մեդացիները, չկարողացան անել, այլ արդյունքը եղավ նույնը, քանի որ նրանք ստիպված էին նեղ վայրում կռվել, այն էլ ավելի կարճ նիզակներով, քան հելլենները. այդ վայրում նրանց չէր օգնում նաև թվաքանակը: Լակեդեմոնացիները կռվում էին արժանի կերպով և նմանորեն, կռվելու հմտություն չունեցողների դեմ: Լակեդեմոնացիներն իրենց թիկունքն էին դարձնում և ձևացնում, թե իբր փախչում են. իսկ բարբարոս-

ները, այդ տեսնելով, աղմուկ աղաղակով ընկնում էին նրանց ետևից: Սպարտացիները, երբ թշնամին հասնում էր իրենց ետևից, դեմքով շրջվում էին դեպի բարբարոսները և կոտորում անթիվ պարսիկների: Ընդ որում, այդ ընթացքում ընկնում էին նաև փոքր թվով սպարտացիներ: Քանի որ պարսիկները չկարողացան գրավել անցումը, թեև հարձակվում էին և՛ առաջնիկ չոկատներով, և՛ բազում այլ եղանակներով, ապա արանք ևս ստիպված հանձնեցին:

212. Պատմում են, թե այս հարձակումների ժամանակ արքան, հակատամարտի ընթացքը դիտելիս, անաբեկված իր զորքի համար, երեք անգամ վեր է ցատկել իր գահից: Այսպես նրանք կռվեցին այդ օրը: Հաջորդ օրը ևս բարբարոսներին ոչ մի հաջողություն չբերեց: Նրանք հարձակվեցին հուսալով, որ (հելլեները) փոքրաթիվ լինելով, բոլորը կվիրավորվեն և ի վիճակի չեն լինի դիմադրելու: Մինչդեռ հելլենները կանգնած էին չոկատներով և ըստ ցեղերի, և յուրաքանչյուրն իր տեղում կռվում էր, բացի փոկայացիներից, որոնք ուղարկված էին լեռան վրա արահետը պահպանելու: Պարսիկները, տեսնելով, որ ոչինչ չի փոխվում նախորդ օրվա համեմատությամբ, դարձյալ նահանջեցին:

213. Արքան արդեն շվարած էր, չիմանալով այսուհետև ի՞նչ անել: Այնժամ նրա մոտ է գալիս զրուցելու ոմն մալիսցի, Եվրիդեմոսի որդի Եպիալտեսը: Արքայից մեծ պարգև ստանալու ակնկալությամբ, նա Քսերքսեսին հայտնեց այն կածանի մասին, որը լեռան վրայով տանում է Թերմոպիլե, և դրանով իսկ կործանեց այնտեղ մնացած հելլեններին: Հետագայում Եպիալտեսը, լակեդեմոնացիների աքսից, փախավ Թեսալիա. այդ փախստականի գլխի համար Պիլեում հավաքված ամփիկտիոնները, պիլագորները[99], դրամական պարգև խոստացան: Ժամանակ անց նա վերադարձավ Անտիկյուրա. նրան սպանեց Աթենադեսը Տրաքիս քաղաքից: Այս Աթենադեսը Եպիալտեսին սպանել է մեկ այլ պատճառով, որի մասին ես կպատմեմ հետո[100]: Այսուհանդերձ, լակեդեմոնացիները նրան պակաս չմեծարեցին:

214. Այսպես է հետագայում մահացել Եպիալտեսը: Բայց կա նաև մեկ այլ պատմություն, թե իբր Փանագորասի որդի Օնետեսը Կարիստոսից և Կորյուդալլոսը Անտիկյուրայից այդ նույն առաջարկով դիմել են արքային և լեռան վրայով առաջնորդել պարսիկներին: Իսկ ես բոլորովին չեմ հավատում դրան: Նախ պետք է նկատի առնել, որ հելլենների պիլագորները դրամական պարգև խոստացան ոչ թե Օնետեսի և Կորյուդալլոսի գլխի համար, այլ արքայիսցի Եպիալտեսի. իսկ նրանք ճշմարտությունը լավ գիտեին: Երկրորդ՝ մենք գիտենք, որ Եպիալտեսը փախել էր բուն իսկ այդ պատճառով: Օնետեսը, անշուշտ, գիտեր այդ կածանի գոյության մասին, թեև Մալիս քաղաքից չէր, քանի որ այդ երկրում նա երկար ապրել էր: Հիրավի, Եպիալ-

տեսն է պարսիկներին առաջնորդել լեռնային այդ կածանով, և ես նրան եմ վերագրում հանցանքը:

215. Քսերքսեսը հաճույքով ընդունեց Եպիալտեսի առաջարկը և, խիստ ուրախացած, ուղարկեց Հյուդառնեսին և նրա գլխավորած զորագունդը: Նրանք բանակատեղից դուրս եկան այն ժամին, երբ հրագներն են վառում: Այս կածանը փնտրել ու գտել են տեղաբնիկ մալիսցիները և դրա միջով թեսսալացիներին առաջնորդել փոկայացիների դեմ. իսկ այդ ժամանակ փոկայացիները, մուտքը պարսպով փակած լինելով, իրենց ապահով էին զգում հարձակումից: Կածանը հայտնաբերելուց հետո մալիսցիներն այն երբեք չէին օգտագործել:

216. Իսկ կածանն այսպիսին է. այն սկսում է Ասոպոս գետից, որը հոսում է լեռան կիրճի միջով. այստեղ լեռն ու կածանը կրում են նույն Անոպայա անունը: Այս Անոպայան ձգվում է լեռնալանջով և վերջանում է Ալպենոս քաղաքի մոտ, որը լոկրացիների առաջին քաղաքն է Մալիսի կողմից, որտեղ գտնվում են, այսպես կոչված, Մելամպյուգոս ժայռը և Կերկոպների կացարանը, անցման ամենանեղ մասում:

217. Այսպիսին է այդ կածանը: Ասոպոս գետն անցնելով, պարսիկներն ամբողջ գիշեր գնացին այդ կածանով: Նրանց աջ կողմում բարձրանում էին Օյտե, իսկ ձախ կողմում Տրաքինյան լեռները: Լուսաբացին նրանք հասել էին լեռան գագաթին: Լեռան այս հատվածում, ինչպես արդեն ասել եմ, կանգնած էր հազար փոկայացի հոպլիտների պահակազորը, պաշտպանելու իրենց երկիրը և պահպանելու այդ կածանը: Ներքևում անցումը պահպանում էին նրանք, ում մասին արդեն ասել եմ. իսկ լեռների վրայով ձգվող կածանի պաշտպանությունը փոկայացիները հոժարակամ հանձնել էին Լեոնիդասին:

218. Իսկ փոկայացիներն ահա թե ինչպես նկատեցին, որ (պարսիկները) արդեն բարձրացել են գագաթը: Պարսիկները անկասկած բարձրացան լեռը, քանի որ այն ամբողջովին ծածկված էր կաղնիներով: Խաղաղ լռություն էր տիրում, երբ հանկարծ ուժեղ ճարճատյուն լսվեց. այն, ինքնին, ոտքերի տակ ընկած ճյուղերից էր: Փոկայացիները վեր թռան և զենքեր հագան. այդ պահին էլ հայտնվեցին բարբարոսները: Իրենց առաջ տեսնելով արդեն զենքերով պատրաստ կանգնած մարդկանց, նրանք խիստ զարմացան. քանզի նրանք չէին սպասում այստեղ հանդիպել որևէ դիմադրության, բայց զորքի պատահեցին: Այնժամ Հյուդառնեսը, երկյուղ կրելով, որ այս փոկայացիները լակեդեմոնացիներ են, հարցրեց Եպիալտեսին, թե այս զորքը որտեղի՞ց է: Ճիշտն իմանալուց հետո, նա պարսիկներին դասավորեց մարտի: Փոկայացիները, նետերի խիտ տարափի տակ, կարծելով, որ պարսիկները հարձակվում են ուղիղ իրենց վրա, փախան դեպի լեռնագագաթը, դատապարտելով իրենց կործանման: Փոկայացիներն այդպես էին մտածում. իսկ պարսիկնե-

ը, Եպիալտեսի և Հյուպատեսի առաջնորդությամբ, ոչ մի ուշադրություն չդարձրին փոկայացիների վրա, այլ շտապեցին իջնել լեռն ի վար:

219. Թերմոպիլեում գտնվող հելլեններին առավոտյան սպասվող աղետի մասին առաջինը հայտնեց գուշակ Մեգիստիասը, զննելով զոհաբերված անասունի փորոտիքը: Այնուհետև փախստականներ ևս եկան և հայտնեցին պարսիկների շրջանցելու մասին: Նրանք այս հայտնեցին դեռևս գիշերվա ընթացքում: Երրորդ, արդեն լուսաբացին, ցերեկային պահակները վազքով իջան լեռից (և նույնը հաղորդեցին): Այնժամ հելլեններն խորհուրդ գումարեցին, բայց նրանց կարծիքները բաժանվեցին: Ոմանք պնդում էին, որ չպետք է լքել դիրքերը. մյուսներ՝ հակառակում էին: Դրանից հետո զորքը պառակտվեց: Մի մասը հեռացավ և, ցրվելով, յուրաքանչյուրը վերադարձավ իր քաղաքը. մյուս մասը, Լեոնիդասի հետ, որոշեց մնալ տեղում:

220. Պատմում են նաև, թե իբր ինքը Լեոնիդասն է նրանց ետ ուղարկել, նրանց կործանումից փրկելու մտահոգությամբ. բայց իր և իր սպարտացիների համար նա անվայել էր համարում լքել այն վայրը, որի պահպանության համար իրենք ուղարկված են եղել: Ես առավելապես հակված եմ այս տեսակետին: Լեոնիդասը տեսնելով, որ դաշնակիցները դժգոհ են և չեն կամենում իր հետ վտանգվել, հրամայեց նրանց հեռանալ. իսկ իր համար հեռանալը համարեց անպատվաբեր: Այնտեղ մնալով, նա մեծ փառքի կարժանանար, իսկ Սպարտայի բարգավաճությունը չէր նվազի: Քանզի երբ դեռևս այս պատերազմի սկզբում սպարտացիները պատգամ հարցրին պատերազմի ելքի մասին, Պյութիան նրանց պատասխանեց, թե կամ Լակեդեմոնը կվերվի բարբարոսների կողմից, կամ նրա թագավորը կկործանվի: Այս պատգամը Պյութիան հայտնել է հետևյալ վեցոտնյա տողերով.

Ձեզ եմ ասում, լայնածավալ Սպարտայի բնակիչներ.
Կամ ձեր հզոր մեծ քաղաքը պարսիկները
Կվերածեն մոխրակույտի, կամ երկիրը Լակեդեմոնի
Պետք է ողբա Հերակլեսի տոհմի սպանված թագավորին:
Չի թշնամուն չի զսպելու ոչ զորեղի, ոչ առյուծի
Ուժը: Ինքն է նրան սատար: Չի դադարի ոխը նրա,
Մինչև մեկն ու մեկին խլած չկործանի:

Լեոնիդասը, հավանաբար, այս բոլորի մասին մտածելով, և կամենալով ամբողջ փառքը վերագրել միայն սպարտացիներին, ինքն է դաշնակիցներին ետ ուղարկել, և ոչ թե նրանք, տարակարծիք լինելով, խուսափել են կարգը և հեռացել:

221. Այս առթիվ ոչ պակաս կարևոր փաստ է նաև հետևյալը: Ինչպես հայտնի է, Լեոնիդասը ակառնանիացի գուշակ Մեգիստիասին, որն ուղեկցում էր զորքին և որը համարվում էր Մելամպուսի[101] հետնորդ, և որը զոհաբերված անասունի փորոտիքների հիման վրա գուշակել էր Լեոնիդասի

ապագա բախտը, ետ էր ուղարկել, որպեսզի նա ևս չկործանվի իր հետ: Բայց Մեգիստիասն ինքը, հակառակ հրամանին, չի հեռացել, այլ ետ է ուղարկել իր հետ արշավանքին մասնակցող իր միածին որդուն:

222. Այսպիսով, ետ ուղարկված դաշնակիցները հնազանդվեցին Լեոնիդասին և մեկնեցին: Լակեդեմոնացիների հետ մնացին միայն թեսպիացիները և թեբեցիները: Թեբեցիները մնացել էին դժկամությամբ և ակամայից, քանի որ Լեոնիդասը նրանց պահում էր իբրև պատանդ. մինչդեռ թեսպիացիները մնացին հոժարությամբ և չուզեցին լքել Լեոնիդասին ու նրա զորքերին: Նրանք մնացին և մահացան սպարտացիների հետ: Նրանց զորավարն էր Դիադրոմեսի որդի Դեմոֆիլոսը:

223. Քսերքսեսը, ծագող արևին զոհեր մատուցելուց հետո, որոշ ժամանակ սպասեց, և երբ արդեն շուկայի մարդաշատ դառնալու ժամն էր, սկսեց իր հարձակումը. այդպիսին էր Եպիալտեսի տված խորհուրդը: Քանզի լեռից իջնելն ավելի արագ է կատարվում և ուղին ավելի կարճ է, քան շրջանցիկ ճանապարհը և վերելքը[102]: Այսպիսով, Քսերքսեսի բարբարոսներն սկսեցին մոտենալ. իսկ Լեոնիդասի հելլեններն, դուրս գալով մահվան գուպարի, արդեն նախկին վայրից շատ առաջ շարժվեցին մինչև այնտեղ, ուր անցումը լայնանում էր: Նախորդ օրերին նրանք պահպանում էին պաշտպանական պարիսպը, իսկ մի մասն էլ ճանաչել էր ամենանեղ հատվածը և այնտեղ էր կռվում: Բայց այս անգամ հելլեններն արդեն մարտի հետվեցին անցումից դուրս, և այդ մարտի ընթացքում սպանվեցին մեծ թվով բարբարոսներ: Պարսից ռազմաշարքերի ետև կանգնած հրամանատարները մտրակներով հարվածում և միշտ առաջ էին մղում իրենց զինվորներին: (Պարսիկներից) շատերն ընկնում էին ծովը և այնտեղ կորչում. բայց ավելի շատեր կենդանի ոտնակոխ էին լինում յուրայինների կողմից: Սպանվողներին ոչ ոք ուշադրություն չէր դարձնում: Մինչդեռ հելլեններն, լավ իմանալով, որ իրենք սպանվելու են լեռը շրջանցած պարսիկների կողմից, ցուցաբերում էին մեծագույն արիություն բարբարոսների դեմ, խելահեղորեն առհամարհելով (մահը):

224. Սպարտացիների մեծ մասի նիզակներն արդեն չարդվել էին, և նրանք սկսեցին պարսիկներին խոցել իրենց դաշույններով: Այս մարտում քաջաբար կռվելիս ընկավ նաև Լեոնիդասը. նրա հետ նաև ուրիշ ակնավոր սպարտացիներ, որոնց անունները, իբրև արժանավոր ռազմիկների, ես իմացա: Ես իմացա նաև բոլոր երեք հարյուր սպարտացիների անունները[103]: Այնտեղ ընկան նաև մեծ թվով անվանի պարսիկներ. նրանց թվում նաև Դարեհի երկու որդիները՝ Աբրոկոմեսը և Հյուպերանթեսը, որոնց Դարեհից ծնել էր Արտանեսի դուստր Փրատագունեն: Այս Արտանեսը Դարեհ արքայի եղբայրն էր, Արսամեսի որդի Հյուստասպեսի որդին: Իր աղջկա հետ ուրեմն

օժիտ նա Դարեհին ավել էր իր ամբողջ ունեցվածքը, քանի որ Փրատագունեն իր միակ զավակն էր:

225. Այսպես, Քսերքսեսի երկու եղբայրներն ընկան այդ մարտում: Լեոնիդասի դիակի շուրջ բուռն ձեռնամարտ սկսվեց պարսիկների և լակեդեմոնացիների միջև, մինչև ի վերջո քաջարի հելլեններն իրենց թշնամու ձեռքից, շուտ անգամ փախուստի մատնելով պարսիկներին: Այսպես մարտը շարունակվում էր, մինչև որ հասան Եպիալտեսի հետ եղողները: Նկատելով նրանց գալը, հելլեններն փոխեցին իրենց կռվելու եղանակը: Նրանք սկսեցին նահանջել անցման նեղ հատվածը և, շրջանցելով պարիսպը, բոլորը միասին, բացի թեբեցիներից, դիրքավորվեցին բլրի վրա: Այս բլուրը գտնվում է մուտքի մոտ, որտեղ այժմ կանգնած է քարե առյուծը ի պատիվ Լեոնիդասի: Այստեղ նրանք պաշտպանվում էին թրերով, ում որ թուր մնացել էր, ձեռքերով և առամներով, մինչև որ բարբարոսները նրանց ծածկեցին նետերով. իսկ ուրիշներ, հալածելով հելլեններին, նրանց վրա փուլ տվեցին պարիսպը, մի մասն էլ շրջապատեց նրանց բոլոր կողմերից:

226. Թեև բոլոր լակեդեմոնացիներն ու թեսպիացիներն իրենց այսպես են պահել. բայց բոլորից առավել արիաբար կռվել է սպարտացի Դիենեկեսը: Ասում են, թե մեդացիների դեմ մարտն սկսելուց առաջ նա ոմն տրաքիսցուց լսել է, որ եթե բարբարոսներն արձակեն իրենց աղեղները, ապա նետաալրիների շատությունից արևը կծածկվի. այնքան մեծաթիվ է թշնամու բազմությունը: Բայց Դիենեկեսը, ինչպես պատմում են, առանց ահաբեկվելու մեդացիների բազմությունից, անհոգաբար պատասխանում է. «Մեր տրաքիսցի բարեկամը մեզ լավ լուրեր է հաղորդում: Եթե մեդացիները ծածկեն արևը, ապա մենք ստվերի տակ կկռվենք»:

227. Պատմում են, թե լակեդեմոնացի Դիենեկեսը այսպիսի հիշարժան այլ խոսքեր ևս ասել է: Այնուհետև առավել քաջություն ցուցաբերել են երկու եղբայրներ՝ Օրսիփանտոսի որդիներ Ալֆեոսը և Մարոնը: Իսկ թեսպիացիներից առավել աչքի ընկել է Արմատիդեսի որդի Դիթիրամբոսը:

228. Նրանք բոլորը թաղվել են այնտեղ, ուր ընկել են կռվելիս: Նրանց, ինչպես և մյուսների համար, ովքեր ընկել էին նախապես, երբ դեռ Լեոնիդասը ետ չէր ուղարկել (դաշնակիցներին), կանգնեցված է արձանագրություն, հետևյալ բառերով.

> Երբ հարյուր բյուրի գիմաց ասա կռվեցին քաջաբար
> Պելոպոնեսս երկրից այրեր ընդամենը չորս հազար:

Այս արձանագրությունը փորագրված է բոլորի համար. իսկ լակեդեմոնացիների համար առանձին կա հետևյալ արձանագրությունը.

> Անցորդ, ավետիր Լակեդեմոնի մարդկանց, թե՝ այստեղ
> Պառկել ենք հավատարիմ նրանց պատվերին:

Այս արձանագրությունը՝ լակեդեմոնացիների պատվին. իսկ գուշակի պատվին կա հետևյալ (արձանագրությունը).

> Դամբանն է այս փառաբանված Մեգիստիոսի տեսանող,
> Ում մեդերն են այստեղ սպանել Սպերքիոս գետն անցնելով.
> Տեսանողն այդ քաջ տեսնելով իր վախճանը մոտակա,
> Չկամեցավ մենակ թողնել թագավորին սպարտական:

Այս արձանագրությունները և հուշասյուները, բացի գուշակ Մեգիստիոսի արձանագրությունից, նրանց պատվին կանգնեցրել են ամֆիկտիոնները: Իսկ գուշակ Մեգիստիոսի պատվին արձանագրությունը փորագրել է Լեոպրեպեսի որդի Սիմոնիդեսը, ի հիշատակ իրենց մտերմության[104]:

229. Պատմում են, թե այս երեք հարյուրից երկու մարդ՝ Եվրիտոսը և Արիստոդեմոսը, հնարավորություն ունեին երկուսով փրկվելու, եթե համերաշխ լինեին իրար և վերադառնային Սպարտա: Լեոնիդասը նրանց թույլ էր տվել հեռանալ բանակատեղից, և նրանք աչքի ծանր հիվանդությամբ պառկած էին Ալպենիում: Նրանք, ծայրահեղ դեպքում, մնալով մյուսների մոտ, կարող էին մեռնել իրար հետ: Թեև նրանք այս երկու հնարավորություններն ունեին, բայց չհամաձայնվեցին և մնացին տարակարծիք: Եվրիտոսը լսելով պարսիկների շրջանցելը, իր զենքերը պահանջեց և, դրանք կապելով, հրամայեց իր իլոտին առաջնորդել իրեն կռվողների մոտ: Իլոտը նրան (Թերմոպիլե) բերելուց հետո փախավ, իսկ Եվրիտոսը, ընկնելով թեժ մարտի մեջ, սպանվեց: Մինչդեռ Արիստոդեմոսի հոգին երկչոտեց և նա մնաց կենդանի: Եթե վատառոյզ Արիստոդեմոսը մենակ վերադառնար Սպարտա, կամ երկուսով միասին վերադառնային, ինձ թվում է, թե սպարտացիները չէին զայրանա նրա վրա: Բայց այժմ, երբ նրանցից մեկը սպանվել էր, իսկ մյուսը՝ նույն պատճառաբանությամբ չէր ցանկացել մեռնել, սպարտացիները, բնականաբար, պետք է խստագույնս զայրանային Արիստոդեմոսի վրա:

230. Ոմանք պատմում են, թե այսպիսի հանգամանքներում էլ Արիստոդեմոսը փրկված վերադարձել է Սպարտա. ուրիշներ պատմում են, թե բանակատեղից նա ուղարկվել էր որպես հրեշտակ, և կարող էր հասնել մարտի սկզբում, բայց նա դիտավորյալ դանդաղել է ճանապարհին և փրկել իր կյանքը. իսկ նրա հետ ուղարկված մյուս հրեշտակը հասցրեց մասնակցել մարտին և զոհվեց:

231. Երբ Արիստոդեմոսը վերադարձավ Լակեդեմոն, նրան սպասում էր պատվազրկում և ամոթանք: Պատվազրկումն այն էր, որ ոչ մի սպարտացի նրան կրակ չէր տալիս և չէր խոսում նրա հետ. իսկ ամոթանքն այն էր, որ նրան անվանեցին վախկոտ Արիստոդեմոս:

232. Բայց Արիստոդեմոսը Պլատեայի ճակատամարտում կարողացավ լիովին վերացնել իր վրա ծանրացող մեղադրանքը: Պատմում են, թե այդ երեք հարյուրից կենդանի է մնացել մեկ ուրիշը ևս, Պանտիթես անունով, որին

սուրճանդակ էին ուղարկել Թեսալիա: Սպարտա վերադառնալուց նրան ևս սպասում էր անարգանք, որի պատճառով էլ նա իրեն կախել է:

233. Իսկ թեբեցիները, որոնց զորավարն էր Լեոնտիադեսը, հանգամանքների բերումով ստիպված եղան որոշ ժամանակ հելլեհների հետ հարմատեղ կռվել արքայի զորքերի դեմ: Բայց տեսնելով, որ պարսիկները սկսում են գերակշռել և Լեոնիդասի ռազմիկներին հշում են դեպի բլուրը, թեբեցիները անջատվեցին սպարտացիներից և, ձեռքերը առաջ պարզելով, դիմեցին դեպի բարբարոսները, միաժամանակ ասելով ճշմարտությունը, թե՝ իրենք պարսից կողմնակից են և առաջիններից են եղել, որոնք արքային հող ու ջուր են տվել: Իրենք հարկադրաբար եկել են Թերմոպիլե և մեղավոր չեն արքային հասցված վնասի համար: Այսպիսի հավաստիացումներով նրանք փրկվեցին. նրանց ասածի ճշմարտությունը վկայեցին թեսալացիները: Այսուհանդերձ, նրանց բախտը ամեն ինչում չէ, որ բերեց: Երբ մոտեցան բարբարոսներին, նրանցից ոմանց պարսիկները սպանեցին, իսկ մեծ մասին, առանձնապես Լեոնտիադեսին, Քսերքսեսի հրամանով խարանադրոշմեցին արքունի դրոշմներով[105]: Լեոնտիադեսի որդի Եվրիմաքոսին հետագայում պլատեացիները սպանեցին, երբ սա, շորս հարյուր թեբեցիների գլուխն անցած, գրավել էր նրանց քաղաքը:

234. Այսպես կռվեցին հելլեհները Թերմոպիլեում: Այնժամ Քսերքսեսն իր մոտ կանչեց Դեմարատոսին և սկսեց այսպես հարցնել. «Դեմարատոս. դու առաքինի մարդ ես. դրա ապացույցը քո ճշմարտախոսությունն է. քանզի ամեն ինչ կատարվեց քո ասածի համաձայն: Այժմ ասա ինձ. ինչքա՞ն են մնացած լակեդեմոնացիները և նրանցից քանի՞սն են այսպես քաջ. թե՞ նրանք բոլորն այսպիսի՞ հեն»: Դեմարատոսը պատասխանեց. «Ով արքա. լակեդեմոնացիների ընդհանուր թիվը մեծ է և նրանց քաղաքները շատ են. իսկ այն, ինչ ուզում ես իմանալ, կիմանաս: Լակեդեմոնում կա Սպարտա քաղաքը, շուրջ ութ հազար այրերով, որոնք բոլորը նման են այստեղ կռվածներին: Մնացյալ լակեդեմոնացիները թեև սրանց նման չեն, բայց ևս քաջարի են»: Քսերքսեսը այնժամ ասաց. «Դեմարատոս. ինչպե՞ս մենք հեշտագույնս հաղթենք այդ մարդկանց. բացատրիր ինձ: Քանզի դու եղել ես նրանց թագավորը և գիտես նրանց մտքի բոլոր ծալքերը»:

235. Իսկ նա պատասխանեց. «Ով արքա. եթե դու իսկապես հարցնում ես իմ խորհուրդը, ապա ճիշտ կլինի, որ ես քեզ տամ լավագույն խորհուրդը: Դու քո նավատորմից երեք հարյուր ռազմանավ ուղարկիր Լակոնիա: Այդ երկրի դիմաց կա մի կղզի, անունը Կյութերա: Այդ կղզու մասին Քիլոնը, մեր իմաստնագույն այրերից մեկը, ասել է, թե՝ սպարտացիների համար ավելի լավ կլիներ, եթե այն սուզվեր ծովի տակ և ոչ թե բարձրանար չրից վեր: Քիլոնը մշտապես այդ կղզու կողմից սպասում էր ինչ-որ հարձակում, որպիսին ես քեզ այժմ կառաջարկեմ: Նա ոչ թե քո արշավանքն էր

կանխատեսել, այլ վախենում էր այստեղից կատարվելիք որևէ թշնամական հարձակումից: Անա այս կղզուց հարձակվելով, քո նավերը թող ամի մեջ պահեն լակեդեմոնացիներին: Եթե լակեդեմոնացիները զբաղված լինեն ամիջապես իրենց երկրի սահմաններում մղվող պատերազմով, ապա դու երբեմ վախ չունենաս, թե երբ քո հետևակն սկսի նվաճել մնացյալ Հելլադան, սպարտացիները օգնություն կհասցնեն հելլեհներին: Իսկ երբ դու արդեն հպատակեցնես մնացյալ Հելլադան, ապա քո միակ հակառակորդը կմնա բուլացած Լակոնիան: Արդ, եթե դու իմ այս խորհուրդը չես ընդունում, պատրաստվիր անա թե ինչի: Պելոպոնեսոսում կա նեղ մի պարանոց: Այնտեղ դու սպասիր ավելի բուռն կռիվների, քան եղավ այստեղ. քանի որ քո դեմ միացած դուրս կգան համայն պելոպոնեսցիների զորքերը: Բայց եթե դու վարվես իմ խորհրդի համաձայն, ապա և՛ այդ պարանոցը, և՛ քաղաքները առանց մարտի քեզ կհանձնվեն»:

236. Նրանից հետո խոսեց Արքեմենեսը, Քսերքսեսի եղբայրը, որը նավատորմի հրամանատարն էր. նա ևս ներկա էր այդ խոսակցության, և վախենալով, որ Քսերքսեսը կհետևի Դեմարատոսի խորհրդին, այսպես ասաց. «Ով արքա. տեսնում եմ, որ դու հակված ես ընդունելու մի մարդու ասածը, որը նախանձում է քեզ քո հաջողությունների համար, գուցե և դավաճանում է քեզ: Հիրավի, այդպիսի վարքագիծը հաճելի է հելլեհների համար, որոնք նախանձում են բախտավորներին և ատում են ճգորներին: Արդ, եթե ներկա պայմաններում, երբ արդեն (փոքրիկից) մեր նավերից շորս հարյուրը խորտակվել են, դու քո նավատորմից ևս երեք հարյուր նավ ուղարկես Պելոպոնեսոսի շուրջ նավելու, թշնամին ի զորու կլինի քեզ հետ կռվելու. մինչդեռ քո նավատորմը միացյալ մնալով, անպարտելի կլինի և թշնամին չի կարողանա նույնիսկ դիմադրել. բացի այդ, միասին առաջ շարժվելիս, ամբողջ նավատորմը կօգնի հետևակին, իսկ հետևակը՝ նավատորմին: Բայց եթե դրանք անջատվեն, ապա ոչ դու կարող ես նավատորմին օգնել, ոչ նավատորմը՝ քեզ: Իմ բարի խորհուրդն է՝ աշխատիր, որ քո գործերը հաջող լինեն և մի մտածիր քո հակառակորդի զորքերի մասին, թե՝ որտե՞ղ նրանք հակատամարտ կտան, ի՞նչ կանեն և ինչքա՞ն են շատ: Քանզի նրանք լիովին ի վիճակի են իրենց մասին հոգալու. մենք ևս մեր մասին կհոգանք: Իսկ եթե լակեդեմոնացիները իսկապես դուրս գան պարսից դեմ կռվելու, ապա չեն խուսափի կործանումից»:

237. Քսերքսեսը նրան այսպես պատասխանեց. «Արքեմենես. ինձ թվում է, որ դու ճիշտ ասացիր, և ես այդպես էլ կանեմ: Թեև Դեմարատոսը ամենալավ մտադրությամբ ինձ խորհուրդներ տվեց, բայց քո խորհուրդն առավել լավ է: Ես երբեք չեմ հավատում, որ նա իմ գործերին հաջողություն չի ցանկանում: Ես այդպես դատում եմ, որովհետև նա խոսեց առաջինը և խոսեց մեր գործերից: Ճշմարիտ է, որ մի քաղաքացի նախանձում է մյուս քաղա-

քացուն նրա բարությանն համար, և իր թշնամանքն արտահայտում է լռությամբ և չի տալիս նրան բարի խորհուրդ, երբ մյուսը խորհուրդ խնդրելով դիմում է իրեն, եթե նա, իհարկե, չի հասել առաքինության բարձունքին. իսկ այդպիսիք հազվագյուտ են: Բայց օտարն ավելի բարեհաճ է հաշողակ օտար բարեկամի հանդեպ, և երբ վերջինս նրան դիմում է խորհուրդ հարցնելով, նա տալիս է լավագույն խորհուրդը: Հետևաբար, հրամայում եմ այսուհետև չչարախոսել Դեմարատոսին, քանի որ նա իմ բարեկամն է»:

238. Այսպես խոսելուց հետո, Քսերքսեսը գնաց դիակների միջով (մարտադաշտը) դիտելու: Տեղեկանալով, որ Լեոնիդասը եղել է լակեդեմոնացիների թագավորը և զորապետը, հրամայեց կտրել նրա գլուխը և ցցահան անել[106]: Շատ տվյալներից, բայց հատկապես այս մեկից, ինձ համար պարզ դարձավ, որ Քսերքսես արքան բոլոր մարդկանց մեջ առավել զայրացել է կենդանի Լեոնիդասի վրա: Այլապես նա երբեք նման անօրինություն չէր կատարի մեռյալի հանդեպ. քանզի ինձ հայտնի բոլոր մարդկանցից պարսիկներն առավել շատ են հարգում քաջարի ռազմիկներին: Արդ, նրանք, ում հրամայված էր այդ անել, հրամանը կատարեցին:

239. Այժմ ես կվերադառնամ իմ պատմության այն մասին, որն ընդհատել էի[107]: Առաջինը լակեդեմոնացիներն իմացան, թե արքան պատրաստվում է արշավել Հելլադա. ուստի և դեսպաններ ուղարկեցին Դելփյան պատգամատուն, որտեղից ստացան այն պատգամը, որի մասին արդեն ասել եմ: Եվ այդ ամենը նրանք իմացան զարմանալի ձևով: Դեմարատոսը, Արիստոնի որդին, փախչելով մեդացիների մոտ, իմ կարծիքով, և դա, հավանաբար, այդպես է, չէր համակրում լակեդեմոնացիներին. ուստի կարելի է ենթադրել, որ նա այդպես գործում էր ոչ թե բարի կամքով, այլ չարախնդությամբ: Երբ Քսերքսեսը որոշեց արշավել Հելլադա, Դեմարատոսը, որը գտնվում էր Սուսայում, իմանալով այդ մասին, կամեցավ այդ հաղորդել լակեդեմոնացիներին: Քանի որ նա այլ եղանակով չէր կարող այդ հաղորդել, քանզի վախենում էր բացահայտվելուց, այսպիսի միջոց մտածեց: Վերցրեց երկծալ տախտակ, քերեց դրա վրա ծածկած մոմը, այնուհետև տախտակի վրա գրեց արքայի ծրագիրը և գրածը նորից ծածկեց մոմով, որպեսզի գրերից մահուր տախտակը ճանապարհային պահակների մոտ կասկած չհարուցի: Երբ տախտակը բերվեց Լակեդեմոն, լակեդեմոնացիները չէին կարողանում հասկանալ դրա իմաստը: Ի վերջո, ինչպես ինձ պատմել են, Կլեոմենեսի դուստրը, Լեոնիդասի կին Գորգոն գուշակեց գործի էությունը: Նա ասաց, որ անհրաժեշտ է քերել մոմը, որով և կբացվեն տախտակի գրերը: Լակեդեմոնացիներն այդպես անելով, բացահայտեցին գրերը, կարդացին և հետո լուրը հաղորդեցին մնացյալ հելլեններին: Այս ամենը, ինչպես ինձ պատմեցին, այսպես է կատարվել:

ԳԻՐՔ ՈՒԹԵՐՈՐԴ

ՈՒՐԱՆԻԱ

1. Հելլենական ուժերը կազմված էին հետևյալներից: Աթենացիները տրամադրել էին հարյուր քսան յոթ նավ, որոնց անձնակազմը, աթենացիների կողքին, լրացնում էին նավագնացությանը անփորձ, բայց քաջարի և խիզախ պլատեացիները: Կորնթացիները տրամադրել էին քառասուն նավ. մեգարացիները՝ քսան: Քաղկիսցիները անձնակազմով ապահովեցին քսան նավ, որ նրանց տրամադրել էին աթենացիները. էգինացիները ուղարկել էին տասնութ նավ, սիկիոնցիները՝ տասներկու, լակեդեմոնացիները՝ տաս, եպիդավրոսցիները՝ ութ, երետրիացիները՝ յոթ, տրոյզենացիները՝ հինգ, ստյուրիացիները՝ երկու, կեոսցիները՝ երկու ռազմանավ և հիսուն թիականի երկու նավ, իսկ օպունտյան լոկրացիները օգնեցին հիսուն թիականի յոթ նավով:

2. Անհա սրանք էին Արտեմիսիոն ժամանածները. թե յուրաքանչյուր (քաղաք) ինչքա՞ն նավ ուղարկել էր, ես արդեն ասացի, իսկ Արտեմիսիոն ժամանած բոլոր նավերի ընդհանուր թիվը, չհաշված հիսուն թիականի նավերը, եղավ երկու հարյուր յոթանասունմեկ: Նավատորմի գլխավոր հրամանատար սպարտացիները կարգեցին Եվրիկլիդեսի որդի Եվրիբիադեսին. քանզի դաշնակիցները հայտարարեցին, որ եթե լակոնիացին առաջնորդ չկարգվի, ապա իրենք չեն մասնակցի աթենացիների առաջնորդությամբ կատարվող արշավանքին:

3. Քանզի սկզբում, դեռևս նախքան դաշինքի համար Սիկիլիա դեսպաններ ուղարկելը, խոսք էր եղել նավատորմի հրամանատարությունը աթենացիներին հանձնելու մասին: Բայց դաշնակիցների դիմադրության պատճառով, աթենացիները ստիպված էին տեղի տալ, քանի որ աթենացիների գերխավոր մտահոգությունը Հելլադայի փրկությունն էր. նրանք հասկանում

էին, որ հրամանատարության շուրջ եղած վեճերը կարող են կործանել Հելլադան. նրանք իրավացի էին: Քանզի ազգամիջյան կռիվը նույնքան տդեռալի է համատեղ պատերազմից, որքան իսկը՝ պատերազմը՝ խաղաղությունից: Այս լավ իմանալով, աթենացիները որոշեցին չնակառակվել, այլ զիջել, քանի դեռ, ինչպես պարզվեց, դաշնակիցների օգնության խիստ կարիքն ունեին: Քանզի, երբ արդեն նրանք եռ էշեցին պարսկին և արդեն սկսեցին կռվել նրա երկրի շուրջը, աթենացիները, Պավսանիասի մեծամիտ վարքագիծը պատրվակ բռնելով, գերագույն հրամանատարությունը վերցրին յակեդեմոնացիներից: Բայց այս ամենը կատարվել է հետո[1]:

4. Այնժամ (նավերով) Արտեմիսիոն ժամանած հելլենները, տեսնելով Ափետայում խորտակված բշնամու նավերի մեծ թիվը և նկատելով, թե ամենուր բշնամու նավատորմն է, և, նակառակ իրենց սպասածի, բարբարոսների ուժերը շատ ավելի էին[2], անաբեկվեցին և որոշեցին Արտեմիսիոնից փախչել և ապաստանել ներքին Հելլադայում: Այդ մասին իմանալով, եվբեացիները խնդրեցին Եվրիբիադեսին սպասել մի փոքր, մինչև որ իրենց որդիներին և ընդհանուրներին փոխադրեն: Երբ Եվրիբիադեսը մերժեց նրանց խնդրանքը, այնժամ եվբեացիները դիմեցին աթենացիների զորավար Թեմիստոկլեսին, տալով նրան երեսուն տաղանդ կաշառք, որի դիմաց Թեմիստոկլեսը կարողացավ համոզել հելլեններին՝ մնալ Եվբեայի ափին և նակատամարտել:

5. Իսկ Թեմիստոկլեսին անա թե ինչպես հաջողվեց համոզել հելլեններին սպասել: Այդ փողերից նա Եվրիբիադեսին տվեց հինգ տաղանդ, իբրև թե տալիս էր իր սեփական ունեցվածքից: Երբ Թեմիստոկլեսը սրան ևս համոզեց, ապա մյուս զորահրամանատարներից միայն կորնթացիների զորավար Ադեյմանտը, Օկյուտոսի որդին, դեմ կանգնեց և հայտարարեց, թե կհեռանա և չի մնա Արտեմիսիոնում: Այնժամ Թեմիստոկլեսը դիմեց նրան և երդվելով ասաց. «Դու մեզ չես լքի, քանի որ ես քեզ ավելի առատ ընծաներ կտամ, քան պարսից արքան կպարգևի քեզ, դաշնակիցներիդ լքելու համար»: Այս ասելով նա իսկույն երեք տաղանդ արծաթ ուղարկեց Ադեյմանտի նավը: Այսպիսով, անա, բոլորը, ընծաներ ստանալով, փոխեցին իրենց որոշումը և Թեմիստոկլեսը ծառայություն մատուցեց եվբեացիներին: Ինքը՝ Թեմիստոկլեսը ևս չանեց, մնացած փողերը պահելով իրեն. մինչդեռ այդ ընծաներն ստացողները կարծում էին, թե փողերն ուղարկված են Աթենից:

6. Այսպիսով, հելլեններն մնացին Եվբեայի մոտ և այնտեղ նավամարտեցին: Այն տեղի ունեցավ հետևյալ կերպ: Բարբարոսները կեսօրից անմիջապես հետո հասնելով Ափետայ, նկատեցին Արտեմիսիոնում խառնված հելլենական նավերի փոքրաթիվ լինելը, որը նրանց նախապես ևս հայտնի էր. ուստի և որոշեցին հարձակվել այդ նավերի վրա և դրանք գրավել: Բայց նրանք հարմար չգտան ուղղակի դիմացից նավարկելով մոտենալ այդ

նավերին, քանի որ հելլենները, նկատելով մոտեցող բշնամուն, կփախչեին և գիշերվա պատճառով կնողոպրեին: Պարսիկները, նիրավի, ենթադրում էին, թե հելլենները անպայման կփորձեն փրկվել փախուստի դիմելով. ուստի հրանք ուզում էին այնպես անել, որ նույնիսկ նրանց կրակակիրը չկարողանա փախչելով փրկվել:

7. Այդ նպատակով էլ պարսիկները հետևյալ ճարը մտածեցան: Ամբողջ նավատորմից հրանք առանձնացրին երկու հարյուր նավ և ուղարկեցին Սկիրոս կղզուց այն կողմ, որպեսզի հելլենները չնկատեին Կափերեա (հրվանդանի) և Գերեստոսի մոտով Եվբեան շրջանցելով դեպի Եվրիպոս նավարկող այդ նավերը: Նրանց նպատակն էր հելլեններին առնել իրենց միջև և, գլխավոր ուժերի հարձակման ժամանակ, փակել նրանց նահանջի ճանապարհը: Այսպես որոշելուց հետո, հրանք առանձնացված նավերը շրջանցիկ ուղարկեցին, մինչդեռ իրենք, նպատակ չունենալով այդ օրը հարձակվել հելլենների վրա, պետք է սպասեին շրջանցող նավերի տեղ հասած լինելու մասին ազդանշանին: Այդ նավերը (Եվբեան) շրջանցելու համար ուղարկելուց հետո, հրանք սկսեցին հաշվառել Ափետայում խառնված նավերը:

8. Այն ժամանակ, երբ հրանք իրենց նավերը հաշվառում էին, հրանց զորաբանակում էր գտնվում Սկյուլլիասը՝ Սկիոնեից, որը ժամանակի լավագույն ջրասուզակն էր: Նա Պելիոնի մոտ պատահած նավաբեկությունից հետո պարսիկների համար մեծ քանակությամբ գանձեր փրկեց, բայց ինքը ևս մեծ գանձեր յուրացրեց: Այս Սկյուլլիասը դեռևս նախապես մտադրվել էր փախչել հելլենների մոտ, բայց հնարավոր չէր եղել. այժմ այդ հրան հաջողվեց: Իսկ թե ինչպե՞ս հրան հաջողվեց այժմ հասնել հելլենների մոտ, ես հաստատ ասել չեմ կարող. բայց ես զարմանում եմ, եթե այդ մասին պատմածները ճշմարիտ են: Քանզի պատմում են, թե նա ծով է սուզվել Ափետայում և չի երես դուրս չի եկել մինչև Արտեմիսիոն հասնելը, ծովի տակով լողալով մոտավորապես ութսուն ասպարեզ: Այդ մարդու մասին շատ ուրիշ բաներ ևս պատմում են, որոնց մի մասը մտացածին է, մի մասը՝ ճշմարտանման: Տվյալ դեպքում իմ կարծիքն այն է, որ նա Արտեմիսիոն հասել է մակույկով: Հելլենների մոտ հասնելով, նա անհապաղ հաղորդում է զորավարներին պատահած նավաբեկության, ինչպես նաև Եվբեայի շուրջ ուղարկված նավերի մասին:

9. Այս լսելով, հելլենները հավաքվեցին խորհրդի: Շատ բաներ ասվեցին, բայց հաղթանակեց այն առաջարկը, որ այդ օրը մնալ և բանակել այնտեղ, այնուհետև, գիշերվա կեսն անցնելուց հետո, դուրս գալ հանդիպելու Եվբեան շրջանցող նավերին: Այս խորհրդակցությունից հետո, քանի որ ոչ ոք չէր հարձակվում իրենց վրա, մինչև երեկո սպասելուց հետո, հելլեններն

իրենք հարձակվեցին բարբարոսների վրա, փորձելու համար թշնամու նավերի մարտաշարքը ճեղքելու իրենց մարտաձևը:

10. Քսերքսեսի զորավարներն ու զինվորները տեսնելով, որ հելլեններն իրենց վրա են գալիս փոքրաթիվ նավերով, նրանց արդեն խելագարված համարելով, իրենք ևս խարիսխները բարձրացրին և ծով դուրս եկան, հուսալով, որ հեշտությամբ կկարողանան (թշնամու) նավերը գրավել. նրանց հույսերը արդարացի էին: Քանզի նրանք տեսնում էին, թե ինչքան փոքրաթիվ են հելլենների նավերը, մինչդեռ իրենց նավերը բազմապատիկ և ավելի արագընթաց: (Գերազանցության) այս զգացումով, պարսիկները սկսեցին շրջանակի մեջ առնել նրանց: Արդ, հոնիացիներից նրանք, որոնք համամիտ էին արշավանքին, մեծ տագնապով դիտում էին, թե ինչպես պարսիկները օղակում են հելլեններին: Նրանք համոզված էին, որ հելլեններից ոչ մեկը տուն չի վերադառնալու. այդքան թույլ էր նրանց թվում հելլենների նավատորմը: Մինչդեռ ուրիշներ նրնվում էին կատարվող դեպքերի համար, հույնիսկ մրցում իրար հետ, թե ո՞վ առաջինը կգրավի ատտիկյան որևէ նավ և կստանա արքայի պարգևը: Քանզի (պարսից) նավատորմում խոսում էին հատկապես աթենացիների մասին:

11. Մինչդեռ հելլենները, ըստ ազդանշանի նախ նավերի ցուցիչներն ուղղեցին դեպի թշնամին, իսկ նավախելները՝ դեպի կենտրոն, մեկը մյուսի դիմաց: Երկրորդ ազդանշանից հետո, նրանք սկսեցին գործել, թեև տարածությունը խիստ փոքր էր և կարող էին շարժվել միայն առաջ: Այնտեղ նրանք գրավեցին բարբարոսների երեսուն նավ ու գերի վերցրին Սալամիսի թագավոր Գորգոսի եղբայր Փիլաոնին, Քերսիոսի որդուն, որը (պարսից) նավատորմում հեղինակություն էր: Առաջին թշնամու նավը գրավեց աթենացի Լյուկոմեդեսը, Այսքրայոսի որդին, որն ստացավ արիության պարգևը: Փոփոխական հաջողություններով ընթացող այս մարտն ընդհատվեց գիշերը: Հելլենները ետ նահանջեցին Արտեմիսիոն, իսկ բարբարոսները՝ Ափետայ, քանի որ մարտն ավարտվել էր իրենց սպասածին հակառակ: Այս ծովամարտում արքայի բանակում գտնվող հելլեններից միայն Անտիդորոս Լեմնոսցին անցավ հելլենների կողմը, որի համար աթենացիները նրան Սալամիսում հողեր պարգևեցին:

12. Ամռան կեսն էր, և մութն ընկնելիս, ամբողջ գիշեր հորդ անձրև տեղաց ու Պելիոնից լսվում էին խուլ որոտներ: Դիակները և խորտակված նավերի բեկորները քշվում էին Ափետայ, զարկվում նավացուցներին և խճճվում տրիերաների արանքում: (Նավերի վրա գտնվող) ռազմիկները, աղմուկը լսելով, խուճապահար եղան, մտածելով, որ այդքան աղետներից հետո այժմ նրանք կկործանվեն: Քանզի նրանք հազիվ ուշքի էին եկել Պելիոնի մոտ պատահած նավաբեկումից և փոթորկից, երբ սկսվեց կատաղի նավամարտը,

իսկ դրան հաջորդեց անավոր տեղատարափը. կատաղած հեղեղի ջրերը սարրնթաց թափվեցին ծով և խուլ որոտացին շանթերը:

13. Նրանք այսպիսի (աղետալի) գիշեր անցկացրին: Իսկ Եվրեթայի շուրջ ուղարկված նավերի համար նույն այդ գիշերը շատ ավելի դաժան եղավ, քանի որ այն վրա էր հասել բաց ծովում, որտեղ նրանք տխուր վախճան ունեցան: Փոթորիկն ու տեղատարափը նրանց վրա պայթեցին «Եվրեթայի խոռոչներ» կոչված վայրի մոտ. քամիները նրանց քշում էին չգիտես թե ուր, և հետում ծովափի ժայռերի վրա: Այս ամենը ասված էր կատարում, որպեսզի հելլենական նավատորմի ուժը հավասարվի պարսկականին և պարսկականը չլինի հելլեններից առավել ուժեղ:

14. Այսպիսով, այդ պարսկական նավերը խորտակվեցին Եվրեթայի խոռոչների մոտ: Իսկ Ափետայում մնացած բարբարոսները, երբ լույսը բացվեց, իրենց նավերով անշարժ կանգնած էին. նրանք ուրախ էին, որ ներկա աղետի ընթացքում նրանք հանգիստ մնացին: Այնտեղ հելլեններին օժանդակության եկան ևս հիսուներեք ատտիկյան նավեր: Սրանց գալուստը, ինչպես նաև Եվրեթան շրջանցող թշնամու բոլոր նավերի փոթորկից խորտակված լինելու լուրը ոգևորեցին հելլեններին: Ուստի և նրանք, սպասելով մինչև օրվա նույն ժամը, հարձակվեցին կիլիկեցիների նավերի վրա, խորտակեցին դրանք և, մութն ընկնելիս, վերադարձան Արտեմիսիոն:

15. Իսկ երրորդ օրը բարբարոսների զորավարները, խիստ վշտացած, որ այսքան փոքրաթիվ նավեր իրենց այսքան վնաս հասցրին, միաժամանակ և վախենալով Քսերքսեսի զայրույթից, արդեն չսպասեցին հելլենների նոր հարձակմանը, այլ համարձակվեցին և կեսօրին դուրս եկան բաց ծով: Այնպես համընկավ, որ այս նավամարտերը և ցամաքում Թերմոպիլեի նակատամարտը տեղի ունեցան նույն օրը: Ծովայինների կռվի ամբողջ նպատակը Եվրիպոսի նեղուցը պահպանելն էր, ճիշտ այնպես, ինչպես Լեոնիդասի զորախմբի նպատակն էր պահպանել (Թերմոպիլեի) անցումը: Այսպիսով, հելլեններ չանում էին արգելել բարբարոսների մուտքը Հելլադա, իսկ բարբարոսների նպատակն էր՝ ոչնչացնել հելլեն զորքը և գրավել անցումը: Արդ, երբ Քսերքսեսի նավերն սկսեցին ռազմական շարքով մոտենալ, հելլեններն անխռով կանգնած էին Արտեմիսիոնում: Այնժամ բարբարոսներն իրենց նավերը դասավորեցին մանիկաձև, հելլեններին իրենց մեջ օղակելու նպատակով:

16. Այնժամ հելլենները նորից հարձակվեցին նրանց վրա և նակատամարտն սկսվեց: Այս նավամարտում կողմերն իրար նավասար հաջողություն ունեցան: Քսերքսեսի նավատորմը, նավերի մեծաթիվ և խոշոր լինելու պատճառով, վնասում էր իրեն իրեն: Նավերը իրար վրա էին ընկնում, խախտում ռազմական կարգը և վնասում իրար. սակայն նրանք դիմացան և չնահանջեցին, քանզի ամոթալի արարք էին համարում փոքրաթիվ նավերի առաջ

փախուստի դիմելը: Հելլեններից ևս շատերը սպանվեցին և շատ նավեր խորտակվեցին. բայց ավելի շատ նավեր և մարդիկ կորցրին բարբարոսները: Նրանք այսպես կռվելուց հետո, հեռացան իրարից:

17. Այս նավամարտում Քսերքսեսի զինվորների թվում գերազանց կռվեցին եգիպտացիները, որոնք բազում քաջագործություններ կատարելուց բացի, գրավեցին հելլենական հինգ նավ, ամբողջ անձնակազմով: Այդ օրը հելլեններից գերազանց կռվեցին աթենացիները, դրանց թվում հատկապես Ալկիբիադեսի որդի Կլինիասը, որն իր երկու հարյուր մարդկանց հետ կռվում էր իր սեփական միջոցներով կառուցած նավի վրա:

18. Արդ, կողմերը հեռանալով իրարից, յուրաքանչյուրը հանույթով վերադարձավ իր նավակայանը: Հելլենները հեռանալիս թեև կարողացան մարտադաշտից իրենց հետ տանել դիակներն ու խորտակված նավերը, այսուհանդերձ, նրանք կրել էին ծանր կորուստներ. հատկապես աթենացիները, որոնց նավերի կեսը վնասված էր: Ուստի և նրանք այժմ որոշեցին հեռանալ դեպի Հելլադայի ներքին ջրերը:

19. Թեմիստոկլեսն արդեն հասկացավ, որ եթե հոնիացիները և կարիացիները լքեն պարսիկներին, ապա մնացյալ բարբարոսներին հելլենները կկարողանան հեշտությամբ հաղթահարել: (Նկատելով, որ) եվրեացիներն իրենց հոտերը քշում են այնտեղ, ծովափ, գումարեց հելլեն զորավարներին և ասաց նրանց, թե ինքը գտել է արքայի լավագույն դաշնակիցներին իրենց կողմը գրավելու միջոցը: Նա այսքանն ասաց, և ավելացրեց, թե ներկա պայմաններում նրանք պետք է անեն անա թե ինչ: Նախ պետք է ամեն մեկը մորթի եվրեական անասուններից ինչքան որ ցանկանա. հանգի ավելի լավ է, որ սեփական զորքը (միս) ունենա, քան թշնամին: Այնուհետև ամեն մեկը պետք է հրամայի իր մարդկանց խարույկ վառել: Իսկ մեկնելու մասին (նա ասաց, թե) ինքը կմտածի և կնշի հարմար ժամանակը, երբ իրենք կկարողանան վերադառնալ Հելլադա: Զորավարները հանույթով համաձայնվեցին այդպես անել և իսկույն խարույկներ վառելով, սկսեցին մորթել անասուններին:

20. Քանզի եվրեացիներն արհամարհել էին Բակիսի կատարած գուշակությունը, ոչ մի նշանակություն չտալով դրան: Նրանք հույնիսկ ոչինչ իրենց ունեցվածքից չփոխադրեցին (ապահով վայր), ո՛չ էլ որևէ բան բերեցին, պատերազմի դեպքում (պարենով) ապահովված լինելու համար. այսպիսով իրենք դարձան իրենց այդ դժբախտության պատճառը: Իսկ Բակիսի գուշակությունն այդ մասին հետևյալն էր ազդարարում:

Բարբարոսն երբ պապիրուսե լուծը նետի ծովի վրա,
Դու հեռացրու Եվրեայից մկկացող քո այծերին:

Քանի որ եվրեացիները ոչ մի ուշադրություն չդարձրին այդ պատգամին, ապա նրանք և՛ այժմ, և՛ հետագայում, մեծ աղետների ենթարկվեցին:

21. Մինչ նրանք այսպես էին անում, այնտեղ էր եկել լուրեսը Տրաքիսից: Քանզի Արտեմիսիոնում էր գտնվում լուրես Պոլիասը, ծնված Անտիկյուրայում, որին կարգադրված էր,—իսկ նրա համար պատրաստ նավակն սպասում էր,— պարտության դեպքում, այդ մասին հաղորդել Թերմոպիլեում գտնվող զորքերին: Նույն ձևով, Լեոնիդասի մոտ պատրաստ գտնվում էր աթենացի Արքոնիքոսը, Լյուսիկլեսի որդին, որը երեսուն թիականի նավով, ցամաքային զորքերի անհաջողության դեպքում, այդ մասին հաղորդելու էր Արտեմիսիոնում գտնվողներին: Անա այս Արքոնիքոսը այդ ժամանակ եկավ (Արտեմիսիոն) և հաղորդեց Լեոնիդասի և նրա զինվորների հակատագրի մասին: Այս լուրն իմանալով, հելլենները անհապաղ սկսեցին նահանջել: Նավերը հեռանում էին այն կարգով, ինչ կանգնած էին. առջևից նավարկում էին կորնթացիները, իսկ բոլորից հետո՝ աթենացիները:

22. Իսկ Թեմիստոկլեսը, աթենացիների առավել արագընթաց նավերն ընտրելով, շարժվեց դեպի այն վայրերը, ուր խմելու ջուր կար: Այնտեղ ժայռերի վրա արձանագրություն փորագրեց, որը հետո կարդացին Արտեմիսիոն ժամանած հոնիացիները: Այդ արձանագրությունն ազդարարում էր. «Հոնիացիներ. դուք սխալ եք վարվում ձեր հայրերի դեմ արշավելով և Հելլադային սարկություն բերելով: Ավելի լավ է, որ անցնեք մեր կողմը: Իսկ եթե այդ աննպատակ է ձեզ համար, ապա դուք այժմ իսկ դադարեք մեր դեմ պատերազմելուց և նույնը խնդրեք անել կարիացիներին: Բայց եթե այս երկուսից ոչ մեկը չեք կարող կատարել, այլ կաշկանդված եք հարկադրանքի աննողթահարելի շղթաներով, որոնք չեք կարող թոթափել, ապա դուք, երբ ճակատամարտն սկսվի, վատ կռվեք. հիշեցեք, որ սերել եք մեզանից, և մեր սկզբնական թշնամանքը բարբարոսի դեմ ծագել է ձեր պատճառով»: Իմ կարծիքով, Թեմիստոկլեսն այսպես գրեց երկակի նպատակով. կամ հոնիացիները, եթե իր գրածները գաղտնի մնան արքայից, կլքեն նրան և կանցնեն իրենց կողմը, կամ Քսերքսեսը, տեղեկանալով այդ արձանագրության մասին, կսկսի կասկածել հոնիացիների վրա և նրանց հետու կպահի նավամարտից:

23. Այդպիսին էր Թեմիստոկլեսի գրած արձանագրությունը: Դրանից անմիջապես հետո մակույկով բարբարոսների մոտ ժամանեց ինչ-որ մարդ Հիստիեայից, ավետելով հելլենների փախուստը Արտեմիսիոնից: Բարբարոսները, չհավատալով, ավետաբերին բանտարկեցին, որից հետո արագընթաց նավեր ուղարկեցին հետախուզելու: Երբ սրանց միջոցով հաստատվեց այդ լուրի ճշմարտությունը, արևածագին ամբողջ նավատորմը նավարկեց դեպի Արտեմիսիոն: Այստեղ նրանք մնացին մինչև կեսօր, որից հետո նավեցին դեպի Հիստիեա: Այստեղ հասնելով, պարսիկները գրավեցին Հիստիեան, էլլիոպիայի մարզում, և ամայացրին Հիստիեայի ամբողջ առափնյա երկիրը:

24. Մինչ նավատորմն այստեղ էր, Քսերքսեսը կարգադրեց հավաքել

մեռյալների դիակները, որից հետո բանբեր ուղարկեց նավատորմի ռազմիկների մոտ: Դիակների վերաբերյալ նա այսպես կարգադրեց. Թերմոպիլեի ճակատամարտում ընկած իր բոլոր զինվորներից, որոնց թիվը մոտ երկու բյուր էր, հրամայեց առանձնացնել հազարի դիակները, իսկ մյուսների համար՝ փորել գերեզման և դիակները թաղել այնտեղ: Գերեզմանները ծածկեցին տերևներով, որոնց վրա հող ավելացրին, որպեսզի նավատորմի ռազմիկները չնկատեն դրանք: Արդ, անցնելով Հիստիեա, ամբողջ նավատորմի ռազմիկներին գումարելով, բանբերը այսպես խոսեց. «Դաշնակից մարդիկ. Քսերքսես արքան ձեզանից ցանկացողին թույլ է տալիս լքել իր զորամասը և գնալ տեսնելու, թե ինքը ինչպե՞ս է կռվում այս խելացնոր մարդկանց դեմ, որոնք երազում են հաղթահարել արքայի հզորությունը»:

25. Քարոզի այս հայտարարությունից հետո ոչինչ ավելի հազվագյուտ չէր, քան նավը. քանզի այնքան շատ մարդիկ ցանկանում էին անցնել (ծովը) և տեսնել (դիակները): Նրանք նավերով անցան և սկսեցին դիտել, գնալով դիակների միջով: Բոլորը հավատացած էին, թե սպանվածները միայն լակեդեմոնացիներ են և թեսպիացիներ. այդպիսիք համարում էին նաև իլոտներին: Այսուհանդերձ, այս եկածներից և ոչ մեկի ուշադրությունից չվրիպեց Քսերքսեսի արածն իր սպանված զինվորների դիակների հետ: Եվ իրոք, դա նույնիսկ ծիծաղելի էր: Սպանված պարսիկներից միայն հազար դիակ էր երևում, մինչդեռ հելլեններների չորս հազար դիակ բոլորը միասին մի տեղ թափված էին իրար վրա: Այդ ամբողջ օրը հրամայեցին դիակները դիտելու. իսկ հաջորդ օրը նավազները նավերով մեկնեցին Հիստիեա, իսկ հետևակը Քսերքսեսի հետ շարունակեց ճանապարհը:

26. Այստեղ պարսիկների մոտ եկան փոքրաթիվ փախստականներ Արկադիայից: Նրանք կենսապայմանների կարիքից մղված, ձգտում էին ծառայության մտնել[4]: Նրանց առաջնորդեցին արքայի առաջ և սկսեցին հարցնել, թե ի՞նչ են անում հելլենները: Բոլորի անունից այնտեղ հարցերը տալիս էր միայն մեկը: Արկադիացիները պատասխանեցին, թե հելլենները օլիմպիական տոնախմբություններ են կատարում, դիտում մարզական և ձիավարության մրցումներ: Պարսիկը հարցրեց, թե մրցողների համար ի՞նչ մրցանակ է սահմանված: Հելլենները պատասխանեցին, թե մրցանակը ձիթենու ճյուղերից հյուսած պսակ է: Այնժամ Տիգրանեսը, Արտաբանոսի որդին, շատ ազնիվ միտք արտահայտեց, որը, սակայն, արքան երկչոտություն համարեց: Լսելով, որ հաղթանակի պարգևը հելլենների համար ոչ թե դրամ է, այլ պսակ, չկարողացավ լռել և, դիմելով բոլոր ներկաներին, ասաց. «Ավաղ, Մարդոնիոս. ո՞ւմ դեմ դու մեզ պատերազմի առաջնորդեցիր: Այս մարդիկ մրցում են ոչ թե հանուն փողի, այլ առաքինության»: Այդ մասին նա այսպես ասաց:

27. Այդ ընթացքում, Թերմոպիլեի պարտությունից անմիջապես հետո,

թեսալացիները բանբեր են ուղարկում փոկայացիների մոտ. նրանք փոկայացիներին ատում էին հնուց անտի, իսկ այժմ, պարտությունից հետո, առավել ևս: Արքայի այս արշավանքից դեռ մի քանի տարի առաջ թեսալացիները ու նրանց դաշնակիցները ամբողջ զորքով ներխուժեցին Փոկիս, բայց պարտվեցին և մեծ վնասներ կրեցին: Փոկայացիները պաշարվել էին Պառնասսոսում, նրանց հետ նաև գուշակ Տելլիասը էլիսից: Այնժամ Տելլիասը նրանց համար այսպիսի մի հնար մտածեց: Վեց հարյուր ամենաքաջ փոկայացիների և նրանց զեն ու զրահը կավճապատելով, նրանց գիշեր ժամանակ ուղարկեց թեսալացիների դեմ, պատվիրելով սպանել բոլոր նրանց, ովքեր սպիտակեցված չեն: Սրանց տեսքից սարսափահար, առաջինը (փախան) թեսալացիների պահակները, նրանց ինչ-որ հրեշների տեղ ընդունելով, իսկ պահակներից հետո նաև ամբողջ զորքը. այնպես, որ փոկայացիները սպանեցին չորս հազար մարդ և տիրացան նրանց վահաններին. այդ վահանների կեսը նրանք նվիրաբերեցին Աբե քաղաքին, իսկ մյուս կեսը՝ Դելֆյան տաճարին: Այս հակատամարտից ձեռք բերված ավարի տասներորդ մասը կազմում են Դելֆյան տաճարի եռոտանու մոտ կանգնեցված արձանները. նույնպիսի արձաններ փոկայացիները կանգնեցրին նաև Աբեում:

28. Փոկայացիներն այսպես պարտության մատնեցին իրենց պաշարած թեսալական հետևակին. իսկ իրենց երկիրը ներխուժած թեսալական հեծելազորին փոկայացիները դաժանորեն ոչնչացրին: Հյուսամպոլիսի մոտ գրտնըվող կիրճում նրանք լայն փոս փորեցին, որտեղ լցրին դատարկ կառաններ, հետո դարձյալ այն ծածկեցին հողով, հարթեցին և սպասեցին թեսալացիների հարձակման: Թեսալացիների հեծելազորը, բափով սլացավ փոկայացիներին ոչնչացնելու համար, բայց հեծյալները ընկան կառասների մեջ և ձիերի ոտքերը ջարդվեցին:

29. Այս երկու արարքների պատճառով խիստ զայրացած, թեսալացիները քարոզ ուղարկեցին և առաջարկեցին հետևյալը. «Ով փոկայացիներ. վերջապես դուք պետք է իմանաք, որ չեք կարող կռվում մեզ հետ չափվել: Քանզի դեռ անցյալում, երբ մենք հելլենների հետ էինք, Հելլադայում միշտ ավելի հզոր և ազդեցիկ ենք եղել, քան դուք: Իսկ այժմ բարբարոսի մոտ մենք այնքան ուժ ունենք, որ կարող ենք ոչ միայն ձեզ զրկել երկրից, այլ նույնիսկ ձեզ ստրկացնել: Այս բոլոր հնարավորություններն ունենալով հանդերձ, մենք ձեր նկատմամբ հիշաչար չենք. բայց այդ բոլորի փոխարեն դուք պետք է մեզ տաք հիսուն տաղանդ արծաթ, որի դիմաց մենք խոստանում ենք կանխել ձեր երկրին սպառնացող աղետը»:

30. Այսպիսին էր թեսալացիների առաջարկը: Այդ երկրամասի բնակիչներից միայն փոկայացիները չհարեցին պարսիկներին. և դա, իմ կարծիքով, ոսկի թեսալացիների հանդեպ ատելության պատճառով: Եթե թեսալացիները միանային հելլեններին, ապա, ինձ թվում է, փոկայացիները

կճարեին պարսիկներին: Թեսալացիների այս առաջարկին նրանք սպասախանեցին, թե ոչ մի դրամ չեն տա, թե իրենք ևս, եթե կամենային, կճարեին պարսիկներին. բայց իրենք երբեք կամովին չեն դավաճանի Հելլադային:

31. Այսպիսի պատասխան առանալուց հետո, թեսալացիները, մաղձոտելով փոկայացիների դեմ, դարձան ուղեցույցներ բարբարոսի համար: Տրաքինա երկրից պարսիկները նախ մտան Դորիս: Մալիսի և Փոկիսի միջև ձգվում է դորիական երկրի մի նեղ երիզ, շուրջ երեսուն ասպարեզ լայնությամբ, որը հնում կոչվել է Դրիոպիս: Այս երկիրը եղել է պելոպոննեսյան դորիացիների հայրենիքը: Այս դորիական երկիրը ներխուժելով, բարբարոսները այն չավերեցին, քանի որ բնակիչները հարել էին պարսիկներին, և թեսալացիները նույնպես որոշել էին չավերել:

32. Երբ (պարսիկները) Դորիսից մտան Փոկիս, չկարողացան բռնել փոկայացիներին, քանի որ սրանց մի մասը բարձրացել էր Պառնասսոսի գագաթները: Պառնասսոսի Տիթորեա կոչված գագաթը, որն առանձին բարձրանում է Նեոն քաղաքի մոտ, հարմար ապաստան է մեծ թվով մարդկանց համար. ուստի և նրանք այնտեղ բարձրացան իրենց ունեցվածքով: Բայց նրանց մեծ մասը հեռացավ դեպի օզոլյան լոկրացիների Ամֆիսսա քաղաքը, որը գտնվում է Կրիսեյան դաշտից այն կողմ: Իսկ բարբարոսները ասպատակեցին ամբողջ Փոկիսը, քանի որ նրանց զորքն առաջնորդում էին թեսալացիները. այն ամենը, ինչ նրանց պատահում էր, ոչնչացնում էին և հրկիզում, հրի մատնելով և՛ քաղաքները, և՛ սրբավայրերը:

33. Կեփիսոս գետի ափով անցնող իրենց ճանապարհին նրանք ամայացրին ամեն ինչ և հրի մատնեցին Դրյումոս, Քարադրա, Երոքոս, Տեթրոնիոն, Ամֆիկեյա, Նեոն, Պեդիեյա, Տրիտեյա, Ելատեյա, Հյուամպոլիս, Պարապոտամիա և Աբե քաղաքները: Աբեում էր գտնվում Ապոլլոնի հարուստ տաճարը, բազմաթիվ գանձերով և ընծայաբերված նվերներով[5]: Այնտեղ կար նաև պատգամատուն, որը գոյություն ունի նաև այժմ: Անա այս տաճարը ևս կողոպտելով՝ հրկիզեցին: Փոկայացիներից ոմանց հետապնդելով, կարողացան գերի վերցնել լեռների մոտ: Կանանցից ոմանք էլ մահացան՝ բռնաբարված բազմաթիվ զինվորներից:

34. Պարապոտամիան անցնելով, բարբարոսները հասան Պանոպեա: Այստեղ զորքը բաժանվեց երկու մասի: Մեծագույն և ճզորագույն մասը, Քսերքսեսի գլխավորությամբ, շարժվեց դեպի Աթենք և մտավ Բեովտիա, օրոմենոսցիների երկիրը: Բեովտիացիների ամբողջ բազմությունը հարել էր պարսիկներին, իսկ նրանց քաղաքները պանպանում էին Ալեքսանդրի ուղարկած և այդ քաղաքներում տեղակայված մակեդոնացի զինվորները: Նրանց այդ պանպանության նպատակն էր՝ ցույց տալ Քսերքսեսին, թե բեովտիացիները կողմնակից են պարսիկներին:

35. Արդ, բարբարոսների զորքի այս մասը գնաց այսպես. իսկ մյուսները ուղեցույցների առաջնորդությամբ շարժվեցին դեպի Դելփյան սրբավայրը, Պառնասսոսը թողնելով աջ կողմում: Այս զորամասը ևս ճանապարհին ամայացնում է ամբողջ Փոկիս երկիրը: Սրանք հրի մատնեցին պանոպեացիների, դավլիների և էդյանների քաղաքները: Այս զորամասը գնում էր այս ճանապարհով, ամբողջ մյուս զորքից առանձնացած, որպեսզի կողոպտեն Դելփիի սրբավայրը և գանձերը հանձնեն Քսերքսես արքային: Քանզի, ինչպես ինձ պատմել են, Քսերքսեսին այդ սրբավայրում գտնվող առավել արժեքավոր գանձերն ավելի հայտնի էին, քան իր պալատում թողածները, քանի որ նրան շատ էին պատմել (այդ գանձերի), հատկապես Ալյուատտեսի որդի Կրեսոսի ընծայաբերած նվերների մասին[6]:

36. Դելփյանները, տեղեկանալով այս ամենի մասին, անաբեկվեցին: Սարսափահար նրանք հարցրին պատգամախոսին, արդյոք սրբավայրի գանձերը թաղե՞ն հողի տակ, թե՞ դրանք փոխադրեն մեկ ուրիշ երկիր: Ասված հրամայեց նրանց ոչինչ չշարժել, ասելով, որ ինքը կարող է իր գանձերը պանպանել: Դելփյանները այս լսելով, որոշեցին մտածել իրենց փրկության մասին: Երեխաներին և կանանց նրանք ուղարկեցին ծովի մյուս կողմը՝ Ախայա, իսկ իրենք մեծ մասամբ բարձրացան Պառնասսոսի գագաթները և իրենց ունեցվածքը փոխադրեցին Կորիկյան քարայրը, ոմանք էլ փախան Լոկրիսի Ամֆիսսա քաղաքը: Այսպիսով, բոլոր դելփյանները լքեցին քաղաքը, բացի վաթսուն մարդուց և գուշակից:

37. Արդեն բարբարոսները մոտեցել էին և կարող էին հեռվից տեսնել սրբավայրը, երբ գուշակը, որի անունն էր Ակերատոս, նկատում է, որ սրբազան զենքերը, որոնց ոչ ոք իրավունք չուներ դիպչելու, մեգարոնից[7] դուրս են բերված և դրված տաճարի առջև: Նա գնում է այդ հրաշքի մասին հայտնելու տեղում մնացած դելփյաններին: Բայց երբ բարբարոսները արագ մոտեցել էին Աթենաս Պրոնեայի տաճարին, պատահում է առավել մեծ մի հրաշք, քան այս մեկը: Անշուշտ, շատ զարմանալի է, երբ զենքերը ինքնաբերաբար հայտնվում են տաճարի առջև ընկած: Բայց այն, ինչ կատարվեց հետո, առավել զարմանահրաշ էր: Այն պահին, երբ բարբարոսները հայտնվել էին Աթենաս Պրոնեայի տաճարի մոտ, երկնքից շանթեր ընկան նրանց վրա, իսկ Պառնասսոսից անավոր դղրդյունով երկու գագաթներ պոկվեցին և գլորվեցին նրանց վրա, շատերին ոչնչացնելով. իսկ Աթենաս Պրոնեայի տաճարից լսվում էին աղմուկ և ռազմական աղաղակ:

38. Այս բոլորը ի մի գումարվելով, սարսափ պատճառեցին բարբարոսներին: Դելփյանները նկատելով, որ նրանք փախուստի են դիմում, ցած իջան լեռներից և նրանցից շատերին սպանեցին: Կենդանի մնացած պարսիկները փախան ուղիղ Բեովտիա: Ինչպես ինձ հայտնի դարձավ, բարբարոսներից նրանք, ովքեր վերադարձել են, պատմել են, թե այլ զարմանա-

նրաշ բաներ ևս տեսել են. մարդկայինից ավելի բարձր հասակ ունեցող երկու նոպլիտ հետապնդում էին իրենց և սպառնում:

39. Դելֆյանները պնդում են, թե այս երկուսը տեղական հերոսներ են, Փյուլակոսը և Ավտոնոոսը, որոնց մեհյանները գտնվում են (Ապոլլոնի) սրբավայրին մոտիկ. Փյուլակոսի մեհյանը՝ ճանապարհի վրա, Պրոնեայի սրբավայրից վերև, իսկ Ավտոնոոսի մեհյանը՝ Կաստալյան աղբյուրի մոտ, Հյուսիսային զագաթի ստորոտին: Իսկ Պառնասսոսից ընկած ժայռերը մնացել են ցայսօր. դրանք գտնվում են Աթենաս Պրոնեայի սրբավայրում, որտեղ դրանք գլորվեցին, ճեղքելով բարբարոսների շարքերը: Անա այսպես է տեղի ունեցել այդ զորքերի հանանչը սրբավայրից:

40. Մինչ այդ, հելլենական նավատորմը, աթենացիների խնդրանքով, Արտեմիսիոնից ուղղվեց դեպի Սալամիս: Սալամիս գալու աթենացիների խնդրանքի պատճառն այն էր, որ նրանք ցանկանում էին իրենց երեխաներին և կանանց Ատտիկայից դուրս փոխադրել, միաժամանակ նաև խորհուրդ գումարել իրենց հետագա անելիքների մասին: Քանզի ստեղծված պայմաններում նրանց հաշիվները սխալ էին և անհրաժեշտ էր նոր որոշում ընդունել: Նրանք հույս ունեին Բեոտիայում հանդիպելու պելոպոննեսյան համայն զորքին, բարբարոսին սպասելիս. բայց այդպիսի բան չպատահեց: Աթենացիները տեղեկացան, թե պելոպոննեսցիները ամայացնում են Իսթմոսը, և քանի որ նրանց համար ամենից կարևորը Պելոպոննեսոսը փրկելն էր, ապա նրանք ուզում են պաշտպանել միայն Պելոպոննեսոսը, իսկ մնացած երկիրը լքում են: Այս բոլորը իմանալով, աթենացիները խնդրեցին կանգ առնել Սալամիսի մոտ:

41. Արդ, մնացած բոլորը խարսխեցին Սալամիսում, իսկ աթենացիները եկան իրենց երկիրը: Ժամանելով այնտեղ, աթենացիները քարոզի միջոցով հայտարարեցին, թե ով ինչպես կարող է թող փրկի իր երեխաներին և ընդհանուրներին: Այնժամ շատերն իրենց տնեցիներին ուղարկեցին Տրեզեն, ուրիշներ՝ էգինա, ոմանք էլ՝ Սալամիս: Նրանք շտապում էին ապաստան վայր փոխադրել այդ ամենը, որպեսզի կատարած լինեն պատգամատան հրամանը, բայց առավելապես հետևյալ պատճառով: Աթենացիները պատմում են, թե տաճարում, որպես ակրոպոլիսի պահակ, կենում է խոշոր մի օձ, որին նրանք, ինչպես պատմում են, որպես էակի, ամենամյա զոհաբերություն են անում: Այդ զոհաբերությունը բաղկացած է մեղրաբլիթից: Դրված մեղրաբլիթը միշտ կերված էր լինում, իսկ այս անգամ այն մնացել էր անձեռաց: Երբ քրմուհին այդ մասին հաղորդեց, աթենացիներն ավելի շտապեցին և համաձայնվեցին լքել իրենց քաղաքը, ենթադրելով, որ դիցուհին ևս լքել է ակրոպոլիսը: Երբ նրանք ամեն ինչ փոխադրեցին, վերադարձան նավատորմ:

42. Երբ Արտեմիսիոնից ժամանած նավերը կանգնել էին Սալամիսում,

հելլենների մնացյալ նավատորմը ևս, այդ մասին լսելով, Տրեզենից եկավ այստեղ. քանզի նախապես պայմանավորվել էին նավամբվել Տրեզենի Պոգոն նավահանգստում: Այստեղ ժամանեցին թվով ավելի շատ նավեր, քան Արտեմիսիոնի նավամարտում կային, և ավելի մեծ թվով քաղաքներից: Այդ նավատորմի հրամանատարը նույն սպարտացին էր, Եվրիկլիդեսի որդի Եվրիբիադեսը, առանց բազավորական ծագմից սերած լինելու: Այսուհանդերձ, բոլորից շատ և բոլորից արագընթաց նավերը տրամադրել էին աթենացիները:

43. Արշավանքին մասնակցում էին հետևյալ նավերը: Պելոպոննեսոսից լակեդեմոնացիները տրամադրել էին տասնինը նավ. կորնթացիները՝ թվով նույնքան, ինչքան ուղարկել էին Արտեմիսիոն: Սիկիոնցիները տրամադրել էին տասնհինգ նավ, եպիդավրոսցիները՝ տաս, տրեզենացիները՝ հինգ, հերմիոնեցիները՝ երեք: Այս բոլոր քաղաքները, բացի Հերմիոնեից, պատկանում էին դորիական և մակեդոնական[8] ցեղերին, որոնք գաղթել են (Պելոպոննեսոս) Երինեայից, Պինդոսից և, վերջապես Դրիոպիս երկրից: Հերմիոնեցիները դրիոպներ են, որոնց Հերակլեսն ու մալիցիները դուրս են քշել Դորիս կոչված երկրից:

44. Սրանք պելոպոննեսցիների նավերն էին: Իսկ մայր ցամաքի քաղաքներից միայն աթենացիները տրամադրել էին նույնքան նավ, այսինքն այնքան, ինչքան մնացած բոլոր քաղաքները միասին: Քանզի Սալամիսում պլատեացիները շկովեցին աթենացիների կողքին հետևյալ պատճառով: Երբ հելլենները վերադարձան Արտեմիսիոնից ու հասան Քաղկիս, պլատեացիները դուրս եկան հանդիպակաց Բեոտիայի ափը և սկսեցին փոխադրել տնեցիներին: Անա և նրանց փրկելիս, պլատեացիները ետ մնացին: Երբ պելասգները տիրում էին այժմ Հելլադա կոչվող երկրին, աթենացիները պելասգներ էին և կոչվում էին կրանայներ. իսկ թագավոր Կեկրոպսի օրով՝ կեկրոպյաններ: Երբ հետագայում իշխանությունը վերցրեց Երեքթևսը, նրանք կոչվեցին աթենացիներ. բայց երբ Քսութոսի որդի Իոնը դարձավ աթենացիների զորապետը, նրանք կոչվեցին հոնիացիներ:

45. Մեգարացիները տրամադրել էին նույնքան նավ, ինչքան և Արտեմիսիոնում. ամբրակիացիները օգնելու էին եկել յոթ նավով, լևկադացիները՝ երեք. սրանք պատկանում էին Կորնթոսի դորիական ցեղերին:

46. Կղզեբնակներից էգինացիները տրամադրել էին երեսուն նավ. էգինացիները ուրիշ նավեր ևս պատրաստել էին, բայց դրանք մնում էին պահպանելու իրենց երկիրը, իսկ նրանց առավել արագընթաց երեսուն նավերը կռվեցին Սալամիսում: Էգինացիները Եպիդավրոսից եկած դորիացիներ են: Նրանց կղզին անցյալում կոչվել է Օյնոնե: Էգինացիներից հետո ժամանեցին քաղկիսցիները քսան նավով, ինչպես և Արտեմիսիոնում, իսկ երետրիացիները՝ յոթ նավով. սրանք հոնիացիներ են: Այնուհետև ժամանեցին կեոսցի-

ները, նույն այդ նավերով. նրանք ևս Աթենքից սերած հոնիացիներ են: Նախոսցիները տրամադրեցին չորս նավ. մյուս կղզիների բնակիչների նման, Կիոսի քաղաքացիները սրանք ուղարկել էին պարսիկներին. բայց հակառակ եղած հրամանին, նրանք, Դեմոկրիտոսի պնդմամբ, եկան հելլեններին մոտ: Դեմոկրիտոսը տրիերայի նավապետ էր և խիստ հարգված Նախոսում: Նախոսցիները հոնիացի են և սերում են աթենացիներից: Սայուրիացիները տրամադրեցին հույնման նավ, ինչպես և Արտեմիսիոնում: Կորնթացիները՝ մեկ տրիերա և մեկ ճիսուն թիակաձի բեռնատար. սրանք դրիոպներ են: Սերիփոսցիները և սիփնոսցիները և Մելոսցիները նույնպես նավեր տրամադրեցին. կղզեբնակներից միայն սրանք էին, որ բարբարոսին չավելցին հող ու ջուր:

47. Այս արշավանքի բոլոր մասնակիցները բնակվում էին Թեսպրոտիայից և Աքերոն գետից այս կողմ: Թեսպրոտիացիները սանմանակից էին ամբրակիացիներին և լևկադացիներին, որոնք արշավանքի մասնակիցների մեջ առավել հեռաբնակներն էին: Այս երկրներից այն կողմ բնակվող հելլեններից միայն կրոտոնցիները վտանգի. պանին եկան հելլեններին օգնության մեկ նավով, որի նավապետն էր այնթիական խաղերի հաղթող Փայուլոսը: Կրոտոնցիները ծագումով ախայացիներ են:

48. Մինչ մյուս քաղաքներն արշավանքին մասնակցեցին տրիերաներով, Մելոսի, Սիփնոսի և Սերիփոսի բնակիչները՝ ճիսուն թիակաձիներով: Մելոսցիները, որոնք ծագում էին Լակեդեմոնից, տրամադրեցին երկու նավ. իսկ սիփնոսցիները և սերիփոսցիները, որոնք Աթենքից դուրս եկած հոնիացիներ են, մեկական նավ: Բոլոր նավերի ընդհանուր թիվը, բացի ճիսուն թիակաձիներից, եղել էր երեք հարյուր յոթանասուն ութ:

49. Երբ հավաքվեցին Սալամինում, վերոհիշյալ քաղաքների զորավարները խորհուրդ գումարեցին: Եվրիբիադեսը առաջարկեց յուրաքանչյուր ցանկացողին՝ հայտնել իր կարծիքը, թե՝ դեռևս հելլենների իշխանության տակ մնացած վայրերից ո՞ր մեկում նավամարտ մղեն: Քանզի Ատտիկան արդեն լքված էր, և այժմ կարելի էր առաջարկել միայն Հելլադայի մնացյալ վայրերից մեկը: Այնժամ խոսողների մեծ մասի կարծիքը համընկնում էր այն բանում, որ անհրաժեշտ է նավարկել դեպի Իսթմոս, և այնտեղ նավամարտել Պելոպոնեսոսը պաշտպանելու համար: Ընդ որում, նրանք գտնում էին, որ եթե իրենք Սալամինի առաջ նավամարտեն և պարտվեն, ապա ստիպված կլինեն պաշարվել կղզում, որտեղ ոչ մի օգնություն չեն ստանա. մինչդեռ Իսթմոսից իրենք կարող են փրկվել, վերադառնալով իրենց տները:

50. Մինչ Պելոպոնեսոսի զորավարները նման առաջարկ էին անում, ժամանեց ոմն աթենացի, լուր բերելով, թե բարբարոսն արդեն հասել է Ատտիկա և ամբողջ երկիրը հրի է մատնում: Քսերքսեսն իրեն հետևող զորքի հետ, անցնելով Բեոտիայով, հրի էր մատնել Թեսպիա քաղաքը, որի բնա-

կիչները լքել էին այն և ապաստանել Պելոպոնեսոսում. Պլատեա քաղաքը ևս (ավերվել էր). այնուհետև նա ներխուժել էր Ատտիկա և ավերում էր այն: Սրանք նրի էր մատնել Թեսպիան և Պլատեան, թերեցիներից իմացած լինելով, թե այդ քաղաքները չեն հարել պարսիկներին:

51. Հելլեսպոնտոսն անցնելուց հետո, որտեղից նրանք սկսեցին արշավանքը, բարբարոսները մեկ ամիս վատնեցին Եվրոպա անցնելու վրա, և երեք ամիս հետո նրանք հասան Ատտիկա. այդ ժամանակ Աթենքի արքունը Կալլիադեսն էր: Պարսիկները գրավեցին ամայի քաղաքը. միայն տաճարում նրանք պատահեցին փոքրաթիվ աթենացիների՝ տաճարի գանձապահներին և աղքատ մարդկանց, որոնք ակրոպոլիսի դռները փակելով և գերաններով (ամրացնելով), պաշտպանվում էին հարձակվողների դեմ: Նրանք չէին մեկնել Սալամիս, մասամբ իրենց չքավորության պատճառով, մասամբ էլ կարծելով, թե իրենք ճիշտ են կռահել Պյութիայի պատգամը, թե՝ պարիսպները անառիկ կլինեն: Նրանք համոզված էին, թե պատգամի նշած ապաստանը սա է, և ոչ թե նավերը:

52. Պարսիկները գրավեցին ակրոպոլիսին հանդիպակաց բլուրը, որն աթենացիները կոչում են Արեոս պագոս[9], և պաշարեցին (ակրոպոլիսը) հետևյալ կերպ. խծուծ փաթաթած նետասլաքները վառում և նետում էին պատվարի վրա: Բայց պաշարված աթենացիները պաշտպանվում էին, թեև հասել էին ծայրագույն դրության և պատվարը այլևս չէր կարող իրենց պաշտպանել: Այսուհանդերձ, նրանք չընդունեցին նաև հանձնվելու մասին Պիսիստրատյանների առաջարկությունը, այլ պաշտպանվելու նոր հնարներ էին մտածում: Այսպես, դարպասներին մոտեցող բարբարոսների վրա նրանք հսկա քարեր էին գլորում, որի պատճառով Քսերքսեսը երկար ժամանակ չէր կարողանում ակրոպոլիսը գրավելու նոր հնար գտնել:

53. Ի վերջո, բարբարոսները դժվարին դրությունից ելք գտան. քանզի, ըստ պատգամախոսի գուշակության, ամբողջ մայրցամաքային Ատտիկան պետք է ենթարկվեր պարսից իշխանության: Ակրոպոլիսի առջևի մասից, որը գտնվում է դարպասների և վերև տանող հանապարհի դիմաց, որտեղ պահակներ չկային, քանի որ կարծում էին, թե ոչ ոք այնտեղից չի կարող բարձրանալ, մի քանի պարսիկ մագլցեցին վեր. այդ կատարվել էր Կեկրոպսի դուստր Ագլավրոսի սրբավայրի մոտ, թեև վայրը իրոք գահավեժ էր[10]: Երբ աթենացիները տեսան նրանց ակրոպոլիսի վրա, ոմանք իրենց նետեցին պարապից ցած և ջախջախվեցին, իսկ մյուսները ապաստանեցին տաճարի ներսում: (Ակրոպոլիս) բարձրացած պարսիկները նախ վազեցին դեպի դարպասները, բաց արեցին դրանք և սպանեցին փրկություն աղերսողներին: Արդեն բոլորին սպանելուց հետո, նրանք կողոպտեցին տաճարը և ամբողջ ակրոպոլիսը հրկիզեցին:

54. Աթենքն ամբողջությամբ գրավելով, Քսերքսեսը հեծյալ սուրհանդակ

ուղարկեց Սուսա, Աստաբանոսին ավետելու իր ունեցած հաջողությունը: Սուրճանդակին ուղարկելու հաջորդ օրը նա իր մոտ հրավիրեց աթենացի վտարանդիներին, որոնք իր հետ մասնակցում էին արշավանքին, և հրամայեց նրանց բարձրանալ ակրոպոլիս և զոհաբերություն կատարել ըստ իրենց սովորության: Նա այդպես հրամայեց գուցե իր տեսած ինչ-որ երազի պատճառով, կամ գուցե զղջացած, որ հրկիզել էր սրբավայրը: Աթենացի վտարանդիները կատարեցին հրամայվածը:

55. Թե ինչո՞ւ ես այդ մասին հիշատակեցի, հիմա կասեմ: Այս ակրոպոլիսում գտնվում է հողածին կոչված Երեքթևսի սրբավայրը, որում կա ձիթենի և աղի չրի աղբյուր, որոնք, ինչպես աթենացիները պատմում են, Պոսեյդոնը և Աթենասը, այդ երկրի շուրջ վիճելիս, բերել են այնտեղ որպես այդ երկրի վրա իրենց տիրապետությունը վկայող նշան[11]: Անա այս ձիթենին բարբարոսները հրի մատնեցին սրբավայրի հետ: Հրկիզման հաջորդ օրը աթենացի վտարանդիները, արքայի հրամանով, բարձրացան սրբավայր և տեսան, թե այրված ձիթենու բնից մեկ կանգուն երկարությամբ ընձյուղ է աճել: Նրանք այդ մասին հաղորդեցին արքային:

56. Երբ Սալամիսում գտնվող հելլենները լսեցին Աթենքի ակրոպոլիսում կատարված դեպքերի մասին, այնքան շփոթվեցին, որ նույնիսկ զորավարներից ոմանք, առանց սպասելու, թե հարցուփորձելուց հետո ի՞նչ կպարզվի, վազեցին դեպի իրենց նավերը և առագաստները բացին իսկույն մեկնելու համար: Մնացածները որոշեցին նավամարտ մղել Իսթմոսի առաջ: Երբ գիշերն իջավ, ժողովը ցրվեց և (զորավարները) բարձրացան իրենց նավերը:

57. Երբ Թեմիստոկլեսը բարձրացավ իր նավը, Մնեսիփիլոսը, աթենացի մի զինվոր, հարցրեց նրան, թե ի՞նչ որոշում ընդունվեց: Նրանից իմանալով, թե որոշել են նավերը տանել Իսթմոս և նավամարտել Պելոպոնեսոսի առաջ, Մնեսիփիլոսն ասաց. «Եթե նավերը հեռանան Սալամիսից, ապա դու այլևս երբեք հայրենիքի համար չես մարտնչելու: Քանզի ամեն մեկը կվերադառնա իր քաղաքը, և այնժամ ոչ Եվրիբիադեսը, ոչ էլ որևէ մեկ ուրիշը չի կարողանա խանգարել նավատորմի ցրվելուն: Հելլադան կկործանվի անմտության պատճառով: Ուստի, եթե որևէ ճնարավորություն կա, ապա գնա և փորձիր փոխել որոշումը, կամ գոնե համոզիր Եվրիբիադեսին մնալ այստեղ»:

58. Այս խորհուրդը հաճելի թվաց Թեմիստոկլեսին, և նա, ոչինչ չպատասխանելով, ուղղվեց դեպի Եվրիբիադեսի նավը և, հասնելով այնտեղ, ասաց, թե ուզում է նրա հետ խորհրդակցել մի ընդհանուր գործի մասին: Եվրիբիադեսը նրան հրավիրեց նավ բարձրանալ և հայտնել իր խնդիրը: Այնժամ Թեմիստոկլեսը նստեց նրա կողքին և, որպես իր կարծիքը, պատմեց այն ամենը, ինչ լսել էր Մնեսիփիլոսից. բացի այդ, ավելացրեց նաև այլ պատճառաբանություններ, մինչև որ կարողացավ համոզել նրան դուրս գալ նավից և հրավիրել զորավարների խորհուրդ:

59. Երբ նրանք հավաքվեցին, դեռ նախքան Եվրիբիադեսը կբացատրեր զորավարներին հրավիրելու պատճառը, Թեմիստոկլեսը երկար խոսեց, քանի որ նրա խնդրանքը շատ կարևոր էր: Մինչ նա դեռ խոսում էր, կորնթացի զորավար Ադիմանթոսը, Օկյուտոսի որդին, ասաց. «Ով Թեմիստոկլես. մրցումներում նախքան ազդանշանը առաջ վազողներին գանահարում են»: Իսկ Թեմիստոկլեսը արդարանալով պատասխանեց. «Բայց ետ մնացողները չեն պսակավորվում»:

60. Այնժամ նա այսպես մեղմ պատասխանեց կորնթացուն. բայց դիմելով Եվրիբիադեսին, նա արդեն ոչինչ չասաց իր նախկին խոսքերից այն մասին, թե նավատորմը կցրվի, եթե իրենք հեռանան Սալամիսից: Քանզի դաշնակիցների հերկայությամբ նրա համար անվայել է որևէ մեկին մեղադրել. ուստի և Թեմիստոկլեսը սկսեց այլ պատճառաբանություններ բերել և ասաց. «Այժմ քո ձեռքում է Հելլադայի փրկությունը, եթե լսես իմ խորհուրդը և այստեղ մնալով, նավամարտես, այլ ոչ թե հեռանաս նավերը Իսթմոս տանել առաջարկողների խորհրդին: Այժմ լսիր ինձ և համեմատիր երկու առաջարկությունները: Իսթմոսում մարտն ընդունելիս, մենք ստիպված կլինենք նավամարտել բաց ծովում, իսկ դա մեզ համար միշ նպաստավոր է, քանի որ մեր նավերը առավել ծանր են բարբարոսների նավերից և փոքրաթիվ: Բացի այդ, դու կկորցնես Սալամիսը, Մեգարան և Էգինան, նույնիսկ եթե մենք հաջողություն ունենանք: Քանզի նրանց նավատորմին կհետևի նաև հեռանակը, ուստի և դու ինքդ թշնամուն կառաջնորդես Պելոպոնեսոս և կրվրատանգես ամբողջ Հելլադան: Բայց եթե դու կատարես իմ խորհուրդը, ապա հետևյալ օգուտը կունենաս: Նախ, եթե մենք մեր փոքրաթիվ նավերով նեղ վայրում կռվենք մեծաթիվ նավերի դեմ, ապա պատերազմի հավանական ելքը կլինի այն, որ մենք մեծ հաղթանակ կտանենք. քանզի նեղ վայրում նավամարտելը մեր օգտին է, իսկ լայն վայրում՝ նրանց: Երկրորդ, մենք կփրկենք Սալամիսը, որտեղ փոխադրել ենք մեր երեխաներին և կանանց: Բացի այդ, դրանով քեզ կհաջողվի անել այն, ինչ բոլորից առավել մտածում ես: Դու այստեղ մնալով նույնքան լավ կարող ես պաշտպանել Պելոպոնեսոսը, ինչքան և Իսթմոս մեկնելով, և, եթե խելացի վարվես, բարբարոսներին չես հրապուրի այնտեղ: Եթե գործը կատարվի այնպես, ինչպես ես ենթադրում եմ, և մենք հաղթենք նավամարտում, ապա բարբարոսները երբեք չեն գալու մեզ մոտ, Իսթմոս. նրանք նույնիսկ չեն թափանցելու Ատտիկայից այս կողմ, այլ կհեռանան անկարգ կերպով: Դրանով մենք կշահենք ու կփրկենք Մեգարան, Էգինան և Սալամիսը, որտեղ և մեզ գուշակություն է եղել, թե մենք կհաղթենք թշնամուն: Երբ մարդիկ խելամիտ որոշումներ են ընդու-

նում, ապա նրանց գործը հաջողվում է. մինչդեռ անմիտ որոշումների դեպքում, ասված իսկ չի օգնում մարդկանց գործերին»:

61. Երբ Թեմիստոկլեսն այսպես ասաց, կորնթացի Ադիմանթոսը դարձյալ նրան պատասխանեց ասելով, թե հայրենիք չունեցող մարդը պետք է լռի, և թե Եվրիբիադեսը չպետք է խաղաքաղաքակիրթ մարդուն ձայնի իրավունք տա: Թեմիստոկլեսը թող իր քիկունքին մի խաղաք ունենար, նոր սկսեր կարծիքներ հայտնել: Նա այդպես ասում էր, քանի որ Աթենքն արդեն գրավվել էր և գտնվում էր թշնամու տիրապետության տակ: Այնժամ Թեմիստոկլեսը նրան և կորնթացիներին բազում խիստ խոսքեր ուղղեց և հայտարարեց, թե իր խաղաքը և երկիրը ավելի մեծ է, քան նրանցը, քանի որ աթենացիները պատրաստել են երկու հարյուր նավ. ոչ մի հելլենական խաղաք չի կարող դիմակայել աթենացիների հարձակման:

62. Այս ասելուց հետո նա դարձյալ դիմեց Եվրիբիադեսին և խոսեց ավելի վճռական. «Դու եթե մնաս այստեղ, դրանով իսկ կհամարվես խաչարի մարդ. հակառակ դեպքում կոտապալես Հելլադան. քանզի այս պատերազմում մեր ամբողջ զորությունը նավերն են: Ուստի լսիր դու ինձ: Եթե դու այդպես չանես, ապա մենք մեր ընդծիններին կվերցնենք ու կմեկնենք Իտալիայի Սիբիս, որը հնուց անտի մերն է և պատգամատունն էլ հայտնել է, թե մենք պետք է այնտեղ հաստատվենք: Իսկ դուք մեզ նման դաշնակիցներից զրկվելով, դեռ կհիշեք իմ խոսքերը»:

63. Թեմիստոկլեսի այս խոսքերից հետո Եվրիբիադեսը փոխեց իր մտադրությունը: Իմ կարծիքով, նա իր մտադրությունը փոխեց, վախենալով, որ եթե իրեք նավերը տանի Իսթմոս, ապա աթենացիները կլքեն իրեն. քանզի եթե աթենացիները լքեին իրեն, ապա մնացյալները չէին կարող դիմադրել թշնամուն: Ուստի Եվրիբիադեսը ընդունեց (Թեմիստոկլեսի) առաջարկը՝ մնալ այնտեղ և նավամարտել:

64. Այսպիսով, Սալամիսում այսպես վիճելուց հետո (հելլենները), Եվրիբիադեսի հրամանով, պատրաստվեցին այնտեղ նավամարտելու: Հաջորդ օրը, արեածագին, երկրաշարժ եղավ ցամաքի վրա և ծովում: Ուստի հրանք որոշեցին աղոթել ասվածներին և հայցել էակյանների օգնությունը[12]: Այդպես որոշեցին և կատարեցին: Մաղթանք ուղղելով բոլոր ասվածներին, հրանք Սալամիսից օգնության կոչեցին Էասին և Տելամոնին. իսկ Էակոսի և մյուս էակյանների համար նավ ուղարկեցին Էգինա:

65. Դիկայոսը[13], Թեոկիդեսի որդին, աթենացի վտարանդի, որն այդ ժամանակ հարգանք էր վայելում պարսիկների մոտ, պատմում է, թե երբ Քսերքսեսի զորքը ավերում էր արդեն աթենացիներից լքված Ատտիկան, ինքը եղել է լակեդեմոնացի Դեմարատոսի հետ Թրիասիոն դաշտում[14]: Նա տեսել է Ելևսիսից բարձրացող փոշու ամպ, ասես երեք բյուր մարդկանցից: Մինչ հրանք զարմանում էին, թե այդ ի՞նչ մարդիկ են այդպիսի փոշի բարձրացնում, երբ հանկարծ հրանք ճիչ լսեցին, որը թվաց բաքոսական միստերիաների հրճվալի աղաղակի նման: Դեմարատոսը, որն անհաղորդ էր ելևսինյան միստերիաներին, հարցրեց Դիկայոսին, թե այդ ի՞նչ ձայներ են: Իսկ նա պատասխանեց. «Դեմարատոս. մեծ ապետ է սպառնում արքայի զորքերին: Քանզի Ատտիկան ամայացած է բնակիչներից, և ակներև է, որ այդ ձայնն է աստուծո, որը գալիս է Ելևսիսից, օգնելու աթենացիներին և նրանց դաշնակիցներին: Եվ եթե (փոշու այդ ամպը) շարժվի Պելոպոնեսոսի վրա, ապա կվտանգվեն ինքը՝ արքան և ցամաքի վրա գտնվող նրա զորքերը. իսկ եթե այն շարժվի դեպի Սալամիսում գտնվող նավերը, ապա արքան կկանգնի նավատորմը կորցնելու վտանգի առաջ: Իսկ այս տոնը աթենացիները կատարում են ամեն տարի Մոր և Օրիորդի[15] պատվին, և ամեն աթենացի կամ ուրիշ հելլեն, եթե ցանկանա, կարող է նվիրաբերվել և մասնակցել այդ խորհրդին: Քո լսած այս ճիչը իակխոս է[16], որը երգվում է այդ տոնի ընթացքում»: Դեմարատոսը նրան պատասխանեց. «Լռիր և ոչ մեկ ուրիշի այդ մի պատմիր: Եթե քո այս խոսքերը հասնեն արքային, ապա դու կզրկվես քո գլխից և այդ ժամանակ ոչ ես կարող եմ քեզ փրկել, ոչ էլ մեկ ուրիշը: Դու հանգիստ մնա, իսկ զորքի մասին հոգալը թող աստվածներին»: Դեմարատոսն այսպիսի խորհուրդ տվեց Դիկայոսին: Իսկ փոշին և ձայները ամպ դառնալով, բարձրացան և շարժվեցին դեպի Սալամիս, հելլենների նավատորմ: Այնժամ հրանք հասկացան, որ Քսերքսեսի նավատորմին կործանում է սպասում: Այսպես է պատմել Թեոկիդեսի որդի Դիկայոսը, վկայակոչելով Դեմարատոսին և այլ վկաների:

66. Քսերքսեսի նավատորմում կարգվածները, լակեդեմոնացիների կրած պարտությունը տեսնելուց հետո, Տրաքիսից անցան Հիստիեա, որտեղ երեք օր մնացին և նավարկեցին Եվրիպոսով. ևս երեք օր անց հրանք հասան Փալերոն: Իմ կարծիքով, ցամաքից և ծովից Ատտիկա ներխուժածների թիվը պակաս չի եղել Սեպիասում և Թերմոպիլեի մոտ կանգնածների թվից: Քանզի փոքրիկի պատճառով, ինչպես և Թերմոպիլեի նախատամարտում և Արտեմիսիոնի նավամարտում պարսիկների կրած կորուստները լրացվեցին հետագայում արքային ուղարկված նամակներով: Մալիցիները, դորիացիները, լոկրերը, բոլոր բեոտիացիները, բացի թեսպիացիներից և պլատեացիներից, ինչպես նաև կարիստոսցիները, անդրոսցիները, տենոսցիները և բոլոր մնացյալ կղզեբնակները, բացի հինգ քաղաքներից[17], որոնց անունները հիշատակել եմ վերևում, միացան արքային. քանզի, ինչքան Պարսիկը առաջանում էր Հելլադայում, այնքան շատ ազգեր հետևում էին իրեն:

67. Այս բոլորը հասան Աթենք, բացի պարոսցիներից, որոնք մնացել էին Կյուքնոսում, սպասելով պատերազմի ելքին: Երբ բոլոր մյուս նավերը ժամանեցին Փալերոն, ինքը Քսերքսեսը եկավ ծովափ, նավերի մոտ, նավավարներին հանդիպելու և նրանց կարծիքն իմանալու համար: Ժամանելով

այնտեղ, արքան բազմեց իր գահին. հետո ներկայացան խորհրդի հրավիրված ազգերի տիրակալները և նավերի հրամանատարները և նստեցին, ըստ արքայի շնորհած կարգի: Առաջինը նստեց Սիդոնի թագավորը, հետո՝ Տյուրոսի (թագավորը) և հետո մյուսները: Երբ հրանք կարգով նստեցին, Քսերքսեսը ուղարկեց Մարդոնիոսին և հրամայեց հերթով յուրաքանչյուրին հարցնել, թե՝ պե՞տք է արդյոք նավամարտել:

68. Արդ, Մարդոնիոսը, մոտենալով ամեն մեկին, հարցնում էր, սկսելով Սիդոնի թագավորից: Բոլորը միահամուռ նույն կարծիքը հայտնեցին, թե պետք է այնտեղ նավամարտել: Արտեմիսիան[18] այսպես խոսեց. «Մարդոնիոս. հայտնիր արքային, թե ես այսպես եմ ասում: Ես, որ Եվբեայի մոտ նավամարտում վեհերոտ չեղա և իմ արարքները հետիններից չէին, կարող եմ, տեր իմ, բացահայտորեն քեզ հայտնել այն, ինչ համարում եմ քեզ համար առավել օգտակար: Ուստի ես քեզ ասում եմ. խնայիր քո նավերը և մի նավամարտիր: Քանզի ծովում այս մարդիկ քո մարդկանց գերազանցում են այնպես, ինչպես տղամարդիկ՝ կանանց: Եվ դու ինչո՞ւ, ընդհանրապես, քեզ վտանգես նավամարտելով: Մի՞թե դու չես նվաճել Աթենքը, որի համար էլ դու ելար արշավանքի. մի՞թե դու չես տիրել մնացյալ Հելլադային: Քեզ ոչ ոք չի դիմադրում: Քեզ դիմադրողներն իրենց արժանին ստացան: Այժմ ես քեզ կասեմ, թե ի՞նչ վախճան կունենան, իմ կարծիքով, թշնամու գործերը: Եթե դու չշտապես նավամարտի բռնվել, այլ նավերդ այստեղ պահես և մնաս ծովափին, կամ թեկուզ և առաջանաս Պելոպոնեսոսում, ապա քո նպատակը, իմ տեր, որի համար դու եկել ես, հեշտությամբ կիրականանա: Քանզի հելլենները ի վիճակի չեն այստեղ քեզ երկար դիմադրելու. դու կցրես նրանց և ամեն մեկը կմեկնի իր քաղաքը, որովհետև, ինչպես ինձ հայտնի է, այս կղզում պարեն չկա և, թվում է, որ եթե դու քո հետևակով շարժվես Պելոպոնեսոս, ապա սրանց մեջ գտնվող պելոպոնեսցիները անշարժ չեն մնա այստեղ. հրանք նույնիսկ չեն մտածի նավամարտել Աթենքի համար: Բայց եթե դու շտապես իսկույն նավամարտել, ապա վախենամ, որ քո նավատորմի պարտությունը կկործանի նաև հետևակին: Բացի այդ, ով արքա, չմոռանաս, որ լավ՝ մարդիկ, սովորաբար, ունենում են վատ ծառաներ, իսկ վատ մարդիկ՝ լավ ծառաներ: Դու, լինելով ազնվագույնը բոլոր այրերից, ունես վատ ծառաներ, որոնք իբր քո դաշնակիցներն են՝ եգիպտացիներ, կիպրոսցիներ, կիլիկեցիներ և պամփյուլիացիներ, որոնցից ոչ մի օգուտ չկա»:

69. Երբ Արտեմիսիան այսպես ասաց Մարդոնիոսին, Արտեմիսիային բարեկամ եղողները վշտացան նրա խոսքերից, մտածելով, որ արքան նրան շարիք կպատճառի նավամարտ չմղելու համար նրա տված խորհրդի պատճառով: Իսկ նրա հանդեպ անբարյացակամ եղողները և նախանձողները այն բանի համար, որ արքան նրան բոլոր դաշնակիցներից առավել պատիվ էր շնորհում, հրճվեցին նրա հակառակությունից, մտածելով, որ այն կկործանի

հրան: Բայց երբ (զորավարների) կարծիքները հաղորդվեցին Քսերքսեսին, արքային շատ հաճելի թվաց Արտեմիսիայի կարծիքը: Նախկինում հույնպես արքան նրան համարում էր խելացի կին, իսկ այժմ նրան առավել ևս գովեց: Այսուհանդերձ, արքան հրամայեց կատարել մեծամասնության խորհուրդը, ենթադրելով, որ պարսիկները Եվբեայի մոտ վատ էին կռվել սոսկ այն պատճառով, որ ինքն անձամբ ներկա չէր եղել. իսկ այժմ արքան այնպես էր արել, որ ինքն անձամբ դիտեր նավամարտը :

70. Երբ մեկնելու հրամանը տրվեց, (պարսից) նավերը մեկնեցին Սալամիս և այնտեղ հանգիստ խարսխեցին իրար կողքի, ռազմական դասավորությամբ: Այդ օրը հրանք չկարողացան նավամարտն սկսել, քանի որ գիշերը վրա էր հասնում: Նրանք պատրաստվեցին հաջորդ օրվա համար: Իսկ հելլեններին համակել էր վախն ու սարսափը. առավելապես անհաբեկված էին պելոպոնեսցիները այն բանի համար, որ իրենք, մնալով Սալամիսում, պետք է նավամարտին հանուն աթենացիների երկրի. քանզի պարտության դեպքում հրանք կկտրվեին (իրենց երկրից) և կպաշարվեին կղզում, իսկ իրենց հայրենիքը կմնար անպաշտպան: Մինչ այդ, բարբարոսների հետևակը շարժվեց դեպի Պելոպոնեսոս:

71. Հելլեններն ամեն հնարավոր միջոց ձեռնարկել էին, որպեսզի բարբարոսները չկարողանային ներխուժել ցամաքից: Քանզի երբ պելոպոնեսցիները լսեցին Լեոնիդասի և նրա զորախմբի կործանումը Թերմոպիլեում, հրանք իրենց քաղաքներից անհապաղ եկան և բանակեցին Իսթմոսում: Նրանց զորավարն էր Անքիսանդրիդեսի որդի Կլեոմբրոտոսը, Լեոնիդասի եղբայրը: Բանակելով Իսթմոսում, հրանք քանդեցին ու փակեցին Սկիրոնյան նեղապարանը, այն դարձնելով անանցանելի. այնուհետև հրանք խորհուրդ գումարեցին և որոշեցին Իսթմոսի լայնքով պարիսպ կառուցել: Քանի որ հրանք բազմաբյուր էին և ամեն մարդ աշխատում էր, ապա գործը առաջ էր ընթանում: Բերում էին այնտեղ քարեր, աղյուսներ, գերաններ, զամբյուղներով ավազ. և աշխատանքը անդադար շարունակվում էր գիշեր ու գիշեր:

72. Հելլեններից ամբողջ համայնքով Իսթմոս օգնության եկել էին լակեդեմոնացիները, բոլոր արկադիացիները, էլեյացիները, կորնթացիները, եպիդավրոսցիները, փլիուսցիները, տրեզենացիները և հերմիոնեցիները: Անհատ սրանք էին շտապել օգնելու, Հելլադային սպառնացող վտանգից տագնապած: Իսկ մնացած պելոպոնեսցիները բոլորովին մտահոգված չէին, թեև օլիմպիական և կառնեյան խաղերն արդեն ավարտվել էին[19]:

73. Իսկ Պելոպոնեսոսում բնակվում են յոթ ցեղեր. դրանցից երկուսը՝ արկադիացիները և կինոդյանները, տեղաբնիկ են և այժմ իսկ բնակեցնում են այն վայրերը, որտեղ և ապրել էին հնում: Այդ ցեղերից մեկը, ամայականը, երբեք չի լքել Պելոպոնեսոսը, այլ (այնտեղ) իրենց երկրից տեղափոխվել է մեկ այլ վայր. իսկ յոթ ցեղերից չորսը՝ դորիացիները, էտոլիա-

ցիները, դրիոպները և լեմնոսցիները, եկվորներ են: Դորիացիները շատ նայտնի քաղաքներ ունեն. էոլիացիների միակ քաղաքը Էլիսն է: Դրիոպների քաղաքներն են Հերմիոնեն և Ասինեն, որը գտնվում է լակոնիական Կարդամիլե քաղաքի մոտ. բոլոր պարոռեատները լեմնոսցիներ են: Թվում է, թե նոնիացիներ են միայն տեղաբնիկ կինոդյանները, որոնք, ընկնելով արգոսցիների իշխանության տակ, ժամանակի ընթացքում դորիականացել են. դրանք են՝ էոնեատները և նրանց հարևանները: Այս յոթ ցեղերի մյուս քաղաքները, բացի վերոնիշյալներից, մնացին չեզոք: Իսկ ազատ խոսելու դեպքում, պետք է ասել, որ չեզոք մնալով նրանք համակրում էին պարսիկներին:

74. Խաթմոսում եղողները այնպիսի չանասիրությամբ էին աշխատում, ասես ամեն ինչ պետք է այստեղ վճռվեր, քանի որ նրանք նույն չունեին, թե նավամարտում կնաղթեն: Իսկ Սալամիսում եղողները, թեև իմացել էին այդ աշխատանքների մասին, այնուհանդերձ անաբեկված էին: Նրանք վախենում էին ոչ այնքան իրենց, որքան Պելոպոնեսոսի համար: Սկզբում նրանք իրար միջև ցածրաձայն զանգատվում էին, զարմանալով Եվրիբիադեսի անմտության վրա. ի վերջո (դժգոհությունը) բացահայտ արտահայտվեց: Նորից զորաժողով գումարվեց և սկսեցին վիճել նույն հարցի շուրջ: Ոմանք պնդում էին, թե պետք է քաշվել Պելոպոնեսոս և այնտեղ կռվել հանուն այդ երկրի, և ոչ թե այստեղ մնալով, կռվել արդեն նվաճված երկրի համար. իսկ աթենացիները, էգինացիները և մեգարացիները խորհուրդ էին տալիս մնալ այնտեղ և պաշտպանվել:

75. Այնժամ Թեմիստոկլեսը, տեսնելով, որ պելոպոնեսացիների տեսակետը սկսում է գերակշռել, անհկատ հեռանում է ժողովից և, դուրս գալով, մակույկով հանձնարարությամբ մեկին ուղարկում է մեդացիների բանակատեղին. այդ մարդու անունն էր Սիկինոս. նա Թեմիստոկլեսի ծառան էր և նրա որդիների դաստիարակը: Այս դեպքերից հետո, երբ թեսպիացիները (նոր) քաղաքացիներ ընդունում էին, Թեմիստոկլեսը նրան դարձրեց Թեսպիայի քաղաքացի և հարուստ մարդ: Անա սա, մակույկով ժամանեց բարբարոսների զորավարների մոտ և ասաց նրանց. «Ինձ ուղարկել է աթենացիների զորավարը մյուս հելլեններից գաղտնի, քանի որ նա արքային կողմնակից է և կամենում է, որ առավելապես ձեր գործերը հաջողվեն, քան հելլենների գործերը, ասելու ձեզ, թե հելլենները անաբեկված են և մտադիր են փախչել: Այժմ դուք լավագույն հնարավորություն ունեք մեծագույն սխրանք կատարելու, եթե թույլ չտաք, որ նրանք փախչեն: Քանզի նրանք համերաշխ չեն իրար և չեն դիմադրելու ձեզ: Դուք ինքներդ կտեսնեք, թե ինչպե՞ս իրար դեմ կռվելու են ձեր կողմնակիցները և թշնամիները»:

76. Այս նայտնելուց հետո, նա հեռացավ: Պարսիկները հավատացին նրա հաղորդածներին և, առաջին հերթին, մեծ թվով պարսիկների ափ հանեցին Պսիտտալիա կղզյակ, որը գտնվում է Սալամիսի և մայր ցամաքի միջև: Այնուհետև, կեսգիշերին, արևմտյան թևում գտնվող նավերը շարժվեցին դեպի Սալամիս, (հելլեններին) պաշարելու նպատակով. ծով դուրս եկան նաև Կեոսի և Կինոսուրայի մոտ կանգնած նավերը, ուստի և մինչև Մունիքիան ամբողջ հեղուցը լցված էր նրանց նավերով: Նավերն այնտեղ էջեցին, որպեսզի հելլեններին թույլ չտան փախչել, այլ փակելով նրանց Սալամիսում, վրեժ լուծեն Արտեմիսիոնի նավամարտի համար: Պսիտալլիա կոչված կղզյակի վրա նրանք պարսկական զորախումբ ափ հանեցին այն ակնկալությամբ, որ ծովամարտ կայանալու դեպքում մարդիկ և խորտակված նավերը այստեղ ափ կհասնեն. քանզի կղզյակը գտնվում էր կայանալիք նավամարտի վայրը տանող հեղուցի վրա, ուստի նրանք կկարողանային փրկել (յուրայիններին) և ոչնչացնել (թշնամիներին): Այս բոլորը նրանք կատարում էին լռությամբ, որպեսզի թշնամին այդ մասին չիմանար: Այսպես էին պարսիկները ամբողջ գիշեր անքուն պատրաստվում:

77. Պատգամատների գուշակությունների ճշմարտությունը ժխտել ես չեմ կարող: Եթե պատգամները երկիմաստ չեն, ես չեմ կարող դրանք կասկածանքի ենթարկել, ինչպես հետևյալ պատգամի դեպքում.

Երբ ասկեզեն Արտեմիսի ափերը սուրբ[20]
Եվ ծովափնյա Կինոսուրան բյուր նավերով միացնեն,
Եվ անօրեն մոլեգնությամբ չքեղ Աթենքը կործանեն,
Զնսի դատը պետք է զսպի հանդգնության լկտի որդուն,
Որը կարծում է, թե ինքը տիրակալն է ամեն ինչի.
Քանզի պղինձը պղնձին պիտի բախվի, և Արեսը
Արյամբ պիտի ծովը ներկի. այնժամ նիկեն պայծառափայլ
Եվ Կրոնիդեսն ազատություն պետք է բերեն Հելլադային:

Երբ Բակիսն այսպիսի գուշակություն է անում այսքան պարզ արտահայտություններով, ապա ես ինքս ևս չեմ համարձակվում շեղվատալ նրա գուշակություններին և ոչ էլ կամենում եմ լսել այլոց հակաճառությունը:

78. Մինչ այդ Սալամիսում (հելլեն) զորավարների միջև շարունակվում էր բուռն վեճը: Նրանք դեռևս անտեղյակ էին, թե շրջապատված են բարբարոսների նավերով, այլ կարծում էին, թե թշնամին կանգնած է այն վայրում, որտեղ նրան տեսել էին նախորդ օրը:

79. Զորավարների վեճի ընթացքում էգինայից այնտեղ անցավ Լիսիմաքոսի որդի Արիստիդեսը, աթենացի այր, որին համայնքը ենթարկել էր օստրակիզմի[21]: Դատելով նրա մասին իմ լսածներից, ես նրան համարում եմ Աթենքի ազնվագույն մարդը: Անա այս մարդը, կանգնելով ժողովի առաջ, դուրս հրավիրեց Թեմիստոկլեսին, որը իրեն բարեկամ չէր, այլ մեծագույն թշնամի: Բայց այժմ, վերահաս մեծ վտանգի առաջ, նա մոռացության տալով անցյալի թշնամանքը, նրան դուրս հրավիրեց բանակցության: Նա իմա-

ցել էր, որ պելոպոննեսցիները ուզում են նավերը տանել դեպի Իսթմոս: Երբ Թեմիստոկլեսը դուրս եկավ, Արիստիդեսն այսպես խոսեց. «Մենք պետք է միշտ, առավել ևս այժմ, մրցենք, թե մեզանից ո՞վ ավելի շատ բարիք կգործի հայրենիքի համար: Ես հիմա քեզ կասեմ, որ բոլորովին նշանակություն չունի, թե պելոպոննեսցիները շա՞տ կվիճեն, թե՞ քիչ՝ այստեղից նավերը տանելու համար: Քանզի ես ականատես եմ եղել և ասում եմ, որ կորնթացիները և ինքը Եվրիբիադեսը եթե ցանկանան իսկ նավերով հեռանալ, չեն կարող. քանի որ թշնամին շրջապատել է մեզ. գնա և նրանց հայտնիր այդ մասին»:

80. Թեմիստոկլեսը նրան այսպես պատասխանեց. «Քո խորհուրդը շատ պիտանի՝ է և դու լավ լուրեր հաղորդեցիր, քանզի դու, որպես ականատես, հայտնեցիր, թե ամեն ինչ կատարվել է այնպես, ինչպես ես ցանկանում էի: Իմացիր, որ այն, ինչ կատարեցին պարսիկները, իմ խորհրդով է եղել: Քանի որ հելլենները չէին կամենում կամովին կռվել, ապա ես պետք է ստիպեի նրանց կռվել հակառակ իրենց կամքին: Քանի որ այժմ եկել ես բարի ավետիսով, ապա ինքդ գնա և հայտնիր նրանց: Քանզի եթե ես ինքս նրանց հայտնեմ այդ մասին, ապա նրանք կկարծեն, թե ես այդ ամենը հորինում եմ, և չեն հավատա, թե բարբարոսները նման բաներ են անում: Ուստի դու գնա և հայտնիր նրանց ստեղծված իրավիճակը: Քո հայտնելուց հետո եթե նրանք հավատան, ապա շատ լավ կլինի. իսկ եթե չհավատան, մեզ համար միևնույն է, քանի որ նրանք արդեն չեն կարող փախչել. որովհետև, ինչպես ինքդ ասացիր, մենք բոլոր կողմերից շրջապատված ենք»:

81. Այնժամ Արիստիդեսը ներկայացավ խորհրդին և ասաց, թե ինքը ժամանել է Էգինայից, հազիվ խուսափելով թշնամու նավերից, քանի որ ամբողջ հելլենական նավատորմը պաշարված է Քսերքսեսի նավերի կողմից: Նա խորհուրդ տվեց պատրաստվել թշնամուց պաշտպանվելու համար: Այս ասելուց հետո նա հեռացավ: Այնժամ դարձյալ վեճն սկսվեց, քանի որ զորավարների մեծ մասը չէր հավատում նրա հաղորդածներին:

82. Մինչ նրանք տակավին կասկածում էին, այնտեղ ժամանեց տենոսցիների մի փախստական տրիերա, որի նավապետն էր Սոսիմենեսի որդի Պանետիոսը. այս տրիերան նրանց հաղորդեց ամբողջ ճշմարտությունը: Այս արարքի համար տենոսցիների անունն արձանագրված է Դելֆիում եռոտանու վրա, բարբարոսներին հաղթած հելլենների թվում: Այսպիսով, Սալամիսի մոտ հելլենների կողմն անցած այս նավի, ինչպես նաև նախապես Արտեմիսիոնում հելլեններին միացած լեմնոսյան նավի հետ հելլենական նավերի թիվն արդեն դարձավ երեք հարյուր ութսուն. քանզի նախկինում այդ թիվն պակասում էր երկու նավ:

83. Հելլեններն արդեն հավատալով տենոսցիների ասածներին, սկսեցին պատրաստվել նավամարտի: Երբ արշալույսը բացվեց, զորավարները գումարեցին նավազների ճավամ, որտեղ Թեմիստոկլեսը բոլորին գերազանցող ճառ արտասանեց: Նա իր ճառում ճակատրեց մարդու բնության մեջ հանդես եկող ազնիվ և ստոր մղումները: Թեմիստոկլեսը կոչ արեց մարտիկներին՝ գերադասել ազնիվ մղումները, և իր ճառը ավարտեց նավեր բարձրանալու հրամանով: Երբ արդեն նավազները բարձրացել էին իրենց նավերը, էգինայից հայտնվեց նաև էակոսյանների մոտ ուղարկված տրիերան:

84. Այնժամ հելլենական բոլոր նավերը դուրս եկան ծով, և բարբարոսներն իսկույն հարձակվեցին նրանց վրա: Մինչ մյուս հելլեններն սկսել էին դեպի ետ թիավարել և նավերը քաշել ծովափ, Ամինիաս Պալլենեսը, աթենացի մի այր, դուրս եկավ շարքից և հարձակվեց (թշնամու) նավի վրա: Երկու նավերն իրար շղթայակցվեցին և չկարողացան իրարից անջատվել: Այնժամ մյուս նավերը շտապեցին Ամինիասին օգնության, և մարտն սկսվեց: Աթենացիները պատմում են, թե նավամարտն այսպես է սկսվել. իսկ էգինացիները պնդում են, թե նավամարտն սկսել է էակոսյանների մոտ էգինա ուղարկված նավը: Պատմում են նաև, թե (հելլեններին) երևացել է ինչ-որ կնոջ ուրվական, որը բոլոր հելլեններին լսելի ձայնով սաստել է հանդիմանական հեռակայլ խոսքերով. «Ով զարմանալի մարդիկ. մինչև ե՞րբ դուք պիտի թիավարեք դեպի ետ»:

85. Աթենացիների հանդիման կանգնած էին փյունիկեցիները, կազմելով արևմտյան թևը դեպի Ելևսիս. իսկ լակեդեմոնացիների դեմ կանգնած էին հոնիացիները, կազմելով արևելյան թևը Պիրեևսի դիմաց: Միայն նրանցից էլերը, անսալով Թեմիստոկլեսի հրահանգին, թույլ էին կռվում. իսկ մեծ մասը՝ ընդհակառակը: Ես կարող էի թվել (հոնիացի) բազում նավապետերի անուններ, որոնք գրավել են հելլենական նավեր, բայց չեմ ուզում նրանց հիշատակել, բացի Անդրոդամասի որդի Թեոմեստորից և Հիստիայոսի որդի Փյուլակոսից, երկուսն էլ Սամոսից: Ես միայն սրանց եմ հիշատակում այն պատճառով, որ Թեոմեստորին այդ սխրանքի համար պարսիկները կարգեցին Սամոսի տիրան. իսկ Փյուլակոսին նրանք արձանագրեցին արքայի բարերարների ցուցակում և նրան պարգևեցին ընդարձակ երկիր: Արքայի բարերարները պարսկերեն կոչվում են օրոսանգներ: Սրանց մասին բանն այսպես էր:

86. Իսկ (թշնամու) նավերի մեծ մասը խորտակվեց Սալամիսում. մի մասը ոչնչացվեց աթենացիների, մյուս մասը՝ էգինացիների կողմից: Քանզի հելլենները կռվում էին մեծ հմտությամբ և կարգապահ, իսկ բարբարոսները գործում էին անկարգ և անմիտ կերպով. հետևաբար, մարտի ելքը պետք է լիներ այնպիսին, ինչպիսին եղավ: Այսուհանդերձ, բարբարոսներն այս անգամ կռվում էին շատ ավելի լավ, քան Եվրեայի նավամարտում: Նրանցից ամեն մեկը, վախենալով Քսերքսեսից, ամեն հիզ գործադրում էր, մտածելով, որ արքան նայում է հենց իրեն:

87. Իսկ թե ինչպե՞ս կռվեց մյուսներից յուրաքանչյուրը, հելլեն թե բարբարոս, ես չեմ կարող ճշտորեն ասել: Ինչ վերաբերում է Արտեմիսիային, ապա նրա հետ կատարվեց հետևյալը, որից նա արքայի աչքին ավելի բարձրացավ, քան մինչ այդ: Այն ժամանակ, երբ արքայի նավատորմը շփոթության էր մատնվել, ատտիկյան մի նավ հետապնդում էր Արտեմիսիայի նավին: Նա չէր կարող փախչել, քանի որ առջևում էին դաշնակից նավերը, իսկ ինքը գտնվում էր թշնամուն առավել մոտ: Այնժամ Արտեմիսիան որոշեց մի այսպիսի արարք կատարել, որը և նրան հաջողվեց: Ատտիկյան նավից հետապնդվելիս, նա թափով զարկվեց դաշնակից կալինդոսցիների նավին, որի վրա նավարկում էր կալինդոսցիների թագավոր Դամասիթիմոսը: Նույնիսկ եթե Արտեմիսիան նախապես Հելլեսպոնտոսում ինչ-որ վեճ ունեցել էր նրա հետ, ես չեմ կարող հաստատել, թե արդյոք նա դիտավորյա՞լ այդ արեց, թե՞ կալինդոսցիների նավը պատահաբար բախվեց նրա նավին: Երբ նա բախվեց այդ նավին և նավը սուզվեց, այդ բարեբախտությունը նրան կրկնակի օգուտ բերեց: Ատտիկյան տրիերայի նավապետը տեսնելով, որ այդ նավը հարձակվեց բարբարոսական նավի վրա, կամ Արտեմիսիայի նավն ընկալեց որպես հելլենական, կամ էլ ենթադրեց, որ այդ նավը հեռացել է բարբարոսներից և անցել է հելլենների կողմը: Այդ իսկ պատճառով նա հեռացավ Արտեմիսիայի նավից և շրջվեց դեպի մյուս նավերը:

88. Այսպիսով, պատահեց, որ Արտեմիսիան մի կողմից փրկվեց փախուստի դիմելով, իսկ մյուս կողմից, հակառակ նրա պատճառած վնասի, և դրա իսկ հետևանքով, նա շահեց Քսերքսեսի բարձր բարեհաճությունը: Պատմում են, թե նավամարտը դիտելիս արքան նկատել է Արտեմիսիայի հարձակվող նավը և ներկաներից մեկը ասել է. «Տեր, տեսնո՞ւմ ես ինչպես լավ կռվում է Արտեմիսիան. նա նույնիսկ խորտակեց թշնամու մի նավ»: Քսերքսեսը հարցրել է, թե իրո՞ք այդ արարքը կատարողը Արտեմիսիան է. իսկ ներկաները պատասխանել են, թե՝ իրենց լավ հայտնի է նրա տարբերանշանը: Խորտակված նավը նրանց թվացել է թշնամական: Արտեմիսիայի բախտը, ինչպես ասացի, ամեն ինչում ժպտաց. հատկապես այն բանում, որ կալինդոսյան նավից ոչ ոք չփրկվեց, որպեսզի մեղադրեր նրան: Ասում են, թե Քսերքսեսն այսպես է պատասխանել նրանց խոսքերին. «Այրերն ինձ մոտ վերածվել են կանանց, իսկ կանայք՝ այրերի»: Ինչպես պատմում են, այս խոսքերն է ասել Քսերքսեսը:

89. Այս ճակատամարտում սպանվեցին զորավար Արիաբիգնեսը, Դարեհի որդին և Քսերքսեսի եղբայրը, ինչպես նաև շատ անվանի պարսիկներ, մեդացիներ և նրանց դաշնակիցներ. հելլեններից քչերը սպանվեցին, քանի որ նրանք լողալ գիտեին, և եթե նավը խորտակվում էր, ապա ձեռնամարտից ողջ մնացածները լողալով հասնում էին Սալամիս: Մինչդեռ բարբարոսներից շատերը, լողալ չիմանալու պատճառով, կործանվեցին ծովում: Երբ առ-

ջևում գտնվող նավերը փախուստի դիմեցին, դրանց մեծ մասն ոչնչացավ խորտակվել: Քանզի նրանք, որոնք գտնվում էին նավերը, փորձելով առաջ անցնել, որպեսզի արքայի աչքի առաջ որևէ սխրանք կատարեն, բախվում էին փախչող յուրային նավերին:

90. Այս թոնուրոնի մեջ պատահեց նաև հետևյալը. փյունիկեցիներից ոմանք, որոնց նավերը խորտակվել էին, ներկայանալով արքային, մեղադրում էին հոնիացիներին դավաճանության մեջ, ասելով, թե իբր իրենց նավերը խորտակվել են նրանց պատճառով: Այսուհանդերձ, հոնիացիների զորավարները չտուժեցին: Երբ նրանք դեռ այդպես խոսում էին, այդ պահին սամոթրակյան մի նավ հարձակվեց ատտիկյան նավի վրա, որն սկսեց սուզվել, իսկ էգինյան մեկ ուրիշ նավ խորտակեց սամոթրակյան այս նավը: Բայց սամոթրակացիները, լինելով հմուտ նիզակակիրներ, սկսեցին սուզվող նավից նիզակահարել և ծով նետել իրենց նավը խորտակող նավի վրա գտնվողներին, որից հետո գրավեցին այդ նավը: Այս դեպքը փրկեց հոնիացիներին: Երբ Քսերքսեսը տեսավ նրանց կատարած այս մեծ սխրանքը, իր զայրույթը շրջեց փյունիկեցիների դեմ, ամբողջ մեղքը բարդելով նրանց վրա, և հրամայեց գլխատել նրանց, որպեսզի, իրենք երկչոտ լինելով, չզրպարտեն քաջարիներին: Քսերքսեսը բազմել էր էգալեոս կոչված լեռան ստորոտին, Սալամիսի դիմաց, և ամեն անգամ, երբ տեսնում էր, թե իր մարդկանցից որևէ մեկը աչքի էր ընկնում մարտում, հարցնում էր նրա ով լինելը, իսկ գրագիրներն արձանագրում էին տրիերայի նավապետի անունը, հայրանունը և ո՞ր քաղաքից լինելը: Բացի այդ, փյունիկեցիներին վնասեց նաև այնտեղ ներկա գտնվող պարսիկ Արիարամնեսը, որը հոնիացիների բարեկամն էր: Այսպիսով, Քսերքսեսի մարդիկ պատժեցին փյունիկեցիներին:

91. Երբ բարբարոսները, փախուստի դիմելով, ուղղվեցին դեպի Փալերոն, էգինացիները դարանակալեցին նեղուցում և նշանակալից սխրանք կատարեցին: Քանզի աթենացիները կռվի թոնուրոնում ընկղմում էին դիմադրող և փախչել փորձող նավերը, իսկ էգինացիները՝ արդեն փախածներին: Ուստի և եթե որևէ նավ կարողանում էր խուսափել աթենացիներից, ապա այն ընկնում էր էգինացիների ձեռքը:

92. Այնժամ իրար պատահեցին թշնամուն հետապնդող Թեմիստոկլեսի նավը և Կրիոսի որդի էգինացի Պոլիկրիտոսի նավը, որը հարձակվել էր սիդոնյան նավի վրա. սա գրավել էր Սկիաթոս կղզու մոտ պահակություն անող էգինյան նավը, որի վրա գտնվում էր Խմեենոսի որդի Պյութեասը: Զարմացած նրա ցուցաբերած արիությամբ, պարսիկները խնայեցին վիրավորված Պյութեասի կյանքը և նրան պահեցին նավի վրա: Աճա պարսիկ զինվորների հետ Պյութեասին տանող սիդոնյան այս նավը գրավվեց և Պյութեասը փրկվեց ու բերվեց էգինա: Տեսնելով ատտիկյան նավը, Պոլիկրիտոսը տարբերանշանից իմացավ, որ այն զորավարի նավն է, և բարձրաձայն դիմելով

Թեմիստոկլեսին, ծաղրանքով հիշեցրեց, թե նա էգինացիներին մեղադրել էր պարսկասիրության մեջ[23]: Թշնամու նավի վրա հարձակվելիս, Պոլիկրիտոսը այսպիսի կշտամբանք ուղղեց Թեմիստոկլեսին: Իսկ այն բարբարոսները, որոնց նավերը փախչելով փրկվեցին, հասան Փալերոն, հետևակ զորքերի պաշտպանության տակ:

93. Այս նավամարտում հելլեններից գերազանցապես հռչակվեցին էգինացիները, իսկ ապա՝ աթենացիները: Առանձին ռազմիկներից (հռչակվեցին) էգինացի Պոլիկրիտոսը, աթենացիներ Եվմենեսը, Անագիրասիոսի որդին, և Ամինիաս Պալլենևսը, որը հետապնդել էր Արտեմիսիային: Եթե նա իմանար, թե Արտեմիսիան այդ նավի վրա էր, ապա նա, անշուշտ, չէր դադարեցնի հետապնդումը, մինչև նրան գերի չվերցներ, կամ ինքը գերի չընկներ: Քանզի աթենական տրիերաների հրամանատարներին հրամայված էր (Արտեմիսիային) գերի վերցնել, և, բացի այդ, նրան գերի վերցնողին խոստացված էր մեկ բյուր դրամմ պարգև: Որովհետև աթենացիները զայրացած էին, որ իրենց դեմ կին է արշավել: Բայց Արտեմիսիան, ինչպես արդեն ասել եմ, կարողացավ փախչել: Փախչել կարողացան նաև այն բարբարոսները, որոնց նավերը ապաստանեցին Փալերոնում:

94. Իսկ Ադիմանտոսը, կորնթացիների զորավարը, ինչպես պատմում են աթենացիները, նավամարտի սկզբում սարսափահար առագաստները բարձրացրել և դիմել է փախուստի: Կորնթացիները, տեսնելով իրենց զորավարի նավի փախուստը, իրենք ևս դիմել են փախուստի: Բայց, ինչպես պատմում են, երբ փախստականներն արդեն հասել էին Սալամիսի այն հատվածը, որտեղ գտնվում է Աթենաս Սկիրասի սրբավայրը, նրանց պատահում է աստվածառաք մի մակույկ, որը, ինչպես պարզվում է, ուղարկված չի եղել ոչ մի մարդու կողմից: Մակույկը մոտենում է կորնթացիներին, երբ սրանք դեռևս ոչինչ չգիտեին նավամարտի ելքի մասին: Կատարվածը դիտում են որպես աստվածային նախախնամություն հետևյալ պատճառով: Երբ մակույկը մոտենում է նավերին, նրա մեջ եղած մարդիկ այսպես են ասում. «Ով Ադիմանթոս. դու ո՞ նավերը շրջեցիր և դիմեցիր փախուստի, դավանանելով հելլեններին. այդուհանդերձ, նրանք արդեն այնպես հաղթում են թշնամուն, ինչպես կարող էին երազել միայն»: Քանի որ Ադիմանթոսը չէր հավատում նրանց խոսքերին, նրանք դարձյալ ասացին, թե իրենք պատրաստ են պատանդ տվել և սպանվել, եթե հելլենները բացահայտ չհաղթահանկեն: Այնժամ Ադիմանտոսը և մյուսներն իրենց նավերը շրջեցին և վերադարձան, երբ արդեն ամեն ինչ վերջացել էր: Այսպիսին է աթենացիների պատմածը կորնթացիների մասին[24]. իսկ իրենք, կորնթացիները, իհարկե, ժխտում են այդ, պնդելով, որ իրենք նավամարտում քաջաբար կռվել են առաջին շարքերում: Մնացած ամբողջ Հելլադան հաստատում է այդ:

95. Իսկ Արիստիդեսը, Լիսիմաքոսի որդին, այն աթենացին, որի մասին հիշ վերևում ես հիշատակեցի որպես գերազանց այրի, Սալամիսի մոտ տեղի ունեցած այդ բռնությունի ժամանակ կատարել է հետևյալը: Իր հետ վերցնելով մեծ թվով աթենացի հոպլիտների, որոնք կանգնած էին Սալամիսի ծովափին, ափ ելավ Պսիտալլիա կղզու վրա և սպանեց կղզում գտնվող բոլոր պարսիկներին:

96. Երբ նավամարտն ավարտվեց, հելլենները Սալամիս քաշեցին պատահած բոլոր նավաբեկորները և սկսեցին մեկ այլ նավամարտի պատրաստվել այն ակնկալությամբ, որ արքան մնացած նավերը դարձյալ կօգտագործի: Նավաբեկորների մեծ մասն արևմտյան քամին քշել էր դեպի Ատտիկայի Կոլիաս կոչված ափը: Դրանով կատարվեցին ոչ միայն Բակիսի և Մուսայոսի գուշակություններն այս նավամարտի մասին, այլև ալիքների այստեղ բերած նավաբեկորների մասին այս դեպքերից շատ տարիներ առաջ աթենացի պատգամախոս Լիսիստրատոսի կատարած մարգարեությունը, որի իմաստը բոլոր հելլենների համար մնացել էր անհասկանալի:

Կոլիասի կանայք պիտի թիակներով տապակեն.

Այս մարգարեությունը պետք է կատարվեր արքայի նահանջից հետո:

97. Երբ Քսերքսեսը համոզվեց, որ ապետ է եղել, վախենալով, որ հելլենները, հոնիացիների խորհրդով կամ սեփական նախաձեռնությամբ, կնավեն դեպի Հելլեսպոնտոս, կամուրջները քանդելու, որի հետևանքով ինքը կտրված կմնար Եվրոպայում և կմատնվեր կորստյան վտանգի, որոշեց ետ փախչել: Բայց կամենալով իր մտադրությունը թաքցնել հելլեններից և յուրայիններից, նա փորձեց հողապատնեշ բարձրացնել ցամաքից դեպի Սալամիս: Նա հրամայեց իրար կապել փյունիկյան բեռնանավերը, որոնք պետք է ծառայեին որպես կամրջանավ և պարիսպ, և սկսեց պատրաստվել պատերազմի, իբր թե նավամարտ մղելու: Նրա այս պատրաստությունները տեսնողները լիովին համոզված էին, թե նա լրջորեն որոշել էր մնալ և պատրաստվել պատերազմի: Միայն Մարդոնիոսը այդ ամենից չխաբվեց, քանի որ նրան քաջ հայտնի էր արքայի մտադրությունը:

98. Այս գործերն անելու ընթացքում Քսերքսեսը սուրհանդակ ուղարկեց Պարսկաստան իր կրած պարտությունը հաղորդելու: Այս սուրհանդակներից ավելի արագ ոչ ոք չկա, և այդ հնարել են պարսիկները: Պատմում են, թե այնքան օր, ինչքան տևում է ամբողջ ճանապարհը, նույնքան թվով ձիեր ու մարդիկ էին ճանապարհին կարգված, յուրաքանչյուր օրվա համար մեկ ձի և մեկ մարդ: Ո՛չ ձյունը, ո՛չ անձրևը, ո՛չ տապը, ո՛չ գիշերը չեն կարող նրանց խանգարել, որպեսզի յուրաքանչյուրն իր համար սահմանված ճանապարհն անցնի ամենաարագ կերպով: Առաջին սուրհանդակը իրեն հանձնարարվածը հանձնում է երկրորդին, երկրորդը՝ երրորդին, և այսպես մեկը հանձնում է

մյուսին, ինչպես հելլեններին մոտ Հեփեստոսի տոնի շահակրության ընթացքում: Այս հեծյալ սուրհանդակներին պարսիկները կոչում են անգարիոն:

99. Սուսա հասած առաջին հաղորդումը, թե՝ Քսերքսեսը գրավել է Աթենքը, այնքան ուրախացրեց տանը մնացած պարսիկներին, որ նրանք բոլոր փողոցները ողողեցին մրտենու ճյուղերով, խունկ ծխեցին և զոհեր մատուցեցին և խնջույքներ կազմակերպեցին: Իսկ երկրորդ հաղորդումը (պարտության մասին) նրանց այնքան շփոթեցրեց, որ բոլորն սկսեցին պատառոտել իրենց զգեստները և անդադրում ողբ ու աղաղակով մեղադրում էին Մարդոնիոսին: Նրանք այդպես տագնապում էին ոչ այնքան իրենց հավերի, որքան Քսերքսեսի համար մտահոգվելուց:

100. Ամբողջ ժամանակ պարսիկներն այսպես տագնապում էին, մինչև որ Քսերքսեսը վերադառնալով չհանգստացրեց նրանց: Իսկ Մարդոնիոսը տեսնելով, որ Քսերքսեսը մեծապես վշտացած է նավամարտի ելքից, և կասկածելով, որ արքան մտադիր է ետ նահանջել Աթենքից, միաժամանակ համոզված, որ ինքը, որպես Հելլադա արշավելու համար արքային հրահրող, պետք է պատասխան տա, որոշեց, որ ավելի լավ կլինի, եթե մեկ անգամ ևս ինքը վտանգի իրեն և փորձի նվաճել Հելլադան, կամ փառքով վախճան գտնի հանուն մեծ գործերի: Նա, անշուշտ, առավելապես հույս ուներ Հելլադան նվաճելու: Այս ամենը հաշվի առնելով, նա դիմեց (արքային) հետևյալ խոսքերով. «Տեր. մի՛ տխրիր և շատ մի՛ վշտացիր պատահած այս դեպքերի համար: Քանզի մեր վերջնական կռիվը ոչ թե այս փայտե (նավերով) պետք է վճռվի, այլ զորքի և հեծյալների միջոցով: Ոչ մեկը այս մարդկանցից, որոնք իրենց արդեն համարում են հաղթող, չի փորձելու դուրս գալ նավերից ու կռվել քո դեմ, ինչպես նաև (չեն կռվելու քո դեմ) ցամաքում եղողները: Մեզ դիմադրողները պատժվել են: Եթե հաճո է քեզ, ապա այժմ հարձակվենք Պելոպոննեսոսի վրա. իսկ եթե կամենում ես սպասել, կարող ենք և այդպես անել: Միայն թե մի՛ հուսալքվիր: Քանզի հելլեններին ոչ մի ելք չի մնացել. նրանք պետք է հաշիվ տան այժմ և նախկինում իրենց կատարած արարքների համար և դառնան քո ստրուկները: Ավելի լավ կլինի, եթե դու այսպես կատարես: Իսկ եթե դու որոշել ես ետ մեկնել և զորքը տանել քեզ հետ, ապա ես քեզ մեկ ուրիշ խորհուրդ կտամ: Ով արքա. պարսիկներին մի դարձրու ծաղրանքի առարկա հելլենների համար: Դեռ պարզ չէ, թե պարսիկները պարտություն են կրել, և դու չես կարող ասել, թե մենք որևէ տեղ երկչոտ ենք եղել: Եթե փյունիկեցիները, կիպրոսցիները և կիլիկեցիները երկչոտեցին, ապա պարսիկները այդ պարտության համար բոլորովին մեղավոր չեն: Արդ, քանի որ դու չես կարող այդ բանում պարսիկներին մեղադրել, ապա լսիր ինձ: Եթե իրոք որոշել ես այստեղ մնալ, ապա վերադարձիր քո երկիրը զորքի մեծագույն մասով, իսկ ինձ հետ (այստեղ) թող

երեսուն բյուր ընտիր մարտիկների, որպեսզի կարողանամ Հելլադան հանձնել քեզ ստրկացած»:

101. Քսերքսեսն այս խոսքերը լսելով, հրճվեց և հանձայացավ, ասես աղետից փրկված, և Մարդոնիոսին ասաց, թե խորհուրդ անելուց հետո կպատասխանի նրան, թե այդ երկուսից ո՞ր մեկը կկատարի: Այնուհետև նա խորհուրդ գումարեց հրավիրյալ պարսիկների հետ, և որոշեց խորհուրդին հրավիրել նաև Արտեմիսիային, քանզի նա միակն էր, որ նախկինում հասկացել էր, թե ի՞նչ պետք է անել: Երբ Արտեմիսիան ներկայացավ, Քսերքսեսն իր խորհրդականներին և նիզակակիրներին հրամայեց դուրս գալ, և այսպես ասաց նրան. «Մարդոնիոսը ինձ խորհուրդ է տալիս մնալ այստեղ և հարձակվել Պելոպոննեսոսի վրա: Նա ասում է, որ պարսիկները և հետևակ զորքը ոչնչով մեղավոր չեն պարտության համար, և կամենում են գործով այդ ապացուցել: Ուստի նա առաջարկում է, որ կամ ես անձամբ այդ կատարեմ, կամ ինքը երեսուն բյուր ընտիր զորքով Հելլադան կմատուցի ինձ ստրկացված, իսկ ինձ խորհուրդ է տալիս մնացյալ զորքով վերադառնալ իմ երկիրը: Դու ինձ նավամարտից առաջ լավ խորհուրդ տվեցիր՝ հրաժարվել այդ նավամարտից. այժմ ես խորհուրդ տուր ինձ, թե ի՞նչ անեմ հաջողության հասնելու համար»:

102. Նա այսպես խորհուրդ հարցրեց նրանից, իսկ Արտեմիսիան պատասխանեց. «Արքա. խորհուրդ տալու դեպքում դժվար է լավագույն խոսքեր ասել, բայց ներկա պայմաններում ես կարծում եմ, որ դու պետք է վերադառնաս: Իսկ Մարդոնիոսը, եթե ցանկանում է և խոստանում այդ ամենը կատարել, ապա թող նրան այստեղ իր ուզած մարդկանցով: Եթե Մարդոնիոսը նվաճի այն երկիրը, որը խոստանում է, և ի կատար ածի իր մտադրությունը, ապա, տեր իմ, այդ կհամարվի քո սխրանքը, քանի որ այն կատարած կլինեն քո ծառաները: Իսկ եթե այդ ամենը կատարվի Մարդոնիոսի ծրագրին հակառակ, ապա քեզ համար շարիքը մեծ չի լինի, քանի որ ինքդ և քո երկիրը ապահով կմնաք: Եվ քանի դու և քո տունը անվնաս մնաք, հելլենները դեռ շատ անգամ պետք է պայքարեն իրենց (ազատության) համար: Եթե Մարդոնիոսին որևէ բան պատահի, ապա դա նշանակություն չունի. եթե հելլենները հաղթեն նրան, ապա հաղթած կլինեն և կսպանեն քո ծառային: Իսկ դու, Աթենքը հրի մատնելուց հետո, որի համար էլ արշավել ես, ետ մեկնիր»:

103. Այս խորհուրդը հաճելի թվաց Քսերքսեսին. քանզի Արտեմիսիան առաջարկեց այն, ինչ ինքը ևս մտածում էր: Այժմ եթե նույնիսկ բոլոր այրերն ու կանայք խորհուրդ տային նրան մնալ, նա, ինձ թվում է, չէր մնալու, այնքան էր նա անաբեկված: Ուստի, գովելով Արտեմիսիային, նա իր որդիներին նրա հետ ուղարկեց Եփեսոս. քանզի (արշավանքին) նրան հետևել էին նրա մի քանի ապօրինի զավակները:

104. Այս տղաների հետ որպես հսկիչ նա ուղարկեց նաև Հերմոտիմոսին, որը ծագումով Պեդասայից էր և արքայի հերֆինիների մեջ ոչ երկրորդական: Պեդասացիները բնակվում են Հալիկառնասսոսից վերև: Այս պեդասացիների մոտ ինչ-որ զարմանալի բան է պատահում: Ամեն անգամ երբ քաղաքի բնակիչներին կամ հարևաններին որևէ վերահաս վտանգ է սպառնում, այնժամ տեղի Աթենասի քրմուհու դեմքին բուսնում է երկար մորուք: Այս դեպքը նրանց մոտ արդեն կատարվել է երկու անգամ:

105. Ահա այս պեդասացիներից էր Հերմոտիմոսը, որն իրեն հասցված վիրավորանքի համար մեզ հայտնի ամենադաժան վրեժն է լուծել: Հերմոտիմոսը գերի էր ընկել թշնամու ձեռքը և վաճառվել ստրկության. նրան գնել է Քիոսցի Պանիոնիոսը, որն իր ապրուստը հայթայթում էր ամոթալի գործերով. նա գնում էր գեղատես պատանիների, ամորձատում նրանց և տանում Սարդես կամ Եփեսոս, որտեղ նրանց վաճառում էր խոշոր գումարով: Քանզի բարբարոսներն առավել բանկ գնահատում են հերֆինիներին, քան չամորձատվածներին, քանի որ հերֆինիները լիովին վստահելի են: Պանիոնիոսը շատերին, որոնց թվում նաև այս Հերմոտիմոսին, ամորձատել էր. քանզի այդ նրա ապրուստի միջոցն էր: Հերմոտիմոսը ամեն ինչում չէ, որ դրժբախտ էր: Սարդեսից, այլ ընծաների թվում, նա ուղարկվում է արքային, և ժամանակի ընթացքում դառնում Քսերքսեսի հերֆինիներից առավել հարգվածը:

106. Երբ պարսից զորքն սկսել էր արշավանքը Աթենքի դեմ և արքան գտնվում էր Սարդեսում, Հերմոտիմոսը ինչ-որ գործով եկել էր Մյուսիայի Ատարնևս կոչված երկիրը[25], որը բնակեցնում են քիոսցիներ, և այնտեղ պատահում է Պանիոնիոսին: Հերմոտիմոսը ճանաչում է նրան և սկսում երկար ու քաղցր զրույց նրա հետ: Նախ թվարկում է այն բոլոր բարիքները, որոնց համար պարտական էր նրան. ապա խոստանում է այդ բոլորի դիմաց մեծ բարիք անել, եթե նա ընտանյոք վերաբնակվի այդ երկրում: Պանիոնիոսը ուրախությամբ ընդունեց նրա առաջարկը և իր կնոջ ու զավակներին բերեց այնտեղ: Երբ Հերմոտիմոսը նրան և նրա ամբողջ ընտանիքը գցեց իր ձեռքը, այսպես ասաց. «Ով դու, որ ամենաամոթալի կերպով հայթայթում ես քո ապրուստը: Ես, կամ իմ նախնիներից որևէ մեկը ի՞նչ չարիք էր պատճառել քեզ կամ քո յուրայիններից որևէ մեկին, որ ինձ այր մարդուց վերածեցիր ոչնչության: Դու կարծում էիր, անշուշտ, թե քո ոճիրն այդ ժամանակ աննկատ էր մնացել ասավածներին: Բայց ասավածները, արդարության օրենքով, քեզ, անօրեն արարքներ գործողիդ, մատնեցին իմ ձեռքը. ուստի դու ինձ մի մեղադրիր քեզ համար իմ պատրաստած դատաստանի համար»: Այս խոսքերով հանդիմանելուց հետո նա հրամայեց բերել Պանիոնիոսի չորս որդիներին և ստիպեց նրան իր իսկ ձեռքով կտրել նրանց որդեծնության գործիքները: Պանիոնիոսը հարկադրված կատարեց այդ, որից հետո (Հերմոտիմոսը) ստիպեց որդիներին՝ ամորձատել իրենց հորը: Այսպես Հերմոտիմոսը վրեժ լուծեց Պանիոնիոսից:

107. Քսերքսեսն իր որդիներին Արտեմիսիային Եփեսոս տանել հանձնարարելուց հետո, իր մոտ կանչեց Մարդոնիոսին և հրամայեց նրան ընտրել զորքից իր ուզածներին և չանալ լավագույնս կատարելու տրված խոստումները: Այդ օրն այդպես արեցին, իսկ գիշերը զորավարները, արքայի հրամանով, նավերը Փալերոնից հետ տարան դեպի Հելլեսպոնտոս: Յուրաքանչյուրն շտապում էր ինչքան հնարավոր է, որպեսզի պաշտպանի կամուրջները, որոնցով պետք է անցներ արքան: Երբ բարբարոսները հասել էին Զոստեր հրվանդանի մոտ, ծովից դուրս ցցված փոքր ժայռերը նավերի տեղ ընկալելով, հետու փախան: Որոշ ժամանակ անց, համոզվելով, որ դրանք նավեր չեն, այլ ժայռեր, հորից հավաքվեցին և շարունակեցին նավարկել:

108. Երբ օրը բացվեց, հելլեները, տեսնելով, որ պարսից հետևակը մնում է նույն տեղում, ենթադրեցին, որ նավատորմը նույնպես գտնվում է Փալերոնում: Նրանք, նոր նավամարտ սպասելով, սկսեցին պատրաստվել պաշտպանվելու: Բայց երբ իմացան (թշնամու) նավերի մեկնումը, իսկույն որոշեցին հետապնդել դրանք: Մինչև Անդրոս հետապնդելիս, նրանք չտեսան Քսերքսեսի նավատորմը, և հասնելով Անդրոս, խորհուրդ գումարեցին: Թեմիստոկլեսը առաջարկեց, որ նավարկելով կղզիների մոտով, հետապնդեն թշնամուն և ուղիղ գնալով Հելլեսպոնտոս, քանդեն կամուրջները: Իսկ Եվրիբիադեսը հակառակ կարծիքն արտահայտեց, ասելով, որ կամուրջները քանդելը կլինի մեծագույն չարիք Հելլադայի համար: Քանզի, եթե Պարսիկը հարկադրված լինի մնալ Եվրոպայում, ապա նա, անշուշտ, կփորձի անգործ չնստել: Եթե նա հանգիստ նստի, ապա ոչ մի հաջողություն չի ունենա և չի կարող տուն վերադառնալու հնարավորություն գտնել, իսկ իր զորքը կկործանվի սովից: Մինչդեռ եթե հարձակման անցնի, ապա նա, զենքի ուժով թե համաձայնության գալով, կարող է նվաճել ամբողջ Հելլադան քաղաք առ քաղաք և ժողովուրդ առ ժողովուրդ, իսկ Հելլադայի ամենամյա բերքը կապահովի նրա ապրուստը: Ինքը կարծում է, թե նավամարտում պարտվելուց հետո, Պարսիկը այլևս չի մնալու Եվրոպայում. հետևաբար, պետք է նրան հնարավորություն տալ փախչելու, մինչև իր երկիր հասնելը: Այնուհետև պետք է նրա հետ կռվել արդեն իր երկրում: Այս կարծիքը պաշտպանեցին նաև պելոպոնեսացիների մյուս զորավարները:

109. Երբ Թեմիստոկլեսը համոզվեց, որ չի կարողանալու մեծամասնությանը համոզել նավարկելու դեպի Հելլեսպոնտոս, այնժամ հետևյալ խոսքերով դիմեց աթենացիներին, քանի որ աթենացիները վրդովված էին թշնամու փախուստից և պատրաստ էին նավարկելու դեպի Հելլեսպոնտոս, թեկուզ և իրենք մենակ, եթե մյուսները հրաժարվեին. «Ես հնարավոր չեմ եղել և շատ ավելի լսել եմ, որ եթե պարտվածին ծայր աստիճանի են

հասցնում, ապա նա հավաքում է իր ուժերը և ուղղում նախկինում իր կրած անհաջողությունը: Իսկ մենք, որ այսքան մեծ բախտ ունեցանք փրկելու մեզ և Հելլադան, ետ մղելով այսքան մեծաթիվ մարդկանց թափը, եկեք չհետապնդենք փախչող թշնամուն: Քանզի այս հաղթանակը ոչ թե մենք տարանք, այլ աստվածները և հերոսները, որոնք չհանդուրժեցին, որ Ասիային ու Եվրոպային տիրի մի մարդ, որը խիստ պիղծ է և անօրեն: Նա հավասարապես չէր խնայում և՛ սրբավայրերը, և՛ տները, հրի մատնելով դրանք և տապալելով աստվածների արձանները. նա նույնիսկ ծովը մտրակեց և շղթաներ նետեց այնտեղ: Այժմ, երբ մենք հաջողություն ենք ունեցել, մնանք Հելլադայում և հոգ տանենք մեր և մեր տնեցիների մասին. թող մեզանից ամեն մեկը վերաշինի իր տունը և մշակի իր հողը, երբ մենք արդեն վերջնականապես դուրս հշած կլինենք բարբարոսներին: Իսկ գարնանը մենք կնավարկենք դեպի Հելլեսպոնտոս և Հոնիա»: Այսպես ասաց Թեմիստոկլեսը, որպեսզի իր համար ապաստան ապահովի Պարսկի մոտ, եթե երբևէ Աթենքում ինքն անհաջողության մատնվի. հետագայում այդպես էլ պատահեց:

110. Թեմիստոկլեսն այս ասելիս խաբում էր, իսկ աթենացիները հավատացին: Քանի որ անցյալում ևս նա համարվել էր իմաստուն, իսկ այժմ նա իսկապես դուրս եկավ իմաստուն և խորաթափանց, ապա (աթենացիները), ըստ ամենայնի, պատրաստ էին հնազանդվելու նրա խոսքերին: Երբ արդեն նրանք համոզվեցին, Թեմիստոկլեսը անհապաղ նավով արքայի մոտ ուղարկեց մարդկանց, որոնց վրա վստահ էր, թե նրանք նույնիսկ ամենածանր տանջանքի ենթարկվելու դեպքում կլռեն ու չեն մատնի այն, ինչ իրենց հանձնարարված էր ասել արքային: Սրանց թվում էր դարձյալ նրա ընդծին Սիկիննոսը: Երբ նրանք հասան Ատտիկայի ափը, բոլորը մնացին նավի վրա, իսկ Սիկիննոսը, բարձրանալով Քսերքսեսի մոտ, այսպես խոսեց. «Նեոկլեսի որդի Թեմիստոկլեսը, աթենացիների զորավարը, բոլոր դաշնակիցների մեջ արիագույն և իմաստնագույն մարդը, մեզ ուղարկեց քեզ ասելու, որ Թեմիստոկլես Աթենացին, կամենալով քեզ ծառայություն մատուցել, տարհամոզեց հելլեններին քեզ հետապնդելու և կամուրջները քանդելու մտքից: Այժմ դու բոլորովին հանգիստ կարող ես մեկնել»: Այս հաղորդելուց հետո նրանք վերադարձան:

111. Իսկ հելլենները, որոնք արդեն մտադիր չէին այսուհետ հետապնդել բարբարոսների նավերը, ոչ էլ նավել Հելլեսպոնտոս, անցումը քանդելու համար պաշարեցին Անդրոսը, այն նվաճելու նպատակով: Անդրոսցիները կղզեբնակներից առաջիններն էին, որոնցից Թեմիստոկլեսը դրամ պահանջեց, բայց նրանք մերժեցին տալ: Այնժամ Թեմիստոկլեսը նրանց հայտարարեց, թե աթենացիները եկել են երկու մեծ աստվածությունների՝ Համոզմունքի և Հարկադրանքի հետ. ուստի և անդրոսցիներն անպայման պետք է վճարեն դրամը: Անդրոսցիները պատասխանեցին, թե Աթենքը երևի իրոք հզոր և հարուստ է, եթե այդպիսի բարեհաճ աստվածների հետ հասնում են հաջողության. մինչդեռ անդրոսցիները, ընդհակառակը, խիստ սակավահող են և երկու անպիտան աստվածներ՝ Աղքատությունը և Անճարակությունը, չեն հեռանում նրանց կղզուց, որը դարձել է նրանց սիրած վայրը: Նման աստվածներ ունենալով, անդրոսցիները չեն կարող դրամ տալ. քանզի Աթենքի հզորությունը երբեք չի գերազանցի իրենց թշվությանը»:

112. Նրանք այսպես պատասխանեցին և, քանի որ դրամ չտվեցին, ենթարկվեցին պաշարման: Իսկ Թեմիստոկլեսը, իր անհագ ընչաքաղցությամբ, արքայի մոտ ուղարկած իր նույն բանբերների միջոցով սպառնալիքներ էր հղում և պահանջում դրամ, անարգելով, որ եթե չտան պահանջվածը, ապա ինքը հելլենական նավատորմով կնայտնվի և, պաշարելով (կղզին), կնվաճի այն: Նման սպառնալիքներով Թեմիստոկլեսը մեծ գումար վերցրեց կարիստոսցիներից և պարոսցիներից, որոնք, լսելով, որ Թեմիստոկլեսը մեծագույն հեղինակությունն է զորավարների մեջ, սարսափեցին և ուղարկեցին դրամը: (Դրամ) ավեցի՞ն արդյոք մյուս կղզիները ևս, ես չեմ կարող ասել. բայց, ինձ թվում է, որ ոչ միայն այս կղզիները, այլ ուրիշներ ևս տված կլինեն: Այսուհանդերձ, Կարիստոսի բնակիչները բոլորովին էլ չփրկվեցին աղետից. իսկ պարոսցիները փողով սիրաշահեցին Թեմիստոկլեսին և խուսափեցին նավատորմի պաշարումից: Այսպիսով Թեմիստոկլեսը, Անդրոսից շարժվելով, մյուս զորավարներից գաղտնի, կղզեբնակներից դրամ էր հավաքում:

113. Քսերքսեսի հետ եղողները, նավամարտից մի քանի օր հետո, նույն հանապարհով հեռացան Բեոտիա: Քանզի Մարդոնիոսը որոշեց ուղեկցել արքային և, բացի այդ, տարվա ժամանակը հարմար չէր պատերազմելու: Ուստի և նա մտածեց, որ ավելի լավ է ձմեռել Թեսալիայում, իսկ հետո, գարնանը հարձակվել Պելոպոնեսոսի վրա: Հասնելով Թեսալիա, Մարդոնիոսը նախ ընտրեց բոլոր անման կոչված պարսիկներին, բացի նրանց զորապետ Հյուդարնեսից, քանի որ սա չուզեց լքել արքային, այնուհետև մյուս պարսիկներից ընտրեց զրահակիրներին և հազար հեծյալներին, ինչպես նաև մեդացիներին, սակերին, բակտրիացիներին, հնդիկներին, նրանց հետևակներին և հեծյալներին: Այս բոլոր ժողովուրդների (զինվորների) նա վերցրեց. իսկ մյուս դաշնակիցներից նա ընտրեց միայն էշերին, որոնք վայելչակազմ էին և կամ հայտնի իրենց արիությամբ: Նրա ընտրածների մեջ բոլորից թվաշատը պարսիկներն էին, որոնք կրում էին մանյակներ և ապարանջաններ, այնուհետև՝ մեդացիները. վերջիններս պարսիկներից նվազ էին ոչ թե քանակով, այլ մարմնական ուժով: Այսպիսով, հեծյալների հետ ընդհանուր թիվը դարձավ երեսուն բյուր:

114. Մինչ Մարդոնիոսն ընտրում էր իր զորքը և Քսերքսեսը գտնվում էր Թեսալիայում, Դելփիից պատգամ հասավ լակեդեմոնացիներին, թե՝ նրանք պետք է հատուցում պահանջեն Քսերքսեսից Լեոնիդասի սպանության

համար, և բավարարվեն նրանով, ինչ կառաջարկի Քսերքսեսը: Սպարտացիներն անհապաղ քարոզ ուղարկեցին, որը համայն զորքին պատահեց դեռևս Թեսալիայում: Այնտեղ ներկայանալով Քսերքսեսին, նա ասաց. «Ով մեդացիների արքա. լակեդեմոնացիները և Սպարտայի Հերակլյանները քեզանից սպանության հատուցում են պահանջում, քանի որ դու սպանել ես Հելլադան պաշտպանող նրանց բազավորին»: Քսերքսեսը ծիծաղեց և երկար լուռ մնալուց հետո, ցույց տալով Մարդոնիոսին, որն այդ պահին ներկա էր այնտեղ, ասաց. «Ահա այս Մարդոնիոսը արժանին կհատուցի նրանց»: Այս պատասխանն ստանալուց հետո քարոզը վերադարձավ:

115. Իսկ Քսերքսեսը, Մարդոնիոսին թողնելով Թեսալիայում, արագ ճանապարհվեց դեպի Հելլեսպոնտոս, և քառասուն հինգ օր հետո հասավ անցավայրը, իր հետ բերելով, եթե կարելի է այդպես ասել, զորքի մնացորդները միայն: Նրանք որ երկրում և ինչ մարդկանց մոտ որ լինում էին, սնվում էին խլելով նրանց բերքը: Իսկ եթե բերք չէին գտնում, ապա երկրից բուսած խոտն ու ծառերի կեղևները և տերևները, վայրի թե ընտանի, պոկելով ուտում էին: Այդ անում էին քաղցից մղված: Ճանապարհին նրանց կոտորեց նաև ժանտախտը և արնալուծը: Հիվանդներին Քսերքսեսը լքում էր, նրանց խնամելն ու սնելը հանձնարարելով այն քաղաքներին, որոնց միջով անցնում էր: Ոմանց նա թողեց Թեսալիայում, ոմանց էլ Պայոնիայի Սիրիսում և Մակեդոնիայում: Հելլադա արշավելիս, այստեղ նա թողել էր Զևսի արքազան կառքը, որը, սակայն, վերադարձին չվերցրեց, քանի որ պայոնները այն հանձնել էին թրակացիներին: Երբ Քսերքսեսը նրանցից պահանջեց այն, պայոնները ասացին, թե իրենցից վերև, Ստրյումոնի ակունքների մոտ բնակվող թրակացիները հափշտակել են արածող ձիերին:

116. Այդ ժամանակ բիսալտների և Կրեստոնյան երկրի թրակացի թագավորը անհելի մի արարք կատարեց: Նա հայտարարեց, թե ինքը հոժարակամ չի դառնա Քսերքսեսի ստրուկը, և փախավ Հոդոպե լեռան բարձունքները, իսկ որդիներին արգելեց արշավել Հելլադա: Բայց որդիները չանսացին իրենց հոր արգելքին, կամ խիստ ցանկանում էին ականատես լինել պատերազմին, ուստի և միացան Պարսկի արշավանքին: Երբ նրանք բոլորը, իսկ նրանք վեցն էին, վերադարձան անվնաս, հայրը, որպես պատիժ, հանեց նրանց աչքերը:

117. Այսպիսի հատուցում նրանք ստացան: Իսկ պարսիկները, Թրակիայի միջով ուղևորվելով, հասան անցավայրը և նավերով անցան Հելլեսպոնտոսը և հասան Աբյդոս, քանզի նավակամուրջն արդեն չկար. փոթորիկը քանդել էր այն: Այստեղ նրանք կանգ առան և, քանի որ արդեն ավելի շատ պարեն գտան, քան հանապարհին, ապա ոչ մի չափ չպահպանելով, նաև ջրի փոփոխության պատճառով, փրկված զինվորներից շատերը մահացան, իսկ մնացյալները Քսերքսեսի հետ հասան Սարդես:

118. Բայց կա նաև մեկ այլ պատում այդ մասին: Աբենից հանանչելիս, Քսերքսեսը հասնում է Ստրյումոնի վրա գտնվող էոն, որտեղից արդեն նա իր հանապարհը շարունակում է ոչ թե ցամաքով, այլ զորքը հանձնելով Հյուդառնեսին, որպեսզի այն տանի Հելլեսպոնտոս, ինքը փյունիկյան նավով մեկնում է Ասիա: Նավարկման ընթացքում բարձրանում է ալիքներ առաջացնող ստրյումոնյան ուժեղ հողմ: Երբ փոթորիկը հետզհետե ուժեղանում է, իսկ տախտակամածի վրա գտնվում էին Քսերքսեսի շքախմբից մեծ թվով մարդիկ, արքային պատում է սարսափը և նա բարձրաձայն կանչում է նավավարին, հարցնելով, թե կա՞ արդյոք փրկություն: Նավավարը պատասխանում է. «Ով տեր. ոչ մի փրկություն չկա, եթե չազատվենք այսքան շատ ուղևորներից»: Պատմում են, որ Քսերքսեսը, այս լսելով, ասել է. «Այժմ դուք կարող եք ցույց տալ ձեր սերը արքայի հանդեպ. թվում է, թե իմ փրկությունը կախված է ձեզանից»: Նա այսպես է ասել. իսկ պարսիկները, նրան երկրպագելուց հետո, նետվում են ծով: Նավը թեթևանում է և ապահով հասնում Ասիա: Ափ դուրս գալով, Քսերքսեսը իսկույն ևեթ հետևյալն է անում: Նավավարին պարգևում է ոսկե պսակ, արքայի կյանքը փրկած լինելու համար, բայց հրամայում է գլխատել նրան, այդքան շատ պարսիկների խորտակած լինելու համար:

119. Այս է Քսերքսեսի վերադարձի մասին եղած մյուս պատումը. բայց, իմ կարծիքով, այն ոչ մի մասում, հատկապես պարսիկների կործանման վերաբերող կետում, արժանահավատ չէ: Քանզի, եթե նավավարը այդպիսի խոսքերով էր պատասխանել Քսերքսեսին, ապա հազարից մեկը չի կարող հակահարել իմ կարծիքին, թե արքան չէր կարող այդպես վարվել: Նա տախտակամածի վրա եղողներին, որոնք պարսիկ էին և պարսիկներից առաջինները, կիչեցներ նավի ներքնամասը, իսկ թիավարներին, որոնք փյունիկեցիներ էին և, հավանաբար, թվով ավելի, քան պարսիկները, կնետեր ծով: Ոչ. ինչպես վերևում ասել եմ, արքան իր զորքի հետ Ասիա վերադարձավ ցամաքային հանապարհով:

120. Մեծ ապացույց է նաև հետևյալը: Հայտնի է, որ վերադարձի հանապարհին Քսերքսեսը եկել է Աբդերա, բարեկամության դաշինք կնքել աբդերացիների հետ և նրանց ընծայել է ոսկե ակինակե և ոսկեկար տիարա: Աբդերացիները պատմում են նաև, իսկ ես դրան չեմ հավատում, թե Աբենից փախչելուց հետո Քսերքսեսն իր զորքին առաջին անգամ այնտեղ է արձակել, իրեն արդեն ապահով զգալով: Աբդերան գտնվում է Հելլեսպոնտոսին ավելի մոտ, քան Ստրյումոնը և էյոնը, որտեղ, նրանց ասածով, Քսերքսեսը նավ է նստել:

121. Մինչ այդ, հելլեները, չկարողանալով գրավել Անդրոսը, շրջվեցին Կարիստոսի դեմ. այդ երկիրը ամայացնելուց հետո նրանք վերադարձան Սալամիս: Նրանք ամենից առաջ աստվածներին նվիրաբերեցին ավարի երա-

խայրիմը, այդ թվում նաև փյունիկյան երեք արիերա. մեկը նրանք ուղարկեցին Խոթմոս, որտեղ այն կա ցայսօր, երկրորդը՝ Սունիոն, իսկ երրորդը թողեցին այնտեղ՝ Սալամիսում, ի պատիվ Այասի: Այնուհետև նրանք բաժանեցին ավարն իրար միջև և երախայրիքն ուղարկեցին Դելփի: Ավարի այդ մասից պատրաստվեց տղամարդու արձան, տասներկու կանգուն բարձրությամբ, ձեռքին նավի քիթ. այն կանգնեցված է այնտեղ, ուր գտնվում է նաև մակեդոնացի Ալեքսանդրի արձանը[26]:

122. Դելփի ընտիր ընծաներ ուղարկելով, հելլենները համատեղ հարցրին աստծուն, թե արդյո՞ք նա ստացել է բավարար և իրեն հաճելի ընծաներ: Ատված պատասխանեց, թե մյուս հելլեններից ինքը ստացել է, բայց էգինացիներից՝ ոչ. ուստի և նրանցից պահանջում է Սալամիսի նավամարտում ձեռք բերված արիության պարգևների մի մասը: Էգինացիները այդ մասին իմանալով, նվիրաբերեցին երեք ոսկե ասող, որոնք կանգնեցված են պղնձե կայմի վրա, սրբավայրի անկյունում, Կրեսոսի նվիրած ոսկե կրատերին մոտիկ[27]:

123. Ավարի բաժանումից հետո, հելլենները նավեցին Խոթմոս, արիության պարգև հանձնելու այն հելլենին, որն առավել արժանավորն է եղել այս պատերազմում: Գալով Խոթմոս, զորավարները Պոսեյդոնի զոհասեղանի մոտ իրենց քվեները տվեցին, որոշելու համար, թե բոլորից ո՞վ է եղել առաջինը և ո՞վ՝ երկրորդը: Այնժամ նրանցից յուրաքանչյուրն առաջին քվեն տալիս էր իրեն, իրեն համարելով բոլորից քաջարին, մինչդեռ մեծ մասը երկրորդ համարում էր Թեմիստոկլեսին: Այսպիսով, յուրաքանչյուր զորավար ստացել էր միայն մեկ ձայն, իսկ Թեմիստոկլեսը երկրորդ տեղի համար իր ստացած ձայների թվով շատ էր գերազանցել բոլորին:

124. Հելլեններ, նախանձից դրդված, չկամեցան մրցանակը հատկացնել (Թեմիստոկլեսին), այլ յուրաքանչյուրը մեկնեց իր երկիրը, հարցը թողնելով չլուծված: Այսուհանդերձ, Թեմիստոկլեսը հռչակվեց և փառաբանվեց համայն Հելլադայում իբրև իմաստնագույն այրը հելլենների մեջ: Բայց, քանի որ Սալամիսում նավամարտածները նրան չպատվեցին որպես հաղթողի, նա այս դեպքերից հետո շուտով մեկնեց Լակեդեմոն, այնտեղ պատիվ ստանալու համար: Լակեդեմոնացիները նրան լավ ընդունեցին և մեծապես պատվեցին: Նրանք, ճիշտ է, արիության համար ձիթենու պսակը շնորհեցին Եվրիբիադեսին, բայց Թեմիստոկլեսին ևս, իմաստության և հմտության համար շնորհեցին ձիթենու պսակ: Նրանք Թեմիստոկլեսին նվիրեցին նաև Սպարտայի ամենագեղեցիկ կառքը: Մեծապես գովելով Թեմիստոկլեսին, մեկնելիս նրան, երեք հարյուր ընտրյալ սպարտացիներ, որոնք կոչվում են հեծյալներ, ուղեկցեցին մինչև Տեգեայի սահմանը: Ինչքան մեզ հայտնի է, Թեմիստոկլեսը միակ մարդն է եղել, ում սպարտացիները այդպիսի շքախումբ են տրամադրել:

125. Երբ Թեմիստոկլեսը Լակեդեմոնից վերադարձավ Աթենք, այնտեղ ոմն Տիմոդեմոս Ափիդնայից, որը Թեմիստոկլեսի թշնամիներից էր և ոչ անվանի մարդ, նախանձից մղելգված, սկսեց անարգել Թեմիստոկլեսին, դատապարտելով նրա Լակեդեմոն գնալը, և ասաց, որ լակեդեմոնացիների պարգևների համար նա պարտական է Աթենքին, և ոչ թե իր անձին: Քանի որ Տիմոդեմոսը շարունակում էր անվերջ կրկնել նույնը, Թեմիստոկլեսը ասաց նրան. «Եթե ես Թելիինայից[28] լինեի, սպարտացիները ինձ այդպես չէին պատվի. բայց և քեզ, մարդուկ (չէին պատվի), թեև աթենացի ես»: Այս դեպքն այսպիսի ավարտ ունեցավ:

126. Փառնակեսի որդի Արտաբազոսը, որը նախկինում ևս հայտնի մարդ էր եղել պարսից մեջ, իսկ Պլատեայի ճակատամարտից հետո առավել հայտնի էր դարձել, վերցնելով վեց բյուր Մարդոնիոսի ընտրած զորքերից, արքային ուղեկցեց մինչև անցումը: Երբ արքան արդեն Ասիայում էր, Արտաբազոսը վերադարձավ և, հասնելով Պելլենե երկիրը, քանի որ Մարդոնիոսը ձմեռում էր Թեսալիայում ու Մակեդոնիայում և բոլորովին չէր շտապեցնում մնացած զորքին միանալ իրեն, չուզեց բաց թողնել արքայի դեմ ապստամբած պոտիդեացիներին ստրկության վանտելու հնարավորությունը: Քանզի պոտիդեացիները, երբ արքան անցավ նրանց մոտով, իսկ նավատորմը փախավ Սալամիսից, բացահայտ անջատվեցին բարբարոսներից: Այդպես վարվեցին Պելլենեի մյուս բնակիչները:

127. Այնժամ Արտաբազոսը պաշարեց Պոտիդեան: Կասկածելով, որ օլինթացիները ևս ապստամբել էին արքայի դեմ, նա պաշարեց նաև Օլինթոսը: Օլինթոսին տիրում էին բոտտիացիները, որոնց մակեդոնները քշել էին Թերմեյան ծոցի ափերից: Քաղաքը գրավելուց հետո նա բնակչությանը տարավ լեռի մոտ և սրի քաշեց, իսկ քաղաքի կառավարումը հանձնեց տորոնցի Կրիտոբուլոսին և քաղկիսցիներին: Այսպիսով, Օլինթոսը անցավ քաղկիսցիներին:

128. Օլինթոսը գրավելուց հետո Արտաբազոսն իր ամբողջ զորքով շրջվեց Պոտիդեայի դեմ: Մինչ նա եռանդուն պաշարում էր քաղաքը, սկիոնիացիների զորավար Տիմոքսենոսը պայմանավորվեց քաղաքը մատնել նրա ձեռքը: Թե ինչպե՞ս սկսվեցին բանակցությունները, ես չեմ կարող ասել, քանի որ ոչ մի տեղեկություն չունեմ. իսկ վախճանն այսպիսին է եղել: Ամեն անգամ, երբ Տիմոքսենոսը գրություն էր գրում, կամենալով այն ուղարկել Արտաբազոսին, կամ Արտաբազոսը՝ Տիմոքսենոսին, ապա գրությունը ամրացվում էր նետի սառին քառքին, և այն փետուրով ծածկելով, նետը արձակում էին պայմանավորված վայրը: Բայց Պոտիդեան հանձնելու Տիմոքսենոսի դավանանությունը բացահայտվեց: Քանզի Արտաբազոսը նետը պայմանավորված վայրը արձակելիս, վրիպում է և խոցում ինչ-որ պոտիդեացու ուսը: Վիրավորվածի շուրջ խմբվում են մարդիկ, ինչպես սովորաբար լինում է պատե-

ռազմում: Իսկույն դուրս են քաշում նետը և, նկատելով գրությունը, այն բերում են զորավարներին: Քաղաքում գտնվում էին նաև Պալլենեի մյուս դաշնակիցների զորավարները: Սրանք կարդացին գրությունը և բացահայտեցին դավաճանին: Այսուհանդերձ, որոշվեց շնչավանել Տիմոխենոսին որպես դավաճանի, ի սեր սկիոնիացիների քաղաքի, որպեսզի հետագայում սկիոնիացիներին մշտապես դավաճաններ չանվանեին: Այսպես բացահայտվեց այդ դավաճանությունը:

129. Արտաբազոսն արդեն երեք ամիս պաշարում էր (Պոտիդեան), երբ ծովում ուժեղ և երկարատև տեղատվություն եղավ: Բարբարոսները տեսնելով, որ առաջանում են ճանիներ, ծովափով շարժվեցին դեպի Պալլենե: Նրանք արդեն (ճանիների միջով) անցել էին ճանապարհի երկու հինգերորդը և մնում էր անցնել երեք հինգերորդը ևս՝ Պալլենե հասնելու համար, երբ ճանկարծակի ծովում ուժեղ մակընթացություն սկսվեց, որպիսին, ինչպես տեղաբնիկներն են պատմում, դեռևս երբեք չէր եղել, թեև ջուրը հաճախ բարձրանում էր: Պարսիկներից նրանք, որոնք լողալ չգիտեին, կործանվեցին իսկ լողալ իմացողներին կոտորեցին մակույկներով վրա հասած պոտիդեացիները: Այդ մակընթացության, ողողման և պարսից պատահած աղետի պատճառը պոտիդեացիները համարում են այն, որ պարսիկները, որոնք կործանվեցին ծովում, պղծել էին քաղաքի արվարձանում գտնվող Պոսեյդոնի տաճարը և արձանը: Կարծում եմ, ճիշտ են նրանք, այդ արարքը համարելով նրանց կործանման պատճառը: Ողջ մնացածներին Արտաբազոսը հասցրեց Մարդոնիոսի մոտ: Այս դեպքն, ահա, պատահեց արքային ուղեկցողների հետ:

130. Մինչ այդ, Քսերքսեսի փրկված նավերը Սալամիսից փախչելուց հետո հասան Ասիա և արքային ու նրա զորքը Քերսոնեսոսից անցկացրին Աբյդոս, որից հետո նավատորմը ձմեռեց Կյումեում: Գարնանամուտին շտապ նավարկեցին Սամոսում, որտեղ ձմեռել էր նավերի մի մասը: Նավերի վրա գտնվող ռազմիկների մեծ մասն այժմ պարսիկներ էին և մեդացիներ: Նրանց զորավարներն էին Բագայոսի որդի Մարդոնտեսը և Արտաքայեսի որդի Արտայունտեսը. սրանց իշխանակից էր նաև Իթամիտրեսը, Արտայունտեսի եղբորորդին: Սաստիկ պարտություն կրելով, նրանք արդեն չէին մտածում դեպի արևմուտք առաջանալու մասին, և ոչ ոք նրանց չէր ստիպում այդ անել: Ուստի նրանք մնացին Սամոսում, հսկելու համար հոնիացիներին, որպեսզի սրանք չապստամբեն: Նրանց նավերը, հոնիականների հետ հաշված, երեք հարյուր էին: Պարսիկները չէին կարծում, որ հելլենները կարշավեն Հոնիա, այլ ենթադրում էին, որ նրանք կբավարարվեն իրենց երկրի պաշտպանությամբ: Պարսիկներն այսպես ենթադրեցին, որովհետև հելլենները չէին հալածել Սալամիսից փախչող պարսկական նավատորմին, և գոհ էին, որ փրկվեցին: Ծովում նրանք, անշուշտ, իրենց համարում էին պարտված, բայց կարծում էին, թե ցամաքում Մարդոնիոսը մեծ հաղթանակ կտանի: Մնալով Սամոսում, պարսիկները խորհրդակցեցին, թե ի՞նչ վնաս կարող են պատճառել թշնամուն. միաժամանակ նրանք սպասում էին, թե ինչպե՞ս կընթանան Մարդոնիոսի գործերը:

131. Գարնանամուտը, ինչպես նաև Մարդոնիոսի Թեսալիայում գտնվելը հելլեններին ոտքի հանեց: Հետևակը դեռևս չէր հավաքվել, բայց նավատորմը, թվով հարյուր տասը նավ, ժամանել էր Էգինա: Զորավարն ու ծովակալն էր Լեոտիխիդեսը, Մենարեսի որդին, հետնորդը Հեգեսիլաոսի, Հիպոկրատիդեսի, Լեոտիխիդեսի, Անաքսիլաոսի, Արխիդամոսի, Անաքսանդրիդեսի, Թեոպոմպոսի, Նիկանդրոսի, Քարիլաոսի, Եվնոմոսի, Պոլիդեկտեսի, Գրիտանիսի, Եվրիփոնի, Գրոկլեսի, Արիստոդեմոսի, Կլեոդայոսի և Հերակլեսի որդի Հյուլլոսը: Սա պատկանում էր թագավորական երկրորդ տոհմին[29]: Բոլոր վերոհիշյալները, բացի Լեոտիխիդեսից հետո հիշատակված յոթից, եղել են Սպարտայի թագավորներ: Աթենացիների զորավար էր Արիփրոնի որդի Քսանթիպպոսը:

132. Երբ բոլոր նավերը ժամանել էին Էգինա, հելլենների բանակատեղի եկան հոնիացիների հրեշտակներ, որոնք մինչ այդ արդեն եղել էին Սպարտայում և խնդրել լակեդեմոնացիներին՝ ազատագրել Հոնիան: Նրանց մեջ էր նաև Հերոդոտոսը[30], Բասիլեյդիսի որդին: Սրանք, սկզբնապես յոթը, դավադրություն են նյութում և որոշում սպանել Քիոսի տիրան Ստրատոփիսին: Բայց նրանց դավադրությունը բացահայտվեց, քանի որ մասնակիցներից մեկը մատնեց նրանց. իսկ մնացած վեցը գաղտնի փախան Քիոսից և ափ ելան Սպարտա, ապա Էգինա, որպեսզի խնդրեն հելլեններին նավել Հոնիա: Հելլենները նրանց հազիվ տարան մինչև Դելոս: Քանզի հետագա նավարկումը հելլեններին թվում էր խիստ վտանգավոր. նրանք անծանոթ էին այդ երկրներին և նրանց թվում էր, թե ամենուր թշնամիներ են: Իսկ Սամոսը նրանք համարում էին նույնքան հեռու, ինչքան Հերակլյան Սյուները[31]: Այնպես համընկավ, որ բարբարոսները վախենում էին և չէին համարձակվում նավարկել Սամոսից արևմուտք, իսկ հելլենները, հակառակ քիոսցիների խնդրանքին, չէին նավում Դելոսից արևելք: Այսպիսով, (փոխադարձ) անը պաշտպանում էր նրանց միջև ընկած երկրները:

133. Արդ, հելլենները նավեցին Դելոս, իսկ Մարդոնիոսը ձմեռեց Թեսալիայում: Այստեղից նա պատգամատներն ուղարկեց Մյուս անունով մի կին, ծագումով Եվրոպոսից, պատվիրելով նրան, ուր որ հնարավոր է, հարցնել պատգամախոսներին: Թե՝ ի՞նչ էր նա ուզում իմանալ պատգամատներից, ես չեմ կարող ասել, քանի որ այդ մասին ինձ ոչինչ չեն պատմել: Բայց ինձ թվում է, թե նա ուղարկել է հարցնելու իր առկա վիճակի, և ոչ թե այլ բանի մասին:

134. Այս Մյուսը, քսան երեսուներին, գալով Լեքադիա, կաշառում և հա-

մոգում է տեղացիներից մեկին և իշնում Տրոփոնիոսի քարայրը. այնուհետև նա գալիս է նաև Թեբե և նախ պատգամ է հարցնում Իսմենյան Ապոլլոնից. այստեղ ևս, ինչպես Օլիմպիայում, զուշակություն են ստանում զոհերի փորոտիքի միջոցով: Նա նույնիսկ դրամի օգնությամբ համոզեց ինչ-որ օտարականի, ոչ թեբեցու, և քնեց Ամփիարաոսի սրբավայրում: Իսկ ոչ մի թեբեցու թույլ չի տրվում այնտեղ պատգամ հարցնել հետևյալ պատճառով: Ամփիարաոսը մի անգամ պատգամով նրանց պատվիրել է՝ ընտրել երկուսից մեկը. ի՞նչ են ուզում. ինքը լինի իրենց համար զուշա՞կ, թե՞ դաշնակից: Թեբեցիները գերադասում են նրան դաշնակից ունենալ: Այդ պատճառով էլ ոչ մի թեբեցու թույլ չի տրվում այնտեղ քնել:

135. Ամենազարմանալին ինձ թվում է թեբեցիների հետևյալ պատմածը: Եվրոպոսցի Մյուսը, շրջելով բոլոր պատգամատները, գալիս է նաև Պառյան Ապոլլոնի սրբավայրը: Այս տաճարը կոչվում է Պառյան, բայց պատկանում է թեբեցիներին և գտնվում է Կոպայիս լճից վերև, լեռան ստորոտին, Ակրեփիա քաղաքի մոտ: Երբ այս Մյուս կոչեցյալը եկել է տաճար համայնքի կողմից ընտրված երեք հոգու ուղեկցությամբ, որոնք պետք է գրի առնեին զուշակությունը, հանկարծ զուշակողը պատգամ է արտասանել բարբարոսական լեզվով: Թեբեցի ուղեկցողները, հունարենի փոխարեն բարբարոսական բառեր լսելով, խիստ զարմանում են, չիմանալով ինչպե՞ս վարվել: Իսկ եվրոպոսցի Մյուսը խլում է նրանց ձեռքից գրատախտակը և դրա վրա գրում պատգամախոսի խոսքերը, ասելով, թե պատգամը եղել է կարիերեն լեզվով: Ասվածը գրելուց հետո, նա վերադառնում է Թեսալիա:

136. Մարդոնիոսը պատգամախոսի ասույթը կարդալուց հետո, Ամյունտասի որդի Ալեքսանդրին, մակեդոնացի մի մարդու, դեսպան է ուղարկում Աթենք: Նրան ուղարկեց, քանզի նա բարեկամ էր պարսիկներին: Ալեքսանդրի քույր Գյուգեան, Ամյունտասի դուստրը, պարսիկ Բուբարեսի կինն էր, սրանց որդին էր Ասիայում ապրող Ամյունտասը, որը կրում էր մոր կողմից պապի անունը: Արքան սրան կարգել էր փոյուգական խոշոր քաղաք Ալաբանդայի կառավարիչ: Բացի այդ, Մարդոնիոսը Ալեքսանդրին ուղարկեց նաև այն պատճառով, որ գիտեր, թե նա աթենացիների հյուրընկալն է և բարեբարը: Ուստի նա մեծ հույս ուներ, որ կգրավի իր կողմը աթենացիներին, որոնք, ինչպես լսել էր, թվաշատ էին և քաջարի, և հրանք էին եղել նավատորմում պարսիկների կրած պարտության գլխավոր պատճառը: Նա լիանույս էր, որ եթե աթենացիները հարեն իրեն, ապա ինքը հեշտությամբ կտիրի ծովում. և այդ ճիշտ էր: Քանի որ ցամաքում նա իրեն համարում էր շատ ավելի ուժեղ, ապա համոզված էր, որ լիակատար հաղթանակ կտանի հելլեններին դեմ: Հավանաբար այդպիսին էր իր ստացած պատգամը, որը խորհուրդ էր տալիս դաշինք կնքել աթենացիների հետ. այս համոզմունքով էլ նա դեսպան ուղարկեց (Աթենք):

137. Այս Ալեքսանդրը յոթերորդ սերունդն էր Պերդիկկասի, որը Մակեդոնիայի իշխանությունը նվաճել էր հետևյալ կերպ: Արգոսից Իլլիրիա փախչում են Տեմենոսի հետնորդ երեք եղբայր՝ Գավանեսը, Աերոպոսը և Պերդիկկասը. իսկ Իլլյուրիայից, լեռների վրայով, նրանք հասնում են Վերին Մակեդոնիայի Լեբեյա քաղաքը: Այստեղ նրանք ծառայության են մտնում թագավորի մոտ: Մեկը արածեցնում էր ձիերին, մյուսը՝ կովերին, իսկ կրտսերը՝ Պերդիկկասը, ոչխարներին: Նրանց հաշը պատրաստում էր ինքը՝ թագավորի կինը. քանզի հնում ոչ միայն հասարակ ժողովուրդը, այլ թագավորական տները ևս աղքատ էին: Ամեն անգամ, հաց թխելիս, ծառա տղա Պերդիկկասի բաժինն ինքնին ստացվում էր կրկնակի խոշոր: Քանի որ այս բանը մշտապես կրկնվում էր, ապա կինը այդ հայտնեց իր ամուսնուն: Թագավորն այդ լսելով, իսկույն կռահեց, որ սա ինչ-որ մեծ բան ազդարարող նշանակ է: Ուստի և իր մոտ կանչելով այդ ծառաներին, հրամայեց նրանց հեռանալ իր երկրից: Նրանք պատասխանեցին, թե իրավացի կլինի, եթե ստանան իրենց հասանելիք վարձը և այդպես մեկնեն: Լսելով վարձի մասին, նա, ցույց տալով ծխնելույզից ներս ընկած արևի հառագայթը, խելահեղորեն զոչեց. «Ահա սա է ձեր արժանի վարձը»: Ավագ եղբայրները, Գավանեսը և Աերոպոսը, այդ լսելով, ապշած կանգնեցին. իսկ տղան, որը ձեռքին դանակ էր բռնած, շրջագծում է տան հատակին ընկած արևի շողը և ասում. «Մենք, ով թագավոր, ընդունում ենք քո տվածը»: Այնուհետև երեք անգամ ափով արևից լցնելով իր ծոցը, մեկնեց եղբայրների հետ:

138. Այսպես նրանք հեռացան. իսկ թագավորի ատենակալներից մեկը բացատրեց նրան, թե ի՞նչ էր նշանակում կրտսեր եղբոր այդ արարքը և ի՞նչ էր նա մտածում իրեն տրվածը ստանալիս: Թագավորն այդ լսելով, զայրացավ և նրանց ետևից հեծյալներ ուղարկեց, նրանց սպանելու: Այդ երկրում կա մի գետ, որին ցայսօր արգոսցի այդ եղբայրները հետնորդները զոհեն մատուցում որպես փրկարարի: Այս գետը, Տեմենոսի այս հետնորդների անցնելուց հետո, այնքան վարարում է, որ հեծյալները չեն կարողանում այն անցնել: Իսկ եղբայրները, գալով Մակեդոնիայի մեկ այլ մասը, բնակվեցին Գորգիոսի որդի Միդասի այգիներ[32] կոչված վայրում: Այդ այգիներում աճում են վաթսուն տեսակ վայրի վարդեր, որոնց բուրմունքը շատ ավելի ուժեղ է մյուս վարդերից: Ըստ մակեդոնացիների ավանդության, այս այգիներում է բռնվել Սիլենոսը[33]: Այս այգիներից վերև բարձրանում է Վերմիոն կոչված լեռը, որն անանցանելի է ձյան պատճառով: Այս երկիրը գրավելուց հետո, եղբայրները այստեղից հարձակվեցին և նվաճեցին մնացած Մակեդոնիան:

139. Այս Պերդիկկասից էլ սերում է Ալեքսանդրը: Նրա նախնիները հետևյալներն են. Ալեքսանդրը եղել է Ամյունտասի որդին. Ամյունտասը՝ Ալկետեսի. իսկ Ալկետեսի հայրը եղել է Փիլիպպոսի որդի Աերոպոսը. Փիլիպպոսի հայրը եղել է Արգեոսը, իշխանությունը գրված Պերդիկկասի որդին:

140. Այսպիսին եղել է Ամյունտասի որդի Ալեքսանդրի տոնմագրությունը: Նա, որպես Մարդոնիոսից ուղարկված, հասավ Աթենք և այսպես խոսեց. «Աթենացի այրեր. Մարդոնիոսն այսպես է ասում: Արքան ինձ հղել է հետևյալ պատգամը: Ես ներում եմ իմ դեմ աթենացիների գործած բոլոր զանցանքները: Այժմ, Մարդոնիոս, վարվիր այսպես. վերադարձրու իրենց նրանց երկիրը, այլև նրանք թող վերցնեն դեռ ինչքան երկիր ցանկանում են և թող լինեն ինքնիշխան: Նրանց բոլոր արքավայրերը, որոնք ես հրկիզել եմ, եթե ցանկանում են հաշտվել ինձ հետ, դու վերականգնիր: Արքայից հասած այս հրամանը ես պարտավոր եմ կատարել, եթե, իհարկե, դուք չընդդիմանաք: Ես ձեզ եմ դիմում: Ինչո՞ւ այդպես կատաղությամբ պատերազմում եք արքայի դեմ: Չէ՞ որ դուք չեք կարող հաղթել նրան, ոչ իսկ կարող եք ամբողջ ժամանակ նրան դիմադրել: Դուք գիտեք, անշուշտ, թե ինչքան մեծաթիվ է Քսերքսեսի զորքը և ինչպիսի սխրանքներ է այն կատարել: Դուք գիտեք նաև, թե ինչպիսի ուժեր այժմ ունեմ ես: Ուստի դուք եթե նույնիսկ գերազանցեք և հաղթեք, որի համար, եթե ողջամիտ դատեք, դուք ոչ մի նույս չունեք, ապա մեկ այլ բազմապատիկ զորք կհայտնվի: Ուստի մի մտածեք հակառակվել արքային. դրանով կկորցնեք ձեր երկիրը և ձեր գոյությունը կենթարկեք մշտական վտանգի: Արդ, հաշտվեք նրա հետ: Այժմ դուք հաշտություն կնքելու լավագույն հնարավորություն ունեք, քանի որ արքան այդ ցանկանում է: Առանց դավի և խաբեության զինակցություն կնքեք մեզ հետ և մնացեք ազատ: Այս խոսքերը, ով աթենացիներ, Մարդոնիոսը ինձ հանձնարարել է հաղորդել ձեզ: Ինչ վերաբերում է ինձ, ապա ես ոչինչ չեմ ասի ձեր նկատմամբ իմ ունեցած հակման մասին, քանի որ դուք այդ մասին առաջին անգամ այսօր չէ, որ պետք է իմանաք. բայց ես խնդրում եմ ձեզ, լսեք Մարդոնիոսին: Ես լավ տեսնում եմ, որ չեք կարող հավերժ պատերազմել Քսերքսեսի դեմ: Եթե ես տեսնեի, որ դուք այդ անել կկարողանաք, ապա երբեք չէի գա ձեզ մոտ նման առաջարկով: Քանզի արքայի զորությունը գերազանցում է մարդկայինին, իսկ նրա բազուկը շափազանց երկար է: Արդ, եթե դուք այժմ իսկ չհամաձայնվեք ձեզ արված այսքան շահավետ առաջարկության հետ, ապա ես վախենում եմ ձեզ համար. քանզի դուք բոլոր դաշնակիցների մեջ առավել մոտ եք գտնվում ռազմական ճանապարհին, և դուք մենակ պետք է միշտ տուժեք բոլորի համար, քանի որ ձեր երկիրն ընկած է մեջտեղում, որպես ռազմադաշտ: Ուստի համաձայնվեք: Քանզի ձեզ համար մեծ պատիվ է, որ մեծ արքան, մոռանալով ձեր պատճառած վիրավորանքները, հելլեններից միայն ձեզ հետ ուզում է բարեկամ դառնալ»:

141. Ալեքսանդրը այսպես ասաց: Իսկ լակեդեմոնացիները, լսելով, որ Ալեքսանդրը ժամանել է Աթենք, աթենացիներին բարբարոսի հետ հաշտեցնելու նպատակով, և հիշելով պատգամատան գուշակությունն այն մասին, թե՝ իրենց, մյուս դորիացիների հետ, Պելոպոնեսոսից պետք է վտարեն մեդացիները և աթենացիները, խիստ վախեցան, որ աթենացիները չլինի թե դաշինք կնքեն Պարսկի հետ. ուստի և որոշեցին անհապաղ դեսպանություն ուղարկել (Աթենք): Այնպես պատահեց, որ երկու դեսպանությունների ընդունելությունը (Աթենքում) համընկավ. քանզի աթենացիները ձգձգում էին բանակցությունները, քաջ իմանալով, որ լակեդեմոնացիները լսած կլինեն բարբարոսի ուղարկած դեսպանի մասին և իսկույն սուրհանդակ կուղարկեն (Աթենք): Այդ պատճառով էլ աթենացիները ձգձգեցին, կամենալով լակեդեմոնացիներին պարզ ցույց տալ իրենց տրամադրությունը:

142. Արդ, երբ Ալեքսանդրը վերջացրեց իր խոսքը, սպարտացի դեսպանները խոսք վերցրին և ասացին. «Մեզ ուղարկել են լակեդեմոնացիները, խնդրելու ձեզ, որ վնասաբեր ոչինչ չանեք Հելլադայի դեմ և չընդունեք բարբարոսի պայմանները: Այդ կլիներ անարդար և պատիվ չէր բերի հելլեններից ոչ մեկին, առավել ևս ձեզ, բազում պատճառներով: Այդ դուք էիք, որ հրահրեցիք այս պատերազմը, հակառակ մեր կամքի, և սկզբում պայքարը գնում էր միայն ձեր երկրի համար, իսկ այժմ պատերազմը տարածվել է ամբողջ Հելլադայում: Բացի այդ, անհանդուրժելի է, որ դուք, աթենացիներդ, այս ամենի պատճառ դառնալուց հետո, նպաստեք հելլենների սարկության. դուք, որ դեռևս հնուց հայտնի եք եղել որպես շատերի ազատարարներ: Մենք, իհարկե, ցավակցում ենք ձեր ծանր վիճակի համար. քանզի դուք երկու անգամ զրկվել եք բերքից, և արդեն երկար ժամանակ է ձեր տունն ավերվում է: Դրա փոխարեն լակեդեմոնացիները և նրանց դաշնակիցները խոստանում են պահել ձեր կանանց և պատերազմելու պիտանի չեղող ձեր ընդծիններին, մինչև այս պատերազմի վախճանը: Թող մակեդոնացի Ալեքսանդրը ձեզ շահրաշահի, մեղմելով Մարդոնիոսի խոսքը: Այդպես վարվելը նրա գործն է. նա, որպես տիրան, գործակցում է տիրանին: Բայց դուք, եթե իրոք ողջամիտ եք, չպետք է կատարեք այդ. քանզի գիտեք, որ բարբարոսները երբեք նավատարիմ չեն, ոչ էլ անկեղծ»: Այսպես խոսեցին դեսպանները:

143. Իսկ աթենացիները նախ Ալեքսանդրին պատասխանեցին այսպես. «Մենք ինքներս ևս գիտենք, թե Մեդացու ուժը մեր ուժից բազմապատիկ է. ուստի մեզ չի կարելի մեղադրել այդ անգիտանալու մեջ: Այնուհանդերձ, կաղչելով ազատությունից, մենք այն կպաշտպանենք մեր ուժերի հնարածի չափով: Դու մի փորձիր մեզ համոզել հաշտվելու բարբարոսի հետ. մենք չենք համոզվի: Իսկ այժմ հաղորդիր Մարդոնիոսին աթենացիների պատասխանը, թե՝ քանի արևը ընթանում է իր նախկին ուղիով, մենք չենք հաշտվի Քսերքսեսի հետ: Մենք կկռվենք նրա դեմ, ապավինած աստվածների և հերոսների օգնության, որոնց տաճարներն ու արձանները նա անողորմաբար հրկիզեց: Իսկ դու այնուհետև նման առաջարկներով մի հայտնվիր աթենացիների առաջ, և, բարեգործություն առաջարկողի տեսքով մի հորդորիր մեզ

անպատիվ գործեր անել: Մենք չենք կամենում, որ դու, մեր հյուրընկալը և բարեկամը, տուժած լինես մեզանից, աթենացիներից»:

144. Ալեքսանդրին նրանք այսպես պատասխանեցին, իսկ Սպարտայից ժամանած հրեշտակներին ասացին հետևյալը. «Լակեդեմոնացիների վախը, թե մենք կարող ենք հաշտություն կնքել բարբարոսի հետ, խիստ մարդկային է: Բայց դուք պետք է իմանաք, որ աշխարհում չկա այնքան ոսկի և այնպիսի գեղեցիկ ու բարեբեր երկիր, հանուն որի մենք հարեցնենք պարսիկներին և Հելլադան մատնենք ստրկության: Քանզի բազում և կարևորագույն հանգամանքներ կան, որոնք արգելում են մեզ այդպիսի բան անել, եթե նույնիսկ այդ կամենայինք: Առաջինը և կարևորագույնը՝ աստվածների հրկիզված և ավերված արձաններն են ու սրբավայրերը, որոնց համար մենք պետք է խիստ վրեժ լուծենք, այլ ոչ թե դաշնակցենք այդ արարքը կատարողի հետ: Այնուհետև՝ մեր արենակցությունը և համալեզու լինելը մյուս հելլեններին հետ, աստվածների մեր ընդհանուր սրբավայրերը և միահնման բարքերը, այդ ամենին դավաճանելը վայել չէ աթենացիներին: Ուստի լավ իմացեք, եթե ցարդ չեք իմացել, որ քանի դեռ մեկ աթենացի մնա, մենք չենք հաշտվի Քսերքսեսի հետ: Միաժամանակ մենք մեծապես գնահատում ենք ձեր հոգատարությունը մեր նկատմամբ, որ նկատի եք ունեցել մեր տների ավերումը և կամենում եք պատսպարել մեր տնեցիներին: Դուք լիովին դրսևորել եք ձեր բարյացակամությունը մեր նկատմամբ: Իսկ մենք կհամբերենք ինչքան հնարավոր է, որպեսզի ձեզ վրա չծանրաբեռնենք: Այժմ, նման դրության պայմաններում, շտապ զորք ուղարկեք: Մենք գիտենք, որ բարբարոսը երբ իմանա, թե մենք մերժել ենք իր բոլոր պահանջները, անհապաղ կհարձակվի մեր երկրի վրա: Ուստի, նախքան նա կհայտնվեր Ատտիկայում, մենք պետք է ժամանակին զորքով հասնենք Բեոտիա»: Աթենացիների այս պատասխանը լսելուց հետո, հրեշտակները մեկնեցին Սպարտա:

ԳԻՐՔ ԻՆՆԵՐՈՐԴ

ԿԱԼԼԻՈՊԵ

1. Մարդոնիոսը, երբ Ալեքսանդրը վերադարձավ և հաղորդեց աթենացիների պատասխանը, դուրս եկավ Թեսալիայից և շարժվեց Աթենքի վրա[1]: Ուրեմն երկրի միջով անցնելիս, նա իր հետ տանում էր տեղի բնակչությանը: Թեսալիայի տիրակալները բոլորովին չէին զղջացել իրենց նախկին արարքների համար, և այժմ էլ առավել համառությամբ հրահրում էին Պարսկին (հարձակվելու): Այսպես, Թորակս Լարիսացին, որն ուղեկցել էր Քսերքսեսին Հելլադայից նահանջելիս, այժմ բացահայտ թույլ տվեց Մարդոնիոսին իր երկրի միջով արշավել Հելլադա:

2. Երբ (պարսկական) զորքը հասավ Բեոտիա, թեբեցիները, գալով Մարդոնիոսի մոտ, խորհուրդ տվեցին նրան բանակել իրենց երկրում, քանի որ, իրենց ասելով, Հելլադայում չկա դրա համար ավելի հարմար վայր, քան Բեոտիան. ուստի և այնտեղ նստած, նա կարող էր, առանց մարտի, նվաճել ամբողջ Հելլադան: Քանզի, եթե հելլենները միահամուռ լինեն, ինչպես նախկինում, ապա ամբողջ աշխարհը չի կարող ուժով հաղթել նրանց: «Բայց եթե դու անես այն, ինչ մենք խորհուրդ ենք տալիս,— ասացին նրանք,— ապա դու հեշտությամբ ի չիք կդարձնես նրանց ռազմական ծրագրերը: Քաղաքների հզորներին դրամ ուղարկիր. դրանով դու երկպառակություն կառաջացնես Հելլադայում: Այնուհետև քո կողմնակիցների հետ հեշտորեն կհաղթահարես քո թշնամիներին»:

3. Նրանք այսպիսի խորհուրդ տվեցին, բայց Մարդոնիոսը չհամոզվեց: Նրան այրում էր Աթենքը երկրորդ անգամ գրավելու ցանկությունը, մասամբ անմիտ համառությունից, մասամբ էլ այն պատճառով, որ որոշել էր Սարդեսում գտնվող արքային կղզիների վրայով, ջրերի միջոցով ազդարարել Աթենքի գրավումը: Բայց Ատտիկա մտնելով, նա աթենացիներին այնտեղ չպատահեց, այլ լսեց, որ նրանց մեծ մասը գտնվում էր Սալամիսում, նա-

բարբարոսի դաշնակիցներ, ապա Պելոպոնեսոս տանող դռները, ճակառակ Իսթմոսում կառուցված պարսպին, լայնորեն բացված կլինեն Պարսկի առաջ: Ուստի համոզվեք նրանց խոսքին, նախքան աթենացիները Հելլադայի համար կործանարար որևէ որոշում կընդունեն»:

10. Նա այսպես խորհուրդ տվեց: Էֆորոսները նրա խոսքերը կշռադատելուց հետո, առանց որևէ բան հայտնելու քաղաքներից ժամանած հրեշտակներին, գիշերով հինգ հազար սպարտացիների ուղարկեցին, յուրաքանչյուրի կողքին կարգելով յոթ իլոտի: Նրանց առաջնորդելը հանձնարարեցին Կլեոմբրոտոսի որդի Պավսանիասին: Զորավարությունը պատկանում էր Լեոնիդասի որդի Պլեյստարքոսին, բայց սա դեռևս տղա էր, իսկ Պավսանիասը նրա հորեղբորորդին էր և խնամակալը: Քանզի Կլեոմբրոտոսը, Պավսանիասի հայրը և Անաքսանդրիդեսի որդին, արդեն կենդանի չէր: Նա մահացել էր Իսթմոսում, Իսթմոսի պարիսպը կառուցած զորաշղթան ետ բերելուց քիչ ժամանակ անց: Իսկ Կլեոմբրոտոսը զորաշղթան Իսթմոսից ետ բերել էր հետևյալ պատճառով: Երբ նրանք զոհաբերություն էին անում պարսից դեմ գնալու առթիվ պատգամ հարցնելու համար, երկնքում արևը խավարեց[4]: Պավսանիասն իրեն օգնական ընտրեց Դորիևսի որդի Եվրիանակսին, որը սերում էր նույն տոհմից[5]:

11. Այսպիսով, Պավսանիասի զորքը դուրս եկավ Սպարտայից: Իսկ հրեշտակները, երբ օրը բացվեց, դեռևս անտեղյակ, թե զորքը մեկնել է Սպարտայից, եկան էֆորոսների մոտ, իրենք ևս իրենց երկիրը մեկնելու մտադրությամբ: Ներկայանալով էֆորոսներին, նրանք ասացին. «Դուք, լակեդեմոնացիներդ, այստեղ մնացեք, կատարեցեք Յակինթյան տոները և զվարճացեք, դավանանելով ձեր դաշնակիցներին: Իսկ աթենացիները, քանի որ դուք այդպես անարդար վերաբերվեցիք նրանց, դաշնակիցներից զրկված լինելով, ստիպված կլինեն Պարսկի հետ դաշինք կնքել, եթե հնարավորություն ունենան: Եթե մենք արքայի դաշնակիցը դառնանք, պարզ է, որ պարսիկների հետ արշավելու ենք ում դեմ որ նրանք մեզ առաջնորդեն: Թե այդ ձեզ համար ի՞նչ վախճան կունենա, դուք այդ հետո կիմանաք»: Հրեշտակների այս խոսքին էֆորոսները երդվելով ասացին, թե իրենց զորքերն արշավելով օտարների դեմ, հավանաբար, արդեն հասել են Օրեստեսի սրբավայրը. օտարներ ասելով նրանք նկատի ունեին բարբարոսներին: Հրեշտակները, անտեղյակ կատարվածից, հարցրին, թե այդ ի՞նչ է նշանակում: Այնժամ նրանք իմացան ամբողջ կատարվածը, և զարմացած անհապաղ մեկնեցին զորքի հետքերով: Նրանց հետ մեկնեցին նաև լակեդեմոնական պերիոյկներից[6] հինգ հազար հոպլիտներ:

12. Սպարտացիներն, ահա, շտապում էին Իսթմոս: Իսկ արգոսցիները, որոնք նախապես խոստացել էին Մարդոնիոսին խանգարել սպարտացիների

արշավանքը, լսելով, որ զորքը Պավսանիասի հետ դուրս է եկել Սպարտայից, իսկույն Ատտիկա որպես սուրհանդակ ուղարկեցին լավագույն արագընթացին. սա, Աթենք հասնելով, այսպես ասաց. «Մարդոնիոս. ինձ ուղարկել են արգոսցիները հայտնելու քեզ, որ Լակեդեմոնից արդեն դուրս է եկել երիտասարդությունը, և արգոսցիները ի վիճակի չեն դրան խանգարելու, այդ պատճառով դու ամեն ինչ լավ կշռադատիր»:

13. Այս հաղորդելուց հետո սուրհանդակը վերադարձավ: Իսկ Մարդոնիոսը, այդ լսելուց հետո, արդեն չէր ուզում Ատտիկայում մնալ: Այսուհանդերձ, նա չշարժվեց իր տեղից, կամենալով իմանալ աթենացիների մտադրությունը, և տեսնելու համար, թե նրանք ի՞նչ են անելու: Նա ոչ ամայացրեց, ոչ էլ ավերեց Ատտիկան այն հույսով, որ աթենացիներն ի վերջո հաշտություն կկնքեն իր հետ: Բայց երբ Մարդոնիոսը չկարողացավ համոզել աթենացիներին և իմացավ ամբողջ իրողությունը, կրակի մատնեց Աթենքը և նահանջեց, քանի դեռ Պավսանիասի զորքը չէր հասել Իսթմոս: Այն ամենը, ինչ կանգուն էր մնացել քաղաքում, պարիսպ, տուն, սրբավայր, նա ավերեց ու հողին հավասարեցրեց: Մարդոնիոսը նահանջեց այն պատճառով, որ Ատտիկա երկիրն աննպաստ է հեծելազորի համար, և եթե այստեղ պարտվեր, ապա ստիպված կլիներ նահանջել կիրճի միջով, որը կարող էին փակել փոքրաթիվ մարդիկ: Ուստի և Մարդոնիոսը որոշեց վերադառնալ Թեբե և նակատամարտ տալ դաշնակից քաղաքում, բարեկամական հողի վրա, որը հարմար էր հեծելազորի համար:

14. Մարդոնիոսն սկսեց նահանջել: Ճանապարհին նրան լուր հասավ, թե հազար հոգուց բաղկացած լակեդեմոնական մեկ այլ առաջամաս զորագունդ հասել է Մեգարա: Լսելով այդ, նա մտածեց, թե ինչպե՞ս սկզբում գերի վերցնի սրանց: Ուստի նա ետ շրջեց իր զորքը և տարավ դեպի Մեգարա. իսկ հեծելազորը շարժվում էր առաջ և ամայացնում Մեգարիս երկիրը: Սա ամենահեռավոր վայրն էր Եվրոպայի արևմուտքում, ուր հասավ պարսկական այս զորքը:

15. Այնուհետև Մարդոնիոսը լուր ստացավ, որ հելլեները գումարվել են Իսթմոսում: Վերադարձի հանապարհին նա անցավ Դեկելեայի միջով. քանզի Բեոտիայի իշխանները խնդրել էին իրենց հարևան ասոպոսցիներին առաջնորդել նրան Սփենդալես, այնտեղից էլ՝ Տանագրա: Գիշերը Մարդոնիոսը մնաց Տանագրայում, հաջորդ օրը մեկնեց Սկոլոս և արդեն նա թեբեցիների երկրում էր: Այստեղ նա հրամայեց կտրել ծառերը[7], թեև թեբեցիները հարել էին պարսիկներին: Մարդոնիոսն այդ արեց ոչ թե նրանց հանդեպ որևէ թշնամանք ունենալուց, այլ նրան խիստ անհրաժեշտ էր զորքի համար պաշտպանական կառույցներ պատրաստել, որպեսզի պարտության դեպքում ապաստանելու տեղ ունենա: Նրա բանակատեղին սկսում էր Էրիթրեից, անցնում Հյուսիասի մոտով և հասնում մինչև պլատեացիների երկիրը, Ասոպոս

գետի երկայնքով: Բայց նա այս ամբողջ տարածությունը չամայացրեց, այլ միայն յուրաքանչյուր կողմից մոտավորապես տաս ասպարեզ:

16. Մինչ բարբարոսներն զբաղված էին այս աշխատանքներով, թեբեցի Ատտագինոսը, Փոյունոնի որդին, ընդունելության մեծ պատրաստություն տեսնելով, հրավիրում է Մարդոնիոսին և առավել անվանի հիսուն պարսիկների: Հրավիրյալները եկան. խնջույքը տեղի էր ունենում Թեբեում: Իսկ հետագա դեպքերի մասին ես իմացել եմ օրոմենացի Թերսանդրոսից, որը Օրոմենոս քաղաքի ամենահարգարժան մարդկանցից մեկն էր: Թերսանդրոսը պատմում է, որ Ատտագինոսն իրեն ևս հրավիրել է խնջույքին, ինչպես նաև Թեբեի հիսուն անվանի քաղաքացիների: Ատտագինոսը նյուրերին նստեցնում է ոչ թե յուրաքանչյուրին առանձին, այլ յուրաքանչյուր բազմոցին մեկ պարսիկ և մեկ թեբեցի միասին: Ընթրելուց հետո, գինի խմելիս, Թերսանդրոսի հետ բազմոցին նստած պարսիկը նրան հուսարեն հարցնում է, թե՝ որտեղացի՞ է: Ատտագինոսը պատասխանում է թե՝ Օրոմենոսից: Այնժամ պարսիկն ասում է. «Քանի որ դու իմ սեղանակիցն ես և մենք միասին հեղում կատարեցինք, ի հիշատակ մեր բարեկամության, ես ուզում եմ քեզ հայտնել մի բան, որպեսզի հետագայում կարողանաս օգտակար որոշում ընդունել: Տեսնո՞ւմ ես այստեղ խրախնանող պարսիկներին և գետի մոտ բանակատեղում մնացած մեր զորքը: Շուտով դու կտեսնես, որ այս բոլոր մարդկանցից քչերը միայն կկարողանան փրկվել»: Այս խոսքերն ասելիս պարսիկը դառնորեն արտասվում էր: Իսկ Թերսանդրոսը, զարմանալով նրա խոսքերի վրա, ասում է նրան. «Արդյո՞ք այս ամենը պետք չէ հաղորդել Մարդոնիոսին և նրան ուղեկցող ազնվական պարսիկներին»: Բայց պարսիկը պատասխանեց. «Բարեկամս. մարդ չի կարող կանխել այն, ինչ կատարվելու է աստվածային կամքով: Քանզի ոչ ոք, սովորաբար, չի հավատում ճշմարիտը խոսողին: Շատ պարսիկներ, այդ իմանալով հանդերձ, ստիպված են ենթարկվել անհրաժեշտությանը: Մարդու համար ամենատառապալիցն այն է, որ շատ է հասկանում, բայց անզոր է»: Այս ամենը ինձ պատմեց օրոմենացի Թերսանդրոսը և ավելացրեց, թե Պլատեայի ճակատամարտից առաջ նա այդ մասին պատմել է նաև շատ ուրիշների:

17. Երբ Մարդոնիոսը բանակել էր Թեսալիայում, այդ երկրի բոլոր հելլենները, որոնք հարել էին պարսիկներին, զորք հատկացրին և համատեղ ներխուժեցին Աթենք. միայն փոկայացիները չներխուժեցին, թեև նրանք ևս, ճիշտ է, հարկադրաբար, հարել էին պարսիկներին: Պարսիկների Թեբե գալուց քիչ օրեր անց եկան փոկայացի հազար հոպլիտներ, որոնց գլխավորում էր Հարմոկիդեսը, առավել հարգված քաղաքացիներից մեկը: Երբ սրանք ևս ժամանեցին Թեբե, Մարդոնիոսը ուղարկեց հեծյալների, հրամայելով փոկայացիներին առանձին բանակել դաշտում: Երբ նրանք այդ հրամանը կատարեցին, իսկույն այնտեղ հայտնվեց ամբողջ հեծելազորը: Այս բանից հետո

պարսից հետ գտնվող հելլենական զորաբանակում լուր տարածվեց, թե Մարդոնիոսը հիզականարելու է փոկայացիներին: Այս նույն լուրը հասավ նաև փոկայացիներին: Այնժամ նրանց զորավար Հարմոկիդեսը, դիմելով փոկայացիներին, ոգևորեց հետևյալ խոսքերով. «Ով փոկայացիներ: Պարզ է, որ այս մարդիկ, ինչպես ես կարծում եմ, մեր մահն են նյութում թեսալացիների դրդումով: Այժմ ձեզանից ամեն մեկը պարտավոր է արիություն ցուցաբերել: Քանզի գերադաս է կռվում պաշտպանվելով մեռնել, քան թշնամուն հանձնվելով ամոթալի մահով մեռնել: Եկեք, ցույց տանք թշնամուն, որ նրանք, որպես բարբարոսներ, հելլենների հանդեպ ոճիր նյութեցին»:

18. Նա այսպես ասաց. (պարսից) հեծելազորը բոլոր կողմերից օղակեց փոկայացիներին և սկսեց հարձակվել, սպառնալով նրանց եզմել սմբակների տակ: (Պարսից) ադեղներն արդեն պատրաստ էին հետևը արձակելու, ոմանք գուցե արդեն հետևը արձակեցին: Իսկ փոկայացիները շրջան կազմեցին, երեսները դեպի թշնամին և խտացրին իրենց շարքերը, ինչքան հնարավոր էր ավելի խիտ: Այնժամ հեծյալները շրջեցին իրենց ձիերը և ետ սլացան: Ես չեմ կարող որոշակի ասել, թե արդյո՞ք հեծյալները ձիերով արշավեցին թեսալացիների թելադրանքով, փոկայացիներին կոտորելու համար, բայց հետո, պաշտպանության պատրաստ փոկայացի հոպլիտներից շարդ կրելու երկյուղի տակ, Մարդոնիոսի հրամանով ետ շրջվեցին: Եվ կամ, գուցե, Մարդոնիոսը ուզեց նրանց քաջությունը փորձել: Արդ, երբ հեծյալները վերադարձան, Մարդոնիոսը քարոզ ուղարկեց և հրամայեց նրան հետևյալն ասել փոկայացիներին. «Մի վախենամ, փոկայացիներ: Դուք ձեզ դրսևորեցիք որպես քաջ այրեր, այլ ոչ թե այնպես, ինչպես ես ձեր մասին լսել էի: Այժմ, չխնայելով ձեր ուժերը, օգնեցեք մեզ այս պատերազմում: Իսկ ձեր ծառայությունների համար ես և արքան ձեզ առատորեն կվարձատրենք»: Այսպես էին փոկայացիների գործերը:

19. Իսկ լակեդեմոնացիները, հասնելով Իսթմոս, այնտեղ բանակեցին: Երբ մյուս պելոպոնեսցիները, հատկապես նրանք, ում համար այդ հանելի էր, լսելով այդ, իսկ ոմանք նույնիսկ տեսել էին արշավանքի դուրս եկած ասպարացիներին, չուզեցին ետ մնալ լակեդեմոնացիներից: Երբ Իսթմոսում զոհաբերությունն արդեն բարենշան եղավ, նրանք բոլորը նստեցին ընկան և հասան Ելևսիս: Այստեղ ևս նրանք զոհեր մատուցեցին և, քանի որ նշանակները դարձյալ բարենպաստ եղան, շարժվեցին առաջ, իրենց հետ ունենալով նաև աթենացիներին, որոնք անցել էին Սալամիսից և Ելևսիսում միացել նրանց: Հասնելով Թեսպիայի էրիքրեն, նրանք լսեցին, որ բարբարոսները բանակել են Ասոպոս (գետի) մոտ: Այդ իմանալով, հելլենները դիրքավորվեցին նրանց դիմաց՝ Կիթերոնի նախալեռներում[8]:

20. Քանի որ հելլենները չէին իջնում դաշտ, ապա Մարդոնիոսը նրանց դեմ ուղարկեց իր ամբողջ հեծելազորը, որի հրամանատարն էր Մասիստիոս-

սը, որը հոչակ էր վայելում պարսիկների մեջ. սրան հելլեններին անվանում էին Մակիստիոս: Նա հեծել էր Նիսեյան ձիու վրա, որն ուներ ոսկե սանձ և այլ հարուստ զարդեր: Մոտենալով հելլեններին, հեծյալները հարձակվեցին նրանց վրա առանձին ջոկատներով. հարձակվելիս նրանք մեծ վնաս էին պատճառում հելլեններին և նրանց անվանում կեիկներ:

21. Պատահեց այնպես, որ մեգարացիները դիրքավորվել էին ռազմադաշտի առավել բաց վայրում և ենթարկվեցին հեծելազորի առավել ուժեղ հարձակման: Ճնշվելով հեծելազորի հարձակումից, մեգարացիները փարոզ ուղարկեցին հելլենների զորավարների մոտ, որը նրանց այսպես խոսեց. «Մեգարացիներն ասում են. դաշնակիցներ. մենք ի վիճակի չենք միայնակ դիմադրելու պարսից հեծելազորին այն դիրքում, որտեղ դուք մեզ սկզբում կարգեցիք: Այսուհանդերձ, մենք ցարդ համառորեն և արիաբար դիմադրեցինք, հակառակ թշնամու ճնշման: Այժմ եթե դուք մեր փոխարեն այստեղ ուրիշների չուղարկեք, մենք ստիպված կլինենք լքել մեր դիրքերը»: Քարոզն այսպես հաղորդեց: Իսկ Պավսանիասը հարցրեց հելլեններին, թե ովքե՞ր ուզում են կամավոր գնալ այնտեղ և ռազմական դիրքում փոխարինել մեգարացիներին: Քանի որ մյուսները չցանկացան, ապա աթենացիները համաձայնվեցին, հատկապես երեք հարյուր ընտիր ռազմիկներ, Լամպոնի որդի Օլիմպիոդորոսի գլխավորությամբ:

22. Անա սրանք էին, որ ստանձնեցին (պաշտպանությունը) և դիրքավորվեցին էրիթրեում զումարված հելլենական մյուս զորքերի առաջամասում, իրենց հետ վերցնելով նաև աղեղնավորների: Նրանք երկար կռվեցին և մարտի ելքն այսպիսին եղավ: Մինչ հեծյալները հարձակվում էին ջոկատներով, Մասիստիոսի ձին, որը սլանում էր առջևից, հետով խոցվեց կողից, ցավից ծառս եղավ ոտքերի վրա և ցած նետեց Մասիստիոսին: Երբ նա ընկավ, աթենացիներն իսկույն հարձակվեցին նրա վրա: Նրանք բռնեցին նրա ձին, իսկ Մասիստիոսին, թեև պաշտպանվում էր, սպանեցին: Սկզբում նրանց այդ չէր հաջողվում, քանի որ Մասիստիոսը զինված էր հետևյալ կերպ: Նա տակից կրում էր թեփուկավոր ոսկե լանջապանակ, իսկ դրա վրայից հագած էր ծիրանագույն խիթոն: Լանջապանակին հասցված հարվածները նրան բոլորովին չէին վնասում, մինչև որ ռազմիկներից մեկը, նկատելով դրա պատճառը, հարվածում է Մասիստիոսի աչքին: Այսպիսով, Մասիստիոսն ընկնում է և սպանվում: Այս դեպքը, ըստ երևույթին, չէին նկատել մյուս հեծյալները. քանզի նրանք ոչինչ չէին նկատել նաև նահանջելու ժամանակ ևս շարժվելիս: Բայց երբ նրանք կանգ առան, իսկույն նկատեցին, որ իրենց հրամանատարը չկա: Արդեն իմանալով կատարվածը, բոլոր հեծյալները, իրար նշան տալով, շրջեցին իրենց ձիերը, սպանվածի դիակը փրկելու համար:

23. Երբ աթենացիները տեսան, որ իրենց վրա են գալիս ոչ թե հեծյալների առանձին ջոկատներ, այլ ամբողջ հեծելազորը միասին, օգնության

կանչեցին մնացած ամբողջ զորին: Մինչ ամբողջ հետևակը կնասներ օգնության, սպանվածի դիակի շուրջը բուռն կռիվ բորբոքվեց: Քանի դեռ երեք հարյուր աթենացիները մարտնչում էին մենակ, մեծ վնասներ կրեցին և ստիպված եղան լքել դիակը: Բայց երբ ամբողջ զորքը հասավ օգնության, այնժամ (պարսկական) հեծելազորը չկարողացավ դիմանալ և փրկել դիակը, այլ այդ դիակի շուրջ ընկան ուրիշ հեծյալներ ևս: Երկու ասպարեզ ևս հաշվելով, նրանք կանգ առան և խորհրդակցեցին անելիքի մասին: Քանի որ նրանք մնացել էին առանց հրամանատարի, ուստի որոշեցին վերադառնալ Մարդոնիոսի մոտ:

24. Երբ հեծելազորը հասավ զորակայան, ամբողջ զորքը սգաց Մասիստիոսի համար, և բոլորից առավել Մարդոնիոսը: Նրանք խուզեցին իրենց մազերը, նույնիսկ ձիերի և բեռնատար անասունների բաշերը, և մեծ աղաղակ բարձրացրին: (Աղաղակի) արձագանքը բռնել էր ամբողջ Բեոտիան, քանի որ սպանվել էր համայն Պարսկաստանում արքայի համար Մարդոնիոսից հետո ամենահարգված մարդը:

25. Բաբարոսներն այսպես, ըստ իրենց սովորության, հարգանք մատուցեցին սպանված Մասիստիոսին: Իսկ հելլեները, հեծելազորի հարձակմանը դիմադրելուց և այն նահանջի մատնելուց հետո, առավել համարձակ դարձան: Նրանք նախ Մասիստիոսի դիակը կառքի վրա դնելով, այն տարան մարտիկների շարքերի միջով: Նրանք այդ արեցին, քանի որ սպանվածը արժանատես էր իր հաղթանդամության և զեղեցկության պատճառով: Հելլենները թողնում էին իրենց դիրքերը և գալիս էին տեսնելու Մասիստիոսին: Այնուհետև նրանք որոշեցին իջնել Պլատեա, քանզի այդ վայրն առավել հարմար էր բանակելու համար, քան էրիթրեն, հատկապես ջրաշատ լինելու պատճառով: Այստեղ էլ, Գարգափիա աղբյուրի մոտ, նրանք որոշեցին գնալ ու բանակել մարտական շարքերով: Արդ, վերցնելով իրենց զենքերը, նրանք առաջ գնացին Կիթերոնի նախալեռներով, անցան Հյուսիսը և հասան Պլատեական երկիրը: Տեղ հասնելով, նրանք, ըստ ցեղերի, բանակեցին Գարգափիա աղբյուրի և հերոս Անդրոկրատեսի սրբավայրի մոտ, ոչ բարձր բլուրների միջև, հարթավայրում:

26. Այստեղ, դիրքերը որոշելիս, մեծ վեճեր ծագեցին տեգեացիների և աթենացիների միջև: Քանզի և՛ սրանք, և՛ նրանք հավակնում էին դիրքավորվելու թևերից մեկում[9], դրա համար վկայակոչելով հին և նոր գործեր: Տեգեացիներն այսպես էին ասում. «Բոլոր դաշնակիցները ռազմաշարքում մշտապես մեզ արժանացրել են այդ դիրքին, պելոպոնեսցիների հետ կատարած բոլոր արշավանքների ժամանակ հնում թե նորերս, սկսած այն ժամանակից, երբ Հերակլյանները, Եվրիսթևսի մահից հետո, փորձեցին վերադառնալ Պելոպոնեսոս: Այդ ժամանակ մենք այդ իրավունքը նվաճել ենք հետևյալ սխրանքի պատճառով: Երբ ամայացիների և հոնիացիների հետ,

որոնք այդ ժամանակ բնակվում էին Պելոպոնեսոսում, մենք եկանք Իսթմոս և բանակեցինք վերադարձած (Հերակլյանների) դեմ, այնժամ Հյուլլոսը[10], ինչպես պատմում են, առաջարկել է, որ չպետք է զորքը զորքի դեմ պատերազմի ելնի և վտանգի ենթարկվի. թող պելոպոնեսցիները զորաբանակից ընտրեն ում լավագույնն են համարում, և թող նրան հանեն իր դեմ մենամարտելու: Պելոպոնեսցիները համաձայնվեցին դրան և երդմամբ պայման կապեցին, որ եթե Հյուլլոսը հաղթի պելոպոնեսցիների առաջնորդին, ապա Հերակլյանները պետք է վերադառնան իրենց երկիրը. իսկ եթե պարտվի, ապա Հերակլյանները կնեռանան ու ետ կտանեն իրենց զորքը, և այնուհետև հարյուր տարի չեն փորձի Պելոպոնեսոս վերադառնալ: Եվ անա բոլոր դաշնակիցների միջից ինքնակամ ընտրվում է մեր զորավար և թագավոր Եթեմոսը, Փեգևսի որդու Աերոպոսի որդին, և մենամարտում սպանում է Հյուլլոսին: Այդ սխրանքի պատճառով մենք արժանացանք պելոպոնեսցիների մեծարանքին, իմիջիայլոց նաև այն նախապատվությանը, որը վայելում ենք մինչև օրս՝ համատեղ ռազմարշավի ժամանակ մշտապես գլխավորել երկրորդ թևը: Ձեզ, լակեդեմոնացիներ, մենք չենք հակառակվում, այլ ձեզ տալիս ենք ձեր ցանկացած թևը գլխավորելու ընտրության իրավունքը: Իսկ մյուս թևը, ինչպես և նախկին ժամանակներում, կգլխավորենք մենք: Բացի մեր այս նշած սխրանքից, մենք առավել արժանի ենք այդ դիրքը զբաղեցնելու, քան աթենացիները: Քանզի մենք ձեզ հետ, սպարտացիներ, ինչպես նաև այլոց հետ, բազմիցս բարեհաջող համատեղ մարտեր ենք մղել: Ուստի և արդար է, որ մենք գլխավորենք մյուս թևը, և ոչ թե աթենացիները. քանզի աթենացիները ոչ այժմ, ոչ իսկ անցյալում այնպիսի գործեր չեն կատարել, ինչպես մենք»:

27. Տեգեացիներն այսպես ասացին. իսկ աթենացիները նրանց անա թե ինչ պատասխանեցին: «Մենք քաջ գիտենք, որ այստեղ հավաքվել ենք բարբարոսի դեմ կռվելու, և ոչ թե վիճաբանելու: Բայց քանի որ տեգեացին առաջարկեց երկու կողմերին թվարկել անցյալում և նորերս իրենց կատարած սխրանքները, ապա մենք ևս ստիպված ենք պատմելու ձեզ, թե ի՞նչ քաջագործությունների համար մենք ժառանգաբար նվաճել ենք առաջինը լինելու իրավունքը, քան արկադիացիները: Տեգեացիներն ասում են, թե իրենք Իսթմոսում սպանել են Հերակլյանների առաջնորդին: Անա այս Հերակլյաններին, որոնց, միկենյան ստրկությունից փախչելուց հետո, սկզբում վանում էին բոլոր հելլենները, որոնց նրանք դիմում էին, միայն մենք ապաստան տվեցինք, սանձահարելով Եվրիսթևսի զոռոզությունը. նրանց հետ մենք պատերազմում հաղթեցինք Պելոպոնեսոսի այդ ժամանակվա տիրակալներին: Այնուհետև, երբ արգոսցիները, Պոլինիկեսի գլխավորությամբ, արշավեցին Թեբեի դեմ[11], և այնտեղ, սպանվելուց հետո, մնացել էին անթաղ, մենք պատերազմ սկսեցինք Կադմոսյանների դեմ, ետ խլեցինք սպանվածների դիակները և դրանք թաղեցինք Ելևսիսում, մեր երկրում: Մենք սխրանք կատարել ենք նաև ամազոնուհիների դեմ, որոնք արշավելով Թերմոդոն գետի մոտից, մի ժամանակ ներխուժել էին Ատտիկա. իսկ Տրոյական պատերազմում էլ մենք մյուսներից ետ չենք մնացել: Բայց այդ մասին հիշատակելը ավելորդ է, քանի որ այդ ժամանակ խիզախ եղածները այժմ կարող են երկչոտ դարձած լինել, իսկ այդ ժամանակվա երկչոտները այժմ՝ քաջարի: Ուստի բավական է հին դեպքերի մասին խոսենք: Բայց մենք եթե նույնիսկ ուրիշ ոչինչ չենք կատարել, թեև մենք ևս, մյուս հելլենների նման, բազում այլ սխրանքներ ենք գործել, ապա, համենայնդեպս, միայն Մարաթոնում մեր տարած հաղթանակի համար մենք արժանի ենք այդ պատվին և ոչ միայն այդ: Այդ ժամանակ պարսիկների դեմ կռվեցինք մենք միայնակ, և այդպիսի ծանր կռվում գերազանցեցինք և հաղթեցինք քառասուն վեց ազգի[12]: Մի՞թե այդ միակ սխրանքի համար մենք արժանի չենք ռազմաշարքում այդ պատվավոր դիրքն ունենալու: Բայց քանի որ ներկա իրադրության մեջ կարիք չկա ռազմաշարքում գրավելիք տեղի մասին վիճելու, ապա մենք պատրաստ ենք, ով լակեդեմոնացիներ, ճնշազանդվել ձեր հրամանին: Դիրքավորեք մեզ որտեղ և ում դիմաց դուք կկամենաք. քանզի ամենուր որ դիրքավորված լինենք, մենք կաշխատենք արի լինել: Արդ, առաջնորդեք մեզ. մենք կճնշազանդվենք»: Աթենացիներն այսպես պատասխանեցին. իսկ լակեդեմոնացիների համայն զորքը միաձայն աղաղակեց, որ աթենացիներն առավել արժանի են դիրքավորվելու թևում, քան արկադիացիները: Այսպիսով, անա, աթենացիները (վեճում) հաղթեցին տեգեացիներին և զբաղեցրին այդ դիրքը:

28. Այնուհետև հելլենական ամբողջ զորքը, ուշ տեղ հասածները և շուտ ժամանածները, դիրքավորվեցին հետևյալ կարգով: Աջ թևում կանգնած էին մեկ բյուր լակեդեմոնացիներ: Սրանց հինգ հազարը սպարտացիներ էին, որոնց օժանդակում էին երեսուն հինգ հազար թեթևազեն իլոտներ, յուրաքանչյուրին՝ յոթ իլոտ: Իրենց կողքին սպարտացիները ընտրեցին տեգեացիներին, նրանց պատվելու, ինչպես նաև նրանց քաջության համար: Սրանց թիվը հազար հինգ հարյուր հոպլիտ էր: Սրանց կողքին կանգնեցին կորնթացիները՝ հինգ հազար մարդ, որոնք խնդրեցին Պավսանիասին իրենց կողքին կանգնեցնել Պալլենից եկած երեք հարյուր արկադիացիներ՝ Օրխոմենից, այնուհետև՝ երեք հարյուր սիկիոնցիներ. սրանց հաջորդում էին ութ հարյուր եպիդավրոսցիներ: Սրանց կողքին դասվեցին հազար տրեզենացիներ. տրեզենացիներին հաջորդում էին երկու հարյուր մարդ Լեպրեոնից, սրանց՝ չորս հարյուր միկենեցիներ և տիրինթոսցիներ, որոնց հաջորդում էին հազար փլիուսցիներ: Սրանց կողքին դասվեցին երեք հարյուր հերմիոնեցիներ: Հերմիոնեցիներից հետո կանգնած էին վեց հարյուր երիտրիացիներ և ստյուրիացիներ. այնուհետև՝ չորս հարյուր քաղկիսցիներ և հինգ

հարյուր ամբարկիացիներ: Սրանցից հետո կանգնել էին ութ հարյուր լակեդեմոնացիներ և անակտորիացիներ. սրանց հաջորդում էին ութ հարյուր պալեացիներ Կեփալլոնիայից: Սրանցից հետո դասվեցին հինգ հարյուր էգինացիներ: Իսկ սրանց կողքին՝ երեք հազար մեգարացիներ: Վերջում, որպես առաջիններ, դիրքավորվել էին ութ հազար աթենացիներ, որոնք գրաղեցնում էին ձախ թևը. սրանց զորավարն էր Արիստիդեսը, Լիսիմաքոսի որդին:

29. Այս բոլորը, բացի յուրաքանչյուր սպարտացուն հատկացված յոթական իլոտներից, հոպլիտներ էին, որոնց ընդհանուր թիվը երեսուն ութ հազար յոթ հարյուր մարդ էր: Անա այսքան էր բարբարոսների դեմ զումարված հոպլիտների ընդհանուր քանակը: Իսկ թեթևազեթների բազմությունը այսպիսին էր: Սպարտացիների զորքում՝ երեսուն հինգ հազար, քանի որ յուրաքանչյուր սպարտացու կողքին կար յոթ թեթևազեթ մարդ. սրանցից ամեն մեկը զինված էր պատերազմելու համար: Մնացյալ լակեդեմոնացիների և հելլենների թեթևազեթների ընդհանուր թիվը, յուրաքանչյուր հոպլիտի համար հաշված գրեթե մեկ թեթևազեթ, կազմում էր երեսուն չորս հազար հինգ հարյուր մարդ. իսկ ամբողջ թեթևազեթների ընդհանուր թիվը կազմում էր վաթսուն ինը հազար հինգ հարյուր մարդ:

30. Պլատեայում զումարված հելլենական զորքի համընդհանուր քանակը, հոպլիտներն ու մարտունակ թեթևազեթները միասին, կազմեց տասնմեկ բյուրից հազար երկու հարյուր մարդ պակաս: Բայց այնտեղ եկած թեսպիացիների հետ տասնմեկ բյուրը լրացավ: Քանզի հելլենների զորաբանակում էին գտնվում (Թերմոպիլեում) փրկված հազար ութ հարյուր թեսպիացիներ, որոնք, սակայն, ծանր զենքեր չունեին: Սրանք զորաշարքով բանակեցին Ասոպոս գետի մոտ:

31. Իսկ Մարդոնիոսի բարբարոսական զորքը Մասիստիոսին ողբալուց հետո, լսելով, թե հելլեններն արդեն Պլատեայում են, իրենք ևս եկան այդ վայրով հոսող Ասոպոս գետի ափը: Տեղ հասնելուց հետո, Մարդոնիոսը հետևյալ կերպ դասավորեց իր զորքը հելլենների դեմ: Լակեդեմոնացիների դեմ նա կանգնեցրեց պարսիկներին. և քանի որ պարսիկները բազմությամբ շատ էին գերազանցում, ապա նա նրանց կանգնեցրեց ավելի մեծաթիվ շարքերով և՛ ըստ խորքի, և՛ ըստ լայնքի, որով և նրանց մարտաշարքերը ձգվեցին մինչև տեգեացիները: Նա ռազմիկներին դասավորեց հետևյալ կերպ: Ընտրելով առավել ուժեղներին, նա նրանց կանգնեցրեց լակեդեմոնացիներին հանդիման, իսկ առավել տկարներին՝ տեգեացիների դիմաց: Այսպես նա վարվեց թեթեցիների խորհրդով և թելադրանքով: Պարսիկներից հետո նա կանգնեցրեց մեդացիներին, որոնք դիրքավորվեցին կորնթացիների, պոտիդեացիների, օրքոմենացիների և սիկիոնցիների դեմ: Մեդացիների կողքին նա դասեց բակտրիացիներին. սրանք կանգնեցին եթիոպավրոսցիների, տրեզենացիների, տիրինթացիների, միկենեցիների և փլիուսցիների հանդիման:

Բակտրիացիներից հետո նա կանգնեցրեց հնդիկներին, որոնք դիրքավորվեցին հերմիոնեցիների, երետրիացիների, ստյուրիացիների և քաղկիսցիների հանդիման: Հնդիկներից հետո նա դասեց սակերին, որոնք կանգնեցին ամպրակիացիների, անակտորիացիների, լեկադացիների, պալեացիների և էգինացիների հանդիման: Սակերից հետո, աթենացիների, պլատեացիների, մեգարացիների դիմաց նա դիրքավորեց բեովտիացիներին, լոկրացիներին, մալիացիներին, թեսալացիներին և հազար փոկայացիների, քանի որ ոչ բոլոր փոկայացիներն էին հարել պարսիկներին. նրանց մի մասը, պարսիկների կողքից քշված լինելով Պառնասսոս, օգնում էր հելլեններին, և այդտեղից հարձակումներ գործում Մարդոնիոսի զորքերի և նրան հարած հելլենների վրա, նրանց ամեն տեսակ վնաս պատճառելով: Աթենացիների դեմ Մարդոնիոսը կանգնեցրեց նաև մակեդոնացիներին և Թեսալիայի շուրջ բնակվողներին[13]:

32. Ես թվարկեցի սոսկ առավել մեծ, առավել հայտնի և կարևոր ազգերին, որոնց Մարդոնիոսը կանգնեցրեց (հելլենների դեմ): Նրանց մեջ խառնվել էին նաև այլազգի մարտիկներ, փռյուգացիներ, թրակացիներ, մյուսիացիներ, պայոնեներ և ուրիշներ, որոնց թվում նաև եթովպացիներ ու եգիպտացիներ, հատկապես սուսերակիր կոչվող հերմոտիբիներ և կատասիրիներ. եգիպտոսում միայն սրանք են զբաղվում ռազմական գործով: Սրանց էլ Մարդոնիոսը, երբ դեռ գտնվում էր Փալերոնում, իջեցրեց նավերից, որոնց վրա նրանք գտնվում էին: Քանզի Քսերքսեսի գլխավորությամբ Աթենք եկած հետևակ զորքերի մեջ եգիպտացիներ բոլորովին չկային: Բարբարոսական զորքի թիվը, ինչպես արդեն ասել եմ, երեսուն բյուր էր, իսկ Մարդոնիոսի դաշնակից հելլենների թիվը ոչ ոք չգիտի, քանի որ հաշվառում չէր կատարվել: Բայց կարելի է ենթադրել, որ նրանց թիվը եղել է մոտ հինգ բյուր: Այս միայն ռազմադաշտում գտնվող հետևակն էր. հեծելազորը կանգնած էր առանձին:

33. Երբ արդեն բոլորը դիրքավորվել էին քսան ազգերի և շտկատների, հաջորդ օրը երկու կողմերն էլ սկսեցին զոհ մատուցել: Հելլեններից զոհաբերումը կատարում էր Տիսամենոսը, Անտիոքոսի որդին. քանզի որպես գուշակ նա էր հետևում զորքին: Նա ծնունդով էլեոնից էր, պատկանում էր Յամիդյանների տոհմին, և լակեդեմոնացիները նրան շնորհել էին քաղաքացիական իրավունք: Երբ Տիսամենոսը Դելֆիում պատգամ էր հարցրել իր հետնորդների համար, Պյութիան պատասխանել էր, թե նա կտանի խոշորագույն հինգ հաղթանակ: Ոչ ճիշտ հասկանալով պատգամը, նա սկսում է զբաղվել մարմնամարզությամբ՝ մարզական մրցումներում հաղթելու նպատակով: Նա, մարզվելով հնգամարտում[14], նույնիսկ հաղթեց օլիմպիական մրցումներում, բացի ըմբշամարտից, երբ նրա հակառակորդն էր Հիերոնիմոսը՝ Անդրոսից: Իսկ լակեդեմոնացիներն իմացան, որ Տիսամենոսին պատգամատուից տրված

պատասխանը վերաբերում է ոչ թե մարգական մրցումներին, այլ արեյան մարտերին, փորձեցին նրան վարձով համոզել դառնալու պատերազմում իրենց առաջնորդը, Հերակլյան թագավորների հետ համատեղ: Տիսամենոսը տեսնելով, որ սպարտացիները մեծապես գնահատում են իր բարեկամությունը, բարձրացրեց իր գինը և հայտնեց, որ կընդունի նրանց առաջարկը սոսկ այն դեպքում, եթե իրեն շնորհեն քաղաքացու բոլոր իրավունքները. այլ կերպ ոչ մի վարձով: Այդ լսելով, սպարտացիները սկզբում զայրացան և ամբողջովին նրաժարվեցին իրենց առաջարկից: Բայց, ի վերջո պարսից այս վերահաս արշավանքից անաբեկված, նրանք ստիպված եղան զիջել և համաձայնվել նրա պահանջներին: Իսկ Տիսամենոսը, իմանալով, որ սպարտացիներն արդեն մտափոխվել են, հայտարարեց, որ ինքն արդեն չի բավարարվում միայն դրանով, այլ սպարտացիները պետք է իր եղբայր Հեգիասին ևս սպարտացի դարձնեն նույն պայմաններով, ինչ և իրեն:

34. Այս ասելով, նա հետևում էր Մելամպուսի օրինակին, եթե, իհարկե, կարելի է թագավորական իշխանության պահանջը համեմատել քաղաքացիության իրավունքի պահանջի հետ: Քանզի, երբ արգոսյան կանայք մոլագարվել էին, արգոսցիները նրավիրեցին Մելամպուսին Պելոպոնեսոսից գալ իրենց մոտ և վարձի դիմաց իրենց կանանց բուժել մոլագարությունից: Այնժամ Մելամպուսը որպես վարձ պահանջեց թագավորության կեսը: Արգոսցիները չհամաձայնվեցին և մեկնեցին: Բայց երբ արդեն մոլագարվող կանայք ավելի շատացան, ապա արգոսցիները ներկայացան և խոստացան տալ Մելամպուսին այն, ինչ պահանջել էր: Այնժամ Մելամպուսը, տեսնելով, որ նրանք մտափոխվել են, ավելին պահանջեց և ասաց, որ ինքը չի կատարի նրանց խնդրանքը, եթե իր եղբայր Բիասին ևս չտան թագավորության երրորդ մասը: Արգոսցիները, նեղն ընկած լինելով, ստիպված դրան ևս համաձայնվեցին:

35. Արդ, սպարտացիները նույնպես ընդառաջեցին Տիսամենոսի առաջարկներին, քանի որ նա իրենց խիստ անհրաժեշտ էր: Երբ սպարտացիներն ընդունեցին նաև նրա վերջին պայմանները, ապա էլիսցի Տիսամենոսը դարձավ սպարտացի և նրանց հետ, իբրև քուրմ-գուշակ, մարտերում տարավ հինգ խոշոր հաղթանակ: Հիրավի, աշխարհում միայն սրանք են դարձել Սպարտայի քաղաքացիներ: Այդ հինգ մարտերը հետևյալներն են. մեկը, և առաջինը, Պլատեայի ճակատամարտը, հետո՝ տեգեացիների և արգոսցիների դեմ ճակատամարտը, մյուսը՝ Դիպեայի ճակատամարտը բոլոր արկադիացիների դեմ, բացի մանտինեացիներից. չորրորդը՝ մեսսենացիների դեմ Իթմոսում և, վերջապես, Տանագրայում, աթենացիների և արգոսցիների դեմ. սա նրա հինգ հաղթանակներից վերջինն էր:

36. Անա այս Տիսամենոսը, որին բերել էին սպարտացիները, Պլատեայում գուշակություն էր անում հելլեններին համար: Զոհաբերման ընթացքում

նշանակները հելլենների համար վիճակվեցին բարենպաստ այն դեպքում, եթե իրենք պաշտպանվեին, բայց անբարենպաստ, եթե անցնեին Ասոպոսը և նակատամարտ սկսեին:

37. Մարդոնիոսը ևս, զոհաբերություն կատարելիս, հարձակման համար նշանակներն անբարենպաստ եղան, մինչդեռ պաշտպանության համար՝ բարենպաստ: Քանզի Մարդոնիոսը ևս հելլենական սովորությամբ զոհաբերում էր կատարում, իր մոտ որպես գուշակ ունենալով Հեգեսիստրատոսին էլիսից, որը Տելլիասի սերնդի մեջ առավել անվանին էր: Անա սրան, դեռևս այդ դեպքերից առաջ, սպարտացիները բռնեցին և, շղթայելով, ուզեցին մահապարժել, քանի որ նրանից մեծապես և խիստ տուժել էին: Ընկնելով այդ դրժբախտության մեջ, երբ նրա կյանքը վտանգված էր, իսկ մահից առաջ նրան ուրիշ տանջանքներ ևս սպասում էին, նա անհավատալի արարք գործեց: Երբ նա կաշկանդված էր երկաթագամ փայտե կալանակոճղերով, պատահմամբ նրա ձեռքն անցավ ինչ-որ մեկի բերած դանակը, և նա անհապաղ մտածեց կատարել ամենահամարձակ մի գործ, որպիսին, ինչքան ինձ հայտնի է, երբևէ չի կատարվել: Իր ոտքի մնացած մասը կալանակոճղից դուրս բերելու համար նա կտրել է իր թաթը: Այդ անելուց հետո, քանի որ պահակները պահպանում էին ելքը, նա ականափորել է պատը և փախել Տեգեա: Գիշերները նա գնացել է, իսկ ցերեկները թաքնվել անտառում և հանգստացել, և երրորդ գիշերը հասել Տեգեա, թեև բոլոր լակեդեմոնացիները ելել էին նրան փնտրելու: Նրանք մեծապես զարմացել էին (կալանավորի) համարձակության վրա, տեսնելով այնտեղ ընկած կտրված ոտնաթաթը, իսկ իրեն չէին կարողանում գտնել: Անա այսպես Հեգեսիստրատոսը, փախչելով լակեդեմոնացիների ձեռքից ապաստանում է Տեգեա, որն այդ ժամանակ բարեկամ չէր Լակեդեմոնին: Ապաքինվելուց հետո Հեգեսիստրատոսը իրեն փայտե ոտք կպցրեց և այնուհետև հանդես եկավ որպես լակեդեմոնացիների բացահայտ թշնամի: Բայց նրա թշնամանքը լակեդեմոնացիների հանդեպ ի վերջո նրան բարիք չբերեց: Սպարտացիները նրան գերի վերցրին Զակյունթոսում և սպանեցին:

38. Ի դեպ, Հեգեսիստրատոսը սպանվել է Պլատեայի ճակատամարտից հետո. իսկ այդ ժամանակ Ասոպոսի մոտ Մարդոնիոսը վարձեց Հեգեսիստրատոսին ոչ փոքր վարձով, և վերջինս ջանասիրաբար զոհաբերում էր կատարում, մասամբ շահամոլությունից դրդված: Բայց ճակատամարտի առնչությամբ նշանակներն անբարենպաստ էին և՛ պարսիկների, և՛ նրանց հետ եղող հելլենների համար. քանզի սրանց մոտ էր իրենց գուշակը՝ լեկադացի Հիպոդամոսը: Այդ ընթացքում հելլենների զորքը հետզհետե բազմանում էր. ուստի և թեբեցի Տիմեգենիդեսը, Հերպիսի որդին, խորհուրդ տվեց Մարդոնիոսին՝ հսկել Կիթերոնի անցումները, կարողանալու համար ձեռք գցել այն հելլեններին, որոնք ամեն օր անդադար ժամանում էին այնտեղ:

39. Արդեն ութ օր նրանք կանգնած էին իրար դիմաց, երբ թեթեցին այս խորհուրդը տվեց Մարդոնիոսին: Մարդոնիոսը համոզվելով, որ նրա խորհուրդը նպաստավոր է, երբ գիշերն իջավ, հեծելազոր ուղարկեց Կիթերոնի վրա գտնվող անցումները, որոնք տանում են դեպի Պլատեա. դրանք բեռնատիացիները անվանում են երեք գագաթներ, իսկ աթենացիները՝ Կաղնու գագաթներ: Ուղարկված հեծյալները այնտեղ եկան ոչ ի զուր: Նրանք կարողացան ձեռք գցել հինգ հարյուր սայլակառք, որոնք Պելոպոնեսոսից պարեն էին փոխադրում հելլեն զորքի համար, այն պահին, երբ իջնում էին դաշտավայր, ինչպես նաև սայլակառքերին ուղեկցող մարդկանց: Այս ավարը ձեռք բերելով, պարսիկները անգութ կոտորած արին, չխնայելով ո՛չ անասուններին, ո՛չ մարդկանց: Երբ հագեցան սպանելուց, պարսիկները մնացյալներին շրջապատեցին ու քշեցին Մարդոնիոսի զորակայան:

40. Այս կատարվելուց հետո երկու օր ևս անցավ, բայց կողմերից ոչ մեկը չէր ուզում հակատամարտն սկսել: Թեև բարբարոսները մոտենում էին Ասոպոսին, հելլեններին գայթակղելու նպատակով, բայց ոչ մեկը չէր անցնում գետը: Միայն Մարդոնիոսի հեծելազորը մշտապես մոտենում էր և անհանգստացնում հելլեններին: Քանզի թեթեցիները, լիովին հարած լինելով պարսիկներին, սիրահոժար ձգտում էին պատերազմելու և ամբողջ ժամանակ, դեռ մարտը չսկսած, առաջնորդում էին պարսիկներին. իսկ մարտն սկսելուց հետո նրանց տեղն զբաղեցրին պարսիկները և մեդացիները, աչքի ընկնելու բուռն ցանկությամբ:

41. Այսպիսով, այդ տասը օրվա ընթացքում ուրիշ ոչինչ տեղի չունեցավ: Բայց տասնմեկերորդ օրը, երբ դեռ զորքերը Պլատեայում կանգնած էին իրար դիմաց և հելլեններին թիվը հետզհետե մեծանում էր, իսկ Մարդոնիոսը հուսահատվում էր անգործ (նստելուց), Գոբրյուասի որդի Մարդոնիոսը և Փառնակեսի որդի Արտաբազոսը, մեկը փոքրաթիվ այն պարսիկներից, որոնք վայելում էին Քսերքսեսի հատուկ հարգանքը, խորհուրդ ունեցան: Խորհրդում նրանք այսպիսի կարծիքներ արտահայտեցին: Արտաբազոսը պնդում էր, որ պետք է անհապաղ մեկնել և ամբողջ զորքով վերադառնալ Թեբե բերդաքաղաք, որտեղ բերված է մեծ քանակությամբ պարեն և անասունների համար խոտ. այնտեղ, (նրա ասելով), կարելի էր պատերազմը հանգիստ ավարտել հետևյալ կերպ: Իրենք մեծամանակ ոսկի ունեն և՛ որպես դրամ հատած, և՛ չհատած, ինչպես նաև մեծամանակ արծաթ և (թանկարժեք) ըմպանակներ: Այս ամենը, առանց խնայելու, ուղարկենք հելլեններին, հատկապես քաղաքների գլխավորներին: Այնժամ հելլեները շուտով կդավանանեն իրենց ազատությանը, և մենք ամենևին ստիպված չենք լինի վտանգավոր պատերազմ մղելու: Արտաբազոսը, այսպիսով, բաժանում էր թեթեցիների կարծիքը, քանզի լավ ծանոթ էր իրադրությանը և ավելի հեռատես էր, քան Մարդոնիոսը: Իսկ Մարդոնիոսը ավելի վճռական և խիստ

կարծիք ուներ և չէր կամենում ոչ մի գիջում կատարել: Նա գտնում էր, որ իր զորքը մեծապես գերազանցում էր հելլենականին, ուստի և պետք է անհապաղ մարտի բռնվել և թույլ չտալ, որ հելլենները օրեցօր ուժեղանան: Ինչ վերաբերում է Հեգեսիստրատոսի զոհաբերումներին, ապա կարիք չկա դրանք հաշվի առնել, սպասելով լավ նշանակների, այլ, պարսից սովորության համաձայն, մարտի բռնվել:

42. Նրա այս խոսքերին ոչ ոք չհակառակեց. ուստի և այդ կարծիքը գերակշռեց. քանզի արքայից զորքի հրամանատարությունն ստացել էր Մարդոնիոսը, և ոչ թե Արտաբազոսը: Արդ, նա իր մոտ կանչեց ջոկատների զորահրամանատարներին և իր բանակում գտնվող հելլենների զորավարներին ու հարցրեց, թե իրենք գիտե՞ն արդյոք Հելլադայում պարսիկներին սպասող կործանման մասին պատգամատան որևէ ասույթ: Քանի որ հրավիրվածները լռում էին, որովհետև ոմանց հայտնի չէր այդպիսի որևէ պատգամ, իսկ մյուսները համոզված էին, որ այդ մասին խոսելը անվտանգ չի լինի, ինքը՝ Մարդոնիոսը այսպես շարունակեց. «Եթե դուք իրոք ոչինչ չգիտեք, կամ չեք համարձակվում այդ մասին խոսել, ապա ես կասեմ ձեզ, քանզի այդ բոլոր պատգամները հայտնի են ինձ: Կա պատգամատան ասույթ, թե պարսիկները, արշավելով Հելլադա, կկողոպտեն Դելփին, բայց հետո կկործանվեն: Այդ իմանալով, սակայն, մենք չենք գնա Դելփի և չենք կողոպտի սրբավայրը: Այդ պատճառով էլ մենք չենք կործանվի: Արդ, ձեզանից բոլոր նրանք, ովքեր բարեկամ են պարսիկներին, թող հրվեն, համոզված լինելով, որ մենք կճաղթենք հելլեններին»: Այսպես խոսելուց հետո, նա դրդեց հրամայեց բոլորին զինվել և պատրաստ լինել, քանի որ հաջորդ առավոտյան պետք է սկսվեր հակատամարտը:

43. Սակայն պատգամախոսի այս ասույթը, որը, Մարդոնիոսի ասելով, վերաբերվում էր պարսիկներին, ինչքան հայտնի է ինձ, վերաբերվել է իլիրիացիներին և էնետիլյանների արշավանքին, և ոչ թե պարսիկներին: Ընդհակառակը, Բակիսի[15] այս տողերը վերաբերում են այդ մարտին.

Թերմոդոն[16] գետի ու կանաչավետ Ասոպոսի մոտ
Հույների հավաք, ոգի և աղաղակ բարբարոսաձայն:
Հակառակ կամքին հակառակորդի, շատեր պիտ՝ ընկնեն
Մեդացիներից այդ աղեղնավոր, երբ հասնի նրանց ժամը օրհասի:

Այս և Մուսայոսի համանման մարգարեական ասույթները, ինչքան ես գիտեմ, վերաբերվում են պարսիկներին. իսկ Թերմոդոն գետը հոսում է Տանագրայի և Գլիսասի միջև:

44. Պատգամախոսությունների մասին Մարդոնիոսի այդ հարցումից և նրա տված հրամանից հետո գիշերն իջավ և պահակներ կարգվեցին: Արդ, երբ խոր գիշեր էր և լռություն էր տիրում զորատեղիներում, քանի որ, բոլոր երևույթին, զինվորները քնել էին, աթենական պահակներին հեծյալ մոտե-

ցավ Ամյունտասի որդի Ալեքսանդրը, մակեդոնացիների զորավարը և թագավորը, և պահանջեց հանդիպել նրանց զորավարներին: Պահակների մեծ մասը մնաց իր տեղում, իսկ մի քանիսը շտապեցին զորավարների մոտ և ասացին, թե մի հեծյալ է եկել մեդացիների զորաբանակից, որը ուրիշ ոչինչ չի ասել, բացի այն, որ ուզում է զրուցել զորավարների հետ, տալով նրանց անունները:

45. Այս լսելով, զորավարներն անհապաղ հետևեցին պահակներին: Երբ նրանք տեղ հասան, Ալեքսանդրը այսպես խոսեց. «Աթենացի այրեր. ես ուզում եմ վստահել ձեզ հետևյալ խոսքերը, բայց իմ ասածը դուք ոչ ոքի պետք չէ հայտնեք, բացի Պավսանիասից. այլապես դուք կկործանեք ինձ: Ես այն երբեք ձեզ չէի ասի, եթե մեծապես մտահոգված չլինեի հանուն Հելլադայի բախտի համար: Քանզի ինքս ես ծագումով հնուց անտի հելլեն եմ և չեմ ուզում ազատ Հելլադան սարկացված տեսնել: Արդ, ես ձեզ հայտնում եմ, որ Մարդոնիոսի և նրա զորքի զոհաբերումները բարենշան չեն լինում. այլ կերպ նա վաղուց կհարձակվեր: Բայց այժմ Մարդոնիոսը որոշել է կարևորություն չտալ զոհաբերման նշանակներին, և լուսաբացին սկսել նակատամարտը: Քանզի նա, ինչպես ինձ թվում է, վախենում է, որ դուք ավելի մեծ թվով (այստեղ) կհավաքվեք: Ուստի, պատրաստ եղեք մարտի: Եթե Մարդոնիոսը հետաձգի հարձակվելը, դուք համբերատար սպասեք. քանզի նրանց մի քանի օրվա պարեն է մնացել: Եթե այս պատերազմը բարեհաջող ավարտվի, ապա մտածեք նաև իմ (երկրի) ազատագրության մասին: Ես այսպիսի վտանգավոր գործի ձեռնարկեցի հանուն Հելլադայի, ցանկանալով ձեզ հաղորդել Մարդոնիոսի մտադրությունը, որպեսզի բարբարոսները չհարձակվեն ձեզ վրա հանկարծակի և անսպասելի: Ես մակեդոնացի Ալեքսանդրն եմ»: Այս հաղորդելուց հետո, նա ետ սլացավ զորատեղի, դեպի իր ջոկատը:

46. Աթենացի զորավարները, գալով (զորքի) աջ թևը, հանդարդեցին Պավսանիասին իրենց լուածը Ալեքսանդրից: Այդ լսելով, Պավսանիասը, անաբեկված պարսիկներից, այսպես ասաց. «Եթե լուսաբացին հարձակումն սկսվի, ապա դուք, աթենացիներդ, կկանգնեք պարսից դիմաց, իսկ մենք՝ բեովտիացիների և մեր դիմաց կանգնած մյուս հելլենների դեմ, հետևյալ պատճառով: Դուք գիտեք պարսիկներին և նրանց մարտ մղելու եղանակը, քանի որ դուք կռվել եք Մարաթոնում. իսկ մենք չգիտենք այս մարդկանց և նրանց դեմ կռվելու փորձ չունենք. քանզի ոչ մի սպարտացի դեռ չի կռվել մեդացիների դեմ: Բայց մենք լավ գիտենք բեովտիացիներին ու թեսալացիներին: Ուստի վերցնենք զենքերը և գնանք, դուք այս թևը, իսկ մենք՝ ձախ թևը»: Աթենացիները նրա խոսքերին այսպես պատասխանեցին. «Մենք ինքներս նույնպես, սկզբից ևեթ, երբ տեսանք, որ պարսիկները դիրք են գրավում ձեր դիմաց, մտածեցինք նիշտ այն, ինչ դուք այժմ առաջարկում եք: Բայց այդ ժամանակ մենք վախենում էինք, որ մեր առաջարկը ձեզ հաճելի չի լինի: Իսկ այժմ, քանի որ դուք ինքներդ հայտնեցիք ձեր ցանկությունը, մենք հանույթով կընդունենք այդ և պատրաստ ենք այդ կատարելու»:

47. Քանի որ այս առաջարկը հաճելի էր երկուսին էլ, ապա լուսաբացին նրանք իրենց դիրքերը փոխադարձաբար փոխեցին: Նկատելով կատարվածը, բեովտիացիներն այդ մասին տեղեկացրին Մարդոնիոսին: Այդ տեղեկանալով, Մարդոնիոսն անհապաղ ուզեց ինքը ևս տեղափոխվել և պարսիկներին տանել լակեդեմոնացիների դիմաց: Նկատելով այս շարժումը և համոզվելով, որ ոչ մի տեղաշարժում չի կարելի թաքցնել, Պավսանիասը սպարտացիներին դարձյալ բերեց աջ թև: Այնժամ Մարդոնիոսը նույնպես վերադարձավ իր ձախ թևը:

48. Երբ արդեն երկու զորքերը գրավել էին իրենց նախկին դիրքերը, Մարդոնիոսը քարոզ ուղարկեց սպարտացիների մոտ, հայտնելու հետևյալը. «Ով լակեդեմոնացիներ. այստեղի մարդիկ ձեզ համարում են արիագույններն աշխարհում: Նրանք զարմանում են, որ դուք երբեք չեք դիմում փախուստի ու չեք լքում ձեր ռազմական շարքերը, այլ մնում եք և կործանում թշնամուն կամ կործանվում ինքներդ: Բայց պարզվում է, որ այս բոլորից ոչինչ ճշմարիտ չէ: Քանզի դեռևս ձեռնամարտը չսկսած, մենք տեսանք, թե դուք, ինչպես լքելով ձեր դիրքը, փախաք: Դուք առաջ էջում եք աթենացիներին, իսկ ինքներդ կանգնում եք մեր ծառաների դիմաց: Այս ամենը քաջ մարդկանց արարքներ չեն: Մենք մեծապես սխալված ենք եղել ձեր մասին (նման կարծիք ունենալով): Մենք սպասում էինք, որ դուք, այդքան փառաբանվածներդ, քարոզի միջոցով մարտի կհրավիրեք միայն մեզ, պարսիկներիս, ինչին էլ մենք պատրաստվել էինք: Բայց մենք տեսնում ենք, որ դուք բոլորովին էլ նման բան չեք անի. քանի որ սարսափում եք մեզանից: Արդ, քանի որ դուք չսկսեցիք մարտանիրավերը, այդ մենք ենք սկսում: Արդ, ինչո՞ւ դուք, որ հելլեններին մեջ համարվում եք ամենաքաջերը, և մենք՝ բարբարոսների կողմից, չկռվենք իրար դեմ հավասար թվով ջոկատներով: Եթե դուք ուզում եք, որ մյուսները ևս կռվեն, ապա թող նրանք կռվեն հետո: Իսկ եթե դուք այդ չեք կամենում, այլ ուզում եք, որ մենք մենակ կռվենք, ապա թող մենք կռվենք իրար դեմ: Ով հաղթի այս մենամարտում, թող հաղթող համարվի նրա զորաբանակը»:

49. Քարոզն այսպես հռչակելուց հետո, մի առժամանակ սպասեց, և, քանի որ ոչ ոք նրան ոչինչ չպատասխանեց, ետ մեկնեց: Տեղ հասնելով, նա կատարվածի մասին հայտնեց Մարդոնիոսին: Մարդոնիոսը գերհրվեց և, ենթադրյալ հաղթանակով գոռոզացած, իր հեծելազորը շարժեց հելլենների վրա: Հեծյալները սլացան և, տեգեր նետելով ու աղեղնահարելով, սկսեցին մեծ վնաս պատճառել հելլեն զորաբանակին: Նրանք հեծյալ աղեղնավորներ

էին. ուստի դժվար էր նրանց մերձենալ: (Այս հեծյալները) պդտորեցին և հողով լցրին Գարգափիա աղբյուրը, որից ջուր էր վերցնում հելլենական համայն զորքը: Այս աղբյուրի մոտ դիրքավորված էին միայն լակեդեմոնացիները, իսկ մյուս հելլենների դիրքերը գտնվում էին այդ աղբյուրից հեռու, Ասոպոսին ավելի մոտիկ: Բայց քանի որ նրանք կտրված էին Ասոպոսից, ստիպված գալիս էին այս աղբյուրից (ջուր վերցնելու). անհնար էր գետից ջուր վերցնել հեծելազորի հետահարության պատճառով:

50. Այսպիսի իրադրության պայմաններում, երբ զորքը զրկվել էր ջրից և բշնամու հեծելազորը անհանգստացնում էր, հելլենների զորավարները այս և այլ հարցեր քննարկելու համար գումարվեցին աջ թևում՝ Պավսանիասի մոտ: Այս ամենից բացի կար նաև մեկ այլ հանգամանք, որը նրանց առավել անհանգստացնում էր: Նրանք արդեն պարենի պաշար չունեին, քանի որ Պելոպոնեսոսից պարեն բերող գումակի հանապարհը պարսկական հեծելազորը փակել էր և այն չէր կարող զորատեղի հասնել:

51. Զորավարները իրենց ժողովում որոշեցին, որ եթե այդ օրը պարսիկները հետաձգեն իրենց հարձակումը, ապա իրենք կանցնեն կողմ: Այդ կողմին գտնվում է տասը ասպարեզ հեռու Ասոպոսից և Գարգափիա աղբյուրից, որտեղ այդ ժամանակ բանակել էր հելլեն զորքը պլատեացիների քաղաքի առաջ: Այս կողմին ցամաքից առաջացել է այն բանից, որ գետը Կիթերոնից հոսում է ցած, դաշտավայր, բաժանված երկու բլի, որոնք իրարից հեռու են երեք ասպարեզի չափ. այնուհետև այդ բլերը դարձյալ միանում են մեկ գետի մեջ, որը կոչվում է Օյերոե: Պատմում են, որ այս Օյերոեն եղել էր Ասոպոսի դուստրը: Հելլենները, անա, որոշեցին այստեղ անցնել, որպեսզի առատ ջուր ունենան և հեծյալները չկարողանան նրանց վնասել, ինչպես այժմ, երբ կանգնած են իրենց դիմաց: Որոշեցին շարժվել գիշերվա երկրորդ պահաժամին, որպեսզի պարսիկները չնկատեին նրանց տեղաշարժերը և հեծյալներին չուղարկեին իրենց հետապնդելու: Իսկ երբ հասնեին այն վայրը, որն իր հոսանքով առագում էր Ասոպոսի դուստր Օյերոեն Կիթերոնից հոսելիս, այնժամ պետք է զորքի կեսը գիշերվա ընթացքում ուղարկեին Կիթերոն, օգնելու համար պարեն փոխադրող գումակայիններին. քանզի գումակը փակված էր Կիթերոնում:

52. Այսպես որոշելուց հետո, հելլենները ստիպված եղան ամբողջ օրը դիմադրել հեծելազորի անընդմեջ հարձակումներին: Երբ օրվա վերջին հեծելազորը դադարեց հարձակվելուց և գիշերն իջավ, և արդեն ժամանակն էր մեկնելու, այնժամ մեծ մասը, ուրախ, որ խուսափեց հեծյալներից, վեր կացավ մեկնելու, բայց ոչ պայմանավորված վայրը, այլ գնաց դեպի պլատեացիների քաղաքը, մինչև հասավ Հերայի սրբավայրը, որը գտնվում է պլատեացիների քաղաքի մոտ, Գարգափիա աղբյուրից քսան ասպարեզ հեռու: Այնտեղ հասնելով, նրանք իրենց գենքերը դրեցին սրբավայրի առաջ:

53. Այսպես նրանք բանակեցին Հերայի տաճարի մոտ: Մինչ այդ Պավսանիասը, տեսնելով նրանց հեռանալը զորակայանից, հրամայեց լակեդեմոնացիներին ևս վերցնել զենքերը և գնալ միանալ մյուս գնացողներին, կարծելով, որ զորքը գնում է դեպի պայմանավորված վայրը: Սպարտացի բոլոր հրամանատարները սիրով ենթարկվեցին Պավսանիասի հրամանին. միայն Ամոմփարետոսը, Պոլիադեսի որդին, պիտանեատացիների[17] ջոկատի հրամանատարը, հայտարարեց, որ ինքը հոժարակամ չի փախչի բարբարոսներից և չի խայտառակի Սպարտան: Նա զարմանում էր, տեսնելով կատարվածը, քանի որ ներկա չէր եղել վերջին խորհրդակցությանը: Պավսանիասն ու Եվրիանաքսը զայրանում էին, որ նա չի ենթարկվում հրամանին: Նրանց զայրույթը մեծանում էր այն պատճառով, որ Ամոմփարետոսի մերժումը կատիպեր իրենց լքելու պիտանեատացիների ջոկատը. քանզի նրանք երկյուղում էին, որ եթե, կատարելով մյուս հելլենների հետ կայացած համաձայնության պայմանները, իրենք թողնեին Ամոմփարետոսին, ապա նա, լքված, կկործանվեր իր ջոկատի հետ: Այսպես մտածելով, նրանք հրամայեցին լակոնական զորքին չշարժվել, և փորձեցին նրան համոզելու այդպես չվարվել:

54. Մինչ նրանք համոզում էին Ամոմփարետոսին, քանի որ միայն սա էր մնում այնտեղ լակեդեմոնացիներից և տեգեացիներից, աթենացիները զարթեցին հետևյալ կերպ: Նրանք կանգնած մնացին իրենց դիրքերում, բայց իմանալով լակեդեմոնացիների բնավորությունը, թե՝ նրանք մտածում են մի բան, բայց ասում են մեկ այլ բան: Երբ զորքն սկսեց շարժվել, նրանք մի հեծյալ ուղարկեցին դիտելու, թե սպարտացիները արդյոք պատրաստվո՞ւմ են ճամփա ընկնել, թե՞ բոլորովին չեն մտածում հեռանալու մասին, ինչպես և հարցնելու Պավսանիասին իրենց անելիքի մասին:

55. Երբ քարոզը հասավ լակեդեմոնացիների մոտ, տեսավ նրանց կանգնած իրենց դիրքերում և նրանց հրամանատարներին՝ իրար հետ վիճելիս: Այդ պահին Եվրիանաքսն ու Պավսանիասը փորձում էին համոզել Ամոմփարետոսին՝ այնտեղ միայնակ մնալով չվտանգել լակեդեմոնացիներին: Բայց նրանք չկարողացան համոզել նրան: Վիճելիս Ամոմփարետոսը վերցնում է քարը և երկու ձեռքով այն դնում Պավսանիասի ոտքերի առաջ: Այդ քարով, ասաց նա, ինքը քվեարկում է հօգուտ այն բանի, որ չփախչեն օտարների առջևից, նկատի ունենալով բարբարոսներին: Պավսանիասը նրան անվանեց մոլագար ապուշ, որից հետո, դառնալով աթենացի քարոզին, պատասխանեց նաև նրա տված հարցին և ասաց, թե պետք է աթենացիներին հաղորդի սոսկ այն, ինչ այստեղ կատարվել է: Նա խնդրեց նաև, որ աթենացիները մոտենան իրենց և մեկնելու համար անեն այն, ինչ և իրենք սպարտացիները կանեն:

56. Քարոզն այսպես վերադարձավ աթենացիների մոտ. իսկ սպարտա-

ցիները շարունակեցին վիճել մինչև արշալույս: Մինչ այդ ժամանակը Պավսանիասն իր զորքով կանգնած էր մնում: Այնուհետև, նենգադրելով, որ եթե մյուս լակեդեմոնացիները մեկնեն, ապա Ամոմփարետոսը ևս իր տեղում չի մնա, իսկ այդ այդպես էլ եղավ, մեկնելու ազդանշան տվեց և ամբողջ զորքով շարժվեց բլուրների միջով: Տեգեացիները նույնպես հետևեցին: Իսկ աթենացիները, նրամանի նամածայն, այլ ճանապարհով գնացին լակեդեմոնացիներին հակառակ: Քանզի, մինչ լակեդեմոնացիները, հեծելազորի աճից, շարժվում էին բլուրներով և Կիթերոնի լանջերով, աթենացիները քայլեցին ցած, դեպի հարթավայր:

57. Ամոմփարետոսը սկզբում մտածում էր, որ Պավսանիասը երբեք չի նամարձակվի լքել իրենց. ուստի և համառորեն մնում էր և չէր թողնում իր դիրքերը: Բայց երբ Պավսանիասը զորքով առաջ շարժվեց, այնժամ Ամոմփարետոսը տեսնելով, որ իրոք իրեն լքեցին այնտեղ, նրամայեց իր ջոկատին զենքերը վերցնել ու քայլով հետևել մյուս զորքին: Իսկ Պավսանիասը մոտ նարյուր ասպարեզ առաջանալուց հետո, կանգ առավ և սպասեց Ամոմփարետոսի ջոկատին Մոլեոս գետի մոտ, Արգիոպիոն կոչված վայրում, որտեղ կանգնած է Ելևսինյան Դեմետրայի արբավայրը: Պավսանիասը այնտեղ կանգ առավ, այն պատճառով, որ եթե Ամոմփարետոսը իր ջոկատով չհասնա իր դիրքից, ինքը վերադառնա և օգնության հասնի նրան: Հազիվ էր Ամոմփարետոսի ջոկատը հասել Պավսանիասին, երբ բարբարոսների ամբողջ հեծելազորը վրա հասավ: Քանզի (պարսից) հեծելազորը գործում էր այնպես, ինչպես մշտապես սովոր էր գործել: Դատարկ տեսնելով այն վայրը, որտեղ նախորդ օրերին դիրքավորված էին եղել հելլեները, նրանք իրենց ձիերով առաջացին առաջ և, հասնելով լակեդեմոնացիներին, հարձակվեցին նրանց վրա:

58. Երբ Մարդոնիոսն իմացավ, որ հելլեները գիշերվա ընթացքում հեռացել են և այդ վայրը ամայի տեսավ, իր մոտ կանչեց լարիսացի Թորաքսին և նրա եղբայրներ Եվրիպիլոսին ու Թրասիդեյոսին, և ասաց նրանց. «Ով Ալևասի[18] որդիներ, ի՞նչ կասեք հիմա այս վայրը ամայի տեսնելով: Քանզի դուք, լակեդեմոնացիների հարևաններդ, ասում էիք, թե նրանք չեն փախչում մարտադաշտից, այլ գերազանց կռվում են: Դուք նախ տեսաք, որ առաջինը նրանք լքեցին իրենց դիրքերը մարտաշարքում, իսկ այժմ տեսնում ենք, որ նրանք բոլորն այս գիշեր կարողացան փախչել այստեղից: Նրանք, երևի, հելլեների մեջ աչքի են ընկել այն պատճառով, որ մյուս հելլեները նույնպես երկչոտ են, մինչդեռ այժմ նրանք ստիպված էին կռվել իսկապես քաջարի մարդկանց դեմ: Ես հերում եմ ձեզ, որ չճանաչելով պարսիկներին, գովում էիք այս մարդկանց, որոնց մասին ինչ-որ բան գիտեիք: Ես առավել զարմանում եմ Արտաբազոսի վրա, որն այնքան էր վախենում լակեդեմոնացիներից, որ սարսափելուց տվեց ամենավախկոտ խորհուրդը,

թե՝ պետք է վերացնել բանակատեղին և գնալ ու պաշարվել թեբեցիների քաղաքում: Այս խորհուրդն արքան դեռ կլսի ինձանից: Բայց այդ մասին խոսք կլինի ուրիշ անգամ: Իսկ այժմ մենք պետք չէ թույլ տանք, որ նրանք իրագործեն այդ, այլ պետք է հետապնդենք նրանց, մինչև հասնենք նրանց ետևից և, գերի վերցնելով, ստիպենք նրանց հատուցելու այն ամբողջ չարիքի համար, որ պատճառել են պարսիկներին»:

59. Այս ասելով, Մարդոնիոսը անցավ Ասոպոսը և արագորեն պարսիկներին տարավ, ինչպես ինքը ենթադրում էր, փախչող հելլեների ետևից. ընդ որում, նա գնում էր միայն լակեդեմոնացիների և տեգեացիների ետևից: Քանզի աթենացիներին, որոնք բլուրների մոտով իջել էին հարթավայր, նա չէր կարող նկատել: Տեսնելով, որ պարսիկները թափով հետապնդում են հելլեներին, բարբարոսական ջոկատների հրամանատարները, առանց հապաղելու, բոլորը ազդանշանեցին և ամեն մեկն սկսեց ամբողջ արագությամբ հետապնդել հելլեներին, բայց անկարգությամբ, առանց մարտաշարքերի:

60. Այսպիսով, նրանք աղմուկ-աղաղակով հետվեցին հելլեների վրա, նրանց հանկարծակի գերի վերցնելու համար: Բայց Պավսանիասը, երբ (պարսից) հեծելազորը հարձակվեց, իսկույն աթենացիների մոտ ձիավոր ուղարկեց ասելու հետևյալը. «Աթենացի այրեր. այս մեծ կռվում, որտեղ որոշվելու է, թե Հելլադան ազա՞տ կլինի, թե՞ կստրկացվի, մենք, լակեդեմոնացիներս, և դուք, աթենացիներդ, լքված ենք դաշնակիցներից, որոնք փախան անցյալ գիշեր: Ուստի ես այժմ որոշել եմ իմ անելիքը: Մենք պետք է պաշտպանվենք և օգնենք իրար ինչքան հնարավոր է: Եթե հեծելազորը նախ հարձակվեր ձեզ վրա, ապա մենք և մեզ հետ Հելլադային չդավանանած տեգեացիները պարտավոր էինք օգնել ձեզ. բայց հիմա, քանի որ ամբողջ հեծելազորը շրջվել է մեզ վրա, ապա արդարացի է, որ դուք օգնության հասնեք թշնամու կողմից առավել ուժեղ հարձակման ենթարկված զորամասին: Իսկ եթե, կարող է պատահել, դուք ինքներդ անկարող եք մեզ օգնության հասնել, այդ դեպքում շնորհ արեք մեզ մոտ ուղարկել աղեղնավորներին: Մենք գիտենք, որ ներկա պատերազմում դուք առավել նախանձախնդիր եք եղել, քան մյուսները. ուստի և (հուսով ենք, որ) այժմ ևս կանսաք մեզ»:

61. Այս լսելով, աթենացիներն ամբողջ զորքով հետվեցին նրանց օգնելու: Բայց աթենացիները դեռևս հանապարհին էին, երբ նրանց վրա հարձակվեցին նրանց դեմ դիրքավորված հելլեները, որոնք հարել էին արքային: Ուստի և աթենացիները չկարողացան սպարտացիներին օգնության հասնել, քանի որ իրենք էին ենթարկվել հարձակման: Այսպիսով, լակեդեմոնացիներն ու տեգեացիները մնացին միայնակ: Թեբեացիների հետ միասին լակեդեմոնացիները հինգ բյուր էին, իսկ տեգեացիները, որոնք երբեք չեն բաժանվել լակեդեմոնացիներից, երեք հազար: Լակեդեմոնացիներն սկսեցին զոհ մատուցել Մարդոնիոսի դեմ մղվելիք վերահաս հակատամարտի առթիվ,

բայց նշանակները բարենպաստ չէին. իսկ այդ ընթացքում նրանցից շատերն ընկան և առավել շատերը վիրավորվեցին: Քանզի պարսիկները, վանաններից պատնեշ կանգնեցնելով, անխնա նետահարում էին. ուստի սպարտացիները ծանր կացության մատնվեցին, իսկ զոհաբերության նշանակները անբարենպաստ էին: Այնժամ Պավսանիասը իր հայացքը հառելով Պլատեայում գտնվող Հերայի սրբավայրին, դիմեց դիցուհուն, աղերսելով նրան հուսախաբ չանել իրենց:

62. Մինչ նա դեռևս այդ մասին աղերսում էր, առաջինը տեգեացիները շարժվեցին բարբարոսների վրա, և Պավսանիասի աղոթելուց հետո զոհաբերության նշանները բարենպաստ եղան լակեդեմոնացիների համար: Այնժամ իրենք՝ լակեդեմոնացիները ևս շարժվեցին պարսից վրա. իսկ պարսիկները, դեն նետելով իրենց աղեղները, եկան նրանց ընդառաջ: Նախ մարտն սկսվեց վանաններից կազմած պատնեշի շուրջ: Երբ այդ պատնեշն արդեն ընկավ, սկսվեց երկար և թեժ մարտ Դեմետրայի սրբավայրի շուրջ, մինչև որ ձեռնամարտի բռնվեցին. քանզի բարբարոսները բռնում էին (հելլեն հոպլիտների) նիզակները և շարդում դրանք: Պարսիկներն իրենց խիզախությամբ և ուժով չէին զիջում հելլեններին, բայց նրանք ծանրազեն չէին և, բացի այդ, ձեռնամարտելու հմտություն չունեին և չէին կարող ռազմարվեստով հավասարվել իրենց հակառակորդներին: Նրանք նետվում էին սպարտացիների վրա մենակյան կամ տասնյակներով, կամ առավել մեծ ու փոքր խմբերով և կործանվում:

63. Այնտեղ, ուր գտնվում էր Մարդոնիոսը, սպիտակ ձի նստած, և կռվում նազար ընտրյալների հետ, որոնք պարսիկների մեջ լավագույններն էին, հելլենները առավել նեղվեցին: Քանի Մարդոնիոսը կենդանի էր, պարսիկները դիմանում էին և, պաշտպանվելով, սպանում մեծ թվով լակեդեմոնացիների: Բայց երբ Մարդոնիոսն սպանվեց և նրա թիկնապահների ընտրյալ չոգատը, որն առավել ուժեղ էր, ջախջախվեց, այնժամ մնացյալները շրջվեցին և լակեդեմոնացիների առաջ դիմեցին փախուստի: Նրանց պարտության գլխավոր պատճառն այն էր, որ նրանց թիկնոցի վրա զրահ չկար և նրանք հոպլիտների դեմ կռվում էին թեթև զինված:

64. Այսպես հատուցեց Մարդոնիոսը Լեոնիդասի սպանության համար, համածայն պատգամատան կողմից սպարտացիներին հաղորդված գուշակության, և Պավսանիասը, Կլեոմբրոտոսի որդին, Անաքսանդրիդեսի թոռը, տարավ մեզ հայտնի հաղթանակներից խոշորագույնը: Սա նրա մյուս նախնիներին հիշատակել եմ Լեոնիդասի տոհմագրության մեջ. քանզի նրանց նախնիները նույն մարդիկ են: Իսկ Մարդոնիոսը սպանվեց Սիմենիստոսի կողմից, որը Սպարտայում հայտնի մարդ էր: Սա, պարսկական պատերազմից որոշ ժամանակ անց, իր երեք հարյուր մարդկանցով Ստենիկլերոսի մոտ պատերազմում կռվեց մեսսենացիների ամբողջ զորքի դեմ և սպանվեց իր երեք հարյուրի հետ միասին:

65. Երբ Պլատեայում պարսիկները շարդվեցին լակեդեմոնացիներից, նրանք անկարգ կերպով փախան դեպի իրենց զորատեղին, թեբեական երկրում կառուցած փայտե ամրությունից ներս: Ինձ զարմանք է պատճառում այն, որ Դեմետրայի սրբազան պուրակի մոտ տեղի ունեցած մարտի ընթացքում ոչ մի պարսիկ չմտավ սրբավայր, ոչ էլ սպանվեց, մինչդեռ սրբավայրի շուրջը, անսուրբ վայրում, նրանցից շատերն ընկան: Ես ենթադրում եմ, եթե կարելի է աստվածների վերաբերյալ ենթադրություն անել, որ, աստվածուհին իմքը մերժեց նրանց այն բանի համար, որ նրանք երկիրգել էին իր տաճարը Ելևսիսում:

66. Այս ճակատամարտն այսպես վերջացավ: Իսկ Արտաբազոսը, Փարնակեսի որդին, սկզբից ևեթ դժգոհ էր, որ արքան (Հելլադայում) թողեց Մարդոնիոսին, և այժմ մարտի չբռնվելու նրա խորհուրդները իզուր անցան: Արտաբազոսը գոհ չէր Մարդոնիոսի գործելակերպից, ուստի և վարվեց հետևյալ կերպ: Արտաբազոսի հրամանատարության տակ կար ոչ փոքրաթիվ զորք, մոտ չորս բյուր մարդ: Երբ սկսվեց մարտը, որի ելքը Արտաբազոսը լավ տեսնում էր, նա իր զորքը տարավ ըստ իր նախօրոք կազմած ծրագրի: Նա հրամայեց իր զորքերին արագ հետևել իրեն, որտեղ ինքը նրանց կառաջնորդի: Այս հրամանը տալուց հետո, նա իր զորքն առաջնորդեց ինչպես ճակատամարտի: Բայց առաջ գնալիս, երբ ճանապարհին տեսավ, որ պարսիկները արդեն փախչում են, նա դադարեցրեց ռազմերթը և արագ վազքով փախավ, բայց ոչ դեպի Թեբեի բերդը, այլ դեպի Փոկիս, շտապելով հասնելու Հելլեսպոնտոս հասնելու համար:

67. Սրանք այսպես փախան: Իսկ արքայի զորքում գտնվող հելլենները դժկամորեն էին կռվում, բացի բեովտիացիներից, որոնք երկար ժամանակ մարտնչեցին աթենացիների դեմ: Պարսկամետ թեբեցիները անվեհեր և մեծ ոգևորությամբ կռվում էին, այնպես, որ նրանցից երեք հարյուր լավագույններ սպանվեցին աթենացիների ձեռքով: Երբ սրանք ևս պարտվեցին, փախան Թեբե. բայց ոչ այնտեղ, ուր փախել էին պարսիկները և մյուս դաշնակիցների ամբողջ բազմությունը, որը ոչ ոքի հետ չէր կռվել և ոչնչով աչքի չէր ընկել:

68. Ինձ համար պարզ է, որ բարբարոսների ամբողջ թափը կախված էր պարսիկներից, քանի որ նրանք, դեռ թշնամու հետ կռվի չբռնված, տեսնելով պարսիկների փախուստը, բոլորը դիմեցին փախուստի: Անա այսպես բոլորը փախան, բացի հեծելազորից, նետաձիգ և բեովտիականը: Վերջինս այնքան արիաբար էր կռվում, պաշտպանելով փախչողներին, որ առանց թշնամուց հեռանալու, չէր թողնում, որ հելլենները մոտենային փախչողներին:

69. Այսպես, հաղթողները հետապնդում էին Քսերքսեսի զինվորներին և սպանում: Մինչ այդ, երբ շարքն սկսվել էր, լուրը հասավ մյուս հելլեններին ևս, որոնք կանգնած էին Հերայի սրբավայրի մոտ և չէին մասնակցում հակատամարտին, թե մարտում հաղթել է Պավսանիասի զորքը: Հելլենները, լսելով այդ, մեծ անկարգությամբ վազեցին առաջ. ըստ որում կորնթացիները և նրանց հետ եղողները՝ Կիթերոնի լանջերի և բլուրների վրայի հանապարհով, որն ուղիղ տանում էր դեպի վեր, Դեմետրայի սրբավայրը, իսկ մեգարացիները, փլիուսցիները և նրանց հետ եղողները՝ դաշտում եղած ամենահարթ հանապարհով: Երբ մեգարացիները և փլիուսցիները մոտեցել էին թշնամուն, թեբեցի հեծյալները, որոնց առաջնորդում էր Տիմանդրոսի որդի Ասոպոդորոսը, տեսնելով նրանց անկարգ կերպով մոտենալը, հետվեցին նրանց վրա, և նրանցից վեց հարյուրին զգետնեցին, իսկ մնացյալներին հալածելով, քշեցին մինչև Կիթերոն:

70. Սրանք այսպիսի անփառունակ վախճան ունեցան: Իսկ պարսիկները և մնացյալ ամբոխը ապաստանեցին փայտե պարսպից ներս և, մինչև լակեդեմոնացիների հասնելը, նրանց հաջողվեց բարձրանալ աշտարակները, որտեղից էլ նրանք լավագույնս պաշտպանվում էին: Երբ լակեդեմոնացիները հասան, թեժ պարսպամարտ սկսվեց, մինչև որ վրա հասան աթենացիները: Պաշարյալները համառորեն պաշտպանվում էին, և նույնիսկ գերակշռություն էին ստացել լակեդեմոնացիների հանդեպ, քանի որ վերջիններս պարսպամարտի փորձ չունեին: Բայց երբ աթենացիները վրա հասան, բուռն և երկար պարսպամարտ եղավ: Ի վերջո աթենացիները համառությամբ և խիզախությամբ կարողացան բարձրանալ պարիսպը և հեղհել այն. այդ հեղհից էլ հելլենները ներս խուժեցին: Առաջինը պարսպից ներս մտան տեգեացիները. սրանք էլ կողոպտեցին Մարդոնիոսի վրանը, իմիջիայլոց նաև ձիերի մսուրը, որն ամբողջապես պղնձից էր և հիասքանչ: Մարդոնիոսի այս մսուրը տեգեացիները նվիրաբերեցին Ապեյան Աթենասի տաճարին. իսկ մնացած ավարը նրանք բերեցին նույն տեղը, ուր և մյուս հելլենները: Իսկ բարբարոսները, պարիսպը գրավվելուց հետո, զորակարգը մոռացան և «ոչ ոք չէր հիշում այրական կորովը»[20]: Փոքր տարածության վրա բազմաբյուր մարդիկ խուճապահար ընկնում էին դես ու դեն, և հելլենները կարող էին նրանց հեշտ կոտորել. ուստի և պարսից երեսուն բյուր զորքից, չհաշված այն չորս բյուրը, որոնց վերցնելով իր հետ, փախել էր Արտաբանոսը, կենդանի մնաց հազիվ երեք հազար մարդ: Սպարտայի լակեդեմոնացիներից այս մարտում ընկան ինսունվեց, տեգեացիներից՝ տասնվեց, աթենացիներից՝ հիսուներկու մարդ:

71. Բարբարոսների զորքում առավել աչքի ընկան պարսկական հետևակը և սակերի հեծելազորը, իսկ առանձին մարդկանցից, ինչպես պատմում են, Մարդոնիոսը: Հելլեններից արիաբար կռվեցին տեգեացիները և աթենացիները, բայց քաջությամբ նրանց գերազանցեցին լակեդեմոնացիները: Թեև

սրանք բոլորն էլ իրենց հակառակորդներին հաղթեցին, բայց ես այդպես եմ եզրակացնում, քանի որ լակեդեմոնացիները կռվեցին պարսից զորքի ամենահզոր հատվածի դեմ և հաղթեցին: Իսկ բոլորից առավել արին, մեր կարծիքով, եղել է այն Արիստոդեմոսը, որը Թերմոպիլեում կռված երեք հարյուրից միակն էր փրկվել և այդ պատճառով ենթարկվել անարգանքի և անպատվության[21]: Նրանից հետո առավել աչքի են ընկել Պոսիդոնիոսը, Փիլոքիոնը և սպարտացի Ամոմփարետոսը: Այսուհանդերձ, երբ զրույցի ժամանակ հարց էր ծագել, թե ո՞վ է եղել առավել քաջ, ապա ներկա գտնվող սպարտացիները վճռել են, որ Արիստոդեմոսը, ռազմաշարքը լքելով, կատաղի կռվել է և մեծ սխրանքներ կատարել սոսկ այն պատճառով, որ իր գործած ինչ-որ հանցանքի համար բացահայտորեն գնում էր դեպի մահ: Իսկ Պոսիդոնիոսը արիություն գործեց, չցանկանալով մեռնել: Ուստի և նա առավել քաջարի է, քան Արիստոդեմոսը: Բայց այս ամենը նրանք գուցե և ասում էին նախանձից դրդված: Այս մարտում ընկած բոլոր ռազմիկները, որոնց ես քվարկեցի, մեծ պատվի արժանացան, բացի Արիստոդեմոսից, որը մահ էր փնտրել նշածս պատճառով:

72. Պլատեայում կռվածներից անա սրանք դարձան ամենից հռչակվածները: Մինչդեռ Կալլիկրատեսը սպանվեց մարտից դուրս: Սա այդ ժամանակ ամենագեղեցիկ այրն էր հելլեն զորաբանակում, ոչ միայն լակեդեմոնացիների, այլ նաև այն հելլենների մեջ: Երբ Պավսանիասը զոհաբերություն էր կատարում, սա, ռազմաշարքում նստած, հետապահով խոցվեց կողից: Եվ անա, մինչ մյուսները կռվում էին, Կալլիկրատեսը սարվեց շարքից դուրս: Հոգեվարքի մեջ նա ասում է պլատեացի Արիմնեստոսին, թե ինքը չի ափսոսում, որ մեռնում է Հելլադայի համար, այլ վշտանում է, որ չկարողացավ ձեռնամարտի բռնվել և իրեն արժանի որևէ սխրանք գործել, ինչին ինքը ձգտում էր:

73. Պատմում են, թե աթենացիներից հայտնի է դարձել Սոփանեսը, Նվայուֆիդեսի որդին, Դեկելեա բնակավայրից: Աթենացիները պատմում են, թե նա այն դեկելեացիներից է եղել, որոնք երբեմն բոլոր ժամանակների համար պիտանի սխրանք են կատարել: Երբ հնում Տինդարիդները, առևանգված Հելենեին փնտրելիս, թվաքառ զորքով մտել են Ատտիկա և ավերել բնակավայրերը, քանի որ չգիտեին, թե որտեղ էր թաքցված Հելենեն, այժմ, ինչպես պատմում են, դեկելեացիները, իսկ ըստ ոմանց ինքը՝ Դեկելեսը, վրդովված Թեսևսի զոհողությունից, ինչպես նաև անաբեկված ամբողջ աթենական երկրի համար, ամեն ինչ հայտնել են Տինդարիդներին և նրանց առաջնորդել Ափիդնայ, որը Տինդարիդների ձեռքը մատնել է տեղի բնակիչ Տիտակոսը: Այս արարքի համար դեկելեացիները ցայսօր Սպարտայում օգտվում են ապահովության և տուներին պատվավոր աթոռ ունենալու իրավունքից: Նույնիսկ այս դեպքերից շատ տարիներ անց աթենացիների և պե-

լոպոնեսցիների միջև տեղի ունեցած պատերազմի ընթացքում լակեդեմոնացիներն ամբողջ Ատտիկան ամայացնելիս, խնայեցին Դեկելեան[22]:

74. Անա այս բնակավայրից էր Սոփանեսը, որն այդ ժամանակ աչքի էր ընկել աթենացիների զորքում. նրա մասին երկու զրույց են պատմում: Դրանցից մեկի համաձայն, նա լանջապանակի գոտու վրա կրում էր պղնձե շղթայով ամրացրած երկաթե խարիսխ, որն ամեն անգամ, թշնամուն մոտենալիս, նա նետում էր, որպեսզի հարձակվող թշնամիները չկարողանան նրան տեղաշարժել իր դիրքից: Իսկ երբ թշնամին փախչում էր, նա վերցնում էր խարիսխը և հալածում նրան: Այսպիսին է զրույցներից մեկը: Իսկ հաամաձայն մյուս զրույցի, որը տարբերվում է առաջինից, Սոփանեսը իր մշտապես պտտվող և երբեք չանշարժացող զրահի վրա կրում էր խարիսխի նշան և նրա զոտուց ոչ մի երկաթե խարիսխ կախված չի եղել:

75. Սոփանեսը կատարել է մեկ փայլուն սխրանք ևս: Երբ աթենացիները պաշարել էին էգինան, նա արգոսցի Եվրիբատեսին, որը ճնգամարտի հաղթող էր եղել, կոչել է մենամարտի և սպանել նրան: Հետագայում այս քաջ Սոփանեսին այսպիսի բան վիճակվեց. նա Գլավկոնի որդի Լեագրոսի հետ աթենացիների զորավար էր, երբ էրոնյանների կողմից սպանվեց Դատոսում, ոսկե հանքերի համար մղված մի ճակատամարտի ժամանակ[23]:

76. Երբ հելլեններն Պլատեայում չախչախել էին բարբարոսներին, նրանց մոտ ինքնակամ եկավ մի կին, պարսիկ Փառանդատեսի, Տեասպիսի որդու, հարեմը: Լսելով պարսիկների պարտության և հելլենների հաղթանակի մասին, նա, իր սպասուհիների հետ, առատ ոսկե զարդեր կապած և իր ունեցած ամենաշքեղ զգեստները հագած, իջավ ռազմակառքից և եկավ դեպի լակեդեմոնացիները, որոնք դեռ կոտորում էին: Նկատելով, որ ամեն ինչ կարգադրում է Պավսանիասը, իսկ նրա անունն ու տոհմը նա բազմիցս լսած էր ու լավ գիտեր նրան, ճանաչեց Պավսանիասին և, գրկելով նրա ծնկները, այսպես դիմեց նրան. «Ով Սպարտայի թագավոր: Ինձ, ադերսոդիս, փրկիր գերության սարկությունից: Դու արդեն շատ բան արել ես, ոչնչացնելով այս մարդկանց, որոնք ո՛չ դեմոններին են հարգում, ո՛չ ևս աստվածներին: Իմ սերունդը Կոս կղզուց է և ես Ինտագորասի որդի Հեգետորիդեսի դուստրն եմ: Պարսիկը ինձ Կոսում բռնությամբ է տիրացել»: Պավսանիասը նրան այսպես պատասխանեց. «Ով կին, քաջալերվիր. քանզի դու ինձ ադերսում ես, առավել ևս, որ դու, եթե ճշմարիտ ես ասում, դուստրն ես Կոս կղզու բնակիչ Հեգետորիդեսի, որն այդ երկրում բնակվող իմ լավագույն բարեկամն է»: Այս ասելով, նա այդ կնոջը հանձնեց ներկա գտնվող էֆորոսներին, իսկ հետո նրան ուղարկեց էգինա, ուր և նա կամենում էր գնալ:

77. Այս կնոջ մեկնելուց անմիջապես հետո եկան մանտինեացիները, երբ արդեն ամեն ինչ վերջացել էր: Իմանալով, որ իրենք ուշացել են ճակատամարտից, մեծապես վշտացան և ասացին, թե իրենք արժանի են պատիժ կրելու: Լսելով Արտաբազոսի գլխավորությամբ մեդացիների փախուստը, մանտինեացիները հանձն առան նրանց հետապնդել մինչև Թեսալիա: Բայց լակեդեմոնացիները նրանց թույլ չտվեցին հետապնդել փախչողներին: Վերադառնալով իրենց երկիրը, մանտինեացիները վտարեցին զորահրամանատարներին: Մանտինեացիներից հետո ժամանեցին էլիսցիները: Սրանք ևս, մանտինեացիների նման, վշտացած ետ դարձան, ու վերադառնալուց հետո սրանք ևս երկրից վտարեցին իրենց առաջնորդներին: Այսքանը մանտինեացիների և էլիսցիների մասին:

78. Պլատեայում էգինացիների զորքում կար ոմն Լամպոն, Պյութեասի որդին. սա էգինայի առաջին մարդկանցից էր: Նա անօրեն առաջարկությամբ շտապում է Պավսանիասի մոտ և ասում նրան. «Ով Կլեոմբրոտոսի որդի. դու անսովոր մեծ և փառահեղ սխրանք գործեցիր. աստված քեզ օգնեց, որ փրկես Հելլադան և դրանով մեծագույն համբավ վաստակես, քան մեզ հայտնի որևէ հելլեն: Այժմ դու պետք է մնացած գործերը ևս ավարտես այնպես, որ քո հռչակը առավել մեծանա և ոչ մի բարբարոս այսուհետև չհամարձակվի նման անօրեն գործեր ձեռնարկել հելլենների դեմ: Քանի որ Թերմոպիլեում ընկած Լեոնիդասին Մարդոնիոսն ու Քսերքսեսը գլխատեցին և խաչեցին, ապա դու ևս եթե նույնը հատուցես Մարդոնիոսին, կարժանանաս համայն սպարտացիների և մյուս հելլենների մեծարանքին: Քանզի ցցահանելով Մարդոնիոսին, դու կլուծես քո հորեղբայր Լեոնիդասի վրեժը»:

79. Այս խոսքերով նա ուզում էր սիրաշահել Պավսանիասին. իսկ Պավսանիասը նրան այսպես պատասխանեց. «Էգինացի բարեկամ. ես գնահատում եմ քո բարյացակամությունը և կանխամտածումը. բայց օգտակար խորհուրդ տալիս դու սխալվեցիր: Նախ դու բարձրացնում ես ինձ, իմ հայրենիքը և իմ կատարած գործը, բայց հետո ինձ գլորում ես մինչև ոչնչություն, երբ խորհուրդ ես տալիս խայտառակել սպանվածին, ասելով, որ եթե այդպես վարվեմ, ապա իմ հռչակը կմեծանա: Այդպես վարվելը վայել է բարբարոսներին, բայց ոչ հելլեններին: Այդ արարքի համար էլ մենք նրանց մեղադրում ենք: Նման արարքով ես երբեք չեմ ցանկանա արժանանալ էգինացիների և այլոց համակրանքին, որոնց հանելի են նման արարքները: Ինձ համար բավական է, եթե իմ օրինական արարքներով և արդար խոսքերով արժանանամ սպարտացիների համակրանքին: Ինչ վերաբերում է Լեոնիդասին, որի մահվան վրեժը դու թելադրում ես լուծել, ապա, իմ կարծիքով, նրա վրեժը մեծապես լուծել ենք: Այստեղ սպանված մեծաթիվ թշնամիները պատիվ են նրա և նրա հետ Թերմոպիլեում ընկածների համար: Այսուհետև դու նման առաջարկությամբ ու խորհրդով ինձ մոտ չգաս, և գոհ եղիր, որ մնում ես անպատիժ»:

80. Այս պատասխանը լսելով, նա հեռացավ: Իսկ Պավսանիասը հայտարարեց, որ ոչ ոք ձեռք չտա ավարին, և հրամայեց իլոտներին, նրանց

բոլոր ձիերը հավաքել մի տեղ: Իլոտները, շրջելով զորատեղում, գտան վրաններ, զարդարված ոսկիով և արծաթով, ոսկեզօծ և արծաթազօծ մահիճներ, ոսկե կրատերներ, գավաթներ և այլ ըմպանակներ: Սայլերի վրա նրանք գտան նաև պարկեր, ոսկե և արծաթե կաթսաներով: Սպանվածների վրայից նրանք հանում էին ապարանջաններ, մանյակներ և ոսկե բրեր. իսկ բազմերանգ զգեստների վրա ոչ ոք ուշադրություն չէր դարձնում: Այստեղ շատ բան գողանալով, իլոտները դրանք վաճառեցին էգինացիներին, բայց շատ բան էլ, չկարողանալով թաքցնել, ստիպված եղան հանձնել: Այստեղից էլ, անա, առաջացել է էգինացիների մեծ ճարտությունը. նրանք իլոտներից ոսկին գնում էին պղնձի փոխարեն:

81. Երբ ավարը ի մի բերվեց, հելլենները տասանորդ առանձնացրին Դելփյան աստծուն. այդ տասանորդից պատրաստվեց ոսկե եռոտանի, որը կանգնած է Դելփիում երեքգլխանի պղնձե օձի վրա, զոհասեղանին անմիջապես մոտիկ[24]: Նրանք (տասանորդ) առանձնացրին նաև Օլիմպիայի աստծուն, որից կանգնեցրին Զևսի պղնձե արձանը տասը կանգուն բարձրությամբ, ինչպես նաև Իսթմոսի աստծուն (տասանորդ հատկացրին), որից պատրաստեցին Պոսեյդոնի պղնձե արձանը յոթ կանգուն բարձրությամբ: Այս անելուց հետո, մնացած ավարը, պարսից ճարներին, ոսկին, արծաթը, մնացած գանձերը և լծկանները բաժանեցին իրար միջև, յուրաքանչյուրին ըստ արժանվույն: Իսկ թե Պլատեայի ճակատամարտում նրանցից առավել աչքի ընկածներին այդ ամենից բացի ինչքա՞ն պարգևներ տվեցին, ոչ ոք ոչինչ չի պատմել. բայց, ինչպես ես կարծում եմ, նրանց այդպիսի պարգևներ տրվել են: Իսկ Պավսանիասը ամեն ինչից՝ կին, ձի, տաղանդ, ուղտ և այլ գանձեր, տասնապատիկ ստացավ:

82. Պատմում են նաև, որ այսպիսի մի դեպք է պատահել: Հելլադայից փախչելիս, Քսերքսեսը իր անձնական կարասին թաղել էր Մարդոնիոսին: Արդ, Պավսանիասը, տեսնելով ոսկե և արծաթե կարասին և գունագեղ վարագույրներով պատրաստած (վրանը), հրամայում է հացթուխներին և խոհարարներին այնպիսի ընթրիք պատրաստել, ինչպիսին պատրաստում էին Մարդոնիոսի համար: Նրանք սկսեցին կատարել այդ հրամանը: Շքեղ ծածկված ոսկե և արծաթե մահիճների, ոսկե և արծաթե սեղանների և հարուստ ընթրիքի պատրաստությունից և մատուցված բարիքներից Պավսանիասը զարմանում է և կատակելով հրամայում է իր սպասավորներին՝ պատրաստել լակոնական ընթրիք: Երբ ուտեստը պատրաստվեց, տարբերությունը դրանց միջև շատ մեծ էր: Այնժամ Պավսանիասը, ծիծաղելով, հրամայում է հրավիրել հելլենների զորավարներին: Երբ նրանք հավաքվեցին, Պավսանիասը, մատնացույց անելով նրանց երկու ճաշերը, ասում է. «Հելլեն այրեր. ես ձեզ հավաքել եմ ցույց տալու համար մեդացիների այս առաջնորդի անմտությունը: Նա այսպիսի (չքեղ) կյանք ունենալով հանդերձ, եկել է մեզ վրա,

մեր խղճուկ ինչքը խլելու»: Պատմում են, թե Պավսանիասը այս խոսքերով դիմել է հելլենների զորավարներին:

83. Հետագայում պլատեացիները դեռ շատ արկղներ գտան, մեջը ոսկի, արծաթ և այլ գանձեր: Ավելի ուշ, երբ պլատեացիները մսերից մերկացած դիակների ոսկորները միատեղեցին, գտան մի գանգ, առանց որևէ կարի, կազմված մեկ ոսկրից: Գտնվեց նաև մի ծնոտ, որի վերևի մասում բոլոր ատամները, աղոցատամները և սեղանատամները, միակտուր ոսկրից էին: Բացի այդ, գտնվեց նաև ճինգ կանգուն հասակ ունեցող մարդու կմախք:

84. Ճակատամարտի հաջորդ օրը Մարդոնիոսի դիակն անհետացավ: Ես չեմ կարող ճշտորեն ասել, թե ո՞վ այդ արեց, թեև տարբեր խաղաքներից շատերի մասին լսել եմ, որ թաղել են Մարդոնիոսին, և գիտեմ, որ այդ արարքի համար առատ պարգևներ են ստացել Մարդոնիոսի որդի Արտոնտեսից: Բայց հաստատապես չիմացա, թե նրանցից հատկապես ո՞վ Մարդոնիոսի դիակը տարել ու թաղել է: Այսուհանդերձ, պատմում են, թե նրան թաղել է եփեսացի Դիոնիսոփանեսը: Այսպես են թաղել նրան:

85. Պլատեայում ձեռք բերած ավարը բաժանելուց հետո, հելլեններն սկսեցին թաղել յուրայիններին, ամեն խաղաք առանձին: Լակեդեմոնացիները պատրաստեցին երեք դամբարան: Դրանցից մեկում նրանք թաղեցին «իրենցերին»[25], որոնց թվում էին Պոսիդոնիոսը, Ամոմփարետոսը, ինչպես նաև Փիլոկիոնը և Կալլիկրատեսը: Արդ, դամբարաններից մեկում «իրենցերն» էին, մյուսում՝ մնացյալ սպարտացիները, իսկ երրորդում՝ իլոտները: Սպարտացիներն այսպես թաղեցին. տեգեացիները (յուրայիններին) թաղեցին առանձին մի վայրում: Աթենացիները՝ նույնպես բոլորին մի վայրում: Մեգարացիները և փլիուսցիները ևս թշնամու հեծելազորի հարվածներից սպանված յուրայիններին թաղեցին մի վայրում: Այս բոլոր դամբարանները լցված էին դիակներով: Իսկ մնացյալ հելլենների դամբարանները, որոնք տեսանելի են Պլատեայում, ինչպես ես գիտեմ, դատարկ թմբեր են, որ հաղով լցրել են հելլենական առանձին խաղաքներ, ճակատամարտին մասնակցած չլինելու համար մարդկանց առաջ ամոթ զգալով: Այնտեղ կա նաև էգինացիների դամբարան կոչվածը, որը, ինչպես ինձ պատմել են, ճակատամարտից տասը տարի անց, նրանց խնդրանքով, պատրաստել է էգինացիների ճյուրընկալ, պլատեացի Կլեադեսը, Ավտոդիկոսի որդին:

86. Պլատեայում բնկածներին թաղելուց անմիջապես հետո, հելլենները, խորհուրդ գումարելով, որոշեցին արշավել Թեբե և պահանջել պարսկամետների հանձնումը, առաջին հերթին Տիմեգենիդեսի ու Ատտագինոսի, որոնք պարսկամետների գլխավորներն էին: Որոշեցին նաև, որ եթե թեբեցիները մերժեն հանձնել նրանց, չվերացնել պաշարումը, մինչև խաղաքը չհանձնվի: Այսպես որոշելով, Պլատեայի ճակատամարտից տասնմեկ օր անց նրանք եկան ու պաշարեցին Թեբեն, պահանջելով այդ մարդկանց հանձնումը: Քանի

որ թեբեցիները մերժեցին նրանց հանձնել, ապա (հելլենները) սկսեցին ամայացնել նրանց երկիրը և գրոհել պարսիկների վրա:

87. Քանի (հելլենները) չէին դադարում ամայացնելուց, քանի որ Տիմեզենիդեսը այսպես ասաց թեբեցիներին. «Թեբեցի այրեր. քանի որ հելլենները որոշել են չվերացնել պաշարումը, մինչև չգրավեն Թեբեն կամ մինչև դուք մեզ չհանձնեք նրանց ձեռքը, ապա բոլոր այսուհետև Բեոտիա երկիրը մեր պատճառով չտուժի: Բայց եթե նրանց պահանջը լոկ պատրվակ է դրամ կորզելու համար, ապա եկեք այդ դրամը տանք համայնքի (գանձարանից). քանզի մենք պարսիկներին հարել էինք համայնքի հետ, ոչ թե առանձին: Իսկ եթե նրանք քաղաքը պաշարում են իրոք մեզ ձեռք գցելու համար, ապա մենք ինքներս կպատասխանենք նրանց»: Թեբեցիները համարեցին, թե նա իրավացի և օգտակար բան ասաց. ուստի և իսկույն քարոզի միջոցով Պավսանիասին հայտնեցին, թե իրենք ուզում են հանձնել այդ մարդկանց:

88. Երբ այս պայմանով համաձայնություն կայացավ, Առտագիոսը փախավ քաղաքից. նրա որդիներին բռնեցին, բայց Պավսանիասը նրանց անպարտ արձակեց, ասելով, որ որդիները պատասխանատու չեն նրա պարսկամետության համար: Իսկ մյուսները, որոնց թեբեցիները հանձնեցին, կարծում էին, թե կկարողանան արդարանալ և վստահ էին, որ կաշառքով կփրկվեն: Մինչդեռ Պավսանիասը, երբ նրանք իր ձեռքն ընկան, կտրեցնելով նրանց այդ մտադրությունը, բաց թողեց դաշնակից համայնքը, իսկ նրանց տարավ Կորնթոս և մահապատժեց: Անա սրանք են Պլատեայում և Թեբեում կատարված դեպքերը:

89. Արտաբազոսը, Փառնակեսի որդին, փախել էր Պլատեայից և արդեն գտնվում էր հեռվում: Երբ նա հասավ Թեսալիա, թեսալացիները նրան հրավիրեցին հյուրընկալության և հարցրին մնացած զորքի մասին, քանի որ նրանք դեռևս ոչինչ չգիտեին Պլատեայում կատարվածի մասին: Արտաբազոսը կռահեց, որ եթե պատմի նրանց ամբողջ ճշմարտությունը ճակատամարտի մասին, ապա իրեն իր զորքի հետ կործանման վտանգի կմատնվի: Նա ենթադրում էր, որ ամեն մեկը, լսելով կատարվածի մասին, կարող է հարձակվել իր վրա: Այսպես մտածելով, նա ոչինչ չէր ասել փոկայացիներին, իսկ թեսալացիներին այսպես դիմեց. «Ես, ով թեսալացի այրեր, ինչպես տեսնում եք, շտապում եմ արագ հասնել Թրակիա. շտապում եմ, որովհետև ես այս զորաջոկատով ուղարկված եմ հատուկ հանձնարարությամբ: Ինքը՝ Մարդոնիոսը իր զորքի հետ կրնկակոխ գալիս է իմ ետևից և շուտով նա սպասվում է այստեղ: Նրան բարեհաճ ընդունեք և հյուրընկալեք. քանզի այդպես վարվելով դուք հետագայում չեք զղջալու»: Այս ասելուց հետո, նա արտաբալով իր զորքը Թեսալիայի և Մակեդոնիայի միջով առաջնորդեց ուղիղ Թրակիա, իրապես շտապող մարդու նման, միջերկրյա կարուկ հանապարհով: Եվ նա Բյուզանդիոն հասավ բազում մարդկանց կորցրած, որոնք

հանապարհին սպանվել էին թրակացիների կողմից և կամ մահացել հիվանդությունից և հոգնությունից: Բյուզանդիոնից նա (նեղուցն) անցավ նավերով: Նա այսպես վերադարձավ Ասիա:

90. Պատահեց, որ Պլատեայում պարսից կրած պարտության այդ նույն օրը տեղի է ունեցել նաև նրանց պարտությունը Հոնիայի Մյուկալեում[26]: Երբ հելլենական նավատորմը, լակեդեմոնացի Լեոտիխիդեսի գլխավորությամբ, կանգնած էր Դելոսում, այնտեղ հրեշտակներ ժամանեցին Սամոսից՝ Թրասիկլեսի որդի Լամպոնը, Արքեստրատիդեսի որդի Աթենագորասը և Արիստագորասի որդի Հեգեսիստրատոսը: Սամոսցիները սրանց պարսիկներից և նրանց կողմից Սամոսում տիրան կարգված Թեոմնեստորից, Անդրոդամասի որդուց, թախուն ուղարկել էին (Դելոս): Երբ սրանք ներկայացան (հելլեն) զորավարներին, Հեգեսիստրատոսը երկար խոսեց, ամեն կերպ բացատրելով, որ բավական է հոնիացիները տեսնեն հելլեն նավատորմը, և նրանք իսկույն պարսից դեմ կապստամբեն, իսկ պարսիկները այդ նավատորմին չեն սպասում: Բայց եթե նույնիսկ սպասելիս լինեն, հելլենները այսպիսի հարմար առիթ երբեք չեն ունենա: Վկայակոչելով իրենց ընդհանուր աստվածներին, Հեգեսիստրատոսը դրդում էր նրանց ստրկությունից փրկել հելլեն մարդկանց և պաշտպանել նրանց բարբարոսից: Նա ասում էր, որ հեշտ է այդ անել, քանի որ բարբարոսների նավերը վատ են լողում և չեն կարող հելլեններին դիմագրել: Իսկ եթե հելլենները կասկածում են, որ հոնիացիները դավ կնյութեն, ապա իրենք պատրաստ են նրանց նավերի վրա պատանդ մնալ:

91. Քանի որ սամոսցի հյուրը այդպես թախանձագին խնդրում էր, Լեոտիխիդեսը, ինչ-որ կանխագուշակության պատճառով, թե՞ ասված պատահաբար նրան այդ հերշնչեց, հարցրեց սամոսցուն. «Անունդ ի՞նչ է, սամոսցի հյուր»: Սա պատասխանեց՝ Հեգեսիստրատոս[27]: Լեոտիխիդեսը ընդհատեց նրա խոսքը և ասաց. «Ես, սամոսցի հյուրեր, Հեգեսիստրատոսի անունն ընդունում եմ որպես բարի նշան: Իսկ դու այժմ երդվիր քո ուղեկիցների հետ, թե սամոսցիները կլինեն մեր նավատորմի դաշնակիցները, և վերադարձիր քո երկիրը»:

92. Այս ասելով, նա գործի անցավ. քանզի սամոսցիները, առանց հապաղելու, երդվեցին նավատորմի մնալ հելլենների դաշինքին: Այս անելուց հետո, մյուսները մեկնեցին, մինչդեռ Հեգեսիստրատոսին Լեոտիխիդեսը կարգադրեց նավել հելլենների հետ, նրա անունը բարի նշան համարելով:

93. Հելլեններն այդ օրն սպասեցին, իսկ հաջորդ օրը նրանք ստացան բարենպաստ նշանակներ: Նրանց համար գուշակողն էր Եվենիոսի որդի Դեիֆոնոսը, Հոնիական ծոցում գտնվող Ապոլլոնիա քաղաքից: Նրա հար՝ Եվենիոսին այսպիսի մի դեպք պատահեց: Այս Ապոլլոնիայում կա արևին ձոնված ոչխարների հոտ: Ցերեկն այն արածում է Քոն գետի ափերին, որը բխում է Լակմոն լեռից, հոսում է Ապոլլոնիա երկրի միջով ու թափվում է

Օրիկոն նավահանգստի մոտ: Իսկ գիշերները նոտը պահպանում են քաղաքի առավել նարուստ և անվանի մարդիկ, որոնցից յուրաքանչյուրն ընտրվում է մեկ տարվա համար. քանզի Ապոլլոնիայի քաղաքացիները քանկ են գնահատում այդ ոչխարները, տրված ինչ-որ պատգամի պատճառով: Ոչխարները գիշերում են քաղաքից հեռու մի քարայրում: Այդ ժամանակ ոչխարներին պահակ ընտրվել էր այս Եվենիոսը. բայց նա մի անգամ քնած է մնում իր պահակության ընթացքում, և գայլերը, մտնելով քարայր, բզկտում են վաքսուն ոչխար: Եվենիոսը նկատեց այդ կորուստը, բայց լռեց և ոչ ոքի չնայտնեց և մտածեց պակասը լրացնել ուրիշ ոչխարներ գնելով: Սակայն ապոլլոնիացիներից չվրիպեց կատարվածը: Երբ նրանք իմացան պատահածը, դատարանով որոշեցին Եվենիոսին զրկել տեսողությունից, քանի որ նա իր պահակության պահին տարվել էր քնով: Եվենիոսին կուրացնելուց անմիջապես հետո ոչխարները դադարեցին ծննդաբերելուց և երկիրը այլևս բերք չէր տալիս: Դոդոնեում և Դելփիում, որտեղ ապոլլոնիացիները դիմեցին պատգամախոսներին այդ չարիքի պատճառի մասին, նրանց պատասխան տրվեց, որ տեսողությունից հանիրավի զրկել են սրբազան ոչխարների պահապան Եվենիոսին. քանզի (աստվածներն) իրենք էին ուղարկել գայլերին, և ապոլլոնիացիների դժբախտությունը չի վերանալու, մինչև որ նրանք չհատուցեն Եվենիոսին պատճառած չարիքի համար և չբավարարեն նրա մյուս պահանջները: Այդ ամենը կատարվելուց հետո, (աստվածները) Եվենիոսին կոչտեն այնպիսի շնորհքով, որի համար շատ մարդիկ նրան երանի են տալու:

94. Ապոլլոնիացիներին պատգամախոսն այսպես էր ազդարարել: Բայց նրանք այդ գաղտնի պահելով, իրենց մի քանի քաղաքացիների հանձնարարեցին այդ կատարել: Իսկ վերջիններս այդ այսպես կատարեցին: Նրանք գնացին Եվենիոսի նստած վայրը և նրա կողքին նստելով, սկսեցին նրա հետ այս ու այն բանի մասին զրուցել, մինչև որ սկսեցին վշտակցել նրա դժբախտության առթիվ: Երբ արդեն խոսքն այստեղ հասավ, նրանք հարցրին Եվենիոսին, թե ի՞նչ հատուցում կպահանջեր ինքը ապոլլոնիացիներից, եթե սրանք կամենային հատուցել իրեն պատճառած այդ չարիքի համար: Եվենիոսը, ոչինչ լսած չլինելով տրված պատգամի մասին, անվանեց երկու քաղաքացիների, որոնց հողամասերը նա համարում էր լավագույնը Ապոլլոնիա երկրում, ինչպես նաև քաղաքի ամենագեղեցիկ տունը: Նա ասաց, որ եթե այդ ամենը տրվի իրեն, ապա ինքը այսուհետև ոչ մի գանգատ չի ունենալու և այդ հատուցումը կհամարի բավարար: Նա այսպես ասաց. իսկ նրա հետ նստողները պատասխանեցին. «Եվենիոս. այդ ամենը պատգամատան հրամանով ապոլլոնիացիները քեզ հատուցում են քո կուրացման փոխարեն»: Եվենիոսն ամեն ինչ իմանալով, խիստ վշտացավ, որ այդպես խաբվել է. իսկ ապոլլոնիացիները տերերից գնեցին նրա ընտրած (հողերն ու տունը) և նանձնեցին նրան: Այդ օրից նա օժտվեց գուշակողի բնատուր ձիրքով, որը նրան մեծ համբավ բերեց:

95. Անա այս Եվենիոսի որդի Դեիփոնոսին կորնթացիները բերել էին իրենց հետ և սա գուշակություն էր անում զորքի համար: Ես լսել եմ նաև այն, որ իբր Դեիփոնոսը, թեև Եվենիոսի որդին չէր, բայց իրեն ներկայացնում էր որպես այդպիսին, և, օգտագործելով նրա անունը, շրջում ամբողջ Հելլադան և վարձով գուշակություն անում:

96. Քանի որ զոհաբերության նշանակները բարենպաստ եղան, հելլեններին նավերը Դելոսից մեկնեցին Սամոս: Երբ արդեն մոտեցել էին սամոսյան երկրի Կալամիաս վայրին, այնտեղ խարիսխ նետեցին Հերայի սրբավայրի մոտ, և սկսեցին նավամարտի պատրաստվել: Իսկ պարսիկները, լսելով հելլենների մոտենալը, նույնպես դուրս եկան ծով. բայց մյուս նավերի հետ, բացի փյունիկյաններից, որոնց ետ ուղարկել էին, նավեցին դեպի մայր ցամաք: Նրանք որոշեցին նավամարտի չբռնվել, քանի որ իրենց ուժերն անհավասար էին: Նրանք նավում էին դեպի մայր ցամաք, որպեսզի լինեին Մյուկալեում գտնվող իրենց հետևակ զորքի պաշտպանության տակ. այդ զորքը, Քսերքսեսի հրամանով, ամբողջ զորաբանակի կողմից թողնվել էր այնտեղ՝ Հոնիան պաշտպանելու համար: Այդ զորամասի թիվը վեց բյուր էր: Դրա զորավարն էր Տիգրանեսը, որը գերազանցում էր մյուս պարսիկներին իր գեղեցկությամբ ու քիկնեղությամբ: (Պարսից) նավատորմի զորավարները որոշեցին ապավինել այդ զորամասի պաշտպանությանը, իրենց նավերը քաշել ծովափ և այնտեղ պաշտպանական ամրություն կառուցել նավերի և իրենց ապահովության համար :

97. Այս նպատակով նրանք դուրս եկան ծով: Երբ նրանք, անցնելով Մյուկալեում գտնվող Տիրանյաց[28] տաճարի մոտով, հասան Գայսոն և Սկոլոպսիս, ուր գտնվում է Ելևսիսյան Դեմետրայի տաճարը, որը կառուցել է Պասիկլեսի որդի Փիլիատոսը, Կոդրոսի որդի Նիլեոսի հետ Միլետը հիմնելիս, այնտեղ նավերը քաշեցին ցամաք: Այնուհետև նավերի շուրջ քարերից ու գերաններից պատնեշ բարձրացրին, մրգատու ծառերը կտրատեցին և պատնեշի շուրջ ցցեր խրեցին. այսպիսով նրանք պատրաստվեցին և՛ պարտվելու, և՛ հաղթելու. քանզի նրանք պատրաստվելիս նախատեսել էին և՛ այս, և՛ այն:

98. Իսկ հելլենները լսելով, որ բարբարոսները մեկնել են դեպի մայր ցամաք, սրտնեղած նրանց փախուստի համար, մնացել էին անվճռական, չիմանալով ի՞նչ անել. վերադառնալ ե՞տ, թե՞ նավել դեպի Հելլեսպոնտոս: Ի վերջո որոշեցին ոչ այս, ոչ այն, այլ նավել դեպի մայր ցամաք: Այսպիսով, նրանք նավամարտի համար կամրջակներ և այլ անհրաժեշտ բաներ պատրաստելով, նավեցին դեպի Մյուկալե: Մոտենալով (պարսից) բանակատեղին, նրանք (ծովում) չնկատեցին և ոչ մի նավ, բայց ափին տեսան պատնեշից

ճերս բաշված նավեր, իսկ ծովափին՝ մեծ թվով հետևակ, պատրաստ կռվելու: Այնժամ Լևոյուիդեսը, որն իր նավով բոլորից շատ մոտեցել էր ափին, նախ քարոզի միջոցով այսպես ազդարարեց հոնիացիներին. «Հոնիացի այրեր. ձեզանից ովքեր լսում են իմ խոսքը, թող իմանան. քանզի պարսիկները ոչինչ չեն նասկանա իմ առաջարկից: Արդ, երբ մենք սկսենք մարտը, ձեզանից յուրաքանչյուրը թող նախ հիշի իր ազատությունը, իսկ հետո մեր ռազմական նշանաբանը՝ «Հերե»: Ով այժմ լսում է իմ խոսքը, թող այս բոլորը հաղորդի չլսողներին»: Լևոյիդեսի այս արարքը ուներ նույն նպատակը, ինչ Թեմիստոկլեսի արարքը Արտեմիսիոնում, այն է՝ եթե բարբարոսներին հայտնի չդառնան այս խոսքերը, ապա հոնիացիները կնամոզվեն, իսկ եթե խոսվածը հաղորդեն բարբարոսներին, այդ դեպքում բարբարոսները չեն վստահի հելլեն դաշնակիցներին:

99. Լևոյուիդեսի այս կոչից հետո հելլեններն այսպես գործեցին: Նրանք նավերը ծովափ բաշեցին և ցամաք դուրս գալով, մարտական դիրք ընդունեցին: Իսկ պարսիկները, տեսնելով, որ հելլեները պատրաստվում են պատերազմի և հարդարում են հոնիացիներին, նախ զինաթափեցին սամոսցիներին, կասկածելով նրանց հելլեններին համակրելու մեջ: Քանզի երբ բարբարոսական նավերով Սամոս բերվեցին Առտիկայում մնացած և Քսերքսեսի զորքերի կողմից գերի բռնված աթենացիները, սամոսցիները նրանց բոլորին ազատեցին և, պարենավորելով, ուղարկեցին Աթեն: Անա այն պատճառով, որ սամոսցիները ազատել էին Քսերքսեսի թշնամիներից հինգ հարյուրին, պարսիկներն առավելապես կասկածում էին նրանց: Այնուհետև, պարսիկները միլետացիներին հանձնարարեցին դեպի Մյուկալեի գագաթները տանող անցումները պահպանել, իբր այն պատճառով, որ սրանք ծանոթ էին երկրին: Բայց իրականում պարսիկներն այդպես վարվեցին միլետացիներին զորակայանից հեռացնելու նպատակով: Այսպիսի միջոցներով պարսիկներն ուզում էին կանխել այն հոնիացիների ապստամբությունը, որոնց նկատմամբ կասկածներ ունեին, իսկ իրենց վահաններն իրար միացնելով, իրենց համար պատնեշ կազմեցին:

100. Հելլենները, ավարտելով իրենց պատրաստությունները, առաջացան դեպի բարբարոսները: Երբ նրանք առաջ էին շարժվում, ամբողջ զորաբանակով մեկ լուր տարածվեց և քարոզի մի մասն հայտնվեց ծովեզրին ընկած: Լուր տարածվեց, թե հելլենները հաղթել են Մարդոնիոսին: Բազմաթիվ նշաններից այստեղ բացահայտ է ասածու կամքն այդ գործերում, եթե այդ ժամանակ, թեև Պլատեայի նախատամարտի օրը համընկել էր Մյուկալեում տեղի ունենալիք նախատամարտի օրվան հետ, հաղթանակի լուրը տարածվեց հելլենների մեջ, և դրանից զորքի բարոյականը բարձրացավ և բոլորն ավելի հոժարակամ ուզում էին կռվել:

101. Այս ամենին համընկավ նաև այն, որ երկու ռազմավայրերին մոտիկ կա Ելևսինյան Դեմետրայի տաճար: Հիրավի, Պլատեայի նախատամարտը, ինչպես արդեն ասել եմ, տեղի էր ունեցել Դեմետրայի տաճարի մոտ. այժմ Մյուկալեի նախատամարտը նույնպես պետք է տեղի ունենար (Դեմետրայի տաճարի մոտ): Իսկ Պավսանիասի գլխավորությամբ հելլենների տարած հաղթանակի մասին համբավը ճշմարիտ դուրս եկավ. քանզի Պլատեայում պարսից պարտությունը տեղի էր ունեցել առավոտյան, իսկ Մյուկալեում՝ երեկոյան: Այն, որ այդ նախատամարտերը տեղի էին ունեցել նույն ամսվա նույն օրը, նրանց հայտնի դարձավ միայն անց: Բայց քանի դեռ այդ լուրը չէր ստացվել, նրանք դեռևս անհաբեկված էին, ոչ այնքան իրենց համար, որքան (Պավսանիասի հետ եղող) հելլենների, որ չլինի թե Մարդոնիոսը նվաճեր Հելլադան: Իսկ երբ այդ համբավը արագորեն տարածվեց, այժմ արդեն հելլեններն ավելի արագ էին առաջ շարժվում: Այսպիսով, հելլենները և բարբարոսները շտապում էին մարտի, քանի որ հաղթանակի պարգևները կողքներն էին և Հելլեսպոնտոսը:

102. Աթենացիների և սրանց կողքին մինչև ռազմաշարքի կեսը դասվածների ճանապարհն անցնում էր ծովափով և հարթավայրով. իսկ լակեդեմոնացիների և նրանցից հետո դասվածների ճանապարհը՝ ձորով ու բլուրներով: Մինչ լակեդեմոնացիները դեռևս շրջանցում էին (բլուրները), աթենացիները մյուս թևում արդեն բռնվել էին մարտի: Քանի դեռ պարսից հեծելազորները վահաններ կազմած էին ուղիղ, նրանք կարողանում էին պաշտպանվել և կռվում բոլորովին չէին զիջում: Բայց երբ աթենացիները և նրանց հարևան զորքերը, իրար քաշալերելով, սկսեցին ավելի եռանդով հարձակվել, որպեսզի իրենք տանեն հաղթանակը, և ոչ թե լակեդեմոնացիները, այնժամ արդեն մարտի պատկերը փոխվեց: Հյուսկեն վահանները տապալելով, բոլորը միասին թափով հետվեցին պարսից վրա, որոնք այնժամ ևս դիմացան հարձակման և երկար դիմադրեցին, բայց ի վերջո փախան ամրությունից ներս: Այնժամ աթենացիները, կորնթացիները, սիկիոնցիները և տրեզենացիները, որոնք այս հերթականությամբ կանգնած էին մարտաշարքում, հուպ հալածելով (թշնամիներին), նրանց հետ խուժեցին ամրությունից ներս: Ամրությունը գրավվելուց հետո, բարբարոսներն արդեն չէին դիմադրում և բոլորը փախուստի դիմեցին, բացի պարսիկներից, որոնք փոքր խմբերի բաժանվելով, շարունակեցին դիմադրել պարիսպներից անընդհատ ներս խուժող հելլեններին: Պարսից զորավարներից երկուսը նույնպես փախան, իսկ երկուսը սպանվեցին: Նավատորմի զորավարներ Արտայունտեսը և Իթամիտրեսը փախան, իսկ Մարդոնտեսը և հետևակի զորավար Տիգրանեսը սպանվեցին կռվելիս:

103. Պարսիկները դեռ դիմադրում էին, երբ հասան նաև լակեդեմոնացիներն ու նրանց հետ եղողները, և օգնեցին մնացածը վերջացնելու: Այստեղ ընկան նաև շատ հելլեններ, մասնավանդ սիկիոնցիներ, այդ թվում նաև նրանց զորավար Պերիլաոսը: Իսկ մեդական զորքում գտնվող սամոսցի մար-

տիկները, որոնց պարսիկները գինաթափել էին, սկզբում տեսնելով, որ հաղթանակը դեռևս կասկածելի է, սկսեցին ամեն ինչ անել՝ հելլեններին օգնելու համար: Մնացյալ հոնիացիները, տեսնելով սամոսցիների արարքը, իրենք ևս հետևեցին նրանց օրինակին և, ապստամբելով պարսից դեմ, հարձակվեցին բարբարոսների վրա:

104. Պարսիկները միլետացիներին հանձնարարել էին անցավայրերի պահպանումը, որպեսզի, պարտության դեպքում, ինչը որ իրականում պատահեց, իրենք կարողանային, միլետացիներին ուղեցույց ունենալով, ապաստան գտնել Մյուկալեի բարձունքներում: Միլետացիներին այստեղ ուղարկեցին այս նպատակով, այլև այն պատճառով, որ նրանք հեռու գտնվեն զորքերից և չկարողանան խռովություն բարձրացնել: Իսկ միլետացիները ամեն ինչ կատարեցին հրամայվածին հակառակ: Նրանք հանձնարարեցին պարսիկներին առաջնորդեցին այլ ճանապարհներով, որոնք տանում էին դեպի հակառակորդը. և, ի վերջո, իրենք սկսեցին ավելի մեծ թշնամությամբ կոտորել պարսիկներին: Այսպիսով, Հոնիան երկրորդ անգամ ապստամբեց պարսիկների դեմ:

105. Հելլեններից այս հակատամարտում առավել աչքի ընկան աթենացիները, իսկ աթենացիներից՝ Եվթոյնոսի որդի Հերմոլիկոսը, որը զբաղվում էր պանկրատիոնով: Հետագայում այս Հերմոլիկոսը դժբախտ վախճան ունեցավ: Աթենացիների և կարիստիացիների միջև ծագած պատերազմի ժամանակ նա սպանվեց Կարիստիայի Կյուանոս վայրում տեղի ունեցած հակատամարտում և թաղվեց Գերայստոսում: Աթենացիներից հետո աչքի ընկան Կորնթացիները, տրեզենացիները և սիկիոնցիները:

106. Բարբարոսների մեծ մասին հակատամարտում կամ փախչելիս վերջ տալուց հետո, հելլեները հրկիզեցին նրանց նավերն ու ամբողջ ամրությունը: Այնուհետև ավարը բերեցին ծովափ. նրանք ինչ-որ քանակությամբ դրամական գանձեր գտան: Ամրությունը և նավերը հրկիզելուց հետո նրանք նավերով հեռացան: Հասնելով Սամոս, հելլեները խորհուրդ գումարեցին Հոնիայի (բնակչությունը) տեղափոխելու մասին, թե՝ հատկապես հելլենների տիրապետության տակ գտնվող ո՞ր երկրամասում բնակեցնել նրանց, իսկ Հոնիան թողնել բարբարոսներին. քանզի նրանց թվում էր, որ անհնար է մշտապես պաշտպանել հոնիացիներին բարբարոսներից. բայց և առանց այդպիսի պաշտպանության, հույս չունեին, որ հոնիացիները կարող են անպատիժ թոթափել պարսից տիրապետությունը: Ուստի պելոպոնեսցիների իշխանավորներն առաջարկեցին պարսից կողմն անցած հելլեն ցեղերին քշել նրանց առևտրական նավահանգիստներից և նրանց երկիրը հատկացնել հոնիացիներին բնակեցնելու: Մինչդեռ աթենացիները բոլորովին համաձայն չէին Հոնիան բնակչությունից դատարկելու և չէին կամենում, որ պելոպոնեսցիները որոշեն իրենց գաղութների բախտը: Քանի որ աթենացիները շատ պնդեցին,

ասյա պելոպոնեսցիները տեղի տվեցին: Այսպիսով սամոսցիները, քիոսցիներն ու լեսբոսցիները և մյուս կղզեբնակները, որոնք հելլենների հետ համատեղ կռվել էին, նույնպես ընդունվեցին հելլենների դաշնակցության մեջ: Նրանք երդվեցին հավատարիմ մնալ և չդավանանել դաշինքին: Այս երդումը վերցնելուց հետո հելլենները նավերով մեկնեցին Հելլեսպոնտոս՝ կամուրջները քանդելու: Քանզի նրանք կարծում էին, թե կամուրջները դեռևս կանգուն կգտնեն: Այսպիսով, նրանք նավեցին դեպի Հելլեսպոնտոս:

107. Փրկված փոքրաթիվ բարբարոսները քշվեցին Մյուկալեի բարձունքները, և այնտեղից հասան Սարդես: Մինչ նրանք դեռ ճանապարհին էին, Մասիստեսը, Դարեհի որդին, որը տեսել էր պարսից պարտությունը, սկսեց շատ խիստ խոսքեր ասել զորավար Արտայունտեսին, նրան անվանելով կնոջից ավելի երկչոտ, որ այդպես վատ դեկավարեց, և որ նա արժանի է ծանրագույն պատժի, որովհետև մեծ շարիք է հասցրել արքունի տանը: Պարսից համար մեծագույն անարգանք է կնոջից ավելի երկչոտ անվանվելը: Այդ ծանր հայհոյանքը լսելով, Արտայունտեսը զայրացած, մերկացրեց իր ակենակեն, ուզենալով սպանել Մասիստեսին: Բայց հալիկառնասցի Քսենագորասը, Պրամսիլաոսի որդին, որը կանգնած էր Արտայունտեսի ետևում, նկատելով, որ սա հարձակվում է Մասիստեսի վրա, բռնեց նրան մեջքից և, վեր բարձրացնելով, խփեց գետնին: Այդ ընթացքում արդեն Մասիստեսի թիկնապահները հասան ու կանգնեցին նրանց միջև: Այս արարքով Քսենագորասը արժանացավ Մասիստեսի և Քսերքսեսի շնորհակալությանը, քանի որ փրկել էր արքայի եղբորը: Այս արարքի համար արքան նրան կարգեց Կիլիկիայի կառավարիչ: Այնուհետև հանապարհին ոչ մի այլ դեպք չպատահեց և նրանք հասան Սարդես:

108. Իսկ արքան, նավամարտում պարտություն կրելուց և Աթենից փախչելուց հետո, այդ ժամանակ դեռևս գտնվում էր Սարդեսում: Այստեղ Քսերքսեսը սիրահարվել էր Մասիստեսի կնոջը, որը նույնպես գտնվում էր Սարդեսում: Հակառակ իր առաջարկներին, արքան չկարողացավ նվաճել նրան, իսկ բռնություն նա չէր ուզում գործադրել, իր եղբայր Մասիստեսի հանդեպ տածած հարգանքի պատճառով: Հարգանքի այդ նույն զգացումը տածում էր նաև այդ կինը: Քանզի նա լավ գիտեր, որ իր հանդեպ բռնություն չեն գործադրի: Քանի որ Քսերքսեսը ոչ մեկ այլ միջոց չուներ իր նպատակն իրագործելու համար, իր որդի Դարեհին ամուսնացրեց այդ կնոջ և Մասիստեսի աղջկա հետ: Այս միջոցով նա կարծում էր, թե ավելի հեշտ կկարողանա տիրանալ այդ կնոջը: Նա այդ ամուսնությունը բոլոր ծեսերով կատարելուց հետո, մեկնեց Սուսա: Այնտեղ հասնելուց հետո Քսերքսեսն իր տուն տարավ Դարեհի կնոջը և այլևս չէր մտածում Մասիստեսի կնոջ մասին: Այժմ արդեն նա փոխվել էր և սիրահարվել Դարեհի կնոջ՝ Մասիստեսի դստերը, որին և նա տիրացավ: Այդ կնոջ անունն էր Արտայունտե:

109. Որոշ ժամանակ անց այս բանը հայտնի դարձավ հետևյալ կերպ: Ամեստրիսը, Քսերքսեսի կինը, գունագեղ և արժանատես մի թիկնոց գործեց և այն նվիրեց Քսերքսեսին: Արքան հանույքով հագավ այն ու եկավ Արտայունտեի մոտ: Այստեղ ևս հանդիսանալով, արքան ասում է նրան, որ կարող է իրենից պահանջել ամեն ինչ, իր շնորհած հանույքի փոխարեն: Քսերքսեսը պատրաստ էր կատարելու նրա ամեն մի խնդրանքը: Արդ, քանի որ նրան և նրա ամբողջ տոհմին կործանում էր վիճակված, նա Քսերքսեսին ասաց. «Դու ինձ կընծայե՞ս այն, ինչ խնդրեմ»: Քսերքսեսը, չկասկածելով, որ նա այդպիսի բան կխնդրի, խոստացավ ու երդվեց: Երբ արքան երդվեց, Արտայունտեն համարձակ կերպով նրանից խնդրեց այդ թիկնոցը: Այնժամ Քսերքսեսը, չկամենալով թիկնոցը տալ, սկսեց տարբեր պատճառաբանություններ բերել, ոչ թե ուրիշ պատճառով, այլ Ամեստրիսից վախենալուց. քանզի թագուհին մինչ այդ ևս կասկածում էր, իսկ այժմ կարող էր իր արարքը բացահայտվել: Քսերքսեսը Արտայունտեին խոստացավ քաղաքներ նվիրել, անհաշիվ ոսկի և զորք, որին պետք է հրամայեր միայն ինքը՝ Արտայունտեն: Պարսիկները զորքը համարում էին ամենամեծ նվերը: Բայց Քսերքսեսը չկարողացավ համոզել նրան և ստիպված եղավ թիկնոցն ընծայելու: Իսկ նա, մեծապես հրճվելով այդ ընծայի վրա, հագնում էր այն և փառավորվում:

110. Ամեստրիսը լսեց, որ թիկնոցը Արտայունտեի մոտ է: Իմանալով կատարվածը, նա այդ կնոջ վրա չզայրացավ, քանի որ կատարվածի համար նա մեղադրում էր նրա մորը. ուստի և որոշեց կործանել Մասիստեսի կնոջը: Նա սպասեց, մինչև Քսերքսեսը, իր ամուսինը, արքայական խնջույք կտար: Այս խնջույքը կատարում էին տարեկան մեկ անգամ՝ արքայի ծննդյան օրը: Այդ խնջույքը պարսկերեն կոչվում է «տյուկտա», որը հունարեն նշանակում է՝ կատարյալ: Միայն այդ օրն է արքան իր գլուխը օծում և պարսիկներին պարգևատրում: Այդ օրվան սպասելով, Ամեստրիսը Քսերքսեսից պահանջեց իրեն պարգևել Մասիստեսի կնոջը: Արքան դաժան և վիրավորական էր համարում եղբոր կնոջը նրան պարգևելը, մանավանդ, որ այդ կինը բոլորովին մեղավոր չէր այս հարցում. քանզի Քսերքսեսը լավ գիտեր, թե ինչո՞ւ այդպիսի բան էր պահանջում:

111. Այսուհանդերձ, քանի որ Ամեստրիսը համառորեն պնդում էր և օրենքը պարտադրում էր արքային, որովհետև արքան իրավունք չուներ այդ խնջույքի առթիվ որևէ մեկին մերժելու, Քսերքսեսն ի վերջո մեծ դժվարությամբ ստիպված եղավ համաձայնվել և, այդ կնոջը հանձնելով Ամեստրիսի ձեռքը, հետևյալն արեց: Պատվիրելով Ամեստրիսին այդ կնոջ հետ վարվել ըստ իր կամքի, միաժամանակ մարդ ուղարկեց իր եղբոր մոտ, հետևյալ խոսքով. «Մասիստես. դու Դարեհի որդին ես, իմ եղբայրը, դրան գումարած նաև քաջարի մարդ: Արդ, այսուհետ մի կենակցիր քո այժմյան կնոջ հետ,

իսկ ես նրա փոխարեն քեզ կտամ իմ աղջկան: Կենակցիր նրա հետ, իսկ քո այժմյան կնոջը դու բաց թող. այդպիսին է իմ կամքը»: Մասիստեսը զարմացավ այդ խոսքերի վրա և ասաց. «Ով տեր. այդ ի՞նչ անպետ խոսք ես ասում, առաջարկելով ինձ լքել այն կնոջը, որից ես ունեմ ուստրեր և դուստրեր, որոնցից մեկին դու նույնիսկ տարել ես որպես քո որդու կին: Այդ կինն իմ հոգուն շատ հաճելի է: Իսկ դու հրամայում ես նրան լքել և ամուսնանալ քո դստեր հետ: Հիրավի, արքա, դու մեծ պատվի ես արժանացնում ինձ, քո դստեր կնության առնել առաջարկելով. բայց ես ոչ այս կկատարեմ, ոչ այն: Դու բռնության մի դիմիր, քանի որ դրա կարիքը չունես: Քո աղջկա համար ամուսին կգտնվի, և ինձնից ոչ վատ: Իսկ ինձ թույլ տուր կենակցել իմ կնոջ հետ»: Երբ նա այսպես պատասխանեց, Քսերքսեսը զայրացավ և ասաց նրան. «Դու, Մասիստես, այդպես արա: Բայց քեզ արդեն կնության չեմ տա իմ աղջիկը, ոչ էլ թույլ կտամ, որ դու հետայսու կենակցես քո կնոջ հետ, որպեսզի սովորես ընդունել այն, ինչ քեզ առաջարկում են»: Այս լսելով, Մասիստեսը դուրս գալու ժամանակ ասաց. «Բայց դու, տեր, ինձ դեռևս չես կործանել»:

112. Մինչ Քսերքսեսն իր եղբոր հետ զրուցում էր այսպես, այդ ընթացքում Ամեստրիսը Քսերքսեսի թիկնապահներին հրամայեց բերել իր մոտ Մասիստեսի կնոջը հաշմելու: Նա կտրեց և շների առաջ նետեց նրա ստինքները, քիթը, ականջները, շրթները և լեզուն, և այդպես հաշմված նրան ուղարկեց տուն:

113. Մասիստեսը այս բոլորին անտեղյակ էր, բայց ինչ-որ չարիք նախազգալով, վազքով տուն եկավ: Տեսնելով իր կնոջն այդպես այլանդակված, նա, խորհրդակցելով իր որդիների հետ, նրանց և մի քանի ուրիշների հետ իսկույն մեկնեց Բակտրիա հանանգ, այն ապստամբության մղելու և արքային մեծ չարիք պատճառելու նպատակով: Այդ անել, իմ կարծիքով, նրան կհաջողվեր, եթե նա կարողանար հասնել բակտրիացիների և սակերի մոտ: Սակայն Քսերքսեսը, իմանալով նրա մտադրությունը, նրա ետևից զորք ուղարկեց և ճանապարհին Մասիստեսն ու նրա որդիները սպանվեցին: Այս է Քսերքսեսի սիրո և Մասիստեսի սպանության պատմությունը:

114. Մյուկալեից Հելլեսպոնտոս մեկնած հելլենները, հանդիպակաց հողմերի պատճառով, նախ խարսխեցին Լեկտոն հրվանդանի մոտ[30]: Այստեղից նրանք եկան Աբյդոս և կամուրջները քանդված տեսան: Նրանք ենթադրում էին, որ այդ կամուրջները կանգուն կլինեն, և Հելլեսպոնտոս եկել էին միայն այդ պատճառով: Այնժամ Լևտյուքիդեսը և պելոպոնեսցիները որոշեցին վերադառնալ Հելլադա. իսկ աթենացիները և նրանց առաջնորդ Քսանթիպպոսը որոշեցին մնալ այնտեղ և հարձակվել Քերսոնեսոսի վրա: Այսպիսով, պելոպոնեսցիները ետ նավեցին տուն, իսկ աթենացիները Աբյդոսից անցան Քերսոնեսոս և պաշարեցին Սեստոսը:

115. Լսելով հելլենների Հելլեսպոնտոս մոտենալու մասին, մոտակա քա-

զամբերից պարսիկները հավաքվեցին այս Սեստոսում, որն այդ երկրի հզորագույն ամրոցն էր: Կարդիա քաղաքից այստեղ եկավ պարսիկ Օյոբազոսը, իր հետ բերելով կամուրջների նոպաները: Այս քաղաքում բնակվում էին տեղաբնիկ էոլիացիներ. այստեղ եկել էին նաև մեծ թվով պարսիկներ և պարսիկների դաշնակիցներ:

116. Այս նահանգում Քսերքսեսի հյուպարքոսն էր պարսիկ Արտայուկտեսը, խիստ անօրեն մի մարդ, որը Քսերքսեսի՝ Աթենք կատարած արշավանքի ժամանակ խաբեց նույնիսկ արքային, կողոպտելով Իփիկլեսի որդի Պրոտեսիլաոսի՝ Ելեուսում գտնվող գանձերը: Քանզի Քերսոնեսոսի Ելեուսում, սրբազան պուրակում է գտնվում Պրոտեսիլաոսի դամբարանը, որտեղ մեծ հարստություն էր պահվում, ոսկե և արծաթե բաժակներ, պղինձ, զգեստներ և այլ ընծայաբերումներ: Այս ամենը նա կողոպտեց արքայի թույլտվությամբ: Նա արքային խաբեց հետևյալ խոսքերով. «Ով տեր. այստեղ է գրտնվում տունը մի հելլեն մարդու, որը արշավել է քո երկրի վրա, և դրա համար նա արդար հատուցում է ստացել ու սպանվել է: Այժմ ինձ նվիրիր նրա տունը, որպեսզի այսուհետև ոչ ոք չհամարձակվի քո երկրի վրա արշավել»: Այս խոսքերով նա կարողացավ հեշտությամբ համոզել Քսերքսեսին՝ այդ տունը նվիրել իրեն: Արքայի երկրի վրա Պրոտեսիլաոսի կատարած արշավանքի մասին խոսքով նա ակնարկում էր այն, որ ամբողջ Ասիան պատկանում է պարսիկներին և նրանց արքային: Երբ ստացավ այդ պարգևը, նա գանձերը Ելեուսից փոխադրեց Սեստոս, իսկ սրբազան հողամասը հերկեց ու ցանեց: Ամեն անգամ Ելեուս գալով, նա սրբավայրում խառնվում էր կանանց հետ: Իսկ այժմ, երբ աթենացիները պաշարեցին նրան, նա պատրաստ չէր, քանի որ հելլենների գալուն չէր սպասում. ուստի, երբ հելլենները անակնկալ հարձակվեցին, նա չկարողացավ որևէ տեղ փախչել:

117. Պաշարումը շարունակվեց մինչև ուշ աշուն, և աթենացիներն արդեն ենթվում էին երկար ժամանակ տնից հեռու լինելուց և բերդը գրավելու անհաջողությունից. ուստի և խնդրեցին զորավարներին ետ տուն տանել իրենց. իսկ սրանք պատասխանեցին, թե այդ չեն անի, մինչև չգրավեն քաղաքը, կամ իրենց ետ չկանչի Աթենքի հանձնակատարը: Այնժամ (զինվորները) ստիպված եղան համակերպվել ստեղծված իրավիճակին:

118. Մինչդեռ ամրոցում գտնվողները արդեն հասել էին ծայրաստեղ դրության, այնքան, որ իրենց մահիճների փոկերը եփելով ուտում էին: Բայց երբ այդ ևս սպառեցին, այնժամ պարսիկները Արտայուկտեսի և Օյոբազոսի հետ գիշերով իջան պարսպի հետնամասից, որտեղ առավել քիչ թշնամիներ կային, և փախան (քաղաքից): Հաջորդ առավոտյան քերսոնեսցիները աշտարակների վրայից աթենացիներին ազդանշանեցին կատարվածը և բաց արեցին դարբասները: Աթենացիների մեծ մասն սկսեց հետապնդել փախչողներին, իսկ մյուսները գրավեցին քաղաքը:

119. Օյոբազոսին, որը փախել էր Թրակիա, Թրակիայի ապսինթները բռնեցին և, իրենց սովորության համաձայն, զոհաբերեցին տեղական Պլեյստորոս աստծուն. իսկ նրա աղջիկներին սպանեցին ուրիշ եղանակով: Արտայուկտեսը և նրա խումբը ավելի ուշ փախուստի դիմեցին, ուստի և աթենացիները հիշ անց հասան նրանց հետևից էգոսպոտամոնից վերև, և մի մասին, խիստ դիմադրությունից հետո, ոչնչացրին: Կենդանի մնացածները, այդ թվում նաև Արտայուկտեսը և նրա որդին, գերի վերցվեցին: Սրանց աթենացիները շղթայակապ ուղարկեցին Սեստոս:

120. Քերսոնեսցիները պատմում են, որ իրենցից մեկի հետ, որը պահպանում էր այս գերվածներին, հրաշք է կատարվել աղած ձուկ[3] տապակելիս. Կրակի վրա դրված աղած ձկները սկսում են թարթել ու ցատկոտել, ինչպես նոր բռնված ձկներ: Այնտեղ խոնվածները սկսեցին զարմանալ, իսկ Արտայուկտեսը, տեսնելով այդ հրաշքը, իր մոտ կանչեց ձուկը տապակողին և ասաց. «Աթենացի բարեկամ. մի վախենար այդ հրաշքից: Այն ոչ թե քեզ համար է երևացել, այլ ինձ: Սրանով Ելեուսի Պրոտեսիլաոսը ազդարարում է, որ ինքը թեև մեռած է և մումիայի վերածված, սակայն օժտված է իրեն անարգողին պատժելու աստվածատուր կարողությամբ: Ուստի այժմ ես տաճարից խլած իմ գանձերի փոխարեն որոշել եմ հարյուր տաղանդ փրկագին վճարել աստծուն, իսկ աթենացիներին, եթե նրանք պահպանեն իմ և իմ որդու կյանքը, ես կտամ երկու հարյուր տաղանդ»: Բայց իր այս խոստումներով նա չկարողացավ համոզել զորավար Քսանթիպպոսին: Քանզի ելեուսցիները, ի հատուցումն Պրոտեսիլաոսի, պահանջում էին սպանել նրան. նույնը մտածում էր նաև ինքը՝ զորավարը: Արտայուկտեսին բերեցին ծովափի այն վայրը, որտեղ Քսերքսեսը կամուրջ էր կապել. ըստ ուրիշների, նրան բերեցին Մադյուտոս քաղաքից վերև գտնվող բլուրը, և տախտակների վրա գամելով, կախեցին: Իսկ որդուն Արտայուկտեսի աչքերի առաջ քարկոծ անելով սպանեցին:

121. Այս անելուց հետո, աթենացիները նավերով վերադարձան Հելլադա, իրենց հետ տանելով, այլ գանձերից բացի, նաև կամուրջների նոպանները, դրանք տաճարներին նվիրաբերելու համար: Այդ տարի այլևս ոչ մի դեպք չպատահեց:

122. (Տախտակի վրա) կախված այս Արտայուկտեսի պապն էր Արտեմբարեսը: Սա պարսիկներին մի խորհուրդ տվեց, որը պարսիկները Կյուրոսին ներկայացրել էին հետևյալ խոսքերով. «Քանի որ Զևսը իշխանությունը վերցրեց և հանձնեց պարսիկներին, իսկ պարսիկներից՝ քեզ, Կյուրոս, ապա եկ հեռանանք մեր ունեցած այս փոքր և դաժան երկրից և վերաբնակվենք ուրիշ ավելի լավ երկրում: Մեզ հարևան այդպիսի շատ երկրներ կան. շատ կան նաև ավելի հեռվում: Եթե այդ երկրներից որևէ մեկը նվաճենք, մենք առավել հոչակավոր կդառնանք: Այդպես է վայել տիրապետող մարդկանց: Քանզի

ե՞րբ դարձյալ մենք այսպիսի լավ առիթ կունենանք, ինչպես այժմ, երբ մենք տիրում ենք այսքան մարդկանց և ամբողջ Ասիային»: Լսելով այս խոսքերը, Կյուրոսը չզարմացավ նրա առաջարկից և հրամայեց այն կատարել, բայց և ասաց (պարսիկներին), թե պատրաստ լինեն այսուհետև ոչ թե տիրելու, այլ ենթարկվելու. քանզի բարեբեր երկրներում մարդիկ սովորաբար փափկակյաց են լինում: Որովհետև նույն երկիրը չի կարող հիանալի պտուղներ տալ և միաժամանակ քաջ մարտիկներ ծնել: Այնժամ պարսիկները համաձայնվեցին Կյուրոսի կարծիքին և հրաժարվեցին իրենց մտադրությունից: Նրանք գերադասեցին աղքատ երկրում ապրելով տիրապետել (այլոց վրա), քան բերրի դաշտավայրում լինել ստրուկներ:

Մեկնություն և Ծանոթագրություններ

ՊԱՏՄԱՀԱՅՐ ՀԵՐՈԴՈՏՈՍԸ

1. ՀԵՐՈԴՈՏՈՍԻ ԿՅԱՆՔԸ

Հին Հունաստանի մշակույթի գործիչների կյանքի մասին մեզ հասած տեղեկությունները խիստ սուղ են, ի տարբերություն ռազմական-քաղաքական գործիչների մասին տեղեկությունների։ Հերոդոտոսը ևս բացառություն չի կազմում։ Սոսկ մի քանի հիշատակություն ավելի ուշ շրջանի հեղինակների մոտ, համեմված նրանց սեփական կարծիքներով ու եզրահանգումներով. եղածն այս է։ Այդ տվյալները որոշ դեպքերում ավելի ստուգություն են ձեռք բերում, եթե հաստատվում են Հերոդոտոսի գործի այս կամ այն հատվածի բովանդակությամբ։

Առկա տվյալների համաձայն Հերոդոտոսը ծնվել է Փոքր Ասիայի հունական Հալիկառնաս քաղաքում՝ մ.թ.ա. 484 թ.։ Մասնակցել է քաղաքին տիրած բռնակալի դեմ ծավալված պայքարին ու ստիպված եղել լքելու հայրենիքը։ Ապրել է Սամոս կղզում, այնուհետև՝ կարճ ժամանակ, կրկին հայրենիքում, իսկ մ.թ.ա. 443 թ. Պերիկլեսի նախաձեռնությամբ Իտալիայի հողի վրա հունական մի նոր գաղութի՝ Թուրիայի կազմակերպման ուղղությամբ եռանդուն գործունեություն ծավալել ու տարիներ ապրել, գուցե և մահացել այնտեղ, մ.թ.ա. 430 և 425 թթ. միջև։

Հիմք կա ենթադրելու, որ նրա «Պատմության» ներածական նախադասության սկիզբը՝ «Հերոդոտոս Հալիկառնասեցին ժողովեց պատմությունն այս...» նախապես ունեցել է հետևյալ տեսքը. «Հերոդոտոս Թուրիացին ժողովեց պատմությունն այս...», քանի որ այդպես են մեջ բերում այն Արիստոտելեսը և մի քանի այլ հին հեղինակներ։

Կյանքի թուրիական հատվածը, ուրեմն, շատ նշանակալից է եղել Հերոդոտոսի համար, հավանական է, որ նա այնտեղ է ստեղծել իր «Պատմությունը»։

Մեզ հասած այս կենսագրական տեղեկություններում ակներևաբար պակասում է երկու կարևորագույն հանգամանք, որոնք վճռական նշանակություն ունեն նրա երկը ճիշտ ընկալելու և արժեքավորելու համար։ Դրանք են Հերոդոտոսի կապը Հելլադայի խոշորագույն քաղաքական և մշակութային կենտրոն Աթենքի հետ և նրա բազմաթիվ ու հեռավոր ճանապարհորդությունները։ Երկուսի մասին էլ իմանում ենք հիմնականում իր «Պատմության» այնպիսի հատվածներից, ուր նա ականատեսի տեղյակություն է դրսևորում Աթենքի և, ընդհանրապես, Ատտիկայի, ինչպես և Հունաստանից հեռու գտնվող մի շարք երկրների նկատմամբ։

Աթենքի հասարակության հետ Հերոդոտոսի ունեցած սերտ կապի մասին է ակնարկում Եվսեբիոս Կեսարացու «Քրոնիկոնի» հայերեն թարգմանության մեջ (II, 212) պահպանված, մ.թ.ա. 445 թ. թվագրված մի տեղեկություն, ըստ որի «Երոդոտեայ յԱթենս գիրս ընթերցեալ՝ պատուեցաւ» («Հերոդոտոսը կարդալով Աթենքում իր ստեղծագործությունները՝ պատվի արժանացավ»)։

Պլուտարքոսը իր հերթին գրում է, թե Հերոդոտոսը աթենացիներից ստացել է 10 տաղանդ արժեքով պատվավոր մի նվեր։ Սրանք լրացվում են, բացի պատմագրի՝ Աթենքի ու նրա շրջակայքի հետ լավ ծանոթության հանգամանքից, նաև այն անդրադարձումներով, որ նկատել են հետազոտողները մի կողմից Հերոդոտոսի «Պատմության», մյուս կողմից նրա աթենացի ժամանակակիցներ՝ պատմաբան Թուկիդիդեսի, ողբերգակ Սոֆոկլեսի և այլ հեղինակների գործերի միջև։ Այս բոլորով փաստարկվում է Հերոդոտոսի՝ Աթենքում երկար տարիներ, հավանաբար V դ. 40-ական թվականներին, ապրելու և գործելու հանգամանքը, իսկ վերջինս էլ բացատրում է նրա շեշտված աթենասիրությունը, որին դեռ կանդրադառնանք։

Հունաստանի քաղաքներից, բացի Սամոսից և Էգեականի այլ կղզիներից, Հերոդոտոսը հավանաբար ապրել է Դելֆիում, այցելել հյուսիսում ընկած Մակեդոնիա, Թրակիա ու հյուսիսային-մերձևեծովյան հունական Օլբիա գաղութը, իր հայրենի Հալիկառնասին հարող փոքրասիական մի շարք հունաբնակ քաղաքներ։ Թուրիայում ապրելով, նա այցելել է Սիկիլիայի Սիրակուզա քաղաքը։

Հույնի համար առավել հազվադեպ երևույթ էին Հերոդոտոսի կատարած աֆրիկյան և ասիական ճանապարհորդությունները։ Դրանք հավաստվում են հեղինակի՝ ականատեսի դերում հանդես գալու մասին հիշատակություններով, նկարագրությունների ճշմարտանմանությամբ։ Նա շրջել է Աֆրիկայի երկրներից Եգիպտոսում և Լիբիայում, իսկ Ասիայում՝ Ասորիքում, Փյունիկիայում, Ասորեստանում, Բաբելոնում, Պարսկաստանում։ Այդ ուղևորությունները տեղի են ունեցել, հավանաբար, մ.թ.ա. 455 և 446 թթ. միջև։

Ճանապարհորդությունների նպատակը պարզ չէ, բայց արդյունքն ակընբախ է. այցելած երկրների մասին Հերոդոտոսը հայտնում է առաջնակարգ, հաճախ եզակի, տեղեկություններ, որոնց մի մասն էլ վերաբերում է ՍՍՀՄ ժողովուրդների պատմությանը։

2. ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՀԵՐՈԴՈՏՈՍԸ

Պատմագրությունը, այն իմաստով, որը մենք վերագրում ենք այդ հասկացությանը, ծնունդ է առել հին Հունաստանում՝ մ.թ.ա. VI—V դդ.։ Հին Արևելքի քաղաքակրթությունները՝ եգիպտականը իր հիերոգլիֆ բազմահարուստ դպրությամբ, սեպագրականը՝ իր շումերական, բաբելոնասասուրական, խուրրիական, ուրարտական, խեթական ու հին պարսկական ճյուղավորումներով, մնացել են առանձին իրադարձությունների կամ միատարր երևույթների շարանների արձանագրման մակարդակի վրա։

Առաջին հույն պատմիչների համար հնուց ի վեր կիրառվում է «լոգոգրաֆոսներ», այն է՝ «լոգոսը (բանը, խոսքը) գրի առնողներ» տերմինը։ Դրանց առանձնահատկությունների թվին են պատկանել մեծ մասամբ նյութի ժամանակագրական և տարածքային ընդգրկման համեմատական սահմանափակությունը (մի քաղաքի, մի երկրի, մի տոհմի վերաբերող տարբեր նյութերի շարադրանք), պատմական դեպքերի նկարագրությունից դիցաբանական, աշխարհագրական և ազգագրական բնույթի շեղումները, առասպելների պարզունակ-ռացիոնալիստական մեկնության փորձերը, գրավոր աղբյուրների, կողքին բանավոր աղբյուրների, հատկապես հարցափորձի, նպատակամղված հետաքրքրության և ականատեսության արդյունք հանդիսացող տեղեկությունների գերակշռող դերը։ Լոգոգրաֆոսների ստեղծագործական զինանոցում մեծ տեղ է գրավել նաև հատուկ անունների (տեղանուններ, ցեղանուններ, անձնանուններ և այլն) ժողովրդական (կեղծ) ստուգաբանությունից պատմական բնույթի հետևություններ անելու մեթոդը։

Դիոնիսիոս Հալիկառնասցին (մ.թ.ա. I դ.) այսպես է գրում լոգոգրաֆոսների մասին. «Ոմանք նրանցից գրի էին առնում հունական, մյուսները՝ բարբարոսական պատմվածքները, դրանք իրար շաղկապելով, այլ դասավորելով ըստ երկրների ու քաղաքների և շարադրելով մեկը մյուսից անջատ։ Բոլորն էլ մի նպատակ ունեին՝ հանրահայտ դարձնել այն հուշերը, որոնք պահպանվել էին տեղացիների մոտ կամ ցրված էին տարբեր ժողովուրդների մեջ, հատկապես տաճարներում ու հասարակական այլ կառույցներում գտնվող գրառումները, հենց այդ տեսքով, ինչպես որ դրանք գտնում էին, ոչինչ չավելացնելով ու չպակսեցնելով։ Այդ թվում նաև որոշ, իրենց հնության պատճառով վստահության արժանացած, առասպելներն ու բեմին պատշա-

ճող արկածային պատմվածքները, որոնք մեր ժամանակի մարդկանց չափազանց պարզունակ են թվում» (Թուկիդիդեսի մասին, 5)։

Լոգոգրաֆոսներից մեզ գործեր չեն հասել, միայն անուններ, երկերի անվանումներ ու սակավաթիվ մեջբերումներ այլ հեղինակների տեքստերում։ Հայտնի են «Միլետի և ողջ Հոնիայի հիմնադրման մասին» լոգոսի հեղինակ Կադմոսի (մ.թ.ա. VI դ.), «Մենդաբանությունների» հեղինակ Ակուսիլաոսի, «Պարսկականքի» ու «Լամփսակոսի տարեգրության» հեղինակ Քարոնի (VI—V դդ.), «Լիդիականքի» հեղինակ Քսանթոսի (V դ.), Հերոդոտոսի ժամանակակից Հելլանիկոսի անունները։ Լոգոգրաֆոսներից ամենաերևելին, որից ամենից ավելի մեջբերումներ են պահպանվել, միլետացի Հեկատայոսն է՝ «Մենդաբանությունների» և «Եվրոպա» ու «Ասիա» մասերից բաղկացած՝ «Երկրի շրջագայություն» ծավալուն և ընդգրկուն երկերի հեղինակը՝ Հերոդոտոսի նախակարապետը, որին պատմահայրը քանիցս հիշատակում է, գործերն էլ որպես աղբյուր առատորեն օգտագործում։

Հերոդոտոսը որպես պատմագիր ոչ միայն ծնունդ է առել լոգոգրաֆոսներից, Հեկատայոսից, այլև նշանակալից չափով դեռևս նրանց թվին է պատկանում աղբյուրների որոնման, ընտրության ու մշակման, ինչպես և նյութերի մատուցման ձևի ու ոճի խնդիրներում։ Միևնույն ժամանակ նա վեր է խոյանում դրանց միջավայրից պատմության ժամանակագրական ու տարածքային լայնագույն ընդգրկմամբ, պատմողի հանճարեղ հմտությամբ, պատմական որոշակի կոնցեպցիայի առկայությամբ։ Նույն Դիոնիսիոս Հալիկառնասցին այսպես է ասում նրա մասին. «Հերոդոտոսի գրքի բովանդակությունը լայնածավալ է ու փայլուն։ Նա նպատակ չուներ շարադրելու որևէ մեկ քաղաքի կամ ցեղի պատմությունը. նա ձգտում է մեկ ստեղծագործության մեջ նկարագրել Եվրոպայի և Ասիայի կյանքի բազմաթիվ ու զանազան իրադարձությունները» (Թուկիդիդեսի մասին, 5)։

Հերոդոտոսի գրքի տակ պատմությունը առաջին անգամ դառնում է իսկական պատմություն, ստանում նոր որակ։ Հիմք է դրվում համաշխարհային պատմագրությանը։

3. ՀԵՐՈԴՈՏՈՍԻ «ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Այն դարաշրջանում, երբ Հերոդոտոսը ձեռնարկեց իր «Պատմության» ստեղծմանը, Հունաստանում տակավին կարդալու շատ բան չկար։ Հոմերոսի՝ արդեն գրի առնված զույգ պոեմներին՝ «Իլիականին» ու «Ոդիսականին», Հեսիոդեսի «Գործեր և օրերին» ավելացել էին քնարական ու էպիկական պոեզիայի մի շարք ստեղծագործություններ, առաջին փիլիսոփաների սակավաթիվ գործերը, V դարի մեծ ողբերգակների երկերը, լոգոգրաֆոսների

ոչ մեծաքանակ նկարագրական ստեղծագործությունները, սկզբնավորվել էր գրավիչ սյուժեով գեղարվեստական պատմվածքը՝ այսպես կոչված «Հոնիական նովելը»։ Հունական արձակ գրականությունը դեռևս իր առաջին քայլերն էր անում։

Բացի այս ստեղծագործություններից, հրապարակի վրա կային նաև այլ գրավոր հուշարձաններ՝ տարբեր բնույթի վիմական և այլ արձանագրություններ՝ քաղաքային իշխանությունների պաշտոնական վավերագրեր, տաճարային գուշակներին (մասնավորապես՝ դելֆյան գուշակին) արված հարցումների ու դրանց պատասխանների ու նրանց հետ կապված իրադարձությունների գրառումներ և այլն։ Պարսկական արքունի դիվանատան պաշտոնական վավերագրերը ևս՝ հունարեն թարգմանությամբ, շրջանառություն ունեին պարսից տիրապետության ներքո գտնվող փոքրասիական հունական քաղաքներում։

Այս բոլորը, կամ եղածի մեծ մասը, Հերոդոտոսն, անշուշտ, ընթերցել է և, վերջին հաշվով, օգտագործել իր «Պատմությունը» գրելիս։ Կային, իհարկե, բազմաթիվ և բազմազան գրավոր հուշարձաններ Հունաստանից դուրս, Եգիպտոսում, Միջագետքում, Միջերկրականի արևելյան ափերին՝ տեղական լեզուներով ու դպրություններով։ Դրանք, սակայն, Հերոդոտոսի համար, որ հունարենից զատ ուրիշ լեզու չգիտեր, անմատչելի էին։ Այդ երկրներում շրջագայելիս նա ստիպված էր ապավինել թարգմանիչներին, և միայն նրանց միջնորդությամբ էր ընկալում թե՛ առկա գրավոր նյութի բովանդակությունը, և թե՛ հասարակության տարբեր խավերի՝ ազնվականության ու հասարակ ժողովրդի, իշխանության ներկայացուցիչների ու քրմության, զինվորականների ու առևտրականների ոլորտներում շրջող բանավոր ավանդություններն ու պատմությունները, օրենքների, սովորույթների ու բարքերի մասին տեղեկությունները, է՛լ ավելի հեռու գտնվող երկրների նկարագրությունները և այլն։

Ահա, բանավոր աղբյուրները շատ ավելի նշանակություն ունեին Հերոդոտոսի «Պատմության» կերտման գործում, քան գրավորները։ Եվ այս վերաբերում է նրա ոչ միայն օտար երկրներին նվիրված հատվածներին, այլև բուն Հունաստանի մասին եղած շարադրանքին։ Հերոդոտոսի հիմնական նյութը՝ հունապարսկական պատերազմները (մ.թ.ա. 500—447), մասամբ անջատված են իրենից սակավ տասնամյակներով, մասամբ էլ նա դրանց ժամանակակիցն էր (ծնվել է, ինչպես հիշում ենք, մ.թ.ա. 484 թ.)։ Իհարկե, նա անվերջ շփումների մեջ էր իրադարձությունների մասնակիցների կամ ականատեսների և կամ, ծայրահեղ դեպքում, հասուն տարիքում դրանց ժամանակակից անձանց հետ ու հենց այդ անձանց հարցուփորձ անելով է ձեռք բերել իր տեղեկությունների հիմնական մասը։

Աղբյուրների նկատմամբ քննադատական մոտեցումը առկա է արդեն լոգոգրաֆոսների, նրանցից մասնավորապես՝ Հեկատայոսի մոտ, որն իր «Ծննդաբանություններ» երկն այսպես է սկսել. «Ես գրել եմ այն, ինչ ինձ ճշմարտացի է թվում, որովհետև հույների բազմաթիվ պատմածները ծիծաղի են արժանի». ասել է, թե հեղինակը իր լսած-կարդացածից գրի է առնում միայն իրեն հավաստի թվացող մասը։ Հերոդոտոսը, աղբյուրների նկատմամբ քննադատաբար տրամադրված լինելով հանդերձ, միանգամայն այլ, անհամեմատ ավելի լայն ու գիտական մոտեցում է ցուցաբերում աղբյուրներից ստացած նյութն ընթերցողին մատուցելու խնդրում։ Նա գրում է. «Ես պարտավոր եմ հաղորդելու այն ամենը, ինչ պատմում են, բայց այդ ամենին հավատալ, իհարկե, ես պարտավոր չեմ։ Այս սկզբունքին ես կհետևեմ իմ ամբողջ պատմության մեջ» (VII, 152)։

Այստեղից բխում է ոչ միայն այն, որ պատմագիրը չի թաքցնում իրեն հասած տեղեկությունների հարստությունն ու պարտադրում ընթերցողին բավարարվել իր կատարած ընտրությամբ, այլև գիտակցում, որ իրեն անհավատալի թվացող նյութը կարող է մեկ ուրիշին վստահելի և արժեքավոր ներկայանալ։ Ուստի նա նույնիսկ հաճախակի մեջ է բերում նույն իրադարձության մասին իրեն հասած հաղորդումներից երբեմն իրարամերժ տարբերակներ, նշելով իր նախընտրած տարբերակը։ Այսպիսի մի դեպքից հետո, օրինակ, նա գրում է. «Այս պատմությունն ամենահավանականն է, բայց քանի որ կա նաև պակաս հավանական պատմությունը, այդ ևս պետք է ասվի» (III, 9)։ Հարգանքն ընթերցողի նկատմամբ, անշուշտ, պատիվ է բերում պատմագրին։

Հերոդոտոսը անհրաժեշտ է համարում նաև հաճախակի հաղորդել, թե ինչ ճանապարհով են հասել իրեն այս կամ այն տեղեկությունները, դրանով ևս հնարավորություն տալով ընթերցողին ինքնուրույն դատելու նրանց վստահելիության աստիճանի մասին։ Նա այդ մասնավորապես կիրառում է օտար երկրների մասին պատմելիս։ Այսպես, նա գրում է. «Մինչև այստեղ այն, ինչ պատմեցի, իմ սեփական եզրակացություններն են, հիմնված անձամբ իմ տեսածի և հավաքած տեղեկությունների վրա։ Այսուհետև կպատմեմ այն, ինչ լսել եմ Եգիպտոսի պատմությունից, ավելացնելով նաև իմ տեսածները» (II, 99)։ Մի այլ տեղ կարդում ենք. «Իմ հետազոտությունները ես ավելի ծավալեցի, ինքս իրրև ականատես գնալով մինչև Ելեփանտինե քաղաքը, իսկ այնտեղից հետո արդեն հարցնելով ու լսելով» (II, 29)։

Պետք չէ, սակայն, կարծել, թե պատմագիրը թղթին է հանձնել անխտիր այն ամենը, ինչ իմացել ու լսել է. երբ նա լիովին համոզված է որևէ խնդրում, ապա այլևս տարբերակների ներկայացմանը չի դիմում։

Արդ, մի՞շտ է արդյոք Հերոդոտոսը հարազատորեն հաղորդում իր աղբյուրներից ստացածը։ Ընդհանուր պատասխանն, անշուշտ, դրական լինելով, չի կարելի մոռացության տալ, սակայն, որ պատմագիրն ունեցել է իր, այն էլ զորեղ, անձնական ու քաղաքական համակրանքներն ու հակակրանքները (տե՛ս ստորև), որոնք իրենց կնիքն են դրել դեպքերի ու դեմքերի գնահատման վրա, ոմանց գուցե ոչ լրիվ ըստ արժանվույն փառաբանելու կամ արդարացնելու, մյուսներին, ընդհակառակն, մեղադրելու ու պարսավելու իմաստով։ Բայց սա միանգամայն բնական է։

Եթե վերանանք բնական այս կողմից, ապա Հերոդոտոսի «Պատմությունը» վերին աստիճանի արժանահավատ է թե՛ այն իմաստով, որ նա հմտորեն է ընտրել իր աղբյուրները, այսինքն՝ դիմել է այնպիսիներին, որոնցից ավելի հավանություն կար ստանալ գործերի ճշմարտացի պատերը, և թե՛ այն, որ նա այդ աղբյուրները հարազատորեն է վերարտադրել։

Նոր շրջանի պատմագրությունը, դեգերելով Հերոդոտոսի նկատմամբ վստահության և անվստահության միջև, այսօր հակվել է դեպի առաջինը։

Մեզ, բնականաբար, շատ են հետաքրքրում Հերոդոտոսի տվյալները Հայաստանի և հայերի մասին, որոնց կանդրադառնանք առանձին։ Դրանք Արևելքի երկրների մասին «Պատմության» պարունակած հարուստ տեղեկությունների մասն են կազմում։ Անցյալ դարի կեսերից սկսված և հսկայական հնագիտական նյութ հանդես բերած պեղումներից առաջ, Հին Արևելքի երկրների մասին հիմնական տեղեկությունները գալիս էին, Աստվածաշնչի կողքին, Հերոդոտոսի «Պատմությունից»։ Պեղումների հետևանքով հայտնաբերված քաղաքներն ու տաճարները, նրանցում գտնված՝ արվեստի ու կենցաղի անթիվ առարկաները և բազմահազար գրավոր հուշարձաններն ու վավերագրերը Հերոդոտոսի պատմածներից շատ բան հերքեցին, նրանցում շատ բան ճշգրտեցին, բայց և շատ բան էլ հաստատեցին ու լրացրին, հսկայական չափով բարձրացնելով նրա, որպես ճշմարտապատում պատմագրի, հեղինակությունը։ Պարզվեց, օրինակ, որ այն, ինչի մասին նա պատմում է որպես ականատես, որպես կանոն հավաստի է։ Այդպիսին է Եգիպտոսի և Բաբելոնի վերաբերյալ նրա պատմածը։ Է՛լ ավելի մեծ հավատարիմություն ու ճշգրտություն են ցուցաբերում նրա տված տեղեկությունները պարսիկների ու պարսից հսկայածավալ տերության մասին, տերություն, որի մասն է կազմել Հայաստանը Հերոդոտոսի օրոք։

Այս հանգամանքն, անշուշտ, Հերոդոտոսի ձեռքի տակ պարսկական գործերն արտացոլող առաջնակարգ աղբյուրների առկայության արդյունքն է։ Հետազոտողներն այստեղ, բացի պատմագրի՝ դեպի պարսկական քաղաք էկբատան կատարած ճանապարհորդության տպավորություններից, առանձնացնում են երեք տիպի աղբյուրներ։ Առաջին՝ Հոմանատանում հանգրվան

գտած պարսից ավագանու իրազեկ ներկայացուցիչների հաղորդումները (օրինակ, հայտնի զորավոր Մեգաբիզոսի որդի Զոպյուրոսի), երկրորդ, Պարսկաստանում հանգրվանած հույն գործիչների (օրինակ՝ հռչակավոր Թեմիստոկլեսի) հետնորդների հաղորդումները։ Վերջապես, պարսկական տերության արքայական դիվանատան կողմից երկրի ծայրերն առաքվող պաշտոնական վավերագրերի պատճենները, որոնք այնուհետև թարգմանվում էին տեղական լեզուներով։

Այս վերջին երևույթը ամենից լավ հաստատվում է Դարեհ I-ի հայտնի Բեհիստունյան եռալեզու արձանագրության տվյալներով և օրինակով։ Նախ, Դարեհն ինքն է հայտնում, թե հրամայել է արտագրել այն կավե աղյուսակների և կաշվե փաթեթների վրա, այսինքն, համապատասխանաբար՝ ակկադերեն և արամեերեն լեզուներով, և ուղարկել բոլոր երկրները։ Սրա նյութական ապացույցն էլ առկա է. գտնված են այդ արձանագրության առանձին հատվածները պարունակող թե՛ ակկադերեն գրված կավե աղյուսակների և թե՛ արամեերեն գրված կաշու փաթեթների նմուշներ։ Ի դեպ, նշենք այն հանրահայտ փաստը, որ պարսից տերության արքունի դիվանատան ու նրա մասնաճյուղերի գործնական ինչպես և ժամանակի միջազգային լեզուն հենց արամեերենն էր։ Երկրորդ, Հերոդոտոսը զարմանալի սերտ ծանոթություն է ցուցաբերում նշված արձանագրության առանձին մասերի բովանդակությանը։ Այն դրսևորվում է ոչ միայն սյուժեների ու գործող անձանց անունների հարազատ վերարտադրմամբ (օրինակ՝ Դարեհի գահակալման դրամատիկ պատմության, ընդհուպ մինչև նրա գործակիցների անունները՝ Վինդաֆառնա, Ուտանա, Գաուբրուվնա, Վիդառնա, Բագաբուխշա, Արդումանիշ՝ Բեհիստունյան արձանագրության մեջ և, համապատասխանաբար, Ինտաֆեռնես, Օտանես, Գոբրյուաս, Հյուդառնես, Մեգաբիզոս և Ասպաթինես՝ Հերոդոտոսի մոտ, տարբերվում է միայն վերջին անունը. այլև նույնիսկ ոճական որոշ արտահայտությունների նույնությամբ։

Միշտ չէ, սակայն, որ նմանություններն այսքան հստակ են դրսևորվում։ Հետազոտողներին, օրինակ, շատ դժվարություններ են պատճառում Հերոդոտոսի մոտ հանդես եկող՝ Աքեմենյան տերության սատրապաժանումների՝ սատրապությունների ու նրանցից գանձվող արքունի հարկերի թվարկման (III, 90—96) և Բեհիստունյան արձանագրության նմանօրինակ (սակայն առանց հարկերի հիշատակման) թվարկման առնչության խնդիրները։ Հարցն այն է, որ այդ երկու թվարկումների միջև կան և աչքի զարնող ընդհանրություններ, և էական տարբերություններ։ Նմանությունները, բնականաբար, խոսում են Հերոդոտոսի՝ արքունի արձանագրություններին ծանոթ լինելու օգտին՝ վերը նշված ուղիներով։ Տարբերությունները վկայում են իր թվարկման համար նրա ունեցած լրացուցիչ աղբյուրների մասին։ Ի՞նչ աղբյուրներ

էին դրանք։ Մասամբ դարձյալ պաշտոնական պարսկական (ուրիշ ի՞նչ աղբյուրներում կարող էին գտնվել յուրաքանչյուր սատրապությունից գանձվող հարկերի չափերը), բայց ավելի մանրամասն, մասամբ էլ՝ այլ (այսինքն, ինչպես նշվեց, Հունաստանում ապաստանած պարսիկների, Պարսկաստանում ապրած հույների, լոգոգրափոսների պատմածները և այլն) աղբյուրներ։

Այս բոլորը ցույց են տալիս, որ Հերոդոտոսն իր նկարագրություններն անելիս երբեք չի բավարարվել մեկ աղբյուրի տվյալների շրջանակներով, այլ սինթեզել, իմի է բերել իրեն մատչելի բոլոր նյութերը երբեմն նշելով աղբյուրները, երբեմն՝ ոչ։

Ինչպես կտեսնենք ստորև, այս պրոբլեմները հառնում են նաև Հերոդոտոսի՝ Հայաստանի և հայերի մասին մատուցած տվյալների հետազոտողի առջև։

4. ՀԵՐՈԴՈՏՈՍԻ ԱՇԽԱՐՀԱՑԱՑՔԸ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄԸ

Ժամանակի ոգուն համաձայն, Հերոդոտոսի վերաբերմունքը բնության և հասարակության երևույթներին, այսինքն՝ նրա աշխարհայացքն, ընդգրկում է, մի կողմից, առողջ դատողության ու Թալես Միլետացու օրերից ձևավորված տարերային մատերիալիզմի և, մյուս կողմից, հնագույն ժամանակներից եկող դիցապաշտության միջև ընկած գիտակցության լայն սպեկտրը։ Հերոդոտոսը որևէ հստակ, յուրօրինակ փիլիսոփայական հայացքներ չի դրսևորել, այլ առաջնորդվել է ընդունված տեսակետներով։ «Պատմության» մեջ առասպելներ ներկայացնելիս, նա լոգոգրափոսների օրինակով որպես կանոն չանացել է հրաշագործել դրանք, «ճշմարտել» ու ներկայացնել պարզունակ ռացիոնալիզմի ոգով՝ որպես այլաբանորեն արտահայտված սովորական կենսական պատկերներ, որոշ դեպքերում, սակայն, առասպելը ուժի մեջ թողնելով և կամ անվերապահ հավատ ընծայելով հունական այլևայլ գուշակների, հատկապես դելֆյան գուշակի կանխասացություններին։

Աստվածները խանդոտ ու նախանձոտ են մարդու և նրա գործունեության նկատմամբ. բավական է մարդկանցից մեկն անցնի հաջողությունների կամ արարքների իր համար սահմանված չափը, որ աստվածները նրանից վրեժխնդիր լինեն, զրկեն ամեն ինչից, ընդհուպ մինչև կյանքից։ Այս է Հերոդոտոսի հավատը՝ իր ժամանակակիցների հավատին համընթաց։

Բոլոր ժողովուրդների վրա, համոզված է պատմագիրը, իշխում են միևնույն աստվածները։ Գրեթե բոլոր հունական աստվածներին նա գտնում է նաև այլ երկրներում, ասենք, Եգիպտոսում, ու հաճախ նախապատվություն տալիս այդ երկրներին՝ այս կամ այն աստծու պաշտամունքը հույների կողմից նրանցից փոխ առած համարելով։

Մարդիկ, պատմական գործիչները, ըստ Հերոդոտոսի, ծագում են աստվածներից կամ առասպելական հերոսներից։ Պատմության շարժիչ ուժը, մեծ իրադարձությունների պատճառները մարդկանց կրքերն են՝ սերը և ատելությունը, վիրավորանքը և վրեժխնդրությունը։ Արդարության և անարդարության մոտիվը ևս պատմական կարևոր գործոն է նրա աչքում։ Բախտի, ճակատագրի գաղափարը, կանխագծվածի իրականացման անխուսափելիությունը ծայրեծայր տոգորում են նրա պատկերացումները պատմության ընթացքի մասին։ Այս իմաստով Հերոդոտոսը շատ հեռու է իր կրտսեր ժամանակակից Թուկիդիդեսից, որի ներդրումը համաշխարհային պատմագրության մեջ՝ իր ժամանակի համար կատարելապես զարմանալի՝ պատմական խնդիրներին խոր ռեալիստական մոտեցումն էր։

Ինչպես նշվեց արդեն տարբեր ժողովուրդների վրա իշխող աստվածների կապակցությամբ՝ Հերոդոտոսը ամենևին հակված չէ գերադասելու հունականը՝ ոչ հունականից, հակադրելու այն բարբարոսականին («բարբարոսը» նրա բերանում նշանակում է պարզապես «ոչ-հույն» առանց որևէ քամահրական երանգի), ինչպես այդ սովորական դարձավ հաջորդ դարաշրջանում՝ ստրկատիրության ծաղկմանը համընթաց (ստրուկները դերազանցապես բարբարոսական ծագում ունեին)։ Ընդհակառակն, համեմատելիս, նա հաճախ նախապատվությունը (հնության, իմաստության, քաջության, օրենքների, բարքերի և այլ խնդիրներում) տալիս է արևելքի ժողովուրդներին՝ եգիպտացիներին, բաբելոնցիներին, պարսիկներին։

Հավասարապես և Հերոդոտոսին օտար են համահունական զգացումները։ Հայրենասե՞ր է արդյոք նա։ Անշո՛ւշտ։ Բայց նրա հայրենասիրությունը համահունական բնույթ չի կրում երկու կարևոր պատճառով։ Առաջին, որ հնում գոյություն չի ունեցել համահունական հայրենիք, այլ եղել են շուրջ երկու հարյուր պոլիսներ՝ քաղաք-պետություններ, որոնք էլ հանդես են եկել որպես համապատասխան քաղաքացիների հայրենիքներ։ Բացի այդ, եղել են պոլիսների դաշնակցություններ, այս կամ այն աչքի ընկնող պոլիսի հեգեմոնիայի ներքո։ Այս երևույթը որոշ երանգավորում է տվել հայրենասիրական զգացումներին, սակայն ոչ հաստատուն, ինչպես որ հեղեղուկ էին նաև այդ դաշնակցությունները։ Երկրորդ՝դարի առաջին կեսի հունապարսկական պատերազմների պատմությունը Հերոդոտոսը շարադրել է ոչ թե պատերազմների ժամանակ, երբ համընդհանուր՝ Պարսկաստանի կողմից նվաճելու վտանգը այսպես թե այնպես միավորել էր քաղաք-պետությունների մեծ մասի ջանքերը, այլ դարի վերջին երրորդում ծավալված ներհունական՝ պելոպոնեսյան պատերազմների նախօրյակին և, թերևս սկզբնավորման պահերին։ Իսկ այդ ժամանակն արմատապես տարբերվում էր նախորդից և բնութագրվում երկու հակամարտ ճամբարներում՝ Աթենականում և Լակոնականում

(Սպարտայի) ընդգրկված քաղաք-պետությունների փոխադարձ ծայրահեղ ատելությամբ, որն ավելի ուժգին էր և մահացու, քան նախորդ շրջանում պարսիկ նվաճողների դեմ առաջացած ատելությունը։ Այժմ միջհունական թշնամությունը որոշ դեպքերում փոխարկվում էր նաև պարսկասիրության, որի աստառն էր հակառակորդ ճամբարի ուժերի դեմ Պարսկաստանից ակնկալվող օգնությունը։

Այս խնդրում Հերոդոտոսն ուներ իր հստակ կողմնորոշումը՝ նա Աթենքի շատագով էր, հետևաբար՝ հակասպարտայական։ Սակայն այս ընդհանուր դրույթը երբեմն-երբեմն տեղի է տալիս առանձին բացառությունների առջև, հանգամանք, որ հիմնականում կապված էր Հերոդոտոսի կենսագրության իրադարձությունների հետ։

Այսպես, նա մեծագույն սիրով էր լցված իր հայրենի Հալիկառնաս քաղաքի նկատմամբ, առիթը չէր կորցնում արտահայտելու այդ սերը։ Մինչդեռ Հալիկառնասը իր բնակչության կազմով դորիական քաղաք էր ինչպես Սպարտան, և ոչ՝ հոնիական, ինչպես Աթենքը։ Ստորև կտեսնենք, որ Հալիկառնասի նկատմամբ սերը որոշ վերապահությունների է հանգեցնում նույնիսկ Հերոդոտոսի հակալակոնականության մեջ։

Ի դեպ, Պարսկաստանի նկատմամբ պատմագրի որոշակի թուլությունը նույնպես նրա հալիկառնասցի լինելուց է գալիս։ Այս քաղաքը պարսից թագավորի իշխանության տակ գտնված փոքրասիական հունական քաղաքներից էր։ Հերոդոտոսը ծնվել ու մեծացել էր այդտեղ, ընտելացել ու համակերպվել պարսկական տիրապետության միջավայրին, մերվել ու գուցե նույնիսկ կապվել այդ իրավիճակի հետ։

Այսպես, կարելի է նկատել, որ հունապարսկական պատերազմներին որպես առիթ ծառայած՝ 499 թ. փոքրասիական հունական (հոնիական) քաղաքների՝ Միլետ քաղաքի ղեկավարությամբ, պարսից տիրակալության դեմ բարձրացրած ապստամբությունը Հերոդոտոսի համակրանքին չի արժանանում. հպատակները պիտի ճանաչեն իրենց տիրոջը։ Պարսիկները, պարսից արքան, պատմագրի աչքում թշնամի են դառնում լոկ այն պահից, երբ, այսպես ասած, չափն անցնում են, ձգտում իրենց օրինական տիրույթներից՝ փոքրասիական հունական քաղաքներից, զատ զավթել նաև եվրոպական Հունաստանը։

Հերոդոտոսը որոշակիորեն համակրում է նաև Սամոս կղզի-քաղաք-պետությանը, որտեղ նա երկար տարիներ է անցկացրել և շատ մերձավորներ ձեռք բերել։ Պատմագիրն աշխատում է մեղմացնել կամ արդարացնել պատերազմի ժամանակ սամոսցիների թույլ տված մեղքերը։

Առեղծվածային բնույթ է կրում Հերոդոտոսի անհատնում սերն ու համակրանքը Դելֆի քաղաքի ու նրա աշխարհահռչակ՝ Ապոլլոնի տաճարի ու սրա գու-

չակի նկատմամբ, եթե հաշվի առնենք սրանց թշնամական դիրքը՝ Աթենքի հանդեպ և անցած պատերազմների ընթացքում դրսևորած պարսկասիրությունը։ Երևում է այստեղ ևս նրա կենսական կապերը շատ զորեղ են գտնվել։

Սակայն ամենաուժեղ ու նվիրական զգացումները Հերոդոտոսին կապում են, անշուշտ, Աթենքի հետ։ Աթենքում Հերոդոտոսը շփվել է խոշորագույն քաղաքական գործիչ Պերիկլեսի ու նրա շրջապատի հետ, որն ընդգրկում էր հունական դասական մշակույթի ծաղկման այդ ժամանակի խոշորագույն հանճարեղ ներկայացուցիչներին՝ Ֆիդիաս, Սոֆոկլես, փիլիսոփա Անաքսագորաս և ուրիշներ։ Հերոդոտոսն, հավանաբար, եղել է այդ «Պերիկլեսյան խմբի» անդամ։ Համենայն դեպս, նա իր «Պատմությամբ» աթենական «ոսկեդարի» անբաժան մասն է կազմում։ Նա հանդես է գալիս որպես Աթենքի ու նրա կազմած ճամբարի շատագով, Աթենքը հայտարարում Հունաստանի փրկիչ։ Պելոպոնեսյան պատերազմների նախօրեին, քաղաքական մթնոլորտի շիկացման պայմաններում, Հերոդոտոսը գրել է. «Այժմ ես ըստիպված եմ բացահայտ ասել իմ կարծիքը, որը շատերին տհաճ կարող է լինել։ Եթե աթենացիները, սարսափելով վերահաս վտանգից, լքեին իրենց քաղաքը (ի դեպ, այդ էր հորդորում կատարել դելֆյան գուշակը—Գ. Ս.) կամ հանձնվեին Քսերքսեսին, Հելլադան կհպատակվեր պարսիկներին։ Ուստի և եթե մարդ ասի, թե աթենացիները եղան Հելլադայի փրկիչները, ճշմարտության դեմ մեղանչած չի լինի։ Երբ նրանք նախընտրեցին Հելլադայի ազատությունը, ապա դեռևս պարսիկների կողմը չանցած բոլոր հելլենների մեջ նրանք դիմադրելու արիություն արթնացրին, և աստվածների օգնությամբ ետ քշեցին արքային» (VII, 139)։

Քաղաքական դրդապատճառներից ծնված հակակրանքը Հերոդոտոսի մոտ արտահայտվում է առաջին հերթին Աթենքի երկու երդվյալ թշնամիների նկատմամբ, այն է՝ Կորնթոսի, որ աթենացիների համար բախտորոշ դեր խաղացող ծովային առևտրի բնագավառում նրանց ամենահզոր ախոյանն էր, և Ատտիկայի անմիջական հարևան Թեբեի, որն անընդհատ ասպատակություններով հնուց ի վեր ավարի ու ավերի է ենթարկել Աթենքը։

Գալով Աթենքի հիմնական քաղաքական ախոյան Սպարտային (Լակեդեմոն, Լակոնիկա), Հերոդոտոսի կողմից սպասվելիք թշնամական անվերապահ դիրքորոշման մեջ որոշ երկվություն է նկատվում։ Մի կողմից նա պարսավանքի է ենթարկում սպարտացիների՝ իրեն ժամանակակից գործերը, մյուս կողմից հարգանք է ցուցաբերում նրանց անցյալի, օրենքների ու բարքերի նկատմամբ և, իհարկե, անվերապահորեն բարձր է գնահատում Սպարտայի արքա Լեոնիդասի և 300 սպարտացիների սխրանքը՝ Թերմոպյուլյան կիրճում։

Հերոդոտոսի քաղաքական այս կողմնորոշումների մեջ իր դերն ունի, անշուշտ, նաև համապատասխան պոլիսների հասարակարգի խնդիրը։ Դժվար է պատմագրին վերագրել հույների հայտնի քաղաքական կառավարման երեք ձևերից (դեմոկրատիա, օլիգարխիա, միապետություն) որևէ մեկի ջատագովի դերը։ Նա, այո, դեմ է բռնատիրությանը (տիրանիա), բայց օրինական, ավանդական իշխանության ձևերը նա հարգում է։ Նա ներկայացնում է երեք պարսիկ գործիչների՝ Դարեհի, Օտանեսի և Մեգաբիզոսի վեճը, որում առաջինը պաշտպանում է միապետության գաղափարը, մյուս երկուսը՝ համապատասխանաբար՝ դեմոկրատիայի և օլիգարխիայի սկզբունքները։ Իհարկե, վեճի միջավայրը շինծու է, արտահայտվում են զուտ հունական տեսակետներ։ Սակայն կարևորն այդ չէ, այլ այն, որ թեև վերջում Օտանեսը (դեմոկրատիայի պաշտպանը) համոզվում է պարտված, բայց ընթերցողն այդ եզրակացությանը չի հանգում, երեքի կողմից էլ զորեղ փաստարկներ են բերվում, և մնում է մտածել, որ Հերոդոտոսը լավ է համարում այն վարչակարգը, որն ավելի ավանդական է ու սովորական տվյալ երկրի համար։ Աթենքի համար դա, անշուշտ, դեմոկրատիան է և, որպես աթենասեր, Հերոդոտոսն իր մի շարք ասույթներում հակվում է չափավոր դեմոկրատիայի կողմը, պաշտպանելով իրավահավասարության սկզբունքը, ազատության գաղափարը և այլն։

5. ՀԵՐՈԴՈՏՈՍԻ «ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՁԵՎԸ

Հերոդոտոսից պահպանվել է միայն մեկ ստեղծագործություն՝ «Պատմությունը»։ Մեզ հասած տեքստը բաղկացած է ինը գրքից, որոնք վերնագրված են ինը մուսաների անուններով, սկսած պատմության մուսա Կլիոյից։ Այս բաժանումը և անվանումները, սակայն, հեղինակինը չեն, այլ իրականացված են հետագայում, Ալեքսանդրիայի գիտնականների կողմից։ Թե ի՞նչ է եղել Հերոդոտոսի տված բաժանումը՝ մեզ հայտնի չէ։ Պետք է ենթադրել, սակայն, որ բաժանումը եղել է և երկի ենթաբաժինները կոչվել են նույն բառով, որով հեղինակն անվանում է իր ողջ գործը՝ «լոգոս» («բան», «խոսք»)։ Այսպես, նա հիշատակում է իր Եգիպտական լոգոսը (այսինքն՝ «Պատմության» Եգիպտոսի նկարագրությանը նվիրված հատվածը), Ասորեստանյան լոգոսը (որ մեզ չի հասել) և այլն։

«Պատմության» հիմնական բովանդակությունը, ինչպես արդեն նշվել է, մ.թ.ա. V դարի առաջին կեսի հունապարսկական պատերազմների նկարագրությունն է, սակայն դրան նախորդում է մի սավար, գործի կեսը զբաղեցնող, ներածական մաս (I—IV գրքերն ամբողջությամբ և V գրքի 1—29 գլուխները), որտեղ հեղինակը կուտակել է հակայական նյութ տարբեր երկրների ու ժողովուրդների պատմության, աշխարհագրության ու ազգագրական նկարագրի վերաբերյալ։

Այս տարաբնույթ նյութը միավորվում է հունապարսկական պատերազմների պատմական հիմքերն ու պատճառները պարզաբանելուն հատկացված մի հենքով։ Այդ հենքը հեռու է օբյեկտիվ հիմքերի ու պատճառների բացահայտումից, և ինչպես վերը նշվեց, հյուսված է մարդկային կրքերի, մեղքի ու վրեժխնդրության, ճակատագրի անխուսափելիության և այլ նմանատիպ մոտիվներից։ Բայց այն էլ ի հայտ է գալիս բավականաչափ հազվադեպ ու ներկայանում որպես նախապես հավաքված հարուստ, բայց խայտաբղետ նյութի՝ հեղինակի կողմից կազմակերպման, միավորման մի փորձ, որը, սակայն այդպես էլ չի հանգեցրել նյութի այդ բազմազանության մեջ իրական, օրգանական կապ կամ ամբողջություն ստեղծելուն։

Ներածական մասի բովանդակությունը հետևյալն է։ Սկզբնական մի քանի գլուխներին, որոնցում շարադրված է Հերոդոտոսի նպատակը, հաջորդում է Լիդիա երկրին նվիրված լոգոսը, II գիրքը գրեթե ամբողջությամբ կազմում է Եգիպտոսի լոգոսը, III գրքում շարադրված է Սամոս կղզու պատմությունը, IV գիրքը նվիրված է սկյութական լոգոսին, այստեղ են նաև Կիրենայի լոգոսը և Լիբիայի լոգոսը։ V գրքի սկզբնական երեք տասնյակ գլուխները պարունակում են Թրակիայի լոգոսը։ Պարսկաստանի լոգոսն ավելի ծավալուն է. սկսվելով I գրքից այն շարունակվում է մինչև ներածական մասի վերջը, ընդմիջվելով թվարկված լոգոսներով։ Այն տարածվում է, այնուհետև, ըստ էության, մինչև VII գիրքը ներառյալ։

«Պատմության» երկրորդ, հիմնական, հունապարսկական պատերազմների պատմությունն անող մասն սկսվում է V գրքի 30-րդ գլխից և շարունակվում մինչև աշխատության վերջը՝ IX գրքի 122-րդ գլուխը։ Այստեղ շարադրանքը անհամեմատ ավելի սլացիկ ու հետևողական է և քայլառքայլ նկարագրում է պատերազմական գործողություններն ու նրանց հետ կապված իրադարձությունները։ Այստեղ ևս կան մի քանի, Սպարտայի և Աթենքի պատմությանը նվիրված, շեղումներ, բայց դրանք քիչ են և կարճառոտ, համեմատած ներածական մասի լոգոսների հետ։

Հերոդոտոսի «Պատմությունը», ամենայն հավանականությամբ, անավարտ է մնացել։ Վերջին նախադասություններն ամենևին նման չեն այսպիսի մի երկի եզրափակմանը։ Մահն է, հավանաբար, որ ընդհատել է պատմահոր աշխատանքը։

Հերոդոտոսի «Պատմությունը շատ հեռու է միապաղաղ շարադրաձևից։ Այն, այսպես ասած, բազմառճ է, նույնիսկ՝ բազմաժանր։ Պատմական իրադարձությունների չոր ու հակիրճ նկարագրությունների կողքին այստեղ հանդիպում ենք գեղարվեստական փայլուն ոճով գրված նովելների՝ հյուսված այլևայլ պատմական անձնավորությունների շուրջը, հրաշապատումների, տարբեր ժողովուրդների բարքերի ու սովորույթների հյութեղ նկարագրություններ, աշխարհագրական զեկուցագրերի։ Իրար հաջորդում են նկարագրական, պատմողական և խոսակցական ոճերը։

Հերոդոտոսի լեզուն հունարենի հոնիական բարբառն է, որն այդ ժամանակները տարածում էր գտել որպես գրական լեզու։ Եվ «Պատմությունն» ինքը կարող է համարվել հունական գեղարվեստական արձակի առաջին խոշոր կտավը։

Արդեն անցյալ դարից սկսած, հետազոտողները զուգահեռներ են անցկացնում Հերոդոտոսի պատմողական ոճի և հունական դասական քանդակագործության միջև։ Դիտվել են, օրինակ, այսպիսի նմանություններ, ինչպես աստվածների քանդակները V դարում ներկայացվում էին նախորդ շրջանի արխայիկ, ստատիկ ձևերով, մինչդեռ կենդանիները, մարդիկ, առավելապես երիտասարդները՝ շարժուն ու կենսական, կենդանի ձևերով, այդպես էլ Հերոդոտոսի մոտ աստվածներն ու հին ժամանակների հերոսները մոնումենտալ ու ծանրաշարժ են, իսկ իր ժամանակի գործող անձինք՝ եռանդուն ու ճկուն։

Վերջին տասնամյակներում նմանություններ են հայտնաբերվել Հերոդոտոսի՝ իրադարձությունների որևէ ցիկլի շարադրանքի և հունական տաճարների եռանկյունի ճակտոններին քանդակված տեսարանների միջև։ Երկու դեպքում էլ կենտրոնը զբաղեցնում է հիմնական իրադարձությունը կամ կերպարանքը, իսկ նրանից հետո ու առաջ, իսկ ճակտոններին՝ աջ և ձախ, դասավորված են նվազող ծավալներով կամ բարձրություններով երկրորդական, երրորդական իրադարձություններն ու կերպարանքները։ Արդյոք գիտակցվա՞ծ է եղել Հերոդոտոսի կողմից նման կոմպոզիցիան, թե՞ այն ինքնաբերաբար է առաջացել նրա մոտ՝ իշխող ճաշակների, նորմերի ու մտայնության ազդեցության ներքո՝ դժվար է ասել։

Բոլոր դեպքերում Հերոդոտոսի երկի գեղարվեստական ազդեցությունը ընթերցողի վրա, ինչպես հնում, այնպես էլ այսօր, շատ խորն է։

6. ՀԵՐՈԴՈՏՈՍԸ ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԴԻՐ

Հերոդոտոսն, անշուշտ, առաջնակարգ գրող է, սակայն նրա «Պատմության» մասին խոսելիս առաջին հերթին պետք է անդրադառնալ գրքի պատմագրական արժեքին, որ բառացիորեն անգերագնահատելի է։ Պետք է տարբերել այդ արժեքի երկու կողմը։ Մեկը պատմագրի հաղորդած հսկայածավալ ու կարևորագույն նյութն է՝ հին աշխարհի երկրների ու ժողովուրդների մասին, մյուսը՝ նրա «Պատմության» դերը որպես համաշխարհային պատմագրության ու պատմագիտության ակունքի, որի համար նա կոչվել է «Պատմահայր»։ Հերոդոտոսն այդ գիտության սկզբունքների, այն է՝ պատմա-

կան աղբյուրների տվյալների սպառիչ ընդգրկման, համադրման ու սինթեզման հիմնադիրն ու մշակողը, պատմական պրոցեսի պատճառային-հետևանքային հաջորդակցության հայտնաբերողն ու ցուցադրողն է, թո՛ղ, որ այդ պրոցեսի շարժիչ ուժը ներկայանում է նրա մոտ մարդկային կրքերի ու ճակատագրի քմահաճույքների տեսքով։ Հետագա պատմագրությունը կսրբագրի այդ կողմը, նախապես, սակայն, որդեգրելով իրենք՝ սկզբունքները։

Նմանապես նա հիմնադիրն է պատմական աշխարհագրության ու ազգագրության, որոնց ծիլերը, ծագելով նրա «Պատմությունից», հետագայում ծաղկեցին ու վերաճեցին առանձին, թեև օժանդակ, պատմական գիտությունների։

Հերոդոտոսը ստեղծել է մի գործ, որին լիովին պատշաճում է նրա կրտսեր ժամանակակից, նրանցից շատ տարբեր, բայց նույնքան հանճարեղ պատմագիր Թուկիդիդեսի «Հավերժության պիտույք» —κτῆμα ἐς ἀεί— որակումը, որը Թուկիդիդեսը կիրառել է իր սեփական գործի նկատմամբ, այն էլ ի հակադրումն Հերոդոտոսի «Պատմության»։ Իրար ժամանակակից գործիչները կարող են թերագնահատել միմյանց, սա հաճախակի հանդիպող երևույթ է, բայց երկու և կես հազարամյակի հեռուներից դիտելով՝ երկուսի գործերն էլ արժանի են երևում այդ պարտավորեցնող բնութագրմանը, իսկ Հերոդոտոսի երկը ներկայանում է նաև որպես մարդկային քաղաքակրթության իրական հիմնաքարերից մեկը։

7. ՀԵՐՈԴՈՏՈՍԻ «ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

Հերոդոտոսի «Պատմությունը» տեղեկություններ է պահպանել նաև հին Հայաստանի և հայերի մասին, որոնք թեև մեծաքանակ չեն, բայց հույժ կարևոր են։ Այդ տեղեկությունների առանձնակի արժեքը նրանումն է, որ դրանք հունական պատմագրության էջերից մեզ հասած հնագույն տեղեկություններն են մեր երկրի մասին, և որ դրանք պահպանվել են ոչ թե մի այլ պատմիչի, այլ պատմահայր Հերոդոտոսի երկում։

Հետազոտողներն ամենից ավելի ուշադրություն են նվիրել հայերի մասին Հերոդոտոսի այն հաղորդմանը (V, 73), ըստ որի նրանք «փոյուգական վերաբնակիչներ» են (Φρυγῶν ἄποικοι), որից կարելի էր բխեցնել, իբր հայերը ծագում են փոյուգիացիներից։ Գիտության այսօրվա տվյալները այսպիսի եզրակացությունը չեն արդարացնում, այսինքն պարզ է, որ հայերը երբեք փոյուգիացիների մասը չեն կազմել։ Մյուս կողմից, Հերոդոտոսի այս ցուցումը վաղուց ի վեր կենտրոնացրել է հետազոտողների ուշադրությունը հայոց լեզվի և փոյուգերենից պահպանված տարրերի համադրման

վրա, որը և բերել է այն կարծիքի, որ երկու այդ լեզուներն ազգակից են և թրակերենի հետ կազմել են հնդեվրոպական լեզվաբնտանիքի ճյուղերից մեկը՝ թրակափոյուգահայկական ճյուղը։ Այս եզրակացությունը կարևոր նշանակություն ունի հայ ժողովրդի ծագման պրոբլեմի լուծման գործում։ Ի դեպ, Հերոդոտոսի սույն ցուցումը այս կամ այն բնույթի իր զուգահեռներն ունի նաև ուրիշ հույն հեղինակների գործերում։

Պատմահոր մնացած հաղորդումները կարելի է բաժանել երկու խմբի, որոնցից մեկը վերաբերում է Հայաստանի տարածքին, նրա սահմանների բնութագրմանը, իսկ երկրորդը որոշ պատկերացում է տալիս երկրի կյանքի մասին։ Դիտարկենք նախ երկրորդ խմբի տվյալները։

Հերոդոտոսի ամենածավալուն հաղորդումը Հայաստանի մասին վերաբերում է բաբելոնացի առևտրականների ճանապարհորդություններին մեր երկիրը (I, 194)։ Պատմագիրը որակում է այդ տեղեկությունը որպես Բաբելոնում իր լսածներից ամենազարմանալին։ Առևտրականները, պատմում է նա, Հայաստանում ուռենու ճյուղեր են կտրում, նավերի կմախքներ կառուցում և պատում դրանք մորթիներով։ Նավերը կլորաձև են, վահանի տեսքով, տարբեր չափերի, մինչև 160 տոննա (5000 տաղանդ) տարողություն ունեցող։ Հատակին հարդ լցնելով ու բառնալով գլխավորապես փյունիկյան սափորների (կարելի է հասկանալ նաև՝ կարմիր սափորների) մեջ լցրած գինով, նրանք վարում են նավերը գետի (Եփրատի, որի ակունքները, ըստ Հերոդոտոսի մի այլ հաղորդման, գտնվում են Հայաստանում) հոսանքն ի վար։ Յուրաքանչյուր նավի վրա լինում է մեկ կամ մի քանի ավանակ։ Բաբելոնում ապրանքը, ճյուղերն ու հարդը վաճառելուց հետո, մորթիները բառնում են այդ ավանակներին և վերադառնում Հայաստան (հոսանքն ի վեր նավարկելն անհնարին էր), որտեղ կրկին նավեր են սարքում և նորից բեռնավորված գնում Բաբելոն։

Հերոդոտոսը եղել է Բաբելոնում, նրա պատմածը կասկածի ենթակա չէ։ Առաջին եզրակացությունը, որ կարելի է հանել այս հաղորդումից, այն է, որ Բաբելոնի և Հայաստանի միջև կանոնավոր առևտրական երթևեկություն է եղել։ Պատմագիրը հիշատակում է միայն բաբելոնացի առևտրականներին, բայց դրանով ամենևին չի բացառվում հայ առևտրականների կողմից այդ ուղիներն օգտագործելու հանգամանքը։ Ընդսմին երթևեկությունը կատարվել է ոչ միայն գետի հոսանքով, այլև ցամաքով, ավանակների քարավաններով։ Նավերի կառուցման համար օգտագործվող նյութը, եթե բառացիորեն հասկանանք պատմագրին, ամբողջությամբ հայթայթվել է Հայաստանում՝ և ուռենու ճյուղերը, և մորթիները, և հարդը։ Այստեղ են ձեռք բերվել նաև ավանակները։ Որպես առևտրի հիմնական առարկա (ցավոք ոչ հիմնականների մասին նա լռում է) Հերոդոտոսը հիշատակում է գինին։ Որոշ տա-

բակուսանքի տեղ է տալիս «փյունիկյան» սափորների հիշատակումը, բայց հավանաբար խոսքն այստեղ կամ «փյունիկյան» ձև ունեցող անոթների կամ պարզապես կարմիր սափորների մասին է, որոնք ևս արտադրվում էին Հայաստանում։ Գրաստի ծանրաբեռնումը կավանոթներով իրեն չէր արդարացնի։

Հայաստանից արտահանվող բոլոր ապրանքների՝ տեղում արտադրվելու մասին մենք, Հերոդոտոսի այս ցուցումներից բացի, ունենք նաև այլ վկայություններ, թե գրավոր աղբյուրների, և թե իրեղեն, հնագիտական նյութերի։ Այսպես, Հերոդոտոսի ճանապարհորդություններից կես դար հետո հույն պատմագիր Քսենոփոնը, որն անցել է Հայաստանով մ.թ.ա. 401—400 թթ., իր «Անաբասիսում» խոսում է հայկական գինիների, նրանց մի քանի տեսակների գոյության ու բարձր որակի մասին։ Պահպանվել են հնագույն ժամանակներից բազմատեսակ ու բազմանպատակ խեցանոթների հազարավոր նմուշներ, որոնք վկայում են զարգացած խեցեգործության մասին։

Քսենոփոնի, նրանից հետո՝ Ստրաբոնի երկերում, իսկ նրանցից շատ առաջ՝ ասորեստանյան և ուրարտական սեպագիր արձանագրություններում հարուստ տվյալներ են պահպանվել Հայաստանում ձիաբուծության և տեղական ձիերի բարձր որակի ու համարման մասին։ Այդ տվյալները հաստատվում են պեղածո նյութերով, ըստ որում վերջիններս վկայում են նաև ավանակների օգտագործման մասին։ Ինչ վերաբերում է բաբելոնացի առևտրականների օգտագործած մորթուն (պատմագիրը չի մասնավորեցնում, մանր թե՞ խոշոր եղջրավոր անասուններից էր դա ստացվում), ապա Հերոդոտոսը մի այլ կապակցությամբ (V, 49) հիշատակում է, որ հայերը «առատ հոտեր ունեն», մի բան, որ նույնպես հաստատված է այլ գրավոր աղբյուրներով, ինչպես և հնագիտական նյութերով։

Որ Հայաստանի միջով իրոք անցել են առևտրական բանուկ ճանապարհներ, կրկին անգամ հաստատում է Հերոդոտոսը՝ Փոքր Ասիայից Պարսկաստան տանող հռչակավոր «Թագավորական ճանապարհը» նկարագրելիս (V, 52)։ Այդ ճանապարհն ունեցել է վարչական, ռազմական ու առևտրական մեծ նշանակություն։ Այն հիմնականում սալահատակված էր և նրա ամբողջ երկայնքով ձգվում էին օթևան-կայանները՝ կառուցված ճանապարհորդների հանգստյան և ճանապարհի անվտանգության համար։ Այդ ճանապարհի մի խոշոր հատվածը՝ շուրջ 340 կմ (ըստ Հերոդոտոսի՝ 56,5 փարսախ. փարսախը հավասար է մոտավորապես 6 կմ, այն է՝ մեկ ժամվա ճանապարհի), որի վրա կառուցված էր 15 օթևան-կայան, ըստ Հերոդոտոսի, անցել է Հայաստանի տարածքով։ Այն ձգվում էր արևմուտքից արևելք՝ Հայաստանի հարավային գոտում, Եփրատի արևմտյան կեռմանի գետանցից սկսած և շարունակվելով Տիգրիսի վերին հոսանքի երկայնությամբ։ Բնականաբար, այն մեծ դեր է խաղացել Հայաստանի տնտեսական կյանքում։ Իզուր չէ, որ նրա հենց

այդ հատվածին հարող հարավարևմտյան շրջաններն էին, մասնավորապես Սոփքը, որ մյուս շրջանների հետ համեմատած՝ տնտեսապես առավել զարգացած վիճակում թևակոխեցին հաջորդ՝ հելլենիստական ժամանակաշրջանը։

Վերը քննարկված վկայությունը՝ Եփրատի վրայով առևտրական երթևեկության մասին, մի այլ հարց էլ է հարուցում։ Եթե Հայաստանից Բաբելոն գինի էր արտահանվում, ապա ինչ ապրանքներ էին ներմուծվում Բաբելոնից Հայաստան։ Չէ՞ որ առևտրականները չէին կարող դատարկաձեռն երթևեկել։ Բաբելոնն, իհարկե, շատ ապրանքներ էր արտադրում՝ արմավ, ձեթ, հացահատիկ, գործվածքեղեն և այլն։ Սրանց մասին Հերոդոտոսը լռում է, բայց կարելի է ենթադրել, որ մորթիների հետ մեկտեղ ավանակների քարավանները բեռնված էին նաև այլ ապրանքներով։ Սակայն առևտրականների՝ Հայաստանից ներմուծվող ապրանքների այնտեղ տարվող հիմնական համարժեքը, հաշվի առնելով գրաստների ծանրաբեռնվածությունը մորթիներով, պետք է որ արծաթը լիներ։

Այդ եզրակացությանն է հանգեցնում Հերոդոտոսի մի այլ հաղորդում։ Պարսկական տերության 20 սատրապությունները՝ սատրապությունները, թվարկելիս, նա նշում է յուրաքանչյուրից արքային տրվող հարկի քանակը՝ արծաթի տաղանդներով (տաղանդը հավասար է մոտավորապես 30 կգ)։ Ահա, Հայաստանի մասին կարդում ենք (III, 93). «Պակտյուիկներից, արմենիներից և հարևան երկրներից՝ մինչև Եվքսինյան Պոնտոսը (Սև ծովը—Գ. Ս.) ստացվում էր 400 տաղանդ։ Սա տասներեքերորդ շրջանն է»։ Տարեկան շուրջ 12 տոննա արծաթը հսկայական գումար է, նույնիսկ եթե հաշվի առնենք, որ նրա ծանրությունն ընկնում էր ոչ միայն հայերի վրա, այլև հարևան որոշ երկրների, որովհետև սրանց մեջ թվով, տարածքով և կարողությամբ, ինչպես երևում է նույն Հերոդոտոսի այլ հաղորդումներից, գերակշռում էին հայերը։ Պետք է հաշվի առնել նաև, որ հայերի մի այլ, արևելյան հատվածը, ինչպես կտեսնենք, երկու այլ ժողովուրդների հետ կազմելով տերության XVIII սատրապությունը, վճարում էր արքային ևս 200 տաղանդ (վեց տոննա) արծաթ։ Այդ ամբողջ արծաթը, վճարվելու համար, պետք է առկա լիներ, և դրա աղբյուրներից մեկն էլ, ահա, Բաբելոնի հետ Հայաստանի միջազգային առևտուրն էր։

Հանրագումարի բերելով Հերոդոտոսի՝ Հայաստանի մասին տվյալների այս խումբը, տեսնում ենք, որ Հայաստանը ներկայանում է որպես հարուստ, զարգացած գյուղատնտեսություն, առևտրական արտաքին կապեր ու ապրանքային տնտեսության որոշակի մակարդակ ունեցող երկիր։ Նախորդ, ուրարտական շրջանի զարգացումն, ուրեմն, տվել էր իր դրական ու կայուն արդյունքները։ Մարապարսկական տիրապետությունը ևս, որի տակ ընկավ Հայաստանը մ.թ.ա. VI դարում, չէր արգելակել նրա առաջընթացը, գուցե

նույնիսկ որոշ իմաստով (միջազգային կապերի ամրապնդման և այլն), խթանել էր նրա որոշ կողմերը։ Հայկական հասարակությունը, որ միավորում էր արդեն կազմավորված ժողովրդին, բուն զարգացում էր ապրում դասակարգաառաջացման, սոցիալական բևեռացման, ստրկատիրական հասարակարգի վերընթաց շարժման ուղղությամբ, երևույթներ, որոնք հաջորդ հելլենիստական դարաշրջանում պետք է հանգեցնեին հայկական պետության հզոր վերելքին, նրա միջազգային նշանակության աննախընթաց աճին ու նրա շուրջը մեծ տերության առաջացմանը։

Այժմ դիտարկենք Հերոդոտոսի՝ Հայաստանի մասին հաղորդած տեղեկությունների մի այլ՝ տարածքային կողմը։ Ինչպե՞ս է որոշում պատմահայրը Հայաստանի սահմանները մ.թ.ա. V դարի առաջին կեսի դրությամբ։ Մանրամասն թվարկելով Փոքր Ասիայի կենտրոնական մասում գտնվող Հալիս գետի հոսանքին հարող երկրները, նա նշում է, որ այդ գետն իր ակունքն ունի Հայկական լեռներում։ Հալիսի ակունքների տեղանքը գտնվում է հետագայի Փոքր Հայքի տարածքում։ Հետագայի, որովհետև Հերոդոտոսն ակներևաբար Փոքր Հայքի մասին տեղեկություն չունի։ Այդ տարածքը նրա պատկերացմամբ բուն Հայաստանի մեջ է մտնում։ Սա շատ կարևոր է Փոքր Հայք և Մեծ Հայք հասկացությունների առաջացման ժամանակը ճշտելու համար։ Փոքր Հայքին անծանոթ է, ըստ երևույթին, նաև Քսենոփոնը՝ մ.թ.ա. V և IV դդ. սահմանագլխին։ Հնագույն տեղեկություններն այդ երկրամասի վերաբերյալ պատկանում է Պոլիբիոսին (մ.թ.ա. II դ.), որը հիշատակում է Փոքր Հայքը՝ Միհրդատ սատրապի իշխանության ներքո և հակադրում այն «Հայաստանի մեծ մասին», որի տիրակալն էր Արտաշեսը (Արտաշես I-ը)։ Ավելի ուշ շրջանի հեղինակները՝ Ստրաբոնը, Ռուփոսը, Փոքր Հայքի գոյությունը հասցնում են մինչև մ.թ.ա. III և IV դդ.՝ ընդհուպ մինչև Ալեքսանդր Մակեդոնացու ժամանակը, երբ ըստ Ռուփոսի, Փոքր և Մեծ Հայքերի ռազմաշրջանները Դարեհ III-ի զորքերի կազմում կռվում էին Գավգամելայի ճակատամարտում (331 թ. մ.թ.ա) Ալեքսանդր Մակեդոնացու դեմ։ Փոքր Հայքի անջատումն ու Մեծ և Փոքր Հայքերի առաջացումն, ուրեմն, հավանաբար, պետք է թվագրել մ.թ.ա. IV դարի առաջին կեսով։ Մինչ այդ, Հերոդոտոսի ժամանակ, դրանք միավորված են եղել մեկ՝ Հայաստան (Արմենիա) երկրի մեջ, որի հյուսիսարևմտյան սահմաններն, ահա, ընդգրկել են Հալիսի ակունքները։

Հաջորդ երկու հաղորդումները պատկերացում են տալիս Հայաստանի հարավարևմտյան, հարավային ու հարավարևելյան եզրերի մասին։ Դրանք (V, 49 և V, 52) գրեթե իրար կրկնում ու հաստատում են, բայց երկրորդը (V, 52) ավելի մանրամասն է։ Այստեղ որպես Հայաստանի արևմտյան հարևան նշված է Կիլիկյան (որն այն ժամանակ ավելի լայնատարած էր, քան հետագայում, և ձգվում էր դեպի հյուսիս) և երկու երկրների սահման է համարվում «նավարկելի Եփրատ գետը»։ Շատ հստակ ցուցում է։ Հարավային սահմանը պատմագիրն առնչում է Տիգրիս գետի վերին հոսանքի հետ, որն այդ հատվածում ձգվում է արևմուտքից արևելք, իսկ Հայաստանի հարավարևելյան հարևան համարում է Մատիենների երկիրը, որը զբաղեցնում էր Ուրմիա լճի ավազանը։ Բացի այդ, Հերոդոտոսն այդ տեղերով անցնող «Թագավորական ճանապարհի» նկարագրության կապակցությամբ նշում է Հայաստանի տարածքի ճշգրիտ երկարությունը՝ Եփրատի գետանցից մինչև Մատիենների սահմանը՝ փարսախներով։ Ինչպես ասվեց, այդ տարածությունը հավասար է շուրջ 340 կմ (56,5 փարսախ)։ Տեղադրելով այն քարտեզի վրա պարզում ենք, որ Հայաստանի և Մատիենների երկրի սահմանագլուխը ըստ Հերոդոտոսի գտնվել է Վանա լճից դեպի հարավ ընկած՝ Տիգրիսի վտակ Բոհտան-սուի վրա, այն գետի, որը, Կենտրիտես անվան տակ որպես Հայաստանի հարավային սահման (Կարդուխների երկրի հետ) նշում է նաև Քսենոփոնն իր «Անաբասիսում»[1]։

Այսպիսով, Հայաստանի արևմտյան ու հարավային սահմանները, ինչպես պատկերացնում էր Հերոդոտոսը, բավականաչափ հստակ են գծագրվում։ Նույնը չի կարելի ասել արևելյան և հյուսիսային սահմանների մասին։ Պատմագիրն այս կապակցությամբ ուղղակի ցուցումներ չունի, մնում է դիմել նրա կողմնակի տվյալներին։ Դրանք գտնում ենք Աքեմենյան տերության XVIII սատրապության նրա տված բնութագրման մեջ, որին մասամբ արդեն ծանոթացել ենք։ Այստեղ (V, 94) կարդում ենք, որ «Մատիենների, սասպեյրների և ալարոդների համար սահմանված էր 200 տաղանդ հարկ։ Սա տասնութերորդ շրջանն է»։ Ինչպե՞ս են տեղադրվում քարտեզի վրա այդ ժողովուրդների զբաղեցրած տարածքները։ Մատիենները, ինչպես ասվեց, բնակվում էին Ուրմիա լճի ավազանում, սասպեյրները՝ ըստ երևույթին, քարթվելալեզու ցեղեր՝ Սև ծովի հարավարևելյան անկյունի մերձակայքում՝ Ճորոխի ավազանում։ Ալարոդներն, ուրեմն, պետք է ապրելիս լինեին դրանց արանքում՝ Վանա լճի արևելքում և Արաքսի հովտում։ Ալարոդներ կոչվող ցեղերի մասին գոյություն ունի ընդամենը երկու վկայություն, երկուսն էլ պատկանում են Հերոդոտոսին։ Մեկը խնդրո առարկա վկայությունն է, մյուսին կանդրադառնանք ստորև։ Գիտության մեջ ալարոդ ցեղանվանը տրվել է միայն մեկ մեկնաբանու-

---

[1] Ցավոք, Հերոդոտոսի այս կարևորագույն հաղորդման (V, 52) վերջին հատվածը անաղարտ չի պահպանվել։ Այստեղ նրա հիշատակած «երկու նույնանուն գետերի» անունը մեզ հասած բնագրում բացակայում է։ Հետազոտողներն այն վերականգնում են «Զաբատոս», որպես երկու գետեր նկատի ունենալով Մեծ Զաբը և Փոքր Զաբը։ Ըստ Հերոդոտոսի, դրանցից առաջինի ակունքը գտնվում է Հայաստանում։ Հնարավոր է, սակայն, որ խոսքն այստեղ իրականում Բոհտանսու-Կենտրիտեսի ակունքներին է վերաբերում։

թյուն։ Նրանք նույնացվել են ուրարտացիների հետ. համընկնում են թե՛ նրանց անվանումը, թե՛ գրված տարածքը։

Այս տվյալներով որոշվում են Հերոդոտոսի պատկերացումները Հայաստանի, միաժամանակ նաև XIII սատրապության արևելյան ու հյուսիսային սահմանների մասին. դրանք կազմում էին մի գիծ, որ ձգվում էր Վանա լճի մերձակայքից դեպի հյուսիս-արևմուտք՝ Սև ծովի հարավարևելյան անկյունը։ Նույն գիծը կազմում էր XVIII սատրապության հարավարևմտյան սահմանը։ Այդ սատրապությունը պետք է որ նշված գծի վրա հեցած եռանկյունու տեսք ունենար, որի երրորդ անկյունը տեղադրվում էր Կուրի միջին հոսանքի հովտի ինչ որ մի կետում։

Գիտության մեջ բավական արմատավորված է այն կարծիքը, թե XVIII սատրապությունը ևս ունեցել է հայ բնակչություն, գուցե նույնիսկ գերակշիռ չափով։ Որտեղի՞ց է ծագում այդ կարծիքը, եթե XVIII սատրապությունը հիշատակում է միայն Հերոդոտոսը և հիշատակում է բնակչության այն կազմով, որ նշեցինք վերը, այսինքն՝ առանց հայերի։ Բանն այն է, որ Աքեմենյան թագավորների եռալեզու արձանագրություններում, սկսած Դարեհ I-ի հայտնի Բեհիստունյան արձանագրությունից, տերությունը կազմող երկրամաս-սատրապությունների թվում հիշատակվում է պարսկական տարբերակում Արմինա (Արմենիա), իսկ բաբելոնյան (ակկադերեն) տարբերակում՝ Ուրաշտու[1] (Ուրարտու) կոչվող երկիրը, որի տարածքը ընկնում է, ըստ Բեհիստունյան արձանագրության, Մադա (Մեդիա, Մարաստան) և Կատպատուկա (Կապադովկիա) երկրների միջև, այսինքն լիովին համապատասխանում է Ուրարտու պետության տարածքին, որն ընդգրկում էր Հայկական լեռնաշխարհը, այն է՝ Հերոդոտոսի հիշատակած XIII և XVIII սատրապությունները, կամ դրանց գերակշռող մասերը։

Այսպիսով, Հերոդոտոսի տվյալները, որոնք XVIII սատրապության մեջ հայերին չեն հիշատակում, որոշակի հակասության մեջ են ավելի վաղ շրջանի իրավիճակն արտահայտող Բեհիստունյան արձանագրության տվյալների հետ։ Մեզ, սակայն, այդ հակասությունը սոսկ թվացող է երևում, և, որոշակի մեկնաբանություն ստանալով, կարող է վերանալ։ Խնդրի լուծման բանալին, մեր կարծիքով, թաքնված է Հերոդոտոսի աղբյուրների տարաբնույթ նկարագրի մեջ։

Արդեն նշվել է, որ պատմագրի գիտելիքները հսկայածավալ պարսից տերության մասին սնվել են մի քանի աղբյուրներից։ Այստեղ, հետևելով մեր նպատակին, կբաժանենք դրանք երկու խմբի՝ տերության արքայական դիվանատան ու նրա տեղական մասնաճյուղերի պաշտոնական վավերագրերի և

[1] «Ուրարտու» անվանման «Ուրաշտու» ձևը ակկադերենի բաբելոնյան բարբառի հնչյունական առանձնահատկություններից է բխում։

բոլոր մնացյալ աղբյուրների։ Մեզ արդեն հայտնի է, որ Հերոդոտոսը բավական ծանոթություն է ունեցել առաջին խմբի աղբյուրների հետ որպես պարսից արքայի տիրապետության տակ գտնվող Հալիկառնաս քաղաքի բնակիչ, որտեղ, ի թիվս այլ փոքրասիական հունական քաղաքների, շրջանառության մեջ էին պաշտոնական վավերագրերը՝ դիվանատան գործնական լեզու և ժամանակի միջազգային լեզու արամեերենով գրված օրինակներից հունարենի փոխադրված վիճակում։

Բեհիստունյան արձանագրության արամեերեն տարբերակի Եգիպտոսի Ելեփանտինե քաղաքում գտնված մի պատառիկ, բարեբախտաբար, վերաբերում է հենց Հայաստանի՝ Դարեհի դեմ ապստամբության հետ կապված իրադարձություններին։

Նախապես նշենք, որ աքեմենյան եռալեզու արձանագրությունները համապատասխանաբար երեք՝ պարսկական, էլամական և բաբելոնական գրչական դպրոցների, երեք տարբեր ավանդույթների և մշակույթների ծնունդ հանդիսացող գրիչների արտադրանք են։ Նրանց երեք տարբերակներն, այդ պատճառով, լրիվ նույնական չեն. ամեն մեկին հատուկ են իրենց առանձնահատկությունները, որոնք արտահայտվում են արձանագրության բաժինների տարբեր համամասնություններով, որոշ մանրամասների առկայությամբ կամ բացակայությամբ, օնոմատիկայի տարբերությամբ և այլն։ Վերջինիս օրինակը մենք արդեն ունենք. պարսկերեն տեքստի «Արմինայի» դիմաց բաբելոներենը տալիս է արդեն վերապրուկ դարձած «Ուրարտու» անունը՝ համաձայն ասուրաբաբելոնական դպրության հինավուրց քարացած ավանդույթների։ Ապստամբած Արմինա-Ուրարտուի դեմ մղված պայքարի նկարագրության մեջ պարսկական տեքստը, օրինակ, չի տալիս սպանված թշնամիների քանակը, իսկ բաբելոնականը պարունակում է այդ թվերը և այլն։

Ահա, արամեերեն տարբերակը, որ չկա իրեն՝ վիմագիր արձանագրության մեջ, բայց գոյություն է ունեցել գրված կաշվե փաթեթների վրա, և հատվածաբար հասել է մեզ, սերտ հարազատություն է ցուցաբերում ոչ թե պարսկերեն, այլ հենց բաբելոներեն բնագրի հետ, ներկայանում որպես բաբելոնական դպրության ավանդույթին մերձ մի ավանդույթի արտադրանք, մի բան, որ բնական կթվա, եթե հաշվի առնենք երկու ժողովուրդների՝ արամեացիների և բաբելոնացիների դարավոր պատմամշակութային շփումները ու նրանց՝ սեմական լեզվախմբին պատկանող լեզուների սերտ ազգակցությունը։ Այսպես, արամեերեն տեքստում ևս կան սպանված թշնամիների թվերը և «Արմինայի» փոխարեն առկա է «Ուրարտու» անունը՝ արամեերեն դպրությանն հատուկ տառային անձայնավոր 'rrt գրությամբ, որը ձայնավորներով օժտելով, կարելի է կարդալ Արարատ, Ուրարտու, Արարոտ և այլ ձևերով։

Ահա, նման մի արամեերեն բնագրից արված հունարեն թարգմանության մեջ 'ΠΠ-ը տվել է հունական «ալարոդ», 'αλαρόδιος ձևը, որը բազմաթիվ լեզուներում տարածված առաջին Ռ-ի հետադարձ տարնմանեցման արդյունք է։ Այս ձևն էլ, բնականաբար, որդեգրել է Հերոդոտոսը։

Այսպիսով, պատմագիրը, ունենալով Հայաստանի արևմտյան մասի վերաբերյալ քիչ թե շատ մանրամասն տեղեկություններ, ստացված իր հարցուփորձից, պարսիկների և հույների պատմածներից, լոգոգրաֆոսների գրառումներից, ի վիճակի է եղել ներկայացնել նրա սահմանները, ժողովրդի ծագումը, զբաղմունքները և այլն։ Արևելյան մասի վերաբերյալ այդ աղբյուրները լռել են, և Հերոդոտոսը նույնիսկ չի իմացել, թե Հայաստանը (Արմենիան տարածվում է նաև այդ հողերում։ Դրանց մասին նա տեղեկացել է միայն պարսկական պաշտոնական վավերագրերից, այն էլ արամեերենից արված հունարեն թարգմանություններից, որտեղ Հայաստանը (Արմենիան) հնացած ձևով կոչվել է Ուրարտու։ Այսպես է պատահել, որ նա Արևելյան Հայաստանը բնակեցրել է ալարոդներով (ուրարտացիներով), մինչդեռ այնտեղ հայերն են ապրել, ինչպես այդ բխում է Բեհիստունյան արձանագրության մեջ այդ տարածքը Արմինա անվանելու փաստից։ Ուրարտացիներն այդ ժամանակ այլևս գոյություն չունեին, նրանք հայացել էին։ Ուստի Հերոդոտոսի այս հատվածում հիշատակված ալարոդների տակ միանշանակ կերպով պետք է հասկանալ հայերին և վերը մեջ բերված հատվածը (V, 94) հասկանալ այսպես. «Մատիենների, սասպեյրների և արմենների վրա սահմանված էր 200 տաղանդ հարկ։ Սա տասնութերորդ շրջանն է»։

Ալարոդների մասին Հերոդոտոսի երկրորդ և վերջին հիշատակությունը արվում է Հունաստան արշավող Քսերքսես թագավորի՝ իր բանակին արված զորատեսի կապակցությամբ, երբ պատմագիրը մի քանի էջի վրա մեկ-մեկ թվարկում է, թե ինչ ցեղերից ու ժողովուրդներից էր բաղկացած այդ բանակը։ «Ալարոդները և սասպեյրները,—ասում է պատմագիրը,—արշավում էին կոլխերի նման զինված» (VII, 79)։ Որտեղի՞ց են վերցված այս երկար ու բարակ թվարկումը և այս կոնկրետ ցուցումը։ Հերոդոտոսը չի թաքցնում այդ։ «Թագավորը,—գրում է նա,—ռազմակառք նստած, անցնելով յուրաքանչյուր ազգության բոլոր չոկատների առաջով, հարցնում էր նրանց անունները, իսկ գրագիրները գրում էին» (VII, 100)։

Այստեղ ևս Հերոդոտոսի տեղեկությունները գալիս են թագավորական դիվանատան վարչական վավերագրերից, ուստի և նույն պատճառով, ինչպես վերը, ալարոդների տակ այստեղ էլ պետք է հասկանալ հայերին։ Ճիշտ է, նույն թվարկման մեջ Հերոդոտոսը հիշատակում է նաև արմենևերին՝ փրյուգիացիների հետ միասին (VII, 73), սակայն այստեղ ևս, ինչպես սատրապու-

թյունների ցանկում, մենք գործ ունենք տարբեր աղբյուրների տվյալների սինթեզման, շերտավորման հետ (տե՛ս վերը, էջ 574 և հաջ.)։

Հերոդոտոսի հիշատակած ալարոդներին հայերով փոխարինելու գաղափարն իր հաստատումն է գտնում ոչ միայն Բեհիստունյան արձանագրության, այլև Քսենոփոնի հաղորդած տեղեկություններում։ Հերոդոտոսից ընդամենը մի քանի տասնամյակ անց ապրած ու Հայաստանն էլ անձամբ այցելած Քսենոփոնը իր «Անաբասիսում» խոսում է, մի կողմից, ընդհանրապես Հայաստանի, մյուս կողմից, առանձին՝ Արևմտյան Հայաստանի մասին։ Վերջինիս արևելյան սահմանները նա այսպես է որոշում. հարավում՝ Տիգրոսա գետը (IV, 4, 3—4), որը կամ Արածանու վերին հոսանքն է (Ֆ. Մարկվարտ) կամ նրա հարավային Մեղ վտակը (Ս. Երեմյան)՝ Վանա լճից արևմուտք, հյուսիսում՝ փասիաների և հեսպերիտների (Հերոդոտոսի հիշատակած սասպեյրները) երկրները (VII, 8,25), այսինքն հայկական Բասենը՝ Արաքսի հովտում և Սպերը՝ Ճորոխի ավազանում։ Ուրիշ խոսքով ասած, այս սահմանագիծը մոտավորապես համընկնում է Հերոդոտոսի նկարագրած XIII և XVIII սատրապությունների սահմանին, որն ինչպես հիշում ենք նույնպես սկսվում էր Վանա լճի շրջակայքում և ընթանում դեպի Սև ծովի հարավարևելյան անկյունը, այսինքն՝ Ճորոխի հովիտը։ Քսենոփոնի պատմածից պարզ չէ, թե Հայաստանը և Արևմտյան Հայաստանը իր օրոք արդյո՞ք առանձին վարչատարածքային միավորներ էին Աքեմենյան տերության կազմում, թե՞ Արևմտյան Հայաստանը ամբողջ Հայաստանի սոսկ մի մասն էր։ Գուցե նույնիսկ երկրորդն ավելի հավանական թվա, քանի որ հեղինակը Հայաստանի վարչապետին անվանում է սատրապ, իսկ Արևմտյան Հայաստանի վարչապետին՝ միայն հյուպարքոս։ Հարցի այս կամ այն լուծումը, սակայն, ներկա դեպքում նշանակություն չունի, կարևորն այն է, որ Քսենոփոնի աշքում վերոհիշյալ սահմանագծից դեպի արևելք տարածվող երկիրը (այսինքն, փաստորեն Հերոդոտոսի նշած XVIII սատրապությունը) ևս Հայաստան էր, գուցե նույնիսկ բուն Հայաստանը։

Այսպիսով, Քսենոփոնի հաղորդած փաստերն ամրապնդում են Հերոդոտոսի հիշատակած ալարոդներին հայերով փոխարինելու անխուսափելիությունը, այսինքն, որոշակիորեն ուղղում կամ լրացնում են պատմահոր՝ XVIII սատրապության մասին հաղորդման տվյալներից մեկը։

Միաժամանակ, սակայն, այդ փաստերը հաստատում են հաղորդման էությունը, քանի որ ցույց են տալիս, որ պարսկական արձանագրությունների Արմինա-Ուրարտու միավորի ներսում այնուամենայնիվ գոյություն է ունեցել Վանա լճից դեպի Սև ծովը ձգվող մի սահմանագիծ, որը մերթ անտեսվել է (օրինակ, հիշյալ արձանագրություններում), մերթ շեշտվել (Հերոդոտոսի XIII և XVIII սատրապությունների սահմանագիծը), մերթ սոսկ նշվել (Քսենո-

փոնի Հայաստանի և Արևմտյան Հայաստանի սահմանագիծը) և հավանաբար ունեցել է նախորդ դարաշրջաններից եկող պատմական հիմքեր։

Իր հերթին, XIII և XVIII սատրապությունների մասին հաղորդման արդարացումը էական դեր է խաղում սատրապությունների ողջ ցանկի արժանահավատության հաստատման գործում։ Իսկ քանի որ այդ ցանկը «Պատմության» կարևորագույն հատվածներից է, ապա դրանով էական ներդրում է արվում ընդհանրապես պատմահոր պահպանած տեղեկությունների արժեքավորման բնագավառը։

ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ф. Мищенко, Геродот и его место в древнеэллинской образованности, в кн.: „Геродот. История". М., 1888.

F. Jacoby, Herodotos. Pauly—Wtssowa Realenzyklopädte der klassischen Altertumswissenschaft. Supplementband 2, Lpz., 1908.

С. Я. Лурье, Геродот, М.—Л , 1947.

А. И. Доватур, Повествовательный и научный стиль Геродота, Л., 1957.

М. А. Дандамаев, Иран при первых Ахеменидах, М., 1963.

В. Г. Борухович, Научное и литературное значение труда Геродота, в. кн.: „Геродот. История в девяти книгах", Л., 1972.

Т. И. Кузнецова, Т. А. Миллер, Античная эпическая исто риография. Геродот, Тит Ливий. М., 1984.

Հ. Հ. Մանանդյան, Բնական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Ա, Սկզբից մինչև Արշակունիների հաստատումը Հայաստանում։ Երկեր, Ա, Երևան, 1977։

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

1 Հելլենները «բարբարոս» ասելով նկատի են ունեցել բոլոր ոչ հելլեններին: Անտիկ շրջանում «բարբարոս» նշանակում էր ընդհանրապես «օտարերկրացի», «այլալեզու»:

2 Կարմիր ծով ասելով, Հերոդոտոսը նկատի ունի Պարսից ծոցը. «մեր ծովը» ասելով՝ Միջերկրականը:

3 Այստեղ խոսքը արամեական ցեղերի գաղթի մասին է (մ. թ. ա. 1400—1200 թթ.) արևելյան Արաբիայից հյուսիսային Սիրիա: Արամեացիներն այնտեղ հիմնեցին քաղաքներ, որոնց մասին հիշատակում է Աստվածաշունչը:

4 Խոսքը արգոնավորդների արշավանքի առասպելի մասին է:

5 Այս Ալեքսանդրը նույն Պարիսն է, Տրոյայի արքա Պրիամոսի որդին:

6 Խոսքը վերաբերում է Մենելաոսի կնոջ՝ գեղեցկուհի Հեղինեին:

7 Ակնարկությունը Տրոյական պատերազմի մասին է:

8 Բնագրում՝ Կրոյսոս (Κροῖσος): Մենք ևս, հավատարիմ մնալով մեր ավանդույթին, նախընտրեցինք Կրեսոս ձևը, որն ընդունված է մեր դպրության մեջ՝ Խորենացուց մինչև Խաչատուր Աբովյան:

9 Սիրիացիներ ասելով այստեղ Հերոդոտոսը նկատի ունի ֆայլուքներին, որոնք Հոմերոսի մոտ (Իլիական, II, 856) հիշատակված հալիպոններն են, որոնց անունով էլ կոչվել է գետը: Հալիպոնները հետագայում ձուլվեցին հայերի մեջ («Հայ ժողովրդի պատմություն», հատ. I, Երևան, 1971, էջ 235—236):

10 Կիմմերների արշավանքը Փոքր Ասիա տեղի ունեցել է շուրջ 700 թ.: Կիմմերների արշավանքի մասին պատմում է նաև Ստրաբոնը իր «Աշխարհագրության» մեջ (Strabo, Geographia. I 1,30: 3,21: III, 2,12: XI, 2,5: XIV, 1,40):

11 Հերոդոտոսի մոտ լյուդիական թագավորների ծննդաբանությունն ունի դիցաբանական բնույթ: Պատմիչը, ըստ երևույթին, տեղյակ չէ այդ մասին գոյություն ունեցած տեղական ավանդություններին: Հիշյալ թագավորին Հերոդոտոսի տված Կանդավլես անունը ոչ թե ինչոր թագավորի հատուկ անունն է, այլ պարզապես նշանակում է՝ «տիրակալ» (*Геродот*, История, перев. Г. А. Стратановского, Л., 1972. *այսուհետև՝ Геродот*, с. 501, примеч. 12):

12 Հաշվումները ցույց են տալիս, որ Հերոդոտոսը ժամանակագրության մեջ հետևում է՝ 3 սերունդը հավասար է 100 տարվա սկզբունքին:

13 Այդպես էր կոչվում Հունաստանի Դելֆի քաղաքում գտնվող Ապոլոնի տաճարի պատգամախոսը՝ Պուլթիա քրմուհին, որին հելլենները դիմում էին պատերազմների հավանական ելքը և կանայան կնճռոտ հարցերի պատասխաններն իմանալու համար: Պուլթիա քրմուհին, հափշտակության մեջ, կառանցական ձայներ էր արձակում, իսկ տաճարի քրմերն այդ ձայները մեկնաբանում էին մշուշապատ ու երկիմաստ խոսքերով:

13ա Տե՛ս նախորդ ծանոթագրությունը:

14 Ատտիկյան տաղանդը կշռում էր շուրջ 26,2 կգ:

15 Դելֆյան պատգամատանը հելլենական բոլոր համայնքներն ունեին իրենց հատուկ գանձարանը:

16 Բնագրում πηκτίς (պեկտիս). մենք թարգմանեցինք՝ տավիղ: Պեկտիսը տավղանման 20 լարանի երաժշտական գործիք էր:

17 Բարձր տոնայնության ֆլեյտան կոչվում էր իգական, իսկ ցածր տոնայնությանը՝ արական:

17ա Հին Հունաստանում քարոզի պաշտոնը դեռևս Հոմերոսի ժամանակներից հատուկ մասնագիտություն էր, ընդ որում պատվաբեր: Քարոզի պարտականությունն էր՝ ժողովրդին ատյանի հրավիրել. նա առհասարակ միջնորդ էր արքայի կամ կոռանիամանատարի ու ժողովրդի միջև: Քարոզը համարվում էր սրբազան և անձեռնմխելի անձնավորություն: Նա ուղեկցում էր բարեկամների կամ թշնամիների մոտ ուղարկվող բանագնացներին, պոհաբերությունների ժամանակ կատարում քրմական պարտականություններ:

17բ Ագորա—հունական քաղաքների շուկայական հրապարակը:

18 Ասսեսոսը ոչ մեծ քաղաք էր Միլետի մոտ:

19 «Դիթիրամբ» անվանումը նախապես եղել է Դիոնիսոս աստծու մակդիրներից մեկը: Հետագայում այն նշանակել է աստծու կամ հերոսի պատվին հորինված հանդիսավոր երգ, որը կատարվում էր, գլխավորապես, սրնգի նվագակցությամբ:

20 Այժմ Տարենտ (Տարանտո) քաղաքը:

21 Բնագրում νόμος ὀρθιος. սա բարձր ձայնով կատարվող հիմն էր, նվիրված Ապոլոնին:

22 Բնագրում στάδιον—ստադիոն: Ասպարեզը երկարության չափ էր, որը հավասար էր 185 մ:

23 Պիտակոսը չէր կարող 560 թ. հանդիպած լինել Կրեսոսին, քանի որ մահացել էր 570 թ.:

24 Այս հատվածում Հերոդոտոսի ժամանակագրական շփոթն ակնհայտ է: Սոլոնը ճանապարհորդել է 594—584 թթ., մինչդեռ Կրեսոսը թագավորել է 560 թ. սկսած: Հետևաբար, Սոլոնը չէր կարող հանդիպած լինել Կրեսոսին: Ինչ վերաբերում է Սոլոնի այցելությանը Եգիպտոսի Ամասիս (Ահ-մոսե) թագավորին, որը իշխել է 569—526 թթ., այն նույնպես հակասում է ժամանակագրությանը:

25 Կլեոբիսի և Բիտոնի մայրը եղել է Հերայի տաճարի քրմուհին:

26 Այստեղ խոսքը արեգակնային տարվա և օրացույցի համապատասխան լինելու մասին է:

27 Բնագրում θάλαμος—թալամոս. նշանակում է՝ կանանոց, սենյակ, պահեստ:

28 Մաքրման արարողությունը հույները կատարում էին հետևյալ կերպ: Մարդասպանի ձեռքերը օծում էին անասունի, առավելապես մորթված գոռու, արյունով, որը հետո սրբում էին, ի նշան ապատման արյունալի մեղքից: Այդ արարողությունից հետո աստվածներին զոհ էին մատուցում և աղոթում, նրանց սիրաշահելու նպատակով (*В. В. Латышев*, Очерк греческих древностей, ч. II, СПб., 1899. с. 78):

29 Բնագրում ἀλορά—ագորա:

30 Զշփոթել Թեսալիայում գտնվող աստվածանիստ Օլիմպոս լեռան հետ:

31 Բնագրում καθάρσιος—նշանակում է՝ մաքրող, սրբող, քավություն շնորհող:

32 Բնագրում ἐφέστιος:

33 Բնագրում ἑταίρηιος:

34 Սա հայ մատենագրությանը հայտնի Աժդահակ անունն է:

35 Լիբիա (բնագրում Λιβύα) ընդհանուր անունով դասական հեղինակները նկատի ունեին հայտնի աֆրիկյան երկրները:

36 Ամփիարաոսը և Տրոփոնիոսը հին հունական առասպելական անձնավորություններ են, արգոնավորդներին ժամանակակից պատգամախոսներ: Տվյալ հատվածում Հերոդոտոսը նկատի ունի նրանց ենթադրյալ դերեզմանին ուղարկված պատգամավորներին:

37 Բնագրում λευκὸς χρυσός—սպիտակ ոսկի:

38 Թեոփանիա (Θεοφάνια)—բառացի նշանակում է՝ աստվածհայտնություն: Այն տոնախմբություն էր Դելֆիում, որի ընթացքում ցուցադրվում էին աստվածների արձանները:

39 Բնագրում ἐπίσημα—նշանագիր կրող, պաշտոնական:

40 Ստատեր—դրամի միավոր հին Հունաստանում: Տարբեր ժամանակներում և տարբեր քաղաքներում ունեցել է տարբեր արժեք:

41 Հերմոս—գետ Փոքր Ասիայում, որը հոսում է Փռյուգիայի և Լյուդիայի միջով: Թափվում է Միջերկրական ծով՝ Զմյուռնիայի մոտ:

42 Դևկալիոնը և նրա կին Պյուռռան, ըստ հելլենական ավանդության, փրկվում են ջրհեղեղից և դառնում են հույների նախածնող:

43 Հրուպերակրիաներ (ὑπερόχαρται)—բառացի նշանակում է՝ լեռնականներ, լեռնային: Այսպես էին կոչվում Պիսիստրատոսի կուսակիցները: Պիսիստրատոսը (560—527), VI դարի այդ խոշոր աթենացի քաղաքական գործիչը, հենվում էր հյուսիսարևելյան Ատտիկայի բնակչության վրա, որը հիմնականում գյուղացիական էր: Նրա տնտեսական քաղաքականությունն ուղղված էր չքավոր գյուղացիության շահերի պաշտպանությանը (*С. Я. Лурье*, История Древней Греции, ч. I, 1940, Л., այստեղից՝ *С. Я. Лурье*, История..., с. 154):

43ա Մեգակլեսը, Ակմեոնիդների աթենական հայտնի տոհմի նահապետը, գլխավորում էր Աթենքի քաղաքային արիստոկրատների և առևտրականների խմբակցությունը: Ակմեոնիդները, ունենալով առևտրական կապեր Փոքր Ասիայում, կողմնակից էին պարսկական քաղաքականության (տե՛ս *С. Я. Лурье*, История..., с. 159).

44 Դեմները վարչական ստորաբաժանումներ էին Ատտիկայում:

45 Ինչպես արդեն ասվել է, Մեգակլեսը պատկանում էր Ակմեոնիդների տոհմին (տե՛ս ծան. 43ա):

46 Սարիսան դեռը հոսում էր Թրակիայի և Մակեդոնիայի սահմանով:

47 Էնտոտիան սպարտական զորքի ստորին զորաբաժանումներից էր, բաղկացած 25—36 մարդուց, որոնք կապված էին իրար հատուկ երդումով:

48 Բնագրում συσσίτια—սիսսիտիա:

49 Սպարտայում էֆորների կոլեգիան բաղկացած էր 5 մարդուց, որոնք ընտրվում էին մեկ տարի ժամանակով:

50 Ալազոնների խորհուրդը՝ գերուսիան (նշանակում է՝ ծերակույտ) բաղկացած էր 28 մարդուց: Երկու թագավորների հետ ավագների խորհուրդը դառնում էր 30 մարդ և հանդիսանում էր իշխանության բարձրագույն մարմին Սպարտայում:

51 Արկադիա—լեռնային մարզ Պելոպոնեսոսի կենտրոնական մասում:

52 Տեգեա—քաղաք Արկադիայի հարավարևելյան մասում:

53 Սպարտական համայնք-պետության գլուխ կանգնած էին լինում միաժամանակ երկու բասիլևսներ, հավասար իրավունքներով:

54 Բնագրում՝ ἀγαθοεργοί—այսպես կոչվում էին սպարտական 300 հեծելազորայիններից այն հինգը, որոնք ամեն տարի, իրենց առաջացած տարիքի պատճառով, դուրս էին գալիս հեծելազորի շարքերից և ուղարկվում էին իբրև դեսպան ուրիշ երկրներ:

55 Թորնաքս—լեռ Սպարտայի հյուսիսարևելքում:

56 Սամոս—կղզի Էգեյան ծովում:

57 Անաքսիրիդ—պարսկական երկար ու նեղ անդրավարտիք:

58 Բնագրում՝ μῆδοι—մեդեր:

59 Թալես Միլետացի (մ. թ. ա. VII—VI դդ.) խոշորագույն մատերիալիստ փիլիսոփա. համարվում էր աշխարհի յոթ իմաստուններից մեկը:

60 Արևի այդ խավարումը տեղի է ունեցել մ. թ. ա. 585 թ. մայիսի 28-ին:

61 Այս աստվածությունը նույնացվում է փոյուգական և լյուդիական Կյուբելեի հետ:

62 Այս գողտրիկ գրույցը ներշնչման աղբյուր է դարձել մեծ Աբովյանին, «Վերք Հայաստանի»-ի հայտնի առաջաբանը գրելիս:

63 Սարդեսը պարսիկները գրավել են մ. թ. ա. 546 թ.:

64 Կրեսոսի գերեվարումը Կյուրոսի կողմից հայտնի է նաև Մովսես Խորենացուն: Սակայն մեր պատմահայրը Կյուրոսի ամբողջ դերը այստեղ վերագրում է Արտաշես Տիգրանակային (Մ. Խորենացի, Բ, ժա—ժբ):

65 Ճակատագրով և աստվածների կայրությամբ է Հերոդոտոսը բացատրում պատմական շատ երևույթներ ու դեպքեր, ինչպիսիք՝ քաղաքների անկում, տերությունների կործանում, պատերազմներ, գործիչների մահ և այլն:

66 Բնագրում՝ τιμή: Ըստ հայ մատենագրության, բարձրագույն պաշտոնները հին Հայաստանում ևս կոչվել են պատիվ:

67 Լոքսիաս—Ապոլլոն աստծու անուններից մեկը:

68 Հունական դիցաբանության համաձայն, մոյրաները մարդկանց ճակատագիրը տնօրինող ոգիներն էին:

69 Բնագրում՝ κνάφος—նշանակում է՝ գզելու սանր. սա հին աշխարհում տանջանքի ենթարկելու գործիք էր:

70 Բնագրում՝ ἀγοραῖοι ἄνθρωποι: Այս դեպքում նկատի են առնված առևտրականները, շուկայի մարդիկ:

71 Բնագրում՝ ἐνεργαζόμεναι παιδίσκαι—բառացի նշանակում է՝ տանը իրենց արհեստով զբաղվող աղջիկներ: Այս դեպքում նկատի են առնված պոռնկությամբ զբաղվող կանայք:

72 Պենթոն—երկարության չափ, որը հավասար է 30,83 մետրի:

73 Այս երկիրը գտնվում էր Կենտրոնական Իտալիայում. այն, հավանաբար, լատինական հեղինակների մոտ հիշատակված Ումբրիան է:

74 Ասորեստանյան տերությունը գոյություն է ունեցել մինչև մ. թ. ա. 612 թ.: Ուստի ասորեստանյան թագավորության առաջացումը Հերոդոտոսը հաշվում է Թիգլաթպալասար Ա-ի (1116—1090) գահակալությանը անմիջապես նախորդած տարիներից: Բայց եթե հիմք ընդունենք Դեյոկեսի ապստամբությունը, ապա այդ թվականը անհրաժեշտ է տանել ևս 100 տարով ետ:

75 Մ. Խորենացու մոտ՝ Դեռվկին և Փռավորտիս (Ա, ԻԲ):

76 Այժմ Համադան. այլ աղբյուրներում Եկբատանա:

77 Բնագրում՝ σανδαράκινος: Սանդարակ կոչվում էր ծծմբային կարմիրը:

78 Դեյոկեսը մահացել է մ. թ. ա. 656 թվականին:

79 Բնագրում՝ Νίνος—Նինոս: Այսպես էր կոչվում թե՛ քաղաքը, թե՛ թագավորը:

80 Հայագետները վերջերս Պրոտոթուես (Πρωτοθύης) անունն առընչում են Մ. Խորենացու հիշատակած Պարույր Սկայորդուն (Գր. Ղափանցյան. Ուրարտուի պատմություն, Երևան, 1940, էջ 217: Ս. Տ. Երեմյան, Կիմերական և սկյութական ցեղերի արշավանքները և Ուրարտուի ու Ասորեստանի պայքարը քոչվորների դեմ, «Պատմա-բանասիրական հանդես» (այսուհետև՝ ՊԲՀ), 1968, № 2, էջ 89—115: «Հայ ժողովրդի պատմություն», հ. 1, Երևան, 1971, էջ 432—433: *И. М. Дьяконов*, История Мидии, М.—Л, 1956, с. 313):

81 Մեյոտիս լիճը (բնագրում՝ Μαιῆτις) Ազովի ծովն է:

82 Ուրանիա Ափրոդիտե—բառացի նշանակում է՝ Երկնային Ափրոդիտե: Տվյալ դեպքում պիտի հասկանալ փյունիկյան Աստարտե դիցուհու տաճարը:

83 Բնագրում՝ Ἐνάριοι (էնարիք). հավանաբար իրանական «անարիք» բառի աղավաղված ձևը: Սրանք համարվում էին հերմափրոդիտներ, զրկված առնականությունից: Էնարիների մասին եղած կարծիքների հանրագումարը ընդարձակ մատենագիտությամբ տե՛ս *А. И. Довитур, Д. П. Каллистов, И. А. Шишова*: Народы нашей страны в „Истории" Геродота", М., 1962, (այսուհետև՝ Народы нашей страны..), с. 305, примеч. 423):

84 Այդպիսի հատված Նինվեի գրավման մասին Հերոդոտոսը, հավանաբար, չի հասցրել գրելու, քանի որ իր երկում այդպիսին չկա:

85 Հունարեն նշանակում է՝ շուն:

86 Աքեմենյան Պարսկաստանում արքայի «աչքը» և «ականջը» համարվում էին արքունի հատուկ աստիճանավորներ, որոնք լրտես ոստիկանների դեր էին կատարում:

87 Շունը իրանական ցեղերի մոտ ձոնված էր բարձրագույն աստված Արամազդին և համարվում էր սրբազան անասուն (տես նաև ծանոթ. 85):

88 Բնագրում՝ τῶν πρώτων Μήδων:

89 Բիբլիոն. այն եգիպտական պապիրուս կոչված բույսից պատրաստած գրենական պիտույք էր, որն իբրև թուղթ էր օգտագործվում:

90 Մեդացիների տիրապետության տարիներն են՝ մ. թ. ա. 687—559 թթ., որի ընթացքում սկյութները տիրել են 28 տարի՝ 634—606 թթ.:

91 Բնագրում՝ Δαρεῖος—Դարեյոս:

92 Պարսկական ամբողջ տերությունը ցնցած այս ապստամբությունը տեղի է ունեցել 521—520 թթ.: Այդ մասին հիշատակություն կա նաև Բեհիստունի հայտնի արձանագրության մեջ:

93 Հերոդոտոսը հելլենների Զևսին նույնացնում է պարսկական Ահուրամազդայի հետ:

94 Տես ծանոթ. 82:

95 Հերոդոտոսն այս դեպքում շփոթում է արևի աստված Միթրային ջրի աստվածուհի Անահիտի հետ: Բաբելաիրանական սահմանային մարզում Անահիտը շփոթվում էր Իշտարի հետ. թվում է, թե Հերոդոտոսի տեղեկության աղբյուրը, տվյալ դեպքում, այդ վայրից է եղել:

96 Տիարա—պարսկական կիսակոնաձև գլխարկ:

97 Թեոգոնիա (θεογονία) բառացի նշանակում է՝ աստվածների ծագում: Այդպես էր կոչվում աստվածների ծագման մասին պատմող հիմնը:

98 Բնագրում՝ λεύκη, դեռ լրիվ պարզ չէ, թե խոսքն այս դեպքում ինչպիսի՞ հիվանդության մասին է. հավանաբար Հերոդոտոսը նկատի ունի այնպիսի հիվանդություն, որի ընթացքում մարդու մաշկը պատվում է սպիտակ թեփերով:

99 Սպիտակ ալավնիները ձոնված էին Իշտարին. պարսիկները այդ ալավնիներին համարում էին բորոտություն տարածողներ:

100 Հերոդոտոսի այս վկայությունից կարելի է հետևցնել, որ հույն պատմահայրը պարսկական անուններին ծանոթացել է հունարեն տառադարձությամբ:

101 Դիակը հողին հանձնելը պարսիկները համարում էին երկրի աստվածությունը պաշտելու ձևերից մեկը: Դիակը մոմով պատելու սովորությունը պարսիկները վերցրել են բաբելոնացիներից: Դիակը գազանների հոշոտմանը հանձնելու սովորությունը այդ ժամանակ գոյություն ուներ միայն հյուսիս-իրանական ցեղերի և մոգերի մոտ: Դիակները գազանների հոշոտմանը լքելու մոգերի սովորությունը ծագել է կասպիական ցեղերի թաղման ձևից (տե՛ս Strabo, XI, 9, 3, 8):

102 Պանիոնիոնի մասին տես Հերոդոտոսի Պատմության Ա գրքի 148-րդ գլխում:

103 Բնագրում համապատասխանաբար՝ ἄνω և κάτω (բառացի նշանակում է՝ վերին և ստորին):

104 Պանիոնիոն բառացի նշանակում է՝ հավահոնիական:

105 Դորիացիների ցեղախումբը հելլենական խոշոր ցեղախմբերից էր:

106 Ըստ Հերոդոտոսի, դորիական գաղթը ստիպեց աքայացիներին քաշվել դեպի հյուսիս, տեղահանելով հոնիացիներին, որոնք մինչ այդ ապրելիս են եղել Պատրայոսի շրջակայքում: Աքայացիների ճնշման տակ հոնիացիները ստիպված են եղել անցնել Փոքր Ասիա:

107 Պրիտանեյոն—հասարակական ջենք հին հունական քաղաքներում, որտեղ իր նիստերն էր գումարում քաղաքային համայնքի գերագույն օրգաններից մեկը՝ պրիտանների խորհուրդը:

108 Ապատուրիա տոնը աթենացիներն ամեն տարի նշում էին աշնան կեսերին. այն տևում էր երեք օր:

109 Փակագծերի մեջ առնված այս հատվածը մի շարք ուսումնասիրողներ համարում են հետագայի ընդմիջարկություն:

110 Բնագրում՝ Νέον τεῖχος. բառացի նշանակում է՝ նոր պարիսպ:

111 Այս քաղաքները գտնվել են Զմյուռնիայի և Պերգամոնի միջև, ծովափին կամ ծովակից ոչ հեռու: Այգիրոեսսա բնակավայրի տեղը դեռևս ճշգրիտ որոշված չէ:

112 Փոքր տարածությամբ մի կղզիախումբ Լեսբոս կղզու և փոքրասիական մայր ցամաքի միջև:

113 Կրետոսի յուդիական թագավորությունը նվաճելուց հետո Կյուրոսը մոտադրվեց նվաճել Բաբելոնը, Բակտրիան, սակերի երկիրը և Եգիպտոսը: Բաբելոնը նա նվաճեց 539 թ.: Բակտրիայի նվաճման թվականը անհայտ է: Այստեղ Կյուրոսը սատրապ նշանակեց Վըշտասպին, հետագայում թագավոր հռչակված Դարեհ Ա-ի հորը: 529 թ. Կյուրոսը սպանվեց սակ-մասսագետների դեմ կատարած արշավանքի ժամանակ:

114 Հին հույների սովորության համաձայն, աստծու տաճարում, պոհասեղանի կամ նրա արձանի մոտ ապաստանած մարդը համարվում էր անձեռնմխելի և գտնվում էր աստծու պաշտպանության տակ. ուստի և նրան հանձնելը դիտվում էր իբրև սրբապղծություն:

115 Բնագրում՝ πολιοῦχος. բառացի նշանակում է՝ քաղաքի տեր: Անտիկ աշխարհում քաղաքներն ունեցել են իրենց հովանավոր աստվածներին:

116 Բնագրում՝ Τυρσηνία:

117 Խոսքը Իսպանիայի մասին է:

118 Տարտեսսոս—հնագույն քաղաք Իբերական թերակղզում:

119 Կոր նավերը բեռնատար էին և դանդաղընթաց: 50 և 30 թիակի ռազմանավերն արագընթաց էին:

120 Այս ավանդությունից առաջացել է Անակրեոնի մոտ պահպանված հետևյալ ասույթը. «Ես չեմ տիրելու Տարտեսսոսում 150 տարի»:

121 Օյնուսսա կոչված կղզիները գտնվում են Քիոսի և փոքր ասիական մայր ցամաքի միջև:

122 Հնում Կյուռնոս կոչվել է Կորսիկա կղզին:

123 Կադմեյան հաղթանակ արտահայտության հիմքում ընկած է հետևյալ պատմությունը: Կադմոսի շառավիղ Էդիպ արքայի որդիներ Պոլինիկեսը և Ետեոկլեսը իրար հետ մենամարտեցին Թեբեում իշխելու համար և մենամարտում սպանեցին իրար: «Կադմեյան հաղթանակ» արտահայտությունը գործածում էին շեշտելու համար, որ երկու կողմերն էլ կործանվում են:

124 Բնագրում՝ ἐρῆμον:

125 Հոեգիոն. բնագրում՝ Ῥήγιον—քաղաք Հարավային Իտալիայում:

126 Այստեղ ձեռագրում կա բաց թողում:

127 Ագիլլա—հնագույն քաղաք Էտրուրիայում:

128 Օյնոտրիան գտնվում է Հարավային Իտալիայում (պատմական շրջանի Լուկանիան և Բրուտտիոնը):

129 Սարդո—այդպես է հնում կոչվել Սարդինիա կղզին:

130 Մինոս—Կրետեի առասպելական թագավոր և օրենսդիր. որն իշխել է այդ կղզում դեռևս Տրոյական պատերազմից առաջ: Նրա անվան հետ է կապված Լաբիրինթոսի և Մինոտավրոսի մասին առասպելը:

131 Մ. թ. ա. XII—XI դդ. թվագրվող միկենյան սկահակների վրա պատկերված են աքայացի ռազմիկներ, որոնք կրում են նույնպիսի ռազմական հանդերձանք, ինչպիսին նկարագրում է Հերոդոտոսը:

132 Այսպիսին է աքայացի վահանակիրների նկարագրությունը նաև Հոմերոսի «Իլիական» պոեմում («Իլիական», III, 330—337):

133 Սապարեպ—բնագրում՝ σάδιον—ստադիոն, հավասար է 185 մ:

134 Նինոս քաղաքը նույն Նինվեն է:

135 480 սապարեպը հավասար է շուրջ 89 կմ: Հերոդոտոսի հաղորդած այս չափերը չափազանցված են թվում. կատարված պեղումների տվյալների համաձայն, Բաբելոն քաղաքի շրջագիծը չի գերազանցել 18 կմ:

136 Դիոդորոսը Բաբելոնի պարիսպների շինարարությունը նկարագրում է հետևյալ կերպ. «Իսկ Սեմիրամիսը, բնավորությամբ լինելով մեծագործությունների ծարավ և ձգտելով իր փառքով գերազանցել նախորդած գահակալին, մտադրվեց Բաբելոնիայում կառուցել քաղաք. և բոլոր վայրերից հավաքելով ճարտարապետներին և արհեստավորներին և այլ անհրաժեշտ պատրաստությունները տեսնելուց հետո նա ամբողջ թագավորությունից ի մի հավաքեց երկու հարյուր բյուր մարդկանց, աշխատանքները կատարելու համար: Եփրատ գետը առնելով մեջտեղ, նա քաղաքը շրջափակեց բազմախիտ և խոշոր աշտարակներ ունեցող երեք հարյուր ասպարեպ (երկարությամբ) պարսպով, ինչպես պատմում է Կտեսիաս Կնիդացին, իսկ Կլեյտարքոսը և հետագայում Ալեքսանդրի հետ Ասիա անցածներից ոմանք գրում են, թե (պարսպի երկարությունը եղել է երեք հարյուր վաթսունհինգ ասպարեպ. և ավելացնում են, թե նա ձգտեց ասպարեպների թիվը համապատասխան և հավասար դարձնել տարվա օրերին: Թրծած աղյուսները կուպրով ծեփելով պարիսպ կառուցեց, որի բարձրությունը, ինչպես Կտեսիասն է ասում, հիսուն գրկաչափ բարձրությամբ, իսկ ինչպես հետագա (հեղինակներից) ոմանք գրում են, հիսուն կանգուն, իսկ լայնքը ավելի, քան պետք էր երկու ռազմակառքի ընթացքի համար. աշտարակների թիվը երկու հարյուր հիսուն էր, իսկ դրանց բարձրությունը և լայնքը համապատասխանում էր պարիսպների հաստահեղույս կառուցվածքին: Պետք չէ կարմանալ, որ պարսպի այսքան երկարության համեմատ փոքրաթիվ աշտարակներ կառուցեց. քանի որ երկար տարածության վրա քաղաքը շրջափակված էր ճահիճներով, ուստի այդ վայրերում նա որոշեց աշտարակներ չկառուցել, համարելով, որ ճահիճ-

ներն անհրաժեշտ բնական ամրություն են ընձեռում. իսկ բնակարանների և պարիսպների միջև ջուրջանակի ճանապարհ թողեց, երկու պլեթրոն լայնությամբ» (Diodor., II, 7, 2—4):

137 Հունարեն արտասանությամբ՝ Եվիֆրատես:

138 Շշփոթել այժմյան Կարմիր ծովի հետ: Այդ անվան տակ անտիկ հելլենները հաճախ հասկացել են Պարսից ծոցը:

139 Բելը (բնագրում՝ Βῆλος—Բելոս) Ասորեստանի գլխավոր աստվածություններից մեկն էր:

140 Հույները հնում «քաղդեացիներ» (Χαλδαῖοι) անվան տակ հաճախ հասկացել են Բաբելոնի քրմերին, որոնք զբաղվում էին նաև մոգությամբ և աստղաբանությամբ: Տվյալ դեպքում Հերոդոտոսը ևս այդ բառն օգտագործում է այս նույն իմաստով:

141 Խոսքը Կյուրոսի արշավանքների ժամանակի մասին է:

142 Այդ գործը մեզ չի հասել:

143 Հայկական ավանդության մեջ՝ Շամիրամ:

144 Հերոդոտոսը Նիտոկրիս թագուհուն է վերագրում Նաբուգոդոնոսոր Բ-ի (605—562) կառույցները:

145 Նինվե քաղաքը հույները կոչել են նաև Նինոս:

146 Լաբյունետոսը (բաբ.՝ Նաբունայիդ) ծագումով արամեացի էր Խարրանից. ևս չէր կարող Նիտոկրիս թագուհու որդին լինել:

147 Գյունդես գետը այժմ կոչվում է Դիալա:

148 Մեդիմնոս—Հին Հունաստանում տարողության չափ, որը հավասար էր 52,5 լիտրի: Քոյնիկս—տարողության չափ, հավասար 1,1 լիտրի:

149 Այսինքն՝ դեպի հարավ-արևելք:

150 Դեմետրա—հողի հունական աստվածուհի:

151 Այս հատվածը՝ βίκους φοινικηίους... οἴνου πλέους ընդհանրապես սխալ են թարգմանել: Հ. Հ. Մանանդյանը («Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության», հ. 1, Երևան, 1944, էջ 58—60), ինչպես նաև եվրոպացի և ռուս թարգմանիչները թարգմանել են՝ «գինով լեցուն արմավենու տակառներ»: Նրանք սխալ են հասկացել βίκος բառը և այն թարգմանել՝ տակառ: Նրանց շփոթեցրել է φοινικηίους ածականը: Հունարենի լավագույն բառարանները, ինչպես նաև Հունական Մեծ հանրագիտարանը, վկայակոչելով սույն հատվածը, նշում են, որ βίκος նշանակում է՝ թրծված կավե մեծ անոթ, որը հնում օգտագործել են գինի և այլ հեղուկներ պահելու համար: Ուստի այն երբեք չէր կարող «տակառ» նշանակել: Ինչ վերաբերում է φοινικηίους ածականին, ապա այն այստեղ նշանակում է ոչ թե «արմավենուց», այլ «կարմիր», ինչպիսի նշանակությամբ այն հաճախ օգտագործել են Հոմերոսը և Քսենոփոնը: Հետևաբար, Հերոդոտոսը խոսում է ոչ թե արմավենուց պատրաստած տակառների, այլ կարմիր կարասների մասին: Հերոդոտոսի այլ ձեռագրերում կա βίκους φοινικηίου... οἴνου πλέους տարընթերցվածը, որտեղ φοινικηίου ածականը վերաբերում է ոչ թե βίκους, այլ οἴνου բառին: Այս դեպքում ևս այն ավելի շուտ կարող է նշանակել «կարմիր», քան թե «արմավ», քանի որ չի կարելի ենթադրել, որ Հայաստանում, որտեղ արմավը չի էլ հանդիպում, արմավից գինի պատրաստեին: Ակներև է, որ այդ գինին պատրաստում էին Հայաստանում մշակվող լավագույն խաղողից, որի առատ բերքի մասին բազմիցս վկայում է Ստրաբոնը (տե՛ս Ս. Մ. Կրկյաշարյան, Հին Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների պատմության դրվագներ, Երևան, 1970, էջ 161—165): Գ. Ա. Ստրատանովսկին (*Геродот*, История, с. 73) թարգմանում է՝ «փյունիկյան գինի», որը նույնպես անընդունելի է, քանի որ Հայաստանից չէին կարող փյունիկյան գինի արտահանել:

152 Խիտոն—հին հունական ներքնաշապիկ, որը հագնում էին մերկ մարմնի վրա:

153 Այս սովորության մասին այլ աղբյուրներից ոչինչ հայտնի չէ:

154 Բնագրում՝ τέμενος—տեմենոս:

155 Բնագրում՝ Ἀράξης—Արաքսես:

156 Իստրոս հնում կոչվել է Դանուբ գետը:

157 Թվում է, թե այստեղ Հերոդոտոսի պատմածի մեջ շփոթված են հայկական Արաքսը և Միջին Ասիայի Օքսուսը կամ Յաքսարտեսը: Եթե այս պարբերության առաջին մասում խոսքը միջինասիական գետի մասին է, ապա երկրորդ մասում խոսքն առավելապես վերաբերում է հայկական Արաքսին: Այս շփոթը կարելի է բացատրել նրանով, որ Հերոդոտոսը այս դեպքում օգտվել է երկու տարբեր խումբ աղբյուրներից, որոնցում հիշատակվելիս են եղել նույնանուն, բայց, ըստ էության, տարբեր գետեր: Այս մասին մանրամասն տե՛ս Народы нашей страны..., с. 181—185, примеч. 37, 38:

158 Խոսքը Միջերկրական ծովի մասին է:

159 Հյուստասպես (պրակ. և հայերենում Վշտասպ)—Զրադաշտի հետևորդ, որը եղել է Մարգիանայում ծավալված ժողովրդական ապստամբական շարժման կողմնակից:

160 Կարդալով Հերոդոտոսի այս տողերը, ակամայից հիշում ես Խորենացու (Ա, իդ) խոսքը Տիգրանի մասին, թե նա «...պակաս մեր բարձրացոյց, և զընդ լծով կացեալսս լծադիրս և հարկապահանջս կացոյց բակմաց»:

161 Հին հույները բոլոր ոչ հելլեններին համարում էին բարբարոս:

162 Այդ կրուցներից մեկն էլ պահպանվել է Քսենոփոնի «Կյուրոպեդիա» երկում, որտեղ Կյուրոսը հանգիստ մահանում է մահճում, իր սիրելիներով շրջապատված, նրանց բարոյախոսական խրատներ կարդալիս: Ճիշտն այն է, որ Կյուրոսը սպանվել է ռազմի դաշտում մ. թ. ա. 530 թ.:

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

1 Իր մատյանի երկրորդ գրքում Հերոդոտոսը, առանց կոպիտ սխալների, շարադրում է Եգիպտոսի պատմությունը, սկսած VII դ. կեսերից: Սաիսյան շրջանի (VII—VI դդ.) համար Հերոդոտոսի հաղորդած տեղեկությունների նշանակությունը դժվար է գերագնահատել (տե՛ս *С. Я. Лурье*, Геродот, М.—Л., 1947, с. 122):

2 Բառն, իրոք, փոյուգերեն է և հանդիպում է փոյուգական վիմական արձանագրություններում:

3 Հերոդոտոսն այստեղ հույների դարբնության աստված Հեփեստոսին նույնացրել է եգիպտական Պտահ աստվածության հետ, որը նույնպես համարվում էր դարբինների հովանավորը:

4 Հելիոս՝ արև, պոլիս՝ քաղաք: Հելիուպոլիս բառացի նշանակում է՝ «Արևի քաղաք»:

5 Բնագրում՝ νομός:

6 Պլինթինետես ծովախորշը կապում էր Եգիպտոսի արևելյան սահմանը, իսկ Սերբոնիս լիճը՝ արևմտյան սահմանը:

7 Նկատի է առնված նավարկումը Նեղոս գետի հոսանքն ի վեր:

8 Հյուսիսի ծովը այս դեպքում Միջերկրականն է:

9 Լիբիա ասելով Հերոդոտոսն ընդհանրապես նկատի ունի Աֆրիկայի մայր ցամաքը:

10 Բնագրում՝ καταβούπων: Այստեղ Հերոդոտոսը նկատի ունի առաջին ջրվեժները Սիենի (այժմ Ասուան) մոտ:

11 Բնագրում՝ ἐτησίαι. բառացի նշանակում է՝ տարեկան, ամենամյա: Նման տեսակետ արտահայտել է Թալես Միլետացին:

12 Այսպիսի բացատրություն տվել է Եվփիմենես Մասսալիացին (մ. թ. ա. VI դ. վերջ): Նա, նավելով Աֆրիկայի արևմտյան ծովափով, հասել է մինչև Սենեգալ և կարծել է, թե Նեղոսի ակունքը գտնվում է Օվկիանոսում:

13 Այս կարծիքը, որը Հերոդոտոսը ժխտում է, արտահայտել է մատերիալիստ փիլիսոփա Անաքսագորասը (500—428 մ. թ. ա.):

14 Հերոդոտոսի այս խոսքերը վկայում են, որ արդեն այդ ժամանակ ինչ-որ կասկածներ են եղել Հոմերոսի անձի վերաբերյալ:

15 Իստրոս—այժմ՝ Դանուբ:

16 Եթովպացիների թագավորությունը, Մերոե մայրաքաղաքով, գոյատևել է մինչև մ. թ. 355 թվականը:

17 Ինս—ենթադրվում է եգիպտական Ամոն-Ռա աստվածությունը:

18 Դիոնիսոս—ենթադրվում է եգիպտական Օսիրիս աստվածությունը:

19 Այստեղ նկատի է առնված Միջերկրականի ափերկրյան ծովափը:

20 Հերակլյան սյուներ—այսպես էին հնում հելլենները անվանում Ջիբրալթարի նեղուցը:

21 Այս նույն արտահայտությունը հանդիպում է Մ. Խորենացու (Ա, ԺԲ) մոտ. «Այդ հարաւային արեգակնաձեւ լեառն, սպիտակափառ ունելով գագաթն, ուղղորդ յերկրէ բուսեալ, երեքօրեայ ... քաջագաւուոյ առն շրջապատեալ ճանապարհաւ»:

22 Հերոդոտոսի այս պատկերացումը, ինչ խոսք, պիտի համարել սխալ:

23 Հերոդոտոսի այս հաղորդումը կասկածի տակ է դնում նրա Հայաստան այցելած լինելու մասին Հ. Հ. Մանանդյանի ենթադրությունը («Բնական տեսություն հայ ժողովրդի պատմության», հ. Ա, Երևան, 1944, էջ 362): Եթե նա իսկապես այցելած լիներ Հայաստան, ապա Քսենոփոնի նման (Xenoph., Anab., IV, 5, 25: **Քսենոփոն,** Անաբասիս, թարգմ. Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1970, էջ 97) նա ևս կնկատեր, որ հայկական գյուղերում ևս մարդիկ իրենց կենդանիների հետ ապրում են նույն տանը:

24 Բնագրում ὄλυρα. այլ տեղ չի հանդիպում. թարգմանել՝ ենք «աճար»:

25 Բնագրում ζεία.հավանաբար նշանակում է «աճար»:

26 Հավանաբար համապատասխանում է մեհենագրերին:

27 Բառացի նշանակում է՝ ժողովրդական:

28 Այդ մասին տես նաև Հերոդ., գիրք II, 92:

29 Եպափոսը Ապիս անվան հունական ձևն է:

30 Այս մասին տես Հերոդ., գիրք III, 28:

31 Չեռագրում կա բաց թողում, որտեղ ուսումնասիրողները ենթադրում են, թե պետք է լիներ Իսիս աստվածուհու անունը:

32 Հերոդոտոսն այստեղ Արսենիին նույնացնում է եգիպտական Ասոր աստվածուհու հետ, որի անունից էլ քաղաքը կոչվում էր Ասորբեքիս: Այդ անվան տակ պաշտվում էր Իսիսը:

33. Այստեղ խոսքը արևի եգիպտական աստված Ամոնի պաշտամունքի և սրբազան խոյի պտտաբերման մասին է:

34 Ամփիտրիոնը և Ալկմենեն եղել են Պերսևսի թոռները: Պերսևսի եգիպտական ծագման մասին տե՛ս Հերոդոտոս, գիրք II, 91:

35 Ամասիս—Եգիպտոսի թագավոր (560—526):

36 Հին Հունաստանում հռչակված գուրջակ Մեռամպասը տոնախմբություններից մեկի ժամանակ լիրկել էր Տիրինթոսի թագավոր Պրետոսի դստերին խելահեղությունից և դրան իբրև հատուցում իր և իր եղբոր համար պահանջել էր կնության վերցնել նրա դստերին ու ստանալ նրա թագավորության մի մասը:

37 Դոդոնե—հնագույն քաղաք Էպիրոսում. հայտնի էր Զեուսին նվիրված իր հռչակավոր պատգամատնով, որտեղ և պաշտվում էր սրբազան կաղնին:

38 Այսպիսի եզրահանգման համար Հերոդոտոսին հիմք է տվել Θεός և θέοντες բառերի արտաքին հնչյունային նմանությունը: Նշենք, որ Հերոդոտոսի այս բացատրությունը գիտական չի կարող լինել, քանի որ հիշյալ բառերը ստուգաբանական ոչ մի առնչություն չունեն իրար հետ:

39 Հետևաբար, ըստ Հերոդոտոսի, հոմերոսյան և հեսիոդոսյան պոեմները ստեղծված պիտի լինեն մ. թ. ա. IX դարի կեսերին:

40 Խոսքը առասպելական պոեմներ Օրֆեոսի, Մուսայոսի և Լինոսի մասին է:

41 Թեսպրոտիա—հունական մարզ Էպիրոսում:

42 «Բարբարոս» ասելով այս հատվածում Հերոդոտոսը հասկանում է «հելլեններին հետք, ստար»:

43 Հելիոս—արևի աստվածություն. պաշտվել է նաև Հայաստանում:

44 Տես գիրք II, 40:

45 Բնագրում λυχνοκαΐαι բառացի նշանակում է՝ ջահ վառելու տոն: Մենք թարգմանեցինք՝ «ճրագալույց», թեև այս ավելի շուտ հայ եկեղեցական ծեսերի թվին է պատկանում:

46 Իսիս—ճահճուտներում ապրող և տունքավորների (տրագիների) ընտանիքին պատկանող թռչուն. այն համարվում էր հին եգիպտացիների սրբազան թռչունը:

47 Իքնևոն (կամ իքնևոնես). կոչվում է նաև «փառավոնի մուկ»: Ոչ խոշոր գիշատիչ կաթնասուն, պատկանում է մշկակատուների ընտանիքին:

48 Բնագրում κροκόδειλος = կոկորդիլոս: Այդպես էին հոնիացիները անվանում հասարակ մողեսներին:

49 Բնագրում λεπιδωτός. բառացի նշանակում է՝ թեփոտավոր: Անհետացած ձկան տեսակ:

50 Բնագրում χηναλώπηξ. բառացի նշանակում է՝ սագաղվես: Ըստ Լիդել-Սկոտ բառարանի՝ chenalopex aegyptiaca. ըստ Դալորեցկու բառարանի՝ Anas tadorna—утка пеганка.

51 Բնագրում φοῖνιξ—փոյնիկս:

52 Այստեղ խոսքը հավանաբար մորեխների առանձին տեսակի մասին է:

53 Բնագրում κρέξ—կրեկս. ոմանց կարծիքով, դա կոցար թռչուն է, այլոց կարծիքով՝ մարգահավը:

54 Այս հատվածից հետևում է, որ Հերոդոտոսը չի շրջել ամբողջ Եգիպտոսը, քանի որ այդ երկրի որոշ, հատկապես արևմտյան, մասերում մշակվում է որթատունկը:

55 Լինոսի վաղաժամ մահվան մասին ողբերգ, որը կատարում էին Հունաստանում Լինոսի տոնախմբության ժամանակ, իսկ Փյունիկիայում Ադոնիսի տոնախմբության ժամանակ, ողբալով վերջինիս մահը:

56 Հավանաբար նկատի է առնված Օսիրիսը:

57 Կասիա—բուժիչ և հոտավետ բույս, վայրի դարչին:

58 Բնագրում κόμμι (gum arabique):

59 Սիլիկիպրիոն, կիկի—սիկկանեփի տարատեսակ:

60 Բնագրում ἀκάνθη—ականթե (acacia Nilotica.

61 Նավկրատիս—միլետացիների հիմնադրած հելլենական քաղաք Նեղոսի Կանոբոսյան գետաբերանի վրա:

62 Խոսքը եգիպտական Պտահ աստծու տաճարի մասին է:

63 Բնագրում Σέσωστρις. Դիոդորոսի մոտ (I, 55, 2) Σεσώσις: Սա եգիպտոսի Ռամսես Բ փարավոնն է (մ. թ. ա. 1283—1217 թթ.), հայտնի իր նվաճումներով ու ռազմական արշավանքներով, ինչպես նաև խեթերի դեմ մղած պատերազմներով:

64 Չշփոթել այժմյան Կարմիր ծովի հետ: Այստեղ Հերոդոտոսը նկատի ունի Հնդկաց օվկիանոսի Սոմալյան ափը:

65 Հերոդոտոսը Սեսոստրիսին շփոթել է Եգիպտոսի մեկ այլ փարավոնի՝ Պսամմետիքոս Ա-ի հետ, որը պատերազմել է սկյութների և թրակացիների դեմ Պաղեստինում, բայց երբեք չի արշավել սկյութների երկիրը: Այս նույն շփոթը նկատելի է նաև Դիոդորոսի մոտ (I, 55, 2—5):

66 Մակրոններին դեռևս հիշատակում է մ. թ. ա. VI դ. մատենագիր Հեկատեոս Միլետացին: Մակրոնների մասին առավել ընդարձակ տեղեկություններ հաղորդում է Քսենոփոն Աթենացին (Anabasis IV, VIII, 1—8: Քսենոփոն, Անաբասիս, էջ 105):

67 Այսպիսի երկու բարձրաքանդակ հայտնաբերվել է Իզմիրի մոտ, Կարաբելում և հնադարյան Սիպիլոսում, որոնք, սակայն, խեթական են և ոչ թե եգիպտական (*Геродот*, с. 512, примеч. 114):

68 Բնագրում πόλος և γνώμων. նշանակում է՝ արևի ժամացույց: Գնոմոնը ուղղահայաց մի ձողիկ էր, որի շուքը ընկնում էր երկնակամարը խորհրդանշող ուռուցիկ մակերեսի, պղոսի վրա: Համաձայն ավանդության, արևի այդ ժամացույցը Բաբելոնից Հունաստան բերել էր Անաքսիմանդր Միլետացին (մ. թ. ա. VI դ.):

69 Սա, հավանաբար, ոչ թե հատուկ անուն է, այլ եգիպտական թագավորների «փարավոն» տիտղոսի աղավաղված ձևը:

70 Բնագրում՝ Ἐρυθρὴ βῶλος= Կարմիր հող, կարմիր կավ, կարմիր մոխիր:

71 Խոսքը Սպարտայի թագավոր Մենելաոսի կնոջ, գեղեցկուհի Հեղինեի մասին է, որի պատճառով, ըստ հոմերոսյան պոեմների, ծագել է Տրոյական պատերազմը:

72 Խոսքը Տրոյայի արքա Պրիամոսի որդի Պարիսի մասին է, որը կրում էր նաև Ալեքսանդր անունը:

73 Տեկրացի—նույնն է թե՝ տրոյացի:

74 Հոմերոս, «Իլիական», IV, 289—292:

75 Հոմերոս, «Ոդիսական», IV, 227—230:

76 Հոմերոս, «Ոդիսական», VI, 351—352:

77 «Կիպրականք» պոեմի բովանդակությունը կազմում էր Տրոյական պատերազմի նախապատմությունը: Այդ երկը մեզ չի հասել:

78 Համապատասխանաբար՝ Իսիսին և Օսիրիսին:

79 Հերոդոտոսը այստեղ խիստ շփոթել է Եգիպտոսի տարեգրությունը: Ռամպսինիտոսը (Ռամսես Բ) եղել է XIX հարստության (մ. թ. ա. 1345—1200 թթ.) փարավոն, իսկ Քեոպսը՝ IV հարստության (2600—2480): Հետևաբար, Քեոպսը, ոչ թե հաջորդել է Ռամպսինիտոսին, այլ թագավորել է նրանից ավելի քան մեկ հազարամյակ առաջ:

80 Այս վրայից հետևում է, որ Քեոպսը մեծապես սահմանափակել է քրմերի և տաճարների եկամուտները, ուստի և քրմերը այդքան բացասական են խոսում նրա մասին:

81 Պեթրոն—երկարության չափ, որը հավասար է 1/6 ասպարեզի, այն է՝ 30,83 մետրի:

82 Տաղանդը կշռում էր 26,2 կգ և արժեր 6 հազար դրաքմե. ուստի և, Հերոդոտոսի հաղորդման համաձայն, այդ բուրգի կառուցման վրա ծախսվել էր մոտավորապես 42 տոննա արծաթ, կամ 9 միլիոն դրաքմե: Այս թվերը, հավանաբար, չեն համապատասխանում իրականությանը, քանի որ այդ բուրգի վրա ծախսված պետք է լինեն շատ ավելի խոշոր միջոցներ, քան նշված է Հերոդոտոսի մոտ:

83 Քեոպսը, իրականում, թագավորել է 24 տարի. նրան հաջորդել է նրա եղբայրը, Դեդեֆրեները, որից հետո թագավորել է Քեոպսի որդի Քեֆրենը:

84 Սա, հավանաբար, հիշողություն է Եգիպտոսում իշխած հյուքսոսների արքայատոհմի մասին, որոնք համարվում էին հովիվների ցեղեր:

85 Հերոդոտոսը նկատի ունի Օսիրիսին:

86 Եթովպական քարը նույն մեր գրանիտն է, որձաքարը:

87 Եկոպոսը (բնագրում Αἰσωπος) մեղադրվեց Դելֆիի տաճարից ոսկյա գդալանալու մեջ, որի համար էլ դատապարտվեց մահվան, ժայռից ցած գլորելու միջոցով: Այդ սպանության համար Դելֆիի բնակիչները պարտավորվել են դրամական տուգանք վճարել:

88 Այստեղ Հերոդոտոսը (ավելի ճիշտ՝ նրա տեղեկատուն) միանգամից թռիչք է կատարում IV հարստությունից (մ. թ. ա. III հազարամյակի կեսեր), դեպի այսպես կոչված եթովպական տիրապետությունը Եգիպտոսում (XXV հարստություն, VIII դ. վերջ—VII դ. առաջին կես):

89 Ըստ եգիպտական մատենագիր Մանեթոնի ցուցակի, եթովպացի թագավորները՝ Սաբակոն, Սեբիքոս և Տարակոս (Աստվածաշնչում՝ Տիրհակա) կազմել են Եգիպտոսի փարավոնների XXV հարստությունը:

90 Արուրա (ἄρουρα) բառացի նշանակում է՝ վարելահող, դաշտ (հմմտ. «արտ»): Այն միաժամանակ որոշակի տարածությամբ հողակտոր է, հավասար մոտավորապես 1/5 հեկտարի:

91 Սա հայկական և աստվածաշնչային ավանդության մեջ հիշատակված Սենեքերիմն է:

92 Այս նույն պատմության տարբերակը կա Աստվածաշնչում, որտեղ նույն այս Սենեքերիմը, Երուսաղեմը պաշարելիս, ենթարկվում է նույնպիսի ադետի (Դ Թագավորությանց, ԺԸ—ԺԹ):

93 Բնագրի λογοποιός բառը, որը հետագայում փոխարինվել է λογογράφος (լոգոգրաֆ) բառով, մենք թարգմանել ենք «պատմիչ»: Լոգոգրաֆ բնորոշումը պատկանում է մ. թ. ա. V դ. հելլեն խոշորագույն պատմիչ Թուկիդիդեսին: Ի հակադրություն էպիկական գրողներին և պոետներին, Թուկիդիդեսը լոգոգրաֆներ է անվանել այն արձակագիր պատմիչներին, որոնք ստեղծագործել են մ. թ. ա. VI—V դդ., մինչև Հերոդոտոսը:

94 Հեկատեոս Միլետացի (մ. թ. ա. 540—489): Ծնվել է Միլետ քաղաքում: Եղել է հույն-պարսկական պատերազմների ժամանակակիցը: Շրջագայել է բազմաթիվ երկրներ և իր դիտումները ջարադրել է «Ծագումնաբանություն» (4 գրքով) և «Երկրի նկարագրություն» (2 գրքով) գործերում: Մեկ համար առավել կարևոր է «Երկրի նկարագրությունը», քանի որ դրանում որոշակի տվյալներ են եղել նաև հնագույն շրջանում Հայկական լեռնաշխարհում ապրած ցեղերի մասին: Այդ տվյալները հետագայում օգտագործել են Դիոդորոս Սիկիլիացին, Ստրաբոնը և ուրիշներ:

95 «Պիրոմիս» եգիպտական բառ է և նշանակում է՝ «գեղեցիկ և առաքինի մարդ»:

96 Տե՛ս Հերոդոտոս, գիրք II, 43

97 Խոսքը Եփեսոսում կառուցված Արտեմիսի և Սամոսում կառուցված Հերայի տաճարների մասին է:

98 Բնագրում παλαιστή. երկարության չափի միավոր, որը հավասար է 7,7 սմ:

99 Մինա. դրամի և կշռի միավոր հավասար էր 1/60 տաղանդի:

100 Ապիսը եգիպտական աստվածություն էր, միաժամանակ պաշտամունքի առարկա դարձած սրբազան եզան անունը:

101 Էսքիլոս (կամ՝ Էսքիլես)—հին Հունաստանի խոշորագույն ողբերգակ բանաստեղծներից: Եղել է հույն-պարսկական պատերազմների գործուն մասնակից:

102 Տրիերա—հունական ռազմանավ, երեք շարքի վրա տեղադրված թիակներով:

103 Սա Պսամմետիքոս Բ փարավոնն է:

104 Էլեյա—մարզ Պելոպոննեսոսում, ուր կազմակերպվում էին Օլիմպիական մրցումները:

105 Այս մարդերը գտնվել են Նեղոսի դելտայի արևմտյան մասում:

106 Այս մարդերը գտնվել են Նեղոսի դելտայի արևելյան մասում:

107 Այդ նշանակում է, որ տվյալ հողակտորը ամեն տարի ունենում էր նոր տեր, իսկ հին տերը դառնում էր մեկ ուրիշ հողակտորի տեր:

108 Հերոդոտոսն այստեղ նկատի ունի Օսիրիսին:

109 Թեսմոփորիա—կրոնական տոնախմբություն, որը կատարում էին աթենուհի կանայք:

110 Երկարության չափ, որը հավասար է 38,53 սմ:

111 Նավկրատիս քաղաքը, հավանաբար, հիմնված է եղել ավելի վաղ, Նեքոսի կամ Պսամմետիքոսի ժամանակ. իսկ Ամասիսի օրոք այն մեծապես բարգավաճում է:

112 Ամփիկտիոնիա—հունական քաղաք-պետությունների կրոնական դաշինք, ընդհանուր սրբավայրում համատեղ կրոնական ծեսեր կատարելու, ինչպես նաև վիճելի հարցերը կարգավորելու համար: Առավել կարևորներն էին Դելփիի և Դելոսի ամփիկտիոնիաները: Այդ դաշինքի մասնակից պետությունները կոչվում էին ամփիկտիոններ:

ԳԻՐՔ ԵՐՐՈՐԴ

1 Թալեյա—ինը մուսաներից մեկի՝ կոմեդիայի մուսայի անունը:

2 Կամբյուսեսի ամուսնությունը եգիպտական գահի օրինական ժառանգորդուհու հետ կոչեցեցներ Կամբյուսեսի հավակնությունները եգիպտական գահի նկատմամբ:

3 Այստեղ Հերոդոտոսը, հավանաբար, նկատի ունի փղշտացիներին:

4 Հելլեն դիցաբանության մեջ Տյուփոնին էր վերագրվում հրաբուխների գործունեությունը: Զևսը նրան ցած է նետում երկնքից և նա ընկնում է հրաբուխների մեջ: Տյուփոնը Եգիպտոսում նույնացվել է Սեթ աստվածության հետ:

5 Ուրանիա—Ափրոդիտեի մականուններից մեկը. բառացի նշանակում է՝ Երկնային:

6 Տիարան պարսկական խույր էր:

7 Այսպես պատկերված են պարտվածները Դարեհ Ա-ի թողած Բեհիստունյան արձանագրության պատկերաքանդակներում:

8 Բնագրում՝ τῶν ἰχθυοφάγων—իքթիոֆագների:

9 Այսինքն՝ դահիճներին:

10 Հերոդոտոսն այստեղ հաղորդում է պարսկական պաշտոնական տեսակետը: Իրականում Կամբյուսեսը իր եղբայր Սմերդիսին (նույն ինքը՝ Բարդիային) սպանել էր դեռևս Եգիպտոս արշավելուց առաջ: Այդ ժամանակ, օգտվելով Կամբյուսեսի դեմ նվաճված երկրներում ծագած դժգոհություններից, մոգ Գաումատան, իրեն հայտարարելով Կամբյուսեսի եղբայր, 522 թ. ապրիլի 2-ին սեպտեմբերում է թագավորական իշխանությունը: Գաումատայի հակառակորդները եղել են Դարեհ Վշտասպը և Արևելքի ավագանին: Մոգը սպանվում է 522 թ. սեպտեմբերի 29-ին:

11 Այստեղ խոսքը ընկնավորության (էպիլեպսիա) մասին է:

12 Հմմտ. Հերոդոտոս, գիրք 1, 207:

13 Փյունիկյան աստված Պատայիկոսը, ինչպես նրան անվանում են հելլենները, նույն եգիպտական Պտահ (կամ Պատահ) աստվածությունն է, որը հելլենները նույնացրել են Հեփեստոսի հետ: Այն պատկերվում է թզուկի կերպարանքով:

14 Բառը առաջացել է սանսկրիտերեն «kala» (սև) բառից:

15 Տրիերա—հունական ռազմանավ, երեք հարկի վրա տեղավորված թիավարներով:

16 Կարպաթոս—կղզի, որը գտնվում է Կրետեի և Հռոդոսի միջև:

17 Բնագրում՝ εἴριον ἀπό ξύλου—ծառի բուրդ:

18 Եպիդավրոս—մարզ Պելոպոնեսոսում:

19 Բնագրում՝ ἐν τῇσι στοῇσι—սյունասրահներում.

20 Սիփնոս—Կիկլադյան կղզիներից մեկը Էգեյան ծովում, ոսկու և արծաթի հանքերով:

21 Էգինա—կղզի հունական ծովափի մոտ, Աթենքից ոչ հեռու:

22 Այս դեպքերի պատմությունը Հերոդոտոսը ընդհատել էր III գրքի 38-րդ գլխում:

23 Այս դեպքերի մասին պատմում է նաև Բեհիստունի եռալեզվյան հայտնի արձանագրությունը որը թողել է Դարեհը.

24 Սիրիայում Ագբատանա քաղաք գոյություն չի ունեցել:

25 Ստրաբոնի (XVI, 14, 15) հաղորդման համաձայն, այս Հյուսառնեսի սերնդից է եղել Հայաստանում III դ. իշխած Երվանդ Վերջինը: Բեհիստունի եռալեզվյան արձանագրության մեջ համապատասխանաբար հիշատակված են՝ Վիսդաֆառնա, Ուտանա, Գաուբարուվա, Վիդառնա (նույնն է թե՝ Հյուդառնես—Ս. Կ.), Բագաբուխշա, Արդումանիշ: Ինչպես նկատելի է, այս բոլոր անունները, բացի վերջինից, համապատասխանում են Հերոդոտոսի մոտ հիշատակվածներին:

26 Բնագրում՝ πλῆθος. ընդհանրապես նշանակում է՝ բազմություն.

27 Բնագրում՝ ἰσονομίαν:

28 Բնագրում՝ τὸ κοινόν. նշանակում է՝ հասարակություն, հանրություն:

29 Օտանեսի, Մեգաբյուզոսի և Դարեհի այս ճառերում արտացոլվել են հասարակական երեք տարբեր տեսակետներ երկրի կառավարման հարցում:

30 Բնագրում՝ ἐσαγγελεύς. սա հատուկ պաշտոնյա էր պարսկական արքունիքում, որը պարտավոր էր վեկուցել արքայից արքային՝ նրա այցելուների մասին:

31 Այս արաբները Նաբաթեայի արաբական թագավորության բնակիչներն էին:

32 Սատրապ (σατράπης) հին պրսկ. xšaθrāpā բառի հունականացրած ձևն է և նշանակում է՝ «տեղապահ, աշխարհապահ»: Աքեմենյան տերության վարչական խոշոր բաժանումները կոչվում էին սատրապություններ, որոնց կառավարիչ սատրապներին նշանակում էր ինքը՝ արքայից արքան, որպես կանոն, պարսկական ավագանու բարձր ներկայացուցիչների միջից, իր մերձավորներին ու ազգակիցներին: Որեն վստահված սատրապության սահմաններից ներս սատրապը մի տեսակ փոքր արքա էր: Նա ուներ քաղաքացիական ու կինվորական լայն իրավունքներ, ընդհուպ մինչև իր համար զորքեր հավաքելը: Արքայից արքայի ձեռնարկած ռազմական արշավանքների ժամանակ սատրապը գլխավորում էր իր սատրապությունից հավաքագրած զորքը: Սատրապը սատարում էր նաև տարեկան ամենամյա տուրքերի և հարկերի գանձումն իր տիրույթներից հօգուտ արքայի, ինչպես նաև վարելու դատական գործերը սատրապության ներսում: Գերագույն այս պաշտոնյան իրավունք ուներ իր սատրապության ներքին շրջանառության կարիքների համար արծաթ և պղինձ մանրադրամ հատելու, մինչդեռ ամբողջ տերության մեջ ոսկի դրամ հատելու իրավունքն արքայից արքան վերապահում էր բացառապես իրեն: Հերոդոտոսի կատարած սատրապությունների այս թվարկումը, ըստ էության, Դարեհի տերության եկամուտների աղբյուրների մի ցուցակ է:

33 Դարեհի դրամական ռեֆորմը հիմնված էր ոսկե համարժեք հատատելու վրա: Դարեհը հատեց «դարեհական» (դահեկան) կոչված դրամները: Դարեհականը կշռում էր 8,4 գրամ և կազմում էր եվրեական տաղանդի 1/3000-ական մասը: Ոսկու հարաբերությունը արծաթին կազմում էր 1 : 13,5 (*Геродот*, с. 516. примеч. 48):

34 Բնագրում՝ νόμος. սա առաջին սատրապությունն էր, կազմված Փոքր Ասիայի առափնյա հունական քաղաքներից:

35 Այս սատրապությունը կազմված էր նախկին Լյուդիական թագավորության հյուսիսային մարզերից՝ Հելեսպոնտոսից մինչև Հալյուս գետը:

36 Այս սատրապության տարածքն ընդգրկում էր ժամանակակից Լիբանանը, Սիրիան, Պաղեստինը և Կիպրոսը:

37 Դեռևս Ամասիսի ժամանակ Մեմֆիսում բնակեցված էին հոնիացի և կարիացի վարձվաններ:

38 Մեդիմնոս—տարողության չափ սորուն մարմինների համար, որն օգտագործում էին հին Հունաստանում: Ատտիկյան մեդիմնոսը հավասար էր մոտավորապես 52,5 լիտրի:

39 Այս սատրապությունն ընդգրկում էր Պեշվարի մարզը և Աֆղանստանի հարավային հատվածը:

40 Այս սատրապությունն ընդգրկում էր Էլամը՝ Սուսա քաղաքով:

41 Բնագրում՝ Ἀσσυρία —Ասսյուրիա. հույները այդպես են կոչել Ասորեստանը:

42 Այս սատրապությունը կազմված էր ժամանակակից Իրաքի տարածքից:

43 Բառացի նշանակում է՝ սրածայր գլխարկավորներ:

44 Այս սատրապությունն ընդգրկում էր հյուսիսարևմտյան Իրանը:

45 Ժամանակակից Ադրբեջանի և Գիլանի տարածքը:

46 Ամուդարյայի վերին հովիտը՝ Աֆղանստանի հյուսիսային հատվածը:

47 Պակտյուիկե (Πακτυϊκή) երկիրը ոմանք տեղադրում են Վանա լճի հարավում, այժմյան Բոհտանում (H. Kiepert, Lehrbuch des alten Geographie, Berlin, 1878, էջ 80): Հ. Հ. Մանանդյանը («Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության», հ. Ա, Երևան, 1944, էջ 55) այս ենթադրությունը չի համարում հաստատուն ու վերջնական, նշելով, որ «Պակտյուիկեի տեղադրության ու անվան խնդիրը դեռևս որոշ չէ»: Ս. Տ. Երեմյանն այդ երկիրը նույնացնում է Կորդուքի հետ («Հայ ժողովրդի պատմություն», հ. 1, Երևան, 1971, էջ 424):

48 Բնագրում՝ Ἀρμενίων ընդհանրապես թարգմանել են՝ «արմենիներ» (Հ. Մանանդյան) և «Արմենիա» (*Г. А. Стратановский, A. D. Godley*): Երկուսն էլ հնարավոր են՝ ըստ կոնտեքստի:

49 Սև ծով:

50 Մատիենները բնակվել են Մեծ Զաբի վերին հոսանքում, Վանա և Ուրմիայի լճերի միջև: Մատիենեն նույնացվում է ուրարտական Մանա երկրի հետ, որի կենտրոնը եղել է Մուսասիրը:

51 Սասպեյրները ապրում էին Հայկական լեռնաշխարհի հյուսիսում, Ճորոխ գետի վերին հոսանքից դեպի արևելք և հարավ-արևելք («Հայ ժողովրդի պատմություն», հ. 1, Երևան, 1971, էջ 452):

52 Ալարոդները, ուրարտացիների մնացորդները Հայկական լեռնաշխարհում, հիմնականում բնակվում էին Արարատյան դաշտավայրում, ինչպես նաև Վանա լճի և Արաքս գետի միջև ընկած տարածքում («Հայ ժողովրդի պատմություն», հ. 1, Երևան, 1971, էջ 452):

53 Մոքսերը կամ մոկսիանները հայերին ազգակից ցեղեր էին, որոնք բնակվում էին Արևելյան Տիգրիսի հովտում: Այդ ցեղանունից էլ առաջացել է Սեծ Հայքի տասնհինգ նահանգներից մեկի՝ Մոկքի (Մոկսի) անունը («Հայ ժողովրդի պատմություն», հ. 1, Երևան, 1971, էջ 424):

54 Տիբարենների մասին պատմում է նաև Քսենոփոնը (Xenoph., Anabasis, V, V 1—3: Քսենոփոն, Անաբասիս, էջ 121): Տիբարենները բնակվում էին Սև ծովի մերձափնյա շրջանում, մոսսինոյկներից արևմուտք: Ժամանակակից ուսումնասիրողները տիբարենևերին նույնացնում են սեպագիր արձանագրություններում հիշատակված տաբալների հետ: Տիբարենների մասին տե՛ս *И. Д. Джавахишвили*, Основные историко-этнологические проблемы истории Грузии, Кавказа и Ближнего Востока древнейшей эпохи, ВДИ, 1939, № 4; *В. А. Куфтин*, К вопросу о древнейших корнях грузинской культуры на Кавказе по данным археологии, Вест. Муз. Грузии, XII, 9, 1941.

55 Մակրոնները բնակվել են մոսսինոյկներից արևելք, Ճորոխ գետի առորին ավազանում: Մակրոնների մասին պատմում է նաև Քսենոփոնը (Anabasis, IV, VIII, 1—8: Քսենոփոն, Անաբասիս, էջ 105):

56 Մոսսինոյկներ (μοσσύνοικοι)—հունարեն բառացի նշանակում է՝ փայտե կառույցներում (μόσσυνες) ապրողներ: Բառը կազմված է հունարենի բառաբարդության կանոնների համաձայն: Թերևս սա տեղական տերմինի՝ հույների կողմից արված ժողովրդական ստուգաբանություն է: Ստրաբոնը նույն այդ ցեղերին անվանում է նաև նորից հունարեն «հեպտակոմետներ» բառով, որը նշանակում է՝ յոթ գյուղերում ապրողներ: Մոսսինոյկների մասին տե՛ս *М. Н. Максимова*, Местное население юго восточного Причерноморья по „Анабасису" Ксенофонта, ВДИ, 1951, № 1: Մոսսինոյկները ապրելիս են եղել Կերասունտից արևմուտք, Սև ծովի մերձափնյա անտառախիտ լեռներում: Մոսսինոյկների մասին ընդարձակ տեղեկություններ է հաղորդում Քսենոփոնը (Anabasis, V, IV, 1—30: Քսենոփոն, Անաբասիս, էջ 117—121):

57 Այս մարերին պիտի չշփոթել մեդացի-մարերի հետ: Մեր կարծիքով, Հերոդոտոսը այս մարերին չշփոթում է մարդերի հետ:

58 Ժամանակակից Փեսջաբը Հնդկաստանում:

59 Քոյնիկս—տարողության չափ Հունաստանում. հավասար է 1,1 լիտրի:

60 Այստեղ խոսքը սովորական բամբակի մասին է:

61 Կասիա—անուշահոտ և բուժիչ բույս (Cinnamomum iners):

62 Ստյուրաքս—բուրավետ բուսական խեժ (Styrax officinalis):

63 Տես Հերոդոտոս, գիրք II, 75:

64 Հերոդոտոսն այստեղ ակնարկում է արաբ ծովագնացներին, որոնցից ինքը քաղել է այս տեղեկությունները:

65 Բնագրում՝ λιβανωτός—լեռանոն:

66 Բնագրում՝ Κασσιτερίδας: Հավանաբար Հերոդոտոսը նկատի ունի Բրիտանական կղզիները:

67 Այս գլխում նկարագրվածը ակնառու վկայություն է այն մասին, որ ոռոգման կարգավորման գործը Արևելքում թագավորի բացառիկ արտոնությունն էր, որից նա ստանում էր մեծ չափերի հասնող եկամուտ:

68 Բնագրում՝ ἀγγελιηφόρος: Սա պալատում համարվում էր բարձր աստիճանավորներից մեկը. այս պալատականի միջոցով պարսից արքան հաղորդակցվում էր արտաքսյալական աշխարհի հետ: Տե՛ս նաև ծան. III, 30:

69 Ակինակե—կարճ թուր, որը տղամարդիկ դաշույնի նման կապում էին իրենց կողքին:

70 Դասկիլեյա սատրապությունը նույն Բիթթանիան է:

71 Հոպլիտները կազմում էին հելլենների ծանրակազեն հետևակը, հունական կորքի հարվածային ուժը:

72 Այս դեպքի մասին Հերոդոտոսը մանրամասն պատմում է իր մատյանի 2-րդ գրքի 39-րդ գլխում:

73 Անակրեոն—նշանավոր հույն քնարական բանաստեղծ (559—478 թթ.):

74 Մինոս—տես ծան. I, 130:

75 Կրոտոն—հունական քաղաք իտալական ծովափին, Պիթագորյան դպրոցի գլխավոր կենտրոնը:

76 Բնագրում՝ ὕπαρχος —հյուպարքոս:

77 Բագայոս (Βαγαῖος). Դարեհի մերձավորներից:

78 Յուրաքանչյուր սատրապի մոտ գտնվող արքունի դպիրը կարդում և կպմում էր արամեերեն գրված գրությունները և դրանք թարգմանում պարսկերեն:

79 Ստատեր—ոսկե դրամի միավոր. հավասար էր 2 դրաքմեի:

80 Էգինայի տաղանդը հավասար էր աստիկյան 82 մինայի, մինչդեռ աստիկյան տաղանդը՝ 60 մինայի:

81 Արքայից արքային սեղանակից դառնալու պատիվը կապված էր մի շարք հատուկ առանձնաշնորհումների հետ:

82 Տե՛ս ծան. գիրք III, 15:

83 Բնագրում՝ γάλος—գավլոս:

84 Կալաբրիայի մաղի մի հատվածը. լատինական Ապուլիան:

85 Բնագրում՝ τοὺς διεφθορεκότας—բառացի նշանակում է՝ «պատգարակներով տարվողներ»:

86 Հելլենների պատկերացմամբ սրբավայրում ապաստանած մարդը համարվում էր անձեռնմխելի և նրան չէր կարելի սպանել սրբավայրում:

87 Էֆորոսների կոլեգիան, թվով 5 մարդ, Սպարտայի քաղաք-պետության ղեկավար իշխանության վրա վերահսկող մարմին էր, որն ամեն տարի ընտրվում էր հասարակի ընդհանուր ժողովում:

88 Գայթակղիչ է մտածել, որ այստեղ խոսքը այն ապստամբության մասին է, որը, ինչպես հաղորդում է Դարեհի Բեհիստունյան արձանագրությունը, բարձրացրել էր Բաբելոնում Խալդիտայի որդի Արախան:

89 Այս պատումը հիմնված է «Զոպյուրոսի պատմության» վրա, որի հիմքում ընկած են պարսկական ժողովրդական զրույցներ: Այս պատումի բովանդակությունը պատմական չէ: Հայտնի է, որ Բաբելոնը Դարեհի ժամանակ պարսիկները նվաճել են երկու անգամ: Առաջին անգամ (Նիդինտու-Բելի, վերջին թագավոր Նաբոնիդի որդու, ապստամբությունը) այն նվաճել է ինքը՝ Դարեհը (522 թ. դեկտ. 18-ին): Երկրորդ անգամ (հայ Արախայի ապստամբությունը) քաղաքը նվաճել է Ինտաֆեռնեսը (Վինդաֆառնան) 521 թ. նոյեմբերի 27-ին: Բաբելոնի ապստամբության մասին այս զրույցը հագեցված է ֆոլկլորային մոտիվներով և ծագում է Մեգաբյուզոսի ծոռ պարսիկ վտարանդի Զոպյուրոսի ընտանեկան ավանդություններից (տե՛ս *(Геродот*, с. 518, примеч. 103):

90 Ասորեստանցիներ ասելով այստեղ Հերոդոտոսը նկատի ունի բաբելոնացիներին:

91 Աթենացիների օգնությամբ Լիբիայի արքային Ինարոսը ապստամբություն բարձրացրեց Եգիպտոսում: Մեգաբյուզոսը Մեմֆիսի մոտ տեղի ունեցած ճակատամարտում (մ. թ. ա. 456 թ.) հաղթեց Ինարոսին. վերջինս գերի ընկավ և մահապատժի ենթարկվեց:

ԳԻՐՔ ՉՈՐՐՈՐԴ

1 Այս արշավանքը կատարվել է մ. թ. ա. 514 թվականին:

2 Այս մասին Հերոդոտոսը պատմել է իր երկի Ա գրքի 106 գլխում:

3 Նկատի ունի պարսկական տերության արևելյան հատվածը:

4 Տես Հերոդոտոս, գիրք IV, 11: Կիմմերների շարժումը պայմանավորված էր սկյութների հնչումով, որոնց, իրենց հերթին, նեղում էին մասսագետները (հայկական աղբյուրներում՝ մասքութներ):

5 Կույր ստրուկների մասին այս պատումը, հավանաբար, առաջացել է ստրուկների սկյութական որևէ անվանումից, որը հելլենները սխալ են հասկացել: Հավանական է, որ սկյութները «կույր ստրուկներ» հավաքական անունով կոչում էին իրենց գերի վերցրած

ստրատականների: Այս մասին արտահայտված բայմաթիվ ու բազմապիսի հակասական կարծիքների շարադրանքը տե՛ս „Народы нашей страны," с. 203—204, примеч. 126:

6 Խոսքը, այսպես կոչված, «սկյութական ստրվարի» մասին է, որը գտնվում է Կերչի թերակղզում: Այն բարձրացված է նեղ Բոսպորը վաղկասեաներից պաշտպանելու համար: Այս մասին տե՛ս „Народы нашей страны„, с. 204, примеч. 131. Մեյոտիս լիճը Ազովի ծովն է:

7 Բորդաբենես—այժմ Դնեպր:

8 Հերոդոտոսի հիշատակած այս իրերը, հավանաբար, պաշտամունքի առարկաներ էին սկյութների համար:

9 Հավանաբար խոսքն այդ վայրերում հաճախակի բարձրացող քամու ու բորանի մասին է:

10 Հերակլյան սյուներ—այժմ Ջիբրալթարի նեղուցը:

11 Ὑλαίη—բառացի նշանակում է՝ «անտառոտ երկիր»: Այս երկրամասի տեղադրման վերաբերյալ տե՛ս „Народы нашей страны", с. 232—233, примеч. 209:

12 Հերոդոտոսի հաղորդած այս տեղեկությունները սկյութների ներխուժման մասին, որը տեղի է ունեցել շուրջ 670 թ., ծագում են սկիթական աղբյուրներից: Նեղելով մասագետներից, սկյութներն այժմյան Արևմտյան Թուրքեստանից ներթափանցում են Կասպից ծովի հարավային ափերը, անցնում են Արաքսը և ներխուժում հարավ-արևմտյան տափաստանները *(Геродот*, стр 519, примеч. 10):

13 Հավանաբար Կրիմ (Ղրիմ) թերակղզու անունը մնացել է կիմմերներից: Ընդհանրապես Հերոդոտոսի հաղորդած կիմմերական տեղանունների մասին տե՛ս „Народы нашей страны", с. 218—219, примеч. 175—179:

14 Այժմյան Կերչի նեղուցը:

15 Պրոկոնեսոս—կղզի Պրոպոնտիսում (այժմ Մարմարայի ծով):

16 Բնագրում՝ φοίβη πόντος (նույնն է՝ φοίβη πόντος):

17 Ὑπερβορέοι—բառացի նշանակում է գերիրախաքանչներ:

18 Նկատի ունի Սև ծովը:

19 Արտակե—միլետյան գաղութ ծովափին, կղզեթերակղզի նախանավահանգիստ:

20 Դոդոնաներ կոչվում էին Իտալիայում բնակվող ցեղերը:

21 Ագաթոն համարվում էր Ապոլոնի արբական թշնամը:

22 Այստեղ խոսքը Օլբիա քաղաքի մասին է, որը նախապես միլետացիների գաղութներից էր և գտնվում էր Դնեպրի գետաբերանի վրա: Այն Սև ծովի հյուսիսային ափին ամենահնաբնակեցված հունական առևտրական կենտրոններից էր:

23 Καλλιπίδαι—հավանաբար նշանակում է լավ Ձիթ ունեցողներ:

24 Աչ աղբյուրներում՝ ալիզոններ:

25 Այս երկրագործ սկյութների մասին տե՛ս ВДИ, 1946, № 2, с. 42. „Народы нашей страны", с. 228—230, примеч. 206:

26 Հարավային Բուգ գետի հունական անվանումը:

27 Տե՛ս գիրք IV, ծանոթ. 11:

28 Գելոնոտեցիներ նշանակում է Օլբիայի բնակիչներ:

29 Καρποί—բառացի նշանակում է՝ սար. կատրոնք: Այս փաստի հիմքում սկյութների մասին սխալական կարծիք գոյություն չունի: Տե՛ս „Народы нашей страны" с. 242—243, примеч. 223.

30 Այժմ Դոն գետը: Ըստ Հերոդոտոսի, սկյութական պետության գլուխը գտնվում էր ստեպանաստանում, որի սահմանագիծն էր արևմուտքում Դանուբը, հյուսիսում Կասպից և Դնեպր գետերը, արևելքում Ազովի ծովը, հարավում Տավրիկան թերակղզուն:

31 Μελάγχλαινοι—բառացի նշանակում է՝ սև թիկնոցավորներ:

32 Դաժան բառը Հերոդոտոսը այստեղ օգտագործում է «լեռնոտ, անհարթ» նշանակությամբ:

33 Ս. Յա. Լուրյեն (*С. Я. Лурье*, История..., с. 100) ենթադրում է, որ այս «մազաոտ» մարդիկ եղել են ժամանակակից բաշկիրների նախնիները:

34 Ակադ. Վ. Վ. Ստրուվեն („Этюды по истории Северного Причерноморья, Кавказа и Средней Азии", Л., 1968, с. 30) նշում է, որ Հերոդոտոսի վկայություններն այն մասին որ իբր մասսագետները և իսեդոնները մարդկային զոհաբերություններ էին կատարում, հավիվ թե վստահելի լինեն:

35 Հոմերոս, «Ոդիսական», IV, 84:

36 Էլիս կոչվում էր Պելոպոնեսոսի հյուսիսարևելյան մասը:

37 «Էպիգոններ» (բառացի նշանակում է՝ հետնորդներ) ասքը պատկանում է «կիկլյային» կոչված պոեմների թվին:

38 Դելոսյան այս պատումը հյուպերբորեացիների մասին ևս մի վկայություն է առ այն, որ առևտրական ճանապարհները շատ հին ժամանակներից կապել են Եվրոպայի հյուսիսային և հարավարևելյան երկրները:

39 Մալեաս ծովախորշը գտնվում է Պելոպոնեսոսի հարավում: Եվբեա—հունական կղզի Էգեյան ծովում, մայր ցամաքին մոտիկ: Կարյուստոս-քաղաք Եվբեայի հարավային ափին. Անդրոս, Դելոս, Տենոս-կղզիներ Էգեյան ծովում:

40 Բառացի նշանակում է՝ տանողներ:

41 Իլիթիա—Զևսի և Հերայի դուստրը, ծննդաբերության աստվածուհին, որը հովանավորում էր նորածիններին: Հետագայում նույնացվել է դիցուհի Արտեմիսի հետ:

42 Հավանաբար՝ Ապոլոնի և Արտեմիսի:

43 Այստեղ Հերոդոտոսը պատմում է Դելոսյան պաշտամունքի երկակի ծագման մասին: Ըստ առաջին տարբերակի, Ապոլոնի և Արտեմիսի այդ պաշտամունքը Հունաստան է մտել հյուսիսից, ըստ երկրորդի՝ Լիկիայից:

44 Աբարիսը, իբր, ապրել է Կրեսոսի ժամանակ. նրա անունը կապվում է ավարների ցեղանվան հետ: Հավիվ թե իրական անձնավորություն եղած լինի:

45 Այստեղ՝ Սև ծովը, իսկ 42-րդ գլխում՝ Միջերկրական ծովը:

46 Այստեղ՝ Պարսից ծոցը:

47 Այսինքն՝ Պարսից ծոցը:

48 Այստեղ՝ Միջերկրական ծովը:

49 Հերոդոտոսի հիշատակած այս նավարկումը իրոք կազմակերպվել է Եգիպտոսի Նեքո թագավորի (609—593) ժամանակ: Թեև Հերոդոտոսը չի հավատում իր հաղորդած այն մանրամասին, թե արևը գտնվում էր նավորդների աջակողմում, սակայն այն իրոք դարձնում է պատումը արժանահավատ: Հարավային կիսագնդում արևը, իրոք, կդիտվի նավորդների աջակողմում:

50 Այսինքն՝ կարթագենացի: Այստեղ Հերոդոտոսը, հավանաբար, նկատի ունի կարթագենացի Հաննոնի՝ 520 թ. կատարած շուրջաֆրիկյան ճանապարհորդությունը, որի նկարագրությունը թողել էր ինքը՝ Հաննոնը: Մեզ հասել է Հաննոնի նկարագրության հունարեն տարբերակը:

51 Այսինքն՝ Քսերքսես արքայի հորաքույրը:

52 Այս պրուլցը արտացոլված է Էսքիլեսի «Պրոմեթևսը ապատագրված» դրամայում, որտեղ հիմնական դեմքերից է Ասիան:

53 Այժմ Դանուբ գետ:

54 Այժմ Դնեստր գետ:

55 Այժմ Արևմտյան Բուգ գետ:

56 Այժմ Դնեպր գետ:

57 Այս գետը դեռևս մնում է անհայտ:

58 Այս գետը նույնպես անհայտ է մեզ:

59 Հավանաբար՝ Բորիսթենես-Դնեպրի գետաբերաններից մեկը:

60 Այժմ Դոն գետ:

61 Հավանաբար՝ այժմ Պրուտ գետը: Հիշատակված հաջորդ չորս գետերը դժվար է նույնացնել մեզ հայտնի գետերի հետ:

62 Հեմոսը Բալկանյան լեռնաշղթան է:

63 Բնագրում κτέα—կետեր. հավանաբար նկատի ունի քառակի (բեկուզա) ձուկը:

64 Հետագայում (գիրք IV, գլ. 123) Հերոդոտոսը այն անվանում է Սրբազին:

65 Հեստիա—տան օջախը մարմնավորող կանացի աստվածություն:

66 Գեա—մայր երկրի աստվածությունը:

67 Ուրանիա—բառացի նշանակում է՝ երկնային:

68 Հավանաբար կապ ունի «հայր» (պապա) հասկացության հետ:

69 Սկյութական այդպիսի կաթսաներ հայտնաբերվել են հնագիտական պեղումների ընթացքում (Տե՛ս „Народы нашей страны", с. 299, примеч. 391):

70 Բառացի նշանակում է՝ խառնարան: Այդպիսի անոթներում հին հույները գինին խառնում էին ջրի հետ և նոր խմում:

71 Բնագրում κυάθους—նշանակում է՝ նահանգապետ:

72 Բնագրում Γέρρος, որը հունարենում հոգնակի թիվ է:

73 Բնագրում κύπερος. Հոմերոսի մոտ κύπειρος—ճանճաս գայլբերում աճող բուրավետ բույս:

74 Սկյութական այդպիսի գերեզմանաթմբերն ունեն պատկառելի չափեր. Դանդաղում հարուստներվել են ոսկե հարուստ կարգեր, ինչպես նաև ոսկեզարդ ձիերի կմախքներ:

75 Բնագրում ἀκινάκης (պանիգիսիս. հայց. պանիգիսիս)—մենք թարգմանեցինք գիշերն ի բուն տեղ տանախնբություն:

76 Այս Դավանիանը Սպարտայի թագավորն էր, որը նստած գահակալ Պաուսանիասում 479 թ. պարսից դեմ տարած իր հաղթանակով: Հիշյալ պրոնզե կրատերը նվիրված էր 477 թ. նույն Պավսանիասի կողմից Բյուզանդիան քաղաքի գրավման ազիվ:

77 Ամիտրան երկունկանի սափոր է. 40 լիտր տարողություն:

78 Մառնաչափը հավասար էր 1.93 սմ:

79 Տես գիրք IV, գլ. 1:

80 Հերոդոտոսի այս տվյալների մեջ կան դրաշտի անճշտություններ: Բոսպորոսի հյուսիսային ժայռը ունի 4,7 կմ լայնք. նրա ամենամեծ հատվածը, որտեղ Դարեհը հրամայել էր կառուցել, գտնվում է այժմյան Ռումելի Հիսարի մոտ և ունի 690 մ լայնք: Բոսպորոսի երկարությունը 31,7 կմ է, Հելեսպոնտոսի երկարությունը մոտ 60 կմ է, իսկ լայնքը ամենամեծ մասում 1350 մետր:

81 Այժմ Մարմարա ծով:

82 «Ասատրերեն» (Ἀσσυρίη) ասելով, Հերոդոտոսը, անկասկած, նկատի ուներ տեսարանները:

83 Ապամարից հիշում ես Մ. Խորենացու հաղորդումը, թե «Ցարեաս հրամայեաց առայ Արտաշէս՝ զոր յարուցեալ յարևելից և ի հիւսիսոյ բոլորակ լոյծ, զինչն ոչ զնասել նմա վնասակարն, այլ բանցս և զիջանս քար ըստ մարդաթուի կարկամ՝ նշան բարեկամեան ցաղուց» (Մ. Խորենացի, Բ. ծբ):

84 Այստեղ Հերոդոտոսը նկատի ունի Ղրիմի թերակղզու ծայրը:

85 Այսինքն՝ Ապոլի ծովում:

86 Հերոդոտոսն այս հաստատություններով ուզում է ասել, որ տավրիկյան ցեղերը թեև սկյութներ չեն, բայց բնակվում են սկյութների երկրում, իսկ Ատտիկայի և Իտալիայի նշված թերակղզիներում բնակվում են նույնանուն ցեղեր, ինչ մնացած երկրում:

87 Այսինքն, Կերչի թերակղզու արևելյան եզերքը և Ազովի ծովի արևմտյան ափը, մինչև Դոնեցի և Դոնի գետաբերանները:

88 Բնագրում ἀνδροφάγοι —անդրոֆագներ:

89 Բնագրում Μελάγχλαινα —մելանքլեններ:

90 Բնագրում παρθένος սա տնական սատկածություն է, որը նույնացվում է Արտեմիսի հետ:

91 Ագամեմնոնը, ըստ հունական պոեմների, եղել է Տրոյայի վրա արշաված հելլեն բոլոր զորքերի զորապետը: Իֆիգենիայի մասին այս զրույցները դարձել են V դարի հույն ողբերգակ Եվրիպիդեսի լավագույն ողբերգությունների նյութը:

92 Այստեղ Հերոդոտոսը հաղորդում է սկյութական հին զրույցը սկյութների գաղթի մասին: Օձը ժողովրդական առասպելների մեջ չարի սկզբունքի մարմնացումն է և այստեղ խորհրդանշում է թշնամի եկվորներին, որոնք նվաճեցին իրենց բնակավայրերից (*Геродот*, с. 521, примеч 71):

93 Գայլը եղել է նվաճողի տոտեմը: Նվաճողը իրենց համարում էին գայլերից սերած: Հերոդոտոսի այս հաղորդումը վերաբերում է պաշտամունքային տոնախմբության, որի մասնակիցները կրում էին գայլի մորթի և դիմակ (*Геродот*, с. 521, примеч. 72):

94 Ամազոնուհիների մասին առասպելը իր ակունքներն ունի մայրիշխանության դարաշրջանում :

95 Բնագրում κρήνοι—բառացի նշանակում է՝ կառիթաի:

96 Բնագրում πρόδρομος —բառացի նշանակում է՝ նախակարապետ, ճանապարհին առջևից գնացող:

97 Դարեից այս արշավանքը Եգիպտոս տեղի է ունեցել մ. թ. ա. 510 թ.:

98 Բրավրոն—Աթենքի արվարձաններից մեկը:

99 Լեմնոս—Էգեյան ծովի կղզիներից մեկը:

100 Մինյուացիների նախնիները ապրելիս են եղել Թեսալիայում, Պագասական ծոցի շուրջը:

101 Խոսքը Կաստորի և Պոլյուդևկեսի մասին է, որոնք համարվում են լակեդեմոնացիների նահապետները:

102 Պարորեատներ—բառացի նշանակում է՝ լեռնցիներ: Պելասգյան ցեղեր, որոնք բնակվում էին Պելոպոնեսոսում: Կալիկոններ—Պելոպոնեսոսի տեղաբնիկ հնագույն ցեղեր:

103 Այս վեց քաղաքները գտնվել են արևմտյան Պելոպոնեսոսում, Էլիսի և Մեսենայի միջև:

104 Բնագրում οἰόλοικος—բառացի նշանակում է՝ ոչխարագայլ:

105 Հեկատոմբա—հայրենեկնյան գոհաբերություն:

106 Կրետացիներն այդ ժամանակ առևտրական կապեր ունեին մյուս հելլեններին ամենամոտ մի շարք երկրների հետ:

107 Ծիրանաբեր խխունջների որսը կատարվում էր Լիբիայի ծովափին:

108 Տարտեսսոս—հնագույն քաղաք Պիրենեյան թերակղզու Ատլանտյան ափին, Գվադալկվիվիրի գետաբերանին:

109 Բատտոս (Βάττος) հունարեն նշանակում է՝ կակաչ:

110 Այսինքն՝ առատ անձրևներ են տեղում:

111 Ապրիես թագավորը բնիկ լիբիացի էր: Նրա վերջնական ճակատամարտը հելլենների դեմ տեղի է ունեցել մ. թ. ա. 570 թ.:

112 Արկադիա—լեռնային մարզ Կենտրոնական Պելոպոնեսոսում:

113 Հին հունական հասարակության մեջ թագավորը միաժամանակ նաև քրմապետ էր: Այդ լավագույնս բացատրել է Արիստոտելը, նշելով, որ քահանա-թագավորը կորցի առաջնորդ է, միաժամանակ նաև դատավոր ու կրոնապետ (Arist., Polit., III, 10): Այս բանը նշել է նաև Ֆ. Էնգելսը, գրելով. «Բասիլևսը, բացի զինվորական իրավունքներից, ուներ նաև քրմական և դատական իրավունքներ» («Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը», Երևան, 1953, էջ 149—150):

114 Դելֆիի հանահելլեն սրբավայրում հելլենական գլխավոր քաղաք-պետություններն ունեին իրենց գանձատները:

115 Ամբողջ տերության մեջ դրամ հատելու իրավունքն արքայից արքան վերապահում էր բացառապես իրեն, իսկ satրապները, satրապության ներքին շրջանառության կարիքների համար իրավունք ունեին արծաթ և պղինձ մանրադրամ հատել (*М. М. Дьяконов*, Очерк истории древнего Ирана, М., 1961, с. 91):

116 Սիլֆիոն (Σιλφιον, Laserpitium)—թուփ, որի արմատներից ստանում էին համեմունք մսի և ձկան կերակրատեսակների համար: Սիլֆիոնի տերևները և հյութը Կյուրենեից արտահանվող գլխավոր նյութերից էին:

117 Քարիտոն (Χαρίτων)—բառացի նշանակում է՝ շնորհների:

118 Լոտոսակերների մասին խոսել է դեռևս Հոմերոսը («Երգ IX, 91—97).

«Այնտեղ մերոնք հանդիպում են լոտոսակեր ցարի մարդկանց,
Որոնք ոչ մի չարիք չէին նյութել երեք եռակռներին.
Մենակ նրանց լոտոս էին հյուրասիրել ճաշակելու.
Սակայն ով որ ճաշակում էր հասած լոտոսն ազդ մեղրածոր,
Էլ չէր ուզում վերադառնալ և լուր բերել ընկերներին,
Այլ ուզում էր առմիշտ մնալ լոտոսակեր մարդկանց երկրում,
Քաղցր լոտոսը ճաշակել. վերադարձը մոռանալով»:

(Թարգմ. Սիմոն Գրիգորյանի):

119 Հելլեն դիցաբանության մեջ ծովային աստվածություններից մեկը:

120 Հերոդոտոսի նկարագրած այս վայրերը օազիսներ են:

121 Տե՛ս գիրք II, գլ. 143:

122 Բնագրում αἰγίς. այգիսը կամ էգիդան ընդհանրապես Զևսի, երբեմն նաև Ապոլոնի և Աթենասի կրած փոթորկաբեր վահանն էր, պատրաստված Ամալթեա այծի մորթուց: Ընդհանրապես նշանակել է նաև այծի մորթուց պատրաստված թիկնոց:

123 Տե՛ս նախորդ ծանոթ.:

124 Ամփոդելոսը եղեգանման բույս է:

125 Այստեղ խոսքը ժամանակակից Թունիսի և Ալժիրի տարածքի մասին է:

126 Հավանորեն անտիլոպի մի տեսակը:

127 Հավանաբար մարդանման կապիկներ:

128 Բնագրում κόρυκες—հավանաբար անտիլոպների տարատեսակ, ոչխարակ հնարավոր:

129 Բուբալիս—անտիլոպի տարատեսակ (Antilopa Bubalis):

130 Օրիքս—վիթի տարատեսակ:

131 Բնագրում Ἀσσάριον—Լիբիայում հանդիպող ագռավի տեսակ:

132 Բնագրում Βάττος. բառացի նշանակում է՝ ցանկություն: Գուցե մատնանշվում գնում

չեն կարողացել որոշել, թե Հերոդոտոսը ի՞նչ կենդանի է նկատի ունեցել: Հավանաբար, խոսքը ընձուղտի մասին է, որի գունավոր մաշկը ունի ցանցի տեսք:

133 Βόρυς—մեկ համար անծանոթ կենդանու անվանում:

134 Բնագրում ἐγχνέες—նշանակում է՝ ոսկու փշեր ունեցող, ոսկեհանման, ոսկեգույն:

135 Արիեստական մեղրի պատրաստման մասին հմ. գիրք VII, գլ. 31:

136 Զակյունթոս—կղզի Հոնիական ծովում:

137 Այժմ Բենգազի շրջանը:

ԳԻՐՔ ՀԻՆԳԵՐՈՐԴ

1 Պերինթոս—թրակական քաղաք Պրոպոնտիսի հյուսիսային ափին:

2 Բնագրում παίονες: Պայոնիայի (հետագայի Պաննոնիան Դանուբի ափապանում) բնակիչները:

3 Ստրյումոն—գետ Թրակիայի և Մակեդոնիայի սահմանին:

4 Սկզբնապես պեան կոչվել է խմբերգի մի տեսակը, որը կապված էր Ապոլոնի պաշտամունքի հետ: Արդեն «Իլիականում» այդպիսի պեան երգվում է՝ ուղղված Ապոլոնին, որպեսզի նա վերացնի իր իսկ ուղարկած ժանտախտը: Պեան երգել են նաև Հեկտորի սպանությունից հետո, որպես հաղթանակի խորհրդանիշ: Հետագայում պեան երգում էին ճակատամարտից հետո, որպես հաղթության երգ, կամ դրանից առաջ, որպես ոգեմերգ:

5 Հերոդոտոսի ժամանակակից հելլենների պատկերացմամբ արևելքում հնդիկները ամենահեռավոր բնակիչներն էին:

6 Տե՛ս գիրք IV, 93—94:

7 Այսինքն՝ ոգեմի աստծուն, պտղաբերության աստծուն և ծննդաբերության աստվածուհուն: Հերոդոտոսը այս դեպքում ևս օտար աստվածներին թարգմանում է հելլենական անուններով:

8 Ստրաբոնը ևս սիգյունների մասին նույնն է հաղորդում, նշելով միայն, որ նրանք կովկասյան ցեղեր են:

9 Հերոդոտոսը (կամ նրա աղբյուրը), հավանաբար, այս դեպքում շփոթել է ինչ-որ տեղական ցեղանուն, որը պիտի հնչեր մոտավորապես հունարեն «մելիսսա» (մեղու) բառի նման:

10 Տե՛ս գիրք IV, 143:

11 Էդոնները Թրակիայում, Ստրյումոն և Նեստոս գետերի միջև բնակվող ցեղեր էին: Այդ վայրը հարուստ էր անտառներով և ալտիպ մետաղներով:

12 Պրասիաս—լիճ Թրակիայի հարավ-արևմուտքում:

13 Պանգայոն (Παγγαῖον)—լեռնաշղթա Մակեդոնիայում, Ստրյումոն գետից արևելք:

14 Օդոմանտոսը որպես տեղանուն հիշատակում է հետագայում Ստրաբոնը (XI, 14,5), այն համարելով հայկական մարզերից մեկը, որն իր թագավորությանը միացնում է Հայոց Արտաշես Ա թագավորը:

15 Օրբելոս լեռը գտնվում է Ստրյումոն և Նեստոս գետերի միջև:

16 Չշփոթել Ալեքսանդր Մակեդոնացու հետ: Այստեղ խոսքը վերաբերում է Ամյունտասի որդի Ալեքսանդրին (տե՛ս գիրք VII, 173):

17 Խոսքը մակեդոնացի թագավորների մասին է:

18 Հելլենոդիկեսներ (կամ հելլանոդիկեսներ)—բառացի նշանակում է՝ հելլենների դատավորներ—էթացի քաղաքացիներ, որոնք նախագահում և դատում էին օլիմպիական մրցումները հին Հունաստանում:

19 Պարսից արքայի սեղանակից դառնալը համարվում էր արտակարգ պատիվ ու կապված էր մեծ առանձնաշնորհումների հետ:

20 Արքունի դատավորների մասին տե՛ս գիրք III, գլ. 31:

21 Լեմնոս և Իմբրոս—կղզիներ Էգեյան ծովի հյուսիսային մասում:

22. Այստեղ, ըստ երևույթին, Հերոդոտոսի բնագիրը պակասավոր է:

23 Պարոս կղզին, որը հայտնի էր իր հիանալի մարմարով, գտնվում է Էգեյան ծովում:

24 Բնագրում ἐπίτροπος—նշանակում է՝ տեղապահ, նա, ում մեկ ուրիշի կողմից հանձնարարված է որևէ մի երկրի կառավարումը:

25 Հին Հունաստանում տարբեր քաղաք-պետությունների միջև հաստատվում էին հյուրընկալման հատուկ դաշինքներ: Առանձին մարդիկ կարող էին դառնալ որևէ մեկ պետության հյուրընկալը և իրենց երկրում պաշտպանել իրենց հյուրընկալած պետության շահերը:

26 Մեգաբատեսի այս արշավանքը տեղի է ունեցել 499 թ.:

27 Նավահանգիստ Քիոս կղզում:

28 Խոսքը Հեկատեոս Միլետացու մասին է (տե՛ս գիրք II, ծանոթ. 94):

29 Հերոդոտոսը, հավանաբար, այստեղ շարադրում է ըստ Հեկատեոսի պատմության: Հոնիայում ոչ բոլոր խմբակցություններն էին պարսից դեմ պատերազմելու կողմնակից: Պարսից հակառակորդներն էին միայն առևտրաարհեստավորական խավի այն ներկայացուցիչները, որոնք շահագրգռված էին Թրակիայի և Մերձևեղեմյան երկրների հետ կատարվող առևտրով: Մինչդեռ բուն Փոքր Ասիայում, և ոչ թե Պոնտոսում, շահեր հետապնդող խավերը, ընդհակառակը, կողմնակից էին պարսիկներին: Իսկը՝ Հերոդոտոսը, գտնում է, որ իբրև Պարսկաստանի դեմ պատերազմից կարելի էր և պետք էր խուսափել: Հերոդոտոսի տեղեկությունները հոնիական ապստամբությունը պատկերում են որպես անմիտ չարագործության օրինակ (*Геродот*, с. 525, примеч. 26):

30 Տե՛ս գիրք I, գլ. 46 և 92:

31 Տե՛ս գիրք I, ծանոթ. 49:

32 Հմմտ. գիրք IV, գլ. 175 և 198:

33 Ելեոն—հնագույն բնակավայր Բեոտիայում, որի մասին հիշատակում է դեռևս Հոմերոսը:

34 Այսինքն՝ շուրջ 510 թ.:

35 Սյուբարիս—քաղաք հարավային Իտալիայում:

36 Կրոտոն—քաղաք Իտալիայի հարավարևելյան ծայրամասում. Պյութագորասի ծննդավայրը:

37 Բնագրում [illegible]:

38 Բնագրում [illegible]:

39 Բնագրում πολυπρόβατον—նշանակում է՝ ոչխարաշատ, անասունների հարուստ:

40 Զորական միավորումները, իրոք, Ստրատա քաղաքից մինչև մայրաքաղաք Սուսա ընկած ճանապարհը անցնում էին երեք տարում, բայց սովորի հատուկ սուրհանդակներն այդ նույն ճանապարհը անցնում էին 7 օրում:

41 Բնագրում [illegible]—բառացի նշանակում է՝ ոչխարների խարանում ունող: Հին Հունաստանում ձիերնում ձիուղը հատվում էր ոչխարների խարանումով:

42 Բնագրում [illegible]—ստրուտս: Կայանը բանակատեղի վայր էր: Արքունի կարավանները անցաղարշված էին իրարից մոտավորապես մեկ օրվա ճանապարհի հեռավորության վրա:

43 Փարսանգը (παρασάγγης) երկարության չափ էր, որը հավասար էր 30 ստադիոնի տարածության (մոտ 5,5 կմ):

44 Հմմտ. գիրք I, գլ. 189:

45 Մեմնոնը «արևելյան եթովպացիների», այսինքն՝ ասորեստանցիների առասպելական թագավորն է, որին հիշատակում է Հոմերոսը:

46 Թուկիդիդեսը պատմում է, որ Հիպպիասը, Հիպպարքոսի եղբայրը, անցյալում արգելել էր Հարմոդիոսի և Արիստոգեյտոնի քրոջը Պանաթենական շքերթին մասնակցելու: Այս անարգանքի համար նրանք վրեժ են լուծում, սպանելով Հիպպարքոսին 514 թ.:

47 Երետրիա—քաղաք Եվբեա կղզու վրա, որը պարսիկները ավերել են մ. թ. ա. 490 թ.:

48 Ըստ հելլեն դիցաբանության, Կադմոսը եղել է փյունիկյան Ագենոր արքայի որդին ու Եվրոպեի եղբայրը. հելլենները նրան վերագրել են Բեոտիայի Թեբե քաղաքի հիմնադրումը և 16 տառից բաղկացած հունական առաջին գրի ստեղծումը:

49 Ըստ Թուկիդիդեսի, աս դեպքը կատարվել է Տրոյական պատերազմի ավարտից 60 տարի անց:

50 Մ. թ. ա. II հազարամյակի կեսերից սկսած, հին հույները օգտագործել են գրության տարբեր ձևեր. Կրետեում և Պելոպոնեսոսում (Միկենում) գործ են ածել գծային B գրությունը:

51 Բիբլոս (բնագրում՝ βύβλος)—հույները այդպես են անվանել եգիպտական պապիրուսները:

52 Ակմեոնյանների արենական հայտնի տոհմի ներկայացուցիչները մ. թ. ա. VIII—V դդ. խոշոր դեր են խաղացել Աթենքի քաղաքական կյանքում:

53 Ամփիկտիոնները կրոնաքաղաքական միության մեջ միավորված քաղաք-պետությունների ներկայացուցիչներն էին:

54 Փալերոն (այժմ Ֆալերոն)—Աթենքի առափնյա արվարձաններից:

55 Ալոպեկայ—բառացի նշանակում է՝ աղվեսներ:

56 Պելասգյան պարիսպներ—հնագույն ամրություն Ակրոպոլիսի հարավ-արևմտյան լանջին:

57 Սկամանդրոս—Տրոյայի մոտով հոսող գետ, որը թափվում է Հելլեսպոնտոս:

58 Սիգեյոն—բնակավայր և հրվանդան Տրոյական երկրում:

59 Այսինքն՝ մ. թ. ա. 545—509 թթ.:

60 Պուլոս—հնագույն քաղաք Պելոպոնեսոսի արևմտյան մասում:

61 Նելևս—Տրոյական արշավանքին մասնակցած թագավորներից մեկը:

62 Այս Կեյսթենեսը իշխել է Սիկիոնում մ. թ. ա. 600—570 թթ.: Սիկիոն քաղաքը գտնվում էր Պելոպոնեսոսի հյուսիս-արևելյան մասում:

63 Հռապսոդներ—Հին Հունաստանում էպիկական երգեր հորինողներ և երգելով արտասանողներ:

64 Պրյուտանեոնը հատուկ կանգնված վայր էր հունական քաղաք-պետություններում, որտեղ նիստեր էին գումարում երկրի իշխանավորները:

65 Հունարեն՝ ἀρχή—նշանակում է՝ իշխանություն, սկիզբ:

66 Բառացի նշանակում է՝ ժողովրդի իշխաններ:

67 Հունարեն ὄς, ὄνος, χοῖρος (հյուս, օնոս, խոյրոս)—համապատասխանաբար նշանակում են՝ վայրի խոզ, էշ, խոզ:

68 Բնագրում՝ δῆμος—դեմոս:

69 Ակրոպոլիս բառն այստեղ օգտագործված է «միջնաբերդ» իմաստով:

70 Աստիկյան յուրաքանչյուր ֆիլա բաժանված էր 12 նավկրարների (բառացի նշանակում է՝ «նավապետություն»), տերիտորիալ շրջանների: Տվյալ ժամանակահատվածում իշխանության գլուխ կանգնած են եղել այդ նավկրարների ավագները:

71 Բնագրում բուլե (βουλή). Հերոդոտոսն այստեղ նկատի ունի 500-ի խորհուրդը՝ 50 խորհրդական յուրաքանչյուր ֆիլայից:

72 Նկատի ունի Աթենասի տաճարը Էրեքթեյոնում:

73 Ելևսիս (այժմ Էլևսինա) քաղաքը գտնվում էր Աթենքից 20 կմ հեռու:

74 Սպարտական պետության գլուխ կանգնած էին երկու թագավորներ:

75 Եվրիպոս—նեղուց Հունաստանի մայր ցամաքի ու Եվբեա կղզու միջև:

76 Բնագրում κλῆροῦχοι—այդպես կոչվում էին այն հողագործները, որոնք վիճակով ստանում էին որոշակի հողակտոր: Խոշոր հողատերերի հողերի վիճակով բաժանելը մասր հողատերերի՝ կլերուխների միջև, նվաճված երկրներում աթենացիների տիրապետության գլխավոր հիմքն էր կազմում:

77 Հիպոբոտես—բառացի նշանակում է՝ ձիաքուժ:

78 Հմմտ. «Ոդիսական», II, 150:

79 Ասոպոս անունով գետ կար և՛ Բեոտիայում, և՛ Պելոպոնեսոսում: Էգինան պելոպոնեսյան Ասոպոս գետի առասպելական դուստրն էր: Նրա անունով կոչվել է Էգինա կղզին Սարոնիկոսի ծոցածոցում:

80 Դամիա և Ավքսեսիս—աճի և բերքատվության աստվածություններ:

81 Բնագրում χορηγός—նշանակում է՝ պարախմբի գլխավոր:

82 Բնագրում օլիգարխիա:

83 Լապիթները, ըստ ավանդության, բնակվելիս են եղել Թեսալիայում:

84 Բնագրում κόφινα, (կյուսինե—սնդուկ):

85 Տե՛ս գիրք III, գլ. 50:

86 Աքերոն գետի մոտ, որտեղ, հին հույների պատկերացմամբ, գտնվում էր առաջնակարգ թագավորության մուտքը, կար հայտնի պատգամատուն:

87 Այստեղ Հերոդոտոսը նկատի ունի Աթենքի պետության մեջ բնակվելու իրավունք ունեցող բոլոր ազատ քաղաքացիներին:

88 Կորեսոսը Եփեսոս քաղաքի արվարձաններից էր:

89 Սարդեսը հրկիզվել է մ. թ. ա. 498 թ.:

90 Կյուբեբե (կամ Կյուբելե) փռյուգացիների և լյուդացիների մայր աստվածուհի:

91 Խոսքը Կիպրոս կղզու Սալամինի մասին է, որի ափերամերձը գտնվում են Խանգաստայի մոտ:

92 Սաթրա կղզին նույն Սարդինիան է:

93 Սարդանիա բառացի նշանակում է՝ ոչխարենչ:

ԳԻՐՔ ՎԵՑԵՐՈՐԴ

1 Պրոֆեսոր գանգվանդին բնագրագիտական հետազոտություններ էր կատարում հին աշխարհի իշխանների: Հետևաբար, նրանք «Բաբելոնյան գերությունը», Նիգրան Մեծի՝ հեղինակած 12 գրքերի բնակիչների գաղթումը և այլն:

2 Այս դարձվածները, որոնց վրա փորձում էր հենվել Հիսարլյան, հավանաբար, Դարենից դժգոհ պարսկական տարրերն էին:

3 Միլետում տիրանալուց հետո Արիստագորասի կողմից գրգռված ապստամբության տարածումը մի շարք հունական քաղաքներից, որտեղ նախապես գետեղ էր իշխանությունը: Հիրավի, որպես գեներալատիպ գիտակցություն, եղել է անգամ իշխանու-

թյուն: Այն բանից հետո, երբ տիրակալները ջախջախեցին արիստոկրատիայի իշխանությունը, քաղաքային տարրերն սկսեցին տիրանալ դիտել իբրև վերապրուկ, որը խանգարում էր ստրկատիրության, առևտրի ազատ շրջանառության և դեմոկրատական հաստատությունների զարգացմանը (*Геродот*, с. 527, примеч. 4; *С. Я. Лурье*, История, с. 116):

4 Բառացի նշանակում է՝ համահունիական: Այդ անունով բնակավայրը գտնվում էր Միկալե թերակղզու վրա, որտեղ և գումարվում էր Հոնիայի քաղաքներից ժամանած ներկայացուցիչների համահունիական ժողովը:

5 Տե՛ս գիրք V, գլ. 37:

6 Հերոդոտոսն այստեղ նկարագրում է անտիկ ռազմածովային տակտիկայի ամենակարևոր կորաշարժը, որի էությունը հետևյալն էր: Հարձակվող նավը անցնում էր թշնամու երկու նավերի միջով այնպես, որ շարդեր դրանց թիակները և դրանով իսկ կրկեր նրանց մանևրելու հնարավորությունից: Այնուհետև, այդ ստեղծված բացվածքի մեջ ներխուժում էին մյուս նավերը, որոնք թշնամու նավերը շրջապատում էին թիկունքից: Թշնամու նավերի մոտով անցնող նավի ռազմիկները թշնամու վրա տեղում էին նետեր և քարեր, կրկելու համար նրանց հակամիջոցի դիմելու հնարավորությունից: Այսպիսի ռազմավարությունը պահանջում էր հարձակվող նավի հրամանատարի կարգադրության կայծակնային կատարում, որի համար անհրաժեշտ էր երկար մարզվել: Ահա այս զորավարժանքների դեմ էր, որ ընդվզում են նավերի անձնակազմերը և ռազմիկները:

7 Այստեղ նկատելի է պատմիչի ձգտումը՝ արդարացնելու սամոսցիներին, որոնց Հերոդոտոսը համակրում էր բացահայտորեն:

8 Թեսմոփորիա—Դեմետրա և Պերսեփոնե աստվածուհիների պատվին կատարվող տոնախմբություն, որին մասնակցում էին միայն անբասիր վարքի ամուսնացած ազատ կանայք: Տղամարդկանց մասնակցությունն այդ տոնին արգելված էր:

9 Եփեսոսը չէր հարել հոնիացիների ապստամբությանը: Հերոդոտոսը, հավանաբար, վկայակոչելով Թեսմոփորիայի տոնակատարությունը, փորձում է արդարացնել եփեսոսցիների դավաճանական արարքը իրենց ցեղակիցների՝ հոնիացիների հանդեպ:

10 Բնագրում γαῦλος—գավլոս. այդպես էին կոչվում փյունիկեցիների բեռնատար նավերը:

11 Այդ ժամանակ Միջերկրական ծովի արևմտյան ավազանում տիրություն էին անում փյունիկեցիները (կարթագենացիները) և տյուրենացիները (էտրուսկները):

12 Ապստամբությունն սկսվել էր 499 թ., հետևաբար Միլետն ընկավ 494 թ.:

13 Դիդիմեյում, Միլետի մոտ, գտնվում էր Ապոլլոնի տաճարն իր հռչակավոր պատգամատնով: Պարսից արքա Քսերքսեսը հրամայել էր պատգամատունը փոխադրել Բակտրիա: Միլետի անկումից հետո, միլետացիների մի մասը վերաբնակվում է Բակտրիայում:

14 Տե՛ս գիրք I, գլ. 92 և գիրք V, գլ. 36:

15 Մ. թ. ա. VI—V դդ. աթենացի ողբերգակ Փրինիքոսի այդ դրաման մեզ չի հասել: Այն պատմական դեպքերը բեմականացնելու մեզ հայտնի առաջին փորձն էր:

16 Զանկլե—քաղաք Սիկիլիայում (հետագայի Մեսսենա քաղաքը):

17 Այսինքն՝ Սև ծովից:

18 Բնագրում ὕπαρχος—հյուպարքոս:

19 Հոնիական քաղաքները նախ նվաճվեցին լյուդիական թագավոր Կրեսոսի կողմից, այնուհետև՝ Կյուրոս Մեծի զորավարներ Մապարեսի և Հարպագոսի կողմից, և երրորդ անգամ Դարեհ Ա-ի թագավորության ժամանակ:

20 Բնագրում ἔπαρχος—եպարքոս:

21 Սրբազան ճանապարհը Դելփիից մի շարք քաղաքների միջով տանում էր Աթենք:

Այդ ճանապարհով գնացողները համարվում էին աստծու հովանավորության տակ գտնվողներ, և նրանց հյուրընկալելը համարվում էր բարեգործություն:

22 Միլտիադեսի տոհմը, Աթենքի Ակմեոնյանների և Պիսիստրատյանների նման, իր ծագումը բխեցնում էր Տրոյական պատերազմի հերոսներից:

23 Այս հատվածը Թրակական թերակղզում ամենանեղ մասն է:

24 Պրոպոնտեյան—քաղաքային խորհրդի վարչական շենքը, խորհրդարանը, որտեղ գտնվում էր տնային օջախի աստվածուհի Հեստիայի (Վեստայի) զոհասեղանը:

25 Տե՛ս գիրք VI, գլ. 103:

26 Հերոդոտոսը այստեղ անդրադառնում է 493 թ. դեպքերին:

27 Իմբրոսը դեռևս չէր գրավվել պարսիկների կողմից:

28 Խոսքը 492 թ. գարնան մասին է:

29 Տե՛ս գիրք III, գլ. 80:

30 Թասոս—կղզի Հունաստանի հյուսիսում, Էգեյան ծովում:

31 Բառացի նշանակում է՝ «հատած անտառ», գտնվում էր Թասոս կղզու հատկապես թրակական ափին:

32 Էգինա կղզին գտնվում է աթենական ծովափի դիմաց և փակում է Աթենքի եզրը դեպի բաց ծով. հետևաբար, էգինացիների բռնած դիրքը կարող էր վճռական նշանակություն ունենալ աթենացիների համար:

33 Սպարտացիների համայնքի գլուխ կանգնած էին լինում միաժամանակ երկու թագավորներ, հավասար իրավունքներով:

34 Կրիոս (κριός) հունարեն նշանակում է՝ խոյ:

35 Աստված ասելով, Հերոդոտոսն այստեղ նկատի ունի Զևսին: Զրույցներից մեկի համաձայն, Պերսևսը եղել է Զևսի ու Դանայայի որդին:

36 Հետագա հատվածներից մեկում (VII, 150) Հերոդոտոսը պատմում է, թե, ըստ արաբների, Պերսևսը եղել է Ակրիսիոսի դուստր Դանայայի որդին:

37 Այստեղ Հերոդոտոսը նկատի ունի լոգոգրաֆներին:

38 Այս աստվածություններից առաջինը դիտվում է որպես սպարտացիների ցեղային աստվածություն, իսկ երկրորդը՝ երկնային: Հունական համայնքների թագավորները միաժամանակ կատարել են քրմական պարտականություններ:

39 Մեդիմնոս—սորուն նյութերի ատտիկյան չափ, որը հավասար էր 52,53 լիտրի:

40 Լակոնիական քառորդ չափի տարողությունը մեզ անհայտ է:

41 Սպարտայում «պրոքսենոս» կոչվում էր այն քաղաքացին, ում թագավորը հանձնարարում էր հյուրընկալել օտարերկրացիներին և պաշտպանել նրանց շահերը: Հունարենում այժմ այդպես է կոչվում դեսպանը:

42 Քոյնիկս—սորուն նյութերի չափի միավոր. հավասար է 1,1 լիտրի: Հունաստանում էր մեկ մարդու օրապահիկ:

43 Կոտյուլե—տարողության չափ, որը հավասար է 0,274 լիտրի:

44 Պատգամատնից ստացված գուշակությունները գրվում էին կաշիների վրա և պատվում թագավորների մոտ:

45 Խոսքը վերաբերում է այնպիսի դեպքի, երբ տվյալ աղջիկն իր հոր միակ ժառանգն է և իր ամուսնությունից հետո իր ամբողջ ունեցվածքը տանում է ամուսնու տուն:

46 Սպարտայի ծերերի (գերոնտների) խորհուրդը բաղկացած էր լինում ավագներից 28 ներկայացուցիչներից:

47 Պերիոյկները սպարտացիների հեղեն հայրենակիցներն էին, որոնք քաղաքացիական

ապատ լինելով հանդերձ, չունեին քաղաքացիական իրավունքներ Սպարտայի քաղաք-պետության մեջ:

48 Իլոտներ կոչվում էին սպարտական համայնքի ստրուկները: Նրանք համարվում էին համայնական սեփականություն:

49 Այդ արբավայրը գտնվել է Սպարտայից հարավ-արևելք: Ըստ ավանդության, եղել է Մենելաոսի և Հեղինեի դամբարանը: Պեղումները բացահայտել են տաճարի հիմնապատերը:

50 Սպարտացիները հավատում էին, որ Փոյբոսի այս արբավայրում թաղված են եղել դիոսկուրոսները՝ Հեղինեի եղբայրները:

51 Դեմարատոս բառացի նշանակում է՝ ժողովրդի մաղթանք:

52 Այս դեպքի նկարագրությունն ակնառու կերպով ցույց է տալիս, թե Հերոդոտոսը ինչպիսի կասկածանքով է վերաբերվում պատգամատուն գուշակություններին:

53 Գյումնոպեդիա—սպարտացիների ամենամյա ամառային տոնախմբություն, որի ժամանակ տեղի էին ունենում մարզական մրցումներ և պարեր:

54 Կյունիսկոս բառացի նշանակում է՝ շնիկ:

55 Ստիգս անունը կրող գետը հոսել է Արկադիայում և բարձր ժայռից գահավիժել է խորխորատ: Ստիգսի ջրերի անունով երդվելը սրբազան էր համարվում մարդկանց և աստվածների համար: Ստիգսը համարվել է մեռյալների ստորգետնյա թագավորության գետերից մեկը:

56 Տե՛ս գիրք VI, ծանոթ. 48:

57 Տե՛ս գիրք V, գլ. 66:

58 Տե՛ս գիրք V, գլ. 74:

59 Տե՛ս գիրք VI, գլ. 80:

60 Հին հույները գինին անխառն չէին խմում, այլ այն, կրատեր (խառնարան) կոչված կավե անոթի մեջ խառնում էին ջրով ու խմում:

61 Փասիս գետը հայկական Արաքսն է: Ստրաբոնովսկին (*Геродот*, с. 530. примеч. 75 մի դեպքում ճիշտ կերպով այն նույնացնում է Արաքսի հետ, մեկ այլ դեպքում, անվանացանկում (*Геродот*, с. 593) սխալ կերպով այն նույնացնում է Կողքիսի Ռիոն գետի հետ, որն, ի դեպ, նույնպես հնում կոչվել է Փասիս:

62 Սունիոնը հրվանդան է Ատտիկայի հարավային ծայրում, որտեղ գտնվում էր Պոսեյդոնի տաճարը (այժմ՝ հիասքանչ կիսականգուն ավերակներ): Այստեղ կատարվում էին Պոսեյդոնին նվիրված տոնախմբություններ: Դրանց մասնակցելու համար ավանդական ընտանիքների ներկայացուցիչները Աթենքից Սունիոն մեկնում էին պետական նավերով:

63 Թեսմոֆորա—օրենսդիր: Դեմետրայի հիմնական մականուններից:

64 Հունական հնգամարտ (պենտաթլոն) մրցությունը բաղկացած էր վազքից, թռիչք երկարությունից, ըմբշամարտից, սկավառակնետումից և նիզակնետումից:

65 Նկատի ունի պարսից արքայից արքա Դարեհին:

66 Ըստ ավանդության, Դելոսը համարվում էր Ապոլլոն և Արտեմիս աստվածների ծննդավայրը:

67 Այս նախադասությամբ Հերոդոտոսը տալիս է Հունաստանի պատմության մի ամբողջ հարյուրամյակի (522—424) սեղմ հանրագումարը:

68 Այս անուններին Հերոդոտոսի տված բացատրությունից կարելի է հետևցնել, թե պատմահայրը թյուր գիտելիքներ է ունեցել պարսկերենից:

69 Այս վիճակառուները շարունակում էին մնալ Աթենքի լիիրավ քաղաքացիները (հմմտ. գիրք V, գլ. 77):

70 Օրոպոս—ոչ մեծ քաղաք մայրցամաքային Հունաստանում, Եվբեա կղզու հանդիպակաց ափին:

71 Ստրատեգոս բառացի նշանակում է՝ զորավար: Ատտիկայի տասը ֆիլներից յուրաքանչյուրը միաժամանակ նաև ռազմական միավոր էր, որը դուրս էր բերում ծանրաբեռներից (հոպլիտներից) և հեծյալներից կազմված առանձին զորաջոկատ, իր ընտրովի ստրատեգոսով: Անվանապես ամբողջ զորքի գլուխ կանգնած էր լինում պոլեմարքոսը (ռազմապետը), բայց փաստորեն հերթականությամբ հրամանատարություն էին անում բոլոր տասը ստրատեգոսները:

72 Կիմոնը սպանվել է մ. թ. ա. 524 թ.:

73 Դատարանի նիստերի շենքը Աթենքում (տե՛ս գիրք VI, ծանոթ. 24):

74 Խոսքը վերաբերում է օլիմպոսյան գլխավոր 12 աստվածներին (Զևս, Հերա, Պոսեյդոն, Դեմետրա, Ապոլլոն, Արտեմիս, Արես, Աթենաս, Հեփեստոս, Աֆրոդիտե, Հերմես, Հեստիա):

75 Տե՛ս ծանոթ. 71:

76 Հարմոդիոսը և Արիստոգեյտոնը Աթենքում մեծարվել են որպես բռնատիրասպաններ (տիրանոկտոններ), Աթենքի տիրան Հիպպիասի (Պիսիստրատոսի որդու) դեմ կատարած մահափորձի համար:

77 Այստեղ Հերոդոտոսը նկարագրում է ծանրապենների (հոպլիտների) փաղանգի շեշտակի հարձակումը: Այս դեպքում փաղանգի նպատակն էր՝ կուռ շարքերով նետվել թշնամու վրա և ճեղքել նրա պաշտպանությունը: Մարաթոնում աթենական փաղանգի հարձակումը հաջողվեց, որովհետև բացակայում էր պարսկական հեծելազորը: Այդ նկատի ունենալով, հետագայում Քսերքսեսը մեծ թվով հատուկ նավեր կառուցեց, հեծելազորը փոխադրելու համար: Հույների տարած հաղթանակը Մարաթոնում հույների համար ուներ, առավելապես, բարոյական նշանակություն, քան ռազմական, քանի որի փաստորեն պարսկական զորքերի անպարտելիության մասին եղած պատկերացումը (տե՛ս Ս. Ջ. Ֆուրսե, История, с. 197):

78 Այս զորապետ Կյունեգիրոսը եղել է հույն ողբերգակ Էսքիլեսի եղբայրը:

79 Հմմտ. գիրք I, գլ. 46—55:

80 Ակմեոնը Սարդեսում եղել է շուրջ 570 թ., այսինքն՝ Կրեսոսի գահակալությունից առաջ, ուստի նա չէր կարող հանդիպած լինել Կրեսոսին:

81 Դիոսկուրոսներ (բառացի՝ Զևսի որդիներ): Հույն դիցաբանության մեջ այսպես են կոչվել Պոլիդևկես և Կաստոր երկվորյակները:

82 Խոսքը Աթենքի մ. թ. ա. V դ. երկրորդ կեսի խոշորագույն քաղաքական գործիչ Պերիկլեսի մասին է, որի անմիջական շրջապատին պատկանել է ինքը՝ Հերոդոտոսը:

83 Խոսքը Դեմետրա և Պերսեֆոնե աստվածուհիների մասին է:

84 Բառացի նշանակում է՝ օրենսդիր, օրենք հաստատող:

85 Եռեսյան բառացի նշանակում է՝ տարեկան, ամենամյա: Այդ քամիները հյուսիս-արևելքից փչում էին հուլիս-սեպտեմբեր ամիսներին:

ԳԻՐՔ ՅՈԹԵՐՈՐԴ

1 Քսերքսեսը գահի մառանգ նշանակվել էր դեռևս մ. թ. ա. 492 թ., Դարեհի Հունաստան կատարած արշավանքներից առաջ:

2 Դարեհը մահացել է 486 թ. աշնանը:

3 Տե՛ս գիրք III, գլ. 12:

4 Խոսքը պարսից արքունիքի խորհրդի մասին է, որին մասնակցում էին սատրապները և բարձր ավնվականության ներկայացուցիչները:

5 Խոսքը Կյուբելեի տաճարի մասին է (հմմտ. գիրք V, գլ. 102):

6 Հմմտ. գիրք VI, գլ. 94—119:

7 Պարսիկների համար բոլոր հելլենները հոնիացիներ էին (Ցառնա. հմմտ. Աստվածաշնչի Յավանը):

8 Հմմտ. գիրք IV, գլ. 87—89:

9 Այստեղ Քսերքսեսը, հավանաբար, նշում է իր նախնիներին երկու գծով՝ հոր և մոր կողմից, դրանք միացնելով իրար, քանի որ մայրը, Ատոսսան, Կյուրոսի դուստրն էր:

10 Այդ ժամանակ Քսերքսեսը պետք է լիներ 37 տարեկան:

11 Այսինքն՝ 481 թ.:

12 Տե՛ս գիրք I, 103 և գիրք IV, 1:

13 Այսինքն՝ տրոյացիների:

14 Բառացի նշանակում է՝ ջրվեժ:

15 Հոմերոսյան արտահայտություն (Իլիական, X, 413):

16 Արծաթ տաղանդը հավասար էր 26,2 կգ, մոտավորապես՝ 1500 ոսկի ռուբլի. մեկ ստատերը հավասար էր երկու ատտիկյան դրաքմայի (մոտ 50 կոպեկ ոսկով):

17 Խոսքը Փոքր Ասիայի Գայլ գետի մասին է:

18 Այստեղ խոսքը, հավանաբար գասպայի մասին է:

19 Խոսքը դահիճների պաշտոնի մասին է:

20 Մարմարա ծովից նեղուցի միջով դեպի Էգեյան ծով ջուրը հոսում է ժամը 2,8 կմ արագությամբ:

21 Արևի այս խավարումը տեղի է ունեցել մ. թ. ա. 478 թ. փետրվարի 17-ին, այսինքն, Հունաստան Քսերքսեսի կատարած արշավանքից (480) երկու տարի հետո: Հերոդոտոսի (կամ նրա օգտագործած աղբյուրի) ժամանակագրական այս սխալը մեկ համար անբացատրելի է:

22 Տե՛ս ծանոթ. 19:

23 Խոսքը պարսից արքայի թիկնապահների «անմահ» գնդի մասին է, որի հրամանատարը կոչվում էր հազարապետ:

24 Այսինքն՝ Ահուրամազդայի:

25 Նման նիզակներով պատկերված են արքայի թիկնապահները Պերսեպոլսի բարձրաքանդակներում:

26 Այժմ Կարա դաղ:

27 Սկամանդրոս—գետ Տրոադա երկրում. թափվում է Հելլեսպոնտոս:

28 Ըստ Հոմերոսի, Տրոյայի ծերունի թագավորը:

29 Այստեղ Քսերքսեսը նկատի ունի հոնիացիներին:

30 Քսերքսեսի մեջ տեսել են գերբնական, աստվածային էակ: Նման հայացքներ ներշնչում էին նաև Ապոլոնի քրմերը (հմմտ. Հերոդ., VII, 220): Ինքը՝ Քսերքսեսն իրեն հայտարարել էր աշխարհի փրկիչը չարից, որը գալիս էր աշխարհում նոր կարգեր հաստատելու (*В. В. Струве*, Этюды по истории Северного Причерноморья, Кавказа и Средней Азии, Л., 1968, с. 131—140):

31 Մելաս—բառացի նշանակում է՝ սև:

32 Քսերքսեսի զորքի այս թիվը՝ 1.700.000, խիստ չափազանցված է: Ուսումնասիրողներն այն հաշվում են 200 հազարից ոչ ավելի:

33 Բնագրում՝ ἀναξυρίδας—անաքսիրիդներ:

34 Բնագրում՝ μιτροφόροι

35 Բնագրում՝ Σύριοι—սիրիացիներ:

36 Բնագրում՝ Ἀσσύριοι—ասորեստանցիներ:

37 Հրատարակիչներից ոմանք բաց են թողել այս նախադասությունը:

38 Հավանաբար Արտաշես անվան հնագույն ձևերից մեկը:

39 Հերոդոտոսն այստեղ, հավանաբար, նկատի ունի բամբակը:

40 Հմմտ. գիրք III, 9: Սրանք բնակվում էին Բելուջիստանում:

41 Արտոքսես (ΑΡΤΟΧΜΗΣ) անունը, ենթադրաբար, պետք է կարդալ Արտաշես: Այդ մասին հանգամանորեն տե՛ս Ս. Մ. Կրկյաշարյան, Երվանդունիների արքայատոհմը Հայաստանում, ՊԲՀ, 1973, № 4, էջ 185: *С. М.Ркяшарян*, К интерпретации некоторых сведений древнегреческих авторов об Армении. Проблемы античной истории и культуры (Доклады XIV международной конференции античников социалистических стран „Эйрене", Ереван, 1979, ч. 1, с. 129):

42 Չշփոթել Հունաստանի Օլիմպոս լեռան հետ: Այստեղ խոսքը վերաբերում է Մյուսիայում գտնվող նույնանուն լեռան (այժմ Քեշիշ-դաղ):

43 Այստեղ Հերոդոտոսի ձեռագրում կա բացթողում: Ուսումնասիրողները ենթադրում են, որ այս հատվածում հիշատակված են եղել պիսիդիացիները:

44 Խոսքը Պարսից ծոցի մասին է:

45 Տե՛ս գիրք IX, գլ. 102:

46 Այսինքն՝ Պարսից ծոցի:

47 Տե՛ս գիրք I, գլ. 173:

48 Տե՛ս գիրք I, գլ. 171:

49 Հունաստանի հնագույն բնակիչներին Հերոդոտոսն, ընդհանրապես, անվանում է պելասգներ: Հմմտ. գիրք I, 146 և II, 171:

50 Տասներկու քաղաքների մասին տե՛ս գիրք I, գլ. 142:

51 Դեմարատոսը Սպարտայի արտաքսված թագավորն էր:

52 Տե՛ս գիրք V, գլ. 7:

53 Հայաստանում Օդոմանտների անունը կրող մի մարդ հիշատակում է Ստրաբոնը (XI, 14, 5):

54 Մոգերն այստեղ կոհեր մատուցում են Միհրի պատվին, որին նվիրաբերում էին սպիտակ ձիեր: Միհրը համարվում էր նաև հաղթանակի աստված:

55 Ստագիրա քաղաքում ծնվել է փիլիսոփա Արիստոտելը:

56 Այսինքն՝ երկու և կես մետրից ավելի:

57 Հելլենները գինին անխառն չէին խմում, այլ այն խառնում էին ջրի հետ: Կրատերը կավե այն անոթն էր, որի մեջ գինին խառնում էին ջրով:

58 Թվարկված այս ոչ մեծ քաղաքները կազմում էին Սալոնիկի ծովախորշը փակող ամրությունների մի շղթա:

59 Կա նաև Եքիդորոս տարընթերցվածը:

60 Այսպիսով, Թեսալիայից մինչև Պելոպոնեսոս ընկած հելլենական քաղաքները, բացի Էպիրոսի, Էտոլիայի և Ակառնանիայի մարզերից, հպատակություն հայտնեցին պարսիկներին: Միայն Ատտիկան, Պլատեան, Եվբեան, Կորնթոսը, մի քանի կղզիներ և Պելոպոնեսոսի մեծագույն մասը պաշտպանում էր իր անկախությունը:

61 Խոսքը Դարեհի ուղարկած դեսպանների ոչնչացման մասին է:

62 Այս հատվածում նկարագրված դեպքերը ոչ մի առնչություն չունեն Քսերքսեսի ար-

շավանքի հետ: Դրանք վերաբերում են Պելոպոնեսյան կոչված պատերազմի (431—404) սկզբնական շրջանին:

63 Նկատի ունի Պելոպոնեսոսը ցամաքային Հունաստանին միացնող նեղ պարանոցը: Ἰσθμός (իսթմոս) բառացի նշանակում է՝ պարանոց:

64 Նկատի ունի Ակրոպոլիսի բլուրը, որտեղ գտնվում էր այդ հերոսի դամբարանը:

65 Տրիտոգենե—Աթենասի մականուններից մեկը. իսկ Տրիտոգենեի պարիսպ ասելով նկատի է առնված Աթենքը:

66 Լավրիոն—ոչ մեծ բնակավայր Ատտիկայում, Սունիոն հրվանդանի մոտ, հայտնի իր արծաթի ու կապարի հանքերով:

67 Տե՛ս գիրք VI, գլ. 49 և 94:

68 Պերսես—հունարեն նշանակում է պարսիկ:

69 Մեմնոնյան կոչված Սուսայի մասին տե՛ս գիրք V, գլ. 53:

70 Ստորերկրյա դիցուհիներ համարվում էին Դեմետրան ու նրա դուստր Պերսեփոնեն: Հիերոֆանտես—քրմապետ:

71 Գամորոսներ կոչվում էին Սիկիլիայի ազնվական խոշոր հողատերերը:

72 Հունարեն՝ Καρχηδόνιοι—կարթեդոնացիներ:

73 Տե՛ս գիրք V, գլ. 42—46:

74 Դեռևս Տրոյական պատերազմի ժամանակ Սպարտայի թագավոր Ագամեմնոնը հանդես է գալիս որպես հայահելլեն ցեղերի գլխավոր առաջնորդ:

75 Խոսքը Մենեսթևսի մասին է (Իլիական, II, 546—555):

76 Խոսքը վերաբերում է Իսպանիայի հնագույն բնակիչներին:

77 Լիգիյները լիգուրներն են, կյուռոսները՝ կորսիկացիները, սարդոնները՝ սարդինիացիները, ելիսկիները՝ Պիրենյանների և Հռոնա գետի միջև բնակվող իբերական ցեղերը:

78 Խոսքը վերաբերում է Պարիսի կողմից Հելենեի առևանգմանը, որը և դարձավ Տրոյական պատերազմի առիթը:

79 Այս պատերազմը տեղի ունեցել է մ. թ. ա. 473 թ.:

80 Պարսկամետ Դելֆյան պատգամատունը կրետացիներին զգուշացրել էր հրաժարվել աթենացիներին և սպարտացիներին օգնելուց:

81 Թեսալիայում ևս, հունական մյուս պետությունների նման, գոյություն է ունեցել այսպես կոչված, ժողովրդական կուսակցություն, որն այդ ժամանակ դեռևս չէր կարողանում հաղթահարել Ալևադյանների գլխավորած խոշոր հողատերերի իշխանությունը: Թեսալիայի ժողովրդական զանգվածները պաշտպանել են աթենացիներին:

82 Հմմտ. գիրք VII, գլ. 128:

83 Մոտավորապես 15 մետր:

84 Թերմոպիլե հունարեն նշանակում է՝ տաք դռներ, տաք դարպասներ:

85 Բնագրում՝ γέφυρα—նշանակում է՝ եփելու պտուկ:

86 Լեոն (λέων) հունարեն նշանակում է՝ առյուծ:

87 Մյուրմեքս (μύρμηξ) բառացի նշանակում է՝ մրջյուն:

88 Ստորջրյա խութի վրա այուն կանգնեցնելով, պարսիկները նպատակ ունեին ապահովել ամբողջ նավատորմի նավարկումը:

89 Ուսումնասիրողները Հերոդոտոսի հաղորդած այս թվերը համարում են խիստ չափազանցված:

90 Քոյնիկս և մեդիմնոս չափերի մասին տե՛ս գիրք I, ծանոթ. 148:

91 «Իպնոյ» բառացի նշանակում է՝ վառարաններ:

92 Բորեասը հյուսիսային քամու աստվածությունն էր:

93 Թետիսը, Աքիլլեսի մայրը, հունական ծովային աստվածություն էր: Պարսիկները ստար երկրում կոիեր մատուցում էին տվյալ վայրի աստվածության: Պարսից թագավորներն այդպես վարվել են նաև Եգիպտոսում ու Բաբելոնում:

94 Ներեուիիները (ջրանուշներ) համարվում էին ծովային Ներևս աստծու դուստրերը:

95 Պելեսը Աքիլլեսի հայրն էր, Թետիսի ամուսինը:

96 Ժողովրդական ստուգաբանությամբ՝ դուրս գալու, մեկնելու վայր:

97 Այստեղ գտնվում էր ամփիկտիոնների միության սրբավայրը՝ Դեմետրայի տաճարը և հերոս էպոնիմոս Ամփիկտիոնի սրբավայրը: Տաճարի շուրջ միավորվել էին հարևան ցեղերը, որոնք կոչվում էին ամփիկտիոններ:

98 Կառնեյա—Սպարտայում կատարվող տոնախմբություն Ապոլոնի պատվին, այն տեղի էր ունենում սեպտեմբերին:

99 Պիլագորներ կոչվում էին ամփիկտիոնների միությունը կազմող ցեղերի ուղարկած Ներկայացուցիչները:

100 Հերոդոտոսի այս խոսքը վկայում է, թե պատմահայրը մտադիր է եղել շարունակել իր պատմությունը, բայց նրա մահացումը մնացել է անավարտ:

101 Մեգամբազ—առասպելական գուշակ:

102 Այս ձևով իջեղները կարող էին ցած հասնել կեսորին:

103 Այդ 300 հոգուց բաղկացած սպարտական ջոկատը կազմված էր ամենամի գեղեցիներից ընտրած որոշակի տարիքի զորամիներից: Լեոնիդասի անձնուրաց թեթևել է Թերմոպիլե և այնտեղ թաղվել մ. թ. ա. 480 թ.: Նրա դամբարանի վրա կանգնեցրել է հուշարձան, երեք հարյուրի անուններով, որը, հավանաբար, տեսել է Հերոդոտոսը:

104 Ամենայնդեպս այս երեք արձանագրություն-տապանագրերը հիրավի գոյություն է ունեցել Սիմոնիդեսին: Հավանաբար վերջին արձանագրության ծագումը հարցական է. նրա Սիմոնիդեսը:

105 Հին աշխարհում խորանագրերը էին միայն տարակներին:

106 Այստեղ դասերը նախատեսված էր խորհրդարանի համար: Հանդերձյալ. Քսերքսես Լեոնիդասին նշանակում էր հրամանատար:

107 Տե՛ս գիրք VII, գլ. 220:

ԳԻՐՔ ՈՒԹԵՐՈՐԴ

1 Հերոդոտոսն այստեղ նկատի ունի Բյուզանդիան գրաված պարսիկներին (477/476 թ.) Եվրոպան դեպքերը:

2 Հելլեսպոնտ նշանակում էին, թե պարսից նավատորմի մեծ մասը խորտակվել էր փոթորիկ:

3 Ընդունվ. լրտեսներ:

4 Թեսալիան հանդիսանալով նաև Սպարտայի ավանդական թշնամիներից մի մասը անցնում է աստիճանաբար հորդ: Պարսկական նավատորմի գործը էր Բյուզանդիայի մեջտեղը և նավարկում էր հարավարևելյան ափերով դեպի Սամոս:

5 Հմմտ. գիրք I, գլ. 46

6 Հմմտ. գիրք I, գլ. 70—71

7 Մեգասրոն—տաճարի մեջտեղի նավակատեղ:

8 Նշանակ. սանդարամետրերի հետ: Դարձյալ գեղագիտական պատճառով մարդիկներին նշանակում է դարձյալ գեղեցիկ: Պարսկական մեծամեծերը սովոր էին ունենալ Պերսեֆոնեի Պերսեֆոնեի:

9 Արեոս պագոս բառացի նշանակում է՝ Արեսի բլուր:

10 Հետաքրքիր է նշել, որ 1940 թ. մայիսին, երբ գերմանաֆաշիստական կորքերը նոր էին օկուպացրել Աթենքը և իրենց կեռխաչ դրոշակը բարձրացրել Ակրոպոլիսի վրա, Հունաստանի ազգային հերոս Մանոլիս Գլեզոսը գիշեր ժամանակ նույն այս կեռից մագլցելով, ցած էր առել ֆաշիստական դրոշակը:

11 Աթենասն առաջացրել է Ձիթենին, իսկ Պոսեյդոնը՝ ադի ջուրը: Աթենքի թագավոր Կեկրոպսը նախընտրել է Ձիթենին և երկիրը կոչվել է Աթենասի անունով, ընդունելով նրա հովանավորությունը:

12 Խոսքը վերաբերում է Էակյանների արձաններին, որոնց վերագրում էին հրաշագործ զորություն:

13 Ոմանք ենթադրում են, թե Հերոդոտոսի հաղորդած տեղեկությունները Քսերքսեսի քանակի թվական կազմի մասին հիմնված են հիշյալ Դիկայոսի գրառումների վրա:

14 Թրասիոն դաշտը գտնվում էր Աթենքից հարավ-արևմուտք:

15 Այսինքն՝ Դեմետրայի և Պերսեփոնեի:

16 Իակքոսը այդ տոնախմբությունների ընթացքում երգված երգչախմբային փառաբանական երգ էր:

17 Հմմտ. գիրք VIII, գլ. 46, որտեղ, սակայն, այդ քաղաքները վեցն են:

18 Արտեմիսիան Հերոդոտոսի ծննդավայր Հալիկառնասսոս քաղաքի թագուհին էր, որը դաշնակցել էր Քսերքսեսի հետ:

19 Այսինքն՝ ոչ մի պատճառ չկար նրանց չգալուն:

20 Սալամիսում և Մունիքիայում կառուցված են եղել Արտեմիսին նվիրված տաճարներ:

21 Օստրակիզմ—խեցիներով ընդհանուր քվեարկության միջոցով համայնքին անցանկալի որևէ քաղաքական գործչի արտաքսման ձև Աթենքում:

22 Հմմտ. գիրք VII, գլ. 181:

23 Հմմտ. գիրք VI, գլ. 49 և 73:

24 Հերոդոտոսը, ցանկանալով հաճոյանալ աթենացիներին, փորձում է անվանարկել կորընթացիներին, որոնք եղել են աթենացիների մրցակիցը: Ուսումնասիրողներից շատերը կասկածում են Հերոդոտոսի այս պատմածի ճշմարտության վրա:

25 Այստեղ գտնվել են պարսից արքայի կալվածները և ներքինի Հերմոտիմոսը գնացել էր այնտեղ շրջելու:

26 Զշփոթել Ալեքսանդր Մակեդոնացու հետ: Տե՛ս գիրք V, ծան. 16:

27 Հմմտ. գիրք I, գլ. 51:

28 Բելբինա—անհշան կղզյակ Սունիոնից հարավ:

29 Թագավորական մյուս տոհմը Ագիսի սերունդն էր, որի հետնորդն էր Թերմոպիլեի հերոս Լեոնիդասը (տե՛ս գիրք VII, գլ. 204):

30 Այլ աղբյուրից անհայտ: Զշփոթել պատմահայր Հերոդոտոսի հետ:

31 Խոսքը Ջիբրալթարի մասին է:

32 Խոսքը գեղատեսիլ և բարեբեր Եդեսսայի (այժմ Վոդենա) հովտի մասին է: Փռյուգական Միդաս և Գորդիաս անունները, հավանաբար, ցույց են տալիս, որ այս վայրում ապրել են փռյուգացիները, նախքան իրենց Փոքր Ասիա գաղթելը:

33 Սիլենոսի մասին առասպելը ևս ունի փռյուգական ծագում: Այս հանգամանքը խոսում է հօգուտ այն բանի, որ փռյուգացիները մի ժամանակ բնակվել են Մակեդոնիայում:

ԳԻՐՔ ԻՆՆԵՐՈՐԴ

1 Մարդոնիոսն իր արշավանքն սկսեց 479 թ. գարնանը: Նա հուլիս ամսին գրավեց Աթենքը:

2 Յակինթիա տոնը, հավանաբար, ունեցել է նախադորիական ծագում և նշվում էր ի հիշատակ Ապոլոնի կողմից Յակինթոսի սպանության:

3 Տե՛ս գիրք III, գլ. 135:

4 Արևի այդ խավարումը տեղի ունեցել է 480 թ. հոկտեմբերի 2-ին, այսինքն՝ Սալամիսի նավամարտում Քսերքսեսի պարտությունից հետո: Հետևաբար, Պավսանիասը հեռացել է Իսթմոսից ոչ թե արևի խավարման պատճառով, այլ պարսիկներն արդեն նահանջել էին և նրանց ներխուժման վտանգը վերացել էր:

5 Եվրիանաքսը Պավսանիասի հորեղբորորդին էր:

6 Պերիոյկներ կոչվում էին Լակեդեմոնիայի քաղաքների և այլ բնակավայրերի բնակիչները, որոնք լիիրավ քաղաքացիներ չլինելով հանդերձ, պարտավոր էին ծառայել սպարտացիների բանակում:

7 Մարդոնիոսը ծառերը կտրում էր, ըստ երևույթին, այն պատճառով, որ դրանք խանգարում էին հեծելազորի գործողություններին:

8 Այստեղ դիրքավորվելով, հելլենները ապահովում էին իրենց թիկունքը, քանի որ պարսկական հեծելազորը չէր կարող գործել բլրաշատ տեղանքում:

9 Ընդունված կարգի համաձայն, թևերից մեկը մշտապես պաշտպանում էին լակեդեմոնացիները:

10 Ըստ հելլեն դիցաբանության, Հյուլլոսը եղել է Հերակլեսի որդին:

11 Պոլինիկեսի այս արշավանքի հետ կապված գրույցը հիմք է դարձել Էսքիլեսի «Յոթը Թեբեի դեմ» ողբերգության:

12 Այս արտահայտությունը պիտի հասկանալ «մեծաթիվ» առումով:

13 Հակառակորդ կորքերի դասավորման այս նկարագրության մեջ կգալի է Հերոդոտոսի կրած ազդեցությունը Հոմերոսից:

14 Հին Հունաստանում հնգամարտի ձևերն էին՝ վազք, ցատք, ըմբշամարտ, նիզակի և սկավառակի նետում:

15 Բակիս—հին բեոտիացի գուշակ-պատգամախոս:

16 Զշփոթել Փոքր Ասիայում հոսող Թերմոդոն գետի հետ:

17 Պիտանետա փոքրիկ քաղաքը գտնվում էր Լակոնիայում, տե՛ս գիրք III, գլ. 55:

18 Ալեաս—Հերակլեսի հետնորդ, Լարիսայի առասպելական թագավոր:

19 Սպարտական հոպլիտները կռվում էին փաղանգներ կազմած, որոնց դեմ պարսիկները, առանց հեծելազորի օգնության, անզոր էին:

20 Հոմերոսյան արտահայտություն (Իլիական, VI, 112):

21 Հմմտ. գիրք VII, գլ. 231:

22 Հերոդոտոսն այստեղ նկատի ունի Պելոպոնեսյան պատերազմի սկիզբը (431—430 թթ.), երբ սպարտացիները սիստեմատիկաբար ամայացնում էին Ատտիկան:

23 Այս ոսկե հանքերը գտնվում էին Թասոսում, իսկ Դատոս բնակավայրը՝ Թասոսին հանդիպակաց թրակական ափին: Հերոդոտոսի հիշատակած այս ճակատամարտը տեղի է ունեցել մ. թ. ա. 466 թ.:

24 Այս եռոտանին այժմ կանգնած է Պոլսի Աթ Մեյդանում. դրա վրա այժմ էլ կարդացվում են Պլատեայի ճակատամարտին մասնակցած հելլենական քաղաքների անունները:

25 «Իրեներ» կոչվում էին 20—30 տարեկան սպարտացիները: Միայն 30 տարեկան

դառնալուց հետո սպարտացիներն անցնում էին այրերի շարքը և համարվում լիիրավ քաղաքացիներ:

26 Մյուկալե—հրվանդան Փոքր Ասիայի հոնիական ափին:

27 Հեգեսիստրատոս բառացի նշանակում է կորքի առաջնորդ:

28 Տիրուհիներ կոչվում էին Դեմետրա և Պերսեփոնե աստվածուհիները:

29 Պանկրատիոնը մրցման ձև էր, որտեղ կուզակցվում էին ըմբշամարտը և բռնցքամարտը:

30 Լեկտոն հրվանդանը գտնվում է Ադրամյուտիոն ծոցի արևմտյան եզրին:

31 Բնագրում τάρτχος (տարիխոս): Այս բառից առաջացել է հայերենում տառեխ ձկան անունը:

ՑԱՆԿԵՐ*

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ ԵՎ ԴԻՑԱՆՈՒՆՆԵՐ

Աբարիս 232
Աբրոկոմես 455
Աբրոնիքոս աթենացի 467
Ագաթյուրսոս 225
Ագամեմնոն 29, 255, 424, Պելոպսյան 435
Ագասիկլես 61
Ագարիստե 377
Ագարիստե, դուստր Կլիսթենեսի 379
Ագարիստե, դուստր Հիպոկրատեսի 379
Ագրալոս 414
Ագենոր 413
Ագեոս 378
Ագետոս 355
Ագիս 356
Ագլամաքոս 276
Ագրան 7
Ադեյմաս 462
Ադիմանթոս (Ադեյմանտոս) 426, 477, 478, 488
Ադրաստոս, որդի Տալաոսի 312, 313
Ադրաստոս, որդի Գորդիասի 18—20
Ադրիկա 274
Աերոպոս 503, 516
Ազանես 408
Աթամաս 406, 447, 448
Աթենագորաս 539
Աթենագես 452
Աթենաս 26, 72, 98, 111, 118, 280, 283, 316, 318, 476, 492, Իլիոնյան 401, Կենդրոյան 158, Գրանեյան 471
Ամենեստոս 530
Ալազեյր 276
Ալեքսանդր, որդի Ամյունտասի 294, 295
Ալեքսանդր (Պարիս), որդի Պրիամոսի 6, 129—132
Ալեքսանդր Մակեդոնացի 293, 440, 441, 470, 498, 502—509, 524, 572
Ալիլատ տե՛ս Ուրանիա
Ալիատտ տե՛ս Ափրոդիտե
Ալկամենես 449
Ալկայոս 7, 326
Ալկեոնոր 36
Ալկեստես 503
Ալկիբիադես 466
Ալկիդաս 355
Ալկիմաքոս 369
Ալկմեոն 105, 144
Ալկմենե 25, 377—379
Ալկոն 378
Ալյուատտես լյուդիացի 7, 10—13, 21, 33, 42, 178, 471
Ալֆեոս 456
Ալեաս (Ալեես) 424, 528
Ամբրաքոս 471
Ամբրոսիոս 352
Ամոսիս 556
Ամասիս մարաֆիացի 34, 105, 139, 144, 148,

* Կազմեց Ա. Հ. Շագրամյանը

151—162, 164—166, 175—178, 208, 277, 287
Ամբյուրիոս 378
Ամեսարիս 407, 419, 546, 547
Ամիանտոս արկադիացի 378
Ամիկլաս կարթագենացի 437, 438
Ամինիաս Պալլենես 485, 488
Ամինոկլես մագնեսիացի 445
Ամյութեվմ 108
Ամյունտաս 293, 294, 325, 440, 502—504, 524
Ամյուրտայոս 142, 165
Ամոմփարեստոս սպարտացի 527, 528, 533, 537
Ամմոն տե՛ս Զեվս
Ամորգես 334
Ամփիարաոս 21—23, 41, 197, 502
Ամփիլյուտոս Ակառանանիացի 27
Ամփիլոքոս 197, 413
Ամփիկտիոն 448
Ամփիկրատես 183
Ամփիմնեստոս եպիդամնոսցի 378
Ամփիոն 322
Ամփիտրիոն 105, 106, 144, 309, 352
Այակես Սամոսցի (էգինացի) 213, 266, 339, 340, 342, 346
Այակոս 317, 320
Այաս 346, 498
Այնեսիդեմոս 433, 437
Այսանիոս 270
Այսխինես 368, 369
Այսքրայոս 464
Անագիրասիոս աթենացի 488
Անակրեոն Տեոսցի 206
Անաքսագորաս 564
Անափես 407
Անաքարսիս 237, 246, 247
Անաքսանդրիդես 29, 216, 302, 303, 310, 351, 371, 431, 435, 449, 481, 501, 510, 530
Անաքսանդրոս 449
Անաքսիլաոս 343, 437, 439, 501
Անդրեաս 377
Անդրոբալոս 427
Անդրոդամաս 485, 539
Անդրոմեդա 407, 431, 432
Աներիստոս 425, 426
Անքեմոս 325
Անյուսիս 140
Անյուտոս 414
Անոնն 437
Անտիդորոս Լեմնոսցի 464
Անտիոքոս 519
Անտիպատրոս 420
Անտիֆեմոս 433
Անտիքարես 303
Անֆիմոլիոս 310
Ապի տե՛ս Գեա
Ապիս 183
Ապոլլոն 31, 39, 41, 118, 144, 149, 150, 180, 227, 240, 272, 274, 309, 361, 375, 396, 470, 472, Իսմենյան 23, 41, 502, Պատյան 502, Տրիոպական 61
Ապոլլոփանես 344
Ապրիես եթովպացի 151—154, 159, 160, 274
Ասիա, կին Պրոմեթեսի 236
Ասիաս 236
Ապյուիս 140
Ասոնիդես 442
Ասոպոդորոս 532
Ասոպոս 317
Ասպարիենես 188, 191, 414, 560
Աստակոս 312
Աստեր 310
Աստյուագես մեդացի 21, 32, 33, 41, 47—57, 67, 184, 386
Աստրոբակոս 358
Ավտեսիոն 269, 351
Ավտոդիկոս 537
Ավտոնոոս 472
Ավֆեսիա 317, 318
Ատտագինոս թեբեցի 512, 537, 538
Ատյուս 7, 17, 42, 396, 410
Ատոսսա 187, 195, 210, 211, 384, 408, 411
Ատրիդես 29
Արաբ 162
Արգանթոնիոս 67, 68
Արգե հյուպերբորեացի 233
Արգեյա 351
Արգեոս 503
Արգիմպասա տե՛ս Ափրոդիտե
Արգոս 361

Արդյուս 10, 11
Արդումանիշ 560
Արես 111—113, 118, 240, 241, 290, 427, 483
Արիաբիգնես 414, 486
Արիագոս 411
Արիանտաս 249
Արիապիթես 246, 247
Արիարամնես պարսիկ 391, 487
Արիդոլիս 447
Արիմնեստոս պլատեացի 533
Արիոմարդոս 408, 410
Արիոն մեթյումնացի 12, 13
Արիստագորաս Կյուզիկոսցի 266
Արիստագորաս Կյումեցի 266
Արիստագորաս Միլետացի 298—301, 305—308, 311, 326—329, 331—338, 340, 341, 387, 539
Արիստեաս պրոկոննեսոսցի 226—228
Արիստեոս կորնթացի 426
Արիստիդես 483, 484, 488, 518
Արիստոգիտոն 308, 372, 376
Արիստոդեմոս 457, 533
Արիստոդեմոս, որդի Արիստոմաքոսի 269, 351, 352, 449, 501
Արիստոդիկոս 66
Արիստոլայիդես 25
Արիստոկիպրոս 332
Արիստոկրատես 359
Արիստոմաքոս 351, 449
Արիստոն 266
Արիստոն, հայր Դեմարատոսի 29, 315, 351, 355—358, 384, 415, 450, 460
Արիստոնն, դուստր Կյուրոսի 409
Արիստոնիկե տե՛ս Պյութիա
Արիստոնիմոս 377
Արիստոտելես 553
Արիստոֆանես 356, 357
Արիստոֆիլիդես 212
Արիֆրոն (Արիֆրոն) 379, 381, 398, 501
Արկադես 311, 312
Արկեսիլաոս 158, 274—277, 286, 287
Արյուանդես 277, 288
Արյուենիս 33
Արպոքսախս 223, 224
Արտամենես, որդի Դարեհի 408
Արտամես, որդի Արիարամնեսի 391
Արտամես, որդի Դարեհ I-ի և Արիստոնի 85, 409, 455
Արտաբազոս 79, 408, 499, 500, 522, 523, 531, 535, 538
Արտաբանոս 249, 268, 388, 390—394, 402—405, 408, 410, 411, 468, 476, 528, 532
Արտաբատես 408
Արտամիդես 456
Արտայոս 395, 408
Արտայուկտես պարսիկ 398, 410, 548, 549
Արտայունտ 545, 546
Արտայունտես 408, 500, 543, 545
Արտանես 455
Արտաշես I 572
Արտափրենես, որդի Հյուտասպի 296, 298—300, 314, 326, 328, 334, 336, 337, 345, 348, 367
Արտափրենես, որդի Արտափրենեսի 367, 375, 387, 389, 410
Արտամայես (Արտամայոս) 395, 408, 420, 500
Արտամբերեսես 368, 417, 432
Արտեմբարես 50, 51, 549
Արտեմիս 13, 111, 118, 141, 149, 233, 290, 483, Թրաքոնյան 382, Օրթոսիա 250
Արտեմիսիա 415, 480, 481, 486, 488, 491, 493
Արտյուբիոս պարսիկ 330—332
Արտյուստոն 195, 409
Արտյուփիոս 408
Արտոբազանես 384, 385
Արտոզուստրե 349
Արտոնտես 208, 537
Արտոմես 409
Արքանդրոս 123
Արքեստրատիդես 539
Արքիաս 181
Արքիզամոս 359, 501
Արքիդիկե 140
Արքիլոքոս Պարոսցի 9
Ափրոդիտե 46, 57, 82, 158, 161, 162, 240, 243, 461
Ափայոս 123
Ափեմենես 163, 386, 391, 414, 459

Բագաբուխչա 560
Բագայոս 208, 209, 411, 500
Բագրես 287
Բաղրես պասարգադացի 277, 410
Բակիս (գուշակ) 466, 483, 489, 523
Բասակես 410
Բասիլեյդիս 501
Բատտոս I 270, 272—274, 287
Բատտոս II եբշանիկ 157, 274
Բատտոս III 275, 288
Բաբոս 248
Բեյոս 7, 407
Բիաս պրիենացի 14, 70, 520
Բիսալտես արիդոսցի 344
Բիտոն 15, 16
Բոգես 418, 419
Բորեաս 445
Բուբաստիս տե՛ս Արտեմիս
Բուբարես պարսիկ 295, 395, 502
Բուդակիդես 304
Բուլիս 425, 426

Գավանես 503
Գաոբրուվնա 560
Գեա 240
Գեբելեյզիս տե՛ս Սալմոքսիս
Գելեոն 311
Գելոն 429, 432—438
Գելոնոս 225
Գերգիս 411, 421
Գերյոտնես 224
Գիլլոս տարանտեցի 213
Գլավկոն 534
Գլավկոս Քիոսցի 13, 62, 363—365
Գյուգայա 295
Գյուգես 8—10, 206, 334, 502
Գնուրոս 246
Գոբրյաես (Գոբրյասաս) 188, 189, 191, 264, 265, 349, 384, 385, 390, 409, 411, 414, 522, 560
Գոյտոսյուրոս տե՛ս Ապոլլոն
Գորգիոս 503
Գորգա 121, 305, 306, 460
Գորգոս կիզիկացի 329, 332, 414, 464
Գորդիաս 10, 18, 20
Գրիֆենոս 270

Դամասիքիմոս 415, 486
Դամատոս 378
Դամիա 317, 318
Դանայա 120, 352, 407, 431
Դանաոս 121, 123, 154, 158, 414
Դասկյուլոս 8
Դավրիսես 333, 334
Դատիս մեդացի 367, 368, 375, 387, 389, 410, 412
Դարեհ I պարսիկ 57, 75—77, 85, 86, 127, 128, 150, 163, 175, 188—191, 194—196, 198, 199, 205, 208—214, 216—220, 222—224, 234—236, 249—256, 260—268, 277, 288, 289, 291—294, 296—299, 301, 303, 311, 314, 326, 327, 329, 330, 333, 334, 336, 338, 340, 342, 343, 345, 348—350, 358, 362, 367—369, 375, 384—386, 389, 391—394, 396, 398, 404, 406, 408—411, 414, 417, 424, 425, 444, 446, 447, 455, 456, 486, 545, 546, 560, 565, 574, 575
Դարեհ III 572
Դափնիս Արյուդոսցի 266
Դեղալոս 439
Դեիփոնոս 539, 541
Դեկելես 366, 533
Դեմարատոս լակեդեմոնացի 315, 351, 354, 356—360, 363, 384, 385, 415—417, 450, 451, 458—460, 478, 479
Դեմարմենոս 302, 356
Դեմետրա 79, 104, 111, 112, 135, 149, 154, 283, 448, 479, 531, Ամֆիկտիոնյան 448, Ելևսինյան 528, Թեսմոֆորա 380
Դեմոկեդես կրոտոնցի 207, 209—213
Դեմոկրիտոս 474
Դեմոնաքս Մանտինեացի 275
Դեմոնոս 447
Դեմոփիլոս 455
Դեյոկես 10, 32, 43—45
Դիադրոմես 455
Դիակտորիդես 359, 378
Դիենեկես սպարտացի 456
Դիբիրամբոս 456
Դիկայոս 478, 479

Դինոմենես 429
Դիոմեդես 130
Դիոնիսոս Հալիկառնասցի 555, 556
Դիոնիսիոս փոկայացի 339, 341
Դիոնիսոս 63, 99, 105, 107—109, 135, 144, 149, 161, 162, 198, 202, 256, 312
Դիոնիսոփանես 537
Դոտոս 409
Դորիես 302—304, 435, 449, 510
Դորոս 24
Դեկալիոն 24

Եգիպտոս 158
Եպափոս 103
Եպիալտես տրաքիսցի 452—456
Եպիզելոս աթենացի 374, 375
Եպիկիդես 363, 364
Եպիստրոպոս 378
Եսովպոս 139
Եվագորաս լակոնիացի 369
Եվալկիդես 328
Եվայենետոս 440
Եվրիադես 493
Եվելթոն 275, 276, 329
Եվենիոս 539—541
Եվթոյնոս 544
Եվկլիդես 433
Եվմենես աթենացի 488
Եվնոմոս 501
Եվպալինոս մեգարացի 183
Եվսեբիոս Կեսարացի 554
Եվտերպե 89
Եվայոմիդես 533
Եվրիանաքս 510, 527
Եվրիբատես արգոսցի 366, 534
Եվրիբիադես 461, 462, 473, 474, 476—478, 482, 484, 493, 498
Եվրիդամե 359
Եվրիդեմոս 452
Եվրիկլիդես 461, 473
Եվրիկրատես 449
Եվրիկրատիդես 449
Եվրիմաքոս 449, 458
Եվրիպիդես 528
Եվրիսթենես 269, 302, 351, 352, 449
Եվրիսթես 515, 516
Եվրիտոս 457
Եվրիփոն 501
Եվրյուլեոն 304
Եվրոպե 5, 71, 106, 236
Եվփեմոս մինյացի 270
Եվփորբոս 369
Եվփորիոն 149, 374, 378
Եսեարքոս ամմոնացի 100, 101, 272
Եսեկիլես 309
Երեմթես 318, 445, 473
Երմոփանտոս 327
Երյուքմոս 275
Երմսանգրոս 253
Երեկրատես 322
Երեմոս 516

Զեպյուրոս 217—221, 235, 411, 560
Զես 20, 28, 40, 57, 72, 75, 84, 93, 95, 99, 105, 106, 118, 130, 140, 143, 207, 208, 215, 240, 263, 280, 305, 329, 357, 387, 400, 406, 407, 454, 483, 496, 509, 549, Ագորեոս 304, Ազատարար 214, Երկնային 353, Թեբեյան 74, 104, 110, 281, Լակեդեմոնյան 353, Լափյուստյան 447, Լյուկայան 287, Կարյան 71, 311, Պալլենյան 27, Օլիմպյան 428, Օլիմպոսյան 91
Զեմսիգամոս 358, 359

Էակոս 158, 175, 478
Էաս 478
Էգիլոս 313
Էգիկարես 311
Էգինա 317
Էգես 71, 270
Էդիպ 270, 309
Էեսիդես 323
Էեսիոն 10, 322, 323
Էոլոս 447
Էսքիլոս 149
Էրատո 336

Թալեյա 159
Թալես Միլեացի 33, 70, 561
Թամասիոս 446

Թանեյուրաս 165
Թասոս փյունիկեցի 350
Թարգիմասադաս տե՛ս Պոսեյդոն
Թեասիդես 363
Թերե 317
Թեմիս 108
Թեմիստոն 272
Թեմիստոկլես Աթենացի 428, 429, 440, 462, 466, 467, 476—478, 482—485, 487, 488, 493—495, 498, 499, 542, 560
Թեոդորոս Սամոսացի 22, 176
Թեոկիդես 78, 479
Թեոմեստոր 485, 539
Թեոպոմպոս 501
Թեոֆանիա 22
Թեսալոս 304
Թեսեա 533
Թեսպիս 446
Թերանդրոս 269
Թերաս 269, 270
Թերոն 437
Թերսանդրոս օրխոմենացի 351, 512
Թիսամենես 351
Թյուի 442
Թոաս 382
Թոնիս (Թոնոս) 129, 130
Թորաքս Լարիսացի 507, 528
Թրասիբուլոս 11, 12, 324
Թրասիդեյոս 528
Թրասիլաոս 374
Թրասիկլես 539
Թուկիդիդես 554—556, 562, 568

Իբանոլլիոս մյուլասացի 301, 334
Իդանթյուրսոս 246, 260, 262, 263
Իթամիտրես 408, 500, 543
Իլիթա 233
Ինարոս լիբիացի 163, 165, 386
Ինաքոս 5
Ինո 447
Ինտաֆրաս 534
Ինտաֆրենես 188, 191, 204, 205, 560
Իո 5, 6
Իոլկոս 325
Իոն 104, 311, 414, 478
Իսագորաս 311, 313—315
Իսիս տե՛ս Դեմետրա
Իսքենոս 442, 487
Իֆիգենիա 255
Իֆիկլես 548

Լաբդա 322, 323
Լաբդակոս 309
Լաբյուենոս Թաբելոնացի 33, 34, 77
Լադիկե 157, 158
Լակրիենե 64
Լամպիտո 359
Լամպոն 514, 535, 539
Լայիոս (Լայոս) 270, 303, 309
Լաոդամաս Փոկայացի 266, 309
Լաոդիկե 232, 233
Լասոս 386
Լափանես ազենացի 378
Լեագրոս 534
Լեոբոտես 28
Լեոկեդես 378
Լեսե 28, 302, 442, 449
Լեոնիդաս լակեդեմոնացի 302, 449, 450, 453—458, 460, 465, 467, 481, 495, 510, 530, 535, 564
Լեոնտիադես 449, 458
Լեոպրեպես 363, 457
Լետո 111, 149
Լիբիա 236
Լիկուրգոս 25, 26, 28, 378
Լիպոմաքս 223, 224
Լիսիմաքոս աթենացի 483, 488, 518
Լիսիսարատոս 489
Լիֆես 30
Լյուգդամիս (Լյուգդամոս) 27; 28, 415
Լյուդոս 7, 71, 410
Լյուկարեոս 215, 297
Լյուկիդես 508
Լյուկոմեդես աթենացի 464
Լյուկոպես 181
Լյուկոս 71, 246, 413
Լյուկոֆրոն 179—181
Լյուսկես 121
Լյուսագորաս 298, 380
Լյուսանիաս 378

Լյուսիկլես 467
Լոֆսաս 41, 276
Լուսիիդես լակեդեմոնացի 356—359, 363, 365, 501, 539, 542, 547

Կադմոս տյուրոսցի 108, 144, 269, 300, 399, 436, 437, 556
Կալլիադես 475
Կալլիաս էլեացի 303, 304, 376, 432
Կալլիկրատես 533, 537
Կալլիմաքոս ափիդնացի 372—374
Կալլիոպե 507
Կալլիֆոն 207
Կալյաս 413
Կամբյուսես I 21, 32, 47, 49, 53, 54, 85, 391, 404
Կամբյուսես II 89, 158—167, 169—175, 177, 183—187, 189, 190, 192, 195, 196, 198, 205, 206, 208, 213, 277, 297, 384, 386, 393
Կայնեաես 322
Կանդավլես 7—9
Կասամբոս 359
Կասսանդրաե 89, 160
Կավնոս 329
Կարենոս 440
Կարոս 71
Կառուտորոքիոս 226
Կելենս 304
Կեկրոպս 473, 475
Կեփիսոս 442
Կեփես 407, 431
Կիլիկս փյունիկեցի 413
Կիմոն, հայր Սաեսագորասի 346—348, 369, 370, 381, 383
Կիմոն, որդի Միլտիադեսի 381, 418
Կինեաս Կոնիայցի 310
Կլեարքոս պլատեացի 537
Կլեոնդրոս գուշակ 362, 433
Կլեոբիս 15, 16
Կլեոդայոս 449, 501
Կլեոդես 531
Կլեոմբրոտոս 249, 299, 302, 449, 481, 510, 530, 535
Կլեոմենես լակեդեմոնացի 216, 217, 302—307, 310, 311, 313—316, 321, 326, 351, 354, 356, 357, 359—363, 366, 371, 431, 449, 460
Կլիենիաս 466
Կլիս 5, 565
Կլիսթենես, որդի Մեգակլեսի 311, 313, 314, 379
Կլիսթենես, որդի Արիստոնիմոսի 312, 313, 377—379
Կյուաքսարես 10, 21, 32, 33, 46, 47
Կյուբեբե 328
Կյուբեռնիսկոս լյուկիացի 414
Կյուդիպպե 437
Կյուրոս 313, 314
Կյուսնեգիրոս 374
Կյուսնեոս 369
Կյուսիսկոս տե՛ս Զևսիդամոս
Կյուսն տե՛ս Սպակո
Կյուպսելոս (Կյուպսելես) 10—12, 178, 323, 324, 326, 346
Կյուտեոս 69
Կյուտիսսորոս 447, 448
Կյուրենե 151
Կյուրոս, պապ Կյուրոս I-ի 49
Կյուրոս I 21, 23, 31—35, 37—41, 43, 47, 50—57, 60, 61, 64, 65, 67, 69, 70, 73, 77, 78, 82—87, 89, 159, 160, 164, 172—174, 177, 183, 185—188, 190, 195, 196, 205, 210, 213, 217, 220, 277, 307, 384, 386, 391, 393, 404, 408—410, 549, 550
Կնայրոս 365
Նոքոն 357
Նոդրոս 62, 311, 315, 541
Նոս Միտիլենացի 291, 301
Նալյոս 271
Նոլամեսիս 223, 224
Նոյոս 253, 254
Նոսյաս 236
Նորյուդալոս 452
Նարոքիոս 271
Նրանեասպես 208
Նրենիպպոս 437
Նրեսոս լյուքիացի 7, 13—25, 28, 29, 31—42, 57, 60, 64, 65, 84—86, 165, 173, 174, 178, 301, 347, 377, 378, 397, 471, 498

Կրետինես 437, 445
Կրիս 351, 359, 487
Կրիտոբուլոս տարոնցի 158, 499
Կրոնիդես 483
Կուփագորաս 374

Հալիարոս 275
Հարմամիթրաս 412
Հարմոդիոս 308, 372, 376
Հարմոկիդես 512, 513
Հարպագոս 35, 47—49, 51, 52, 54, 56, 67—70, 72, 73, 344, 345
Հեգեսանդրոս 334, 381
Հեգեսիլաոս 501
Հեգեսիկլես 28
Հեգեսիպյուլ 347
Հեգեսիստրատոս 325, 521, 523, 539
Հեգեսարիդես 534
Հեգիաս 520
Հելլանիկոս 556
Հելլեն 24
Հեկատեոս (Հեկատայոս) 143, 301, 334, 335, 381, 382, 556, 558
Հեկտոր 132
Հեղինե 6, 128—132, 326, 355, 533
Հեսիոդոս 109, 110, 232, 556
Հեստիա (Վեստա) 108, 240, 263
Հերա 15, 108, 251
Հերակլեյդես 334
Հերակլես 7, 105, 106, 118, 144, 224, 225, 240, 249, 303, 352, 371, 441, 446, 448, 449, 454, 473, 501
Հերակլիդես կյումեցի 66, 301
Հերմես 109, 114, 144, 290
Հերմիպպոս 337
Հերմոլիկոս 544
Հերմոտիմոս 492, 493
Հերոդոտոս Հալիկառնասեցի, բուրիացի 5, 501, 554—578
Հերոփանտոս Պարոնցի 266
Հերպիս 521
Հեփեստոս 90, 174, 490
Հեփեստոպոլիս 139
Հիերոն 434
Հիերոնիմոս 519
Հիպպարքոս 308, 309, 376
Հիպպիաս 27, 308, 309, 321, 325, 326, 369, 371, 372, 376, 386
Հիպպոլոքոս 62
Հիպպոկլիդես 378, 379
Հիպպոկլոս Լամպսակոսցի 266
Հիպպոկոոն 309
Հիպպոկրատես 25, 311, 343, 369, 379, 433, 434
Հիպպոկրատիդես 501
Հիպպոմաքոս լեկադացի 521
Հիպոնիկոս 376, 432
Հիստիայոս Միլետացի 266, 267, 291, 296, 298, 300, 301, 329, 330, 334, 336, 337, 343—345, 350, 389, 415, 485
Հյուդառնես պարսիկ 188, 380, 408, 411, 425
Հյուդառնես, որդի Հյուդառնեսի 451, 453, 454, 493, 497
Հյուլլոս 351, 449, 501, 516
Հյումայես 333, 334
Հյուպերանթես 455
Հյուպերոքի 232, 233
Հյուսելդոմոս 415
Հյուտաանես 410
Հյուստասպես, որդի Աբսամեսի 75, 85, 86, 188, 195, 196, 214, 249, 252, 298, 314, 368, 384, 388, 391, 455
Հյուստասպես, որդի Դարեհի և Ատոսայի 408
Հյուրոյադես 37
Հոմերոս 97, 109, 110, 130, 131, 231, 436, 556
Հոպլես 312
Հորոս տե՛ս Ապոլլոն
Հոյկոս 183

Մադյուես 46
Մազարես մեդացի 65—67
Մայես 378
Մակիստիոս տե՛ս Մասիստիոս
Մայր տե՛ս Դեմետրա
Մանդանե 47, 49
Մանդրակլես Սամոսացի 250, 251
Մանես 42, 236
Մաներոս 118
Մանտյուես պայոն 292

Մասագետ 409
Մասիստես 411, 421, 545—547
Մասիստիոս 513—515, 518
Մասկամես 417, 418
Մավսոլոս 333
Մատտեն տյուրոսցի 414
Մարդոնիոս 349, 367, 385, 387, 388, 390, 411, 418, 421, 468, 480, 489—491, 493, 495, 496, 499—502, 504, 505, 507, 508, 510—513, 515, 518, 519, 521—525, 528—532, 535—538, 542, 543
Մարդոնեես 411, 500, 543
Մարոն 456
Մեանդրիոս 207, 214—217, 297
Մեանդրիոս, որդի Մեանդրիոսի 207, 214
Մեգաբազոս պարսիկ 267, 268, 289, 291—293, 296, 297, 327, 346, 395, 408, 414, 418, 560
Մեգաբատես պարսիկ 299, 300, 414
Մեգաբիզոս (Մեգաբյուզոս), որդի Մեգաբատեսի 193, 218, 559, 560, 565
Մեգաբյուզոս, ճայր Զոպյուրոսի 188, 192, 217, 221, 235
Մեգաբյուզոս, որդի Զոպյուրոսի 220, 411, 421
Մեգադոստես 417
Մեգակլես 25, 26, 377—379
Մեգակլես, որդի Հիպպոկրատեսի 379
Մեգակրեոն 421
Մեգապանոս 407
Մեգասիդրոս 409
Մեգիստիոս գուշակ 454, 455, 457
Մեդացի 505
Մեդեա 6, 407
Մելամպուս 108, 454, 520
Մելանթոս 62, 311, 327
Մելանիպպոս 312, 326
Մելես 37
Մելիսսա 179, 324, 325
Մելպոմենե 298
Մելպոմենե 222
Մեմբլիարոս 270
Մեմնոն 126
Մենագես 358
Մենարես 356, 501
Մենդես 105
40—630
Մենելաոս 129—131, 326, 439, 440
Մենիաս 359
Մեսիոքոս 348
Մետրոդորոս Գրգոնեասցի 286
Մերբալոս արաբացի 414
Միդաս 10, 18, 20, 503
Միլոն բժիշ 213
Միլտիադես, եղբայր Կիմոնի 346, 347, 369, 380, 381, 383, 418
Միլտիադես, որդի Կիմոնի 266, 346—348, 369, 370, 372, 373
Միկիթոս 439
Միկիտես 312
Միթրդատ 572
Միհ 91, 124
Մինոս 70, 71, 206, 439
Միտրա տե՛ս Աֆրոդիտե
Միտրադատես 48, 53
Միտրոբատես 206, 208
Մյալիտտա տե՛ս Աֆրոդիտե
Մյուկերինոս 137—140
Մյուսոս 71
Մյուս եվրոպացի 501, 502
Մյուրոն 377
Մյուրսիլոս տե՛ս Կանդավլես
Մյուրսոս լյուդիացի 7, 206, 324
Մնեսարքոս 252
Մնեսիֆիլոս 476
Մոյրիս 93, 124, 125
Մուսայոս (Մուսեոս) գուշակ 356, 499, 522
Մուրյամիդես նելլեսպոնտոսցի 509

Յաղմոն սամոսցի 139
Յաղմոն, բռա Յաղմոնի 139
Յասոն 280, 446
Յատրագորաս 301
Յարդանոս 7

Նավկրատիս 140
Նավսարոքոս մեդարացի 183
Նելես 311
Նեկոս եգիպտացի 147, 149, 150, 237
Նեոպտես 428, 440, 494
Նեստոր 311
Ներիթոնես 109

Նիլեոս 541
Նիկանդրե 110
Նիկանդրոս 501
Նիկե 483
Նիկոդրոմոս 365, 366
Նիկոլաոս 425, 426
Նիմփոդորոս արդերացի 426
Նինոս 7, 73, 146
Նիտետիս 159, 160
Նիտոկրիս 75, 76, 124
Նոթոն 368

Շամիրամ (Սեմիրամիս) 75, 219

Պալլաս 283, 428
Պակտյուես լյուդիացի 64—67
Պամմոն սկյութացի 443
Պան 106, 107, 144, 370
Պանդիոն աթենացի 71, 413
Պանեսիոս 484
Պանիոնիոս Իոնացի 492
Պանիսես մեսսենացի 352
Պանտագնոտոս 175
Պանտալեոն 42
Պանտարես 433
Պանտիտես 457
Պապայոս տե՛ս Զևս
Պասիկլես 541
Պարսկաստան լակեդեմոնացի 249, 299, 462, 510, 511, 514, 517, 524—530, 532—534, 536—538, 543
Պավսանիաս 165
Պատակես 433
Պատարբեմիս եգիպտացի 152
Պատիզեյթես մոգ 183, 184
Պատիրամփես 401
Պարայրատես 304
Պարիս տե՛ս Ալեքսանդր
Պարմյուս 195, 410
Պարսիկ 366, 430, 432, 434, 436—438, 440, 442, 448, 468, 479, 493, 494, 496, 505, 507, 509, 510, 534
Պելոպս փռյուգիացի 387, 391
Պելես 446
Պենելոպե 144
Պենթյուլոս 447
Պերդիկկաս 295, 503
Պերիալլա 357
Պերիանդրոս 11—13, 178—181, 324—326
Պերիլաոս 543
Պերիկլես 380, 553, 564
Պերկալոս 356
Պերսես 407, 431
Պերսես, որդի Դանայայի 431
Պերսես 120, 121, 352, 407
Պիգես 415
Պիգրես պայոն 292
Պիթոգենես 343
Պիկոդարոս 333
Պինդարոս 175
Պիսիստրատոս, որդի Հիպպոկրատեսի 25—28, 308, 311, 314, 321, 325, 346, 369, 371, 376, 386
Պիսիստրատոս, որդի Նեստորի 311
Պիտակոս միտիլենացի 14
Պլեյստարքոս 510
Պլեյստորոս 549
Պլուտարքոս 554
Պյութագորաս 252, 253, 304, 335
Պյութերմոս 63
Պյութեաս (Պյութիաս) 426, 442, 487
Պյութիա 9, 11, 21, 28, 29, 38, 41, 69, 72, 182, 227, 271—273, 275, 276, 303, 310—312, 316, 317, 320, 322, 346, 352, 356, 357, 360, 364, 376, 381, 383, 427, 428, 431, 439, 440, 454, 475, 519
Պյութիոն լյուդիացի 396, 397, 400
Պյութես 535
Պյուրս 62
Պոլիարես 527
Պոլիաս 467
Պոլիբիոս 572
Պոլիդամն 130
Պոլիդեկտես 501
Պոլիդորոս 309, 449
Պոլիկրիտոս էգինացի 351, 487, 488
Պոլիհիմնիա 384
Պոլինիկես 269, 351, 516
Պոլյուրոս 312

Պոլյուկրատես (Պոլիկրատես) 158, 175—178, 181, 182, 205—210, 213—215, 359
Պոլյումնեստոս թերացի 270, 272
Պոսեյդոն 105, 108, 240, 280, 283, 423, 476, 498, 500, 536, Հելիկոնյան 63, Օրկարար 446
Պոսիդոնիոս 533, 537
Պսամմենիտոս 162, 164, 165
Պսամմետիքոս եգիպտացի 46, 89, 90, 98, 99, 147, 148, 151, 386
Պսամմիս 150, 151
Պրաֆիլաոս 545
Պրեքսասպես 171—173, 184—186, 189—191, 414
Պրեքսիեա 442
Պրիամոս 6, 132
Պրիենեաքես 302
Պրիտանիս 501
Պրոկլես 179, 180, 269, 352, 501
Պրոմեթևս 236
Պրոմենեյա 110
Պրոտեսիլաոս 548, 549
Պրոտոքլես 46
Պրոտես 126—131

Ռամպսինիտես 132, 135
Ռոդոպե 139, 140
Ռուփոս 572

Սարդես Էթիոպացի 140—142, 147
Սարդիսներ 433
Սապրատես 10, 11, 33
Սալմոխիս 252, 253
Սամոս (Սամոս) 181
Սանտարիդ 142
Սանդոկես 31
Սանդրոկոտտոս 446, 447
Սարպեդոն 139, 140
Սատրապես 235, 236
Սարդանապալոս 146
Սարդեսն 71
Սատիրոս 246
Սկիթ 142
Սեմեկ 144
Սեպիաս 465
Սեսոստրիս եգիպտացի 125—128, 141
Սիլենոս Մարսյաս 396, 503
Սիլոսոն 339, 340
Սիկաս 414
Սիկիոնոս 482, 494
Սիմոնիդես Կեոսցի 328, 457
Սիսամնես 297, 408
Սիսիմակես 334
Սիտակոնես 248, 426
Սիրոմիտրես 408, 411
Սիրոմոս 329, 414
Սկամանդրոնիմոս 139
Սկայոս 309
Սկիթաս 443
Սկիտոն 210
Սկյութես 225, 242, 243, 426
Սկյուլակես (Սկյուլակ) 236, 299
Սկյուլես 246—248
Սկյուլիես 462
Սկոպասես 260, 263
Սմերդիս 171, 172, 410
Սմերդիս, որդի Կյուրոսի 152—190, 195
Սմերդոմենես 411, 421
Սմինդիրիդես սիբարացի 376
Սյուագրոս լակեդեմոնացի 432, 435
Սյուենեսիս Փռիգիացի 22, 223, 414
Սյուլոսոն 175, 213—217
Սոլոն Աթենացի 14—17, 36, 137, 332
Սոկլես 221, 225
Սոֆոմենես 434
Սոֆոնես 366, 532, 534
Սոֆոկլես 554, 561
Սպակա 45, 53
Սպարտակոս 246, 247
Սպարտակոսներ 44
Սպերթիես 425, 426
Սոստրատոս 347, 370
Սուսիսյաններ 374
Սուսիկիտոս 539
Սոսիստրատոս 346
Սոսոնես (Սոսանես, Սոսանես) 332, 347, 369
Սարդեսն 370, 372
Սարտանես Փռիգի 206, 501
Սեսոստրիս Էթիոպացի 127—128, 141
Սիլենոս Մարսյաս 396, 503
Սիլոսոն 339, 340
Սիկաս 414
Սիկիոնոս 482, 494
Սիմոնիդես Կեոսցի 328, 457
Սիսամնես 297, 408
Սիսիմակես 334
Սիտակոնես 248, 426
Սիրոմիտրես 408, 411
Սիրոմոս 329, 414
Սկամանդրոնիմոս 139
Սկայոս 309
Սկիթաս 443
Սկիտոն 210
Սկյութես 225, 242, 243, 426
Սկյուլակես (Սկյուլակ) 236, 299
Սկյուլես 246—248
Սկյուլիես 462
Սկոպասես 260, 263
Սմերդիս 171, 172, 410
Սմերդիս, որդի Կյուրոսի 152—190, 195
Սմերդոմենես 411, 421
Սմինդիրիդես սիբարացի 376
Սյուագրոս լակեդեմոնացի 432, 435
Սյուենեսիս Փռիգիացի 22, 223, 414
Սյուլոսոն 175, 213—217
Սոլոն Աթենացի 14—17, 36, 137, 332
Սոկլես 221, 225
Սոֆոմենես 434
Սոֆոնես 366, 532, 534
Սոֆոկլես 554, 561
Սպակա 45, 53
Սպարտակոս 246, 247
Սպարտակոսներ 44
Սպերթիես 425, 426
Սոստրատոս 347, 370
Սուսիսյաններ 374
Սուսիկիտոս 539
Սոսիստրատոս 346
Սոսոնես (Սոսանես, Սոսանես) 332, 347, 369
Սարդեսն 370, 372
Սարտանես Փռիգի 206, 501

Վիղոռնա 560
Վինդոֆռոնա 560

Տաբալոս 74
Տարիտի տե՛ս Հեստիա
Տալաոս 312
Տալթիբիոս 424, 426
Տարգիտաոս 223, 224
Տաֆսակիս 260
Տեասպես. հայր Սատասպեսի 235
Տեասպես, հայր Փառանդեսի 411, 534
Տեիսպես, որդի Ամեմենեսի 391
Տեիսպես, որդի Կյուրոսի 391
Տելամոն 478
Տելեկլոս 449
Տելեկրես սամոսցի 176
Տելեմաք 130
Տելեսարքոս 215
Տելլիաս գուշակ 469, 521
Տելինես 433
Տելլոս 303, 304
Տելլոս Աթենացի 15
Տեմեն 144
Տեմենոս 503
Տեսրամենեսաոս սիկոնցի 414
Տերես 248, 426
Տերիլլոս 437
Տիգրանես 407, 468, 541, 543
Տիբայոս 412
Տիմագորաս կիպրացի 414
Տիմանդրոս 532
Տիմարետ 110
Տիմեգենիդես 521, 537, 538
Տիմեսիթեոս 314
Տիմեսիոս կլազոմենացի 69
Տիմո պարոսցի 350
Տիմոդեմոս 499
Տիմոն 381, 427
Տիմոնաքս կիպրացի 414
Տիմոֆանես 499, 500
Տիսսամենես 269
Տիտամենոս Էլիսցի 519, 520
Տիտանդրոս 378, 379
Տիսիաս 380
Տիտակոս 533
Տիտորմոս 378
Տյուդես 312
Տյումենես 246
Տյումենես 415
Տյունտարեա 128
Տյուսանդրոս 311
Տյուրոս 106
Տյուրսենոս 43
Տյոփոն 149, 161
Տոմյուրիս 83—87
Տրիտանեայմես, որդի Արտաբազոսի 79
Տրիտանեայմես, որդի Արտաբանոսի 411, 421
Տրիտոն 280, 283
Տրոփոնիոս 21

Ուրանիա (Երկնային) տե՛ս Ափրոդիտե

Փայդյուսմ 187
Փայուլոս 474
Փանագորաս 452
Փանես 160, 162
Փարանդատես պարսիկ 411, 534
Փառնդաբրես 408
Փառնակես 538, 408, 499, 522, 531
Փառնասպես Ամեմենյան 89, 160, 186
Փառնուքես 412
Փեզես 516
Փեյդոն 378
Փեննիպոս 376
Փեռոն 128
Փերենդատես 408
Փերեսիմբ 275—277, 286—288
Փթիոս 123
Փիդիպպիդես 370
Փիլագրոս 369
Փիլայոս 346
Փիլոն 464
Փիլես 183
Փիլոկիպրոս 332
Փիլոկիոն 533, 537
Փիլիպպոս կրոտոնցի 304
Փիլիպպոս 503
Փիլիստոս 541
Փյուս 26
Փյուլակոս 472, 485

Փորմոս աթենացի 443
Փրինիոս 342
Փրիքսոս 447
Փյուռոն 512
Փռաորտես 32, 43, 45
Փռատագուն 455, 456
Փռոնիմե 272

Քարակոս միտիլենացի 139, 140
Քարիլաոս 215, 216, 501
Քարիսնեա 108
Քարոն 556
Քառապիեոս 327
Քեոպս 135—137
Քերամիս 410
Քերսիոս կիպրացի 329, 332, 414, 464
Քեփրեն 137
Քիլեոս 509
Քիլոն Լակեդեմոնացի 25, 356, 458
Քյուրոս 439
Քսանթիպպոս 380, 381, 398, 501, 549
Քսանթես Սամոսացի 139
Քսենագորաս ճալիկառնացի 545
Քսենոփոն 570, 572, 573, 577, 578
Քսերքսես 75, 235, 368, 384—386, 388, 390—407, 411, 414—427, 429—432, 437, 441, 442, 444—448, 450—453, 455, 456, 458—460, 464—468, 470, 471, 474, 475, 478—481, 484—487, 489—497, 500, 504, 505, 507, 519, 532, 535, 536, 541, 542, 545—549, 546—549, 564, 576
Քսուրոս 414, 473
Քրոմիոս 36

Օարիզոս 409
Օթրյուադես 36, 37
Օլեն լիկիացի 233
Օլիմպիոդորոս 514
Օլոռոս 347, 348
Օկյուռաս (Օկիռաս) 462, 477
Օկտամասադես 248
Օյքարես 194, 196, 346
Օյոքազոս պարսիկ 249, 408, 548, 549
Օյոյուկոս 270
Օնեսիլոս 329—332
Օնետես 452
Օնոմակրիտաս աթենացի 386
Օնոմասառոս 378
Օպիս հյուպերբորեացի 233
Օզոյա սկյութացի 247
Օսիրիս 104, 144, 149
Օտանես, որդի Փառնասպեսի 186—188, 190, 192, 194, 195, 214—217, 349
Օտանես (Ութանա), որդի Ամեսթրի 401, 407, 408, 411, 560, 565
Օտանես, որդի Սիսամնեսի 297, 333, 334
Օրգես 420
Օրեստես 29, 30
Օրիթիա 445
Օրիկոս 247
Օրոմեդոն 414
Օրոյտես պարսիկ 205—209, 214
Օրոտալտ տե՛ս Դիոնիսոս
Օրսիփանտոս 456

Ֆիդիաս 564
Ֆոյբոս 226, 272

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐ

Աթաս 21
Աթենաս 69, 350, 418, 421, 497
Աթենաս մարգ 422
Աթենոս 69
Աթե 469, 470
Աթյուոս 333, 398, 399, 402, 430, 441, 496, 500, 547
Ագամեմնոն (Սիրիայի) 184, 185
Ագամեմնոն (Մեդիայի) 44, 48, 64, 185, 197, 539
Ագիլլա 69
Ագլավրոսի տրամաբան 475
Ադրան 406
Ադրիանես գետ 251
Ադրամյուտեոն 401
Ադրիական ծով 67, 232, 291
Ադիրիս բնակավայր 273, 278

Ազատաս 149
Աթենական նավաբար 562
Աթենասի տաճար 12, 67, 153, 154, 156, 178, 183, 326, Ալեյան 29, 532, Ասսեայան 11, Պալլենյան 27
Աթենաս Պրոնեայի սրբավայր 472
Աթենաս Սկիրասի սրբավայր 488
Աթեն 14, 25—28, 44, 61, 62, 71, 91, 157, 221, 308—311, 313—317, 319, 321, 326, 327, 346—349, 363, 367—379, 382—388, 398, 404, 407, 413, 414, 424, 426, 428, 434, 436, 443, 462, 470, 474—476, 478—480, 483, 490—492, 494, 495, 497, 499, 502, 504, 505, 507—509, 511, 512, 519, 545, 548, 554, 563—566
Աթոնի շրանցք 421
Աթոս 349, 367, 399, 445
Աթոս հրվանդան 395
Աթրիբիսյան մարզ 152
Աթրյուս գետ 238
Ալաբանդա 447, 502
Ալալիա 68, 69
Ալեյան դաշտ 367
Ալեքսանդրիա 565
Ալոպեկայ վայր 310
Ալոս վայր 440, 447
Ալպենի 457
Ալպենոյ 441, 442
Ալպենոս 453
Ալպիս գետ 238
Ականթոս ծով 395
Ականթոս 420—422
Ակառնանիա 92, 422
Ակես գետ 204
Ակրագաս 437
Ակրեփիա 502
Ակրոթոոն 395
Ամաթոս 329, 332
Ամասիա 14
Ամմոն 170
Ամմոնի պատգամատուն 21, 100, 110
Ամպելոս հրվանդան 421, 422
Ամփիկեյա 470
Ամփիսսա 470, 471
Այա 6
Այգայա 63
Այգի 422
Այգեյրա 62
Այգեն 62
Այգիլեա կղզի 369, 371
Այգիոն 62
Այգիրոեսսա 63
Այգլերի երկիր 197
Այնեյա 422
Այնիրա վայր 350
Այնոս 251, 406
Անագի կղզիներ 293
Անավա 397
Անավա լիճ 397
Անատիլյուստոս ավան 254
Անգրոս գետ 238
Անդրոկրատեսի սրբավայր 515
Անդրոս կղզի 232, 299, 493—495, 497, 519
Անթելա 448
Անթյուլլա 123
Անյուսիս 140
Անյուսյան մարզ 152
Անապայա լեռ, կածան 453
Անտանդրոս 247, 401
Անտիգես գետ 419
Անտիկյուրա 448, 452, 467
Ապիդանոս գետ 423, 447
Ապիս 95
Ապոլլոնի տաճար 149, 157, 563, Իսմենյան 309
Ապոլլոնիա 251, 252, 539, 540
Ասսա 421
Ասսեսոս 11, 12
Ասիա 6, 7, 10, 13, 32, 35, 43, 45—47, 56, 57, 61, 71, 73, 78, 85, 94, 95, 125, 182, 195—199, 203, 204, 212, 213, 222, 223, 225, 226, 233—236, 267, 286, 292, 293, 298, 306, 326, 333, 343, 349, 350, 354, 358, 374, 375, 384, 388, 391, 394—396, 398, 409, 410, 413, 425, 426, 429, 430, 434, 441, 444, 494, 497, 499, 500, 502, 539, 548, 550, 554, 556
Ասիադա 236
Ասինե 482
Ասկալոն 46

Ասպասս գետ 372, 448, 453, 511, 513, 518, 521—523, 526, 529
Ասորեստան 75, 77, 78, 80, 95, 146, 197, 234, 554
Ասորիք 554
Ատառնեական երկիր 344
Ատառնեոն (Ատառնեոս, Ատառնես) վայր 67, 337, 344, 401, 492
Ատարբեքիս վայր 104
Ատտիկա 27, 211, 310, 311, 315, 317, 319, 320, 359, 375, 381, 383, 389, 429, 472, 474, 475, 477, 478, 479, 489, 494, 506—509, 511, 517, 533, 534, 542, 564
Ատտիկյան երկիր 254, 311, 369, 508
Ատլանտյան ծով 83
Ատյաս գետ 237, 238
Ատյաս լեռ 282
Ատոսա 385
Արաբական լեռներ 91, 92
Արաբական ծոց 93, 125, 150, 234, 235,
Արաբիա 92—94, 116, 135, 150, 162, 201—203, 234
Արտանի գետ 577
Արարատ 575
Արարոս գետ 237
Արամա գետ 6, 46, 82—86, 88, 125, 174, 225, 234, 236, 250
Արամի նավիթ 573, 577
Արգիլոս 420
Արգիոպիոն վայր 528
Արգոլիս 36, 366
Արգոս 5—7, 15, 36, 211, 280, 312, 360—362, 378, 429—432, 503
Արգոսի սրբավայր 360
Արգոսյան երկիր 431
Արգերիկիա 75, 375
Արեսի պատգամատուն 410
Արիսրան 63
Արիսպիա 29, 275, 359, 362, 413, 439, 449, 468
Արմենիա տե՛ս Հայաստան
Արատի 227, 345
Արատեես գետ 238
Արենմիսի սրբավայր 104, 149, 178, 233, 441
Արտեմիսիոն 441—443, 446, 447, 461—465, 467, 472—474, 479, 483, 484, 542
Արտեսոս գետ 252
Արքանդրոս 123
Արևելյան ծով 254
Արևելյան Հայաստան 576
Արևելք 555, 559
Արևի աղբյուր 281
Արևմտյան Հայաստան 577, 578
Աուգիլիա վայր 281
Աուգիլոս վայր 278
Աուրաս գետ 238
Ափետայ վայր 446, 447, 462—465
Ափքիսյան մարզ 152
Ափիդնայ 499, 533
Ափյուտիոս 422
Ափրոդիսիաս կղզի 278
Ափրոդիտեի սրբավայր 81, 82, 128
Ակայա 414, 440, 447, 448, 471
Ակելոոս գետ 92, 422
Ակեմենյան տերություն 560, 573, 574, 577
Ակերոն գետ 324, 474
Ակիլլեյոն 325
Ակիլլեսյան մրցարան 240, 246
Ակսիոս գետ 422
Ակրիկա 554

Բաբելոն 64, 73—80, 124, 197, 217, 218, 220, 222, 407, 554, 559, 569, 571
Բաբելոնիայի մարզ 47
Բակտրիա 288, 338
Բակտրիս նահանգ 547
Բանակատեղիք 148
Բասեան 577
Բարկա 197, 274, 276—278, 286, 288
Բելբինա 499
Բելյան դարպաս 219, 220
Բեովտիա 41, 108, 308, 312, 449, 470—474, 495, 506—509, 511—513, 515, 538
Բիսալտիա 420
Բիսանթ 426
Բիսոն լիճ 418
Բյուրասա 72
Բյուզանդիոն 250, 251, 268, 297, 329, 337, 343, 345, 538, 539

Բոլբիթինյան գետաբերան 95
Բոնտան-սու 573
Բոյբեյիս լիճ 423
Բոսպորոս 249—251, 259, 394
Բոստիական երկիր 422, 423
Բուբաստեն գետ 228, 230, 237, 239, 240, 244, 247, 248
Բուբաստենես 255
Բրանքիդես, վայր Միլետի մոտ 21, 41, 65, 66, 301
Բրանքիդների տաճար 66, 150
Բրավրոն 268
Բրենդեսիոն ծովախորշ 254
Բրիանիկե տե՛ս Գալլիկե
Բրոնգոս գետ 238
Բուբաստիս 111, 112, 114, 141, 148, 150, 152
Բուբաստիսյան մարզ 152
Բուկոլիկյան գետաբերան 95
Բուսիրիս 111, 112
Բուսիրիսյան մարզ 152
Բուտա 111, 112, 114, 116, 118, 128, 138, 147, 149, 185
Բուտան 62

Գադեյրա 224
Գալլիկե 418
Գալեպսոս 421
Գայսոն 541
Գավգամելա 572
Գարզաֆիա աղբյուր 512, 526
Գելի 343, 432—434
Գելոնոս 256
Գեղեցիկ ափ 343
Գերրա երկիր 239, 244
Գերայստոս (Գերեստոս) 463, 544
Գերգիթա 402
Գերոս գետ 228, 237, 240
Գիգոնոս 422
Գիսաս 523
Գյուգեսյան լիճ 42
Գյունդես գետ 77, 83, 307
Գոնոս 423, 441
Գրյունեա 63
Դասկիլեյա (Դասկիլեյոն) նահանգ 206, 208, 346
Դատոս 534
Դարդանների երկիր 77
Դարդանոս 333, 401
Դափնե վայր 99, 126
Դելիոն 375
Դելոս կղզի 28, 154, 232, 233, 367, 368, 375, 501, 539, 541
Դելտա վայր 93—96, 104, 111, 123, 157,
Դելփի 10, 11, 13, 16, 21—23, 28, 29, 38, 40, 41, 69, 72, 140, 157, 182, 227, 270, 272, 273, 275, 276, 280, 303, 312, 314, 316, 317, 320—323, 341, 344, 346, 351, 353, 356—358, 360, 364, 381, 383, 419, 427, 430, 431, 436, 437, 439, 484, 485, 498, 519, 523, 536, 540, 554, 563
Դելփիի տաճար 22, 41, 149, 310, 469
Դելփյան պատգամատուն 9, 377, 427, 460, 471
Դեկելես բնակավայր 533, 534
Դեկելիա 511
Դեմետրա Թեսմոփորայի սրբավայր 366
Դեմետրայի սրբավայր 135, 239, 309, 530, 532, Եկեսիսյան 541, 543
Դիդիմե 341
Դիդիմյան մենյան 341
Դիկայա 418
Դիկայոսնոսի տաճար 182
Դիոն 395
Դիոնիսոսի տաճար 250
Դիոնիսոսի պատգամատուն 419
Դիպեա 520
Դյուդրարա 397
Դյումեն 62
Դյուսարոն լեռ 294
Դյուրաս գետ 448
Դոդոնե 21, 109—111, 232, 540
Դորիս 470, 473
Դորիսկոս 327, 396, 406, 407, 417, 418, 421
Դրեպոիս 470, 473
Դրյումա 470
Դրյուսպիս 24

Երրոս գետ 251, 406

Եգիպտական ծով 129
Եգիպտական նահանգ 197
Եգիպտոս 5, 6, 14, 34, 46, 60, 74, 79, 89—96, 98, 100—106, 108, 109, 111—118, 120—131, 135, 137, 139—154, 156—165, 167—169, 171—173, 175, 177, 178, 183—185, 195, 197, 198, 201, 208, 213, 214, 221, 234—237, 271, 274, 276—278, 281, 282, 286, 288, 384—386, 394, 409, 413, 519, 554, 557—559, 561, 566, 575
Երավպիա 92, 93, 96, 98, 99, 141, 144, 151, 167, 203, 413
Եյայուս 395, 398
Եյատեյա 470
Եյբս կղզի 142
Եյեուս 383, 548, 549
Եյեփանտինե 92, 95, 98—100, 115, 156, 166, 167, 558, 575
Եյուրոս գետ 433
Եկեսիս 15, 315, 316, 356, 360, 478, 479, 485, 513, 517, 531
Եմիյանների երկիր 448
Եմիպեոս գետ 423
Եպիդավրոս 62, 179, 180, 317, 318, 415, 473
Եպիսն 270
Եվբեա կղզի 62, 232, 299, 316, 378, 443, 445, 446, 462, 463, 465, 466, 480, 481, 485
Եվբեա նեղուց 441
Եվբեայի լեռներ 368
Եվրիպոս 316, 443, 463, 479
Եվրիպոսի նեղուց 440, 465
Եվրոպա 6, 46, 55, 98, 101, 125, 127, 195, 203, 233, 234, 236, 238, 251, 267, 286, 289, 292, 249, 385, 387—389, 394, 395, 404—406, 409, 422, 430, 440, 441, 444, 475, 489, 493, 494, 501, 511, 556
Եվքինյան Պանաս 7, 32, 34, 48, 101, 197, 237, 251, 345, 399, 571
Եռանկյաց կղզի 169
Եռասքնոս գետ 360
Եռեարիա 11, 26, 27, 306, 349, 367—371, 378
Երեք գագաթներ 522
Երեքթևի սրբավայր 476
Երինեա 473
Երյութրե 61
Երոֆոս 470
Եփեսոս 13, 41, 61, 126, 145, 307, 308, 327, 328, 341, 383, 491—493
Եփեսոսի դաշտավայր 92
Եփրատ (Եփրատես) գետ 74—76, 78, 79, 307, 569—571, 573
Եփինադյան կղզիներ 92
Եմոամպյոն (Եմոամպոյոս) վայր 239, 248, 249

Զաբատ գետ 573
Զակյունթոս 285, 358, 521
Զանկլե տե՛ս Մեսսենա
Զոնն 406
Զոստեր հրվանդան 493
Զևսի տաճար 116, 157, 169, 220
Զևս Սոտատիսի սրբավայր 333

Էա վայր 446, 447
Էգալեոս լեռ 457
Էգեական կղզիներ 554
Էգեյան ծով 123, 129, 250, 405
Էգինա 183, 210, 317—320, 351, 354, 356, 359, 363, 365, 366, 429, 430, 472, 477, 478, 483—485, 487, 501, 534, 535
Էգոսպոտամոն 549
Էդոնների երկիր 334
Էինո 396
Էլեան 303, 519
Էլլեսպոնտ 467
Էլիս 231, 358, 378, 469, 482, 521
Էկբատան, տե՛ս նաև Աքրատան (Մեդիայի)
Էյոն (Էոն) 418, 419, 497
Էնենակրունոս աղբյուր 292
Էոլիս 334, 441
Էոլիա 378
Էրիզանոս գետ 203
Էրիթրե (Երյութրեա) 224, 511, 513—515
Էրյուդինե երկիր 394
Էրյուֆա 303
Էրիթրոս գետ 422

«Թագավորական նահապետներ» 573

Թասոս կղզի 106, 344, 349, 350
Թասոսյան սրբավայր 106
Թեբաիս 98
Թեբե (Թեովտիայում) 23, 41, 309, 312, 502, 511, 512, 516, 522, 531, 537, 538, 564
Թեբե (Եգիպտոսում) 74, 90, 92, 94, 110, 111, 115, 143, 152, 162, 169, 281
Թեբե բերդ 531
Թեբե դաշտ 401
Թեբեական երկիր 120
Թեբեի մարզ 104, 115, 116, 152
Թեմպե կիրճ 440
Թեսալիա 198, 310, 311, 359, 378, 385, 386, 418, 424, 440, 441, 443, 447, 448, 450, 452, 458, 475, 495, 496, 499, 501, 502, 507, 519, 535, 538
Թեսալիա լիճ 423
Թեսալիոտիս 24
Թեսպիա 474, 482
Թեսպրոտիա 110, 324, 441, 474
Թեստոս աղբյուր 274
Թերա կղզի 269—273, 276
Թերամբո 422
Թերապնե սրբավայր 355
Թերմայոն ծովախորշ 421, 422
Թերմե 421—424, 442, 448
Թերմեյան ծոց 499
Թերմոդոնտ (Թերմոդոն) գետ 125, 250, 257, 517, 523
Թերմոպիլե 442—444, 448—450, 452, 454, 457, 458, 465, 467, 468, 479, 481, 518, 533, 535
Թերմոպիլե (Թերմոպյուլյան) կիրճ 441, 564
Թյուի 442
Թյուսսոս 395
Թյուրեա 36, 37, 360
Թորիկոս վայր 254
Թորնաֆս 31
Թրակիա 69, 233, 248, 251, 254, 267, 289, 292, 296, 335, 345, 348, 367, 396, 417, 418, 426, 444, 496, 538, 549, 554, 566
Թրիասիոն (Թրիասյան) դաշտ 478, 509
Թրոիական մարզ 152
Թուրիա գաղութ 553, 554
Իբերիա 67
Իդա կղզի 63
Իդա լեռ 401
Իդրիաս երկիր 333
Ինիոն 6, 131, 334, 394, 436
Ինիոնի դաշտավայր 92
Ինիսսոս գետ 445
Իլլյուրիա (Իլլիրիա) 80, 238, 503
Իկարյան ծով 367
Իմբրոս 297, 348, 370
Ինդոս գետ 236
Ինիխոս 343
Ինը ճամփաներ վայր 419
Իպնոյ ժայռ 445
Իս 74
Իսթմոս 426, 427, 441, 442, 472, 474, 476—478, 481, 482, 484, 498, 508—511, 513, 516, 520, 536
Իսիսի տաճար 156
Իտմարիս լիճ 418
Իտարիա 101
Իտարոս գետ 82, 98, 101, 237—239, 248, 251—255, 259, 261, 264—267, 291, 389
Իտալիա 12, 13, 62, 212, 213, 227, 303, 378, 478, 553
Իտանոն 271
Իտասա վայր 274
Իֆնայ 422

Լաբրաունդա 338
Լագա կղզի 338, 339
Լակեդեմոն 29, 36, 72, 177, 216, 268, 269, 302, 326, 354, 358, 363, 364, 384, 385, 398, 454, 456—458, 460, 474, 498, 499, 508, 511, 564. տե՛ս նաև Լակոնիա, Սպարտա
Լակմոն լեռ 539
Լակոնական ճամբար 562
Լակոնիա (Լակոնիկա) 31, 211, 534, 458, 459, 564. տե՛ս նաև Լակեդեմոն, Սպարտա
Լամպոնիոն 297
Լամպսակոս 333
Լաոս 342
Լավրիոնի մեռապանաեվ 429
Լարիսե 63

Լեբադիա 501
Լեբեդոս 61
Լեբեյա 503
Լեկտոն հրվանդան 547
Լեմնոս 268, 269, 297, 381—383, 386
Լեպրեոն 270, 517
Լեոնտիեն 433
Լեսբոս կղզի 63, 67, 82, 327, 338, 344, 345
Լեսոյի պատգամատուն 118, 147—149
Լերոս կղզի 335
Լիբիա 21, 92—97, 99—101, 110, 113, 121, 124, 131, 151, 166, 197, 198, 203, 231, 234—236, 268, 270—274, 277, 279—286, 303, 554, 566
Լիբիական լեռներ 92, 136
Լիդա բլուր 72
Լիդիա երկիր 566
Լիմենեյոն 11
Լինդոս 61, 158, 178
Լիպարոս 422
Լիպսիդրիոն վայր 310
Լիսա 422
Լիսոս գետ 418
Լյուդիա 9, 11, 21, 31, 42, 61, 208, 307, 397, 398, 401
Լյուդիաս գետ 423
Լյուկիա 74, 160, 233, 236, 410
Լյուկոս գետ 261, 397
Լյուտոս 61
Լոկրիս 471
Լեկոն վայր 274

Խոռոչներ վայր 344

Ծովիֆ 571

Կադյուտիս 150, 161
Կալամիաս վայր 541
Կալլատեբոս 397
Կալլիպոլիս 433
Կալլիստե տե՛ս Թերա
Կալյանդա 71
Կաղնու զգաթներ 522
Կամարինա 433, 434
Կամբյոս 61
Կամիկոս 439
Կամզոտ 422
Կայկոս գետ 401
Կայկոս դաշտ 344
Կանասարեա հրվանդան 422
Կանե լեռ 401
Կանոբոս 94, 123
Կանոբոսյան գետաբերան 95, 129, 157
Կապադովկիա 31, 32, 34, 307, 396, 574
Կապույտ ժայռեր 250, 251
Կասթանեա 443, 445
Կասիոն լեռ 91, 150, 161
Կասմենե 434
Կասպատյուրոս 199, 236
Կասպից ծով 83, 234
Կատալյան աղբյուր 472
Կավկասներ վայր 299
Կավնոս 73
Կատարակտես գետ 396
Կատպատուկա տե՛ս Կապադովկիա
Կարդամիլե 482
Կարդիա 346, 348, 406, 548
Կարդուխների երկիր 573
Կարենե 401
Կարթագեն 166, 438
Կարիա 61, 72, 329, 333, 334, 343, 397, 447
Կարիստիա 544
Կարիստոս 368, 452, 495, 497
Կարկինիտիս 240, 254
Կարմիր ճող 128
Կարմիր ծով 5, 74, 77, 83, 91, 92, 125, 149, 150, 162, 166, 171, 197, 234, 235, 342, 411, 413
Կարյուտոս 232
Կարպաթոս 177
Կարպիս գետ 238
Կառստերիոս գետ 328
Կափերեա հրվանդան 463
Կելայնե 396
Կեկրոպս ժայռ 428
Կենտորիտես տե՛ս Թեսալոնիկե-սու
Կերամիկոս 72
Կերկասորոս 94, 95, 123
Կերկյուրա (Կերկիրա) 178—181, 429
Կերկոպների կացարան 453

Կեֆալլենիա 518
Կեֆիսոս գետ 470
Կիբեռն 428, 521, 522, 526, 528, 532
Կիբեռնի նախալեռներ 513, 515
Կիլլա 63
Կիլիկիա 32, 95, 197, 307, 330, 349, 367, 545, 572
Կիլիկյան երկիր 196
Կիլիկյան լեռներ 101
Կիմմերյան երկիր 226
Կիմմերյան Բոսպորոս 226, 231, 255
Կիմմերյան պարիսպ 226
Կիմմերյան անցարան 226, 236
Կինդիա 333
Կինյուպոս վայր 286
Կինյուպս գետ 279, 303
Կինոսուրա 483
Կիոս 334, 474, 483
Կիրս գետ 238
Կիպրոս 32, 46, 82, 117, 158, 197, 275, 276, 299, 305, 329—332
«Կիպրոսի բանալիներ» երվանդան 330
Կիսսիա (Կիսսիյան) երկիր 305, 307, 373
Կիսսիյան դարպաս 219, 220
Կիրենա 566
Կլազոմենե 10, 61, 157, 334
Կլեոնեայ 395
Կլոր լիճ 154
Կյուրոնիա 177, 182
Կյուզիկոս 227, 246, 346
Կյուքերա կղզի 36, 46, 458
Կյուքնոս 413, 479
Կյուկլադյան կղզիներ 298, 299
Կյումենե (Փռիկոնիական) 63, 65, 334, 446, 500
Կյունոսարգես 310, 374
Կյոտնոս կղզի 68, 544
Կյուրավնիս կղզի 285
Կյուրենական երկիր 286
Կյուրենե 158, 197, 273—278, 287, 304
Կնիդիա 72
Կնիդոս 61, 157, 213, 276
Կնոսոս 206
Կոլիաս 489
Կոլխիս 46, 236
Կոլոսսայ 397
Կոլոփոն (Կողոփոն) 10, 61, 63
Կոկորդիլոսների խաղաք 145
Կողֆիս 446, 447
Կոմբրեյա 422
Կոմպատոս գետ 418
Կոյնիրա վայր 350
Կոնտադեսդրոս գետ 251
Կոպայիս լիճ 502
Կոս կղզի 61, 436, 437, 534
Կովկաս լեռ 46
Կովկաս 83, 198, 226
Կորեսոս 327
Կարիկյան Խարայր 471
Կորյուս գետ 162
Կորնթոս 12, 13, 179—181, 211, 322—325, 378, 447, 473, 538, 564
Կրաթիս գետ 62, 303, 304
Կրաննոն 378
Կրեմնոյ 229, 257
Կրեստոն 24
Կրեստոնիա 422
Կրեստոնյան երկիր 496
Կրետե 28, 71, 177, 182, 236, 271, 272, 415, 429, 439, 440
Կրիեսյան դաշտ 470
Կրիոպոլա 396
Կրոսսայա երկիր 422
Կրոտոն 207, 210, 212, 213, 303, 304
Կրոփի լեռ 98
Կուր 574
Կուրիոն 332

Հալիա 426
Հալիակմոն գետ 423
Հալիկառնաս (Հալիկառնասոս) 61, 72, 157, 415, 492, 553, 554, 563, 575
Հալյուս (Հալիս) գետ 7, 14, 32, 33, 46, 56, 307, 328, 396, 572
Հայաստան 74, 80, 307, 559, 561, 568—578
Հայկական լեռներ 32, 572, 574
Հարավային ծով տե՛ս Կարմիր ծով
Հարյուր կղզիներ 63
Հելլադա 5, 6, 14, 31, 41, 106, 108—110, 121, 122, 127, 129, 140, 144, 158, 200, 201, 206, 209—213, 246, 268, 299, 305, 308, 309, 328, 343, 350, 351, 354, 364, 368, 370, 373, 376, 377, 379, 382, 384—387, 389—394, 396, 398, 400, 402, 406, 411, 415—418, 422, 424—427, 429—432, 434—436, 438—442, 447, 449, 451, 459—462, 465—467, 469, 470, 474, 476—481, 488, 490, 491, 493, 494, 496, 498, 505—507, 509, 510, 523, 524, 529, 531, 533, 535, 536, 541, 543, 547, 549, 554, 564
Հելլայի դամբարան 406
Հելլենական ծով 307, 397
Հելլենիոն 157
Հելլեսպոնտոս 24, 234, 246, 250, 252, 289, 291, 292, 296, 299, 321, 329, 333, 334, 344, 345, 349, 367, 383, 386, 387, 389, 398, 399, 402, 405, 406, 418, 426, 430, 434, 436, 475, 486, 489, 493, 494, 496, 497, 531, 541, 543, 545, 547
Հելլեսպոնտական երկիր 266, 268
Հելիկեն 62
Հելիոսի սրբավայր 116, 128
Հելիոպոլիս 90—92, 112
Հեղիեեի տաճար 128
Հեմոս 237, 238
Հեսիպեյա վայր 360
Հերակլյան Սյուներ 83, 101, 224, 235, 271, 281, 282, 285, 501
Հերակլեսի տաճար 129, 310, 374
Հերայի տաճար 31, 157, 158, 271, 325, 362, 527, 530, 532, 541
Հերայոն 251
Հերմեսի սրբավայր 141
Հերմիոնե 473, 482
Հերմիոնես 386
Հերմոս գետ 24, 328
Հեփեստոսի տաճար 124, 127, 128, 132, 140, 142, 145, 147, 148, 156, 174
Հիմերոս 373, 437
Հիպպոլատոսի երվանդան 239
Հիստիայոտիս 24
Հիստիեա 467, 468, 479
Հիստիոտիս 441
Հյուամպես գագար 472
Հյուամպոլիս 469, 470
Հյուբլե 433
Հյուդրեա կղզի 132
Հյուժլա 69
Հյուլայա երկիր 224, 228, 239, 246
Հյուլայա գետ 240
Հյուլլոս գետ 35
Հյումետտոս լեռ 381, 382
Հյուպակյուրիս գետ 237, 239, 240
Հյուպանիս գետ 228, 237—239, 248
Հյուսիաս 315, 372, 511, 515
Հյուսիսային ծով 92, 100, 150, 203, 234, 235
Հյուրգիա [illegible] 240
Հյուրիա 439
Հնդկաստան 199—201, 234, 236
Հոնիա 7, 41, 60, 64, 67, 69, 70, 72, 126, 175, 206, 208, 266, 297, 298, 301, 327, 330—332, 334, 336—338, 341, 344, 345, 349, 364, 367, 404, 494, 500, 501, 539, 541, 544, 556
Հոնիական ծով 306, 378, 394, 539
Հովտամեջ ճանապարհ 369
Հոեզիոն 69, 342, 437, 439
Հոեմեյ 367
Հոյոփե 62
Հոոդոս 72, 157, 433
Հոոդոպե լեռ 496
Հոոյտիոն 401
Հունաստան 386, 553—557, 559, 561, 563, 564, 576

Ճորոխի ավազան 573, 577
Ճորոխի հովիտ 577

Մագդոլոս 150
Մագնեսիա 67, 206, 207, 441, 443, 445, 446
Մագա տե՛ս Մեդիա
Մագյուտոս 398, 549
Մալեաս (Մալեա) երվանդան 36, 280, 438
Մալեասի ծովախորշ 232
Մալենե 344
Մալիս երկիր 448, 452, 453, 470
Մակեդոնիա 293—295, 349, 388, 396, 423, 424, 440, 496, 499, 503, 538, 554
Մակիստոս 270

Մակուարիոն 433
Մայոտիս (Մեյոտիս) լիճ 46, 223, 229, 236, 240, 250, 255, 257, 259—261, 264
Մայր Դինդյումնե լեռ 35
Մանտինեա 275
Մասսալիա 291
Մատիենական լեռներ 77
Մատիենների երկիր 573
Մարաթոն վայր 27, 369, 371—374, 376, 380, 381, 384, 410, 517, 524
Մարաստան տե՛ս Մեդիա
Մարեա 95, 99
Մարիս գետ 237
Մարոնեյա 418
Մարսիաս գետ 333
Մեանդրոս գետ 98, 206, 333, 396, 397
Մեանդրոսի դաշտավայր 92
Մեանդրոսի հովիտ 11, 67
Մեգարա 315, 434, 477, 508, 511
Մեգարիս երկիր 511
Մեդական երկիր 226
Մեդիա 43, 44, 46, 185, 197, 222, 223, 291, 263, 401, 574
Մելամպյուգոս ժայռ 453
Մելաս գետ 406, 448
Մելիբոյա 445
Մերոս 474
Մեծ Զավ գետ 573
Մեծ Հայք 572
Մեկյուբեռնա 422
Մեղ վտակ 577
Մեմնոն 307
Մեմնոնյան պալատ 307
Մեմփիս 90, 92, 93, 123, 124, 128, 129, 131, 146, 148, 156, 161, 163—165, 169, 170, 174, 197, 213
Մեմփիսի լեռ 150
Մեմփիսի բուրգ 91
Մենդե 422
Մենդեսյան մարզ 105, 107, 152
Մենդեսյան գեռաբերան 95
Մենելաոս նավահանգիստ 278
Մեսամբրիա 252, 345, 418
Մեսսենա 342, 343, 433, 437
Մետապոնտիոն 227
Մերոե 99
Միլետ 10—12, 21, 60, 62, 66, 150, 291, 296—301, 305, 324, 326, 327, 329, 330, 334—339, 341, 343—345, 364, 389, 541, 556, 563
Միլեսյան երկիր 11, 297, 338, 342
Միլյուաս 71
Միկալե հրվանդան 63, 340, 411
Միկենե 449
Մինոե 304
Միչագետ 557
Միլերկրական 557
Միտիլենե 66, 140, 157, 291, 301, 326, 337
Միուս 61, 301, 338
Մյուգդոնիա 422, 423
Մյուենկիորիսյան մարզ 152
Մյուլասսա 71, 334
Մյուկալե լեռ 539, 541—545, 547
Մյուկոնոս 375
Մյուսիա երկիր 18, 67, 344, 401, 492
Մյուրիանդինյան ծոց 234
Մյուրինա 63, 383
Մյուրկինոս (Մյուրկինա) վայր 291, 296, 334, 335
Մյուրմեքս խութ 443
Մոլեաս գետ 528
Մոլոսսոս 378
Մոմեմփիս 152, 153
Մոյրիս լիճ 91, 93, 115, 145, 146, 197
Մոփի լեռ 98
Մունիխիոն 483

Ցապյուգիա 254
Ցապյուգիա գետ 213, 439
Ցեհյուսաս 161

Նաբո 152
Նապարիս գետ 237
Նավկրատիս 123, 157
Նավպլիա 360
Նաքսոս 27, 28, 483, 474
Նաքսոս կղզի 297—301, 367
Նեապոլիս 120, 422
Նեղոս գետ 92—101, 115, 122—124, 129, 135, 136, 141, 146—148, 150, 157, 162, 234—236, 238, 239
Նեռն 470
Նեստոս 418, 422
Նիմոս 79, 146
Նինոսյան դարպասներ 219
Նինվե 46, 47
Նիսայա 25
Նիսայոն դաշտավայր 401
Նյուսա (Նյուսե) 144, 198
Նոես գետ 238
Նոնակրիս 359
Նոտիոն 63
Նոր Թեբե 63
Նուդիոն 270
Նևերի երկիր 238

Պալլենե երկիր 62, 422, 499, 500, 517
Պակտիա 346
Պակտյուիկե երկիր 197, 199, 236
Պակտոլոս գետ 328
Պաղեստին 125, 412, 413
Պաղեստինյան Սիրիա 126, 197, 234
Պամիսոս գետ 423
Պայոնիա, մարզ Թրակիայում 292, 327, 422, 496
Պայոնիա 310
Պայոս 378
Պայսոս 333
Պանգայոս լեռ 293, 419, 420
Պանիոնիոն 60—62, 70, 337
Պանոպեա 470
Պանորմոս նավահանգիստ 66
Պանտիկապես գետ 228, 237, 238
Պապրեմիս 111, 112, 163
Պապրեմիսի մարզ 115, 152
Պառնասսոս լեռ 469—472, 519
Պառարա 74
Պառրաս 62
Պատումոս 150
Պարապոտամիա 470
Պարթենիոն լեռ 370
Պարթենիոս գետ 125
Պարիոն 333
Պարոս կղզի 182, 297, 299, 310, 380, 381
Պարոկասատան 54, 65, 85, 86, 160, 171, 183, 184, 186—189, 194, 195, 198, 204, 220, 221, 234, 349, 397, 400, 404, 418, 489, 515, 554, 560—563, 566, 570
Պափոս 447
Պեդասա 334, 342, 492
Պեդիեյա 470
Պելլա 422
Պելասգիա տե՛ս Հելլադա 110
Պելասգյան պարիսպներ 311
Պելիոն լեռ 280, 423, 445, 463, 464
Պելոպոնեսոս 24, 27, 30, 62, 154, 182, 217, 280, 303, 315, 364, 378, 413, 414, 430, 436, 438, 449, 450, 456, 459, 472—475, 477, 479—482, 490, 491, 495, 504, 508, 510, 515, 516, 520, 522, 526
Պելուսիոն (Պելուսիա) 94, 99, 126, 142
Պելուսյան գետաբերան 95, 143, 162
Պեյրոս գետ 62
Պենեոս գետ 394, 423, 440, 443
Պեսրա 322, 323
Պերգամոս ամրություն 419
Պերինթյան երկիր 396
Պերինթոս 251, 289, 345
Պերկոտե 333
Պերսեսի աշտարակ 94
Պերսիա տե՛ս Պարսկաստան
Պիերիա երկիր 285, 322, 424, 442
Պիլե տե՛ս Թերմոպիլե
Պիլարոս 421
Պինդոս լեռ 24, 423, 473
Պիսա 91
Պիսայուրոս 419
Պիտանե 63, 181
Պիրեևս 485
Պլակիա 24
Պլատեա կղզի 271—273, 278, 372, 457, 475, 499, 508, 512, 515, 518, 520—522, 530, 531, 533—539, 542, 543
Պլատեական երկիր 515
Պլինթինեսոս ծովախորշ 91
Պլյուռոս նավահանգիստ 278
Պյութայի պատգամատուն 23, 24
Պյուլոս 311, 438
Պյուրգոս 270

Պյարենե 101
Պոզոն նավամանգիստ 473
Պոլիքնե 344, 439
Պոնտոս 224, 225, 234, 236, 249—252, 254, 337, 343, 399, 405, 430
Պոսիդեյոն ծովախոր 197, 420
Պոսիդոնիոն 69
Պոտիդեա 422, 499, 500
Պսիտալլիա կղզի 483, 489
Պտերիա վայր 34, 35
Պտոյան տաճար 502
Պրասիաս լիճ 293
Պրեսոս 439
Պրիամոս բերդ 401
Պրիենե 61
Պրյուտանեոն 312
Պրոկոնեսոս 226, 227, 266, 345
Պրոնեայի սրբավայր 41, 472
Պրոպոնտիս 334
Պրոսոպիտիս կղզի 104, 152
Պրոտեսիլաոսի տաճար 398
Պրոտևսի սրբավայր 128

Ջրվեժներ 95

Սախ 111, 112, 138, 152—154, 156, 165
Սախյան գետաբերան 95
Սախյան մարզ 147, 152
Սալամիս կղզի 275, 329—332, 413, 428, 437, 438, 464, 472—479, 481—484, 486—489, 497—500, 507, 508, 513
Սալե գաղութ 406
Սալմյուդեսսոս երկիր 252
Սամոթրակե 109, 350
Սամոս կղզի 31, 61, 63, 145, 158, 177—183, 206, 210, 214—217, 236, 252, 275, 276, 297, 340, 342, 367, 485, 500, 501, 539, 541, 542, 544, 553, 554, 563, 566
Սաոն 395, 422
Սարդես 7, 11, 12, 14, 15, 17, 20, 21, 31, 32—38, 41, 60, 64, 65, 126, 161, 171, 178, 179, 205, 208, 209, 236, 291, 292, 296, 298, 307, 308, 314, 326, 327—330, 333, 334, 336, 337, 345, 348, 369, 377, 384, 385, 387, 391, 396—399, 401, 406, 412, 429, 430, 492, 496, 507, 545
Սարդո կղզի 70, 330, 334, 336
Սարդոնիոն ծով 69
Սարիմոն 410
Սարյոմոն 497
Սարպեդոն հրվանդան 406
Սարտե 421
Սեբեննյուտյան գետաբերան 95, 148
Սեբեննոսյան մարզ 152
Սելինուս 304
Սելյումբրիա 345
Սեպիաս վայր 443
Սեպիաս հրվանդան 443—447, 479
Սեստոս 267, 398, 410, 547—549
Սերբոնիս լիճ 91, 161
Սերեոն հրվանդան 406
Սերիփոս 474
Սերմյուլե 421
Սիբարիս (Սյուբարիս) 303, 304, 342, 378
Սիգեյա 234
Սիգեյոն 311, 321, 325, 326
Սիդոն 130, 151, 212, 402, 480
Սիթոնիա երկիր 422
Սիլֆիոն վայր 284
Սիկանիա տե՛ս Սիկիլիա
Սիկիլիա 12, 303, 304, 341—343, 429, 432, 434, 436—439, 449, 461, 554
Սիկիոն 62, 312, 377, 379
Սինգոս (Սինդոս) 421, 422
Սինոպե 34, 101, 226
Սիրակուսա 207, 433, 434, 436, 554
Սիրիա 46, 92, 93, 96, 130, 147, 149, 150, 161, 184, 185, 197, 413, 478, 496
Սիրիս 378
Սիուփ 154
Սիփնոս 182, 474
Սկամանդրոս գետ 311, 401
Սկապտեսյուլե 350
Սկիաթոս կղզի 441, 442, 463, 487
Սկիդրոս 342
Սկիոնե 422, 463
Սկիրոնյան ճանապարհ 481
Սկյութիա 224, 229, 237—239, 254—256, 296
Սկյութական երկիր 97, 254

Սկյուլակես 24
Սկոլոպոքս 541
Սկոլոս 511
Սմիլա 422
Սմյուռնե 10, 43, 63, 126
Սյուլեոս դաշտ 420
Սյումե ծով 72
Սյունե 98
Սյուրգիս գետ 261
Սյուրտիս (Սյուրտես) երկիր 100, 146, 278, 279
Սալի 332
Սոլոյիս (Սոլոիս) հրվանդան 100, 235
Սպարտա 28—31, 37, 60, 63, 129, 131, 178, 181, 216, 217, 269, 270, 302, 304—306, 308, 311, 315, 321, 322, 326, 351, 354—359, 361—365, 370, 375, 376, 384, 424—426, 431, 439, 449—451, 454, 457, 458, 496, 498, 501, 506, 510, 511, 520, 527, 530, 532—534, 563, 564, 566, տե՛ս նաև Լակեդեմոնիա, Լակոնիա
Սպեր 577
Սպերքիոս գետ 448, 457
Սպիտակ ափ վայր 396
Սպիտակ բերդ 197
Սպիտակ սյուներ վայր 333
Ստագիրա 420
Ստենդարյան լիճ 406
Ստիգսի աղբյուր 359
Ստրյումն 418
Ստրյումոն (Ստրիմոն) գետ 28, 289, 292, 296, 327, 396, 418—420, 496
Ստրոմփալյան լիճ 360
Սուենիոն հրվանդան 254, 365, 366, 374, 498
Սուսա 77, 185, 188, 197, 209, 210, 214, 249, 296, 298—300, 305, 307, 330, 336, 342, 345, 375, 384, 386, 405, 425, 460, 476, 490, 545, Մեմնոնյան 432
Սփենդալես 511
Սև ծով 348, 571, 573, 574, 577

Վանա լիճ 573, 574, 577
Վերին Ասիա 394
Վերին Եգիպտոս 98
Վերին Լիբիա 97, 98
41—630
Վերին Մակեդոնիա 441, 503
Վերմիոն լեռ 503

Տաբալոս 67
Տայգետոս լեռ 268—270
Տանագրա երկրամաս 308, 511, 520, 523
Տանաիս գետ 229, 236, 237, 240, 255, 259—261
Տանաիսյան մարզ 152
Տավրիկյան լեռներ 223
Տավրյան երկիր (Տավրիկե) 226, 254, 255
Տարանտ 212, 213, 254
Տարտս 12, 13
Տարիքեյա 129
Տարտեսսոս 67, 271, 284
Տաֆոմզոս կղզի 99
Տաուրեյրա 278
Տեարոս գետ 251
Տեգեա 29, 30, 359, 370, 439, 498, 509, 521,
Տեթրոնիոն 470
Տելեբոաս գետ 577
Տելմեսոսի տաճար 35
Տելոս կղզի 432
Տեմենոս (Տեմենոս) 369
Տենարոս 12, 13, 438
Տենեդոս 63, 345, 348
Տենոս 232, 367
Տեոս 61, 70, 157
Տիարանտոս գետ 237
Տիրիսիս գետ 238
Տիզրիս գետ 77 ,79, 146, 307, 342, 570, 573
Տիրոռեա պագար 470
Տիրինթյան երկիր 360
Տիրինթոս 360, 362
Տիրոնյաց տաճար 541
Տմոլոս գետ 37, 42, 328
Տմոլոս լեռ 328
Տյուրենիս 67, 342
Տյուրոս (Տյուրոս) գետ 5, 106, 128, 151, 226, 237—239, 249, 480
Տյուրոպիզա 396
Տյուրսենիա 42
Տորոն 421
Տորոնե ծով 395
Տրոյեզան 378

Տրավոս գետ 418
Տրոֆինա երկիր 470
Տրոֆին 441, 448, 449, 452, 467, 479
Տրոֆինյան լեռներ 448, 453
Տրեզեն 472, 473
Տրիբալյան դաշտ 238
Տրիոպական սրբավայր 61
Տրիոպի հրվանդան 234
Տրիոպիոն հրվանդան 72, 433
Տրիռեյա 470
Տրիռեյներ 82
Տրիռոզենի պարիսպ 428
Տրիտան գետ 280, 284
Տրիտոնիս լիճ 280, 282, 283
Տրոյա 284, 292, 413, 440
Տրոյական երկիր (Տրավադա) 297, 334
Տրոյզենիա 415
Տրոփոնիոս 502
Տիբրանիայի դաշտավայր 92

Ուրաշտու տե՛ս Ուրարտու
Ուրարտու 574—577
Ուրմիա լիճ 573

Փազրլս ամրություն 419
Փալերոն դաշտավայր 310, 317, 319, 374, 479, 487, 488, 493, 519
Փառաս 62
Փասելիս 157
Փասիս գետ տե՛ս Արաքս
Փարբաիսյան մարզ 152
Փեննոս 359
Փրիա երկիր 424
Փրիտանիա 24
Փիգալիա 362
Փիլտիսի բարգեր տե՛ս Քեռպսի բարգ
Փլա կղզի 280
Փլեգրե տե՛ս Պալլենե երկիր
Փլաս 449
Փյուլիս երկիր 419
Փյունիկիա (Փյունիկե) 106, 108, 117, 130, 161, 197, 212, 234, 236, 336, 341, 413, 554
Փոկայա 35, 61, 64, 67, 68, 126, 157, 341
Փոկիս 469—471, 531
Փոյբոսի սրբավայր 355
Փոյնիկս գետ 448
Փոքր Ասիա 553, 570, 572
Փոքր Զաբ գետ 573
Փոքր Հայք 572
Փոյուգիա 10, 18, 208, 307, 327, 396, 397
Փրիքսայ 270

Քալեստրե 422
Քաղդեական դարպասներ 219
Քաղկեդոն 297
Քաղկեդոնյան երկիր 249
Քաղկիդիկե 444
Քաղկիս 316, 368, 375, 443, 445, 473
Քարադրա 470
Քարիտոն բլուր 279
Քեմմիս կղզի 149
Քեմմիս 120, 121
Քեմմիսյան մարզ 152
Քեյդրոս գետ 423
Քեոպսի բուրգ 137
Քերսոնեսոս (Քերսոնես, Հելլեսպոնտոսի մոտ) 267, 345—348, 370, 383, 395, 398, 406, 500, 547, 548
Քիոս 61, 67, 68, 157, 299, 300, 327, 336, 337, 344, 345, 501
Քիոսյան երկիր 344
Քիտրոյ 441
Քոասպես գետ 77, 305, 307
Քոյրեա 369
Քոն գետ 539
Քսանթոս գետ 73, 556
Քսանթոսի դաշտ 72

Օասիս 169, 170
Օարոս գետ 261
Օանոս 272
Օբրյուս լեռ 423
Օլբիա քաղաք 554
Օլենոս 62
Օլիմպիա 295, 346, 369, 376, 439, 502, 536
Օլիմպոս լեռ 18, 20, 24, 28, 410, 423, 440
Օլիմպոսյան կիրճ 440
Օլինթոս 422, 499
Օլոփյուքոս 395

Օյա վայր 318
Օյեռեն գետ 526
Օյնոե բնակավայր 315
Օյնոնե կղզի 473
Օյնոարիա 69
Օյնուսսա կղզիներ 68
Օյսե 441, 453
Օնոմոնոս գետ 423, 447
Օնուփիսյան մարզ 152
Օպիս 77
Օռամ լեռ 24, 423, 440
Օվկիանոս գետ 97
Օրթիլս լեռ 293
Օրոնտես գետ 237
Օրեստեսի սրբավայր 510
Օրիկոն նավամատույց 540
Օրոպոս 369
Օրմենեն (Արկադիայում) 62, 449, 517
Օրմենեն (Թեսալիայում) 470, 512
Օֆրյոնեք 401

ՏՈՀՄԱՆՈՒՆՆԵՐ ԵՎ ՑԵՂԱՆՈՒՆՆԵՐ

Աբանդներ 62
Աբդերացիներ 421, 497
Աբյուդոսցիներ 414
Ագաթյուրսոսներ 237, 247, 255, 256, 280, 262
Ագիլլացիներ 69
Ագրաններ 293
Ագյուրմիթներ 277, 278
Աթենացիներ 14, 15, 24, 26—28, 61, 109, 210, 221, 254, 308—311, 313—321, 325—329, 342, 346, 350, 351, 359, 360, 365—370, 372—374, 376, 379—382, 384, 385, 387, 389, 391, 398, 418, 424, 426—429, 438—440, 443, 445, 449, 461, 462, 464, 466, 467, 472—476, 478, 479, 481, 482, 485, 487, 488, 493, 494, 501, 502, 504—511, 513—520, 522, 524, 525, 527—529, 531—534, 537, 542—544, 547—549, 554, 564
Ալազոններ 228, 239
Ալարոդներ տե՛ս աստղագիտներ
Ալկմեոնյաններ տոհմ 26, 28, 309, 313, 314, 320, 374, 376, 377, 379
Ալեայներ տոհմ 385, 386, 440
Ամբրակցիներ 420
Ակրագանտցիներ 439
Ամազոնուհիներ 257, 258, 317
Ամբրակիցներ (ամբրակցիներ) 329, 330, 332
Ամբրոսիցիներ 473, 474, 518, 519
Ամմոնցիներ 105, 166, 169, 170, 281
Ամֆոտերիցներ 109
Անակտորիցներ (անակտորցիներ) 518, 519
Անդրոսցիներ 479, 494, 495
Ապարյաններ 197
Ապոլլոնիացիներ 549
Ապոսիբյաններ 346, 347, 549
Սարյաններ 278
Սիցիներ 6, 186
Սոսոցիներ 511
Սարեստանցիներ 46 47, 57, 75, 79, 82, 95, 99, 142, 218, 333, 407, 408
Սվիտաներ գեղ 224
Սատրանաներ 282
Սատիկյան ազգ 24, 25
Սալամներ 282
Սարիդներ 394
Սրաբներ 57, 81, 99, 142, 161, 192, 195, 197, 198, 201—203, 408, 409, 412
Սրամեցիներ 575
Սրգիզոզոյներ 230
Սրգոսցիներ 16, 36, 210, 306, 309, 309, 312, 313, 319, 320, 341, 360—362, 364, 420—432, 452, 510, 511, 516, 520
Սրեյներ 197
Սրիժաստաներ 226, 227, 231
Սրեյներ տե՛ս Սրեմեյներ
Սրեպտացիներ (սրեպտյաններ) 29, 62, 154, 260, 350, 440, 450, 451, 516, 517, 520
Սրմեներ 50, 197, 206, 409, 471, 476
Սրոսյներ 407
Սրեիրյներ տե՛ս սրեիրացիներ
Սասներ 280, 284
Սասոիներ 278
Սկիթներ 62, 424, 444, 447, 474, 546

Ակամեյաններ տես՝ 55, 85, 136, 190, 235, 299, 407, 408
Բաբիլոնացիներ 34, 42, 76, 78, 79, 81, 82, 217, 219, 220, 562, 575
Բակալներ 278
Բակարիացիներ ազգ 64, 197, 200, 408, 495, 518, 519, 547
Բակտիրներ 322
Բարբարոսներ 6, 26, 153, 295, 296, 327, 333, 345, 354, 368, 371, 373, 374, 376, 386, 395, 408, 423, 424, 431, 435, 438, 442, 443, 445—447, 451—456, 458, 462, 464—467, 470, 471, 475—477, 481, 482, 484—488, 492—494, 499—502, 505, 510, 512, 513, 515, 518, 522, 524, 525, 527, 528, 530—532, 534, 535, 539, 541—544
Բարկայցիներ 163, 276, 277, 286—288
Բեռվտիացիներ 308, 309, 315—317, 321, 346, 371, 372, 424, 470, 479, 519, 522, 524, 525, 531
Բեսսոսներ 419
Բիբլոսներ 309
Բիբյուներ տե՛ս Բրակացիներ
Բիսալաներ 496
Բիստոններ 419
Բյուզանդիոնցիներ 268
Բոստրացիներ 499
Բոստրներ 444
Բարյաբենցիներ 228, 239, 247
Բոյուզներ 349, 444
Բռնֆիդներ տես՝ 21
Բրիզներ տե՛ս փոյուզներ
Բուդիներ 45, 229, 255—257, 261, 266
Բուսեր 45

Գամարոսներ 434
Գանդարիներ (գանդարներ) 197, 408
Գարամանտներ 279, 281, 282
Գելոններ 255—257, 260, 266
Գեռեսներ 252, 253, 260, 290
Գերգիթներ 334
Գերմանիներ 55
Գերուսներ 55
Գեփյուրյաններ տես՝ 308, 309
Գիլգամներ 278
Գինդաններ 279
Գյուզաներ 284
Գրիֆոններ ցեղ 226

Դադիկներ 197, 408
Դայեր 55
Դավլիներ 471
Դարեյոսներ 197
Դարայներ 419
Դելոցիներ 232, 233, 367, 368, 375
Դեկելեացիներ 533
Դելֆյաններ 10, 23, 24, 157, 442, 471, 472
Դիոսկուրոսներ տես՝ 105, 108, 378
Դյուսանտներ 313
Դոբերներ 293, 419
Դոդոնեցիներ 110
Դոյոնկներ 346, 348
Դրոպներ 424, 444
Դարիացիներ 7, 14, 24, 59, 61, 62, 70, 154, 182, 314, 315, 352, 388, 413, 479, 479, 481, 482, 504
Դրեպներ տե՛ս ճերմիոնեցիներ
Դրոպիկներ 55

Եգիպտացիներ 435
Եգիպտացիներ 34, 42, 64, 74, 89—91, 93—96, 98—122, 124—127, 131, 132, 135, 137, 138, 142, 144, 145, 147—155, 160, 162—165, 167, 168, 170—172, 210, 235, 274, 277, 280, 282, 337, 352, 354, 384, 385, 396, 398, 413, 466, 480, 519, 562
Եթովպացիներ 99, 100, 124—126, 140, 141, 166—169, 197, 199, 282, 286, 388, 393, 408, 409, 519
Եկուցիներ 549
Եղիկներ 437
Եհեմներ 80, 291
Եհիններ 424
Եհիներ 309
Եպիդավրոսցիներ 317, 318, 461, 473, 481, 517, 518
Եվբեացիներ 434, 462, 466
Եվհեմերիներ 278
Եվհեմերիաներ 286, 288

Երեսոցիներ 327, 328, 368, 369, 375, 461, 478, 517, 519
Երյոսբերցիներ 61
Եփեսացիներ 13, 62
Եփեսացիներ 328, 341

Զանգանթոցիներ 182, 358
Զանկլեցիներ 342, 343
Զարասներ 204

Էգիլներ 478
Էգեյներ 455
Էլեոսներ 264
Էլիներ 313
Էլեայան պիրատներ տե՛ս ճանիոցիներ
Էթիոպներ 157, 153, 210, 317—320, 351, 354, 356, 359, 363, 365, 366, 429, 449, 461, 473, 482, 485, 487, 488, 498, 518, 519, 535—537
Էմպեդոկլներ Էմպեդոկլներ 291, 419, 534
Էնեոցիներ 150, 151, 270, 481
Էնեոցիներ Էնեոցիներ 231, 535
Էնոմներ 444
Էնիզյաներ 322
Էրյուցիներ Էրյուցներ 14, 60, 63, 66, 70, 79, 139, 196, 251, 288, 325, 334, 335, 341, 363, 395, 414, 471, 545
Էրներ 7
Էրուներ 444
Էսնոսներ 482
Էսոլոցիներ 481, 482
Էրիթրացիներ 388
Էվրոներ 380, 501, 504

Թրակներ 197, 394
Թրակացիներ 140, 358, 418, 420
Թրակիներ 27, 105, 312, 314, 317, 320, 365, 371, 372, 373, 424, 440, 454, 455, 458, 459, 475, 492, 507, 511, 513, 522, 529, 531, 537, 585
Թեսալացիներ 310, 325, 422, 424, 440—442, 445, 453, 458, 460, 470, 513, 519, 524, 528
Թեբացիներ 31, 424, 440, 455, 456, 465, 470, 482, 518

Իբերներ 278—278, 275
Իլլներ 14
Իլլյուրներ 229
Իտալներ 14, 60, 125, 150, 196, 246, 248, 252, 256, 258, 259, 260, 290—291, 335, 347, 394, 410, 419, 420, 444, 466, 519, 560

Իբերներ 487
Իլլիրացիներ 523
Իսլանդներ 229
Իսանդներ 226—228, 230, 232
Իսաքներներ 227

Լակեդեմոնացիներ 7, 23, 24, 29, 30—31, 34, 36, 57, 58, 64, 118, 158, 175, 177, 178, 184, 182, 246, 266—270, 290, 302, 306, 310, 311, 314, 315, 320—322, 325, 350, 352, 354, 362, 363, 367—371, 374, 376, 377, 378, 416, 417, 424—426, 430, 432, 434—437, 440, 450, 451—453, 457, 462, 464, 473, 479, 481, 485, 487, 488, 490, 491, 504—508, 509, 510, 513, 516—519, 521, 525—526, 527, 543, տե՛ս նաև սպարտացիներ
Լամպսակոսցիներ 347
Լատիններ 196
Լատինիներ 410
Լիբիներ 70
Լիմնոսցիներ 297, 492
Լոկրացիներ 12, 13, 175, 297, 327, 337, 338, 340, 344, 546
Լիկիացիներ 95, 98, 100, 104, 110, 117, 149, 272—274, 277—280, 292—294, 298, 299, 300, 407, 444
Լիբիացիներ 409
Լիբիներ 487
Լիդիներ 291
Լիկիացիներ 408
Լուսիտանիներ 7—9, 14, 17, 18, 20, 23, 31—33, 35, 38, 39, 41—43, 45, 49, 61, 69, 71, 158, 199, 200, 297, 305, 325, 345, 377, 410
Լուսիտանիներ 14, 42, 70, 72, 199, 412

Լոկրացիներ (լոկրեր) 342, 424, 479, 499, 450, 453, 461, 470, 519
Լոռասակիրներ 279, 281
Լևկոդացիներ 473, 474, 518, 519

Խալդայներ 468
Խալյութներ 14
Խայրատներ տե՛ս սիկիոնցիներ

Կաբալներ 196, 410
Կաբեյրներ 109, 174
Կադմեացիներ 62
Կադմոսյաններ առնմ 24, 308, 309, 516
Կալլանդիներ 198
Կալասիրիացիներ 152, 153
Կալիենդոսցիներ 485
Կալլիպիզներ 226
Կալյանոսցիներ 415
Կամարինացիներ 434
Կապադովկիացիներ 32, 305, 409
Կասպեր 197, 408, 412
Կավկոններ 62, 270
Կավնիացիներ (կավնոսցիներ) 70, 71, 73
Կատիարոսներ ցեղ 224
Կարթագենացիներ 68, 69, 106, 235, 285, 303, 435, 437, 438
Կարիացիներ 14, 70—72, 112, 148, 162, 196, 333, 334, 342, 413—415, 466, 467
Կարիստիացիներ 544
Կարիստոսցիներ (կարյուստոսցիներ) 232, 368, 479, 495
Կելտեր 101, 238
Կեկրոպյաններ տե՛ս աթենացիներ
Կեոսցիներ 233, 461, 473, 474
Կերկյուրացիներ 179, 181, 323, 438
Կեփսններ 407
Կիլիկեցիներ 14, 95, 196, 305, 323, 337, 410, 413, 480, 490
Կիկոններ 496, 418, 419
Կիմմերներ 7, 10, 46, 222, 225—227, 334
Կինոդյաններ 481, 482
Կիպրոսցիներ (կիպրացիներ) 46, 166, 167, 291, 329, 331, 332, 337, 413, 414, 480, 490
Կիսսիացիներ (կիսսիցիներ) 197, 407, 412, 451
Կլազոմենացիներ 22
Կյուզիկոսցիներ 246, 346
Կյումեցիներ 65—67, 301
Կյունեսներ 101
Կյունետներ 238
Կյուպսելոսյաններ տոնմ 378
Կյուռնոսներ 437
Կյուրենացիներ 101, 157, 163, 271, 272, 274—276, 278, 286—288
Կնիդոսցիներ 72, 213, 276
Կոլխեր 6, 46, 125, 126, 234, 410, 411, 576
Կողոփոնացիներ 62
Կոսցիներ 415
Կորնթացիներ 10, 12, 13, 22, 23, 153, 178, 179, 275, 315, 322, 324, 325, 365, 371, 372, 433, 449, 461, 462, 467, 473, 474, 478, 481, 484, 488, 517, 518, 532, 541, 543, 544
Կորոնայցիներ 317
Կրանայներ տե՛ս աթենացիներ
Կրեստոնայներ 290
Կրեստոններ 423
Կրետացիներ 5, 70, 275, 439, 440
Կրոտոնցիներ 212, 303, 304, 342, 474
Կուրետներ 332

Հալիկառնասեցիներ 415
Հայեր 568, 570, 574, 576, 577, տե՛ս նաև արմենիներ
Հելլեններ 5—7, 13, 14, 18, 24—26, 28, 31—33, 39, 40, 42, 57, 58, 64, 67, 70, 72, 79, 83, 87, 90, 91, 93—96, 98, 100, 102—109, 111, 113, 117, 118, 121, 126, 127, 129, 131, 132, 135, 139, 140, 144, 145, 148, 150, 153, 154, 157, 159, 162, 169, 170, 172, 175, 183, 192, 200, 206, 213, 224—228, 230, 236, 238, 239, 246, 247, 248, 250, 252, 255—257, 271, 273, 274, 280, 283, 286, 295—297, 304, 305, 308, 326—328, 344, 349, 350, 352, 360, 364, 367, 368, 373, 377, 378, 380, 382, 388, 390, 391, 394, 399, 407, 408, 413—418, 420, 424, 426, 427, 429—432, 434—437, 439—456, 458—463, 473, 474, 476, 478—486, 488—491, 493, 494, 497, 498, 500, 501, 504—507, 509, 511—523, 541—545, 547, 548, 564
Հելլենոդիկեներ 295
Հելլեսպոնտացիներ (հելլեսպոնտացիներ) 196, 231, 268, 410, 414
Հիպուպլակցիներ 90, 115
Հեսպերիտներ 577
Հերակլյաններ տոնմ 7, 9, 10, 41, 303, 459, 496, 515, 516, 520
Հերմիոնեցիներ (հերմիոնացիներ) 62, 182, 473, 481, 482, 517, 519
Հերմոսյուրիացիներ 152, 153
Հեփեստիացիներ 383
Հիպոբոտեներ 368
Հյուսներ տե՛ս սիկիոնցիներ
Հյուլեյաններ 313
Հյուպամայացիներ 413
Հյուպերակրիաներ 25
Հյուպերբորեյացիներ ցեղ 226, 232, 233
Հյուտեններ 196
Հյուրիաններ 204, 407
Հեգիկներ 173, 198—201, 289, 338, 408, 409, 495, 519
Հոնիացիներ 7, 11, 14, 24, 33, 34, 59—64, 66, 69, 70, 89, 94, 95, 115, 148, 159, 196, 233, 251, 253, 254, 264—267, 297, 305, 308, 309, 313, 326—334, 336—342, 344, 348, 368, 388, 389, 404, 414, 446, 464, 466, 467, 473, 474, 482, 485, 487, 489, 500, 501, 515, 539, 542, 544
Հոպլիտներ 449, 530
Հոեգիոնցիներ 439
Հոյներ 523, 576

Մագնեսյաններ 196, 424, 444
Մալեացիներ 424
Մայներ 447
Մալիացիներ 453, 519
Մալիցիներ 473, 479
Մալոսցիներ 62
Մակեդոնացիներ 325, 349, 409, 508, 519, 524
Մակեդոններ 24, 444, 499
Մակիր 279, 303
Մակրոններ 126, 197, 410
Մայոտներ 261
Մանթինեացիներ 449, 520, 534, 535
Մասսագետներ 82—87, 225, 278, 393
Մասպեր 55
Մասիկներ 32, 83, 197, 305, 409, 573, 576
Մարսիներ 55
Մարդ ցեղ 37
Մարդոնիներներ 255, 256, 260, 262
Մարդեր 55
Մարեր 198, 410, 411
Մարիանդիներ (մարիանդյաններ) 14, 196, 409
Մարյաներ 279, 280
Մարսյաներ 284
Մեգարացիներ 25, 434, 461, 473, 482, 514, 518, 519, 532, 537
Մեդացիներ 10, 24, 32, 39, 41, 43—48, 53—58, 75, 76, 186, 208, 222, 223, 234, 329, 372, 373, 375, 376, 386, 394, 407, 411, 414, 425, 451, 456, 460, 482, 486, 495, 496, 500, 505, 509, 518, 522—524, 535, 536
Մեթյուսնացիներ 63
Մելանխլենեներ 229
Մելոսցիներ 474
Մեյոններ տե՛ս ցուլիացիներ
Մենելայներներ առնմ 106, 107
Մեսսապիաներ 439
Մեսսենացիներ 178, 306, 531, 520
Մեսսապոնացիներ 227
Մերմնադյաններ տոնմ 7, 10
Միլեսացիներ 10—13, 60, 69, 175, 247, 266, 297, 298, 301, 327, 330, 333, 334, 337, 338, 341, 342, 360, 364, 542, 544
Միլիացիներ 410
Միլյասացիներ 71, 196
Միկենացիներ 517, 518
Միկյասացիներ 62, 268—270
Միսիլենացիներ 66, 67, 157, 164, 253, 301, 325, 326
Միսացիներ 338
Մյուսներ 197, 406

Մյուսիացիներ 14, 18, 71, 196, 294, 410, 519
Մյուրինացիներ 383
Մոգեր 45
Մուսինեյկներ 198, 410
Մսուրեր 197, 410

Նամիդյաններ առմ 303, 519
Նապլուզներ 254

Նասամոնացիներ (նասամոններ) 100, 101, 278, 279, 281, 283
Նոխուսցիներ 298, 300, 367, 474
Նիպսեյաններ 252
Նիսյուրացիներ 415
Նուրեր 228, 255, 256, 260, 262

Պալայներ 199
Պալեացիներ 518, 519
Պակայուացիներ 408
Պամփյուլիացիներ (պամփյուլներ) 14, 196, 313, 413, 480
Պայոններ 238, 289, 292, 298, 296, 419, 444, 496, 519
Պայոպլեներ 293, 419
Պայսեր ցեղ 419
Պանքիալյներ 55
Պանոպեացիներ 471
Պանիմարներ 197
Պասարգադներ 55
Պավիկներ 197
Պարալատներ ցեղ 224
Պարեսապիններ 45
Պարքներ 197, 204, 408
Պարիկաներ 197, 408, 412
Պարկաներ 197
Պարսցիներ 297, 298, 380, 381, 479, 495
Պարարեատներ 270
Պարսիկներ 5—7, 21, 23, 31, 32, 34, 36—40, 43, 45, 47, 53—61, 63, 66—68, 78, 79, 86, 124, 153, 159—163, 165—168, 170—174, 185—192, 194—196, 198, 200, 201, 205, 208, 209, 211—220, 224, 253, 260—267, 286—289, 291—295, 297—309, 314, 326—328, 330—334, 337, 339, 341—345, 348, 350, 351, 354, 367—369, 371, 373—376, 380, 384—388, 390—392, 394—396, 401, 405, 407, 409, 411, 412, 414, 417—420, 426, 427, 431, 440, 441, 443, 446, 449—458, 460, 463, 464, 466, 468, 470, 471, 474, 475, 478, 479, 482—487, 489—491, 495—497, 500—502, 506, 509—512, 514, 517—519, 521—526, 528—534, 538—544, 546, 548—550, 560, 562—564, 576
Պափլագոնացիներ 7, 14, 32, 196, 409
Պափոսցիներ 447
Պեղասացիներ 72, 492
Պիլասգներ 24, 25, 62, 108, 109, 268, 297, 381—383, 414, 473
Պիլապոնեսյաններ առմ 361
Պիլոպոնեսցիներ 246, 275, 315, 316, 426, 450, 459, 472, 473, 480—484, 493, 508, 509, 513, 515, 516, 533, 534, 544, 545, 547
Պիրեբներ 423, 424, 441
Պիրեբոյներ 444
Պիրինթոսցիներ 289, 426
Պիերիացիներ 419
Պիերյաններ 444
Պիլագորներ 452
Պիսիդիացիներ 410
Պիսիստրատյաններ առմ 310, 311, 313, 315, 320, 321, 325, 347, 367, 376, 386, 475
Պլատեացիներ 371—374, 424, 461, 473, 479, 511, 519, 526, 537
Պոսիդեացիներ 499, 500, 518
Պոտիդացիներ 34
Պրեսյաններ 439
Պրինեացիներ (պրինեցիներ) 67, 338

Սագարտիներ (սագարտներ) 55, 197
Սալամիսցիներ 331, 332
Սակեր 64, 197, 388, 408, 414, 495, 519, 532, 547
Սամոթրակացիներ 109, 487
Սամոսցիներ 31, 61, 157, 169, 177—179, 181—183, 215, 216, 271, 327, 332, 338, 340, 342, 343, 437, 539, 542, 544, 545, 563
Սապայներ 419
Սասպիրներ 197, 284, 411, 573, 576, 577
Սավրոմատներ 229, 240, 255, 257, 259, 260, 263, 266
Սատագյուտներ 197
Սատրեր 419
Սարանգներ 197, 204, 408
Սարդներ 437
Սարմատներ 261
Սելինուսցիներ 304
Սերիփոսցիներ 474
Սիգյուններ 291
Սիգոնցիներ 414
Սիկիլիացիներ 342, 433
Սիկիոնցիներ 312, 313, 366, 461, 473, 317, 518, 543, 544
Սիրակուսացիներ 433, 435, 436, 438
Սիրիացիներ 7, 32, 34, 93, 125, 126, 150, 161, 196, 409, 412
Սիրիոպայոններ 293
Սիփնոսցիներ 182, 474
Սիրոնիացիներ 499, 500
Սկյութներ 32, 33, 46, 47, 56, 87, 125, 128, 153, 211, 222—232, 236, 237, 239—249, 251, 253—267, 297, 348, 362, 363, 389, 394, 404, 406, 408
Սկյուրմիասներ 252
Սկոլոտներ 224
Սմյուռնիացիներ (սմյուռնեցիներ) 61, 63
Սյուրբիացիներ 303—305
Սոգդեր 197, 408
Սոլեցիներ 331
Սոլյամներ տե՛ս միլյուսցիներ
Սպարտացիներ 28, 29, 36, 63, 178, 217, 269, 270, 302, 303, 310, 311, 315, 321, 351—354, 356, 358—360, 362, 363, 417, 424—426, 431, 435, 450—452, 454, 455, 457, 458, 461, 496, 498, 499, 509, 510, 513, 516—518, 520, 521, 525, 527, 528, 530, 533, 535, 537, 564, տե՛ս նաև լակեդեմոնացիներ
Սպարտիացիներ 461, 474, 517, 519
Սպարտացիներ 371
Սարիմանյաններ տե՛ս բռակացիներ
Սարեբատներ 45
Սեսպիկնացներ 258, 256, 260, 262

Տալրիբյաններ առմ 424
Տանագրացիներ 317
Տաղրյաններ (տավրեր) 254—256, 260
Տարանտինցիներ 213, 439
Տարտեսացիներ 67
Տեգեացիներ 28—30, 449, 515—518, 520, 527—530, 532
Տեյիրոյներ 309
Տելմեսյաններ 37
Տելմեսացիներ 35
Տենոսցիներ 232, 479, 464
Տեոսցիներ 69, 338
Տերմիլներ տե՛ս լուկիացիներ
Տիրարեններ 197, 410
Տիրինթոսցիներ 517, 518
Տյանդարիդներ (տինդարիդներ) առմ 298, 315, 533
Տյուրեններ (տյուրսեններ) 24, 43, 68, 69
Տյուրյաններ 238
Տյուրոսցիներ 128
Տրասպյաններ ցեղ 224
Տրաուսներ 290
Տրոֆինայցիներ 441
Տրեզենացիներ (տրոյզենեցիներ) 182, 461, 473, 481, 517, 518, 543, 544
Տրոյացիներ 6, 132
Տեիրացիներ (տեիրեր) 292, 394, 410

Ուսիներ 197, 408
Ուրարտացիներ 197, 411, 573, 576, 577

Փասիաներ 577
Փիուսցիներ 481, 517, 518, 532, 597
Փյունիկեցիներ 5—7, 46, 81, 100, 106, 110, 125, 126, 128, 130, 166, 174, 201, 202, 235, 236, 269, 286, 304, 308, 309, 330—332, 336, 337, 343, 345, 346, 350, 370, 395, 396, 398, 402, 412, 414, 487, 488, 485, 487, 490, 497, 541
Փռիգացիներ 62, 67—69, 338, 346, 441, 442, 449, 450, 452—454, 469, 470, 512, 513, 519, 533

Փոյուգիացիներ (փոյուգներ) 14, 32, 89, 90, 196, 305, 409, 519, 568, 576
Փոյոլոսներ 279

Քաղդեացիներ 74, 75
Քաղկեդոնցիներ 268
Քաղկիսցիներ (քաղկիդացիներ) 315, 316, 321, 327, 461, 473, 499, 517, 519
Քիռոնեսոսցիներ (քիռոնեացիներ) 266, 347, 548, 549
Քիոսցիներ 11, 61, 67, 68, 140, 327, 336—338, 340, 341, 344, 492, 501, 548
Քարասներ 197, 204, 408
Քանթացիներ 73

Օդոմանտներ (օդոմանտներ) 293, 419
Օգրյուսներ 252
Օլբիոպոլսցիներ 228
Օլիմպոսյաններ 410
Օլենացիներ 499
Օմբրիացիներ 238
Օմբրիկներ (օմբրացիներ) 43, 238
Օնեսոներ տե՛ս սիկիոնցիներ
Օրթագորյաններ 197
Օրխոմենացիներ (օրխոմենացիներ) 470, 518

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ
Կլիո 3

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ
Եվտերպե 89

ԳԻՐՔ ԵՐՐՈՐԴ
Թալիա 159

ԳԻՐՔ ՉՈՐՐՈՐԴ
Մելպոմենե 222

ԳԻՐՔ ՀԻՆԳԵՐՈՐԴ
Տերպսիքորա 289

ԳԻՐՔ ՎԵՑԵՐՈՐԴ
Էրատո 333

ԳԻՐՔ ՅՈԹԵՐՈՐԴ
Պոլիհիմնիա 384

ԳԻՐՔ ՈՒԹԵՐՈՐԴ
Ուրանիա 461

ԳԻՐՔ ԻՆՆԵՐՈՐԴ
Կալիոպե 507

Մեկնություն 551
Գ. Սարգսյան — Պատմահայր Հերոդոտոսը 558
Մանրագրություններ 579
Ցանկեր 617

ՀԵՐՈԴՈՏՈՍ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԻՆԸ ԳՐՔԻՑ

Հրատ. խմբագիր Ա. Հ. ՇԱՂԳԱՄՅԱՆ
Նկարչական ձևավորումը Լ. Ա. ՍԱՂՈՅԱՆԻ
Տեխ. խմբագիր Հ. Մ. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ
Սրբագրիչ Է. Ա. ՍՈՒԽԻԿՅԱՆ

ԻԲ № 957

Հանձնված է շարվածքի 2.09.1985 թ.։ Ստորագրված է տպագրության 10.06.1986 թ.։ Չափը 70×90¹/₁₆։ Թուղթ № 2։ Տառատեսակ «արամյան», «բարձր տպագրություն»։ Պայմ. 47,82 մամ., տպագր. 40,75 մամուլ +1 ներդիր։ Ներկ. մամուլ 47,82։ Հրատ.-հաշվարկ. 40,47 մամուլ։ Տպաքանակ 25000։ Հրատ. № 6484, պատվեր № 630։ Գինը 5 ռ. 45 կ.։

ՀՍՍՀ ԳԱ Հրատարակչություն, 375019, Երևան, Մարշալ Բաղրամյանի պող. 24 գ.։
Издательство АН АрмССР. 375019, Ереван, пр. Маршала Баграмяна, 24 г.
ՀՍՍՀ ԳԱ Հրատարակչության տպարան, 378310, ք. Էջմիածին։
Типография Издательства АН АрмССР, г. Эчмиадзин.